

Ա ՀՐԱԶՅԱ  
Ա ԱՌՅԱՆ

Հ ԱՅՈՑ ԳՐԵՐԸ


А В С Д Е Ж З И Й К Л М Н О П Р С Т Ф Ф

Х Ц Ч Ш Щ Ъ Ы Ь Э Ю Я

Ѧ ѧ Ѩ ѩ Ѭ ѭ Ѯ ѯ Ѱ ѱ

Ѳ ѳ Ѵ ѵ Ѷ ѷ Ѹ ѹ Ѻ ѻ Ѽ ѿ ѿ

U	♃	X	Ń
F	†	U	U
q	L	3	u
7	h	l	f
t	o	c	r
Q	4	n	3
E	5	2	†
L	2	7	φ
Q	1	8	ρ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

✓  
APR 21 1984

Հրաշքա ԱՃԱՌՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ

Խմբագրությամբ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Բ. Աղայանի

A  $\frac{II}{70345}$



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1984

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԸԱՐ

Խմբագրական հանձնաժողով.

Ս. Ա. Համբարձումյան (Եախագահ), Է. Բ. Աղայան, Գ. Գ. Անանյան, Հ. Ս. Թամրազյան, Մ. Գ. Ներսիսյան, Իմ. Ա. Պիվազյան

Անադյան, Հր. Հ.

Ա 501 Հայոց գրերը /Խմբ.՝ Է. Բ. Աղայան.— Եր.: Երևանի համալս. հրատ., 1984, 688 էջ.

Գիրքը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում քննության են առնվում հին և միջնադարյան աղբյուրները հայկական գրերի ստեղծման պատմության մասին, և տրվում է նոր ժամանակի հետազոտությունների լիակատար մատենագիտությունը: Երկրորդ մասը ներկայացնում է հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի կյանքը և գործունեությունը: Երրորդ մասում ուսումնասիրվում են հայկական այբուբենի համակարգն ու ներքին կառուցվածքը, նրա կապը ուրիշ այբուբենների հետ և հայկական գրերի պատմական զարգացումը մեսրոպյան երկաթագրից մինչև մեր ժամանակի տպագրական ու ձեռագիր տառատեսակները:

4602010000—007  
Ա 704 (02) — 84 43 — 83

ԳՄԳ 81.22

4 Ap

РАЧЬЯ АЧАРЯН

АРМЯНСКИЕ ПИСЬМЕНА

(На армянском языке)

Издательство Ереванского университета  
Ереван — 1984

## Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Հր. Անառայանի սույն աշխատությունը հեղինակի կողմից պատասխանվել է ապագրության 1935 թվականին, բայց ինչ-ինչ պատճառներով չի հրատարակվել: Այնուհետև, մինչև իր կյանքի վերջը, նա չի անդադարձել դրան, թեև աշխատության մեջ արժանազան խնդիրների մասին առանձին հոդվածներ է գրել: Գրքի երկրորդ մասը, որ հեղինակի կենդանության օրոք բոլորովին չի հրատարակվել, հոդվածաշարի ձևով ապագրվել սկսվեց «Էջմիածին» ամսագրում (1958—1962 թթ.), բայց անավարտ մնաց:

Ուսումնասիրության առաջին մասը առանձին գրքով լույս է տեսել 1907 թ., իսկ երրորդը՝ 1928 թ.: 1967 թվականին «Հայաստան» հրատարակչությունը որոշեց հրատարակել սույն աշխատությունն ամբողջությամբ (Ա, Բ, Գ մասեր), սակայն 1968 թ. մեկ գրքով հրատարակեց միայն Ա և Բ մասերը՝ «Հայոց գրերը» վերնագրով, իսկ երրորդ մասի վերահրատարակությունը այդպես էլ չիրականացավ:

Հրատարակության պատրաստելով գիրքը ամբողջությամբ, մենք լիովին հետևել ենք այն ցուցումներին, որ հեղինակը ավել էր մեզ: Ըստ այդմ, հանել ենք երկրորդ մասի յուրաքանչյուր գլխից հետադարձ փոփոխի «ամփոփում»-ները, որոնք ավելի շուտ գլխի պլաններ էին, քան ամփոփում: Նույն կերպ ենք վարվել նաև երրորդ մասի յուրաքանչյուր գլխի սկզբում տրված բովանդակության համառոտագրության հետ: Այն բոլոր հոդվածները, որոնք հեղինակը ապագրել է 1935 թվականից հետո, հաշվի ենք առել և համապատասխան փոփոխություններ մտցրել շարադրանքի մեջ: Միայն մեկ հոդված, այն է՝ «Աղվանից գիրք», որ հեղինակը մտադիր էր մուծել համապատասխան գլխի մեջ, դարձրել ենք առանձին գլուխ:

Կատարելով անհրաժեշտ փոփոխությունները իր իսկ հոդվածների և դիտողությունների համաձայն, մենք անփոփոխ ենք թողել հեղինակի բոլոր կարծիքները նույնիսկ այն դեպքում, երբ դրանք ժամանակակից գիտության համար արդեն անցած էտապ են ներկայացնում: Խոսքը վերաբերում է հատկապես «Հայոց գրերը» և «Խալդյան գրերը» գլուխներին: Ինչպես խեթագիտության, այնպես

էլ արարտագիտության մէջ 1935 թվականից հետո զգալի առաջընթաց է տեղի ունեցել, և այստեղ տրված տեղեկությունները որոշ շափով հնացած են: Այդուամենայնիվ, անփոփոխ ենք պահել այդ գլուխները՝ իրավունք չվերապահելով «արբազրել» գրանք: Եւ այնքապէտ է աւել նաև նոր աղբյուրների ցանկի մասին, հեղինակի մանվանից հետո, հատկապես 1962 թ. Մեսրոպյան փառատանի արքիվ, լայս են տեսել բազմաթիվ հոդվածներ ու ժողովածուներ, որոնք բնականաբար շենք մտցրել ցանկի մէջ:

Վերջապես, պէտք է նկատի ունենալ, որ բննարկվող հարցերից շատերը (օր. նախամշտոցյան շրջանում հայալեզու գրականության գոյության հարցը) շատ վեճերի տեղիք են տվել ինչպես Հր. Անառայանի սույն հետազոտության երրորդ մասի հրատարակությունից (1928) առաջ, այնպես էլ այժմ, ուստի և չի կարելի կարծել, թե այս աշխատության մէջ պաշտպանվող բոլոր կարծիքները հայագիտության վերջին, սպառիչ խոսքն են: Հաշոց գրերի ստեղծման և Մեսրոպ Մշտոցի կյանքի ու գործունեության հետ կապված բազմաթիվ խնդիրներ այսօր էլ դեռևս հուզում են հայագետներին և, հավանաբար, դեռ շատ երկար ժամանակ կհուզեն՝ բազմաթիվ վեճեր առաջացնելով և նորանոր վարկածներ առաջ բերելով:



## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

### ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Գ Լ Ո Ւ Ե Ա

#### ՀԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Մերոպի և Հայոց գրերի գլուտի վրա խոսող աղբյուրները կարող ենք բաժանել երկու գլխավոր կարգի. առաջին՝ ճին աղբյուրներ և երկրորդ՝ նոր աղբյուրներ:

Հին աղբյուրներ ենք կոչում այն բոլոր մեծ ու փոքր գրութունները, որոնք գտնվում են մեր հին մատենագրութեան մեջ այս ու այնտեղ ցրված. սրանցից միայն երկուսը կամ առ առավելն երեքը (Կորյուն, Ղազար, Խորենացի) կարող են ժամանակակից կամ մոտավոր աղբյուրներ համարվել և այս պատճառով բանասիրական տեսակետով ամենից ավելի արժանահավատ ու վստահելի աղբյուրներն են: Մնացյալ գրութունները այնքան ավելի հեռու են վավերական համարվելուց, որքան մոտենում են նորագույն ժամանակներին: Եթե խիստ քննադատական աչքով նայենք այս համեմատաբար հետին գրութունների վրա, ստիպված պիտի լինենք կասկածել նրանց արժանահավատութեանը: Արդարև, այդ աղբյուրների պարունակած տեղեկութունները, եթե արդեն գտնվում են նախորդ երեք աղբյուրների մեջ, անշուշտ նրանցից քաղված լինելով, նոր բան չեն տա մեզ և, հետևաբար, ավելորդ կրկնութուն են: Իսկ այն տեղեկութունները, որ նույն հնագույն աղբյուրների մեջ չեն գտնվում, պետք է լինեն կամ թյուրիմացություն, բխած հնագույն մի աղբյուրի այս կամ այն հատվածից, կամ անձնակաև ենթադրություն, որ նույն հեղինակի բանասիրական գործունեության արդյունքն է անշուշտ, կամ ավանդություն, որ եղծյալ և խանգարված ձևով հասել է իրենց և կամ վերջապես կեղծիք՝ դիտավորյալ կամ առանց մասնավոր դիտավորության: Այս շորս պարագային էլ այդ կարգի աղբյուրների տված նոր տեղեկութունները պիտի համարվեն սխալ և անվստահելի:

Բայց պետք է իսկույն ավելացնենք նաև այն, որ մեզ հասած հին կամ, ավելի ճիշտ, հնագույն աղբյուրները ամբողջական չեն.

կարող ենք ունեցած լինել մի քանի ուրիշ ժամանակակից աղբյուր-  
ներ, որոնք հետո անհետ կորած են: Զարմանալի է, որ Սահակի և  
Մեսրոպի կրթած 60 աշակերտներից միայն երկուսը կան, որոնցից  
որևիցե գրական աշխատանք հասել է մեզ: Ընթացիկ է, թե հին  
մեսրոպյան շրջանի թարգմանություններն էլ պետք է բաժանենք  
մնացյալ աշակերտների վրա, բայց այնուամենայնիվ բավական  
աշակերտներ պարապ են մնում: Պետք է ընդունել, թե Ս դարի այն  
համատարած մեծ գրական շարժման ժամանակ եղել են նաև ուրիշ  
մատենագիրներ, որոնց աշխատությունները ժամանակը չի հասցը-  
րել մեզ: Սրանց մեջ հատկապես կարող ենք հիշել երեց թարգմա-  
նիչ Աբրահամ խոստովանողի «Մնացորդաց Գիրք Արևելից Հայոց»  
պատմական աշխատությունը, որից քաղվածներ է անում Մեսրոպ  
երեցը Ժ դարում:

Արդ՝ հետին աղբյուրները, որոնք մեզանից ավելի բարեբախտ  
վիճակի մեջ էին այն կորած մատենագրությունց նկատմամբ, կա-  
րող էին սրանցից շատ բան փոխ առնել. եթե իրենք մեկ առ մեկ  
չեն հիշում փոխառությունց տեղերը, ապացույց չէ, թե ձեռքի տակ  
չեն ունեցել: Այս նկատմամբ կարող ենք և պետք է մտածենք, որ  
հետին աղբյուրների մեջ գտնված նոր տեղեկություններից գոնե  
ոմանք քաղված են հին վավերական աղբյուրներից. ուստի և իբրև  
այդպիսիք՝ թանկագին և վստահելի մնացորդներ են: Հետևաբար  
պետք չէ, որ ամեն մի այդպիսի նոր տեղեկության հետ վարվենք  
կատարյալ արհամարհանքով, այլ գոնե վերապահությամբ, սպա-  
սելով, որ ամենակարող ժամանակը մի օր սրանց մասին էլ գո-  
հացում տա:

Ահավասիկ մեր հին աղբյուրների շարքը՝ յուրաքանչյուրի ջրն-  
նությունամբ հանդերձ:

#### 1. Կ Ո Ր Ի Ի Ն

(տպ. Երևան, 1941)

Կորյունը, որ հետին հեղինակներից «սքանչելի» տիտղոսն է  
ստացած, երեց թարգմանիչների կարգից է: Աշակերտեց Սահակին  
ու Մեսրոպին՝ Վաղարշապատի վարդապետարանում, որ ավարտե-  
լուց հետո՝ իր ընկերակիցների հետ ուղարկվեց գավառները՝ քարո-  
ղության համար: Իր կենսագրության այս փոքրիկ կետը, որ մինչև  
այժմ չէ նկատված բանասերներից, հետևեցում եմ Կորյունի հե-  
տևյալ խոսքերից. «Սկսան իսկ սիւնք եկեղեցույ (Սահակ և Մես-  
րոպ)... գումարել ի կողմանս, ի դաւառս, ի տեղիս տեղիս Հայաս-  
տան ազգին, դաս դաս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհա-

սուցելոցս ի կատարումն գիտութեան, բաւականս և առ ի զայլսն զեկուցանելոյ: Այստեղ զճասուցելոցս բառի վերջինսն ցույց է տալիս, թե ինքն էլ իր ընկերների հետ հասել էր գիտութեան կատարելութեան (ուսումը վերջացրել էր) և կարող էր ուրիշներին դաս տալ, ուստի և ուղարկվեց Հայաստանի գավառները՝ ուսուցչութեան: Այս բանը տեղի ունեցավ 407 թվին: Սրանից 21 տարի հետո՝ այն է 429 թվին, այն ժամանակ, երբ Եզնիկ Կողբացին և Հովսեփ Պաղնացին Բյուզանդիոն գնացին, Կորյունը ևս իր Ղևոնդ ընկերակցի հետ ուղարկվեց այնտեղ՝ իր ուսումը շարունակելու համար: Ավանդութիւնը ասում է, թե ուսումը ավարտելուց հետո իր Ընծակ ընկերոջ հետ ուղարկվեց Երուսաղեմ. այնտեղ էլ մի ժամանակ մնալուց հետո՝ վերադարձավ Հայաստան, իր հետ բերելով ս. Կյուրեղ Երուսաղեմացու ապաշխարող արձակելու կարգը: Կորյունը ձեռնադրվեց Վրաստանի եպիսկոպոս և թերևս այս պաշտոնի մեջ էլ կնքեց իր մահկանացուն: Կորյունի մասին կենսագրական ուրիշ տեղեկութիւններ չկան:

Կորյունը գրել է մի համառոտ երկասիրութիւն, որի վերնագիրն է «Պատմութիւն վարուց և մահուան սրբոյ առն երանելոյ Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի»: Բայց այս վերնագիրը հետին ժամանակի բան է. որովհետև, ինչպես Մեսրոպի կենսագրութեան մեջ, գլ. ԺԴ, ավելի մանրամասն պիտի ցույց տանք, Կորյունն իր ամբողջ աշխատութեան մեջ միշտ Մաշտոց ձևն է գործածում և ո՛չ բնավ Մեսրոպ, որ խորհնացու և ուրիշ հետին մատենագիրների սիրած ձևն է: Միայն հիշյալ խորագրի մեջ է, որ Մեսրոպ ձևը երևան է գալիս:

Կորյունն իր աշխատութիւնը պատրաստել է առաջարկութեամբ կամ իր բառով «հրաման»-ով Քառն միոյ պատուականի Յովսէփ կոչեցելոյ աշակերտի առն այնորիկ»: Այս Հովսեփը առհասարակ համարվում է Հովսեփ եպիսկոպոսը, որ հետո կաթողիկոսական պաշտոնի բարձրացավ: Իրեն հորդորել են նաև իր աշակերտակից ընկերները, որոնք, Հունաստանից վերադառնալով, վախճանած գտնելով իրենց սուրբ վարդապետին, իրրև հոգեկան մխիթարութիւն՝ ցանկացել են ունենալ նրա կենսագրութիւնը (Մալխասյանց, Պատմ. Մատ. էջ 85):

Կորյունը լինելով ժամանակակից, աշակերտ և գործակից ևս Մեսրոպի՝ իր աշխատութիւնը մեր ունեցած բոլոր աղբյուրների մեջ ամենից բարձրն ու հավատարիմն է: Փարպեցին և խորհնացին, որոնք Կորյունից հետո կարևորագույն աղբյուրներն են, օգտվել են այս աշխատութիւնից. ուրեմն և այս գրքից յայտք է գաղափար կազմենք գրերի գյուտի և առհասարակ թարգմանական գործունեու-

Քյան առաջին շրջանի մասին. այնպես որ, եթե այս գրվածքը չլիներ՝ մեր գրականության պատմության սկզբնափորության և փառավոր շրջանի մասին մեր տեղեկությունները թերի կլինեին» (Մալխաս. էջ 85):

Կորյունի աշխատությունը հասել է մեզ երկու տարրեր խմբագրությամբ, որոնք ծանոթ են բանասիրության մեջ «ընդարձակ» և «համառոտ կամ փոքր» անուններով: Զանազանությունը, որ կա այս երկու գրվածքների մեջ, այնքան մեծ է և խոր, միևնույն խնդրի առթիվ երկուսը իրար այնպես հակասական տեղեկություններ են տալիս, որ եթե սրանցից մեկը Կորյունինն է, մյուս անպատճառ հետին դարերի ձևափոխություն է: Մի քիչ հետո պիտի քննենք այն խնդիրը, թե այս երկուսից ո՞րը բուն Կորյունի գործն է և ո՞րը հետին ձևափոխություն:

Կորյունի ընդարձակ խմբագրությունը տպված է նախ 1833 թվին, Վենետիկ, Մամբրե Վերձանոզի երկու ճառերի և Գալիթ Անհազմի այլևայլ գրվածքների հետ՝ «Կորին, Մամբրե, Դալիթ» խորագրով: 1854-ին Սոփիերի ժԱ հատորի մեջ հրատարակված է համառոտ խմբագրությունը: 1894-ին, դարձյալ Վենետիկում, հրատարակվեց Կորյունը, յուրաքանչյուր էջի վրա նախ ընդարձակ և հետո համառոտ խմբագրությունը դրված: Հիշենք նաև ընդարձակ Կորյունի բոլորովին նոր համառոտությունը, որ պատրաստեցին և հրատարակեցին Գարագաշյան և Յ. Գուրգեն՝ իրենց «Ճաշակ ոսկեղէն դպրութեան» զրարար ամսաթերթում և շատ ավելի համառոտ՝ աշակերտական մի ձև, որ հրատարակված է իմ «Գրարարի ծաղկաբաղ» դասագրքի մեջ (տպ. Երևան, 1936, էջ 22—31):

Կորյունի «երեբէջեյան» հրատարակությունը խոստացել էր նորայրը: Առաջին սյունակում պիտի լիներ ընդարձակ Կորյունը, իսկ երկրորդ և երրորդ սյունակներում Ազաթնագեղոսի և Բուզանդի համապատասխան հատվածները: Հրատարակությունը պիտի լիներ 1898 թ. Պետերբուրգում (տե՛ս նորայր, Քննասեր, Ա էջ 12 և Բ էջ 7): Բայց այս խոստումը անկատար մնաց:

Ընդարձակ Կորյունի գիտական հրատարակությունը կազմեց Գառնիկ Ծնողյան, Երուսաղեմ, 1930 թ. բազմաթիվ ծանոթություններով, քննություններով և ուղղումներով:

Ծնողյանի հրատարակությունը Կորյունի քննական հրատարակությունը չէ, այսինքն չէ կազմված Կորյունի զանազան ձևագրերի համեմատությամբ, բայց լուսարանված է բազմաթիվ լեզվական համեմատություններով և պատմական ծանոթություններով, որոնք բուն գրքից եռապատիկ ավելի ընդարձակ են: Կորյունի բնագիրը գրեթե նույնն է՝ ինչ որ Վենետիկի հրատարակությունը,

տեղ-տեղ փոքրիկ աննշան ուղղումներ մտցրած: Ուղղումները ընդհանրապես հաջող և արդարացի են, բայց մի քանի տեղեր անհաջող: Օրինակ՝

էջ 13. Եւ արդ առեալ յերկոցունց համարձակութիւն ի կիր արկանել և զվարս առն արդարոյ.— Յնտզլյան հրատարակութիւնն ունի ի գիր արկանել «գրել», փոխանակ ի կիր արկանել «գործագրել»:

էջ 13.— Եկեալ հասեալ ի գաւառն Արշակունեաց թագաւորաց Հայոց մեծաց.— Յնտզլյան, էջ 13 ուղղում է հաջող կերպով ի դուռն.

էջ 14.— Յանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն.— Յնտզլյան հաջող կերպով ուղղում է զուզականացն.

էջ 20.— Տիրադրութեք յիւրեանց կուռս ձուլածուին երկիր պագանէին.— շատ հաջող է Յնտզլյանի սրբագրութիւնը՝ տիրադրութեք իւրեանցակառ ձուլածուին երկիր պագանէին:

Հունահայաստանի սպարապետի անունը (Անատոլիս) դարձրած է Անտիոք, Եղեսիայի Բաբելլաս եպիսկոպոսը ուղղած է Բաբելլաս, և հերձվածող Քէոզոսը՝ Քէոզոսու:

Այս բոլորը շատ լավ է:

Ընդհակառակը, անհաջող են հետևյալները.

էջ 11.— Բարձրաձայն բարբառով ի փառաբարութիւն դառնայ. վենետիկի մի ձեռագիր ունի փառաբարութիւն, որ պետք էր մտցնել ոչ-մեսրոպյան փառաբարութիւն սխալ ընթերցվածի տեղ.

էջ 11.— Երանելոյն Ղուկասու մատենագրեալ. Յնտզլյան փոխել է՝ երանելոյն Ղուկասի մատենագրեալ. սխալ է Ղուկասի, պետք է մնա ճշտիվ Ղուկասու.

էջ 36.— Կորգեալ զնոսա ահաւոր զօրութեամբն Քրիստոսի. մի ձեռ. ունի կորգելով. Յնտզլյան դուրս է արել կորգեալ լավագույն ձևը և վերցրել է կորգելով, որ նվազ լավ է.

էջ 47.— Ոչ սուտապատումն նարարախօս եղեալ առ ի մերոց բանից զհօրէն իմոյ կարգեցաք.— Յնտզլյան դուրս է գցել նարարախօս բառը՝ հայտնի չէ ինչո՞ւ Պետք էր պահել անպատճառ, քանի որ Ագաթանգեղոսն էլ համապատասխան տեղում ասում է. Ոչ սուտապատումն նարարախօսեալ առ ի մերոց բանիցն:

Կորյունի բնագրի մեջ զանազան սրբագրութիւններ առաջարկել են նաև Նորայր, Քննասէր (Stockholm, 1887), Ա էջ 12—17, Հ. Գ. Նահապետյան, Բաղմ. 1907, էջ 195—199 (ասում է ռաբալարելի), բայց չկա շարունակութիւն) և Հ. Ն. Ակիւնյան, ՀԱ 1932, էջ 227—33:

Կորյունի գիտական հրատարակութիւնը՝ էջմիածնում գտնված բոլոր ձեռագրերի համեմատութիւնը՝ կազմել էր Գ. Տ. Մկրտչյան,

ինչպես որ հայտարարում է ինքը Արարատ ամսաթերթում, 1912, էջ 507 ծան.: Հեղինակի մահով այս աշխատությունը անհետացավ: Բուրոզիևի նոր քննական մի հրատարակություն լույս տեսավ նորերս Մ. Արեղյանի աշխատությամբ, որից անում ենք մենք էլ մեր կոչումները:

Օտար թարգմանություններն են, նախ գերմաներեն, որ հրատարակեց B. Welte հայագետը, Քիւփինգեն, 1841, Վիլթենմերգի Վիլհելմ Ա թագավորի գահակալության 25-ամյակի առթիվ, այս վերնագրով. Goriun's Lebensbeschreibung des heiligen Mesrop: Երկրորդ անգամ թարգմանվեց ֆրանսերեն՝ էմիլի ձեռքով, և հրատարակվեց Լանզուայի հայ պատմագիրների հավաքածուի երկրորդ հատորում, այսպիսի վերնագրով. Goriun, Biographie du bienheureux et saint docteur Mesrob, traduite pour la première fois en français, par Jean-Raphael Emine.

Կորյունի անձի և նրա աշխատությանց մասին եղած քննական գրվածքները հետևյալներն են.

1. Հ. Գ. Զարբհանյան, Հայկական հին դպրութեան պատմութիւն. Բ. տիպ. Վենետիկ, 1886, էջ 291—295:

2. Գաթրճեան, Հատակոտորք. Հանդէս ամս. 1887, էջ 10 և:

3. Fr. Müller, Gazar Pharbetshi und Koriun, WZKM 5, 36—38, թարգմ. Հանդ. ամս. 1891, էջ 178—179:

4. Ֆէթթէր, Հայկական աշխատասիրութիւնք, Վիեննա, 1895, էջ 78—82:

5. Գ. Տէր Մկրտչեան, Ագաթանգեղոսի աղբիւրներից. Վաղարշապատ, 1896, հատկապես էջ 15—25:

6. Հ. Հովհ. Թորոսեան, Համառոտ տեսութիւն Կորեան և իւր գրութեան վերայ. Բագմ. 1897, էջ 110—115, 303—310: (Կորյունի վրա գրված շատ ամփոփ և ամբողջական ուսումնասիրություն է, ուր շոշափված և պարզված են Կորյունի մասին հարուցված բոլոր խնդիրները. զժբախտարար աշխատությունը կիսատ է մնացած):

7. Ստ. Մալխասյանց, Դասընթաց Հայոց մատենագրութեան պատմութեան, Թիֆլիս, 1899, էջ 85—90:

8. Հ. Բ. Սարգիսեան, Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքը, Վենետիկ, 1890, էջ 107—119:

9. Նորայր Բիզանդացի, Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք. Տիֆլիս, 1900, որի մասին՝

10. Գր. Մալխաս(եան) ունի երկար մի մատենախոսական, Հանդ. ամս. 1902, էջ 136, 212 և 242:

11. Ֆնտզյան, Պատասխանս պրոֆ. Ադոնցին (Կորյունի մասին). ՀԱ 1927, էջ 529—541:

12. Աղոնց.— Դարձեալ Կորիւնի շուրջը, ՀԱ 1928, էջ 76—94:

13. Աճառեան, Երկու ուղղում Կորիւնի մէջ. Արմֆանի տեղեկ. 1941, № 1, էջ 169—170 և № 3—4, 142:

14. Հ. Ն. Ակիւնեան, Կորիւն, ՀԱ 1935, էջ 454—8:

Սրանցից դուրս կան նաև ցանուցիր տեղեկութիւններ այս ու այն քննութեան մեջ, որոնք հարկավոր եղած ժամանակ կհիշենք: Հիշյալ քննական աշխատութեանց մեջ Կորյունի մասին հարուցված խնդիրները հետևյալներն են.

1. Ի՞նչ ազգից էր Կորյունը.

2. Ո՞րն է Կորյունի բուն խմբագրութիւնը, ընդարձակը թե՛ համառոտը.

3. Ե՞րբ գրեց Կորյունը.

4. Ի՞նչ հարաբերութիւն ունի Կորյունը Ազաթանգեղոսի և Բուզանդի հետ:

Անցնենք այժմ խոսելու սրանցից յուրաքանչյուրի վրա կարգով:

1. Ի՞նչ ազգից էր Կորյունը.— Առհասարակ ընդունված էր բանասերների կողմից, թե Կորյունը հայ է, վրաց եպիսկոպոս. այս մասին ոչ մեկը կասկած չէր հայտնած: Առաջին անգամ Գ. Տեր Մկրտչյան, Ազաթանգեղոսի Աղբիւրներից, էջ 22, այն կարծիքն է հայտնում, թե Կորյունը վրացի կամ գոնե վիրահայ էր\*: Այս ենթադրութեան իբրև ապացույց է դնում Կորյունի մի խոսքը: Կորյունը, խոսելով վրաց քարոզութեան մասին, ասում է. «Եւ արդ զնոսա, որ յայնչափ ի մասնաւոր և ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամօքն մի ազգ կապեալ՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ, յօրինէր. յորոց և իմ անաթանիս՝ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ. որոց առաջինն Սամուէլ անուն ևլն (էջ 15—16)»: Շեղատառ տպված մասը Միաբանը հասկանում է «յորոց (ի վրաց) և ես անարժանս՝ Կորիւն»: Սրան համակարծիք է նաև Հ. Յովհ. Թորոսեան, Բազմ. 1897, էջ 111—112, ընդունելով, թե անշուշտ յորոցն կ'ակնարկէ ազգը, որ յիշուած է նախորդ տողին մեջ, ինչպես նաև յաջորդ տողին՝ «որոց առաջինն Սամուէլ անուն» խօսքին մէջ որոցով վրացի ազգը կամ ժողովուրդը կ'ակնարկէ»: Միաբանը և Թորոսեանը վերի ենթադրութիւնը հանելու համար յորոց բացառական հոլով են ընդունած, եթե մի՛ միայն ա՛յս լիներ կարելի, անշուշտ իրավունք կունենային. բայց դժբախտաբար հայերենի օրենքները թույլ են տալիս հատվածը

\* Արդար լինելու համար պետք է ասել, թե առաջին անգամ այս կարծիքը հայտնել է Ստ. Նազարյանը, Հիւսիսափայլ, 1860, էջ 236, բայց շատ անցողակի կերպով. իր բառերն են՝ «Կորիւն Աքանչիլին, ինչպես երևում է, ազգով վրացի և եպիսկոպոս Վրաստանի վիճակում»:

Եսև ուրիշ տեսակ հասկանալու. յսոց կարելի է տեսել եսև իբրև սևտական. յ Եսխողիբբ ափելագրությամբ է գրված ի կարգ բառի Եսխողիբբի պատճառով. այնպես որ յսոց պատկանում է Եսխողագրութեան ձևին՝ իբրև հատկացուցիչ. որով հատվածը հասկացվում է զե իմ անարժանիս եղևալ ի կարգ ի վիճակ Եսխողագրութեան որոց (Նոցա), այսինքն զորոնց Եսխողագրութեան կարգին հասա ես անարժանս էլ: Այս տեսակ շրջումներ ամենասովորական բաներն են հայերենի համար:

Միայլ է ասում Քորոսյանը, թե վերի հատվածում երկրորդ որոցը վրացի ազգը կամ ժողովուրդը կ'ակնարկէ: Ոչ. այդ որոցը վրացի ազգը չի ակնարկում, այլ «Եսխողագրութեանը». Մամուլը վրացոց առաջինը չէր, այլ Եսխողագրութեան առաջինը: Եվ առաջին ասելով Կորյունը ո՛չ թե ժամանակագրական կարգն է հասկանում, որովհետև նրանից պուշ Վրացիք շատ Եսխողագրութեան են ունեցել, այլ աստիճանը: Մամուլը բոլոր Եսխողագրութեանից բարձր էր, ինչպես որ Կորյունն էլ մի տող հետո, խոսքը ավելի պարզարանելով՝ ասում է. «Եսխողագրութեան կացեալ տանն արջունականի»:

Մարքվարթի, էջ 41 ես ընդունում է, որ Կորյունը վրաց Եսխողագրութեան էր, բայց վրացի լինելու մասին ո՛չ մի ակնարկ չունի:

2. Քորոսյանը նույն տեղում ավելացնում է եսև երկու նոր ապացույց, Կորյունի վրացի լինելը ապացուցանելու համար: Առաջինն այն է, որ Կորյունը գովեստով է խոսում Ջաղայ թարգմանի, Մամուլը Եսխողագրութեան, Արձիւղ թագավորի և Աշուշա իշխանի մասին, որոնք բոլորը վրացի էին: Այս բանը հաղիվ թե իբրև ապացույց կարելի լինի համարել, որովհետև Կորյունը նույնչափ և տասնապատիկ ավելի գովեստ է տալիս Հայոց, հատկապես էջ 11, ուր Մեսրոպին հավասարեցնում է Մովսեսին, ներողություն խնդրելով իր այս հանդգնութեան համար: Բացի սրանից՝ Վրաց համար ասված վատ խոսքեր երբեք չեն պահասում Կորյունի մեջ. ինչպես էջ 15 «ի կողմանց կողմանց և ի խանիճազանց գաւառաց իշխանութեան իւրոյ... զազտ և զժանգ շարաւաճոտ դիւացն և զսնտիւագործ պշտամանն ի բաց անշափ անջատեալ ի հայրենեաց իւրեանց...»: Վրաստանը այնչափ է արհամարհում Կորյունը, որ մինչև անգամ մի տեղ չի ուզում անունը տալ, այլ բարբարոսների երկիր ասելով բավականանում է. այնչափ տիպական է իրեն համար այս վերագիրը վրացիների հանդեպ. «Հող ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի և վասն բարբարոսական կողմանն». և առնոր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին» (էջ 15):

\* Ահիւնյան, ՀԱ 1935, 527 բարբարոսական ուղղում է սրբաբանոյ հիւսիսական:



Երկրորդ ապացույցն էլ այն է, որ Առաջին կրօնական պատերազմի ժամանակ, երբ ճամէն կողմէ հայազգի իշխանք, եպիսկոպոսք եւ ո՛ր եւ է աստիճանաւոր անձինք մէջտեղ կ'երկին, ձայն կը բարձրացնեն, կը բողոքեն, գրիչ և սուր կը շարժեն, կը գումարին՝ խորհուրդ կ'ընեն... չի կայ՝ շերեւիր Կորիւն, նշանաւորն յաշակերտս ս. Մեսրոպբայ, անբաժան ընկերն Ղեւոնդայ, Եղնկայ եւ Յովսէփովա: Իսկապես, երեք ապացույցներէց ամենից զօրեղը այս է. սակայն այս պարագայից կարելի է հետևցնել, թե 451 թվին արդեն Կորյունը վախճանած էր. Թորոսեան առանց ապացույցի չի ուզում ընդունել այս բանը. բայց եթե ընդունենք Կորյունի ծննդյան թվականը 380—390, ինչպես Թորոսյանն է առաջարկում (անդ, էջ 111), 451 թվին Կորյունը պիտի լիներ 70—60 տարեկան ծերունի, հավանաբար վախճանված:

Ըստ այսմ շենք կարող ապացուցված համարել Միաբանի կարծիքը, որով Կորյունը վրացի կամ վիրահայ է, և ըստ Թորոսյանի ճմին այն պատանիններէն, զորս «հրաման տայր... արքայն Վրացի կողմանց ժողովել տալ ի ձեռն վարդապետին (ս. Մեսրոպբայ)»: Կորյունն աշակերտել էր դրանից բավական առաջ Մեսրոպին՝ էջմիածնի վարդապետարանում և այն միջոցին, երբ սկսվում էր Վերաստանի լուսավորութեան գործը և վրացի պատանիներին հավաքում էին, Կորյունն արդեն իր ուսումը ավարտած ուսուցչութեամբ էր պարապում Հայաստանի գավառներից մեկում, որից հետո, ահա այդ ժամանակ, դարձավ վրաց եպիսկոպոս:

Բոլորովին այլ կարծիք ունի այս մասին Նորայրը, որ Կորյունի հիշյալ հատվածը խանգարված համարելով՝ սրբագրում է հետևյալ ձևով.

«Յորոց և գտան արժանիք ելանել ի կարգ եպիսկոպոսութեան վիճակի» (տե՛ս Նորայր, Կորիւն վրդ. էջ 385—6): Սրանով նույն իսկ չի էլ ընդունում, որ Կորյունը Վրաց եպիսկոպոս է ձեռնադրվել:

Նորայրի դեմ է դուրս գալիս Յնտզլյան, էջ ԺԸ—ԺԹ և էջ 33, որ բոլորովին անտեղի և սխալ է համարում այս սրբագրութունը: Յնտզլյանը գտնում է, որ յորոց և-ին հաջորդող բառը բայ չի լինում, այլ անձնական դերանուն. և տալիս է օրինակներ Կորյունից. բայց բերած օրինակներից մեկն է միայն դերանուն, մյուս երեքը՝ բայ. «Աշակերտակցաց մերոյն վարդապետութեան, ուստի և իմ. Զորոց և մարգարէին իսկ գովեալ. Զորոյ և յայտ արարեալ աստուածեղէն օրինացն. Յորոց և գտեալ շնորհս»: Ասում է նաև, թե ելանել ի կարգ վիճակի բնավ մեսրոպյան չէ. մինչդեռ Նորայր (անդ, էջ 386 ծան.) տալիս է մի օրինակ. «Ի վանականաց կարգ ելանէր»:

Այս բոլորով հանդերձ իրավունք ունի Տնտգլյանը նորայրի սրբազրույթյունը մերժելու, որովհետև միայն մի առդի մեջ չորս սրբազրույթյունը շահազանց շատ է:

Տնտգլյան, էջ ԺԸ—ԻԲ, տալիս է նոր ապացույցներ հաստատելու համար, քե Կորյունը վրացի էր:

ա) Կորյունի վրացի լինելու դեմ կարելի էր առարկել, քե նա ինչպե՞ս կարողացավ այդպիսի պերճ հայերեն գրել.— Պատասխան.— Որովհետև երիտասարդ հասակից մեծացել էր Հայաստանում և լավ էր սովորել հայերենը: Նույնիսկ Կորյունի այն արտասովոր ոճաբանությունը, բարդ բառերը և քերականական անկանոնությունները օտար ծագում են ննթադրում:

բ) Կորյուն «առյուծի ձագ» իմաստով բնիկ հայերեն բառ է և վրացուն հարմար չէ.— Պատասխան.— Սա վրաց կիրիսն անունն է, որ այսպես ձևափոխվել է հայոց մեջ:

գ) Կորյունն իր մատենիկում Վրաստանի և վրաց մասին ավելի շատ տեղեկություն է տալիս, քան ուրիշ տեղերի մասին. ինչպես՝ Աշուշա իշխան Տաշրաց, Բակուր և Արձիղ թագավորներ, Մովսես և Սամուէլ եպիսկոպոսներ, Ջաղա թարգման և այլն: (Այս և այլն—ը Տնտգլյանին է):

դ) Հայոց մասին խոսելիս միշտ օտար մարդու նման է խոսում. ինչպես՝ Հայաստան աշխարհին (ո՛չ քե Հայաստան աշխարհիս), առ հազարապետութեամբն Առաւանայ ուրումն (առանց ցեղի անունը հիշելու՝ անտարբեր ձևով), շրջէր զգաւառօքն աշխարհին Հայոց, կէս ազգին Հայոց, աշխարհահալած արտաքոյ իւրեանց մերժեցին, և այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ, ուշ եղեալ երկոցունց երանելեացն (Սահակայ և Մաշթոցի) զիւրեանց ազգին զպարութիւն առանել յարգել:

ե) Նախատական խոսքեր ունի Հայոց մասին. ինչպես՝ Ի սատանայական դիապաշտ սպասատրութեանէն (Գողթն գավառի Հայոց մասին), առանել գազանամիտ վայրենագոյն ճիւղարարոյ (Սյունիքի Հայոց մասին), խուժադուժ կողմանք Մարաց, դիւական սատանայակիր, ճիւղային (Փայտակարանի մասին):

զ) Երբեք չի ասում «մերոյ աշխարհի, ազգիս մերոյ». նույն իսկ երբ գրերի գլուտը եղավ, չի ասում «ազգիս մերում» կամ գոնե «ազգիս», այլ «Հայաստան ազգին»:

Այս բոլորը շնչին պատճառարանություններ են, որոնցով չի կարելի մարդ համոզել: Ահա մեր պատասխանը.

ա) Կորյունի պերճ, անկանոն, հորդարույթ լեզուն ամենևին նշան չէ օտարության, այլ ճիշտ հակառակը: Իր մայրենի լեզվին

բացարձակ տեր, խորահմուտ մարդն է, որ թույլ է տալիս իրեն այդպիսի հանդգնություններ: Այդպիսի հորդաբուխ, հանդուգն ու անկանոն լեզու ունեն նարեկացին, Թեոդորոս Քոթենավորը, Մագիստրոսը և այլք. նրանք օտարազգի են:

բ) Կորյուն անունը կապել Կիրիոնի հետ ցնդաբանություն է և ոչ ստուգաբանություն: Եթե հայերը շփոթել և աղավաղել էին Կիրիոնը և դարձրել Կորյուն, ինքը Կորյունն է՛լ չգիտեր իր անունը, որ ասում է «Կորինա»: Զուր է կարծում Ֆնտալյան, թե Հայոց մեջ Կորյուն անունը ուրիշ անգամ չէ գործածված: Ունինք Կորիւն Արժ-բունի, որ կախաղան բարձրացվեց Կաշմ ոստիկանի հրամանով՝ 707 թվին (տե՛ս Ղևոնդ պատմիչ՝ գլուխ Ժ, Մխիթար Անեցի՝ գլուխ Ի է և Ասողիկ՝ Բ դ): Այս Արժրունի՞ն էլ է վրացի Կիրիոն: Բայց ի՞նչ անենք Թրակացու քերականությունը, էջ 43 և Մովսեսի քերականությունը, էջ 178, որոնք իբրև Հայոց մեջ գործածական հատուկ անուն, ի մեջ այլոց հիշում են նաև Կորիւն:

գ) Ճիշտ է ասում Ֆնտալյանը, թե Կորյունը վրաց մասին ավելի շատ տեղեկություն է տալիս, չքան ուրիշ տեղեկու վրաց: Որո՞նք են այդ ուրիշ տեղեկերը.— Հայաստա՞ն.— բայց ամբողջ գիրքը Հայաստանի մասին է: Պարսկաստա՞ն.— բայց Պարսից թագավորների ժամանակագրության մասին իր վերջաբանում անպիսի տեղեկություններ է տալիս, որ գերազանց է բոլորից և որպիսին Հայոց թագավորների մասին էլ չունի.— Հունաստա՞ն.— բայց գիրքը Հունաց մասին չէ. այնու ամենայնիվ հիշում է Անտիոքոս սպարապետին, Թեոդոս և Արկադիոս կայսրներին, Ատտիկոս պատրիարքին, Կոստանդինական քաղաքն, Սամուսատական քաղաքը և Մելիտինե: Ֆնտալյանը վրաց մասին հիշում է վեց անուն և հետո ավելացնում է և այլն. բայց ճիշտ չի ասում. «և այլն» չկա. ընդ ամենը վեց անուն է, որի դեմ հույներից ունենք 7 անուն, չհաշվելով դեռ Մելիտինեի Ակակիոս եպիսկոպոսին, Թեոդո(րո)ս հոռոմ հերձվածողին, Հուսիսանոս հույն գրչին:— Բայց գուցե Ֆնտալյանն ուզում էր համեմատել Աղվանի՞ց հետ.— այստեղ էլ ունենք Բենիամէն թարգման, Երեմիա եպիսկոպոս, Արսվաղէ թագավոր, Մուշեղ եպիսկոպոս Բաղասականի, Յովնաթան քահանա: (Վեցի դեմ հինգ հոգի բավական չէ՞):

դ) Հայոց մասին խոսելիս միշտ օտար մարդու պես է խոսում. աշխարհն Հայոց և այլն և ո՛չ թե աշխարհն Հայոց կամ աշխարհ մեք: Բայց այդ միեկնույն ձևով է խոսում նաև վրաց մասին: Օրինակ՝ Հոգ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի և վասն բարբարոսական կողմանն և առնոյր կարգել նշանագիրս վրացերէն լեզուին... յարուցեալ գնայր իշանել ի կողմանս վրաց, և երթեալ յանդիման

լինէր բազաւորին (շկա մեքս), որում անուն էր Քակուր և եպիս-  
կոպոսի աշխարհին՝ Մովսէս: Եւ առանելագոյն հնազանդեալ... քա-  
զաւորին և զօրացն: Եւ գտեալ զայր մի թարգման վրացիքէն լի-  
զօւին... հրաման տայր այնուհետև արհայն վրաց՝ ի կողմանց կող-  
մանց և ի խառնադանջ գաւառաց իշխանութեան իւրոյ... զազու և  
զժանգ շարաւահոտ դիւացն և զսևոտիագործ պաշտամանն ի բաց  
այնչափ անջատեալ ի հայրենեաց իւրեանց... և արդ զնստա, որ  
յայնչափ ի մասնատր և ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով  
աստուածաբարբառ պատգամօքն մի ազգ կապեալ (չի ասում կա-  
պեցաք)՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ յօրինէր (չի ասում եղաք  
կամ գոնն յօրինէր զմեզ կամ զազգ մեր)... հրաժարեալ ի նոցանէ  
(չի ասում ի մէջ կամ յերկրէն մերմէ)» և այլն:

Ավելի զարմանալին այն է, որ Կորյունն իր մասին էլ խոսելիս  
այս շեղոք երևույթն է ստանում: Այսպես. Այսպս յետ ժամանակի  
ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աչ-  
խարհէս՝ դիմել իջանել ի կողմանս Տունաց, որ և Ղեւոնդէս առաջ-  
նոյն անուն էր և երկրորդին Կորիւնս, և մատուցեալ յարէին յՅզ-  
նիկն, իբրև առ ընտանեզոյն սննդակից՝ ի Կոստանդինական քա-  
ղաքին և անդ միաբանութեամբ հոգևոր պիտոյիցն՝ զխնդիրն վճա-  
րէին: Որոց յետ այնորիկ... զային երևելով աշխարհին Հայոց և  
առաջի դնէին հարցն զբերեալ կտակարանսն:

Այս բոլորի մեջ մասնակից է նաև Կորյունը, ուստի պիտի ասէր  
մեզ (փոխանակ ոմանց եղբարց), երկրորդիս (փոխանակ երկրոր-  
դին), յարէաք, վճարէաք, զայաք էրէաք, դնէաք (հոգնակի առա-  
ջին դեմք՝ փոխանակ հոգնակի երրորդի), մինչև անգամ իր ամե-  
նասիրելի ընտանեզոյն սննդակցի մասին խոսելիս չի զնում մեր  
կամ իմ ստացականը:

Հետևում է, ուրեմն, որ դա Կորյունի անձնական ոճն է, թերևս  
նշան համեստութեան, խոնարհութեան և ո՛չ թե օտարութեան կամ  
անտարբերութեան:

Կորյունը այսպես է վարվում նաև Աստուած, Յիսուս, Քրիս-  
տոս, Տէր բառերի հետ, որոնք միասին 49 անգամ գործածել է, և  
որոնց դեմ միայն մի անգամ գտնում ենք «Աստուծոյ փրկչին մերոյ  
Յիսուսի Քրիստոսի» (էջ 36), և մեկ էլ «շնորհօքն Քրիստոսի Աս-  
տուծոյ մերոյ» (էջ 47), մինչդեռ ուրիշ զրգերում շատ սովորական  
է Տէրն մեր և այլն:

Այնու ամենայնիվ մի քանի տեղ երևում է Կորյունի անհատա-  
կանը. հմմտ.

էջ 7. Այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երևեցաւ.

էջ 8. աշակերտակցաց մերոյն վարդապետութեան.

էջ 14. առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ Առաւ-  
նայ ուրումն.

էջ 22. Երանելի հարցն մերոց համարձակութիւն առեալ.

էջ 22. Երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքան-  
չելի լինէր.

էջ 23. Զաշակերտեալսն ճշմարտութեանն, զճասուցելոցս ի կա-  
տարումն գիտութեան.

էջ 24. Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշ-  
խարհն ելանէր (որով ցույց է տալիս, թե ինքը գիրքը գրած միշտցին  
Արարատումն էր).

էջ 33. Ի Հայաստան աշխարհէս.

էջ 40. Երանելիս այս (Մաշտոց).

էջ 47. Ի մերոց բանից զհօրէն իմոյ կարգեցաք.

էջ 47. Առ ի մէնջ հարբն ի կատարումն դարձան:


Ըստ այսմ արժեք պետք չէ տալ, երբ Կորյունն ամենաանհրա-  
ժեշտ տեղերումն էլ մոռանում է զնիւ անձնական կնիքը. օրինակ՝  
էջ 32. Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն  
(ուզում է ասել յաշակերտացս) յուղարկել ի կողմանս Ասորոց.—  
էջ 42՝ զՄաշթոցէ ասեմ (կարելի էր և ասել զՄաշթոցէս) և այլն:

Ե) Կորյունը նախատական բառեր ունի Աղվանից համար. «Քըն-  
նեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին (էջ 29). Վայրենա-  
միտ և դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից (էջ 31):  
Սատանայակիր և դիւամու ազգին» (էջ 31): Այսպիսի բառեր չի  
գործածում բնավ Այրարատի և Հունահայոց մասին: Բայց Վրաց  
մասին... «Ի խառնաղանջ դաւառաց իշխանութեան իւրոյ... զաղտ  
և զժանգ շարաւահոտ դիւացն և զսնոտիագործ պաշտամանն»  
(էջ 26): Այնպես սոսկալի է Վրաստանը նրա համար, որ մինչև ան-  
գամ անունը չի տալիս և պարզապես ասում է. «Հող ի մտի ար-  
կանէր սիրելին Քրիստոսի (=Մեսրոպ) և վասն բարբառուակեան  
կողմանն և առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին (էջ 25)»:  
Այսպէս պիտի խոսեր Վրացին իր հայրենի երկրի և նրա դպրու-  
թյան սկզբնավորութեան համար:

Նկատելի է, որ Յնտզլյանի գրքի հրատարակութիւնից հետո,  
նույնիսկ Թորոսյանը (Բազմ. 1932, էջ 152) հրաժարած իր նախ-  
կին կարծիքից, ասում է. «Տակաւին վիճելի է, ըստ իս, Կորեան  
վրացի ըլլալը կամ ոչ»:

Այս բոլորից հետևում է, թե Կորյունը վրացի չէ, այլ միայն  
Վրաց եպիսկոպոս:

Ոմանք դեռ այս վերջին կետն էլ չեն ընդունում. այսպես են  
Նորայրը և Ակիւնյանը: Նորայրի սրբազրութիւնը արդեն տեսանք:



Ակիբեյան, ՀԱ 1935, 528, նույն հատվածը սրբագրում է՝ «Յորոց և ոմանք արժանի եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակացն» կամ «Յորոց և ոմանք արժանի եղեն ի կարգ եպիսկոպոսութեան վիճակի»: Իսկ «Անյայտ Աղանդատրներ», էջ 51—52, նույնը սրբագրված է «յորոց և զոմանս արժանիս եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ»:

2. Ո՞րն է Կորյունի բուն խմբագրությունը, ընդարձակը թե նամառոտը.— Այս մասին բանասերների կարծիքները զանազան են. ոմանք համառոտի կողմն են, բայց ավելի մեծ մասը ընդարձակի կողմն է:

Մինչև 1854, համառոտ Կորյունի հրատարակության թվակա- նը, միայն ընդարձակը ծանոթ լինելով, ա՛յս միայն բնիկ և հա- րազատ աշխատություն էր ճանաչված. այնպես որ բնական է, թե գերմաներեն թարգմանությունն էլ նրա վրայից պիտի լիներ: Բայց համառոտի հրատարակությունից հետո վիճակը շուտով փոխվեց:

Ալիշանը, Վենետիկի ուրիշ հայրեր, ինչպես և էմիլը և Լանգ- յուան այս վերջինը միայն հարազատ համարեցին. այնպես որ ֆրանսերեն թարգմանությունն էլ սրա վրայից եղավ:

Ֆեթթերը, Մյուլլերը, Զ. Ք. Սարգիսյանը, Յ. Քորոսյանը և ամ- բողջ Վրեննական դպրոցը կողմնակից են ընդարձակին:

Այսպիսի մի վեճ սակայն ներելի էր դեռ առաջ. բայց այժմ, երբ հայտնի է մեսրոպյան և ոչ-մեսրոպյան լեզուների տարբերու- թյունը, հարցը բոլորովին պարզ է նրանց համար, որ գիտեն ճա- նաչել այդ տարբերությունները: Համառոտ Կորյունը պարունակել- լով ոչ-մեսրոպյան լեզվի տարրեր, չի կարող ամենևին Կորյունի հարազատ աշխատությունը լինել, քանի որ Կորյունը մաքուր մես- րոպյան հայերենի ներկայացուցիչ է: Ճշմարիտ է, թե ոչ-մեսրոպ- յան տարրերը այնքան առատ չեն այս աշխատության մեջ, ինչպես այլուր, սակայն սրա պատճառն այն է, որ համառոտը շատ տեղեր ընդարձակից կազմված լինելով, բնականապես գիտակցաբար կամ անգիտակցաբար դասական լեզուն պահած պիտի լիներ: Բայց երբ հեղինակը ընդարձակից հեռանում է և իրանից մի բան է ավելաց- նում, ոչ-դասական տարրերը երևան են գալիս: Այսպես, ոչ-դասա- կան են՝ էջ 11— կերպածեւեալ, փոխադրելով, էջ 12— հանուր աշ- խարհիս, էջ 13— բարեփառութեամբ, էջ 15, 26, 33— ամենասուրբ, էջ 21— անդր փոխադրեաց, էջ 22— անհեղգաբար, էջ 25— զշնոր- հացն ներգործութիւնն, բացայայտեցին գրովք, էջ 27— համաձայնս պարզամտացն (իմա՛ ըստ), էջ 30— համանգամայնցն: Այս տեսակ բառեր սովորական են Շարականում, Վարք Հարանցում, Խորենա- ցու մեջ, Պարապմանց գրքում, Մեսրոպ երեցում, Սահմանաց գրք-

քում, Փարպեցու մեջ և այլ այսպիսի հետ դասական շրջանի գրք-վածքներում, մանավանդ վերջին համաճգամայնցն ձևը, որ սուկալի հետնութայն նշան է:

Ի նպաստ ընդարձակին Սարգիսյանը, Թորոսյանը և այլն մեջ են բերում նաև ուրիշ փաստեր, որոնցից լավագույնները հիշում ենք:

ա) Փարպեցին իր պատմության մեջ քանիցս հիշում է, թե ինքը շատ է օգտվել Կորյունից. արդ, երբ համեմատենք Փարպեցին Կորյունի կրկին խմբագրությանց հետ, կտեսնենք, թե ընդարձակն է, որ Փարպեցու հետ զուգընթանում է: Այսպես՝ մինչ Փարպեցին և ընդարձակը Մաշտոց անունով են ճանաչում մեր մատենագրության հորը. համառոտը Խորենացու հետ գիտե Մեսրոպը— Ընդարձակը, Փարպեցին և Խորենացին խոսում են գրերի գյուտի հետ կապ ունեցող բազմաթիվ անձերի վրա, որոնց մասին լուռ է համառոտը. ինչպես՝ Հաբել, Վահրիճ, Վաղինակ և Վասակ Սյունի, Անանիա եպիսկոպոս, Բակուր, Ջաղա, Մովսես եպիսկոպոս, Արսվաղեն, Երեմիա եպիսկոպոս Աղվանից, Յովնաթան և Բենիամին քահանաներ, Գանան, Ծնովք, Մուշե, Տիրայր և այլն:

բ) Համառոտի մեջ կան այնպիսի ուստումներ, որ պատմության ընթացքը խանգարում են և միայն ընդարձակով կարող են լրացվել. այսպես՝ Մեսրոպը գրերը գտնելու համար Դանիելի մոտ է գնում և նրանից դժգոհ մնալով՝ աստուծուն է ապավինում. մեկ էլ աչքերը բաց է անում և «Սամոսի» մեջ հնարում է գրերը Հոուփանոսի հետ (տե՛ս էջ 9—11): «Ուտի» ո՛ւր. աղօթի՞ց միջոց պատահեցաւ այդ անցքն, կամ թէ արդեօք Ամբակումայ հրա՛ջքն տեղի ունեցաւ Ո՛ւր մնացին այն երկու տարիներն, յորս Դանիէլեան նըշանագրաց անյաջող փորձն եղաւ, հարցնում է Թորոսյանը, Բազմ. 1897, էջ 308:— Ընդարձակը, էջ 18—20, մանրամասն պատմում է, թե ի՞նչպես Մեսրոպը Բյուզանդիոնից դարձին ձեռնարկեց Հունաց Հայաստանում դպրոցներ բանալու, հալածեց բորբորիանոս աղանդավորներին, անցավ Մեծ Հայք և թիչ ժամանակ մնալուց հետո՝ գնաց Աղվանից Բաղասական աշխարհի, Գարդմանի, Տաշրաց և Վրաց աշխարհները լուսավորելու, որից հետո դարձյալ վերադարձավ Մեծ Հայք: Համառոտը (էջ 15) նույնպես պատմում է Բյուզանդիոնից դարձը, բորբորիանոսների հալածումը, բայց իսպառ լռելուց հետո Աղվանից, Վրաց և այլն ճանապարհորդության մասին, հանկարծ ավելանցում է. «Ինքն դառնայր (որտեղի՞ց) ի կողմանս Հայոց» և այլն: Պարզ է, որ համառոտը խմբագրողը աչքի առաջ է ունեցել ընդարձակը և նրա վրայից ուստոստելով ծաղկաբաղ է կաղմել, առանց ուշադրության առնելու, թե իրար հետ չկապ-

վեցին: Հաջորդ համեմատութիւնը բոլորովին պարզում է այս կե-  
տը:

Փոքր Կտ. էջ 15

Իսկ երանելին զիր վարդապե-  
տութեանն պայման արարեալ, ըս-  
կրեսալ և վճարեալ, և բազում շը-  
նորհազիր մատեանս զհարց եկե-  
ղեցոյ ստացեալ ծովացուցանէր  
զվարդապետութեանն խորութիւն.  
և լինալ զեղոյր զամենեքումք (ի  
բնակիչս աշխարհին հոգեւոր վա-  
յելութեամբ ի փոստ ամենասուրբ  
Սրբորդութեանն):

Եւ յանձն արարեալ զամենե-  
սեան ամենապահ՝ շնորհացն Աս-  
տուծոյ՝ ինքն դառնայր ի կող-  
մանս Հայոց:

դ) Ընդարձակը (էջ 21) ս. Գրքի թարգմանութեան համար զը-  
րում է. «Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց զումարու-  
թիւնն կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ...  
զփութեանակի զթարգմանութիւնս հաստատէ ճշմարիտ օրինակօք  
բերելովք: Եւ շատ եւս մեկնութիւն գրոց թարգմանէին. եւ այնպես  
զամենայն ժամանակս իւրեանց՝ յընթերցուածս գրոց ծախելին հար-  
քըն...»: Իսկ համառոտը մի բան ավելի ասել ուզելով՝ դարձնում է  
«Իսկ երանելեացն սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ զեկեղեցական  
գրոց զզումարութիւնն կանխաւ ի յունարէն բարբառոյ ի հայերէն  
թարգմանեալ... զփութեանակի թարգմանեալսն՝ հաստատէ ճշմար-  
րիտ օրինակօքն բերելովք. և շատ եւս այլ մեկնութիւնս գրոց սրբոց  
թարգմանէր ըստ հայերէն նշանագրացն»: Սակայն «երանելեացն»  
ու «եւ Մեսրոպայ» հավելումներով ենթական հոգնակիի վերածե-  
լուց հետո, մոռացել է հաստատէր և թարգմանէր եղակիներն էլ  
հոգնակիի վերածելու, որով անհամաձայնութիւն է գոյացրել նախ-  
կին ուղիղ բնագրում:

դ) Ընդարձակը գրերի գլուտի այլ և այլ պարագաների, ժա-  
մանակակից և գործակից անձերի, թվականների և ուրիշ զեպքերի  
մասին ունյպես ծանոթ և բանագետ է, որ անկարելի է ժամանա-  
կակից դործ չհամարել: Ընդհակառակը, համառոտը ժամանակա-  
գրութեան կողմից շատ լակոնական է: Ընդարձակ Կորյունի վերջում  
դրված «Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն...» հատվածը,

Ընդարձակ Կտ.

Իսկ երանելոյն զիր վարդա-  
պետութեանն պայման արա-  
րեալ՝ սակեալ և վճարեալ, և  
բազում շնորհազիր մատեանս  
զհարցն եկեղեցոյ ստացեալ,  
ծովացուցանէր զվարդապետու-  
թեանն զխորութիւն. և լցեալ զե-  
ղոյր ամենայն բարութեամբք  
(էջ 18, տող 10—14):

Եւ յանձն անելով զնոսա և  
զանձն՝ ամենապահ՝ շնորհացն  
Աստուծոյ (19, 37)... ինքն  
դառնայր ի կողմանս Հայոց Մե-  
ծաց (20—22):



որ այնպես մանրամասն և ստույգ է, գոյություն չունի համառոտի մեջ: Ընդարձակը ժամանակակից է, որովհետև աչքով տեսած և սրտով զգացած լինելով այն մեծ շարժումն ու ոգևորությունը, որ ամբողջ Հայաստանը համակից, խանդավառ լեղվով գրում է. «Ես ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս Սինէական լերինն. շահեմք թէ առանելօքն՝ պակասագոյն...: Անդ էր այնուհետև սրտալիր ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայելոյն... Անդ էր յիշելի մարգարէականն, եթէ եղիցի անդ աղբիւր բղխեալ ի տան Դաւթի և այլն և այլն», էջերով ճառական գրվածք, մինչդեռ համառոտը հետև և անտարբեր մի անձ է:

ե) Կորյունի ընդարձակ խմբագրության ի նպաստ է նաև ըստ Թորոսյանի՝ Վասակի գովեստը (էջ 15), որ չկա համառոտի մեջ. Կորյունը, Վարդանանց պատերազմից առաջ գրած լինելով, կարող էր այդ գովեստը դնել, բայց համառոտը շատ հետին գործ լինելով՝ խոհեմութիւն է համարել ջնջել այդ մասը «հասարակաց զգացումը չի վիրաւորելու համար»:

դ) Դարձյալ ի նպաստ ընդարձակին է համարվում Ազաթանգեղոսի և Կորյունի հարաբերության խնդիրը. մի քանի բավական մեծ հատվածներ կան, որ գտնվում են թե՛ Ազաթանգեղոսի և թե՛ ընդարձակ Կորյունի մեջ, բայց համառոտի հետ շատ համաձայն չեն: Ծաղյանի և ուրիշների քննությամբ արդեն ապացուցված է, թե այս երկուսից Ազաթանգեղոսն է, որ Կորյունի գրքից բանաբաղություններ է անում: Թորոսյանը սրանից հետևեցնում է, թե ընդարձակ խմբագրությունը կար Ազաթանգեղոսից առաջ: Սա ճիշտ է, բայց չի հետևում, թե համառոտը չկար: Կարող էին երկուսն էլ Ազաթանգեղոսի ձեռքին գտնված լինել, և բանաբաղը միայն ընդարձակից քաղած լիներ:

է) Զորեղ ապացույց է նաև այն պարագան, որ ընդարձակի մեջ Կորյուն իր համար մի քանի տեղ առաջին դեմքով տեղեկություն է տալիս, ցույց է տալիս, որ ինքն էլ Մեսրոպի աշակերտներից է, և ուր որ գործակցություն ունեցել է, իրեն մեջ է խառնում հայտնի կերպով. մինչդեռ համառոտը այս տեսակ բան չունի. միայն համառոտը կարգալով կարելի չէ հետևեցնել, թե հեղինակը Մեսրոպի աշակերտը և գործակիցն է. ուրիշ խոսքով՝ ընդարձակի մեջ Կորյունն է, որ խոսում է առաջին դեմքով, մինչդեռ համառոտի մեջ մի ուրիշ հեղինակ՝ երրորդ դեմքով: Այսպես՝ էջ 1 «աշակերտակցաց մերոյն վարդապետութեան: Ուստի և իմ մասնաւոր աշակերտութեամբ վիճակ առեալ, թէպէտ և էի կրտսերագոյն...», էջ 16 «յորոց և իմ անարժանիս ելեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ...», էջ 21 «ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ

անցելոյ՝ դէպ լինէր ոմանց նորարաց ի Հայաստան աշխարհէն դիմել իշանել ի կողմանս Յունաց, որ եւ Ղևտնդէս առաջնոյն անուն էր, եւ երկրորդին Կորիւնս», էջ 28 եւ սուտապատում ճարտարախօս եղեալ առ ի մերոց բանից զհօրէն իմոյ կարգեցաք...»: Համառոտը արանցից առաջին երկուսը իսպառ հասպակել է. երրորդի մէջ ամենայն բարեխղճությամբ շնչել է վերջի բառի ս ձայնը. «մրոց անուանքն էին միումն Ղևտնդ եւ միւսումն Կորիւն (էջ 17)»։ Կարծես թէ հայտնի կերպով ուզում է ցույց տալ, թէ այն Կորյունը և այս համառոտի հեղինակը նույն շնն. իսկ շորրորդի մէջ «ի հօրէն իմոյ» դարձրել է շէղոքաբար զհայրենիսն. «եւ առ սուտապատում յարմարեալ դրանս ի մեր գովութիւն զհայրենիսն յարգելով» (էջ 36)։

Այս բոլոր պարագաները ապացուցում են. թէ բնագիրը ընդարձակ է. հետին մի սրբագիր, շնամանելով նրա խրթին ձևերին և միանգամայն տեղ-տեղ հակառակ գտնելով հորենացու պատմության, կազմել է համառոտը «պարզելով խրթին մասերը, շնչելով անելորդ կարծած երկարաբանութիւնները (ինչպես յառաջաբանն ու վերջաբանը և Վրաց ու Աղուանից լուսաւորութիւնը, որ այնքան հետաքրքիր չէր Հայոց), և վերջապես ըստ հորենացոյն սրբագրելով Կորիւնի տարբերութիւնները: Այսպէսով պահած է ընդարձակին կէտէն քիչ մը անլին»: Համառոտ Կորյունի կազմության թվականը Քորոսյանը (անդ, էջ 307բ) դնում է 9 կամ է դար. բայց այս բանը ճշտելը կախված է միմիայն հորենացու թվականից:

Ավելորդ եմ համարում խոսել նաև այն հանգամանքի դեմ, որ Ալիշանը, Քորոսյանը (էջ 304բ), մինչև իսկ Հարությունյանը (Հայոց գիրը, էջ 165) համառոտի լեզուն ավելի բարձր են դնում, քան ընդարձակինը. 1894-ի հրատարակիչները ընդարձակը կոչում են «երկարաբան հետևակ գրուած». իրենց եմ թողնում զվարճանալ «ծիւղով» համառոտով: Կորյունի երրորդ խմբագրության մասին խոսում է Պիտերսը (Peeters, Revue des études arméniennes, 9, էջ 204)։

Հանդես Ամսօրեայի մէջ (1914, էջ 656—666) Բարգին եպիսկոպոսը հրատարակել էր հայերեն գրերի գյուտի պատմության վերաբերյալ մի քանի պատառիկ, որ գտել էր 1622 թվին գրված մի Սաղմոսի պահպանակներում. հիմք ունենալով այս պատառիկները՝ Պիտերսը կարծում է, որ դրանք ներկայացնում են Կորյունի երրորդ մի խմբագրութիւն, անկախ մեծ ու փոքր Կորյունից: Բարգին եպիսկոպոսն էլ, որ գտել և հրատարակել է նույն պատառիկները, նախ ասում է, թէ այդ պատառիկները քաղված են հորենացուց և Փոքր Կորյունից, և թէ «նոր լույս մը շնք ստանար ատենցմե հայերեն գրերու գյուտի մասին». բայց հետո ավելացնում է. «Առաջին

մասը՝ եթե շատ փոքր վարիանտներ ունի՝ խորենացվույն համեմատությամբ, Կորյունի հետ համեմատված ատեն շատ ուշագրավ կը դառնան այդ վարիանտները: ... Անգամ մըն ալ կը հաստատվի, թե այս սքանչելի գյուտին համար մեր ձեռքը հասած աղբյուրները շատ թերի են և անոնք ավելի վիպարանական արժեք մը ունին, քան թե զուտ պատմական»:

Այս խոսքերը, որ սխալ են արտահայտված, անշուշտ մոլորեցրել են Պիտերսին, որ հիմնվելով նրանց վրա՝ ենթադրում է երրորդ Կորյունի գոյությունը:

Բարզեն եպիսկոպոսի գտած հատվածները 12 հատ են. նրանցից վերջին չորսը խաղի գյուտի պատմությանն են վերաբերում և մեզ հետ գործ չունեն: Առաջին ութ հատվածները վերաբերում են գրերի գյուտի պատմության և Մեսրոպի կյանքին: Ութ հատվածներից առաջին չորսը քաղված են ուղղակի խորենացուց. միայն երրորդ հատվածի միջին մասում մի փոքր կարկատան կա, որի նպատակն է համառոտել խորենացին և նրա բաժանված գուլխները միացնել: Այս չորսն էլ ոչ մի նորութուն չեն ներկայացնում, և ինչպես ասացի, ուղղակի խորենացուց են: (Փակագծի մեջ հիշեմ Չ. Ա. Մատիկեանի զվարճալի մի գյուտը, որ հրատարակված է այս առթիվ Հանդես Ամսօրեայի մեջ՝ 1914, էջ 706 «Ուրարտական երկու անուններ հայ մատենագրութեան մեջ» վերնագրով: Հոգվածագիրը կարծում է, թե գտել է Ուրարտական Շարիթուր (թագավորի) անունը Կորյունի հիշյալ պատառիկների մեջ: Հատվածը հետևյալն է.

Երարձ աւգնականութեա  
մբ դաւառապետին, որ  
ում անուն էր Շարիթուր.  
Եւ նշանք աստուածայինք գործ  
եցան...

«Ահա անուն մը, որուն գոյության կարելիությունը թերևս և ոչ իսկ մեր մտքեն կանցընեինք» բացականչում է Մատիկյանը: Զարմացել է, երբ այս անունը կարդացել է և դատապարտում է Բարզեն եպիսկոպոսին, որ միտ չէ դրած այս նորության և այլն: Հետո համեմատելով խորենացու հետ, որից արտագրված է այս հատվածը, և քննելով խորենացու 7 զանազան ձեռագրերի ընթերցվածները, գտնում է որ. «Շարիթուր անունը գրչագրական շփոթութեան արդիւնք չի կրնար ըլլալ»: Այսքան մանրակրկիտ քննությամբ տարված Մատիկյանը չէ տեսել դժբախտաբար մի շատ հասարակ բան. — խորենացու մեջ (Գ. խէ) գրված է «Երարձ օգնականութեամբ իշխա-

նի գաւառին, որում անուն էր Շարիք: Ուր նշանք աստուածայինք լինէին...: Որովհետեւ հին ձեռագրերում ընդհանրապէս քառասր-  
ժանում չկա, ուստի այն պատահիկումն էլ պետք է կարգալ համա-  
ձայն հորենացու՝

որում անուն էր Շարիք. ուր և նշանք...

Այսպիսով օգն է ցեղում խեղճ ուրարտացի Շարիքուր թագավորը,  
որ համարձակվել էր Կորյունի և հորենացու պատահիկների մեջ  
թափանցել:

Հաջորդ շորս կտորները բառացի քաղված են Մեծ Կորյունից և  
ոչ թե փոխրից, ինչպէս կարծում է Բարզեն եպիսկոպոսը: Ես այդ  
եզրակացութեան հասա՝ համեմատելով նույն հատվածները մեծ և  
փոքր Կորյունների հետ: Ստույգ է, որ այս հատվածները ներկա-  
յացնում են մի քանի ձեռագրական տարբերութիւններ, բայց զը-  
րանք սովորական բաներ են ամեն ձեռագրի համար: Պատահիկ-  
ների այդ տարբերութիւնները հաճախ ավելի լավ ընթերցվածներ  
են ներկայացնում, քան Վենետիկի հրատարակութիւնը և անշուշտ  
մտած պետք է լինին Արեղյանի հրատարակութեան մեջ:

Այս է իրողութիւնը: Ամենին ոչ մի հետք չունենք Կորյունի  
երրորդ խմբագրութեան, իսկ հիմնվելով դրա վրա՝ եզրակացնել,  
թե Կորյունը թերի կամ եղծված է, ավելորդ երևակայութիւն է թե՛  
Բարզեն եպիսկոպոսի և թե՛ Պիտերսի կողմից:

3. Ե՛րբ գրեց Կորյունը.— Կորյունի գրութեան թվականը քրե-  
նողները երկու բանակի են բաժանվում. նախ նրանք, որ այս գրու-  
թիւնը Վարդանանց պատերազմից առաջ են գնում, և երկրորդ նը-  
րանք, որ հետո գրված են համարում: Առաջինին է պատկանում  
բանասերների ամենամեծ մասը, ինչպէս՝ Չամչյան, Գաթրճյան,  
Սարգսյան, Ֆեթթեր, Թորոսյան և Նորայր. երկրորդին են պատկա-  
նում Գարագաշյան և Միաբան: Որովհետեւ այս թվականը հաստա-  
տելու համար վճռական կռիւն չունենք, ուստի խարխափումներով  
առաջանալով պետք է ճշտենք, թե որ սահմանների մեջ կարող է  
գտնվել Կորյունը:

Մետրոպոլ վախճանվել է 439 թվականին. ուստի գրութիւնը  
այս թվականից առաջ չի կարող լինել Կորյունը պատմում է, թե  
Մետրոպոլ վախճանից երեք տարի հետո Վահան Ամատունին նրա  
գերեզմանի վրա մատուռ կանգնեցրեց. ուստի հասանք մինչև 442.  
տաճարի շինութիւնը նկարագրվում է իբր շքանշնչի... տաշածոյ  
վիմոք քանդակելով... սպասս վայելուշս գունադոյնս պայծառա-  
տեսիլս ոսկով և արծաթով և ակամբք պատուականօքս: Կորյունը  
տեսել է այս փառավոր շինութեան ավարտումը և գիտե, թե Թո-  
ղիկ անուն կրոնավորն էլ նույն տաճարում պաշտոնյա նշանակ-

վեց. Լթե գոնն մեկ տարի դնենք այդ շենքի շինության համար, կհասնենք արդեն 443 թվականին, որից առաջ չի կարող լինել Կորյունի գրվածքը: Նաև չի կարող գրված լինել 450—451 թվականից հետո, որովհետև այս ժամանակներում ծագած լինելով Վարդանանց պատերազմը, Վասակի ազգադավ արարքները և այլն, Կորյունը՝ չէր կարող այնպես գովեստով խոսել Վասակի մասին և անվանել նրան թայր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ... Ծառայեալ ըստ Աւետարանին վայելչութեան և այլն»: Նույնպես 451 թվին Հովսեփի կաթողիկոսը գերի տարվելով Պարսկաստան, չէր կարող այս թվականից հետո խնդրել Կորյունից՝ գրել Մեսրոպի կենսագրությունը: Այսպիսով Կորյունի գրությունը մնում է 443—450 թվականների միջև:

Այս եզրակացության հասանք Մեսրոպի մահը դնելով 439 թվականին: Բայց հին քննիչները Մեսրոպի մահը 441 թվականին դնելով՝ բնական է, թե պիտի հասնեին 445—450 թվականներին: Ծիշտ այս թվերն է տալիս Գաթրճյան, Հանդես ամս. 1887, էջ 10 (իսկ նույն հեղինակի անցողակի տված կտրական 442 թվականը, Հանդես 1889, էջ 24՝ երևի սխալման արդյունք է). Նույնպես՝ Սարգիսյան, Ազաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքը, էջ 116—167. Տեթթեբը դնում է 445—451. Թորոսյանը դնում է 447—449: Նորայր Բիւզանդացին (Կորյուն վրդ. էջ 433) ճիշտ 443—444 թվին:

Գարագաշյան, Քննական Պատմ. Դ. 26, և Միաբան, Ազաթ. աղբյուրներից, էջ 25, Կորյունի գրությունը դնում են Վարդանանց պատերազմից հետո, ընդունելով, թե Կորյունը գիտե Ղևոնդյանց քահանայից շարչարանքը և Վահան Ամատունու մահը, որ Վարդանանց պատերազմից յետոյ Պարսկաստան աքսոր ջրուածներիցն էր և մեռաւ հայրենիք վերադառնալուց յետոյ, ուրեմն ոչ առաջ 465 թվից»:

Այս ծանրակշիռ խնդրի վրա ուզում ենք խոսել մանրամասն:

Ղևոնդյանց մասին կասկած տվող հատվածը Կորյունի մեջ հետևյալն է, որ թե՛ ընդարձակ, և թե՛ համառոտ խմբագրությամբ դնում ենք դեմ առ դեմ:

### Ընդարձակ

Սև զնորին աշակերտ Թաղիկ անուն՝ զայր զգաստ և բարեպաշտօն, հանդերձ եղբարքք երանութեանն հասելոց՝ սպասաւոր սրբոցն ի փառս Աստուծոյ կարգէին. և զխաւորս վերակացուս

### Համառոտ

Սև զնորին աշակերտն զգաստ և բարեպաշտօն զԹողիկ սպասաւոր նորին կացուցանէին՝ այլ ևս եղբարքք՝ կատարել զհանապազորդ պաշտօնն: Սև որ վե-

տեղապահա՛ն յայտ արարեալ հարցըն կատարելոց որոց առաջինն Յովսէփ գլխաւոր ժողովոյն և երկրորդն այլ աշակերտ Յովհանն աւետն, այր իսկ սուրբ վարդապէտաւսէր և ճշմարտապատում: Որում դէպ լինէր յետ վախճանի սրբոյն, բազում և ազգի ազգի փորձութեանց և կապանաւոր վըշտաց, մենամարտիկ երկպատական բռնութեանն ի Տիգրոն քաղաքի, վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց. վասըն որոյ և զխոստովանողական անուն ժառանգեաց, նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն Հայոց:

Այս հատվածում մեկնության կարոտ կետերը հետևյալներն են.  
ա. Ի՞նչ է նշանակում «հանդերձ եղբարքք երանութեանն հասելոց», որի դեմ համառոտն ունի միայն «այլ ևս եղբարքք». ըստ իս, այս խոսքով պետք է հասկանալ, թե միայն Քողիկը չէր, որ նորակերտ տաճարում պաշտոնյա նշանակվեց, այլ իր հետ նաև մի քանի կրոնավորներ, որոնք արժանի էին եղել ստանալու սրբի օրհնությունը. իհարկե այնպիսի փառավոր մի տաճարի համար մի կրոնավոր բավական չէր և պետք էր, որ Քողիկը ընկերներ ունենար:

բ. Եւ գլխաւորս վերակացու տեղապահա՛ն յայտ արարեալ հարցըն կատարելոց, որոց առաջինն...: Որովհետև այս խոսքը նախորդից միայն մի ստորակետով է բաժանված, կարելի է կարծել, թե նախորդի շարունակությունն է. այնպես որ Հովսեփի և Հովհանն Քողիկի հետ նշանակված պաշտոնյաներն են: Բայց այսպես չէ. երկու խոսքերի միջև կապ պետք չէ ենթադրել, ինչպես չի ենթադրել նաև համառոտը՝ երկուսը իրարից վերջակետով բաժանելով Հովսեփը և Հովհանը նշանակվեցին կաթողիկոսական տեղապահ և «ժողովրդի վերակացու» (ըստ համառոտի):— «Յայտ արարեալ հարցն կատարելոց» ձևով էլ պետք է հասկանալ, թե կատարյալ՝ այսինքն վախճանյալ հայրերը (Սահակ և Մեսրոպ) իրենց կենդանությունը կամ մահվան ժամանակ նշանակել էին Հովսեփին ու Հովհանին իբրև իրենց տեղապահ:

գ. Ո՞վ էր Հովսեփը.— Կորյունի պատմության մեջ Հովսեփի

րակացու ժողովրդեանն ըստ յայտնութեան սուրբ հարցն՝ զՅովսէփ և զՅովհանն կացուցանէին արս ճշմարտասէրս և ողջախոհս, որոց դէպ լինէր յետ վախճանի սրբոցն ազգի ազգի փորձութեանց ի վերայ եկելոց ի բռնաւորաց, մենակոխ մենամարտիկ ի Պարսս ի Տիսպովն քաղաքի վասն Քրիստոսի, յաղթութեամբն բազմաւ, որոց և զխոստովանողական անուն ժառանգեալք, ի նոյն վերակացութիւնս վարդապետութեան դառնային յերկիրս Հայոց:

անունը հիշվում է հինգ անգամ, այն է՝ էջ 1, 10, 20, 27 և 28: Այս տեղերում հիշատակված Հովսեփները երկու տարբեր անձնավորություններ են ներկայացնում. մեկը՝ Հովսեփ կաթողիկոս Վայոցձորեցին և մյուսը՝ Հովսեփ Պաղնացի: Կորյունը կարծես հատուկ ջանք է գործ դնում ամեն անգամ պարզ որոշելու, թե որի՝ մասին է խոսքը. այսպես՝ թեև առաջին անգամ էջ 1, հիշում է «առն միոյ պատուականի Յովսէփ կոչեցելոյ», բայց էջ 10 ասում է «Յովսէփ անունի Պաղանական տանէն», էջ 20 «զՅովսէփ, զոր ի վերայն յիշեցաք», էջ 27 «Յովսէփ, զոր և ի սկզբան գրեցաք», էջ 28 «Յովսէփ գլխատր ժողովոյն»։ վերջին երկուսը Հովսեփ կաթողիկոսը լինելով, պարզ է, որ «ի սկզբան» գրված Հովսեփին էլ, այսինքն Մեսրոպի վարքը խնդրողն էլ նույն անձն է, իսկ մյուս երկուսը (էջ 10, 20) ներկայացնում են Պաղնացին:

դ. «Որում դէպ լինէր...» խոսքի մեջ հարաբերականին ո՞ր բառն է հարաբերում, Հովսեփ թե Հովհան: Անշուշտ Հովսեփի համար ասված շպիտի լինի, քանի որ պատմությունից գիտենք, թե Հովսեփ կաթողիկոսը Պարսկաստան գերի տարվելուց հետո՝ այլևս չվերադարձավ, և այնտեղ 453 թվին նահատակվեց: Իսկ եթե առանց նահատակության՝ միայն «խոստովանողական անուն ժառանգեաց և ի նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն Հայոց», պետք է, որ այդ անձը Հովհանը լիներ:

Համառոտը այստեղ մի մեծ սխալ է գործում. Կորյունի միտքը չավ չհասկանալով, կարծում է, թե այն հարաբերականը երկուսի համար է. որով թե՛ Հովսեփին, և թե՛ Հովհանին տալիս է շարձարվել Տիգրանում և հետո՝ վերադառնալով Հայաստան, վերակացությունը նորից ձեռք առնել: Հովսեփի վերադարձը հակառակ է պատմության:

ե. Ո՞վ էր Հովհանը.— Հովհան անունը Կորյունի մեջ հիշված է երկու անգամ. նախ էջ 10. «Յովհան անուն կոչէին յԵկեղեաց գաւառէն», իբրև գործակից Մեսրոպի՝ Առակաց գրքի թարգմանության մեջ. և երկրորդ այս վերջինը, որ խոստովանող է կոչվում: Այս երկուսին իրարից տարբեր են համարում մեր բանասերները. այսպես՝ Զարբհանալյան, էջ 272, խոսում է Հովհան խոստովանողի վրա, իսկ էջ 274, խոսում է Հովհան Եկեղեցացու վրա. Միսքըձյան, Հանդ. ամս. 1902, էջ 149, § 22, դնում է Յովհան, որ և Յոհան (խոստովանողը), և § 23, Յովհան Եկեղեցացի: Լ. Բ. Սարգիսյանը, Ագաթ. էջ 112, Յովհան (խոստովանողը) համարում է Մանդակունին, իսկ մյուսը ճանաչում է իբրև Եկեղեցացի: Թե ի՞նչ պատճառներ են ստիպում բանասերներին այդպիսի բաժանում մտցնել, ինձ հայտնի չէ, և չեմ կարծում, որ իրավացի լինի: Ըստ իս վեր-

չին նոստովանողն էլ նույն Շովհան Եկեղեցացիին է: Ավելի տար-  
օրինակ կլինի կնքմել, թէ նոստովանողը Մանդակունին է: Զէ՛ որ  
այս պարագային Կորյունը իմացած պիտի լիներ նաև Շովհանի կա-  
թողիկոսի նահատակութիւնը, որ անկարելի է, թէ շհշէր կամ գո-  
նէ «Երանելի» տիտղոսը շտար:

Այս հինգ կետերը պարզելուց հետո, ճշտվում է հատվածի  
իմաստը: Բողիկը և մի քանի ուրիշ կրօնավորներ Մեսրոպի տա-  
նարին պաշտոնյա են կարգվում. Շովհանի Վայցճորեցիին և Շով-  
հան Եկեղեցացիին ընտրվում են տեղակալ և վերակացու հայրապե-  
տարանի, ինչպես նշանակել էին Սահակը և Մեսրոպը, Շովհանը  
շարշարվում է Տիգրանում, բայց հաջողութեամբ վերադառնում է  
իր պաշտոնին:

Ինչի՞ց կարող ենք ենթադրել, թէ Շովհանը պատկանում է  
Ղևոնդյանց քահանայից խմբին. այս քահանաների, ինչպես և սը-  
րանց հետ գերի տարված նախարարների անունները մի առ մի հի-  
շում են Եղիշե, Մատենադր. 139, 150 և Փարպ. էջ 255—6. բայց  
սրանց մեջ չկա Շովհան: Ուստի պետք պիտի լինի ենթադրել, թէ  
Շովհանի շարշարանքը տեղի է ունեցել այն հալածանքների միջո-  
ցին, որ Հաղկերտ Բ հանեց քրիստոնեության դեմ իր թագավորու-  
թյան երրորդ կամ չորրորդ տարուց մինչև 11-րդ տարին, Վարդա-  
նանց պատերազմից առաջ. «Վասն այնորիկ զրդուեցուց զբազումս  
ի սուրբ ուխտէն քրիստոնէից, էր՝ զոր բանիք սպանուիեօք, էր՝  
զոր կապանօք և տանջանօք, էր՝ զոր շարշար մահուամբ վախճա-  
նէր... և մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեանս» (Եղիշէ, Մատ.  
էջ 8):

Վերի հատվածը սխալ է հասկանում նաև Հ. Բ. Սարգիսյանը  
(Թագմավէպ, 1890, էջ 242—3) և հասնում սխալ եզրակացութեան  
նա կարծում է, թէ «Որում դէպ լինէր յետ վախճանի սրբոյն...»  
պարբերության մեջ, սրբոյն բառով հասկացվում է Շովհանի կաթո-  
ղիկոսը, որ նահատակվել է Պարսկաստանում 453 թվին, հետևա-  
բար Կորյունի գիրքը զրված է 453-ից հետո և կամ գոնև այդ հատ-  
վածը ոչ ժամանակի ընդմիջարկութիւն է: Բայց դա բոլորովին  
սխալ է, որովհետև սրբոյն բառով Կորյունը ակնարկում է Մաշտո-  
ցիին, ինչպես հասկանում են Չամչյանը (Ա. 784) և Նորայրը (Կո-  
րին մրդ. էջ 483), որին պատկանում է նաև այս դիտողութիւնը:

Վահան Ամատունու մահվան հիշատակության մասին կասկած  
հարուցանող հատվածն էլ հետևյալն է, ըստ Միսրան, Ագաթ. աղբ.  
էջ 25:



Իսկ բարեացապարտին Վահանայ, յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր, որ աշխարհածնին հայրենեացն սեպհական ողի գլուխալ, շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, մերձաւոր կենակից վայելէր. և զի ըստ օրինակի գրեւոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան (էջ 38) :

Իսկ բարեացապարտն Վահան յանկարծահաս կենաց, ասպընջական ցանկալի ամենայն սրբոց լինէր, որ աշխարհածընունդ հայրենեացն սեպհական ողի գտեալ՝ շնորհօքն Քրիստոսի մերձաւոր կենացն յաւիտենից լինէր: Եւ արդ ըստ օրինակի գրեւոցս առ ի մէնջ զերանելեաց սուրբ հարցն... (էջ 35) :

Հատվածիս քննութիւնը արել է Քորոսյանը (Բազմ. 1897, էջ 114—5): Այս քննութիւնից երևում է, որ նախ ընդարձակի վերջին մասը «եւ զի ըստ օրինակի...» կապ շունի նախորդի հետ, այլ պետք է անջատել և կցել հաջորդ վերջաբանին, ինչպես ունի և Կորյունի համառոտը՝ Երկրորդ՝ խոսքը ակնարկութիւն է ո՛չ թե Վահանի մահվան, այլ մի տեսակ գովասանք իր այն շերմեռանդ գործի համար, որով Վահանը արժանի եղավ երկնային կյանքի պարգևներին, «ինքզինքը ժառանգ և արժանաւոր ըրաւ երկնից արքայութեան, կենթադրուի տակաւին աշխարհիս վրայ գտնուելով»: Այս մեկնութիւնը հաստատվում է Քորոսյանի մի սրամիտ նկատողությամբ. Ագաթանգեղոսը (Վենետ. 1835, էջ 18) Կորյունի այս հատվածը առել և ազուցել է իր հառաջարանի մեջ, այս ձևով.

«Իսկ բարեացապարտն Տրդատ յանկարծակամ կենացն ասպընջական ցանկալի ամենեցունցն լինէր, որ աշխարհածնունդ հայրենեաց ողի գտանէր շնորհօքն Աստուծոյ, մերձաւոր կենաց վայելէր»:

Հատվածը հարմարեցրած է Տրդատի վրա, «եւ այնպիսի կերպով, որ բնաւ տարակուսելու տեղի չի մնար՝ թէ մահուան վերայ չէ խոսքն, այլ «շնորհաց կամ հոգեւոր կենաց» մասին է, որովհետեւ «անմիջապես նախորդ խոսքն ս. Լուսաւորչի քարոզութեան և Հայաստանի դարձին վերայ է»:

Այսպիսով կարող ենք հաստատ համարել, թե Կորյունի գիրքը իդուր է ենթադրվում գրված Վարդանանց պատերազմից շատ հետո, այլ իր գրութիւնը մնում է 443—450 թվականների միջև:

Իմ «Աղբիւրներ» ուսումնասիրութիւնից շատ հետո Աղոնցը հրատարակեց (1925 թվի Հանդ. ամս.-ի մեջ) մի ուսումնասիրութիւն Մաշտոցի և նրա աշակերտների մասին: Այստեղ (էջ 536—7)

խոսում է հատկապես Կորյունի գրքի թվականի մասին և գնում է 462 թվին: Իր պատճառաբանություններն են դարձյալ Վահան Ամատունու մահը (439—440) և Հովհանը, որին Աբրահամի հետ արձակված է համարում Պերոզի հինգերորդ տարին (462): Տեսած չէ Ադոնցը իմ գրվածքը և հետևաբար աչքի առաջ չունի իմ պատճառաբանությունները:

Ադոնցին պատասխանեց Յնտզլյանը (Հանդ. ամս. 1926, 271—5), և ավելի ուշ՝ 1930 թ. Կորյունի իր քննական հրատարակության մեջ (էջ 2—է, 14—18 և 72—73), բացի Վահան Ամատունու հերքումից, նա բերում է նաև հետևյալ զորեղ պատճառաբանությունները: 1) Մեսրոպ մեռել էր 439-ին, Հովսեփ կաթողիկոսը հորդորում և ստիպում էր Կորյունին, որ գրի իր ուսուցչի կենսագրությունը. ի՞նչ կարիք կար 23 տարի ձգձգելու (439—462) մի այնպիսի համառոտ կենսագրություն, որի համար ո՛չ երկար ուսումնասիրության և ոչ մանրամասն հետազոտության կարիք կար: 2) Ագաթանգեղոսը բազմաթիվ փոխառություններ ունի Կորյունից. արդ՝ Ագաթանգեղոսը, որ Ծ դարի կեսից առաջ գրված մի գիրք է, ի՞նչպես կարող էր փոխառություններ ունենալ Կորյունից, եթե նա Ծ դարի կեսից առաջ գրված չլիներ: 3) Անհավատալի է, որ Կորյունի պես ջերմեռանդ կրոնավոր մարդ, աշակերտ և արքայակ Մաշտոցի, որ բարձրագույն գովեստներն է տալիս Վահան Ամատունուն և Հմայակ Մամիկոնյանին, կոչելով նրանց «արք պատուականք, երկիւղածք հրամանակատարք վարդեպատական հրամանաց», ճիշտ այդ հրամաններին անսաստող, 450-ից սկսած բարձրաստիճան եկեղեցականների դեմ ոգորող, մոգպետին աշակից, կրակատուն կանգնեցնելու օգնական դուրս եկող Վասակին համախոհ, համակիր և դրվատող դառնա և այդ համակիր ակնարկությունը կամ գովասանքը կատարի հենց կաթողիկոսի հրամանով գրված գրքույկի մեջ: Հենց այս գովասանքից պետք էր հետևենել, թե Կորյունը գրել է ուրեմն 450-ից առաջ, երբ Վասակը դեռ չէր անցել պարսկասեր կուսակցության գլուխը: Պետք էր հետևենել, թե արդեն մեռած էր Կորյունը այդ թվին և ո՛չ թե ինքն էլ հարած էր «ուրացյալների կուսակցության», ինչպես կարծում է Ադոնցը: Եթե Կորյունը պարսկասեր կուսակցության հետևորդներից լիներ, Հովսեփ կաթողիկոսը նրա բարեկամը չէր լինի և չէր էլ առաջարկի գրել այդ կենսագրությունը: 4) Հովսեփ կաթողիկոսը աքսորվեց Պարսկաստան և 454 թվին նահատակվեց Ապար աշխարհում: Եթե Կորյունն այդ թվից հետո գրած լիներ իր գիրքը, անպատճառ Հովսեփին պիտի տար երանելի տիտղոսը: Միաժամանակ 451-ից հետո էլ չէր կարող գրած լինել, որովհետև այն ժամանակ էլ Հովսեփին պիտի տար Խոս-

առվանդ տիտղոսը, ինչպես տվել է Հովհաննիս: 5) Իմ կողմից ավելացնում եմ, թե այս դեպքում Հովսեփը չէր էլ կարող խնդրել Կորյունից, որ գրի այդ կենսագրությունը. Պարսկաստանի՞ց, թե՛ մահվանից հետո:

Այսպիսով գրքի գրության թվականը դարձյալ մնում է 443—450, իսկ Ֆետղյան կտրական դնում է 443—444:

4. Ի՞նչ հարաբերություն ունի Կորյունն Ագաթանգեղոսի և Բուզանդի հետ. — Վաղուց նկատված է, թե ո՛չ միայն ոճի և լեզվի մեծ նմանություն կա Ագաթանգեղոսի, Բուզանդի, Կորյունի և Մակարայեցոց մեջ, այլև այնպիսի խոշոր հատվածներ կան սրանց մեջ՝ ամբողջությամբ նույն, որ անկարելի է փոխադարձ կապ չընդունել: Այժմ արդեն հաստատված է, թե Ագաթանգեղոս և Բուզանդ են բանաքաղ և ո՛չ թե Կորյուն, որովհետև այս նման հատվածները շատ ավելի բնական են Կորյունի մեջ, քան մյուսների: Նորայր Բուզանդացին իր վերջին ընդարձակ աշխատության մեջ (Կորյուն՝ Վարդապետ և նորին թարգմանութիւնք) ամբողջովին զբաղվում է այս խնդրով. և այս աշխատությունները (նաև Եւթաղ), ընդ ամենը հինգ բնագիր համեմատելով միմյանց և մեսրոպյան շրջանի մյուս 42 մատենագրությանց հետ, գտնում է 624 նմանություններ և նույնություններ ոճի, բառի, լեզվի, դարձվածի, որով ապացուցանում է, թե Կորյուն՝ հեղինակ Վարդ և Մեսրոբայ՝ երկին, է նաև թարգմանիչ Ագաթանգեղոսի, Փավստոսի, Մակարայեցոց և Եւթաղի: Այսպիսով Կորյուն դառնում է ամենախոշոր մատենագիրներից մեկը հին հայ գրականության մեջ:

Թե Կորյունը եղել է թարգմանիչ Ագաթանգեղոսի և Բուզանդի՞ այս կարծիքը հայտնել են նախ Չամչյանը (Պատմ. Հայոց, հտ. Ա, էջ 10, 669), հետո Ավգերյան (Հայկազեան բառարան, հտ. Ա ցանկում, Բուզ. բառի դեմ), Գաթրճեան (Պատմ. Տիեզերական, հտ. Ա, էջ 94), մանավանդ Ղ. Բ. Սարգիսյան, Ագաթանգեղոս և իւր բաղմադարեան գաղտնիքն (Վենետիկ, 1890, էջ 317): Սակայն այս բոլորն էլ հարևանցի կերպով. միայն Նորայրն է, որ նույն հարցին նվիրել է 514 էջից բաղկացած ստվար մի մենագրություն:

Նորայրի եզրակացություն մասին մի նկատողություն տե՛ս իմ Հայոց լեզվի պատմության մեջ, II մաս, էջ 117—118: Կոգյանն էլ, որ առանձին ուսումնասիրել է Մակարայեցոց Բ գիրքը (Վիեննա, 1923), էջ 15—24-ում գտնում է, որ Մակարայեցոց գրքի թարգմանիչը Կորյունը չէ:

5. Արդյո՞վ Կորյունը վստանելի՞ պատմիչ է և հարազատ ձևի տակ հասն՞լ է մեզ, թե՞ խաղախված է:

Պատմական-մատենագրական ճշմարտություն է, թե ամեն ժա-

մանակակից հեղինակ իր շրջանի դեպքերի համար լավագույն և հարազատ վկան է: Միայն հին ժամանակի դեպքերի համար արված պատմություններն են, որ անվավեր ու կասկածելի են: Այսպես՝ Փարպեցին ճշգրիտ և վստահելի աղբյուր է 470—510 թվերի պատմության համար, իսկ անվստահելի է 400-ական թվերի պատմության համար: Սա այնպիսի մի ճշմարտություն է, որ հերքել անկարելի է և առանց որի չկա պատմություն:

Առաջնորդվելով այս սկզբունքով՝ Կորյունին էլ պետք է համարել ամենավստահելի հեղինակը, որովհետև ո՛չ միայն ժամանակակից է այն դեպքերին, որ պատմում է, այլ և ականատես ու շատ անզամ էլ գործակից:

Մեր մեջ սովորություն դարձավ, մանավանդ վերջերս, կասկածելի համարել ամեն ինչ. կեղծ ու խարդախ են ո՛չ միայն նորենացին կամ Զենոբ Գլակը, այլ և ամեն մի հայ պատմիչ: Այս կողմից նշանավոր է Ակիլեյանը, որի համար կեղծ են Սղոշեն էլ, Փարպեցին էլ, Սեբեոսն էլ և այժմ էլ Կորյունը:

Կորյունին կեղծ, ծածկամիտ կամ խարդախ համարեց Աղոնցը, իսկ Ակիլեյանը՝ չհամարձակվելով այսքան առաջ գնալ, Կորյունի գիրքը համարեց եղծված, խանգարված, թերթերը հետևառաջ ընկած: Այս մտածությամբ նա առավ իր հատու մկրտը, աջից ու ձախից կտրեց, հանեց, տեղափոխեց, ջնջեց, փոփոխեց և մեր ձեռքը տվեց մի նոր Կորյուն, որ տե՛ս ՀԱ 1935, էջ 454—550, Իրավունք ունե՞ր այսպես վարվելու:

Ընդունելի է, որ մի դասական հեղինակի մոտ գործածված որևէ անհարադատ բառ փոխենք և ուղղենք: Օրինակ՝ Լթե Բուզանդի, Ռակերերանի կամ Եղնիկի մեջ Լյն գտնենք աստուածային, ամենասուրբ, անշարժելի, փառատուրիւն և նման անհարազատ ձևեր և դարձնենք աստուածական, սուրբ, անշարժ, փառատուրիւն, անշուշտ իրավացի գործ արած կլինենք, որովհետև հետին հեղինակներն ու զրինները շքիտեին ամենևին այս երկու կարգի բառերի արժեքը և, մանավանդ, առաջինները լավագույն էին համարում, քան վերջինները: Եվ ի՞նչ դարձանք այս մասին, քանի որ այսօր էլ հարյուրամյուր հայ զիտնականներ կան, որ նույն գրության մեջ են: Վերջապես այս կարգի բառերի սրբազրությունը փոխում ենք միայն մի քանի տառ և իմաստի տարբերություն չկա բնավ:

Բայց ի՞նչ ասենք, երբ մի քննադատ տառաց պատճառաբանության հանդիմանում է ամբողջ տողեր ու հատվածներ փոխել...

Թերթերի տեղափոխություն՝ կազմի քայքայման պատճառով, նույնպես հասկանալի է. բայց այս դեպքում տեղափոխությունը պիտի լինի ամբողջ էջով կամ երկու էջով և ո՛չ թե հատվածներով

կամ մի քանի տողով, ինչպես անում է Ակինյանը Կորյունի մեջ (տե՛ս ՀԱ 1935, 455—8)։

Շատ անգամ Ակինյանը բառեր և հատուկ անուններ էլ է փոխում. օրինակ՝ Կորյունը, խոսելով Վրաց լուսավորության մասին, ասում է. «Յորոց և իմ անարժանիս՝ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ, որոց առաջինն Սամուէլ անուն, այր սուրբ և բարեպաշտօն, եպիսկոպոս կացեալ տանն արքունականի» (էջ 26)։

Ակինյանը սրբագրում է.

«Յորոց և ոմանք՝ արժանի եղեալ ի կարգ... եպիսկոպոս կացեալ տանն Արշուշայ իշխանի...» և ավելացնում է, թե սպասվում էր երկրորդի անունը, որ դուրս է ընկել. ուրեմն պակաս է։

Ի՞նչ իրավունքով Ակինյանը ասնն աբգուականի դարձնում է «տանն Արշուշայ իշխանի»։ Ո՞վ չգիտե, որ այն ժամանակ պալատական եպիսկոպոսներ կային և այդ պալատական եպիսկոպոսն էր հենց կաթողիկոսը։ Ինչո՞ւ Վրաց թագավորը պալատական եպիսկոպոս չպիտի ունենար։ Ինչո՞ւ է կարծում Ակինյանը, թե երկրորդի անունը պակաս է և տող է ընկած։ Եթե (հենց իր սրբագրութեամբ) ումանք եպիսկոպոս են ձեռնադրվել, ուրեմն առնվազն երեք անուն է պետք, որովհետև ո՛չ մի լեզվում մեկ և երկու շեն կոչվում ումանք, այլ երեք և ավելին։ Բայց թող վստահ լինի Ակինյանը, թե ո՛չ մի տող և ո՛չ մի անուն պակաս չէ, որովհետև Կորյունի նպատակը թվելը չէ, այլ հիշել միայն առաջինը, առաջնակարգը, ամենից պատվավորը, որ էր արքունական տան եպիսկոպոսը կամ հայրապետը։

Մեր պատմաբաններից մեկն էլ Կորյունի իբր վերջաբան դրած համահավաք տեղեկությունը կեղծ և հետո ավելացրած համարեց, որով և շհետևեց նրա տված թվերին ու թվականներին։

Ով որ կարդացել է Կորյունը ուշադիր կերպով, գիտի, որ նա թվական չի սիրում. «յետ այնորիկ, ապա յետ այնորիկ, յորում ժամանակի, դարձեալ յետ ժամանակի ինչ, ապա դարձեալ...», ահա Կորյունի սիրած ձևերը։ Միայն վերջաբանումն է, որ Կորյունը դառնում է իսկական ժամանակագիր, տալիս է Մեսրոպին վերաբերող բոլոր թվականները, որով և իր գիրքը դառնում է ճիշտ պատմություն։ Զնշել այդ վերջաբանը՝ նշանակում է դրկել նրան պատմական արժանիքներից և ամբողջ գիրքը դարձնել ճե՛քիաք։

Եթե մեկը ուսումնասիրի այդ վերջաբանը (մենք այդ անելու ենք գրքիս վերջին գլխում), պիտի տեսնի նրա բացարձակ արժանիքը։ Ընդամենը 11 տող է այդ վերջաբանը, և այդ 11 տողի մեջ խտացված հիշված է 9 անուն և 8 թվական։ Եվ այս բոլոր թվերն ու անունները բացարձակապես ճիշտ են և համաձայն արտաքին ստույգ պատմությունի։

Գա մի գոհար է մեր հին ժամանակագրութիւն մեզ:

Եվ ո՞վ կարող էր լինել հետիններից այն անձը, որ կարենար իրանից սարքել կամ հերյուրել մի այդպիսի ժամանակագրութիւն: Ունինք մեր ձեռքին Փարպեցու, Խորենացու, Սեբեոսի, Ասողիկի և մանավանդ Սամուէլ Անեցու ժամանակագրութիւնները. բոլորն էլ սխալ են հին դեպքերի և թվականների ժամանակագրութիւն մեզ: Այս էլ պիտի տեսնենք ուսումնասիրութիւնս վերջին գլխում: Մի՞ մարդ միայն կարող էր գրել Ե դարի առաջին քառասնամյակի համար այդքան ճիշտ, թվականները այդչափ ուղիղ ժամանակագրութիւն: Այդ ա՞յն անձն է, որ ապրել է այդ շրջանում, այդ դեպքերի միջոցին և այդ անձնավորութիւնց հետ: Այդ անձն է Կորյունը:

Եթե այդ վերջաբանը շունենայինք Կորյունի մեջ և մի տեղ հանկարծ պատահամար գտնենք իբրև պատահիկ (11 տող), ամեն մի խելոք բանասեր պիտի ասեր... սա Կորյունի՞ց է:

Այս առթիւ մի գեղեցիկ մտածութիւն ունի Գ. Փառնակը (Յնտղլյան): Անահիտ 1921, մայ. էջ 58:— Երբ Մեսրոպը մեռավ և աշակերտները նրան թաղեցին ու վրան էլ մատուռ կանգնեցրին, այդ նյութական հիշատակարանից հետո ուզեցին նաև մի բարոյական հիշատակարան կանգնեցնել, այն է՝ գրել տալ նրա կենսագրութիւնը: Բոլորը միացան և ընտրեցին իրենց ընկերակից Կորյունին, իբրև լավատեղյակ անձնավորութիւն: Հովսեփ կաթողիկոսի հրամանով Կորյունը հանձն առավ գործը: Կարո՞ղ էր Կորյունն այսպիսի հանգամանքներում, Հովսեփ կաթողիկոսի աչքի առաջ, իր բազմաթիւ լավատեղյակ ընկերներին տալ ստերով համեմատմ մի գիրք. որ բոլորի աչքը պիտի ծակեր և ծաղր ու ծանակի պիտի ենթարկեր հեղինակին: Միակ այս փաստը բավական է համոզելու համար մեզ, թե Կորյունը ամենահավատարիմ պատմիչն է, սուույց է ամեն տեղեկութիւն, որ նա տալիս է, և ուրիշ պատմիչների ամեն մի տեղեկութիւն, որ հակասում է նրան, սուտ է:

## 2. Ղ Ա Ջ Ա Ր Փ Ա Ր Պ Ե Յ Ի

(Հրար. 1904, Տփխիս)

Մեր աղբյուրների մեջ Կորյունից հետո Մեսրոպին ժամանակով ամենից մոտիկը Ղազար Փարպեցին է: Այս պատմագրի վրա ընդարձակ մի քննութիւն ունի Գր. Խալաթյան, «Ղազար Փարպեցի և գործք նորին» (Մոսկուա, 1883): Ուրիշ մանր գրութիւններ ունին Գաթրճյան (Հանդ. ամս. 1887, էջ 11—12), Müller, «Gazar Pharbetschi und Koriun» (WZKM v. 36—38, թրգմ. Հանդ. ամս. 1891, էջ 178—9) և ուրիշ մանր-մուր քննութիւններ: Բայց ամենից կա-

րևորն է մեզ համար Միաբանի մի հոգվածը՝ «Ղազար Փարպեցու ձեռագրերը» (Արարատ, 1901, 542—9), որ խոսում է հատկապես գրերի գյուտի վրա և որի մասին ընդարձակորեն պիտի խոսենք մի քիչ հետո:

Խալաթյանի քննությամբ (էջ 7) Փարպեցին ծնվել է 440—443 տարիներում, ուստի Մեսրոպի մահվանից հետո. նա իր պատմությունը գրեց՝ դարձյալ ըստ Խալաթյանի ճիշտ քննության՝ 490—509 թվականների միջև. Մեսրոպի և գրերի գյուտի վրա խոսում է էջ 39—49 և 105, 106, որոնց մեջ միշտ աչքի առաջ ունի և իբրև աղբյուր է գործածում Կորյունի գիրքը, մի քանի տեղ էլ հատկապես հիշելով նրա անունը. ինչպես էջ 35՝ «Նւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեալ՝ ի պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան՝ աշակերտի նորին երանելոյն Մաշթոցի, կարդացեալ տեղեկացի զվարս կենաց նորա. և զիւր հայերէն նշանագրացն, թէ երբ կամ ուր և կամ յոյր ուրուք ձեռն գտանէ... զոր կարգեաց գրելով ճըշմարտապէս յառաջագրեալ այրն հոգևոր Կորին. ուստի և մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեալաւ: Կորյունը հիշվում է նաև էջ 103, 205, որ ավելորդ համարեցինք մեջ բերել: Վերոհիշյալ էջերի միջև պարունակված մասերը վերաբերում են նույն ժամանակի քաղաքական անցքերին: Իսկ էջ 205 պատմում է համառոտ կերպով, թե ի՞նչպես Մեսրոպը, իր Կորյուն և Արձան անունով աշակերտների հետ Ղևոնդ երեցի քնած ժամանակ տեսել էր լույս, որ ճառագայթել էր նրա շուրջը, որով իմացել էին, թե Ղևոնդը նահատակությամբ պիտի վախճանվի:

Գրերի գյուտի մասին Փարպեցու մեջ՝ էջ 39—41, բավական մեծ մի հատված կա, որ տառացի նման է Խորենացուն և միշտ բանասերների մեջ վիճաբանության նյութ է դարձել, թե արդյոք ո՞վ որից է փոխ առել:

Այն ժամանակ, երբ Խորենացու վրա ամենևին կասկած չկար և ամեն մարդ ընդունում էր նրան իբրև անսասան կերպով Ն դարի հեղինակ՝ երիցագույն, քան Փարպեցին, պարզ է, որ պետք է ընդունվեր նաև, թե Փարպեցին էր, որ այն հատվածը փոխ էր առել Խորենացուց: Բայց երբ բանասերները կասկած հայտնեցին Խորենացու վավերականության վրա և համարեցին նրան Զ—Է դարերի գրող, շուտով դերերը փոխվեցին և Խորենացին եղավ Փարպեցուց արտագրողը:

Անկախաբար Խորենացու ժամանակից, առաջին անգամ Ս. Վ. Պարոնյանը (Երկրագունտ, 1884—5, մասնավորապես էջ 492, ժանոթ. 2) քննության առնելով այս խնդիրը, վճռեց, թե Փարպեցու մեջ գտնված սույն հատվածը ամենևին Փարպեցունը չէ, այլ Խո-

րենացոց մի կտոր, որ հետին արտագրողները մտցրել են Փարպեցու պատմության մեջ: Պարունյանն իր վճիռը հիմնում էր Մեսրոպ անվան վրա. Փարպեցին իր ամբողջ աշխատության մեջ ընդարձակ Կորյունի նման միշտ՝ զիտն Մաչքոց (ընդ ամենը 17 անգամ), բայց միայն այս հատվածում խորենացու հետ ունի Մեսրոպ, ուստի չի կարող հարազատ լինել: Ընդ այս փաստի վրա հիմնվելով ուրիշ նկատարություն է հանում Մյուլլերը (WZKM, v. 36—39). քանի որ Փարպեցին, մտածում է Մյուլլերը, այլուր միշտ Մաչքոց ունի Կորյունի հետ և միայն այստեղ Մեսրոպ ձև է գործածում, սրանից հետևում է, թե մնացյալ բոլոր տեղերը օգտված է Կորյունից և միայն այս հատվածն է, որ խորենացոց է հանած:

Վճռական հարվածը տալ և խնդիրը փակել վերապահված էր Միարանին (Արարատ, 1901, էջ 542—9): Այս հողվածում Միարանը նախ ցույց է տալիս, թե Ղազարի պատմության մինչև այժմ եղած տպագրությունները և սրանց իրրև հիմք ծառայած ձեռագիրները բոլորն էլ արտագրված են E= էջմիածնի մատենադարանի № 1688 (Կարինյան 1646) ձեռագրից. այս էլ՝ հիշատակարանի վրկայությանը՝ էջմիածնի մեջ 1774 թվին արտագրված է ուրիշ լավագույն մի ձեռագրից=B, որ այժմ գտնվում է նույնպես Մատենադարանում և կրում է Գևորգյան 611 համարը:

Քննական ուսումնասիրության տեսակետով ամենևին նշանակություն չունին ուրեմն E և իր հաջորդները. և պետք է միայն զիմել B-ին: Արդ՝ վերոհիշյալ կասկածելի հատվածը ամբողջովին գայլոբյուն չունի B ձեռագրում, որ նախորդ և հաջորդ հատվածները միահետ շարունակում է, առանց հապավման կամ ընդմիջարկության հետք կրելու: Ի՞նչ է ուրեմն տեղի ունեցել: E ձեռագիրը արտագրողը, որ ըստ Միարանի՝ ամենայն հավանականությամբ օջականցի Ղունկիանոս դպիրն է, B-ից արտագրած ժամանակ, ուղենալով գրեթե գյուտի վրա ավելի մանրամասն տեղեկություն ունենալ, դիմել է այն ժամանակ ծանոթ տպագրյալ խորենացուն (տիպ Ա. 1695 Ամստերդամ, կամ տիպ Բ. 1752 Վենետիկ) և սրանից ներմուծել է հիշյալ հատվածը, առանց հիշատակության: Հետաքրքիր է, որ նույն տպագրության մեջ օտար անունների փոստի տեղ շատ անգամ գրված է Ք և երբեմն միայն փ. արտագրողը սրան էլ բոլորովին հավատարիմ է գտնվել: E-ից պատրաստված ձեռագիրները և մանավանդ Վենետիկի տպագիրները հետզհետե կոկել են սույն նորամուտ հատվածը, որ այսպես հետզհետե փոխվելով՝ փոքր ինչ հեռացել է նախնական տպագրի ձևից:

Ստորև գնում ենք սույն հատվածը համեմատության համար շորս սյունակի մեջ. նախ խորենացու 1695-ի տպագրությունը, երկ-



որորդ՝ **В** ձեռագիրը, երրորդ՝ **Ղ** զգարի առաջին տպագրութեան (Վե-  
նետիկ, 1793) և չորրորդ՝ **Ղ** զգարի երկրորդ տպագրութեան (Վենե-  
տիկ, 1873) տարբերութիւնները, հանելով Միաբանի նույն հոդ-  
վածից (տե՛ս էջ 38—39):

Այսպիսով վերջանում է սույն աղճատ խնդիրը, որ այնքան  
ժամանակ նեղութիւն էր պատճառել բանասերներին, և որին վե-  
րադառնալ այլ ևս երբեք պետք չկաւ: Փարպեցու նոր հրատարակու-  
թեան մեջ այդ հատվածը ամբողջովին հանված է բնագրից և դըր-  
ված ժանտութեան մեջ:

### 3. Մ Ո Վ Ս Ե Ս Խ Ո Ր Ե Ն Ա Ց Ի

(տպ. Տփխիս, 1881)

Մեր երրորդ հիմնական աղբյուրն է Խորենացին, որ թեև ժա-  
մանակակից չէ, բայց բոլոր հաջորդ դարերի պատմագիրների հա-  
մար ծառայելով իբրև գլխավոր աղբյուր՝ ունի մեծ նշանակութիւն:  
Խորենացին ազդել է ո՛չ միայն հաջորդ հեղինակների վրա, այլև  
ներանով ուղղված և սրբագրված են հաջորդ դարերում՝ իրենից առաջ  
եղած հեղինակները: Սրա օրինակը տեսանք Փարպեցու, բայց մա-  
նավանդ Կորյունի մեջ, որից ամբողջ մի նոր խմբագրութիւն է  
կազմված՝ Խորենացու հետևողութեամբ:

Գրերի գլուտի վրա Կորյունը և Ղազարը թեև միահետ առանց  
ընդհատման խոսում են, բայց այսպես չէ Խորենացին: Խորենա-  
ցին, ամբողջ Մեսրոպի վարքը և գրերի գլուտը մաս-մաս բաժա-  
նելով, խառնել է պատմական-քաղաքական ուրիշ խնդիրների մեջ,  
սկսելով Երրորդ դարութեան խէ գլխից մինչև Կէ գլուխը, որ իր  
Պատմութեան վերջն է: Այսպես՝ գլուխ խէ «Յաղագս երանելոյն  
Մեսրոպայ», որտեղ պատմվում է Մեսրոպի աշխարհական կյան-  
քը, միայնակեցութիւնը, Գողթան քարոզութիւնը և գրերի պետք  
զգալը.— գլուխ խթ՝ Սահակը կաթողիկոս է նստում, աշակերտներ  
է հավաքում, իրա՛ մոտ է գալիս Մեսրոպը և առանց հաջողութեան  
բաժանվում են.— գլուխ ԾԲ՝ Դանիելյան նշանագրերը և երկամյա  
փորձը.— գլուխ ԾԳ՝ Մեսրոպի դիմումները և տառերի գլուտը.—  
գլ. ԾԴ՝ Հայոց, Վրաց և Աղվանից լուսավորութիւնը.— գլուխ ԾԷ՝  
Մեսրոպի երթը Բյուզանդիոն և Սահակի թղթակցութիւնները.—  
գլ. ԾԸ՝ Արևմտյան Հայոց լուսավորութիւնը.— գլ. Կ՝ Մեսրոպի  
երկրորդ ճանապարհորդութիւնները և թարգմանիչների մեկնումը.  
— գլ. ԿԱ՝ Եփեսոսի ժողովը, ս. Գրքի թարգմանութիւնը.— գլ.  
ԿԶ՝ Սահակը քաշվում է Բագրեվանդ, Մեսրոպը մնում է Վաղար-  
շապատում.— գլ. ԿԷ՝ Սրբերի վախճանը: Սրանցից դուրս գտնված

**Խորհեացի**

Ա. տպ. էջ 409—410

տեղեկացեալ՝ գիտացին ոչ լինիլ բաւական՝ այնու նշանագրօք՝ ստոյգ հոլովիլ զհեղենայ բառից Հայկականաց հազներգարար, մուրացածիւն այնուիկ գծագրութեամբ:

(Պրակ ծղ)

Զկնի այսորիկ՝ ինքնին Մեսրոպը իշանէ ի Միջագե(ս)տս՝ հանդերձ աշակերտօք՝ առ նոյն Դանիէլ, եւ ոչ՝ աւելի ինչ գտեալ՝ քան զառաջինն. անցանէ յմղեսեայ առ Պղատոս ոմն՝ ճարտասան Հեթանոս, իշխան Դիւանին. եւ նր խնդութեամբ ընկալեալ, եւ զոր ինչ մի անգամ ի միտ առնոյր բան Հայերէն՝ չինքն առեալ, եւ շատ ջանացեալ՝ եւ ոչ օգտեալ, զտգիտութիւն՝ խոստովանեաց Հռետորն, եւ զայլ ոմն ասելով՝ յոյժ հասու՝ Վարդապետ իւր լեալ առաջագոյն, եւ ապա՝ առեալ զճարտարացն գրեան ի նոյն Դիւանէն Սղեսեայ՝ եւ գնացեալ Քրիստոնէութեան հաւատաց, որոյ անուն՝ Սպիֆանոս. զոր խնդրեալ՝ գտցես լցուցանել զփափագդ քո: Յայնժամ Մեսրով-

**Ղազար Փարսեցի**

В, էջ 14բ—15բ.

բայց տեղեկացեալ գիտացին, ոչ լինիլ բաւական այնու նշանագրօք, ստոյգ հոլովիլ զհեղենայ բառից հայկականաց հազներգարար մուրացածիւն այնուիկ՝ գծագրութեամբ:

Ա տպ. էջ.

27—9

ոչ լինել

Բ տպ. էջ

39—41

ոչ լինել

յմղեսիս

Զկնի այսորիկ ինքնին Մեսրոպը իշանէ ի Միջագետս, հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, եւ ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն. անցանէ յմղեսեայ առ Պղատոս ոմն ճարտասան հեթանոս, իշխան դիւանին. եւ նր խնդութեամբ ընկալեալ. եւ զոր ինչ միանգամ ի միտ առնոյր բան հայերէն, չինքն առեալ եւ շատ ջանացեալ եւ ոչ օգտեալ. զտգիտութիւն խոստովանեաց հռետորն, եւ զայն ոմն ասելով յոյժ հասու վարդապետ իւր լեալ յառաջագոյն. եւ ապա առեալ զճարտարացն գրեան ի նոյն դիւանէն Սղեսեայ. եւ գնացեալ Քրիստոնէութեան հաւատաց՝ որոյ անունն Սպիֆանոս. զոր խնդրեալ՝ գտցես լցուցանել զփափագդ քո: Յայնժամ Մեսրովփալ

յառաջա-

գոյն

անունն

Սպիփանոս

զփափագդ

յառաջա-

գոյն

անունն

Սպիփանոս

զփափագդ

բայ՝ օգնականութիւն ի Բաբելոսէ Եպիսկոպոսէ՝ գտեալ, եւ անցեալ ընդ Փիւնիկէ՝ ի Սամոս դիմէ. քանզի՝ Եպիփաճու վճարելով զկենցաղս թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հոուֆաճոս՝ հրաշալի արուեստիւ Հելլեն գրչութեամբ՝ որ ի Սամոս էր միայնացեալ, առ սա երթեալ Մեսրովբայ՝ եւ յայսմ եւս անշահ մնացեալ, յաղօթս ապաւինի. եւ տեսանէ ոչ ի քուն՝ երազ, եւ ոչ յարթնութեան՝ տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աշաց, թաթ ձեռին աշոյ՝ գրելով ի վերայ վիմի, զի՝ որպէս ի ձեան վերջք գծին ունէր քարն, եւ ոչ միայն երեւութացաւ, այլ՝ եւ հանգամանք ամենայնիցն, որպէս՝ յաման ինչ՝ ի միտս նորա հաւաքեցաւ, եւ յարուցեալ յաղօթիցն՝ աստեղծ զնշանագիրս մեր՝ հանդերձ՝ Հոուֆաճոսիւ, կերպածեւեալ զգիրն՝ առ ձեռն պատրաստ: Մեսրովբայ փոխատրելով զհայերէն Աթուրայսն՝ ըստ անսայթաքութեան Սիլլաբայիցն ի Հելլենացւոյն:

օգնականութի ի Բաբելոսէ եպիսկոպոսէ գտեալ. եւ անցեալ ընդ Փիւնիկէ, ի Սամոս դիմէ. քանզի Եպիփաճու վճարելով զկենցաղս. թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հոուֆաճոս հրաշալի, արուեստիւ՝ հելլեն գրչութեան, որ ի Սամոս էր միայնացեալ: Առ սա երթեալ Մեսրովբայ, եւ յայսմ եւս անշահ մնացեալ, յաղօթս ապաւինի. եւ տեսանէ, ոչ ի քուն երազ, եւ ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աշաց, թաթ ձեռին աշոյ գրելով ի վերայ վիմի, զի որպէս ձեան վերջք գծին ունէր քարն. եւ ոչ միայն երեւութացաւ, այլ եւ հանգամանք ամիցն, որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ՝ եւ յարուցեալ յաղօթիցն աստեղծ զնշանագիրս, մեր, հանդերձ Հոուֆաճոսիւ կերպածեւեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրովբայ. փոխատրելով զհայերէն աթուրայսն, ըստ անսայթաքութեան սիլլաբայիցն ի Հելլենացւոյն:

Հոուփանոս  
գրչութեան

ՂԻԲ աշաց.  
ի ձեան  
ամիցն

Հոուփանոսիւ

սիողորայիցն

Հոուփանոս  
գրչութեան

ՂԻԲ աշաց.  
ի ձեան  
վերջք գծին  
կուտակեալ  
ամենիցն

Հոուփանոսիւ

սիողորայիցն

դուրսնեքը միայն քաղաքական պատմություններ և պարունակում է հազ շունեն գրական գործունեության հետ:

Խորհնացու և Կորյունի հարաբերության մասին բավական ընդարձակ մի ուսումնասիրություն ունի Ֆետգլյան (Անահիտ, 1930, N N 2, 4 և 1931 մայիս): Լեզիկնակի նպատակն է ապացուցանել, թե Խորհնացիին՝ թեև չի հիշում Կորյունին, բայց ամբողջապես բանաբաղում է նրանից: Այս բանը ապացուցվում է Խորհնացու այն բառերից ու ձևերից, որոնք Կորյունից են քաղված և առանց Կորյունի համեմատության, միայն Խորհնացիով անհասկանալի են: Այսպես, օրինակ՝ Ֆետգլյան (էջ 68) հիշում է Խոր. Գ. ծգ հետևյալ հատվածը. «Եւ իսկոյն ի Թարգմանութիւն ձեռն արկնալ, Խորհրդարար սկաննելով յԱռակաց»: Այստեղ խորհրդարար ո՛չ մի արժեք չունի և նրանից առաջ կամ հետո չկա ո՛չ մի բացատրություն՝ հասկանալու համար, թե ինչո՞ւմն է այդ խորհուրդը: Միայն Կորյունն է, որ տալիս է բացատրությունը. «Եւ եղևալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ Եթէ Տանալել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Եւ այնքալ ապացուցանելու համար ես կարող եմ հիշել Կորյունի փութանակի ածականը ս. Գրքի առաջին Թարգմանության համար. «Զյառաջադոյն զյանկարծագիւտ զփութանակի զԹարգմանութիւնս»: Նույնը կրկնում է նաև Խորհնացին. «Զմի անգամ Թարգմանեալն փութանակի...» (Խոր. Գ. կա):

Ուր որ Խորհնացին Կորյունից դուրս և ավելի մի տեղեկություն ունի, սխալ է, ասում է Ֆետգլյանը (էջ 73): Օրինակ «խորհրդարար սկաննելով յԱռակաց, բովանդակ զբանս և երկու յայտնիսս և զնոր կտակս յեղու ի հայ բան» (Խոր. Գ. ծգ), վերջին տողը չունի Կորյունը և Խորհնացու ավելացրածն է: Բայց դա ճիշտ չէ, որովհետև Մեսրոպը Սամոսատում միայն Առակաց գիրքը Թարգմանեց և ո՛չ թե ամբողջ Հին և Նոր Կտակարանները, որի համար ժամանակ էլ չունենր:

Այս կետերը ի նկատի ունենալով՝ հարց է տալիս Ֆետգլյանը (էջ 65), թե ինչո՞ւ արդյոք Խորհնացին չի հիշում Կորյունին իբր աղբյուր Սրա համար երկու կարծիք է հայտնում. կա՞մ այն է, որ Խորհնացին ուզում է ցույց տալ իրեն իբրև առաջին պատմիչ Հայոց, և կամ ա՛յն, որ ուզում է ծածկել պարտակել այն բոլոր ստեղծող, որ ավելացրել է իր կողմից Կորյունի պատմածի վրա: Ես կարող եմ ավելացնել այստեղ ա՛յն, որ Խորհնացին չի հիշում նաև ո՛չ Փարպեցուն և ո՛չ էլ Փավստոսին, որոնցից նույնպես բանաբաղություններ ունի: Այս հարցով զբաղվել է նաև Ստ. Մալխասյանը

իր նորատիպ մեծ աշխատութեան մեջ (Թարգմ. Խորենացու Հայոց պատմութիւն, էջ XXXII): Ահա թե ի՞նչպես է բացատրում նա երեւութիւնը.— Թվում է, թե Խորենացին ընդհանրապես չի հիշում այն աղբյուրները, որոնք շատ հայտնի և ըստ ինքեյան հասկանալի են, ինչպես մենք այժմ իբրև աղբյուր ցույց չենք տալիս հանրագիտական բառարանները կամ ժամանակագրական աղյուսակները: Դարձյալ չի հիշում այն աղբյուրները, որոնք չեն վերաբերում պատմութեան որոշ շրջանի, այլ որոնցից նա մասնավոր անցքի մասին որևէ տեղեկութիւն է քաղում...:

#### 4. Մ Ո Վ Ս Է Մ Կ Ա Ղ Ա Ն Կ Ա Յ Տ Ո Ւ Ս Յ Ի

(տպ. Մոսկոա, 1860)

Մեր մատենագրութեան պատմութեան մեջ Կաղանկայտուացին թեև համարված է է դարի հեղինակ, բայց նոր քննութիւնները ցույց տվին, թե Կաղանկայտուացու անունով հասած երկը միացումն է երկու տարբեր գործերի. առաջինը պարունակում է Ա և Բ դպրութիւնները, որ կազմել է բուն Մովսես Կաղանկայտուացին՝ հեղինակ է դարի. իսկ Գ դպրութիւնը կազմել է Մովսես Դասխուրանցին, որ Ժ դարի հեղինակ է: Մեարոպի և գրերի գլուտի վրա խոսում է միայն Կաղանկայտուացին, իսկ Դասխուրանցին՝ իբրև հեռու ժամանակի մարդ, չի գրադվում այս խնդրով, ուրիշ խոսքով, մեր նյութի համար պետք եղած տեղեկութիւնները կարող ենք քաղել միայն Ա և Բ դպրութիւններից, իսկ Գ դպրութեան մեջ միայն երկու տեղ հիշվում է Մեարոպը հարեանցի կերպով. այսպես՝ «Տէր Երեմիա (կաթողիկոս Աղուանից)».— ի սորա ատուրս արար գիր Աղուանից երանելին Մեարոպ, որ և Հայոց և Վրաց ետ նշանագիր ջանիւ մեծաւ:— «Տէր Եղիազար, ամս վեց, յեպիսկոպոսութենէն Շաքոյ:— Սա եգիտ զսուրբ խաչն՝ զծածկեալն ի Մեարոպայ ի Գիս գեօղն, և ի նոյն կենարար փայտէն մասն առեալ եղ ի հարիւր քսան դահեկանի ոսկեօք, և գրեաց ի վերայ, եթէ Եղիազարու է. եւ կարգ եղ յօր խաչին տօնել ի Գիս (գլ. ԻԴ, էջ 275—6)»:

Ընդարձակ է խոսում Կաղանկայտուացին Մեարոպի վրա. Աղուանից գործունեութեան մասին նա տալիս է այնպիսի տեղեկութիւններ, որոնց համար իղուր է դիմել ուրիշ որևէ աղբյուրի: Այս տեղեկութիւնները նա քաղել է նախկին գրչագիր պատմութիւններից, որոնք իր ժամանակ ցանուցիր գտնվում էին Աղուանից երկրի այլևայլ վանքերում: Թե արդոք Կաղանկայտուացին հավատարմութեամբ է վարված իր այս աղբյուրի հետ՝ չենք կարող իմանալ. միայն որովհետև ինքը հայտնի է իբրև շատ միամիտ և առասպե-

լախոս անձ, ուստի պետք է իր աված տեղեկութիւններին էլ մեծ զգուշութեամբ վերաբերվել:

Կաղանկայտվացու մեզ վերաբերյալ գիտնելը հետևյալներն են.

Հատոր Ա.

Գլուխ ԻԷ.— Յաղագս սրբոյն Մեսրոպայ եւ ընկերաց նորա պատմութիւն վիպասանաբար:

Գլուխ ԻԸ.— Շարագրած յաղագս աշակերտաց սրբոյն Մաշտոցի ընդ ներգոյս զրուցատրաբար:

Գլուխ ԻԹ.— Գիմումն հիսթիսականացն յամենայն սահմանս Աղուանից, Հայոց եւ Վրաց. եւ վկայութիւն աշակերտացն սրբոյն Մեսրոպայ:

Գլուխ Լ.— Հաւատալն մեծի զօրավարին Քորեկեան ի Քրիստոս, թէ նա է Աստուած, եւ նահատակիլ նորա զօրօքն եւ որդւոքն եւ քահանայական դասուքն յիւրմէ թագաւորէն յաշխարհիս Աղուանից:

Հատոր Բ.

Գլուխ Գ.— Գալուստ Մեսրոպայ վարդապետի առ Արսվաղէն Աղուանից արքայ եւ առնել զգիրս եւ կարգել վերստին դպրոցս եւ զհաւատս հաստատել ի տանս Աղուանից եւ բառնալ զմնացեալ աղանդան:

Գլուխ ԻԹ.— Տեսիլ միանձնացելոյ առն Աստուծոյ Իսրայելի ի վերայ Մաշտոցի սրբոյ եւ նահատակութեան աշակերտացն, եւ զիւտ սրբոյ խաչին, որ ի Գիսն էր:

Գլուխ Լ.— Պատճէն թղթոյն, որ զրեցաւ յեպիսկոպոսացն ի Դաւթէ եւ ի Յովելայ եւ ի մեծ ժողովարանէն, թէ որպէս եցոյց Աստուած զմեծ սքանչելիսն:

Գլուխ ԼԱ.— Առ այս պատասխանիք եպիսկոպոսացն՝ ի հայրապետէն եւ յիշխանէն:

Գլուխ ԼԳ.— Յաղագս սրբազան առն Իսրայելի քահանայաւնալոյն, եւ զիւտ սրբոյ խաչին վիպասանումն զրուցատրաբար:

## 5. Փ Ո Ք Բ Կ Ո Ր Ի Ի Ն

(Տպ. Վենետիկ, 1854)

Այս աշխատութեան վրա արդեն պետք եղած շարիւղ խոսել ենք վերը, ուստի ավելորդ ենք համարում նորից կրկնել այստեղ:

Իբր ամփոփում կարող ենք հիշեցնել, թե փոքր Կորյունը Զ—Ը դարերի հերյուրվածք է՝ ձեւած ընդարձակ Կորիւնի վրայից՝ սրա զանազան կետերը սրբագրելով Խորենացու համեմատ:

Յնտգլյան (Անահիտ, 1930, էջ 67) կարծում է, թե Փոքր Կորիւնի հեղինակը հենց Խորենացին է: Այս կարծիքը ունեցել է նրանից առաջ նաև Ս. Վ. Պարոնյանը: Չեմ կարծում, որ այս կարծիքը ճիշտ լինի, և իրենք էլ արդեն որևէ ապացույց չեն տալիս: Փոքր Կորյունը չի կարող Խորենացունը լինել, որովհետև ինչքան էլ որ նա հետևում է Խորենացուն, այնու ամենայնիվ նրան հակառակ կետեր ունի: Հենց իբր օրինակ հիշենք այն, որ Խորենացին Մեսրոպին տալիս է թարգմանել Հին և Նոր Կտակարանները Սամոսատում, իսկ Փոքր Կորյունը՝ միայն Հին Կտակարանը:

## 6. Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Վասն սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրոպայ վարդապետին  
(տպ. Վենետիկ, 1853)

Փոքրիկ մի գրություն է, որ հրատարակված է Սոփերքի երկրորդ հատորում և բռնում է նրա 5—42 էջերը: Աշխատության հրատարակութեան, գործածված ձեռագրերի մասին ամենևին տեղեկություն չկա: Գրվածքը նույնպես ոչ առաջաբան ունի և ոչ հիշատակարան, այլ ուղղակի սկսվում է «Յետ ամաց հնգից վախճանի հայրապետն մեծ Ասպուրակէս եւ յաջորդէ... Սահակ եմ»:

Գրվածքը հատուկ պատմական աշխատություն չէ, ինչպես վերնագիրը կարծել է տալիս, այլ ճառ կամ ներբողյան, պատրաստված Սահակի տարեկան մի տոնախմբութեան առթիվ. այս բանը պարզորեն ցույց է տալիս գրվածքի վերջաբանութեանը (էջ 42). «Եւ այժմ արդ եկայք և մեք միաբան ժողովեալքս փառաւորեալքս ի փառս փառօք պսակեալ հարցն մերոց սրբոց, զփառաւորիչն նոցա զՔրիստոս փառօք փառաւորեսցուք, որ է օրհնեալ, գովեալ, բարեբանեալ և առաւել փառաւորեալ և երկրպագեալ յամենայն արարածոց իւրոց, ընդ շօր եւ ընդ Հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ յաւիտեանս յաւիտենից»:

Այսպիսով գրվածքը մտնում է Խորենացու Վարդավառի ճառի, Հոսիսիսիմյանց ներբողյանի և նմանների շարքը, և իբր այն ունի ոգևորյալ, բանաստեղծական լեզու, շատ ավելի զգացված, քան Փոքր Կորյունը և ուրիշները:

Գրվածքիս հեղինակը առհասարակ օգտված է Խորենացու պատմութեանից, թեև չի հիշում նրան. բայց իզուր, որովհետև ճանաչում է նրան (էջ 14) թարգմանիչների շարքում. «յորոց ընտրեցին թուով վաթսուն յաշակերտելոցն... յորոց էր մեծն Մոսէս Խորենացին»: Բազմաթիվ են այնպիսի հատվածներ, որոնք ուղղակի Խորենացուց են. հիշենք սրանցից երկուսը.

Եւ տեսանէր սուրբ եւ Երզ-  
նիկ վարդապետն Մեարժք, ոչ ի  
քուն երազի եւ ոչ յարթնութեան  
տեսիլ, այլ ի գործարանի արտին  
թաթ ձեռին՝ զի գրէր:

## էջ 18.

Յորժամ դարձան ի մեծայամ  
ուզեորութենէն, ոչ գտին զառա-  
քիչսն իւրեանց, զի վախճանեալ  
էին սուրբքն եւ բարձեալ թագա-  
ւորութիւնն, քայքայեալ վայելչու-  
թիւնն, եւ սպառեալ ուսումնասի-  
րութիւնն, աղաւաղեալ կարգաւո-  
րութիւն եւ բազմացեալ անկար-  
գութիւն, նսեմացեալ ճշմարտու-  
թիւն, եւ զօրացեալ ստութիւն:

Գրութիւնը շատ ավելի մեծ նմանութիւն ունի Հովհաննես  
կաթողիկոսի, քան Խորենացու հետ: Այս նմանութիւնը ո՛չ թե այս  
ու այնտեղ ցրված է այս կամ այն հատվածի մեջ, այլ ամբողջ աշ-  
խատութեան, սկզբից մինչև վերջ: Այսպես՝ Հովհաննես կաթողի-  
կոսը՝ գլուխ ՅԴ, սկսում է. «Յետ այսորիկ ապա վախճանեալ հայ-  
րապետն մեծ Ասպուրակէս» և ճիշտ նույն ձևով մեր անանուն հե-  
ղինակն էլ սկսում է «Յետ ամաց հնգից վախճանի հայրապետն  
մեծ Ասպուրակէս», և ամբողջ գիրքը շարունակվում է մինչև վերջ՝  
քալլ առ քալլ, բառ առ բառ հետևելով Հովհաննես կաթողիկոսին:  
Տարբերութիւնը, որ կա երկու գրվածքների միջև, այն է, որ տեղ  
տեղ Անանունը մեծ-մեծ ողբեր, տեսութիւններ, կրօնական կամ  
բանաստեղծական մտածութիւններ է ավելացնում. բայց երբ տե-  
սութիւնը վերջանում է, ընդհատված նախադասութիւնը անմիջա-  
պես ամենայն կանոնավորութեամբ շարունակվում է մինչև մի նոր  
տեսութիւն: Եվ՝ որպեսզի մեր ասածը լոկ շփազանցութիւն չլի-  
նի, բերենք գրքի սկզբից մի կտոր՝ երկուսի համեմատութեամբ՝  
նույն նմանութիւնը ավելի պարզ ցույց տալու համար.

Եւ տեսանէ

ոչ ի քուն երազ եւ ոչ յարթնու-  
թեան տեսիլ, այլ ի արտին գոր-  
ծարանի երեսութեացեալ հոգոյն  
աշաց թաթ ձեռին աշոյ՝ գրե-  
լով...

## Խոր. ԿԸ (Ողբը)

... զի բարձա թագաւոր եւ  
քահանայ, խորհրդական եւ ու-  
սուցող, վրդովեցաւ խաղաղու-  
թիւն, արժատացաւ անկարգու-  
թիւն, զրդուեցաւ ուղղափառու-  
թիւն, կայկայեցաւ տգիտութե-  
ամբ շարափառութիւն:



Յետ ամաց հնգից վախճանի հայրապետն մեծ Ասպուրակէս. եւ յաջորդէ զվաթոռ պատրիարքութեանն սուրբն Սահակ որդի մեծին Ներսեսի, եւ վասն զի ստուգապէս սա գոլով ծնունդ առաքինութեան, յիրաւի ապա զհետ նորա ընթանայր սուրբ եւ արդար վաստակոց հանդէսք. որ յաշխարհի գոլով, եւ իբրև զանապատատրս ամենայն հեզանաց հանդիսին ընդ կարգս աշխարհիս անցանէր, մշտնջենամուռնչ աղօթիւք հանդերձ իւրօքն աշակերտելօք կատարեալ զպաշտօն բարեկարգութեանն, պինդ ունենալով զղեակս եկեղեցւոյ, կարգատրելով միշտ պայծառապէս, ըստ օրինի դասհմանադրութիւնս ըստ կանոնական հրամանի:

Յետ այսորիկ ապա վախճանեալ հայրապետն մեծ Ասպուրակէս, որ կալաւ զվաթոռ հայրապետութեանն զամս հինգ, ի տեղի նորա յաջորդէ արքայ խոսրով զՍահակ, որդի մեծին Ներսեսի: Եւ վասն զի սա ստուգապէս գոլով ծնունդ առաքինութեան, յիրաւի ապա զհետ սորա ընթանայր սուրբ եւ արդար վաստակոց հանդէսք, որ յաշխարհի գոլով եւ իբրև զանապատատրս ամենայն հեզանաց հանդիսիւ ընդ կարգս աշխարհիս անցանէր մշտնջենամուռնչ աղօթիւք հանդերձ իւրովք աշակերտօքն կտրեալ ըզպաշտօն բարեկարգութեանն:

Այստեղ առաջինը խոսում է մի երեսից ավելի, բայց երեսը վերջանալով երկու հեղինակները դարձյալ միանում են իրար հետեյալ ձևով.

Եւ յայսմ վայրի լինէր հարկ վասն խնդրոյ իրիք զնալ սրբոյն Սահակայ առ Արտաշիր Պարսից արքայ. եւ մեծարի առ ի նմանէն յաւէտ վեհագոյն պատուով. վասն զի յարգոյ եւ պատուական ցուցանէ Աստուած զծառայս իւր առաջի անհաւատից. եւ ապա աշալուրջ երեսօք զբոլորն նորա կատարէր զհայցուածս:

Իսկ Արտաշիր որդի Շապհոյ Պարսից արքային կալեալ զխոսրով արքայ Հայոց, եւ եղեալ յԱնուշն բերդի, եւ փոխանակ նորա թագավորեցուցանէ զՎուամշապուհ եղբայր նորա: Բայց մեծին Սահակայ երթեալ առ Արտաշիր Պարսից արքայ, մեծարի առ ի նմանէ յաւէտ պատուով: Վասն զի արգոյ եւ պատուական ցուցանէ Աստուած զծառայս իւր առաջի անհաւատից, եւ ապա աշալուրջ երեսօք զբոլոր նորա կատարէ զհայցուածս:

Այլ նա ասէ. ինձ քաւ լիցի մատնել զայլոց զիմ մոլորեալ ոչխար, եւ ոչ պատել զբեկեալն կամ զհիւանդացեալն, տալ գահավէժ առնել: Զի թէ էր հաւատացեալ թագաւորի առաջի, փութայի եւ ոչ յապաղէի, յուսալով զկանգնումն զլորելոյն. այլ հեթանոսաց՝ յառաւել կործանումն ո՛չ առնում յանձն, ըստ այնմ՝ թէ մի՞ մատնեի զազանաց զանձն խոստովանող քեզ: Քանզի դրոշմեալ է աւազանան, թէպէտ եւ անառակ է, պոռնիկ է, այլ քրիստոնեայ է, զինացեալ է մարմնով, այլ ոչ անհաւատ հոգով. զեղիս է վարուք, այլ ոչ կրակապաշտ, տկար է ի կանայս, այլ ոչ ծառայց տարերց: Եւ զիա՞րդ լինիցի այդ. փոխանակել զիմ ատաղեալ ոչխար ընդ առողջ գազանի, որոյ առողջութիւնն է մեզ պատուհաս:

Քաւ, ասէ, լիցի ինձ զայլոյ զիմն մատենե(ա)լ մոլորեալ ոչխար.

զի թէ

անառակ է, սակայն սուրբ մկրտութեամբն դրոշմեալ է, պոռնիկ է, այլ քրիստոնեայ է, զինացեալ մարմնով՝ այլ ոչ անհաւատ հոգով. զեղիս վարուք՝ այլ ոչ կրակապաշտ:

Եւ այսպէս

զախտացեալ իւր ոչխարն ոչ փոխանակէր ընդ առողջ գազանին:

Քաւ, ասէ, լիցի ինձ զայլոյ զիմն մատենեալ մոլորեալ ոչխար.

զի թէ

անառակ է, սակայն սուրբ մկրտութեամբն դրոշմեալ է, պոռնիկ է, այլ քրիստոնեայ է, զինացեալ մարմնով, այլ ոչ անհաւատ հոգով, զեղիս է վարուք՝ այլ ոչ կրակապաշտ:

Եւ այսպէս

զախտացեալ իւր ոչխարն ոչ փոխանակէր ընդ առողջ գազանին:

Սխալ չի լինի ասել, թե այս անանուն պատմությունը ուրիշ բան չէ, եթե ոչ Հովհաննես կաթողիկոսի ԺԴ գլուխը՝ լայնացրած և ընդարձակված: Այսպիսի ակնհայտնի երևույթի առաջ հարց է ծագում, թե ո՞վ է արդյոք փոխ առնողը, Հովհաննես՞ սը թե Անանունը: Տարօրինակ պիտի լիներ ընդունել, թե վարքի անանուն հեղինակը թողնելով ազգի մեջ շատ ավելի հայտնի և անուն ունեցող հեղինակներին (ինչպես Կորյունը, մանավանդ Խորենացին, որին ճանաչում է), գնա և դիմի այնպիսի մի մատենագրի, որ ընդամենը երկու երեք երես բան է խոսում Սահակի և Մեսրոպի վրա՝ անցողաբար: Բայց ընդհակառակը, զարմանալի բան չի լինի, եթե, ասենք թե, Հովհաննես կաթողիկոսը ձեռքի տակ ունենալով այս աշխատությունը, համառոտած և նրա վրայից կազմած է իր ԺԴ գլուխը: Այն առարկությունը, որ արինք նախորդ պարագային, կարող է լինել նաև այս պարագայում. թե արդյոք ինչո՞ւ Հովհաննես կաթողիկոսը մոռանալով Խորենացուն, դիմել է այսպիսի մի աղբյուրի: Բայց սրա պատասխանը ա՛յն պիտի լինի, որ գրվածքը լինելով ամփոփ և կանոնավոր մի կենսագրություն Սահակի և Մեսրոպի, մինչդեռ Խորենացին ավելի ընդարձակ և քաղաքական այլևայլ դեպքերով միշտ ընդհատված, բնականաբար առաջինը ավելի հարմար պիտի դատվեր այնպիսի համառոտախոս մի հեղինակի համար, ինչպիսին է Հովհան կաթողիկոսը:

Այսպիսով կարող ենք իբրև հաստատ ընդունել, թե հիշյալ ԺԴ գլխում Հովհաննես կաթողիկոսի աղբյուրը Անանունն է, և բոլոր այն նմանությունները, որ Հովհանն ունի Խորենացու հետ այս գլուխում, առնված են ո՛չ թե Խորենացուց, այլ անանուն վարքագրից: Ահավասիկ մի փոքրիկ համեմատություն երեքի միջև (տե՛ս էջ 46):

Այս տեսությունը՝ պետք է որ Անանունի վարքը գրված լինի մոտավորապես 850 թվականից ավելի առաջ. այս թվականին է հարմարվում նաև Անանունի քաղմակրկնող լեզուն, նման Նարեկացու և ուրիշների գրության, որոնց մեջ տեսնվում է արաբական ոճի ազդեցությունը: Այսպես է դրվատում Անանունը (էջ 24) մեր թարգմանիչներին. «Այսպիսի՞» թերևս բարբառէին երանելի առաջնորդքն մեր. այսպիսի՞ ձայնս արձակէին վաճառականքն ամենառատք. այսպիսի՞ թելադիր լինէին քարոզքն ճշմարտութեան, մշակքն հոգևորք, գործօնեայք գեղեցիկք, բեռնաբերքն շահաւէտք, հարսնածուքն հրանելիք, փեսաւէրքն փառաւորք, առթողքն արիական, կուսատածքն պատուականք, ևն ևն, ընդամենը 39 վերադիրք». և հետո բազմաթիվ հակադրություններ, փոխաբերություններ և այլն:

Սահակը և Մեսրոպը թղթակցութիւն են ունեցել հույն Պրոկզ եպիսկոպոսի և Մելիտինեի Ակակ եպիսկոպոսի հետ: Այդ թղթերը թղթով հինգն են. 1) Պրոկզ եպիսկոպոսի թուղթը Սահակին ու Մեսրոպին. 2) Սահակի և Մեսրոպի պատասխանը Պրոկզին. 3) Մելիտինեի Ակակ եպիսկոպոսի թուղթը Սահակին. 4) Սահակի պատասխանը Ակակին. 5) Ակակի նամակը «ի Հայաստան»: Այս թղթերը տպւած են նախ Սոփերքի երկրորդ հատորում, և հետո՝ ավելի լավ «Գիրք Թղթոցում» (էջ 1—21):

Այս թղթերի մասին ընդարձակ խոսում եմ Մեսրոպի կենսագրութիւն մէջ, գլուխ ԺԲ, ուստի այնտեղ եմ հղում ընթերցողին՝ լրակատար տեղեկութիւն համար:

8. ԵԶՆԻԿ ԵՐԵՅ

Է դարի փոքր հեղինակներից է. ներկա եղավ Հոփսիմյանց մասունքների բացման հանդեսին, որի պատմութիւնը գրեց համառոտ կերպով: Այս աշխատութիւն վերնագիրն է. «Նշանագիր կարգաց բանից Եղնկանն երիցու», որ հրատարակւած է Սամուէլ Անեցու պատմութիւն հավելւածում (էջ 266—8, ընդամենը երկու էջ): Այս գրվածքի մէջ Սահակի և Մեսրոպի մասին կա աննշան մի հատված (23 տող).— Ընտրվում է Սահակ կաթողիկոս. «Ան սովա եւ դպրութիւնը Հայոց յաջորդեալ և կտակարանք եկեղեցւոյ ի սմանէ յառաջ թարգմանեցան և կարգք գործոցն Գրիգորի նորոգեալ արամբ միով երանելեալ Տարծնացւոյ, որում անուն Մեսրովպ ճանաչէր: Որ էառ զձեռնադրութիւն երիցութեան ի նմին Սահակայ կաթողիկոսէ: Սա եզրտ նշանագիր դպրութեան հայերէն լեզուին վարելոյ ալիքսբետացն հանգամանս»,— նրանց աշակերտներն են Ղևոնդ, Արձան, Կորին, Եզնիկ և այլն:

9. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՔՈՂԻԿՈՍ

(տպ. Երուսղէմ, 1867)

Թեև նշանակված է իրրև Ք դարի հեղինակ, բայց իր մահը տեղի է ունեցած 925 թվականին. իր թողած պատմութիւնը հասնում է մինչև 923—4 թվականը: Հին ժամանակի դեպքերի վրա խոսում է շատ համառոտ կերպով. ուստի րնական է, որ շատ բան շապասենք իրանից Մեսրոպի և գրերի գյուտի մասին: Մեսրոպի վրա Հովհան. (գլուխ ԺԶ, էջ 69) այսպես է սկսում. «Բայց յիտ

մահուան Արշակայ՝ Մեսրոպք, որ ի Հացեկաց Տարօնոյ, եւ աշակերտեալ մեծին Ներսէսի, եւ էր քարտուղար ի դրան արքունի, ընկեցեալ ի բաց զպատիւ մարդկային՝ զհետ զնայր երկնաւորին, զվարս միայնակեցութեան ստացեալ. բայց զառաջադիմութիւն վարուց նորա եւ զսքանչելիան զոր նովա Աստուած ցուցանէր՝ բաւական ցուցցի քեզ յայնցանէ որ նախ քան զմեզ պատմեցին»:

Սակայն, ինչպես վերը ցուց տվի, Յովհան ամենևին նկատողութեան չէ առած այդ պատմագիրները և միայն հետևած է Սահակի անանուն վարքագրին, որի համառոտությունն է ներկայացնում իր ԺԴ գլուխը՝ «Յաղագս հայրապետութեան մեծին Սահակայ, և տարածման գրոց դպրութեան յազգս մեր, և բարձման թագաւորութեան մերոյ» (էջ 70—76): Այս գլխից դուրս ուրիշ տեղեկություն չկա:

#### 10. Թ Ո Վ Մ Ա Ա Ր Մ Ր Ո Ւ Ն Ի

(տպ. Պետրբուրգ, 1887)

Կարելի է ասել, թե մեր պատմագիրները մեջ ամենից կողմնապահը Թովմա Արծրունին է. նա պատմական դեպքերը պատմում է այն չափով միայն, որ չափով որ հարաբերություն ունին Արծրունյաց ցեղի հետ: Եվ որովհետև գրերի գյուտի մեջ Արծրունիները մասնակցություն չեն ունեցած, ուստի իսպառ լռում է այս մասին: Սահակի կաթողիկոսութեան վրա խոսում է գլուխ ԺԱ (էջ 69—75), բայց շատ անցողակի է հիշում Մեսրոպին: Ահավաստի ինչ որ գիտե այս մեծ անձի մասին:

էջ 72.— Եւ թագաւորեալ Վոսմ որդի Յազկերտի՝ կոչէ ի դունս զսուրբն Սահակ Հայոց կաթողիկոս: Որոյ առեալ զթոռունս իւր զՀմայեակ եւ Համազասպեան զնան առ արքայ ի Տսպոն: Քանզի Վարդան անցեալ զնացեալ էր սուրբ վարդապետան Մաշտոցիւ առ կայսր Թէոդորոս և առ Աստիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. զոր ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յովհաննու Ոսկերբեանի և քաջաց և գլխաւոր վարդապետացն. իսկ զՎարդան կարգէ ստրատելատ Հայոց:

էջ 73.— (Նախարարները շարախոսում են Վոսմին Սահակի մասին, այլևայլ փաստեր մեջ բերելով). նա և հաւատարմութիւն իրեանց առեալ զթուղթսն սրբոյն Սահակայ առ կայսրն և առ հայրապետն. և զերթալն Մեսրոպայ և Վարդանայ ի Յոյնս առաջի

արկանէին, և զգնալն Անատոլեայ և զշինել քաղաքին ի Կարին գա-  
ւառ:

էջ 74.— (Աղան Արծրունի կրօնատր դարձալ) և երթեալ ընա-  
կէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղոջ վարդապետութեան  
սրբոյն Մեսրոպայ, ճգնասէր հրեշտակակրօն վարուք, երանելի  
մարդկան և ահարկու դիւաց:

էջ 75.— Ի նմին ամի, յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի և  
սուրբ հայրապետն Մաշտոց, և խաշանշան լուսով խաղացուցանեն  
բազմութեամբ նախարարացն Հայոց ի ձեռն վահանայ Ամատուն-  
ւոյ, որ էր ի ժամանակին սպարապետ Հայոց. և տարեալ հանգու-  
ցանեն զնա ի յՅշական զեօղ, ի գաւառին որ կոչի Ոտն Արագածոյ:

## 11. Մ Ե Ս Ր Ա Վ Պ Ե Ր Ե Ց

(տպ. Վենետիկ, 1853)

Հեղինակիս աշխատութիւնը կոչւում է «Պատմութիւն Սրբոյն  
Ներսիսի Պարթևի Հայոց Հայրապետի»։ Հեղինակի իսկ վկայութեամբ  
(տե՛ս էջ 138) գրված է Հայոց ՆԺՁ (=967) թվականին, բայց ո՛չ  
թե ինքնագիր աշխատութիւն է, այլ «ծաղկաքաղ արարի զգիրքս  
գայս ի Հայոց մնացորդաց յԱրևելից գրոց»։ Բացի Արևելից գրո-  
քից, որ կորած է, մեծ օգնութիւն է տվել հեղինակին նաև Փավրս-  
տոսը, որի ամբողջ գրվածքը ամփոփում է իր աշխատութեան մեջ:

Գրվածքիս մեջ Մեսրոպի աշակերտական շրջանի վրա կա մի  
փոքրիկ տեղեկութիւն (էջ 83), որի վրա հրատարակիչները տվել  
են մի ընդարձակ ծանոթութիւն (էջ 137): Մի փոքր տեղեկութիւն  
էլ կա էջ 110-ում, ուր Մեսրոպը ներկա է համարվում Ներսեսի  
մահվան: Թե՛ այս ծանոթութեան և թե՛ Զարրհանայանի մեջ (էջ  
543—4) շոշափված խնդիրները մոտիկից վերարկերիւով Մեսրոպին,  
ընդարձակորեն պիտի խոսինք Մեսրոպի կենսագրութեան մեջ:

## 12. Ս Տ Ե Փ Ա Ն Ն Ո Ս Ա Ս Ո Ղ Ի Կ

(տպ. Պետերբուրգ, 1885)

Ստեփաննոս Ասողիկ՝ պատմիչ Ժ դարի, իր Պատմութեան մեջ  
թեև անցողակի է խոսում գրերի գյուտի վրա, բայց տալիս է մեզ  
մի քանի կարևոր տեղեկութիւններ, որոնց վավերականութեան վրա  
խոսելու ենք իր տեղում: Իր գլխավոր աղբյուրներն են Կորյուն և  
Ղազար, բայց անշուշտ նաև Խորենացին, թեև սրա անունը չի հի-  
շում գրերի գյուտի պատմութեան ժամանակ:

Ասողիկի տված բոլոր տեղեկութիւնները գտնվում են երկրորդ  
դպրութեան մեջ. ամենից գլխավորն է գլուխ Ա (էջ 74—77), մի

քանի ուրիշ տեղեկութիւններ են պարունակում գրուիս Բ (էջ 78),  
գլ. 2 (էջ 139), գլ. Ը (էջ 182) և վերջապես գլ. ԻԱ (էջ 205):

### 13. ՅՈՎՀԱՆՆԷՒՍ ՍԱՐԿԱՎԱԳ

Կիրակոս Գանձակեցիին իր Պատմութեան մեջ (էջ 64) սույն հեղինակի համար ավանդում է, թե «Սա գրեաց ճառս ներբողականս ի մեծազօր արքայն Հայոց Տրդատ, և ի սուրբ հայրապետն Ներսէս և ի սքանչելին Սահակ և Մեսրոպ»: Դժբախտաբար այս խիստ փափագելի աշխատութիւնը առ այժմ կորած է:

### 14. ԱՆԱՆՈՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ՆԵՐՍԷՍԻ

(տպ. Վենետիկ, 1853)

Այս աշխատութեան ընդարձակ խորագիրն է «Յաղագս հայրապետութեան սրբոյն Ներսիսի և հաստատելոյ զաթոռ պատրիարքութեան որպէս այլոց պատրիարքաց». բռնում է Սոփիերքի է հատորի 5—30 էջերը: Գրվածքը, ինչպես երևում է (էջ 30), Ներսեսի տոնի առթիվ խոսված մի ճառ է, որի ո՛չ հեղինակն է հայտնի և ո՛չ գրութեան թվականը: Անշուշտ հետին գործ է, որովհետև օգտված է Խորենացուց և Հովհաննես կաթողիկոսից: էջ 26, ակնարկելով Ներսեսի գուշակութիւնները, ասում է, թե «Սա ևս բազում բանս խօսեցեալ առ ի յօգուտ լսողաց վասն ազգին Նետողաց, և վասն որդւոյն կորստեան և վասն միւսանգամ զալստեանն, որ կայ ի կատարեալ պատմութեանն իւրում»: Թե՛ այստեղ և թե՛ վերը (էջ 24), Նետողաց ազգի հիշատակութիւնը բավական է ցույց տալու համար, թե աշխատութիւնը 1021 թվականից հետո է գրված, որին համաձայնվում է նաև Մեսրոպ երեցի թվականը (967), եթե՛ս չկատարեալ պատմութիւն» բառերով հասկանանք Մեսրոպ երեցի պատմութիւնը: էջ 27 ասում է, թե Ներսեսի գերեզմանը անհետացած է. «Եւ անյայտացաւ գերեզմանն ի բազում ամաց անցելոց ի վերայ. թերևս զգուշացեալ ի դառողաց և կացեալ մնացեալ ի պահեստի մինչև ի դէպ ժամանակի յայտնելոյ ի հրամանէ Աստուծոյ կարգելոյ»: Սրանից հետևում է, թե զգուշացի ժամանակը պետք է դնել 1275 թվից առաջ, որովհետև այս թվին եղավ Ներսեսի նշխարների հայտնութիւնը, ըստ «Պատմութիւն յայտնութեան նշխարաց սրբոյն Ներսիսի», Սոփիերք, հտ. է, էջ 44: Ըստ այսմ աշխատութեան ժամանակը ԺԱ—ԺԳ դարերի միջև է ընկնում:

Մեսրոպի վրա այս աշխատութեան մեջ խոսվում է էջ 28-ում, փոքրիկ մի հատվածով, բայց առանձին նորութիւն չի պարունակում:

15. ԵՆՐՍԵՍ ՇԵՌՂԱԼԻ

Վերադարձում  
(տպ. Վենետիկ, 1820)

Շնորհալու աշակերտական ժամանակի գործերից է Վիպասանուրիւն անունով գրվածքը, որը ոտանավոր Հայոց պատմութիւն է՝ շատ համառոտ: Գրվածքիս մեջ 897-րդ տողից սկսում է խոսվել Մեսրոպի և գրերի գյուտի վրա. և այսպիսի մի աշխատութիւնից պահանջված փոքրիկ սահմանից էլ շատ այն կողմ անցնելով՝ գրելում է մինչև 954-րդ տողը: Այնուհետև պատմվում է Արատշիրի թագավորութիւնը, Արշակունյաց կործանումը և Սահակի մահը: Զարմանալի է, որ հեղինակը Մեսրոպին և գրերի գյուտը Արշակի և Վաղարշակի թագավորութիւն ժամանակն է դնում: Նույնպես նախապատիվ տեղը տալիս է Մեսրոպին և սրա պատմութիւնը վերջացնելուց հետո միայն անցնում է Սահակին: Վենետիկի տպագրութիւն մեջ մեզ հետաքրքրող մասը բռնում է 533—5 էջերը:

16. ԵՆՈՐՀԱԼՈՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՑԷՔԻ

Շնորհալու հիշյալ աշխատութիւնը դեռ տպագրված չէ: Մենք գործածեցինք էջմիածնի (այժմ Երևանի) ձեռագրատան Կարինյան N 1466 ձեռագիրը: Այս աշխատութիւն ատաղաբանի սկիզբը կա երկու էջ տեղեկութիւն թարգմանիչների մասին, բայց ամբողջովին խորհնացու հետեղութիւն լինելով նոր բան չի պարունակում:

17. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ

(տպ. Վաղարշապատ, 1893)

Սույն հեղինակի ժամանակագրութիւն մեջ (էջ 68) կան մի քանի համառոտ տեղեկութիւններ, որոնք իբր թե որոշում են ինչ-ինչ թվականներ. այս տողերն ամբողջովին մեջ են բերված Մեսրոպի կենսագրութիւն ժԶ գլխում, ուստի ավելորդ ենք համարում ավելի երկար խոսել այս մասին:

18. ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ՍԱՍՆԱՅԻ

(տպ. Վաղարշապատ, 1897)

Կարապետ եպս. Սասնացի մեր մատենագրութիւն մեջ շատ հայտնի անձնավորութիւնն է. Զարբանալյանը (էջ 758) հիշում է նրան «Մանր մատենագիրը» յավելվածի մեջ. իր միակ աշխատութիւնն է «Ներբողեան պատմագրաբար ասացեալ սրբազան եպիս-



կոպոսի եւ վարդապետի՝ Տէր Կարապետի Սասնացոյ, ի խնդրոյ հոմազնեայ եղբօր ճգնաւորի՝ յաղագս վարուց և մահուան սուրբ և երջանիկ վարդապետին Մեսրոպայ թարգմանչի և լուսաւորչի: Այս աշխատութիւնը հասել է մեզ էջմիածնի մատենադարանի № 1366 (= Կարինյան 1330) ձեռագրով, որից հրատարակեց Մեսրոպ վրդ. Տէր Մովսեսյան, կարճ առաջաբանով և ծանոթութիւններով (սրա մատենախոսականը տե՛ս Հանդ. ամս. 1898, էջ 153):

Ըստ առաջաբանի (էջ 9) հեղինակի պարած ժամանակը և ճառի գրութիւնը թվականը հայտնի չէ. բայց անրա լեզուն մեզ միջոց է տալիս կանգ առնելու ԺԲ—ԺԳ-րդ դարերի վրա. ավելի հին դրժվար թէ գրված լինի, իսկ վերջի սահմանը ձեռագրի գրչութիւնը թրվականն է՝ 1265—1272:

#### 10. Վ Ա Ր Դ Ա Ն Պ Ա Տ Մ Ի Չ

(տպ. Վենետիկ, 1862)

ԺԳ դարի պատմիչ է Վարդանը. իր Պատմութիւնը արդեն գրած վերջացրած էր 1265 թվականին, ըստ Զարհանալլայանի (էջ 719): Ինքը թեև համառոտաբան, բայց բավական տեղ է տալիս գրերի գլուտի պատմութիւն, որի մասին դնում է՝ նաև մի քանի նոր տեղեկութիւն. սրանց արժեքի վրա պիտի խոսինք՝ Հայոց գրերը, գլուխ Դ և Զ: Մեզ հետաքրքրող մասը բռնում է ԻԾ, ԻԶ, ԻԷ գլուխները (էջ 49—54):

#### 20. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Գ Ա Ն Ձ Ա Կ Յ Յ Ի

(տպ. Վենետիկ, 1865)

Ըստ առաջաբանի (էջ Բ), որ հրատարակիչները դրել են Կիրակոսի պատմութիւն սկիզբը, պատմիչս ծնված է 1200 թվին (մոտավորապես) և վախճանած 1272-ին: Իր պատմութիւնը հասցրնում է մինչև 1265 թվականը. առատ տեղեկութիւններ է տալիս Հայոց, Թաթարաց և Աղվանից մասին: Գրերի գլուտի և Ն դարի գրական շարժման վրա տալիս է շատ այլ ընդ այլո տեղեկութիւններ, գլխավորապես՝ էջ 14—20. բայց վերջն էլ (էջ 97, 98, 134) երեք տեղ առիթ է ունենում հիշելու Մեսրոպին, իսկ էջ 45-ում խոսում է Մաշթոց կաթողիկոսի և նրա Մաշտոց գրքի վրա:

#### 21. Ս Տ Ե Փ Ա Ն Ն Ո Ս Օ Ր Ր Ե Լ Ե Ա Ն

(տպ. Մոսկվա, 1861)

ԺԳ դարի հեղինակ է. իր Սիւնեաց Պատմութիւնը գրելու համար գործածել է բացի հին պատմագիրներից նաև բազմաթիվ պաշ-

տոնական թղթեր, որ գտնւի է Սյունյաց վանքերում: Իր գործածած պատմագիրներէ մեջ հատկապէս հիշելու արժանի է Պետրոս եպիսկոպոս Սյունյաց, աշակերտ Մովսէս Քերթողաճոր, որի Պատմությունը կորած է: Գրերի գլուխի, Մեսրոպի քարոզութեան և Աղվանից լուսավորութեան վրա խոսում է զլ. ԺՊ (էջ 37—39): Վասն զալոյ սուրբ վարդապետին Մեսրոպայ ի Սինիս և ի Գողթն և շրջելոյ ընդ գաւառն և զղօղեալ կոապաշտութիւնն ի տեղիս սրբել օգնութեամբ Վաղինակայ իշխանին և Շարիթայի.— զլուս ԺԾ. վասն նորոգ հայսկոպոսութեան Սինեաց տեառն Անանիայի, և երթն յԱղուանս, և պատուիլ ի թագաւորէ նոցունց: Այս վերջին զլիով տըրուած ինչ ինչ տեղեկությունները, որոնք այլուստ անծանօթ են, քաղած է Պետրոս Սյունյաց հայսկոպոսի Պատմությունից:

## 22. Մ Ե Ի Թ Ա Ր Ա Յ Ր Ի Վ Ա Ն Ե Տ Ի

(տպ. Մոսկվա, 1860)

Այս պատմագրի Ժամանակագրութեան մեջ (էջ 47) Մեսրոպի մասին կա միայն հետևյալ երկտողը. «Ամք տեառն 423, սկիզբն դպրութեանց հայ գրոցս ի ձեռն սրբոյն Սահակայ և Մեսրոպայ, որք վաթսուն աշակերտօք աշխատեալք թարգմանեցին զամենայն հին և նոր կտակարանս: Կատարեցան աշակերտքն Մաշտոցի յԱստղարլուրն»:

## 23. Ս Ի Մ Է Ո Ն Ա Պ Ա Ր Ա Ն Տ Ի

(տպ. Վաղարշապատ, 1870)

ԺԶ դարում Սիմէոն վրդ. Ապարանցին Փարպեցու Պատմությունը ոտանավորի վերածելով՝ անունը դրավ «Վիպասանութիւն սակա Պահլավունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի»: Այս Վիպասանութեան մեջ երեք տուն էլ նվիրված է Մեսրոպի հիշատակին՝ հետևյալ ձևով.— (էջ 35):

1. Այլ երկնատր Հայրըն հաճեալ,  
Զիմանալին մեղ թագ կազմեալ,  
Զգիրն ի վերուստ սրբոյն շնորհեալ,  
Որով Մեսրօպ մըխիթարեալ:
2. Հանուրց հիւսիս պայծառ ծաղկեալ,  
Երից սեռից լուսաւորեալ,  
Թէոդոսի փոքուն լուեալ,  
Բարեպաշտին ուրախացեալ:

3. Ուսանելոյ հրաման հանեալ,  
Սուրբըն Մեսրոպ յոյժ մեծարեալ,  
Եւ զԱնատօլ ուղեւորեալ,  
Ըղ թըւուլու քաղաք շինեալ:

Հաջորդ գլուխները պատմում են Թեոդուպոլիս քաղաքի մասին, որի շինութեան գործակալն է Մովսես Քերթոզ.— Մովսես և Դավիթ գնում են Հունաստան, վեճ Հունների հետ, հաղթությունը և այլն:

Այս տեղեկութիւնները մեջ բերինք ամբողջութեան համար:

24. Ա Ռ Ա Ք Ե Լ Դ Ա Վ Ր Ի Ժ Ե Յ Ի  
(տպ. Վաղարշապատ, 1884)

Այս պատմագիրը իր ժամանակակից գրեթէ ամեն խնդրի վրա խոսում է բավական մանրամասնութեամբ. Փիլիպոս կաթողիկոսի զանազան շինութեանց և նորոգութեանց վրա խոսելու ժամանակ (էջ 270—271), պատմում է նաև Օշականի տաճարի և Մեսրոպի գերեզմանի վերանորոգութեան մասին: Մյուս պատմագիրներից Սիմեոն կաթողիկոս (Զամբո, Վաղարշապատ, 1873) և Զաքարիա Սարկավազ (Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870) թեև խոսում են Փիլիպոս կաթողիկոսի ուրիշ շինութիւնների վրա, բայց այս նորոգութեան մասին լուռ են:

25. Յ Ա Յ Ս Մ Ա Ի Ո Ւ Ր Ք

Յայւմաւորքի մեջ Սահակի և Մեսրոպի մասին խոսված է չորս անգամ՝ բավական ընդարձակ կերպով. 1. Նաասարդ Է եւ սեպտեմբեր Թ, յիշատակ վարուց եւ մահուան սուրբ հայրապետին մերոյ Սահակայ Պարթևին: 2. Հոռի Ը և սեպտեմբեր ԺԷ. յիշատակ սրբոց թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ և աշակերտաց նոցա.— 3. Տրէ ԺԷ և նոյեմբեր ԻԾ. Գիւտ գրոյն Հայոց ի Բալու.— 4. Մեհհեկի ԺԳ և փետրուար ԺԹ. վարք և յիշատակ սուրբ հօրն մերոյ Մեսրոպ վարդապետին: Այս չորսից դուրս «Սահմի Դ և հոկտեմբեր ԺԳ, Վարք և յիշատակ սուրբ հայրապետին մերոյ Մաշտոց վարդապետին» գլխով խոսում է Մաշտոց կաթողիկոսի և նրա Մաշտոց գրքի վրա, և տալիս է մեզ շատ պիտանի տեղեկութիւններ:

26. Շ Ա Ր Ա Կ Ա Ն

Իբրև վերջին աղբյուր Մեսրոպի համար կարող ենք հիշել Շարահանի, Գանձարանի և Տաղարանի մեջ գտնված այլևայլ երգերը,

տաղերը, կամ բանաստեղծական ուրիշ գրութիւններ, որոնք միայն փառաբանութիւններ և գովասանական ճառեր պարունակելով, պատմական նոր տեղեկութիւն չեն տալիս:

27. ԱՅԼԵՎԱՅԻՔ

Այս բաժնի տակ զետեղում ենք վերջապէս զանազան մանր գրութիւններ, որոնք Մենարոպի կենսագրութեան և Հայոց գրերի մեջ հիշված են տեղ-տեղ. բայց այստեղ նրանց յուրաքանչյուրի վրա առանձին խոսել ավելորդ ենք համարում: Այս գրութիւններն են՝

1. Ոսկեփորիկից մի հատված, որ հանել ենք էջմիածնի ձեռագրատան Գևորգյան Ն 263 ձեռագրից (տե՛ս էջ 255), որի հետ ճըշտիվ նույն է Կարինյան Ն 1723 ձեռագիրը, էջ 275:

2. Պատմութիւն տեսչեան ս. Սահակայ, հանված նույն ձեռագրատան Կարինյան Ն 1757 ձեռագրից (տե՛ս էջ 28թ). պարունակում է փոքրիկ մի տեղեկութիւն Մաշտոցի տեղապահութեան մասին:

3. Վարդանագիրք, որ հիշատակում են Լ. Բ. Սարգիսյան և Ս. Վ. Պարոնյան, առաջինը «Ճառագարձութեան խնդրին վրա» հոդվածի մեջ (Բազմ. 1889, էջ 29), և երկրորդը՝ «Երկրագունտ», (1885, էջ 106 ծանոթ.): Վարդանագիրքը հասած է մեզ Վենետիկի Ն 729 ձեռագրով:

4. Ժամանակագրութիւն Աւետիգայ, գրեալ ՌՄԼէ Թվին, պահված միայն էջմիածնի Կարինյան Ն 1741 ձեռագրով:

5. Վարք Անտոնի միայնակեցի, որի հիշատակարանը տալիս է Մենարոպի մահվան Թվականը, ըստ Նորայրի (Կորիւն վրդ. էջ 28) և Լ. Գ. Զարբհանալյանի (Մտնդր. 286):

6. Գիրք Թղթոց (էջ 320), Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի սակս ժողովոց, որ եղևն ի Հայք. ի մէջ այլոց խոսում է Աշտիշատի ժողովի վրա շատ համառոտ կերպով:

7. Վանական վարդապետի ասացեալ բան հաւատալի ազգիս մերում (Գիրք Թղթոց, էջ 533). ունի մի փոքր տեղեկութիւն Մենարոպի մասին. «Եւ ընդ նոսա զի՞ զարմանաս... Վիրք այլ նախատեն զմեզ և ուրանան. Մենարոպ ետ նոցա զիր և զՎարժիոյ խաչն Մենարոպ է օրհնել, և յաջ Թևին կայ հայ զիր և զայն ոսկով ծածկեալ են Թէ Թո՛ղ շերկի»:

## Ն Ո Ր Ա Ղ Բ Յ Ո Ւ Ր Ն Ե Ր

Նոր աղբյուրներ ենք կոչում բոլոր այն աշխատությունները (հայ կամ օտար), որոնք գրված են ժԸ դարից այս կողմ, մանավանդ նորագույն ժամանակներում և որոնց իբր հիմք են ծառայել հին աղբյուրները:

Նոր աղբյուրներն էլ երկու տեսակ են. պատմական կամ քրննական: Պատմական գրվածքները լոկ նկարագրական բնավորություն ունին, քաղված են հին պատմագիրներից և մեզ համար շունին առանձին կարևորություն: Քրննական գրվածքները հիմնված են բանասերների այլևայլ խուզարկությանց վրա, երևան են հանում այնպիսի խնդիրներ, որոնց մասին հին աղբյուրները ոչինչ կամ գրեթե ոչինչ չեն տալիս, ուստի և մեզ համար շատ մեծ նշանակություն ունին:

Կան գրվածքներ, որոնք միմիայն պատմական են, կան էլ որ միայն քննական են. բայց ավելի շատ են այն աշխատությունները, որոնք թե՛ պատմական և թե՛ քննական մասեր են բովանդակում: Զուտ պատմական գրվածքներ գտնում ենք բոլոր Ազգային պատմությանց, Հայ մատենագրության պատմությանց, Հայ եկեղեցական, ինչպես և Ընդհանուր եկեղեցական պատմությանց, Վարք սրբոցների և կենսագրական հավաքածուների մեջ: Սրանցից դուրս կան նաև մի քանի մենագրական տեսարակներ:

Ավելորդ և աննպատակ է մի առ մի հիշել Ազգային պատմությունները. բավականանանք միայն նշանակելով՝

1. Զամչյանի Հայոց պատմությունը (Վիննտիկ, 1784), որ սրբանց մեջ ամենից ընդարձակն է և ամենից ավելի մանրամասնորեն է խոսում մեր նյութի վրա, հատ. Ա, էջ 483—535. Իսկ էջ 748—777 ժանոթությանց մեջ ունի շատ բան, որ քննական նշանակություն ունի:

2. Տիեզերական պատմություն Զ. Յ. Գաթրճյանի, Վիեննա, 1852. խոսում է նաև հայոց մասին, Մեսրոպի վրա, հատ. Բ, էջ 521—525:

3. Մակար եպ. Բարխուդարյանցի Պատմութիւն Աղվանից, տպ. Վաղարշապատ, 1902, պատմում է միայն Մեսրոպի գործունեությունը Աղվանից երկրում, մասնավորապես էջ 67—73, գրեթե բոլորը համառոտված Կաղանկայտուացուց:

Մատենագրական պատմությանց մեջ լոկ պատմական բնավորություն ունին՝

4. Եղիշե վրդ. Դուրյանի հրատարակած հայ մատենագրության համառոտ պատմությունը. տպ. Պոլիս. իսկ Զարհանայան և Մալխասյան ունին նաև քննական մասեր:

Հայ եկեղեցական պատմություններն են՝

5. Եկեղեցական պատմ. Հայաստանեայց ա. Եկեղեցւոյ. Յօրինեաց Մելքիսեդեկ վրդ. Մուրատեան, Միարան ա. Երուսաղեմի. Երուսաղեմ. ի տպարանի Սրբոց Յակովբեանց, 1872: Սրա մեջ Սահակի և Մեսրոպի եկեղեցական գործունեության վրա խոսվում է էջ 75—101, իսկ սրանց մատենագրական գործունեության վրա՝ էջ 149—154. հատկապես էջ 149—152՝ Սահակի վրա և էջ 152—154՝ Մեսրոպի վրա:

6. Հայաստանեայց առաքելական ա. եկեղեցւոյ պատմ. աշխ. Յուսիկ վրդ. Մովսիսեան, Վղրշպտ., 1884, որի մեջ էջ 49—62 խոսվում է Սահակի և Մեսրոպի վրա:

7. Եկեղեցական պատմ. (կարի համառոտ), աշխատասիրություն Յ. քհ. Օրբելի. Թիֆլիզ (այս աշխատությունը ձեռքի տակ չեմ ունեցել), 1856:

8. Նույնի ընդարձակն է Դասատեր եկեղ. պատմութեան, Յովսէփ ա. քհ. Օրբելի. Թիֆլիս, 1871. Սահակի և Մեսրոպի վրա՝ էջ 73—81, 89—91, 93—95:

9. Մ. Օրմանյան, Ազգապատում, Պոլիս, 1912.— մեր ամենից ընդարձակ ազգային և եկեղեցական պատմությունն է, շրթ հատոր, որ սկսվում է 1 թվից: Սահակի և Մեսրոպի մասին խոսում է ընդարձակ՝ էջ 255—326, իսկ թարգմանիչների մասին՝ 405—410:

10. Ա. Զամինյան, Հայոց եկեղեցու պատմություն, Ա մաս, Բ տպ. Նոր-Նախիջևան, 1914, Սահակի և Մեսրոպի մասին խոսում է էջ 64—69:

Ընդհանուր եկեղեցական պատմություններ են.

11. Պատմութիւն եկեղեցւոյ, Իգնատիոս վ. Փափաղեանց, Վենետիկ, 1848. Թեև ընդհանուր եկեղեցական պատմություն է, բայց խոսում է նաև հայ եկեղեցու պատմության վրա. էջ 225—230 Սահակի և Մեսրոպի գործունեության մասին է:

12. Եկեղեցական պատմութիւն հանդերձ ազգային եկեղեցական պատմութեամբ, բարձրագոյն դպրոցաց և վարժարանաց համար. գրեց հ. Վարդան վրդ. Ըստկարեան, Վիեննա, 1872. այս աշխատությունն էլ ձեռքի տակ չեմ ունեցած:

Սրբոց վարդեր են.

13. Լիակատար Վարբ Սրբոց. պատմութիւն վարուց սրբոց, զորս տօնէ Հայաստանեայց եկեղեցի. 12 հատոր. հ. Մկրտիչ վ.

Աւգերեան, Վենետիկ, 1810—14. (ժանոթություններով կամ առանց ժանոթության, երկու տարբեր տպագրություններ): Սահակի վրա խոսված է հատոր Բ, էջ 131—162, իսկ Մեսրոպի վրա՝ հատոր Ծ, էջ 281—308:

14. Վարք սրբոց համառոտ աշխարհաբար. ժողկաքաղ հասարակ ի Ն. Ղուկաս Ինճիճեան, տպ. Վենետիկ, 1832, 1861 և 1896 թվականներին: Չի խոսում Սահակի և Մեսրոպի մասին:

Կենսագրական հավաքածուներ են.

15. Ընտիր Հայկազունք, վարք և լուսանկար կենդանատիպք Հայկազուն երեւիլի անձանց. աշխ. տպ. Վենետիկ, 1873. սրա երկրորդ տպագրությունը պատրաստեց Հ. Յ. Թորոսյան, 1891, ուր էջ 147—162 խոսվում է Սահակի և էջ 163—174 Մեսրոպի վրա: Նույն հեղինակը պատրաստեց նաև երրորդ տպագրությունը՝ գրված խավորապես լեզվական փոքրիկ փոփոխություններով. այս տպագրության մեջ Մեսրոպի վրա խոսված մասը գրավում է էջ 161—170: Առաջին տպագրությունը Թորոսյանի գործը չէ, այլ բողոքովին տարբեր հեղինակի. հետևաբար և պարունակութունն էլ տարբեր է: Այս տպագրության մեջ Մեսրոպի կենսագրությունը չկա և առաջին անգամ երկրորդ տպագրության մեջ է գրված: Թե՛ երկրորդ և թե՛ երրորդ տպագրություններն ունին նաև Սահակի և Մեսրոպի նկարները:

16. Յուշիկք հայրենեաց հայոց, Հ. Ղ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1869—1870 (երկու հատոր). հատոր Ա, էջ 311—352 խոսում է Սահակի վրա, միասին խառնելով նաև Մեսրոպի կյանքը:

17. Նկարագիր վարուց երեւիլի արանց. ալբուրենի կարգով համառոտ պատմութիւն սրբերի և մի քանի երեւիլի անձերի. աշխարհաբար լեզվով. տղայոց համար. աշխատ. Հ. Մինաս վրդ. Բժշկեան. Վենետիկ, 1950. Մեսրոպի վրա խոսում է էջ 540—1, ամենահամառոտ կերպով:

18. Սրբազան Հայկազունք կամ դէմքեր ազգային սրբազան պատմութեան, Վենետիկ, 1902:

Մասնավոր փոքրիկ մենագրություններ են.

19. Հայոց մեծ վարդապետ ս. Մեսրոպը աշխատասիրեց Արամ Մելեան (հետո Մելեան քահանա), Թիֆլիս, 1883 (արտատպված Երևանի Պսակ թերթից):

20. Մեսրոպ Մաշտոց, կազմեց Ծ. Թոփչեան, Ալեքսանդրապոլ, 1901:

21. 1500 տարի առաջ, Հայոց տառերի գյուտը. գրեց Իսահակ Հարությունյանց. Տիֆլիս, 1904:

Սրանցից դուրս թերթերի, հանդեսների, օրացույցների և զա-

նազան համաքաթունների մեջ տպված կան այլևայլ փոքրիկ հոգ-  
վածներ, որոնք նույնպես պատմական բնավորություն ունին մի-  
այն և գրված են ավելի կրթական նպատակով: Սրանց մի մասը  
հրատարակվեց գրքերի գլուտի 1500-ամյակի առթիվ:

Չենք կարող մի առ մի հիշել այդ փոքրիկ հոգվածները, այլ  
բավականանում ենք միայն նշանակելով նրկու ամփոփ գրություն-  
ներ:

22. Լոյս օրացոյց (համառոտ) 1904 թվականի, խմբագրեց  
Ե. Թոփչեան, էջ 197—202՝ Սահակ և էջ 203—311՝ Մեարոպ. նր-  
կուան էլ նկարով:

23. Լոյս օրացոյց (ընդարձակ), 1904 թվականի. խմբագրեց  
Ե. Թոփչեան, էջ 415—421՝ Հայոց գրերի գլուտի դարադարձը, Ստ.  
Մալխասեանց (ճախորդի նկարներով):

Այս բոլոր աշխատությունները, որ հիշեցինք, առհասարակ  
իրար են կրկնում և իրարից տարբեր բաներ չեն պարունակում.  
ընդհակառակը, պատմաքննական, մանավանդ զուտ քննական աշ-  
խատությունները շատ ավելի բազմակողմանի և պարունակությամբ  
էլ բազմազան են: Սրանց պարունակած այլևայլ խնդիրների ման-  
րամասն բացատրությունն ու քննությունը պահելով Մեարոպի կեն-  
սագրության և Հայոց գրերին, այստեղ տալիս ենք այդ աշխատու-  
թյանց ըստ կարելիության լիակատար ցուցակը:

Ցուցակը ժամանակագրական կարգով է և ոչ հեղինակների  
այրուրենական կարգով:

Հ. Ղ. Ինճիճյան, Հնախօսություն Հայաստանեայց, 3 հատոր,  
Վենետիկ, 1835. Գրերի գիտի մասին խոսում է հատոր Գ, էջ 69—  
87:

Հ. Գ. Զ.— Յաղագս թարգմանութեան աստուածաշունչ տառից  
ի հայ լեզու. Բազմավէպ, 1850, էջ 212—217 և 1851, էջ 230—237:

Ստ. Նաղարյանց.— Հայոց ազգի լուսաւորութեան կամ ս.  
թարգմանիչների դարը. Հիստիսոփայլ, 1860, էջ 128—164 և 236—  
256:

էմին.— Об армянском алфавите. հրատարակված է իրրե  
չորրորդ հավելված՝ Խորհնացու թարգմանության հետ. սույն աշ-  
խատությունը թարգմանված է նաև ֆրանսերեն Evariste Prud-  
homme հայագետի ձեռքով և տպագրված Revue d'Orient-ի մեջ  
(1865), էջ 439—467 «De l'alphabet arménien». Իսկ հայերեն  
թարգմանությունը հրատարակեց Ս. Ստեփանն «Հայկական այրու-  
րեն» վերնագրով՝ «Հայկական աշխարհ» թերթի մեջ (1870 փետրվ.  
էջ 42—46. շարունակությունը չեմ տեսած):



Fr. Müller.— Über den Ursprung der armenischen Schrift, SWAW 1864, XLVI Armeniaca I, էջ 431—9:

Պետրման.— Վասն Հայկական գրոց. Սիօն ամսագիր, Երուսաղէմ, 1869, էջ 85—86 և Journal Asiatique 1867, էջ 200:

Մ. Մինասարյանց.— Կանոնավոր և վայելուչ գրութեան պատմութիւնը ու տեսութիւնը. Ս. Պետերբուրգ, 1872. մեծ մասը գրերի արվեստի կամ վայելչագրութեան պատմութիւնն է. կան նաև Հայոց գրերի գլուտի վրա մասեր:

Մխիթարյանց Արեւ շրջեպս.— Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցոյ. Վաղարշապատ, 1874, էջ 37—56 խոսում է Սահակի և Մեսրոպի գումարած ժողովների մասին:

H. Hübschmann.— Über Aussprache und Umschreibung des Altarmenischen. ZDMG 1876, XXX, էջ 62—64:

V. Gardthausen.— Über den griechischen Ursprung der armenischen Schrift. ZDMG XXX 1876, էջ 74—80:

Ս. Պալասանյան.— Հայոց մտավոր շարժողութիւնը. Փորձ, Բ տարի, գիրք III.

Գր. Խալաթյան.— Ղազար Փարպեցի և գործք նորին. Մուկուա, 1883. հատկապես էջ 66—73 և 177 վերաբերում են տառերի գլուտին:

Ս. Վ. Պարոնյան.— Հայ նշանագիրք. Երկրագոյնտ, 1884—5, էջ 245—252, 291—7, 347—357, 395—402, 491—8, 539—549 և 1885, էջ 51—7, 99—109, 147—156, 202—210, 243—251, 295—301, 339—347, 387—392, 483—492, 551—559 (կիսատ մնացած):

Հ. Գ. Զարբհանալյան.— Հայկական հին դպրութեան պատմութիւն. Բ տպ. Վենետիկ, 1886. Հայկական նշանագիրք, էջ 10—57, Հայ գրագիրք, էջ 57—84, Մեսրոպ, էջ 256—262:

Նույն.— Հայկական թարգմանութիւնը նախնեաց, Վենետիկ, 1889, ս. Գրքի թարգմանութեան և թարգմանչաց վրա խոսում է էջ 59—245:

Fr. Müller.— Zur Geschichte der armenischen Schrift, WZKM 1888, էջ 245—248. Թրգմ. Հանդ. ամս. 1889, էջ 86—87:

Հ. Բ. Սարգիսյան.— Տեսութիւն տառադարձութեան խնդրոյն և հայերէն նշանագրոց վերայ. Բազմավէպ, 1889, էջ 21—42, 97—103, 129—134, 161—170:

Նույն.— Ազգաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն, Վենետիկ, 1890, մեզ են վերաբերում էջ 42—43, 288—297 և մանավանդ էջ 359—408, որի վրա տե՛ս Մեսրոպի կենսագրութիւնը, գլուխ ԺԵ:

Fr. Müller.— Zur Geschichte der armenischen Schrift,

WZKM 1890, էջ 284—288. Յրգմ. Հանդ. ամս. 1891, էջ 68—70.

Մ. Գարագաշեան.— Պատմութիւն Հայ դպրութեան.— Գիր. Սաղիկ մանկանց հանդես, Պոլիս, 1891, էջ 204:

Իսահակ Յարութիւնեանց.— Հայոց գիրը. Քիֆլիս, 1892. շորս հարյուր էջից բաղկացած աշխատութիւնն է և մինչև այժմ հրատարակված բոլոր աշխատութիւնների մեջ ամենից ընդարձակը, Բայց պետք է խոստովանվել, թէ շատ խակ աշխատութիւնն է և հավաքածու ամեն տեսակ պիտանի և անպիտան գիտելիաց: Այստեղ կարելի է գտնել Հայոց լեզվի ծագումը, համեմատական քերականութիւն, ստուգարանութիւններ, Ինճիճյանի հնախոսական կարծիքների քննադատութիւնը, Դարեհ վշտասպյան արձանագրութեանց այլ ընդ այլո ընթերցումը, Մորթմանի բեռնագրական քննութիւնները և նրանց հերքումը, նախապատմութիւն Հայոց ըստ բեռնագրաց, Խորենացու ծնված տեղի քննութիւնը, ձեռագիրների նկարագրութիւնը, թվականի հետախուզութիւններ, զանազան թարգմանութիւնների սխալները և վերջապես ամեն ինչ, մինչև իսկ Ալվազովսկու նկարների մասին (էջ 100): Գրքի արժեքը ցույց տալու համար բավական է ասել, թէ յայտնված է Սահակ Մեսրոպյան մրցանակաբաշխութիւն ամբողջ մրցանակով 1888 թվին»: Առհասարակ աշխատութիւն հազիվ քառորդ մասը կապ ունենա հայերեն գրքի պատմութիւն հետ:

Ստ. Մալխասյան.— Հարութիւնյանի «Հայոց գիրը» գրքի քննադատականը (Տարազ, 1893, № 1—5): Առողջ գաղափարներով լի պատմական մի հոդված է. իր գաղափարները մեծ մասամբ իմ էլ պաշտպանած գաղափարներն են:

P. Vetter.— Մ. Մեսրոպ առաքեալ Հայոց (տե՛ս Nirschl, Patrologie, III. Mainz, 1893, էջ 239—240, հայ թրգմ. Հ. Յ. Տաշյան «Հայկական աշխատասիրութիւնք Յեթթերի», Վիեննա, 1895, էջ 64—78):

Fr. Müller.— Über den Ursprung der Vocalzeichen der armenischen Schrift. WZKM 1894, էջ 155—160, թրգմ. Հանդ. ամս. 1894, էջ 244—6:

Ն. Տաղավարյան.— Մագումն հայ տառից, Վիեննա, 1895:

Ա. Մ. Գարագաշյան.— Քննական պատմութիւն Հայոց. Քիֆլիս, 1895. մասն Գ, էջ 204—227 և մասն Գ, գլուխ Ա «Հայր յանտէրնչութեան, մատենագրական շարժումն», էջ 5—110:

Հ. Գ. Գ.— Նոր Կտակարանի հնագոյն հայ թարգմանութիւնը. Հանդ. Ամս. 1896, էջ 87—88:

Ս. Վ. Պարոնյան.— Հայերէն այբուրենի ծագման պատմու-

Քեան պատկանեալ լուսարանութիւնք. Հանդ. Ամս. 1896, էջ 72—76:

2. Յովհ. Քորոսյան.— Համառոտ տեսութիւն Կորեան և իւր գրութեան վրայ. Բաղմավեպ, 1897, էջ 110—115, և 303—310 (շարունակելի): Թեև Կորուոնի մասին է, բայց մի քանի տեղ ունի նաև Մեսրոպի մասին զանազան խնդիրներ:

2. Բ. Սարգիսյան.— Ծագումն հայ տառից. Բաղմավեպ, 1897, ապրիլ, հավելված, էջ, 1—7 (ընդարձակ քննադատութիւն Տաղավարյանի աշխատութեան):

Ստ. Մալխասյանց.— Դասընթաց Հայոց մատենագրութեան պատմութեան (վիճատիւ). Թիֆլիս, 1899.— Հայկական նշանագրերի մասին, էջ 41—46, Գրերի գլուտը՝ էջ 46—53, Սահակի և Մեսրոպի գործունեութիւնը՝ էջ 53—57, Աստվածաշունչ գրքի թարգմանութիւնը, էջ 57—70:

2. Ք. Զրաքյան.— Գիրք Մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան, Բաղմավեպ, 1900, 117—122:

Լէօ.— Ս. Մեսրոպ, Թիֆլիս, 1904. հրատարակութիւն Ալեքտիս Պողոսյանցի. բավական ընդարձակ կենսագրութիւն է (336 էջ) բայց գրական ու հրապարակախոսական ոճով գրված լինելով՝ ամենևին նորութիւն չի պարունակում:

Халатянцъ.— Армянскіе Аршакиды, Մոսկվա, 1903, մեր նյութի մասին խոսում է զլուս ժԶ «Վուամշապուհ և լուսավորական գործունեութիւն ս. Սահակի և Մեսրոպի» (էջ 306—335) և զլուս ժէ «Արտաշիր և Արշակունյան հարստութեան անկումը Հայաստանում» (էջ 336—368): Առաջինը, որ այստեղ ավելի կարևոր է, հայերեն թարգմանութեամբ հրատարակված է Հանդ. ամս. 1904, էջ 257 և 361. արտատպված «Հայ Արշակունիք ըստ Մ. Խորենացւոյ կամ նոր ուսումնասիրութիւններ Մ. Խորենացւոյ մասին», թրգմ. Ա. սարկ. Սիմոնյանց, Վիեննա, 1906:

Գ. Փառնակ (Յնտգլյան).— Մաշտոց վարդապետ՝ գտիչ այբուբենքի. Անահիտ 1905, № № 4—8, 10—12:

Ե. եպս. Դուրյան.— Գրոց գիտին հրաշքը. Մաղիկ, 1907, № 9, էջ 103—4:

Սահակյան.— Գրոց գիտը. Բաղմավեպ, 1907, էջ 439—443:

Գ. Տեր-Մկրտչյան.— Հայ գրերի 1500-ամեակի առթիւ. Արարատ, 1912, էջ 499—514 (թվականի մասին հետազոտութիւններ):

Marquart.— Պատմութիւն հայերէն նշանագրերու և վարուց ս. Մաշթոցի, Վիեննա, 1913 (արտատպված Հանդ. ամս. 1912):

Նահապետյան.— Վարք սուրբ Մեսրոպայ. Բաղմավեպ, 1913, էջ 122—158:

Նահապետյան.— Ուսումնասիրությունն ս. Մեսրոպյան վարուց  
և հայկական գրոց գիտին. Բազմավեպ, 1914 հունվ., փետր., մարտ,  
որ և արտատպված է ս. Մեսրոպ և Հայաստանի Ոսկեդարը վեր-  
նագրով.— Արտատպությունը չիմ տեսած:

Գեորգ—Մեսրոպ.— Ս. Մեսրոպի կենսագիրը (Կորին). Հայ  
գրականութ., 1913, հոկտ. էջ 1—5:

Լ. Յ. Քորոսյան.— Կորեան յիշած Բարիլաս եպիսկոպոսը.  
Բազմավեպ, 1922, էջ 99—104:

Կոզեան.— Մակարայեցուց Բ գրքին հայերէն թարգմանութիւ-  
նը, Վիեննա, 1923:

Ադոնց.— Անձանոթ էջեր Մաշթոցի և նրա աշակերտների կեան-  
քից ըստ օտար աղբիւրների. Հանդ. Ամս. 1925 մայիս—նոյ.:

Նորից Կորինը Վրաստանի եպիսկոպոս չէ եղել. Ազգ. Մատ.  
ԸժԵ, Վիեննա, 1926, էջ 47—52:

Յնտզլյան.— Նկատողութիւններ Մաշթոց-Մեսրոպ անուան և  
Կորեան ընագրի և ժամանակի մասին. Հանդ. Ամս. 1926, էջ 268—  
275:

Ադոնց.— Կորինի մասին (Պ. Յնտզլյանի նկատողությունների  
առթիւ). Հանդ. Ամս. 1927, էջ 273—284, 395—402:

Լէո.— Ս. Մեսրոպի մահը. Կոչնակ Հայաստանի, 1928, № 42:

Ս. Տեր Մ. Գրիգորյան.— Ս. Սահակ և ս. Մեսրոպը. Կոչնակ  
Հայաստանի, 1928, № 33:

Տ. Տիրիճյան.— Ս. Քարգմանչաց յիշատակին առթիւ. Կոչնակ  
Հայաստ. 1928, № 42:

Մ. Մինասյան.— Նոր Կտակարանի հայերէն նախամեսրոպեան  
թարգմանությունը. Կոչնակ Հայաստ. 1929, № 23:

Սահակ և Մեսրոպ. Կոչնակ Հայաստ. 1929, № 26, էջ 805—6:

Սոցիկեան.— Սահակ և Մեսրոպ. Կոչնակ Հայաստ. 1929, №  
26, էջ 314—5:

Peeters.— Pour l'histoire des origines de l'alphabet ar-  
ménien. Revue des études arm. հտ. 9 (1929), էջ 203—237:

Գ. Յնտզլյան.— Կորին՝ վարք Մաշթոցի. Երուսաղեմ, 1930  
(ընագիր և քննություն):

Երեմեան.— Վարք Մաշթոցի. (քննադատություն Գ. Յնտզլյա-  
նի գրքի). Բազմ. 1930, էջ 218—223:

Գ. Յնտզլյան.— Կորին և Խորենացի. Անահիտ, 1930, № 2,  
էջ 48—53, № 4, էջ 62—74, 1931, մայ. էջ 58—69:

Քորոսեան.— Քանի՛ մը խնդրական կետեր Կորեան գրքին մեջ.  
Բազմավեպ, 1931, էջ 465—473 և 1932, էջ 5—11, 148—156, 255—  
264:

Փղշտացի.— Հայ մշակոյթի Ոսկեդարը. Կոչնակ Հայաստ. 1932, № 28:

Ե. Դուրեան.— Ս. Սահակ և ս. Մեսրոպ (տե՛ս իր Ուսումնասիրութիւնք և քննադատութիւնք. Երուսաղեմ, 1935, էջ 524—8):

Հ. Ն. Ակիւնեան.— Ս. Գրքի հայերէն թարգմանութեան 1500—ամեակին. Հանդ. Ամս. 1935, էջ 449—454:

Նոյն.— Պատմական աղբիւրները 380—450 շրջանի համար. Հանդ. Ամս., 1935, էջ 454—460:

Նոյն.— Հայաստանի քաղաքական հանգամանքները (380—450). Հանդ. Ամս., 1935, էջ 461—470:

Նոյն.— Մեծն Սահակ Հայոց կաթողիկոս. Հանդ. Ամս. 1935, էջ 470—504:

Նոյն.— Մաշտոց վարդապետ Հացեկացի. Հանդ. Ամս. 1935, էջ 505—550:

Նոյն.— Սուրբ գրքի հայերէն թարգմանութիւնք. Հանդ. Ամս., 1935, էջ 550—563:

Ա. Ղարիբջան.— Մեսրոպ Մաշտոցը և հայկական գրերի գյուտը, Բանվոր թերթ, 1940 թ., հունիսի 20, № 141:

Ս. Մալխասյան.— Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, աշխ. թրգմ., Երևան, 1940. ունի մի խումբ ծանոթութիւններ՝ սկզբնաժ 326-րդ էջից, որոնք վերաբերում են Հայոց գրերի գյուտի պատմութիւն:

Ա. Ղարիբջան.— Մեսրոպ Մաշտոց և հայերեն գրերի գյուտը՝ Սովետ. Հայաստան, 1941, մայ. 15:

Արեղյան Մ.— Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականութիւնի սկիզբը. Սովետական գրականութ., 1941, № 1, էջ 47—51, № 2, էջ 41—51:

Манандян.— Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самобытность, Ереван, 1941.

Гарибян А.— Месроп Маштоц и изобретение армянской письменности (արտատպ.):

Աբուլաձե.— Հայոց գրի ստեղծման մասին պատմող աղբյուրների շուրջը, Սովետ. գրականութ., 1941, № 3, էջ 73—74:

Հնագրական և տառերի տեսակների պատմութիւնի համար կարևոր աշխատութիւններ են՝

Տաշեան.— Ակնարկ մը հայ հնագրութեան:

Կ. Ղաֆադարյան.— Ալբրիմիան պատմական Հայաստանում. Երևան, 1940. խոստով է ալբրիմիական արվեստի մասին և այս առթիվ՝ էջ 13—24 տալիս է ծածկագրի զանազան տեսակներ, որոն-

ցից մի քանիսը ինքն է գտնւ հին ձեռագրերում և հաջողութեամբ վերլուծել:

Այս բոլորից դուրս հիշենք նաև Ղ. Աղայանցի մի քանի աշխատութիւնները, որ թեև ուղղագրական խնդրին են վերաբերում, բայց մի քանի տեղ շոշափում են հայերեն տառերի թվին, ծագման և նախկին հնչման վերաբերյալ զանազան խնդիրներ: Այս գործերն են՝

Հայկական հնչույթների մասին (լուծումն տարակուսութեանց).  
Տփիս, 1874:

Մեր ուսուցիչներին ընկերական նրւէր. Քիֆլիս, 1892:

Մի թեթև հրահանգ մեր լեզուի ուղղագրութեան մասին. Աղբիւր, Բ բաժին, 1888, № 12:

Իհնը ձայնատ՞ր է, թէ բաղաձայն, Աղբիւր, Բ բաժին, 1889, № 5—6:

Սուրբ լեզու. Մուրճ, 1890, № 11—12:

Երկրաբարբառները մեր լեզուի մէջ. Մուրճ, 1891, № 4:

Մեր գրերի թիւն ինչո՞ւ է 36. Մուրճ, 1889, № 12:

Տառադարձութեան խնդիր. Աղբիւր, Բ բաժին, 1889, № 1:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գ Լ Ո Ւ Ե Ա

## ՄԵՍՐՈՊԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1

Մեսրոպ կամ Մաշտոց, հայ մատենագրութեան հայրն ու հիմնադիրը, ծնվել է Տարոն գավառի Հացեկաց գյուղում: Այս գյուղը, որ մինչև այժմ էլ գոյութիւն ունի և հայոց մեջ Հացիկ, իսկ քրդերի մեջ Խաւիկ կոչուան է ստացել, գտնվում է Մշո համրավաժոր դաշտի մեջ, Մեղրագետի աջ կողմը, Մուշ քաղաքից մոտ 40 կիլոմետր դեպի արևելք (հետիոտն ութ ժամվա ճանապարհ): Հին մատենագրութեան մեջ կորչուներ (էջ 6), Ղազար Փարպեցին (էջ 13) և Ասողկը (էջ 74) կոչում են Հացեկաց և համարում են գյուղ, իսկ Խորենացին (Գ. խէ), Հովհան կաթողիկոսը (էջ 69) և Պատմութիւն Սրբոյն Ներսեսի» (էջ 28) կոչում են Հացեկաց, առանց գյուղ ասելու: Բուզանդը (Գ, ժթ) նույն գյուղը կոչում է Հացեաց գիւղ և համարում է կարճազատների սեփականութիւն: Սասնեցին գործ է ածում նույն բառի նախորդի հայցական ձևը՝ «ծնեալ ի Հացիս» (էջ 24), իսկ Հայամավորքը (մեհեկի ժԳ) նոր հնչման համաձայն դնում է Հացիկ:

Նոր աշխարհագիրներից այս գյուղի վրա խոսում են Ինճիճյան, «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» (Վենետիկ, 1822 թ., էջ 104), «Նոր Հայաստան» (այն է՝ նույն հեղինակի «Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի, մասն Ա (Ասիա), հատոր Ա», (Հայաստան), էջ 191), Ն. Ներսես Սարգսյան, «Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս» (Վենետիկ, 1864 թ., էջ 236—237): Իսկ Միրախորյանը, «Նկարագրական ուղևորութիւն», թեև բավական ընդարձակ խոսում է Մշո գյուղերի մասին, բայց չի հիշատակում Հացիկը:— Հացիկ կամ Խասիկ գյուղի հետ չպետք է շփոթել Խասգյուղը, որ նույնպես գտնվում է Մուշից դեպի հարավ-արևելք, բայց հեռու է նրանից վեց ժամվա ճանապարհով և գտնվում է Մեղրագետի ձախ ափում:

Մեսրոպը որդին էր Վարդան անունով մի մարդու, որին «երանելի» է կոչում Կորյունը (էջ 6). դա նշանակում է, թե այն ժամանակ, երբ Կորյունը գրում էր իր Պատմությունը, Վարդանը արդեն մեռած էր: Տեսազլյանն էլ (էջ 94) ասում է, թե «երանելի» տիտղոսը ավելի հոգևորականների համար է գործածվում, ուստի Մեսրոպի հայրը քահանա պիտի լիներ: Գաթրճյանը, «Տիեզերական պատմություն», Բ. (էջ 523) և էմինը, «Հայկական այբուբենք» (էջ 44, ծան.) կարծում են, թե Մեսրոպը՝ Մամիկոնյան ցեղից, հետևաբար ազնվական էր: Այս ենթադրության իբր փաստ են բերում, նախ՝ ծնվելու տեղը՝ Տարոնը, որ Մամիկոնյանների սեփականությունն էր, և երկրորդ՝ Մեսրոպի հոր Վարդան անունը, որ առհասարակ տրվում էր Մամիկոնյան ցեղի մարդկանց: Թվում է, թե այս կարծիքը ընդունել է նաև Խալաթյանը, «Ղազար Փարպեցի և գործք նորին» (էջ 4). «Ծաղազս Մեծին Մեսրոպայ ևս կարծիս ինչ յայտնեալ են ոմանք ի սիրարանից՝ եթէ ի Մամիկոնեան լծալ էր ի տոհմէ»: Այս խնդիրը մի քիչ ավելի երկար քննում է Հարությունյանը, «Հայոց գիրը» (էջ 388—389): Սա նախ մերժում է Վարդան անվան փաստականությունը, որ տալիս է էմինը, ասելով, թէ՛ «Հացեկաց գյուղի բնակիչ մի պարզ գյուղացի ևս կարող էր Վարդան կոչվել», բայց ի նկատի ունենալով ուրիշ պատճառարանություններ, հավանական է համարում, որ Մեսրոպը ազնվական ընտանիքից էր:

Հարությունյանի հիշած պատճառարանությունները հետևյալներն են.

ա. «Դժվար թե մի հասարակ ընտանիքի հայր յուր որդու կրթությունը հանձներ (ուզում է ասել՝ կարողանար հանձնել) ուղղակի եկեղեցվո պետի, կաթուղիկոսի ձեռքը, որ անմիջական հարաբերության մեջ էր երկրի քաղաքական պետի, արքայի հետ»:

բ. «Այն ժամանակ միայն ազնվականների զավակներն էին այնպիսի բարձր կրթություն ստանում— մինչև որ սուրբ Մեսրոպն ուսուցանող հանդիսանալով՝ կրթության սահմաններն առավել ընդարձակեց»:

գ. «Արքայական պալատի պաշտոնյայք ևս ազնվականներից էին— նա մանավանդ որ սուրբ Մեսրոպը, բացի քարտուղար լինելուց, զինվորական բարձր պաշտոնյա ևս էր»:

Հարությունյանը մտածում է, թե այս ենթադրության դեմ միակ գորեղ ապացույցը, որ կարելի է մեջ բերել, այն է, թե մեր պատմագիրներից և ո՛չ մեկը չի հիշում Մեսրոպի ազնվականությունը.



բայց սրա համար էլ ունենք օտար մի վկայություն, այն է «Կայսերաց պատմութիւն»-ը, ուր ասվում է, թե «Մեսրոպ Երանեկի Տարօնացի ի Հացեաց գեղջէ յազատ տանէ...»:

Այս պատճառաբանություններից առաջինը մենք չենք կարող ընդունել, ինչպես պիտի ցույց տանք հետո: Մնացյալները բավական համոզիչ են:

Այսպես է մտածում նաև Արեղյանը («Սովետական գրականություն», 1941 թ., հունվար, էջ 48ա), որ ի նկատի ունենալով այն, որ 1) Կորյունը (էջ 14) ասում է Մեսրոպի համար՝ «մերկանայր այնուհետև զիշխանակիր ցանկութիւնսն», (2) որ Մեսրոպը շատ երիտասարդ հասակում արժանացել է դառնալու արքունի քարտուղար և զինվորական, ուստի Մեսրոպ պետք է լիներ ծագումով ազնվական և ոչ ժողովրդի «ստորին խավերից»: Այն դարում ժողովրդի «ստորին խավի» մի մարդ դժվար թե այդպես բարձրանար:— Իշխանակիր բառի վրա պնդում էր նաև Նահապետյանը («Բաղամալէպ», 1907 թ., էջ 198ա) և Մեսրոպին համարում էր «իշխանազուն»:

Բայց համենայն դեպս խորագրի ի նկատի պետք է առնել Բուզանդի մի հատվածը, որ ամենամեծ նշանակություն ունի այս պարագային:

Բուզանդը (Գ, ժթ) խոսելով Պապի (Հուսիկի որդու) հարձի մասին, հետևյալ տեղեկությունն է տալիս. «Բայց Պապայ ի բուն ի կնոջէն ոչ մնաց, այլ էր նորա հարձ մի ի գաւառէն Տարօնոյ, ի Հացեաց գեղջէ կարճազատացն. և մնաց որ ի հարձէ անտի ի Հացեակացոյն, որում անուն իւր որդոյ հարձին Վրիկ կոչէր»:

Մեզ համար այստեղ կարևորություն ունեցողը Հացեակաց գյուղի մասին տրված ծանոթությունն է. Բուզանդը գյուղին տալիս է կարճագատ տիտղոսը. արդ՝ քննենք նախ, թե ինչ է նշանակում այս բառը:

Ինձիճյանի Հնախոսության մեջ այսպիսի մի տիտղոս չի նշանակված. նույնպես Հայկազյան բառարանը չունի կարճագատ. միայն Առձեռն բառարանի երկրորդ տպագրությունը գիտե կարճագատ «օձ ու կարիճ, շարաճճի»: Բայց այս նշանակությունը ամենևին հարմար չէ տեղին: Առձեռն բառարանը վկայություններ չունենալով՝ չենք կարող իմանալ, թե հիշյալ բառը որտեղից է առնված, Բուզանդի վերահիշյալ հատվածի՞ց, թե մի ուրիշ մեզ անհայտ հատվածից, ուր այս նշանակությունը հարմար գար: Եթե վերի վկայությունից է առնված, անշուշտ նշանակությունը հարմարեցրած է պայագատ, հարագատ բառերի նմանությամբ՝ իբր թե կարիճ և պարսկերեն zōdan «ծնվել» բառերից, ինչ որ անընդունելի է: Իսկ

նթե մի ուրիշ տեղից է առնված<sup>1</sup>, առաջինը մնում է քննելի՝ գոնե իբրև տարբեր բառ:

Քանի որ խոսքը մի գյուղի, այն է մի կալվածի մասին է, պետք է կարծել, թե Բուզանդը այս բառով նշանակում է դասակարգային կալվածատիրական մի աստիճան: Այս մտածությամբ կարճագատ բառը պետք է որ ծագած լինի կարճ «փոքր, համառոտ» և ազատ «ազնվական» բառերից, ուստի և նշանակում է «փոքր ազատ, երկրորդական կամ աննշան ազնվական»: Այս նշանակությունը հարմար է գալիս թե՛ գյուղին և թե՛ մանավանդ Պապի հարձին—հարձույթունը այն ժամանակ էլ անարգական մի վիճակ լինելով, հագիվ թե մի պատվավոր ազնվական հանձն առնելու Պապին հարձ լինել, մինչդեռ աննշան ազնվականի համար խոտելի չէր:

Եթե կարճագատ նշանակում է «ստորին ազնվական», պետք է ստուգել, թե Բուզանդը այս բառը ո՞ւմ է տալիս, Հացեկաց գյուղի՞ն, թե Հացեկացի կնոջ: Պարզել այս կետը՝ շատ հարկավոր է, որովհետև նթե միայն Պապի հարձն էր կարճագատ, մնացյալ հացեկացիք կմնան ազատ:

Որպեսզի կարճագատ բառը պատկաներ միայն հարձին, պետք էր, որ դրված լիներ կա՛մ ուղղական և կա՛մ բացառական. այսպես՝ «Հարձ մի ի գաւառէն Տարօնոյ, ի Հացեկաց գեղէ՛, կարճագատ». կամ «Հարձ մի ի գաւառէն Տարօնոյ, ի Հացեաց գեղէ՛, ի կարճագատացն»: Որովհետև այսպես չէ և տեղիք էլ չկա կարծելու, թե ի նախդիրը ընկած է այստեղ, ուստի մնում է ընդունել, թե կարճագատացն սեռական է և հետևաբար պատկանում է ամբողջ գյուղին: Բուզանդն ուզում է ասել, թե Հացեկաց գյուղը կարճագատների կալվածք և սեփականությունն էր, ուստի Մեսրոպն էլ, որ հացեկացի էր, առ առավելն կարճագատ Մամիկոնյան էր և ոչ ավելի:

Ավելորդ էր, բայց ամբողջության համար ստիպված եմ հիշատակել Հ. Գ. Նահապետյանի այն հոդվածը, որի վերնագիրն է դրժբախտարար «Ուսումնասիրութիւն Ս. Մեսրոպրայ վարուց և հայկական գրոց գիտին»: Այս հոդվածի մեջ, որ բռնում է «Բաղամվէպ»-ի 1914 թվականի հունվարի, փետրվարի և մարտի համարները, հեղինակը ուզում է ցույց տալ, թե կարճագատները (որ և հարճագատ) հին վահեռներն էին, որոնցից Տիգրան Բ խլել էր իշխանական իրավունքները և դրա համար էլ կոչվում էին կարճագատ<sup>2</sup>: Հացե-

<sup>1</sup> Հին հայ մատենագրության մեջ, որչափ որ տպագրությամբ ծանոթ է, ես այսպիսի բառ չեմ գտած:

<sup>2</sup> Բուզանդի կարճագատ բառը օգտագործել է նաև Բաֆֆին իր «Մամվել» վեպի մեջ (տպ. 1886, էջ 139, գլուխ ԺԳ): Շատ ճիշտ է վարվում նա, երբ կարճա-

կաց գյուղացի Վրիկը հենց Մեսրոպի հայր Վարդանն է (Վարդան անունը կրճատվելով դարձել էր Վրիկ, ինչպես Աստվածատուր լինում է Աստ, Մաշտոց դառնում է Մաստ և այլն): Եվ որովհետև Վրիկը որդին էր Պապի, «որդույ Յուսկան, որդույ Վրթանիսի, որդույ ս. Գրիգորի Լուսատրչին», ուստի Մեսրոպն էլ Լուսավորչի թոռան թոռն էր, Վահեունյաց ժառանգորդ մեծ ազնվական, ազգակից Տիրան թագավորի և արյունակից ս. Սահակի. բայց հարձորդի լինելով եկեղեցական ձեռնադրություն չէր կարող ընդունել (անդ, էջ 2, 117, 119):— Երանի՜ հավատացողին:

Մեսրոպն իբրև առանձին շնորհ՝ եկեղեցական ձեռնադրություն ստացավ Կոստանդնուպոլսում՝ Ատտիկոս պատրիարքից («Բազմավէպ», 1913 թ., էջ 148—149):

Ցավում եմ, որ Ակիլոսյանն էլ («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 505) նույն հարձորդի Վրիկին Մեսրոպի հայրն է համարում, թեև չի հիշում Նահապետյանին:

Տնտղյանը (էջ 94) կարծում է, թե եթե Մեսրոպը ազնվական և Մամիկոնյան ցեղից լիներ, Կորյունը զանց չէր առնի նշանակել այդ, նա՝ որ հատկապես ավանդում է, թե Մամիկոնյան տոհմի մարդկանց Սահակ հավաքեց ուսուցանելու համար:

### 3

Արդի կենսագիրներն ու պատմիչները առ հասարակ գրում են Մեսրոպի համար, թե պատանեկության ժամանակ աշակերտել է Մեծն Ներսես կաթողիկոսին: Այս տեսակ մի տեղեկություն չեն տալիս մեզ մեր մատենագիրներին մեծ մասը, հատկապես նրանք, որ Մեսրոպի կյանքը ընդարձակապես պատմում են, ինչպես Մեծ ու Փոքր Կորյուն, Փարպեցի, Կարապետ Սասնեցի և այլն: Այս տեղեկությունը առաջին անգամ տալիս է մեզ Խորենացին (Գ, խէ), ասելով. «Մեսրոպայ, որ էր ի Հացեկաց Տարօնոյ, սնեալ և ուսեալ առ Մեծին Ներսիսի», նույն տեղեկությունը կրկնում են նախ՝ Հովհաննես կաթողիկոսը (էջ 69). «Բայց յետ մահուան Արշակայ Մեսրոպը որ ի Հացեկաց Տարօնոյ և աշակերտեալ Մեծին Ներսէսի», և երկրորդ՝ Անանունը, «Պատմութիւն ս. Ներսէսի» (էջ 28), բառացի

---

գառը համարում է Հացիկ գյուղին և հացիկեցիներին տրված մի տիտղոս (մականուն), բայց սխալվում է, երբ բացատրում է բառը Առձեռն բառարանի տված նշանակութամբ: Նա ասում է. «Օձնեցիք ճանաչված էին որպես օձաբարո մարդիկ, իսկ հացիկեցիք ստացել էին «կարճադատ» մականունը, որ նշանակում է կարիճի զավակ, կամ, փոխաբերական մտքով, շարձճի, խաթող, թունավորող».

ըստ Հովհաննես կաթողիկոսի. «Բայց Մեսրոպը, որ էր ի Հացեկաց Տարօնոյ և աշակերտեալ էր Մեծին Ներսիսի»:

Հայամավորքը (նավասարդ 30) ո՛չ թէ լոկ աշակերտ, այլ նոտար և քարտուղար է համարում նրան Ներսեսի մոտ. «Մուրք վարդապետն Մեսրոպ, որ էր դպիր և նօտար հօր սորա (Մահակայ) սրբոյն Ներսէսի սքանչելագործ հայրապետին մերոյ»:

Բայց այս անցողակի տեղեկությունը շատ ավելի մանրամասնութեամբ ունի Մեսրոպ երեցը, որ ո՛չ թէ միայն աշակերտ է դնում Ներսեսի մոտ, այլև գործակից, հետևող և նրանից անբաժան մի անձ՝ մինչև նրա թունավորութեամբ վախճանվելը: Այն օրից, երբ Պապը Հայաստանի վրա թագավորելով՝ Ներսեսը սկսեց ման գալ Հայաստան՝ եկեղեցական կարգերը կանոնավորելու համար, Մեսրոպը նրա հետ էր. «Իսկ Մեծն Ներսէս շրջէր ընդ ամենայն երկիրն Հայոց, և հաւաքէր զնիւթ վարդապետութեան իւրոյ: Ընդ նմա և աշակերտն իւր Մեսրոպը, որ անուանեցան Մաշտոց. ամենայն կրթութեամբ հոգևոր իրաց զանձնն տուեալ բազում և անհշտական իրաց և անհանգիստ գիշերային, զհարկ քնոյ յտանաւոր տքնութեամբ ի թօթափել ական վճարէր, ոչ սակաւ ժամանակս, այլ յուլովս» (Մեսրոպ երեց, էջ 82—83): Նույնպէս Մեսրոպը ներկա էր Մեծն Ներսեսի վախճանին. «Եւ յարուցեալ յաթոտոյն ել ի գաւիթս եկեղեցոյն, և տարածեալ զձեռս իւր, հայեցաւ յերկինս զուարթ սրբօտիւ. և յիշէր յաղօթս իւր զամենայն աշխարհ, զհեռաւորս և զմերձաւորս: Եւ ունկն դնէր նմա Մեսրոպը աշակերտն իւր, որ անուանեցան Մաշտոց» (նույնը, էջ 110):

Ընդհալ հինգ վկայություններից երկուսը հայտնի կրկնություն լինելով՝ ամենևին արժեք չունեն. Հայամավորքը հետին հարմարանք է. մնում են միայն հորենացին և Մեսրոպ երեցը, որոնց նախնական աղբյուրը պետք է նրան հանել՝ խնդրի լավագույն լուսաբանության համար:

Խորենացին, համենայն դեպս, ավելի առաջ է, քան Մեսրոպ երեցը (Մեսրոպ երեցը գրել է իր աշխատությունը 967 թվականին. Խորենացին հիշվում է ղեռ Հովհաննես կաթողիկոսից, որ վախճանվել է 925 թվականին). ուստի Խորենացին չի կարող Մեսրոպից առած լինել այդ տեղեկությունը: Նույնպէս՝ Մեսրոպ չի կարող քաղած լինել Խորենացուց, քանի որ այս վերջինը մի՞ տող միայն ունի այս մասին, մինչդեռ առաջինը՝ շատ ավելի ընդարձակ տեղեկություններ: Պետք է ուրեմն ենթադրել, թե կար մի ուրիշ հասարակաց աղբյուր, որից քաղել են երկուսն էլ: Այդ աղբյուրը պետք է լինի ըստ իս Աբրահամ Խոստովանողի «Գիրք Արևելից»-ը, որից օգտվել է Մեսրոպը ըստ իր հայտարարության (էջ 138—139):

Բայց «Գիրք Արևելից»-ի հայտնութեամբ՝ միայն խորենացին և Մեսրոպ երեցը կազատեն իրենց օձիքը. տրված տեղեկութիւնը այնու ամենայնիմ կմնա միշտ անընդունելի՝ հետևյալ պատճառաբանութեամբ:— Նախ՝ դժվար թի Փալատոսը, որ այնպես մանրամասն խոսում է Ներսեսի գործերի վրա, մոռանար հիշատակել այնպիսի երևելի մի անձի, ինչպիսին էր Մեսրոպը, որ կարող էր Ներսեսի պարծանքը համարվել: Երկրորդ՝ ավելի անպատեհ է Մեսրոպի քարտուղարութեան հանգամանքը (տե՛ս ստորև):

Այսպիսով, կարող ենք համոզվել, թի Մեսրոպը Ներսեսի աշակերտը չէ եղած. իսկ իր ուսուցչի անունը հայտնված չէ մեզ:

#### 4

Մեսրոպը իր նախնական կրթութիւնը ստացավ իր նահանգում (Տարրնում), թերևս ս. Կարապետի հոշակավոր վանքում: Այս բանը ենթադրել է տալիս Կորյունի մի խոսքը. «Մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ ճատեալ ի գաւառն Արշակունեաց» (էջ 6). ուր «եկեալ հասեալ» բառերը ենթադրում են, թի նախապես գտնվում էր Տարրնում, ուր վարժվել էր «հելլենական դպրութեամբ»: Բայց այս մասին ավելի բացորոշ է Կարապետ Սասնեցին (էջ 24). «Ըստ սակաւ ինչ հմտացեալ յիւրում ճանճագին. և ապա հրաժարեալ անտի և բարեաւ մնալ ասացեալ ամենայն կենցաղական հոգւոց» (ուղղել ճոզոց):

Ակինյանը («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 506) ենթադրում է, թի Մեսրոպը հունարենի տարիքը սովորել է Տարրնում, ուր կար «հոռոմ» Փալատոս եպիսկոպոսը: Բայց սրանով չբավականանալով և հելլենական կրթութեան համար անպատճառ նաև «հելլենական շրջան» պահանջելով՝ Մեսրոպին տանում է Անտիոք:

Անտիոքում այն ժամանակ հայտնի էր Թեոդորոս երեցը, որ ձեռնադրվել էր 383 թվականին և մինչև 392 թվականը գործեց նույն քաղաքում: Նույն քաղաքում կար նաև Լիբանիոսը, սոփեստ և ճարտասան, որի հոշակը Անտիոք էր քաշում զանազան աշակերտներին, հատկապես Փոքր Ասիայից: Նրա աշակերտներից էին Հովհան Ոսկեբերանը, Մեծն Բարսեղը, Գրիգոր Նազիանզացին, նույն Թեոդորոս երեց Անտիոքացին (որ հետո Մոպսուեստացի եպիսկոպոս եղավ) և Ղևոնդ Հայկազն, որ իբրև սոփեստ և բանաստեղծ անվանի եղավ և 5-րդ դարի 20-ական թվականներին Աթենքի համալսարանի ուսուցչապետ կարգվեց:

Ի նկատի ունենալով այս հանգամանքները, նաև այն, որ Թեոդորոս Անտիոքացին իր մեկ գիրքը նվիրել է Մեսրոպին կամ գրել

է նրա ինքիրբով, պետք է հետեցնել, թե Մեսրոպը մի ժամանակ բարեկամական հարաբերության մեջ ապրել է Քեոզորոս երեցի հետ: Ուստի Ակինյանը ենթադրում է, թե Մեսրոպը իբր 380 թվականին աշակերտել է Անտիոքում Լիբանիոսին, իրեն դասընկեր ունենալով Քեոզորոսին և մյուսներին:

Այս բոլորը հաստատելու համար ոչ մի դրական ապացույց կամ վկայություն չկա: Ուստի մենք էլ հիշում ենք և անցնում:

## 5

Կորյունի և Փարպեցու վկայությամբ Մեսրոպը սովորեց միայն հունարեն լեզուն. «Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն» (Կորյուն, էջ 6). «ի տիս մանկութեան իւրոյ ունեալ դպրութիւն գլոյն» (Փարպեցի, էջ 33): Քայց խորենացին ավելացնում է նաև պարսկերենը՝ մի քիչ ծածուկ բառերով կամ անուղղակի կերպով: Երբ Վռամշապուհը Միջագետք իջավ հույն-պարսկական վեճը դադարեցնելու համար, ասում է խորենացին, շատ նեղութուն կրեց քարտուղարի համար, որովհետև Մեսրոպի հրածարումից հետո, նրա փոխարեն չէր կարողացել գտնել արժանավոր մեկին. «Ոչ զոք ի ճարտարացն գտանէր անդ ի դպրաց. Կանգի պարսկականան վարէին գրով» (խորենացի, Գ, ծք):

Կարապետ Սասնեցին իր ներբողականում (էջ 24) տալիս է Մեսրոպին երեք լեզու. հունարեն, պարսկերեն և ասորերեն. «և զարգացեալ հասակա՝ վարժէր կրթութեամբ գրոց՝ պարսից, յունաց և ասորոց տառիբն»: Թևև պետք չէ վստահել այսպիսի հետին մի աղբյուրի տված տեղեկության, բայց ուրիշ հանգամանքներ պահանջում են ընդունել, թե Մեսրոպը գիտեր նաև պարսկերեն և ասորերեն լեզուները:

Մեսրոպը գիտեր պարսկերեն, որովհետև մեր այն ժամանակվա քաղաքական կյանքը այնպես էր ենթարկված պարսիկներին, որ ամեն մարդ գիտեր պարսկերեն: Ըստ Քսենոփոնի վկայության, Հայաստանի գյուղացի տղետ կանայք անգամ պարսկերեն էին կոտրատում (տե՛ս իմ «Հայոց լեզվի պատմություն», հատոր 1-ին, էջ 223), ո՛ւր մնաց այնպիսի ուսումնական մի մարդ, որ արքունական պալատում պաշտոն ուներ: Եթե պատմագիրները չեն հայտնում Մեսրոպի համար, թե պարսկերեն գիտեր, ամենևին զարմանալի չէ. պարսկերեն իմանալը հայոց համար այնպիսի բնական բան էր, որ նրա մասին խոսելը ավելորդ պիտի լիներ: Երբ Արշակ թագավորը իր Վասակ սպարապետի հետ այցելեց պարսից թագավորի

ախոռատունը, պարսիկ ախոռապետը սկսեց անարգել հայոց թագաժողովին՝ «ասելով ի պարսկերէն լեզու», թե «Այժմ հայերի թագաժողովը, արի նստիր խոտի խրձի վրա», և Վասակը լսելով այս անարգանքը, իսկույն սուրը քաշեց և սպանեց նրան, «զի ոչ կարաց լրսել և ժոյժ ունել զիրոյ թագաւորին անարգանս» (Բուզանդ, Դ, ԺԳ)։ Երբ Շապուհը ուղեց փորձել Արշակ թագաժողովի հավատարմութունը՝ կախարդների առաջարկած ձևով, «զայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացուցանել և զձեռանէ առեալ՝ շրջէր ճեմելով»։ Շապուհ և Արշակ այդտեղ երկարորեն խոսում են իրար հետ՝ առանց թարգմանի (Բուզանդ, Դ, ԺԴ)։ Սրանցից պարզ երևում է, որ թե՛ Արշակը և թե՛ Վասակը պարսկերեն հասկանում և խոսում էլ էին. բայց Բուզանդը նրանց պարսկերեն իմանալու մասին ամենևին ակնարկութուն չի անում։ Չի անում, որովհետև ավելորդ էր այն, և առանց այն էլ ամեն մարդու համար հասկանալի։

Այն ժամանակի հայոց պարսկերեն իմանալը նման է ճիշտ մեր ռուսերեն իմանալուն. մեզ մոտ ամեն հայ մտավորական գիտե՞ս այդ լեզուն, բայց ո՛չ մեկը ո՛չ մեկի համար չի դրում, թե այսինչ հեղինակը գիտեր նաև ռուսերեն։

Մեսրոպը պետք է որ իմացած լիներ նաև ասորերեն լեզուն, որն այն ժամանակ հայոց մեջ դիվանական լեզու էր. այս բանը ցույց է տալիս Փարպեցին (էջ 34). «կարգեալ յիրում մատենագիր արքունի դպրացն, վասն զի ասորի և յուն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորին Հայոց՝ արքունի դպիրքն, զվճոցն և զհրովարտակացն»։ Բացի սրանից՝ Եկեղեցու ծիսական լեզուն էլ այն ժամանակ հունարենի հետ նաև ասորերեն էր և Մեսրոպը, հմուտ քարոզիչ ու թարգմանիչ, պիտի իմացած լիներ նաև այս լեզուն։ Երկրորդ՝ Մեսրոպը աշակերտների մի խմբի հետ բավական ժամանակ ճամփորդեց ասորական քաղաքները։ Այս երկար ճամփորդության ժամանակ հարկավոր էր ասորերեն իմանալ։ Կորյունը չի հիշում, թե այս ճամփորդության մեջ մի թարգման էլ ընկերացավ իրենց։ Մյուս կողմից անտեղի է կարծել, թե Մեսրոպին ուղեկցող աշակերտները լինեին տեղյակ ասորերենի, քանի որ նրանք դեռ նոր են սկսում լեզու սովորել. «իսկ աշակերտասէրն վարդապետին՝ զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զմասնս քսորի դպրութեանն կարգէր, և զմասնս յունական դպրութիւնն» (Կորյուն, էջ 9)։ Երրորդ՝ եթե Մեսրոպն առաջուց ասորերեն չգիտենար էլ, այնքան երկար ուսումնական ուղևորության միջոցին ասորական քաղաքներում՝ անշուշտ պիտի կարողանար սովորել, գոնե սահմանափակ աստիճանով։ Չորրորդ՝ եթե Աստվածաշնչի առաջին թարգմանութունը եղավ ասորերենի վրայից, և Մեսրոպն է, որ

սկսեց այդ թարգմանութիւնը («Առակաց գիրք»), ուրեմն գիտե՞ր  
ասորերեն, և այն ո՛չ թե սահմանափակ կներպով, այլ հասկանալ  
ու թարգմանել կարողանալու շափ:

6

Այս բողոքից երևում է, որ Մեսրոպը գիտե՞ր հունարեն, պարսկերեն և ասորերեն լեզուները: Այժմ քննենք, թե արդյոք գիտե՞ր նաև այն երկու դրացի ազգերի լեզուները, որոնց մատենագրութեան էլ սկիզբն ու հիմնադիրը դարձավ, այսինքն վրացերեն ու աղվաներեն:

Մեսրոպն ամենևին չգիտեր Աղվանից լեզուն, այնքան որ մինչև իսկ նրանց ունեցած ձայների վրա էլ գաղափար չուներ. և երբ պետք եղավ նրանց այբուբենը հնարել, Բենիամին անուն աղվան անձն է, որին քննում և հարցափորձում է Մեսրոպը և նրանից տեղեկանալով՝ կազմում աղվաներեն այբուբենը. «Յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա այր մի երէց աղուան ազգով, Բենիամին անուն. և նորա հարցեալ և քննեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս, ըստ վերնապարզև կորովի սովորութեան իւրում. և յաշողութեամբ Քրիստոսի շնորհացն, կարգեալ և հաստատեալ կշռէր» (Կորյուն, էջ 18):

Վրացերենի մասին սակայն այսչափ տգետ չէր Մեսրոպը. այս լեզվի վրա ունե՞ր գոնև այնչափ գաղափար, որ կարողացավ առանց ուրիշի օգնութեան կազմել վրացերեն այբուբենը՝ Սյունյաց դավառում, և այս այբուբենը կազմելուց հետո՝ «զրել, կարգել և օրինօք յարդարել», անշուշտ վրացերեն լեզվով. «Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոգ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի և վասն բարբարոսական կողմանն. և առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին. ըստ շնորհեցելոյ նմա ի Տեառնէ: Գրէր, կարգէր և օրինօք յարդարէր» (Կորյուն, էջ 15): Բայց սրանից ավելին չէր կարող իմացած լինել Մեսրոպը, քանի որ վրաց մեջ գործելու ժամանակ պետք ունեցավ Զաղա անուն թարգմանին:

7

Տարոնում մի ժամանակ կրթութիւն ստանալուց հետո, Մեսրոպը անցավ Վաղարշապատ մայրաքաղաքը և պաշտոնի մտալ Խոսրով Գ թագավորի արքունական դիվանում, Առավան անուն անձի հազարապետութեան ժամանակ:

Պատմագիրների խոսքերից պարզ չի երևում, թե ինչ էր հաստ-



կապես Մեսրոպի պաշտոնը: Մինչդեռ Խորենացին համարում է միայն արքունական քարտուղար (ի դրան արքունի կարգեալ քարտուղար (Խորենացի, Գ, խէ), ընդհակառակը Կորյունը, և նրանից առնելով նաև Փարպեցին, տալիս են նրան զանազան պաշտոններ. «կացեալ յարժունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ հազարապետութեամբն աշխարհիս հայոց Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհակաց կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն... հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն» (Կորյուն, էջ 6—7):— «Զինուորեալ ի դուռն Հայոց արքային Խորովայ, կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրացն... և սպասաւորեալ անդ ամս» (Փարպեցի, էջ 34): Սրանցից հետևում է, թե Մեսրոպը է՛ր արքունի դիւանի քարտուղար, սպասավոր թագավորին և իշխաններին, զինվորական պետ և զորքերի կառավարող: Անշուշտ Մեսրոպը այսքան պաշտոններ միասին չէր կարող ստացած լինել կամ կատարել, ուստի պետք է ենթադրել, որ պարզազույն վիճակից կամացկամաց բարձրացել է: Եթե «թագավորին և իշխաններին սպասավոր» բացատրութիւնը ընդհանուր մտքով առնենք, կարող ենք Մեսրոպին համարել նախ եղած արքունի դիւանապետ և մի ժամանակ հետո՝ նաև զինվորական աստիճանավոր: Այսպես է ենթադրել տալիս նաև Կորյունի բացատրութեան ձևը, երբ նախ իբր դիւանադպիր նշանակելուց հետո, նոր բաժնով սկսում է «տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհակաց կարգաց...»: Սրանով հասկացնել է ուզում, թե քանի միայն հունարենի էր տեղյակ, դիւանադպիր էր միայն, իսկ երբ հետո նաև «աշխարհակաց» (իմա՝ զինվորական) կարգերն էլ սովորեց, բարձրացավ զինվորական պաշտոնի: Երկու պաշտոններումն էլ հավատարմութեամբ կատարում էր թագավորի և իշխանների հրամանները (սպասաւորէր):

## 8

Այստեղ նկատենք, թե Մեսրոպը արքունական դիւանադպրի պաշտոնումն էլ իր ուսումը շարունակեց այս կամ այն ձևով: Կորյունը ցույց է տալիս, թե սովորեց զինվորական արվեստը և, ինչպես հետո պիտի տեսնենք, նաև կրոնական գիտութիւններ: Իսկ Կարապետ Սասնեցին, որ բավական ճոռոմաբան ներբողագիր է, իր նախորդների խոսքերը ընդարձակելով և իրենից էլ նորանոր հավելումներ անելով՝ հետևյալ ծրագիրն է տալիս Մեսրոպի ուսման ընթացքին. «Եւ ստանալով զարհեստ արհեստատրաց և զիմաստս իմաստնոց, և բովանդակեալ վեց մասամբ զբողորն իմաստ,

այլ և զմերս իսկ. և փարթամացեալ համայնիս աստուածայնով և ներշնչականաւ (էջ 24): Այս խոսքերից պարզ է, որ Մեսրոպի սովորած գիտությունների մի մասը կրօնական ճյուղին էր պատկանում, իսկ մյուս մասը՝ իմաստասիրության և գրականության զանազան ճյուղերին:

Սրանցից նվազ անհասկանալի չէ նաև հաշորդ ծրագիրը, որ Սասնեցին (էջ 29) տալիս է դարձյալ Մեսրոպին. «Եւ զի՞նչ գործառնութիւն նորա՝ դիւանն արքունի, մանաւանդ եթէ զլիաւորութիւն դիւանին. զի նա միայն էր հմուտ լատինական մատենին և արիական տառին և փիլիսոփայեաց թուականին»:

Այս բոլորը Սասնեցու եռանդի և երևակայության արդյունքն է:

9

Արդարությամբ և բարեխղճությամբ կատարեց Մեսրոպը իր պալատական պաշտոնները: Ըստ Փարպեցու (էջ 34). «Եւ սպասաւորեալ անդ ամս կարգաւորապէս առանց եպիրանաց»: Կորյունը առանձնապէս սիրելի է ցույց տալիս նրան զինվորներին. «ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն» (էջ 6): Սրանից մի քիչ ավելի գովեստով է խոսում Փոքր Կորյունը (էջ 6). «Եւ հմուտ եղեալ աշխարհակեաց վարուց ի զինուորական կարգս և յառաջադէմ և սիրելի էր ամենեցուն, մեծամեծաց և փոքունց, իմաստութեանն առաջնորդեալ յիրաւունս ամենայն»: Այնպէս որ ըստ Խորենացու՝ Մեսրոպի հրաժարումից հետո շատ նեղվեց Վոսմշապուհ՝ քարտուղարի բացակայության պատճառով. «Ոչ փոքր ինչ կրէ աշխատութիւն յաղագս քարտուղարի. զի մինչև զնաց Մեսրոպ յարքունական դրանէն՝ ոչ զոք ի ճարտարաց գտանէր անդ ի զըպրաց» (Խորենացի, Գ, ծր): Կամ ավելի եռանդուն բացատրությամբ՝ ըստ Սասնեցու (էջ 40). «Զինչ և զինաւորացն դատիլ ի նմանէ, և զօրավարին պակասումն ի զօրաց նորա. և զահաւորացն զերիլ ի նմանէ. և որքան տիրութիւն լինէր թագաւորին ի գալն նորա. քանզի բազում պակասութիւն լինէր և կորուստ արքայական հարկին՝ յաղագս ոչ գերելոյ զգիրս և զհամարս նոցա»:

Բայց սրանցից ավելի և շատ ավելի գովեստով է խոսում Կարապետ Սասնեցին (էջ 28—31). նա ներկայացնում է Մեսրոպին իբրև մի անձ, որ թեև ապրեց արքունիքի բազմապիսի ապականությանց և զայթակղիչ կյանքի մեջ, բայց հեռու մնաց բոլորովին այդ ապականություններից, ապրեց բոլորովին մաքուր և անարատ կյանքով, և իր ամբողջ կարողությունը գործ դրեց խեղճերի և զրկյալների պաշտպանության համար: Ընթերցողին ենք թողնում կար-

դալ Սասնեցու այդ էջերը՝ մի կողմից ծանոթանալու համար պա-  
լատի ապահանջալ բարձրին և մյուս կողմից՝ Մեսրոպի մաքուր  
վարքին:

10

Այսպիսի բարեպաշտ և առաքինի մի անձ՝ զարմանալի չէ, որ  
շուտով տար իրեն կրոնական գրքերի ընթերցանության, նրանց  
մեջ փնտրելով իր երկնասլաց հոգու հագուրդը և վշտահար սրտի  
սփոփանքը աշխարհային ցավերի ու վշտերի մեջ: Քանի կարդում  
էր աստվածային գրքերը՝ հետզհետե ավելի էր լուսավորվում իր  
միտքը և իր հոգին հետզհետե ավելի հեռու էր փախչում աշխար-  
հային ունայն մեծություններից: «Եւ անդէն ուշ եղեալ փութով ըն-  
թերցուածոց աստուածեղէն գրոց, որով առժամայն լուսաւորեալ և  
թեւամուխ միջամուխ յաստուածատուր հրամանացն հանգամանս. և  
ամենայն պատրաստութեամբն զանձն զարդարեալ, հարկանէր զիշ-  
խանացն սպասաւորութիւնան» (Կորյուն, էջ 7):

Վերջապես տեսաւ, թե ունայն է այս աշխարհը, անցավոր է  
ամեն մարմնավոր մեծություն, պատիւ, իշխանություն և փառք,  
թողեց իր աշխարհային պաշտոնները, հանեց իրանից իշխանական  
ցանկությունները և քրիստոնեական խաչն առնելով ուրը՝ կրոնա-  
վոր ձեռնադրվեց և մի վանք քաշվեց (ըստ Ավգերյանի, «Լիակա-  
տար վարք սրբոց», Ծ, էջ 284՝ Գողթն գավառում): Վանքում նա հե-  
ռացած էր աշխարհային զբաղմունքներից և իր անձը միայն աստ-  
վածային գործերի նվիրելով՝ իր բազմաթիւ վանական եղբայրների  
մեջ՝ դարձել էր ամենից ընտիրն ու սրբակյացը:

Բայց Մեսրոպի պես սրբակրոն կրոնավորի համար դեռ վանքն  
էլ բավական չէր. նա ուզում էր ավելի հեռանալ աշխարհից, ավելի  
ինքնամփոփվել ու տալ իր անձը միայն և միայն երկնայինին: Ուս-  
տի շուտով հեռացավ նաև վանքից և մտավ ճգնավորական կարգը.  
«Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական շափուցն՝ ի ծառայութիւն  
Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկանայր այնուհետև զիշխա-  
նակիր ցանկութիւնսն. և առեալ զխաչն պարծանաց, ելանէր զկնի  
ամենակեցոյց խաչելոյն: Եւ հաճեալ հրամանացն ի խաչակիր գուն-  
դըն Քրիստոսի խառնէր, և անդէն վաղվաղակի ի միայնակեցական  
կարգ մտանէր» (Կորյուն, էջ 7):

Վանականությունից ճգնավորության անցնելը Կորյունի այս  
տողերի մեջ շատ պարզ չէ, բայց ավելի հստակ կերպով է գրում  
Փարպեցին (էջ 34). «Յետ այնորիկ տենչացեալ կարգի վանակա-  
նութեան՝ երթալ ի վանս բազմութեան եղբարց, և ընկալեալ զկեր-

պարանս վանականութեան՝ լինէր ընտիր յամենայնի և երևելի. հրա-  
ժարէր յամենայն աշխարհազբօս երկրաւոր զբաղմանց: Ապա յա-  
նապատական կրօնս փոխեալ՝ զարմանալի երևէր և հռչակատրօ:

Գեղեցիկ է նկարագրում Սասնեցիին Մեսրոպի այս մտածու-  
թյունները, աշխարհային կյանքի արհամարհանքը և ճգնաժողովական  
կյանքի դիմելը: «Լքեց ամեն բան,— ասում է նա,— կողզանք հա-  
մարեց և զլորման ու մահու պատճառ՝ ոսկին ու արծաթը, ակներն  
ու մարգարիտները, բեհեզն ու կերպասը, սանձազարդ երիվարներն  
ու երկարամազ շորիները, զենքերն ու զարդերը, որոնք այս կեն-  
ցաղի զբոսանքն են: Այսպես նաև թագավորների փառքը և իշխան-  
ների պատիվը և ռամիկների գովասանքը, ծաղկահոտ գինիները և  
արվեստավոր մատուցիկները, քաղցրածայն տավիղները և ուշա-  
տար քնարները և գողարիկ կերակուրները և սրանց նմանները, որ  
հիմարներն են ցանկանում ձեռք բերել այս կյանքում և ունեցող-  
ներն էլ երանի են տալիս...»:

Խորենացիին Մեսրոպի այս մտադրության մեջ մի քիչ ավելի  
հեռատեսութուն է դնում և նրա հրաժարումը աշխարհային կյան-  
քից համարում է ո՛չ թե միայն հասարակ կյանքի ցավերից հեռա-  
ցում, այլ ասում է. «Տեսեալ թէ ի վերջ հասեալ է թագաւորութիւնն  
Հայոց, և զխոտութիւնն նիւթ իւրոյ համբերութեանն գտեալ Մես-  
րոպայ... սա սիրեաց զմիակեցութեան զվարս, որպէս ասաց ոմն.  
Ի նաւահանգիստ փութայ նաւ խոտվեալ, և անձն ժուժկալ խնդրէ  
զանապատ» (Խորենացի, Գ, խէ):

## 11

Վերջացնելու համար այս գլուխը, պետք է քննել նաև այն խըն-  
դիրը, թե երբ մտավ Մեսրոպը արքունական պաշտոնի մեջ. սրա-  
նից է հետևում նաև ներսեսի մոտ աշակերտելու վճռական հեր-  
քումը, ինչպես ասացինք վերը:

Ըստ Խորենացու՝ Մեսրոպն արքունի քարտուղարության պաշ-  
տոնի անցավ ներսեսի մահից հետո. «Ուսեալ առ Մեծին ներսեսի,  
և յետ ելից նորա յաշխարհէ՝ ի դրան արքունի կարգեալ քարտու-  
ղար» (Խորենացի, Գ, խէ): Այսպես պիտի լինի նաև Մեսրոպ երեցի  
հաշվով (էջ 83, 110), քանի որ Մեսրոպը մինչև ներսեսի մահը  
նրան գործակից և նրանից անբաժան էր, և քանի որ ներսեսի մըը-  
տական ճամբորդությանց ժամանակ Մեսրոպն էլ նրա հետ էր, բնա-  
կանաբար չէր կարող պալատումն էլ քարտուղարությամբ կամ դին-  
վորների կրթությամբ պարապել. ուստի հարկ է ընդունել, թե այս  
պաշտոնները ստանձնեց ներսեսի մահից հետո:

Բայց այսպես ընդունելով՝ մի տարօրինակ դրուձյուն է ստեղծվում Մեսրոպի համար: Ներսեսի մոտ աշակերտության ժամանակ, ինչպես տեսանք, Մեսրոպը ո՛չ թե պարզ մի աշակերտ էր, այլ ինչպես Մեսրոպ երեցն է նկարագրում, ճգնաւոր կրօնավոր: «Ընդ նմա և աշակերտն իւր Մեսրոպը, որ անուանեցան Մաշդոց. ամենայն կրթութեամբ հոգեւոր իրաց զանձնն տուեալ, բազում և անհեշտական իրաց և անհանգիստ գիշերային, զհարկ քնոյ յոտնաւոր տըքնութեամբ ի թօթափել ական վճարէր, ոչ սակաւ ժամանակս, այլ յոլովս» (էջ 83): Այս ճգնական կրօնական կյանքը մինչև ներսեսի վախճանը կատարելուց հետո, Մեսրոպը հանկարծ զինվորական ասպարեզն է մտնում, բայց հետո դարձյալ զինվորականը թողնելով՝ վերստին կրօնական ասպարեզն է ընդգրկում: Որպեսզի կարենար զինվորական ասպարեզը մտնել, պետք է անշուշտ ենթադրել, թե Մեսրոպ թոթափել էր իրենից Քրիստոսի լուծը և նորից աշխարհական էր դարձել: Եւ ահա այս է անկարելին. այսպիսի փոփոխամտութիւն, այսպիսի ուխտազանցութիւն մենք չենք կարող վերագրել Մեսրոպին:

Մեսրոպին ներսեսի աշակերտ համարելը առհասարակ շատ է խանգարում կենսագրութեան ընթացքը և տեղիք է տալիս զանազան թյուր ենթադրութիւնների, որոնք ո՛չ պատմագիրների խոսքերով կարող են հաստատվել և ո՛չ էլ ուղիղ բանադատութեամբ: Այսպես, «Սոփերք»-ի հրատարակիչները (Զ, էջ 137) և Ավգերյանը («Լիակատար վարք սրբոց», Ե, էջ 282) համարում են, թե Մեսրոպը ներսեսի նոտարն էր. մահվան ժամանակ ներկա գտնվելով՝ գրի էր առել նրա վերջին խոսքերը, աղոթքն ու գուշակութիւնները, թեև գրել էր նախ նրա կենսագրութիւնը՝ իհարկե հունարեն և հետո թարգմանել հայերենի և կամ թե իր աշակերտներից մեկին պահելով՝ հայերեն գրել էր տվել: (Այս մասին տե՛ս նաև Զարբհանալյան, «Հայկական հին դպրութեան պատմութիւն», 1897 թ., էջ 563):

Թե ներսեսի կենսագրութիւնը չի կարող լինել ո՛չ Մեսրոպի և ո՛չ էլ նրա աշակերտներից մեկի գրութիւնը՝ ցույց կտանք հետո՝ ժն գլխում. թե նա նրա քարտուղարը չէր կարող լինել՝ բավական պարզ է այն հանգամանքից, որ այսպիսի երեւելի մի պաշտոն հիշատակել անկարելի է որ մոռանար Կորյունը և վերջապես անկարելի է, որ Մեսրոպը ներսեսի քարտուղարը լիներ, որովհետև սրանով դեռ մի քիչ ավելի է բարձրանում այն կրօնական աստիճանը, որ տրվում է Մեսրոպին և որ թողնելու համար պետք է ուխտադրուծ լիներ նա:

Վերջապես կա տարիքի անհարմարութիւնը: Ներսեսը մեռել է 373 թվականին. Մեսրոպը մեռավ 439-ին, և եթե ենթադրենք նույ-

Եիսկ, որ և ապրել է 80 տարի, ուրեմն ծնված կլինի 359 թվա-  
կանին, հետևաբար ներսեսի մեռած տարին պիտի լիներ 14 տարե-  
կան, և եթե զոնե 2 տարի ծառայած լիներ ներսեսի մոտ իբրև քար-  
տուղար, ուրեմն կաթողիկոսական քարտուղարութեան պաշտոնի  
անցած պիտի լիներ 12 տարեկան հասակում: Բայց մենք ենթա-  
դրում ենք, որ Մնարսյը ծնված պիտի լինի 364 թվականին, հետե-  
վաբար ներսեսի մեռած ժամանակ պիտի լիներ 9 տարեկան, իսկ  
նրա մոտ քարտուղար մտնելու ժամանակ՝ 7 տարեկան! (Այսպես է  
հաշվում նաև եալաթյանցը, «Арм. Аршакиды», էջ 317 և մերժում  
Մաշտոցի քարտուղարությունը ներսեսի մոտ):

## Գ Լ Ո Ւ Ե Ր

### ԱՌԱՋԻՆ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ

(Լուսավարչական Գործունեություն)

#### 1

Ճգնավորությունը Հնդկական աշխարհի ծնունդ է: Մի կողմից  
չորրորդ դասակարգի մարդիկ և ստրուկներ, նեղված բարձր դասա-  
կարգերի զրկանքներից, տանջանքից ու տառապանքից, և մյուս  
կողմից թուլամորթ բուդդայական ստորին աստիճանի կրոնավոր-  
ներ, փախչելով գործից ու աշխատանքից, քաշվում էին անտառ-  
ները՝ ապրելու համար այնտեղ: Երկրի կլիման ոչ միայն հանդուր-  
ժում, այլև քաջալերում էր այս կյանքը: Ո՛չ բնակարան էր պետք  
և ո՛չ հագուստ. ծառերից քաղված մի կոկոս կամ մի բուռ բանան  
բավական էր սնունդի համար:

Երբ քրիստոնեությունը հիմնվեց, բուդդայականների օրինա-  
կով նգիպտոսի տառապյալ քրիստոնյաներն էլ անցան ճգնական  
կյանքի: Այստեղ էլ երկիրը հանդուրժում էր ճգնությունը՝ իր տաք  
կլիմայով և ձրի արմավով:

Նգիպտոսի օրինակին հետևեցին մյուս երկրների քրիստոնյա-  
ները. բայց կլիմայի անհարմարությունը չքաջալերեց այդ և ճրդ-  
նավորությունը մնաց շատ սահմանափակ, մինչև որ իսպառ խա-  
փանվեց:

Ճգնավորությունը 5-րդ դարի հայոց մեջ էլ անսովոր երևույթ  
չէր: Չհաշվելով ծուլերին ու թուլամորթներին, նրան էին դիմում  
ո՛չ միայն ուսումնական ու կրթված հոգևորականներ, այլև ազնու-  
վականներ ու իշխաններ: Բայց եթե վերջինները միայն աշխար-

հային կյանքի ցուրտ արհամարհանքի պատճառով էին հեռանում քաղաքներից, ընդհակառակը, ուսումնատենչ կրոնավորների ճգնավորությունը ավելի բարձր նպատակ ունեւր: Սրանք քաշվում էին լեռներն ու քարայրները այն նպատակով, որ աշխարհային զբաղմունքներից ազատ մնալով՝ կարողանային իրենց անձը բոլորովին նվիրել աստվածային գիտության, հոգևոր կրթության և կրոնական բազմաթիւ գրքերի մտադուր ընթերցանության: Ծգնավորական կյանքը նրանց համար այն մարզարանն էր, ուր մարմինը զանազան շարքաշություններով վարժվելով՝ ընդունակ էր դառնում տուկալու ամեն նյութական գրկանքի, նեղության ու տանջանքի: Այս տեսակ ճգնավորների մենակեցութունը ցմահ շէր լինում, այլ այնչափ միայն, որչափ բավական էր մարմինը հաղթահարելու, միտքը ուսմունքով կրթելու և հրգին ազնվացնելու համար: Եվ այս բանը ձեռք բերելուց հետո՝ ճգնավորները թողնում էին քարայրը, մըտնում էին դարձյալ աշխարհ, և քարոզությամբ ու վարդապետությամբ կնքում իրենց արդյունավոր կյանքը:

2

Ահա այսպես էր նաև Մեսրոպի ճգնավորությունը, որի վրա բավական տեղեկութուն են տալիս Մեծ և Փոքր Կորյունը, և հետնաբար՝ Կարապետ Սասնեցին: Այս հեղինակների խոսքով Մեսրոպը շատ խստամբեր ճգնավորական կյանք վարեց. նա վարժեցրեց իրեն բոլոր տեսակի շարքաշությանց. այսպես «միաւորութիւն», այսինքն՝ ամեն մարդուց հեռու, բոլորովին մենակ ապրելը, լեռնակեցութուն, դիմանալ քաղցի և ծարավի, քաղցած ժամանակ ուտել միայն լեռնային խոտեր, փակվել, մնալ խավար ու անլույս տեղերում, խիստ ցուրտ ժամանակ մնալ մերկ, ուրիշ օրեր հագնել միայն խարազն ու քուրձ, փոխանակ անկողնում քնելու՝ տարածվել շոր հողի վրա, կտրել քունը և գիշերային հանգիստը, և եթե այդ կարիքը հաղթե՛ր մարմնին՝ ոտքի վրա միայն երկար կանգնած մնալով՝ մոռանալ և այլն: Ահա Կորյունի խոսքերը. «Բազում և ազգի ազգի վշտակեցութիւնն ըստ աւետարանին կրէր ամենայն իրաց: Ամենայն կրթութեամբ հոգևորացն զանձն. տուեալ միաւորութեամբ, լեռնակեցութեան, քաղցի և ծարաւոյ և բանջարաճաշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնազգեստ և գետնատարած անկողնոց: Եւ բազում անգամ զհշտական հանգիստ գիշերոյն և զհարկ քնոյ յոտնատր տքնութեանն ի թօթափել ական վճարէր» (Կորյուն, էջ 7): Գրեթե նույն բառերով նաև Փոքր Կորյունը (էջ 6—7):

Ավելի գեղեցիկ է նկարագրում Սասնեցին, որի խոսքով Մես-

բազը ոչ միայն մարզեց իր մարմինը շարքաշուքյամբ, այլև բարձրացրեց հոգին կրոնական կրթությամբ, պարապեց միշտ ս. Գրքի բնթերցանությամբ, սանձեց լեզուն՝ որ ունայն խոսքերից հետո մնա, բերանը քնար դարձավ, ատամները լար, շրթունքը մատներ, լեզուն կնատաոց, և հոգին Աստուծու հոգու հետ խառնելով՝ երգեց Սուրբ Երրորդության փառքի համար (տճ՝ ս էջ 33—35):

3

Այսպես Մեսրոպը բավական ժամանակ իրեն մարմնական ու հոգեկան կրթության նվիրելուց հետո երբ զգաց, թե հասավ ցանկալի աստիճանին, այն ժամանակ սկսեց աշակերտներ հավաքել և վարժեցնել նրանց մի կողմից ճգնական կյանքի և մյուս կողմից ավետարանական վարդապետության: Բայց այս դպրոցը քաղաքներում կամ վանքերում չէր, այլ, ինչպես Կորյունի խոսքերից երեւում է, այն անապատներում և քարայրներում, ուր ճգնում էր Մեսրոպը մինչև այն ժամանակ, «եւ դայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս, և դտեալ նա զոմանս՝ յինքն յարեցուցանէր աշակերտեալ նմին սովորական ավետարանութեան» (Կորյուն, էջ 7): Այսպես ուրեմն, այս նորեկները ո՛չ միայն մի տեսակ ճգնակիցներ էին Մեսրոպին, այլև աշակերտներ, որոնց վրա փորձեց Մեսրոպն առաջին անգամ իր վարդապետական զործունեությունը:

Անանունն այս աշակերտների թիվը քառասուն է գնում. «Եւ երանելին Մեսրոպը ունելով ընդ ինքեան աշակերտեալս անձինս քառասուն խարաղնազգեստս և բոկազնացս, տքնելով միշտ աղօթիւք ի լերինս և ի փապարս խնդրելով յԱստուծոյ վասն իրացս այսոցիկ» (էջ 9):

Մերժելով ներսեսի մոտ աշակերտությունը, մերժում ենք նաև բոլոր այն կապակցությունները, որ ենթադրվում են երկուսի միջև՝ հիմնվելով նույն աշակերտության վրա. մերժում ենք Մեսրոպի նախավոր կրոնավորությունը և սրան իբր բնական հետևանք՝ Մեսրոպի ուխտազանցությունը. վերջապես մերժում ենք ընդունել, թե Մեսրոպի քաղաքական պաշտոնը հաջորդություն կամ հետևանք էր ներսեսի մահվան:

Որչափ էլ որ տաք էր Մեսրոպի սերը դեպի անապատական կյանքը, այնուամենայնիվ նա չէր կարող սառնությամբ վերաբերվել իր ժողովրդի խավար ու անկյալ վիճակին: Տեսել էր նա, թե ի՞նչպես այդ ժողովուրդը խոր տգիտություն և հեթանոսական նախապաշարմունքների մեջ խաբխափում էր: Մտածելով ժողովրդի մասին, իր հոգին զայրանում և իր սիրտը բարի նախանձով բոր-



քողովում էր: Միթե ինքը միայն իր անձի՞ կրթությամբ պիտի զբաղվեր. փոխանակ իր հոգին միայն կրթելու, ավելի հաճելի գործ կատարած չպիտի՞ լիներ, եթե ամբողջ ժողովրդի հոգին կրթեր. «Ո՛չ ապաքե՛ն զբախտը մի տնկից ավելի է և բովանդակ երկիրնքը՝ մի հատիկ աստղից» (Սասնեցի, էջ 37—38):

Այսպիսի մտածությամբ, հոգեկան այսպիսի ներշնչությամբ, լայն հասարակության օգտակար լինելու ցանկությամբ լցված՝ հրածեշտ տվեց Մեսրոպն իր լեռներին, իր ճգնական քարայրներին, և իր հետ առնելով իր աշակերտներին ու ընկերներին, Գողթան գավառի բարբարոս ու անկիրթ տեղերն իջավ քարոզության համար. «Առեալ այնուհետև երանելոյն զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան» (Կորյուն, էջ 7):

#### 4

Այստեղ հարց է ծագում, թե ո՞ր և ո՞ր գավառումն էին այն լեռներն ու քարայրները, որտեղ Մեսրոպն այնքան ժամանակ ճգնական կյանք վարեց: Ըստ խորհնացու, այդ վայրը Գողթն գավառումն էր. «Եւ երթեալ ի գաւառն Գողթան բնակէ, զմիայնակեցութեան վարս ստացեալ» (խորհնացի, Գ, խէ): Սրանից է առնում նաև Ստեփանոս Օրբելյանը, որ Մեսրոպի ճգնավայրը համարում է Գողթան գավառը, Սիսական կողմը. «Կամեցաւ թաքուցանել զինքն ի խոռվարար կենցաղոյս. և առեալ զձև միայնակեցութեան՝ փութայր ի նաւահանգիստն: Եւ եկեալ ի Սիսական կողմն՝ հաճեցաւ բնակել ի գեղեցիկ գաւառն Գողթան, և խստամբեր ճգնութեամբ զբազում աւուրս առաքինացեալ» (զլուի ԺԴ, էջ 37—38): Բայց ո՞չ Կորյունը, ո՞չ Փարպեցին և ո՞չ էլ Սասնեցին հիշում են Գողթն գավառը իբրև ճգնավայր Մեսրոպի: Կորյունի այս շատ պարզ վկայությամբ (տե՛ս վերը) Մեսրոպ ճգնական կյանք վարելը վերջացնելուց հետո՞ միայն հավաքեց իր աշակերտներին և իջավ Գողթն գավառը. ուստի պետք է կարծել, թե այստեղ չէր իր ճգնարանը: Բայց Կորյունի խոսքից կարելի է հետևեցնել նաև, որ եթե Մեսրոպի ճգնավայրը Գողթն չէր, նրանից էլ շատ հեռու չէր. այնպես որ, խորհնացու վկայությունը, որ Կորյունի հիշյալ խոսքի վրա միայն հիմնված մի ենթադրություն է, ճշմարտությունից շատ հեռու չէ:

#### 5

Երբ Տրդատի օրով քրիստոնեությունը քարոզվեց, ամեն տեղ անմիջապես շրնդունեցին. ամենից ավելի համակիր եղան այս շարժման Այրարատ գավառն ու արքունիքը. բայց հեռավոր գա-

վառներում առ երեսս միայն ընդունվեց նոր կրոնը: Հին կրոնի հետքերը, հեթանոսական բազմաթիվ սովորություններ մնացին: Երբ հունական ազդեցությունը թուլացավ և պարսկական ազդեցությունը զորացավ Հայաստանի վրա, հին կրոնի այդ թաքուն հետքերն էլ հետզհետե ավելի ազատ երևան եկան: Ոմանք նույնիսկ հայտնի կերպով սկսեցին հետևել նախկին հեթանոսական պաշտամունքին: Պատմագիրներն միարան վկայությամբ այս վիճակումն էին գտնելու մահապապեան Հայաստանի Գողթան և Սյունյաց գավառները. «Զի ի նուազիլ թագաւորութեանն Հայոց համարձակեցաւ ամենայն ոք ըստ իւր բարուց ընթանալ, որպէս և աստ. զի աղանդն հեթանոսական դեռ ևս ղօղեալ կայր ուրնք ուրնք ի գաւառն Սիսական և ի Գողթն, այժմ համարձակեալ երեւցուցին... ժանեաւ զկրկին երեւելի աղանդոյն կուսպաշտութեան» (Օրբելյան, ԺԳ): Նույնպէս ըստ հորինացու (Գ, խէ), «և որ ի նմա ղօղեալ աղանդն հեթանոսական, թագուցեալ յաւուրսն Տրդատայ մինչև զայն ժամանակս, և ապա յայտնեցաւ ի վատթարել թագաւորութեանն Արշակունեաց».— «Փանդի մնացեալ արմատ դառնութեան հեթանոսական աղանդոյն»<sup>1</sup> ի ժամանակի անիշխանութեանն ի վեր երևեալ ի հուզումս տարածեցաւ (հորինացի, Գ, 4):

6

Մերոպը իր աշակերտների հետ դիմելով Գողթն գավառը, իսկույն սկսում է քարոզչության, նպատակ ունենալով ջնջել հեթանոսության վերընձյուղած բողոքչները և քրիստոնեության լույսը տարածել ամբողջ գավառում: Մերոպին ընդառաջ է գալիս Գողթն գավառի իշխանը և սիրալիր ընդունելություն ցույց տալիս նրան: Կորյունն այս իշխանի անունը թեև հայտնապես չի հիշում այստեղ, բայց մի քանի էջ հետո, Մերոպի երկրորդ քարոզչության ժամանակ, նշանակում է Շարաք (էջ 14): Խորենացին (Գ, խէ) սրա տեղ ունի Շարիք. («աղանդն... զայն երարձ օգնականութեամբ իշխանի գաւառին, որում անուն էր Շարիթ»): Օրբելյանը ճանաչում է Շարիքա անունով. «Օգնութեամբ բարեպաշտ իշխանին Սիսեաց վաղինակայ... նմանապէս և զԳողթն սրբեալ ի ձեռն իշխանին նորա Շարիթայի» (Օրբելյան, ԺԳ). և վերջապէս Փոքր Կորյունը դնում է Շամրիք. «Երթալ ի Գողթն, որում ընդ առաջ լինէր իշխանն Շամ-

<sup>1</sup> Չամչյանը («Պատմութիւն Հայոց», Ա, էջ 765) կարծում է, թե Գողթն գավառի այս աղանդը նույն էր բորբորիտոնների աղանդի հետ, և թե երկուսն էլ արևորդիներն էին, այն է խառնուրդ օտարազգի և ոչ հայ հեթանոսների, զրազատական հավատալիքներով այլափոխված:

բիթ»։ Այս շորս ձևերից (Շարաթ, Շարիթ, Շարիթա, Շամրիթ) լավագույնն է առաջինը, որ տալիս է Կորյունը, ըստ որում ծագում է ասորերեն Sabadā բառից և միևնույն է «շարաթ» օրվա անվան հետ (հմմտ. ուրբաթ և կիրակի օրվա անունները՝ նաև իբրև անձի անուն)։

Շարաթ իշխանի մասին գովեստով են խոսում Մեծ և Փոքր Կորյունը, անվանելով նրան երկյուղած, աստվածասեր, հավատարիմ և բարեպաշտ մարդ. այսպես՝ Կորյուն, էջ 7, «Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկյուղած և աստուածասէր, ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի»։ և էջ 14՝ «հաւասարութեամբ բարեպաշտին Շարաթայ»։ Նույնպես Փոքր Կորյուն, էջ 7՝ «Իշխանն Շամրիթ, և սիրով ընդունէր որպէս զծառայ Աստուծոյ բարձրելոյ. և բարեպաշտութեամբ սպասատրէր ըստ աշակերտական հաւատոցն ի Քրիստոս»։

Ահա այս իշխանը իր ձեռքից եկած օգնութիւնը չի խնայում Մեսրոպին։ Մեսրոպն էլ իր բոլոր աշակերտներին ցրելով զավանդում և անդով անդադար քարոզութիւններ անելով, կարճ ժամանակում հաջողում է հասնել իր ցանկալի նպատակին. — վերանում են հեթանոսական սովորութիւնները, շնջվում է կոպաշտական աղանդը և ամբողջ զավառը նորից քրիստոնեական լծին է հնազանդվում։ Ե՛րեսի երանելոյն վաղվադակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զաւանդին հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց ականդելոց, և ի սատանայական դիւապաշտ սպասատրութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր» (Կորյուն, էջ 7)։

Մեսրոպի ձեռքով կատարված այս քարոզութիւնը պատմագիրները նմանեցնում են Գրիգոր Լուսավորչի քարոզութեան. և այն հրաշալիքներն ու դէերի փախուստը, որ Ազաթանգեղոսը տալիս է Լուսավորչին, այս պատմագիրներն էլ տալիս են Մեսրոպին. մինչև անգամ ոմանք կոչում են նրան «երկրորդ Լուսավորիչ» (այսպես, օրինակ՝ Հովհաննես Իմաստասեր, էջ 66 և Հայմաւորաբը)։ Ըստ Կորյունի «Ըւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ, յայտնի իսկ բնակչաց զաւառին՝ նշանք մեծամեծք երևէին, կերպակերպ նմանութեամբ դիւացն փախստական լինելով, անկանէին ի կողմանս Մարաց» (Եզնիկ, էջ 7)։ — «Ուր նշանք աստուածայինք լինէին՝ որպէս առ սրբովն Գրիգորիւ. հայածական լեալ դեւք մարմնաւոր տեսլեամբ անկանէին ի կողմանս Մարաց» (Խորենացի, Գ, խէ)։ — «Յորոյ ի ձեռն մեծամեծ սքանչելիք երևեալ, դիւաց կերպ ի կերպ լինելով՝ զաղաղակ բարձեալ յամենեցուն լսելիս հնչեցուցանէին զհալածանս իւրեանց, անկանելով ի կողմանս Մարաց»

(Փոքր Կորյուն, էջ 8):— Քրիստոնեական հասկացողութեամբ զենքի հալածական փախուստը շատ սովորական տեղիք է, իսկ հայոց մեջ այդ հալածական դեերը փախչում էին կա՛մ Կովկաս և կա՛մ Մաքսատան (հմմտ. Ազաթանգեղոս, 5ը):

Մեսրոպի գործած այս հրաշքները, ասում է Փոքր Կորյունը (էջ 8), ազդում էին աշակերտների վրա, որոնք ավելի էին լսում իրենց ուսուցչի պատմվերները. «Վասն որոյ առանել ունկնդիր լինէին աշակերտեալքն հոգեկրօն վարդապետին, վասն հաւատոց և վարուց որ նոցա ասանդեցան ի սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի գրովք սրբովք»:

Գեղեցիկ մտածութիւններ ունի այստեղ Լեոն՝ Գողթնի քարոզութեան առթիւ. «Նորից քրիստոնեութիւնը հենվում էր հրամանի, իշխող գաղազանի վրա: Կրկնվում են Տրդատի ժամանակները... Այդ դեերը, ինչպես և Գրիգոր Լուսավորչի ժամանակ, հեթանոսութեան պաշտոնյաներն ու կողմնակիցներն էին, որոնք տեղի տվին բռնութեան, ուժին և փախան» (Լեո, «Ս. Մեսրոպ», էջ 156—157): Լեոն ենթադրում է ուրեմն, որ Մեսրոպը՝ Շարաթ իշխանի օգնութեամբ՝ նյութական հալածանք է հանել հեթանոսների դեմ, բայց ինքն է ընդունում, որ այդ հալածանքը հակամայից էր, և ավելացնում է. «Հաղթութիւնը դառն տրտմութիւն էր նրա համար. հաղթողը նույնիսկ լաց էր լինում և ասում. Տրտմութիւն է ինձ և իմ սրտի ցավերը անպահաս են իմ եղբայրների և ազգականների համար: Ո՛վ գիտե, գուցե մի քանդված մեհյան կամ մի արշունաթաթախ դիակ փորփորում էր նրա լուսավոր միտքը և տանջում նրան իբրև լուռ, արշունոտ հարցեր. ինչո՞ւ այս անգթութիւնը, ինչո՞ւ այս հարկադրանքը. մի՞թե մարդը մեղավոր է, որ պաշտում է իր լավ հասկացածը»:— Եվ ահա Լեոն այստեղ է դնում դրերի գլուտի գաղափարի առաջին սաղմերը. գի՛ր տուր մարդուն, գի՛րք տուր տգետին և դա կլինի սրից ու թրից ավելի հոսկու մի միջոց՝ գիտութիւն և կրթութիւն տարածելու համար:

## 7

Գողթն գաղառը քարոզելուց և լուսավորելուց հետո, Մեսրոպն, ըստ Խորենացու, անցել է նաև Սյունյաց աշխարհը, որ գրեթե նույն դրութեան մեջ էր գտնվում, ինչ որ Գողթնը: Այստեղ էլ Մեսրոպը կատարել է նույնպիսի քարոզութիւններ և լուսավորել է երկիրը՝ Վաղինակ իշխանի օգնութեամբ: «Եւ ոչ ինչ յայնցանէ պակաս արարեալ գտանի և Սիւնեաց աշխարհին, օգնականութեամբ նորին իշխանին, որ կոչէր Վաղինակ» (Խորենացի, Գ, խէ):

Բայց այս քարոզութիւնը և լուսավորութիւնը, որ չգիտեմ Կորյուն և որ առանց քննութեան ընդունել են մեր նոր պատմագիրներէրից շատերը, գոյութիւն չունի: Այս սխալը կատարել է խորհնացիները կամ թյուրիմացութեամբ Կորյունի պատմածը սխալ հասկանալով և կամ դիտմամբ աղճատելով այն: Կորյունն արդարև գիտեմ Սյունյաց աշխարհի քարոզութիւնը Գողթն գավառի քարոզութիւնից անմիջապէս հետո, դարձաւ Մեսրոպի ձեռքով, բայց այս բանը դժնում է ո՛չ թէ Մեսրոպի առաջին քարոզչական գործունեութեան ժամանակ, այլ գրերի գլուտից հետո, երկրորդ քարոզչական գործունեութեան ժամանակ. այնպէս որ թեև Գողթն գավառը բախտունեցավ երկու անգամ վայելելու Մեսրոպի քարոզութիւնը, սակայն նրա սահմանակից Սյունյաց գավառը՝ միայն մեկ անգամ (համտ. Կորյուն, էջ 14): Կորյունը (էջ 14—20) շատ մանրամասն կերպով պատմում է Մեսրոպի երկրորդ քարոզչական գործունեութիւնը. մյուս պատմագիրները աշխատում են ըստ կարելոյն համառոտել այն. օրինակ՝ Փարպեցիներ և Փոքր Կորյունը ոչինչ չեն ասում այս ընդարձակ ճանապարհորդութեանց մասին. Փարպեցիներն իսկ խորհնացիներն մի մասը կրճատելով՝ կազմում է իր Կ գլուխը, Վրաց և Աղվանից լուսավորութիւնն էլ, որ նույնպէս երկրորդ քարոզչական շրջանին է պատկանում, մյուսներից բաժանելով՝ դնում է առանձին գլխով (=ՄԳ): Բայց պետք է նկատել, որ Սյունյաց լուսավորութիւնը չի գտնվում խորհնացու Կ գլխում, մինչդեռ Գողթն գավառի երկրորդ քարոզութիւնը կա. ուստի և պետք է ասել, թէ Սյունյաց քարոզութիւնը միայն տեղափոխութիւն է կրած խորհնացու մոտ՝ փոխադրվելով նրա ԽԸ գլուխը:

Սակայն Օրբելյանը, որ միջոց չունի պատմագիրների տարբերութիւնները ճշտելու, նկատելով, որ Սյունյաց մի լուսավորութիւն կա խորհնացու մոտ առաջին քարոզչական գործունեութեան ժամանակ, նույնպէս Կորյունի մոտ երկրորդ քարոզչութեան ժամանակ, հետեցնում է, թէ Սյունիքն էլ բախտ է ունեցել երկու անգամ լուսավորութիւն վայելելու. Ուստի և միջին ճանապարհ բռնելով, պատմում է նախ (գլուխ ԺԴ)՝ առաջին քարոզութիւնը Մեսրոպի ձեռքով, և երկրորդ (գլուխ ԺԵ)՝ երկրորդ քարոզութիւնը, բայց վերջինի մեջ ամեն դեր տալով Մեսրոպի աշակերտ Անանիա Կալիսկոպոսին: Ավելի ծանր մի փոփոխութիւն, որ Օրբելյանը գիտակցաբար մտցրած պիտի լինի, այն է, որ Գողթն գավառում հիշատակված հրաշագործութիւններն ու դևերի փախուստը դնում է իրր պատահած Սյունյաց գավառում. և այս անշուշտ իր ընտրած նյութին և իր հայրենի գավառին մի քիչ ավելի ճշանդակութիւն

տալու համար: Ահա՛վասիկ իր պատմածը. «Ծուցից և զկրկին լուսատրուքին այսր աշխարհի ի ձեռն սուրբ և յոգնեանեալ առն Մաշտոցի՝ Մեսրոպ կոչեցելոյ... և սկսեալ ի քարոզութիւն՝ մեծամեծ և ահագին Եշանօք ոչինչ ընդհատ քան սրբոյն Գրիգորի, ի հաւատ ածել զաշխարհս Միսական հրամանաւ և օգնութեամբ բարեպաշտ իշխանին Սիւնեաց Վաղինակայ, սրբել զկոապաշտութիւն և խորտակել զկուռս թաքուցեալս: Նմանապէս և զԳողթն սրբեալ ի ձեռն իշխանին Եորս Շարիթայի: Եւ այնքան հալածեաց զբազմութիւն դիւացն, որք մարմնատր տեսեամբ իբր զծովս ծառացեալ՝ գունդ գունդ բարձրացեալ վայի և աղաղակաւ զնային փախստեայ. և անցեալ ընդ Երասխ՝ անկանէին ի կողմն Մարաց» (Օրբելյան. ԺԴ):

## 8

Այստեղ պետք է մի ակնարկ գցել հայոց այն ժամանակվա, եթե կարելի է այսպես ասել, գրական վիճակի վրա: Հայերը շունենալով սեփական գիր, շունեին հետևաբար նաև սեփական գրականութիւն: Բայց այնպիսի մեծ և բազմաժողովորդ մի տերութիւն, ինչպես էր այն ժամանակ Հայաստանը, որ ուներ պաշտոնական բազմաթիւ հարաբերութիւններ պարսից և հունաց հետ, մյուս կողմից քրիստոնեական ընդարձակ քարոզչութիւն ո՛չ միայն Հայաստանում, այլև հարևան երկրներում, պետք էր, որ մի միջոց գտներ իր այդ պետքերը լրացնելու համար: Այս միջոցը գրտել էին հայերը, հարևան երեք մեծ ազգերի, այն է, պարսից, հունաց և ասորաց լեզուները փոխ առնելով գրականութեան մեջ: Խոսակցութեան մեջ հայերը միշտ գործ էին ածում իրենց բնիկ լեզուն (հայերենը), բայց երբ հարկ էր լինում նույն խոսակցութիւնը կամ որևէ բան գրավոր հաղորդելու, անմիջապես դիմում էին այդ երեք լեզուներից մեկին: Ուրիշ խոսքով՝ հայոց բանավոր գրականութիւնը հայերեն էր. իսկ գրավոր գրականութիւնը՝ պարսկերեն, հունարեն կամ ասորերեն:

Սրանցից առաջինը շատ հին ժամանակներից սկսած գործածական էր Հայաստանում, ասորերենը քրիստոնեութեան հետ մըտալով Հայաստան, իսկ հունարեն լեզուն մուտք էր գտել մեր երկիրը քրիստոնեութեանից էլ առաջ, Տիգրան Մեծի ժամանակից: Այս հունասեր թագավորը ո՛չ միայն իր պալատում մտցրել էր հունարենի ուսումը, այլև հասարակութեան համար մատչելի էր դարձրել այն: Երբ Տիգրանակերտը պաշարվեց հռոմայեցիներից, հույն դերասանները ներկայացումներ էին տալիս քաղաքում: Տիգրանի որդին՝ Ար-

տավազդը, այնքան առաջ էր գնացել հունարենի ուսման մեջ, որ հունարեն ողբերգություններ էր գրել: Տիգրանի և նրա հաջորդ բազմաթիվ հայ թագավորների դրամները կրում են հունարեն վերտառություն. այսպես, օրինակ՝ Արտավազդի, Զարեհի, էրատոյի, Սանատրուկի, Ոնոնի, Գոտարզի, Վաղարշի և ուրիշների դրամները: Խոսքով Առաջինի հիմնած սահմանաքարերը, ըստ Խորենյացու, հունարեն լեզվով էին. Տրդատի հիմնած հովանոցը Գառնիում կրում էր հունարեն արձանագրություն: Ըստ Զենոնի՝ Արձան քրմապետի արձանագրությունը Տարոնում՝ հունարեն և ասորերեն լեզուներով էր, ինչպես որ ս. Կարապետի գերեզմանի արձանագրությունն էլ ասորերեն էր: Սեբեոսի արձանագրության բնագիրը, որ իբր թե Ազաթանգեղոսը գրել էր Տրդատի պալատի սյուների վրա, հունարեն էր: Վերջապես հունարեն է շատ ավելի հետին ժամանակից՝ Ներսես Շինողի արձանագրությունը Զվարթնոցում:

Այն ժամանակվա հայոց վիճակը կարելի է համեմատել ճիշտ արդի քրդերի, լազերի, չերքեզների և ուրիշ անգրագետ ազգերի վիճակի հետ: Սրանք, մինչև խորհրդային շրջանը, թեև ունեին հարուստ բանավոր գրականություն, բայց սեփական գիր չունենալով, երբ պետք ունենային իրենց միտքը գրավոր հաղորդելու, դիմում էին այս կամ այն հարևան լեզվին: Այսպես՝ քրդերը պարսկերենի կամ թուրքերենի, լազերը՝ թուրքերենի, չերքեզները՝ վրացերենի, թուրքերենի կամ երբեմն էլ ռուսերենի և այլն: Կրոնական քարոզության համար քուրդ, լազ կամ չերքեզ կրոնավորները նախապես սովորում էին արաբերեն և այս լեզվին տիրապետելուց հետո ժողովրդի առաջ կարդում էին Ղուրանը արաբերեն լեզվով, քուրդը՝ քրդերեն, լազը՝ լազերեն, չերքեզը՝ չերքեզերեն և այլն:

Ճիշտ այս վիճակումն էինք նաև մենք հայերս այն ժամանակ: Պարսկերեն և հունարեն լեզուները, բայց անշուշտ մանավանդ պարսկերենը, ընդունված էին պաշտոնական թղթերի մեջ, ինչպես կալվածագրեր, դաշնագրեր, պայմանագրեր և այլն (հմմտ. Խորենյացի, Գ, գ. «Քանզի գտանին... և գիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիրլից և գաւառաց ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակասութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատություն»): Պարսկերենը և հունարենը ընդունված էին անշուշտ նաև քաղաքական հարաբերութեանց մեջ, այնպես որ հայոց թագավորից պարսից թագավորին գրված թղթերը պիտի գրվեին պարսկերեն, իսկ հունաց կայսեր գրվածները՝ հունարեն: Ըստ Փարպեցու (էջ 24), Խոսրով Գ և Վռամշապուհ թագավորների ժամանակ պալատական դիվանից դուրս եկած արքունի վը-

Տիւններն ու հրովարտակներն էլ գրվում էին հունարեն կամ ասորերեն. «Վասն զի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորին Հայոց՝ արքունի դպիրքն. զվճողն և զհրովարտակացրն»:

Քրիստոնեական քարտզության համար ընդունված լեզուներն էին հունարեն և ասորերեն: Դեռ 4-րդ դարի սկզբից, երբ Լուսավորչի հետ Հայաստան թափվեցին հույն և ասորի կրոնավորների խմբերը, սրանց հետ ընդունվեց նաև այդ երկու լեզուների գործածութիւնը: Սկզբում անշուշտ այդ կրոնավորները իրենց անիմանալի լեզվով էին կարգում ավետարանը, աղոթքներ էին ասում և քարտզում հայ ժողովրդին, որ, իհարկե, ոչինչ չէր հասկանում: Բայց ժամանակ անցնելով ձևը փոխվեց. ասորի կրոնավորները հայերեն էլ սովորեցին ու թեև ավետարանը և աղոթքները ասորերեն էին կարդում, բայց միևնույն ժամանակ նրանց բացատրութիւնը տալիս էին հայերեն: Սրա համեմատ նաև հույն կրոնավորները: Ավելի բազմաթիվ էին ասորերենով ու հունարենով կրթված հայ կրոնավորները. Եղեւսիայի և Բյուզանդիոնի դպրոցները բաց էին հայ երիտասարդների առաջ, որոնք երկար ժամանակ պարապելով այդ դպրոցներում, ձեռք էին բերում հարկավոր պաշարը և վերադառնում Հայաստան՝ նույն ձևով վարդապետելու: Բացի սրանից, բուն իսկ Հայաստանում կային հունական և ասորական դպրոցներ, որոնց սկզբնավորութիւնը քրիստոնեութիւն մտտից հետո է: Այսպիսի դպրոց բաց արեց նախ Տրդատ թագավորը (ըստ Ագաթ. 626). «[Տրդատ] ժողովեաց զբազմութիւն մանկտոյ և զնոսա յերկուս բաժանեալ, զմանս յասորի դպրութիւն կարգել և զմանս ի հելլէն»: Նույն տեսակ դպրոցների բացման զարկ տվեց նաև Ներսես Մեծը (հմմտ. Բուզանդ, Գ, գ):

Ահա այս դպրոցներն ավարտող հունազետ կամ ասորագետ հայ քարոզիչներն էին, որ կրում էին «թարգմանիչ» տիտղոսը:

## 9

Սկզբներում, թեև թե՛ հունարեն և թե՛ ասորերեն լեզուները հավասարապես ընդունված էին հայոց եկեղեցիներում, բայց սպասելի էր, որ հունարենի գործածութիւնը հետզհետե ավելի աճելով՝ վաներ ասորերենը, ի նկատի ունենալով՝ 1) հայոց և հունաց ավելի սերտ հարաբերութիւնը, 2) Կեսարիայի գերիշխանութիւնը հայոց կաթողիկոսի հանդեպ, 3) հույն կուլտուրայի բարձրութիւնը համեմատած ասորականի հետ: Բայց քաղաքական հանգամանքները



այլ կերպ դասավորեցին իրերը: Պարսից տերութունը հունաց վրա հաղթող հանդիսանալով՝ իր ազդեցութեան տակ առավ Հայաստանի մեծ մասը և վասխենալով, որ հայերը հույների հետ սերտ հարաբերութեամբ հեռանան իրանից և հունաց միանան, աշխատեց որքան կարելի էր ընդհատել այդ հարաբերութունները: Որքան էլ որ պարսից տերութունը հակառակ լինէր քրիստոնեւոյն, այնուամենայնիւ ստիպված էր ակամա հաշտվել երեսօթի հետ, քանի որ այնպես խոր հաստատված էր Հայաստանում և մյուս երկրներում: Բայց նա կարող էր հունարենը ըստ կարելիոյն արգելել. և եթէ հայերը պետք ունեին քրիստոնեական մի լեզվի, կարող էին դիմել ասորերենին: Ասորիները, թեև քրիստոնյա, բայց դավանական պատճառներով մոտիկ չէին հույներին, հակված էին պարսիկներին և մտել էին պարսից պետութեան թեւակութեան տակ: 435 թվականից հետո, երբ ասորիները նեստորական դավանանքը ընդունելու պատճառով ամբողջովին դուրս վտարվեցին իրենց երկրից (Ասորիքից)՝ հույների ձեռքով, Պարսկաստանն էր, որ իր խնամակալութեան տակ առավ նրանց և ազատ իրավունք տվեց իր տերութեան բոլոր սահմաններում տարածվելու: Ասորիների ազդեցութունը մեծ եղավ պարսիկների վրա. արամեական այբուբենն է, որ ձեւավորուեց զարձակ պահլավական այբուբեն. ասորերեն շատ բառեր մտան պարսից լեզվի մեջ, այնպես որ այս վերջինները հասան վերջապես այն տարօրինակ դրութեան, որ պահլավերեն էին գրում, բայց ասորերեն էին կարդում:

Ահա այս հանգամանքների բերմամբ հունարենը արգելվեց Հայաստանում, իսկ ասորերենին զարկ տրվեց. և հայերին իրավունք տրվեց ազատ օգտվել ասորի լեզվից. «Եւ զորս միանգամ գիրս քտանէր [Մերութան]՝ այրէր, և հրաման տայր մի՛ ուսանել զղղպրութիւն հունարէն, այլ պարսիկ. և մի՛ ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել, այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենեւին մի՛ լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ. այլ ճշմարիտ՝ խափանել զքրիստոնեւոթեան ուսումն: Զի յայնժամ գիր դրպրութեան Հայոց չէ ևս էր լեալ, և յունականան վարէին եկեղեցւոյ կարգք» (Նորենացի, Գ, 14):— «Գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յասորւոյն՝ յոչ լինելոյ յունի: Քանզի նախ ի Մերութանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ շտային պարսիկ վերակացուքն յոյն ուսանել դպրութիւն ումեք յիւրեանց մասինն, այլ միայն ասորի» (Նորենացի, Գ, 37): Այնպես որ վերջապես ասորի լեզուն ընդունվեց հայ եկեղեցիներում՝ իբրև կրօնական ծիսական լեզու. «Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ

վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս» (Փարպեցի, էջ 36):

Պետք է նկատել սակայն, որ հիշյալ դրութեան մեջ գտնվում էր միայն պարսկական գերիշխանութեան տակ գտնված Հայաստանը, իսկ Արևմտյան Հայաստանը, որ գտնվում էր հունական տիրապետութեան տակ, ստիպված էր վարվել հունարենով. «Բայց ի յունաց մասէն, որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան՝ վիճակեալ յաթոռն Կեսարու, վարել յունական գպրութեամբ և ոչ ասորով» (Խորենացի, Գ, Ժդ):

Բայց ինչքան էլ որ տարածված լիներ հունարենը կամ ասորերենը, դարձյալ անհնարին էր, որ կարողանար լրացնել ժողովրդի պահանջները. ինչքան էլ որ շատ լինեին լեզվագետ կրոնավորները, այնու ամենայնիվ չէին կարող լցնել բազմաթիվ գավառների, քաղաքների և գյուղերի մեջ վխտացող եկեղեցիներն ու վանքերը: Առանձնական ընթերցանութեան համար էլ ամենին պետք չէր գա ասորերենը կամ հունարենը, հետևաբար բուն հասարակ ժողովուրդը զուրկ էր մնում հոգևոր կրթութունից և առհասարակ գրթից: Կար և երրորդ ցավալի մի կետ. այդ այն երկար ճանապարհորդութունը, անթիվ զրկանքները, բազմաթիվ ծախսերն ու մտավոր շարշարանքն էր, որ հայ երիտասարդները պարտավոր էին կրել զանազան հեռավոր քաղաքներում դեզներելով՝ ասորերենի նման դժվար մի լեզվի ընտելանալու համար. «Քանզի հոգացեալ յարածամ տրտմէր երանելի այրն Մաշթոց՝ տեսանելով զմեծ ջանն և զառաւելապէս ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս, որք բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմածամանակեայ դեզերմամբ մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան» (Փարպեցի, էջ 35):

Այսպիսով եկեղեցիները զուրկ էին մնում կրոնավորներից, կամ առ առավելն ունենում էին այնպիսի քարոզիչներ, որոնք թեև կարող էին կարգալ ասորերեն ավետարանը, բայց հասկանալ ու թարգմանել չգիտեին: «Յորմէ (յասորերէնէ) ոչինչ էին կարող լսել և օգտվել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի և լինէր պաշտօնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորոյ» (Փարպեցի, էջ 36): Հայ ժողովուրդն այսպիսով գտնվում էր շատ ողորմելի դրութեան մեջ. նա դիմում էր եկեղեցի և համր ու անշունչ լսում էր ասորերեն ընթերցվածները, որոնցից ոչինչ չէր հասկանում: Ժամերգութունը դարձել էր ձևական մի բան, արտաքին պաշտոնական աննյութ ու աննպատակ ձևականություն, որից ո՛չ միայն ժողովուրդն էր դժգոհ, այլև քարոզիչ պաշտոնյաները. «Ասորի մեծաջան և անօգուտ ուսմամբքն աշխատեալք յո-

խորտ, յորոց բազմութիւնք ժողովրդոց ունայնք և թափուրք հրա-  
ժարեալք զնային յեկեղեցւոյն. և ուսուցիչքն հանելով յոգւոց և հա-  
ռաշելով՝ զղջանային զսնտտի ջանն իւրեանց, յորում ոչ զոք յու-  
սումնասէր ժողովելոցն տեսանէին օգտեալս ի վարդապետութենէ  
հոգևոր խրատուցն, որ է կերակուր և պարարումն իմաստնախնդիբ  
անձանց» (Փարպեցի, էջ 44):

## 10

Մեսրոպը՝ իբրև ընթերցող և թարգմանիչ, իր քարոզության  
միջոցին զգաց ու տեսավ բոլոր այս նեղութիւնները, որ կրում  
էին թե՛ եկեղեցականները և թե՛ ժողովուրդը: Ուր որ ինքը կար,  
գիրը կյանք էր ստանում, անհմաստ ձայները հոգի էին առնում:  
Նա ո՛չ միայն կարդում էր անժանոթ լեզուն, այլև թարգմանում ու  
ժողովրդի սրտին մտտիկ լեզվով մեկնում, բացատրում, իսկ ուր  
ինքը չկար, լսվում էր միայն մի անժանոթ զլլղոց և ուրիշ ոչինչ:  
Իր ժողովրդասեր ու հայրենասեր սիրտը համակվեց խորին վշտով-  
գիշեր ու ցերեկ իր մտածմունքն այն էր, թե ի՞նչպես կարող էր  
դարման տանել այս անտանելի կացության: Բայց Մեսրոպի մտա-  
տանջութիւնը ավելի հեռուն էլ էր գնում. ո՛ւր պիտի տաներ օտար  
լեզուների այս տիրապետութիւնը. երկիրը արդեն պառակտված,  
ժողովուրդը երկու օտար տիրապետութիւնների մեջ բաժանված,  
թագավորութիւնը կործանման անդունդին՝ մտտիկ, ի՞նչը պիտի  
կարողանար փրկել ու պահպանել ազգն ու ժողովուրդը իսպառ բը-  
նաջինջ լինելուց: Եվ այսպես՝ տրտում հոգսերով պաշարված և  
խորհրդածությանց ծփանքում տարակուսած՝ փնտրում էր փրկա-  
կան ելքը: Եվ ահա այդ մտածմունքների և տարակուսանքների ժա-  
մանակ ծագեց իր մտքում փրկարար լույսը, հայերեն գրերը զբո-  
նելու և գրականութիւն ստեղծելու գաղափարը: Նրանով պիտի  
փրկեր ազգութիւնը կորստից: Ընդ ի վարդապետել երանելոյն Մես-  
րոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգ-  
մանիչ. և եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր, զանխով ի  
ժողովրդոցն լինէր՝ յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ: Վասն որոյ  
եդ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուին, և արկեալ  
զանձն ի ջանս, պէսպէս փորձիւք տաժանէր» (Խորենացի, Գ, խէ):—  
«Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր՝ զհամաշխարհականս սիո-  
փելով. և առաւել յաղօթս մշտնջենամոռունչս, և բազկատարած պա-  
ղատանս առ Աստուած. և արտասուս անդադար, զմտաւ ածելով զա-  
ռաքելականն և ասէր հոգալով. Տրտմութիւն է ինձ անպակաս ցաւք  
սրտի իմոյ, վասն եղբարց իմոց և ազգականաց: Եւ այնպէս տրտու-

մական հոգովք պաշարեալ և թակարդապատեալ և անկեալ ի ծու-  
փքս խորհրդոց, եթէ որպիսի արդեօք էլս իրացն գտանիցէ» (Կոր-  
յուն, էջ 8):

Ահա այդ գաղափարը առաջնորդեց Մեսրոպին կատարելու այն-  
պիսի մի գործ, որ ամենամեծ բարիքն եղաւ մեր ազգին և որի հի-  
շատակը դարուց ի դարս պիտի հիշվի, քանի իս ու կամա մարդ-  
կութունը:

Գ Լ Ո Ւ Խ Գ

## ԴԱՆԻՆՅԱՆ ԳՐԵՐԸ

### 1

Ներշնչված այն մեծ գաղափարով, Մեսրոպը մտացաւ ամեն  
բան, և իր աշակերտները, իր քարոզչութունը, իր եկեղեցիներն ու  
իւր սիրած Գողթն գաւառը թողնելով, եկաւ Վաղարշապատ, Սահակ  
կաթողիկոսի մոտ: Մեսրոպը հայտնեց նրան իր գեղեցիկ մտադրու-  
թյունը: Բնականաբար այնպիսի լուսամիտ մեկը, ինչպիսին Սա-  
հակն էր, ո՛չ միայն պիտի հավաներ այդ գաղափարին, այլ նույ-  
նիսկ Մեսրոպից ավելի փափագող հանդիսացաւ և ամեն կերպով  
պատրաստակամ ցույց տվեց իրեն՝ այդ մեծ գործի հաջողության  
համար. «Նգիտ զնա առաւել ևս փափագող այնմ» (Խորենացի, Գ,  
ԽԹ). «Պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ» (Կոր-  
յուն, էջ 8):

Հին հայոց բարեպաշտական սովորութեամբ, որ ամեն գործ  
աղոթքով էր սկսում, Սահակ և Մեսրոպ իրենց հարակիցների հետ  
հավաքվում են և մի քանի օր աղոթքի են նվիրում իրենց, խնդրե-  
լու համար Աստուծոց, որ իրենց այս բարի մտածութեան հաջողու-  
թյուն պարզեի. «Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հան-  
դերձ աղօթիւք մեծովք առ Աստուած կանխէին, վասն ամենայն  
ոգոց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ. և դայն առնէին ա-  
ւուրս բազումս» (Կորյուն, էջ 8):

Մրանից հետո Սահակը և Մեսրոպը որոշում են գումարել հա-  
մագումար ժողով, ուր ներկա պիտի լինեին այն ժամանակվա  
հայտնի անձնավորութիւնները, որոնց հետ պիտի խորհրդակցեին  
հայ նշանադրերի հորինման համար:

Ժողովը գումարվեց Վաղարշապատ մայրաքաղաքում, Սահակի և Մեսրոպի նախաձեռնութեամբ: Բացի այս երկուսից, այնտեղ ներկա եղան, ըստ հորենացու, նաև հայոց բոլոր եպիսկոպոսները. «Գտանէ ժողովեալ առ մեծն Սահակ և Մեսրոպ զամենայն եպիսկոպոսունս» (հորենացի, Գ, Ժբ): Բայց Վոսմշապուհ թագավորը, ինչպես և ուրիշ որևէ աշխարհական, կանչված չէին նույն ժողովին: Կորյունը պատմում է, թե այս ժողովում շատ հարցափորձեր և քննութիւններ տեղի ունեցան և ներկաները մեծ հոգնութիւն կրեցին՝ հայ նշանագրերի առթիվ. «Ապա ելանէր նոցա պարգևական յամենաբարին Աստուծոյ, ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և զիրս նշանագրոյ Հայաստան ազգին հասանել. բազում հարց փորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ» (Կորյուն, էջ 8): Դժբախտաբար այստեղ մի մեծ պակասութիւն ունի Կորյունը. նա ոչինչ չի ասում այն մասին, թե ի՞նչ էին այն երկար վիճաբանութեանց զլիսավոր կետերը.— արդո՞ք ոմանք այս առթիվ լինելիք նորամուծութիւններին հակառակութիւնն էին ցույց տալիս, կամ թե վիճում և չէին կարողանում համաձայնութեան գալ այն մասին, թե ո՞ր այբուբենը պիտի հարմարեցնեն հայ լեզվին (պարսկերենն, հունարենն, թե՞ ասորերենն), և կամ թե ուրիշներ հունարենի և ասորերենի ուսման ավելի լայն ծավալ տալով, դժվարութեանց առաջին առնել էին առաջարկում. վերջապես զուցե ոմանք էլ (անշուշտ օտարազգի քարոզիչներ) իսպառ հակառակ էին հայ լեզվի համար գրականութիւն ստեղծելուն:

Վենետիկի միաբաններէից Հ. Բ. Սարգսյանը («Բազմավէպ», 1889 թ., էջ 39) կարծում է, թե ժողովի վիճաբանութեան նյութն էր՝ որոշել, թե Հայաստանի 15 նահանգների որի՞ բարբառը պիտի բարձրանար գրականութեան: Եվ 15 նահանգների պատգամավորները, քննելով հարցը, վերջապես վճռեցին ընդունել Արարատյան բարբառը:

Այսպիսի կարծիք մեջտեղ դնելուց առաջ, պետք էր հաստատել, թե Հին Հայաստանի 15 նահանգները զանազան բարբառներ ունեին և այդ բարբառները այնքան տարբեր էին իրարից, որ խոսողները իրար չէին հասկանում: Հետո, ի՞նչ նշանակութիւն ունի բարբառը այբուբենի համար: Հավաքվել են տառեր հորինելու նըպատակով. որևէ կարևորութիւն ունի՞ այն հանգամանքը, թե բարբառներում հնչում են մա՞րդ, մա՞րթ, մո՞րթ, թե՞ մո՞րա կամ մի ուրիշ ձևով: Բարբառների լեզվաբանական քննութիւնը մեր կարծիքով համագումարի նյութ չէր կարող լինել:

Մի քանի ժողովից հետո, ժողովականները հարկ համարեցին դիմել Վոամշապուհ թագավորին և իրենց ցանկալի խնդրի մասին հայտենել նրան: Ահա այս մասին Կորյունի շատ մուգ և հորենացու շատ լակոնական բառերը, որոնք իրար համապատասխանում են. «Բնագում հարց փորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վոամշապուհ» (Կորյուն, էջ 8): «Գտանէ ժողովեալ առ մեծն Սահակ և Մեսրոպ զամենայն եպիսկոպոսունս՝ հոգալ զգիտ զպրութեան Հայոց, զոր զգացուցին արեալին» (հորենացի, Գ, ծր):

Այն ժամանակ Վոամշապուհը պատմեց նրանց, թէ ինքը լսել է, որ կա հայերեն լեզվի այբուբեն, և թէ այդ այբուբենը գտնվում է Դանիել անուն ասորի ազնվական եպիսկոպոսի մոտ: Այս անակընկալ հայտարարութիւնը մեծ տպավորութիւն թողեց ամենքի վրա. ժողովականները շատ ուրախացան և խնդրեցին, որ Վոամշապուհը հետամտի այս մասին և պետք եղածն ի գործ դնի՝ այն տառերը ձեռք բերելու համար: Ըստ Փարպեցու՝ Սահակը և Մեսրոպը հիշեցրին Վոամշապուհին, թէ գրերի գյուտը շատ ավելի մեծ էր, քան որնէ աշխարհային փառք, նույնիսկ թագավորական փառքը, և թէ նրանով թագավորը պատմութիւն մեզ մի այնպիսի անուն պիտի թողներ, որ պիտի գերազանցեր իր բոլոր նախնաց անունը: Ահապասիկ այն խոսքերը, որով Սահակը և Մեսրոպը համոզում են թագավորին. «Եւ նոցա լուեալ զայս ի թագաւորէն, փութացուցանէին զնա ասելով, թէ ձեպեա՛ յաղագս մեծ և օգտաբեր աշխարհիս Հայոց գիտիս այսորիկ՝ ի ժամանակս քո, որ շատ անլի առ յապայսն բերէ քեզ շահ, յիշատակ անմոռաց և օգուտ երկնաւոր վայելից, քան զիշխանութիւն թագաւորութեանդ քո, և կամ որպէս յառաջ քան զքեզ նախնիքն քո էին յազգէն Արշակունեաց» (Փարպեցի, էջ 37—38):

Թագավորը համոզվեց այս խոսքերի վրա և, ըստ Փարպեցու՝ փառք տվեց Աստուծուն, որ այնպիսի հավերժական մի գործ իր օրով պիտի կատարվեր. «Եւ թագաւորին լուեալ զայս և խնդալից եղեալ՝ ետ փառս Աստուծոյ, որ ի ժամանակս թագաւորութեան նորա զայնպիսի հոգեոր կենաց փափագ ժառանգեաց յաշխարհիս Հայոց» (Փարպեցի, էջ 38):

Վոամշապուհը շուտով գործի կպավ, հրովարտակ գրեց Հարել անուն քահանային<sup>1</sup>, որ նույն ասորի Դանիել եպիսկոպոսի մեր-

<sup>1</sup> Է. Ն. Ալիկյան, «Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 466, ենթադրում է, թէ այս Հարելը Եղեալի զարոցի զիսավոր Իբաս երեցն է:

ձավորը, այսինքն ազգականն էր, և հրամայեց երթալ Դանիելի մոտ և տառերն առնելով իրեն ուղարկել: Այս հրովարտակը ուղարկեց Հաբելին՝ Վահրիճ<sup>1</sup> անունով անձի հետ՝ իրը դեսպան, որ ըստ Խորենացու, էր «այր մի պատուական և հաւատարիմ իւր (Վոսմշապուհի), Խաղունի ազգաւ... յոյժ փափագող նորին գործոյ» (այսինքն գրերի գլուխին) (Խորենացի, Գ, Ժբ): Այս մարդու մասին ուրիշ ոչ մի տեղեկութիւն չունենք: Բայց հանձնարարված գործի կարևորութիւնից պետք է գուշակել, ասում է Օրմանյանը («Ազգապատում», Ա, էջ 271), Վահրիճի էլ բարձր դիրքը, օտար լեզուների հմտութիւնը և տեղերի ու անձի ծանոթութիւնը: Սահակի ու Մեսրոպի աշակերտներից չէր անշուշտ, այլ թագավորական դիվանի պաշտոնյա: «Իսկ Հաբել կարդալով հրովարտակը, իսկույն դիմեց Դանիելին և նախ ինքը սովորելով նրանից այն տառերը, առավ Հայաստան ուղարկեց, Վոսմշապուհ թագավորին, անշուշտ Վահրիճի ձեռքով»: «Իսկ Հաբելին դայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրոյն, և ապա առեալ ի նմանէ առաքելք առ արքայն յերկիրն Հայոց, ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր» (Կորյուն, էջ 8):

Վոսմշապուհը, Սահակը և Մեսրոպը ստանալով Հաբելի ուղարկած գրերը, մեծ ուրախութիւն զգացին: Սահակը և Մեսրոպը խնդրեցին թագավորից մի քանի մատաղ մանուկներ հանձնել՝ նորագլուտ գրերը նրանց վրա փորձելու համար: Երբ տեսան, թե նըրանցից շատերը կարողացան սովորել, Սահակը, իբրև հայրապետ հայոց, շնորհեց Մեսրոպին Վարդապետութեան (այսինքն՝ ուսուցչական) մեծ աստիճանը և հրաման արեց, որ Հայաստանի ամեն կողմերը նույն տառերը տարածի և բոլորին կրթի այդ տառերի ուսման մեջ. «Ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել, որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ երանելին հասանէր» (Կորյուն, էջ 9):

Այսպիսով Մեսրոպը դարձավ հայոց առաջին վարժապետը և Դանիելյան գրերը ընդհանուր ընդունվեցան մեր մեջ:

### 3

Սկսած Գողթն գավառի քարոզութիւնից հրաժարվելուց մինչև Դանիելյան գրերի գործածութիւնը, որ այս գլխի նյութը կազմեց, մեր աղբյուրները երևան են հանում բազմաթիվ մեծ ու փոքր տար-

<sup>1</sup> Այս անձի անունը Կիրակոսը (էջ 15) դնում է «Վրախճայ», որ սեռական հարով չէ. «Եւ առաքեն զնախարար զոմն՝ Վրախճայ անուն»:

քերութիւններ, որոնք պետք է մի առ մի քննել և ստուգել, հաջորդ խնդիրներին անցնելուց առաջ:

Նախ՝ Կարապետ Սասնեցին չի հիշում Մեսրոպի քարոզչական գործունեութիւնը, կամ ըստ հորինացու՝ նաև Սյունյաց գավառի մէջ այլ գրերի գլուտի այն բարձր գաղափարը տալիս է Մեսրոպին հղանալ հենց իր ճգնական կյանքի մէջ, մի քարայրի խորքում: Այս ներշնչումն ունենալուց հետո, Մեսրոպն ուղղակի քարայրից ճանապարհ ընկավ և դիմեց Սահակին. «Այս հոգւոյն առթումն, յորմէ յաղթեալ և ակամայ ձգեալ, նրանէր յայրէն և վարէր յեկեղեցի, ոչ ապարասանեալ ընդվզէր և ոչ ամբարձաւանճեալ յուայր յանձին զօրութիւն: Այլ հեղաբար և դիրապէս դիմէր առ հովիւն քաջ քաջածագ՝ առ հայրապետն Հայաստանեայց» (Սասնեցի, էջ 38—39):

Սասնեցու այս թերութիւնը անշուշտ համառոտութեան համար է և շունի նշանակութիւն:

#### 4

Թեև Կորյունը, Փարսեցին և հորինացին չեն հիշում հատկապես, թե ո՛ր էր Սահակը և հետևապես ո՛ր դիմեց Մեսրոպը և ո՛ր եղավ առաջին համագումար ժողովը, բայց նրանց հաջորդ խոսքերից բավական պարզ է: Քանի որ դիմում են թագավորին և սա ևս ժողովին ներկայանում է այնտեղ, հետևում է, թե ժողովը տեղի էր ունեցած մայրաքաղաքում (Վաղարշապատում), ինչպես որ բնական էր, Վաղարշապատը լինելով Սահակի աթոռանիստը:

Բայց Սասնեցին, դարձյալ շեղվելով պատմութիւնից, այս հանդիպումը դնում է Աշտիշատում. «Եւ հանդիպեալ նմա ի դաշտն Տարօնոյ, ի քաղաքագեղն Աշտիշատ, և ողջունեալ՝ առնոյր զաջն և զողջոյնն: Եւ տեսեալ ծաղուն՝ ծիծաղէր, և բերկրեալ ցնծայր սուրբըն ի սէր սրբոյն և ծանէր հոգւովն ի հոգոյն զոյ զգալուստ նորա...» (Սասնեցի, էջ 39):

Սասնեցու հրատարակիչը՝ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյան, էջ 39-ի ծանոթութեան մէջ նկատում է, թե «ոչ մի ականարկ չկա կաթողիկոսի գտնված տեղի մասին (Կորյունի մէջ)». ներքողողը կամ Տարոնը ավելի բարձրացնելու համար է հիշել այդ մանրամասնութիւնը, կամ հավանականորեն ուրիշ աղբյուր է ունեցել:

Ըստ իս, միայն առաջինն է ճիշտ. Սասնեցին այս սխալը գոր-

<sup>1</sup> Մազր բառի սեռականն է. սրանով պետք է հասկանալ «Սահակ». բոտ որում երբայիբն Սահակ նշանակում է «ծիծաղ». Սասնեցին շատ է սիրում ցուցադրել իր «երբայիբնութիւնը»:



ծել է այն մտածութեամբ, որ Տարոնը հայրապետական կալված լինելով, կաթողիկոսները շատ անգամ Տարոն էին գտնվում:

5

Ինչպես տեսանք վերևում, Կորյունը Սահակի և Մեսրոպի ազդեցութեան անմիջապես հետո դնում է համագումար ժողովի գումարումը, որի հետևանքն եղան նույնպես Մեսրոպի դիմումները, Վահրիճի առաքումը և վերջապես Դանիելյան գրերի գյուտը.— այս բոլորը անխափան մին մյուսի հետևից շարունակաբար, ինչպես վախել էր այնպիսի մի անձի, որ հոգով մարմնով նվիրված էր գործին, և որի աչքին երկրորդական արժեք ունեին մնացյալ բոլոր գործերը: Սակայն խորհնացին և, նրան հետևելով՝ Փոքր Կորյունը ազդեցութեան հետո դնում են հուսահատ ընդհատում: Մեսրոպը, երկար ջանքերից հետո, տեսնելով, որ չկարողացավ մի օգուտ քաղել, դարձյալ Աստուծուն ապավինեց, և Սահակից բաժանվելով, նորից իր քարայրը քաշվեց և անձնատուր եղավ առաջվանից ավելի խըստամբեր ճգնութեան. «Եւ յետ բազում ջանից և ոչինչ օգտելոյ, դարձեալ յաղօթս ապաւինեալ, յԱստուծոյ խնդրելով: Եւ մեկնեալ ի միմեանց, դնաց Մեսրոպ ի դադարս իւր. և յանձն առեալ ղխստամբերութիւն վարուց ճրգնէին առաւել քան զառաւել» (խորհնացի, Գ, խթ): նույնը օրինակում է Փոքր Կորյուն, շնչին փոփոխութեամբ (էջ 9):

Այս դեպքից հետո, խորհնացին Մ, ՄԱ և ՄԲ գլուխներով պատմում է խորով Գ-ի գերի բռնվելը, Վոամշապուհի հաջորդութիւնը, Սահակի երթալը Տիգրոն, ստացած պատիվներն ու վերադարձը, Արտաշրի հրովարտակը Վոամշապուհին, հունաց և պարսից մեջ գրգռված պատերազմը Միջագետքում, Վոամշապուհի միջամտութիւնը և այլն, որից վերադարձին տեսնում է, որ ժողովն արդեն գումարված է:

խորհնացու պատմածը շատ ծանրակշիռ է. մերժել այն, հենց այն պատճառով, որ պատմողը խորհնացին է, խելացի գործ չէր լինի. ուստի պետք է մանրամասն քննել, թե արդյոք կա՞ն հանգամանքներ, որ խորհնացու պատմածը ստուգեն, կարո՞ղ են այդ հանգամանքները ուրիշ ձևով մեկնվել, որից էլ հանել եզրակացութիւնը: խորհնացուն նպաստավոր է թվում այն հանգամանքը, որ Վաղարշապատում գումարված ժողովի առաջին նիստերին ներկա չէ Վոամշապուհը, թե՛ ըստ Կորյունի և թե՛ ըստ խորհնացու, այլ մի քանի նիստ հետո միայն: Եթե ըստ խորհնացու ընդունենք, թե այդ միջոցին Վոամշապուհը Միջագետքումն էր, այս բացակայութիւնը

կարգարանա: Բայց անշուշտ այս առարկութիւնը հիմնավոր չէ, որովհետեւ:

1) Ինչպէս վերը նկատեցինք, այս ժողովի նյութը, զոնն այն ժամանակվա նկատումներով, կրօնական գործ համարվելով, աշխարհականներ չէին կանչված այնտեղ. ուստի Վոսմշապուհը ևս գործ չունենր: Խորհնացին ասում է. «գտանէ ժողովեալ առ մեծն Սահակ և Մեսրոպ զամենայն եպիսկոպոսունս»: Բայց աշխարհականի (իշխան կամ նախարար), նույնիսկ հասարակ քահանաների խոսք չկա:

2) Հակառակ մեր ունեցած համարմունքին, Վոսմշապուհը չի երևում այնպէս ուսումնասեր մի անձ: Ըստ Խորհնացու, երբ Հարբել քահանան հայտնում է Վոսմշապուհին, թե հայերեն գրեր կան կամ կարող է ինքը հնարել, Վոսմշապուհը փոխանակ այսպիսի մի գեղեցիկ գաղափարով ոգևորվելու, «անփոյթ արարեալս» հեռանում է: Սահակը և Մեսրոպը, ըստ Փարպեցու, բավական ջանք են գործ դնում համոզելու համար Վոսմշապուհին, որպէսզի հետամտի Դանիելյան գրերը բերել տալու: Այսպիսի մի անձ ի՞նչ աներ ժողովին ներկա լինելով:

3) Ժողովականները չէին հրավիրած Վոսմշապուհին, քանի նրանից օգուտ չէին սպասում, և եթե հրավիրեցին, միայն այն պատճառով էր, որ լսել էին, թե տեղեկութուններ ունի Դանիելյան գրերի մասին. առանց դրա Վոսմշապուհը կարող էր մինչև վերջն էլ հանդիստ նստել: Այսպիսով ուրեմն վերի առարկութիւնը ջրնջվում է:

Ընդհակառակը, Խորհնացուն հակառակ են հետևյալ առարկութիւնները.

1) Այն կասումը, որ Խորհնացին տալիս է Մեսրոպին, բոլորովին հակառակ է նրա վրա տեսնված տարապայման խանդին: Մեսրոպը թողնում է ամեն բան՝ գրերի գլուտին հետամտելու համար. հետո, ամբողջ 35 տարի շարունակ մահ է գալիս վարդապետելու և ուսուցանելու համար, և ի՞նչ պատճառ կար, որ գործը դեռ նոր սկսած՝ հանկարծ ընդհատեր:

2) Ինչո՞ւ Կորյունը կամ Փարպեցին չեն հիշում այսպիսի մի լքում և Մեսրոպի վերադարձը դեպի ճգնաժամը կյանքը չեն պատմում. ներկի՞ է այսպիսի լռութիւն. չէ՞ որ պետք էր զոնն մի քանի բառով ակնարկել:

3) Ի՞նչ արեց Մեսրոպը այդ երկրորդ ճգնութեան ժամանակ, ի՞նչպէս եղավ, որ նորից թողեց քարայրը և երկրորդ անգամ իջավ հետամտելու գրերի գլուտին. ինչո՞ւ նույնիսկ Խորհնացին չի հիշում սրա հանգամանքները:

4) Ինչպես հետո պիտի ցույց տանք, Մեսրոպի կրած դժվարությունները միայն Դանիելի պատճառով էին. այնպես որ, եթե Դանիելյան գրերի հարցը դուրս եկած չլիներ, մենք երկու տարի ավելի շուտ պիտի ունենայինք հայ գրականութիւնը: Ուզում եմ ասել, թե դեռ առաջին ժողովի ժամանակ Մեսրոպը իր մեջ արդեն խնդիրը վճռած էր և հուսահատվելու բնավ կարիք չկար:

Սրանից հետևում է, թե Խորենացին այնպիսի մի ընդհատում գրել է դիտմամբ, որպեսզի կարողանար տեղավորել Մ և ՄԱ գլուխների մեջ պատահած դեպքերը. իսկ ՄԲ գլխով պատմածը նրա համար է, որպեսզի Վռամշապուհի ստացած տեղեկութիւնը հանգամանորեն բացատրի: Եվ ի՞նչ վիպական զուգահեռութիւն: Վռամշապուհը գնում է Միջագետք, Դանիելյան գրերի մասին պատահամամբ տեղեկութիւն է ստանում և ճիշտ վերադարձին տեսնում է, որ Սահակը և Մեսրոպը նույն նյութի համար ժողով են կազմել:

Մեր այս ասածներից պետք չէ հետևցնել, թե մենք մերժում ենք Խորենացու Մ և ՄԱ գլուխներով պատմած դեպքերը: Ամենևին Այլ ուզում ենք միայն ասել, թե Մեսրոպին վերագրված ընդհատումը Խորենացու գլուխն է միայն՝ հիմնված սխալ հաշիվ վրա. մյուս դեպքերը կարող են պատահած լինել իհարկե ժողովից բավական առաջ: Դրանց քննութիւնը մեր ծրագրից դուրս է:

## 6

Մինչդեռ Կորյունը և Խորենացին հայտնի կերպով ցույց են տալիս համազումար ժողովի գումարումը, Մեսրոպի կրած ծանր ճիգերը և այլն, Փարպեցին բոլորովին հեշտ ու տնավարի կերպով լուծել է ուզում ամեն բան: Նախ, նա չգիտի ժողովի գոյութիւնը. Մեսրոպը դիմում է պարզապես Սահակին, հայտնում նրան իր վաղուցվա մտածմունքը, Սահակը քաջալերում է նրան, թե «Շոգ մի անի, այդ ասածդ շատ ոչինչ բան է. ես քեզ մի քանի քահանա օգնական կտամ, և եթե դուք չկարողանաք, ի՛նձ բերեք, ես կուղղեմ կվերջացնեմ»: Սահակը հետո ավելացնում է, թե պետք է այս բանը նաև թագավորին իմաց տալ, որովհետև մի անգամ պատմել է Դանիելյան նշանագրերի մասին: Այնուհետև երկուսը միասին դիմում են Վռամշապուհին և Դանիելյան գրերը բերել տալիս. «Եկեալ առ սուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ՝ զեկուցանէր նմա զիւրոյ բազմաժամանակեայ մտածութեան զխնդիրն, և ընկալեալ ի նմանէ քաջալերութեան անտիս, թէ՛ Զօրացեալ պի՛նդ կաց, առեալ ընդ քեզ և այլ արս օգնականս ի քահանայից՝ զոր ես պատուիրեմ. և ուր տկարանայք ի կարգել զհեգենայսն՝ բերեալ առ իս ուղղեմ

զայն. բանդի յոյժ դիրին է գիտ իրացո զոր հայցես: Բայց նախ արժան է մեզ զգացուցանել թագաւորին զպէտս այսպիսի մեծ և կարեոր խնդրոյ...: Եւ մտեալ սրբոյ կաթողիկոսին Հայոց Սահակայ հանդերձ երանելեան Մաշտոցի առ թագաւորն Վոսմշապուհ, և իմացուցեալ նմա զպէտս իրացն, յիշեաց և ինքն թագաւորն գիտսեցեալսն վանականին վասն նորին իրացն ընդ նմա, զոր և նորա պատմեալ ուրախացուց...» (Փարպեցի, էջ 36—37):

Փարպեցու պատմութիւնը երկու տարրեր խնդիր է երևան հանում. նախ՝ ժողովի բացակայութիւնը և երկրորդ՝ Մեսրոպի գործի նվաստացումը: Երկրորդի վրա խոսել պահելով հաջորդ գլխին, անցնենք առաջինին:

Որովհետև Փարպեցու աղբյուրը Կորյունն է, ուստի ամեն անգամ, որ Փարպեցու մոտ դժվարութեան հանդիպենք, քնականաբար պիտի դիմենք սկզբնաղբյուր Կորյունին, նրանով հարցը պարզելու համար: Եթէ Փարպեցին ունենա ավելի մի բան, որ Կորյունը չունի, կարող է Փարպեցին ունենալ իրավունք, այն պատճառաբանութեամբ, թէ Կորյունը համառոտախոս լինելով, հապավել կամ մոռացել է նշանակել այդ դեպքը. և կամ՝ թէ Կորյունի ձեռագիրը հետո փոփոխութեան է կրել, և կամ, վերջապես, Փարպեցու պատմածը ավանդութեան է և այլն: Եթէ Փարպեցին չունենա մի բան, որ Կորյունն է պատմում, պարզ է, որ Փարպեցին, ավելարանութեանից հետո մնալու համար, հապավել է: Իսկ երբ Փարպեցին պատմում է դեպքը այնպես, որ բոլորովին տարրեր է Կորյունից, այստեղ խնդիրը բոլորովին փոխվում է: Ճշմարտութիւնը մեկ է միայն: Կորյունը այնպես վստահելի պատմիչ է, որ Մեսրոպի կենսագրութեան համար կարելի չէ մինչև իսկ մտածել համեմատութեան դնելու Փարպեցու հետ: Հատկապես մեր այս խնդրին գալով, կարող ենք ասել, թէ Փարպեցին չի հասկացել Կորյունի խոսքը, որ իրոք շատ մթին է. «Ապա ելանէր նոցա պարզակական յամենաբարին Աստուծոյ, ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցըն» միայն գուշակութեամբ կարելի է հասկանալ. և եթէ իտրենացին շատ լավ հասկացել է այս մութ խոսքի իմաստը, նույնը պարտավոր չէր նաև Փարպեցին:

## 7

Ո՞րտեղից կարող էր Վոսմշապուհը լսած լինել, թէ Դանիելի մոտ կան հայերեն գրեր. — այս մասին մեր երեք գլխավոր աղբյուրները տարբեր տեղեկութիւններ են տալիս:

Փարպեցին պատմում է, թէ ժողովի նիստերից մի քանի օր առաջ մի կեղեկեցում խոսք է բացվել հայերեն լեզվի այս պակա-

սուբյան վրա և մեկը թագավորին ասել է, թե «ես մի գյուղում մի  
եպիսկոպոսի մոտ հայերեն գրեր տեսել եմ»: Թագավորը այս մա-  
սին պատմում է Սահակին, և երբ ժողով է լինում, Սահակը այս  
պատմութունը հիշելով, դիմում է թագավորին. «Վասն որոյ և քան  
զաւուրս ինչ յառաջ ոչ բազումս՝ առեալ բանք յեկեղեցւոջ յաղագս  
կարօտութեան այդպիսի պիտոյից, ասացեալ է ուրեմն ցարքայ,  
թէ տեսի նշանագիրս հայերէն առ ումեմն եպիսկոպոսի ի գեօղ  
միում. և թագաւորն յիշէր զասացեալսն, քանզի և ինձ (Սահակայ)  
նա պատմեաց» (Փարպեցի, էջ 37): Մի քանի տող հետո, այս «մե-  
կը» վանական է դառնում. «Յիշեաց և ինքն թագաւորն զխօսեցեալ-  
սըն վանականին վասն նորին իրացն ընդ նմա»: Հետո, երբ Վահ-  
րիճին ուղարկելու ժամանակը գալիս է, Փարպեցին մի քիչ ավելի  
է պարզում խնդիրը, ասելով. «Այր մի երէց Հարէլ անուն, որոյ  
ասացեալ էր յառաջագոյն ցարքայ, որ և մերձաւոր էր առն բարե-  
պաշտի Դանիելի եպիսկոպոսի» (էջ 38):

Խնդիրը մի քիչ ավելի է մեծացնում Խորենացին, որին հետե-  
վում է նաև Կիրակոս Գանձակեցին: Խորենացու պատմածի մեջ  
«ասաց թե, ասել է թե, մի օր, մի գյուղ, մի եպիսկոպոս» և այլն  
անորոշ խոսքերը վերանում են և ամեն ինչ հանգամանորեն ճշտ-  
վում է:

Այն ժամանակները (այսինքն համազումարից ոչ շատ առաջ),  
ասում է Խորենացին, հիվանդացավ Արկադ կայսրը, ահագին երկ-  
րաշարժներ ու հրդեհներ պատահեցան Բյուզանդիոնում՝ ի վրեժ  
Հովհան Ոսկեբերանի, որ քստորվել էր. հունաց կայսրութունը խառ-  
նաշփոթ վիճակումն էր. բանականների մեջ խռովութուն ընկավ. բա-  
նականները իրար հետ կռվելուց հետո, զենքը պարսից դեմ դարձրին:  
Ուտի պարսից Վոամ թագավորը հրամայեց Վոամշապուհին՝ իջ-  
նել Միջագետք, վեճերը դադարեցնել, խաղաղութունը վերահաս-  
տատել և երկու կողմերի գործակալների հաշիվը տալ: Վոամշա-  
պուհը գնաց Միջագետք և այս բոլորը հաջողութեամբ կատարեց.  
բայց իր գործառնութեանց մեջ բավական նեղութուն կրեց քար-  
տուղարի պատճառով, որովհետև Մեսրոպը քարտուղարական պաշ-  
տոնից հեռացել էր և չկար այնպիսի մի դիվանադպիր, որ այնպես  
ճարտար պարսկերեն իմանար: Հարել անուն մի քահանա ներկա-  
յացավ Վոամշապուհ թագավորին և խոստացավ պատրաստել հա-  
յերեն գրեր, որ իր ազգական Դանիել եպիսկոպոսն էր հարմարեց-  
րել: Այս առաջարկի առաջ թագավորը անփույթ գտնվեց: Երբ դար-  
ձավ Հայաստան, տեսավ, որ Սահակը և Մեսրոպը եպիսկոպոսնե-  
րի հետ ժողով են գումարել՝ հայերեն գրերը գտնելու համար, ո-  
րոնց և պատմեց եղելութունը:

Մի փոքր տարբերություն էլ ներկայացնում են Գանձակեցիին և Հայամազութը, թեև սրանց աղբյուրը հորենացին է: Գանձակեցին Վոսմաշապուհի բերանն է դնում հետևյալ խոսքը, համազումարին ներկայանալու ժամանակ. «Մինչ էի ես ի կողմանս Ասորաց, ասաց ինձ ոմն եպիսկոպոս ասորի՝ Դանիէլ անուն, թէ ունիմ ես նշանագիր հայերէն լեզուի, և ես անփոյթ արարի առ ժամայն» (էջ 15): Այստեղ Դանիէլը և Վոսմաշապուհը իրար անձնական ծանոթ են դուրս գալիս. Գանձակեցու մոտ Հաբեյի բաժինը հապավված է, բայց մի քիչ հետո նորից իր դիրքի մեջ մտնելուց իմացվում է, որ Գանձակեցու արածը մի փոքրիկ խեղաթյուրում է և նշանակությունից զուրկ:

Փարպեցու և հորենացու տված տեղեկությունները թեև իրարից տարբեր, բայց երկուսի էլ հիմքը նույն են և փոփոխակի իրար են լրացնում: Կորյունն է միայն, որ թե՛ մեկից և թե՛ մյուսից բուրովին զանազանվում է:

Կորյունի տված տեղեկությունը, որ մինչև այժմ նկատողության չէ առնված բանասերներից, հետևյալն է. «Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն ի Դանիել...» (էջ 8): Շղատառ տպված բառերի պահած իմաստն այն է, որ Դանիել եպիսկոպոսը առաջուց գրած էր Վոսմաշապուհ թագավորին իր գտած գրերի մասին, և հետևաբար Վոսմաշապուհի ունեցած տեղեկությունը միայն այս նամակից էր բխում:

Այսպես է մտածում նաև Յնտզյանը («Վարք Մաշթոցի», էջ 17) և սրանից հետևեցնում է, թե «Ուրեմն ամենեն առաջ հայերեն գիր հայթաղելու միտքը ու առաջարկը եկած է Դանիել ասորի եպիսկոպոսին, որ զայն գրով իմացուցեր է Վոսմաշապուհի, բնականաբար իբր արքունի հրովարտակներու, զիվանական գրությանց համար պիտանացու, մինչ Մաշթոց այդ հոգը կունենա ավետարանելու արվեստին համար: Կերևի թե թագավորը հետևում տված չէր Դանիելի գրածին, փոյթ չէր ըրած, զի հետո Մաշթոց և Սահակ միաբան հոժարեցուցին «զարքայ փոյթ առնել վասն պիտոյիցն այնորիկ»:

Մեզ բերված երեք պատմություններից ճշմարիտը անշուշտ պետք է որ Կորյունի ավանդածը լինի, քանի որ պատմության հիմնական աղբյուրը, ժամանակակից և լավագույն պատմիչը Կորյունն է: Բայց որպեսզի այս եզրակացությունը ի հառաջագունն և հապճեպ չլինի, հարկավոր ենք համարում մանրամասն քննել խընդիրը:

Կարո՞ղ ենք արդյոք մտածել, թե գրելոյն այստեղ ձևադրական սխալ է և պետք է ուղղել գրոյն, գրոցն կամ հետնաբար՝ գրե-

բոյն, և կամ, ինչպես Գարագաշյանը («Քննական պատմութիւն», Գ, էջ 36) կարողամ է, գրե՛նոյն, որով գրվածքի իմաստը կխափան-վի: Բայց անշուշտ կարելի չէ անել այդպիսի մի սրբագրութիւն: Այն պարագային պետք պիտի լիներ ասել «վասն գրոցն Դանիելի»: Զի հարմարվում ի Դանիելէ բացառականը:

Երկրորդ առարկութիւնն այն է, որ եթե Դանիելը կարող էր գրել Վոամշապուհին, ինչո՞ւ Վոամշապուհը ուղղակի չի դիմում Դանիելին նամակով, որը Վահրիճի և Հաբել քահանայի միջոցով է խնդրում այն նշանագրերը: Մի՞թե Դանիել ասորին ավելի բարձր ու անմատչելի անձնավորութիւնն էր, քան Վոամշապուհ թագավորը: Բայց սրա պատասխանն էլ անշուշտ այն է, որ Վոամշապուհը գործին ավելի եռանդուն հարած լինելով, շուգեց դիմել նամակով Դանիելին, ինչ որ կարող էր անփույթ վերաբերմունք համարվել, այլ ավելի հաստատուն ու գործնական կերպով բռնելու համար գործը, ուղարկեց Վահրիճին: Եվ եթե Վահրիճն էլ ուղղակի չգնաց Դանիելի մոտ, սրա էլ պատճառն այն է, որ Վահրիճը պալատական մարդ լինելով, ուսման հետ գործ չուներ և չէր կարող Դանիելից տառեր սովորել: Այսպիսի մի բան անելու համար կրոնավոր էր պետք. և ահա ամենահարմար կրոնավորը ներկայանում էր Հաբելը, որ նաև Դանիելի ազգականն էր, լեզվով էլ համալեզու: Ուստի նրան գրեց Վոամշապուհը, և Հաբելը գնաց, տառերը սովորեց և ուղարկեց Վոամշապուհին:

Այս երկու առարկութիւնները ջնջվում են այսպիսով:

Կա սակայն մի երրորդ, ավելի մեծ առարկութիւն, որ լեզվական է: Այդ է նախադասութեան անսովոր ձևը: Հայերենի մեջ ծանր է հնչում «վասն գրելոյն ի Դանիելէ» — «Դանիելից գրվածի համար կամ ավելի վատ՝ Դանիելից գրելու համար»: Հայ գրիչը այս բացատրութեան փոխարեն պիտի ասեր «վասն գրելոյ Դանիելի»: Բացի սրանից, տրամաբանութիւնը պահանջում է, որ նախադասութեան առաջին բառերը՝ «Եւ իբրև պատմեցաւ... վասն գրելոյն» նախորդ նախադասութեան նման բառերի կրկնութիւնը լինեն: Օրինակի համար՝ ասում ենք. «Պատգամավորը պատմեց, թե թշնամին արդեն մտեցել է սահմաններին: Եվ երբ որ նա պատմեց թշնամու մտեցելը, բոլորը պատրաստվեցին ճանապարհ ընկնելու»: Ըստ այսմ մեր նախադասութեան մեջ էլ իբրև պատմեցաւ ձևը կրկնութիւնն է նախորդ նախադասութեան «այսինժամ պատմէր» բառերի: Սակայն գրելոյն ձևը չկա, և դժբախտաբար ճիշտ նույն տեղը նրան փոխանակող բառը կորած է. այնպես որ խոսքը բոլորովին կաղ է մնում. «Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչե-

ցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս ազգաբնեաց հայերնն լեզուի...»<sup>1</sup>։ հետո ի՞նչ. բայց չկա։ Պակասը անշուշտ բայ է և անշուշտ այս գրելոյն ձևն է։ Բայց գրել չի հարմարվում այստեղ։ Ամբողջ պատմութեան ընթացքը, ինչպես նաև բառի հարմարութեանը ցույց են տալիս, որ այստեղ պիտի լիներ գտնալ էր. «Որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս ազգաբնեաց հայերէն լեզուի գտնալ էր», ինչպես որ մի քանի տող հետո էլ ասվում է նույն գրերի համար՝ «ապա առնալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիտանն» (էջ 9), որի դեմ Գ. Տեր-Մկրտչյանի հրատարակութեան ձեռագիրն ունէր զյանկարծագիտ խնդրելին (տե՛ս «Արարատ», 1912 թ., էջ 507)։ Ըստ այսմ՝ գրելոյն ձևն էլ պետք է ուղղել գտնելոյն, որ թե՛ հարմար է գալիս «ի Դանիելէ» բացառականին և թե՛ պահանջում է տառական ամենաշնչին սրբագրութիւն։ Արկաթագիր գրութեամբ S և P միայն հետևի զծիկով են զանսպանվում. իսկ եթե Գ տառն էլ միասին առնենք, սրա թևը խառնվելով S-ի հետ, գրեթե նույն ձևը կտա. ԳS = ԳP:

Այս քննութիւններից հետևում է, թե հիշյալ հատվածում գրելոյն ձեռագրական սխալ է և նրանից հանված հետևութիւնն էլ սխալ։ Վաճառապուճի և Դանիելի միջև թղթակցութիւն տեղի ունեցած չէ, և հետևարար Վաճառապուճի աղբյուրի մասին տեղեկութիւն չունի Կորյունը։ Սրանով Փարպեցու և Խորենացու պատմածնները կմնան առանց վավերացման, թեև երկուսի հիմքը նույն է երևում։

## 8

Վերջին խնդիրը, որ մնում է քննել, Վահրիճի մասին է։ Ըստ Կորյունի և Փարպեցու, Վահրիճի պաշտոնն եղավ միայն հրովարտակը տանել Հարելին և նշանագրերը բերել Հայաստան։ Հարելը, ըստ հանձնարարութեան Վաճառապուճի, զնաց Դանիելի մոտ, սովորեց գրերը և Վահրիճի հետ ուղարկեց թագավորին։ Այս մասին անշուշտ չի կարող կասկած լինել, որովհետև թե՛ Կորյունի և թե՛ Փարպեցու մեջ համապատասխան բայերը դրված են եղակի. «Իսկ Հարելին զայն լուեալ, փութանակի հասանէր... ինքն տեղեկանայր... հասուցանէր և այլն» և վերջապես «իսկ արքային... ընկալեալ զնշանագիրսն ի Հարելէն...»:

Սակայն Խորենացին այնպես է պատմում, որ իբր թե Վահրիճը ևս Հարելի հետ զնացել է Դանիելի մոտ սովորելու և նույն

<sup>1</sup> Գաւազաշան, «Քննական պատմութիւն», Գ, էջ 36, կարդում է գտնալ էր, Մարգ..., էջ 21՝ տեսալ, Յնադլան՝ գտնալ էր կամ գտանէր:



գրերը միասին բերել են թագավորին. «Զոր առեալ, և երթեալ ետևալ հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիելէ... եկեալ ետուն զմեծն Սահակ և Մեսրոպ» (Խորենացի, Գ, ծր): Խորենացու տված այս տեղեկութիւնը թյուրիմացութեան արդունք է և իբրև հակառակ Կորյունին ու Փարպեցուն՝ անընդունելի:

Ալեկի տարօրինակ է Հայսմավուրքը (տրե 7), որ այնպես է պատմում, թե իբր Դանիել եպիսկոպոսը անձամբ եկել է Հայաստան և Սահակի ու Մեսրոպի հետ աշխատակցել է երկու տարի նոյն գրերը փորձելու համար: Ահա այս պատմութիւնը. «Եւ թագաւորն Վոսմշապուհ ետես զսուրբ հայրապետն Իսահակ և զվարդապետն Մեսրոպ ի նոյն հոգոց վարանումն և ասաց նորա վասն քահանայի միոյ ասորոյ Դանիէլ անուն, թե խոստացաւ նշանագիր առնել հայոց լեզուին: Եւ առաքեալ բերին զնա: Եւ ուսուցեալ մանկունս զամս Բ, և ոչ կարացին հանել ի հեգ, քանզի ի հոռոմ լեզուն միայն էր յարմարեայ»: Եւ սխալ տեղեկութեան վրա ծանրանալ բոլորովին ավելորդ է:

Այսպիսի մի սխալ էլ կատարում է Ալիշանը («Յուշիկք», Ա, էջ 324), որ Հաբեկի ու Վահրիճի դերը բոլորովին կրճատելով, ասում է, թե Վոսմշապուհը Մեսրոպին ուղարկեց Դանիելի մոտ, և նա անձամբ բերավ տառերը Հայաստան: Սա էլ իհարկեւ համառոտութեան համար է արված, առանց մտածելու, թե սրանով պատմութիւնն է խանգարվում:

Մի ուրիշ սխալ էլ էմինն է անում, որ Խորենացու ուսերին թարգմանութեան մեջ այնպես է դուրս բերում, որ իբր թե Դանիելյան գրերը Վահրիճն է շարել հունարենի շարքով: Ամբողջ հատվածը հետևյալն է. «[Վոսմշապուհ] առաքեալ հրեշտակութեամբ զայր մի պատուական... Վահրիճ անուն... առ Հաբէլն այն: Զոր առեալ և երթեալ նովա հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիէլէ, կարգեալ ըստ ձևոյ օրինակի յունականին զվաղնչուց գտեալ նշանագիր տառից...»: Այստեղ նախադասութիւնը այնպես վատ է կազմված, որ անկարելի է հասկանալ, թե ո՞վ ո՞ւմ է առել և ո՞վ ո՞ւմ հետ է գնացել: Նմանապես անտեր է մնում կարգեալ դերբայը, որ էմինը տվել է Վահրիճին: Հարութիւնյանը մերժելով այս, տալիս է Դանիելին, իբր թե Դանիելն է շարել տառերը հունականի շարքով: Բայց ես կարծում եմ, որ երկուսն էլ սխալվում են: Այն տառերը վաղուց ունեին իրենց հունական շարքը և նոր շարելու կարիք չկար: Ուրիշ խոսքով, այն հատվածը պետք է կարդալ կամ հասկանալ. «... զկարգեալ ըստ ձևոյ օրինակի յունականին զվաղնչուց գտեալ նշանագիր տառից»: Այսպես է հասկանում նաև Մալխասյանը, որ Խորենացու աշխարհաբար թարգմանութեան մեջ ասում է. «Եւ զհմտացան վա-

դուց գրված (իմա գտնված) տառերի շարքին, որ դասավորված էր հունարենի օրինակով:

Ո՛ր Հաբելը եկել է Հայաստան (առաքէր), ո՛ր Վահրիճը գիր է շարել կամ սովորել (ինքն տեղեկանայր), և ո՛ր էլ Մեսրոպն է գնացել Արդարև, Փարպեցու մոտ ասվում է Հաբելի համար, թե քանակ ի նմանէ առ թագաւորն և առ սուրբ հայրապետն Հայոց Սահակ և առ երանելին Մաշտոց հասանէր» (էջ 29), որից երևում է, թե Հաբելը իբր անձամբ եկել է Հայաստան: Սակայն այս սխալը միայն վենետիկի տպագրիկն է և ձեռագրերն ունեն պարզապես հասուցանէր, ինչպես ունի նոր տպագրությունը (էջ 14—15) և Կորյունը (էջ 9):

## Գ Լ Ո Ւ Ե Գ

### ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

#### 1

Այսպես ուրեմն, Դանիելյան գրերը Հայաստան բերվեցին և ընդհանուր գործածություն ստացան հայոց մեջ: Աշխատությանս երրորդ մասին վերապահելով խոսել Դանիելյան այբուբենի կազմության մասին ընդարձակորեն, այտեղ նկատենք միայն, որ այդ այբուբենը, ունենալով ինչ-ինչ թերություններ, չէր կարող լիովին լրացնել հայոց լեզվի պահանջները, բայց նաև չէր այնպես պակասավոր, որ միանգամից իբրև անպետք դեն գցվեր: Այս պատճառով երկու տարի տևեց այդ այբուբենի գործածությունը (Սամվել Անեցի, հակառակ մյուս պատմագիրների ասածին, դնում է մէկ տարի). և վերջապես Մեսրոպը նկատեց, թե աշակերտների համար այնչափ հեշտ չէր վարժվել այդ գրերին. ուղղագրության և ընթերցանության սխալներ անշուշտ տեղի էին ունենում միշտ, այնպես որ Մեսրոպը վերջապես ստիպվեց խափանել նրանց գործածությունը:

Կարող են ոմանք տարօրինակ գտնել այս դեպքը:— Եթե Դանիելյան գրերը այնպես անկատար էին, միթե չէ՞ր կարող Մեսրոպը մի անգամից նկատել այդ, ի՞նչ պետք կար երկու տարի փորձելու և երկու տարի հետո միայն նկատելու, թե անկատար են: Այս մտածմունքը անշուշտ ստվեր պիտի ձգեր Մեսրոպի վրա:— Բայց ճիշտ հակառակն է: Դանիելյան գրերը կարող ենք որոշ չափով համեմատել ասորերեն, արաբերեն, եբրայերեն և այլ այսպիսի այ-

քուբենների հետ, որոնք թեև շատ պակասավոր, բայց ահա այս-  
քան դարերի ի վեր գործածվում են և ո՛վ գիտե դեռ որքա՞ն ժա-  
մանակ պիտի գործածվեն: Եթե այս պակասավոր այբուբենները  
կարողացան այսքան դարեր դիմանալ, նույնը կարող էր լինել նաև  
Դանիելյան այբուբենը: Մեսրոպը աչքի առաջ ուներ հատկապես  
ասորական այբուբենը, որին ո՛չ միայն ասորիները, այլև հայերից  
շատեր վարժված էին: Եվ, վերջապես, Մեսրոպի առաջին փորձը  
հաջողութեամբ պսակված էր. առաջին աշակերտները կարողացել  
էին սովորել այդ տառերը. «Խնդրէին հայցէին ևս յարգայէ ման-  
կունս մատաղս, որով զնշանագիրսն մարթեսցեն: Եւ յորժամ բա-  
զումք ի նոցանէ տեղեկանային...» (Կորյուն, էջ 9). ուստի Մես-  
րոպը մտածում էր, որ ղժվարութիւնը անհաղթահարելի էր:

Երկու տարվա փորձը ո՛չ թե ստվեր է ձգում Մեսրոպի վրա,  
այլ մեծ պատիվ է իրեն: Պարսիկները, թուրքերը և այլն հաղարամ-  
յա գործածութիւնից հետո, նորերս միայն զգացին իրենց այբու-  
բենի պակասութիւնը և դարմանելու կարիքը: Իսկ եթե Մեսրոպը  
երկու տարուց կարողացավ զգալ, սրանից ավելի ի՞նչ մեծ պատիվ  
իրեն: Զեմ ուզում շեշտել այն հանգամանքը, որ հիշյալ ազգերը  
թեև զգացին իրենց այբուբենի պակասավորութիւնը, բայց դար-  
մանելուց շատ հետո են: Թուրքերը ոչ շատ տարիներ առաջ միայն  
ջնջեցին իրենց այբուբենը և ընդունեցին եվրոպականը, իսկ պար-  
սիկները, արաբները, աֆղանները և այլն դեռ մնում են իրենց պա-  
կասավոր այբուբենին կապված: Մինչդեռ Մեսրոպն զգաց և մեկ  
տարվա մեջ դարմանեց ամենագեղեցիկ կերպով: Ասում ենք չենք  
հիշում այս հանգամանքը, որովհետև առաջինների համար այժմ  
շատ ուշ է, գրականութիւնը այնպես է տարածված, որ մեծամեծ  
ճիգերի պետք կա այնպիսի հին ու համատարած մի միավորութիւն  
խափանելու, պակասավոր այբուբենը վերացնելու համար: Մինչ-  
դեռ Դանիելյան գրերի գործածութիւնը դեռ չափազանց թարմ լի-  
նելով, շատ ճիշտ էր խափանել ու վերացնել:

## 2

Դանիելյան նշանագրերի խափանումով, Մեսրոպը դարձյալ ըն-  
կավ իր նախկին հոգսերի և մտածումներին մեջ: Երկու երանելի  
անձերը բավական ժամանակ աշխատեցան այս կացութեան դար-  
ման տանելու համար. «Յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի  
նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ» (Կոր-  
յուն, էջ 9): Վերջապես Մեսրոպը տեսնելով, որ Հայաստանում մը-  
նալով չպիտի կարողանա պատշաճորեն օգտվել, որոշեց անձամբ

գիմել Միջագետք՝ խուզարկութիւններ կատարելու և իր ցանկութիւնը ի կատար ածելու համար: Ուստի, Վասմազուն՝ Քաղաքների հրամանով և Սահակ կաթողիկոսի համաձայնութիւնով, Մեսրոպը իր հետ առավ մի խումբ աշակերտներ և հրածնա տալով ներանց, ճանապարհ ընկավ դեպի հարավ, ասորական քաղաքները:

Դժբախտաբար Մեսրոպի ճանապարհորդութիւնն հանգամանքները և ուղեղիծը մանրամասն չեն ավանդում պատմագիրները: Այս մասին կորեննացին է, որ ավելի կատարյալ տեղեկութիւններ է տալիս, բայց դրանք էլ համաձայն չեն Կորյունին, որ ըստ մեզ ամենից վավերական աղբյուրն է: Ստիպված ենք ուրեմն Կորյունի տված տեղեկութիւններով հյուսել մեր պատմութիւնը, քայլ առ քայլ քննելով նրա ընծայած անորոշութիւնները և կասկածելի կետերը երևան հանելով:

Կորյունը անորոշ կերպով պատմում է, թե Մեսրոպը Հայաստանից դուրս գալով, այցելեց ասորական քաղաքները՝ Եղեսիա և Ամիդ. «Երթնալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորոց, որոց առաջինն Եղեսիա կոչի, և երկրորդն Ամիդ Անուն» (Կորյուն, էջ 9): Այս խոսքերից այնպես է երևում, որ Մեսրոպն այցելել է նախ Եղեսիա և ապա Ամիդ, ինչպիսի ընդունում է նաև Տաղավարյանը (էջ 26): Բայց մի պարզ ակնարկ քարտեզի վրա՝ բավական է համոզելու համար, թե չէր կարող Մեսրոպ նախ Եղեսիա և ապա Ամիդ մտած լինել: Ամիդ, որ հիմնաւորման Տիգրանակերտը (Դիարբեքիբը) չէր, նրանից էլ շատ հեռու չէր, գտնվում է լայնութիւն 38° և երկարութիւն 40° աստիճանների տակ, Մուշի հարավ-արևմտյան կողմը. իսկ Եղեսիա, որ այժմյան Ուրֆան է, գտնվում է լայնութիւն 37° և երկարութիւն 39° աստիճանների տակ, Տիգրանակերտի հարավ-արևմտյան կողմը: Այնպես որ, եթե մի ուղիղ գիծ քաշենք Մուշից Եղեսիա, այդ ուղիղ գծի մեջտեղի կետը կլինի Տիգրանակերտը: Հայաստանից մեկնող ճամբորդը նախ պետք է մտնի Տիգրանակերտ և այնուհետև միայն Եղեսիա: Այսպես արած պիտի լինի նաև Մեսրոպը, և երբ Կորյունը առաջինը Եղեսիա և երկրորդը Ամիդն է նշանակում, այդ կարգը ոչ թե ժամանակագրական կամ տեղագրական պետք է համարել, այլ ըստ արժանիքի: Եղեսիան իր «համալսարան»-ով կարող էր պարծենալ ու պանծալ ամբողջ Միջագետքում, իրրև ամենից առաջնակարգ քաղաքը, մինչդեռ Ամիդը վաղուց ընկած լինելով, շուրջ ընամ մի քան նրա հետ համեմատուկու համար:

Հաստատ է ուրեմն, որ Մեսրոպը Վաղարշապատից մեկնելով և հաջանաբար իր հայրենի Տարոն գավառից անցնելով, իջավ նախ Ամիդ և այստեղից էլ Եղեսիա:

Մեսրոպը թե՛ Ամիրի և թե՛ Եղեսիայի մեջ պատշաճավոր ընդունելություն գտավ. եպիսկոպոսները, կղերականները և իշխանները դիմավորեցին նրան, և թե՛ իրեն և թե՛ իր աշակերտներին մեծարանքներ ցույց տալով, սիրալիր կերպով ընդունեցին ու պահեցին: Կորյունը այս ընդունելությունը համառոտ կերպով պատմելուց հետո, հիշում է նաև այն երկու եպիսկոպոսների անունը, որոնք Մեսրոպին ընդունեցին՝ Բաբելյաս և Ակակիոս: Բայց այստեղ էլ հիշատակությունը այնպես խառնակ է, որ անկարելի է որոշել, թե արդյոք Բաբելյաս Եղեսիայի և Ակակիոս Ամիրի՞ եպիսկոպոս էր, թե՞ երկուսն էլ նույն Եղեսիա քաղաքի եպիսկոպոսներ էին. «Եւ երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուց Ասորոց, որոց առաջինն Եղեսիա կոչի, և երկրորդն Ամիր անուն: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբելյաս անուն և երկրորդին Ակակիոս, հանդերձ կղերականօքն քաղաքին պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն, ընդունէին հոգաբարձութեամբ, ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի» (Կորյուն, էջ 9):

Տաղավարյանը (էջ 26) ընդունում է առաջին կարծիքը, այսինքն՝ թե Բաբելյաս Եղեսիայի, իսկ Ակակիոս Ամիրի եպիսկոպոսն էր: Այսպես են նաև Մարկիվարտը («Պատմություն հայ նշանագրերու», էջ 58), Գալուստ Տեր-Մկրտչյանը («Արարատ, 1912 թ., էջ 508»), Նահապետյանը («Բնագրամալէպ», 1913 թ., էջ 136), Ադոնցը («Հանդէս ամսօրեայ», 1925 թ., էջ 435) և Հ. Ն. Ակինյանը («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 514): Վերջին երեքը տալիս են նաև Ակակիոսի համառոտ կենսագրությունը: Ակակիոսը Ամիրի եպիսկոպոսական աթոռը բարձրացավ 400 թվականի մայիսի 9-ին՝ իբրև հաջորդ Մարասի, 409-ին զնաց Հազկերտ Ա-ի մոտ՝ Պարսկաստանի քրիստոնյաների խնդրով. 420-ին ներկա էր Յահթալայի ժողովին՝ իբրև եպիսկոպոս Ամիրի: Նույն թվականին Թեոդոս կայսեր կողմից ուղարկվեց Հազկերտ Ա-ի մոտ՝ բանակցելու համար խաղաղության մասին. 422-ին, երբ Մծբինի առաջ պարսիկները հաղթվեցին հույներից, Ակակիոսը ծախեց Ամիրի եկեղեցու թանկագին անոթները և 7000 գերի գնելով, Պարսկաստան ուղարկեց: Վոսա՛մ, հիացած նրա այս արարքի վրա, կանչեց նրան իր պալատը և հայտնեց իր շնորհակալությունը: Մեռել է 431 թվականին:

Բայց, ըստ ձևի, անշուշտ երկրորդ կարծիքն է ուղիղ, այսինքն թե՛ Բաբելյաս և թե՛ Ակակիոս նույն Եղեսիա քաղաքի եպիսկոպոսներն էին, և դատելով անուններից՝ առաջինը Ասորոց եպիսկոպոսն էր և երկրորդը՝ Հունաց: Այս բանը երևում է նախ՝ քաղաքին եզակի ձևից և երկրորդ՝ Կորյունի մյուս խոսքերից. «Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբաց... բերէր առ եպիսկոպոսն Ասորոց

(Յեղեղիոյ), որ յորոց նախընկալն եղև, առաջի արկեալ նոցա զեշա-  
նագիրն աստուածատուր. վասն որոյ բաղում իսկ զովութիւնք յեպիս-  
կոսոսաց արքոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային...» (Կոր-  
յուն, էջ 10): Սրանց մեջ եպիսկոպոսների համար միշտ հոգնակի  
թիւ տրվելուց երևում է, որ Բարիլաս և Ակակիոս Եղեմսիայի եպիս-  
կոպոս էին, իսկ եղակի ժառ եպիսկոպոսն Ասորոց՝ ասելուց էլ  
երևում է, որ սրանցից մեկն էր միայն Ասորոց եպիսկոպոսը, և որ  
պիտի լինի Բարիլաս: Այս մասին իմ առանձին կարծիքը կհայտ-  
նեմ իր տեղում:

Մանոթանանք այս անձնավորութեան հետ:

Ինչպես տեսանք, Կորյունը այդ եպիսկոպոսի անունը դնում է  
Բարիլաս. նույնը Խորենացին (Չ, ծգ) շնչին տարբերութեամբ կո-  
չում է Բարիլոս: Բանասերները նկատել են սակայն, որ Եղեմսիայի  
ժամանակակից եպիսկոպոսների շարքում չկա Բարիլաս, բայց կա  
Բարիլաս կամ Բարուլաս, ուստի ամենայն հաջողութեամբ սրբա-  
գրել են Բարիլաս: Բ և Ր տառաձևերը այնքան նման են իրար, որ  
բնավ կասկած չկա, թե Կորյունի սկզբնագրում եղել է Բարիլաս և  
հետո, գրչագրերի վրիպակով, դարձել է Բարիլոս: Այս սրբագրու-  
թյունը առաջին անգամ առաջարկել է Չամչյանը (Ա, էջ 492), որ  
ուղղում է Իրարոս, կամ Բարելոս, հետո Ավգերյանը («Լիակատար  
վարք սրբոց», Ե, էջ 290), որ նույնպես ուղղում է Բարիլոս, որ է  
Իրարոս: Ավելի ուշ՝ Saint-Martin և այլն: Ս. Վ. Պարոնյանը («Ճրկ-  
րագունդ», 1884 թ., էջ 540) դարձնում է Թարուլաս, որ անշուշտ  
տպագրական սխալ է և պետք է կարդալ Բարուլաս կամ Թարուլաս:  
Մինչև անգամ Խորենացու ձեռագրերից մեկում Գալուստ Տեր-  
Մկրտչյանը գտել է Բարիլոս ձևը (տե՛ս «Արարատ», 1912 թ., էջ  
508): Ֆետիսյանն իր Կորյունի հրատարակութեան մեջ արդեն մտքը-  
րել է Բարիլաս ձևը: Այս անունը զուտ ասորական բառ է և իրրև  
հասարակ անուն rabōlā նշանակում է «summus pastorum» = հով-  
վապետ» (տե՛ս Broskelm, «Lex-Syr.», էջ 345): Սրա հետևողու-  
թեամբ կազմված է մեր մեջ Հայրապետ անձնանունը, որ զործած-  
ված է 13-րդ դարից սկսած:

Բարուլասը հեթանոս էր, քրմի որդի, մայրը քրիստոնյա. ծըն-  
վել է Կեն-Նեշրինում, մեծ հարստութեան և բարձր դիրքի տեր էր  
Իմաստասիրական ուսմունքների մեջ զարդանալով, ընդունեց քրիս-  
տոնեությունը, զնաց Երուսաղեմ, այցելեց տնօրինական վայրերը,  
մկրտվեց Հորդանան գետում, դարձավ հայրենիք, վաճառեց իր բո-  
լոր ստացվածքները և դրամը բաժանեց աղքատներին: Այնուհետև  
արձակեց գերիներին, թողեց կին, ընտանիք, պաշտոն, և Մեսրոպի  
նման քաշվեց անապատ՝ ճգնելու իր գիտութեան և սրբութեան

համբավը տարածվեց երկրում և երբ Եղեւսիայի Դիոգիենես եպիս-  
կոպոսը մեռավ, նրան հաջորդ ընտրեցին Բարուպահին՝ 412 թվա-  
կանին: Երբ գումարվեց Եփեսոսի ժողովը (431 թ.), ներկա էր նաև  
Բարուպասը, որ մեծ հակառակորդ դուրս եկավ նեստորականության  
դեմ, հալածելով նրանց և այրելով նույնիսկ նրանց գրքերը: Ունե-  
ցել է ընդարձակ գրական գործունեություն, բայց իր գրվածքներից  
քիչ բան է հասել մեր ձեռքը: Մեռել է 435 թվականին և իրեն հա-  
ջորդել է Իբաս<sup>1</sup>:

Պիտերսը («Revue des études arméniennes», № 9, էջ 209)  
ասում է, թե այն ժամանակ, երբ Մեսրոպը եկավ Եղեւսիա, Եղե-  
սիայի նշանավոր Պարսկական դպրոցի զխավորն էր Իբասը: Ան-  
կարելի էր, որ Մեսրոպը, Բարուպասի և այլոց հետ ծանոթանա-  
լուց հետո, ծանոթացած լինեիր նաև այս Իբասի հետ: Իսկ եթե  
Կորյունի մոտ ո՛չ մի հիշատակություն չկա այդ մասին, դա ո՛չ մի  
արժեք չունի. և հետո, եթե որևէ բան գրված էլ լիներ, ապագա-  
յին ջնջված պիտի լիներ, որովհետև Իբաս հետո նեստորական վար-  
դապետության առաջնորդներից մեկը դարձավ:

Այնուհետև Կորյունն իր պատմության թեևը այսպես է առաջ  
տանում. «Իսկ աշակերտասէրն վարդապետին՝ գտարեալսն ընդ իւր  
յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգէր, և զո-  
մանս յունական դպրութիւնն: Անտի ի Սամոսատական քաղաքն  
գումարէր, և նորա իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եղեալ  
զաղօթս և զտքնութիւնս և զպաղատանս արտասուալից, զխստամ-  
բերութիւնս, զհոգս զաշխարհահեծս, յիշելով զասացեալսն մար-  
գարէին, եթէ «Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես»: Եւ այնպէս  
բաղում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց  
ինչ օճան գտանելոյ: Որում պարգևէր իսկ վիճակ յամենաշնորհողէն  
Աստուծոյ, հայրական շարուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի  
սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվա-  
ղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէր սիողոբայիք և  
կապօք: Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց, հանդերձ օգ-  
նականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոսատացոց» (Կորյուն, էջ  
9—10):

Հատվածիս իմաստը շփոթ է և մասնավոր քննության պետք  
կա պարզելու համար այն: Առաջին տողերը ցույց են տալիս, թե  
Մեսրոպն իր հետ տարած աշակերտներին երկու խմբի բաժանե-  
լով, մեկը որոշեց դնել ասորական դպրոցը՝ ասորերեն լեզուն և

<sup>1</sup> Բարուպասի կենսագրությունը տե՛ս համառոտակի՝ Գալուստ Տեր-Մկրտչյան,  
«Արարատ», 1912 թ., էջ 509 և, ընդարձակ, Հ. Հ. Քորոսյան, «Բազմավէպ»,  
1922 թ., էջ 99—104 և Յնագլյան, էջ 83—84:

գրականութիւնը սովորելու համար, իսկ մյուսը հունական դըպրոցը՝ հունական լեզուն և գրականութիւնը ուսումնասիրելու համար: Սրանցից առաջինը, այն է ասորական դպրոցը, անտարակուսելի է, որ գտնվում էր Եղեսիայում, Ասորոց եպիսկոպոսի հովանաւորութեան տակ: Կասկածելի է սակայն երկրորդը, այն է հունական դպրոցը: Արդոյք այս դպրոցն է՞ կը գտնվում Եղեսիայում (Իհարկէ Հունաց Ակակիոս եպիսկոպոսի հովանաւորութեան տակ), թե՞ մոտակա Սամուսատ քաղաքում: Այս քաղաքը հին Կոմմազենի մայրաքաղաքն էր, Եղեսիայի հյուսիս-արևմտյան կողմը, այժմյան Մարաշից ոչ շատ հեռու, Եփրատի աջ ափի վրա, լայնութեան 37° 30' և երկարութեան 38° 30' աստիճանների տակ, որի տեղն այժմ Սամսատ գյուղն է:

Հունական դպրոցը Սամուսատում դնելու կասկածը ծագում է Կորյունի բանաբանի ի Սամուսատական քաղաքն զումարէր» բացատրութիւնից: Գումարէր ձևը հասարակ բայ է և կարող է առնվել թե՛ ներգործական մտքով՝ «պատրաստեց ուղարկելու» (գումարեմ) և թե՛ չեզոք մտքով՝ «պատրաստվեց երթալու» (գումարիմ): Առաջին դեպքում սեռի խնդիրը (ուղիղ խնդիրը) աշակերտներն են, որոնց պատրաստում է Մեսրոպ՝ Սամուսատ ուղարկելու, որպեսզի սովորեն հունական դպրոցում: Սրանից երևում է, թե Եղեսիայում հունական դպրոց չկար: Երկրորդ դեպքում Մեսրոպն ինքն է, որ պատրաստվում է գնալու Սամուսատ՝ իր հնարելիք գրերի առթիւ: Սրանից էլ հետևում է, թե Եղեսիայում, բացի ասորականից, կար նաև հունական դպրոց, ուր դրավ իր աշակերտների երկրորդ խումբը: Եթէ Կորյունը գումարէր բառի մոտ զնոսա կամ ինէն բառը դրած լիներ, ամեն ինչ կպարզվեր, և այդպիսի կասկածների տեղիք չէր մնա: Ահա թե ի՞նչ է նշանակում մութ գրել:

Բայց կարիք չկա կասկածելու, թե առաջինն է ուղիղ, այսինքն՝ Մեսրոպ պատրաստեց իր աշակերտների երկրորդ խումբը՝ Սամուսատ ուղարկելու համար: Այսպես են ցույց տալիս հետևյալ հանգամանքները.

ա) Առաջին խմբի վրա խոսած ժամանակ Կորյունն ասում է՝ «զոմանս յասորի դպրութեանն կարգէր», բայց երկրորդի համար՝ «և զոմանս [ի] յունական դպրութիւնն». առաջինը ներգոյական և երկրորդը նախդրի հայցական դնելուց այնպես կարելի է մտածել, թե առաջին խումբը մնացել էր Եղեսիայում, իսկ երկրորդը պիտի գնար Սամուսատ:

բ) Գումարել «ուղարկել իմաստով» սովորական է հին հայերենում. ահա՛ սրա վկայութիւնները (տե՛ս նորայր, «Թինասէր», Ստոկհոլմ, 1887 թ., էջ 17 և 19):



1. «Սա խնդրեաց զՀրահատ որդի Գազաւտնի, որ յետ հօրն նորա մահուան՝ հանեալ յԱնյիշելի ամրոցէն, անդր ևս քան զԱռաքատան էր գումարեալ» (Խորենացի, Գ, Ժե):

2. «Զգունդն առաջին տային ցնեռչապուհ Ռմբոսեան, և գումարէին զնա պահապան աշխարհին, մերձ ի սահմանս Ատրպատական աշխարհին» (Նղիշե, Գ):

3. «Նւ զՄուշկան Նիւսալաւուրտ հանդերձ ամենայն մնացեալ զօրուն գումարէր յաշխարհն Աղուանից և Լբնաց և Ճղբաց» (Նղիշե, Գ):

4—5. «Նւ զՎարդան և զմեզ գնդաւ յԱղուանս ի կռիւ գումարեաց, և ինքն յԱնդգայս մեզ նենգեալ՝ յայս շար մղեաց... և դարձեալ գումարեալ զնա զօրու յԱղուանս, ի վերայ Պարսկաց գումարտակին համարձակեցուցեր երթալ» (Փարպեցի, տպ. 1904 թ., էջ 84):

գ) Եթե Մեսրոպը լիներ Սամուսատ գնալու պատրաստութիւն տեսնողը, տարօրինակ չէ՞, որ այդ պատրաստութիւնից հետո միայն, ինչպես նկարագրում է Կորյունը, սկսում է աշխատել հայոց գրերի վրա և երկար աշխատելուց հետո հաջողվում է հնարել:

դ) Ոմանք «անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր» խոսքը Մեսրոպի համար առնելով, կարծում են, թէ Մեսրոպը Եղեսիայից ճանապարհ ընկավ և իր աշխատութիւններն ու տառերի գյուտը ճանապարհորդութեան ժամանակ կատարեց: Սա բացարձակ սխալ է, որովհետև, ինչպես Կորյունը որոշ կերպով պատմում է, այդ աշխատութիւնը վերջացնելուց հետո, նոր միայն Մեսրոպը հրաժեշտ է տալիս եպիսկոպոսներին (Րաբիլասին և Ակակիսոսին) և իր օգնականների հետ միասին իջնում է Սամուսատ:

Տարօրինակ է հասկանում Տաղավարյանը (էջ 26) Կորյունի պատմութիւնը: Սա Մեսրոպին նախ Եղեսիա և հետո Ամիդ տանելով, այս քաղաքի մեջ է դնում հունական և ասորական դպրոցները, ուր մտնում են հայ ուսանողների երկու խմբերը: Ամիդից հետո Մեսրոպը «Սամուսատական քաղաքն կիջնե, անշուշտ Հոռոփանոսն տեսնելու համար և ապա... Սամուսատ կիջնե գտնալու Հոռոփանոսը»: Ընդոտ այսպես: Արդյոք Տաղավարյան Սամուսատական և Սամուսատ տարբեր քաղաքներ է կարծում և երկու էլ Հոռոփանոս է ընդունում: Հապա ինչպե՞ս մեկնել այս կրկնութիւնը: Իսկ Սարգրսյանը («Բաղմավէպ», 1897 թ., հավելված ապրիլի, էջ 6—7) ենթադրում է, թէ Մեսրոպը Սամուսատի մեջ գտավ Դանիելյան գրերը Հոռոփանոսի հետ, այնտեղից զնաց Եղեսիա, այստեղ ավելացրեց մի քանի գրեր էլ, նորից եկավ Սամուսատ՝ Հոռոփանոսի մոտ, գեղազրելու և թարգմանելու համար:

ե) «Եւ նորա իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եղե-  
ալ...» խոսքի մեջ և նորա ձևն էլ, որ երկրորդ դեպքում անհարմար  
պիտի գար, շատ պատշաճավոր դիրք է ստանում առաջին դեպ-  
քում: Կորյուն ուզում է ասել, թե Մեսրոպ աշակերտներին Սամու-  
սատ ուղարկեց, իսկ ինքը սկսեց աշխատել իր ընկերների հետ՝  
հայերեն գրերը գտնելու համար:

Եթե մեր այս պատճառաբանությունները ընդունելի համար-  
վեն, այն ժամանակ պետք կլինի Կորյունի հրատարակության մեջ  
մի փոքրիկ կետադրական փոփոխություն մտցնել և պարբերու-  
թյունն սկսել «և նորա» ձևից. «և զմանս (ի) յունական դպրու-  
թիւնն անտի ի Սամուսատական քաղաքն զումարէր: Եւ նորա իւ-  
րովք հաւասարօք...»<sup>1</sup>:

Այսպիսով պատմությունը հետևյալ ձևը կստանա.

Մեսրոպը Եղեսիայում իր աշակերտներին երկու խմբի բաժա-  
նեց. առաջինը դրեց ասորական դպրոցը, իսկ երկրորդը՝ որովհե-  
տև Եղեսիայում հունական դպրոց չկար, ուղարկեց Սամուսատ քա-  
ղաքը՝ հունարեն սովորելու համար: Այնուհետև, իր աշակերտների  
հոգսից ազատված, իր ընկերների հետ («Իւրովք հաւասարօք») բո-  
լորովին անձնատուր եղավ խուզարկությանց ու քննությանց՝ իր  
ցանկալի նպատակին հասնելու համար: Վերջապես երկար աշխա-  
տությանց անձանձրույթ համբերելուց հետո, հաջողից մնաւել հա-  
յերեն գրերը՝ Եղեսիայում:

Ինձիճյանը («Հնախօսութիւն», Գ, էջ 82) կարծում է, թե Մես-  
րոպը Եղեսիայի մեջ իր աշակերտների համար հատուկ հայկական  
մի դպրոց է բաց արել՝ Դանիելյան նշանագրերի ուսման համար,  
որ և համարում է «առաջին հայկական դպրոցը»: Բայց այսպիսի  
մի կարծիք, ինչպես ցույց է տալիս Ս. Վ. Պարոնյանը («Երկրա-  
գունդ», 1884 թ., էջ 494), բոլորովին անտեղի է: Մեսրոպի գործը  
ուրիշ բան չէր, եթե ոչ իր աշակերտներին մտցնել տեղական «բարձ-  
րագուն» դպրոցները, փոքր ժամանակ կատարելագործելու համար  
այն ուսումը, որ ստացել էին Հայաստանում:

Եղեսիայում Մեսրոպը հայերեն գրերը (հնչյունները) որոշե-  
լուց և նրանց յուրաքանչյուրին առանձին ձև տալուց հետո, նրանց  
անունները դրեց և որոշ դասավորությամբ շարելով՝ կազմեց մեր  
այժմյան հայերեն այբուբենը. «և անդ վաղվադակի նշանակեալ

<sup>1</sup> Այս սրբագրությունը ես մտածել էի 1903 թվականին Շուշում: Այժմ նկա-  
տում եմ, որ ինձանից 16 տարի առաջ նույնը առաջարկել է Նորայրը, «Քննաւոր»,  
պրակ Ա, Ստոկհոլմ, 1887 թ., էջ 15: Նորայրը պատճառաբանություններ չի տա-  
լիս, բայց քննում է զումարել բայի ներգործական կիրառությունը, որ զնում եմ  
ևս էլ այստեղ՝ Նորայրից փոխ տոնելով:

անուանեալ և կարգեալ. յօրինէր սիղոբայիւք և կապօք» (Կորյուն, էջ 10), կամ, Միաբանի կազմած բնագրով՝ «նշանագրեալ և անուանագրեալ և կարգեալ, յօրինէր սիղոբայիւք և կապօք և ձայնատու նշանօք» («Արարատ», 1912 թ., էջ 510):

Բայց պետք կար այս արդեն պատրաստ այբուբենը գեղեցիկ և կանոնավոր կերպով նկարել՝ կազմել նորակերտ գրերի տախտակը, որ հին լեզվով պնակիտ է կոչվում և մինչև վերջերս էլ ուսուցանող բարբառով պնակ էր կոչվում: Մեսրոպ Թեև քարտուղար, բայց, ինչպես երևում է, շուներ գրչագրական, կամ ավելի ճիշտ՝ գեղագրական արվեստը: Նա նկարիչ չէր: Եղեսիայում անշուշտ կլինեին ծաղկողներ և գեղագիրներ, բայց նրանք ավելի ասորական մանվածապատ ուրուպտույտ գրերին էին վարժված. ուստի Մեսրոպը լավագուցն համարեց գնալ Սամուսատ, ուր, ինչպես տեսանք, կար նշանավոր հունական դպրոց, դիմել հունական մի գեղագրի և մի վախելու պնակիտ նկարել տալ: Ուստի հրատեղատուով եպիսկոպոսներին (Բաբելյասին և Ակակիոսին), իր օգնականների հետ միասին, Եղեսիայից ճանապարհ ընկալ Սամուսատ:

### 3

Ինչպես Եղեսիայում, նմանապես Սամուսատում լավ ընդունելութուն գտավ Մեսրոպը: Սամուսատի հույն եպիսկոպոսը և ժողովուրդը մեծամեծ պատիվներ ցույց տվին. «Յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր» (Կորյուն, էջ 10): Սամուսատի եպիսկոպոսի անունը չի հիշում Կորյունը, բայց ըստ Պիտերսի («Revue des études arméniennes», № 9, էջ 209) կոչվում էր Անդրեաս, որ Եղեսիայում նեստորական կուսակցութեան գլխավորներից մեկն էր: Սամուսատում Մեսրոպը գտավ հունարենի մի գեղագիր Հոսիփանոս անունով, որին հանձնարարեց նկարել իր ցանկացած պնակիտը: Հոսիփանոսը վերջրեց Մեսրոպի պարզ սևագրութունը և նույն օրինակի վրայից պատրաստեց իր պնակիտը՝ տառերի կարճը կարճ, երկարը երկար պահելով, և նուրբ ու հաստ գծերը գեղեցիկ նկարելով. «Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հոսիփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնրբագոյնսն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնատրն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ» (Կորյուն, էջ 10), կամ, ըստ Միաբանի կազմած բնագրի՝ «զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնատրն» («Արարատ», 1912, էջ 510):

Կորյունի այս բառերը (երբագոյն, կարճ և այլն) տեղիք են

տվել զանազան սխալ բացատրությունների, զանազան հեղինակ-  
ների կողմից: Օրինակ՝ Ստեփան Նազարյանը («Էջիսիսափայլ»,  
1860 թ., էջ 241) հասկանում է ձայնավորների կարճն ու երկարը  
և բաղաձայնի պարզն ու կրկնավորը: Նույնպես Մարկվարտը (էջ  
31) կարճ և երկայն բառերով հասկանում է ձայնավորների ամա-  
նակը (կարճ ու երկար a, ä և այլն), առանձին և կրկնաւոր բառ-  
երով էլ հասկանում է լ—դ, ր—ն, ւ—վ տառերը, որոնցից լ, ր, ւ  
համարում է առանձին, իսկ դ, ո, վ՝ կրկնաւոր (երկու ձայնից բաղ-  
կացած, իբր թե լլ=Ղ, րր=Ռ, իի=Վ): Իսկ նրբագոյն-ի մասին  
չի խոսում:

Սարգսյանն էլ («Բազմամպէպ», 1897 թ., ապրիլ, հավելված,  
էջ 7) հասկանում է միջին դարերի քերականական բացատրությու-  
նները, որոնց համաձայն նրբագոյն են կ, պ, ա, ծ, ց, կարճ են ա,  
ի, ո, և երկայն են է, ով ձայնավորները և եւ, րւ, իւ, կրկնաւոր  
են ր, գ, լ, խ, շ, չ, ո, ց, առանձին էլ՝ մնացյալը:

Այս բոլորը սխալ մեկնաբանություններ են:

Ամենից առաջ պետք է հարց տալ, թե ի՞նչ մարդ էր Հուսիս-  
նոսր և ինչո՞ւ համար Մեսրոպը դիմեց նրան:

Մինչև այժմ պատմվածներից մեզ հայտնի է, որ Հուսիսնո-  
սր գեղազիր էր («զրիշ ոմն հելլենական դպրութեան», — ասում  
է Կորյունը, և ոչ՝ «դպիր»), և Մեսրոպը դիմեց նրան իր կազմած  
տառերը գեղեցիկ կամ ճաշակավոր ձևով նկարել տալու համար:  
Եթե այդպես է, ուրեմն վերի բառերն էլ տառերի գեղազարկան ձե-  
վերը նշանակող բառեր պիտի լինեն և ոչ թե ուրիշ բան: Եթե Հու-  
սիսնոս քերականագետ կամ լեզվաբան լիներ, այն ժամանակ մի-  
այն կարելի էր սպասել նրանից քերականական ուղղումներ: Ինչ-  
պես լեզվաբանությունը հաստատել է, 5-րդ դարում և ավելի առաջ  
հայերենը կարճ ու երկար ձայնավորներ չուներ, հետևաբար կարելի  
չէ Կորյունի կարճ ու երկայնը ձայնավորների ամանակի համար  
հասկանալ, ինչպես անում են Նազարյանը և Մարկվարտը: Բայց  
նույնիսկ եթե 5-րդ դարում հայերենը կարճ ու երկար ձայնավորներ  
ունեցած լիներ, Մեսրոպի կազմած այբուբենում չկա այդպիսի բան,  
ուստի Կորյունի ասածը և Հուսիսնոսի արածը տարրեր բան պետք  
է լինի:

Նույնպես Կորյունի առանձինն ու կրկնաւորը չեն կարող ձայ-  
նաբանական արժեք ունենալ: Մի մարդ, որ իր լեզվի մեջ չունի  
այսինչ կամ այնինչ հնչյունը, չի կարող լսել ու զանազանել, երբ  
մի օտար հնչիւ Թուրքն ու պարսիկը չեն կարողանում զանազանել  
ս և ց, գ և ծ ձայները: Մենք էլ չենք կարողանում զանազանել  
վրացերենի դ և դ՝ ձայները: Այսօր էլ եվրոպացիք չեն զգում մեր

Ի և ու ձայների տարբերությունը և ոչ միայն եվրոպացիք, այլև նույնիսկ վրաստանի հայերը: Այս դատողութիւնը հույն Հոուփանոսն էլ չպիտի կարողանար զանազանել հին հայերենի Բ—ն, Լ—ը, Է—վ ձայները, որոնցից վերջին շորսը այսօր մենք էլ չենք կարողանում զանազանել: Հայերենի 36 ձայներից առնվազն 15 հատը չէր կարող զանազանել խեղճ Հոուփանոսը (ը, ծ, խ, ծ, և, ձ, լ, և, յ, շ, շ, շ, վ, ր, ց), էլ ինչո՞ւ պիտի դիմեր Մեսրոպը նրան՝ այս տառերի ձայնաբանական զանազանությունը որոշելու համար: Նշանակում է, թե այս բառերն էլ ուրիշ բան են նշանակում, քան ինչ որ ենթադրում է Մարկվարտը:

#### Մնաց ներագոյնը:

Կորյունի հին հրատարակութեանց մեջ մի բառ պակաս էր այստեղ, որ այժմ Կորյունի քննական հրատարակությունը դտավ ու ավելացրեց. այդ է— գներագոյնն և զլայնագոյնն: Մի՞ միակ այս բառը կարող է զննել մեզ ուղիղ ճանապարհի վրա և ցույց տալ Կորյունի տված վեց բառերի իմաստը:

Այդ վեց բառերը տառերի գեղագրական ձևին էին վերաբերում. ներագոյնը և լայնագոյնը նշանակում են տառերի հաստ ու բարակ գծերը. օրինակ՝ Ս տառի գծագրութեան մեջ ձախակողմյան երկար սյունը և աջակողմյան կարճ սյունը հաստ են, իսկ թևը՝ բարակ: Այս է հայերեն տառերի ընդհանուր գեղարվեստական ոճը. հորիզոնական գծերը բարակ են, իսկ ուղղահայաց գծերը՝ հաստ: Այս է Կորյունի ներագոյն և լայնագոյն կոչածը: Այս բացատրությունից հետո, ինքնին հասկանալի է դառնում Կորյունի կարճ—ն ու երկար—ը, որով պիտի իմանանք տառերի կարճ ու երկար սյուները: Սրա լավագոյն օրինակը տալիս է Պ տառը, որի աջակողմյան սյունը երկար է, երկու ձախակողմյանները մին մյուսից կարճ: Մնում է առանձին—ն ու կրկնաուր—ը, որ նմանապես գեղագրական ոճի համար ասված պիտի լինի: Արեղյանը, որ իր հոդվածում («Սովետական գրականություն», 1941 թ., № 2, էջ 45—46) ցույց է տալիս Մարկվարտի սխալները և շատ ճիշտ բացատրում է նախորդ շորս բառերի իմաստը, այստեղ Կորյունի առանձին բառով հասկանում է հայերենի ջոկ, մենակ մի տառով գրված հնչյունները, իսկ կրկնաուր բառով հասկանում է երկու տառով կազմված ու հնչյունը, որի հորինումը վերագրում է Հոուփանոսին:

Ես չեմ ընդունում գեղագիր Հոուփանոսի մասնակցությունը ու ձայնավորի հորինման մեջ: Եվ ահա իմ պատճառաբանությունը:

Մեսրոպը Եղեհիայնում կազմել էր արդեն իր այբուբենը. այստեղ որոշել էր նաև ու, ինչպես նաև իւ գրելու ձևը: Նա գիտեր, որ հույները գրում են երկտառ ու, իսկ ասորիները և պարսիկները

գրում են վ և կարգում ու: Ինքը Մեսրոպը հետևեց այս երկուսից որևէ մեկին. կամ հետևեց հունարենին և հնարեց հայերեն ու ձևը, և կամ հետևեց պարսիկներին ու ասորիներին և վ ձայնին տվեց նաև ու հնչումը: Առաջին դեպքում Հռուփանոսի մասնակցությունը վերանում է: Բայց երկրորդ դեպքում էլ չի կարող տեղի ունեցած լինել, որովհետև փորձից գիտենք, թե Մեսրոպն ընդունած էր մի տառին մի հնչյուն տալու սկզբունքը: Ուստի չէր կարող պատահել, որ նա վ տառին նաև ու հնչյունը տված լիներ: Մնում է ուրեմն ենթադրել, թե նա ու ձայնավորի համար Եղեսիայում հնարել էր առանձին մի տառ (մի նշանից բաղկացած, ինչպես արեց հետո աղվաններն այբուբենի համար): Արդ, կարելի՞ է երևակայել, որ Մեսրոպը նախապես ու ձայնավորի համար առանձին մի տառ հնարած լիներ (ինչ որ մեծ առավելություն պիտի լիներ մեր այբուբենի համար), և հետո Հռուփանոսի դրդմամբ ջնջած և հունարենի համաձայն հորինած լիներ ու երկտառը: Այդ անկարելի է, ուստի երկու դեպքում էլ վերանում է Հռուփանոսի մասնակցությունը ու ձայնավորի հորինման մեջ, և նրա հորինումը մնում է Մեսրոպին:

Կա նաև այն կետը, որ դժվար թե Կորյունը մի միակ ու-ի համար առանձին բաժանմունք ստեղծեր (կրկնաւոր) և մնացյալ բոլոր տառերը անվաներ առանձին: Եթե ու-ի նման զուգատառ, բայց միաձայն կապակցությունների թիվը մի քիչ ավելի լիներ հայերենում (ինչպես գերմաներենում ch, sch, stch, ph, pf, th, ie և այլն) կարելի էր այդ երկու բաժանմունքների գոյությունն ընդունել:

Պետք է ասել նաև, որ եթե մյուս շորս բառերը տառերի գծագրական ձևերն են մատնանշում, ինչո՞ւ այս երկուսն էլ՝ առանձին-ն ու կրկնաւոր-ը նույնը չպիտի լինեն և ձայնարանական երևույթներ պիտի նշանակեն: Ես կարծում եմ, որ կրկնաւոր բառի սովորական ու տարածված իմաստը կասեցրել է մեր միտքը և առաջնորդել է մեզ սխալ մտածողության: Բայց եթե աչքի առաջ բերեինք կրկնել բառի հնագույն հայերեն նշանակությունը, որ է «ծալել, ոլորել» (տե՛ս «Նոր Հայկազեան բառգիրք», Ա, էջ 1136, սյունակ ր), որից և ծուր կրկնել «ծունկը ծալել», այն ժամանակ իհարկե կմտածեինք, որ նաև այստեղ կրկնաւոր նշանակում է «ծալած, ոլորած»: Կրկնաւոր (կամ կրկնայար) բառով Կորյունը հասկանում է կլոբ փաթույթներ ունեցող տառերը, ինչպես Ժ, Թ, Մ, Ջ, Ջ և այլն, իսկ առանձին բառով ուզում է հասկանալ Ո, Ս, Լ, Բ և այլն ձևի տառերը, որոնք ուղիղ, շիտակ, անջատ ու մենակ կանգնած են:

Հռուփանոսի մասնակցությունը հայերեն տառերի հորինման մեջ՝ առհասարակ պետք է դուրս գցել ծրագրից: Այն քննիչները, որոնք Հռուփանոսին մասնակից են դարձնում Մեսրոպյան տառ-

րի հորինման գործին, ինչպես, օրինակ, Ստեփան Նազարյանը («Հյուսիսափայլ», 1860 թ., էջ 241), լավ ուշադրությամբ շնն կարգում Կորյունի խոսքերը. «Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հոռւփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն՝ զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնատրն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ» (Կորյուն, էջ 10): Վերջին երկու դերբայները, որոնք Կորյունյան ոճով իբր բայ են գործածված, իբրև ենթակա ունեն ո՛չ թէ Հոռւփանոսին, այլ Մեսրոպին, որ հիշված է շատ ավելի առաջ, ուրիշ բազմաթիւ դերբայներով: Եթէ յօրինեալ և յանկուցեալ դերբայների ենթական Հոռւփանոսը լիներ, գտեալ բառին հաջորդող որով հարաբերականը սեռական հոլով պիտի լիներ (որով): Բայց այսպես չէ, այլ գործիական հոլով է (որով): Ուրեմն և Հոռւփանոսը մի գործիք է, մի միջոց, որով Մեսրոպը «յօրինել» և «յանկուցել» է իր տառերը, այսինքն ա՛յն տառերը, որ արդեն Եղեսիայում, Նախքան Սամուսատ գալը և Հոռւփանոսին գտնելը, «ծնել էր» և «նշանակել, անվանել և կարգել ու հորինել սիղոբաներով և կապերով»:

Սրանից ավելի պարզ և մեկին բացատրություն կամ վկայություն, որ իսպառ ջնջում է ամեն մի կասկած ու տարակույս, չի կարող լինել:

Կանգնած է Մեսրոպը՝ իր սևագրությունը ձեռքին, Հոռւփանոս՝ գրիչն ու վրձինը առած, մեկ նայում է սևագրին, մեկ նայում պնակիտի վրա և պատրաստում հայերենի առաջին այբուբենական տախտակը: Ավելորդ է ասել, որ այս նկարման միջոցին Մեսրոպը տալիս է միշտ իր ցուցմունքները Հոռւփանոսին:

Տառերի ձևավորումից հետո, Մեսրոպն անմիջապես թարգմանության սկսեց. իր երկու հասուն աշակերտների ընկերակցությամբ, որոնցից առաջինի անունն էր Հովհան՝ Եկեղյաց գավառից, իսկ երկրորդինը՝ Հովսեփ, Պաղանական ցեղից. «Ի թարգմանութիւն գառնային հանդերձ արամբ երկուք, աշակերտօքն իրովք...» (Կորյուն, էջ 10):

Թարգմանության համար Մեսրոպն ընտրել է նախ Սողոմոնի մաստունի Առակաց գիրքը և իր պաշտելի բերանով տուն տալով գեղազիր Հոռւփանոսին՝ թելադրել է հայերեն առաջին խոսքը:

ԱՌԱԿԻ ՍՈՂՈՄՈՆԻ ՈՐԳԻՈՑ ԳԱԽԹԻ  
ԹՎԳԱՒՈՐԻ ԻՄԱՏԵԼԻ

Գ Լ Ո Ւ Ե Ա

ՃԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՎ ԶԻՐԱՏ,  
ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ԸՆԵՃԱՐՈՅ

Այս ընտրությունը պատահական չէր. նրա՛ համար Առակաց գրքից սկսեց Մեսրոպը, որովհետև այս գիրքը հենց սկզբից խրատում էր ճանաչել իմաստությունը և կրթությունը, հասկանալ հանճարի խոսքերը. և գիրը, որ սկիզբն էր կրթության և գիտության, կարո՞ղ էր սրանից ավելի՞ գեղեցիկ զուգադիպություն ունենալ. «Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց» (Խորենացի, Գ, Ժգ).— «Եւ եղեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ Եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Կորյուն, էջ 10):

Հռուփանոս ո՛չ միայն իր գեղեցիկ գրչով գրեց հայերեն առաջին գիրքը՝ Սողոմոնի Առակաց գրքի թարգմանությունը, այլև իր մոտ աշակերտ առնելով Մեսրոպի բերած աշակերտներից մի քանիսին, սկսեց սովորեցնել նրանց հայերեն գեղադրության արվեստը, որպեսզի նրանք էլ Հայաստան դառնալով տարածեն իրենց հայրենակիցների մեջ. «Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանգերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան» (Կորյուն, էջ 10).— «Միանգամայն և զարուեստ զըլութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացն» (Խորենացի, Գ, Ժգ):

Ինճիճյանը («Հնախօսութիւն», Գ, էջ 83) հետեցնում է այս խոսքերից, թէ Մեսրոպը Սամուսատի մեջ բաց է արել առաջին հայկական դպրոցը՝ Մեսրոպյան գրերով, ուր աշակերտել են իր աշակերտները, որոնց Հայաստանից Միջագետք էր բերել, ինչպես և Սամուսատի հայ բնակիչների որդիները: Սա նշանակում է ժամանակակից մի հեղինակի թեթև մի խոսքը ավելորդաբար ընդարձակել ու լայնացնել:



Սամուսատում իր գործը վերջացնելուց հետո, Մեսրոպն իր հրաժարական ողջույնը տվեց եպիսկոպոսին և քաղաքին և պատրաստվեց բոլոր յուրայինների հետ վերադառնալ Եդեսիա: Սամուսատի եպիսկոպոսը տվեց նրան հանձնարարական նամակներ՝ Բաբելաս ասորի եպիսկոպոսի հասցեին: Եդեսիա հասնելով, Մեսրոպը նամակները հանձնեց Բաբելասին և իր գտած հայերեն տառերը ներկայացրեց երկու եպիսկոպոսներին: Եպիսկոպոսները երկրորդ անգամ սիրով ընդունեցին նրան, գովաբանեցին և շնորհավորեցին հայ ազգը, որ արժանի էր եղել այսպիսի մի մեծ պարգևի: «Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին, և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց: Որ յորոց նախընկալն եղև, առաջի արկեալ նոցա զնշանագիրն աստուածատուր. վասն որոյ բազում իսկ գովութիւնք իր ցանկալի հայրենիքը՝ Հայաստան. «Յորոց հրաժարեալք այնուհետև և առեալ թուղթս աւետագիրս, հանդերձ շնորհատուր պարգևօքն, և ամենայն իւրայիւքն, ի շնորհացն Աստուծոյ ճանապարհորդ լինէր» (Կորյուն, էջ 10):

Մի ժամանակ Եդեսիայում հապաղելուց հետո, Մեսրոպը երկու եպիսկոպոսներից խնդակցական թղթեր ստանալով Սահակ կաթողիկոսի հասցեին, առավ իր երկնային պարգևը և իր բոլոր ընկերների հետ միասին Ամիդի վրայով ճանապարհ ընկավ դեպի իր ցանկալի հայրենիքը՝ Հայաստան. «Յորոց հրաժարեալք այնուհետև և առեալ թուղթս աւետագիրս, հանդերձ շնորհատուր պարգևօքն, և ամենայն իւրայիւքն, ի շնորհացն Աստուծոյ ճանապարհորդ լինէր» (Կորյուն, էջ 10):

Այս է հա հայերեն գրերի գյուտի ճիշտ և վավերական պատմութիւնը, որ կարող է դիմանալ պատմական քննադատութեան բոլոր առարկութիւններին, կազմված այնպես, ինչպես միակ ժամանակակից և վստահելի հեղինակն է պատմում: Բազմաթիվ են մյուս պատմագիրների, մանավանդ Խորենացու ընծայած տարբերութիւնները, որոնք հաստատելու կամ ընդունելու, կամ ջրելու և մերժելու համար բավական աշխատանքի պետք կա:

Խորենացին, որ, ինչպես ասացինք, ավելի հանգամանորեն է պատմում, քան Կորյունը, Մեսրոպի ճանապարհորդական ուղեգրից հետևյալ ձևով է գծում: Նախ Մեսրոպը Վաղարշապատում ստացած Դանիելյան գրերը անբավարար գտնելով, անձամբ գնում է նույն Դանիելին, նրա մոտ ստուգելու և լրացնելու համար նշանա-

գրեքի պակասութիւնը: Բայց երբ Դանիելի մօտ առաջիններից ավելի ոչինչ չի գտնում, դիմում է Եղեւիա. «Զկնի այսորիկ ինքնին Մեսրոպ իշեալ ի Միշագեստս՝ հանդերձ աշակերտօք առ եռն Դանիել, և ոչ աւելի ինչ գտեալ, քան զառաջինն, անցանէ և յԵղեւիայ» (Խորենացի, Գ, Ժգ):

Այստեղ երկու զխաւոր տարբերութիւն ունենք, նախ՝ որ Կորյունը չգիտն Մեսրոպի երթը Դանիելի մօտ, և երկրորդ՝ Խորենացին չգիտն Մեսրոպի Ամիդ գնալը: Այս երկու պարագաները ըստ իս իրար հետ անձուկ կապ ունեն և օգնում են իրար բացատրելու Խորենացին, փափագելով հանդերձ ընդարձակ պատմել Մեսրոպի և Դանիելի պարագաները, չգիտն Դանիելի գտնված քաղաքը և անորոշ կերպով նշանակում է «ի Միշագեստս»: Այս թերութիւնը այն պատճառով է, որ Կորյունը, ավելի համառոտախոս, քան Խորենացին, չի նշանակած Դանիելի գտնված քաղաքը: Ինչ որ ունի Խորենացին Կորյունից ավելի, կարող է մեկնել կա՛մ հավանական ենթադրութիւնով և կա՛մ բնական հետևութիւնով: Խորենացին ճարպիկ բանասեր է, որ այս միջոցներով լուծում է տալիս անձանթ դնալքերին, ճիշտ այնպես, ինչպես արդի բանասերները: Իր զխաւոր տարբերութիւնն արդի բանասերներից ա՛յն է, որ մինչդեռ այս վերջինները մի դնալք գուշակելու առթիւ «հավանական է թե, կերևի թե, անշուշտ» և այսպիսի բացատրութիւններ են գործածում, Խորենացին, բոլորովին վստահ իր ենթադրութիւն վրա, այս բառերին պետք չի տեսնում և ուղղակի իբրև իրողութիւն տալիս է իր ենթադրութիւնը: Այս բանը ամենևին խարդախութիւն չի, այլ գիտական որոշ ձև, որ մինչև իսկ այժմ էլ շատ սովորական է լեզվաբանների, աստղաբաշխների, երկրաբանների և ուրիշ այս կարգի գիտնականների մօտ:

Երբ Մեսրոպը Դանիելյան գրերը անկատար գտնելով հարավ է իջնում, Խորենացին ա՛յնպես է մտածում, թե Մեսրոպի առաջին գործը պիտի լիներ Դանիելի հաշիվը վերջացնել, ուստի մի անգամ էլ զիմել է տալիս նրան Դանիելին և հուսահատ ետ դառնալ: Եթե Խորենացին մտածեր, թե Մեսրոպը Դանիելի և Հարելի աշխատութիւնը վրա կարող էր վստահութիւն ունենալ և հետևաբար նոր դիմումը ավելորդ համարել, այն ժամանակ այս հավելվածը չպիտի դներ:

<sup>1</sup> Չամչյանը (Ա, էջ 492 և 494) այնպես է ցույց տալիս, որ իբր թե Դանիելը Եղեւիայումն էր գտնվում: Բայց այս բանը հակասակ է եռյակի Խորենացուն, որովհետև Խորենացին ասում է, թե Մեսրոպը Դանիելից ձեռնառնալի մեալոց հետո գնաց Եղեւիա. ուրեմն Դանիելը Եղեւիայում չէր:

Գալով Ամիդ այցելելու պարագային, Կորյունի պատմածից կարելի չէ հասկանալ, թե այս այցելութիւնը ճանապարհորդական էր, թե՛ ուսումնական. ուրիշ խոսքով՝ արդյոք Եղեւսիա երթալու համար քարավանը պարտավոր էր անպատճառ Ամիդ մտնել և այս պատճառով զնաց Մեսրոպն Ամիդ քաղաքը, թե՛ նպատակ ուներ նաև Ամիդում խուզարկութիւններ կատարել գրեթէ գլուտի առթիւ: Ինձ այնպես է թվում, թե այցելութիւնը ճանապարհորդական էր միայն, որովհետև, հակառակ պարագային, Կորյունը որքան էլ համառոտախոս, գոնե մի երկու բառով պիտի հայտնէր, թե Մեսրոպի խուզարկութիւնները ապարդյուն անցան:

Այս հանգամանքները բանասեր Խորենացին ինքն էլ մտածելով, որոշել է հապավել Ամիդի այցելութիւնը: Բայց սրանով երկու պարագա է ի նկատի ունեցել: Եթե Ամիդի այցելութիւնը ճանապարհորդական եղած լինէր, Խորենացու շփոթելը ո՛չ միայն թերութիւն չպիտի համարվեր, այլ մինչև իսկ առավելութիւն, քանի որ այսպիսով ավելորդաբանութիւնից հեռու մնացած պիտի լինէր, և՛ քանի որ մյուս ճանապարհորդական քաղաքները (Եղեւսիայից Ամիդ և Ամիդից Վաղարշապատ) ո՛չ Կորյունի մոտ են հիշատակված և ո՛չ ինքն է հիշում: Իսկ եթե այցելութիւնը ուսումնական եղած լինէր, կարող էր պատահել, որ Դանիել եպիսկոպոսի քաղաքը Ամիդը լինէր: Այս պարագային Խորենացին, Մեսրոպին մեկ անգամ Դանիել եպիսկոպոսի մոտ տանելով և մեկ անգամ էլ Ամիդ անունով միևնույն տեղը տանելով, հսկա անհեթեթութիւն գործած պիտի լինէր. ուստի լավագույն էր շփոթել Ամիդը և սրանով առաւելելն պակասավոր լինէր, քան անհեթեթ:

### 3

Եղեւսիայում, պատմում է Խորենացին, Պղատն անունով հեթանոս (այսինքն ոչ քրիստոնյա) մի ճարտասան կար, որ նույն քաղաքի նշանավոր դիվանի գլխավորն էր. «Անցանէ և յԵղեւսիայ առ Պղատն ոմն ճարտասան հեթանոս՝ իշխան դիւանին» (Խորենացի, Գ, ծգ): Մեսրոպը դիմում է հիշյալ ճարտասանին, որ ուրախությամբ ընդունում է նրան, գործադրում իր ամբողջ հմտութիւնը, բայց վերջապես ստիպվում է խոստովանել իր տգիտութիւնը. «Եւ նորա խնդութեամբ ընկալեալ, և զոր ինչ միանգամ ի միտ առնոր բան հայերէն, յինքն առեալ, և շատ ջանացեալ և ոչ օգտեալ, զտգիտութիւն խոստովանեաց հոստորն» (Խորենացի, Գ, ծգ): Վերջապես Պղատնը հայտնում է, թե Մեսրոպի փափաքը կարող է լրացնել միայն Եպիփանոս անուն շատ գիտնական անձը, որ ժա-

մանակամ իրեն ուսուցիչ էր եղել Եղեախայում և հետո Եղեախայի գիմնազից առնելով գիտնականների գրքերը (ազճարտարացն մատենա), գնացել էր ուրիշ քաղաք և այնտեղ քրիստոնյա էր դարձել: Պղատունը չէր իմանում Եպիփանի գտնված տեղը և միայն խորհուրդ էր տալիս գտնել և նրան դիմել: Այն ժամանակ Մեսրոպը Բաբելոս եպիսկոպոսից օգնություն գտնելով, դիմում է Եպիփանին. բայց սրա գտնված անձանոթ քաղաքը հասած թէ չհասած, լսում է, որ վախճանվել է, թողնելով Ղոփաննոս անունով մի աշակերտ, որ էր «հրաշալի արուեստի հեղին գրչութեամբ»: Այս Ղոփաննոսը քաղված էր Սամոս կղզին (մենակեցությամբ): Մեսրոպն անցնում է Փյունիկեն և դիմում է Սամոս՝ Ղոփաննոսին: Բայց սրանից էլ օգուտ չտեսնելով, հուսահատված մարդկային ամեն հնարագիտությունից, Աստծուն է ապավինում և հայտնությամբ գտնում հայերեն գրերը. «Եւ տեսանէ ոչ ի քուն հրազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աշաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վիմի Ա, Ե, է, Ը, Ի, Ո, Ի, զի որպէս ի ձեան վերջք զծին կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ» (Խորենացի, Գ, Ժգ):

Ազոթբից վեր կենալով, ասում է Խորենացին, Մեսրոպն ստեղծեց մեր գրերը Ղոփաննոսի հետ՝ հունական տառերի անսայթաքություն համաձայն. «Եւ յարուցեալ յազոթիցն, ևստեղծ զնշանագիրս մեր՝ հանդերձ Ղոփաննոսի կերպածեալ զգիրն Մեսրոպայ առ ձեռն պատրաստ փոխատրելով զհայերէն արթութայն ըստ անսայթաքութեան սիւղորայից հելլենացոց» (Խորենացի, Գ, Ժգ):

4

Պղատունի մասին տրված տեղեկության միակ աղբյուրը Խորենացին է՝ ուրիշ տեղից չհաստատված. այսպես է նաև Եպիփանի մասին ասվածը, որի քաղաքն էլ դարձանալի է, որ չի նշանակված: Չամչյանը (Ա, էջ 492) համարում է նրան «սուրբն Եպիփան կաթուղոս Սաղամինոյ»: Ս. Վ. Պարոնյանը («Յերկրագունդ», 1884 թ., էջ 539) կասկած է հայտնում երկու անունների համար էլ, որ ուղղում է Պրոբոս և Իբիսա: Այս երկու անձերը հիշված են Երեմ-Հեստի աստրի մատենագիրների ցանկում («Աստեմանի», Ա, էջ 85), իբրև 5-րդ դարի մատենագիրներ, որոնք գործակից եղան Արիստոտելի գործերը աստրերենի թարգմանելու: Ըստ Պարոնյանի, պետք է դարձյալ, որ Պղատունը կամ Պրոբոսը լինի աստրի, որովհետև հունասեր Խորենացին անկարելի է, որ չհիշեր նրա հույն լինելը,

եթե իրոք հույն եղած լիներ, նույնպես անկարելի է ենթադրել, որ Եղեսիայի այն համբավավոր դիվանը, որ ասորիներին պարծանքն էր, ինչպես և Եղեսիայի ասորի դպրոցը, հանձնված լինեին հույների և ո՛չ թե ասորիներին:

Եթե խորենացին միայն Բաբելոնի անունն է հիշում և Ակադիոս եպիսկոպոսին չի ուզում հիշատակել, այդ էլ այն պատճառով է, որ, ինչպես վերը (§ 2) նշանակեցինք, Կորյունի ասածից պարզ չէ, թե արդյոք Ակադիոս Ամիրի՞ եպիսկոպոս էր, թե Բաբելոնի հետ Եղեսիայի եպիսկոպոս:

Բայց ամենից հետաքրքրականն է հայերեն գրերի գյուտի վայրը: Ըստ խորենացու՝ Սամոս կղզին է, որ վայելում է այդ պատիվը (մինչդեռ մեր քննությունները, հիմնված Կորյունի հաստատուն վկայության վրա, ցույց տվին արդեն, թե Եղեսիայումն է կատարված հայերեն գրերի գյուտը): Արդի քննիչներից ոմանք խորենացու հիշյալ վկայությունը իբրև հաստատ են ընդունում, ինչպես են Ֆրեդերիկ Մյուլլերը («Über den Urspr. d. arm. Schrift» SWAW, 48, 433, որ Կորյունի Սամոսատը մի հին սխալ է համարում), Ալիշանը («Յուզիկք», Ա, էջ 324) և մասամբ Լանգլուան («Collect.», XV): Ալիշանը ասում է. «Մեր գրերուն գտնված տեղն հետաքննության արժանի է. ոմանք Սամոսի տեղ Սամոստիա, այսինքն Շամուշատ քաղաքը կարծեցին. ոմանք այլ ի Բալու եղած է կրսնն այս գյուտս. ստույգն ի ճախնյաց վկայի Սամոս կղզին (Սուսամ աղասը). ս. Մեսրոպայ՝ Պերուֆեն կամ Սիդոնեն կամ մոտ նավահանգստե մը նավելով՝ բոլոր Փոքր Ասիո հարավային եզերքը պտտած է ընդ Միջերկրական ծով, և արևմտյան կողմը կղզեաց մեջ մտեր է ի Սամոս, որ և արժանի է մեր դպրության կամ ս. Մեսրոպայ ուխտատեղյաց մեկն ըլլալու: Բայց Սամոսի անունն էլ չկա Կորյունի մոտ: Կորյունը շատ պարզորոշ հիշում է Սամոսատ քաղաքը՝ իբրև Հոտսիանոս գեղազրի տեղը և այն էլ երկու անգամ, և քաղաք հիշելու ոսկեդարյան ձևով. «ի Սամոսատական քաղաքն, ի քաղաքն Սամոստացոց»: Այնպես որ կասկածել այս մասին բոլորովին ավելորդ է: Եվ ինձ թվում է, թե խորենացու Սամոսը առաջացած է Կորյունի Սամոսատը սխալ կարդալով, որից հետո հեշտ էր ավելացնել «անցեալ ընդ Փրմնիկէ» ձևը: Այս պատճառով է, որ շատ ուրիշներ էլ Սամոսատն են ընդունում իբրև հայերեն գրերի գյուտի վայրը: Այսպես են Ինճիճյանը («Հնախօսութիւն», Գ, էջ 83), Չամչյանը (Ա, էջ 492 և 761), Զարբհանալյանը («Հայկական հին դպրութեան պատմութիւն», Ա տպ., էջ 15, Բ տպ., էջ 36): Ֆնտգըլյանն էլ (էջ 20) ընդունում է Սամոսատը, իբրև հայտնի կենտրոն մշակույթի և ասում է, թե «վայրկյան մը իսկ չէ կարելի երկմտիլ,

թե ո՞րն է վստահելին, Կորյուն, թե Սուա-Կորյուն և Խորենացին: Զամյանը, ուզենալով հաստատել, թե իրոք Սամուսաան է, վկայում է, թե «ես և զի և այն Հռուֆանոս, որ եղև գործակից Մեսրոպայ ի Սամոստիա, բնակեալ էր ի նմին քաղաքի, և եղև յետոյ եպիսկոպոս Սամոստացոց, որպէս է տեսանել ի գիրս արտաքին մատենագրաց»: Այսպէս նաև Պիտերսը («Revue des études arméniennes», N 9, էջ 210) գտնում է 449 թվականին հիշված ասորական աղբյուրներում Rūfīnūs եպիսկոպոս Սամոսատի: Զարբանալյանը (9 տպ. էջ 36 ծան.) համարում է Հռուֆինոս եպիսկոպոս Սամոսատի (440 թ.), հաջորդ նույն քաղաքի Անդրեաս եպիսկոպոսի: Ակիլյանն էլ («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 538) ավելացնում է՝ անդամ Եփեսոսի 449 թվականի ավագածոցովի՝ Խ. Լարուսթյունյանը («Հայոց գիրք», էջ 365—366), ուզենալով երկու կարծիքները հաշտեցնել, նկատում է, թե «արտագրելու ժամանակ ավելի հեշտ է բառերի վանկերը մոռանալ, քան թե մի նոր վանկ ավելացնել», «աչքի առաջ ունենալով նույնպէս Սամոս կղզու հեռավորութիւնը Հայաստանից և Սամոսատի մոտավորութիւնը, և ապա այն հանգամանքը, որ Խորենացին կղզի բառը չի հիշում», հետևցնում է, թե Խորենացու բնագրում գրված էր Սամոսատ, որ հետո գրիչների սխալմամբ դարձել է Սամոս: Բայց ի՞նչ անենք «անցեալ ընդ Փիւնիկէ» բառերը, որոնցով Խորենացին հայտնի կերպով ցույց է տալիս, թե ինչիրը Սամոս կղզու վրա էր և ո՞չ թե Սամոսատի:

Ավելի հանգամանորեն է խոսում այս մասին Մարկվարտը («Պատմութիւն հայ նշանագրերու», էջ 38—39), որ գտնում է, թե Խորենացին Եպիֆան ասելով աչքի առաջ ուներ միայն և միայն Կոստանդինայի (Սալամինայի՝ Կիպրոսի վրա) Եպիֆանոս եպիսկոպոսը (սկսած 367 թվականից և մեռած 403 թվականին), որ ծնունդով պաղեստինացի էր: Եպիֆանի գրքերու հմտութիւնը, Խորենացու կարծիքով, Եղեսիայի դիվանից միայն քաղված կարող էր լինել: Իսկ Հռուֆանոսի կապը Եպիֆանի հետ և Սամոս կղզին քաշվելը հարմարեցված է Փափսոսի պատմութեան վրայից: Փափսոսը (Ե, իէ) խոսում է հույն անապատական Եպիֆանի մասին, որ աշակերտել է Գանիել եպիսկոպոսին և ներսես Մեծի մահից հետո դալիս բնակվում է Մոփր: Այստեղ շատ կրօնական բարենորոգումներ մտցնելուց հետո, իր 500 հոգնավոր աշակերտներին վերցրած, գնում է հունաց երկիրը, քաշվում մեծ ծովերի մեջ առանձնացած անապատ մի կղզի և բնակվում այնտեղ: Այսպիսով Խորենացին

<sup>1</sup> Տպված է ավագածոցովի:

Փաւստոսի պատմածները Եպիփանի մասին՝ դարձնում է Հռոփանոսի վրա, որին անում է Եպիփանի աշակերտ և Հռոփանոսի Սամոսատն էլ դարձնում է Սամոս կղզի:

Ս. Վ. Պարոնյանը («Երկրագունդ», 1885 թ., էջ 147—156) կարծում է, թե Մեսրոպն այս ճամփորդութան ժամանակ մտել է նաև Երուսաղեմ (մի բան, որ բանասերներին ո՛չ մեկը չի ընդունած): Պարոնյանն իր այս կարծիքը հիմնում է Խորենացու «անցեալ ընդ Փիւնիկէ» բացատրութան վրա և նրան համաձայն է գտնում Կաղանկայտվացու նկարագրած ուխտագնացութունը դեպի Երուսաղեմ, թեև այս ուխտագնացութունը Կաղանկայտվացին դրնում է գրերի գյուտից հետո: Ըստ Պարոնյանի, Մեսրոպի ուխտագնացութան նպատակն էր պրպտել նաև Երուսաղեմի գրադարանը՝ գտնելու համար իր ցանկացած գրերը: Երուսաղեմի գրադարանը՝ առաջին անգամ հիմնել էր Որոզինես (3-րդ դար), որ հետո ավելի հարստացրել էր Պամփյուլես վկա (4-րդ դարի սկիզբը): Եվսերիոս կազմեց այս գրադարանի գրքերի ցուցակը. գրքերի թիվը 30000 էր: Երկրորդ գրադարանը հիմնել էր Աղեքսանդրոս եպիսկոպոսը (212—251 թթ.): Պարոնյանի կարծիքը ընդունում է նաև Ղ. Աղալյանը (էջ 27):

Խորենացու պատմությամբ, Հռոփանոսը ո՛չ միայն երևելի մի անձ էր՝ «հրաշալի արուեստի հելլէն գրութեամբ», այլև այնքան բարձր, որ գերազանցում էր իր ուսուցիչ Եպիփանոսին, Դանիել ասորի եպիսկոպոսին, դիվանապետ Պղատոնին և եթե կուզենաք, մինչև իսկ «Աստուծու հրեշտակից», այնպես որ Մեսրոպը ստիպված էր քաղաքից քաղաք թափառել, փնտրել ու գտնել, և երբ նրանից էլ կտրեց հույսը, այլևս ամեն մարդկային հնար վերջացած համարել, քանի որ մարդկային գիտութան գերագույն ներկայացուցիչը անձար էր մնացած: Նույնպես, երբ հրեշտակը աստվածային հայտնությամբ ցույց տվեց Մեսրոպին հայերեն գրերը, սա դարձյալ շքավականանալով՝ պետք զգաց դիմել Հռոփանոսին: Մինչդեռ ըստ ճշմարիտ և բանական պատմութան Կորյունի, Հռոփանոսը, շատ հեռու Խորենացու տված այն բարձր հատկութուններից, մնում է հասարակ մի գեղագիր, նույն այն սովորական արժանիքով, որ ունեին այն ժամանակի գրիչները և ծաղկողները: Հռոփանոսի անունը ո՛չ միայն տարածված չէր Եգիպտոսում կամ այլուր, այլ նույնիսկ Մեսրոպը չպիտի էլ դիմեր այս անձին, եթե Եգիպտոսում մի հունական դպրոց գտնվելով, քիչ թե շատ ճարտար մի հունական գեղագրող էլ գտնվեր: Եվ Մեսրոպը ո՛չ թե հատկապես Հռոփանոսի համար գնաց Սամոսատ, այլ վստահ չլինելով, թե որևէ մի գեղագիր կճարի: Հռոփանոսն էլ մի աբե՛է անձ էր, որին

պատահաբար միայն հանդիպեց Մեսրոպը, ինչպես ցույց է տալիս Կորյունի շահագրանց անփույթ վերաբերմունքը և պատմելու ձևը. «Սու անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Լուսփանոս անուն գտեալ»:

Խորենացին, այսպես բարձրացնելով Լուսփանոսի համեստ դիրքը, լռելյայն բարձրացնել է ուզում Մեսրոպի արժանիքը, որ ավելի հաշտողակ գտնվեց, քան Լուսփանոսը, երբ սա բուրբովին անճար գտնվեց: Բայց Մեսրոպը հազիվ թե պետք ունենա այս տեսակ համեմատութիւնները: Իր արժանիքը մեզ համար պարզ է:

5

Կորյունը, պատմելով հայերեն գրերի գյուտը Մեսրոպի անձնական աշխատութեամբ, մեր նախնայաց բարեպաշտական սովորութեան համեմատ, մի քանի տեղ ակնարկում է, թե այն գյուտը եղել էր «շնորհիւ կամ յաջողութեամբ Աստուծոյ»: Յրինակ, էջ 1, «ԶԱսքանագեան ազգին և Հայաստան աշխարհին զաստուածապարզ և զբարոյն... այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երևեցաւ. էջ 10, «զնշանագիրն աստուածառար... հանդերձ շնորհատուր պարեօքն», և ավելի առաջ՝ «որում պարզէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական շահուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին»: Վերջին խոսքի կազմութիւնը մութ լինելով, թարգմանենք ավելի պարզ ձևով. «Ամեն բան շնորհող Աստուծոց պարզակեց Մեսրոպին՝ նոր, սքանչելի և սուրբ աջով հայերեն լեզվի գրերը իրև հայր ծնելու վիճակը»: Այս վերջին խոսքից երևում է, որ Մեսրոպը, թեև Աստուծո հաջողութեամբ, բայց միայն ինքը իր ձեռքով ծնեց հայերեն գրերը և եղավ նրանց հայրը: Այսպես է վարվում Կորյունը նաև վրացիներն և աղվաններն գրերի գյուտի հետ. առաջինի համար (էջ 15) ասում է. «Ընդ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի և վասն բարբարոսական կողմանն և առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյ նմա ի Տեառնէ»: Աղվանից գրերի համար էլ (էջ 18) ասում է. «և նորա հարցեալ և քննեալ զբարբարոս զրանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս, ըստ վերեալպարզ կորովի սովորութեան իւրում. և յաջողութեամբ Քրիստոսի շնորհացրև, կարգեալ և հաստատեալ կշռէր»:

Կորյունի մոտ, ինչպես տեսնվում է, հրաշք չկա: Այսպես է նաև Փարպեցին. «Կարգեալ այնուհետև, Փրկչին առաջնորդութեամբ, ըզգիր գրենոյն հայերէնի» (էջ 42): Բայց Խորենացին ակնարկութիւնները մեծացնելով, վերածում է հայտնի հրաշքի, որի համեմատ



Աստված տեսիլքի մեջ հայտնում է Մեսրոպին մեր հայերեն գրերը: Ս. Վ. Պարոնյանը, որ մանրամասն քննում է հրաշքի ավանդութիւնն պարագաները («Ծրկիրագունդ», 1885 թ., էջ 202—210 և 243—251), ցույց է տալիս, թե խորենացու պատմութիւնը ձևացած է Կորյունի վերի հատվածի մեջ («որում պարգևէր իսկ վիճակ...») իւրով ստացականը «ամենաշնորհող Աստուծոյ» վերագրելով, մինչդեռ, ըստ Կորյունի, Մեսրոպին է պատկանում. այսինքն, թե Մեսրոպն իր աշով հորինեց տառերը (խորենացին հասկացել է Աստուծո աջը)՝ ընթե Կորյունը իրոք հավատացած լիներ, թե Մեսրոպն Աստուծո հայտնութեամբ (հրաշքով) ստացավ հայերեն գրերը, անկարելի է, որ լայն կերպով շփանրանար այս կետի վրա, ինքը, որ առիթ է փնտրում Մեսրոպին «աստվածամերձ» ցույց տալու և Մովսեսի հետ համեմատելու ժամանակ՝ իր արածը հանդգնութիւն չէր կոչի:

Խորենացու տեսիլքին հետևում են մեր բոլոր հետագա պատմիչները և հայերեն տառերը համարում են աստվածային հայտնութիւն, որ քանի առաջանում ենք դեպի նոր ժամանակները, այնքան ավելի նյութական կերպարանք է ստանում: Այսպես, Հովհաննես կաթողիկոս՝ «Մեսրոպայ բերեալ զնշանագիր մերոյ լեզուի, զոր զոգցես նմա պարգևեալ ի տեսչութենէ շնորհացն Աստուծոյ». Ասողիկ՝ «Վերստին աստուածատուր նշանագրօք զնոյնս յեղանակեալ յօրինէ». Սամվել՝ Անեցի՝ «Եւ յետ միոյ ամի դարձեալ աստուածատուր նշանագրօք զնոյն յեղանակէ». Շնորհալի, «Վիպասնութիւն»՝

«Բարեաց արմատ Հայոց եղեալ,  
Զիմաստութեան գանձըն խնդրեալ,  
Զոր աղօթից մասամբ գտեալ,  
Հոգւոյն մասամբ տպաւորեալ,  
Ըստ Մովսեսի արժանացեալ,  
Զաստուածային տառս ընկալեալ,  
Երիւք տասամբք վեցիւք յանգեալ,  
Արեգական ելիւք շափեալ»:

Կիրակոս պատմիչ՝ «Եւ իբրև թափեցան յամենայն մարդկային հնարից, ապաւինեցան յայն, որ ամենայն ինչ հնարաւոր է նմա, աղօթիւք խնդրել ի Տեառնէ... իսկ այն որ զկամս եկիւղածաց իւրոց առնէ Տէր և աղօթից նոցա լսէ, ոչ անտես արարեալ զբարի խընդրուածս, երևեալ Մեսրոպայ թաթ ձեռին Հզօրին՝ գրելով ի վերայ վիմի և ծանուցաւ ամենայն համայնգամանս (հանգամանս), և յարուցեալ ստեղծ զգիրսն»: Ավելի ճոխ է Վարդան պատմիչը. «Տայ նմա Աստուած գիւնդրելին, չորեքտասան գիրս, աշով իւրով դրոշ-

մեալ առաջի նորա, որպէս մեծին Մովսեսի ի լեռան Սինայ... որ  
 և ի ձեռն աստուածատուր պարգևացն զճառագայթս Արքայ Երրորդու-  
 թեանն առեալ մարգարէիք և առաքելովք և աւետարանչօք և երկ-  
 նային դասուք և ամենայն արդարոցն խմբիք, զայլ մտանէր ի  
 Հայաստան աշխարհս, և զանձէր յեկեղեցիս մեր զանասելի գեղեց-  
 կութիւնս ի զարդ հոգոց և մարմնոց, և ի պարծանս յախտենից,  
 զոր ոչ արար ամենայն ազգաց Տէրն բոլորից: Քանզի ոչ ճարտա-  
 րօք և ոչ միջնորդովք իմաստնացաք և առաջնորդեցաք առ նա, այլ  
 ի յերկնապարզ և յաշխարհաստեղծ աշոյն գրեցաւ մեզ դպրութիւն  
 սուսման և Տեառն մերոյ և Աստուծոյ յիշատակն կենդանի է ի մա-  
 տեանս մեր, զօրութիւն տալով և շնորհս, որք հաւատովն մատչին  
 և բանականապէս: Վասն որոյ փառք, պատիւ և զօրութիւն տու-  
 դին և օրհնութիւն ի Տեառնէ ածողին առ մեզ, և պայծառութիւն  
 յիշատակի անուան նորա ի գիրս կենաց: Սահակի և Մեսրոպի  
 անանուն պատմութիւնը («Սոփեբք», Բ, էջ 40), ասում է, թէ ա-  
 մենայն ազգի մարդկան հնարիք ստացեալ եղև դիր բաց ի Հայոց  
 և յԵրրայեցուց, որոց յԱստուծոյ պարգևեալ եղև, և (էջ 41) ավե-  
 յացնում է. «Եւ արդ Երրայեցուցն որպես ասացաւ պարգևեալ եղև  
 գիր յԱստուծոյ ի ձեռն մեծին Մովսեսի նախամարգարէի առնելով  
 նոցա օրինադրութիւնս ըստ հրամանին Աստուծոյ: Իսկ ի նորումս  
 մեզ միայն շնորհեցաւ գիր յԱստուծոյ ի ձեռն սրբոյն Սահակայ...  
 և մեծին Մեսրոպայ»:

«Գանձարան»-ն էլ ավելացնում է.

«Որպէս երբեմն Յակոբեան ազգաց  
 Զբանս օրինաց ի տախտակն գրեաց,  
 Օրհնեալ Փրկիչն որ զՀայք մեծարեաց,  
 Քան զամենայն ազգ գերազանցեաց»:

«Գիրք թղթոց»-ի մեջ էլ (էջ 534), վանականի թղթում կար-  
 դում ենք. «Թայց թէ գիր շունէին՝ Հայք, թէ զա՛յս կարեն ասել.  
 այլ տե՛ս զի յԱստուծոյ առաւ գիր ազգիս՝ որպէս Մովսէսիւ Իսրա-  
 յեղի. և այլ ո՛ր ազգ պարծի այսու»:

Նոր քննիչները մեծ մասամբ իբր ստույգ ընդունել են տեսիլ-  
 քի կամ հրաշքի պատմութիւնը. այսպես՝ Ինճիճյանը («Շնախօսու-  
 թիւն», Դ, էջ 74—77), Զամչյանը (Ա, էջ 755—761), և սրանց հե-  
 տեղորդները: Մալխասյանը (Թրգմ. Խորենացու, էջ 327), թեև չի  
 ընդունում հրաշք, բայց նկարագրում է այդ երևույթը իբր «տեսա-  
 բանական ռեֆլեքս», երբ մարդ միևնույն բանով երկար ժամանակ  
 զբաղվի մտքով, հանկարծ աչքի առաջ կտեսնի իրականացած իր  
 մտածմունքը՝ տեսիլքի պես: Քչերն են միայն, որ անվավեր են հա-

մարում հրաշքի կամ տեսիլքի երևույթը. իսկ գիտութեան ու քննական պատմութեան համար դա մի սովորական առասպել է: Զորեղ և լավ պատճառաբանող հակառակորդների մեջ կարող ենք հիշել Ս. Վ. Պարոնյանին և Ա. Մ. Գարագաշյանին, որի բացատրութեամբ «մենք չենք կրնար որևիցե կերպ հայտնութեան ընծայելով մեր գրույն գյուտն՝ առնել ծաղրելի մեր պատմութիւնը լուսավորյալ աշխարհի: Ուստի թողով մեր սիրելի ծերունին (հորենացի) յուր բարեպաշտ միամտութեան մեջ՝ բնականն դուրս բան չենք տեսներ մեր այբուբենի գյուտին մեջ» («Քննական պատմութիւն», Դ, էջ 38):

Հրաշքի դեմ են խոսում նաև Եղիշե եպիսկոպոս Դուրյանը («Մաղիկ» շաբաթաթերթ, 1907 թ., № 9, էջ 103) և Սահակյանը («Բազմավէպ», 1907 թ., էջ 439): Սրանք գտնում են, որ Կորյունի մեջ հրաշք չկա. դա հորենացու հնարածն է. եթե որևէ հրաշք տեղի ունեցած լիներ, անկարելի է, որ Կորյունը ուռցրած ձևով շփոթեր այն. բացի սրանից, հայերեն գրերը հունարենի վրայից են ձևված, սրված է նրանց հունարենի շարքը. էլ ի՞նչ հրաշք: Սահակյանը հիշում է նաև Ռեթեոս Պերպերյանի երգծական մի խոսքը, թե «Աստված հրաշք ընելու համար՝ հույն գրերու շի կարոտիր»:

Խորենացին, մեր գրերին հրաշալի ծագում տալու համար աստվածային հայտնութեան ընծայելով նրանք, ո՛չ միայն նվաստացնում է Մեսրոպի անձնական արժանիքն ու գործը, այլև բոլորովին ջախջախում է նրան՝ գրերի ստեղծագործութիւնից հետո Հռուփանոսին հանձնելով՝ «կերպաձևելու և փոխադրելու» համար: Եթե աստվածային թաթը ցույց էր տված Մեսրոպին հայերեն գրերի ձևերը, և եթե Մեսրոպ «յարուցեալ յաղօթիցն, ևստեղծ զնշանագիրս մեր», ի՞նչ պետք կար Հռուփանոսի միջամտութեան և «կերպաձևութեան». «Միթէ՞ աւելի ինչ Հռուփանոս քան զհրաշալին թաթ ձեռին աջոյ», — հարցնում է Գարագաշյան («Քննական պատմութիւն», Դ, էջ 39): Բայց թե այստեղ էլ խորենացին սխալմունքի մեջ է՝ հայտնի երևում է Կորյունի այն պարզ և բացորոշ հայտարարութիւնից, որով հաստատում է, թե Մեսրոպ ծնալ հայերեն գրերը, տվեց նրանց ձևերը, անունները և շարքը. «Եւ անդ վաղվադակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէին սիղոբայիք և կապօք» (Կորյուն, էջ 10), իսկ Հռուփանոսի գործը գեղեցիկ արտագրութեան մեջ էր կայանում միայն:

Վերևում քննեցինք այն հարցը, թե ո՞ւր էր գտնվում Հռուփանոսը. Սամոսի՞ մեջ ըստ խորենացու, թե՞ Սամուսատ՝ ըստ Կորյունի. բայց այս քննութիւնը կապ չունի հայերեն գրերի գյուտի

հետ: Հայերեն գրերի գյուտի տեղը այնպես պարզ կերպով հիշված է Կորյունի մոտ, որ զարմանում ենք, թե ի՞նչպես նոր քննիչները սրա վրա տարակարծիք են: Ստեփան Նազարյանը («Էխսիսափալ», 1860 թ., էջ 240) չի կարողանում որոշել՝ Ամի՞գ թե Եղեսիա: Ինչ էրբ Իսահակ Հարությունյանը («Հայոց գիրը», էջ 360—367) առանձին մի գլուխ է նվիրում հայերեն գրերի գյուտի տեղը որոշելու համար և զանազան տեղեր թափառելուց հետո, վերջապես Սամոսատն է հարմար գտնում, անշուշտ Կորյունի խոսքերը լավ չհասկանալուց է: Բայց այսպե՞ս պիտի վարվեին նաև մյուսները: Մխլաների և թյուրիմացության գլխավոր պատճառներից մեկն էլ այն կույր վատահույությունն է, որ ունեն շատերը Խորենացու նկատմամբ: Արզարև, Խորենացին ինքը ամենից առաջ խաթարելով Կորյունի պատմությունը, Մեսրոպին տանում է Սամոս կղզին և այնտեղ տեսիլքի մեջ գրերը գտնել տալուց հետո, ներկայացնում է Հռուփանոսին, այս արտագրիչին ընծայելով վերջնական հեղինակությունը:

Բայց, ինչպես նախորդ քննություններից գիտենք, Մեսրոպը Հռուփանոսին գտնելուց շատ առաջ գտած էր արդեն հայերեն գրերը և ամեն ինչ վերջացրած: Կորյունի «անտի ի Սամոսատական քաղաքն գումարէր» խոսքը ջանացիներ ցույց տալ, թե վերաբերում է Մեսրոպի աշակերտներին և ո՛չ թե Մեսրոպին: Բայց մինչև իսկ եթե այս խոսքը Մեսրոպին վերաբերած լիներ, «գումարէր— պատրաստվում էր» ձևը թույլ չի տալիս ընդունել, թե Մեսրոպը հեռացել էր այն քաղաքից, ուր գտնվում էր (Եղեսիա): Հետևաբար, Կորյունի հաջորդ պատմությունները, Մեսրոպի աշխատանքները, աստվածային օգնությունը և գրերի գյուտը, բոլորն էլ տեղի են ունեցած նույն Եղեսիա քաղաքում: Այս բանը ցույց է տալիս նաև Կորյունը հրորդ անգամ, երբ գրերի գյուտը պատմել վերջացնելուց հետո, ասում է. «Եւ ապա հրածարեալ յեպիսկոպոսացն սրոց, հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոստացոց»։ այն սուրբ եպիսկոպոսներն են Բարիլաս և Ակակիոս, և Մեսրոպի թողած քաղաքն է Եղեսիա:

Մարկվարտն էլ (էջ 26—29) ուրիշ սխալի մեջ է ընկնում: Կավ չհասկանալով Կորյունի պատմությունը և շփոթվելով այն բանից, որ Կորյունը նույն հատվածում երկու անգամ ասում է, թե Մեսրոպը գնաց Սամոսատ («անտի ի Սամոսատական քաղաքն գումարէր... իջանէր ի քաղաքն Սամոստացոց») կարծում է, թե Կորյունը «գրերի գյուտի մասին պայծառ դադարիս շուներ», թե այս մասին «երկու տարբեր տեղեկություններ էր ստացել, որոնք անհարմար կերպով կպցրել է իրար»: Այս մտածությամբ, Մարկվար-

տը Կորյունի երկու էջը՝ սկսած «Իբրև ի վերայ հասնալ թէ շին բու-  
ւական նշանագիրքն...», մինչև «հանդերձ ուսուցանելով մանկունս  
գրիչս նմին դպրութեան», կտրատում է երկու մասի, այն ձևով, որ  
մեկի մեջ մտնում է մի Սամուսատը, մյուսի մեջ՝ մյուս Սամուսա-  
տը: Այսպիսով երկուսի էլ ընդհանուր եզրակացությունը այն է լի-  
նում, որ գրերը հնարվեցին Սամուսատում: Բայց դա սխալ է: Կոր-  
յունի համար չի կարելի ասել, թե նա պայծառ գաղափար շուներ  
գրերի գյուտի մասին, որովհետև Մեսրոպի աշակերտը, դեպքերին  
ակնատես, ով գիտե քանի՞ անգամ լսել էր Մեսրոպի պատմած-  
ները իր ճամփորդության մասին, կամ եթե Մեսրոպը չէ, իր դաս-  
ընկերները շուրջանից ու շուրջանից և շատ պայծառ գաղափար ու-  
նեն տառերի գյուտի բոլոր հանդամանքների մասին. իսկ եթե մի  
րոպե ենթադրենք էլ, թե այսինչ կամ այնինչ կետը չգիտեր, դաս-  
ընկերներից կիմանար: Միայն է նույնպես ա՛յն, թե Կորյունը եր-  
կու տարբեր տեղեկություն էր ձեռք բերել գրերի գյուտի մասին.  
ուզողը կարող է բանալ Մարկվարտի 26—29 էջերը և կարգալ եր-  
կու տարբեր սյունակներով դրված տեղեկությունները և պիտի տես-  
նի, որ այդ երկուսը ո՛չ թե տարբեր են, այլ միմյանց շարունակու-  
թյուն են կազմում և իրար են լրացնում: Տարբեր տեղեկություններ  
լինելու համար, տարբեր բաներ պատմած պիտի լինեին: Բայց այդ  
երկուսի մեջ ո՛չ մի հակասական բան չկա և երկուսն էլ պատմում  
են Մեսրոպի արածները Եդեսիայում և այնտեղից էլ Սամուսատ  
գնալը: Ընդհակառակը, անհասկանալի է դառնում պատմությունը,  
երբ այսպես երկուսի է բաժանվում, և միմյանց միջև եղած կապը  
կտրվում է: Մարկվարտը ճիշտ պիտի ըմբռներ իրերը և այս ավե-  
լորդ կտրատման կարիք չպիտի զգար, եթե մի քիչ ավելի խորհրդ-  
դածներ գումարել բառի իմաստի վրա:

Մարկվարտի նման Ակինյանն էլ («Հանդէս ամսօրհայ», 1935  
թ., էջ 515—516) խրատում է այն բանից, որ Կորյունը երկու ան-  
գամ է հիշում Սամուսատը և նրանից խուսափելու համար ուրիշ  
անպատեհություն մեջ ընկնում: Նա սրբագրում է Սամուսատական  
բառը և դարձնում Սամուսատական: Այսպիսով Մեսրոպին տանում  
է Մամեստիա քաղաքը (Կիլիկիա), ներկայացնում Թեոդորոս եպիս-  
կոպոսին, որի խորհուրդներով և օգնությամբ Մեսրոպը հնարում  
է հայերեն գրերը, հետո իջնում Սամուսատ՝ Հուսիսային մաս: Այս-  
պիսով, հայերեն գրերի գյուտի վայրը դառնում է ո՛չ Եդեսիա, ո՛չ  
Սամուսատ, այլ Մամեստիա (Կիլիկիա): Ակինյանն ասում է, թե  
Կորյունը դիտմամբ չի հիշել Թեոդորոսի անունը, որովհետև ավելի  
ուշ նա նեստորական դարձած լինելով, նրա անունը խոտելի էր:

Ահա այն անտեղությունները, որ ծագում են այս սրբազրու-  
թյունից.

1) Կորյունը պատմում է, թե Մեսրոպը գնաց Ամիգ և Եղեսիա. այստեղ իր աշակերտներին երկուսի բաժանեց, մի խումբը զրազ ասորոց դպրոցը (Եղեսիա, ուր էր) և մյուսը ուղարկեց (գումարէր) Սամուսատ: Ակինյանը գումարել բայը շեղոք մտքով առնելով, Մես-  
րոպի համար է համարում. այս դեպքում և ճորա բառերը անտեղի են դառնում: Իսկ եթե վերցնենք ներգործական (ուղարկեց), շատ հարմար են գալիս:

2) Աշակերտների առաջին խումբը պահեց Եղեսիա, իսկ երկ-  
րորդ խումբը եթե Սամուսատ շուղարկեց՝ ո՞ր ուղարկեց: Ակին-  
յանն իրանից ավելացնում է «յԱմիգ»․ ո՞վ իրավունք տվեց այս  
կամայական հավելվածն անելու:

3) Բայց Մեսրոպը և աշակերտները, ըստ Կորյունի, Եղեսիա-  
յումն էին, երբ բաժանումը և առաքումը եղավ. ուրեմն Մեսրոպն  
աշակերտների երկրորդ խումբը նորից հետ ուղարկեց Ամիգ, որ-  
տեղից մեկնել էին: Չէ՞ր կարող Մեսրոպն Ամիգում եղած ժամա-  
նակ խումբը բաժանել և պահել այնտեղ. ի՞նչ կարիք կար Եղեսիա  
տանելու և այնտեղից նորից հետ ուղարկելու:

4) Ակինյանն ասում է, թե բաժանումը «հավանորեն ճանա-  
պարհին» եղավ. սրանով շատ ծիծաղելի դուրսյան մեջ է դնում  
Մեսրոպին: Երեւակայեցեք նրանց, որ Ամիգից գնում են Եղեսիա:  
Հանկարծ ճանապարհին Մեսրոպը կանգնեցնում է աշակերտներին,  
բաժանում նրանց երկուսի, մի մասը հետ ուղարկում Ամիգ, մյուս  
մասը հետը տանում Եղեսիա:

5) Ակինյանն ասում է, թե Կորյունը պիտի ասեր «ի Սամուսա-  
տացոց քաղաքն» (ինչպես ասում է երկրորդ անգամին) և ո՞չ թե  
«ի Սամուսատական քաղաքն»: Եթե այդպես է, ուրեմն և չպիտի  
ասեր «Սամուսատական»: Կորյունը երկու ձևերն էլ գործածում է  
(հմտ. «Կոստանդինական քաղաքն», էջ 27 և 33):

6) «Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց...» ի՞նչ  
եպիսկոպոսներ են սրանք: Կորյունն այն սովորությունն ունի, որ  
երբ Մեսրոպին տանում է մի քաղաք, նախ ծանոթացնում է նույն  
քաղաքի եպիսկոպոսի հետ, մեկնելու ժամանակ էլ նրանից հրա-  
ժեշտ է առնում: Այսպես՝ Ամիգ, Եղեսիա, Սամուսատ, Վրաստան,  
Աղվանք, Պոլիս, նույնիսկ Մելիտինե: Իսկ այստեղ՝ Սամեստիայի  
եպիսկոպոսներին հետ ծանոթացում չկա, բայց հրաժեշտ կա. որով  
և Եղեսիայի եպիսկոպոսների հրաժեշտը ջնջվում է:

7) Ակինյանը հրաժեշտ տված այն եպիսկոպոսների համար  
ասում է, թե «հավանորեն Կիլիկիո եպիսկոպոսները կակնարկե,

որոնց հանդիպած է ճանապարհին, գլխավոր հանգրվաններու մեջ»։  
Ձեռք է առել մեզ Ակինյանը...

8) Եթե Մամեստիա քաղաքը հիշված լիներ Կորյունի մեջ, անկարելի է, որ Խորենացին շհիշատակեր իր պատմության մեջ, նա՛, որ քաղաք է որոնում ման ածելու համար Մեսրոպին մինչև Սամոս։

Այսպիսով կշնչվի եկամուտ Մամեստիան և հայերեն գրերի վայրը նորից կմնա Եդեսիա։

Այստեղ գուցե առարկվի, որ եթե Մեսրոպը Եդեսիայում արդեն գտավ հայերեն գրերը, հապա ինչո՞ւ նույն միջոցին իսկ չներկայացրեց եպիսկոպոսներին և Սամոսատից դարձին միայն «առաջի արկեալ նոցա զնշանագիրն աստուածատուր»։ Բայց սրա պատասխանը շատ պարզ է։ Մեսրոպի առաջին անգամ կազմած ցուցակը անգեղարվեստական հասարակ մի բան էր և անարժան՝ ներկայացնելու եպիսկոպոսներին։ Իսկ երբ Հռուփանոս գեղազրեց այն գրերը և պատրաստեց վայելուչ մի պնակիտ, այն ժամանակ Մեսրոպը արժանի տեսավ մատուցանելու եպիսկոպոսներին։ Պետք է ավելացնել, թե Մեսրոպը պնակիտի հետ ցույց տվեց նրանց նաև Առակաց գրքի հայերեն թարգմանությունը, որ իր գլուտի արժանավորության միակ գրավականն էր. ապա թե ոչ, ի՞նչ մեծ բան էր անշունչ տառերի մի ցուցակ։

7

Վերջացնելուց հետո Խորենացու ընծայած տարբերությունների քննությունը, անցնենք մյուս պատմագիրներին, որոնք շատ ավելի համառոտ լինելով, թվով էլ նվազ տարբերություններ են պարունակում։

Փոքր Կորյունը այնպես է սեղմում և կրճատում դեպքերը, որ մեր երկու գլուխներում (երրորդ և չորրորդ) պատմածները ճիշտ իր երկու փոքրիկ էջերում ամփոփելով, անճանաչ մի բանի է վերածում։ Առանց պատմելու համագումար ժողովը, որ տեղի ունեցավ գրերի գլուտին նպաստելու համար, Վոսմշապուհ թագավորին տալիս է «նախանձայուզ լինել» (այսինքն եռանդով հարել) այս գործին և Սահակի հետ միանալով, Մեսրոպին իր աշակերտներով միասին ուղարկում է Ասորոց Միջագետքը։ Մեսրոպը ման է գալիս բոլոր այն քաղաքները, ուր լսում է, որ հուշակավոր մի իմաստուն կա. «Եւ երթեալ նորա խուզէր ուր ուրեք իմաստասիրաց համբաւէր գիտութիւն» (էջ 9)։ Մի օր էլ պատահաբար հանդիպում է Դանիել անուն ասորի առաքինի մի եպիսկոպոսի, որ հայտնում է, թե կարող է ցույց տալ իր ցանկացած գրերը։ Բայց շեղար աշ-

խատություններին, քննութիւններին և ուսումնասիրութիւններին հետո, Մեսրոպն անհույս է մնում Դանիելին, որովհետև նրա գրե-  
րը հայերեն բառերն ամբողջ չէին կարող ներկայացնել: Այն ժա-  
մանակ դիմում է Աստծուն և խորենացու տեսիլքով գտնում է հա-  
յերեն տառերը, որ ձևել է տալիս Թուփինոսին (= Հոուփանոս)՝  
Սամոսի մեջ:

Ինչպես տեսնում ենք, Փոքր Կորյունի մեջ ո՛չ միայն Վոսմ-  
շապուհի տեղեկութիւնը և Վահրիճի ու Հաբելի մասնակցութիւնն  
է հապավված, այլև Դանիելի կարևոր մասնակցութիւնը, Դանիել-  
յան նշանագրերի երկամյա գործածութիւնն ու խափանումը, Մես-  
րոպի ճամփորդութիւնը Ամիդ, Եդեսիա և Սամուսատ, և վերջա-  
պես իր աշխատանքները Եդեսիայում: Այս բոլորը մի հետին գրո-  
ղի շափազանց համառոտախոսութիւն անճարակ արդյունքը լինե-  
լով, չենք ուզում ավելի ևս ծանրանալ այստեղ:

## Տ

Ավելի տարօրինակ է Փարպեցին, որ ամբողջ մեր ներկա չոր-  
րորդ գլխի նյութը և ոչ իսկ մի տառով չի նշանակած: Ըստ Փար-  
պեցու, Դանիելյան նշանագրերն են սկիզբ և վերջ ամեն բանի:  
Երբ Հաբել քահանան բերավ այն գրերը, Մեսրոպը և Սահակը ու-  
րախութիւնով ընդունեցին և դրին գործածութիւն մեջ. Սահակը և  
սրա նշանակած չորս հունագետ քահանաները (Հովհան Եկեղեցա-  
ցի, Հովսեփ Պաղնացի, Տեր Խորձենացի և Մուշե Տարոնացի) լրաց-  
րին այն գրերի պակասութիւնը հունարենի միջոցով և Մեսրոպին  
սովորեցնելով, եղան հիմնադիր հայ այբուբենի: Ահա՛ Փարպեցու  
ամբողջ պատմածը՝ իր բառերով. «Իսկ արքային Հայոց սուրբ կա-  
թողիկոսան Սահակաւ և երանելեան Մաշթոցի ընկալեալ զնշա-  
նագիրսն ի Հաբելէ՛ ուրախ լինէին: Եւ այսպէս դիպեալ դիտի նշա-  
նագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշթոց, յերիւրելով  
զնա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ  
ցուցանելով կարգադրութեան զրենոյս և հեզնային ուղղաձայնու-  
թեան, տալով նմա օգնականս և այլ արս բանիրունս և մտացիս ի  
քահանայիցն Հայոց, որք էին սակաւ մի և նոքա, որպէս երանե-  
լին Մաշթոց, մերձատրեալք ի յունարէն հեզնայսն. որում առաջ-  
նոյն անուն էր Յոհան՝ ի գաւառէն Եկեղեցաց, և երկրորդին Յով-  
սէփ՝ ի Պաղանական տանէն, և երրորդին Տէր՝ ի Խորձենոյ, և չոր-  
րորդին Մուշէ՛ ի Տարօնոյ: Որոց օգնելով զօրէր երանելին Մաշթոց,  
հանդիպեցուցանէր զհայերէն արթութայսն ըստ կարգման սխիւրա-  
յիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկո-



սէն Սահակայ զաթուփայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունին: Վասն զի ոչ լինէին բաւական ի վճարել անսխալ ուղղակի՝ առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ հայրապետին Սահակայ, որ յոյժ առլցեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնովքն Յունաց, եղեալ կատարելապէս հմուտ երգողական տառիցն և հոետորական յորդասաց յայտնաբանութեան. ևս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւր» (Փարպեցի, էջ 39—42):

Սրա հետ միացնելով նաև այն խոսքերը, որ Փարպեցին դնում է Սահակի բերանը (տե՛ս վերը, գլուխ երրորդ, § 6), կտեսնենք, թե շփազանց նվաստացած է այն երանելի անձի արժանիքը, որ մեր հայ մատենագրութեան հայրն ենք ճանաչում: Եւ արդարև, ի՞նչ է մնում Մեսրոպին, եթե հայկական նշանագրերը Դանիելի ուղարկած գրերն են, որոնց թերույթներն էլ Սահակ և այն շորս քահանաներն են լրացրել: «Այսպիսով, բավական մեծ փոփոխութեան է ենթարկվում հայ գրերի գլուտի պատմութիւնը,— ասում է Միաբանը («Արարատ», 1901 թ., էջ 547),— ավելանում է Դանիելի բաժինը, պակասում է Մաշտոցինը, որ լավ կշռված բառերով արտահայտում է Ղազարը՝ «և այսպէս դիպեալ գիտի նշանագրացն» և այլն: Բայց թե մի Ղազարի ընդհակառակը շղջոված խոսքերը ամենևին բավական չեն այսպիսի մի ստորացում հասցնելու Մեսրոպին՝ հայտնի է ամենքին, որ գիտեն, թե ի՞նչ է պատմական քննադատութիւնը:

Ղազարի այս հատվածի քննութեամբ ու հերքումով մանրամասն զբաղվել է Գրիգոր Խալաթեանը, «Ղազար Փարպեցի և գործք նորին» (էջ 66—73): Այս գրքի ինչ-ինչ մասերը թեև այժմ հնացած են Ղազարի հայտնի հատվածի հապավմամբ և Խորենացու ժամանակի հետնութեամբ, բայց ընդհանուրը մնում է միշտ նույնքան ուժեղ և նույնքան փաստական, ինչքան էր իր նոր գրված ժամանակ:

Խալաթեանի հերքումը հետևյալ փաստերի վրա է կայանում համառոտիվ.

ա) Կորյունը, լինելով Մեսրոպի կենսագրութեան լիակատար աղբյուրը, իսկ Ղազարը ո՛չ աշակերտ և ո՛չ իսկ ժամանակակից, բնական է, թե առաջինի տված տեղեկութիւններն ավելի վավերական են. Ղազարը քաղում է Կորյունից, և եթե Կորյունի համար գրերի գլուտը այնքան էլ հեշտ բան չէր, ինչպես՝ Ղազարն է կարծում, և եթե այս գործի մեծագույն և գրեթե միակ բաժինը Մեսրոպին է տրվում Կորյունի մոտ, անշուշտ այս է միայն ճշմարիտ:

բ) Որտեղի՞ց է առնում Ղազարն այն տեղեկութիւնը, թե Սահակը սովորեցրեց, առաջնորդեց և դուրահնար ճանապարհ ցույց

տվեց Մեսրոպին, կամ թե այն շորս քահանաների օգնությամբ կարողացավ Մեսրոպը հարմարել գրերը, եթե ուրիշ ազբյուրներ այսպիսի բան չեն հիշում:

գ) Մեսրոպին նվաստացնելու ջանքը անշուշտ Ղազարը գործ է դնում բարձրացնելու համար Սահակի արժանիքը, որ այսպիսի ներբողյանի կարիք չունի բարեբախտաբար:

դ) Եթե այսպես հեշտ և ուշինչ բան էր գրերի գյուտը, ինչպես Ղազարը ասել է տալիս Սահակին, ի՞նչ պետք կար համագումար ժողովի, երկար ճամփորդության, քաղաքից քաղաք թափառելու և սրագում աշխատութեանց: մի անգամից Սահակը կհնարեր, վերջացավ գնաց:

Այս շորս առարկությանց վրա մեր կողմից ավելացնում ենք և հետևյալ երեքը.

ե) Ղազարը (էջ 33) Մեսրոպի համար ասում է, թե մանկության ժամանակ սովորել էր հույն լեզուն. «ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ դպրութիւն գլոյն». ուսեալ բառը և հետո էլ Մեսրոպի քարտուղարը լինելու հանգամանքը ցույց են տալիս, թե անշուշտ բավական հունարեն գիտեր Մեսրոպը, այնքան, որ Հոուփանոսի, Ակակիոսի, և վերջն էլ հունաց կայսեր հետ հարաբերության մտնելու ժամանակ թարգմանի կարիք չէր ունեցած: նույնպես, ըստ Կորյունի, Մեսրոպը Հունահայաստանի քարոզության ժամանակ հավաքեց բազմաթիվ հույն հայրերի գրքերը. «և բազում շնորհագիր մատեանս զհարցն Եկեղեցւոյ ստացեալ»: Եթե այս գրքերը հավաքեց Մեսրոպը, անշուշտ ո՛չ թե մեջի պատկերները նայելու համար էր, այլ կարդալու և իր քարոզության նյութ գտնելու համար, ինչպես որ Կորյունն էլ ասում է, թե այդ գրքերով «ծովացուցանէր զվարդապետութեանն զխորութիւն»: Արդ, տարօրինակ չէ՞, երբ Մեսրոպի նախապես խոստովանված այս աներկբայելի հունագիտությունը հետո դառնում է միայն «հունարեն տառերը մի քիչ ճանաչելու պես մի բան լինել»: Ղազարի բառերով՝ «որք էին սակաւ մի և նոքա որպէս երանելին Մաշթոց մեծաւորեալք ի յունարէն հեգեւայն»:

զ) Մեսրոպին իբրև օգնական նշանակված շորս անուններից երկուսը (Հովհան Եկեղեցացի և Հովսեփ Պաղնացի) ըստ Կորյունի (էջ 10) Մեսրոպի աշակերտներն էին և տարօրինակ չէ՞, որ սրանք են սովորեցնում Մեսրոպին գրերի հարմարությունը:

է) Ղազարը գրերի գյուտի համար ասում է, թե սովորել է Կորյունից՝ քանի-քանի անգամներ կարդալով նրա գիրքը. «Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեալ ի պատմութենէ՞ զրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանելոյն Մաշտոցի, կարդացեալ տե-

դեկասցի զվարս կենաց նորա և զիւր հայրէն նշանագրացն, թէ ե՛րբ կամ ո՛ր կամ յո՛ր ուրուք ձեռն գտանէ, թագաւորին Հայոց Վրամշապհոյ շերմեռանդն խնդրելով...: Զոր կարգեաց ճշմարեապէս յառաջագրեալ այրն հոգեւոր Կորիւն, ուստի և մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեալա՝ (Փարպեցի, էջ 35): Եթե Ղազարը Կորյունից է սովորել և Կորյունը ճշմարեապէս է գրել, ուստի պիտի անենք, թե Ղազարը լավ չի սովորել:

Իր փաստաբանութիւններից հետո, Խալաթյանը նկատի ունենալով Ղազարի առաջաբանական մի քանի խոսքերը, որով Ղազարը ցույց է տալիս պատմագրի պարտականութիւնները, ինչպես «չլաւելով զանեղեալսն՝ յընդունայն աճմունս բանից, շնուագեցուցանել զեղեալսն և կարճակտուր պատմել, բանիւք անփութութեամբ. այլ զբնան ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն...» (էջ 17), երկրորդ՝ նկատի ունենալով այն հակասութիւնները, որ կան Ղազարի պատմութեան և էջ 39—41 (այժմ արդեն անգո) հատվածի մեջ, հետևեցնում է, թե շէր կարող Ղազարը այնպես աղճատել պատմութիւնը. ուստի և ենթադրում է, թե հետին գրիչները խաթարել են այն: Խալաթյանի կարծիքը, ինչպես ցույց տվինք, փառավորապէս ստուգվեց, բայց դժբախտաբար ա՛յնպէս, որ Ղազարի անհեթեթութիւնները պարունակող մասը ավելի հարազատ դարձավ, իսկ ճիշտ երեւածները ջնջվեցին: Բայց սրանով ո՛չ թե վերի փաստերն էլ ջնջվեցին, այլ միայն երկու հատվածների միջև հակասութիւն կազմող մասը: Ընդհակառակը, վերի յոթը փաստերի վրա ավելացավ նոր ու երեւելի մի փաստ, այն է Մեսրոպի ճանապարհորդութեանց, Եղեսիայում կատարված աշխատանքի և Հոսիփանոսի փոքր մասնակցութեան ջնջումը և Դանիելի բարձրացումը: Այս պարագաները բացարձակորեն հակասելով պատմութեան, բացարձակապէս ցույց են տալիս, թե սխալ են Ղազարի տված տեղեկութիւնները:

Ղազարի տված տեղեկութիւններից օգտված է նաև Ասողիկը, որ իր համառոտութեան մեջ անգամ իր աղբյուրը մատնանշում է: Ահա իր բառերը. «Մշտոցն երանելի... ի ձեռն Վրամշապհոյ և մեծի հայրապետին Սահակայ, Դանիէլեան նշանագրօք զդպրութիւն ըստ հայումս յօրինէր ընկերօք ոմամբք, առելովք նմա ի Սեհակայ»: Բայց ինքն էլ նկատելով մի այսպիսի պատմութեան անհարմարութիւնը, իսկույն ավելացնում է սրա մոտ. «Յետ որոյ դարձեալ ևս ի վեցերորդումն նորին Վրամշապհոյ... վերստին աստուածատուր նշանագրօք զնոյնս յեղանակեալ յօրինէր, որովք և դպրութիւնք և գիրք աստուածաշունչք ուղղեալ թարգմանին, որպէս պատմեն և Կորիւն և Ղազար» (էջ 74):

Փարպեցու հարցով զբաղված է նաև Իսահակ Հարությունյանը («Հայոց գիրք», գլուխ ԺԲ)։ Լեզիկակը նպատակ ունի հերքել այն պատճառաբանությունները, որ մեջ է բերում իրաբանները, և ապացուցել, թե Փարպեցին այս մասերի մեջ ավելի ճշմարտախոս է, քան Կորյունը և Խորենացին։ Ահա իր տրամաբանության ընթացքը.

ա) Կորյունը, անմիջական աշակերտ Մեսրոպի, ոգևորված իր վարդապետի անձով և գործով, ավելորդ շափազանցության է հասցրել այս սուրբ անձի գործը. մինչդեռ Փարպեցին, ավելի հեռու և շեղոք անձ, պատմում է ճիշտ շափավորությամբ և քննադատական ոգով։ Եթե սրա մոտ կան մասեր, որ հակասում են Կորյունին կամ չկան նրա մոտ, դա չի նշանակում, թե սուտ են կամ ինքնահնար, այլ քաղված են Սահակի և Մեսրոպի ժամանակակից անձանց պատմությունից։ «Եթե Փարպեցին պետք է ամբողջովին յուր նախորդների ասածները բառացի հառաչ բերեր յուր պատմության մեջ, այլևս ի՞նչ հարկ կար գրելու. աղբյուրը մատնացույց կաներ և այդչափ բավական կլիներ»։

բ) Երբ Մեսրոպը Սահակին դիմելով առաջին անգամ, հայտնեց հայերեն գրեր հնարելու մտադրությունը, ըստ Փարպեցու, Սահակը պատասխանեց, թե այդ գործը շատ հեշտ է, ուր որ Մեսրոպը նեղություն կրե, ինքը կարող է լրացնել առանց դժվարության։ Հարությունյանը մտածում է, թե տարօրինակ չի թվի այս պատասխանը, երբ նկատենք, որ Սահակը գիտեր, թե կան Դանիելյան նշանագրերը, որոնց մասին լսել էր Վամշապուհից և մտածում էր նրանցով լրացնել ամեն բան։ Անշուշտ Սահակը չէր կարող նախապես գուշակել, թե այդ գրերը չպիտի հարմարեին հայերենին։

գ) Մինչդեռ Կորյունը և Խորենացին պատմում են, թե Մեսրոպը իր ճամփորդության ժամանակ թարգմանած էր Հին և Նոր Կտակարանները, Փարպեցին գրում է, թե Մեսրոպը և իր ընկերները չէին համարձակվում բնավ այսպիսի մի գործի ձեռնարկել, որովհետև հունարենի տեղյակ չէին։ Այս կետում անշուշտ Փարպեցին ունի իրավունք, քանի որ Մեսրոպը չէր կարող այդչափ կարճ ժամանակում և առանց կաթողիկոսից հավանություն ստանալու, թարգմանել ս. Գիրքը։ Զարմանալի չէ լսել, թե Մեսրոպը և իր ընկերները լավ տեղյակ չէին հունարենի, քանի որ Խորենացին էլ պատմում է (Գ, կա), թե Սահակի և Մեսրոպի անճամտության պատճառով ս. Գրքի վերջին թարգմանությունը նույնպես «ի բաղում մասանց թերացեալ գործն գտանէր», որի համար Խորենացին ուղարկվեց Ալեքսանդրիա, այնտեղ կրթվելով վերադառնալու և թարգմանությունների ընթացքը լրացնելու։

դ) Գրեբրի գյուտը այնպիսի մեծ գործ էր, որ կարելի չէ վերագրել միայն Մեսրոպին. «կատարված պատմական նշանավոր իրողությունը մի անձի ուժից վեր գործ էր»:

ե) Սահակ կաթողիկոսը էր և Հայ Եկեղեցու պետը. մինչդեռ Մեսրոպը պարզ մի վարդապետ էր և չէր կարող առանց իր պետի հրամանի գործել:

զ) Սահակը կարող էր Մեսրոպին գործակից, մինչև իսկ առաջնորդ լինել, որովհետև ընտիր կրթություն էր ստացած Հունաստանում. մինչդեռ Մեսրոպը Հայաստանում էր սովորած:

Այս բոլոր պատճառաբանությունները այնքան թույլ, այնքան անարժեք են, որ ամենևին պետք չկար նշանակություն տալու նրանց, եթե մտադրված չլինեինք Մեսրոպի ամբողջական և լիակատար կենսագրությունը պատրաստելու:

ա) Եթե Փարպեցիին սխալ կամ չափազանցյալ գտած լիներ Կորյունին, ի՞նչպես կարող էր ընթերցողին ուղարկել նրան, տեղեկանալու համար գրեբրի գյուտի բոլոր հանգամանքները, և կոչել նրան «այր ցանկալի», «գիտել հաւաստեան», «գրելով ճշմարտապէս»:

բ) Եթե Սահակը Դանիելյան գրերն ուներ ի նկատի, ի՞նչ պետք կար շորս օգնականների և իր օգնության. Մեսրոպին կուղարկեր Դանիելի մոտ և ամեն բան կվերջանար. և զարմանալի է, որ Դանիելյան գրերն ստանալուց և Սահակի «կարգադրություն»-ից հետո էլ այն շորս օգնականները մնում են, որոնց կարոտ է Մեսրոպը՝ գրերը դասավերելու համար:

գ) Կտակարանների թարգմանությունը Խորենացու սխալ տեղեկությունն է միայն, որի վրա ամենևին կարիք չկա հիմնվելու: Մեսրոպը թարգմանեց միայն Առակաց գիրքը. բայց այսքանն էլ բավական է ցույց տալու համար, թե հունարեն գիտեր, իսկ ո. Գրքի երկրորդ թարգմանության թերություններն ու Խորենացու ճամփորդությունը այնպիսի երևակայական բաներ են, որոնց ո՛չ մի լուրջ բանասեր հավատ չի ընծայում:

դ—զ) Իրոք, որ գրեբրի գյուտը մեծ գործ էր և շատերը մասնակցեցին նրան՝ ավելի կամ նվազ չափով, բայց մեծագույն դերը ընկնում է Մեսրոպին, ինչպես որ թարգմանության գործի մեջ էլ թեև շատերը մասնակցություն ունեցան, բայց մեծագույն դերը ընկնում է Սահակին: Սահակի հայրապետ և Մեսրոպից ավելի բարձր լինելը, ինչպես և կրթությունը Հունաստանում (և ո՛չ թե Հայաստանում) ստացած լինելը ամենևին չեն խանգարում, որ Մեսրոպը լիներ ավելի մտածող, բանիմաց և հնարագետ, առաջին անգամ

ինքը մտածեր հայերեն գրեր հնարելու կարիքը և վերջապես իր ուժերով գլուխ բերեր այդ գեղեցիկ գործը:

Խալաթյանի և Իսահակ Հարությունյանի միջին տեղն է բրու-նում Սարգսյանը («Քաղմամլէպ», 1889 թ., էջ 36), որ Փարպեցու ասածները հաշտեցնելու համար Կորյունի ասածների հետ, ենթա-դրում է, թե Մեսրոպը հնարեց տառերի ձևեր, իսկ Սահակը այդ տառերը շարեց հունարենի շարքով: Ի՞նչ մեծ գործունեություն Սա-հակի համար... բայց անմիտ է նաև այս կարկատանը, որովհետև նախ՝ Կորյունը ասում է, թե Մեսրոպը շարեց տառերը և երկրորդ՝ Փարպեցին շատ ավելի մեծ բաներ է վերագրում Սահակին, քան տառերը շարելը:

Ամենից ուժեղն է Մարկվարտը («Պատմութիւն հայ նշանագրե-րու», էջ 35), որ Ղազարի այս պատմությունը հետևյալ ձևով է որակում. «Մաշթոցի Ասորիք՝ այսինքն Միջագետք ուղեգնացու-թյունը ու հարակից պարագաները կլռե Ղազար ամբողջովին: Այս՝ դիտումնավոր փոփոխություն մըն է, որ կապ ունի հարկավ Ղա-զարա ցույց տված այն շարժանց ջանքին հետ, որով ո՛չ միայն ս. Գրոց թարգմանության, այլ նաև նույնիսկ հայ գրերու կազմա-կերպության գլխավոր արդյունքը կղիտե վերագրել Սահակա, որով հասիշտակված է— այս պատճառով ալ, ինչպես բնական է, դեպ-քիս հանդիսավայրը հարկ է փոխադրել Հայաստան— և կողոպտել Մաշթոցեն փառաց պսակը, որուն արդյամբք արժանացած էր: Ղա-զար արժանի է սաստիկ կշտամբանաց այս փորձին համար, զոր պետք ենք իբրև պատմական անպատկառ խարդախություն մը մատ-նանիշ ընել. բարեբախտաբար այս փորձը Կորյան տված հարազատ տեղեկության պահված ըլլալուն շնորհիվ ի դերև ելած է»:

## 10

Եթե Փարպեցին և Խորենացին այնպես այլալուծյամբ են պատ-մում դեպքերը, ի՞նչ պիտի աներ Սասնեցին, որ շատ ավելի հետին է, քան հիշյալ երկու պատմիչները:

Ըստ Սասնեցու, երբ Մեսրոպը գրերի գլուխի համար Գողթնից դուրս գալով Սահակի մոտ է գալիս, թագավորը շուտով մարդ է ուղարկում Ասորիք և կանչել է տալիս Դանիելին: Սա գրերը վերց-նում և անձամբ բերում է Մեսրոպին, բայց տեսնում են, որ պա-կասավոր են: Ուստի Մեսրոպը՝ հայրապետի հրամանով, առնում է գրերը, իջնում Ամիթ և հանձնում «թարգմանող»-ներին, որպես-զի «յարմարեցեն ըստ վանկին»: Բայց երբ սրանք շեն կարողա-նում, գնում է Եղեսիա՝ Պղատոն դիվանագլխին, սրանից էլ «Սա-

մուս» Հոռփանոս իմաստասերին, բայց երկուսից էլ անհույս է մնում: Այս անհաջողութիւնը աստվածային շնորհ է համարում Սասնեցին, որպեսզի, ասում է նա, ամեն բանի մեջ էլ օտարին շնորհակալ մնացած չլինենք. «Եւ այս ի խնամոցն Աստուծոյ մատակարարէր, ոչ ամենայնիւ առնել զմեզ մուրացիկս՝ շնորհակալս այլոց. զբովանդակ պարգևսն ի ձեռն այլազնից շնորհել մեզ՝ որպէս զառաքինութիւնն, զքահանայութիւնն և զարքայութիւնն (առաջինը հրեա Քաղեոսի և Բարթողիմեոսի համար, երկրորդը՝ պարթև Լուսավորչի համար, երրորդը՝ Արշակունի Վաղարշակի համար ասված). այլ պահեր զայսպիսի բարիս և մերով արեան զանկածովս ձիրէր մեզ, յիմար ցուցանելով զիմաստութիւն յաւիտենիս» (Սասնեցի, էջ 41):

Այս անհաջողութիւնից սաստիկ տրտմած՝ Մեսրոպը ետ է դառնում և կրկին նվիրում է իր անձը պասի և աղոթքի: Եփրատի ափով բարձրանալով և այրից այր անցնելով՝ վերջապես հասնում է Բալուի բերդը, և այնտեղ, մի նեղ քարայրում առանձնացած՝ սկսում է ճգնել: Մեծ պասի շրջանն էր: Մեսրոպը այն յոթը շաբաթը անոթի է անցկացնում, գիշեր ու ցերեկ երգելով ապաշխարութեան յուրահնար շարականները: «Կրկին նորոգէր զպահսն և զազօթսն, ընթանալով զառ ի վեր ընդ ափունս Եփրատայ, յայրէ յայր անցանելով մինչև ի դղեակն Պալունեաց և անդ զկայ առնոյր ի փոքրագոյն այրի, յաւուրս Քառասնորդացն. և զեւթն եւթնեակսն անսուաղ անցուցանէր, զտիւ և զգիշեր երգելով զերգս երից մանկանցն և շարական եղանակ ապաշխարութեան՝ ըստ թոռոյ աւուրց պահոցըն, զոր ընկալեալ երգէ եկեղեցի սուրբ» (էջ 43):

Վերջապես, քառասնորդական պասը լրանալուն, տեսնում է այրած և հրեշտակին և հրեշտակների Տիրոջը, որ գրում էր 14 տառ սրտի տախտակների վրա. «Եւ ի կատարման եւթնեակացն ի պահու կալով, այրած և տեսանէր զհրեշտակն որպէս Ամբակումն և Հսկողն, մանաւանդ թէ գերագոյն ևս Դանիլապէս ի Մովսիսաբար, զՏէրն հրեշտակաց՝ մարգարէական աշօք որ գրէր մատանագիծ ի սալս սրտի իւրոյ շորեքտասան տառ» (էջ 43):

Աստված այնքան է մնում Մեսրոպի մոտ, այնքան է տալիս նրան «ընդարձակութիւն սրտի և իմաստութիւն անշափ», մինչև որ Մեսրոպը սովորում է բոլոր գրերը: Այն քարը, որի վրա Աստված նշանակեց տառերը, մինչև այն ժամանակ էլ մնում էր ըստ Սասնեցու. «որ և զօրինակն նշանակէր ի վերայ քարի որ կայ մինչև ցայսօր» (էջ 44):

Սասնեցու պատմութեան համառոտութիւնն է ներկայացնում յայսմավուրդը, որ (տրե 15) նույնպես պատմում է, թե Դանիելն

անձամբ եկեալ Հայաստան և երկու տարի անհաջող փորձեր արեալ Մեսրոպի և Սահակի հետ: Սրանից հետո Մեսրոպը ճանապարհորդութեան զուրս եկեալ և վերջապէս հասաւ Սամուսատ, առ սիմաստաւէր ոմն Տգեամբոր Վախրիճ անուն և դադարեաց աւուրս ինչ և ոչ նովա կարաց լնուլ զփափագ սրտին իւրոյ: Սրանից հետո, պատմում է տեսիլքը, որ տեղի ունեցաւ Բալուի մեջ արեւ ամսի 17-ին, որ է նոյեմբերի 25-ը:

Պատմութիւնը իբր ամբողջութեան մեջ համաձայն է նորնկացուն՝ միայն թեթև փոփոխութեամբ. Դանիելի Հայաստան գալը սըխալմունք է (փոխանակ գրերը գալու), իսկ Մեսրոպի Տգեամբունը և գրերի գյուտի Բալու տեղափոխութիւնը՝ հետին ժամանակի հաւելված:

Թե Մեսրոպի տեսիլքը և գրերի գյուտը տեղի են ունեցել Բալուի մեջ՝ գիտի նաև Վարդան պատմիչը, «Վասն որոյ աղօթից տուծալ զանձն գործակցութեամբ Սրբոյն Սահակայ, տայ նմա Աստուած զխնդրելին, շորեքտասան զիրս, աջով իւրով դրոշմեալ առաջի նորա, որպէս մեծին Մովսեսի ի լեառն Սինայ, և սմա ի լեառն Բալուայ, որպէս տակաին ցուցանի դրոշմն աստուածային վիմին և նկարք գրենոյն, և պատուի տեղին խնկօք և ջահիք միշտ ի տաճկաց և քրիստոնէից բնակչաց տեղոյն» (Վարդան, էջ 49—50): Նույնը նաև իր Աշխարհագրութեան մեջ. «Աթախ և Հենի, Դերջան և Բալու, ուր զգիրն եգիտ Մեսրոպ վարդապետն, այսոքիկ Արշակունիք կոչին» (ըստ Իսահակ Հարութիւնյանի, «Հայոց գիրք», էջ 363. տե՛ս «Բազմավէպ», 187 թ., էջ 140). իսկ Վարդանի Աշխարհագրութեան մեջ (էջ 519) գտնում ենք միայն «Աթախ և Հենի Դերջան է, ուր զգիրն եգիտ Մեսրոպ վարդապետն»:

Դանձարանը, որ հետին զանազան հեղինակների խմբագրութեամբ կազմված մի գործ է, նույնպէս գիտի Բալուի տեսիլքը, որ ամբողջութեամբ մեջ ենք բերում, հանելով Կարինյան Ձ 466 (էջ 57—61) և Քամրիզի Ղալայի գրադարանի Ձ 43 (էջ 150—154) ձեռագրերից.

«Բազում աշխատեալ  
Եւ ոչինչ օգտեալ,  
Ձեռն յԱստուած ձգեալ,  
Ի Բալու տքնեալ,  
Մեսրոպ աղօթեալ,  
Աստուած գթացեալ,  
Հրեշտակ Տեառն իջեալ,  
Մատամբ փորագրեալ,  
Ի վիմին դրոշմեալ,



Աջ ձեռն երևեալ,  
 Իբր ի ձեան գրեալ,  
 Ծօթըն գիր յայտնեալ:  
 Այն հոգի ջահեալ,  
 Զայլ գիրսն յարուցեալ,  
 Միղորայք հեգեալ,  
 Բանն յար մնացեալ,  
 Ի գիրս միացեալ,  
 Զիմաստս պատմեալ:  
 Մեսրոպ հմտացեալ,  
 Գիր Վրաց զուգեալ,  
 Ի աղուանից տուեալ:

11

Բալուի բերդը և այն քարայրը, ուր ճգնել է Մեսրոպը, նույն-  
 պես այն քարը, որի վրա նշանակվել են հայերեն տառերը, կան  
 մինչև այժմ: Ահա հավատարիմ մի ճանապարհորդի հարազատ  
 նկարագիրը նույն վայրերի մասին. «Հինգ ժամեն սկսանք իջնալ  
 ի Բալուա հովիտն. ի հեռուտ կողջունենք Բալուա բերդի քարյա  
 գլուխն. սիրտս իրեն կքաշե այդ կապույտ ժայռը, աչերս շնմ կըր-  
 նար հեռացնել իրմեն, այդ քարի մեջն է հայոցս լուսավորության  
 արգանդն, հայկական գրոց գանձարանն, այն պաշտելի քարայրը,  
 հորում աստվածային Մեսրոպ ճգնեցավ, տքնեցավ, մինչև ծնավ  
 ազգ մի ողջույն, անտի ծագեց մեր լույս արևն...: Ծլանք ի բերդ-  
 Հին և վիթխարի պարսպաց ավերներ ու բեկորները կոխելով վեր  
 կեննեք, քայքայալ մեծ դռնն մը կմտնենք միջնաբերդը, ուր շտե-  
 մարանաց և սենեկաց ավերածներ, գետնահարկ կամարափուլ շեն-  
 քերը մեկը մյուսին ետև կնեղկայանան մեզ. դեռ ողջ է զնդանա-  
 տունը և մի քանի սենյակ. բայց ասոնք բան մը շեն արժեր իմ աչ-  
 քին: Կղանանք ի հյուսիս, ուր ապառաժ և լերի քարեր են մեծա-  
 մեծ, հոն եզերքին վրա քարին երեսը տաշված, վրան բեռնագիր  
 անեղծ, մաքուր, 22 տող վերը և 7 տող վարը քանդակված, մեջ-  
 տեղը բաց ձգված էր, ուր տող մը արաբերեն գիր փորագրած էին:  
 Այս «Գրման քար»-ի կողին զառ ի վայր, նեղ, սանդղաձև, գրեթե  
 մրջման շավիղով իջանք քարայրի մը բերան, որո մեջ փոքրիկ քա-  
 րայր մի ևս կա, երկուքին աջ առաստաղն ու պատերը սեցած. եր-  
 կուքի մեջն ալ բեմի պես անկոփ քարերով շարվածք, և պատերուն  
 վրա բազմաթիվ խաչեր փորված:— Ահա Ս. Մեսրոպա ճգնարանն,  
 ըսավ Տեր Մեսրոպն:

Մունկերուս վրա ինկա, հոն, ուր Սրբույն ծնկները մաշված էին, լզեցի այն քարեր և փոշիները, հորս շրթունք և ճակատ Սըրբույն բյուրիցս քսվեր էին նվիրելով իր խորհուրդն և իղձերը աստվածային իմաստութեան. հոն դրի երեսներս, և շէի ուզեր վերցնել այն ժայռերն, ուր նստեր, կռիւներ, խոկալով և տքնելով հայ ազգին և Հայաստանեայց Ծկեղեցվուն լույս և կյանք ճարելու ճգնութեամբ...: Քա՛ր, օ՛ր քարայր, հայոց արևուն լուսակամար, ուստի ծագեցավ մեզ ճառագայթ դպրութեան, այո՛ր խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին. նկարագրեցաւ մեզ գիր կենդանի, յարգանդ մաքուր մեծին Մեսրոպբայ, անմատոյց լուսոյն երկրպագեցուք: Կից քարայրիս, արտաքո դոան, կա մի տաշածո երես մեծ գրատախտակի նման, արդյոք հայ տառերը ձևակերպելու տախտա՞կն էր Սրբույն: Ինչպես նաև երկու այլ քարայրներ, որոց առաջինն ավելի լուսավոր և ընդարձակ է, ունի սրահ մը, և երկրորդն՝ կրկին պատերով սենյակ մը, որո առաջին սենեկն ներսը, դոան հանդեպ, քարայրին ճակատը փորված և կոկված մեծ քառակուսի մը, և փորվածոյի աջ անկունը վերեն ծակեր կան ականջաձև, յորմեն մարդ մը կրնա իր ձեռքն երկնցնել. եթե արմունկդ կիսածալ ընես դեպի լանջքդ՝ գրեթե նույն ծակին ձևը կառնու, և այն դիրքով կրնա մարդ մը իր թևը դնել այդ ծակին մեջ:— Ս. Մեսրոպա դպրոց կանվանեն այս քարայրը, ըսավ Տեր Մեսրոպն, և կավանդեն թե՛ այդ ծակն ելած է Քաթը և այս տաշածոյին վրա գրեր է Ա, Բ, Գ:— Արդարև, երբ այդ տախտակին հառեր խոկալով Սուրբն իր ուշքն ու աչքը, պետք էր որ այս անկյան ծակն ելներ Քաթն և գրեր. «ոչ իբրև ի քուն երազոյ», այլ բացորոշ հայտնութեամբ աստվածային...

Կան երկու այլ քարայրներ ալ, միւսյն մեջ կգտնվի ջրի հոր մը: Ասոնց մեջը խունկի և մոմի մոխիրը սեցուցած են, մանավանդ ճգնարանին, ուր բարեպաշտն կանայք կերթան կաղոթեն իրենց զավակաց համար:— Ավելորդ է ըսել, թե Ս. Մեսրոպ պատրաստ գտած է այս այր ու վայրը, որ իրմեն հառաջ ո՞վ գիտն ի՞նչ նպատակի համար կոներ կոփեր են. դուրսի բնեռագիրն ալ մտածել կուտա թե՛ շատ հիեուց գործ է, թերևս հիշատակարանաց դիվանը կազմելու մտքով տաշված լինին. եթե այդպես, զուգադիպութեան մ'է Ս. Մեսրոպին» (Գ. Վ. Սրվանձտյանց, «Թորոս աղբար», Բ, 1884 թ., էջ 154—162):

Այս նկարագրութեանից երևում է, թե մեր գործը ժողովրդական մի ավանդութեան հետ է, որ մինչև այժմ կենդանի է նույն գավառի ժողովրդի մեջ: «Գրման քար»-երը կամ թուրք բառով «յազըլը թաշ»-երը, ամեն տեղ մեր սնտոխապաշտ ժողովրդի կողմից նվի-

րական մի բան, գրեթե սրբութիւն են համարված: Բալուի ավանդութիւնն էլ, որ Սասնեցու և Վարդանի պատմութեան համաձայն՝ շատ հին ժամանակ, գրեթե 11-րդ դարում ծագած է երևում, ծագած է անշուշտ նույն բնեռագիր արձանագրութեան պատճառով, որ Խալդայան վաղեմի մնացորդ է և ամենեկին կապ շունի Մեսրոպի հետ: Միակ պատմական աստառը, որ կարող է իբր հիմք ծառայած լինել այս ավանդութեան, թերևս մի կարճ դադար է Մեսրոպի վերադարձի ժամանակ՝ Սամուսատից Վաղարշապատ:

12

Հետին դարերում շարադրված մի անվավերական ևս կա, որ տպված է Գ. Սրվանձատյանի «Հնոց նորոց» աշխատութեան մեջ, «Յաղագս սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դաւթի» վերնագրով: Սրա մեջ (էջ 41—46) խոսվում է Մեսրոպի վրա և տրբվում են մի քանի նորահնար տեղեկութիւններ: Նախ ասվում է, թե Դանիելը աշակերտ էր Լուսավորչի, երկրորդ՝ թե Սահակը և Մեսրոպը միասին ծոմ պահեցին, միասին աղոթքի նստեցին և միասին էլ տեսան տեսիլքը. «Յայսմ ժամանակիս եղև խնդիր պակասութեան գրոյն Հայոց, զոր ունէին, ԻՅ գիր ի Դանիէլէ փիլիսոսփայէ ասորոյ աշակերտ Սրբոյն Գրիգորի. իսկ Սուրբն Սահակ և Մեսրոպ բազում աշխատութեամբ պէտս արարին, սովոյ և ծարատոյ յոտանաւոր շարշարանաց ի լերինս տքնեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, ոչինչ ճաշակելով, բայց միայն յաղօթսն Աստուծոյ պարապեալ... յետոյ երևեցաւ ի տեսեան հրեշտակ Տեառն... էջ յերկիր առ նոսա և որպէս ի տունջեան խօսէր ընդ նոսա, և յաման ինչ խեցեղէն՝ մատամբ նկարեալ տայր նոցա զգիրս եօթն»:

13

Շատ կաւոր է քննել այն հարցը, թե ի՞նչ էր անում Մեսրոպն այնքան ժամանակ Եդեսիայում, ի՞նչ էր իր որոնումների և խուզարկութիւնների նպատակը, ի՞նչ էր պատճառը այն տանջանքի, որ նա կրում էր: Մի՞թե մի շատ դժվար բան էր որևէ լեզվի այբուբեն կազմելը: Եթե նա Դանիելյան այբուբենից դժգոհ էր, չէ՞ր կարող առանց թափառելու Միջագետք և Եդեսիա, հենց Հայաստանում կազմել մի այնպիսի այբուբեն, որ լրացնէր իր բոլոր պահանջները:

Անշուշտ Մեսրոպի դժվարութիւնն ու որոնումները լեզուների

գիտութեան շէնքն վերաբերում, որովհետև հայերենի տառեր հնարելու համար նախ և առաջ հայերեն իմանալ պետք էր և ո՞վ էր այն միջազեղացիք, որ Մեսրոպից ավելի հայերեն իմացած լիներ: Իսկ եթէ հունարենի և ասորերենի գիտութեան կարիք կար, Մեսրոպն ինքը, եթէ ոչ Սահակը կամ ուրիշ գիտակ անձեր չապաստանում կարող էին հարկավոր շահով օգտակար լինել: Ուրեմն որոնումները այս կողմից չէին:

Նաև Մեսրոպի դժվարությունները տառաձևերի հնարման մեջ էլ չէին, որովհետև այդպիսի դժվարություններ երբեք չժազեցին ոչ վրացերեն և ո՞չ էլ աղվաներեն տառերի հնարման ժամանակ:

Հարցումների պատասխանը գտնելու համար, պետք է երթանք մի քիչ հետ, և նորից ձեռք առնենք Դանիելյան գրերը:

Ի՞նչ ստացավ Մեսրոպը Դանիելից. այբուբենի ցուցակ, թե՞ մի ամբողջական գրվածք: Անշուշտ դա մի հասարակ ցուցակ էր, որի վրա գրված էր ասորերեն լեզվով՝ «Այս է գիր Հայոց», և տառերի մոտ էլ դրված էր համապատասխան ասորերեն տառը: Ճիշտ այնպես, ինչպես այսօր մենք տեսնում ենք էջմիածնի (այժմ Սրբվանի) ձեռագրատան N 7117 ձեռագրում, «Գիր Յունաց, որ է հելլենարէն», «Ասորեաց գիրն է», «Վրացոց գիրն է», «Գիր Խպտեաց» և այլն: Այս վերնագիրներից հետո տրված է այդ լեզուների ամբողջ այբուբենը՝ իրենց անուններով և արժեքով (հայատառ): Անմիտ բան կլիներ, եթէ երևակայեինք, թե այդ ցուցակը մի առանձին թերթիկ կամ պնակիտ էր, որովհետև ո՞ւմ ցավն էր կազմել այդպիսի աննպատակ մի թերթիկ և գցել մի կողմ: Ուստի պիտի ընդունենք, թե դա գտնվում էր որևէ ասորերեն գրքի կամ ժողովածուի մեջ, ինչպես է և մեր վերոհիշյալ N 7117 ձեռագիրը: Դանիելը պատահաբար գտել էր այդ ձեռագիրը և տեսել այնտեղ «հայերեն» այբուբենը, և երբ Վոսմշապուհ թագավորը Վահրիճի և Արելի միջոցով պահանջեց այդ գրերը, Դանիելն արտագրեց այդ ցուցակը, տառերը, որ ասորական այբուբենի շարքով էին, շարեց հունարենի շարքով, ասորերեն համապատասխան տառերի փոխարեն դրավ հունարեն համապատասխան տառերը և ուղարկեց Վոսմշապուհին:

Թե իրոք Դանիելի մոտ գտնվածը տառերի մի ցուցակ էր և ոչ գիրք, այդ մասին վկայում են հենց պատմիչները: «Յայնժամ պատմէր նոցա արքայն՝ վասն առն ուրումն ասորոյց եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղվարեաց հայերէն լեզուի [գտեալ]... նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրոյն և ապա առեալ ի նմանէ առաջէր առ արքայն յերկիրն Հայոց... ընկալեալ զնշանագիրսն ի Հա-

բիւէն, ուրախ լինէին...» (Կորյուն, էջ 8)։ Այսպես և Փարպեցիին և ուրիշները։

Բացի պատմագիրների վկայութիւնից, մեր առողջ դատողութիւնն էլ ցույց է տալիս, թե Դանիելի գտածը և ուղարկածը տառացուցակ էր և ոչ գիրք։ Որովհետև եթէ գիրք լիներ, այդ գիրքը կամ հայերեն պիտի լիներ և կամ որևէ ուրիշ լեզվով։ Չէր կարող ուրիշ լեզվով լինել, որովհետև Մեսրոպն իսկույն դեն պիտի գցեր, ասելով, թե դա հայերեն չէ։ Բայց չէր էլ կարող հայերեն լինել, որովհետև տեսնվեց, որ հայերեն լեզվին հարմար չի գալիս։ Եվ եթէ ո՛չ հայերեն էր և ո՛չ ուրիշ լեզվով, ուրեմն հասարակ մի ցուցակ էր՝ վերնագրված «Այս է գիր Հայոց», ինչպես ասացինք։

Այս բացատրութիւնից հետո ամեն ինչ պարզվում և հասկանալի է դառնում։ Եթէ Մեսրոպն իրոք գնաց Ամիդ՝ Դանիելի մոտ, իր նպատակն էր անձամբ տեսնել այն գիրքը, որից քաղված էր «հայոց այբուբենը», իմանալու համար, թե որևէ ուրիշ բացատրութիւն կա՞, կարելի՞ է նրա մեջ գտնել պակաս տառերը։ Եվ երբ տեսավ, որ Դանիելը ոչինչ չգիտի, գրքումն էլ ոչինչ չկա, անցավ Եդեսիա, այն քաղաքի նշանավոր գրադարանում շարունակելու համար իր որոնումը։ Խաբվելով ցուցակի վերնագրից՝ «Այս է գիր Հայոց», և հավատալով, որ իրոք դա հայոց գիրն է, նա մի առ մի աչքի անցկացրեց Եդեսիայի գրադարանի հաղարավոր ձեռագրերը, տեսնելու համար, թե մի ուրիշ տեղ էլ կգտնի՞ այդ ցուցակը, կա՞ն այնտեղ պակաս գրերը, կամ թե կա՞ արդյոք որևէ գիրք գրված այդ այբուբենով, որ իմանա, թե պակաս հնչյունները ինչպե՞ս էին արտահայտված։ Մեսրոպի աշխատանքը զուր անցավ, այսինքն ոչ մին գտավ և ոչ մյուսը. կամ եթէ գտավ մի գիրք, տեսավ, որ հայերեն լեզվով չէ, այլ որևէ օտար լեզվով։ Ա՛յն ժամանակ համոզվեց, թե ինքը խաբված է, Դանիելյան գրերը հայերեն չեն, ուստի դեն գցեց նրանք և իսկույն հնարեց իր ուղած ձևով ու դրութեամբ հայերեն գրերը, ինչ որ երկարատև աշխատանքի կարոտ չէր։

Իմ կարծիքով, ամբողջ թյուրիմացութիւնը, որին զոհ գնացին թե՛ Դանիելը և թե՛ Մեսրոպը, արամեական (հին ասորական) և արամյան (հայ) բառերի շփոթութիւնից էր առաջանում և նորագյուտ այն տառերը ուրիշ բան չէին, բայց եթէ ինչ որ արամեական հնացած տառեր։

Հետաքրքրական է, թե ի՞նչ են մտածում այս հարցի առթիվ այլ քննիչներ։

Ամենից ավելի Ս. Վ. Պարոնյանն է, որ զբաղված է այս հարցով («Երկրագունդ», 1885 թ., էջ 99—109) և («Հանդէս ամսօրեայ», 1896 թ., էջ 72—76)։ Իր կարծիքն այն է, թե Դանիելի ունեցածը և

ուղարկածը ո՛ր թե մի ցուցակ էր, այլ ամբողջական մի գիրք՝ հայերեն լեզվով և այն անծանոթ հին-հայկական տառերով: Դանիելը դուրս բերավ այդ գրքից հայերեն տառերը, որով և տառերը կոչվեցին Դանիելյան գրեր: Սրա ապացույցները հետևյալներն են. ա) Հասարակ մի ցուցակ ի՞նչպես կարող էր ընդունելի դառնալ Մեսրոպի կողմից իբրև հայերեն տառեր, ի՞նչպես կարելի էր իմանալ տառերի արժեքը, կամ նույնիսկ ճանաչել, թե նրանք հայերեն էին. բ) Թղթի մի կտոր ի՞նչպես կարող էր հարգ ունենալ Մեսրոպի և Վոսմշապուհի մոտ և երկամյա փորձարկության ենթարկվել. գ) Պատմագիրները վկայում են, թե Դանիելը «կարգեաց ըստ ձևոյ օրինակի յունականին» (խորենացի). «Ի նմին Դանիէլէ տեղեկանայր զկարգ նշանագրացն» (Փարպեցի): Կարգ և կարգել նշանակում են «դասավորութիւն, դասավորել»։ ուրմն նախապես այդ գրերը կարգ չեն ունեցել. և ի՞նչ կլինի մի բան, որ կարգ չունենա, բայց լեզուն և արժեքը իմացվի: Դա կլինի ամբողջական գիրք, որ ստացավ Մեսրոպը, և ո՛ր թե ցուցակ: Եվ իզուր է ենթադրել, թե նա ուներ ուրիշ կարգ և Դանիելը փոխեց, վերածեց հունականի, որովհետև բոլոր այբուբեններն էլ միևնույն կարգն ունեն:

Բայց, ավելացնում է Պարոնյանը, այդ գրքի տառերը հին ու մին, տգեղ ու անվայելուչ էին: Մեսրոպը շուրջ նրանք գեղեցկացնելով հեռանալ իսկականից, որ համարում էր հին և պատկառելի: Ուստի գնաց, ման եկավ աշխարհն աշխարհ, որպեսզի գտնի այդ նույն հայերեն տառերով, բայց այս անգամ գեղեցիկ և վայելուչ գրությամբ գրված մի գիրք:

Այս բոլորի պատասխանը վերևում մեր սոված բացատրության մեջ կա արդեն, հիմնական պատճառաբանութիւնը ա՛յն է, որ եթե այդ գիրքը և այդ գրերը հայերեն եղած լինեին, հայերենին անհարմար չպիտի գային և պակաս տառեր չպիտի ունենային: Եթե նույնիսկ մի քանի տառ պակաս էլ լիներ, կարելի էր պակասը որեէ ձևով լրացնել: Դրա համար աշխարհներ ման գալու կարիք չկար: Իսկ եթե Մեսրոպը շրջում է քաղաքներ, որոնումներ է կատարում, նշանակում է մի ավելի մեծ նպատակ ունի՝ որոշել, թե նա իրոք հայերե՞ն է, թե չէ: Երբ չէ նույնպես ասել, թե բոլոր այբուբեններն էլ նույն կարգն ունեն. ասորերենի առաջին շորս տառերը հունարենի հետ նույն են, բայց հետո կարգը փոխվում է. նորից մի քանի տառ միասին են գնում, վերջում բոլորովին փոխվում է: Իսկ թե Դանիելյան այբուբենի պակասութիւնը ա՛յն էր, որ նրանք այն գրքում գեղեցիկ ու վայելուչ ձևով գծագրված չէին և կամ եթե Մեսրոպը վայելուչ ձևով գծագրել տար, բնականից հեռացած պիտի լինեին, դրանք նկարչութիւնից ոչինչ չհասկացող մարդու խոսքեր

են և ամենևին արժեք չունեն։ Արդեն ո՛չ մի պատմիչ էլ չի ասում, թե այն տառերը տգեղ կամ տձև էին, այլ թե պակասավոր էին և հայերեն լեզվին չէին հարմարվում։

Մյուս քննիչները ընդհանրապես և լռելյայն ընդունում են, որ Մեսրոպի ձեռքն եղածը մի ցուցակ էր և ոչ գիրք։

14

Մեսրոպի ճամփորդությունը, կրած ծանր աշխատանքը և որոնումները բացատրելու համար Սահակյանն էլ («Բրազդավէպ», 1907 թ., էջ 441—43) ուրիշ ենթադրություն է անում։

Նոր տառաձևերը հնարելու մեջ ոչինչ չկար դժվարին, ասում է նա։ Դժվարն այն էր, որ կարողանար ստուգել, թե իր կազմած այբուբենից դուրս ուրիշ հնչյուններ չկայի՞ն արդյոք հայերենի մեջ։ Դրա համար պետք էր ունենալ հայ լեզվի բառամթերքը ձեռքի տակ, և ահա Մեսրոպի աշխատանքը եղավ կազմել առաջին անգամ հունարենից—հայերեն բառարան «հունարեն տառերով (որոնց անբավականությունը ա՛յնքան տեսանելի պիտի ըներ աշխատանքը), որպեսզի կարող ըլլար բաղդատական ճամբով իմանալ՝ թե ո՞ր ձայները կարելի չէ ներկայացնել հույն տառերով և թե ո՞ր ձայներուն համար ուրիշ լեզուների փոխ առնելու է և կամ նոր հնարելու է»։

Սահակյանն այս հույն—հայերեն բառարանի համար է հասկանում Փարպեցու և Խորենացու հետևյալ վկայությունները. «Հանդիպեցուցանէր զհայերէն արթութայն ըստ կարգման սիլոբայից Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ զարթութայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունիւն» (Փարպեցի, էջ 16)։ «Փոխադրելով զհայերէն արթութայն ըստ անսայթաքութեան սիլոբայից հելլենացւոց» (Խորենացի, Դ, ծգ)։ Դրա համար էր, որ կազմվել էր Սահակի նախագահությամբ մի հանձնաժողով՝ բաղկացած հինգ անդամից (Մեսրոպ, Հովհան Եկեղեցացի, Հովսեփ Պաղնացի, Տեր Խորենացի և Մուշե Տարոնացի), որոնք շարունակ դիմում էին Սահակին և օգտվում նրա մեծ հունագիտությունից։

Մեսրոպի կազմած այս բառարանի հետքերը մենք տեսնում ենք 5-րդ դարի զանազան գրվածքների մեջ, ինչպես Մակարայեցվոց գիրքը կամ Փավստոս, որոնց մեջ հայերեն զանազան հոմանիշներ շարված են իրար կողքի։

Ըստ այսմ Մեսրոպը, 4 հոգու ընկերակցությամբ, հավաքել է գոնե 40—50000 հունարեն բառ. դրել նրանց հայերեն քառապա-

տիկ ավելի համանիշները, 36 հատիկ հայերեն տառ հորինելու համար: Բայց ներողութիւն... որովհետև հայերեն լեզվից 21 հնչյուն արդէն հունարեն այբուբենից անծանոթ էր, ուրեմն այն 40—50000 բառերի հավաքածուն 15 տառի համար էր: Մետրոպը վրացերեն և աղվաներեն տառերն էլ հորինեց. արդյոք սրանց լեզվի համար էլ նախ բառարան կազմեց. և այս անգամ ի՞նչ ձևով. դարձյա՞լ հունարեն—վրացերեն և հունարեն—աղվաներեն, թե՞ այս անգամ հայերեն—վրացերեն և հայերեն—աղվաներեն: Ըմբ որովհետև Մետրոպըն ինքը շատ լավ հայերեն, բավական էլ հունարեն իմանալով հանդերձ, 4 օգնական էր առել (շհաշվելով Սահակին), արդյոք վրացերեն և աղվաներեն բառարանների համար քանի օգնական էր առել, քանի որ այս լեզուները բնավ չգիտեր:

Այսպե՞ս են կազմել հարյուրավոր ժողովուրդներ իրենց այբուբենը...:

Տեղն է կարծեմ հիշեցնել ռեզը մուսանտարան հանելու-ու ալանդական առածը: Մալքատեղի գլխին դրած է եղել դանակը. եզը պիտի մորթնին. փոխանակ դանակը վերցնելու և եզը մորթելու, եզը պարաններով քաշում են ծալքատեղի գլուխը և մորթում այն դանակով:

Երևի Սահակյանն աղղված է Ինճիճյանից, որ իր «Հնախոսութիւն» մեջ (Գ, էջ 73) կարծում է նույնպես, թե Մետրոպի կրած դժվարութիւնը ո՛չ թե տառաձևերը հնարելու մեջ էր, այլ հայերենի բոլոր հնչյունները աչքի առաջ ունենալու: Ամբողջական այբուբեն հնարել կարենալու համար պետք էր, ասում է Ինճիճյանը, լեզվի բոլոր բառերը աչքի առաջ ունենալ, որպեսզի որևէ հնչյուն բաց չլնողներ: Այս դժվարութիւնը Ինճիճյանը լուծում է տեսիլքի միջոցով, իսկ Սահակյանը տեսիլքի տեղ դնում է քառարան:

## 15

Ամփոփելով մինչև այստեղ նշանակված բոլոր տարրերութիւնները, որ տալիս են մեր հետին պատմագիրները, տեսնում ենք, թե ձգտում կա Մետրոպի գործը վերագրելու Դանիել եպիսկոպոսին կամ Հոուսիանոս գրչին կամ Սահակին և կամ աստվածային հայտնութիւն: Պատմագիրների այդ հետին, հետևաբար և անարժեք վկայութիւն վրա հիմնվելով, արդի քննիչներից ոմանք կարծեցին, թե մեր գրերի մեծ մասը Դանիելի հնարածն է, իսկ մնացյալը լրբացրել է Մետրոպը. ուրիշները կարծեցին, թե ամեն ինչ Հոուսիանոսինն է, այսինքն՝ թե՛ գրերի վերջնական ձևը, թե՛ անունները և թե՛ դասավորութիւնը: Հիշելի է, օրինակի համար, Հ. Ն. Անդրիկ-



յանը, որն ասում է («Բաղմամբ», 1907 թ., էջ 510 ծան.), թե Դանիելը հնարել է բաղաձայնները, որոնցից պակասում էին «թավերը կամ միջակներն ու նուրբերը», ինչպես նաև ձայնավորները: Էլ ի՞նչ ձայն մնաց, Իսկ Հոուֆանոսը ստեղծեց ձայնավորները և այդ թավ, միջակ ու նուրբ ձայները: Բայց այս բոլորից ո՞չ մեկն է ուղիղ: Ո՞չ Դանիելը, ո՞չ Հոուֆանոսը և ո՞չ էլ Սահակը կարող են վայելել հնարչի անունը, քանի որ Կորյունն այնպես պարզ կերպով ցույց է տալիս, թե Մեսրոպը եղավ մեր գրերի հայրը և իր աջով ծնավ նրանք: Դանիելը մինչև իսկ որոշ չափով արգելք եղավ մեր գրերի արագ գյուտին: Եթե Վռամշապուհը տված շիններ այն շարաբաստիկ սուտ լուրը՝ թե Դանիելի մոտ կան «հայերեն գրեր», Մեսրոպը չպիտի դիմեր այս անձին (անձամբ կամ գրով), չպիտի ձեռնարկեր այն երկարատև ճամփորդության, այլ իր սեփական խելքով պիտի հնարեր նոր հայերեն այբուբեն, որ իհարկե շատ սովոր բան չէր: Հնությունը ամեն տեղ և ամեն ժամանակ հարգ է վայելել: Ի՞նչ էր անում Մեսրոպը քաղաքից քաղաք թափառելով իր օգնականների հետ, ի՞նչ էր անում այնքան ժամանակ Եդեսիայի դիվանը թարթափելով: Ուրիշ բան չէր նրա նպատակը, եթե ոչ հին-հին գրքերի մեջ գտնել վերջապես այն հին հայերեն գիրը, որի համար լսել էր, թե կա: Ինքը և իր օգնականները ահա այդ գրքերի մեծ հավաքածուները, մատենադարանները մեկիկ-մեկիկ աշփ անցկացնելով, ամեն մի գրքի մեջ, որոնում էին այդ ցանկալի գիրը: Եվ երբ համոզվեց Մեսրոպը, թե այդպիսի բան չկար, այն ժամանակ միայն դարձավ իր նախկին մտքին՝ աշխատությամբ հնարել հայերեն գրերը, որ, ինչպես կարելի է գուշակել, տևեց շատ կարճ ժամանակ: Ինչո՞ւ Մեսրոպն ամենևին նեղություն կամ աշխատանք չկրեց վրաց և աղվանից գրերը հնարելու ժամանակ, քանի որ այս ազգերն իրեն համար օտար և լեզուներն էլ անծանոթ լինելով, պետք է որ ավելի շարձվեր: Իհարկե շեղվեց, որովհետև երևան չելավ մի Դանիել, որ ասեր, թե վրաց և աղվանից գրերն ունի: Դանիելը ոչ թե մեր գրերի գյուտին սատար և ձեռնաուտ եղավ, այլ, ընդհակառակը, ուշացրեց մեր գրերի գյուտն ու գրականությունը: Առանց Դանիելի միջամտության, մենք գոնե երեք տարի ավելի շուտ պիտի ունենայինք հայերեն գիր և գրականություն, երկու տարի հաշվելով դանիելյանի գրերի փորձը և գոնե մի տարի՝ Մեսրոպի ճամփորդությունը:

ՄԵՍՐՈՊԻ ՎԵՐԱԿԱՐՁԸ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐՈՉՋԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(Լուսավորութուն Մարաց)

1

Որչա՞ք մեծ եղավ ժողովրդի ուրախութիւնը, երբ լսվեց, թէ Մեսրոպը՝ հայերեն գրերը ձեռքը, բզոթեանօք անցեալ ազոդութեամբ և հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանօք նոր քաղաքին», այն է Վաղարշապատ, թագավորական ու հայրապետական ամրոցը:

Հաղարավոր տարիներ անցել են այն օրից և դեռ որչա՞ք գեղեցիկ են հնչում ականատես և ոգևորված մատենագրի հուզումնալից խոսքերը, որոնցով նա Մեսրոպի գալուստը նմանեցնում է Մովսես մարգարեի Սինա լեռից էջքին՝ տասնաքանյա աստվածաշնորհ պատվիրանները ձեռքին, մանավանդ թե, ասում է Կորյունը, Մեսրոպն ավելի բարձր է, քան Մովսես, որովհետև Մովսեսն իր ժողովրդի ուխտազանցութեան պատճառով սրտաբեկ եղավ, իսկ Մեսրոպը լցված էր հոգեկան բարձր մխիթարութեամբ, որովհետև գիտեր, թե ինչպիսի՞ ուրախութեամբ պիտի ընդունի իր ժողովուրդը իր բերած գրերը: «Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս Սինէական լերինն. շասեմք թէ առաւելօքն՝ պահասագոյն: Քանզի յԱստուծոյ առեալ և աստուածագիր հրաման ի բազուկս՝ այրն աստուածապէս, ի լեռնէն իջանէր. այլ վասն վրէժագործ ժողովրդեանն, որոց թիկունք ի տէրունիսն, և կործան յերկիր, տիրադուծք յիրեանց կուս ձուլածուին երկիր պաղանէին, և զնորին հրամանաբերն սրտառուչ սրտաբեկ լացուցին. քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէր բերելոյն թախտութիւնն: Իսկ այսր երանելոյ՝ վասն որոյ ճառնալքս յարդարէին, ոչ ըստ այնմ օրինակի որ անդն գործեցան, այլ ինքն իրով լցեալ հոգեւոր մխիթարութեամբ՝ կարծեալ զընդունելոցն յօժարութիւնն, և ընդունելոցն յուսով ուրախութեան՝ դասավորութիւն ճանապարհացն աւետարեր» (Կորյուն, էջ 11):

Երբ Մեսրոպը մոտեցավ Վաղարշապատին, լուր տրվեց Վոսաճապուհ թագավորին և Սահակ հայրապետին, որոնք իրենց հետ առնելով ամբողջ նախարարական աւագանին՝ եղամենայն նախա-

րարագունդ ւազանտյն ամբոխ», դուրս եկան դիմավորելու Մես-  
րոպին: Հանդիպումը տեղի ունեցավ քաղաքից դուրս, դաշտում,  
Ռահ գետի եզերքը: Այս գետի մասին ուրիշ տեղ հիշատակութիւն  
չկա, ուստի կարելի չէ ճիշտ տեղը որոշել: Ինճիճյանը (Ստորագրու-  
թիւն հին Հայաստանի, էջ 472) անորոշ կերպով ասում է. «Առ քա-  
ղաքաւս (Վաղարշապատ) անցանէր Քասաղ գետակ, նաև Ռահ գե-  
տակ ինչ ի մօտակայս նորին ընթանայր, որպէս ցուցանէ Կորինն»: Այժմ Վաղարշապատի մոտ Քասաղից դուրս ուրիշ գետ չկա, եթե  
ոչ Սև ջուրը, որ և պիտի լինի նույն Ռահը: Ռահ գետի մասին խո-  
սում է նաև Յնտղլյանը (էջ 22) և գտնում է, որ դա Երասխն է,  
որովհետև Հուսիկը և Տիրանն էլ ըստ Բուզանդի իրար հանդիպեցան  
Երասխի մոտ «անցեալ ընդ կամուրջն Տափիրայ, ի քաղաքն մեծ  
յԱրտաշատ»: Ահա իր խոսքերը. «Ո՞ր գետն է Ռահ անսովոր անու-  
նով, որուն ուրիշ տեղ չենք հանդիպիր, և որ պետք է կարևոր գետ  
մը եղած ըլլա, մոտ Վաղարշապատի: Ամենայն հավանականու-  
թյամբ՝ Երասխ կամ Արաքս, որուն Կորյունի տված Ռահ ձևը կհի-  
շեցնե ավանդական Rangha կամ Ranha»: Ճիշտ է, որ Հուսիկ և  
Տիրան հանդիպած պիտի լինեն Երասխի մոտ, որովհետև Արտա-  
շատի մոտից անցնող գետը Երասխն է, բայց Վաղարշապատի մո-  
տից անցնող գետը Երասխը չէ, որ հոսում է... կիլոմետր հեռվից,  
այլ Քասաղը կամ Սև գետը: Վերջինը ընդունում ենք մենք:

Ահա այս գետի եզերքին տեղի ունեցավ փառավոր և սրտա-  
շարժ հանդիպումը. երկու կողմերը տվին միմյանց «զցանկալի ող-  
ջոյնն», և այնուհետև ուրախության աղաղակներ բարձրացնելով,  
հոգևոր երգերով և օրհնության ձայներով դարձան Վաղարշապատ  
քաղաքը, ուր բոլորը միասին ուրախությամբ անցկացրին տոնական  
օրերը:

## 2

Ալեյի ընդարձակ և գեղեցիկ է պատմում Սասնեցին (էջ 45 և  
այլն) այս հանդիպումը, որ դնում է ո՛չ թե Վաղարշապատի մոտ,  
այլ Տարոնում. «Վասն որոյ յերթալն նորա լերինքն ցնծալին, այ-  
սինքն արքայն և եկեղեցին. և բլուրքն խայտային, ազատքն և իշ-  
խանքն. և գետքն ծափս հարկանէին՝ հօտապետքն և հովիւքն»: Այս  
այլաբանությամբ ամենքի ուրախութիւնը նկարագրելուց հետո,  
ասում է, թե երբ Մեսրոպը մոտեցավ իր հայրենի Տարոն գավա-  
ռին, «և ի հասանելն նորա ի գաւառն իւր», Սահակ կաթողիկոսը  
բազմաթիվ կրոնավորների՝ եպիսկոպոսների և քահանաների հետ  
եկավ Մեսրոպին դիմավորելու: Բայց այդ խմբի մեջ չէր Վոսմ-

շապուհը, որ ըստ Սասնեցու, ինչպես հետո պիտի տեսնենք, այդ միջոցին գտնվում էր Միջազեարքում: Դիմավորողները համարուրեցին Մեսրոպին և իրեններին՝ իբրև Հիսուսին, և նրա աշակերտներին. «և համբուրէին զնա իբրև զնոյն ինքն զՅիսուս, և կամ զաշակերտս նորա: Եւ տեսանէին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի և հաւատային տեսչեան նորա» (այսինքն զրբի գլուտի տեսիլը, որ Մեսրոպ այնտեղ նրանց պատմած պիտի լինէր): Մեսրոպը ցույց է տալիս Սողոմոնի Առակաց զիրքը, որ ինքը իր աշակերտներին հետ թարգմանած և շուրջանոս գրչին գրել էր տված: Առաջին անգամ էր լսում ժողովուրդը գրքի միջոց հայերեն ձայն. և այդ առաջին հայերեն գրքի ընթերցումը մեծ և անօրինակ ուրախություն պատճառեց նրանց. «Եւ ընթերցեալ բերկրէին, խաղային, խայտային և ի ձայն մեծ գոհութիւն ի բարձունս [ի] վեր առաջէին տուողին զանեզրական պարզանս. և պար առեալ՝ պատուէին զառաքեալն և զվարդապետն և զերկրորդ լուսաւորչն»:

Այնտեղ Սահակ կաթողիկոսը տարածեց իր ձեռքերը և երկինք բարձրացնելով իր աչքերը՝ օրհնեց թե՛ առաջողին և թե՛ առաջալին. իրեն հետևեց ժողովուրդը. և ամեն ոք օրհնություն տվեց «լուսոյն աշխարհի, որ լուսաւորեաց զմեզ ի ձեռն մեծին Մեսրոպայ»:

Սասնեցին (էջ 46—50) զնում է նաև մի երկար աղոթք իբր Սահակի բերանից, որով նա շնորհակալություն է հայանում Աստուծուն՝ իր մեծաշնորհ պարզանների համար՝ լուսավորչի և Մեսրոպի միջոցով:

Աղոթքից հետո, Սահակն իրեն հետ առնելով նաև Մեսրոպին՝ մտավ ս. Կարապետի Իննականյան վանքը, այնտեղ ճգնող հինգ հարյուր (?) միանձնների մոտ, որոնք հրձվելով Մեսրոպի գալու և աստվածային հրաշքի վրա, մտան տաճար, և կարդացին պատշաճավոր աղոթքները, փառք տալով Աստուծուն և երկար կյանք խնդրելով Մեսրոպին: Սահակը խոնարհեց իր քահանայապետական գլուխը ս. Կարապետի դերեզմանի առաջ, իբրև կենդանի էակի, և արավ այն գովեստը, որ մեջ է բերում Սասնեցին (էջ 50—52):

Նույն օրը վանքում հյուրասիրություն գտնելուց հետո, հետևյալ օրը ճանապարհ ընկան հետիոտն: Անցան Եփրատ գետի մյուս երեսը և այնտեղ հանդիպեցան Վոսմշապուհ թագավորին, որ իր ղորքով միասին գալիս էր Միջազեարքից: Նա արդեն լսել էր եղելությունը, և երբ տեսավ երկու կրոնապետներին, դեռ հեռվից իջավ ձիուց և հետիոտն նրանց դեմ եկավ: Մունր իջավ նրանց առջև և երկրպագում էր հայրապետին ու վարդապետին: Բաց արեց կուրծքը, խնդրում ու առնում էր օրհնություն ու համբույր: Նույնն էին անում նաև իր զինվորները:

Ամբողջ խումբը դիմեց այն Անապատը, որ առաջ Արշակունի թագավորների սեփականությունն էր եղել, իսկ հետո Տրդատը նվիրել էր եկեղեցուն, նույն Անապատում կանգնած էր Առաքելոց վանքը, ըստ Բուզանդի կողմած «Հանգիստ առաքելոց» (Գ, ԺԴ), ուր գետեղված էին առաքյալների նշխարները: Այս վանքումն էր սովորել Մեսրոպը և այստեղ էր Սահակը ձեռնադրվել հայրապետ, ինչպես ուզում է հավատացնել Սասնեցին՝ ասելով «ուր էր վարժեալ Մովսէս և օծեալ Ահարոն»:

Այս վանքին այցելության գնացին Վռամշապուհ թագավորը, Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ վարդապետը՝ իրենց հարակիցների հետ: Երկրպագեցին սուրբ տեղերին, ընծաներ մատուցին առաքելական նշխարներին, և հետո ելան 107 խոտակյաց ճգնավորների տեսության: Այս ճգնավորները ապրում էին իրենց ձեռական աշխատությամբ և միայն հաց ու ջուր էին ճաշակում: Նրանց վանքը «արինատր կերակուր», այսինքն՝ մսեղեն երբեք մուտք չէր գործել: Նրանք թեև ունեին թագավորներից նվիրված գյուղեր և ավաններ, բայց ամբողջի եկամուտը տալիս էին որբերին և այրիներին:

Ճգնավորները ճանաչեցին իրենց հին ընկերակից Մեսրոպին. փաթաթվեցին իրար և տվին սուրբ ողջույնը: Ուխտավորները տեսնելով սրբություններն ու ճգնավորների խստամբերությունը, ճրգնավորներն էլ լսելով երկնային շնորհների հայտնությունը, օրհնում ու փառք էին տալիս:

Իրենց ուխտը կատարելուց հետո, ամեն մարդ իր գործին գրնաց, ասում է Սասնեցին, «ոմն ի դատել և ի պատժել և զիրատունս սիրել, ընդ առաւօտն սպանանել և սատակել զթիրեալան յուղոյն ճշմարտէ. և միւսն հոգևոր գաւազանանն յանդիմանեալ սաստեալ մխիթարեալ, և իջուցանել զիւղն ի մօրուան և ի գրպանն»:

### 3

Այս բոլոր տեղեկությունները, որ Սասնեցու հրատարակիչը՝ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսեսյանը (անդ, էջ 44, 52 ծանոթ.) համարում է մանրամասնություններ, որոնք իբր թե քաղված են այժմ կորած մատենագիրներից, մեր կարծիքով Սասնեցու վառ երևակայության ծնունդ են և իբր այն զուրկ որևէ պատմական արժանիքից և վավերականությունից: Սխալներ էլ շատ կան նրանց մեջ: Երբ Կորյունը այնպես պարզ ու որոշ կերպով ցույց է տալիս, թե հանդիպումը տեղի ունեցավ Վաղարշապատի մոտ, ինչպես բրնական էր, Տարոնն ու ս. Կարապետը սուտ են. և Սասնեցուն մնում է լռել: Նաև ժամանակագրապես սխալ է Սասնեցու այն տեղեկու-

թյունը, թե Վոամշապուհ մինչև այն ժամանակ գտնվում էր Միջագետքում և այդտեղից վերադարձին միայն պատահեց Մեսրոպին ու Սահակին՝ Մուշի մոտ, Եփրատ գետի եզերքը: Վոամշապուհի ճամփորդութիւնը զեպի Միջագետք՝ մի տեղեկութիւն է, որ շուենն մյուս աղբյուրները և առաջին անգամ գիտե միայն Խորենացին (Բ, Ժբ): Սասնեցին էլ նրանից է քաղում: Բայց Խորենացին այս ճամփորդութիւնը զնում է ո՛չ թե գրերի գյուտից հետո, ինչպես անում է Սասնեցին, այլ նրանից շատ առաջ: Այնպես որ Խորենացու պատմութիւնը, երբ Վոամշապուհը Միջագետքից դառնում է Վաղարշապատ, նո՛ր միայն տեսնում է, թե Սահակը և Մեսրոպը ժողով են գումարել գրերի գյուտի վրա Խորհրդակցելու համար: Այնուհետև տեղի է ունենում Դանիելյան գրերի առաջումը, երկամյա փորձը, Մեսրոպի ճանապարհորդութիւնը և վերջապես հայերեն գրերի գյուտը: Ըստ որում Վոամշապուհի վերադարձը Միջագետքի ճամփորդութիւնից՝ տեղի ունեցած պիտի լինի Մեսրոպի վերադարձից առնվազն երեք տարի առաջ, ինչպես երևում է նախորդ գլխի հաշիվներին: Բացի սրանից, մինչև իսկ եթե Վոամշապուհը ճիշտ նույն ժամանակ վերադարձած լիներ Միջագետքից, մի՞թե միասին չպիտի գային ինքն ու Մեսրոպը, որ նույնպես Միջագետքումն էր գտնվում և որ ճիշտ այն ժամանակ վերջացրել էր իր գործը: Մեսրոպը մեծ հաճույքով անշուշտ պիտի շտապեր ներկայացնել իր գյուտը Վոամշապուհին, որ նույնպես որոշ մասնակցութիւն ուներ այդ գործում: Վերջին պարագային չի կարելի անշուշտ առարկել, թե ըստ Սասնեցու, Մեսրոպն այն ժամանակ ո՛չ թե Միջագետքում, այլ Բալուտումն էր գտնվում, որովհետև Բալուի ավանդութիւնը մեզ համար գոյութիւն չունի:

Վերջապես Կորյունն ասում է, թե երբ Մեսրոպը գրերը բերավ Վաղարշապատ և տեղի ունեցավ Սահակի հանդիպումը, այնտեղ էր նաև Վոամշապուհը, ուստի շէր կարող միաժամանակ Միջագետքում լինել. «Եւ արդ եկեալ յիշելին (Մեսրոպ) մերձ ի Թագաւորական քաղաքն, ազդ լինէր քաղաւորին և սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարագունդ... ի քաղաքէն ելեալ պատահէին Երանելոյն»:

Մնացյալ տեղեկութիւնները, որ տալիս է Սասնեցին, ինչպես, օրինակ, վանքերի այցելութիւնը, Սահակի երկարաշունչ աղոթքները (տեսնես ո՛վ էր զրի առել), ժողովրդի ուրախական ցույցերը և այլն և այլն, այնպիսի բաներ են, որ միշտ կարող են եղած լինել և անշուշտ այն ժամանակ էլ տեղի ունեցած պիտի լինեին, եթե միայն Սահակը և Վոամշապուհը Տարոնում հանդիպած լինեին Մեսրոպին:

Մեսրոպը մեծ գաղափարն էր հղացել հնարելու հայերեն գրերը և հիմ դնելու հայ գրականության: Հակառակ զանազան թյուրիմացություններին, որոնք արգելք եղան իրեն և այնքան ձգձգեցին իր գործը, նա վերջապես հաջողեց հորինել հայերեն այբուբենը և թարգմանեց առաջին հայերեն գիրքը: Բայց ավելի կարևորը այս չէր: Գործը թերևս կմեռներ իր խանձարուրի մեջ, եթե չլիներ մեկը, որ տարածեր Հայաստանի պես ընդարձակ երկրի այն բոլոր գավառներում, որոնք լեռներով ու ձորերով անջրպետված իրարից, ավատական կարգերի պատճառով հաճախ իրար թշնամի, հայկական, հունական և պարսկական՝ երեք տարբեր կողմնորոշմամբ միմյանց հակառակորդ, գրեթե առանձին ջրգեր ու երկրներ էին ներկայացնում: Երիտասարդական ավյունով լի, գործի հաջողության հավատով լցված, խանդավառ ու եռանդուն Մեսրոպը եղավ այն անձը, որ այդ գործը կատարեց:

Մեսրոպը մի քիչ ժամանակ վաղարշապատում մնալուց հետո, հրաման առավ թագավորից և ճանապարհ ընկավ գիրն ու գիրքը տարածելու Հայաստանի բարբարիկ գավառների մեջ: Մարաց խուժաղուժ կողմերն եղան, որոնք բախտ ունեցան վայելելու առաջին անգամ Մեսրոպի քարոզությունը: Մարաց կողմ ասելով, պետք է հասկանալ այստեղ ո՛չ թե բուն Մարաստան կամ Ատրպատական, այլ, ինչպես ցույց է տալիս Ինճիճյանը (Հնախոսութիւն, Գ, 84), Հայաստանի Փայտակարան նահանգը: Այս տեղի ժողովուրդը ո՛չ միայն իր ավազակաբարո ընդության, այլև իր օտար ու անհասկանալի լեզվի (մարերեն կամ իրանական մի այլ լեզու) պատճառով դժվարամատչելի էր: Թե ի՛նչքան մնաց Մեսրոպը Փայտակարանում, չի գրում Կորյունը, բայց համառոտակի նշանակում է Մեսրոպի գործունեության հաջող արդյունքը: Սերունդը դաստիարակելու համար՝ Մեսրոպն իր մոտ աշակերտ առավ նույն բարբարոս ժողովրդի որդիներին և ո՛չ միայն պետական մաքուր հայերեն լեզուն սովորեցրեց նրանց, այլև կրթեց քրիստոնեական գիտության մեջ: Այնպես որ այնուհետև թողեցին իրենց ավազակությունը՝ դարձան օրինապահ և կրթված քաղաքացիներ. «Առ ի յարդարել և զնոցա հօրանցամոյն ծնունդս՝ առեալ պարզախօս հոնտորաբանս, կըրթեալս աստուածատուր իմաստութեանն ծնունդս կացուցանէին: Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանօք օրինապատգամացն, մինչև բնաւ արտաքոյ իւրեանց բնակութեանն զերծանել» (Կորյուն, էջ 12):

Մեսրոպը միայն աշակերտներին սովորեցնելով չբավականա-

ցավ, այլև ձեռք առնելով ավետարանական մշակութային գործը, բերան առ բերան քարոզեց ազնու ժողովրդին: Այս քարոզության համար նա մի կողմից առձեռն թարգմանում էր Ավետարանը և մյուս կողմից զրի առնելով այն՝ նրա վրայից սովորեցնում էր ժողովրդին՝ հասկանալի լեզվով. «Եւ ի ձեռն առնալ այնուհետև աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել և յուսուցանել»:

Այս քարոզության ժամանակ անշուշտ մենակ չէր Մեսրոպը, այլ ունէր նաև իր հետ մի քանի օգնականներ, ինչպէս ցույց է տալիս Կորյունի «աստուածատուր իմաստութեանն ծնունդս կացուցանէին» հոդանակի բացատրությունը:

Կորյունի ակնարկություններից այնպես է երևում, որ Սահակն էլ Մեսրոպի նման քարոզչական գործունեություն էր սկսած: Կաթողիկոսի գործունեության սահմանը պիտի լինէր Ալլարատյան գավառը կամ նրանից միայն քիչ հեռու տեղեր. «Ուստի և երանելի հարցն մերոց համարձակութիւն առնալ յուսայից փութով, և երեզլի և արդիւնակատար ըստ աւետարանին՝ զիրեանց մշակութիւնն ցուցանէին (տպ. ցուցանեն)... ի ձեռն երկուց հաասարելոցն... (Կորյուն, էջ 12—13):

Քարոզչությունը աշխույժ կերպով առաջ էր դնում. հունարեն և ասորերեն ընթերցվածները ետ քաշվեցան և նրանց տեղը բրոնեց հարազատ հայերեն լեզուն: Ս. Գրքի պատմությունն ու վարդապետությունը տարածվեցան ամեն տեղ, մինչև իսկ այնպիսի խավերի մէջ, որոնք նրուսաղեմի անունն անգամ չէին լսած: Բնիկ հայերեն լեզվով ընթերցանությունը այնպիսի խանդավառ ոգևորություն բերավ ժողովրդին, որ ամեն մարդ փափագում էր սովորել նոր գրերը: Գեղեցիկ է նկարում այս պատկերը Փարպեցին, ասելով՝ թե ասորերեն լեզվի տանջանքներից ազատված ժողովուրդը այնպես էր ուրախանում՝ ինչպես խավարից դեպի լույս ելնողը. «Քանզի ամենայն անձն յորդորեալ փափագէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի խաւարէ՝ յստորի տանջանացն զերծեալք ի լոյս՝ խնդային» (Փարպեցի, էջ 42):

Խանդավառ կերպով է նկարագրում նաև Կորյունը մեր երկրի այս երջանիկ շարժումը. «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում անկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական զնորովն, հանդերձ աշխարհակեցոյց Աւետարանաւ Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաասարելոցն՝ հայաբարբառ հայերենախօսք գրտան: Անդ էր այնուհետև սրտալիր ուրախութիւն և ակնավայել տե-



սիլ հայելոյն (նայողի համար): Քանզի երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան, առ ժամայն վաղվադակի ամենայն իրացն եղևլոց խելամուտ լինէր: Ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն, այլ և յառաջագոյն յաւիտենիցն, և թպսեկելոցն սկզբանն և կատարածի, և ամենայն աստուածատուր ականդութեանցն» (Կորյուն, էջ 12—13):

Իսկ Ասողիկն ավելացնում է. «Սկիզբն դպրութեանս Հայոց եղև սկիզբն մեծ գիտութեան և անպայման խնդութեան բազում աշխարհաց, զի ոչ միայն Հայոց, այլ և Վրաց և Աղուանից տուաւ գիր ի խնամոցն Աստուծոյ» (էջ 74):

5

Երբ Սահակը և Մեսրոպը տեսան, որ նորագլուտ տառերը արդեն բավարար են և ս. Գրքի թարգմանութեան գործը հաջող է գրնում, վստահ իրենց նախնական փորձի հաստատութեան վրա, որոշեցին հիմնել հայկական առաջին վարդապետարանը: Վարդապետարանի նպատակն էր հավաքել աշակերտներ, սովորեցնել նրանց նորագլուտ տառերը, կրթել ավետարանական ուսման մեջ և այսպես՝ նոր քարոզիչներ պատրաստելով՝ ուղարկել զանազան կողմերի ժողովրդին քարոզելու համար. «Խմբէին ուսուցանել և՛ թեքել, և՛ պատրաստական քարոզութեանն անգէտ մարդկան յօրինել» (Կորյուն, էջ 13):

Վարդապետարանը բացվեց Վաղարշապատում՝ Հայրապետարանի մոտ: Աշակերտ հրավիրելու համար մասնավոր հայտարարութեան պետք չկար. նրա բացման լուրը լսվեց թե չէ, ահա ամեն կողմից գունդագունդ թափվեցին գիտութեան աղբյուրից ճաշակելու համար. «Որոց և ինքեանք իսկ ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհին յորդեալք և դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ: Քանզի յԱյրարատեան գաւառին՝ ի կայս թագաւորացն և քահանայապետացն, բոխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ» (Կորյուն, էջ 13)<sup>1</sup>:

Վարդապետարան մտան ո՛չ միայն քարոզչութեան պատրաստվող աշակերտները, այլև միշտ նրա մոտ գտնվող արքունիքն ու նախարարական դասը. «և իրեանց անգէն զառընթերակաց ար-

<sup>1</sup> Մեսրոպի ժամանակ բացված հայկական դպրոցների ուսումնական ծրագրերի, կրթական մեթոդի, դասագրքերի և այլ մանրամասնութեանց մասին բավական ընդարձակ խոսում է Ար. Մովսիսյան՝ «Հայագիր դպրոցի ծագումը և նրա հետագա վիճակը» («Համալսարանի գիտական աշխատութիւններ», էջ 345):

քունիսն, հանդերձ ամենայն ազատագրուող բանակին՝ աստուած-  
դէն իմաստութեամբն վարդապետեալ: Սահակը հատկապէս հոգ  
տարաւ իր խնամի Մամիկոնյաններէ կրթութեան, որոնց զխա-  
վորն էր Քաչն Վարդան Մամիկոնյան (կամ նաև կոչված Վարդկան),  
որ հետո հայոց կրօնական շարժման զուրի կանգնելով, նահա-  
տակվեց մեծ պատերազմում 451 թվին: Բայց ընդհանրապէս Սա-  
հակի ջանքն էր ամեն մարդու մեջ աճեցնել քրիստոնեական հավա-  
տը և հասցնել ճշմարիտ գիտութեան. «Ենայնպէս և զամենայն ոգի  
ջանայր յերիւրել հասուցանել ի գիտութիւն ճշմարտութեանս»:

Երբ վարդապետարանի աշակերտները հասան բավական կա-  
տարելութեան, այնպէս որ այլևս կարող էին իրենց էլ քիչ թե շատ  
ուրիշներին սովորեցնել, Սահակը և Մեսրոպը նրանց այլևայլ խում-  
բերի բաժանելով՝ այնպէս դաս-դաս ուղարկեցին Հայաստանի զա-  
նազան գավառները, քարոզութեան համար: Այս խմբերից մեկի  
մեջ էր նաև Կորյունը: Սահակը և Մեսրոպը իրենց անձը և իրենց  
գործը օրինակ և կանոն տվին նրանց և պատվիրեցին մնալ նույն  
կանոնի մեջ, նույն վարդապետական գործը շարունակելով: Երկու  
վարդապետողների այս գործի առթիւ Կորյունը կոչում է նրանց  
«Եկեղեցւոյ սիւն» և իրենց կատարած գործը համեմատում է Քրիս-  
տոսի ավետարանիչների գործի հետ, որոնք ի սփյուռս աշխարհի՝  
քարոզեցին կենաց բանը. «Որ և սկսան սիւնք եկեղեցւոյ՝ միջա-  
մուրս ձեռամբ զգործ անտարանչացն Քրիստոսի գործել. զումարել  
ի կողմանս, ի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, զասս  
դասս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցելոցս ի կատարու-  
մըն գիտութեան, բաւականս և առ ի զայլսն զեկուցանելոյ» (Կոր-  
յուն, էջ 13):

Այտեանյանը (Քննական քերականութիւն, էջ 41 ծանոթ.) կար-  
ծում է, թե այս խոսքերը գրաբար հայերենի ուսման համար է ա-  
սում Կորյունը. իբր թե վարդապետարանում Մեսրոպի նպատակ-  
ներից մեկն էլ իր կազմած Քերականութիւնը աշակերտներին սո-  
վորեցնել էր:

## 6

Վարդապետարանի բացման առթիւ Կիրակոսն էլ մի տարօրի-  
նակ տեղեկութիւն է տալիս. «Եւ ծողովն այնուհետև մանկունս  
բազում և ուսուցանեն զրովանդակ աշխարհս, և բաժանեն զման-  
կունս մատաղս և քաջուսմունս, փափկաձայնս և երկարողիս, և  
կարգեն զպրօցս երկուս ասորիէն և յունաբէն» (Կիրակոս, էջ 15):  
Երկու դպրոցների հաստատութիւնը կատարյալ թյուրիմացութիւն

է. հայերեն գրերը գտնվելուց և հայ գրականութեան հաստատութեան հետ էլ ի՛նչ ասորի և հույն դպրոց, Ասորի և հույն դըպրոցների մասին խոսում է Կորյունը՝ Մեսրոպի Եղեսիա գնացած ժամանակ, ուր իր աշակերտներից «զոմանս յասորի դպրութեանն կարգէր, և զոմանս յունական դպրութիւնն», բայց ո՛չ թե Հայաստանում հույն և ասորի դպրոցներ էր բաց անում: Ահա թե ի՛նչ է նշանակում բնագիրը խեղաթյուրել:

7

Հարց է, թե Հայաստանի այս գրական ու կրթական շարժման առթիվ ի՛նչ դիրք էր բռնել պարսից պետական կառավարությունը, որի թեարկութեան տակ էր այն ժամանակ Հայաստանը:

Հայոց գրական շարժումը շահավետ էր պարսից պետության համար երկու տեսակետով: Նախ հայերը այսպիսով բաժանվում էին հույների ազդեցությունից և կազմում էին առանձին ինքնուրույն միություն: Երկրորդ՝ նոր գրական շարժման վերջին արդյունքըն այն էր, որ պտորերենի տեղ հայերենն էր գալիս, ինչ որ նույնպես շահավետ էր պարսից քաղաքականության համար՝ «Բաժանեա՛ զի տիրեսցես» սկզբունքի համաձայն: Ահա այս երկու պատճառներով ո՛չ մի արգելք, ո՛չ մի հակառակություն չի տեսնվում պարսից գերագույն իշխանությունից և հայերը գոնե այս կետում վայելում են լիակատար աղատություն (այս մասին տե՛ս և Օրմանյան, Ազգապատում, Ա, 277—278):

Գ Լ Ո Ւ Խ Զ

ԵՐՐՈՐԳ ՔԱՐՈՉՁԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ

(Լուսավորութեան Գողթան, Սյունյաց և Վրաստանի)

1

Մեսրոպի երրորդ քարոզչական գործունեությունը տարածվում է Հայաստանի Գողթն և Սյունյաց գավառները և սրանց սահմանակից Վրաստան աշխարհը: Մեսրոպը հրաման առավ Սահակից, որպեսզի այս երկրների բարբարիկ ժողովրդի մեջ քարոզություն սկսի. «Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշտոց, որպէս զի Տէր եպիսկոպոսն ի Կայենականսն, և նա ի սփիւտս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն»:

Կորյունի այս խոսքը մտթ է և շի հասկացվում, թե ո՞վ է «Տէր եպիսկոպոսը» և ի՞նչ բան է Կայենականք: Նախ՝ կարելի է առաջինը ընդունել թե՛ իբր հասարակ անուն և թե՛ իբր հատուկ անուն: Կորյունի առաջին տպագրության մեջ գրված է տէր, որով ո՞չ թե հատուկ անուն, այլ պատմանուն է իմացվում, իսկ երկրորդ հրատարակության մեջ (1894 թ.) դառնում է Տէր (իբր հատուկ անուն): Տէր իբրև հատուկ անուն անսովոր չէր 5-րդ դարի հայոց մեջ, այսպես՝ ունենք Տէր (կամ նաև Տիրայր) հորձենացի (Փարպեցի, էջ 41) և նույն կամ ուրիշ Տէր անունով մեկը, որին նախանձոտ կրոնավորները «անհանգիստ հալածանք վախճանեցուցին» (Փարպեցի, թուղթ, էջ 609): Տէր իբրև հասարակ անուն են հասկանում Ստ. Նազարյանը («Հիւսիսափայլ», 1860, 244), Գարագաշյանը («Քննական պատմութիւն», հատ. Գ, էջ 25), Գ. Փառնակը («Անահիտ», 1905 թ., էջ 206), Նահապետյանը («Բազմավէպ», 1913 թ., էջ 141), Յնտղլյանը («Կորին», էջ ԺԵ և 27), Թորոսյանը («Բազմավէպ», 1931 թ., էջ 466), Ակինյանը («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 475 և 523) և վերջին անգամ Արեղյանը («Սովետական գրականութիւն», 1941 թ., N 2, էջ 48), որոնք բոլորը «տէր եպիսկոպոս» ասելով հասկանում են Սահակ կաթողիկոսին:

Հարց է, թե կարելի՞ էր Սահակ կաթողիկոսի անունը այսպիսի անշուք մի ձևով տալ: Սրան էլ պատասխանում է Թորոսյանը զրական կերպով. նա հիշում է Կորյունից երկու հատված, որոնց մեջ նույնպես Սահակ կաթողիկոսը հիշվում է լուկ եպիսկոպոս տիտղոսով. «Յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ և թագատրին Հայոց» (էջ 30). «Ազգ լինէր թագատրին (=Վառձապուհ) և սրբոյ եպիսկոպոսին (=Սահակ)» (Կորյուն, էջ 21):

Մնում է իմանալ, թե ի՞նչ է Կայենականք:

Այս բառով Ստ. Նազարյանը (անդ) հասկանում է «մայր արարատյան աշխարհը», Գարագաշյանը հասկանում է «քուն Հայք». Միսթճյանը («Հանդէս ամսօրեայ», 1902 թ., մայիս) «Կայէն բերդի շրջակայքը». Փառնակ = Յնտղլյանը դնում է պահլավերին Ka-yanik «Թագավորական» բառի հետ նույն (արմատն է kay «թագավոր»). Նահապետյանը «կայանք թագատրաց». Թորոսյանը («Բազմավէպ», 1931 թ., էջ 467) ասում է, թե շատ է որոնել Կայենական անունով մի գավառ, բայց չի գտել. ուստի ուղղում է այդ բառը «ի հայրենականս» կամ «ի կայս հայրենական» կամ «ի կայս արքունականս». Ակինյանն էլ Կայենականք ասելով հասկանում է «ի կայս հայրենականս», այն է՝ Արարատ, Տարոն և Վասպուրական նահանգները, որոնցից առաջին երկուսը հայրապետական կալված էին արդեն, իսկ Արեղյանը կայենական ասելով հաս-

կանում է «Այրարատի զորակայաններում կենտրոնացած մարդկանց»։ Կարելի էր նաև կայնեակա՞ն բառը, քանի որ այդ անունով գավառ չկար հին Հայաստանում, կապել Կամիեակա՞ն նախարարական տոհմի հետ։ Այս տոհմանունը հիշում է Բուզանդը։ Այս տոհմից էին Վարազ իշխան Կամիեակա՞ն՝ մին այն քաջ իշխաններից, որոնք Օշականի առջև սարսափելի կոտորած տվին Մազբըթաց Սանեսան թագավորին և իրեն ընկերակցող 12-ից ավելի կովկասյան ցեղերին (Բուզանդ, Գ ժա)։ Նույնպես Գնիթ իշխան Կամիեակա՞ն, որ Հաշտենից գավառի կառավարիչն էր և եղավ մին այն 12 նախարարներից, որ Հուսիկին Կեսարիա տարան՝ կաթողիկոսական ձեռնադրու՞թյան համար (Բուզանդ, Գ, ժբ)։ Բայց ի կայնեակա՞նուն (նախդրիվ հայցական ձևով) չի կարող տոհմանուն նշանակել, այլ միայն «տեղ, վայր»։ Ուստի բանասերների մեծ մասի հետ մնում է ընդունել, թե Սահակը և Մեսրոպը համաձայնության եկան, որպեսզի Սահակը քարոզի Այրարատում, իսկ Մեսրոպը գնա քարոզելու Հայաստանի հյուսիսային բարբարիկ գավառներում։

Մեսրոպին ընկերանում էին նաև մի քանի աշակերտներ՝ իբրև օգնական։ Սրանցից երկու գլխավորների անունը հիշում է Կորյունը, այն է՝ «առաջնումն Տիրայր անուն ի Խորձենական գաւառէն, և երկրորդին Մուշէ անուն ի նահանգէ Տարօնոյ»։ Բայց մյուսներին դժբախտաբար զանց է անում համառոտության համար, ասելով «հանդերձ այլովք ևս սպասաւորօք աւետարանին, զոր շեմք բաւական ըստ անուանցն նշանակել»։

Ամբողջ խումբը հրաժեշտ տալով Սահակին, Վաղարշապատից ճանապարհ ընկավ և դիմեց դեպի Գողթն գավառը։

Անծանոթ չէր Գողթն գավառը Մեսրոպին. այստեղ էր սկսել նա իր առաջին քարոզչական գործունեությունը, այստեղ էր աշխատել նա բնաջինջ անելու հեթանոսական թաքուն աղանդը և վերջապես այստեղ էր հղացել նա հայերեն գրերը երկնելու մեծ գաղափարը։ Տակավին ողջ էր այն գավառի բարեպաշտ իշխանը՝ Շաբաթ, որ Մեսրոպի առաջին քարոզության ժամանակ այնպես հավատարիմ օգնական և ձեռնտու էր եղել լուսավորությունը տարածելու համար։ Այժմ հասել էր նաև Շաբաթի որդին՝ Գիտ կամ Գյուտ, որ հորը նման բարեպաշտ ու կրոնասեր մի անձ էր։ Երկուսն էլ շինակցեցին իրենց ջանքը և Մեսրոպին ընծայեցին բոլոր հնարավոր միջոցները՝ քարոզության հաջող վախճանի համար։ Մեսրոպը ման եկավ ամբողջ գավառը, ամեն կողմ քարոզեց, լուսավորություն սփռեց ամեն կողմ և ամեն մի գյուղի մեջ նշանակեց վանականների խմբեր, որոնք իր սկսած գործը իրենից հետո պիտի շա-

Ամանդութիւնն ասում է, թե Մեսրոպն իր առաջին կամ երկրորդ քարոզչութեան ժամանակ Գողթն գավառի մեջ՝ բնակվել է այժմվա Մարվանիս գյուղը, ուր հիմնել է Գրիգոր Լուսավորչի անունով մի վանք, որ բազմաթիւ վերանորոգութիւններէջ հետո, մընում է այժմ էլ և կոչվում է տեղական զոկերեն բարբառով նույնպէս Մըսըրվանիս, այն է Վեսրոպավանքս: Այս վանքի և նրա գտնված համանուն գյուղի վրա բավական ընդարձակ տեղեկութիւն է տալիս Ս. Լալայանը «Ազգագրական հանդեսի» ԺԱ դրբում (էջ 323—326), ուր զետեղված են նաև գյուղի ու վանքի նկարները: Այդտեղից ենք քաղում հետևյալ տեղեկութիւնները բառացի:

Գողթն գավառի Բստանօր կոչված ձորի ամենավերին մասում գտնվում է նյութաւտ գյուղը, որից ցածր գալիս են հետզհետե խորրատ, Աղնամիր և Ալլահի գյուղերը: «Ալլահից դեպի Արենք, հազիվ 5 վերստ հեռու, գտնվում է Մեսրոբավան կամ Մըսըրվանիս և կամ ուսերեն՝ Նասիրվազ կամ Նասիր-արազ կոչված գյուղը: Պատմական դարևոր ավանդութիւնն ասում է, թե այս գյուղն է այն վաղեմի սրբավայրը, ուր սուրբ Մեսրոբը, հալածելով նախնի կռապաշտութեան մնացորդները, հիմնել է այն փոքրիկ եկեղեցին, որ թեպետ նվիրված է ս. Գրիգոր Լուսավորչու անվան, բայց և այնպէս՝ հիմնադրի ս. Մեսրոբի անունով այժմ էլ կոչվում է Մեսրոբավան և Մարվանիս ... Այս Մարվանիս գյուղը զետեղված է Ալանգյազ լեռան լանջին: Երկու փոքրիկ վտակներ՝ Ալանգյազի և Զառնապետի՝ հոսելով գյուղի արևմտյան և արևելյան կողմերում, թափվում են գյուղի հարավային կողմից հոսող Մարվանուց գետակը, որ սկիզբն է աւնում Գյամի-դայա լեռից... Գյուղի արևմտյան կողմը, Ալանգյազ վտակի աջ ափին, մի փոքրիկ հարթութեան վրա, արդեն կիսավեր պարսպով մեկուսացած, բարձրանում է այն փոքրիկ վանքը, ուր սուրբ Մեսրոպը աղոթել է Լալայաստանի լուսավորութեան համար և քարոզել հետեւելու իրեն օրինակին: Սա դարերի ընթացքում մի Իանի անգամ վերաշինված և հասարակ քարով կառուցված մի շէնք է: Զորս սյունների և ութ կիսասյունների վրա բոլորում են արաբական կամարներ, կրելով ութ պատուհանավոր մի մեծ գմբեթ և սրա մոտ՝ մի շատ փոքրը: Ունի մկրտութեան ավազան և սրա մոտ ու հանդես՝ նույնանման բացվածքներ: Խորաններն երկուս են... Պատուհանները շատ նեղ են և կորած, յուրաքանչյուր

պատին՝ 3 հատ: Միակ արեւմտյան դուռը բացվում է շորս սյունների վրա հաստատված թաղակապ գավթի մեջ...: Եկեղեցու երկարությունն է 6 սաժեն, լայնությունը 3 սաժեն և 2 արշին, իսկ բարձրությունը հինգ սաժենից փոքր ինչ ավելի: Կան մի քանի արձանագրություններ, որոնցից հնագույնն է 2Ք=1460 թվից: Այժմ այս վանքը համարվում է գյուղի ծխական եկեղեցի և բավական խնամքով պահպանվում է: Ս. Քարգմանչաց տոնին շրջակա Ալլահի, Բիստ, Փառակա, Յղնա և Ռամիս գյուղերից բազմաթիվ ընտանիքներ ուխտ են գալիս այս վանքը: Իրենք Մարվանեցիները իրենց մեջ փոռ են հավաքում և հասարակական մատաղ անում: Ահագին բազմություն միասին նստում է վանքի գավթի առաջ և ուտում հասարակական մատաղը: Գյուղի բնակիչները թեև բնիկներ են համարվում և խոսում են Երևանի բարբառին մոտիկ մի բարբառով, սակայն «Մեսրոպի մասին չեն պահպանել մի որևէ ավանդություն: Բոլորի գիտեցածն էլ մեր պատմագիրների հաղորդածներն են»:

Ինչպես տեսանք, բավական երկար է խոսված գյուղի և վանքի նկարագրության վրա, բայց դժբախտաբար ավանդության մասին շատ համառոտ և նույնիսկ բոլորովին անբավարար ձևով: Որտեղի՞ց է քաղված արդյոք այն տեղեկությունը, թե Մարվանիսն է եղել Մեսրոպի բնակավայրը, և թե այստեղ գտնված եկեղեցին նույնիսկ Մեսրոպի հիմնածն է: Արդյոք բուն ժողովուրդը պատմում է այսպիսի բան և ի՞նչպես, թե արդյոք հատուկ անունների ստուգաբանության վրա՞ է հիմնված: «Մշակ» լրագրի 1904 թվի 84 համարում կա «Աղգագրական կուրիոզներ» վերնագրով մի հոդված, որի լրացումն է հաջորդ 85 համարում «Նամակ խմբագրության», երկուսն էլ Լ. ստորագրությամբ (իմա՛ Լեո): Այս հոդվածներում ի միջի այլոց շոշափվում է վերի խնդիրը և դիտել է տրվում, թե Լալայանի տեղեկությունը հիմնված է միայն Մարվանիս անվան ստուգաբանության վրա, որ պարունակում է Մեսրոպ բառի առաջին երեք բաղաձայնները: Հոդվածագիրը նկատում է նույնպես, թե Մեսրոպ հետին ձև է և բուն անունն է Մաշառց, ուստի եթե վանքն ու գյուղն էլ ունենալին այնպիսի հնություն, որ վերագրվում է իրենց, անշուշտ այս Մաշառց ձևից կազմված պիտի լինեին և ո՛չ թե Մեսրոպ ձևից: Եզրակացությունն այն է, որ ավանդությունը, եթե երբեք գոյություն ունի, հետին և թերևս շատ նոր ժամանակի բան է, հիմնված խորհնացու վրա:

Ո՛չ Լալայանի և ո՛չ էլ Լեոյի հոդվածում պատմական ցուցում չկա. ուստի հարկ համարեցի՝ նորից պրպտել մեր մատենագրությունը և գտա նույն վանքի հիշատակությունը Հայսմավուրքում՝

մենեկի ժԳ, Ահա այս հատվածը. «Ըն իշխանքն ընդ իրնարս հա-  
կառակէին, զի ոմն կամէր տանել զսուրբ մարմինն ի գաւառն Տա-  
րօնոյ, ուր ծննալն էր և աննալ, ի բնիկ գիւղն իւր ի Հացիկ: Ըն այլ  
ոմն ի նախակերտեալն իւր վանս ի գաւառն Գողթան, որ գեռ ևս  
Մասրեվանք կոչի տեղին այն»...»:

Ուրեմն ավանդութեան աղբյուրը Հայամավուրքն է և վանքի  
անվան հին ձևն է Մասրեվանք: Ըստ իս այս բառը ծագում է ավե-  
լի շուտ մասուր բառից, քան թե Մեսրոպ անունից: Հայամավուրքի  
պատմությունը քաղված է հորենացուց (տե՛ս ստորև գլուխ ԺԳ),  
ուր շեա Մասրեվանք անվան հիշատակությունը: Կարելի է կարծել,  
թե պատմությունը մնացել է հենց Հայամավուրքի խմբագրության  
ժամանակ և հիմնված է միմիայն կեղծ ստուգարանության վրա  
(մասուրը դարձնելով Մեսրոպ):

### 3

Մեսրոպը Գողթնում իր քարոզությունը կատարելուց և զըպ-  
րոցներ հիմնելուց հետո՝ անցավ սահմանակից Սյունյաց նահան-  
գը, որի համար իղուր ևն կարծում ոմանք, թե Մեսրոպի առաջին  
քարոզության ժամանակ վայելել էր նրա այցելությունը, ինչպես  
ցույց տվինք վերը՝ գլուխ երկրորդ, § 7:

Այս ժամանակ Սյունյաց իշխանն էր Վաղինակը, որ Կորյունի  
բառերով «աստուածասէր հնազանդութեամբ» ընդունելով Մեսրո-  
պին, մեծ օգնություն ցույց տվավ սրան՝ իր առաջադրած նպա-  
տակի իրագործման համար: Այս իշխանի օգնությամբ Մեսրոպը  
կարողացավ ման զալ ամբողջ Սյունյաց նահանգը, մինչև իսկ նրա  
ամենահեռավոր սահմանները, և հավաքեց հայ մանուկներ՝ իր հիմ-  
նած դպրոցում աշակերտելու համար: Ավելի հոգ տարավ Մեսրոպն  
իր ընտրությունն անել նահանգի ամենից ավելի բարբարոս կող-  
մերից. «առուել զգաղանամիտ զվայրենագոյն զճիւղադարաոյ կող-  
մանցն», որոնց վրա թափելով իր բոլոր խնամքները՝ կարողացավ  
հասցնել կրթված կրոնավորներ. «և այնչափ փոյթ ի վերայ առնե-  
լով՝ և դայեկաբար սնուցանել և խրատել մինչև ի նոցունց իսկ ի  
վայրենեացն եպիսկոպոս տեսուչն և կեղեցույն Սյունեաց կարգել»: Ամեն  
կողմ բացվեցան դպրոցներ. վանականների խմբերը ցրվեցան  
ամեն տեղ և հաստատվելով այդ դպրոցներում՝ սկսան ուսում և  
կրթություն տարածել: Նահանգի կրոնավորների գլուխ և կեղեցի-  
ների տեսուչ նշանակեց Մեսրոպն իր աշակերտներից լավագույնին,  
որի անունն էր Անանիա կամ Անանիաս, որ նույն Սյունյաց նա-  
հանգի վայրենիներից էր և որի համար Կորյունն ասում է «այր



սուրբ և երեւելի հայրաբարոյ ժառանգատրաց եկեղեցւոյ: Այս Անանիայի համար Օրբելյանն ասում է, թե Բենիամին անուն մի ուրիշ անձի հետ՝ Մեսրոպի ընտրյալ աշակերտներից էին և նրա առաջին այցելութեան ժամանակ նշանակված էին իբրև «Քարգման և ուսուցիչ»։ «Իսկ սուրբ այրն Աստուծոյ [Մեսրոպ]՝ թողեալ անդ յաշխարհին Սիւնեաց թարգման և ուսուցիչ յընտրեալ աշակերտաց իւրոց զԲենիամին և զԱնանիա, (որ և ձեռնադրեցաւ յետոյ յեպիսկոպոսութիւն աշխարհին), ինքն գայ առ սուրբն Սահակ» (Օրբելյան, ԺԴ, էջ 38)։ Բայց թե Սյունյաց առաջին այցելութունը, հետևաբար Բենիամինի և Անանիայի առաջին նշանակումը ենթադրական են՝ ցույց տվինք արդեն վերը և նորից կրկնելու կարիք չկա։

Եւստ ոգևորված է խոստում Օրբելյանը Սյունյաց (ըստ իրեն երկրորդ և ըստ մեզ միակ) քարոզութեան և եպիսկոպոսութեան հաստատութեան վրա, որի համար տալիս է «Նախաթոռ Հայոց Պատրիարքին» տիտղոսը։ Ահա Օրբելյանի խոսքերը. «Եկն հՀաս մեզ ճառել զցանկալի և զլաւագոյն իրաց. այսինքն՝ զնորոգութենէ խաւարեալ և խոպանեալ եկեղեցւոյ մերոյ և աթոռոյ մետրապօլիտութեան Սիւնեաց: Քանզի ի վաղուց հետէ ոչ գոյր տեսուչ և ուսուցիչ այսմ աշխարհի, յաւերմանէն Անդոկայ մինչև ցտէրութիւնն Վասակայ իշխանին: Իսկ ի հայրապետութեան Հայոց մեծին Սահակայ՝ մինչ կրկին նորոգէր զՀայաստանեայս, և յամենայն տեղիս շրջէր ուղղէր և ընդր զկարգս եկեղեցւոյ, ձեռնադրեաց զԱնանիա՝ զաշակերտ Մեսրոպայ, թարգմանիչ և լի ամենայն առաքինութեամբ՝ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց, նստել ի գահ մետրապօլիտութեան և կոչիլ նախաթոռ Հայոց Պատրիարքին, որ եկեալ նորոգեաց զերկոտասան գաւառս մեծավիճակ գաւազանի իւրոյ: Իսկ ի բանալ զպրութեանս Հայոց վերին պարզութեն ի ձեռն սրբոյն Սահակայ և Մեսրոպայ՝ ետ դպրատունս յաշխարհին Սիւնեաց, և կարգեաց ի վերայ զաշակերտակիցն իւր զԲենիամին: Եւ փութապէս զամենեսեան ուսոյց հայերէն զպրութեամբ, և արար զիտողս աստուածային կտակարանաց» (Օրբելյան, ԺԵ, էջ 38—39)։

Օրբելյանի այս պատմութիւնից երևում է, թե Անանիան ամբողջ Սյունյաց եպիսկոպոս, իսկ սրա ընկեր Բենիամինը բոլոր դպրոցների տեսուչ նշանակեց։ Վերջինը ստուգութեան շատ կարոտ է. սրա մասին ունենք առանձին դիտողութիւն, որ տե՛ս գլուխ ութերորդ, § 3։

Ուշադրութեան շնորք առնում բնավ այն հանգամանքը, որ Օրբելյանը Սյունյաց այս երկրորդ քարոզութիւնը տալիս է ո՛չ թե Մեսրոպին, այլ սրա աշակերտ Անանիա եպիսկոպոսին։ Թե այս փոփոխութիւնը ճարպիկ մի խաղ է, որ Օրբելյանը ձևացրել է,

տեսանք արդեն վերը (գլուխ երկրորդ, § 7) և նորից քննելու կարիք չկա:

Մեարոպը բավական ժամանակ մնացած պիտի լինի Սյունյաց նահանգում, այնպես որ տեսավ Վասակի Սյունյաց իշխանության գլուխ անցնելը՝ Վաղինակից հետո: Նորընտիր իշխանը՝ դեռ շատ հեռու այն պարսկասիրական քաղաքականությունից, որ բռնել էր վարդանանց պատերազմի ժամանակ, բարեպաշտ ու կրոնասեր մի անձ էր, այնպէս որ խոնարհ հպատակություն ցույց տալով Մեարոպին, ինչպես որդին հորը, կատարեց ինչ որ Մեարոպը պատշաճ էր համարում: Հայտնի է Կորյունի տված երևելի գովեստը այս անձի վրա, որից հանված կարևոր հետևությունները Կորյունի գրության ժամանակի մասին, տեսանք արդեն վերը. «Տորում ժամանակի պարզևյալ յԱստուծոյ, հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց՝ քաջն Սիսականն Վասակ. այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իրբև որդոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան. մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր» (Կորյուն, էջ 15):

#### 4

Սյունյաց նահանգում եղած ժամանակ, Մեարոպը մտածում է նաև վրաստանի գրական ու կրոնական լուսավորության համար: Այս երկիրն էլ դեռ զուրկ էր այն ժամանակ սեփական գրականությունից: Մեարոպը մոռանալով մի ժամանակ իր երկրի կարոտ գավառների պահանջը, անցավ վրաստան: Կրթության հիմքը սեփական գիրն է. այդ շատ լավ գիտեր Մեարոպը, ուստի մտածեց նախ և առաջ վրացերեն լեզվի այբուբենն հնարել: Երկու միջոց կար դրա համար. կամ հայկական այբուբենը փոփոխելով (այսինքն՝ ավելի ձայները հանելով և պակասները լրացնելով) տալ վրացիներին, և կամ հնարել բոլորովին նոր մի այբուբեն. Մեարոպն ընտրեց վերջինը. նա հնարեց վրացական այբուբենը, տվեց այդ գրերին հայերենից տարբեր ձև, կարգավորեց ուրիշ շարքով, նշանակեց ընթերցանության օրենքները, և այսպես՝ հայերենից բոլորովին տարբեր մի այբուբեն ձևացնելով՝ պատրաստեց իր պրենակիրը. «Առնոյր (սկսեց) կարգեալ նշանադիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյ նմա ի Տեառնէ. գրէր, կարգէր և օրինօք յարդարէր...»:

Մեարոպի այս վարմունքի մեջ տեսնվում է այն վեհ զգաց-

մունքը, որի համեմատ ամեն ժողովուրդը և ամեն անհատ պարտավոր է հարգել մյուս ժողովուրդների ինքնուրույնությունը: Ազգակերությունը, որ արդի շատ եվրոպական պետությանց ազգայնական քաղաքականության հիմքն է կազմում, հեռու էր Մեսրոպի պես մաքուր և ազնիվ անձի մտքից: Լուսավորությունը նա չկապեց նեղ շովինիզմի հետ. ցույց տվեց և բաց արեց առաջադիմության ուղիղ ճանապարհը՝ սեփական լեզվով գրականությունը:

Մեսրոպը վրացերեն գրերը հնարեց Սյունյաց նահանգում, և իր հետ առնելով իր լավագույն աշակերտներից մի քանիսին, որոնք անշուշտ սյունեցի էին, անցավ Վրաստան: Այնտեղ ներկայացավ վրաց Բակուր Թագավորին և Մովսես եպիսկոպոսին: Թե՛ Թագավորը, թե՛ բանակը և թե՛ ժողովուրդը սիրալիր ընդունելություն ցույց տվին Մեսրոպին, ինչ որ Կորյունը «հնազանդեալ» բառով է բացատրում. «Եւ առանելագոյն հնազանդեալ նմա ըստ օրինացն Աստուծոյ՝ Թագաւորին և զօրացն, հանդերձ ամենայն գաւառօքն» (էջ 15): Մեսրոպը ցույց տվեց նրանց իր շինած վրացերեն գրերը («և նա զիւր արուեստն առաջի արկեալ»), բացատրեց, թե ի՞նչպիսի մեծ օգուտ ունի սեփական գրականությունը. այնուհետև խրատեց և հորդորեց, որ ընդունեն այդ գրերը, սովորեն, տարածեն երկրում և ուսման ու կրթության հոգ տանեն, ինչպես իրենց հարեան հայկական գավառներում: Բայց միայն տեսական խրատները բավական չէին. պետք էր գործնական օրինակով ճանապարհ բանալ: Ուստի Մեսրոպն իր վրա վերցնելով նախածնունդները, խնդրեց, որ աշակերտներ հավաքեն, իսկ ինքը պատրաստ էր կրթել ու դաստիարակել նրանց: Ամենքը համողվեցին և ընդունեցին առաջարկությունը. «Եւ նա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում և յանձն առեալ ամենեցուն զխնդրելին կատարել»: Թագավորը հրաման հանեց և հաւ Վրաստանի գահազան կողմերից ու գահազան գավառներից հավաքվեցին վրացի մանուկները, որոնց Թագավորը հանձնեց Մեսրոպին: Մեսրոպը բաց արեց առաջին վրացական դպրոցը: Նա գտավ Ջաղա անունով մի վրացի, որին Կորյունը կոչում է «այր գրագէտ և ճշմարտահաւատ»: Բայց չի իմացվում, թե այս անձը աշխարհակա՞ն էր, թե հոգևորական: Վերջինը ավելի հավանական է: Այս անձը վրացի Թարգմանչության պաշտոնը Մեսրոպի և վրացի աշակերտների միջև: Կորյունը նրա համար պարզապես ասում է «զայր մի Թարգման վրացերէն լեզուին», իսկ Խորենացին՝ «հանդերձ Ջաղայի ոմամբ Թարգմանաւ հելլէն և հայ լեզուի»: Հայ լեզվի հմտությունը անուրանալի է, քանի որ Մեսրոպի և վրաց միջև Թարգման է. բայց ստույգ է նաև հունարեն լեզվի գիտությունը, ըստ որում Կորյունը կոչում է

նրան «այր գրագէտ»։ Հայ գրականութիւնը դեռ այնքան նոր էր, որ կարելի չէ ենթադրել, թէ վրացի Ջաղան<sup>1</sup> էլ սովորած լինէր. ուստի մնում է հունարենի հմտութիւնը, որպէսզի արդարանա Կորյունի «գրագետ» բառը։

Այս անձի աջակցութեամբ ահա Մեսրոպն սկսավ իր ուսուցչական գործը և այնքան կրթեց նրանց քրիստոնեական ուսման մէջ, որ բոլորովին թողեցին ու մոռացան իրենց հեթանոսական դիվապաշտութիւնը. «Ձոր առեալ արկանէր ի բովս վարդապետութեանն. և հոգևոր սիրոյն եռանդեամբ՝ զաղտ և զժանգ շարաւահոտ դիւացն և զանտոհագործ պաշտամանն ի բաց անշատեալ ի հայրենեաց իրեանց՝ և անյիշատակ ցուցանելի, մինչև ասել՝ թէ Մոռացայ զժողովորդ իմ և զտուն հօր իմոյ»։

Մեսրոպի քարոզչութեան մասին խոսում է նաև Ուխտանեսը (գիրք Բ, գլ ծ) շատ կարճ հիշատակութեամբ. «Եւ արդ մի՛ հեղձասցուք զսէր հոգևոր՝ որ կայր ի մէջ երկուց ազգաց (Հայոց և Վրաց) նորոգել. և զայն, որ ի միոջէ աղբիւրէ առեալ զվարդապետութիւն, որ նախ ինքեանք առին զկենդանութեան լոյսն, որպէս ուսուցին մեզ մարգարէքն և առաքեալքն, և ապա ձեզ և մեզ սերմանեցին առհասարակ զուղղափառ աստուածապաշտութիւն, նախ երանելին սուրբ Գրիգոր և ապա Մաշտոց»։ Մաշտոցի անվան միայն հիշատակութիւնը Գրիգոր Լուսավորչի հետ և այն էլ վրաց լուսավորչութեան գործում, ապացույց է, թէ ի՛նչպիսի մեծ գնահատութիւն էր վայելում Մեսրոպն այն դարում։

Այսպես ուրեմն, կարճ ժամանակում Մեսրոպը կրթութիւնը տարածելով Վրաստանում՝ քրիստոնեութիւնը դրավ ամուր հիմքերի վրա։ Կորյունը Մեսրոպի այս գործին ընծայում է նաև վրացոց ազգային ամբողջութեան տեսակետով շատ ավելի բարձր ու գնահատելի մի արդյունք, այն է բազմաթիվ բաժան-բաժան ցեղերի նյութական կապակցութիւնը. «Եւ արդ զնոսա, որ յայնչափ ի մասնատր և ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամօքն մի ազգ կապեալ՝ փառարանիչք միոյ Աստուծոյ յօրինէր» (Կորյուն, էջ 15)։ Այս բաժան-բաժան ցեղերը պիտի լինեին բացի բուն վրացիներից՝ իմերկները, զուրիացիները, աջաբացիները, մինգրեկները, խեսուրները, թուշերը, փշավները, սվանները, ինգիլոները, ինչպես նաև լազերը (վրացական անվանակոչութեամբ՝ ճաները) և արխազները։ Կորյունի նշանակած միութիւն-

<sup>1</sup> Յնտղյանը (էջ 32) այս Ջաղա անունը կապում է Խարբերդի բարբառի շաղա «մանուկ» բառի հետ։ Այս բառը հասարակ թուրքերեն շաղա բառն է և բռնավ ամենեկն կապ լունի ոչ հայերենի և ոչ էլ վրացերենի հետ։

նը անշուշտ ուրիշ բան չէ, եթե ոչ, նախ՝ կրոնական, հոգևոր միություն, իբրև բոլորն էլ անդամ միենույն վրացական ազգային եկեղեցու, և երկրորդ՝ լեզվական միություն, իբրև բոլորն էլ գործածող միենույն ծիսական լեզվի, որ պաշտոնական նշանակություն էր ստացած և գրականությամբ ապահովված: Վերջին կարծիքը հաստատում է վրացի գիտնական Մովսես Զանաշվիլին (տե՛ս Ն. Գ. Մենկելյանի «Արդի լեզուագիտութիւնը», Վիեննա, 1903 թ., Ա հատ., էջ 104—105), որից քաղում ենք բառացի հետևյալ տեղեկությունները. «Հայտնի է, որ ամենահին ժամանակները թե՛ մինգրեկները և թե՛ ալանները, թե՛ արխազները, թե՛ օսետիներն իրենց կրոնական պաշտամունքը վրացերեն լեզվով կկատարեին և առաջին երկու ցեղերը մինչև հիմա ալ այսպես կվարվին: Այս բոլոր ժողովուրդներու մեջ պաշտոնական լեզուն, պատմական ժամանակներն, վրացերենը կհամարվեր, որով կկատարեին իրենց գրավոր փոխադարձ հարաբերություններն և կկազմվեին ու կգրվեին տարեգրությունները. ինչպես են՝ «Աբխազդա Ցխովրեբա» («Աբխազիայի կյանքը»), հեղինակություն արխազաց Բագրատ Գ (—1114) թագավորի, «Ալզուզեանի»՝ պատմական դյուցազնեբզություն (épopée) օս (կամ օսետին) ժողովրդյան... և Աբխազիայի, Օսետիայի, Չեչենիայի և Դաղստանի տաճարներու վրայի արձանագրություններն և այլն»:

Վրաստանի ամեն կողմը կրթական ու կրոնական կարգ ու կանոնի տակ դնելուց հետո՝ Մեսրոպը հրածեշտ է տալիս բոլորին և դառնում Հայաստան. հասնում է Վաղարշապատ մայրաքաղաքը՝ Սահակ կաթողիկոսի մոտ, որին հաշիվ է տալիս իր արած գործերի առթիվ:

## 5

Վրաստանի լուսավորության այս պատմությունը, որ դրինք, իր ամբողջ մանրամասնությամբ միայն Կորյունն ունի. մյուս պատմագիրները կա՛մ շատ համառոտ են պատմում, կա՛մ անուճով միայն հիշում են ու անցնում և կամ մինչև իսկ բոլորովին հապավում են: Վերջին տեսակից է հատկապես Փարպեցին, եթե չհիշենք հետին պատմիչներին: Շատ համառոտ են Փոքր Կորյունը և Սասնեցին. առաջինը բոլորովին նույն է Խորենացու հետ, երկրորդը հետաքրքիր է վրացիներին տված տարօրինակ անունով և ներանց գրերին ընծայած վայելչությամբ. «Վասն որոյ դիմէ ի կողմանս Դաղմաճունեաց, այսինքն յաղինս Վիռացուց. առն է և նոցա տառ ըստ բային իւրեանց՝ գեղադէշ և վայելուչ՝ թողլով ի ծանօթիցն թարգմանս նոցա» (էջ 56):

Իսկ *Խորենացու* ընծայած տարբերությունն այն է, որ *Նախ՝* վրացերեն գրքի գլուարը եղած է դնում *ո՛չ թե Սյունյաց* գավառում, այլ բուն *Իսկ Վրաստանում*: Երկրորդ՝ այս գլուարին մասնակից է ուզում անել *Նաև Զաղա քարզմանին*, և ձեռնառու՝ *Բակուր քաղաքին ու Մովսես եպիսկոպոսին*։ Ենկ *Մեսրոպայ* երթնալ յաշխարհն *Վրաց*, անէ և *Նոցա* նշանագիրս տունցելովն ի վերուստ շնորհան, հանդերձ *Զաղայի* ոմամք *Քարզմանա* հելլէն և հայ լեզուի։ ձեռնառու լինելոյ արքայի *Նոցա* *Բակուր*, և *եպիսկոպոսին Մովսէսին* (*Խորենացի*, Գ, ԺԳ)։ նրան է հետևում *Նաև Վարդան պատմիչը՝ հետևյալ բաներով*։ «Այլ սքանչելի այրն Աստուծոյ *Մեսրոպ* անցեալ ի Վիրս, անէ և *Նոցա* գիրս, ի ձեռն *Զաղելի* ումեմն, որ աշակերտեցաւ նմա (էջ 51)։ Երրորդ՝ *Նշանակում է, թե Մեսրոպը վրացի աշակերտների խումբը երկու դասի բաժանեց*, առաջինը *հանձնեց Տեր Խորենացուն և երկրորդը Մուշե Տարնեցուն՝ ուսուցանելու համար*։ Եւ ընտրեալ մանկունս, և յերկուս բաժանեալ դասս, և վարդապետս թողու *Նոցա* յաշակերտաց իւրոց *զՏէր Խորենացի և զՄուշէ Տարնեցիս* (անդ)։

Առաջին տարբերության համար այն պետք է նկատի ունենալ, թե *Խորենացին*, ինչպես հետո մանրամասն պիտի ցույց տանք, *Մեսրոպի* երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ ճամփորդությունները իրար խառնելով՝ առանձին մի ձև է տալիս նրանց, այսպես՝ երրորդ ճամփորդության միջից *Սյունյաց* նահանգը բոլորովին հանում է, իսկ *Վրաց* և *Աղվանից* լուսավորությունը, որոնց յուրաքանչյուրը տարբեր շրջանի գործ է, միացնում է մի գլխի մեջ։ Այս հանդամանքների տակ *Խորենացին* չէր կարող իհարկե վրացական գրքի գլուարի տեղը *Նշանակել Սյունիք*, և կարճ կապելու համար ստիպված էր *Վրաստանը* հիշել ու անցնել։

Երկրորդ տարբերությունը *Յուրիմացու* վրացական արդյունք է. ճշմարիտ է, թե *Կորյունի* պատմության համեմատ *Զաղա*, *Բակուր* և *Մովսես* օգնեցին *Մեսրոպին*, բայց նրանց օգնությունը կայանում էր միայն *աշակերտներ հավաքելու և ուսում տալու մեջ*, ո՛չ մեկը չէր կարող օգնել *Մեսրոպին* վրացերեն գրքի պատրաստության ժամանակ, որովհետև, ինչպես տեսանք, *գլուարը* եղավ *Սյունիցում*, ուր չկային ո՛չ *Զաղա*, ո՛չ *Բակուր* և ո՛չ էլ *Մովսես*։

*Խորենացու* երրորդ տարբերությունը ներկայացնում է մի քանի մանրամասնություններ, որոնք կասկածելի են թվում ա՛յն պատճառով, որ *Նախ՝* ուրիշ աղբյուրներում չեն հիշատակված, երկրորդ՝ եթե *Մեսրոպը* վերակացու թողեց, այդ վերակացուն անշուշտ *Զաղա* *Քարզմանը* պիտի լիներ, որ վրացի լինելով ամենահարմար անձն էր, և ո՛չ թե *Տեր* և *Մուշե*, որոնց *Մեսրոպն* իր հետ Գողթն

էր տարիւ և որոնք հազիվ թե վրացական լեզվին ծանոթ լինեին. ուտի և անհարմար էին Վրաստանում վերակացու նշանակվելու: Երբորդ՝ ինչպես հրատարակիչները կարծում են, Տեր Խորձենացին հիշվում է Փարպեցու մեջ՝ իբրև Հայաստանում ապրած և այնտեղ նախանձուտ կրոնավորների հալածանքով վախճանված մի անձ. «Զհրեշտականման այլն զՏէր՝ նոյն անհանգիստ հալածանօք վախճանեցուցին, որք և այժմ՝ դեռ ևս անյագութեամբ քինով ընդ մեռելոյն կարգին» (Փարպեցի, էջ 609): Սակայն այս վերջին պատճառաբանութիւնը կասկածելի է, որովհետև ըստ Աբրահամ Զամինյանի (անձնական տեղեկութիւն) Փարպեցու հիշատակած անձի անունը պետք է կարդալ «տէր Նոյն»:

6

Վերջացնելու համար այս գլուխը, մեզ մնում է քննել մեր հայ աղբյուրների ստուգութիւնը. արդյոք ճշմարիտ և հավանական են այն տեղեկութիւնները, որ տալիս են սրանք Մեսրոպի առաքելութեան Վրաստանում և վրացերեն գրերը հնարելու մասին. ի՞նչ ունեն այս մասին վրացական աղբյուրները և ի՞նչ կարծիքի են այժմյան եվրոպացի, վրացի և հայ նոր քննիչները: Աշխատութեանս այս մասի պատրաստութեան համար իբր աղբյուր են գառայել՝

1. Brosset, «Histoire de la Géorgie». 3-րդ հատ., S. Petersbourg, 1849—58.

2. Müller, «Über den Ursprung der gruzinischen Schrift», SWAW 137, էջ 1—12.

3. Իսահակ Հարութիւնյան, «Հայոց գիրը», էջ 378—385, ուր ի նկատի են առնված զանազան եվրոպական աղբյուրներ:

4. Վրացի գիտնական Մովսէս Զանաշվիլու մի գրութիւնը, որ հրատարակված է Հ. Գ. Մենևիշյանի «Արդի լեզուագիտութեան» մեջ (էջ 103—105).

5. Gardthausen-ի աշխատութիւնը՝ ZDMG 80, էջ 79:

6. «Հանդէս ամսօրեայ»-ից փոքր մի հոդված՝ «Հայ գրականութեան վրացիութիւն վրա ունեցած ազդեցութիւնը», 1899 թ., էջ 222—3, որ ամփոփում է Ն. Մառի հրատարակած ռուսերեն «Из поездки в Афон» աշխատութիւնը:

Վրաց հին մատենագրութիւնը շատ աղքատ է և համեմատելով մեր մատենագրութեան հետ՝ գոնե երկու դար ավելի ուշ է սկըսած: Ինչպես մեր, նույնպես և վրաց առաջին գրական հիշատակարանը ս. Գրքի թարգմանութիւնն է, որ մեր թարգմանութեան նման մի անգամից կատարված չէ, այլ մաս-մաս. այսպես՝ Ավետարանը թարգմանված է յոթերորդ դարում, իսկ Սաղմոսները 7—

Տ-րդ դարում՝ հունարեն Յոթանասնից թարգմանության վրայից կատարված և հետո սլավոնական թարգմանության համեմատությամբ սրբագրված: Հակոբ Տյառնեղբոր Պատարագամատուցը թարգմանված է 768 թվին: Կարելի է կարծել սակայն, թե ս. Գրգի թարգմանությունը կատարված է նախ հայ թարգմանության վրայից և կամ առնվազն այս վերջինը միշտ ի նկատի առնված է հունարենից թարգմանելու ժամանակ: Այս բանը ապացուցվում է ըստ Մառի՝ ահատուկ անվանց հայերեն ձևերեն, հայերեն ոճերու գործածութենեն և այլն, զորս նույնիսկ բազմիցս կատարված Ս. Գրոց սրբագրությունը՝ շեն կրցած բոլորովին խափանելու: Հայերենից են թարգմանված շատ վկայաբանություններ, որոնց մի մասը բուն հայ աղգային սրբեր են. ինչպես՝ Սանդուխտ, Ոսկյանք, Սուքիասյանք, ս. Գրիգոր Լուսավորիչ և թոռունք, Ներսես Մեծ, Սահակ, Ատոմյանք, Վարդան Մամիկոնյան, Շուշան, Գավիթ Գլխեցի և այլն: Սրանով ցույց է տրվում, թե վրաց գրականությունը, ինչպես և աղգային քաղաքական կյանքը, մեծապես կապված է եղել հարեվան բախտակից հայ ժողովրդի հետ:

Եթե վրաց կրոնական գրականությունը ուշ է սկսվում, բնական է, թե շատ ավելի ուշ պիտի սկսվեր իրենց պատմական գրականությունը, որ առաջինի շափ անհրաժեշտ չէ: Իրոք էլ, Վրաց աղգի հայտնի Պատմությունը, որ Զվանշիր պատմիչի գործն է և վրաց աղգի ծագումը՝ այն է ջրհեղեղից սկսելով հասնում է մինչև Գավիթ Բ վերանորոգիչ (1089—1125), շի կարող 11-րդ դարից առաջ գրված լինել: Ըստ այսմ բոլոր վրացի պատմական աղբյուրներն էլ ժամանակակից շլինելով Մեսրոպին, ինչ տեղեկություն էլ որ տան վրացական գրերի ծագման մասին, անվավեր են: Այս տեղեկությունները պետք է ընդունել միայն բանասիրական ենթադրություններ՝ զուրկ պատմական ստուգությունից:

Ըստ այսմ վրացական գրերի ծագման, ինչպես առհասարակ վրաց պատմության շատ կետերի համար իբրև ժամանակակից և վավերական աղբյուր կարող են ծառայել հայ պատմագիրները և նրանց տված տեղեկությունները պետք է ընդունել ստիպողաբար՝ առ ի չգոչև ուրիշ աղբյուրի: Ընդ որում այսպես է վարվում հայ քննական պատմությունն էլ մեր հնագույն շրջանի համար, որից չկան հայ աղբյուրներ, այլ կան միայն պարսիկ, հույն և հռոմայեցի աղբյուրներ: Եթե հայ պատմագիրը լավատեղյակ աղբյուր չէ և կասկած կա, որ զանազան ձգտումներով փոփոխել է պատմությունը, ինչպես է Խորենացին, այս պարագային պատմագրի տված տեղեկությունները կարելի է մերժել: Բայց երբ մեր ձեռքի տակն է այնպիսի հավատարիմ, լավատեղյակ, ժամանակակից և վստահելի



մի աղբյուր, ինչպես է Կորյունը, կարելի՞ է միթե կասկածել նրա տեղեկութեանց ճշմարտութեան վրա: Հատկապես Կորյունի և վրաց գրերի գյուտի մասին խոսելով, նկատելով, թե Կորյունը, լինելով վրաց աշխարհի եպիսկոպոս, երկար ժամանակ ապրած և թերևս վախճանած Վրաստանում, ոմանց կողմից մինչև իսկ վրացի կամ վրահայ համարված, անշուշտ շատ լավ ծանոթ պիտի լիներ գրերի գյուտի հանգամանքներին և ամենևին պատճառ չկա իր ասածները իբրև անվավեր մերժելու: Այսպես է մտածում նաև Մարկվարտը («Պատմութիւն հայ նշանագրերու», էջ 41), որ Կորյունի համար ասում է. «Պետք ենք ընդունիլ, թե Կորյուն այս եղածներուն (վրաց գրի գյուտի հանգամանքներին) շատ մոտանց ծանոթ էր, ըստ որում, ինչպես ինքն իսկ անձամբ կպատմե, ինքն էր, որ ի Վիրս եպիսկոպոս եղավ»:

Կասկածել Կորյունի վրա՝ նշանակում է առհասարակ ուրանալ պատմութեանը:

Վրացիները այժմ ունեն երկու տեսակ գիր, ձևով իրարից շատ տարբեր. առաջինը կոչվում է խուցուրի, այսինքն եկեղեցական այբուբեն, որ իրենց հնագույն այբուբենն է՝ ձևով շափաղանց նման հայոց երկաթագիր այբուբենին: Այդ այբուբենը առաջին անգամ տեսնողը փորձում է մինչև անգամ հայերեն կարդալ: Այս գրերով են գրված հին ձեռագրերը, պատմական արձանագրութեանները և այժմ էլ գործ են ածվում եկեղեցական գրքերում: Երկրորդն է մխեդրավի, այսինքն զինվորական այբուբեն, որ ըստ կարելիւուն եվրոպականացած ձև ունի. տառերը ըլոր բարակ և կլոր-կլոր գծերով են ձևացած. այս է արդի ձեռագրում և տպագրութեան մեջ գործածական այբուբենը: Մեսրոպի հնարած այբուբենը խուցուրին միայն կարող է լինել:

Վրացիք շեն ընդունում, թե իրենց գիրը Մեսրոպն է հնարել: Վախտանգ պատմագիրը իր Տարեգրութեան մեջ պատմում է, թե վրաց այբուբենը հնարեց իրենց Փարնավազ թագավորը, որ իշխում էր իբր թե Քրիստոսից 3 դար առաջ (302—237 թթ.): Զի հիշվում, թե որ այբուբենն էր այն. ժողովրդական ավանդութեանը կարծում է, թե մխեդրավին էր (տե՛ս Brosset, «Histoire de la Georgie», հատ. Ա, էջ 43): էջ 180 (ժան. 12) և հատկապես էջ 187—Վախտանգը: (Մանրամասն տե՛ս նաև Մելիքսեթ բեկ, Ա հատոր, էջ 151):

Արդի քննիչներից ոմանք Մեսրոպի կողմն են, ուրիշները՝ հակառակը: Ըստ Իսահակ Հարութեանյանի «Տիխիսում կայացած ճշմարտությունը հնագիտական ժողովի» նիստերից մեկում վրաց գիտնականները մերժում էին սուրբ Մեսրոպին ընդունել յուրյանց այբուբենի ստեղծողը:

Քրոսե («Deux historiens arméniens», էջ 15 և «Histoire de la Georgie», հատ. Ա, էջ 43, 141 և մանավանդ հատ. Ք, էջ 40—41) իբր հաստատ և վազերական ընդունելով թե՛ Կորյունի և թե՛ Վախտանգի աված տեղեկությունները և այս երկուսին միմյանց հետ հաշտեցնել ուզելով՝ ենթադրում է, թե Մեսրոպը հնարել է խուցուրին Վարադ-Բակուր թագավորի ժամանակ, իսկ Փանեվազ՝ մխեղրուլին, որ նույն հեղինակի կարծիքով հնդկական այբուբենից առնված մի խառնուրդ է: Լանզուան («Collection des historiens arméniens», II, 162) կարծում է, թե Վախտանգի հիշած այբուբենը խուցուրին է: Մյուլլերը («Über den Ursprung der arm. Schrift», էջ 433—435) ասում է, թե վրացի և հայ տառերի ստեղծողը միևնույն անձն է, և երկուսի էլ ծագումը միևնույն աղբյուրից է: Տաուլման պատմելով հայոց և վրաց տառերի դյուարը ըստ մեր պատմության, ավելացնում է. «Պետք է նկատել, որ շարաշար կսխալվենք, եթե այս պատմության հիման վրա ընդունենք հայ և վրացի աղբյուրների նմանությունը. թեև այս երկուսի մեջ կան նման տառեր, սակայն բոլորովին տարբեր արժեք ունեն: ... Հայ և վրացական տառերի դասավորությունն այնպես է, որ ավելի հասկանալի կլինեն, եթե ասենք, թե Մեսրոպը նախ դասավորեց վրացի այբուբենը՝ արամեական այբուբենի համեմատ, և հետո կազմակերպեց հայոց այբուբենը»: Գուտշմիտ («Agatangelos», ZDMG 31, 25) ստույգ է համարում, որ Մեսրոպը հնարեց վրաց և ազվաւից գրերը: Հյուրշմանը չի ընդունում, որ վրաց գրերը Մեսրոպն է հնարել և Գարտհաուզենն ասում է, որ սխալ է հայոց այն կարծիքը, թե հայերեն գրերը վրաց այբուբենի հիմքն են կազմած, որ, ընդհակառակը, ուղղակի նույն այբուբենից է ծագում: Մյուլլերը («Über den Ursprung der gruzinschen Schrift»), Wien, 1898) ծաղրի է ենթարկում իր նախորդների այն կարծիքը, թե վրացերեն գրերը հնդկականից կամ զենդականից են առաջացած (էջ 5): Հաստատում է, որ մխեղրուլին ծագած է խուցուրիի բոլորգրից: Ծթն ասելիք, թե մխեղրուլիից զարգացած է բոլորգիրը և բոլորգրից էլ երկաթագիր խուցուրին, հնագրության պատմության մեջ շտեմարված մի երևույթի առաջ պիտի գտնվելինք: Արդարև, ամեն դիր հնապես ունենում է երկաթագիր հաստ ու թանձր ձև, հետո նրբանում է և ավելի կուրսիվ ձև է ստանում: Սրանից հետևում է, ասում է Մյուլլեր, որ վրաց պատմության ավանդածը սխալ է և հայոցը ավելի ճշմարիտ: Սրա երկրորդ ապացույցն այն է, որ վրացական գրերից երկաթագիր խուցուրին է նման հայերեն տառերին և ո՛չ թե մխեղրուլին: Վրացի գրերի մի մասը հայերենի հետ նույն անունն ունի (բ, ի, կ, մ, ռ, ս, փ, ք): Հայերենի ձայնական դրույթու-

նը ճիշտ նույնն է, ինչ որ վրացականը: Ինչո՞ւ ուրեմն Մեսրոպը հայերեն գիրը շտվեց վրացոց (էջ 8): Սրանից պետք է ուրեմն հետևենք, թե կար հին վրացական այբուբեն, որ ծագած էր արամականից (ինչպես հայոց Դանիելյան այբուբենը) և որից Մեսրոպը ձևակերպեց վրացական գրերը: Այսպիսով հաստատելով վրացական գրի ծագումը արամեականից, ավելացնում է (էջ 11). «Քրիստոսից առաջ 3-րդ դարում Փառնավազ թագավորը բերավ արամեական այբուբենը և իր երկրում գործածության դրեց. Մեսրոպը 5-րդ դարում ձևափոխեց ու զարգացրեց այդ գիրը: Նկատելի է, որ այն բուն վրացական գրերը, որ չկան սեմականում (ծ, ց, ծ, ջ և այլն), քնավ նմանություն չունեն հայ գրերի հետ, ուստի և հայերենից չեն ծագում, և հետևաբար Մեսրոպի ժամանակ արդեն կային: Սրանից հետևում է, թե արամեական գիրը վրացոց մեջ արդեն զարգացած և իր պահպանները լրացուցած էր» (էջ 11—12): Իսահակ Հարությունյանը կարծում է, թե վրացիք արդեն ունեին հին անկատար մի այբուբեն, որ 5-րդ դարում արդեն լիովին չէր համապատասխանում վրացերեն լեզվի պահանջներին, ուստի կանչեցին Մեսրոպին և սա էլ թարգմանների օգնությամբ կարգավորեց ու լրացրեց պահպանները, իսկ մխեդրովի այբուբենը ու ժամանակի ծնունդ է: Վերջապես մեծագույն վրացագետը՝ Ն. Մառն ասում է, թե «Վրաց այբուբենը եթե Մեսրոպից հնարված չէ, գոնե հայկականի վրա է ձևաված»: Պիտերսն էլ («Revue des études arméniennes», 9, 227) ընդունում է, թե այս այբուբենի հեղինակը Մեսրոպըն է:

Բայց բոլոր այս տարակարծիք տեղեկությունները, կասկածներն ու հերքումները չունեն ամենևին պատմական հիմք. ոմանք ազգասիրական աստառ ունեն, մեծ մասը վրաց անվավերական տեղեկությունը Կորյունի հետ մի կերպ հաշտեցնելու համար հերյուրված բաներ, իսկ մյուսները, ինչպես Հյուբշմանինը, լոկ սկեպտիկյան վերաբերմունք՝ առանց ապացույցի և առանց պատճառաբանության:

## 7

Կան սակայն մի քանի կետեր, որոնք առերևույթս հակառակ են թվում մեր պատմագիրների ավանդածին և պետք է զբաղվել նրանց քննությամբ, ցույց տալու համար, թե ի՞նչ արժեք և զորություն ունեն նրանք:

ա) Կորյունը և մյուս պատմագիրները համաձայնությամբ Բակուրին համարում են վրաց այն թագավորը, որի ժամանակ Մես-

րոպը հնարեց վրացերեն գրերը: Բայց վրաց պատմութիւնը այդ ժամանակամիջոցում Բակուր անունով թագաւոր չի հիշում: Բակուր կամ նման անուններով ծանոթ են վրաց պատմութեան մեջ՝

1. Բակուր Ա, որ Վաչէ թագաւորի որդին ու հաջորդն էր, Արշակունյաց ցեղից. նստել է 231—246 թթ.:

2. Բախար, որ թագաւորն էր 342—363 թթ. սա Խոսրովյանց ցեղից էր և որդին ու հաջորդը Միրիան թագաւորի, որի ժամանակ վրացիք քրիստոնէութիւն ընդունեցին:

3. Բարգաբախար, Վարգաբախար կամ Վարազ-Բակուր, որ Միհրդատ Գ-ի որդին ու հաջորդն էր և նստավ 379—393 թթ.:

Սրանից հետո գալիս են կարգով՝ Տիրդատ (393—405 թթ.), Փարսման (405—408 թթ.), Միրդատ Գ (408—410 թթ.), որ պարսից Ուրարարի իշխանից հաղթվելով գերի թշվեց. Արշիլ Ա (410—434 թթ.), Բակուր Բ (514—528 թթ.), Բակուր Գ (557—570 թթ.):

Ինչպես տեսնում ենք, այս ժամանակագրութիւնը Կորյունի հետ չի հաշտվում: Հաշտութիւն գոյացնելու համար ի զուր է՝ ըստ Սեն-Մարտինի («Histoire du Bas-Empire», V. 324), ենթադրել, թէ մեր պատմութեան մեջ հիշված Բակուրը վրացական փոքր մի իշխան էր և հետևաբար գործ չունի վերի թագաւորների հետ: Քողնելով հնագույն և նորագույն անունները՝ քիչ թէ շատ հարմարողներն են Վարազ-Բակուր (379—393 թթ.), Փարսման, Միհրդատ և Արշիլ. առաջինը անունով, իսկ մյուսները՝ թվականով: Կարելի էր կարծել, թէ ուղիղն է Վարազ-Բակուր և հետևաբար վրացական գրերի գյուտը եղավ 379—393 թվին: Բայց որովհետև հայերեն գրերի գյուտը 400 թվից հետո է և վրացերեն գրերը մի քիչ ավելի ուշ գտնվեցին, ուստի այս ենթադրութիւնը չի կարող ընդունվել:

Բայց արդյոք ի՞նչ ապացույց ունենք, թէ ստույգ են վերի թագաւորներին տրված թվականները: Եթէ իբրև աղբյուր են ծառայում հետին շրջանի վրացական տարեգրութիւնները, նրանց արժեքը հայտնի է: Անտարակույս է, թէ հայոց պատմական գրականութիւնը շատ ավելի հարուստ է, քան վրացականը. մենք շատ ավելի առիթներ ենք ունեցել արտաքին պատմութեան մեջ հիշատակվելու. մինչև այժմ եղած են բազմաթիւ հետազոտութիւններ, բայց դեռ ինչքա՞ն հեռու ենք մեր թագաւորների հաջորդութեան և պատմական գլխավոր դեպքերի ստույգ ժամանակագրութիւնը ունենալուց: Նույնիսկ մեր գրերի գյուտի թվականը կատարելապես ստուգված չէ: Եթէ այս այսպես է, ապա ինչքա՞ն ավելի վրաց ժամանակագրութիւնը, որ ավելի ավանդական գույն ունի և հետազոտութեան մեծ կարողութիւն: Օրինակ՝ Կորյուն Բակուրից հետո, Մեսրոպի հինգերորդ ճամփորդութեան ժամանակ, վրաց թագաւոր

է դնում Արծյալ, որ ըստ Կորյունի նոր նոր էր թագավորել այն ժամանակները, այն է մտաւորապես 424 թվին: Այս Արծյուղը վրաց պատմութեան մեջ էլ է հիշվում Արշիլ անունով: Բայց ի՞նչ թվական է տրվում իրեն: Ահա թե ինչպիսի՜ խառնակութիւն. ըստ Կլապրոթի՝ 413, ըստ Սեն-Մարտինի՝ 413, ըստ Դորնի՝ 410—434 կամ 397—421, ըստ Բրոսսեի՝ 410—434 թթ.: Ո՞րն ընդունենք: Սրանից հետևում է, թե վրաց պատմութեան ժամանակագրութիւնն ընդհանրապես և Մեսրոպի շրջանի ժամանակագրութիւնը մասնավորապես (հենց Արծյուղի անստույգ թվականի պատճառով) նույնպես կարոտ է քննութեան. ուստի բնավ չի կարող ներկա վիճակում հերքել մեր պատմութեան տված տեղեկութիւնները: Ինչպես Վըրաց ժամանակակից և վավերական պատմիչները մեր պատմութեան համար, նույնպես և մեր ժամանակակից և վավերական պատմիչները վրաց պատմութեան համար ամենքից ավելի առաջնակարգ նշանակութիւն պետք է ունենան պատմական դեպքերն ու թվականները. ճշտելու համար:

Դարձնելով խոսքը մեր բուն նյութի վրա, կարող ենք համարձակ կերպով ասել, թե մեր պատմութեան (Կորյունի) մեջ հիշված Բակուրը ամենեւին ուրիշ մարդ չէ, եթե ոչ Վարագ-Բակուրը, և թե սրա թագավորութեան թվականը պետք է գոնե 16 տարի առաջ տանելով՝ բերել հասցեն 409 թիվը, որի ժամանակ եղած պիտի լինի նաև վրացական գրերի գլուտը Մեսրոպի ձեռքով:

Այսպես է մտածում նաև Բրոսսե («Histoire de Géorgie», հատ. 3-րդ, էջ 41), որ վրաց գրերի գլուտը դնում է 406 թվին:

Կորյունի մեջ Բակուրից հետո հիշվում է, ինչպես ասացինք, Արծյուղ, մինչդեռ վրաց պատմութեան մեջ այս երկուսի միջև կան Տիրդատ, Փարսման և Միրդատ, որոնք իշխում են 393—410 թվերին, որ է ընդամենը 17 տարի: Մենք Բակուրից մինչև Արշիլ գահակալութիւնը ունենք 25 տարի և կարող ենք բաժանել նրանց վրա, մի քիչ շարժելով միայն սրանց թվականը: (Այս մասին ավելի ընդարձակ տե՛ս գլուխ տասնվեցերորդ):

բ) Մյուսները հարց է տալիս, թե եթե Մեսրոպը մտցրեց վրաց մեջ գրականութիւնը, հապա ինչո՞ւ չտվալ նրանց մեր հայերեն այբուբենը, այլ բոլորովին ուրիշ այբուբեն հնարեց: Սրանից Մյուսներն ուզում է հետևցնել, թե վրացիք արդեն ունեին անկատար մի այբուբեն, որ մի քանի տառերի հավելումով լրացրեց Մեսրոպը: Բայց մենք վերևում տեսանք, թե ինչու Մեսրոպը հայերեն տառերը չտվեց վրացիներին: Այն ժամանակի մարդկանց համար այնքան բնական բան էր ամեն զգալի առանձին լեզու և ամեն լեզվի առանձին տառ ունենալը, որ բոլորովին անըմբռնելի պիտի լիներ վրաց

ցոց հայերեն տառ գործածելը: Արևելքում նույնիսկ այսօր շատերին անհասկանալի է թվում լսել, թե բոլոր եվրոպական ազգերը միևնույն լատինական տառերն են գործածում, կամ թե Ավստրիան գերմաներեն է խոսում, Բելգիան՝ ֆրանսերեն, Ամերիկան՝ անգլերեն և այլն:

դ) Ճառլմանը նկատում է, թե հայ և վրացի տառերը նման են, բայց այդ նման տառերը միևնույն արժեքը չունեն: Օրինակ՝ վրաց երկրորդ տառը Վ՝ նման է մեր Վ տառին, բայց արժեքով բ է: Վրացերեն ն բոլորովին նույն է մեր ն տառի հետ, բայց վրաց մեջ այ հնչյունն ունի: Այսպես և ուրիշներ: Բայց մի՞թե սա ապացույց է, թե Մեսրոպը չէ վրացերեն տառերը հնարողը: Եթե Մեսրոպը ուզեց վրացիներին տալ նոր այբուբեն, անշուշտ պիտի աշխատեր որքան կարելի է հեռանալ հայ ձևերից: Նույնիսկ եթե վրացերեն գրերը հայերենին բացարձակ հակոտնյա կադմեին, դարձյալ չէին կարող մերժել Մեսրոպի մատը: Փրեբի ընդհանուր ձևը, զրագրական ոճը, ուրվագծերի բնորոշ նկարագիրը՝ ահա թե ի՞նչն է կազմում հայ և վրացի տառերի նմանությունը: Այս նմանությունը կա և կմնա, ցույց տալու համար, թե երկու այբուբեններն էլ միևնույն հորինողի գծագրություն են: Բայց տակավին հարց է, թե ինչքան իրավունք ունի Ճառլմանը, և թե Մեսրոպն ինչքան հաջողել է տարբեր ձևեր տալ վրաց գրերին: Այս կետը պարզված կլինի մեր աշխատության երրորդ մասում:

դ) Նույն հեղինակը տարօրինակ է գտնում այն հանգամանքը, որ մինչդեռ հայերենին, վրացերենին և հունարենին ընդհանուրեղող տառերը միևնույն շարքով են գնում երեք այբուբենների մեջ էլ, ընդհակառակը, հայերենի և վրացերենի հարստությունը կազմող գրերը հայ այբուբենում դրված են մյուս գրերի մեջերք, իսկ վրացական այբուբենում շարված են Ք տառից հետո: Այս պատճառով ահա հեղինակն ասում է, թե ասվելի հասկանալի կլիներ, եթե ասվեր, որ Մեսրոպը նախ դասավորեց վրաց այբուբենը՝ համեմատ արամեական այբուբենին, և հետո կազմակերպեց հայ այբուբենը: Մենք դարմանում ենք միայն, որ այսպիսի չնչին պատճառարանություններից հղրակացություններ են ուղում հանել: Մեսրոպը նախապես հնարելով հայերեն տառերը, քնահամարար պիտի տար նրանց այն շարքը, որ իրեն զեղեցիկ ու բնական էր թրվում: Ավելին, տառերը կարելի էր զետեղել երեք ձևով. այբուբենի սկիզբը կամ մեջերք և կամ վերջը: Որովհետև սկիզբը զետեղել անպատեհ և մյուս բոլոր այբուբեններին անհամաձայն կլիներ, որովհետև վերջը զետեղելն էլ մի տեսակ խճողում առաջ պիտի բերեր (ինչպես է այժմ ուսաց այբուբենի վերջում դրված Ա, Վ, Ս, Ս, Ե, Ե,



չէր կարող երանցից ավելի տարբեր ձևեր հնարել, վախճանալով, որ գրերը բոլորովին շենոանան բնատիպ ձևից. ստիպված էր ուրեմն ավելի մոտենալ հունականին. մի բան, որից խուսափել էր նախապես դիտմամբ: Գասավորութեան տարբերութիւնը արդյունք է այն գրերի հավելումին, որի վրա խոսեցինք շորրորդ կետում: Իսկ թվական արժեքը բնական հետևութիւնն էր գասավորութեան այս ձևի: Հայոց համար բնավ հետաքրքրական էլ չէր, թէ այսինչ գիրը հունարենում ի՞նչ արժեք ունի. որովհետև եթէ այս բանին կարևորութիւն տված լինեին, կա՛մ անպատճառ հայերեն գրերը վրացերենի շարքով պիտի դասավորեին, կա՛մ նորամուտ գրերին թվական արժեք չպիտի տային և կա՛մ թվական արժեքը խառն ձևով գասավորած պիտի լինեին, ինչպես արել են արարները համեմատութեամբ երբայական գրերի (abjad hāvaz հաշիվը):

Այս հինգ առարկութիւնները ջնջելուց հետո, ուրիշ բան չէր մնում մեզ անել, եթէ ոչ երկրորդ անգամ շեշտել, թէ հակառակ աղբյուրները արժեք չունեն, և թէ իբրև միակ ժամանակակից և վավերական հեղինակ, ուստի և իբրև միակ հիմնական աղբյուր մնում է Կորյունը, որի ասածները կասկածելի համարելու պատճառ չկա բնավ:

## 8

Հատկապես պետք է հիշել Մարկվարտի կարծիքը վրաց գրերի ծագման մասին («Պատմութիւն հայ նշանագրերու», էջ 41): Այս գիտնականը հիմք է բռնում նախ Կորյունի հետևյալ խոսքը. «Եւ առնուր կարգեալ նշանագիրս վրացերեն լեզուին, ըստ շնորհեցեցիւյ նմա ի Տեառնէ» (Կորյուն, էջ...): Սրանից հետևցնում է, թէ վրացերեն գրերը «հայերեն գրերի կաղապարի վրայից կարգվեցան»: Վրացիների ձայնական գրութիւնը նույն է հայերենի հետ՝ աննշան տարբերութեամբ (չունի ը, ունի զ և և): Ուստի Մեսրոպը հայերեն գրերը պիտի տար վրաց: Իսկ եթէ այսպես չի վարվել և նոր այբուբեն է հնարել, ուրեմն կար Վրաստանում գործածական մի այբուբեն, որին ստիպված էր հետևել: Բայց որովհետև վրացերենի ձայնական գրութիւնը այնքան հարուստ է, որ անկարելի է ենթադրել, թէ որևէ մեկը Մեսրոպից առաջ փորձ է արել որևէ գրով վրացերեն գրելու, ուստի պետք է ենթադրել, թէ Մեսրոպին հիմք ծառայող այդ այբուբենը այն օտար այբուբենն էր, որ գործածվում էր Վրաստանում օտար լեզվով պաշտոնական գրութիւններ գրելու համար: Դա պիտի լինի խոարեղմյան այբուբենը, որ ծագում էր արամականից և գործածվում էր պարսիկների մոտ: Մեսրոպի կազմած այս այբուբենն է խուցուրին:



Եթե ուզենանք ամփոփել վերոհիշյալ դատողությունները, կու-  
նենանք հետևյալ թեզիսները.

- ա) Վրացիների համար ո՛չ մի այբուբեն հնարված չէր:
- բ) Վրաստանում գործածվում էր օտար (պահլավական) լեզվով գրությանց մեջ խուարեզմյան այբուբենը:
- գ) Մեսրոպը ստիպված էր հետևել նրան:
- դ) Մեսրոպը հայերենի օրինակով կազմեց վրացական այբու-  
բենը:

Այս շորս թեզիսներից առաջինը բոլորովին ճիշտ է, այնպես  
ինչպես հայոց համար էր: Երկրորդ թեզիսը ճիշտ չէ. ո՛վ է ասում,  
թե Վրաստանում միայն պահլավերեն էին գրում. եթե ասորերենը  
անգործածական համարենք, ինչո՞ւ պիտի մերժենք հունարենը, ո՛վ  
ասաց, ո՛վ վկայեց և ինչպե՞ս ապացուցեց, որ վրաց գրած պահ-  
լավերենը «խուարեզմյան» այբուբենով էր և ոչ թե այն սովորա-  
կան այբուբենով, որ գործածական էր պարսկական արքունիքում,  
Հայաստանում, Աղվանքում և այլուր: Երրորդ թեզիսը բոլորովին  
անհասկանալի է. ինչո՞ւ Մեսրոպը ստիպված պիտի լիներ հետևել  
ենթադրյալ «խուարեզմյան» այբուբենին և ո՛չ թե, օրինակ, ասո-  
րականին, հունականին, սովորական իրանյանին և կամ որին որ  
ուզենար: Չորրորդը նույնպես բոլորովին անճիշտ է. Կորյունի «ըստ  
շնորհեցելոյ նմա ի Տեառնէ» բառերը ամենևին հայերեն տառերը  
չեն ակնարկում, այլ իր աստվածային կարողությունը: Եթե Կոր-  
յունն ասած լիներ «ըստ շնորհեցելոց նմա ի Տեառնէ նշանագրոցն»  
(Տիրոջից իրեն շնորհված տառերի համաձայն), այն ժամանակ կա-  
րելի էր հայերեն տառերը հասկանալ: Իսկ այստեղ պարզապես  
թարգմանում ենք «սկսեց կազմել վրացիներն տառերը՝ իր աստվա-  
ծաշնորհ կարողությամբ»: Գրեթե նույն բանն է ասում Կորյունը  
նաև աղվանից գրերի հորինման մասին խոսելիս (էջ 68). «Առնէր  
ապա նշանագիրս ըստ վերնապարզև կորովի սովորութեան իւրում  
և յաջողութեամբ Քրիստոսի շնորհացն կարգեալ և հաստատեալ  
կշռէր»:

Չորս թեզիսներից պահելով միայն առաջինը՝ ընդունում ենք,  
որ վրացիներն լեզվի համար ո՛չ մի այբուբեն գոյություն չունին և  
Մեսրոպը հնարեց այն. իսկ թե ի՞նչ այբուբենի օրինակով՝ այդ  
ցույց կտա այն մանրամասն համեմատությունը, որ պիտի կատա-  
րենք աշխատությանս երրորդ մասում:

## ՉՈՐՐՈՐԴ ՔԱՐՈՉՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

(Լուսավորչուն Լուսնեայց)

## 1

Մեքոպը մի ժամանակ Վաղարշապատում Մահակի մոտ մեայուց հետո, հրաժեշտ տվեց նրան և չորրորդ անգամ նախապահ ընկալ ման գալու և ուսուցանելու Հայաստանի զանազան զավատները:

Գծաբխտաբար Կորյունը մանրամասն չի պատմում Մեքոպի այս չորրորդ քարոզչական գործունեության առաջին մասի հանդամանքները, և բավականանում է ընդհանուր կերպով հիշելով, թե ման եկալ Հայաստանի բոլոր զավատները և ամեն տեղ լցրեց Ազիտարանի քարոզչությամբ. «Ապա դարձեալ ելանէր շրջէր զտեղոց կարգելեօք, և զգաւառօքն աշակերտելովք աշխարհին Հայոց, զուարթացուցանել, նորոգել, հաստատել: Եւ յորժամ այնպես ընդ ամենայն տեղիս՝ լի առներ զՍուրբ Աւետարան Տեսան և ամենեցուն զգուշացուցեալ զկենաց նախապահ՝ վարելոյ...» (Կորյուն, էջ 16):

Նթե համաքենք Կորյունի տված տեղեկությունները Մեքոպի քարոզչական գործունեության մասին, կտեսնենք, որ նրա առաջին, երկրորդ և երրորդ քարոզչության ասպարեօքը դարձան Փայտակարան, Գողթն, Սյունիք և Վրաստան, ապազային պիտի տեսնենք Աղվանք, Բաղասական, Գարդման, Գուգարք, որոնք բոլորը գտնուվում են Հայաստանի հյուսիսային մասում: Միջնաշխարհը (Ալլարատ) հանձնված էր Մահակին, Հունահայաստանի երկու նահանգները՝ Բարձր Հայք և Մոփք, Մեքոպի քարոզչական գործունեության ասպարեօք պիտի դառնան այս չորրորդ ուղևորության շրջանում: Իսկ ո՞ւր են Հայաստանի մյուս նահանգները՝ Աղձնիքը, Տուրուբերանը, Մոկքը, Կորճայքը, Պարսկահայքը և Վասպուրականը: Զարմանալի է, որ Կորյունը խոսում է միշտ հյուսիսի և հետո էլ արեւմուտքի մասին, իսկ արևելքի և հարավի մասին ո՞չ մի տեղեկություն չի տալիս: Արդյոք Կորյունի գրքից մասնօր են պակաս, թե՞ համարտու լինելու համար դանց է առել այդ մասերը, ինչպես իրքն էլ ասում է. «Զյամախագոյնն թողեալ և ի նշանաւոր դիտակացն քաղելով դհամաւոտս կարգեցար... քանզի չէար իսկ հանդուրժող դամենայն արարեալսն կտակաւ (կարդա՞ զտակաւ «մանրամասն») դիւրաբանելուրան, այլ ի դիւրագոյնս և ի հեշտագոյնս, յառաքելա-

կան անդր դանձինս պատսպարեցաք, որոյ անցեալ զբաղմախունն արգասեօք սրբոցն (իմա՛ սրբոյն), առ ի մանրակտիտ առնելոյ ըզկարևտրագոյնս պատմելոյ՝ զհանգամանս ասացաք»: Եվ կամ արդոք նա պատմում է ո՛չ թե այն դեպքերը, որ լսելով միայն դիտե, այլ որ ինքն էլ տեսել է անձամբ և արբանյակ ու մասնակից է եղել, ինչպես ինքն էլ ասում է. «Ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ և մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն և առնթերակաց հոգևորական գործոց և լսող շնորհապատում վարդապետութեանն և նոցին արբանեակ»:

Այս վերջին կարծիքը ավելի հավանական է:

Սահակի և Մեսրոպի ժամանակագրութիւնը պատմելու ժամանակ (տասնվեցերորդ գլուխ) պիտի տեսնենք, որ Մեսրոպի երկրորդ և երրորդ քարոզչական գործունեութիւնն ընկնում է 405—409 թվականներին: Զորրորդ քարոզչական գործունեութիւնը (Հունահայք) տեղի ունեցավ 420 թվականին: Ի՞նչ է անում Մեսրոպն այն 11 տարին: Այդ ժայրահեղ եռանդուն մարդը լուռ նստած է վաղարշապատում: Ո՛չ: Ահա այդ միջոցին է, որ նա ման է գալիս իր հայրենի նահանգը Տուրուբերան (Տարոն), ապա՝ Աղձնիք, Մոկք, Վասպուրական, անշուշտ նաև Պարսկահայք, որոնց մասին ոչինչ չի խոսում Կորյունը, որովհետև ինքը նրա հետ չէր, այլ ընդհանուր խոսքերով ասում է. «շրջէր գտեղեօք կարգելովք և զգաւառօքն աշակերտելովք աշխարհին Հայոց... ընդ ամենայն տեղիս...»:

## 2

Մեսրոպ մինչև այն ժամանակ քարոզել էր Արևելյան, այսինքն Պարսից գերիշխանության տակ գտնված Հայաստանի գավառներում. իր բաց արած բոլոր դպրոցներն էլ այդ բաժնումն էին գտնււմ: Իսկ Արեւմտյան Հայաստանը, որ սոսկ հպատակ էր Հունաց պետութեան, գուրի էր մնացել կրթական այդ մեծ շարժումից: Արեւմտյան հայերը ստիպված էին, ըստ խորհնացու, կրոնապես հպատակվել Կեսարիայի Աթոռին և հետևաբար կրթվել հունական լեզվով ու գրականութեամբ: «Հրամանաւ Վոսմշապհոյ և Մեծին Սահակայ՝ ժողովեալ (Մեսրոպայ) մանկունս ընտրեալս, ուշեղս և քաջասունս, փափկաձայնս և երկարոգիս, և դպրոցս կարգեաց յամենայն գաւառս և ուտոյց զքնաւ կողմանս բաժնոյն Պարսից՝ բայց ի Յունաց մասէն, որք ընդ ձեռնագրութեանն տուգանեցան՝ վիճակեալ յԱթոռն Կեսարու, վարել յունական դպրութեամբ և ոչ ասորուով» (խորհնացի, Գ, ծդ):

Վերջապես Մեսրոպը մտածեց Հունական Հայաստանն էլ մըտց-

նել իր քարոզչական գործունեութեան շրջանակի մեջ և անցնելով այդ բաժինը, հայերենի ուսումը ծավալել նաև այնտեղ: Ուստի իր հետ առնելով բազմաթիվ աշակերտներ, ճանապարհ ընկավ դեպի Հունական Հայաստան: «Ենթոյնդ առնոյր այնուհետև վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբն թագաւորին Հոռոմոց: Եւ փութացեալ զնայր հանդերձ աշակերտօք բազմօք անցանել ի կողմանս Յունաց» (Կորյուն, էջ 16):

### 3

Հունահայոց քարոզչութեան վրա խոսում են միայն երկու պատմագիրք՝ Կորյունը և Խորենացին (վերջինիս են հետևում Քովմա Արծրունի, Վարդան պատմիչ և Կիրակոս): Այս երկուսն էլ բավական ընդարձակ պատմում են այս քարոզչութեան հանգամանքները, և թեև ընդհանուր գծերի մեջ իրար հետ համաձայն են, բայց մանրամասնութեանց մեջ շատ են շեղվում իրարից:

Այսպես, Խորենացին ո՛չ թե Մեսրոպին է տալիս դիմել Հունահայաստան, ինչպես Կորյունն է անում, այլ Սահակին, միայն իրեն հետ ընկերակից առնելով նաև Մեսրոպին: Ըստ Խորենացու, Վոսմշապուհ թագավորի մահից հետո, Սահակն անձամբ գնում է Պարսից Հազկերտ թագավորի մոտ և խնդրում է բանտարկյալ ու զահազուրկ Խոսրով Գ թագավորին երկրորդ անգամ թագավոր նշանակել Հայաստանի: Հազկերտն ընդունում է Սահակի խնդիրը, բայց Խոսրովը միայն մի տարի թագավորելուց հետո մեռնում է: Այս ժամանակ Հազկերտը, պարսկականությունը Հայոց մեջ տարածելու մտադրությամբ, փոխանակ նոր հայ թագավոր նշանակելու, իր Շապուհ որդուն ուղարկում է Հայոց երկիրը: Շապուհը թագավորում է չորս տարի, բայց միշտ նախատվելով ու արհամարհվելով հայ նախարարներից, այնպես որ երբ լսում է, թե հայրը՝ Հազկերտը մեռել է, անմիջապես թողնում է իր աթոռը և փախչում Պարսկաստան: Հայերը Ներսես ձիճրակացու առաջնորդությամբ հարձակվում են պարսկական բանակի վրա, սպանում զորապետին և զորքը կոտորում: Հայաստանը երեք տարի մնում է անիշխանութեան մեջ և ամեն բարեկարգություն խանդավրում է: Մյուս կողմից Պարսից նոր թագավորը՝ Վոսմ թ, ուղում է վրեժ լուծել հայերից: Այս անկարգություններն ու խռովությունները տեսնելով՝ Սահակը թողնում է Պարսկական բաժինը և ավելի հանդատության համար դիմում է Հունական բաժինը: «Բսկ իրրև ետևս Մեծն Սահակ զայս ամենայն շարիս ի մասինն Պարսից, զնաց նա զկողմամբք արևմրտից մերոյ աշխարհիս ի բաժին մասինն Յունաց» (Խորենացի, Գ, 8 է):

Խորենացու հետևորդ Փոքր Կորյունն այստեղ մի փոքր շեղում է անում: Ըստ իրեն, Սահակի և Մեսրոպի Հունահայաստան դիմելը ո՛չ թե հատկապես լուսավորության գործի համար էր, այլ ս. Գրքի թարգմանության համար: Հայաստանում հունարեն Աստվածաշունչ չկար, որովհետև Մեհրուծանը բոլորը այրել էր և պարսիկները հունարեն սովորել արգելել էին: Սահակը և Մեսրոպն ուզում էին հունարենից թարգմանել Աստվածաշունչը, ուստի ստիպված եղան Հունաց բաժին անցնելու... «Զի ի բաժանել զաշխարհս Հայոց՝ շտապին Պարսկաց վերակացուքն յոյն ումեք ուսանիլ զգրութիւն իւրեան մասին, այլ միայն ասորի: Վասն որոյ յոյժ տարակուսեալ լինէին սուրբ հայրապետքն Սահակ և երանելին Մեսրոպ. և գնացին զկողմամբք արեմտից վիճակին իւրեանց ի մասն Յունաց» (էջ 13): Բայց թե Փոքր Կորյունի այս պատմութիւնը սուտ հերյուրանք է՝ հայտնի է նաև նրանից, որ մի քիչ հետո ինքն էլ է մոռանում իր ասածը և ո՛չ միայն ս. Գիրքը չի թարգմանում, այլև Մեսրոպը Հունահայոց քարոզութիւնից դարձին՝ Հայաստանում է գտնում Սահակին և հաշիվ է տալիս նրան իր արածների համար, մինչդեռ իր հետ Հունահայոց բաժինը անցած պիտի լիներ:

Մինչդեռ Կորյունը Մեսրոպի համար ասում է, թե Հունահայոց եպիսկոպոսներից, գավառապետներից և մանավանդ Անատոլիս սպարապետից մեծ պատվով ընդունվեց՝ հյուսիսային կողմերում արած իր մեծամեծ քարոզութիւնաց և իր հանած մեծ համբավի պատճառով, ընդհակառակը, Խորենացին ցույց է տալիս, թե Սահակը ո՛չ թե միայն իր արժանավորութիւն համեմատ պատիվ չտեսավ պաշտոնավորներից, այլ նաև մեծ արհամարհանք գտավ. հույն պաշտոնավորները չընդունեցին Հայոց կաթողիկոսին, շթողին, որ նա քարոզեր Հայոց մեջ, վերջապես արգելեցին նրան հայերենի ուսումը տարածել իրենց բաժնում: Ահա Կորյունի և հետո Խորենացու խոսքերը. «Եւ վասն առաւելագոյն բարեգործ համբաւոց՝ յառաջագոյն զմասնէ անդ ի հիւսիսական կողմանց հուչակելոց, առաւել միամտութիւնամբ ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին, և յիշխանաց և ի գաւառականացն պատուեալ. մանաւանդ ի սպարապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անատոլիս, ի մուտ ճանապարհին» (Կորյուն, էջ 16):— «Եւ ոչ ըստ արժանեաց իւրոց եղև ընկալեալ... և ոչ հանդիպեցայ ընդունելութիւն յիմում վիճակիս ի հրամանէ վերակացուացս սոցա. այնչափ ատեցեալ զմեզ, մինչև զնշանագիրս անգամ ոչ ընկալան...» (Խորենացի, Գ, ծէ):

Անցողակի նկատենք այստեղ, որ Հունահայաստանի սպարապետի անունն է Կորյունի երկու ձեռագրերից մեկի մեջ Անաթոլիս, մյուսի մեջ՝ Անաթիս. այս երկուսը միևնույն բաներն են. սկզբում

զրջած է եղծել Անտիոքի, որի մեջ և հնչառութեամբ կարծելի էր շփոթել և դարձնել և, իսկ ի կորցնելով մի թեր՝ լինում է ի: Բայց Անտիոխ շատ հետին հնչում է, ուստի պետք է ուղղել Անտիոք կամ Անտիոքոս: Սա սովորական անուն էր հունաց մէջ: Հնագույն անձն է այս անունով Անտիոքոս որդի Հերակլեսի, ապա Անտիոքոս ծովակալ Ալկիբրիադի, նույնանուն մի քանի Սելևկյան թագավորներ և ուրիշ անձներ՝ հիշված Հերոդոտի և Քսենոփոնի մոտ: Մեր շրջանից էլ մի օրինակ տալու համար, հիշենք Կոստանդ կայսեր զորավար Անտիոքին, որ իր բանակով եկավ Հայաստան և խոսքով Բ-ին զահ բարձրացրեց (Խորենացի, Ք, Ե—Գ): Խորենացու մոտ Հունահայոց սպարապետը կոչվում է Անատոլիոս, որից անցել է նաև Փոքր Կորյունին: Վենետիկի հրատարակիչները, հետևելով Խորենացուն, մեծ Կորյունի Անտիոքն էլ սրբազրել են Անատոլիս: (Այս մասին տե՛ս Халатяни, «Арм. Аршакиды», հայ թրգմ., «Հանդէս ամսօրեայ», 1904 թ., էջ 261ա, ծան. 2): Իսկ Տնտղյանն իր հրատարակութեան մեջ դրել է Անտիոս: Այժմ Քորոսյանը («Բաղմամլէպ», 1931 թ., էջ 470) և Ակինյանը («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 531) գտնում են, որ այն ժամանակի Հունահայոց սպարապետն էր իրոք Անատոլիոս, որ նստում էր Անտիոք քաղաքում: Գա Արևելյան բանակի հրամանատարն էր, որ հույներից կոչվում էր ὁ τῆς ἑω σερταρχῆος, որ է լատիններեն՝ militum per Orientem magister. Անատոլիոս ըստ Պրոկոպիոսի 421—422 թվականին խաղաղութեամբ վերջ տվեց Պարսից և Հռոմայեցվոց միջև ծագած պատերազմին: Նույն թվականին հյուրընկալեց պարսից ասպահապետին, որ Վոսմ Ե-ի հալածանքներից էր փախել: Ավելի քան 30 տարի վարել է սպարապետութեան պաշտոնը և Մարկիանոս կայսեր ժամանակ էլ կենդանի էր դեռ, ինչպես հիշում է Փարպեցին (էջ 74):

Ըստ այսմ սխալ է դուրս գալիս Կորյունը, և ստույգ է դուրս գալիս Խորենացին: Բայց իսկույն ևեթ ավելացնենք, որ Կորյունի համապատասխան տեղը եղծված է. «Մանաւանդ ի սպայապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անտիոխ (= Անտիոք) ի մուտ ճանապարհին»: Վերջին երկու բառերը ոչ մի իմաստ չունեն և ցույց են տալիս, որ այստեղ քննադիրը խանգարված է: Եղել են զանազան փորձեր ուղղելու համար, բայց իզուր: Օրինակ՝ Ակինյանը («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 530) ի մուտ ճանապարհին կարգում է «ի Գերջան գաւառին». Քորոսյանը («Բաղմամլէպ», 1931 թ., էջ 471) ուղղում է «անուանեալ կոչէր Անատոլիս՝ ի քաղաքին Անտիոք, խոստանայր լինել ձեռնտու ի ճանապարհին»: Ստույգ է, որ Կորյունի մոտ եղել է Անատոլիս սպարապետի անունը, որ հետո ընկել է, իսկ Անտիոք նրա բնակած քաղաքի անունն է:

Խորենացին այսպես է շարունակում իր պատմութիւնը.— Երբ Սահակ տեսավ այն ցորտ ընդունելութիւնը հունաց պաշտոնյաների կողմից, ստիպվեց Մեսրոպին և իր թոռ Վարդան Մամիկոնյան նախարարին ուղարկել Բյուզանդիոն՝ հունաց Քեոզոս կայսեր մոտ, նրանից արտոնութիւն և թուլտվութիւն խնդրելու համար: Նրանց հանձնեց երեք նամակ. մեկը Հունահայոց Անատոլ զորավարին, ճանապարհորդութեան ձեռնտվութեան համար, երկրորդը՝ Պոլսի Ատտիկոս պալատական եպիսկոպոսին՝ կայսեր բարեխոսելու համար, և երրորդը Քեոզոս կայսեր՝ բուն խնդրի համար: Խորենացին (Գ, Ժէ) մեջ է բերում հիշյալ երեք նամակները, որոնք ահա.

### Նամակ Ա.

«Թուղթ Սահակայ առ Քէոզոս

Խաղաղասիրի կայսեր տեսնն իմում Աւգոստոս Քէոզոսի՝ Սահակ Հայոց եպիսկոպոս ի Տէր խնդալ:

Գիտեմ, զի համբաւ նեղութեանս մերոյ հասեալ է ի ներող լսողութիւն ինքնակալիդ. սակս որոյ յուսալով ի գթածութիւն բարերարութեանդ քոյ, դիմեալ ապաւինեցայ յոտս ձեր. և ոչ հանդիպեցայ ընդունելութեան յիմում վիճակիս ի հրամանէ վերակացուացս սոցա, այնչափ ատեցեալ զմեզ, մինչև զնշանագիրս անգամ ոչ ընկալան, զորս եբեր նոյն այր՝ զոր առաքեցի առ ձեր բարերարութիւնդ, բազում անգամ ճգնեալ դորա յԱսորոց աշխարհին: Արդ հաճոյ թուեսցի տէրութեանդ ձերում՝ ոչ անիշխան առնել զմեզ ի մերում վիճակիս, և հրամայել ընդունել զմեզ և զվարդապետութիւնս մեր: Ողջ լեր»:

### Նամակ Բ

«Թուղթ Սահակայ առ Ատտիկոս

Սահակ եպիսկոպոս Հայոց, վարդապետ մեր Ատտիկոս եպիսկոպոս աշխարհամուտ դրանդ, օրհնութեամբ ողջուն:

Յուսացեալ ի ձեր սրբութիւնդ առաքեցի զուսուցող մերոյ աշխարհիս Մեսրոպ, և զթոռն իմ Վարդան, որպէսզի ի լսել քո ի դոցանէ զաղէտս նեղութեան մերոյ, բարեխօսեալ առ մեծի թագաւորիդ՝ օգնեսցես մեզ, որպէս արդարև եղբայր սիրելի: Ողջ լեր»:

## «Քուղթ Սահակայ առ Անատոլիոս»

Սահակ եպիսկոպոս Հայոց, քաջի զօրավարի Անատոլեայ խընդալ:

Շնորհ ունիմ Աստուծոյ յաղագս զքեզ պատրաստել մեզ յապաւինութիւն. վասն որոյ զգացուցանեմ՝ զի ի հայթայթմանս մերոյ Եկղոթեանս առաքեցի զուսուցանողդ մեր զՄեսրոպ և զՔոռն իմ Վարդան ի դուռն արքունի. և աղաչեմ զքո քաջութիւնդ ձեռնառու լինել ճանապարհիդ: Ողջ լինա՛:

Հիշյալ նամակներէից պարզ երևում է, թէ Սահակի Հունահայաստան դիմելու բուն նպատակը ո՛չ թէ ուսման տարածումն էր, այլ ավելի մի ապավեն գտնել այն երկրում իր անձի ազատութեան և հանգստութեան համար: Սահակի այս փախուստին պատճառ են եղել (հորենացու խոսքով) ներսես ճիճրակացու ապստամբութիւնը և Հայաստանի եռամյա անիշխանութիւնը: Բայց միթէ կարելի՞ էր սպասել, որ Սահակի պես անձնվէր մի հայրապետ, փոխանակ նեղ օրերում Հայաստանում մնալու և անիշխանութեան շրջանում Հայոց զուրիս և առաջնորդ կանգնելու, թողնէր երկիրը և իր անձնական հանգիստը փնտրելով փախչէր Արևմուտք: Նաև ի՞նչ է նշանակում անիշխանութիւն. չէ՞ որ Հայաստանի համար այս վիճակը ավելի ազատ անկախութիւն էր, քան թէ իշխանութիւնը, երբ այս իշխանութեան արտաքին փաշի տակ Հայաստանը ուրիշ բան չէր ներկայացնում, և թէ ոչ հլու հայատակ մի կուսակալութիւն: Գարձյալ ճիճրակացու ապստամբութիւնը, որ այնպես շուտ հասավ իր նպատակին, այն է կոտորել պարսից բանակը, այնպիսի տաղնապալից վիճակ ստեղծած շախտի լինէր երկրում, որ կաթողիկոսը ստիպվէր թողնել ու փախչել, այլ, ընդհակառակը, կարճ պատերազմից հետո տված պիտի լինէր երկրին խաղաղութիւն: Փարպեցին թեև գիտի խոսքով Գ-ի և Շապուհ արքայորդու թագավորութիւնը և խորենացուց ավելի ընդարձակ հիշում է Հազկերտի մտադրութիւնները այս առթիւ, բայց Շապուհի փախուստից հետո չի դնում Հայաստանում ապստամբութիւն և պարսկական բանակի կոտորած, այլ շատ խաղաղ կերպով նշանակում է, թէ Վոսաթ թագավորից Պարսից, որին դիմելով հայ նախարարները՝ Արտաշես Գ նշանակվեց թագավոր Հայոց:

Այս շրջանի դեպքերի մասին ստույգ տեղեկութիւն տալիս են մեզ մի քանի ասորի պատմիչներ, որոնց ամփոփումը տե՛ս Ակիւնյան, «Հանդես ամսօրյա», (1935 թ., էջ 476):



Համաձայն այս տեղեկութեանց, այդ միջոցին Պարսկաստանի քրիստոնեութեան դեմ մեծ հալածանք էր սկսվել: Որմիզդ-Արտաշիր քաղաքում մի ասորի քահանա անխոհեմութուն էր ունեցել մի ատրուշան այրելու: Սրա վրա մոզերը գրգռվելով՝ դրդել էին Հազկերտ Ա-ին ընդհանուր հալածանք հանելու քրիստոնեութեան դեմ: Նահատակվեց Աբդա՝ նույն քաղաքի ասորի եպիսկոպոսը (420 թ.): Այդ միջոցին Պարսկաստան էր գնացել Սահակ կաթողիկոսը՝ հայտնի չէ ի՞նչ նպատակով: Հավանաբար, ըստ Ակինյանի, գնացել է խնդրելու Հազկերտից, որ Հայաստանի Գահի վրա թագավորեցնի Արտաշես Գ-ին: Սահակը բարեխոսեց Հազկերտի մոտ և խնդրեց, որ վերջ տա քրիստոնյաների հալածանքին: Հազկերտը զիջեց և հալածանքը վերջացավ: Մի քանի ամիս հետո (420 թվականի աշնան) Հազկերտն սպանվեց և նրա տեղ դահ բարձրացավ Վռամ Ե: Սահակը, որ դեռ Տիզբոնումն էր, խնդրեց Վռամից և հավանութուն ստացավ պսակելու Արտաշեսին թագավորական թագով:

Այս հանգամանքները նկատի առնելով, կարող ենք հետևցնել, թե Սահակը Հունահայաստան շէր գնացել, և թե հետևաբար խորհնացու տված տեղեկությունը անտեղի է: Ծիշտ է Կորյունի պատմությունը, որի համաձայն միայն Մեսրոպը գնաց Հունահայաստան, միակ նպատակ ունենալով՝ հայերեն դպրութունը տարածել այնտեղ:

Թեև հակառակութուն կա, ինչպես վերը ցույց տվինք, Կորյունի և խորհնացու պատմածների մեջ՝ հունաց կողմից ցույց տրված ընդունելության մասին, բայց այս հակառակութունը առերեւոյթ է և ձևական միայն: Մեսրոպի համբավը իրոք ամեն կողմ տարածված լինելով՝ Հունահայտց եպիսկոպոսները, իշխանները, զավառապետներն ու նույնիսկ սպարապետը սիրով ընդունեցին ներան, ցույց տվեցին հարկավոր պատիվները, բայց այս բոլորը միայն Մեսրոպի անձի ու աստիճանի համար էր: Այնպես որ երբ Մեսրոպը առաջադրեց իր բուն նպատակը, այն է դպրոցների բացումն ու հայկական դպրութեան տարածումը, Անատոլիոսն ստիպվեց կանգնեցնել Մեսրոպի ցանկութունը, մինչև որ իմաց տար կայսեր և արտոնութուն ստանար: Այս կետում համաձայն են թե՛ Կորյունը և թե՛ խորհնացին:

Մնում է ճշտել, թե արդյոք ստո՞ւյգ են Սահակին վերագրված այն երեք նամակները: Կորյունն այնպիսի թղթեր չի հիշում. անկարելի է նաև, որ խորհնացու մեջ բերած թղթերը լինեն իսկական օրինակները, քանի որ անհավանական է կարծել, թե խորհնացին կարողանար ձեռք ձգել դրանք. ուստի պետք է ընդունել, որ պատմագիրը իրանից է շարադրել ենթադրաբար: Նամակների պարու-

նակութիւնը, այն է Հայաստանի հզնածամը, Մահակի նեղութիւնը և Հունահայոց մեջ ապային փնտրելը՝ արդեն անստույգ գնացեր են, ուստի բնականաբար նամակների գոյութիւնն էլ դառնում է անստույգ: Կարող էր Մահակը հանձնարարական թղթեր տալ Մեսրոպին՝ Անատոլիոսի, գլխավոր եպիսկոպոսի և այլ անձների հասցեով, բայց այս թղթերը անշուշտ մեջ բերվածներից բավական տարբեր պիտի լինեին: Թովմա Արծրունին, որ այստեղ ըստ աննայնի խորենացու հետևողն է, գիտե հինգ թուղթ և հինգ պատասխան: Ահա իր բառերը. «Ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագավորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէ զսուրբ վարդապետն...»: Այս պարբերութիւնը անշուշտ Թովմայի սխալն է, որի վրա ծանրանալ ավելորդ է:

#### 4

Այսպես ուրեմն, Անատոլիոսը պատվով ընդունեց Մեսրոպին, խոստացաւ սուրհանդակներով լուր ուղարկել Պոլիս՝ Թեոդոս կայսեր, Հայոց վարդապետի մասին. «Չայս տեսեալ Անատոլեայ (այսինքն Մահակի հանձնարարական թուղթը), միանգամայն և զլուր առաքինութեանն Մեսրոպայ յիշեալ, որ յառաջագոյն հնչեցեալ էր զնմանէ, ոչ փոքր ինչ արար նոցա ընդունելութիւն, մինչև ի ձեռն փոփոխ ընթացից (=միշտ փոխվող ձիերով սուրհանդակ) գրով զգացուցեալ կայսերն» (խորենացի, Գ, ծէ):— «Որ զիրս առաջի եղեալ գրով՝ ցուցանէր կայսերն, որում անուն Թէոդոս կոչէին, որդի Արկադու կայսեր» (Կորյուն, էջ 16):

Կոստանդնուպոլսից հրաման ստացաւ Անատոլիոսը՝ փութով ուղարկել Մեսրոպին պալատ՝ արժանի պատիվներով. «Առնու հրաման՝ արժանապէս առաքել փութով» (խորենացի, Գ, ծէ): Ըստ Կորյունի՝ շնորհվեց նաև Մեսրոպին ակումիտ տիտղոսը. «ուստի և հրաման ելանէր, վաչելու մեծարանօք զսուրբն՝ ակումիտ անուն կոչելոյ» (Կորյուն, էջ 16):

Թեոդոս կայսրը գահ էր բարձրացել 408 թվականին, երբ դեռ հինգ տարեկան մանկիկ էր: 414 թվականին ծերակույտը պետական վարչութիւնը հանձնել էր մանուկ թագավորի քրոջ՝ Պուլքերիային: Հետևաբար Մեսրոպին տրված արքայական հրամանը Պուլքերիայի կողմից էր հատկապես:

Մեսրոպն իր հետ վերցրեց Հայաստանից բերած աշակերտների բազմութիւնը և նրանց հետ իջաւ Մելիտինն (այժմ Մալաթիա) հունական քաղաքը: Այստեղ աշակերտներին հանձնեց Մելիտինեի առաջնորդ եպիսկոպոսին, նրանց գլխավոր նշանակելով Ղևնդիոս

անուն աշակերտին, որին Կորյունը կոչում է «այր հաւատարիմ և ճշմարտապաշտ»:

Մեկտիսնեի առաջնորդ եպիսկոպոսի անունն է Ակակիրոս՝ թե՛ ըստ Կորյունի և թե՛ ըստ Խորենացու. «Տարեալ ի քաղաքն Մեկտիսնացոցն, յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիրոսն կոչէին» (Կորյուն, էջ 16).— «Ի քաղաքին Մեկտիսնէ... առ եպիսկոպոսին Ակակայ թողու» (Խորենացի, Գ, ծէ): Այս առթիվ մի հետաքրքրական նկատողութիւն կա («Բաղմամլէպ», 1897 թ., էջ 805): Պատմութիւնից հայտնի է, որ Ակակիրոսը Պոլսի Պատրիարքական Աթոռը նստավ 405—425 թվականներին. իսկ Ակակիրոսը Մեկտիսնեի եպիսկոպոս էր 431—438 թվականներին. ի՞նչպես կարելի է բացատրել ժամանակագրական այս անտեղութիւնը: Մեր կարծիքով, եթե ճիշտ է Ակակիրոսի թվականը (Ատտիկոս պատրիարքի մասին կասկած չկա), բացատրութիւնը հետեւյալն է: Կորյունն իբրև ժամանակակից չէր կարող սխալվել անվան մեջ. ուստի սխալը Խորենացունն է: Արդե՞ն եթե Ակակիրոսը 431-ին նստավ և 438-ին մեռավ, չէր կարող այն միջոցին Մեկտիսնեի Աթոռը գահակալել. քանի որ Մեսրոպը մեռել է 439-ի սկիզբը և Մեկտիսնեից անցած պիտի լինի 420 թվականին: Կորյունի նախնական օրինակով չի եղել եպիսկոպոսի անունը. Խորենացին է, որ գտել և մտցրել է այն իր պատմութեան մեջ, որից հետո մի նոր գրիչ ավելացրել է Կորյունի բնագրի մեջ «որ Ակակիրոսն կոչէին»:

Իմ այս ենթադրութիւնը կարելի է ապացուցել հետեւյալ ձևով: Մեկի անունը տալու ոսկեդարյան ձևի մասին ընդարձակ խոսում է Նորայրը («Կորին վարդապետ...»): Ըստ Նորայրի, ոսկեդարյան հեղինակները սովորաբար ասում են «որում կոչէին, որում անուն կոչէր, որում անուն, որում անուն կոչէին». բացի սրանցից Կորյունը, Բուզանդը և այլն սիրում են գործածել նաև «որոյ անուն անանչէր» (11 անգամ գործածված Կորյունի խմբի մեջ):

Կորյունի գրքի մեջ կատարելով մի ընդհանուր վիճակագրութիւն այս մասին, գտա 31 վկայութիւն, որոնք բաժանվում են 10 ձևի (էջերը ըստ Վենետիկի 1894 թվականի հրատարակութեան).

1. Որոյ անունն ճանաչէր Սահակ. էջ 16.  
Որոց զլխաւորին Երեմիա անուն ճանաչէր. էջ 42.
2. Որոյ անուն կոչէր Վռամշապուհ. էջ 17.  
Որոյ անունն կոչէր Անանիաս. էջ 24.  
Որոյ անուն կոչէր Գինթ. էջ 27.
3. Որ և Վարդկան կոչէր. էջ 23.
4. Որոյ անուն Հաբէլ կոչէին. էջ 17.

Որոյ առաջնոյն Յովհան անուն կոչէին և երկրորդին

Յովսէփ անուն. էջ 19.

5. Որում անուն Արտաշէս կոչէին. էջ 30.

Որում անուն Երեմիա կոչէին. էջ 30.

Որում անունն Յովնաթան կոչէին. էջ 31.

6. Որում Թէոդոս կոչէին. էջ 27.

Որում Ղևոնդէոսն կոչէին. էջ 27.

Որում Ատաիկոս կոչէին. էջ 27.

Որում Մուշեղ կոչէին. էջ 31.

Որում Խուրս կոչէին. էջ 31.

7. Որոց առաջնոյն Բարիլաս անուն և երկրորդին Ակակիոս.  
էջ 18.

Որոց առաջնումն Տիրայր անուն... և երկրորդին Մուշէ  
անուն. էջ 24.

Որում Թէոդոս անուն. էջ 40.

Որոց առաջինն Սամուէլ անուն. էջ 26.

Որոց առաջինն Յովսէփ և երկրորդն այլ աշակերտ Յովհան  
անուն. էջ 46.

8. Որ առաջնոյն Ենովք անուն էր և երկրորդին Դանան. էջ 30.

Որ էր Վաղինակ անուն. էջ 24.

Որ և Ղևոնդէս առաջնոյն անուն էր և երկրորդին Կորինս.  
էջ 33.

9. Որոց առաջնոյն Վարդան անուն էր. էջ 23.

Որում Արսվաղ էր անուն. էջ 30.

Որում անուն էր Բակուր և եպիսկոպոսի աշխարհին Մով-  
սէս. էջ 25.

10. Որ անուանեալ կոչէր Զաղայ. էջ 25.

Որ անուանեալ կոչէր Անատոլիս. էջ 27.

Որ անուանեալ կոչէր Աշուշայ. էջ 32.

Որ անուանեալ կոչէր Դուստր. էջ 42:

Այս բոլոր 31 ձևերից դուրս և միակ բացառութիւն կազմող  
ձևն է վերոհիշյալ «որ Ակակիոսն կոչէին», որ հայերեն դառնալու  
համար պետք է ուղղել «զոր Ակակիոսն կոչէին», իսկ Կորյունի լե-  
զու դառնալու համար՝ «որում Ակակիոսն կոչէին»:

Այսպիսով հաստատուում է, թե հետին գրչի հավելում է:

Այս Ակակիոս եպիսկոպոսի մասին խոսում է նաև Ակիմյանը  
(«Հանդէս ամսօրեայ, 1935 թ., էջ 351») և ստում է հետևյալը: Ս.  
Ծաթիմիոսի վարքի համաձայն արդեն 390 թվականին Ակակիոս  
Մելիտինեի եկեղեցու պաշտոնյաներից էր, ծագմամբ, ինչպես  
կարծւում է, ազնվական ընտանիքից. հմուտ էր եկեղեցական և  
արտաքին գիտութեանց: Մելիտինեի Օտրեոս եպիսկոպոսը նրա

խանամքին էր հանձնել Եւթիմիոսին: Քե ո՞ր թվականից դարձավ եպիսկոպոս՝ հայտնի չէ: Անձամբ ծանոթ էր Պոլսի Նեստոր պատրիարքի հետ՝ ջանաց հետ կեցնել նրան իր գաղափարներից (430 թ.). անդամ էր Եփեսոսի ժողովին (431 թ.): Ավելի ուշ պիտի տեսնենք, թե նա գրեց զգուշացուցիչ թղթեր Սահակին, Մեսրոպին և հայ նախարարներին (435 թ.): Մահվան տարին հայտնի չէ, բայց 449 թվականին Եփեսոսի ժողովին մասնակցում էր Մելիտինեի Կոստանդիանոս եպիսկոպոսը:

Մելիտինեից Մեսրոպը Դերջանի Գինթ (ըստ Խորենացու Գնիթ) եպիսկոպոսի և մի քանի աշակերտների հետն առնելով դիմում է Պոլիս, կամ, ըստ Խորենացու՝ Անատոլիոս սպարապետը Մեսրոպին ու Վարդան Մամիկոնյանին հանձնելով Դերջանի Գնիթ եպիսկոպոսին, պատվով ուղարկում է նրանց Պոլիս. «Տայ ցեպիսկոպոսն Դերջանու ցԳնիթ, և բարեփառութեամբ զնոսա յուղարկէ»:

Մեսրոպի և իր ուղեկիցների ճանապարհորդական ծախսը վրձարվում է կայսերական զանձից, ինչ որ մեծ պատվի նշան էր: Այսպես պետք է հասկանալ Կորյունի «և ելեալ յանարույն դիմոսական» բացատրությունը, որ պետք է ուղղել «և ելեալ յարքունտոյն դիմոսական», վերջին բառով հասկանալով «պետական դրամ, ինչք, ծախս». հմմտ. հուն. δημοσια «կառավարական ծախսով» (ավելի ընդարձակ տե՛ս իմ Արմատ. բառ. դիմոս և դիմոսական բառերը): Ըստ այսմ անձիշտ եմ համարում Ֆնտզյանի մեկնությունը (Կորյուն, էջ 35, տող 532) իբր անաբի «տկար, խեղճ, ուսմիկ» և դիմոսական «ժողովուրդ»: Նախ որ անաբի բառը ոսկեդարյան չէ. երկրորդ՝ յանաբայն բացառականը ո՞ր բառին է պատկանում. երրորդ՝ ի՞նչ է նշանակում «ոսմիկ ժողովուրդը ելնելով»: Թորոսյանը («Բազմավէպ», 1932, էջ 7) նույն «և ելեալ յանարույն դիմոսական» բառերը ուղղում է «և ելեալ ի կառս՝ ի դեսպակս արքունականս», կամ «և կալեալ զճանապարհս արքունականս», իսկ Ակինյանը («Ղանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 532)՝ «և ելեալ յԱնտիոք ի դեսպակս»:

Մեսրոպի ճանապարհորդությունը եղավ ցամաքով՝ Փոքր Ասիայից, ինչպես որ վերագրածի ժամանակ հատկապես հիշվում է: Ամեն տեղ մեծամեծ պատիվներ տեսավ Մեսրոպը, մինչև հասավ Կոստանդնուպոլիս՝ կայսերական մայրաքաղաքը:

Իսկույն լուր տրվեց արքունիք, թե Մեսրոպն իր աշակերտների հետ Հայաստանից ժամանել է. ընդունելութուն նշանակվեց և Մեսրոպը ներկայացավ պալատ՝ Քեոզոս կայսեր, պալատական Ատտիկոս եպիսկոպոսին (պատրիարքին) և իշխաններին. «Ձորմէ իսկոյն պատմէին յարքունիսն, և մտեալ առաջի պատուական Աթո-

ույն յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն և հայրապետին արքայ կաթողիկոսին աշխարհամտա զբանն, որում Աստիկոս կոչէինն (Կորյուն, էջ 17): Կայսրը հրամայեց Մեսրոպին մի ժամանակ մնալ մայրաքաղաքում, մինչև որ հարկավոր խորհրդակցութիւնները կատարվեն: Զատկի մոտերն էր. Մեսրոպը մեծամեծ պատիվներ տեսավ եկեղեցուց, արքունիքից և քաղաքի նշանավոր իշխաններից:

Զատկից հետո խոսակցութիւնները վերջանալով, շնորհվեց կայսերական հրովարտակը, որով, ըստ նորենացու՝ նախ Մեսրոպին շնորհվում էր ակումիտ և եկկլեսիաստիկոս տիտղոսները: Սըրանցից առաջինը (հուն. ἀκοιτητος) նշանակում է քանքունս (այսինքն անդադար աշխատող), իսկ երկրորդը (հուն. ἐκκλησιαστικος)՝ «քարոզիչ, բարոնապետ». երկուսն էլ տրվում էին նշանավոր և գործույա կրօնավորներին: Թեև ակումիտ տիտղոսի շնորհումը ըստ Կորյունի կատարվեց Հունահայաստանից մեկնելուց առաջ (և եկկլեսիաստիկոս տիտղոսն էլ անձանոթ է Կորյունին), բայց կերևի, թե պաշտօնական բաշխումը տեղի ունեցավ սույն հրովարտակով:

6-րդ դարում ծագեց Ակումիտ աղանդը, որի մասին կարգում ենք (Փափազյանց, «Պատմութիւն եկեղեցու», էջ 286). «Ընդ այն ժամանակս ծագեցաւ և մոլորութիւն Ակումիտ կամ Անհանդիստ Անուանեալ միայնակեցաց, որք յերիս դասս բաժանեալ՝ կարգաւ միմեանց զկնի զտիւ և զգիշեր անընդհատ հսկէին յօրհնութիւնս և ի փառաբանութիւնս Աստուծոյ: Սակայն անկան սպա ի դժպատհ՝ և յանգոսնելի մոլորութիւնս. զի ոչ կամէին լսել և կամ դաւանիլ թե մին յանձանց Նրրորդութեան մարմնացեալ իցէ, ծնեալ ի կուտ և շարշարեալ»:

Ակումիտ տիտղոսի գործածութեան մասին խոսում են Ադոնցը («Հանդէս ամսօրեայ», 1927 թ., էջ 400), Ֆնտզլյանը (էջ 35) և Քորոսյանը («Բաղմալէպ», 1931 թ., էջ 471): Վերջինս մանրամասն պատմելով ակումիտ տիտղոսի ծագումը, ցույց է տալիս, որ զա գործածութեան մեջ սկսեց մտնել 441 թվականից, և նույնիսկ եթե ընդունենք մի բոլակ, որ Մեսրոպի ժամանակ գործածական էր այն, հասարակ «ճղնավոր»-ից բարձր նշանակութիւն չունի և չի գործածվում իբր բարձր եկեղեցական տիտղոս: Այս և ուրիշ պատճառներ էլ ի նկատի ունենալով, կարծում է Քորոսյանը, որ Կորյունի հիշյալ բառը սխալման արդյունք է և նույն տողը պետք է ուղղել «վայելուչ մեծարանօք զսուրբն յարժունիս յուղարկելոյ»: Իսկ Պիտերսը («Revue des études arméniennes», № 9, էջ 211), կարծում է, թե կայսրը Մեսրոպին և իր խումբը ուղարկեց Ակումիտների վանքը՝ ընակութեան համար: Այս վանքը նշանավոր էր իր բազմա-

լեզու միաբաններով, և եթե չկային այնտեղ հայ միաբաններ, անշուշտ ասորիներ կլինեին: Ստեփան Նազարյանն էլ («Հիւսիսփայլ», 1860 թ., էջ 246) ակումիտ բառը սրբագրում է *ερχομιος* «երկրացի մարդ, ընտանի», որ սակայն ոչինչ արժեք չունի:

Անցնելով եկկլեսիաստիկոս բառին, Քորոսյանը («Բազմամպէպ, 1932 թ., էջ 9) գտնում է, որ այս բառը նշանակում է պարզապես «եկեղեցական կամ ժողովական» և չի գործածվում իբրև տիտղոս: Նա գտնում է, որ բառը պետք է ուղղել եկկլեսիկաիկոս, որ է հունարեն *εκκλησιολογος*: Սա բյուզանդական հունաց մեջ եկեղեցական աստիճան էր, որի պաշտոնն էր *α1*. Պաշտպան եկեղեցական իրավանց և կրոնի վարդապետության, հսկող եկեղեցական գանձերի և վանքերի կարգապահության. 2. Դատավոր խաղաղության կամ հաշտության՝ կրոնական վեճերի և խնդիրների մեջ»: Այս տիտղոսը տրվում էր սրբությամբ և իմաստությամբ օժտված նշանավոր եկեղեցականներին: Այս տիտղոսը իրոք որ հարմար էր Մեսրոպին և անշուշտ Խորենացու մոտ նախապես այդպես էր գրված և հետո անսովոր լինելու պատճառով ձևափոխվեց և դարձավ եկկլեսիաստիկոս, որ շատ ավելի գործածական և ծանոթ բառ էր:

Ավելի մեծ պատիվներ է տալիս Քովմա Արծրունին. «Կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան ամբողջակութեան սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի և քաջաց և գլխաւոր վարդապետացն» (էջ 72): Կամ ավելի խոշոր բառերով՝ ըստ Կիրակոս Գանձակեցու՝ «Նաև պատրիարքն Ատտիկոս և ամենայն ուխտ եկեղեցւոյն՝ հանդերձ թագաւորան գրեցին զՄեսրոպ ընդ առաջին վարդապետս եկեղեցւոյ, ընդ Աթանասի և Գրիգորեանս, ընդ Բարսեղի և ընդ Յովհաննու Ոսկեբերանի» (էջ 18):

Տիտղոսների բաշխումից հետո բարձրագույնս հրամայվում էր արտոնել Մեսրոպի գործունեությունը Հունահայաստանում, թույլ տալ, որ հավաքե աշակերտներ, բաց անի դպրոցներ, հայերենի ուսուցումը տարածի, եկեղեցիներ հիմնի և այլն: Հրամայվեց նաև, որ այդ հունահայ դպրոցներում աշակերտների սննդի ծախսը վրձարվի պալատական հաշվով:

Այս բոլորից դուրս՝ Մեսրոպը պարտավոր էր հալածանք հանել բարբարիանոս կոչված աղանդավորների դեմ, որոնք սկսած էին տարածվել նաև Հայաստանի, և մասնավորապես Հունահայաստանի մեջ:

հորենացին պատմում է, թե Մնարուպն ստացավ նաև երկու նամակ, մեկը Քնոզոս կայսրից և մյուսը Ատտիկոս պատրիարքից, երկուսն էլ Սահակ կաթողիկոսի հասցեին: Ահա այդ նամակները.

## Նամակ Ա

«Թուղթ Քնոզոսի առ Սահակ

Ինքնակալ Քնոզոս Աւգոստոս և կայսր Հոովմայեցոց, Մեծի Սահակայ կաթիկոսոսի խնդալ:

Հրամայեալ մեր տեսանել զթուղթս, վերահասու եղաք գրելոցս առ ի քէն. և մեղադրեցաք յոյժ, զի ամենայն սրտիւ միտեցար զհետ հեթանոս թաղաւորի, և մեզ և ոչ թղթով բաւականացար ծանօթանալ: Եւ առաւել յայսմ մեղադիր եմք, զի արհամարհեալ զճարտարօքս, որ ի մերում քաղաքիս, յԱսորեաց ոմանց խնդրէիր զիմաստից գիտա: Վասն որոյ հաճեալ էաք ընդ մերոյ ծառայիցդ արհամարհել զայդպիսի ուամամբդ. բայց զի յետոյ պատմեաց մեզ Մնարուպ, թէ կատարումն արունստիդ ի շնորհաց վերնոյն եղև, գրեցաք՝ զի ամենայն փութով ուցին, և զքեզ պատուով ընկալցին, որպէս զարդարև վարդապետ իւրեանց, հանգոյն արքեպիսկոպոսին Կեսարու. և դարմանք և ծախք յարքունուստ եղիցին: Եւ հրամայեցաք քաղաք շինել յաշխարհիդ Հայոց՝ յապաւինութիւն ձեզ և մերոց զօրաց: Եւ վասն քո արարաք ստրատելատ զՎարդան որդի որդիացելոյ քո, և յառաջին վարդապետան գրեցաք զՄնարուպ: Ողջ լիք»:

## Նամակ Բ

«Թուղթ Ատտիկեայ առ Սահակ

Ատտիկոս ինքնազուխ կաթիկոպոս Կոստանդնուպոլսի, եղբոր սիրելոյ և աթոռակցի՝ Սահակայ կաթիկոպոսի Հայոց ի Տէր խընդալ:

Բազում զոհութիւն Աստուծոյ մատուցանեմք յաղաքս քո բարեհամբատութեանդ ի մէջ այդպիսի բարբարոս ազգի, այլ ազատ ի մեղադրանաց ոչ թողումք, որ ոչ կանխաւ յիշատակեցիր զսիրելութիւն Գրիգորի և Ներսիսի երանելեաց քոց հարց: Եւ առաւել ընդ այս զարմանամք, եթէ զիա՞րդ թողեր զաղբիւրն եկեղեցւոյ զհայր մեր սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ սովաւ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նմանէ վարդապետեալ ուսանի. ուստի և Ոսկի բերան կոչեցին



զնա: Եւ ձեր զանց զնովաւ արարեալ, կամեցայք ի սահմանական ջրոց զփափագ ծարաւոյն յագեցուցանել. մինչև ամենակալին տեսեալ զսնտի աշխատութիւնն, բղխեաց ի ձեզ զշնորհս Հոգւոյն, ընդ որ այժմ ուրախ եմք: Իսկ արդ հրամանաւ ինքնակալին Աւգոստոսի տունեալ լիցի: քեզ իշխանութիւն վարդապետել զկողմնդ մեր, և աղանդոյդ բորբորիտոնաց՝ կամ հաւանել, և կամ հալածել ի քում մէ վիճակէդ: Եւ զառաքեալս ի քէն զՄեսրոպ ձեռնադրեցաք լինել եկղեսիաստիկոս»:

Խորենացու մեջ բերած հիշյալ երկու նամակները իրականութեան մեջ ամենեւին չէին կարող գոյութիւն ունենալ, և են միմիայն արդյունք երևակայութեան: Այս ո՛չ թե միայն այն պատճառով, որ Կորյունը չի հիշում դրանք, կամ թե Խորենացին չէր կարող դրանք ձեռք բերել, այլ մանավանդ այն պատճառով, որ նրանց պարունակութիւնը հակառակ է պատմութեան: Նամակները պատմում են, թե Մեսրոպը գրերի գյուտը հաջողցնելու համար դիմեց զանազան ասորիներին, և երբ նրանցից օգուտ չտեսավ, Աստված հրաշքով հայտնեց այդ գրերը: Բայց այս պատմութիւնը, ինչպես արդեն գրեցինք, Խորենացու հնարածն է: Մեսրոպը չդիմեց զանազան ասորիներին, այլ ինքը՝ իր աշակերտներին հետ, աշխատեց Եղեսիայում, և երբ կարիք զգաց դիմելու մի գեղազրի, ընդհակառակը զգուշացավ մի ասորիի դիմելուց և հույն Հուսիանոսի դիմեց: Հայերեն գրերը համարել հրաշքի կամ աստվածային հայտնութեան արդյունք՝ նույնպես Խորենացու հնարածն է: Իրականութիւնը այն է, որ Մեսրոպն իր սեփական աշխատանքով հնարեց տառերը: Ցավալի է, որ Տաղավարյանն էլ (էջ 36) իբր ստույգ է ընդունում այս նամակները և դրանցից պատշաճ եզրակացութիւն հանում: Իբր թե երբ Սահակն ու Մեսրոպն անցան Հունահայաստան՝ հայերեն գրերը տարածելու և հույները արգելեցին, այդ նրանից էր, որ կարծում էին, թե հայերեն տառերը ասորերեն այբուբենից են կազմված և ո՛չ թե հունականից: Իսկ երբ լսեցին, թե աստվածային հայտնութեամբ են արված, իսկույն թուլատրեցին!!!

Ատտիկոս պատրիարքը չէր կարող գրել Սահակին, թե բորբորիտոնների աղանդին «կա՛մ հավանիւ և կամ հալածիր»։ Եթե ինքը Ատտիկոս հակառակ էր այս աղանդին (և գիտեմք որ շատ հակառակ էր), անպատճառ պիտի գրեր հալածել, և երբեք հարաբերութիւն չունենալ նրանց հետ: Գալով ժամանակի ոճին, Խորենացին դիտմամբ տվել է այդպիսի անքաղաքավար և արհամարհոտ գույն, որպեսզի հունական գոռոզութեան հետ պատշաճեցնելով՝ կեղծութիւնը ծածկե և ընթերցողին բնական երևցնել տա: Բայց հազիվ թե Թեոդոսը, մանավանդ Ատտիկոսը այդպիսի անվայել լե-

զու բանեցնեին այնպիսի մի բարձրաստիճան հայրապետի հետ, որ իրենց իշխանություն տակ չէր և որի բարեկամությունը պիտի փնտրեին՝ իբրև հարևան քրիստոնյա մի մեծ ազգի հոգևոր պետի։ Ուրիշ նամակներ էլ ունենք Սահակին և Մեսրոպին ուղղված հույն հոգևոր իշխանությունից ոսկեդարյան հայերեն թարգմանությունք (և ոչ թե հորենացու լեզվով), այս անգամ հարազատ և վավերական, և այնտեղ տեսնվում է, թե ինչպիսի՞ պատկանելի վերաբերմունք է ցույց տրվում այդ երկու մեծ անձնավորությունք։

Ասենք վերջապես, որ Վարդան Մամիկոնյանի ուղեկցությունը և այս առթիվ կայսրից ստացած ստրատելատությունն պաշտոնը բոլորովին ենթադրական է։ Խորենացին արև է այս բանը՝ բարձրացնելու համար Մամիկոնյանի աստիճանը. բայց Կորյունի պատմությունը ցույց է տալիս, որ Վարդանը զեն մինչև Սահակի մահը (438) շունք այնպիսի նշանավոր աստիճան, ինչպես է ստրատելատությունը կամ ընդհանուր զորավարությունը, որ Սահակի մահից հետո ստացավ։ Եթե Վարդանն ունենար այդպիսի բարձր մի պաշտոն և այն էլ ստացած հունաց կայսրից՝ Մեսրոպի հետ ուղեկցության ժամանակ, անկարելի էր, որ Կորյունը լուծված մատներու շփշատակեր։ Կորյունը երկու անգամ առիթ է ունեցել ճշտիվ նշանակելու Վարդանի անձը. բայց ինչպե՞ս համեստ կերպով։ Այսպես, էջ 13. «Առանել երանելոյն Սահակայ զՄամիկոնյան որեարն՝ ի վարժս վարդապետութեանն պարապեցուցեալ, որոց առաջնոյն Վարդան անուն էր, որ և Վարդկան կոչէր»։ Իսկ էթե այս հատվածը Վարդանի աշակերտության է վերաբերում, ահա մի ուրիշը, երբ արդեն վաղուց Վարդան ստրատելատություն բարձրացած պիտի լիներ ըստ Խորենացու. «Հանդերձ աստուածաւէր իշխանակնաւ միով, որ անուանեալ կոչէր Գուստր. որ էր կին Վարդանայ, զոր ի վերնոյն յիշեցաք» (Կորյուն, էջ 25)։ Այս երկու հատվածներից պարզ է, որ զեռ մինչև Սահակի վախճանը Վարդանը հասած չէր այդ պաշտոնին. ուստի և Խորենացու գրածը սխալ ենթադրություն է միայն։

Գարազաշյանն իր Քննական պատմության մեջ (Գ, էջ 219), քննության ենթարկելով այս նամակները, հասնում է նույն եզրակացություն։ Նա նկատում է, թե Թեոդոս կայսեր մեղադրանքները (թե ինչո՞ւ Սահակը մոտեցել է ասորիներին և իրեն թղթիկ մ'էլ չի գրել, թե ինչո՞ւ արհամարհել է Պոլսի իմաստուններին, որի համար կայսրն էլ իրավունք պիտի ունենար հրամայելու, որ հունահայերը արհամարհեին այդ գրերը, բայց որովհետև Աստուծո հրաշքով են գտնվել նրանք, ուստի ներելի է սովորել և այլն)։ «չունին ամենևին նշանակություն ի բերան Թէոդոսի»։

Ավելի անտեղի են Ատտիկոսի խոսքերը Հովհան Ոսկերեքանի

մասին: Աստիկոսը հայ էր, Սեբաստիա քաղաքից: Գնաց Պոլիս և կրոնական բարձր աստիճանի հասավ: Նա հակառակորդ և թշնամի էր Հովհան Ոսկեբերանին, որին աքսորել տալով՝ խլեց ձեռքից Պատրիարքական Աթոռը: Ինչպե՞ս կարող էր այս մարդը ասել Ոսկեբերանի համար, թե «զիա՞րդ թողեր զաղբիւրն Եկեղեցւոյ զհայր մեր սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ սովաւ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նմանէ՛ վարդապետեալ ուսանի. ուստի և Ոսկի բերան կոչեցին զնա»: Այս խոսքերը կարող էր ասել ո՛չ թե իր անմիջական հաջորդն ու հակառակորդը, այլ շատ հետին մի մարդ, որի ժամանակ Ոսկեբերանը արդեն Հուլյն Եկեղեցու սրբերի կարգն էր դասված: Այս բանը տեղի ունեցավ 438 թվականին Պրոկոպատրիարքի ձեռքով, որ նրա աշակերտն էր և վեցերորդ հաջորդը. նա էր, որ աքսորում չարաչար նեղութեամբ մեռած Ոսկեբերանին պատմով փոխադրել տվեց Պոլիս (ընդարձակ տե՛ս Ալիշանի «Յուշիկք...», Բ, էջ 96):

6

Մեսրոպն ստանալով կայսերական հրովարտակը, հրաժեշտի ողջունը տվավ թագավորին, պատրիարքին, եկեղեցականներին և իշխաններին, և բոլոր իր ուղեկիցներին հետ բարձրանալով կայսեր կողմից շնորհված արքունական կառքերը, ճանապարհ ընկավ դեպի Հունահայաստան. «Եւ երկիրպագեալ ծիրանափառ օգոստականացն և սրբոյ կաթողիկոսին, և ընկալեալ ողջոյն յեկեղեցւոյն և յերևելի իշխանացն քաղաքին, և ամենայն իւրայովքն յաջողեալք՝ ելանէին ի դեսպակս ի կառս արքունատուրս» (Կորյուն, էջ 17): Կորյունը պատմում է, թե Մեսրոպի վերադարձը ավելի մեծ շուքով եղավ: Նրանք բռնեցին արքունական մեծ պողոտան, որ այժմվա Սկյուդարի կամ Քաղկեդոնի (Գաղղթոյ) կողմերից սկսելով՝ տանում էր մինչև Հայաստան: Ճանապարհի վրա գտնված բոլոր քաղաքները պատահեց Մեսրոպը և ամեն տեղ գտավ փառավոր ընդունելություն, մինչև հասավ Անտիոք և ներկայացավ Արևելից սպարապետ Անատոլիոսին, որին ներկայացրեց կայսերական սակերը (արքունի սրբազան հրովարտակը): Սպարապետը Մեսրոպի ձեռքով ընդունելով այդ հրովարտակը, իսկույն՝ ձեռնարկեց կայսերական հրամանները գործադրելու: Անմիջապես պատգամավորներ ուղարկեց Հունահայաստանի բոլոր գավառները, հրամայեց հավաքել հայ մանուկների և տեղավորել նրանց զանազան հարմար վայրերում: Բոլորի համար նշանակեց ոռճիկ՝ արքունի հաշվով: Մեսրոպն սկսեց ման գալ այդ քաղաքները, քարոզել, ուսուցանել և իրեն հանձնված աշակերտներին կրթել հայրենի ուսման մեջ:

Այնուհետև Մենարոպն սկսեց քննել բարբարոսներին աղանդը: Նախ տեսնենք, թե ի՞նչ աղանդ է սա:

Զամչյանը (Ա, էջ 765) ենթադրում է, թե բարբարոսները լուսավորչի ժամանակից Հայաստանում մնացած օտարազգի և ոչ հայ կուսակալներն էին, որոնց հետ հետո խառնվել էին նաև սակավաթիվ հայեր: Այս աղանդավորները պաշտում էին տարրերը, ոմանք էլ արեզակը, և առհասարակ զրադաշտական մոզքերից փոխառություններ էին առած. այս պատճառով էլ կոչվեցին Արևորդիք:

Ըստ Իսահակ Հարությունյանի (էջ 194), բարբարոսները «գնոստիկական հերետիկոսների ամենաատելի աղանդավորներն էին»:

Օրմանյանը («Ազգապատում», Ա, էջ 297) համարում է, որ այլուր կոչված է Մծղենայք, հունարեն Եվխետյան կամ Մեսայյան: Այս աղանդը ծագել է Ասորիքից: Նրանք ամեն ծես ու պաշտամունք ավելորդ էին համարում և մեղքերի թողության համար մի աղոթք բավական էին համարում: Ուղղափառներն ասում էին նաև, թե նրանք ամեն տեսակ բռնություն, հափշտակություն և անիրավություն համարձակ գործում էին և հասարակ եղեռնագործի կերպարանք էին ստանում:

Կոնիքի բ հայագետը իր «The Armenian Church» աշխատության մեջ գտնում է, որ դրանք նեստորականներն էին: Տեսողյանը (Կորյուն, ԻԲ—ԻԾ) ավելի ընդարձակ քննելով այս խնդիրը, զրտնում է, որ սխալ է Կոնիքի կարծիքը: Նեստորականությունը զբաղում էր բարձրացրեց, երբ նեստորը Պոլսի պատրիարքական դահլր բարձրացավ (428 թ.): Իսկ 422—423 թվականներին, երբ Մեսրոպը Պոլիս էր գնացել, դեռ այս աղանդը բորբոքված չէր: Այս միջոցին հուլիոզ աղանդներն էին Արիոսականություն, Հոգեմարտություն, Պեղագյանները, Մանիքեականները և Փոտինյանները: Արդարև, Կորյունը խոսում է նեստորական աղանդի տարածման մասին էլ Հայաստանում, բայց բավական հետո, Սահակի մահից քիչ առաջ, շուրջ 435-ին, որի մասին մենք էլ պիտի խոսենք առանձին գլխով: Եթե այս վերջինը նույնը լիներ առաջինի հետ, Կորյունը նեստորականների վրա երկրորդ անգամ խոսելիս անշուշտ «գոր ի վերնոյն լիշեցաք» ասելու էր, ըստ իր սովորության (Տեսողյան, էջ ԻԾ):

Կորյունը, խոսելով բարբարոսներին մասին, կոչում է նրանց «դրժպատեհ, կամակոր և ժանտագործ»: Վերջին բառով Ֆրեստըլյանը հասկանում է «պղծագործ, պոռնիկական», որի համար իրրև ապացույց է բերում հետևյալ վկայությունները.— «Զժանտագործին Բահարու զհիւրընկալութիւն լրտեսացն» (Կորյուն, տպ. 1894 թ.,

էջ 9, ասում է պոռնիկ Բահաբի մասին)։ «Ժանդագործ երկիրն Սո-  
ղոմացուց»։ Ագաթ., էջ 226»? «Յոչնչէ կարող էր առնել զլուսաւոր-  
սըն... և ոչ ի ժանդագործութենէ» (Եղնիկ, պատմելուց հետո, թե  
լուսավորները «ի մայրենի և ի քեռական առականաց արարան»)։  
Արդ՝ այս ժանտագործ, պղծագործ կամ պոռնկական ածականը  
տրվում էր նաև մանիքեցիներին, ուստի Կորյունի բարբարիանոս-  
ները մանիքեցիներ էին ըստ Յնտգլյանի, և կամ ըստ Մինգանա  
ասորագետի՝ burburiani կոչված սակավածանոթ աղանդը, որ Վե-  
րին Միջագետք և այստեղից էլ Հայաստան տարածված էր և որի  
դեմ մի քանի տեղ գրել է Ծփրեմը (տե՛ս Յնտգլյան, էջ 38)։

Լավագույն բացատրութիւնը տալիս է Թորոսյանը (Բաղամ-  
վէպ, 1932 թ., էջ 7.— աղանդը կոչվում էր բորբորիանոս կամ բոր-  
բորոս (հուն. βορβορος «տիղմ, ցեխ» բառից՝ իբր «տղմային, պղղ-  
ծագործ»)։ Այս աղանդը ծագել է Ա դարի վերջերից. հինգերորդ  
դարի սկիզբը այնքան աճել ու ծավալել է Բյուզանդիոնում և շրջա-  
կալքում, և այնպիսի ահռելի քանդում ու ավերում է հասցրել ըն-  
տանիքների մեջ, որ ժողովուրդը զգված ու զայրացած՝ բռուն բո-  
ղոքներ է հասցրել մինչև կայսերական գահը։ Սրա վրա դուրս է  
եկել կայսերական խիստ հրաման՝ բնաջինջ անելու և պետութեան  
սահմաններից դուրս վտարելու նույն աղանդի հետևորդներին։ Նը-  
րանք էլ վտարվելով երկրից՝ անցան Եգիպտոս, Ասորիք, Միջա-  
գետք, Հայաստան և այլն։ Այս բանը պատահեց հենց Մեսրոպի  
ուղևորութեան միջոցին դեպի Պոլիս, որով և եղավ կայսերական  
պատշաճ կարգադրութիւն՝ հալածելու նրանց Հայաստանից։

Երբ Կորյունն ասում է՝ սկսեց «քննել» աղանդը, պետք է հաս-  
կանալ անշուշտ, թե նա կանչեց մի առ մի այդ աղանդի հետևորդ-  
ներին և նրանց քարոզիչներին, հարցափորձեց, թե իրոք հետևո՞ւմ  
են այդ աղանդին, և որքան կարող էր ջանաց համոզելու և ուղղա-  
փառ քրիստոնեական վարդապետութեան դարձնելու։ Իսկ երբ ան-  
կարելի եղավ համոզել, ըստ Կորյունի «իրբն ոչինչ գտանէր հնարս  
յուղղութիւն ածելոյ», այն ժամանակ ձեռք առավ այն բռնի միջոց-  
ները, որոնք սովորական էին այն ժամանակ հերձվածողների դեմ  
հարուցված հալածանքների մեջ, այն է բանտարկութիւն, տան-  
ջանքներ, գելարաններ և ծեծ. «Առեալ ի գործ արկանէր զթշուա-  
ռացուցիչ գաւազանն, ծանրագոյն պատուհասիւք ի բանդս, ի տան-  
ջանս, ի գելարանս» (Կորյուն, էջ 18)։ Իսկ երբ այս պատիժներն ու  
տանջանքներն էլ օգուտ չունեցան և հերձվածողները անխախտ մը-  
նացին իրենց համոզմունքի մեջ, Մեսրոպն, իհարկե քաղաքական  
իշխանութեան ձեռքով, դիմեց ավելի ծանր միջոցների.— ջարդում  
էին հերձվածողի այս կամ այն անդամը, դադում էին ճակատը,

մբում և այսպես խարանած դուրս էին վտարում երկրի սահմաններեց (աքսորում)։ Երևի յորժամ այնու ևս պակասեալաբ ի փրկութենէն գտանէին, խորտակեալա, ապա խանձեալա, մրեալա և գունակ գունակ խայտատակեալա, և յաշխարհէն կորչէին։

Այստեղ էլ Կոնիքիք, իր վերոհիշյալ աշխատութեան մեջ, սրխալմում է ըստ Յետզլայնի (Կորյուն, էջ ԻԲ—ԻԳ և 39), ասելով, թե Մեսրոպն այդ աղանդավորներին ողջ-ողջ այրել է տվել։ Տընտըզլայնը ցույց է տալիս, որ Կոնիքիք սխալ է հասկացել խանձեալ բառը, որ ո՛չ թե «այրել» է նշանակում, այլ «խանձել, դադել, խարանել, մորթի վրա տաք երկաթով նշան անել»։ Այս նույն պատիժը սահմանվեց նաև Շահապիվանի ժողովում (446 թ.) կախարդներին համար. «Որ լոկ դիւթեն և ոչ կախարդեն թէ՛ այր, թէ՛ կին ի դիւթութեան գտցին՝ Ժժ կրկին դան արբցեն, խանձացին, մրեացին, ոսկրարկցին, յուրկանոց տարցին»։ Խարանումը նրա համար էր, որ ամեն մարդ տեսնի ու ճանաչի մեղապարտին։

Բարբարիանոսների հալածումից հետո Մեսրոպը շարունակեց իր գործը, լայն շափերով տարածեց կրթութիւնն ու քարոզութիւնը, և հավաքեց բազմաթիվ հունական եկեղեցական հայրերի գրքերը, ո՛չ թե հատկապես հայերենի թարգմանելու համար, այլ կարդալու և իր քարոզների համար նրանցից նյութեր քաղելու նպատակով, ինչպես որ Կորյունն էլ հատկապես հիշում է, թե այդ գրքերով ծովացրեց իր վարդապետութեան խորութիւնը։ Երևի երանելոյն դիր վարդապետութեանն պայման արարեալ՝ սակեալ և վճարեալ, և բազում շնորհագիր մատենան զհարցն եկեղեցւոյ ստացեալ, ծովացուցանէր զվարդապետութեանն խորութիւն, և լցեալ զեզոյր ամենայն բարութեամբք» (Կորյուն, էջ 18)։

Նույն ժամանակները Մեսրոպը պատահեց Բենիամէն անունով մի աղվան քահանայի։ Մեսրոպը, որ ժողովրդի մեջ դիր ու գրականութիւն և գրականութեան միջոցով ուսում և կրոն տարածելու ցանկութեամբ լցված մի անձ էր, օգուտ քաղեց այս առիթից և նույն անձից օգտվելով, ուզեց հնարել աղվաներն լեզվի համար սեփական այբուբեն։ Ինքը աղվաներն լեզվին բոլորովին անձանոթ էր, բայց այնպիսի մի անձի համար, որ արդեն երկու լեզուների այբուբենն էր հնարած, դժվար չէր զանազան քննութիւններով երկվան հանել ու ճանաչել նույն լեզվի սեփական ձայները։ Այսպես էլ արավ Մեսրոպը։ Նա հարցրեց, քննեց նույն Բենիամէն քահանային, աղվաններն լեզվից զանազան բառեր հնչել տվեց և վերջապես կազմեց աղվաններն այբուբենը. «Եւ նորա հարցեալ և քննեալ զբարբառս զբանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս, ըստ վերնապարզև կորովի սովորութեան իւրում, և յաջողութեամբ Քրիս-

տոսի շնորհացն, կարգեալ և հաստատեալ կշռէր» (Կորյուն, էջ 18)<sup>1</sup>։

Աղվաններն լեզվի գրերը հնարելուց հետո, արդեն Հունահայաստանի դպրոցական ու քարոզչական գործը վերջացրած լինելով, Մեսրոպը հրաժեշտ տվեց եպիսկոպոսներին, իշխաններին և բոլոր եկեղեցականներին։ Իր ժողովրդի և եկեղեցիների ու դպրոցների վրա վերակացու նշանակեց իր աշակերտներից երկուսին, առաջինը՝ Ծնովք և երկրորդը՝ Դանան. «Արք կրօնատրք և յառաջադէմքս յաւետարանական սպասաւորութեանն»։ Իսկ ինքը հետն առնելով իր բաղամթիվ գործակից աշակերտներին, ճանապարհ ընկավ դեպի Մեծ Հայք (Պարսկական Հայաստան)։ Հասավ Նորաքաղաք կամ Վաղարշապատ, ներկայացավ Սահակ կաթողիկոսին և Արտաշես թագաւորին, որ շատ ժամանակ չէր գահ էր բարձրացել, պատմեց նրանց բոլոր այն գործերը, որ մեծ հաշտութեամբ կատարել էր Հունահայաստանում, և հանգստութիւն առնելու համար, մի քանի օր նույն քաղաքում դադար առնելուց հետո, այս անխոնջ գործիչը պատրաստութիւն սկսեց տեսնել, այս անգամ էլ դեպի Աղվանք երթալու։

Այս է ահա Մեսրոպի գործունեութիւնը Հունահայաստանում՝ Կորյունի հավատարիմ պատմութեան համաձայն։ Բայց Խորենացին, որ արդեն խառնակել էր սկսել այդ գործունեութեան նախնական մասերը, նույն խառնակութիւնը մինչև վերջն էլ տանում է։ Այսպես, երբ Մեսրոպը Պոլսից դառնում է Հունահայաստան, դեռ Սահակն այնտեղ էր։ Եվ ահա բոլոր իշխանները, գլխավորներն ու նշանավոր մարդիկը, հավաքվում են Մեսրոպի և Սահակի մոտ, և այս երկու անձերը շուտով սկսում են սովորեցնել նրանց։ Ինչպես տեսնում ենք, այստեղ մանուկների հավաքում չկա և փոխանակ մանուկների՝ իշխաններն ու երեւելի մարդիկն են աշակերտում, ինչ որ շատ տարօրինակ է. «Քանզի իշխանք և գլխաւորք և որք միանգամ յայտնիք էին ի կողմանն, ի մի վայր եկեալ հասանէին հանդերձ ամենայն քահանայական ազգան ինքնակամ, իբր յաստուածառք ձայնէ հրաւիրեալ. զոր անյապաղարար սկսեալ ուսուցանել, երազապէս վարդապետեցին զկողմն արեւմտեայն, որպէս զարեւելեայն» (Խորենացի, Գ, Ժբ)։

Այս միջոցին Պարսից Վուամ թագաւորը տեսնելով, որ առանց հայ նախարարների հետ հաշտվելու չի կարող կառավարել Հայաստանը, Սմբատ ասպետի միջոցով հաշտութիւն է խոստում։ Մի խումբ նախարարներ գալիս են Սահակի մոտ և խնդրում են, որ իր Աթո-

<sup>1</sup> Ակինյանը («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 535) այս աղվաններին համարում է արեւելյան գոթացիք և Մեսրոպին էլ՝ արեւելյան գոթերի այլուրեքնի հեղինակ։ Դեպքը տեղի է ունեցած Պոլսում.— Ինձ թվում է, թե կարելի է։

որ դառնա և ցանկալի միաբանութիւնը հաստատի: Սահակը համաձայնվում է, ուստի Մեսրոպին թողնում է Արևմտյան Հայաստանի վերակացու, նրան օգնական է տալիս Վարդան Մամիկոնյանի երկու եղբայրներին՝ իր Հմայակ և Համազասպյան թոռներին, հրամայում է քննել բոթբոթիտոնների աշանդը և կամ համոզել և կամ շարչարանքով հալածել, իսկ ինքը անցնում է Այրարատ նահանգը: Այնտեղ հավաքում է բոլոր նախարարազուններին, Մերատ ասպետին և Վարդան Մամիկոնյանին ուղարկում է Պարսից պալատը, և այսպես երկու կողմերի միջև հաշտութիւն կնքելով՝ վրոճամշապուհի որդի Արտաշեսը նշանակվում է Հայաստանի թագավոր: Սրանից հետո տեղի է ունենում Կարին կամ Քեոզուպուլիս քաղաքի շինութիւնը՝ Անատոլիոսի ձեռքով՝ Քեոզորոս կայսեր հրամանի համաձայն, իբրև թէ Հայոց պաշտպանութիւն համար: Իսկ Մեսրոպը դեռ Հունահայաստանում՝ Շաղգմք անուն օանապատ և հովանատրո՝ տեղում շարունակում է իր դասերը, մինչև արժանազակեաց զվարդապետութիւնս առաջին անելոց խմբիցն» (երևի ուզում է ասել առաջին աշակերտական խումբը կարդացրեց վերջացրեց, բայց մյուսների մասին խոսք չկա): «Քանզի ոչ որպէս արուեստ ուսուցանէր, այլ իբրև զհոգի առաքելարար աշակերտելոցն տալը» (տորենացի, Գ, 47): Այնուհետև իր տեղը վերակացու թողնելով իր աշակերտներից մի քանիսին, ինչպես Ղևոնդին և Սևովքին Սպերում, Գնիթ եպիսկոպոսին Դերջանում, Դանանին՝ Եկեղիշում, ինքը դարձավ Այրարատ և այստեղից էլ՝ Գողթն:

Ինչպես տեսնում ենք, բոլոր զլիսավոր դերերը տորենացին Սահակին է տալիս, իսկ Մեսրոպը մի հլու գործիք է, որ ծառայում է միշտ Սահակին: Իզուր Քեոզոս կայսրը այդ տիտղոսները Սահակին շտվեց: Այս բանը նորութիւն չէ մեզ համար: Գալով աղվաներեն գրերին, որ Մեսրոպը հնարեց Հունահայաստանում, տորենացին այնպես է փոփոխում հանգամանքները, որ առնվազն դարմանալի է: Բայց այս, ինչպես և Մեսրոպի ճանապարհորդութիւնը այլակերպութիւն մասին պիտի խոսենք հետո:

Գարազաշյանը («Քննական պատմութիւն», Գ, էջ 216—218) Հունահայաստանի քարոզչութիւն զործում գտնում է քաղաքագիտական վարմունքներ: Կեսարիայի միտրոպոլիտը և Կոստանդնուպոլսի պատրիարքները իրար հետ մրցման մեջ էին կրօնական գերազանցութիւն ձեռք բերելու համար: Կոստանդնուպոլիսը կայսերական մայրաքաղաք լինելով, այնտեղ նստող պատրիարքներն էլ ամենքի վրա առջնակարգ դիրք ուզում էին ունենալ, իսկ Կեսարիայի միտրոպոլիտները մերժում էին այս գերազանցութիւնը և հատկապես Հայոց Եկեղեցին իրենց իրավասութիւն տակ էին ճանաչում: Հու-



նահայաստանի մեջ գործելու արգելքը հետևաբար Կեսարիայի միտ-  
րոպոլիտն է հանել, և այն էլ աշխարհական իշխանության միջո-  
ցով: Սակայն օգուտ քաղելով երկու մրցակիցների հակառակու-  
թյունից իբրև բարձրագույն ատյան, դիմեց կայսեր և պատրիար-  
քին: Այս երկուսի համար էլ Սահակի դիմումը՝ իբրև նշան հպա-  
տակության, հաճելի և շողոքորթիչ էր միանգամայն, մանավանդ  
պատրիարքին, որ թերևս սպասում էր այսպիսի առիթի, ցույց տա-  
լու համար իր վերին իշխանությունը Կեսարիայի միտրոպոլիտի  
վրա: Ուստի սիրով ընդունեց Սահակի խնդիրը և ընդառաջեց և ան-  
շուշտ կայսեր առաջ էլ բարեխոսեց:

Հունահայաստանի քարոզչությունը ազգային տեսակետով մեծ  
օգուտ ունեցավ. սրանով Հայաստանից բաժանված գավառները  
գտնե լեզվով ու գրականությամբ նորից միացան մեծ ամբողջու-  
թյան հետ:

## Գ Լ Ո Ւ Ե Ը

### ՀԻՆԳԵՐՈՐԴ ՔԱՐՈՋՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ

(Լուսավորություն Աղվանից, Բաղասականի, Գարդմանի,  
Վրաց և Տաշրաց)

## 1

Հինգերորդ ճամփորդությունը շորրորդից շատ կարճ ժամա-  
նակով է միայն բաժանվում: Մեսրոպը վերադառնալով Հունահա-  
յաստանից, նպատակ ուներ ո՛չ թե հանգստանալ, այլ ուղղակի  
անցնել Աղվանից երկիրը, որոնց համար արդեն այրուբեն հնարել  
էր Բենիամինի միջոցով: Ուստի մի քանի օր միայն (աւուրս ինչ)  
դադար առնելուց հետո վաղարշապատում, ճանապարհ ընկավ դե-  
պի Աղվանք:

Մեսրոպն իջավ Աղվանից մայրաքաղաքը, որ այն ժամանակ  
դեռ Չողայ քաղաքն էր և ոչ Պարտավը (տե՛ս Մովսես Կաղանկայտ-  
վացի, Բ, դ): Այստեղ նա ներկայացավ Աղվանից Երեմիա եպիս-  
կոպոսապետին և թագավորին, որի անունը Կորյունի մի ձեռագրում  
գրված է Արսվաղ, մյուսում՝ Արսվաղէ, խորենացու մոտ Արսվաղէն,  
Կաղանկայտվացու մոտ նույնպես Արսվաղէն, Կիրակոսի (էջ 97) և  
Օրբելյանի մոտ՝ Ծավաղէն:

Երկուսն էլ սիրով ընդունեցին Մեսրոպին. «Առավել հպատա-  
կությամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի»: Հետո հարցրին իր

գալստյան նպատակը: Մեսրոպը բացատրեց, թե իր նպատակն էր նորագյուտ ազնվաներին գրեթե տարածել ժողովրդի մեջ և նրանց վարժեցնել գրականության և քրիստոնեական կրթության մեջ: Արսվաղեն և Նրեմիան ուրախությամբ ընդունեցին Մեսրոպի առաջարկը և շուտով հրաման հանեցին իրենց իշխանության տակ գտնված գավառներին հավաքել մանուկների բազմությունը, որպեսզի հանձնեն Մեսրոպին դպրության համար: Այսպես հիմնվեցան Աղվանից առաջին դպրոցները, որոնց ծախսը նշանակվեց արքունիքից:

Ավանդվում է, թե Մեսրոպն իր այս քարոզության ժամանակ հիմնել է Շամախիի մոտ ս. Ստեփանոս վանքը, որի համար հետևյալ ծանոթությունն է տալիս «Նոր-դար» լրագիրը, 1887, № 202. «Շամախից 18 վերստ հեռավորությամբ դեպի հարավ, Քիֆլիս և Նրեան գնացող ճանապարհի մոտ գտնվում է Սաղիանի ս. Ստեփանոս վանքը մի վայելուչ բարձրահայաց դիրքի վրա, որ, ըստ ավանդության տեղաբնակների, հիմնված է ս. Մեսրոպը թարգմանելից՝ նրա այս կողմերը եկած ժամանակը»:

Գպրոցների հաստատությունից հետո, Նրեմիա եպիսկոպոսը ձեռնարկեց թարգմանելու Աստվածաշունչը աղվաներին լեզվի, որով, ասում է Կորյունը, «անդէն յական թօթափնլ, վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից, մարգարէագէտք և առաքելածանօթք և աւետարանաժառանգք լինէին, և ամենայն Աւանդելոցն Աստուծոյ, ոչ իւրք անտեղեակք» (էջ 19): Այս խոսքերից երևում է, որ ս. Գրքի ամենամեծ մասը (հատկապես հիշում է Կորյունը Մարգարեությունները, Գործք Առաքելոց և Ավետարան) թարգմանվեցին աղվաներենի, անշուշտ հայ թարգմանության վրայից: Իսկ Արսվաղեն թագավորը հրաման հանեց հետ կենալ բոլոր այն կոապաշտական սովորություններից, որոնք դեռ մնում էին այդ քրիստոնյա ժողովրդի մեջ. «Դարձեալ առաւել ևս երկիրւղածն յԱստուծոյ արքայն Աղուանից՝ միամիտ փութով հրաման տայր սատանայակիր և դիւամոլ ազգին սաստիւ՝ թափել զերծանել յունայնավար հնացելոցն, և հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի»<sup>1</sup>:

<sup>1</sup> Ղ. Աղայան, «Անահիտ», Ա տպ. Քիֆլիս, 1886, էջ 75 ծանոթ.) ասում է, թե այս «սատանայական» ազանդը, որ ըստ Կորյունի չեւեց Մեսրոպը Աղվանքում, կաղանկյալացու մատահատության և այլ անուններով նկարագրած ազանդն է: Այս առթիվ Աղայանը տալիս է նաև կաղանկյալացու այս գլխի աշխարհարար թարգմանությունը: «Անահիտ»-ի մյուս տպագրության մեջ այս հավելվածը չկա:

Աղվանից աշխարհի քարոզութիւնից անմիջապէս հետո տեղի ունեցաւ Բաղասական աշխարհի քարոզութիւնը: Բայց այս քարոզութեան մասին տրված տեղեկութիւնը այնքան հակիրճ, այնքան համառոտ է Կորյունի մեջ, որ կարող է անցողակի հիշատակութիւն համարվել: Ի լրումն դժբախտութեան, խոսքի իմաստը նույնպէս շատ մութ է և պարզելու համար այն՝ պետք կա մի քանի քերականական դիտողութիւններ:

Ահա վասիկ Կորյունի հիշյալ հատվածը. «Եւ յորժամ զայն արարեալ հաւասարութեամբ, և լցեալ զպիտոյն իւրեանց, և զկամացըն յոժարութիւն, ձեռնատու ևս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն ի Բաղասական կողմանս սրբոյ եպիսկոպոսին՝ որում Մուշեղ կոչէին» (Կորյուն, էջ 19):

Հատվածիս առաջին երկու անցյալ դերբայները (արարեալ, լրցեալ) պետք է որ պատկանին Արսվաղենին ու Երեմիային, նմա գերանունը դրված է Մեսրոպի համար. ի՞նչ հոլով է սրբոյ եպիսկոպոսին, սեռակա՞ն թե տրական: Եթե համարենք տրական, այնպէս կհետևի, որ Մեսրոպ օգնել է Մուշեղին և Բաղասական աշխարհի քարոզիչը կլինի Մուշեղը: Բայց այս պարագային նմա բառի գործածութիւնը իզուր եղած պիտի լինի. ուստի չի կարող եպիսկոպոսին տրական լինել: Եթե սեռական է, կարող է լինել հատկացուցիչ վարդապետութեան բառի, որով դարձյալ Մուշեղը կլինի քարոզիչը, և կամ սեռական հոլով ենթակա եղեալ դերբայի: Չի կարող հատկացուցիչ լինել, որովհետև նախ որ այս պարագային պետք պիտի լիներ ասել «սրբամատոյց վարդապետութեանն սրբոյ եպիսկոպոսին» և երկրորդ, որ խոսքը ամենևին իմաստ չի ունենա: Մնում է ընդունել սեռական ենթակա: Այս ժամանակ խոսքի իմաստը պարզվում է հետևյալ ձևով. «Երբ Արսվաղեն և Երեմիա՝ երկուքը միասին կատարեցին այդ բանը, լրացրին իրենց պետքերը և իրենց կամքի փափագածը, երբ Մուշեղ անուն սուրբ եպիսկոպոսը օգնեց Մեսրոպին Բաղասականի քարոզութեան մեջ, այնուհետև...»:

Այս մեկնութիւնից ա՛յն է հետևում, որ Մեսրոպն Աղվանից քարոզութիւնը լրացնելուց հետո, ժամանակավորապէս թողնելով այդ երկիրը, անցաւ Բաղասականի կողմերը (Հյուսիսային Կովկաս): Այստեղ էլ տարածեց քրիստոնեական վարդապետութիւնը: Իրեն օգնական եղավ Մուշեղ եպիսկոպոսը, որ թերևս Բաղասականի առաջնորդն էր կամ եղավ: Քարոզութիւնից հետո, Մեսրոպն իր աշակերտներից մի քանիսին նշանակեց Աղվանից վերակացու, ո-

րոնց մեջ հատկապէս հիշվում է պալատական քահանա Լովնաթան-անուն անձը, և նրանց բոլորին հանձնելով աստվածային շնորհներին, հրաժեշտ տվա՞յթ թագա՞վորին, եպիսկոպոսներին ու ժողովրդին և դիմեց նորից Վրաստան:

Քէն մյուս պատմագիրները շունեն բնավ տեղեկութիւն Բաղասականի քարոզութեան մասին, բայց Խորենացին տալիս է մի քանի նոր մանրամասնութիւններ: Ըստ Խորենացու (Գ, 4) Գողթն գա՞վառի երկրորդ քարոզութեան ժամանակ, Մեսրոպը, որ զբաղված էր շնչելու հեթանոսական մնացորդները այդ գա՞վառում, տեղեկութիւն ստացա՞յթ, թէ կոսպաշտական աղանդի քարոզիչներն ու զըլխավորները գտնվում են Բաղասական երկրի կողմերում. ուստի դիմելով այնտեղ, սկսեց քարոզութիւն և այդ զլխավորներից շատերին ուղղութեան բերա՞յթ, իսկ մնացյալ մի քանիսին, որոնք համառում էին իրենց կարծիքների մեջ, հալածական վտարեց զեպի Լոնաց երկիրը: Հետո Բաղասականի քարոզչական գործին վերակացու նշանակեց Մուշե եպիսկոպոսին, իսկ ինքը դարձա՞յթ Գարգամանի ձորով:

Խորենացու այս հատվածը կարևոր է մեզ համար այն պատճառով, որ հաստատում է մեր տված բացատրութիւնը Կորյունի մութ հատվածին, որ տեսանք քիչ առաջ: Միայն այստեղ Մուշեղը դառնում է Մուշե:

### 3

Նախքան Մեսրոպի ճանապարհորդութեան ընթացքը շարունակելը, հիշենք այն տարբերութիւնները, որ հետին պատմագիրները (Խորենացի, Կաղանկայտվացի, Օրբելյան) ընծայում են Աղվանից ու Բաղասականի քարոզութեան մեջ:

Խորենացին Աղվանից քարոզութիւնը դնում է Վրաց լուսավորութիւնից անմիջապէս հետո. Մեսրոպը իջնում է Աղվանք, Արսվաղենի և Երեմիայի մոտ, որոնք աշակերտներ են հավաքում և նրան հանձնում: Հետո Մեսրոպը արքունիքից կանչում է Բենիամին թարգմանին, նրանց օգնութեամբ հնարում է գրերը և Լովնաթանին վերակացու թողնելով՝ Հայաստան է դառնում: Ահա վասիկ ամբողջ բնագիրը. «Եւ եկն յԱղուանս իջեալ առ Արսվաղէն թագաւոր նոցա և առ եպիսկոպոսապետն Երեմիայ, որոց կամաւ յանձն առեալ զվարդապետութիւն նորա, ետուն մանկունս ընտիրս: Եւ կոչեալ զԲենիամին ոմն շնորհաւոր թարգման, զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Միւնեաց Տէր՝ ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ. որովք ստեղծ զնշանագիրս կոկորդախօս աղխազուր

խժական խեցրեկագունին այնորիկ գարգարացոց լեզուին: Եւ վերակացու թողեալ զաշակերտ՝ իւր զՅովնաթան, միանգամայն և քահանայս կացուցեալ դրանն արքունի, ինքն դառնայ ի Հայս» (Խորենացի Գ, 87):

Ասենք անմիջապէս, թե Կորյունի այն պարզ ու բնական պատմութիւնը այնպէս է խաթարված այստեղ, որ բոլոր դեպքերը խանգարված ու անբնական են դարձած: Ի՞նչ միտք կար աշակերտներ հավաքելու և կրթութեան համար Մեսրոպին հանձնելու, երբ տակաւին Մեսրոպը չէր հնարած աղվաններն գրելը և դեռ նոր պիտի կանչեր շնորհավոր թարգմանին նույն գրերի գլուտի համար: Եվ ինչո՞ւ Մեսրոպը ստիպված պիտի լիներ Սյունիքից կանչելու թարգման, մանավանդ եթե այդ շնորհավոր թարգմանը աննշան մեկն էր (ռմն): Մի՞թե չկար ամբողջ Աղվանքում գտնե մեկ անձ, որ կարենար հայերեն լեզուն հասկանալ: Կարելի՞ է ենթադրել, թե Աղվանից Երեմիա եպիսկոպոսը, որ կրոնապէս կապված էր Հայոց Հայրապետութեան հետ, հայերեն չիմանար և չկարողանար Մեսրոպի փափագը լրացնել: Ո՞վ էր Բենիամին թարգմանի ընկերը, որոնց (որովք) միջոցով կարողացավ Մեսրոպը հնարել աղվաններն գրելը. արդո՞ք Անանիա եպիսկոպոսն էր, ինչպէս ընդունած է Օրբելյանը, և եթե այո, այդ ի՞նչ զարմանալի օգնութիւն է, որ սյունեցի մի եպիսկոպոս պիտի կարողանար տալ, բայց բուն աղվան Երեմիա եպիսկոպոսը չպիտի կարողանար մատուցանել՝ աղվաններն գրելը հնարելու համար:

Բոլոր այս տարօրինակութիւնները կվերանան, եթե ընդունենք, որ Կորյունի պատմութեան համաձայն Բենիամին քահանան աղվան էր, որին պատահեց Մեսրոպը Հունահայաստանում և որին հարցաքննելով կազմեց աղվաններն այբուբենը: Այնուհետև գալով Աղվանք, բաց արեց դպրոցներ և կրթութիւնը տարածեց առանց մի Բենիամինի կամ Անանիայի օգնութեան: Խորենացին այս բոլորը ձևափոխել է հայրենասիրութեամբ: Ինչո՞ւ աղվան լինի Մեսրոպին օգնողը. ապիկ լավ չէ՞, որ հայ լինի. և եթե հայ է լինելու, անշուշտ պետք է որ աղվաններն էլ իմանա, այսինքն պետք է դառնա «շնորհատր թարգման»: Եվ ո՞ւր կարելի էր գտնել այդպիսի աղվանագետ շնորհալի մի հայ թարգման. անշուշտ Աղվանից ամենամոտ նահանգում, այն է՝ Սյունյաց մեջ: Այսպիսով աղվան Բենիամինը դառնում է հայ և այնպիսի մեկը, ինչպէս ներկայացնում է Խորենացին:

Կաղանկայութեան (Բ, գ) բառացի հետևում է հորենացուն, ուստի՝ ամենևին հետաքրքրություն չի ներկայացնում և առանձին քննության արժանի չէ:

Բայց Օրբելյանը, որ բացի հորենացուց, օգտվել է նաև Պետրոս Սյունյաց եպիսկոպոսից, շատ ավելի է մեծացնում խնդիրը: Ըստ Օրբելյանի՝ Բենիամին, ինչպես և Անանիա, Մեսրոպի ընտրելագոյն աշակերտներից են. Սյունյաց երկրի առաջին քարոզության ժամանակ (տե՛ս գլ. վեցերորդ, § 3), Մեսրոպն այս երկուսին նշանակեց թարգման և ուսուցիչ, իսկ երկրորդ քարոզության ժամանակ (տե՛ս հիշված տեղը) Անանիա եպիսկոպոսը ձեռնադրվեց և Բենիամին նշանակվեց Սյունյաց ընդհանուր դպրոցական տեսուչ: Սյունյաց աշխարհի երկրորդ լուսավորությունից հետո, Մեսրոպն Աղվանք գնացած լինելով, խնդրեց Անանիայից, որ իր մոտ գա: Անանիան իր հետ վերցրեց Բենիամինին, գնաց Աղվանք և երեքով միասին հնարեցին աղվաներեն գրերը, դպրոցներ բաց արին, կոապաշտության մնացորդները սրբեցին: Այնուհետև Անանիան (ո՛չ թե Մեսրոպ) դպրոցների և թարգմանչական գործի վրա վերակացու թողեց Բենիամինին և ինքը Աղվանից թագավորից ստանալով շքանշան, դարձավ Սյունիք: Ահավասիկ այդ հետաքրքրական պատմության հարազատ բնագիրը. «Եւ յետ զայս յարդարելոյ (այն է՝ Անանիայի դպրոցներ բանալուց հետո) առեալ ընդ ինքեան զԲենիամին՝ գնաց յաշխարհն Աղուանից առ թագաւորն Ծավաղէն ի խնդրոյ Մեսրոպայ. և արարին ի միասին զիր աղգին այն ընդ խեցրեկագոյն լեզուի նոցա, զմնացեալ կոապաշտութիւնն սրբեցին, և աստուածային վարդապետութեամբն լուսաւորեաց զաշխարհն կրկին անգամ. և եթող զԲենիամին անդ ի վերայ թարգմանութեան դպրոցաց մանկուտոյն, և ինքն Անանիա կամեցաւ անդրէն դառնալ: Իսկ թագաւորն Աղուանից Ծավաղէն, որ էր առաջին Շապուոյ Արտաշէրեան Պարսից թագաւորի թոռն քեռ, պատիւ արարեալ նմա՝ երախտացոյց լինի և պարգևէ զիր նշանակն թագաւորական ոսկէտուտն վառիւ և ի զլուին գունտ ոսկի և ի վերայ խաչ պատուական: Եւ հրամայէ զայն հանապաղ շրջեցուցանել ընդ իւրեանս եպիսկոպոսացն Սիւնեաց ի յիշտակ թագաւորացն Աղուանից:— Զայս ցուցանէ մեզ սուղ ինչ Մովսէս քերթողհայրն և գրովանդակն ճշգրիտ աշակերտ նորին՝ Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս» (Օրբելյան, ԺԾ):

Ընթերցողը նկատում է, թե ինչպիսի՞ ցավալի դրութեան է հասցրած Մեսրոպի գործունեությունը, որի բովանդակ արժանիքը

տրվում է Սյունյաց Անանիա եպիսկոպոսին: Ստիպվում է մարդ մտածելու, թե այսպիսի հանգամանքներում ավելի լավ չէ՞ր, որ Մեսրոպն ամենևին չշարժվեր Վաղարշապատից, և Անանիային հրաման ուղարկեր գալ Աղվանք, գրեթե հնարել ու ժողովրդին լուսավորել: Այս բոլորը արել է Օրբելյանը՝ տեղական հայրենասիրությամբ, բարձրացնելու համար Սյունիքի պատիվը, Սյունեցուն տալով մի ամբողջ երկրի լուսավորությունը, որին իբրև գնահատություն թագավորն էլ իր թագավորական նշաններն է շնորհում: Գուցե Օրբելյանն Աղվանից գահն էլ տար Անանիային, եթե եպիսկոպոսը կարողանար թագավոր դառնալ: Դժբախտաբար կորած է Պետրոս Սյունյաց եպիսկոպոսի պատմությունը, որ միջոց պիտի տար մեզ գտնելու այն միջին աստիճաններից մեկը, որից հետզհետե բարձրանալով, Օրբելյանը հասել է այդպիսի այլակերպ շփազանցություն: Խորենացին այս աստիճանների մեջ դեռ շատ ցածր տեղ է գրավում. սրա մոտ Անանիայի դերը շատ երկրորդական է, և ամեն ինչ ընկնում է Բենիամինի վրա: Մինչև իսկ կասկածելի է, թե արդյոք ըստ Խորենացու Անանիան մասնակցե՞ց գրերի գյուտին, գնա՞ց Աղվանք Մեսրոպի մոտ, թե միայն Բենիամինը գնաց: Անանիայի մասնակցությունը համար Խորենացուց հանվելիք ապացույցը միմիայն մի տառ է (Ք), որ շնչելով՝ կարող է Անանիան հանգիստ նստել իր եպիսկոպոսական առոթի վրա և բավականանալ միայն Բենիամինին ուղարկելով. «Եւ կոչեալ զԲենիամին ոմն շընորհաւոր թարգման, զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց Տէր՝ ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ, որով ստեղծ զնշանագիրս...»: Շեղագիր բառի ք ձայնը պահանջում է, որ Բենիամինի հետ գոնե ուրիշ մեկն էլ օժանդակած լինի Մեսրոպին: Չի էլ կարելի կարծել, թե այստեղ ք գրչագրական վրիպակ լինի, որովհետև նույնը հաստատում է նաև Խորենացուն ստրկորեն հետևող Կաղանկայտվացին. ասելով. «Եւ քօք ստեղծ զնշանագիրս կոկորդախօս... լեուին Գագարացոց»: Բայց հաստատ է թվում, թե Խորենացին այս ք-ով չէր ուզում ակնարկել Անանիային, քանի որ հակառակ պարագային պետք պիտի լինի ասել «զոր անդանդաղ արձակեաց... հաւդեքձ Անանիայի եպիսկոպոսաւ իւրով» և ոչ թե ի ձեռն, այն է «միջոցով»: Եթե Անանիայի միջոցով է ուղարկում, նշանակում է, թե Անանիան չի գնում: Որովհետև ք ձայնը արդարացնելու համար մնում է ընդունել, թե Մեսրոպի ու Բենիամինի գործակիցը Աղվանից Երեմիա եպիսկոպոսն էր. որովհետև հարաբերականը թեև շատ հեռու, բայց կարող է նաև այս անձը հարաբերել: Եվ անշուշտ այդպես է հասկացած նաև Կաղանկայտվացին, որի բառերը հետևյալներն են. «Եվեալ Երանելին Մեսրոպ յԱղուանս՝ մեծավաստակ

ընտիր անօթ Ղոգույն Սրբոյ, առ հայրապետն մեր Ծրեմիա և թաղատրն Արամաղէն, որոց կամաւ առեալ յանձն զվարդապետութիւն նորա որ ըստ շնորհելոյ նմա յաստուածուստ պարզելին՝ Հայոց և Վրաց ետ նշանագիր ի ձեռն նորա հովի սուրբ, հաճեցաւ և նստուն զմանկունս ընտիրս յուսումն, և զՔենիամիին թարգման կոչեալ ի Միւնեաց, զոր Վասակ մանուկ ի ձեռն Անանէի կայսկոպոսի արձակեաց: Եւ նորա եկեալ առ Մեսրոպ, նոսօք ստեղծ զնշանագիրս» (Կաղանկայտվացի, Բ, գ): Գրեթէ այսպէս է նաև Վարդան, որ իբրև Մեսրոպի ընկեր՝ միայն Քենիամիինն է ճանաչում. «Եւ զնացեալ յԱղուանս, ստեղծու և նոցա զիր ըստ նոցա լնչուին, ձեռօք Քենիամիին՝ որ անտի աշակերտեցաւ նմա» (Վարդան, էջ 51):

Ուրեմն Օրբելյանի ամբողջ այս պատմութեան հիմնաքարը նորենացու խոսքի մէջ հարաբերուալը լավ շորոշելն է, և այդ հիմնաքարի վրա է բարձրանում Անանիայի ամբողջ անզո գործունեությունը, որ գուցե Մեսրոպի սովերին էլ արժանի չէ:

Մեզ նման չի մտածում դժբախտարար Վենետիկի Միսիթարյան բանասեր Լ. Բ. Սարգիսյանը, որ, իբրև բացարձակ ճշմարտութիւն ընդունելով Օրբելյանի խոսքերը, շփազանց պակասեցնում է Մեսրոպի դերը, և ընդհակառակը՝ շփազանց մեծացնում Անանիայի դերը Աղվանից լուսավորութեան գործում:

Մեսրոպը, ինչպէս տեսանք, աղվաններն տառերը հնարել էր շունահայաստանում, էլ ուրեմն ի՞նչ պետք կար նորից հնարելու Աղվանքում: Այդ տառերը հնարելու համար իր օգնութեան էր կանչել աղվան Քենիամիին քահանային, էլ ի՞նչ պետք ուներ Սյունեցի Անանիային: Եվ ի՞նչ դատարկ և անբովանդակ խոսքեր են «տառերը... անոնց կենդանի բարբառներուն հարմարեցնելու մասին Անանիայի պետք ունեցալ»:

Հիմնական մեծ պակասութիւնը, որ գտնում ենք Սարգիսյանի մոտ, այն է, որ նա Անանիային համարելով դասական շրջանի հեղինակ և երեց թարգմանիչների կարգից, նրան է վերադրում երկու գրվածք, որոնք ոսկեդարյան հայերեն չեն: Ահավասիկ մի քանի օրինակ հետադասական հայերենի.

Հենց սկզբից (էջ 7) «Յաղագս Յովհաննու... բացահայտելով ... վասն որո՞չ պատճառի» դասական չեն:

էջ 2, տող 5 (ներքևից) փառքամուրեամբ.

էջ 3, տող 14 (ներքևից) ապացոյց և տող 12 բացատրել.

էջ 4, տող 3 և 9 հրաշս.

» 7 անբանանդակելի.

» 8 անգերծանելի.

» 10 անփայտելի.



» 9 (ներքևից) պարապնդեալ.

» 6 (ներքևից) արտափշել.

և այսպես բազմաթիվ բառերու Չեմ խոսում ոճերի, դարձվածների և քերականական սխալների մասին:

Ե՞րբ պիտի սովորեն մեր հայկաբանները հայերենը հայերենից գանազանել:

5

Մեսրոպն Աղվանքից հեռանալով, միտք ուներ անցնել Վրաստան, իր հիմնած դպրոցներին և իր հոտին այցելութուն տալու համար: Աղվանքից Վրաստան երթալու կարճ ճանապարհը, եթե պետք էր Աղվանից երկրի հարավային սահմաններից անցնել, էր իհարկե Կուր գետի մյուս երեսը, որ ուղղակի հասցնում էր Տփղիս, կամ եթե պետք կար երկրի ավելի հյուսիսային սահմաններից անցնել, պետք էր Շաքե Ոստանից (Նուխի) անցնել դեպի Կապիճան (Ձաքաթալա), այստեղից էլ դեպի Սղնախ ու Տփղիս: Բայց Մեսրոպը ոչ առաջին ճանապարհը բռնեց և ոչ վերջինը, այլ կարոտ ժողովրդին ավելի հոգ տանելու համար իջավ դեպի հարավ, և երևի Ուտի նահանգից անցնելով՝ դիմեց դեպի Գարդման: Գարդմանաձոր հասնելու վրա էր, և ահա Գարդման գավառի խուրս իշխանը դիմավորեց նրան, և աստվածասեր երկյուղածությամբ հյուրընկալութուն ընծայելով Մեսրոպին, ինչպես և իր կառավարած երկիրը (Գարդման) նրա տրամադրության տակ դրավ: Կորյունի խոսքերից հայտնի չէ, թե Մեսրոպը հապաղե՞ց Գարդմանում և այս հապաղման ժամանակ ի՞նչ արավ: Բայց ի նկատի ունենալով իր գործունեության անսահման թափն ու եռանդը, անկարելի է չընդունել, թե Մեսրոպը Գարդմանում էլ մնաց գոնե մի փոքր ժամանակ, նույն երկրի կրոնական ու կրթական պահանջները լրացնելու համար: Խորենացին Գարդմանի քարոզութունը դնելով Բաղասականի քարոզութունից անմիջապես հետո (Կաղանկայտվացին էլ Սյունյաց քարոզութունից հետո՝ հտ. Բ, գ), հետևյալ պատճառներն ու գործունեությունն է ընծայում Մեսրոպին: Երբ Մեսրոպը Բաղասականում զբաղված էր կռավաշտական մնացորդները ջնջելով, լսում է, թե նույն աղանդի վարդապետների ընկերներից մի քանիսը անցել են Գարդման, ուստի Գարդմանաձորով անցնելով, գալիս գտնում է նրանց և ուղիղ հավատին դարձնում. «Ինքն դառնայ (ի Բաղասական կողմանց) դ՛Գարդմանայ ձորովն. զի և ի նմա լուաւ լինել յընկերաց նոցին աղանդոյն: Զորս գտեալ, ածէ և զնոսա ի գիտութիւն. ճշմարտութեան, հանդերձ վերստին ուղղութեամբ իշխանին»

Գարդմանայ, որում անուն էր *Խուրա* (Խորենացի Գ, 4): Վերջին «հանդերձ վերստին ուղղութեամբ» ձևը մութ է, բայց ենթադրել է տալիս, թե Գարդմանի *Խուրա* իշխանն էլ հակված էր նույն կապալատական աղանդին, և Մեսրոպն իր քարոզութեամբ վերագարձրեց ուղիղ հավատին: Վերջապես *Խուրա* իշխանը վայելելով Մեսրոպի քարոզութեան օգուտները, ուղեղիբ նշամ նրան դեպի Վրաստան: «Առանկագոյն իսկ վայելեալ ի հիւթ և ի պարարտութիւն վարդապետութեանն, յուշարկէ զերանելին ուր և նրթալուցն էր» (Կորյուն, էջ 20):

6

Նույն ժամանակ Վրաստանում դեռ նոր թագաւոր էր նստել Արծիւ. «Առ որով ժամանակաւ Արծիւ անուն թագաւորեալ Վրաց» (Կորյուն, էջ 20). «Առ որով ժամանակաւ Արծիւ ոմն էր կացեալ թագաւոր Վրաց» (Խորենացի Գ, 4): Ինչպես տեսնում ենք, թագաւորի անունը մի քիչ շփոթ է. Կորյունը դնում է Արծիւ, Խորենացին Արծիւ, ուրիշ ձեռագիր՝ Արշիւ: Սա նույն անձն է, որ Վրաց պատմութեան մեջ կոչւում է Արշիւ, և որի մասին խոսեցիք վերելում: Անունների տարբեր ձևի համար հետեւյալ գիտողութեանն եմ արել «Արարատ» հանդեսի 1898 թվականի էջ 314-ի ծանոթագրութեան մեջ. «Վրացերեն բառից երևում է, որ մեր ձևը սխալ է և այս սխալը առաջացել է մեր երկաթագիր Զ և Զ տառերի նմանութեանից»: Կորյունի հնագոյն բնագրում գրված էր ԱՐՁԻՂ, որ Խորենացու մի ձեռագրում դարձավ ԱՐՁԻՂ, հետո ԱՐՁԻԼ, Կորյունի մի ուրիշ ձեռագրում ԱՐՁԻԻՂ, վերջապես Խորենացու բոլորագիր ձեռագրում Արշիւ ձևն ստանալուց հետո, շ և շ բոլորագիր տառերի նմանութեան շփոթութեամբ դարձավ Արշիւ:

Արշիւ թագաւորը ջերմհոանդ և ուսումնասեր մարդ էր. հոգ տարավ ամելի ծաղկեցնելու Մեսրոպի ձեռքով վերանորոգված քարոզչութեանն ու նրա միջոցով հիմնված կրթական գործը. «որոյ առանկապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն» (Կորյուն, էջ 20): Երբ Մեսրոպը եկավ Վրաստան, նորանոր քարոզութեաններ անելու նպատակ չուներ, այլ այցելութեան տալ իր հիմնած դպրոցներին և աշակերտներին, հորդոր կարգալ նրանց ու քաջալերել ուսման մեջ: Այս պատճառով ման եկավ ամբողջ երկիրը, ուր որ դպրոցներ ու աշակերտներ էր կարգել. «Եւ նորա շրջեալ դամենայն աշակերտօրն, պատուիրեալ կալ ի ճշմարտութեանն»:

Մերոպը դեռ բուն Վրաստանում էր, երբ Գուգարաց նահանգի Տաշրաց գավառի իշխանը՝ Աշուշա, հրավեր ուղարկեց Մերոպին՝ գալ նաև իր իշխանութիան տակ գտնված բաժինը վարդապետելու: Այս իշխանը, որի անունը Կաղանկայտվացին (Բ գ) դնում է Հաշտուշտ և որին «այր պատուական և աստուածասէր» ածականներն է տալիս Կորյունը, Հայոց շորս նշանավոր իշխաններից մեկն էր և կոչվում էր «բղեաշխ Գուգարացուց» կամ «բղեաշխ Վրաց»: Մերոպը միշտ պատրաստ դիմելու այնտեղ, ուր աշխատանքըն է կանչում, ընդունեց հրավերը, անցավ Գուգարաց նահանգը՝ Տաշիր: Աշուշա թե՛ իր անձը և թե՛ իր ամբողջ գավառը Մերոպին հանձնեց. «ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով»: Իսկ Մերոպն այնտեղ էլ ընդարձակ շահով ուսում և քրիստոնեական վարդապետութուն տարածելուց հետո, գավառը հանձնեց Վրաստանի Սամվել եպիսկոպոսի խնամարկութիան և ինքը դարձավ դեպի մեծ Հայք: Եւ նորա ամենասփիւռ վարդապետութիւնն, ոչինչ պակասութեամբ, քան զայլոցն գաւառաց անցուցեալ» (Կորյուն), կամ նույնիսկ ավելի, քան բոլոր մյուսները. «ուր երթեալ՝ լաւագոյնս վարդապետեաց և հաստատագոյնս, քան զամենայն աշակերտեալսն» (Խորենացի Գ, 4):

Մերոպը եկավ Վաղարշապատ, ողջուն տվավ Սահակին ու ամենքին, պատմեց նրանց իր նոր գործերը, «որք իբրև լուան, առաւել գոհանային զպարգևացն Աստուծոյ»:

Գ Լ Ո Ւ Խ Թ

## ՄԵՍՐՈՊԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

### 1

Ինչպես որ Մերոպի աշխարհական կյանքի և իր գործունեության առաջին մասի վրա եղած տեղեկությունները սակավաթիվ են, սակավաթիվ են նույնպես գրերի գյուտից և գրական շարժման սկզբնավորումներից հետո իր վերջին օրերի մասին եղած տեղեկությունները: Սրա համար պիտի բավականանանք Կորյունի տված կարճառոտ և ընդհանուր խոսքերով ու Մովսես Կաղանկայտվացու անվստահելի տեղեկություններով:

Կորյունը պատմում է, թե Սահակը և Մերոպը երկրում այն

երևելի շարժումը գլուխ բերելուց հետո, իրենց անձը ավելն ուսում-նասիրության. իրենց ամբողջ ժամանակը, գիշեր ու ցերեկ, նրանք հատկացրել էին ս. Գրքերի ընթերցանության. և արանով բարի օրինակ էին հանդիսանում իրենց աշակերտներին ու բոլոր մերձավորներին. «Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ լընթերցուածս Գրոց ծախէին հարքն՝ զտիւ և զգիշեր, և նովիմք ծաղկեալք և շահաւետեալք՝ օրինակ բարեաց ուսումնասէր առնթերակայից լինէին. մանաւանդ զի ունէին պատուիրանս զգուշացուցիչս յաստուածակարգ պատգամաւորացն,՝ յորոց առաջինն հրամայէ, թէ Յօրէնս Տնառն խորհնացիս ի տունէ և ի գիշերի. և երկրորդն հանգոյն պատուիրէ թէ մի՛տ դիր ընթերցուածոց մխիթարութեան վարդապետութեան, մի՛ անփոյժ աննէլ զշնորհացդ որ ի քեզ են. յայդ խորհեա՛ և ի զոյն յամենայն. զայդ եթէ առնիցնս և զանձն ապրեցուցես, և զայնտսիկ որ քեզն լսիցենս (Կորյուն, էջ 21)։

Այս ուսումնասիրությանց հետ զուգընթաց ընթանում էին նաև նորանոր թարգմանություններ, որոնցով երկու հայրերը նորածիլ հայ գրականությունը ճոխացնել էին ուզում։ Կորյունը ասում է Մեսրոպի համար, թն գրեց մի խումբ ճառեր, որոնց մեջ հատկապես հոգ էր տարել լեզվի պարզության, ժողովրդին ավելի դյուրամատչելի դարձնելու համար։ Այս աշխատությանց մասին ավելի մանրամասն խոսել վերապահելով ժ՛ն գլխին, անցնենք շարունակելու Մեսրոպի վերջին օրերի կյանքը։

Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհները լուսավորելուց հետո, Մեսրոպն իր գրական գործունեությունը վերջացած չհամարեց, այլ ավելի եռանդով այցելություններ էր անում միշտ ժողովրդին, աշակերտներին և իր հիմնած դպրոցներին, մոտիկից հսկելու համար նրանց կացության վրա, ցույց տալու նրանց թերությունները և քաջալերելու արժանավորություններն ու առավելությունները։ Ամառ և ձմեռ, գիշեր ու ցերեկ, ասում է Կորյունը, անվեհեր ու անդանդաղ քարոզությամբ պարապեց, թագավորների, իշխանների, հեթանոսների և հակառակորդների առաջ Քրիստոսի անունը քարոզեց, ամենցի սիրտը հոգեւոր եռանդով լցրեց, շատ բանտարկյալներ ու կալանավորներ ազատեց, շատ նեղյալներ բռնավորների ձեռքից խլեց, շատ սգավորներ ու հուսահատներ աստվածային հուշով մխիթարեց, շատ անիրավ մուրհակներ պատռեց և առհասարակ ամենքի սրտում ճշմարիտ հավատը դորացրեց. «Եւ այնպէս զամենայն կողմանս Հայոց, Վրաց և Աղուանից, զամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն և զձմեռն, զտիւ և զգիշեր՝ անվեհեր և առանց յապաղելոյ իսկ, իւրով աւետարանական և ողջապատում գնացիւքն՝ առաջի թագաւորաց և իշխանաց, և ամենայն

հեթանոսաց և անընդդիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին: Եւ զամենայն ոգի քրիստոսազգեստ և հոգեղէն վառեաց, և բազում բանդականաց և կալանաւորաց և տագնապելոց և բռնաւորաց թողութիւն արարեալ՝ կորզեալ զնոսա ահաւոր զորութեամբն Քրիստոսի: Եւ բազում մուրհակս անիրաւութեան պատահեաց, և բազում սգաւորաց և կարճամտելոց՝ մխիթարական վարդապետութեամբն զակնկալ յուսոյն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Նօթճեաց, և զամենայն միանգամայն յաստուածապաշտութեան պայման անդ փոխեաց» (Կորյուն, էջ 22):

2

Մեսրոպը հոգ տարավ նույնպես ճգնաւորական կյանքը զորացնելու, որ, ինչպես տեսանք վերը, անմիտ մենակեցութիւնից հետո՝ ուսումնական ինքնակրթական նպատակներ ունեւր այն ժամանակ: Հաստատեց վանականների բազմաթիւ խմբեր՝ գլուղեղում և անապատներում, դաշտերում և լեռներում, անձամբներում և քարայրներում: Ինքը շատ անգամ անձնապես օրինակ տալ ուղեւորվ այս վանականներին, մենաստաններից իր հետ էր առնում մի քանի աշակերտներ և նրանց հետ լեռների քարայրները քաշվելով՝ ճգնութեան էր տալիս իր անձը նրանց հետ. «Զորս ընդ ժամանակս ժամանակս իւրով մարմնովն իսկ օրինակ ցուցեալ, առեալ զոմանս յաշակերտաց յիւրաքանչիւր մենաստանացն, և երթեալ լեռնակեաց, սորամուտ ծակախիթ եղեալ, զառօրէական զկերակուրն խոտաբուս ճաշակօքն վճարէին. այնպէս վշտակեաց տկարութեան զանձն տային: Մանաւանդ որոց հայեցեալ ի մխիթարութիւն առաքելական բանիցն, թէ «Յորժամ տկար եմ վասն Քրիստոսի, յայնժամ զօրացեալ լինիմ». և թէ «Լաւ ևս լիցի պարծել տկարութեամբս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի» (Կորյուն, էջ 22):

Կորյունը նկարագրում է նաև այն կյանքը, որ Մեսրոպն իր աշակերտների հետ անց էր կացնում քարայրներում՝ ճգնաւորութեան ժամանակ: Չկար այնտեղ, ասում է, գինիով արբեցութիւն, այլ հոգու առավելութիւն, նրանք իրենց սիրտը պատրաստում էին հոգևոր երգերով՝ Աստուծո փառքի և գովութեան համար. հոգեշահ գրքեր էին կարդում այնտեղ՝ այս ընթերցումներով իրենց հոգին կրթելու համար: Մեծ ուսուցիչը քաջալերում և հորդորում էր իր աշակերտներին ավելի և ավելի առաջադիմութեան համար: Երբեք էր ամենքի հոգին աստվածային պաշտամունքով և աղերսալիի ազօթքներ էին բարձրանում միշտ առ Աստված՝ ամենքի բարօրու-

մյունը խնդրելու համար. «Անդ էր այնուհետև շարքենայ գինով, այլ առանկույ հոգուով, և պատրաստել զսիրտս երգօք հոգևորօք, ի փառս և ի գովութիւն Աստուծոյ: Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցումածոց՝ հոգեպատում գրոց: Անդ քաշալերութիւն յորդորական վարդապետութեան, առ ի յառաջադէմ ընտրութեանն՝ պսակահաս քրիստոսադիր կիտին: Անդ նույլ հոգուով աստուածապաշտ ծառայութեամբ: Անդ աղօթք աղերսալիք, և խնդրուածք հաշտեցուցիչք վասն ամենեցուն կենաց՝ առ մարդասէրն Աստուած» (Կորյուն, էջ 23):

Այսպէս էին անց կացնում Մեսրոպը և իր աշակերտները իրենց ճգնական կյանքը՝ մշտական աղոթքի, ընթերցանութեան և ուսման մեջ. նրանք այդ անապատներում մնում էին մինչև որ այն կողմի եկեղեցիների երեցներից հրավեր էին ստանում կարևոր մի գործի համար օգնութեան հասնելու: Այն ժամանակ Մեսրոպն իր գործակից աշակերտների հետ անմիջապէս թողնում էր անապատը և հասնելով այնտեղ՝ ուր կանչված էր, կատարում էր խնդրված գործը, և իր հորդառատ քարոզութեամբ ամենքի սրտի մեջ բխում էին աստվածային վարդապետութեան շնորհները: Այսպէս ապրեց Մեսրոպն իր ամբողջ կյանքը՝ իր երկրի և իր աշակերտների համար, իր ժողովրդի և գիտութեան համար, օրինակ ունենալով Հիսուսին, որ քարոզում էր և սովորեցնում, բայց իր քարոզածները առաջին անգամ ինքն անձամբ էր կատարում. «Քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք՝ զանձանց առաքինութիւնս՝ կանոն աշակերտելոցն դնել, մանաւանդ յուշ առնելով զտէրունականն՝ զմիոյ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ. քանզի սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել...» (Կորյուն, էջ 23):

### 3

Մովսէս Կաղանկայտվացի պատմագիրը (Ա, իէ) պատմում է, թէ Մեսրոպն Աղվանից քարոզութեանից հետո, այսինքն՝ իր գործունեութեան այս վերջին շրջանում, Երուսաղէմ ուխտի գնաց և վերադարձին եկավ Ուտայց և Աղվանից կողմերը քարոզելու: Որքան էլ անվավեր լինի այս պատմութեանը, այնուամենայնիվ կարող է զոնն մասամբ ճշմարտութիւն պարունակել, ուստի հարկավոր ենք համարում Կաղանկայտվացու ամբողջ հիշյալ պատմութեանը թարգմանութեամբ դնել այստեղ:

«Աղվանից Գրիգորիս Կաթողիկոսի նահատակութեանից հետո, Արևելքի բարբարոս ցեղերը նորից ընկան կոապաշտութեան մեջ, և ատրուշաններին ուխտ կատարելով՝ հալածանք հանեցին քրիստո-

Նեոսոցյան դեմ: Նախկին վարդապետներից մեկը, որ Հոգուն Սրբոյն շնորհով երեք ազգերի՝ Հայոց, Աղվանից և Վրաց գրեթէ հնարեց, և նրանից հետո Ս. Երուսաղեմ ուխտի գնաց, իր աշակերտների հետ այնտեղից դարձած ժամանակ իր հետ բերավ արծաթեղեն ոսկեհնչուս մի խաչ, որի մեջ ազուցված էր նաև Քրիստոսի խաչից մի մաս: Հայաստանից անցնելով՝ ճանապարհ ընկավ նա դեպի Արևելյան սահմանները՝ Ուտի գավառը. եկավ բնակվեց Գիս կոչված տեղի մոտ, ճախճախուտ և լոռաբույս ճահիճներում: Այնտեղ նորոգելով քրիստոնեոսոցյան հավատը՝ ամուր հիմքերի վրա դրավ. Ավետարանի քարոզությունը տարածեց Ուտիացոց, Աղվանից, Լիփնաց, Կասպից աշխարհներում, Չորա դուռը և ուրիշ բազմաթիվ ժողովուրդների մեջ, որ Ալեքսանդր Մակեդոնացին իբրև գերի բերել և բնակեցրել էր Կովկաս լեռների շուրջը. Գարգառներին և Կամիճիկ Հեփթաղներին հավատի բերելով՝ սովորեցրեց աստվածապաշտության կարգը, որ վաղուց արդեն սովորած ու մոռացած էին: Եվ այս խուժադուժ լեռնականներին քարոզիչ և առաքյալ դառնալով՝ ծանոթացրեց նրանց իրենց լեզվով գրականության: Այստեղից դարձավ հեղինակ բնակվեց ճահիճներում, դժնդակ իշխանների սպառնալիքից ծածկվելու համար: Այնտեղ անտառներում պահվելով՝ օրեցօր զորացնում էր Աստուծոյն եկեղեցիները: Շուտով մոլորության ոգին գրգռեց գազանացած բռնակալների միտքը, որոնք զայրագնաց աշխատում էին գտնել և սպանել նրան: Սակայն երանելին Մաշտոց՝ ս. Հոգուց ազդվելով, փութաց մի փոս փորեց ինչպես հարկն էր, և այդ գետնափոր տեղը դնելով աստվածային գանձը՝ այն է տերունական խաչը, ծածկեց այնտեղ: Այնուհետև իր հավատարիմ և իրեն նման աշակերտները միասին աղոթքի ու խնդրվածքի ապավինելով՝ փոխադարձ կամքով երկու խմբի բաժանվեցին. առաջին խմբի մի մասը գավառները գնաց, իսկ մյուս մասը դիմեց զանազան աշխարհներ քրիստոնեոսոցյունը քարոզելու: Իսկ մյուս խումբը խաչի գտնված տեղում քիչ ժամանակ հետո մարտիրոսական պրսակ ընդունեց. նրանց նահատակության տեղի վրա լուսեղեն նըշաններ և հրաշքներ տեղի ունեցան, որ շատ անգամ տեսնելով անհավատները և հասկանալով, թե մեծ Աստուծոյն նշանն է այն, բոլորն էլ հավատում ու մկրտվում էին: Նորահավատներից մեկը, որ շատ անգամ տեսել էր այն նշանը, խաչի գետնափոր կայանի վրա հողե քառակուսի մի մատուռ շինեց և տախտակապատ մի տապան պատրաստելով՝ նրանց նշխարները այնտեղ ամփոփեց. ամեն տարի էլ ուխտի գնալով՝ կատարում էր նրանց հիշատակը. շատերը նույն տեղում բժշկություն էին գտնում: Հավատացյալները հաստատվելով այս տեղերում, հետզհետե շատացան. և նախ հիմք դնե-

լով խաշի գտնված տեղը, եկեղեցի կանգնեցին. այդ տեղը առաջ կոչվում էր Հին եկեղեցի, իսկ այժմ Գիս է կոչվում: Շատ ժամանակ հետո, Առանշահիկ տոհմից վարազպետժ անուն վեհազգի մի իշխան ուզենալով նորոգել հին եկեղեցին, շխարհացալ քանդել զբմբի աղյուսաշար պատերը, որովհետև այնտեղ էին բնակվում տեղումնական խաշն ու նահատակների նշխարները:

4

Կաղանկայտվացին հաջորդ ի՛նչ, ի՛նչ և ի զլուխներով պատմում է, թե ո՛վ եղավ Մաշտոցի հաջորդը, ի՛նչպես Ռոսմոսքեան թագավորը արշավեց Ուտյաց վրա և կոտորեց Մեսրոպի աշակերտներին, ի՛նչպես Թեոփիլոս զորավարը հավատաց և բռնավորների ձեռքով նահատակվեց: Այս բոլորը թեև կապ չունի Մեսրոպի կենսագրության հետ, բայց որովհետև տալիս է ինչ-ինչ տեղեկություններ նրա մասին, ուստի հարմար ենք համարում ի՛նչ զլուխն էլ ամբողջովին թարգմանել, իսկ մյուս երկու զլուխների նյութը ամփոփելով ներկայացնել այստեղ:

«Սուրբ Մաշտոցից հետո քիչ ժամանակ անցած, իր այն աշակերտները, որ գտնվում էին Աղվանից կողմերում, Սուրբ Հոգու ազդումով միատեղ հավաքվելով ու խորհրդակցելով՝ աշխատեցին մի լավ արդյունքի հասնել: «Ի՛նչ պիտի անենք մենք, ասացին, երբ նա, որ մեր լուսավորության պատճառն էր, վախճանվեց. և ահա մենք իրանից որք մնացինք. եկե՛ք, եղբայրներ, զնանք Երուսաղեմ աստվածային քաղաքը և մեզ առաջնորդ խնդրենք, որովհետև այս արևելյան երկրի առաջին լուսավորությունը Սուրբ Ծղիշեի միջոցով՝ Երուսաղեմից է սկսած»: Այն ժամանակ նրանք պատրաստվեցին, երեք խմբի բաժանվեցին և Աղվանից կողմերից դուրս գալով՝ դիմեցին դեպի Ասորեստանի սահմանները, և հետո Երուսաղեմ հասան, ուր մտնելով աստվածաբնակ եկեղեցին, երկրպագեցին ամենակեցույց կենաց փայտին: Այնտեղ հանդիպեցին հոգեզվարճ աստվածազարդ հայրապետին, ողջույն տվին եկեղեցուն և նրանցից ընդունվեցին խոնարհ սիրով: Սուրբ Մաշտոցի ջանքն ու աշխատանքը բովանդակ պատմեցին սուրբ հայրապետին, թե ի՛նչպիսի հրաշքներով բարբարոսները դարձի եկան: Որ նրանք լսելով, մեծ ուրախությամբ ընդունեցին, շատ խնամք ու մեծարանք ցույց տվին. այնտեղ մնացին շատ օրեր և իրենց կողմը դարձրին երեք աստվածասեր քահանաների, որոնցից առաջինն էր Աթանասիոս. աղաչական խոսքերով համոզեցին նրանց գալ իրենց հետ, որպեսզի իրենց երկրում առաջնորդ նստեցնեն: Նրանք երկրպագություն



և ուխտ կատարելով, երանավետ համբույրով ողջունեցին սուրբ պատրիարքի ոտները և նրա հրամանով ճանապարհ ընկնելով, մշտական ուրախությամբ հետ դարձան ոսկեղեն և արծաթեղեն սպասներով և աստվածային բոլոր սրբություններից շատ նշխարներով, քահանաների հետ: Քառասնորդաց պասի յոթերորդ շաբթում, Զատիկին եկան հասան Արցախի անտառուտ երկիրը՝ Մեծ Կուենից գավառը: Ծանապարհի կիրճերում երկու խմբի բաժանվելով, մի խումբը մնաց աստեղ բլրի հյուսիսային կողմը, իսկ երկրորդ խումբը Տրտուական (Քարթառ) գետից այն կողմ անցնելով, բնակվեց մայրապատ հովտի հարավային կողմը՝ Զղախ կոչված պուրակում, որովհետև ուխտ էին արել Սուրբ Զատիկը այնտեղ տոնելու (գլուխ ԻԸ):

Նույն ժամանակները Ռոսմոսոքեան թագավորը իր զորքերով, Քոթեյական գնդով և Հոնաց բանակով անցնում է Կուր գետը և հարավ է արշավում՝ Հայոց, Վրաց և Աղվանից վրա: Մի խումբ էլ գալիս է Մեծ Կուանք, կոտորում է Մեսրոպի հիշյալ աշակերտներին, որոնք Նրուսաղեմից առաջնորդներ էին բերել: Զորավարի ձեռքն է ընկնում Քազուհի անունով ուտեացի մի զեղեցկուհի, որին զորապետը ուրացնելով կին առնել էր ուզում: Բայց նա Հոսիփսիմեի նման դիմադրելով, վերջապես նահատակվում է, որի վրա լույս ծագելով, զորապետը հավատում է և մկրտվում (Գլուխ ԻԹ): Ռոսմոսոքեան թագավորը վրա է հասնում և երկար համոզելուց հետո, նահատակել է տալիս զորավարին՝ 30 զինվորներով, 2 որդիներով և սրանց հետևող զնդով (գլուխ Լ):

## 5

Կաղանկայտվացու երկրորդ հատորում (գլուխ ԻԹ, Լ, ԼԱ և ԼԳ) պատմվում է Իսրայել ճգնավորի տեսիլքը, որով հայտնվում են Մեսրոպի աշակերտների բերած մասունքները Զղախում. այս առթիվ եպիսկոպոսները թուղթ են գրում Աղվանից Ուխտանես կաթողիկոսին և Զվանշիր իշխանին, և սրանց հրամանով Սուրբ Խաչը Պերոժապատ մայրաքաղաքն են տանում: Այնտեղ Ուխտանես և Զվանշիր երկրպագելով նրան, թույլ են տալիս վերադարձնել իր վանքը: Մի տարի հետո նույն Իսրայելը ցանկություն է ունենում գտնելու նաև Մեսրոպի խաչը. «Զազդումն ցանկության յոյժ ունէր սուրբ երէցն խնդրել զփափագելի խաչն՝ զժածկեալն սրբոյն Մաշտոցի ի Գիս անուանեալ գիւղն, որ յՈւտի գաւառի»: Վերջապես իր հետ առնելով կրոնավոր մի եղբայր, գնում է Հին եկեղեցին և փորելով գտնում է Մեսրոպի խաչը, «որ ունէր առհասարակ հայ, հո-

ոում և ասորի գիր և ցուցանէր ի նմա զոչ զմասն կենդանար-  
մատ փայտին. և կայր անդ նշանն Քրիստոսի արծաթաձող գեղա-  
զանեալ ոսկիազօտ տեսակաւ, որ լաւէտ է ի խաչին Քրիստոսի: Լուրը հռչակվում է, լսում են Եղիազար հայրապետն ու Զվանշիրը, հրամայում են իրենց բերել այդ խաչը: Նրանք տանում են. Եղիա-  
զար և Զվանշիր «սակն յայտնի զնորոզափայլ խաչն Քրիստոսի տե-  
սանէին, որ Սրբոյ Մաշտոցի իւր իսկ ձեռացն լեալ էր, որով զար-  
ձուցանէր զաշխարհս Աղուանից ի կոոցն մոլորութենէ լուսածնու-  
թեամբ աւազանին շնորհաց» և երկրպագում են նրան: Լեւոն խըմ-  
բով գնում են Գիս և օծում խաչն ու եկեղեցին: Եղիազարը Մե-  
րոպի խաչի մեջ եղած Կենաց փայտից մի մասը հանում է և 120  
դահեկանի ոսկու մեջ պատշաճելով, կանգնեցնում է Գիսի եկեղե-  
ցում:

## 6

Գիսի խաչից հետո նշանավոր է նաև Գագայ Սուրբ Սարգսի  
խաչը, որ Պարսկաստանից է բխում և Մեսրոպին վերագրվում:  
Ահա ինչ որ գտնում ենք այս մասին մեր հին մատենագրության  
մեջ:

Առաջին տեղեկութիւնը տալիս է «Յայսմաւորք»-ը (Արաց  
ԻԴ = հունվարի 31), հետևյալ ձևով. Սուրբ Սարգիսը Պարսկաստա-  
նում Մաղանդարանի մեջ նահատակվելուց հետո, թաղվել է Լա-  
միան քաղաքում. «Եւ յետոյ եկեալ մեծ վարդապետն Լայոց Սուրբ  
Մեսրոպ, և առեալ զսուրբ մարմինն Սարգսի և տարաւ ի յօտն Արա-  
գածու և եդ պատուով ի Տուշի (կամ ի յՈւշի), մօտ ի գիւղաքա-  
ղաքն Կարբի, և արար զտեղին վանք հռչակաւոր, որ է մինչև ցայ-  
սօր: Եւ առեալ ատամն մի յատամանց Սրբոյն Սարգսի և տարեալ  
ի Վրաց տուն ի դաշտն Գագայ, եդ ի մեջ փայտեայ խաչի. և օծեալ  
զխաչն՝ կանգնեաց ի վերայ գագաթան բլրին Գագայ, որ կոչի մին-  
չև ցայսօր Գագայ Սուրբ Սարգիս և առնէ մեծամեծ նշանս և սքան-  
չելիս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»<sup>1</sup>:— Այս Ուշիի վանքի  
մասին տեղեկութիւն տալիս է նաև Առաքել Դավրիժեցին (տպ.  
1884, էջ 270—271), զլուխ ԻԶ, հետևյալ բառերով. «Այսպէս և  
վանքն Սրբոյն Սարգսի զօրավարին՝ որ է ի գիւղն Ուշի, շինեալն  
ի սրբոյն Մեսրոպրայ մեծ վարդապետէն մերոյ որ և սա մերձ է ի  
գիւղն Կարբի, որ ի ստորոտս Արագած լեռինն...»: Այնուհետև

<sup>1</sup> Թնագիրը կազմել եմ թավրիզում գտնված երեք ձեռագիր «Յայսմաւորք»-  
ների և տպագրի համեմատութեամբ: Զեռագրերն են՝ Մ 47, էջ 279, Մ 48, էջ 360  
և Մ 49, էջ 283:

պատմում է նույն վանքի նորոգումը Փիլիպոս կաթողիկոսի աշակերտ Ոսկան վարդապետ Երևանցու ձեռքով:

Երկրորդ տեղեկությունը տալիս է Վարդան պատմիչը (Վենետիկ, 1862, գլուխ 26, էջ 145): «Գագ, անուանի բերդ և գաւառ ի Գագկայ թագաւորէ շինեալ, ուր կայ հռչակաւոր և սուրբ ուխտն խաչ և եկեղեցի յանուն Սրբոյն Սարգսի զօրավարին, օրհնեալ ի Սրբոյն Մեսրոպբայ վարդապետէն և թարգմանչէն Հայոց, որ կայ ի գլուխ Գագայ, և հայի ի դաշտն լայնանիստ և երկայնատարած»:

Երրորդ տեղեկությունն ունի Կիրակոս Գանձակեցին (գլուխ ԻԲ, էջ 134). «էր ի Գագն խաչ մի սքանչելագործ առ ամենայն նեղեալս, մանաւանդ առ գերիս. զի որք ապաւինէին ի նա բոլորով սրտի, ինքն իսկ Սարգիս բանայր զդրունս բանտից, և արգելոցն լուծանէր զերկաթս, և առաջնորդէր մարմնաւոր տեսլեամբ ի տեղիս իւրեանց. և համբաւ սքանչելեացն տարածեալ էր ընդ ամենայն ազգս. զոր կանգնեալ ասեն զնա Սրբոյն Մեսրոբայ վարդապետին մերոյ»:

Վերջապես շորորդ՝ մի փոքր տեղեկություն էլ գտնում ենք Սուրբ Սարգսի շարականի մեջ. «Խաչաշարշար սուրբ դիտապետ նշանագործ անուամբ ի խաչ և յեկեղեցի, առաւել պայծառ ի գրլուխս Գագայ, ի գագաթան տեղւոջն օրհնեալ Սրբոյն Մեսրոպայ»:

Սրա նման մի փոքրիկ տեղեկություն էլ տալիս է Մաղաքիա արեղան (հրտ. Պատկանյանի, էջ 34). «Երթեալ ի Գագ առ ատենահաս Սուրբ Սարգիսն, զոր օրհնեաց երանելի և սուրբ վարդապետն Մեսրոպ»:

Ավելորդ եմ համարում պատմել թուրքերի արշավանքները Գագայ խաչի վրա և խաչի ազատումը հրաշքով, ինչպես պատմում են Սամվել Անեցին (էջ 138) և Վարդան պատմիչը (579=1130 թ., էջ 123):

Գ Լ Ո Ւ Խ Ժ

## ՍՈՒՐԲ ԳՐԳԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 1

Սահակը և Մեսրոպը ամբողջ Հայաստանի, Վրաստանի և Ադվանից զանազան գավառները կրթությամբ ու քրիստոնեական վարդապետությամբ լուսավորելուց հետո, ձեռնարկեցին հատկապես հայկական դպրությունը ծաղկեցնելու: Այն ժամանակ տիրող գաղափարների համաձայն, այս երկու գործիչների բուն նպատակը

ժողովրդի հոգևոր ու կրոնական կրթութիւնը լինելով, բնականաբար պիտի աշխատեն ամենից առաջ հայերենի թարգմանել և Գիրքը, եկեղեցական պաշտամունքի վերաբերյալ ուրիշ գրքեր, և վերջապես հին եկեղեցական նշանավոր հայերի թողած լավագույն կրոնական ու վարդապետական աշխատութիւնները: Աստվածաշնչի թարգմանութիւն գործը նոր շարժի սկսվելու: Արդեն շատ տարիներ առաջ, զեռ ասորական հողի վրա եղած ժամանակ, գրերի գյուտից անմիջապէս հետո, Մեսրոպը Սամուսատ քաղաքում սկսել էր թարգմանել և Գրքից իր սիրած հատորը՝ Սողոմոնի Առակաց գիրքը: Այս գրքի թարգմանութիւն ժամանակ, օգնական էին Մեսրոպին իր երկու հասուն աշակերտները՝ Լովհան Եկեղեցացի և Լովսեփ Պաղեսցի: Նույնիսկ Լուսինոս հույն գրիչը սկսել էր գրի առնել հիշյալ թարգմանութիւնը: Այնուհետև, երբ Մեսրոպը Լայստան դարձավ և Վաղարշապատում սովորեցնելով իր հետք գրերը Սահակին ու մյուս ազգակիցներին, անցավ Մարաց կողմերը քարոզելու. այդ քարոզութիւն ժամանակ, ինչպէս տեսանք, սկսեց առձեռն թարգմանել Ավետարանը և գրի առնելով սովորեցնել ժողովրդին՝ հասկանալի լեզվով: Մյուս կողմից Ալրարատում լուռ չէր Սահակը. նա ևս իր աթոռանիստ քաղաքում և նրա շրջակա վայրերում քարոզում էր և Գիրքը, մաս-մաս թարգմանելով հայերենի: Թե՛ Մեսրոպի և թե՛ Սահակի համար և Գրքի թարգմանութիւնը ծանր գործ չէր: Իրենց երկար քարոզչական գործունեութիւն ժամանակ անշուշտ հարյուրավոր անդամներ կարգացել, բերանացի թարգմանել ժողովրդին և գրեթե անգիր էին արել: Այնպէս որ քիչ ժամանակում ունեցանք և Գրքի բազմաթիվ գրքերի հայերենի թարգմանութիւնը, ինչպէս Մովսեսի Լեզամատյանի, Մարգարեութիւնների, Ավետարանի, Պողոսի և մյուս առաքյալների թղթերի: Ահա Կորյունի բառերը այս մասին՝ պատկերավոր ձևով. «Օրէնսուստյց Մովսէս՝ մարգարէական դասուն (գործիական հոլով՝ «դասուով») և յառաջադէմն Պաղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց Աւետարանան Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն (այն է Սահակ և Մեսրոպ) հայաբարբառք հայերենախօսք գտան» (էջ 13):

Այս թարգմանութիւնը՝ իրրև առօրյա անմիջական պետքերը լրացնելու նպատակով եղած առձեռն թարգմանութիւն, շատ հապճեպով կատարված լինելով, շունք այն մեծ արժանիքը, որով մեր և Գրքի այժմյան թարգմանութիւնը նշանավոր է հանդիսացած: Կորյունն այդ թարգմանութիւնը կոչում է «գլխառաջագոյն դյանկարծազիտ զփութանակի ղթարգմանութիւնս» (էջ 21): Այստեղ կարևոր է փութանակի բառը, որ փոխառութիւնը կրկնում է նաև իտրենա-

ցին (Գ, կա) ուրիշ առթիվ, «Զոր առեալ Մեծին Սահակայ և Մես-  
րոպայ, դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փու-  
թանակի, հանդերձ նոքօք վերստին յօրինեալ նորոգմամբ»: Տպա-  
դիրները ունեն «... զմիանգամ թարգմանեալն, փութանակի հան-  
դերձ նոքօք...», իսկ Ե. Վ. Պարոնյանը՝ ստորակետը փոխադրելով  
հաջորդ բառի վրա, փութանակի բառը կապվում է ոչ թե երկրորդ  
թարգմանության, ինչպես կարծվել է, այլ հենց առաջին թարգմա-  
նության, ինչպես ասում է նաև Կորյունը (տե՛ս Նորայրի Քննասե-  
րը, Ա, էջ 14): Այս փութանակի թարգմանությունը մեր մատենա-  
գրության պատմության մեջ հայտնի է ս. Գրքի առաջին քաղամա-  
նուրիւն անունով:

Այս առաջին թարգմանության մասնակից են եղել նախ Մես-  
րոպը, որ կատարել էր Առակաց գրքի թարգմանությունը դեռևս  
Սամուսատում, երկրորդ՝ Հովհան Ծկեղեցացի, երրորդ՝ Հովսեփ  
Պաղնացի, որոնք օգնել էին այս թարգմանության մեջ և անշուշտ  
հետո էլ, և վերջապես Սահակը, որի աշխատության արդյունքն է  
անշուշտ ս. Գրքի թարգմանության ամենամեծ մասը: Այս կետը  
տարօրինակ չպիտի թվի մեզ: Հայոց ազգը երկու գլխավոր կարիք  
ունեի այն ժամանակ. առաջինը՝ կենդանի խոսքով քարոզություն  
և նորագլուտ գրերի ուսումը, երկրորդ՝ այս նախնական կրթու-  
թյունն ստանալուց հետո՝ շարունակելու և վայելելու համար հայե-  
րեն լեզվով գիրք: Երկու նշանավոր գործիչներ ունեինք մենք էլ այն  
ժամանակ, Սահակ և Մեսրոպ. առաջինը այնպիսի ծերունի, պատ-  
կառելի դիրքի ու աստիճանի տեր, երկրորդը համեմատաբար ավե-  
լի երիտասարդ, չափազանց աշխույժ և չափազանց գործունյա վար-  
դապետ: Կրթության ու քարոզության գործը պահանջում էր ան-  
հանգիստ կյանք, աշխարհից աշխարհ ու քաղաքից քաղաք թափա-  
ռում, անվերջ տքնություն ու ժիր գործունեություն, որ անհարմար  
էր Սահակի հասակին և դիրքին, բայց պատշաճ՝ Մեսրոպի աշխույժ  
բնավորության, անկոուն եռանդին ու անպարտաս հոգուն: Ուստի  
ա՛յս ընտրեց Մեսրոպը. իսկ ս. Գրքի թարգմանությունը, որ նստա-  
կան, հանդարտ կյանք ու ինքնամիտք աշխատություն էր պահան-  
ջում, հանձն առավ Սահակը: Մինչդեռ Մեսրոպը Փայտակարան,  
Գողթն, Սյունիք և այլ տեղեր քարոզությամբ և դպրություն տարա-  
ծելով ման էր գալիս, այստեղ, Վաղարշապատի Հայրապետանո-  
ցում նստած, Սահակը թարգմանությամբ էր պարապում:

Ընդունել պետք է, թե ս. Գրքի այս առաջին թարգմանությունը  
եղավ Մեսրոպի Փայտակարան քարոզության զնացած շրջանում,  
որ եթե համարենք, թե ունեցավ մեկ տարվա տևողություն, ս. Գրքի  
թարգմանությունն էլ մեկ տարվա գործ եղած պիտի լինի (կատար-

ված փութանակի): Այնպես որ, երբ Մեսրոպը Փայտակարանի քարոզությունից վերադարձավ Վաղարշապատ, ս. Գրքի թարգմանությունը գրեթե պատրաստ էր, և եթե կային մի քանի պակաս մասեր, նրանք էլ երկուսը՝ միասին գործակցություններ, շուտով վերջացրին: Այս բանը հետևում է Կորյունի այն մանրամասն հիշատակությունից, որ ղեռն է Փայտակարանի քարոզությունից անմիջապես հետո և Վաղարշապատի վարդապետանոցի բացումից անմիջապես առաջ, և որ մեջ բերինք մի քիչ վերը (Հեղամատյան, Մարգարեություններ, Ավետարան, Պողոսի և մյուս առաքյալների թղթերը):

Ըստ այսմ բոլորովին սխալ պետք է համարել այն տեղեկությունը, որի համեմատ ս. Գրքի առաջին թարգմանությունը կատարված է Սամուսատում՝ Մեսրոպի ձեռքով. այս մասին ընդարձակ տե՛ս գլուխ տասնհինգերորդ, § 2:

## 2

Ամենից առաջ պետք է ստուգել, թե ի՞նչ լեզվից թարգմանվեց ս. Գրքի այս առաջին թարգմանությունը: Այս կետը շատ կարևոր է՝ իմանալու համար, թե ո՞ր լեզվի ազդեցությունը կրեց մեր մատենագրությունը իր առաջին քայլերին:

Մեր բանասերների մեջ ընդհանրապես ընդունված կարծիքն այն է, թե ս. Գրքի առաջին թարգմանությունը եղել է ասորերեն օրինակի վրայից: Այս կարծիքի աղբյուրն է հորենացու տված հետևյալ վկայությունը. «Ինքն դառնա ի Հայս, և գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յասորոյն՝ յոչ լինելոյ յունի: Քանզի նախ ի Մերուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ շտային պարսիկ վերակացուքն յոյն ուսանել դպրութիւն ումեք յիւրեանց մասինն, այլ միայն ասորի» (Խորենացի Գ, ծղ): Ստեփան Մալխասյանը, «Դասընթաց Հայոց մատենագրութեան պատմության» (էջ 60), քննելով է մինչև իսկ այն խնդիրը, թե ասորական ո՞ր բնագրից է եղած հիշյալ թարգմանությունը: Այժմ գոյություն ունեն ասորական շորս թարգմանություն, որոնց մեջ ամենահինը կոչվում է Պեշիտտա, որ նշանակում է «պարզ, անպաճույճ»: Սրա թարգմանության ճիշտ ժամանակը հայտնի չէ: Ավանդությունն ասում է, թե նրա մի մասը թարգմանված է Սողոմոնի ժամանակ. ոմանք այս թարգմանությունը ընծայում են Աբգարին, ուրիշներ՝ Քաղեոս առաքյալին: Այս բոլոր ավանդությունները՝ թեև սուտ, բայց ցույց են տալիս, թե թարգմանությունը կատարված է շատ հին ժամանակ: Հայտնի է գտնել, որ Գ դարի ասորի մատենագիրները այս թարգմանությունից

են բերած իրենց վկայութիւնները, որից երևում է, թե Պեշիտտան Գ դարում արդեն գոյութիւն ունեւր և հավանաբար թարգմանված պիտի լինեւր Ա կամ Բ դարում: Մյուս երեք ասորական թարգմանութիւնները կատարված են Ծ դարում: Հետևաբար պետք է ենթադրել, թե այն ասորական օրինակը, որի վրայից Սահակը և Մեսրոպը կատարեցին ս. Գրքի առաջին հայերեն թարգմանութիւնը, էր Պեշիտտա կոչված ասորական բնագիրը:

Այս կարծիքը, ինչպես ասացինք, ընդհանուր ընդունված է մեր բանասերների մեջ, և որչափ ինձ ծանոթ է, չէ եղած բնավ մեկը, որ կասկած հայտնեւր այս մասին: Միայն մանրակրկիտ քննադատ ու խորունկ մտածող հայկաբան Ա. Մ. Գարագաշյանը, Պոլսի Ազգային կենտրոնական վարժարանի հայ մատենագրութիւնի դասընթացի ժամանակ նկատել է, թե հայերեն ս. Գրքի առաջին թարգմանութիւնը կասկածելի է դնել ասորերենից: Ձեռքի տակ շունենալով այդ անտիպ աշխատութիւնը, մյուս կողմից բոլոր աշակերտական տետրակներս գրավված լինելով օսմանյան կառավարութիւնի կողմից, շեմ կարող մանրամասն մեջ բերել այն պատճառաբանութիւնները, որով առաջնորդված էր ուսուցիչս՝ այդ կարծիքը փաստաբանելու համար: 1892—1893 թվականների հիշողութիւններս դեռ ասում են ինձ, որ Գարագաշյանի ուժեղ փաստը այն կետն էր, թե անկարելի բան էր, որ Մերութանը կարողանար այնպիսի կոտորած գցել հունարեն ձեռագրերի մեջ, որ գոնե մեկ օրինակ ողջ շմնար: Ըթե ենթադրենք մի պահ, որ նույնիսկ բնաջինջ եղած լինեին Հայաստանի բոլոր հունարեն ձեռագրերը, միթե չէ՞ր կարող Մեսրոպը Սամուստում, այսինքն հունական այդ միջավայրում եղած ժամանակ մի լավ օրինակ գնել և հետը Հայաստան բերել. կամ թե Սահակը չէ՞ր կարող թուլտութիւն ստանալ և մոտակա Հունահայաստանից մի օրինակ բերել տալ: Վերջապես հունարեն չէ՞ր այն օրինակը, որի վրայից Մեսրոպն արեց իր Առակաց գրքի թարգմանութիւնը Սամուստում: Ավելացնենք այստեղ Մարկվարտի կասկածը նույնիսկ Մերութանի գիրք այրելու դեմ: Բուզանդը, ասում է Մարկվարտը («Պատմութիւն հայ նշանագրերու», էջ 5), որ Մերութանի իշխանական գործերին ընդարձակ տեղ է նվիրած (գիրք Դ, գլուխ ԻԳ մինչև գիրք Ծ գլուխ ԽԳ), «եկեղեցական հույն գրքերու կարծեցյալ այրման մասին որևէ լուր հաղորդած չէ»: նույնպիսի դատողութիւններ ունեն նաև Յնտգլյանը («Անահիտ», 1905, էջ 240) և Խալաթյանը (Արմ. Արշակիւն, էջ 324), որոնք շեմ ընդունում, թե հայերեն ս. Գիրքը թարգմանված լինի նախապես ասորերենից, այլ՝ հունարենից:

Գարագաշյանի հիշյալ պատճառաբանութիւնները ձգտում են

ի դերն հանել հորենացու վերի վկայութիւնը: Բայց ի՞նչ ապացույց ունինք, թե այդ վկայութիւնը անպատճառ ս. Գրքի թարգմանութիւնն համար է և ոչ թե ուրիշ զանազան եկեղեցական գրքերի: Խորենացու խոսքերը այնպէս ընդհանուր են, որ գրեթէ անկարելի է ս. Գրքի համար ասված կարծել, և ընդհակառակը, շատ պարզ ու հասկանալի կերպով կարող են նշանակել ընդհանուր եկեղեցական հայրերի գրքերը: Մանավանդ որ, ինչպէս արդեն նկատեցինք, Խորենացին ս. Գրքի առաջին թարգմանութիւնը մի անգամ արդեն Մեսրոպին տված լինելով (Խորենացի Գ ծգ), չէր կարող երկրորդ անգամ էլ Սահակին տալ. հակառակ պարագային հարկ էր ընդունել ս. Գրքի երեք հայերեն թարգմանութիւն: Սրանից հետևում է, թե Խորենացու վկայութիւնը ս. Գրքի համար չէ, այլ ուրիշ եկեղեցական գրքերի:

Թե զուր է կարծել, որ հայերեն ս. Գիրքը առաջին անգամ ասորերենից է թարգմանված, ունենք այս մասին նաև Կորյունի փառավոր վկայութիւնը, որի համաձայն հայերեն առաջին քարգմանութիւնը եղած է հունարենից: Ահավասիկ Կորյունի հիշյալ վկայութիւնը. «Իսկ Սահակայ զեկեղեցական գրոց զումարութիւնն՝ կանխաւ [ի] յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, և բազում ևս զհայրապետաց սրոց զճշմարիտ զիմաստութիւնն: Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Սղնական՝ զչաստաշարոյն զյանկարծագիտ զփութանակի զթարգմանութիւնս, հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք, և շատ ևս մեկնութիւն գրոց թարգմանէին» (Կորյուն, էջ 21): «Սկեղեցական գրոց զումարութեան մէջ» պետք է հասկանալ նաև ս. Գիրքը, եթե ո՛չ միայն ս. Գիրքը, իսկ մյուս գրքերը մտնում են «սուրբ հայրապետների ճշմարիտ իմաստութեան» և «գրոց մեկնութեան» մեջ:

### 3

Կասկածներին և տարապարտ կարծիքներին գործնականապես վերջ պիտի տար անշուշտ ս. Գրքի առաջին թարգմանութեան քննութիւնն ու համեմատութիւնը, եթե սակայն մնացած լինելու Դրժբախտարար ս. Գրքի երկրորդ թարգմանութեան հրատարակումից հետո՝ առաջինը կամաց-կամաց հետ քաշված և հուսկ ապա բոլորովին անհետ է եղած: Միայն 1896 թվականին ուսուցչապետն Փրիգոր Խալաթյան էջմիածնի ձեռագրատան մեջ գտավ Մնացորդաց Ա և Բ գրքերի բոլորովին տարբեր մի թարգմանութիւն, որ Առաջին թարգմանութեան մասը լինելու հավանականութիւնն էր



ընծայում: Ստուգվեց, որ նույնպիսի մի ձեռագիր կա նաև Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռագրատան մեջ: Երկու ձեռագրերի համեմատությամբ նույն գրքերը շուտով հրատարակվեցին Լազարյան ճեմարանի կողմից, Գրիգոր Խալաթյանցի ձեռքով (Մոսկվա, 1899): Այսպիսով աշխատությունը ամենքի տրամադրության տակ էր դրված և կարելի էր սպասել, որ տեղի կունենա մասնագետների ուսումնասիրություն, որով վերջնականապես պիտի ստուգվեր կասկածի տակ եղած խնդիրը: Դժբախտաբար, որչափ մեզ հայտնի է, ոչ ոք չզբաղվեց այս հարցով: Եվ միակ ջննությունը, որ մնում է այս առթիվ, այն փոքրիկ դիտողությունն է, որ Խալաթյանը գրել է հրատարակության առաջաբանում, որից արտատպում ենք նաև մենք:

«Գալով այն խնդրին, թե նորագյուտ Մնացորդաց գրքերը արդարև ասորերենից են թարգմանված, այս մասին ես թույլ կտամ ինձ այսպես ձևակերպել իմ կարծիքս՝ թողնելով խնդրի մանրակրկիտ հետազոտությունը և վերջնական եզրակացությունը մասնագետ ասորագետներին:— Մնացորդաց գրքերի ասորերենը, զոնե այն, որի հետ ես համեմատել եմ մեր նորագյուտ թարգմանությունը, սակավ նմանություն ունի մերինի հետ և, ընդհակառակը, ավելի մերձենում է Հունականին կամ Յոթանասնից. շատ ավելի մոտ է մեր նորագյուտին Եբրայականը: Այնուամենայնիվ ես ենթադրում եմ, որ Մնացորդաց գրքերի առաջին հայերեն թարգմանությունը կատարված է եղել ասորերենից՝ այն հնագույն ասորերեն թարգմանությունից, որ ժանոթ է Թարգում կոչումով, որ՝ ըստ կարգին, շատ մոտ էր Եբրայական բնագրին՝ իբրև սորանից թարգմանված, և որ հետո անհայտացավ, նորա տեղը հաջորդելով Հունականից կամ Յոթանասնից ասորի թարգմանությունը.— ճիշտ այնպես, ինչպես պատահեց հայերեն Աստվածաշնչին»:

Ասորերենի կողմն է նաև J. A. Robinson, որ իր «Texts and studies» աշխատության մեջ (տպ. 1895, vol. III. № 3, էջ 72—98) խոսում է նոր Կտակարանի հայ թարգմանության վրա: Նա գտնում է, որ հայերեն բնագրի հունարենից տարբերությունները ճիշտ նույն են Սինյակական ասորի կրկնագիր բնագրի հետ, որ թարգմանված էր Բ կամ Գ դարում, և 1895 թվին նոր էր գտնվել: Սրանից հետևում է, որ հայերեն նոր Կտակարանը նախ թարգմանված է եղել այս ասորի բնագրից, հետո հունարենի վրա սրբագրված, բայց այնպես, որ հին ասորի բնագրի հետքերը դեռ մնում են (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1896, էջ 87):

Անգլիացի հայագետ Կոնիքիրը գրել է մի ջննադատություն այս աշխատության մասին («The armenian version of the New

Testaments», ապ. «The Academy» հանդեսում, 1896 փետրվար, № 1239, էջ 98—99) և ուշադրություն է հրավիրում հենց մեզ հետաքրքրող կետի մասին: Նա գտնում է, որ թեև Կորյունը և Փարպեցին հունարենից են դնում հայերեն թարգմանությունը, իսկ ետրենացին՝ ասորերենից, բայց այժմ պարզվեց, որ իրավունքը ետրենացունն է: Նոր Կտակարանի հայ թարգմանության շեղումները հունարենից՝ նույն են վրացական օրինակի հետ և հայերենն ու վրացերենը նույնանում են հիշյալ ասորի Մինայական բնագրի հետ: Սրանից հետևում է, որ վրացերեն թարգմանությունն էլ կատարված է ասորական նույն բնագրից (ըստ Մառի՝ հայերենից), որ հետո, ինչպես հայտնի է, սրբագրվեց ս. Նվթիմեոսի ձեռագրով 1026 թվին (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1896, էջ 87—88):

Մնացորդաց գրքի համեմատական քննությամբ զբաղվել է նաև Լ. Ք. Զրաքյանը («Բազմավէպ», 1900, էջ 117—122): Այս յուրը ու կոկիկ հոդվածի մեջ Զրաքյանը վերցնում է նորագյուտ Ա Մնացորդաց գրքի ԺԱ գլխի 11—19 համարները և մեր սովորական թարգմանության, ասորականի և եբրայականի հետ համեմատության դնում դեմ առ դեմ: Բայց համեմատության եզրակացությունն այն է լինում, որ «անծանոթ է յուր բնագիրն ուսկից եղած է այս թարգմանությունս» (էջ 122):

Այս ուղիղ եզրակացությունը ընթերցողին շոշափելի դարձնելու համար՝ ես էլ դնում եմ այստեղ նորից մի համար (Ա Մնացորդաց ԺԱ 18), որ եղածների մեջ ամենից ցայտունն է: Նախ դնում եմ նորագյուտ թարգմանությունը, երկրորդ՝ ս. Գրքի մեր սովորական օրինակը (որ համեմատելով հունարեն Յոթանասնից օրինակի հետ, գտել եմ, որ բառ առ բառ նույն է), երրորդ՝ Եբրայական օրինակը (որ ես թարգմանել եմ եբրայերենից հարազատորեն, համեմատելով անգլիական պաշտոնական թարգմանության հետ.— Զրաքյանի թարգմանությունը հարազատ չէ) և չորրորդ՝ Ասորականը, որ վերցրել եմ ուղղակի Զրաքյանից: Մատնանիչ եմ անում վերջին «իր ի նուէրս պատարագաց» բառերը, որ ո՛չ մեկի մեջ չկա և ցույց է տալիս նորագյուտի անկախությունը բոլորից (տե՛ս էջ 239):

Ս. Գրքի թարգմանության ուսումնասիրության նվիրված մի պատվական աշխատություն է Լ. Պ. Էսապալյանի «Տատիանի համարարանն և հայերէն Աւետարաններու առաջին թարգմանութիւնը» (Վիեննա, 1937): Հեղինակը այս գրքում ամփոփել է բոլոր եվրոպացի քննիչների (Macler, Cuendet, Lyonnet, Merk, Mariès, Colwell, Blake և այլն) կարծիքները և տվել իր եզրակացությունը:

Այս գրքից երևում է, որ

Ա. Հայերեն Ավետարանները այնքան համապատասխան են

2. Մեր ոսկեդար-  
յան քարգմանու-  
թյունը  
Եւ պատահեցին  
երեքն զբանակ  
այլազգեացն, և  
հանին շուր ի  
ջրհորոյն Բեթղե-  
հեմի որ է[ր] առ  
դրանն, և առին  
և եկին առ Դա-  
ւիթ. և ոչ կամե-  
ցաւ Դաւիթ ըմ-  
պել զայն, և նու-  
իրեաց զայն Տե-  
առն:

1. Եւրազյուար  
Եւ անդէն վաղ-  
վաղակի երեքն  
յարձակեցան ի  
վերայ զնդին այ-  
լազգեաց և ըզ-  
գունդն պատա-  
ռեցին, և շուր ա-  
ռեալ բերին ի  
ջրհորէ անտի ի  
Բեթղահէմ, որ էր  
մերձ առ դրանն,  
Եւ առեալ Դաւիթ  
ոչ կամեցաւ ըմ-  
բել ի շրոյ ան-  
տի, այլ զոհէր  
զնա առաջի Տեա-  
ռըն իբր ի նուէրս  
պատարազաց:

3. Երայականը  
Եւ երեքն այնո-  
քիկ անցին ընդ  
բանակն այլազ-  
գեաց և հանին  
շուր ի ջրհորոյն  
Բեթղեհեմի, որ  
էր առ դրանն, և  
առին և բերին  
առ Դաւիթ, այլ  
ոչ կամեցաւ Դա-  
ւիթ ըմպել, և  
նուիրեաց զայն  
Տեառն:

4. Ասորականը  
Եւ վաղվաղակի  
զայն լուեալ ե-  
րիցունց արան-  
ցըն այնոցիկ,  
պատահեցին և  
մտին ի բանակն  
այլազգեաց, և  
անցեալ հանին  
շուր ի մեծէ ջր-  
հորոյ անտի, որ  
էր ի Բեթղեհէմ  
առ դրան քաղա-  
քին, և առեալ  
բերին և ընծա-  
յեցին Դաւիթի,  
որ սակայն ոչ  
կամեցաւ ըմպել  
զայն, այլ եհեղ  
զայն առաջի Տե-  
առն:

հունարեն բնագրին, որ կարծես թե նրա վրայից կաղապարված (կամ ընդօրինակված) լինեին: Սրա ապացույցներն են՝

1. Հատուկ անունների նույնությունը, մինչև անգամ պահելով հոլովական ձևերը, ինչպես՝ Փիլիպպէ, Թէոփիլէ, Ղազարէ, Յովհաննու...

2. Հայերենը հունարենի նման թարգմանությամբ դնում է այն արամեերեն նախադասությունները, որոնք ասորականում չկան. այսպես են Մատթ. Իէ 46, Մարկ. Ե 41, Է 11, 34, Հովհ. Ա 38, 41, 42, Թ 7:

Մատթ. Իէ 46. Եւ զինն ժաման գոչեաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ, էլի, էլի, լամա սաբաթանի, այսինքն է, Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս:

Մարկ. Ե 41. Եւ կալեալ զձեռանէ մանկանն՝ ասէ ցնա, Տալիթա, կո՛ւմի, որ թարգմանի, Աղջիկ դու, քեզ ասեմ, արի:

Մարկ. է 11. Եւ դուք ասէք, Եթէ ասիցէ ոք ցհայր կամ ցմայր, Կորբան, որ է պատարագ, զոր լինէն օգտեսցիս:

Մարկ. է 34. Հայեցաւ յերկինս, յոգտց եհան և ասէ, Եփփաթա, որ է բացիր:

Յովհ. Ա 38. Եբրե դարձաւ Յիսուս և նստե զնստս զի երթալին զհետ նորա, առջ ցնտաւ. Չի՞նչ լռեղրէք. նորա առնն ցնա, Թարբի (որ Բարզմանեալ կոչի Վարդապետ), ո՞ր են օթեանք թո:

Յովհ. Ա 41. Գտանէ սա նախ զեղբայր իւր զՍիմոն, և առ ցնա, Գտաք զՄեսիայն (որ Բարզմանի Քրիստոս):

Յովհ. Ա 42. Սա ած զնա առ Յիսուս, հայեցեալ ընդ նա Յիսուսի՝ առէ, Դու ես Սիմոն որդի Յովնանու, դու կոչեսցիս Կեփա (որ Բարզմանի Պետրոս):

Յովհ. Թ 7. Եւ առէ ցնա, Երթ, լուս լուսազանին Սիլուվամայ (որ Բարզմանի Առաքեալ). լողաւ լուսցաւ, և կն և տեսանէր:

Յ. Հունարենի սխալներ, որոնք թլուրիմացութիւնս պարզել են հայերեն Բարզմանութիւն մեզ. այսպես են՝

Մատթ. Ե 18. յովտ մի որ նշանախեց մի է.

հուն. ὄντα ἐν ᾧ μία καρτῆα

յովտ մի կամ մի նշանախեց

հայերենում ՚ի «կամ» հասկացել են ՚ի «որ»:

Ղուկաս Գ 23. Եւ ինքն Յիսուս էր ամաց իբր երեսնից սկսեալ որոց որպէս կարծէր՝ որդի Յովսեփայ:

Հունարենն է ὡν «որ է», հայը կարդացել է ὡν «որոց»:

Յովհ. ԺԹ 25. Որ սիրէ զանձն իւր առձակէ զնա. հուն. ἀπολλυσει = կորուսանէ (հմմտ. Մատթ. Ժ 39, Մարկ. Ը 35, Ղուկ. Թ 24, Ժէ 33, որոնք բոլորի մեջ ունենք «կորուսցէ»). այստեղ էլ հայը կարդացել է ἀπολλυσει = արձակէ:

Մատթ. ԺԹ 24. Դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան (= Մարկ. Ժ 35, Ղուկ. ԺԸ 25). հույն ունի κάμυλος = ասոր. کاملوس ուղտ. հայը կարդացել է کاملوس «չուան, մալուխ»:

4. Քերականական սխալներ.

Մատթ. ԺԱ 23. Չի կթէ ի Սողոմ եղեալ էին զօրութիւնքն, որ ի քեզ եղեն, ապաքէն կային ևս մինչև ցայսօր.— Հուն. ἐμαυτων «կային» հոգնակի, որովհետև Սողոմ τα Σοδομα հոգնակի է:

Այսպես և ուրիշներ և հատկապես Ղուկ. Ա 72—73. մեզ... փրկեալս, որ անիմաստ է հայերենի մեզ և սպասելի էր, որ լիներ եթև ոչ փրկեցելոցս (փրկելոցս), գոնե փրկեալ:

Բ. Հայերեն ձեռագրերը շատ միասնական են, այսինքն՝ շն ներկայացնում սկզբունքային տարբերութիւններ, եղածները աննշան սխալագրութիւններ են ընդհանրապես:

Գ. Հայերեն Ավետարանին իբրև մայր ծառայող հունարեն բրնագիրը եղել է Koridethi (Θ) կամ Կեսարյան կոչված խումբը. լիոնեն միայն Մարկոսի Ա զլխում Կեսարյան 109 հատկանշական

ընթերցվածներից հայերենում գտնում է 52—59 հատ, ինչ որ շատ խոշոր թիվ է:

Դ. Հայերենը ներկայացնում է սակայն նաև ասորական ընթերցվածներ, Merk գտել է 200-ից ավելի տեղեր, որոնք ավելի ասորականին նման են, քան հունականին: Եթե նույնիսկ այսքանն էլ ճիշտ չլինի, գոնե նրանց մի մասը ճիշտ է: Որտեղից է հայերեն թարգմանության այս երկվությունը: Անհնարին է մտածել, թե հայ օրինակը հետագայում ասորերենից սրբագրված լինի, որովհետև արդեն ասացինք, թե հայերեն ձեռագրերը չափազանց միասնական են: Մնում է ընդունել, որ նախ հայերենը թարգմանվել է ասորերենից, ապա սրբագրվել հունարենով, իսկ այս ասորական ընթերցվածները սպրդել են կամ բաց են թողնվել նոր թարգմանության ժամանակ: Սրան իբր աշխատյց է ծառայում նախ՝ վրացերենը, որ ըստ Մառի թարգմանված է հայերեն օրինակից, ապա սրբագրված հունարենով: Վրացին ավելի մեծ աղերս է ցույց տալիս ասորականի հետ, քան հայերենը, ուստի նա ներկայացնում է հին հայերեն (ասորական) թարգմանությունը: Երկրորդ՝ Ագաթանգեղոսը և Փարպեցին (ինչպես և Եղնիկ և ուրիշ հեղինակներ) տեղ-տեղ ունեն Ավետարանից կոշումներ, որոնք ճշտիվ չեն համապատասխանում արդի մեր օրինակին և տեղ-տեղ շեղվում են. այդ շեղումները համապատասխանում են Տատիանի համաբարբառին, ուրիշ խոսքով հին հայ ասորական թարգմանություն:

Ամբողջի եզրակացությունը հետևյալն է. նախ Տատիանոս ասորին Գ դարում կազմել էր Համաբարբառը (Diatessaron), որ ուրիշ բան չէր, եթե ոչ շորս Ավետարանները իրար ձուլելով մեկի վերածված մի Ավետարան, որ ընդհանուր գործածական էր Միջագետքում և Ասորիքում Գ—Յ դարերում, հետո անհետ ջնջվեց (անդ, էջ 93): Հայերն էլ երկար ժամանակ գործածել են այս Ավետարանը: Ե դարում հայերը նախ թարգմանեցին Ավետարանը «յանկարծազիտ փութանակի» (էջ 106, չի ասում ինչ լեզվից, բայց էջ 125, ֆրանսերեն համառոտության մեջ հայտնապես ասում է sur le grec, հունարենից): Բայց որովհետև այդ թարգմանիչները ի մանկութեն ենթծծված էին Ասորական Համաբարբառով, ուստի իրենց թարգմանության մեջ շատ բան մտցրին նրանից: Երբ եղավ երկրորդ թարգմանությունը հունարեն ընտիր օրինակի վրայից, թեև շատ բան փոխեցին ըստ այդ հունարեն բնագրի, բայց որոշ բաներ էլ մնացին: Ահա սրանք են մեր արդի Ավետարանների ասորաբան հետքերը:

Ս. Գրքի թարգմանութեան մասին խոսել է նաև Փարպեցին. բայց այնպիսի ձևով, որ իր պատմութիւնը իրականութիւնից հեռու՝ ժողովրդական ավանդութեան գույն է ստանում: Ըստ Փարպեցու՝ երկու տարբեր թարգմանութիւն չկա, այլ միայն մեկը: Թարգմանութիւնը եղած է հունարեն բնագրի վրայից՝ Վոամշապուհի թագավորութեան ժամանակ, գրերի գյուտից անմիջապէս հետո. հետևաբար Փարպեցու հիշածը առաջին թարգմանութիւնն է. նա չգիտե երկրորդ վերջնական թարգմանութիւնը: Վերջապէս թարգմանութիւնը կատարել է միմիայն Սահակը, որովհետև ո՛չ Մեսրոպը և ոչ իր օգնական քահանաներից և ոչ մեկը չէր կարող ձեռնարկել այսպիսի մի գործի, հունարեն լեզվի տգիտութեան պատճառով: Փարպեցին Մեսրոպին, Հայաստանի բոլոր ավագ քահանաներին, նախարարներին, տանուտերներին և Վոամշապուհ թագավորին տալիս է միաբան դիմել Սահակին և աղաչել, որ հանձն առնե այդ թարգմանութիւնը: Սահակը հոժարում է և վերջապէս հանձն է առնում, թարգմանութիւնը կատարում է, օտար ընթերցվածները վերանում են և Եկեղեցին հետզհետե սկսում է շուք ստանալ:

Ահա՛վասիկ Փարպեցու ամբողջական բնագիրը.

«Կարգեալ այնուհետև Փրկչին առաջնորդութեամբ զգիր գրեւոյն հայերէնի, և հելլենացին ուղղեալ յօրինուածս, ցանկային կարգել դպրոցս և ուսուցանել բազմութիւն մանկտոյ. քանզի ամենայն անձն յոյդորեալ փափագէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի խաւարէ՝ յասորի տանջանացն զերծեալք ի լոյս՝ խնդային: Բայց տարակուսեալք կասէին յանշրութենէ՛զրոց սրբոց, քանզի ոչ զոյին դեռ ևս հայերէն լսողութեամբ սուրբ կտակարանք Եկեղեցւոյ: Եւ երանելին Մաշթոց և որ ընդ նմա պատուական քահանայք էին՝ ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարևոր գործ, թարգմանել զիրս ի յոյն լեզուոյն ի հայ բարբառ. վասն զի ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսման:

«Ապա ժողովեալ ամենայն աւագ քահանայք աշխարհին Հայոց, հանդերձ երանելեալ Մաշթոցիւ և ամենայն նախարարօք աշխարհիս Հայոց և մեծամեծ տանուտերօք՝ առ թագաւորն հայոց Վոամշապուհ, և հանդերձ թագաւորան սկսան աղաչել զսուրբ կաթողիկոսն Սահակ՝ արկանել զանձն յաշխատութիւն հոգևոր, և թարգմանել զԱստուածաշունչ Կտակարանս ի յոյն լեզուոյ ի հայ բարբառս: Եւ դասք աւագ քահանայիցն ասէին ցսուրբ քահանայապետն, թէ Մեք որ կամքս առաջի քո, հանդերձ երանելեալն Մաշ-

թոցիւ, զոր զարթոյց աստուածայինն շնորհ ի ցանկութիւնս այս՝ կարգել զվաղնշուցն գրեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր. այլ ասորի մեծաջան և անօգուտ ուսմամբքն աշխատեալք յոխորտ. յորոց բազմութիւնք ժողովրդոց ունայնք և թափուրք հրածարեալք գնային յեկեղեցւոյն. և ուսուցիչքն հանելով յոգուց և հառաշելով՝ զղջանային զանտոտի ջանն իւրեանց, յորում ոչ զոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին օգտեալս ի վարդապետութենէ հոգևոր խրատուցն, որ է կերակուր և պարարումն իմաստնախնդիր անձանց. մինչև գտաւ գիր, և յաջողելով Քրիստոսի եկեալ յաճումն տակաւին զօրանայ: Համայն և զայս վաստակոյս կարգումն, և քոյին առաքինութեամբք գիտութեամբ եղիցի, և կատարեաւ: Արդ՝ որպէս և սուրբ նահատակն Քրիստոսի Գրիգորիոս պահեալ ի խոշտանգանսն անվնաս աշով հզօրին ի լուսատրութիւն գիտութեան աշխարհիս Հայոց տուաւ, պահեալ շնորհեցաւ և քեզ նորին շառաւիղի՝ վիճակ ժառանգութեան պայծառութեան պաշտամանս այսորիկ. սկիզբն առնել գործոյ մշակութեանս այսմիկ, և լինել նմանող սուրբ նախնոյն քում, որ յանգիտութենէ ի ճշմարիտ աստուածգիտութիւն առաջնորդեաց աշխարհիս Հայոց: Արդ և դու յանօգուտ մուրողաբանութենէն ի ստոյգ հոգեշահ և եկեղեցազարդ բանատրութիւնս առաջնորդեա բազում ժողովրդոց աշխարհիս մեծի, ընդ զպակասութիւնս զայս մնացեալ ի սուրբ նախնեացն քոց, զոր պահեաց քեզ Աստուած, զոր ոչ ումեք այլում ի Հայաստան աշխարհիս մարդկան գոյ հնար ձեռն արկանել յալդպիսի գործ մեծ: Վասն զի և ոչ կարացաք հմուտ լինել և տեղեկանալ այդչափ արուեստաւոր ուսմանցդ, որպէս և քեզ տուաւ զօրութիւն ճարտարութեան ի վերին օգնականութենէն յաղագս քո առաքինասէր և պարկեշտ հոգւոյդ, որ նմանեալ ճշգրտապէս օրինակեցեր ի քեզ զվարս երանելոյ հոր քո Ներսեսիս:

«Եւ լուեալ զայս ամենայն բարեպաշտ կաթողիկոսն Հայոց սուրբն Սահակ ի թագաւորէն Հայոց Վոսմշապհոյ և յերանելոյն Մաշտոցէ և ամենայն ուխտէ քահանայիցն, ևս առաւել յաւագ տանուտերացն և յամենայն նախարարացն Հայոց՝ զուարճացաւ յոգի իւր, փառատրելով զՓրկիչն ամենեցուն զՏէր Յիսուս Քրիստոս: Եւ կամաւոր յօժարութեամբ ետ զանձն ի գործ, պանծացեալ յԱստուծոյ գործակցութիւնն, որ ետ նմա զայնպիսի շնորհս առաւելապէս գիտութեան. և անվեհեր ջանալով զցայգ և զցերեկ՝ թարգմանեաց զԿտակարանս ամենայն, զխօսեցեալս ճշմարիտ մարգարէիք Սուրբ Հոգւոյն, և հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն զնորոց Կտակարանացն զլուսաւոր և զկենսատուր քարոզութիւնս նովին Հոգւովս:

Եթե այս խոսքերը համեմատանք վերը մեզ բերված պատմութիւն հետ, որ Փարպեցիին մեարտայան գրերի գյուտն էլ ուզում է Սահակին ընծայել, տարօրինակ չի թվի Փարպեցու այս շափազանցութիւնը, որի բուն նպատակն է անհամեմատ բարձրացնել Սահակի արժանիքը, մինչև իսկ ի վնաս Մեարտայի նույն տեղում արդեն մեզ բերած ենք այն հերքումները, որ Գրքի ճարտար ճարտար Փարպեցի և գործք նորինս աշխատութիւն մեզ (էջ 66—73) դնում է: Այդ հերքումներն ուղղված էին Ղազարի այն պատմածի դեմ, որով սա հայերեն գրերի հնարող ուզում է դնել Սահակին: Հենց նախաբանն իր հիշյալ գրքում աշխատում է ցույց տալ նաև, թե Ղազարի վերի պատմութիւնն էլ, ի մասին ս. Գրքի թարգմանութիւն, նույնպէս անհիմն հերյուրանք է: Նախաբանի փաստն այն է, որ ժամանակակից և ավելի վստահելի պատմագիրը՝ Կորյուն, ինչպէս և հետո նորենացին, ո՛չ թե միայն չեն անում այսպիսի նվաստացնող մի պատմութիւն, այլ նույնիսկ ս. Գրքի թարգմանութիւն ամենաառաջին քայլը (այն է Առակաց գրքի թարգմանութիւնը) ուղղակի ընծայում են Մեարտային, և այն՝ առանց Սահակի օգնութիւն: Եթե Մեարտայը կարողացավ իսկույն թարգմանութիւն ձեռնարկել, ապա ուրեմն զուր է Ղազարի այն կարծիքը, թե Մեարտայն ամենևին ձեռնհաս չէր այսպիսի գործի սկսելու, կամ թե այնքան տգետ էր հունարենի ուսման մեջ, որ անկարող էր թարգմանելու: Ղազարի պատմութիւնը Սահակի վախճանից հետո ձեռքած ժողովրդական շափազանցված գովեստի բնավորութիւնն ունի և զուրկ է պատմական արժանիքից (Փարպեցիին ծնվել է Սահակի մահից 2 տարի հետո, իսկ իր գիրքը գրել է նրա մահից 60 տարի հետո):

Իսկ Չամչյանը («Պատմութիւն Հայոց», Ա, էջ 772) Փարպեցու այս պատմութիւնը առնելով ս. Գրքի երկրորդ թարգմանութիւն համար, որին իրոք շմասնակցեց Մեարտայը, ավելորդ է համարում երկար խոսել այս մասին:

## 5

Ս. Գրքի թարգմանութիւնից հետո, Սահակն սկսել էր նաև ուրիշ այլևայլ եկեղեցական ու կրօնական գրքերի թարգմանութիւն: Երբ Մեարտայը վերադարձավ իր հինգերորդ առաքելութիւնից, երկուսը միասին ջանացին ավելի մեծ խնամք տանելու թարգմանութիւն գործին, մասնավոր Սահակը, որ իրեն համար այս գործը առանձին պարապմունք էր դարձրել. «Յետ այնորիկ ուշ կղեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց ազգին դպրութիւն առաւել յարգել



և դիւրացուցանել, ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել և ի գրել մեծն Իսահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն» (Կորյուն, էջ 20)։ Առանձնապէս Սահակին հիշելը նշան է, թե թարգմանչութեան այս մասունքն էլ մեծագույն բաժինը նա էր ստանձնել, իսկ Մեսրոպն անշուշտ ավելի զբաղվում էր դպրոցական գործով՝ հայոց վարդապետութեամբ։ Սակայն այս չի նշանակում, թե Մեսրոպը շատ պակաս մաս ունէր, այլ, ընդհակառակը, ինչպէս հետո պիտի տեսնենք, իրեն էր ընկած ճառական գրվածքների առանձին մի բաժին։ Հին հույն եկեղեցական հայրերի գրվածքների մի ժողովածու էր կազմած արդեն Մեսրոպը Հունահայաստանում գտնված ժամանակ և հավանաբար այս գրվածքներից մի քանի լավագույններն էին, որ հետգհետե երկուսը միասին հայերենի էին վերածում։

Երկու գործիչներին գործակից էին լինում իրենց շափահաս աշակերտներից ոմանք, ինչպէս որ հատկապէս էլ հիշված են Հովսեփ և Հովհան՝ Առակաց գրքի թարգմանութեան մեջ, իբրև գործակից Մեսրոպի։ Բայց երևի մյուս աշակերտների գործակցությունը շատ մեծ չէր մինչև այն ժամանակ, որովհետև նրանց համար առանձին հիշատակություն չկա։

Մեսրոպի հինգերորդ առաքելութեան վերադարձից հետո, աշակերտների թարգմանութեան գործն էլ ուրիշ կերպարանք ստացավ։ Սրանք արդեն բավական վարժված ու զարգացած լինելով, վարդապետները մտածեցին ուղարկել Եղեսիա և Կոստանդնուպոլիս, այնտեղ այլևայլ հայրերի կրօնական նշանավոր գործերը հայերենի թարգմանելու համար։ Այս նպատակով առաջին անգամ ուղարկվեցան երկու երեւելի աշակերտներ, որոնցից առաջինի անունն էր Հովսեփ Պաղնացի, նա, որ ընկերացած ու օգնած էր Մեսրոպին՝ Ասորիքի ճամփորդութեան մեջ, և երկրորդին Եզնիկ՝ Այրարատյան գավառի Կողբ գյուղից։ Այս երկուսը, Սահակի և Մեսրոպի հրամանով, գնացին նախ Ասորիք՝ Եղեսիա քաղաքը, ասորական սուրբ հայրերի գրությունները ասորերենից հայերեն թարգմանելու համար։ Այս պաշտոնը կատարելուց հետո, իրենց թարգմանած գրքերը ուղարկեցին Սահակին ու Մեսրոպին, և իրենք անցան Կոստանդնուպոլիս, ուր մի ժամանակ հունարենի ուսմամբ պարապելուց հետո, բավական հմտանալով այդ լեզվին, սկսեցին հունարենից թարգմանություններ անել։

Հովսեփի և Եզնիկի առաջումից քիչ ժամանակ հետո, Սահակը և Մեսրոպը երկու նոր աշակերտներ էլ ուղարկեցին Կոստանդնուպոլիս՝ նույն նպատակով. սրանցից առաջինն էր Ղեւեղ կամ Ղեւեղէս և երկրորդը Կաբլն, որ հետո Մեսրոպի կենսագրությունը գրեց։ Երկու աշակերտները Պոլիս հասնելով ընկերացան Եզնիկին,

«իրբը ան ընտանեզոյն սննդակից» և այնտեղ բոլորը միասին աշխատեցան իրենց հանձնված պատվերը ճշտությամբ կատարելու:

Բացի թարգմանութուններից, աշակերտները ունեին նաև ուրիշ մի պատվեր, որ մեր մատենագրության մեջ մեծագոյն դերը պիտի խաղար: Այդ պատվերն էր ձեռք ձգել և Հայաստան բերել հունարեն ս. Գրքի հարազատ և վավերական մի օրինակ: Որովհետև Սահակի և Մեսրոպի ձեռքով եղած ս. Գրքի առաջին թարգմանութիւնը կատարված էր բոլորովին շտապ կերպով և այն էլ ո՛չ շատ հարազատ և վատահնչի մի օրինակի վրայից, ուստի երկու գործիչները մտածել էին նոր և լավագոյն մի օրինակ բերել տալ Կոստանդնուպոլսից, և նույն օրինակի վրայից անել երկրորդ լավագոյն թարգմանութիւնը, որ այնուհետև պաշտոնական նշանակութիւն պիտի ստանար մեր Եկեղեցու մեջ: Աշակերտները իրենց հանձնարարված թարգմանութիւնները կատարելուց հետո, ձեռք ձգեցին Աստվածաշնչի մի վավերական օրինակ, եկեղեցական հայրերի զանազան գրվածքներ, Նիկիայի և Նիհեսոսի ժողովների կառուցները և Հայաստան վերադառնալով՝ ներկայացրին դրանք իրենց վարդապետներին:

Այսպես սկսվեց ա՛հա հայ ուսումնասեր երիտասարդների ճամփորդութիւնը դեպի Արևմուտք՝ ուսում և կրթութիւն ստանալու նպատակով:

## 6

Այս թարգմանիչ աշակերտների երթի առթիվ Խորենացին (Գ Կ, Կա) ունի մի քանի նոր տեղեկութիւններ, որ նշանակում ենք այս հատվածում:

Երբ Սահակը և Մեսրոպը Հովսեփին ու Եզնիկին թարգմանության համար Եղեսիա ուղարկեցին, նրանց վերադարձից հետո միտք ունեին ուղարկելու նաև Բյուզանդիոն, նույնպիսի նպատակով: Սակայն մի քանի «սուտակասպաս» մարդիկ թուղթ գրեցին Հովսեփին ու Եզնիկին՝ իբր թե Սահակը և Մեսրոպը մտադիր են ուրիշ աշակերտներ ուղարկել Բյուզանդիոն: Ուստի այս երկուսը՝ առանց իրենց վարդապետների հրամանին, ուսման բարի նախանձով թողեցին անմիջապես Եղեսիան և գնացին Բյուզանդիոն: Այնտեղ լավ սովորելով հունարեն լեզուն, ձեռնարկեցին զանազան գրվածքներ հայերեն թարգմանել: Այս երկուսի վրա նախանձելով իրենց աշակերտակից ընկերներից երկուսը՝ Ղևոնդ և Կորյուն, ինքնակամ ելան Բյուզանդիոն գնացին՝ նրանց մոտ: Այնտեղ հասան նույնպես Հովհան և Արձան, որոնց Սահակը և Մեսրոպն ավելի առաջ ուղարկել

էին: Բայց սրանք դանդաղ ճանապարհորդելով և Կեսարիայում էլ մի ժամանակ դեգերելով՝ բավական ուշացան: Բյուզանդիոնի Մաքսիմիանոս եպիսկոպոսը մեծ ընդունելութիւն արավ բոլոր այս աշակերտներին:

7

Նույն ժամանակները, այն է 428 թվին Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռը նստավ Նեստորը, որ աշակերտել էր Մոպսուեստացի Թեոդորոս եպիսկոպոսին. սա էլ աշակերտած էր Դեոդոր Տարսոնացուն: 430 թվին Նեստորը հետևելով իր վարդապետներին, մի նոր հերձված հրատարակեց, թե ս. Կույսին պետք չէ կոչել «Մայր Աստուծոյ», այլ միայն «Մայր Քրիստոսի»: Պոլսի Մայր Եկեղեցում, ժողովրդի ներկայութեամբ, նա քարոզեց հայտնապես, թե «կարո՞ղ էր միթե Աստված Մայր ունենալ. հնարավոր է բնավ, որ ստեղծյալը ծնի ստեղծողին. ինչպե՞ս կարող էր Մարիամ ծնիլ նրան, որ իրանից առաջ կար. թերևս հաղորդակից էր աստվածային էութեան. և իրոք, այսպես պիտի լիներ, եթե Աստուծուն էր ծնել, որովհետև ճշմարիտ մայրը պետք է որ բնութենակից լինի իր որդուն. իսկ Մարիամ եղավ մայր Քրիստոսի՝ իբրև լոկ մարդու. որովհետև ս. Հոգու զորութեամբ հղացավ նրան իբր մարդ սոսկական, և այդ մարդու հետ միացավ Քրիստոս կամ Բանն Աստված. և վերջրեց նրան իբրև գործիք՝ նրանով մեր փրկութիւնը կատարելու համար»: Այսպիսով Նեստորը համարում էր, թե ս. Կույսը Աստվածածին չէ, այլ քրիստոսածին կամ մարդածին: Ենթադրում էր երկու Որդի Աստուծո, մին բնական, «ի յավիտենից ծնեալ ի Հօրէ», և մյուսը որդեգրական, «Ժամանակաւ ծնեալ ի Մարիամայ». թե աստվածային և մարդկային բնութեան միավորութիւնն ի Քրիստոս՝ անձնավորական և ճշմարիտ չէ, այլ պատահական և բարոյական:

Ո՞չ միայն Նեստորի ճարտար պերճախոսութիւնը, այլև իր խստամբեր կյանքը, իր ցույց տված առաքինութիւնները և այն նախանձախնդրութիւնը, որով զինված էր հերետիկոսների դեմ՝ նպաստեցին Նեստորի վարդապետութեան տարածման և շատերին իր կողմը դարձրին:

Այս հերձվածի դեմ զինվեցին եպիսկոպոսներից շատերը, որոնց մեջ ամենից նշանավորն եղավ Պրոկղ եպիսկոպոս Կիզիկոնի և մանավանդ Կյուրեղ պատրիարք Ալեքսանդրիայի: Սա հրավիրեց Եգիպտոսի եպիսկոպոսներին, ժողով գումարեց և Նեստորի դեմ 12 Նգովք արձակեց: Նեստորը անաստ գտնվեց և ինքն էլ Կյուրեղի

դեմ ուղարկեց 12 նզովք. մյուս կողմից իրեն դարձրեց իր աշակերտակից՝ Անտիոքի Լովհաննես պատրիարքին և ասորոց եպիսկոպոսներից շատերին: Քնոզոս Փոքր կայսրն էլ հակված էր իր կողմը: Կյուրեղը տեսնելով, թե վտանգը մեծացավ, խնդույն գրեց Լոռմի Կելեսարիանոս Ա պապին և Փոքր Քնոզոս կայսր, Նորգործյով, որ պետք է գումարել տիեզերական ժողով, այս խնդիրը պատշաճապես լուծելու համար: Քնոզոսը համաձայնվեց և հրամայեց, որ եպիսկոպոսները հավաքվեն Եփեսոս ջաղաքը 431 թվի հունիսամսին: Լրավեր զնաց բոլոր երևելի աթոռների առաջնորդներին: Ըստ Չամչյանի՝ հրավիրյալների մեջ էր նաև Սահակը՝ իբրև Մեծ Լալոց եպիսկոպոսապետ. բայց որովհետև Սահակը զնացել էր Պարսկաստան՝ Բրքիշոյ ասորուն պաշտոնանկ անել տալու համար, ուստի շխարոզացավ ընդունել կայսերական հրավերը: Սրմանյանը («Աղագապատում», Ա, էջ 311) չի դնում որևէ նման հրավեր: Մեր մատենագրության մեջ այս մասին գտնում եմ հետևյալ տեղեկությունը.— Կոմիտաս կաթողիկոսի և Պոլսի պատրիարքի միջև խոսակցության ժամանակ ասվում է, թե «իսկ Փոքր Քնոզոս առ Սուրբն Սահակ գրէ գալ ի ժողովն Եփեսոսի, և զգուշանալ երկուս իրս՝ ի նեստորէ և ի կելեսնի տումարէն» («Վիրք թղթոց», էջ 492):

Եփեսոսում հավաքվեցին զանազան կողմերից 260 եպիսկոպոսներ. ժողովի նախագահն էր Կյուրեղ Աղեքսանդրացի նեստորը երեք անգամ կանչվեց ներկայանալու ժողովին և իրեն պաշտպանելու. բայց նա երեք անգամ էլ հրաժարվեց. ուստի ժողովը պարտք համարեց ի բացակայության դատել: 431 թվի հունիս ամսի 22-ին վճռվեց ճանաչել նեստորին իբրև հերետիկոսապետ, դատապարտել նրա վարդապետությունը և զրկել իրեն իր եկեղեցական աստիճանից: Այս վճիռը ստորագրեցին 198 եպիսկոպոսներ: Շուտով նեստորը կարգալույծ եղավ, պատրիարքական գահից իջեցվեց և աքսորվեց: Աքսորվեցին նույնպես իր համախոհներից շատերը. մի մասն էլ առ երկյուղի և առ երեսու դարձի եկավ. իսկ ուրիշներ անցնելով արևելյան գավառները, պարսից պետության պաշտպանության տակ, նեստորական եկեղեցիներ կանգնեցին և սկսեցին օրեցօր շատանալ: Սրանց շարունակությունն են կազմում արդի նեստորական ասորիները<sup>1</sup>:

<sup>1</sup> Եփեսոսի ժողովի պատմությունը և նեստորի վարդապետության քննությունը մանրամասն տե՛ս Լ. Կ. Ամատունի, «Բազմավեպ», 1931, էջ 385—408 և Փեյկյան, անդ, էջ 412—416:

ինչպես էլ լինի, Եփեսոսի ժողովում հայերից ներկայացուցիչ չկար. Կորյունն այս մասին ոչինչ չի ասում. իսկ «Գիրք թղթոց»-ի մեջ (էջ 296) հատկապես հիշվում է, թե «Դարձեալ որք յԵփեսոս Ասիայ ժողովեցան 200 սուրբ հարքն վասն Նեստորի յիմարութեանըն, որ թէպէտ ոչ ով էր ի մերմէ աշխարհէս անդր հասեալ...»: Նմանապես Խորենացին (Գ կա) «Ոչ հանդիպեցան յայնմ ժողովի Մեծն Սահակ և Մեսրոպ»: Թեև այդ միջոցում Պոլսումն էին մեր վեց թարգմանիչները՝ Ղևոնդ Երեց, Հովհան Եկեղեցացի, Հովսեփ Պաղնացի, Արձան, Եզնիկ և Կորյուն, բայց նրանցից ո՛չ մեկը չունեեր եպիսկոպոսական կոչում, ուստի կարելի չէր հրավիրել նրանց ժողովի:

Երբ ժողովը վերջացավ, բնականաբար հայերը իրենց վճիռներն ու որոշումները պետք է ուղարկեին բոլոր քրիստոնեական եկեղեցիներին, սրանց թվում նաև հայոց: Բարեբախտաբար այնտեղ էին մեր թարգմանիչները: Նեստորի անկումից հետո Պոլսի Պատրիարքական գահն էր բարձրացել Մաքսիմիանոս, որ մեր թարգմանիչներին լավ ընդունելություն ցույց տվեց: Նա տվեց անշուշտ նիկիայի և Եփեսոսի ժողովների կանոնները, օգնեց նրանց ձեռք բերելու զանազան հունարեն գրքեր և մանավանդ ս. Գրքի վավերական օրինակը և իր կողմից ողջունի և հանձնարարական գրքեր, ինչպես սովորություն է, ուղարկեց Հայաստան:

Այս ժամանակից հասել է մեզ մի թղթակցություն Եզնիկի և Մաշտոցի միջև: Այս. թղթակցությունից մնում է միայն հինգ հատված, որոնցից պատմական արժեք ունի միայն առաջին հատվածը, որ ավանդում են «Կնիք հաւատոյ» (էջ 130) և «Գիրք թղթոց» (էջ 1): Առաջինի վերնագիրն է «Ի թղթոյն Եզնկայ Կողբացոյ թարգմանչի. զոր գրեաց ի Կոստանդնուպոլիս (կարդա՛ «Ի Կոստանդնուպոլսոյ»)». առ երանելին Մաշտոց վարդապետ, յետ առաջնոյ ժողովոյն Եփեսոսի, յորում լուծին ի պատուոյ զՆեստոր Կոստանդնուպոլսի եպիսկոպոս»: Երկրորդի մեջ՝ թերթերի հետևառաջությամբ, Եզնիկի թուղթը խանգարվել միացել է Պրոկղի նամակին: Հինգ հատվածները դասավորելով միասին հրատարակեց Ակիլյանը («Հանդես ամսօրյա», 1935, էջ 615—617): Թղթից երևում է, որ Եզնիկը իր վարդապետի մոտ հանցապարտ է զգում իրեն և ներողություն խնդրում: Հետո հայտնում է, որ տեղի ունեցավ Եփեսոսի ժողովը, ուր նգովեցին Նեստորին: Սրանից երևում է, որ նամակը գրված է 431 թվի երկրորդ կեսին:

Ոմանք ասում են, թե նույն ժամանակները Սահակը նոր վե-

բաղարձամ Պարսկաստանից և Մեսրոպի հետ ժողով գումարեց Տարոն գավառի Աշտիշատ գյուղում (ըստ Չամչյանի 432 թվին)։ Ժողովի նպատակն էր երկրի մեջ մտցնել նորանոր կրոնական բարեկարգութիւններ և առաջն առնել այն անկարգութիւնաց, որ ծագել էին Սահակի բացակայութեան ժամանակ։ Այստեղ ներկայացրին թարգմանիչները իրենց բերած հանձնարարականները և նիկիայի ու Եփեսոսի կանոնները։ Ժողովականները քննեցին ու երկրորդ անգամ հաստատեցին այդ վճիռները և դատապարտեցին նեստորի վարդապետութիւնը։

Բայց ժամանակակից պատմիչները չգիտեն Աշտիշատի այս ժողովի գումարումը։ Կորյունը ո՛չ մի բառ չունի այս առթիվ։ Խորենացին (Գ, կա) ասում է պարզապէս. «Ապա եկեալ թարգմանիչքն մեր՝ զորոց անուանքն յիշատակեցաք յառաջագոյն, զսին զմեծն Սահակ և զՄեսրոպ յԱշտիշատ Տարօնոյ, և մատուցին զթուղթն և զկանոնս ժողովոյն Եփեսոսի՝ վեց սահմանեալ կանոնաւ զլիտով, և զստոյգ օրինակս Գրոց»։ (Եփեսոսի կանոնները միայն 6 են. տե՛ս «Կանոնագիրք Հայոց», «Արարատ», ՂլտՃյան, էջ 267—269)։ Աշտիշատի այս հիշատակութիւնն է, որ ավելի ուշ դարձել է ժողովալայսպէս, Օձնեցիի ասում է. «Երրորդ ժողով արար Սուրբն Սահակ և երանելին Մեսրոպ յԱշտիշատ, յորժամ հասին թուղթքն ի Կիրղէ և ի Պրոկղէ որ յԵփեսոս հաւանեալ եղեն, յորժամ զՓառք ի բարձունսն կարգեցին, յաճախելով ի բանս հովուացն, պարսպելով ընդդէմ նեստորի անիծելոյ» («Գիրք թղթոց, էջ 220)։ Նույնիսկ այս էլ Գագիկ Արծրունի թագավորի առ Ռոմանոս կայսր ուղղած թղթութում հերքվում է, հետևյալ ձևով. «Գարձեալ որք յԵփեսոս Ասիայ ժողովեցան 200 սուրբ հարքն վասն նեստորի յիմարութեանն, որ թէպէտ ոչ ոք էր ի մերմէ աշխարհէս անդր հասեալ, սակայն երանելոյն Կիրղի և Պրոկղի և առ Ակակայ զգուշացուցանող թղթովք փութացան հասին առ մեծն Սահակ և երանելին Մաշտոց, և միաձայնութեամբ ի մի ուղղափառ խոստովանութիւն վերագրեցան ընդ սուրբ հայրապետսն՝ ժողովեալք յԵփեսոս ծովահայեաց» («Գիրք թղթոց», էջ 296)։ Օրմանյանն էլ («Աղգապատում», Ա 313) չի ընդունում նման ժողով, այն հասարակ պատճառարանութեամբ, որ «պետական կաթողիկոսութիւնը Շմվելի ձեռքն էր և Սահակը չէր կարող պաշտոնապէս նման համախմբութիւններ կատարել»։

Սահակն ստանալով ս. Գրքի ստույգ օրինակը, երկրորդ անգամ ձեռնարկեց թարգմանելու՝ Եզնիկի օգնութեամբ։ Այս թարգ-

մանուֆյունը եղավ միայն Սահակի և Եղնիկի ձեռքով և մյուս թարգմանիչները, նույնիսկ Մեսրոպը, մաս շունեն այստեղ: Այս բանը որոշակի ցույց է տալիս Կորյունը. «Իսկ երանելոյն Սահակայ... դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եղնակա՛ զյառաջագոյն զյանկարծագիտ զփութանակի զթարգմանութիւնս՝ հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք և շատ ևս մեկնութիւն գրոց թարգմանէին»: Այստեղ եղակի հաստատէր բայց ցույց է տալիս, թե գործը պատկանում է միայն Սահակին՝ Եղնիկի ընկերակցութեամբ: Մյուս թարգմանութեանց համար է, որ կարծես հատուկ շեշտել է հոգնակի քարգմանէին բայով:

Այսպես է նաև Փոքր Կորյունը, որ թեև առաջին թարգմանութունը Սահակին և Մեսրոպին միանգամայն է տալիս, բայց երկրորդ թարգմանութունը՝ Սահակին ու Եղնիկին: Ահա իր բառերը. «Իսկ երանելիացն սրբոյն (կարդալ սրբոցն) Սահակայ և Մեսրովբայ զեկեղեցական զգրոց զգումարութիւնն կանխաւ ի յունարէն բարբառոյ ի հայերէն թարգմանեալ... դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եղնկաւ զյառաջագոյն զյանկարծագիտ զփութանակի թարգմանեալսն՝ հաստատէր ճշմարիտ օրինակօքն բերելովք» (էջ 34):

Իսկ Խորենացին (Գ, կա) Կորյունի այս հաստատ վկայութեան դեմ ունի «Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ, դարձեալ թարգմանէին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նոքօք վերստին յօրինել նորոգմամբ», իբր թե երկրորդ թարգմանութեան ժամանակ մասնակցեցին ո՛չ միայն Սահակը և Մեսրոպը, այլև Հունաստան գնացած բոլոր աշակերտները:

Նոր թարգմանութունը, որ մեր մատենագրութեան մեջ ծանոթ է Երկրորդ քարգմանութեան անունով, այնուհետև դարձաւ հայերեն Աստվածաշնչի վերջնական օրինակը:

Պետք է քննել այժմ հինգ կարևոր խնդիր. նախ՝ թե ի՞նչպես եղավ այս երկրորդ թարգմանութունը, երկրորդ՝ ի՞նչ օրինակ էր աշակերտների բերած այդ հարազատ կամ վավերական բնագիրը, երրորդ՝ թե թարգմանութունը ամբողջակա՞ն էր, այսինքն ամբողջ ս. Գիրքը թարգմանվե՞ց, չորրորդ՝ թե ո՞րքան ժամանակ տևեց թարգմանութունը, և, վերջապես, հինգերորդ՝ թե ի՞նչ արժեք է ներկայացնում մեր ս. Գրքի թարգմանութունը:

Ոմանք կարծում են, թե ս. Գրքի երկրորդ թարգմանութունը, որ կատարեցին Սահակ և Եղնիկ, առաջինից բոլորովին անկախ ամբողջական թարգմանութուն էր. այսինքն թե Սահակ և Եղնիկ, մի կողմ թողնելով առաջին թարգմանութունը, սկզբից սկսեցին երկրորդ անգամ թարգմանել: Ընդհակառակը ուրիշներ կարծում են,

թե երկրորդ թարգմանություն կուզվածը ուրիշ բան չէր, եթե ոչ նախորդի սրբագրությունը. երկու թարգմանիչները նախկին թարգմանությունը ամբողջապես համեմատեցին նոր հույն բնագրի հետ, և ուր որ տարբերություն տեսան, մացրին հնի մեջ նոր թարգմանությամբ:

Առաջին կարծիքը կարելի է հաստատել հորենացու վկայությամբ, որ կարծես թե բոլորովին նոր թարգմանություն է ենթադրում. «Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ, դարձեալ թարգմանեցին...»: Բայց հազիվ թե կարելի լինի ընդունել այսպիսի մի կարծիք. որովհետև թարգմանիչների համար բոլորովին ավելորդ ու աննպատակ հոգնություն պիտի լիներ երկրորդ անգամ թարգմանել, քանի որ առաջին թարգմանությունը չէր կարող այնպիսի խռոբ տարբերություններ ընծայել, որ նորից թարգմանելու կարիք զգացվեր: Բնավ միտք չունի հորենացու հիշյալ վկայությունը բառացի առնել. «դարձեալ թարգմանեցին և այլև» ընդհանուր ձևով ասված մի խոսք է և երկրորդ համեմատությամբ նոր թարգմանված մասերն է ակնարկում: Այս թե ոչ ինչպես կարող էին Սահակ և Եղիկ այնպես արագ թարգմանել ամբողջ Աստվածաշունչը, ինչպես ենթադրում է հորենացու փութաճակի բառը, որ ըստ սրբագրության ս. վարդապետ Պարոնյանի վերաբերում է արդեն ոչ թե երկրորդ թարգմանության, այլ առաջինին:

Երկրորդ կարծիքը իբրև վավերական հաստատում են ո՛չ միայն բնական խելքը, այլ և Կորյունի վկայությունը. «Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եղնակաւ զյառաջագոյն զյանկարծագիտ զփութանակի զթարգմանութիւնս, հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք» (Կորյուն, էջ 21), ուր հաստատէր չի կարող ամենևին նոր թարգմանություն ենթադրել, այլ առ առավելն ուղղություն և սրբագրություն:

Խնդրին զործնական լուսարանություն կարող էր տալ Առաջին թարգմանությունից մնացած Մնացորդաց գրքերի թարգմանության քննությունն ու համեմատությունը՝ Երկրորդ պաշտոնական թարգմանության հետ: Բայց այս խնդրով էլ դեռ ոչ մեկը մանրամասն չի զբաղված: Միայն Գր. Խալաթյանն իր հրատարակած Մնացորդաց գրքի առաջաբանում համառոտ կերպով քննելով այս խնդիրն էլ, նկատում է. «Սորանից զատ, ինձ թվում է, թե սույն թարգմանության շնորհիվ մենք կարող էինք պարզել, թե ինչպես է կատարված եղել ս. Գրքի երկրորդ կամ հունականից հայերեն թարգմանությունը. այն է՝ թարգմանիչները՝ ըստ երևույթին, կատարել են իրենց գործը՝ միշտ աչք պահելով առաջին թարգմանության վերա, զգուշությամբ պահպանելով նորանից ինչ որ համաձայն էր Հու-



նականին, և փոփոխելով ինչ որ հակառակ էր նորան, որոց թվում և հատուկ անունների ուղղագրութիւնը» (էջ Ժ):

Բացի Մնացորդաց գրքից՝ կրկին թարգմանությամբ ծանոթ են մեզ Սաղմոսները, Սողոմոնի Առակները, Փողոզող, Իմաստութիւն Սողոմոնի, Երգ երգոց, Սիրաք: Այս գրքերը ունենք թե՛ առաջին փութանակի թարգմանությամբ և թե՛ երկրորդ սրբագրված թարգմանությամբ (տե՛ս Ակիւնյան, «Հանդես ամսօրյա», 1935, էջ 559): Սիրաքի առաջին թարգմանութիւնը հրատարակեց Զոհրապյանը (հատ. Գ, հավելված, էջ 4—40), իսկ սրբագրյալ օրինակը տպված է Վենետիկ, 1833: Երգ երգոցի կրկին թարգմանութիւնները համեմատությամբ և ուսումնասիրությամբ հրատարակեց Ոսկանը (Վիեննա, 1924): Մյուսները անտիպ են:

## 10

Այժմ անցնենք երկրորդ խնդրին, թե ո՛րն էր թարգմանիչների բերած ստույգ և հարազատ օրինակը: Այս մասին հետևյալ տեղեկութիւններն ենք քաղում Ստ. Մալխասյանի վիմատիպ և իմ ուսուցիչ Գարագաշյանի անտիպ մատենագրութիւնի պատմութիւններից:

Ե դարում հունարեն լեզվով գոյութիւն ունեին ս. Գրքի մի քանի թարգմանութիւններ, որոնք կատարված էին զանազան հայրերի ձեռքով կամ հետո ուրիշների ձեռքով սրբագրված: Այսպես՝ անվանի էին Ակյուղասի, Թեոդիտոնի, Սյոււմաքոսի թարգմանութիւնները և Ղուկիանոսի, Հյուսիքոսի և ուրիշների ուղղագրած բնագիրները. բայց այս օրինակները քրիստոնեական եկեղեցիներում չէին վայելում այն հարգանքը, որ տրվում էր Յոթանասնից թարգմանութիւն:

Այս թարգմանութիւն մասին բյուզանդական մատենագիրները հետևյալն են պատմում:

Երբ Եգիպտոս անցավ Պողոմյան իշխանութիւն ձեռքը, Ալեքսանդրիան դառնալով մայրաքաղաք, ուսումնասիր թագավորների շնորհիւ սկսեց օրեցօր ծաղկել գիտութիւններով և վաճառականությամբ: Նա դարձավ ամբողջ աշխարհի համար գիտական նշանավոր կենտրոն, ուր դիմում էին բոլոր ուսումնասիր անձինք: Հրուշակավոր էր մանավանդ Ալեքսանդրիայի գրադարանը, որ ունեւորում էր 700 000 գիրք: Պողոմեոս Եղբայրասեր (Ֆիլադելֆոս) թագավորի ժամանակ (284—295 մ. թ. ա.) գրադարանի կառավարիչը խընդրում է թագավորից, որ գրադարանի համար թարգմանել տա Հրեաների կրոնի գիրքը (Աստվածաշունչը) և ուրիշ գրքեր: Պողոմեոսը սիրով է ընդունում այս խնդիրը և մեծ ընծաներով պատգամա-

վոր է ուղարկում հրեից Եղիազար քահանայապետի մոտ, խնդրելով, որ ուղարկի 70 հրեա հունազետ ուսրբի և Աստվածաշնչի ընտիր մի օրինակ, որպեսզի Ալեքսանդրիայում թարգմանել տա եբրայերենից հունարենի: Քահանայապետը ուրախությամբ ընդունում է Պտղոմեոսի խնդիրը և ուղարկում է 72 գիտնական ծերեր և Աստվածաշնչի ընտիր մի օրինակ: Պտղոմեոսը ամեն հարմարություն ընծայում է ուսրբիներին և թարգմանությունն սկսվում է: 74 օրվա մեջ թարգմանությունը վերջանում է և համեմատելով միմյանց հետ կազմվում է վերջնական բնագիրը: Ավանդությունն ասում է, թե Պտղոմեոս ուսրբիներին փակեց առանձին-առանձին խցերի մեջ, որպեսզի թարգմանությունը իրարից բոլորովին անկախ լինի: Երբ թարգմանությունը վերջացավ, տեսան, որ բոլորն էլ միևնույն են և իրարից ամենափոքր տարբերություն անգամ չունեն: Այս ավանդությունը ցույց է տալիս, որ թարգմանությունը կատարված է մեծ խնամքով և մեծ ճշտությամբ:

Այս թարգմանությունը կոչվեց Յոթանասեից քարգմանություն և երբ քրիստոնեությունը տարածվեց հունաց պետության մեջ, Յոթանասեից թարգմանությունն էլ մեծ նշանակություն ստացավ. արտագրվեց բազմաթիվ օրինակներով և տարածվեց ամբողջ պետության մեջ: Բայց ժամանակ անցնելով բնագիրը ենթակա եղավ բազմաթիվ աղավաղությունների, որոնք առաջացած էին զանազան գրիչների պատահական սխալագրություններից: Բացի սրանից, այնտեղ ներմուծվել սկսեցին նաև այլևայլ դիտավորյալ աղավաղություններ՝ հունական բազմաթիվ աղանդավորների ձեռքով, որոնք այսպիսով ուղում էին մի կողմից իրենց վարդապետության համար նպաստավոր կետեր ավելացնել և մյուս կողմից աննպաստ կետերը ջնջել կամ փոփոխել:

Գ դարում այս աղավաղությունները արդեն բավական շատացած պիտի լինեին, այնպես որ հույն նշանավոր հայրերից մեկը՝ Որոգինես, ձեռնարկեց մի տաժանելի աշխատության, այն է՝ կազմել Աստվածաշնչի զանազան օրինակներից համեմատական ստույգ մի օրինակ: Որոգինեսը պատրաստեց նախ երկիշյան, հետո քառիշյան և վերջապես վեցիշյան օրինակը, որի յուրաքանչյուր էջը բաժանված էր վեց սյունակի: Այս սյունակները պարունակում էին կարգով 1) Եբրայական բնագիրը՝ եբրայական տառերով, 2) Եբրայական լեզվով բնագիրը՝ հունարեն տառերով, 3) Ակյուղասի թարգմանությունը, 4) Սյումաքոսի թարգմանությունը, 5) Յոթանասեից թարգմանությունը, 6) Թեոդիտոսի թարգմանությունը: Որոգինյան Աստվածաշունչը իրրև թունդ գիտական աշխատություն՝ չէր կարող գործածվել ընթերցանության համար. ուստի Գ դարում,

Ծվսեբիոս Կեսարացին Որոգինյան վեցիշյանի մանրակրկիտ բաղ-  
դատությամբ կազմեց նոր ընտիր մի օրինակ: Այս աշխատության  
հավատարիմ մի օրինակը պահվում էր Պոլսի արքունական գրա-  
դարանում, որից արտագրում ու տարածում էին: Այս օրինակը՝ որ  
կոչվում էր Պաղեստինական օրինակ, բոլոր հույն եկեղեցիներում  
մեծ հարգ էր վայելում և անշուշտ նույն օրինակի մի ընտիր ար-  
տագրութունն էր, որ ստացան մեր թարգմանիչները՝ Սահակին  
մատուցելու համար:

Գարագաշյանը, 1892—1893 թվերին, Պոլսի Ամերիկյան Աստ-  
վածաշնչական ընկերութունից հանձնարարված լինելով պատրաս-  
տել հայերեն ս. Գրքի վավերական տպագրութունը, առիթ ունեցավ  
երկու ընկերակիցների հետ (մին եբրայագետ, մյուսը հունագետ)  
համեմատել մեր բնագիրը ասորական, եբրայական, հունական և  
լատին բնագրերի հետ: Իր համեմատութուններից տեսնվեց, որ  
հայերեն ս. Գիրքը համաձայն է գնում մերթ ասորականի, մերթ  
եբրայականի և մերթ հունականի հետ. բայց ճիշտ ու ճիշտ և մի-  
այն մեկի հետ միաբան չէ: Սրանից հետևեցնում է Գարագաշյանը,  
թե թարգմանիչների բերած օրինակը պիտի լինի Որոգինեսի վեցիշ-  
յանը, որի մեջ Յոթանասնից թարգմանության հետ կար նաև եբ-  
րայականը, և Սահակն ու Եղնիկն առիթ ունեին այս բոլորը հա-  
մեմատելու և իրենց լավագույն երևցած ընթերցվածը առնելու,  
մերթ Եբրայականից և մերթ Յոթանասնից թարգմանութունից: (Այս  
բոլորը իմ աշակերտական հիշողութուններից են):

Վերջին խոսքը տալիս ենք Կոզյանին: Այս հեղինակը մի շատ  
մանրամասն ուսումնասիրութուն ունի Մակարայեցվոց Բ գրքի  
հայ թարգմանության վրա, որ գլուխ առ գլուխ և համար առ հա-  
մար համեմատում է հունարեն բնագրի հետ: Նա ի նկատի է ունե-  
ցել հունարեն բնագրի զանազան օրինակներ և նրանց ընթերցված-  
ները: Համեմատելով այդ բոլորի հետ, ահա թե ի՞նչ եզրակացու-  
թյան է հասնում նա: 1. Մակարայեցոց հայերեն թարգմանութունը  
ներկայացնում է թե՛ Ալեքսանդրյան, թե՛ վեցիշյան և թե՛ Լուկիա-  
նոսյան ընթերցվածներ և կարելի չէ ասել, թե սրանցից մեկի կամ  
մյուսի վրա կաղապարված է: 2. Մեր թարգմանության սկզբնագի-  
րը մեզ ծանոթ ոչ մի խմբագրության մեջ չկա: 3. Հայ թարգմանու-  
թունը ունեցել է ուրեմն մի ուրիշ բնագիր՝ խառն նկարագրով, որի  
ընթերցվածները մերթ նույնանում են մյուս ծանոթ խմբագրությանց  
հետ և մերթ բոլորովին անկախ են: 4. Բայց այդ բնագիրը երկրոր-  
դական տեղ չի գրավում, այլ եղել է մի շատ ընտիր օրինակ (տե՛ս  
Կոզյան, «Մակարայեցվոց Բ գրքին հայերեն թարգմանութունը»,  
Վիեննա, 1923, էջ 60 և 72):

Երբորդ հարցը ա՛յն է, թե ս. Գրքի թարգմանությունը ամբողջակա՞ն էր, այսինքն ս. Գրքի պարունակած բոլոր գրքերը թարգմանվեցի՞ն:

Վերը տեսանք Կորյունի թվումը՝ ս. Գրքի առաջին թարգմանության ժամանակ: Թարգմանվել էին Հնգամատյանը, Մարգարեությունները, Ավետարանը, Պողոսի և Մյուս առաքյալների թղթերը, Բայց սրանով ս. Գիրքը չվերջացավ. դուրս են մնում Հին Կտակարանից Հեսու, Գատավորք, Հուսի, 4 թագավորությունները, 2 Մնացորդաց, Մակաբայեցվոց՝ 3 գրքերը, Եզրի 3 գրքերը, Նեեմի, Եսթեր, Հոբ, Հուդիթ, Տովբիթ, Սաղմոսները, Սողոմոնի 4 գրքերը, Սիրաք, Բարուք և Նոր Կտակարանից էլ զոնն Հայտնության գիրքը: Արդո՞ք այս գրքերը առաջին թարգմանության ժամանակ չթարգմանվեցի՞ն: Բայց ինչպե՞ս կարելի է երևակայել ս. Գիրք առանց Սաղմոսի: Նկատենք նաև, որ Կորյունն իր թվումի մեջ չի հիշում Առակաց գիրքը, որի համար առաջուց արդեն ասել էր, որ թարգմանվել էր նույնիսկ Մեսրոպի ձեռքով:

Սրանից հետևում է, որ Կորյունի թվումը միայն ընդհանուր շրջագիծ է և ո՛չ ամբողջական հիշատակություն: Պետք է ավելացնել այնտեղ Սաղմոսը և Առակաց գիրքը, հետո Երգ երգոցը և Մնացորդաց երկու գրքերը, որովհետև սրանցից ունենք երկու-երկու թարգմանություն, և եթե վերջինը տանք Երկրորդ թարգմանության, անշուշտ մյուսը պիտի մնա Առաջին թարգմանության (Երգ երգոցի մասին տե՛ս Ոսկյան, «Հանդես ամսօրյա», 1924, էջ 222): Բայց ինչպե՞ս կարելի է երևակայել Հին Կտակարան, որի մեջ կան Մնացորդաց գրքերը, որոնք մի տեսակ հավելված են Չորս Թագավորությանց, և չկան նրանց մայրը կաղմող Չորս Թագավորությունները: Այսպիսով երկրորդ անգամ ապացուցվում է ա՛յն, ինչ որ քիչ առաջ ասացինք, թե Կորյունի թվումը միայն ընդհանուր շրջագիծ է և ո՛չ ամբողջական հիշատակություն:

Այստեղ կա սակայն մի լրացուցիչ կետ, որ ընդհանրապես վրիպած է ուշադրությունից և որ շատ հաջող կերպով նկատում է Աբեղյանը («Սովետական գրականություն», 1941, № 2, էջ 47): — Կորյունն իր ընդհանուր թվումը տալուց հետո, հետևյալ մանրամասն բացատրության է անցնում. «Անդ էր այնուհետև սիրալիր ուրախութիւն և ակնվայել տեսիլ հայելոյն: Քանզի երկիր (= Հայաստան), որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ (= Պաղեստին), յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան (= Երուսաղեմ), առժամայն վաղվաղակի ամե-

նայն իրացն հեղեղոց խելամուտ լինէր, ոչ միայն ժամանակաւ պաշտօնեցելոցն, այլև յառաջագոյն յաւիտենիցն, և ապա եկելոցն սկզբբանն և կատարածի, և ամենայն աստուծատուր աւանդութեանցն» (Կորյուն):— Արդ, եթե այդ թարգմանութեան միջոցով հայ աշխարհը ծանոթացավ ո՛չ միայն անցած գնացած բաներին (= Հին Կտակարան), այլև հետո եկածներին (= Նոր Կտակարան), սկզբին (= Ավետարան) և վերջին (= Հայտնութեան գիրքը, որ խոսում է աշխարհի վերջի մասին), ուրեմն և ամբողջ Աստվածաշնչին, որ այլ անունով Կորյունը կոչում է «աստուծատուր աւանդութիւն»:

Մի գեղեցիկ միտք էլ հայտնում է Հ. Գ. Զարբհանալյանը («Բազմավէպ», 1851, էջ 233):— Ե դարի երեց թարգմանիչների ձեռքով թարգմանված ունենք Եվսեբիոսի Եկեղեցական պատմութիւնը, Քրոնիկոնը, պօլիի ուշ Կալիսթենեսի Պատմութիւն Ալեքսանդրի և այլ նման գործեր, որոնցից առաջինն էլ Մեսրոպն է թարգմանել տալի (Խորենացի Բ, Ժ): Եթե մեր մատենագրութեան նախահայրերը ջանք և գործ են դրել այսպիսի երկրորդական ու երրորդական գրքեր թարգմանելու կամ թարգմանել տալու, ինչպե՞ս կարող էին անտես անել կամ կիսատ թողնել Աստվածաշունչը, որ այն ժամանակի հայացքներով՝ գրքերի գիրքն էր:

Այս միտքը թելադրում է ինձ մի ուրիշ միտք ևս՝ Ոսկեդարյան թարգմանութեամբ մենք ունենք բազմաթիվ մեկնութիւններ ս. Գրքի զանազան մասերի. այսպես Ոսկեբերանի «Մեկնութիւն Եսայիայ, Մատթէի, Յովհաննու, Քղթոցն Պողոսի, Սաղմոսաց, Կիրիլի Աղեքսանդրացոյ Մեկնութիւնք Ս. Գրոց, Եփրեմի Ասորոյ Մեկնութիւն Հին Կտակարանի, Համաբարբառ, Մեկնութիւն Գործոց առաքելոց» և այլն և այլն: Ինչի՞ էին պետք այս բոլոր մեկնութիւնները, եթե նրանց մայրը, այսինքն մեկնելի գրքի բնագիրը, որ են ս. Գրքի զանազան մասերը, թարգմանված շինեցին: Ուստի, եթե մեկնութիւնները կան, կային նաև բնագրերը:

Հ. Ս. Կոզյանը մի առանձին ուսումնասիրութիւն ունի «Մակաբայեցվոց Բ գրքին հայերեն թարգմանութեան» մասին (Վիեննա, 1928), որ ցույց է տալիս, որ Մակաբայեցվոց գրքերը չկային Առաջին թարգմանութեան մեջ, ուստի անցնում են Երկրորդ թարգմանութեան: Հեղինակի պատճառաբանութիւնը ա՛յն է, որ 1) Կորյունը չի հիշում իր ցուցակում Մակաբայեցվոց գրքերը. 2) Եթե Սահակը և Մեսրոպը հապճեպով էին թարգմանում ս. Գիրքը, ուրեմն պիտի թարգմանեին առաջին հերթին կանոնական գրքերը և որոնք որ եկեղեցական պաշտամունքի մեջ գործ են ածվում. Մակաբայեցիք կանոնական չեն և չեն էլ կարդացվում եկեղեցում, ուստի և դուրս մնացին Առաջին թարգմանութիւնից. 3) Մակաբա-

լեցվոց գրքերը սրբագրիչի ձեռք չեն տեսել նրբեք, այլ ինչպես որ բուն թարգմանչից գուրս են եկել, այնպես էլ՝ իրենց բոլոր թնրութիւններով հասել են մեզ: Թարգմանիչը նախ կատարել է հունարէն օրինակից իր թարգմանութիւնը, հետո ինքն իր ձեռքով լուսանցքների վրա ավելացրել է նոր ուղղումներ, բայց ժամանակ չի ունեցել այդ ուղղումները ներս առնելու: Հետագա արտագրողը այս ուղղումները մացրել է բնագրի մեջ, առանց ուղղելիները չեղելու: Այնպես որ այսօր մեր ձեռքը հասած Մակարայեցվոց գրքերը պարունակում են բաղմամբիւ կրկնակ ձևեր՝ մեկը ուղիղ, մյուսը սխալ, երկուսն էլ կողք կողքի:

Այս բոլորից հետևում է, թե ս. Գրքի մեծագույն մասը արդեն առաջին թարգմանութեան ժամանակ թարգմանված էր, մի քանի նվազ կարևոր և ոչ կանոնական գրքեր թարգմանվեցին երկրորդ թարգմանութեան ժամանակ: Այնպես որ այսօրվա մեր ունեցած ս. Գիրքը ամբողջապես Սահակի և Մեսրոպի և նրանց առաջին թարգմանիչների գործն են: Այդ ապացուցում է լեզուն, որ ծայրից ծայր բնիկ դասական հայերեն է: Բացառութիւն է կազմում միայն Հայտնութեան գիրքը, որ ոսկեդարյան հայերենով չէ, այլ ուշ ժամանակ Լամբրոնացու ձեռքով թարգմանվելով, միացված է նախորդին: Բայց սրա էլ իսկական ոսկեդարյան թարգմանութիւնը գտնվեց Յ. Մուրատի ձեռքով և հրատարակվեց Երուսաղեմում, 1905—1911 թվականներին: Միայն այդ գրքերից մի քանիսի համար հայտնի չէ, թե Առաջին թարգմանութեան ժամանակ են կատարված, թե՞ երկրորդ:

## 12

Որբա՞ն ժամանակ տեկց ս. Գրքի թարգմանութիւնը:

Այս նյութը քննութեան առարկա չափիտի դարձնեի ես, եթե մեր նշանավոր մասնագետ պրոֆեսորներից մեկը՝ Արմֆանում կարգացած իր մեկ դասախոսութեան մեջ չհայտնէր այն միտքը, թե «Հայերեն Ս. Գիրքը մի անգամից և կարճ ժամանակում թարգմանված չէ. միայն գերմանացիք եղան, որ Ս. Գիրքը թարգմանեցին մի տարում: Հայերեն թարգմանութիւնը շատ երկար տարիների աշխատութեան արդյունք է»:

Կորյունի տված տեղեկութեամբ՝ ս. Գրքի մեծ մասի թարգմանութիւնը կատարված վերջացած էր Վաղարշապատի վարդապետարանի բացումից և Մեսրոպի Գողթն ու Սյունիք բարոգութեան զնալուց առաջ, ուրեմն՝ 405 և 406 երկամյակի ընթացքում: Այնպես որ ս. Գրքի վրացերեն թարգմանութիւնը (սկսված 409 թվին),

ինչպես և աղվաներեն թարգմանությունը (423 թ.) արդեն կարելի  
եղավ կատարել հայերեն թարգմանության վրայից: Երկրորդ թարգ-  
մանությունը, ինչպես հետո ավելի ընդարձակ ցույց պիտի տանք,  
տեղի ունեցավ 431—432 թվին, որից 6 տարի հետո արդեն Սա-  
հակի մահն է: Մակաբայեցվոց գրքերը, որոնք կանոնական և եկե-  
ղեցական գրքեր չլինելով ավելի ուշ թարգմանվեցին, այնպես որ  
Սահակը և Մեսրոպը ժամանակ չունեցան սրբագրելու (տե՛ս Կոզ-  
յան, «Մակաբայեցվոց Բ գրքին հայերեն թարգմանությունը», Վիեն-  
նա, 1923, էջ 8), անշուշտ թարգմանված և հրատարակված էին 450  
թվից առաջ: Եղիշեն պատմում է, թե Վարդանն Ավարայրի պատե-  
րազմի նախօրյակին իր բանակը քաջալերելու համար էջեր կար-  
դաց զինվորների առաջ. «Վարդան ի ձեռն առեալ զքաջ նկարագիրն  
Մակաբայեցոց, ընթեռնոյր ի լսելիս ամենեցուն» (տե՛ս Ն. Գ.  
Զարբհանալյան, «Բազմավէպ», 1851, էջ 234 և Կոզյան, անդ, էջ  
15): Սրանով ջուրն են ընկնում այն բոլոր տոմարական հաշիվները,  
որոնցով Աղոնցը («Հանդես ամսօրյա», 1928, էջ 94) ուզում է ցույց  
տալ, թե Մակաբայեցվոց գիրքը թարգմանված է 460—468 թվերին:  
Վերջապես եթե ուրիշ ո՛չ մի ապացույց էլ չունենանք, ամբողջ ս.  
Գրքի ոսկեդարյան լեզուն բավական է ապացուցելու համար, թե  
թարգմանությունը կատարված է մի անգամից և Ծ դարի առաջին  
կեսում:

Ավելի պատասխանատու մի հայտարարություն արել է Նոյման  
հայագետն իր «Հայոց մատենագրության պատմության» մեջ (էջ  
38—39): Նա կարծում է, թե Հին Կտակարանի անհայտ գրքերը  
(Հուդիթ, Տովբիթ, Մակաբայեցվոց 3 գրքերը, Բարուք և այլն) ծա-  
նոթ չէին հին հայոց. հայերը ծանոթացան այդ գրքերին միայն  
ունիտոռների ժամանակ և լատիների միջոցով, ուստի և այդ գրք-  
երի թարգմանությունն էլ կատարված պիտի լինի 13—14-րդ դա-  
րերում: Սխալ է այս ենթադրությունը, որովհետև Աստվածաշնչում  
կան և կարիք չկար սպասելու մինչև ունիտոռների գալը: Երկրորդ,  
ինչպես ճիշտ նկատում է Ստ. Նազարյանը («Հյուսիսասիայլ», 1860,  
և, էջ 140—141), այդ թարգմանությունների լեզվի մաքրությունը  
չի թույլ տալիս ամենևին մտածել այդքան ուշ ժամանակի մասին,  
երբ հայերեն գրաբար լեզուն բոլորովին ընկած և աղճատված էր:

Ս. Գրքի հայերեն թարգմանության արժանիքը: Եվրոպացի հա-  
յագետ Լակրոզը, խոսելով ս. Գրքի հայերեն թարգմանության վրա՝  
մոչնի է «Թագուհի թարգմանությանց»: Այս գնահատականը, որ

հասնախ կրկնված է ուրիշներին, երկու կողմ ունի: Նախ՝ հայերեն-  
 ֆարգմանության ճշտությունը և հավատարմությունը՝ համեմատու-  
 թյամբ ուրիշ ֆարգմանությունների և երկրորդ՝ լեզվի ու ոճի գե-  
 ղեցկությունն ու վեհությունը: Առաջին կետի վրա խոսում են բո-  
 լոր եվրոպացի այն քննիչները և բանասերները, որոնք զբաղվել են  
 ս. Գրքի զանազան ֆարգմանություններով և նրանց մանրամասն  
 համեմատությամբ բնագրերի հետ (եբրայերեն և հունարեն): Իսկ  
 երկրորդի մասին վկա է ամեն մի հայկարան և բանասեր, որ հիա-  
 նում է ս. Գրքի հայ ֆարգմանության լեզվի գեղեցկությամբ: Ըթն  
 Ծզնիկն է մեր հայկաբանության զլուխ-գործոցը, այդ նույն Ծզնիկը  
 խորասուզված է նաև Ծսայիի և Երեմիայի մարգարեությանց մեջ:  
 Ահա մի երկկողմանի զնահատական՝ մի կողմից ս. Գրքի ֆարգ-  
 մանության հավատարմության և մյուս կողմից նրա լեզվի գեղեց-  
 կության վերաբերմամբ: «Յղճամիտ խնամք և ամենաշնչին իրերի  
 վրա տարածվող հավատարմություն փայլում են այնտեղ: Հայ ֆարգ-  
 մանիչները՝ լիովի հմուտ հայ և հույն լեզուներին, կարողացել են  
 ոչ միայն (քիչ բացառությամբ) ուղիղ իմաստին թափանցել, այլ  
 նաև ուղիղ հայացնել, և որ ավելին է՝ կարողացել են իրենց ուժը  
 ս. Գրքի մատյանների բովանդակության ու հեղինակներին համա-  
 պատասխանող այնքան այլազան ոճերի համաձայն եղանակավո-  
 րել, փոփոխել: Իբր քույր լեզու հունարենի՝ հայերենը համընթա-  
 նում է նրան քայլ առ քայլ, բառ առ բառ, մթինը՝ մթին, պայծա-  
 ող՝ պայծառ բացատրում է. գիտե պերճախոսել ու պարզաբանել,  
 գիտե պճնվել ու անպաճույճ երևալ, առանց սակայն իր բնածին  
 ազատությունը զոհելու, և օտարի ստրուկը դառնալու: Ս. Գրքի հայ  
 ֆարգմանիչները նախանձելի և անզնահատելի առավելությունն են  
 ունեցել լեզվի ազնվություն, մաքրություն և վեհություն միացնելու  
 ամենախիստ հավատարմության հետ» (Կոզյան, անդ, էջ 73):

Կոզյանից հետո պետք է հիշել եվրոպացի մի նորագույն հե-  
 ղինակ՝ Կյոնդե (Ժընևից), որ ուսումնասիրեց հայերեն Ավետարա-  
 նի ֆարգմանության լեզուն՝ մանրամասն համեմատելով հունարե-  
 նի հետ: Իր մի հոդվածում («Exactitude et adresse dans la ver-  
 sion arménienne de la Bible», «Հանդես ամսօրյա», 1935, էջ 563—  
 570), ահա թե ինչ գովասանական խոսքեր ունի ս. Գրքի հայ ֆարգ-  
 մանության վրա. «Ինչքան ավելի ենք ուսումնասիրում այս ֆարգ-  
 մանությունը, այնքան ավելի հիացմունք ենք զգում այս զլուխ-  
 գործոցի համար և համոզվում հեշտությամբ, թե ինչպիսի արտա-  
 սովոր ջանք գործ դրին այս նշանավոր խելի տեր մարդիկ... Ամեն  
 ֆարգմանություն իր սկզբնագրի ազդեցությունն է կրում. հայերեն  
 ֆարգմանությունը դուրս է այս օրենքից: ... Շնորհիվ իրենց մայ-



րենի լեզվի շատ վստահ և նուրբ հմտութեան, սրա հետ միասին հունարեն լեզվի խոր և երբեմն էլ զարմանալի գիտութեան, այս թարգմանիչների համար շկա բնավ մեքենական մոտեցումա: Հիշատակելուց հետո միևնույն հույն բառի դեմ ըստ երանգի տարբերութեան զանազան հայերեն բառերի գործածութունը, որի համար մեջ է բերում զանազան օրինակներ, հիշատակելուց հետո շարադասութեան, համաձայնութեան և նախդիրների գործածութեան նրբութիւններ, անցնում է հայերեն թարգմանութեան տրամաբանական ճշտութեան: Այս բանը երևում է բայերի հաջորդութեան և շարքի մեջ. օրինակ՝ հունարենն ասում է.

«Կորզէին աշակերտքն նորա հասկս և ուտէին շփեալ ընդ ափ»: Անտրամաբան է ուտել և հետո շփել. ուստի հայ թարգմանիչը տրամաբանական կապը պահելով՝ ասում է<sup>1</sup>.

«Աշակերտքն նորա կորզէին հասկ, շփէին ընդ ափ և ուտէին» (Ղուկ. Զ 1):

Նույնպես հունարենն ասում է.

«Վէրս ի վերա եղեալ գնացին՝ թողեալ կիսամահ»:

Անտրամաբան է նախ վիրավորել, հետո գնալ, հետո կիսամահ թողնել. ուստի հայ թարգմանիչը պահում է տրամաբանական կապը և ասում է.

«Վէրս ի վերայ եղին, թողին կիսամահ և գնացին» (Ղուկ. Ժ. 30):

## 14

Վերջին մի խնդիր էլ երևան է հանում հորենացին: Այս խնդիրը տեղի է տված բազմաթիվ վիճաբանութիւնների և նրա մասին երկար խոսել այս աշխատութեան մեջ պատշաճ չլինելով, հիշում ենք համառոտ կերպով:

Եբր Աստվածաշունչը երկրորդ անգամ թարգմանվեց, ասում է հորենացին, Սահակ և Մեսրոպ անգետ լինելով հորենացու ունեցած արվեստին (?), թարգմանութիւնը շատ կողմերով թերի դուրս եկավ, ուստի այն երկու վարդապետները հորենացուն ուղարկեցին Ալեքսանդրիայի ճեմարանը, որպեսզի այնտեղ սովորելով՝ երևի վերադառնա և ս. Գրքի երկրորդ թարգմանութեան թերութիւնները շտկե. «Բայց քանզի անգէտք էին մնում արուեստի, ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱլեքսանդրիա՝ ի լեզու պան-

<sup>1</sup> Հունարեն օրինակները դնում եմ հայերեն՝ բառացի թարգմանելով հունարենից:

ծալի, ի ստույգ յօդանալ ճեմարանին վերարանութեանս (Խորենացի Գ, կա): Ուստի Խորենացին ճանապարհ է ընկնում և Եղեսիա, Երուսաղեմ, Ալեքսանդրիա, Հոտմ, Աթենք ու Պոլիս ման գալուց և տեղտեղ ուսում ստանալուց հետո, դառնում է Հայաստան, բայց արդեն Սահակը և Մեսրոպը վախճանած էին, ուստի ձեռնարկութիւնը կիսակատար և հետեւարար ս. Գրքի թարգմանութիւնն էլ թերի մնաց և մնում է, ամա՛ղ, մինչև այժմ:

Խորենացու այս հատվածի քննությամբ զբաղվել է մասնավորապես Գարագաշյանը («Քննական պատմութիւն», Գ, էջ 58—69), որ մասնավանդ ժամանակագրական հաշիվներով ցույց է տալիս, թե շէր կարող մի այսպիսի ճանապարհորդութիւն զոյութիւն ունեցած էլինել և ամբողջ պատմութիւնը, ս. Գրքի երկրորդ թարգմանութիւնն պարունակած թերութիւնների և Խորենացու երևակայական սրբազրութիւնների հետ միասին՝ բացարձակ սուտ է կամ խաբերայի հավելված<sup>1</sup>:

## Գ Լ Ո Ւ Ե Ժ Ա

### Ե ԳԱՐԻ ԳՐԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄԸ

#### 1

Այսպես հիմնվեց հայ մատենագրութիւնը, որի հայրն ու հիմնադիրը կոչվլ Մեսրոպ Մաշտոցը և մեծագույն գործիչը՝ Սահակը: Ս. Գրքի թարգմանութիւնը դարադուխ բացաղ հայ կյանքում. նորան հետեւեց բազմաթիւ գրքերի թարգմանութիւնը. ամեն կողմ դպրոցներ բացվեցին: Էջմիածնի վարդապետարանը մի կողմից ուսուցիչներ էր հասցնում, մյուս կողմից նորանոր երկեր հրատարակ հանում: Հռութիւնս սովորեցրած աշակերտները տարածեցին զըրչութիւնն արվեստը Հայաստանում, գրիչների խմբերը սկսեցին իրար գերազանցել և ձեռագրերի արտագրութիւնները բազմաթիւ տեսակներով սփռվում էին ամեն կողմ: Վանքերը դարձան կրթութիւն

<sup>1</sup> Զնոգորի մեջ առանձին մի էջի վրա հեղինակը գրել է. «Այլիպցնել Միսրանի կարծիքը, թե ս. Գիրքը երրորդ անգամ թարգմանված է. այս առթիվ տե՛ս և ա՛ռ Հսակույանի «Տճատյանի...», էջ 98: Ըս շիմ ընդունում երրորդ թարգմանութիւնն զոյութիւնը: Եթե մեկը ենթադրել է մի բան, որի համար տալիս է մի ապացույց, եթե դու շնչես այդ ապացույցը, ի՞նչ արած կլինես. ենթադրութիւնը ընդունած, թե՛ շնչած: Ըս այս վերջինն եմ արելս (Այս հարցի մասին տե՛ս նաև Գլ. ԺԵ, § 2.— Խմբ.):

կենտրոններ, եկեղեցիները պայծառացան, հայերեն ժամերգությունը և հայերեն ընթերցվածները շուք ու իմաստ տվին նրանց, ու քաշում էին մարդկանց ահագին մի բազմություն, որ հաճությամբ ունկնդրում էր մայրենի լեզվով ժամերգության: Վարդապետները կամ մեկնիչները բնմերից հորդարուխ քարոզներով երկնային խոսքը սփռում էին նրանց մեջ և կրոնի հաստատ գիտակցությունը ամրապնդում: Վերջապես ամբողջ երկիրը տոգորված էր գրական-կրոնական մեծ շարժումով:

Բայց ինչ որ այդ բոլորի մեջ գերազանցում և ամբողջ շարժման անիվն էր կազմում, դա է՛ր անկախ ազգային ինքնաճանաչություն և ազգային գիտակցության գաղափարը, որ մինչև այն չկար:

«Պարսկական մասին վերին իշխանությունը նորանոր փորձեր կընեն հայ ժողովուրդը զուտ մազդեզանց կրոնին վերադարձնել և պարսիկ լեզուն ու մատենագրությունը տարածել անոնց մեջ. մինչ արևմտյան մասին տիրող հոռոմները աննրգանոք կնայեին բարբարոսներու վրա և անոնց լեզվին ու առանձնահատկությանց բնականորեն որևէ ըմբռնում չունէին: ... Այս պատճառով եթե նկատենք այն պարագաները, որոնց տակ Մաշտոց ու Սահակ իրենց մտքի գործունեությամբը եկեղեցական ու ժողովրդական ինքնագիտակցության զարթուցին Հայ Ազգը, և այս գործքին հետ համեմատության դնենք դանայան այն պարզևր, զոր Պեպինոս փռանկ քաղաքական ու եկեղեցական ամեն միջոց լիապես ի ձեռին ունենալով նվիրեց գերման ժողովրդյան, այն ատեն թե՛ Պեպինոս և թե՛ յուր զինակիրը Վինֆրիդ՝ խեղճ թղուկներ կերևան համեմատությամբ մտքի այն հսկաներու» (Մարկվարտ, «Պատմություն հայ նշանագրերու», էջ 7—8):

Հայաստանի ամեն կողմերում բացված դպրոցները, էջմիածնի վարդապետարանը, Սահակի և Մեսրոպի անխոնջ գործունեությունը և իրենց աշակերտների ուսումնասեր եռանդը՝ քիչ ժամանակում այնպես բարձրացրին հայոց հոգևոր ու մտավոր հորիզոնը, այնպիսի ծաղկյալ վիճակի մեջ դրին բովանդակ երկիրը, որին երբեք չհասավ հետո անցյալում:

Փարպեցին, որ ժամանակակից չէր այս գրական շարժման սկզբնավորության, բայց նրա ավելի մեծ շահերով ծաղկումը տեսավ ու վայելեց, այսպես է նկարագրում երկրի այն ժամանակվա վիճակը. «Եւ դարձեալ ի գլուխ սրբոյ հայրապետին Հայոց Սահակայ զգործ մեծ հոգևոր վաստակոյն՝ կարգեցան վաղվադակի հայնըմհետէ դպրոցք հօտին ուսմանց, բազմացան դասք գրչաց, ելևելս առնելով զմիմեամբք. զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեց-

տոյ, յորդորեցան բազմութիւնք արանց և կանանց ժողովրդոց ի տօնս Փրկչին և ի ժողովս մարտիրոսաց: Որք շահալք լի հոգևոր օգտի՝ ընթանային խնդալիցք ի հաղորդմանէ մեծի խորհրդոյն, արձակեալք յիւրաքանչիւր ի տունս, մեծամեծք և սղայք, սաղմօսելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս, ի հրապարակս և ի փողոցս և ատենին: Պայծառացան եկեղեցիք, շուք առին վկայարանք սրբոց, միշտ ժաղկելով ի նոսա ուխտ Կտակարանաց ընծայիք. հանապազարուլիս հոսէին վտակք յաստղացն մեկնութեանց, որք զծածուկս մարգարէից բերելով ի յայտնութիւն՝ սեղանս ամենայիցս հոգևոր խորտկօք դնէին առաջի ամենայն ժողովրդեանն. յորոց ճաշակեալ իմաստախնդիրն մարդոց՝ քաղցրանայ ի քիմս նոցա, ըստ բանի սաղմոսերգին, բանք վարդապետութեան քան զխորիսիս մեղու: Եւ զի միանգամայն իսկ ասացից ըստ բանի սուրբ մարգարէին Ծայեայտ, թէ կցաւ երկիրս ամենայն Հայոց գիտութեամբ Տեառն ի հոգևոր վտակաց սուրբ հայրապետին Սահակայ, իբրև զչուրս բազումս որ ծածկեն զծովս: Եւ շնորհիւ ամենախնամ Փրկչին Քրիստոսի կատարեալ այս ամենայն ի ժամանակս Վոսմշապետոյ, ըստ յառաջագոյն գրելոց, և լուսատրեալ աշխարհս Հայոց» (Փարպեցի, էջ 17—18):

Ամբողջ այս մեծ շարժումը, գրական այս մեծ գործունեությունը Սահակի և Մեսրոպի աշխատությունյան արդյունքն է: Մոտիկից տեսնենք, թե ի՞նչ նկարագիր ունի հիշյալ նորածիլ գրականությունը, որո՞նք են նրա բնորոշ հատկությունները, որո՞նք են Սահակի և Մեսրոպի աշակերտները, և վերջապես ի՞նչ գրական արտագործություններ են մտում մեզ հիշյալ ժամանակից: Այս տեսությունը ավելի լավ պիտի պատկերացնեն երկու նշանավոր գործիչների աշխատությունը:

Արդյունքը թող ցույց տա գործիչին:

## 2

Երկու բնորոշ հատկություն ունի այդ շրջանի գրականությունը. առաջին՝ կրոնական դույն և երկրորդ՝ թարգմանչություն: Այս երկու հատկություններն էլ միայն մեզ սեփական չեն և հատուկ են բոլոր այն գրականությանց, որ մի անգամից և ճոխությամբ են մտնում ժողովրդի մեջ: Այն ժամանակվա հասկացողությամբ գրականությունը պարզապես կրոնի զարգացման կամ ժամակարգության ծառայող մի գործիք էր. ուսուցչական գործը հանձնված էր միմիայն կրոնավորներին, և սրա համար է որ վարդապետ, որ բռնապետ «ուսուցիչ կամ վարժապետ» էր նշանակում, հետո դարձավ

կրոնավորական աստիճան: Նույն հասկացողութիւնը կենդանի էր դեռ մինչև վերջերս բոլոր արևելյան հետամնաց ժողովուրդների մեջ. ուսմիկը կարողալ բառով «եկեղեցական երգեցողութիւն» էր հասկանում և կարողացող անունը տալիս էր բոլոր կրոնավորներին: Սահակը և Մեսրոպը նմանապես առաջնորդված լինելով ա՛յս գաղափարով և գրականութիւնը կրոնական զարգացման համար միայն տված լինելով Ազգին, բնական է, թե ամենից առաջ ս. Գիրքը և կրոնական գրքեր պիտի տային նրան: Այսպես է եղած նաև իռլանդական, գոթական և սլավական մատենագրութիւնաց սկզբնավորութիւնը. այստեղ էլ տեսնում ենք, որ գրականութիւնը մըտել է միայն կրոնական պետքերը լրացնելու համար և սկսել է նախ ս. Գրքի թարգմանութեամբ: Աֆրիկայի, Ամերիկայի և Օվկիանիայի արդի բազմալեզու ժողովուրդների խիստ շատերի գրականութիւնը մի՛ միայն Ավետարանի թարգմանութիւնից է բաղկացած և կատարված է ավետարանական քարոզութիւն նպատակով և քրիստոնեութիւն տարածող միսիոներների ձեռքով:

Թարգմանչութիւնը նմանապես պայման է բոլոր նոր սկսող գրականութիւնաց համար, մանավանդ նրանց, որ ուժեղ թափով են սկսում: Եթե ս. Գրքի թարգմանութիւնը կրոնական պահանջ է արդեն, առհասարակ թարգմանութիւնը սնունդ է նորածին գրականութիւն, որ դեռ զարգացման բարձր աստիճանը հասած չլինելով, չի կարող անկախ երկեր արտադրել: Թարգմանութիւններն են, որ պիտի սնուցեն նրան, սրանցից հետո պիտի գան նմանողաբար կազմված աշխատութիւններ և հետո միայն բոլորովին անկախ գործեր:

Մեր գրականութիւնը չէր կարող բացառութիւն կազմել ընդհանուր օրենքի մեջ, ուստի բնական է, որ նա էլ սկսեր թարգմանութեամբ և թարգմանիչներով:

### 3

Առաջին շրջանի գրականութիւն ու կրոնական շարժման մեջ մեծ դեր են կատարած քարգմանիչ կողմած անձերը: Ժամանակակից պատմութիւն մեջ այս անունով են հայտնի ըստ Կորյունի՝ Հովհան Եկեղեցացի, Հովսեփ Պաղնացի, Եղնիկ Կողբացի, ինքը՝ Կորյունը, և Ղևոնդ, որոնց վրա խորենացին ավելացնում է նաև Արձան: Թե բուն ի՛նչ է նշանակում այստեղ այս քարգմանիչ տիտղոսը, շատ հայտնի չէ: Ոմանք կարծում են, թե այս տիտղոսը տրվեց Սահակի և Մեսրոպի բոլոր աշակերտներին, որովհետև սրանց աշ-

խատուիջան մեծագույն մասը հունարեն կամ ասորերեն թարգմանություններից էր բաղկանում: Գանձակեցիին թարգմանիչ է կոչում էշմիածնի վարդապետարանի աշակերտներին. «Եւ ուսնայ մանկանցն այնոցիկ զամենայն իմաստութիւնս ներքինս և արտաքինս, և զոնն թարգմանիչք շքմարտութեան, և թարգմանեցին զամենայն գիրս Հին և Նոր Կտակարանացն» (էջ 15):

Բայց Գարագաշյանը, անպատեհ համարելով այս կարծիքները, ենթադրում է, թե թարգմանչությունը մի առանձին արվեստ էր, որ կար մանավանդ գրերի գյուտից առաջ. թարգմանիչ տիտղոսը ընդհանուր չէր բոլոր այն ժամանակի վարդապետներին, այլ այս անունով կոչվում էին միայն այն անձերը, որոնք սովորել էին առանձնապես թարգմանչության արվեստը («Քննական պատմություն», Գ, էջ 44—45): Եթե թարգմանիչ տիտղոսը արվեր հունարենից կամ ասորերենից գրքեր թարգմանած լինելու պատճառով, բնական է, թե գրերի գյուտից առաջ թարգմանիչ չպիտի գտնվեր: Բայց ահա վերոհիշյալ վեց անձերից գոնե մի մասը թարգմանիչ էր գրերի գյուտից առաջ: Նույնիսկ Մեսրոպը թարգմանիչ է կոչված Խորենացուց՝ իր քարոզչության դեռ առաջին շրջանում. «Եւ ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ, և եթէ այլ ոք ընթեռնույր, ուր նա ոչ հանդիպէր, զանխուլ ի ժողովրդոցն լինէր՝ յաղագս ոչ լինելոյ թարգմանչի» (Խորենացի, Գ, խէ): Ծիշտ այս խոսքից շատ հայտնի կերպով հասկացվում է, որ երկու տարբեր պաշտոն կար այն ժամանակ. ընթերցող և թարգմանիչ: Ընթերցողն այն էր, որ գեղեցիկ ձայն և լավ առողջանություն ունենալով, կարդում էր սուրբ գիրքը եկեղեցում. իսկ թարգմանիչը «Ս. Գրքի մեկնիչն» էր: Ընթերցողը հաճախ չէր էլ հասկանում կարդացածի միտքը, որովհետև ասորերեն կամ հունարեն էր: Բայց թարգմանիչը լավ գիտեր այդ լեզուներից գոնե մեկն ու մեկը և ընթերցումից հետո բնաբարձրանալով, աչքը պահած գրքի վրա, բացատրում էր հայերեն լեզվով՝ կարդացվածի բովանդակությունը: Սրա համար առանձին գեղեցիկ ձայն հարկավոր չէր, այլ միայն այն լեզուներին հմտություն և գիտություն: Բնականաբար այս պաշտոնները գոյություն ունեին այն ժամանակ, երբ հայերեն գրականություն չգտնվելով, եկեղեցական ընթերցվածները հունարեն և ասորերեն էին լինում և նրանք հայերեն լեզվով ժողովրդին բերանացի բացատրելու պետք կար: Անշուշտ ընթերցողներ ավելի շատ կային քան թարգմանիչներ. ուստի կարող էր պատահել, որ մի եկեղեցում ընթերցող լիներ, բայց թարգմանիչ չգտնվեր. այն ժամանակ ընթերցումը կատարվում էր սովորական կարգով, իսկ մեկնություն չէր տրվում,

ինչպէս խորենացին ասաց քիչ առաջ, և այն ժամանակ ժողովուրդը ոչինչ չէր հասկանում:

Արդի քննիչները, որ թարգմանիչ բառը սխալ մեկնելով իբրև ընդհանրապես Սահակի և Մեսրոպի աշակերտ են հասկանում, երկու խմբի են բաժանում նրանց. 1) Առաջին կամ երեց թարգմանիչներ, և 2) երկրորդ կամ կրտսեր թարգմանիչներ: Առաջին են համարվում այն աշակերտները, որ գրերի գյուտի ժամանակ բաժական հասակ և զարգացում ունենալով, կարող էին իրենց վարդապետներին օգնական ու գործակից հանդիսանալ թարգմանութեանց մեջ. իսկ երկրորդ են կոչվում առաջին թարգմանիչների աշակերտները, որոնք սրանց մոտ բավական կրթվելուց հետո, իրենց ուսումը կատարելագործելու համար ուղարկվեցին զանազան քաղաքներ: Առաջին աշակերտները 60 հոգի էին<sup>1</sup>. բայց նրանց մեծ մասի վրա հիշատակութուն չկա. նրանցից հայտնի են միայն.

- 1 Հովսեփ քանահա՝ կաթողիկոս Վայոցձորեցի.
- 2 Աբրահամ խոստովանող Զենակացի, եպիսկոպոս Բղնունյաց.
- 3 Անանիա կամ Անանիաս եպիսկոպոս Սյունյաց.
- 4 Գինթ կամ Գնիթ եպիսկոպոս Դերջանի.
- \*5 Եղնիկ կամ Եղնակ Կողբացի, եպիսկոպոս Բագրևանդա.
- 6 Երեմիա եպիսկոպոս Աղվանից.
- \*7 Կորյուն եպիսկոպոս Վրաց.
- 8 Մովսես եպիսկոպոս Վրաց.
- 9 Մուշե կամ Մուշեղ եպիսկոպոս Արծրունյաց.
- 10 Սամվել եպիսկոպոս Վրաց.
- 11 Տեր խորձենացի եպիսկոպոս Կայենական.
- 12 Աղան Արծրունի.
- \*13 Արձան.
- 14 Գիտ կամ Գյուտ Գողթնեցի.
- 15 Դանան.
- 16 Ծնովք.
- 17 Երեմիա երեց Վաղարշապատցի.
- 18 Թադիկ կամ Թողիկ.
- 19 Խոսրով կամ Խոսրովիկ թարգմանիչ.
- \*20 Ղևոնդ կամ Ղևոնդես երեց Վանանդեցի.
- 21 Մուշե Տարոնեցի.
- 22 Հովհան խոստովանող.
- \*23 Հովհան Եկեղեցացի.

<sup>1</sup> Օրմանյան, «Ազգապատում», Ա, էջ 277, ասում է, թե Սահակ ուներ 60 աշակերտ, այժմ ավելացան Մեսրոպի 40 աշակերտները («Սոփերք», Բ, էջ 9):

24 Լոմբարժան քահանա.

\*25 Լոմբեփ Պաղնացի.

26 Տիրայր Խորձենացի.

27 Վահան Ամատունի.

28 Լժայակ Մամիկոնյան.

(Այս թարգմանիչների մասին տե՛ս ի միջի այլոց Չամչյան, Ա, 535—541, Զարբհանալյան, «Պատմություն հայկական դպրության», Ա, էջ 272—277 և ավելի ընդարձակ՝ Լոմհանենս վարդապետ Միսքընյան, «Հանդես ամսօրյա», 1902, էջ 58—61 և 145—151):

Երկրորդ թարգմանիչներն են, ըստ Զարբհանալյանի (անդ, էջ 277—280).

1 Դավիթ Անհաղթ.

2 Գյուտ կաթողիկոս.

3 Լոմհան Մանդակունի.

4 Եղիշե.

5 Մովսես Խորենացի.

6 Յամբրե Վերձանող.

7 Ղազար Փարպեցի.

8 Եզրաս Անդեղացի.

9 Խաչիկ կամ Խաչատուր.

10 Անդրեաս.

11 Թաթուլ.

12 Վարոս:

Թարգմանիչների այսպիսի բաժանումը ըստ Գարագաշյանի «միտք է արդեաց» և գոյություն չունի իրականության մեջ: Սրանց համար իրրև պատմական փաստ են ծառայում «Յայամատուրք», Շնորհալի, Ասողիկ, Սամվել երեց և ուրիշ զանազան հետին մատենագիրներ, որոնց վկայությունը ի հարկն ամենևին զորություն չունի: Սրանց մեջ հիշենք հատկապես Կիրակոս Գանձակեցին, որ թարգմանիչների կարգն է դասում մինչև իսկ «Ստեփաննոս Սյունյաց եպիսկոպոս» և «Հոսեփանոս» (գեղազիր հույն). և որպեսզի սխալ հասկացողություն չկազմվի հիշյալ անձերի մասին, առաջինի համար ասում է. «Սիւնեաց եպիսկոպոս, բազում մեկնութիւնս եթող Սուրբ Գրոց, Յորայ և Աւետարանացն, այլև Դանիէլի և Եզեկիէլի, և զպատասխանիս թղթոյն Գերմանոսի պատրիարքին Կոստանդնուպոլսի»: Իսկ երկրորդի համար՝ «որ զգիրսն յարմարէր գեղեցիկ՝ Հոսեփանոս Սամոսացի»:

Շատ կասկածելի են մանավանդ կրտսեր կոչված թարգմանիչները, որոնցից ոմանք, ինչպես Դավիթ Անհաղթ և Մովսես Խորենացի, ոմանց կարծիքով Ս դարի հեղինակներ էլ չեն, այլ ավելի ուշ



ժամանակի: Իրրև առաջին թարգմանիչ մեջ բերված անձերը գրեթե բոլորն էլ ժամանակակից պատմագիրներից վկայված են, բայց սրանցից իսկապես միայն վեցն են, որ թարգմանիչ տիտղոս են կրթում, վերևում բացատրված նշանակությամբ: Այս անձերը նշանակել ենք աստղանիշով: Մյուսները իրոք աշակերտ եղել են Սահակին և Մեսրոպին, բայց թե սրանք էլ թարգմանիչ եղե՞լ են՝ հայտնի չէ: Գիտենք միայն, որ նրանք զանազան պաշտոններ են վարել Հայաստանում, ինչպես եպիսկոպոս կամ առաջնորդ, դպրոցների վերակացու, քահանա, սարկավազ և գործակից իրենց վարդապետներին, բայց այլ է աշակերտ և պաշտոնյա, այլ է թարգմանիչ:

Նմանապես նույն աշակերտները բոլորն էլ չեն մասնակցած այն գրական արտադրությունաց մեջ, որ Ծ դարից ժառանգություն են մնում մեզ: Ինչպես նախորդ գլուխներում տեսանք, դարձյալ նույն հինգ կամ վեց անձերն են, որ ասորերենից կամ հունարենից թարգմանությունաց մեջ դեր ունեն: Անշուշտ կարող են գտնվել սրանցից դուրս նաև ուրիշ անձեր հիշյալ 28 աշակերտների խմբից, որոնք դեր են ունեցել այս թարգմանությունաց կամ ուրիշ գրական աշխատությունաց մեջ, բայց նրանց անունները չեն հիշատակված:

#### 4

Ծ դարը համեմատելով հաջորդ դարերի հետ, շատ ճոխ է գրական արտադրության կողմից. սրանց թվական առավելությունը գերազանցում է բոլոր մյուս դարերից. միայն ԺԲ դարն է, որ կարող է այս կողմից մրցել Ծ դարի հետ: Գալով լեզվական արժանիքին, ոչ մի դար չկարողացավ մոտենալ ոսկեդենիկ լեզվին և Ծ դարի հայերենը ամեն դարի և ամեն ժամանակի համար եղավ լեզվի դասական օրինակ:

Ծ դարից մեզ հասած աշխատությունները շատ են և իրենց լեզվական փոխադարձ նմանությունից դատելով բաժանվում են չորս դասի կամ դպրոցի, այն է Եզնիկյան, Եփրեմյան, Կյուրեղյան և Ագաթանգեղյան: Այս դպրոցների լեզվական (կամ ոճական) տարբերությունները, ինչպես նաև յուրաքանչյուր դպրոցին պատկանող աշխատությունների ցանկը տե՛ս իմ «Հայոց լեզվի պատմություն» մեջ, մասն Բ, գլուխ ԺԶ:

Ոսկեդարի գործերը կարող ենք բաժանել նաև երեք տեսակի. 1) ինքնագիր գործեր, 2) ասորերենից թարգմանություններ, և 3) հունարենից թարգմանություններ: Ամենից սակավաթիվը առաջինն է. մեզ հասած աշխատությունների մեծագույն մասը պատկանում է երրորդ տեսակին, իսկ ասորական թարգմանությունները քանակով

րոնում են երկուսի միջին տեղը: Այսպես, ինքնագիր են միայն Եզ-  
նիկ, Կանոնագիրք, Սահակի և Մեսրոպի թղթերը, Կորյուն, Ագա-  
թանզեղոս և Բուզանդ. ասորերենից են Եփրեմյան զարոցի արտա-  
գրությունները և ուրբաներ, իսկ մնացյալը հունարենից է թարգ-  
մանված:

Բոլոր այս աշխատությունները, ինչպես ասացինք, արդյունք  
են Սահակի, Մեսրոպի և իրենց աշակերտների գրչի. բայց դժբախ-  
տաբար որոշակի հայտնի չէ, թե ո՞ր գործերը ո՞ր հեղինակից են:  
Բանասերները աշխատել են հեղինակի այլուստ ծանոթ աշխատու-  
թյունների լեզուն համեմատել անծանոթների լեզվի հետ և զրանով  
գտնել, թե այս վերջիններից որոնք ո՞ր հեղինակին են տրվել: Այս-  
պիսի համեմատական ջննության երևելի մի օրինակ տվեց Նորայր  
Բյուզանդացին իր «Կորյուն վարդապետ և Նորին թարգմանութիւնք»  
գրվածքով, որի մեջ ապացուցում է, թե Ագաթանզեղոս, Բուզանդ,  
Մակարայեցվոց երեք գրքերը և Եվթաղի Ս. Գրոց առաջարանները՝  
Մեսրոպի կենսագրության հեղինակի, այն է Կորյունի աշխատու-  
թյուններն են: Սրան հակառակ տե՛ս Կոզյան, «Մակարայեցվոց  
Բ գրքին հայերեն թարգմանությունը» (Վիեննա, 1923, էջ 19—20)  
և մեր նկատողությունը «Հայոց լեզվի պատմության մեջ» (մասն  
Բ): Գարագաշյանը կարծում էր, թե շորս մեծ մարզարևները, Ոս-  
կեբերանի մեկնություն Մատթեի, Թղթոցն Պողոսի, Եսայա, Մերն-  
դոց և Սեբերիանոսի ճառերը, որոնց մեջ ծանր, լուրջ ու հանդարտ  
մի լեզու է տիրում, թարգմանություններն են Սահակի՝ իբրև լուրջ  
և ծանրազուլու ալեզարդ ծերունու: Նույն հեղինակը կարծում էր  
դարձյալ, թե Մովսեսի Հնգամատյանը, Ավետարան և այլ այսպիսի  
սի վերլուծական շարադրությամբ (պարզագույն հայերենով) զր-  
ված աշխատությունները Մեսրոպինն են: Ավելի իրական փաստ  
ունենք ասորականից եղած թարգմանությունները (Եփրեմի «Մեկ-  
նութիւնք Հին և Նոր Կտակարանաց», «Համարարատ», «Մեկնու-  
թիւն Աւետարանի», «Մեկնութիւն Պողոսի 14 թղթոց», «Ճառք»,  
«Եւանգելիոսի Եկեղեցական պատմութիւն», «Զգօն», «Վարուրա Եղե-  
սացի», «Թուղթ Իգնատիոսի») վերագրելու Հովսեփ Պաղնացուն և  
Եզնիկ Կողբացուն, քանի որ Կորյունի վկայությամբ գիտենք, թե  
այս երկու աշակերտներն են, որ Եղեսիա ուղարկվեցին՝ ասորա-  
կան գրվածները հայերենի թարգմանելու համար: «Որոց դարձեալ  
դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս  
Ասորոց ի քաղաքն Եղեսացոց, զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցար,  
և երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն ի Կողբ գեղջէ,  
զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրոց զաւանդութիւնս,  
հայերէն գրեալս դարձուցեն» (Կորյուն, էջ 20): Մանոթ է նաև, որ

Աբրահամ Զենակացին թարգմանել է «Վկայք Արևելից»-ը, իսկ հունարենից եղած թարգմանությանց համար Կորյունը (էջ 21) հիշում է Ղևոնդի, իր՝ Կորյունի և Եղնիկի անունները: Բայց այս խընդիրը կարելի պիտի լինի ճիշտ կերպով լուծել միայն այն ժամանակ, երբ կկազմվի այդ շրջանի հայ մատենագրության ամբողջական համաբարբառը:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ

## ԹԵՈԴՈՐՈՍ ՄՈՊՍՈՒԵՍՏԱՅՈՒ ՀԵՐՁՎԱՆԸ

### 1

Կորյունը Սահակի և Մեսրոպի վերջին օրերին է դնում նեստորական հերձվածի երկրորդ հայտնությունը, որի դեմ մաքառեցին երկու հայրերը և կարևոր թղթակցություն ունեցան նշանավոր հույն եկեղեցական հայրերի հետ:

Այս խնդրի հանգամանքները հետևյալներն են:

Եփեսոսի ժողովից հետո, կայսերական հրովարտակով հրամայված էր ամենքին այրել նեստորի գրվածքները, ուր որ գտնվեին. նույնպես պատիժ էին սպառնացած այն անձերին, որոնք պահում կամ կարդում էին այդպիսի գրվածքներ: Նեստորականները տեսնելով, որ իրենց աղանդը իսպառ բնաջինջ պիտի լինի, մտածեցին մի ուրիշ հնարք: Սկսեցին հրապարակել նեստորի ուսուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու և սրա էլ ուսուցիչ Թեոդոր Տարսոնացու գրքերը, որոնց նպատակն էր Եվնոմիոսի և Ապոլինարի մոլորությունները հերքել: Նեստորականները նեստորի քարոզություններն էլ խառնելով նրանց հետ և պաշտպանելով նրանց մեջ գրվածքները իբրև ուղիղ և համաձայն սուրբ հայրերին, ուզում էին մի կերպ արդարացնել նեստորին, իբր թե ինքն էլ նրանցից տարբեր մի բան չէր քարոզած: Այս կարծիքները նաև արևելյան ազգերի մեջ տարածելու համար, նեստորականները Թեոդորոսի և Դիոդորի գրքերը հունարենից թարգմանելով հայերեն, պարսկերեն և ասորերեն լեզուների, սկսեցին ցրվել այս լեզուները խոսող ազգերի մեջ: Այս գրքերի շարքում հիշվում է հատկապես Թեոդորոս եպիսկոպոս Մոպսուեստացու (350—428) գրած մի գիրքը մոզական կրոնի դեմ (այժմ կորած), որ ուղղել էր Հայոց Μαστοβιοσ քորեպիսկոպոսին և որ Saint-Martin համարում է, թե մեր Մաշտոցն է (տե՛ս Փորթուզալ փաշա, «Եղիշե», էջ 159, նույնը և Աղոնց):

Հույն հայերը լսելով այս բանը, պարտք համարեցին գրել Հայաստան՝ զգուշացնելու համար, որ չխաբվեն այդ քարոզիչներից: Առաջին թուղթը գրեց Պրոկզ, որ Հովհան Ոսկեբերանի աշակերտն էր և 434 թվին Պուլսի Պատրիարքական դահլն էր բարձրացել: Այս թղթի մեջ, որ գրված է 435 թվին, Սահակի և Մեսրոպի անունով, Պրոկզը նախ բացատրում է ուղղափառ վարդապետության դավանությունը, հետո ցույց է տալիս նեոստորականների քարոզած մոլորությունները, որոնք մի առ մի հերքում է, և վերջապես հայտնում է, թե լսել է, որ մի քանի նեոստորական քարոզիչներ եկել են Հայաստան, հորդորում է հեռու մնալ նրանցից, անխախտ պահելով նշմարիտ դավանությունը:

Պրոկզի թուղթը հասած է մեզ շորս լեզվով. նախ՝ հունարեն բնագիրը, երկրորդ՝ հայերեն դասական թարգմանությունը, երրորդ՝ ասորերեն աղավաղյալ թարգմանությունը և չորրորդ՝ լատինական հարազատ թարգմանությունը: Հայերենը հրատարակված է նախ «Պատկեր» թերթի մեջ (1890, էջ 219—222, 271—276), հետո «Գիրք թղթոց»-ի մեջ (էջ 1—8) և մասամբ էլ «Կնիք հաւատոյ» ժողովածուի մեջ: Բայց հայերեն հրատարակության սկիզբը խանգարված և նրա հետ է խառնված Եղեիկի ծանոթ թուղթը նույն խնդրի առթիվ: Երեք լեզուների համեմատությամբ և առաջաբանական ուսումնասիրությամբ մի պատվական հրատարակություն ունի Հ. Արիստակես Վարդանյանը, տպված «Հանդես ամսօրյա»-ի մեջ (1921, էջ 1—25), որին հետևում ենք նաև մենք: Նույնը արտատպված է նաև «Ազգային մատենադարան»-ի շարքում (հատոր ԴԷ, էջ 1—40):

Թղթի վերնագիրն է՝ «Թուղթ Պրոկզեայ եպիսկոպոսի առ Սուրբըն Սահակ հայրապետ Հայոց և առ Սուրբն Մածոց»: Բայց հունարեն բնագրում այսպես չէ, այլ առանց անվան՝ ընդհանուր դիմումով. «Աստուածասէր և աստուածապաշտ եպիսկոպոսաց և քահանայից և վանահարց, որք միանգամ ընդ ամենայն համօրէն աշխարհն Հայաստանեայց Ուղղափառ Սուրբ Եկեղեցոյ»:

Թուրքովին ավելորդ համարելով թղթի դավանաբանական քարոզները, որոնցով ձանձրալի լինելու շահի ծայրալիր լցված է դժբախտաբար ամբողջ մեր հին մատենագրությունը, դնում ենք այստեղ նամակի բովանդակությունը, որ պատկանում է մեզ և մեր նյութին:

«Եւ զայս ամենայն զի գրեցաք առ սէր ձեր այգր, զի լու եղև մեզ, եթէ արք ոմանք ժանտախօսք ցնորախօսք անկան յաշխարհ այգր և կամին ժանտաժուտ իմն գրովք, հակառակութեամբ, ստարան ստախորհուրդ զիտութեամբ խտտորել զպարզամտութիւն, զանպաճուճ, զանմեքենայ, զուղղափառ գեղն հաւատոցն: Բայց ես զե-

րանելոյն Պօղոսի դառաքելոյն դարձեալ ասեմ ձեզ. Զգոյշ լինիջիք  
 զուցէ իցէ ոք, որ զձեզ կապուտ կողոպուտ թողուցու ճարտարմտու-  
 թեան բանիւք և ընդունայն խարէութեամբ վարդապետութեան ըն-  
 դունայնխորհուրդն մարդկան և ոչ ըստ վարդապետութեանն Քրիս-  
 տոսի. զի հիմն սրբութեան հաւատոյ այլ ինչ ոք ոչ կարէ դնել, քան  
 զայն որ եղեալն է, այսինքն է Յիսուս Քրիստոս: Արդ կացէք հաս-  
 տատուն ի մի հոգի և ի մի անձն՝ նահատակակիցք եղեալ հաւա-  
 տովք Աւետարանիս և մի՛ խրտուցեալք ընդոստանիցիք մի՛ յիմիք  
 ի շարեաց թշնամոյն և մի՛ ի նզով և ի կորուստ մատնիջիք ընդ  
 նեստորեայ և ընդ Քէդողորեայ, որ վարդապետն լեալ էր նորա և որ  
 զշար բոյսն երևեցոյց՝ զշարաբան նորաձայնս, որ անցուցին զան-  
 ցուցին ըստ ուրախութիւն հրէութեան և ըստ հերեսիութիւն առաջին  
 արիանոսացն և այլոցն, որ խոտորեցան ի փառացն սրբութենէ և  
 յուղիղն հաւատոց և նզովեցան նոքա յամենայն ժողովրդոց և այ-  
 րեցան որ վատի խորհրդոց գիրքն էին նոցա յանդիման ամենայն  
 ժողովրդոց: Յորմէ և դուք պահեսջիք զանձինս և զնոյն գործ գոր-  
 ծեսջիք, զոր սուրբ ժողովք եպիսկոպոսացն գործեցին, և մի՛ ոք  
 զառժամանակեայ ամօթն ամօթ անձին համարեալ՝ զյաւիտենից  
 ամօթն ժառանգեսցէ և ընդ նոսա դատապարտեալ ի դժոխս կործա-  
 նեսցի: Այլ պահեսջիք դուք զվարդապետութիւն, զոր ընկալեալ ի  
 հարցն սրբոց, որ ի Նիկիա սինհոդոսն էր ժողովոյն՝ զուղիղ և  
 զսուրբ փառս հաւատոցն հաստատեցին, և զոր վարդապետութիւն  
 սուրբն երանելիք Բասիլիոս և Գրիգորիոս և որ միանգամ նման  
 են նոցա, որ սրբութեամբ և հաւանութեամբ զսուրբ հաւատս ի կե-  
 անս իւրեանց հաստատեցին, որոց անուանքն գրեալ են ի դպրու-  
 թեան կենաց:

Ողջ լերուք ի Տէր և շնորհեալ լիջիք մեզ, աստուածասէր եղ-  
 բարք»:

Երկրորդ թուղթը գրեց Մելիտինեի Ակակ եպիսկոպոսը, որի  
 հետ արդեն բարեկամացած էր Մեսրոպը՝ իր ճամփորդությանց ժա-  
 մանակ: Այս թուղթը գրված է միայն Սահակի հասցեին և անշուշտ  
 նույն թվին: Թուղթը պահված է նույնպես ընտիր հայերեն թարգ-  
 մանությամբ «Գիրք թղթոց»-ի մեջ (էջ 14—15): Թուղթը, որ շատ  
 ավելի համառոտ է քան Պրոկղինը (ընդամենը երկու էջ), սկսում է  
 Սահակին ուղղված այսպիսի հարգական բառերով. «Որ ամենայ-  
 նիւ աստուածասէրդ ես և լի սրբութեամբ, տէր իմ և գործակից,  
 ըստ նմանութեան միոյ մարմնոյ յօղապատեալ...»: Հետո մի քա-  
 նի տողով պատմում է նեստորի ըմբոստությունը և դատապարտու-  
 թյունը, և ավելացնում. «Ուրեք ուրեք զպարզամիտս յիւր դարձու-  
 ցեալ ի շարակամութիւնն: Զահի հարեալ թէ՛ գուցէ և ի ձեր եկեղե-

ցիտդ արատ գտնել ճարակեցցի, լաւ համարեցաք ազդել առ ձեզ  
զհասարակաց օգուտն խորհելովս: Այնուհետև դնում է իր աստվա-  
ծարանական պայքարը Նեստորի դմն և վերջացնում է նամակը  
հետևյալ հորդորով. «Արդ՝ իբրև անուցուք զթուղթդ, ի վերայ իմոյ  
տկարութեանս աղօթս անպակաս մատուցիք Աստուծոյ: Բայց մեզ  
երկիւղ է, թէ գուցէ ի Քէնդորեայ Մամուեստիոյ սխմանէն (ըստ իս  
թերևս ուղղել սերմանէն) աշակերտեալ որ գացի և ի շար ժանգէն  
Նեստորի, ի միամիտ անձինս ազգիցէ: Զի զնորա մեացեալ զրեանն  
իբրև խնդիրս այս յայտնեցաւ, և մանաւանդ որ վասն մարմնախա-  
ռինն (?) զրեալ էր, վճիռ հրամանի ետուն սուրբ աշխարհածողով  
եպիսկոպոսացն, որ յմփեսացոց քաղաքին եղև, ի մի վայր ժողո-  
վել զրնաւ զրեանն և այլել: Արդ փոյթ լիցի ձեզ առանց պղտորու-  
թեան զհաւատն պահել, զի կատարեալ զարդարութիւնն անպա-  
կան ընկալչիք»:

Երրորդ թուղթը գրեց դարձյալ Մելիտինի Ակակ եպիսկոպո-  
սը հայ նախարարների հասցեով, նույն նպատակով և նույնպիսի  
հորդորներով, ինչպէս նախորդ երկուսը: Այս երրորդ նամակն էլ  
հասել է մեզ ընտիր հայերեն թարգմանությամբ, որ պահուած է  
«Գիրք թղթոց» համաքածուում (էջ 19—21): Թուղթը սկսվում է հե-  
տևյալ ողջունի խոսքերով. «Պատուական և առաջինի նախարարք  
Հայոց, սիրելիք և ծառայք Քրիստոսի, մեծամեծք և փոքունք, յԱ-  
կակայ եպիսկոպոսէ Մելիտինէ, ի կրտսեր ծառայէ խոնարհութեամբ  
և սիրով ողջունս»: Դարձյալ խոսում է Նեստորի հերձվածի մասին  
և շատ աղաչական բառերով խնդրում է, որ լիարվեն մուրթիչնե-  
րից: Վերջանում է նամակը այսպիսի խոսքերով. «Այլ ես թէպէտ և  
խոնարհ և զծուծ եմ քան զամենայն մարդիկ, սակայն վասն փր-  
կութեան ձերոյ հողալ ոչ դադարիմ. և ես երկնչիմ գուցէ զոք շար-  
ժիցէ ի ձէնչ պատրանք մուրթութեանն. եդի զայս վկայութիւն առա-  
ջի Աստուծոյ» և այլն:

Պրոկղի թղթին պատասխանեցին Սահակը և Մեսրոպը. պա-  
տասխանը հասել է մեզ զասական շրջանի պատվական հայերե-  
նով. հրատարակված է նախ «Սոփերք»-ի Բ հատորում (Վենետիկ,  
1853, էջ 137—149) և հետո «Գիրք թղթոց»-ում (էջ 9—13): Նույնը  
կա նաև Տնտգլյանի «Կորյուն»-ի քննական հրատարակության մեջ  
(էջ 89—92):

Վերնագիրն է՝ «Պատասխանի թղթոյն Պրոկղի երանելոյ, ի  
Սահակայ և ի Մաշդոցէ, սուրբ վարդապետացն Հայոց»: Այս վեր-  
նագիրը ի հարկն հետո է կազմված:

Նամակն սկսում է հետևյալ ողջունի խոսքով. «Առ ճշմարիտ  
և աստուածասէր պատուական տէր մեր և հայր, սուրբ եպիսկոպոս

Պրոկղոս, ի Սահակայ և ի Մաշդոցէ ողջոյն»: Այնուհետև դրվում է մի շատ բանաստեղծական պատկեր. «Քո լույսի ճառագայթները ծագեցին մեր վրա և մեր տկար խորհուրդներին զորութուն տվին, ինչպես քաղցր ցողը՝ որ իջնելով տոթից տառապած հասկերի վրա, առողջութուն է տալիս նրանց»: Ահա Սահակի և Մեսրոպի բուն բառերը, թեև մի քիչ խանգարված հետին արտագրողներից.

«Ճառագայթք մշտնջենատուր յաւիտենական լուսոյդ որ առ մեր տկարութիւնս երևեցան ի ձեր լուսաւոր սրբութենէդ, յոյժ ի ծագել իւրեանց զօրացուցին զմեր տկարութիւնս և զմեր տկար խորհուրդս բազմապատիկ զօրացուցին, և մեծապէս զկողմն տկարացեալ անդրէն արծարծեալ նորոգեցին, զի անդէն վաղվադակի թուեցաւ մեզ որպէս նոր ինչ անցք ի վերայ հասանել բազում անձկալի գթոյն զոր օրինակ անցք անցանիցեն ընդ քաղցրաբեր բոյսս արտոցն քաղցրութեան ցօղոյն ի վերայ իջանելով և զտապ տառապոյն հասկալից բուսոյն ի ջերմախառն յանբարեխառն օդոցն՝ իւրով քաղցրութեամբն բժշկութիւն դարձուցանելով»:

Այնուհետև Սահակը և Մեսրոպը ցավ են հայտնում, որ հունաց մեջ այդպիսի ժանգ է տարածվել, և թե իրենք խիստ պատվեր են ուղարկել՝ Հայաստանի ամեն կողմը՝ չընդունելու ամենեւին այդպիսի մոլար ուսմունքը. «Անդ որովհետև մոլարն առաջին և գլխատրն ի շարիս զիւր ժանգ աղտեղութեանն կարկառեալ սերմանել ժարհեցաւ, զայս մեք մեղաց գործ համարեցաք, և ընդ մեծամեծ բազում և անչափ ձերում թղթոյդ տրտմակից եղեալ՝ ըստ մերում տկարութեանս ողբացաք; և յամենայն տեղիս որ շուրջ զմեք բնակեալ էին, յղեցաք՝ մեծ և պատուհասալից պատուիրանաւ մի՛ լսել բնաւ ամենևին զայդպիսի բարբարոսս, մի՛ ընդունել ամենեւին զվնասաբեր կորստական մոլորական հերեսիութեանն վարդապետութիւնն»: Հետո տալիս են հայոց դավանանքը. հորդորում են, որ հույներն էլ հոգ տանեն հերետիկոսութեան առաջն առնելու իրենց երկրում. իսկ Հայաստանում Թեոդորոս Մոպսուեստացու վարդապետութիւնը մուտք չէ գտած, և եթե երբեք այդպիսի բան պատահի, իրենք ամեն միջոց պիտի գործադրեն արմատախիլ անելու համար:

Ակակի առաջին թղթի պատասխանը գրված է միայն Սահակի կողմից և կարելի է ասել, թե նախորդ թղթի համառոտութիւնն է միայն, սկսած բոլորովին նույն ձևով և վերջացած նույն ձևով: Թուղթը հրատարակված է նախ «Սոփիերք»-ի Բ հատորում (էջ 150—156) և հետո «Գիրք թղթոց»-ում (էջ 16—18):

Ակակի երկրորդ թուղթը, որ ուղարկված էր հայ նախարարներին, մնաց անպատասխան, կամ եթե երբեք նախարարները պատասխանեցին, այդ պատասխանը մեզ չէ հասած:

Այս թղթակցությունից հետո, ինչպես սպասելի էր, Սահակը և Մեսրոպը որոնեցին գրսից եկած այդ քարոզիչներին և Հայաստանից դուրս վանդեցին: Ահա Կորյունի խոսքերը այս առթիվ. «Յայնմ ժամանակի բերեալ Երեւնցան Հայաստան աշխարհին գիրք սուտապատուաբ, ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրումն հոռոմի, որում Քէոզդոս անուն (Տնտգլյանի հրատարակութեան մեջ ուղղված է Քէոզդոս, ինչպես ունի Փոքր Կորյունը): Վասն որոյ սինհոդոսական հայրապետացն՝ եկեղեցեացն սրբոց նշանակեալ ազդ առնէին՝ ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մաշթոցի: Եւ նոցա ճշմարտաւէր փութով զայն ի միջոյ բարձնալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց մերժեցին. զի մի՞ ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէ» (Կորյուն):

Այս խոսքերից երևում է, որ 1) հերձվածողների գրքերը Հայաստան բերվել են, 2) այդ լսելով հայրապետները զգուշացուցիչ գրեր գրել են և 3) Սահակը և Մեսրոպը նրանց արտաքսել են երկրից դուրս:

Բայց Չամչյանը և իր հետևորդները այս տեղից սկսած, ստեղծում են մի ընդարձակ պատմություն: Իրր թե Սահակը զգուշութեամբ քննելով հերձվածողական գրքերը, հրաման հանեց նոր ժողով գումարելու Աշտիշատի մեջ, այն է երրորդ ժողով Աշտիշատու, որ ըստ Չամչյանի գումարվեց 436 թվին, նախորդ ժողովից 3 տարի հետո: Այդտեղ հավաքվեցին Հայաստանի եպիսկոպոսները, երեցները և վանականները, մեջ բերվեցին Քեոզդոսի գրքերը, որոնք քննության ենթարկելով, գտան, թե հակառակ են սուրբ հայրերի վարդապետության և համաձայն նեստորի քարոզության: Ուստի միաբան վճռով նզովք դրին նրանց վրա և հերքեցին: Նույն ժողովում Սահակը մի ճառ խոսեց Բանին մարդեղության վրա, հայտնելով, թե Միածին Որդին Աստուծո անարատ Կույսից առավ մեր բնությունը և եղավ մարդ կատարյալ և Որդի Մարդո, Բանի անձնավորության մեջ անբաժանելի և անշփոթ միավորությամբ միացած: Այս բանը հիշատակում է Վահան եպիսկոպոս Նիկիո, Շիրակավանի ժողովում՝ ըստ Չամչյանի (Ա, էջ 527), հանելով Հովհան Իմաստասեր կաթողիկոսի գրքերից. «Սուրբն Սահակ ասաց ի ճառին՝ որ յԱշտիշատն խօսեցաւ, մեք խոստովանիմք...» (ձեռագիր Վենետիկի, էջ 172):

Այնուհետև Սահակը բոլոր ժողովականների հետ միացած՝ Քեոզդոս Մոպսուեստացու գրքի դեմ ուղիղ դավանության մի թուղթ գրեց Պուլսի Պրոկղ պատրիարքին՝ խնդրելով նրա հավանությունը:



Ուղարկեցին նաև Թեոդորոսի գրքից ինչ-ինչ մասեր, ուր Թեոդորոսը նենգուպատիր խոսքերով Քրիստոսին բաժանում էր երկու Որդու Հայտնեցին նույնպես, թե իրենք մերժել են այդ գիրքը, այդ վարդապետութունը և այդ աղանդավորներին: Այս թուղթը ուղարկվեց Պրոկղի՝ Թարգմանիչներից մեկի միջոցով, որ հունաց և լատինաց գրքերում կրում է մերթ Աբեբիոս և մերթ Աբելլիոս (Աբել) անունը, իսկ Չամչյանը համարում է Ղևոնդ Երեց և իր աշակերտակիցը՝ Աբրահամ:

Պրոկղը կարգաց հայոց թուղթը և Թեոդորոսի գրքերը, մերժեց Թեոդորոսի խոսքերը և շատ հավանեց հայոց ուղիղ վարդապետության, ժողով գումարեց իր եպիսկոպոսների հետ և նրանց հետ միացած՝ դավանության ընդարձակ մի թուղթ գրեց Հայաստան: Այս թուղթը, որ եկեղեցական տարեգրության մեջ նշանավոր է, թեև հայերեն չէ թարգմանված, բայց կա հունարեն և լատիներեն (վերջինը Դիոնիսիոս կարճահասակի ձեռքով, «Praefatio» և այլն): Չամչյանը լատիներենից թարգմանում է նաև թղթի առաջին և վերջին մասերը: Թուղթը Պրոկղը ուղարկեց նույն Ղևոնդ և Աբրահամ թարգմանիչների միջոցով: Սահակը և Մեսրոպը հալածանք հանեցին հերձվածողների դեմ և նորեկ քարոզիչները դեռ մեր երկրում չավ չհաստատված՝ դուրս վտարվեցին:

Այս բոլորը կեղծիք է. Աշտիշատում ժողով գումարված չէ ո՛չ առաջին և ոչ երկրորդ. ամբողջ իրողութունն այն է, որ Պրոկղը մի թուղթ և Ակակը երկու թուղթ է գրել հայոց, որոնց պատասխանել են հայերը: Ո՛չ ճառախոսություն կա Աշտիշատում և ո՛չ գրքերի առաքում: Սուտ է Վահան եպիսկոպոս Նիկիո, սուտ է և Պրոկղի երկրորդ կոչված թուղթը, որ ճիշտ այն է՝ ինչ որ վերը ցույց տրվեց և որ հայերեն դասական շրջանի թարգմանությամբ էլ կա: Այս մասին համոզող խոստում է Աբել եպիսկոպոս Մխիթարյանցը, «Պատմութիւն ժողովոց» (էջ 53), հերքելով Չամչյանի ասածները, իսկ ավելի գիտական ձևով Հ. Ա. Վարդանյանը, որ հերքում է Պրոկղի երկրորդ թուղթը, ինչպես տեսանք վերևում: Ցավալի է, որ այս բոլորից հետո և այս բոլորին անգիտակ, Ադոնցը նորից է քննության ենթարկում այս հարցը, հավատում ուշ ժամանակի պատմիչ Լիբերատի վկայություններին և դրա հիման վրա խաբեբա դուրս բերում Կորյունին: Իբր թե Կորյունը վերոհիշյալ Աբերիոսն է (երկու անունների մեջ էլ ռ կա և այս բավական է երկուսին նույնացնելու համար), որ Ղևոնդի հետ գնացել է Պոլիս ոչ թե թարգմանչական գործով, այլ կրոնական առաքելությամբ՝ նեստորական հարցով: (Տե՛ս իր ուսումնասիրությունը «Հանդես ամսօրյա», 1925, մայիս—նոյեմբեր):

Շատ համոզիչ և հաշտարար ելք է տալիս հարցին Լ. Ն. Ակիբյանը, որ իր ուսումնասիրությունների մեջ («Հանդես ամսօրյա», 1935, էջ 485) մանրամասն քննելով խնդիրը, հասնում է այն եզրակացության, թե վեճը, թղթակցությունը, գրքերի առարկաներ և այլն կատարված են Հունահայաստանի հետ: Ակադի երկրորդ թուղթը՝ «Առ պատուական և առաքելի նախարարս Հայոց», ուղղված է հունահայոց իշխաններին: Դրա համար էլ պատասխանը շունենք մեր ձեռքին: Ակադիոս, իբրև Մելիտինի եպիսկոպոս, կարող էր միջամտել լինել իր սահմանակից հունահայոց կրոնական գործերին և զբաղվել նրանցով, քանի որ նրանք բուն Հայաստանի կաթողիկոսական իրավասությունից դուրս էին: Համենայն դեպս, Պարսկական Հայաստան ո՛չ նեստորականներ էին մուտք գործել և ոչ էլ Քնոզորի գրվածքների շուրջը խնդիր էր հարուցված, ինչպես իմանում ենք Սահակի պատասխանից:

### 3

Կանոնադրի մեջ Սահակի անունով կան սակայն ընդարձակ կանոններ, ընդամենը 55 կանոն, բաժանված վեց գլխի, որոնք բոլորը վերաբերում են եկեղեցական պաշտոնյաների կարգապահության և եկեղեցիների հասույթին: Ամբողջական հրատարակությունը տե՛ս «Կանոնգիրք» (հրտ. Ղլտճյան, Թիֆլիս, 1913, էջ 15—56): Թե ե՛րբ և ո՛ր որոշվեցին այդ կանոնները՝ ոչինչ հայտնի չէ պատմիչներից: Արեւի եպիսկոպոս Մխիթարյանցը, «Պատմութիւն ժողովոց» (էջ 39), դնում է Վաղարշապատի ժողովում, որ տեղի է ունեցել իբր թե 426 թվին: Օրմանյանն էլ («Ազգապատում», Ա, էջ 283), խոսում է նույն կանոնների մասին, բայց ո՛չ ժողովի տեղն է հիշում և ոչ թվականը: Եվ հայտնի չէ, թե որքան վավերական են դրանք:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

ՍՍՀՍԿԻ ԵՎ ՄԵՍՐՈՊԻ ՎԱՆՁԱՆԸ

### 1

Եթե Սահակին և Մեսրոպին էր վերապահված տեսնել առաջին անգամ մեր երկրի մտավոր ու գրական ծնունդը, իրենց էր վերապահված նույնպես տեսնել Հայաստանի քաղաքական քայքայումը՝ Արշակունյաց պետության կործանումը: Շատ աշխատեց

Սահակը արգելելու համար այդ կործանումը, բայց դեպքերը իրենից շատ ուժեղ էին: Հայրապետի հորդորները, խրատներն ու սպառնալիքները անզոր մնացին սանձելու կամ կանգնեցնելու համար ըմբոստ կրքերը: Արշակունյան տերութիւնը կործանվեց և այն օրից սկսվեց հայոց դարավոր ստրկութեան ծանր լուծը: Քաղաքական կյանքի հետ կործանվեց նաև երկրի գրական կյանքը. Ս դարի այն գրական հսկայական շարժումը կանգ առավ, և եթե հայութիւնը մնաց այնուհետև, ի շնորհս իր անջատ ու անկախ կրօնական կյանքի և իր սեփական լեզվի ու գրի էր:

Փարպեցին և Խորենացին բավական ընդարձակ կերպով պատմում են այս տխուր դեպքերը, որոնց մասին և ոչ իսկ ակնարկութիւն ունի Կորյունը՝ Մաշտոցի համառոտախոս կենսագիրը: Բայց որովհետև հիշյալ դեպքերը ներքնապես անձուկ կապակցութիւն ունեն Մեսրոպի կենսագրութեան հետ, ուստի հարկավոր ենք համարում համառոտ կերպով ամփոփել:

Խոսքով Գ-ի երկրորդ անգամ ութամսյա թագավորութիւնից հետո, Հայաստանի վրա թագավոր էր նշանակված Հազկերտի որդին՝ Շապուհը: Շապուհի փախուստից և սպանութիւնից հետո, նախարարների խնդրանքով, Վռամը թագավորեցրեց Վռամշապուհի որդի Արտաշեսին: Սա իզամուլ և վավաշոտ մեկը լինելով, նախարարները վերջապես զզվեցին նրանից և Սահակին դիմելով բողոքեցին նրա դեմ: Եթե հավատանք Փարպեցուն, նախարարներին պահանջն այն էր, որ Սահակը գահազուրկ անել տար Արտաշեսին, անշուշտ նրա տեղ մի ուրիշին գահ բարձրացնելու համար: Ամենևին չի երևում նախարարների խոսքերի մեջ գոնե մեծնափոքր միտում հայոց թագավորութիւնը կործանելու և պարսիկ վերակացու բերել տալու. ընդհակառակը, նրանք ավելի նախանձախնդիր են հայոց բարոյական կյանքի սրբութեան և պահանջում են, որ այդ սրբութիւնը խանգարողը հեռացվի: «Արդ քեզ նախ պարտ է,— ասում են նրանք Սահակին,— այսպիսի անհնարին աղետից խնդրել հնարս, և բառնալ ի միջոյ զայնպիսի ամբարըշտեալ թագատր, որ այսպէս յայտնի իբրև զանհաւատ արհամարհանօք առ ոտն հարկանէ զսրբութիւն, և աներկիւղ կամասկարութեամբ գործէ զաղտեղի գիճութիւնս» (Փարպեցի, էջ 53): Բայց Խորենացին Փարպեցու հիշյալ պատմութիւնը մի քիչ խանգարելով, ասում է, թե նախարարները հրավիրեցին Սահակին միանալու իրենց հետ՝ շարախոսելու պարսից թագավորի առաջ Արտաշեսին և գահազուրկ անելով նրան, պարսիկ մի վերակացու բերել տալու (Խորենացի, Գ կգ):

Սահակն աշխատեց նախ համոզել նախարարներին, որ հետ

կանգնեն այսպիսի նպատակից. բայց երբ տեսա՞մ, թե նրանք անդրդվելի մնացին, քաշվեց իր խուցը՝ լալու և ապաշխարելու համար: Մի քանի օր հետո, նախարարները նորից հավաքվեցին և իրենց պահանջի վրա պնդեցին. Սահակը դարձյալ հորդորեց նշրանց, որ հրաժարվեն իրենց մտքից և Աստուծուն աղտոթեմ Արտաշեսի դարձի համար. բայց այս հորդորներն էլ օգուտ չունեցան. այն ժամանակ Սահակը բացնիրաց հրաժարվեց նախարարներին միանալուց, որով նրանք ստիպվեցին Սուրմակ անուն մի երեցի հետ դիմել պարսից դուռը՝ ամբաստանելու Արտաշեսի մասին: Վոսմը կանչեց Արտաշեսին ու Սահակին՝ երկու կողմերն էլ լսելու համար, Արտաշեսին իբրև ամբաստանյալ և Սահակին իբրև վհու: Արտաշեսը մերժեց իր մասին եղած ամբաստանությունները, իսկ Սահակը ո՛չ միայն վկայություն չտվեց, այլև խիստ պատասխաններով զայրացրեց թագավորին: Գործը հակասություն ընկնելով, նախարարները առաջարկեցին մինչև իսկ հրաժարեցնել Արտաշեսին և մի պարսիկ վերակացու նշանակել: Այս բանը սիրով ընդունեց Վոսմը և Արտաշեսին զահընկեց անելով, տեղը Վեհմիհրշապուհ անուն մի պարսիկ մարզպան նշանակեց, և Սահակին էլ կաթողիկոսությունից զրկելով, Սուրմակ երեցին նրա տեղ դրավ:

Այսպես վերջացավ հայոց Արշակունի թագավորությունը, որի կործանումը թեև պարսից զորավոր պետությունն էր պատրաստել, բայց վերջին բոպեի պատասխանատու դերերից մեկն էլ Սահակի վրա է ընկնում: Արտաշեսի դեմ ծագած ապստամբությունը հրկիրին նպաստավոր մի հետևանք տալու գույնն ուներ. Սահակը եթե չկարողացավ հորդորներով առաջին առնել այս ապստամբության, պարտական էր հակվել ապստամբների կողմը և խոհեմությունը երեք ձեռքից շթողնելով, աշխատել մի արժանավոր հաջորդ ընտրել տալու: Բայց այսպես չարավ Սահակը, կրոնական նախապաշարմունքով միշտ անհպելի մի անձնավորություն համարելով թագավորին, որի ցավալի արդյունքը թե՛ իր անձի և թե՛ թագավորի իսպառ անկումն եղավ:

## 2

Սահակի տեղ հայրապետ նշանակվեց Սուրմակը, որ իր անվալել բարբի համար մի տարի հետո հալածվեց նախարարներից: Նրան հաջորդեց Բրքիշո անուն ասորին, որի ապօրինի վարմունքներին նույնպես չկարողանալով հանդուրժել նախարարները, երեք տարի հետո խնդրեցին Վոսմից զահընկեց անել նրան: Բրքիշոյից հետո Վոսմը նշանակեց Շմվել ասորուն, որի ընտրության պարա-

գաների մասին լուռ է Փարպեցին, իսկ Խորենացին՝ (Գ, կԵ) հետևյալ տեղեկութիւններն է տալիս:

Բրքիշոյից հետո նախարարները երկուսի բաժանվեցին. առաջին խումբը Վոսմի մոտ պատգամավոր ուղարկեց Վաչե Արծրունուն և Հմայակ Աշոցա իշխանին, խնդրելով, որ թագավորը աթոռակալ նշանակեր ում որ ուզենար. իսկ երկրորդ խումբը ուղարկեց Մանեճ Ապահունուն և Սպանդարատ Արշարունուն՝ Սահակին կաթողիկոս խնդրելու համար: Սահակի համար պատգամավոր ուղարկեց նաև Հունահայաստանի Անատոլ զորավարը Կուկայառիճի Հավուկ իշխանին, խնդրելով որ եթե Վոսմին հաճելի չէ Սահակին կաթողիկոս նշանակել Պարսկահայաստանի համար, թող նշանակի Հունահայաստանի համար: Վերջապես հայոց բոլոր եպիսկոպոսները միանալով Մեսրոպի հետ, պատգամավոր ուղարկեցին Տիրուկ քահանային, որ Մովսիսիկի որդին էր, Վանանդ գավառի Զարիշատ քաղաքից: Սրանք նույնպես Սահակին էին խնդրում նշանակել կաթողիկոս: Վոսմը լսեց երկու կողմերին էլ, Շմվելին նշանակեց եպիսկոպոսապետ, իսկ Սահակին՝ Շմվելի հավանութամբ եպիսկոպոս ձեռնադրող:

Շմվել կաթողիկոսը նստելով, ավելի վատ վիճակ բռնեց քան իր երկու նախորդները. նա չէր թողնում, որ վախճանյալ եպիսկոպոսների փոխարեն Սահակը նորերին ձեռնադրեր, իսկ կենդանի եպիսկոպոսների էլ ինչքը չնչին պատճառաբանութամբ խլում էր: Այսպիսով բոլոր եպիսկոպոսները ատեցին նրան ու հեռացան նրանից. ասպարեզը մնաց իրեն ու Սուրմակին:

Այս վիճակի մեջ Սահակը և Մեսրոպն ամենևին չկասեցան իրենց գործունեութիւնից, այլ աշխատեցին միշտ ազնոգեւոր կաթնընդ դիեցուցանել մանկանց Եկեղեցւոյ՝ Սահակը քաշվեց և գործեց Բագրևանդ գավառում, իսկ Մեսրոպին նշանակեց Վաղարշապատի մայր եկեղեցում (Խորենացի, Գ, կԳ):

Շմվելը հինգ տարի պաշտոնավարելուց հետո մեռավ. այն ժամանակ հայ նախարարները հավաքվեցին Սահակի մոտ և խընդրեցին, որ ընդունի ընդհանուր հայրապետութիւնը, խոստանալով ամեն կերպ աշխատել և կաթողիկոսութեան հաստատութիւնը բերել տալ Վոսմից: Սահակը բացեիբաց մերժեց և հրաժարվելով աշխարհային ամեն զբաղմունքից՝ տվեց իրեն աղոթքի և ուսուցման, որովհետև մինչև այն ժամանակ կրոնավորները չէին ուզում բնավ հեռանալ նրանից և միշտ պարապում էին նրա մոտ. «Եւ յայնմ հետէ ամփոփեալ զինքն առաքինւոյն յամենայն աշխարհաժողով զբօսանաց, աղօթից միայն պարապէր և վարդապետութեան. վասն զի բազումք յեպիսկոպոսաց և յայլոց ի պատուական քա-

հանայից ոչ երբեք ժուժինն տենէ և մեկուսանալ ի մշտաբարոզի աղբերէ վարդապետութեան սրբոյն, որ ուրեք և զիպէր, ի յուտանի և կամ ի հովա (Փարպեցի, էջ 102):

3

Նույն ժամանակները Սահակը ծանր հիվանդացած Բագրևանդում, և որովհետև պարտից բանակը Բագրևանի վրա էր հարձակվել, նրանց նեղություններից ազատելու համար, Սահակի աշակերտները փոխադրեցին նրան Քլուր կամ Բլրոցաց գյուղը, իրրե ամէլի ապահով և զերծ տեղ: Այս գյուղը այսօր էլ ծանոթ է Յահնիթեպե անունով և իրոք որ մեծ պողոտայից հետո, լեռների ստորոտը բաշված, մնում է անկյունում (Օրմանյան, «Ազգապատում», Ա, 319): Կորյունը, առանց այս մանրամասնությունները նշանակելու, պատմում է, թե Սահակը շատ խոր ձերության մեջ վախճանվեց Հազկերտի Թագավորության առաջին տարին, Բագրևանդ գավառի Բլրոցաց գյուղում, Նավասարդ ամսի 30-ին, շրեքշարթի, ճիշտ իր ծնված օրը, արևելյան ժամը 2-ին: (Փարպեցի, հրատ. Վենետիկ, էջ 103 և Փոքր Կորյուն, էջ 28, դնում են «չերբորդ ժամուս, ինչպես գրված է նաև Կորյունի երկու ձեռագրերից մեկի լուսանցքում: Բայց սա ճիշտ չէ, որովհետև Փարպեցու ձեռագրերը Կորյունի հետ ունեն «չերկրորդ» ընթերցվածը և այսպես է նոր հրատարակությունը, էջ 37):

Փարպեցու պատմությանը, իր վախճանի ժամանակ, մահվան անկողնի շուրջը բոլորված էին իր երեք թոռները՝ Վարդան, Հմայակ և Համազասպյան՝ Մամիկոնյան երեք եղբայրներ, որոնք ծնված էին Սահակի Սահականույշ աղջկանից, ամուսնացած Համազասպ Մամիկոնյան իշխանի հետ: Եվ որովհետև Սահակը արուզավակ լուներ, ուստի իր ամբողջ կալվածները նրանց հանձնեց՝ ի ժառանգություն Մամիկոնյան ցեղի: Հետո բարձրացրեց իր ձեռքերը, օրհնեց նրանց, պատվիրեց հաստատուն պահել միշտ լուսավորչի դավանությունը, որի բարոցության և ռեսուցման համար այնքան աշխատանք էր թափել ինքը:

Սահակի հուղարկավորությունը փառավոր ճամփորդություն եղավ. իր պատվական մարմինը վերցրին բոլոր իր ձեռքի տակ սրնված ու սովորած աշակերտները, որոնց գլխավորն էր Նրեմիա սարկավազապետ: Ներկա էին նաև Սահակի հարսը՝ Դուստր կամ Դրստրիկ տիկինը (ըստ Ասողիկի, էջ 77, Դիստիկ), որ Վարդան Մամիկոնյանի կինն էր, մի խումբ նախարարներ և բազմաթիվ ժողովուրդ: Այս ամբողջ խումբը ճանապարհ ընկավ Բլրոց գյուղից և սաղմոս-

ներով ու հոգևոր երգերով, միշտ ցերեկը ճամփորդելով, մի քանի օր հետո հասավ Տարոնի Աշտիշատ գյուղը, որ Սահակի բնիկ գյուղն էր և ուր անց էր կացրել իր մանկութունը: Այս գյուղի մեջ հանգչեցրին նրա մարմինը, որից հետո ամեն մարդ դարձավ իր տեղը:

Կորյունի խոսքերից այնպես է երևում, թե Սահակի մարմինը գյուղի եկեղեցու մեջ թաղվեց. «Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեղ սրբոցն, հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք եղնալ և կնքեալ քրիստոսադրոշմ կնքովն և զօրինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ, այնուհետև իւրաքանչիւր դառնային» (Կորյուն, էջ 25): Բայց ըստ Փարպեցու եկեղեցին հետո շինվեց Սահակի գերեզմանի վրա, որ թանկագին սպասներով զարդարեցին. հետո հիմնեցին նաև միաբանների համար վանք, նույնպե՛ս տոն հաստատեցին, և ամեն տարի նավասարդ ամսի 30-ին, մոտերքից և հեռուներից անհամար ժողովուրդ գալով տոնում էր Սահակի մահվան հիշատակը: Ուր և շինեալ եկեղեցի մեծապայծառ և վկայարան սրբոյն՝ զարդարեցին պատռական և մեծագին սպասուք. հիմնացուցեալ կանգնեցին ի տեղւոջն վանս բազմութեան պաշտօնէից. կարգեալ դարմանս անպակաս պտղոց ի հանգիստ առաւելեալ եղբայրութեանն. ժողովս տարևորականս աշխարհայորդոր բազմութեամբ հաստատեցին ի տեղւոջն, որ ըստ ժամանակի բազմամբոխ ժողովրդօք կամաւոր յօժարութեամբ՝ ազատք և քահանայք գաւառին, այլ և կարի յոյժ հեռաւոր տեղեաց դիմեալք յօր կարգադրութեան նորա տօնեն» (Փարպեցի, էջ 104—105), «չերկոսան նաւասարդի ամսեանն» (Փոքր Կորյուն, էջ 29):

Այսօր Մշո Մայրավանքից դեպի վեր բարձրացող լեռան վրա, Դերիք կոչված փոքրիկ գյուղի մոտ անշուք և անձուկ, անարգ տեսքով և հազիվ մարդաշափ բարձրութեամբ մի շենք կա, կոշտ ու սևացած կամարով ծածկված, որի ներքև և կիսովի պատին խառնըված մի քարի տակ հանգչում է Ազգի և Եկեղեցու, լեզվի և գրականութեան մեծագույն երախտավորի ոսկորները: Սահակի գերեզմանին շատ մոտ է Աշտիշատի Մայր Եկեղեցին, որի հիմքերը և սակավ մնացորդները դեռ տեսնվում են:

#### 4

Սահակի մահից հետո, իր ձեռքի տակ սովորող բոլոր կրոնավորները ցրվեցին գավառները, ուր վանքեր շինելով, միաբանություններ հաստատեցին (Խորենացի, Գ, կէ, Օրմանյան, «Ազգապատում», Ա, 320):

Իսկ երանելին Մեսրոպ, որ ներկա չէր Սահակի մահվան և

հուղարկավորութիւն, լսելով իր ամագ ընկերակցի մահը, խոր տրտմութիւն և ծանրաթախիծ սուգի մեջ ընկավ: Չկար այլևս այն հայրական քաղցր ձայնը, որ իր եռանդուն գործունեութիւն ժամանակ քաջալերութիւն և տխուր վայրկյաններում մխիթարութիւն էր տալիս, որ իր կորովի գործակցութեամբ և հեղինակավոր հրամանով իրեն աշակցութիւն էր ցույց տալիս: Հայոց թագավորութիւնը կործանված, Հայոց Հայրապետութիւնը անարժան անձնրի ձեռքը խաղալիք դարձած և քահանայապետութեան վերջին շառավիղն էլ հանգուցալ: Ո՞վ պիտի կարողանար այլևս մխիթարել տառապալ ու հուսակտուր ծերունուն: Եվ թէև այս խորունկ տրտմութիւնը չէր թողնում իրեն մի վայրկյան զվարթանալ, բայց պարտականութեան ձայնը կենդանի էր և զորեղ: Սահակի մահից հետո, Հայրապետական Աթոռի տեղապահութիւնը Վաղարշապատում հանձնվել էր Մեսրոպին: Այս մասին վկայում է Կորյունը՝ շատ հակիրճ մի ակնարկով. «և զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ՝ շնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր»: նման մի վկայութիւն էլ ունի Փարպեցին. «Եւ յետ վեց ամսոյ կատարման Սրբոյն Սահակայ՝ վախճանեցաւ երանելին Մաշտոց... զորոյ զհետ յաջորդեաց զԱթոռ Հայրապետութեան աշխարհիս Հայոց, հրամանաւ երանելոյն Մաշտոցի՝ Սուրբն Յովսէփ» (Փարպեցի, էջ 38): Եթէ Հովսէփի կաթողիկոսը հաջորդում է Մաշտոցին և այն էլ հենց Մաշտոցի հրամանով, ուրեմն Մաշտոցը հովվապետ է: Այս նույնը ավելի հայտնի կերպով գտնում ենք Մեսրոպ երեցի վերջում գրված մի ծանոթութեան մեջ. «Յառաջ քան զվախճանելն Սահակայ կաթողիկոսի, տայր զտեղապահութիւն Աթոռոյն Սրբոյն Գրիգորի՝ Մեսրոպայ վարդապետին և Մեսրոպ տայր Յովսէփ երիցու»: Գանձակեցին էլ (էջ 19) հաստատում է նույնը: Վերջապես ուրիշներ, ինչպես Փարպեցու պատմածից էլ կարելի է եզրակացնել, ուղղակի կաթողիկոս կամ հայրապետ են դարձնում Մեսրոպին. այսպես «Յայսմաուրբ»-ը. «Եւ նստաւ Սուրբն Մեսրոպ յետ նորա կաթողիկոս վեց ամիս» (Հոռի Ը). «Եւ յետ նորա յաջորդեաց զԱթոռն Հայրապետական սուրբ հայրն հասարակաց և վարդապետն ճշմարտութեան մեծն Մեսրոպ» (Մեհեկի ժԳ): նաև «Պատմութիւն տեսլեան ս. Սահակայ» (Չեռ. Կարինյան, № 1757, էջ 28). «Եւ զհետ նորա (Սահակայ)՝ յաջորդէ զԱթոռ Հայրապետութեանն սուրբ վարդապետն և թարգմանիչն Մեսրոպ գրաստեղծն, որ և Մաշտոց անուանեցաւ»: Այսպես է ընդունում նաև Յնտզլյանը («Անահիտ», 1905, էջ 241 և Կորյուն, էջ 64) և տալիս է սրա համար հետևյալ պատճառաբանութիւնները. 1) Սահակի մահից հետո Մեսրոպից ավելի արժանավոր մարդ չկար, որպեսզի նրան տրվեր կա-



թողիկոսական պատիվը. 2) ըստ Կորյունի, Մեսրոպը Սահակի մահից հետո Հայաստանի ամեն կողմը հովվական խրատական թըղթեր է ուղարկել և սա ուրիշ պաշտոն չէ, եթե ոչ հայրապետի:

Բայց ինչպես ընդունված է մեր պատմության մեջ, երևի Մեսրոպյն այսպիսի բարձր աստիճանի հասած չէ, և վերոհիշյալ տեղեկությունները լոկ շափազանցություններ են իր տեղապահական պաշտոնի: Զամինյանը («Հայոց Եկեղեցու պատմություն», Ա, էջ 68), ընդունելով երկուսի միջին ձևը, ասում է, որ «Սահակից հետո կաթողիկոս է դառնում, թեև ոչ ձեռնադրությամբ, Մեսրոբ Մաշտոցը, որ արդեն Սահակի Բագրևանդ եղած ժամանակ նստում էր Վաղարշապատում»:

Ինչպես էլ լինի, Մեսրոպը մինչև վերջին ըոպեն չթերացավ իր ջլատված ուժերը նվիրել Ազգին և ժողովրդին. ավետարանական քարոզությունը և Հայրապետական Աթոռի տեղապահությունը անխափան և առանց պակասության առաջ տարավ մինչև վերջ: Աշխատեց, ջանք գործ դրեց, որ ամեն մարդ բարության ճանապարհի մեջ անխախտ մնա: Տեսավ, թե մոտ էր նաև իր վախճանը, ուստի կտրեց իր աչքերից քունը և գիշեր ցերեկ պասով, աղոթքներով ու հոգևոր երգերով էր պարապում, ճգնավորական խստամբեր կյանք էր անց կացնում և զգուշացնում ամենքին՝ պահելու աստվածային պատվիրանները:

5

Եվ մինչդեռ Մեսրոպյն այսպես մոտավորներին խոսքով ու հեռավորներին խրատական թղթերով հորդոր էր կարգում, մահվան հիվանդությունը վրա հասավ և ծերունին անկողին ընկավ: Իր հիվանդության գույժը ցնցեց ամբողջ երկիրը, և ամեն կողմից իր մոտ թափվեցին աշակերտներ, կրոնավորներ, իշխաններ ու նախարարներ: Ահա ալևոր ծերունին պառկած է իր մահճի մեջ. իր սիրելիները իր շուրջն են պատել. ահա Հովսեփ երեցը, ահա Թորեկը, Մեսրոպ Մաշտոցի սիրելագույն և գլխավոր աշակերտները, հայ նախարարական դասից ներկա են Վահան Ամատունի՝ Մեծ Հայաստանի հաղարապետը, Հմայակ Մամիկոնյան՝ քաջն Վարդանի եղբայրն ու Սահակի թոռը. բոլորն էլ Մեսրոպի ձեռքի տակ սնված և ուսած անձեր: Մի քանի օրվա կարճատև հիվանդությունից հետո, երբ հասած էր արդեն կյանքի վերջին վայրկյանը, Մեսրոպը թեթևացավ հանկարծ ու սթափվեց իր ցավերից, և հոգու անդորր խաղաղության մեջ, իր բոլոր աշակերտների ներկայությամբ, կանգնեց իր անկողնի վրա, և իր սուրբ ձեռքերը երկինք

բարձրացնելով, օրհնեց վերջին անգամ իր ժողովուրդը, ասովա-  
ծային օգնականությունը հայցեց նրանց համար և բոլորին էլ Աս-  
տուծո շնորհներին հանձնեց: Եվ երբ դեռ ձեռքերը երկինք կար-  
կառած՝ աղոթք էր մատուցում, ասում է Կորյունը, ահա սքանչելի  
մի տեսիլք երևաց երկնքից. իսալանման շողջողուն մի լույս ծա-  
զեց այն ապարանքի վրա, ուր էր Մեսրոպը, ամեն մարդ իր աչքով  
տեսավ այդ լույսն ու հիացավ: Եվ այդ լույսի ցուլացման մեջ, աս-  
մենքին սեր և միաբանություն պատվիրելուց հետո, մերձավոր-  
ներին ու հեռավորներին օրհնությունք պսակելուց հետո, ասովա-  
ծային աղոթքների մեջ փչեց իր շունչը՝ Հայաստանի գրական կյան-  
քին ծնունդ տվող Հայրը:

Այսպես վախճանվեց Մեսրոպը՝ Այրարատյան գավառի Վա-  
ղարշապատ քաղաքում, Սահակի վախճանից վեց ամիս հետո, Մե-  
հեկան ամսի տասներեքին (ըստ Փոքր Կորյունի՝ էջ 31, տասնյո-  
թին):

## 6

Խորենացին (և նրանից առնելով «Յայսմաուրք», Մեհեկի ԺԳ  
և «Պատմութիւն ս. Սահակայ»՝ «Սոփիերք», Բ, էջ 36) պատմում  
են, թե Մեսրոպի մարմինը ո՛ր թաղելու մասին խոսվություն և  
անհամաձայնություն ծագեց ժողովրդի մեջ. երեք կուսակցության  
բաժանվեցին. առաջին խումբն ուզում էր տանել Տարոն՝ Մեսրոպի  
բնիկ գավառը. երկրորդն ուզում էր տանել Գողթն գավառը, որ ա-  
ռաջին անգամ ընտրել էր Մեսրոպը քարոզության համար (ըստ  
«Յայսմաուրք»-ի թաղելու Մասրեվանքում), իսկ երրորդ խումբը  
ուզում էր թաղել Վաղարշապատում, սրբերի գերեզմանների մոտ:  
Բայց քաջն Վահան Ամատունի, որ այն ժամանակ Հայոց Աշխար-  
հի հազարապետ էր նշանակված պարսից տերության կողմից, երեք  
կուսակցության դեմ էլ հաղթող հանդիսանալով, հաջողեց Մեսրո-  
պի մարմինը իր սեփական գյուղը՝ Օշական փոխադրելու:

Իսկ Կորյունը (էջ 27), ինչպես և Փարպեցին (էջ 105), առանց  
այսպիսի տարաձայնությունների հիշելու, պարզապես հայտնում են,  
թե Վահան Ամատունին և Հմայակ Մամիկոնյանը մարմինը Օշա-  
կան փոխադրեցին:

Փառավոր եղավ հուղարկավորությունը. ներկա էր կրոնավոր-  
ների և աշխարհականների ահագին մի բազմություն. թափորը հա-  
նապարհ ընկավ Վաղարշապատից և վառած կանթեղներով ու բոր-  
բորված ջահերով, և սաղմոսներ, օրհնություններ ու հոգևոր եր-  
գեր էրգելով, դիմեց դեպի Օշական, որ էջմիածնից երեք ժամվա

ճանապարհ հեռավորութիւն ունի դեպի հյուսիս: Առջևից գնում էր այն խաչանման լուսը, որ Մեսրոպի վախճանելու պահին ծագել էր: Օշական հասնելով, մտան մատուռը և այնտեղ պատշաճ եկեղեցական արարողութիւններ կատարելուց հետո, մարմինը հողին հանձնեցին: Եվ լուսը, որ մինչև այնտեղ առաջնորդել էր դագաղին, անհետացավ<sup>1</sup>. այնուհետև և ամեն մարդ իր տեղը վերադարձավ:

Ինձիճյանը («Աշխարհագրութիւն շրից մասանց աշխարհի», մասն Ա՝ «Ասիա», հատոր Ա՝ «Հայաստան», էջ 191) թեև գիտեմ, որ Մեսրոպի գերեզմանը Օշականումն է, բայց նույնը դնում է նաև Մշո Հացիկ կամ Խասիկ գյուղում, որ Մեսրոպի ծննդավայրն է: Ահա իր խոսքերը. «Յեկեղեցուց գեղջս է գերեզման Սրբոյն Մեսրոպայ. յայս եկեղեցի երդնուն մինչև ցայսօր քուրդք և եէգիտիք շուրջանակի բնակեալք յերդմունս իւրեանց ասելով, զիտէքէլ Խասիկ. այսինքն Ուխտ Հացեկայ, կամ Տէրէլ Խասիկ, այսինքն եկեղեցի Հացեկայ. նաև տանին ընծայ և պարգև»:

Մի քիչ ավելի հանգամանորեն է խոսում Հ. Ներսես Սարգսւյանը («Յեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս», Վեներտիկ, 1864, էջ 236—237), որ նույն գյուղում գտնելով ս. Մեսրոպին նվիրված այդ եկեղեցին, կարծում է, թե Մեսրոպի նշխարների մի մասը այնտեղ է թաղված կամ նույնիսկ ենթադրում է, թե առաջ Մեսրոպի մարմինը այնտեղ է թաղվել և հետո տարվել Օշական: Ահա իր խոսքերը. «Ընդ մենաստանս Մշոյ համարելի էր արդյօք և եկեղեցին Սրբոյն Մեսրոպայ ի գիւղն Հացիկ ի հյուսիսակողմն Մեղրագետոյ ի մեջ դաշտին. թէպէտ շիք այժմ կանգուն ոչ եկեղեցի և ոչ մատուռն մի փոքրիկ, այլ երևի անբակ նորա. և առ նմա քարընկէց մի հեռի այլ տեղի շրջապատեալ ի վարկպարագի քարանց և ի միջի կոտորք գերեզմանաքարի բացօթեայ իսպառ և պատուեալ ի բնակչաց: Թերևս մասն մի ի նշխարաց սրբոյն ամփոփեալ իցէ ի տեղւոջն, կամ նախ աստէն թաղեալ իբրև ի հայրենի գիւղն իւր յորում ծնեալն էր, և ապա փոխադրեալ յՕշական գիւղ յԱրագածոտն գաւառի»: Այսպիսի մի ենթադրութիւն սակայն շունի բնավ հիմք, քանի որ պատմագիրների վկայութիւնք չի հաստատվում: Հացիկի ս. Մեսրոպ եկեղեցին պարզապես նվիրված է նրա ան-

<sup>1</sup> Հստ Մախասյանի՝ աշխարհաբար թարգմանութիւն Խորենացու, ծանոթութիւն 344, այդ ցոլացող լուսը, շատ բնական բացատրութիւնք, էր «զագաղի վրա դրված ողորկ արծաթե խաչի ցոլացումը. օդի մեջ խաղաղ եղանակին, արեգակի ճառագայթների տակ»:— Տե՛ս և Ե. Տեր-Մինասյանի գրածը, «Բյուրակն», 1898, էջ 531բ:

վան, ինչպէս ուրիշ զանազան վայրերում գտնված համանուն և կնդնցիները:

Այստեղ թող ներվի ինձ մեջ բերել հորենացու ներքոյը Սահակի և Մեսրոպի մասին, որ այնքան քաղցր է հնչում նույնիսկ հազարավոր տարիներ հետո.

### Սահակ

Որ մահականացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող, պատեաց զպատկերն, պատկառեաց ի կոշնականէն, փոխանորդեաց զկեանսն, և այսքան կենցաղավարեաց՝ իբր զի ոչ պակասութիւն իրիք մասն ի ծերութենէն եղանիլ, և ոչ յախտից առնդունիլ: Զորմէ պարտ էր մեզ հրաշափառագունիւ անցանել բանիւ ըստ արժանի հօրն դրուատից, այլ զի մի՛ յերկարութիւն ճառիցս լիցի ձանձրութիւն ընթերցողաց, այլում տեղոյ և ժամանակի զայնուսիկ թողցուք՝ արտաքոյ այս գրոց, ուր սկզբանէ հրաւիրեցաք առնել թելագրութիւն:

### Մեսրոպ

Գերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք: Քանզի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն ի նորա վարս տեղի գտանել երբեք ոչ կարացին. այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ գոլով, և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր: Վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիք պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հավատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ: Այլ վասն զի գրոյր ուղղութիւնս նորա ոչ բաւական եմ ասել, ի հանգիստ նորա նշխարացն դարձուցից զբանս:

### 7

Կորյունը պատմում է, թե Մեսրոպի մահվանից երեք տարի հետո (Փոքր Կորյուն, էջ 34, ասում է. «յետ ամսոց երից անցելոց», որ անշուշտ զրշադրական սխալ է և պետք է ուղղել ամաց) Վահան Ամատունի իշխանը, ի պատիվ Մեսրոպի, «բրիստոսասէր փութով կանգնեցրեց սքանչելի մի խորան», որ տաշածո քարերով քանդակված էր: Բայց թե ի՛նչ պետք է հասկանալ այստեղ խորան բառով՝ կարոտ է բացատրության: Այս բառով առհասարակ հասկացել են մատուռ, որով իբր թե Վահան Ամատունին Մեսրոպի դե-

րեզմանի վրա մատուռ է կանգնել, ինչպես որ Փոքր Կորյունն (էջ 34) ասում է հայտնապես. «կամեցաւ տաճար փառաց անուանն Աստուծոյ շինել յանուն Սրբոյ Վարդապետին»: Բայց քանի որ Մեսրոպն արդեն մատուռի (մարտիրոսարան) մեջ էր թաղված, չի կարող «մատուռ» նշանակութիւնը արդարանալ, և տեղիք էլ չկա կարծելու, թե Վահանն առաջին մատուռը քանդած և երկրորդ անգամ մի ուրիշը շինած լինի: Ուստի պետք է ընդունել, թե խո-րան բառն ունի իր այժմյան սովորական իմաստը, այն է «սեղան եկեղեցւոյ»: Հետևաբար Վահան Ամատունի իշխանը այն մատու-ռի մեջ մի նոր խորան է ավելացրել՝ հանուն ս. Մեսրոպի: Այս խորանի ներսը դրավ Մեսրոպի գերեզմանը, մյուս նահատակների գերեզմանների հետ, սեղանի համար պատրաստել տվեց ոսկեղեն, արծաթեղեն և ականազարդ սպասներ, և Մեսրոպի աշակերտ Թո-գրիկին, ուրիշ մի քանի աշակերտակիցների հետ, նշանակեց իբր վերակացու և սպասավոր նույն վիկայարանի: Այնուհետև Այրա-րատ գավառի ժողովուրդը մեծ բազմութեամբ գալիս էր ամեն տա-րի՝ տոնելու ս. Մեսրոպի հիշատակը, որ մինչև այժմ էլ շարունակ-վում է:

Մեսրոպի գերեզմանը և խորանը կանգնելուց հետո (նյութա-կան հիշատակարան), Մեսրոպի աշակերտները մտածեցին նաև մեծ վաստակավորի բարոյական հիշատակարանն էլ կանգնել, այն է գրել նրա կենսագրութիւնը, մի պատիվ, որ մինչև անգամ Սա-հակ կաթողիկոսին շէր տրված և որ դարուց ի դարս պիտի փառա-բաներ Մեսրոպի անունը: Ո՞ւմ կարելի էր հանձնարարել այդ աշ-խատութիւնը: Աշակերտները ընտրեցին Կորյունին, որ բացի էջ-միածնի վարդապետարանի սան լինելուց, երկար ժամանակ ար-բանյակ և գործակից էր եղել Մեսրոպին և լավատեղյակ էր բոլոր անցողարձին: Հովսեփը, ժամանակի կաթողիկոսը, որ նույնպես աշակերտ էր եղած Մեսրոպին և դասընկեր Կորյունի, հրամայեց սրան գրել այդ գիրքը: Նրան քաջալերեցին նաև մյուս աշակեր-տակից ընկերները և Կորյունը հանձն առավ: Իրեն ենք պարտա-կան «Վարք Մաշտոցի» գիրքը, որ թեև համառոտ, բայց միակ ստույգ և ամփոփ պատմութիւնն է հայոց գրերի գլուտի (այս մա-սին տե՛ս Գ. Փառնակ = Յնտգլխան, «Անահիտ», 1931, էջ 53):

Վահան Ամատունի իշխանից մինչև այժմ չէր կարող Մեսրո-պի տաճարն ու խորանը անաղարտ մնալ. անշուշտ շատ անգամ-

ներ ավերված ու նորոգված է, բայց բոլոր այս նորոգութիանց պատմությունը ավանդված չէ մեզ: Եկեղեցում այժմ գոյութիւն ունեցող արձանագրութիւնները 1286 թվականից այն կողմ չեն անցնում, ուստի հնագույն ժամանակի մասին տեղեկութիւն չունենք: Ալիշանը (սկիւրարատ), էջ 189) կարծում է, որ առաջին ավերումը պատահած պիտի լինի գուցէ խորանի շինութիւնից 11 տարի հետո, Վահանի հակառակորդ Վասակի ձեռքով, որին հետևող ուրացյալ հայերը, ուրիշ արքունի ձմերոցների հետ, ավերեցին նաև զգամուրն Օշական ըստ Եղիշնի: Բայց Ալիշանն ավելացնում է անմիջապես, որ եթէ այսպես եղած էլ լինէր, իհարկէ Վահանը կամ իր պալատը, հայ նախարարների գերեզարձին, անպատճառ նորոգած պիտի լինէր:

Արդի արձանագրութիւնները՝ գրեթէ բոլորը խոսում են Օշական գյուղի ապահարկութիւն մասին, շնորհիվ Սահմադին իշխանի, որ կարող է Անիի քաղաքազուխը լինել: Որովհետև այս արձանագրութիւնն էլ տաճարի նորոգութիւն չի հիշված, ենթադրւում է, թէ արդեն նոր էր և կամ քիչ ժամանակ առաջ նորոգված էր նույն իշխան Սահմադինի ձեռքով: Այսպիսի մի նորոգութիւն հիշված է իբր 1277 թվականին, բայց թէ ուր է հիշված՝ հայտնի չէ ինձ:

Այնուհետև դարձյալ կործանվեց տաճարը և Փիլիպպոս կաթողիկոս Աղբակեցին նորոգեց (նորոգութիւնը սկսավ 1639 թվին և ավարտվեց 1645 թվին): Առաքել վարդապետ Դավրիժեցին համառոտ կերպով պատմում է հիշյալ նորոգութիւնը հետևյալ ձևով. «Այլ և գհոյակապ և զլայնանիստ և զբարձրաբերձ տաճար փառացն Աստուծոյ, զհանգստարան Մեծի Վարդապետին Մեսրոպրայ այնորիկ, որ եզիտ զգիրս Հայոց, որպէս բանք պատմութեան նորա ճառեն, թէ տարեալ հանգուցին զնա ի գիւղն, որ անուանի Օշական. արդ՝ այս տաճար հանգստարանի Սրբոյն Մեսրոպրայ վարդապետին ի վաղ ժամանակաց բովանդակ տանիքն փլուցեալ իջեալ էր, և միայն ավագ խորանն էր մնացեալ ծածուկ, և ի ժամանակս կաթողիկոսութեան իւրոյ սուրբ հայրապետն Փիլիպպոս սկսաւ զայն ևս նորոգել, որ և կատարեաց բազում ծախիւք և աշխատութեամբ, խրատեալ քարի և մածուցեալ կրով մինչև աւարտեաց զբովանդակն ի թուականիս մերոյ ՌՂԴ» (Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն Հայոց», տպ. 1884, զլ. ԻԶ, էջ 270—271):

Փիլիպպոս կաթողիկոսի կանգնեցրած տանիքը դարձյալ փուլ գալով, գրեթէ 200 տարի հետո թեթև փայտահարկ մի ծածկույթ շինվեց, որ ներսն կաթողիկոսը ուղում էր վայելուչ կերպով նորոգել, բայց ժամանակ չունեցաւ: Այս գործը գեղեցիկ կերպով

կատարեց Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոս Պոլսեցի (Սամաթիացի)։

1872 թվականին Գևորգ կաթողիկոսը կոնդակ հանեց, որով հրավիրում էր հայ ժողովրդին օգնել իր այս ձեռնարկութեան։ Նույն թվին «Արարատ» ամսագրում (հուլիս, էջ 285—286) հրատարակվեց մի փոքր հոդված՝ «Դամբարան և եկեղեցի Սուրբ Մեսրոպ թարգմանչի հօշական», որի մեջ ծանուցվում է, թե նույն եկեղեցու շինութեան համար նշանակված է հատուկ հանձնաժողով Օշականի գյուղացիներից, թե օշականցիք բավական նպաստ մատուցել են այս գործին և թե շինությունը պիտի սկսվի 1873 թվի գարնան։ Շինությունը վերջացավ 1879 թվին և կատարվեց հանդիսավոր օժով։

1882 թվին Մեսրոպի գերեզմանի վրա դրվեց կճյա տապանաբար՝ Ղարաբաղի առաջնորդ պոլսեցի Անդրեաս եպիսկոպոսի ծախսով և կտակով, և Մմբատյանց Մեսրոպ եպիսկոպոսի ձեռքով։ Տապանաբարի վրա գրվեց հետևյալ արձանագրությունը. «Յամի Տեառն 441, փետրվարի 20, Վահան Ամատունի իշխանն ամփոփելով աստ յօշական ըզմարմին Սրբոյ վարդապետին մեծին Մեսրոպայ թարգմանչին, կառուցեալ է ի վերայ դամբարանիս յանուն նորին զեկեղեցիս, զոր նորոգեաց յամի 1640 Փիլիպպոս կաթողիկոս. և ի վերջնումս յամին 1875 նորոգեաց Գեորգ Դ. կաթողիկոսն, տրօք ժողովրդեան Հայոց Երեւանայ և այլ վիճակացն Ռուսաստանի։ Իսկ զտապանս կանգնեաց ի յիշատակ՝ Կ. Պոլսեցի արքեպիսկոպոսն, յամին 1882 և Հայոց ՌՅԱ»։

Նույն թվին և նույն Մեսրոպ եպիսկոպոսի ձեռքով նորակերտ գանգակատան գմբեթի վրա կանգնվեց մարդաչափ բարձրութեամբ մի խաչ, որ նվիրել էր տփիսիսեցի Ալեքսանդր Թախիրյանց։

9

Իր արդի վիճակում ս. Մեսրոպի տաճարը միջակ մեծութեամբ մի շենք է, սովորական գյուղական եկեղեցիներից շատ ավելի գեղեցիկ, բայց նվազ վայելուչ քան մեծ քաղաքների եկեղեցիները։ Պատերը, որ կարծում են, թե հին շինվածքի միակ մնացորդն են, բավական բարձր են. նրանց միջոցը, որ առաջ առանց սյուների էր, բավական ընդարձակ է։ Թեև Կորյունի պատմութեան մեջ շատ խորանների մասին խոսք է լինում, բայց այժմ կա միայն մի սեղան, որի տակ գտնվում է ս. Մեսրոպի դամբարանը, մուտքը գտնվելով բեմի աջ կողմը, ուր դրվում է ընթերցվածների գրակալը։ Կան նույնպես երկու ավանդատներ, խորանի երկու կողմե-

րում, որոնք ըստ Ալիշանի կարող են լինել Կորյունի հիշատակած խորանները: Ամբողջ շենքը շինված է սևագույն հրաբխային քարից (տուֆ), որ Երևանի, Վաղարշապատի և շրջակայքի մեջ շատ առատ է և շինությունների մեջ շատ սովորական: Առհասարակ Օշական գյուղի և ս. Մեսրոպի տաճարի ու գերեզմանի վրա խոսել են՝

1. Ինճիճյան, «Ստորագրություններ Լին Լայաստանեայց», Վենետիկ, 1822, էջ 439.

2. Նույնի «Ենթ շայաստան», էջ 266 (շատ համառոտ).

3. Լուսինյան եպիսկոպոս Երանայանց, «Ստորագրություններ Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», էջմիածին, 1842, Բ, էջ 76—81.

4. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 188—193, ուր էջ 193 տրված է նաև «Եկեղեցի և գերեզման ս. Մեսրոպայ յՕշական» նկարը<sup>1</sup>:

## Գ Լ Ո Ւ Ն Ժ Ի

### ՏՈՆ, ԱՆՈՒՆ ԵՒ ՊԱՏԿԵՐ Ս. ՄԵՍՐՈՊԻ

#### 1

Ինչպես վերևում տեսանք, Կորյունի և Փարպեցու վկայություններ, Սահակի և Մեսրոպի մահվան նույնիսկ հաջորդ տարուց սկսած, հայ ժողովուրդը սովորություն դարձրեց երկու սիրեցյալ անձերի մահվան հիշատակը տոնելու: Երբ մեր եկեղեցական մատյանները կարգավորվեցին, ինչպես Երանայանց, Գանձարանը և Լայամավուրքը, երկու սրբերի համար էլ պատշաճավոր աղոթքներ հորինվեցին: Երանայանի մեջ մուծվեց «Կանոն Արքայ Քարգմանչաց»-ը, «Որք զարդարեցին» և այլն (տե՛ս «Զայնադրեալ Երանայանց»):

<sup>1</sup> Վեհափառ Վազգեն Ա Լայրապետի հոգածությունը և Միլանոյում բնակվող Թորոզմ և Լալի Ղազարոսյան եղբայրների բարերարությունը, 1960 թվականին վերանորոգվեց Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին: Բարեկարգվեց եկեղեցու ներքը, սալահատակվեց հարավային մասը և պարսպապատվեց: Ս. Մեսրոպի դամբարանը ձևավորվեց և դրվեց բազալտե շիրմարար «ՍՈՒՐՐ ՄԵՍՐՈՊ ՄԱՏՏՈՑ», 361—440 արձանագրություն: Մարմարե հին տապանաքարը մնում է դամբարանում: Դամբարան տանող նախասենյակը վերակառուցվել է, այնտեղ գտնվել է հուշարձան քար, որի վրա փորագրվել է Մեսրոպյան երկաթագիր այբուբենը (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1961 թ., № Ա, էջ 37—39):— (Սույն հավելումը պատկանում է «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը, որ թողնում ենք անփոփոխ:— Խմբ.):



կան», Վաղարշապատ, 1875, էջ 827—833). Գանձարանի մեջ մուծվեց երկու ընդարձակ դանձ. սրանցից առաջինն է «Գանձ քարգմանչացն», որ սկսվում է այս բառերով. «Բարձրնալը անքնին, բնաւից լրութիւն, բաւականութիւն» և որի սկզբնատառերը հոդում են «Բան քարգից»։ Այս գանձի հեղինակն ու հորինման թվականը հայտնի չեն։ Ութերորդ տան մեջ հիշվում է Հովհաննես Կողզեմբ.

Հազար ամ կապած,  
Գազանն արձակած,  
Զոր Կոզեռն ասաց,  
Այժմ կատարած և այլն։

Սրանից հետևում է, թե դանձը գրված է ԺԱ դարում։ ԺԲ դարում Ներսես Շնորհալին սրա վրա ավելացրել է մի փոքր հորդորակ, որին կցված է հետո իր Վիպասանությունից 23 երկտող։

Երկրորդ գանձն է «Գանձ Սահակայ և Մեսրոպայ», իննսուսյան շափով, որի հեղինակն է Առաքել վարդապետ, ինչպես որ տրաների սկզբնատառերն էլ հոդում են «Առաքելէ»։ (Այս երկու գանձերը տե՛ս էջմիածնի ձեռագրատան Կարինյան № 466 ձեռագրում, էջ 57—61 և 182, ինչպես և Թավրիզի Ղալա թաղի գրադարանի № 43 ձեռագրում, էջ 150—154 և 318—321)։

Մի երրորդ գանձ ևս կա Գևորգ անուն գանձասացի անունով, որ մեջ է բերում Ալիշանը («Յուշիկք», Ա, էջ 326—327) և որ հետևյալն է.

Ո՛վ անվեհեր փութոյն պնդութեան՝  
Ի գիւտ հանճարոյ սրբոց թարգմանչացն.  
Խորհին ստեղծանել տառս գծագրաց,  
Նշանակ խօսից հայկական լեզուիս,  
Որով վաղ անցեալքն լիշատակին.  
Եւ մեկնեալքն՝ դէմ յանդիման խօսին։  
Յայս հոգ զարթուցեալ սքանչելին Սահակ,  
Զարմն վեցերորդ Սրբոյն Գրիգորի,  
Զսոյն առ նովաւ և զոյգ ընդ նմին  
Աստուածաբանակ հայրն Սուրբ Մեսրովպ,  
Որ և զղձալի պարգևս տառիցն  
Ընկալաւ յԱստուծոյ ի մեծ գթութեանցն։  
Լե՛ր Քրիստոս, պահպանիչ աշակերտացս  
Երջանիկ սրբոց թարգմանչացն, աղաչեմք։

Գրաւորական տառից առլումամբ  
Մեծապէս խնդայր Տէրն Սուրբ Սահակ.  
Իսկոյն ձեռնարկէր ի Թարգմանութիւն  
Մարգարէականն աստուածխօսութեանց.  
Ժողովեալ մանկունս ի վարժ դպրութեան,  
Աննցուցանէր զուսումն իմաստից,  
Զամբելով զկաթն նշանագրացն՝  
Առնէր վարդապետս և պատմարանողս,  
Զի յաշորդք հարանցն վարդապետաց՝  
Լիցին աշակերտքն պայծառագոյնք:  
Լե՛ր Քրիստոս, պահպանիչ աշակերտացս  
Նրջանիկ սրբոց Թարգմանչացն, աղաչեմք:

Եւ ևս ի զօրագոյն զօրութիւն զնալով  
Գրաւորականին վարժից կրթութիւն,  
Պարզ գրագիտութիւնն զարգանալով  
Ի քերթողականն արուեստ յառաջիւր.  
Որոց առաջին մեզ հայր քերթողաց  
Պայծառն Մովսէս այն Խորենացին,  
Նախնին աշակերտ Սրբոյն Մեսրովպայ,  
Ի քերս բայից հզօր քան զնա,  
Համազօր նմին՝ Յովսէփ Պաղնացի,  
Նորուն վարժակից Եզնակ Կողբացի,  
Անյաղթն Դաւիթ և Սուրբն Կորիւն,  
Եւ միահամուռ դաս քերականացն,  
Որք աստուածեղէն վարդապետութեամբ  
Փարթամացուցին զՀայաստանեայս:  
Լե՛ր Քրիստոս, պահպանիչ աշակերտացս  
Նրջանիկ սրբոց Թարգմանչացն, աղաչեմք:

«Ծայամաւորք»-ում շորս հիշատակագրություն ունենք այս սրբ-  
բերի մասին՝ Նավասարդ Լ, Հոռի Ը, Տրե Ժէ և Մեհեկի ԺԳ, ինչ-  
պես որ խոսել ենք արդեն վերևում:

Նոր ժամանակագրության մեջ Սահակի և Մեսրոպի տոները  
տարվա մեջ կրեք անգամ են պատահում. առաջինը նվիրված է  
«Սրբոյն Իսահակայ Պարթևի Հայրապետին մերոյ», երկրորդը՝ «Սրբ-  
բոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ», իսկ երրորդը՝  
«Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրովպայ, Եղի-  
շէի, Մովսիսի քերթողին, Դաւիթ Անյաղթ փիլիսոփային, Գրիգո-  
րի Նարեկացւոյն և Ներսիսի Կյայեցւոյն»: Առաջին երկուսը հնա-

գույն տոների շարունակութիւնն են, իսկ վերջինի համար կարող ենք ապահովութեամբ ասել, որ ժՔ դարից հետո է դրված, ինչպես ցույց է տալիս Ներսես Շնորհալու հիշատակութիւնը: Երևբ տոների մեջ ամենից ավելի կարևորն ու նշանավորը երկրորդն է, որ համարվում է Սահակի և Մեսրոպի հանդիպման օրը, Ռահ գետի ափին: Սրանից հետո գալիս է առաջին տոնը, իսկ ամենից նըվազ արժեք ունեցողը երրորդն է: Այս վերջինը հիշատակութիւնն է Ե—ժՔ դարերից պատահաբար համաքրված այլևայլ անձերի, որոնք իրար հետ որևէիցե կապ չունեն: Երևբ տոներն էլ ընդհանրապես համարված չէին հանդիսավոր տոնական օրեր, միայն շատ ավելի հետո, երբ մեր ազգային գիտակցութիւնը հաղթեց կրոնական գիտակցութեան, տեղ-տեղ սկսեցին տոն պահել (կիրակի բռնենել) վերոհիշյալ երկրորդ տոնախմբութեան օրը. թե՛ Պոլիս և թե՛ Կովկաս տպված օրացույցների մեծ մասի մեջ այդ օրը նշանակվեց խաչով. Իգմիրյան մրցանակաբաշխութեան հանդեսը որոշվեց կատարել միշտ այդ օրը. 1882 թվականին Տփլիսի հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովը վճռեց այդ օրը համարել զուտ դպրոցական տոն և կատարել աշակերտական հանդես:

Հիշյալ տոներից երեքն էլ շարժական են. առաջինը գտնվում է միշտ Առաջավորաց պահոց կիրակիից հետո 14-րդ օրը, որ լինում է շաբաթ և տատանվում է հունվարի 24-ից մինչև փետրվարի 28-ը: Երկրորդը գտնվում է Հոգեգալստից հետո 33-րդ օրը, որ պատահում է միշտ հինգշաբթի և տատանվում է հունիսի 11-ից մինչև հուլիսի 16, իսկ երրորդը տատանվում է հոկտեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 7:

Մեսրոպի բուն տոնախմբութիւնը երկրորդը լինելով, այդ օրն է, որ կատարվում է Օշականի ուխտագնացութիւնը դեպի Մեսրոպի գերեզմանը:

## 2

Այստեղ դնում եմ «Կանոն Սրբոց թարգմանչացն» շարականը, որ ըստ Սահակ վարդապետ Ամատունու ուսումնասիրութեան, հնապես եղել է «Կանոն Մեսրոպ վարդապետի»: Հեղինակն է՝ առաջին մասինը («Որք զարդարեցին»)՝ վարդան վարդապետ (ԺՊ դար), իսկ երկրորդ մասինը («Մթանչելագործ»), որ ըստ այսմ ավելի հին է, Հովհաննես Մանդակունին (Յ դար) կամ ըստ այլոց՝ Խորենացին և կամ Շիրակացին (տե՛ս Սահակ վարդապետ Ամատունի, «Պարականոն շարականներ», էջ 138—139):

ՇԱՐԱԿԱՆ ՍՐՐՈՏ ՔԱՐՊԱՆՑԱՑ  
Օրհնություն

Որք զարդարեցին տնօրինարար զիմաստս անեղին,  
Հաստատելով յերկրի բզզիր կենդանի,  
Հովուել ըզժոտ նոր Իարայելի,  
Երգով քաղցրութեան հնշմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որք զերկրաւոր մեծութիւն փառաց խաւար կոչեցին,  
Ապաւինելով ի յոյս անմահ փեսային,  
Անճառ Բանին արժանի եղեն,  
Երգով քաղցրութեան հնշմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որ զօրութեամբ Հօր իմաստութեան էին անեղի  
Հաստատեցին զԱթոռ Սրբոյն Գրիգորի՝  
Քարգմանութեամբ նշանազրութեան,  
Երգով քաղցրութեան հնշմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որք նորափետուր բանիւ զարդարեալ պայծառազգեցան,  
Եկեղեցիք Հայաստանեայց  
Ի ձեռն Սրբոյն Սահակայ,  
Երգով քաղցրութեան հնշմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որ թագաւորաց ազգաց և աղանց գերագոյն ցուցին  
Արփիափայլ զերգս հոգևորս,  
Հնտրեալ դասուց վերին Սիովնի,  
Անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Որ խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին  
Նկարագրեցաւ մեզ զիր կենդանի՝  
Յարգանդ մաքուր մեծին Մեսրովպայ,  
Անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Որք զծածկեալ խորհուրդ աստուածդիտութեան  
Տնօրինարար յայտնեալ ծանուցին՝  
Հանգոյն Սրբոյ մեծին Մովսէսի,  
Անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Որ յօրինակ ճշմարիտ սիրոյ սուրբ սուրբ առաքելոյն  
Աղբերարար ի ձեզ էացաւ՝

Հոգի շնորհաց բղխումն անսպառ,  
Անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Որ երկոքումբք սուրբ լուսաւորչօք տանս թորգոմայ  
Հաստատեցեր զեկեղեցիս Հայաստանեայց,  
Ջլոյս իմաստից ի մեզ ծագելով,  
Մաղթանօք սոցա, Քրիստո՛ս, խնայեա՛ ի մեզ:

### Հարց

Սքանչելագործ Աստուած,  
Որ ցուցեր զսքանչելիս քո ազգի մարդկան,  
Օրհնեմք զքեզ, Տէր Աստուած հարցն մերոց:

Որ ի ձեռն երանելի վարդապետին  
Արարեր ողորմութիւն քո ազգի մարդկան,  
Օրհնեմք զքեզ, Տէր Աստուած հարցն մերոց:

Որ սովաւ լուսաւորեցեր զտիեզերս,  
Սորին բարեխօսութեամբ պահեա՛ զմեզ.  
Օրհնեմք զքեզ, Տէր Աստուած հարցն մերոց:

Հրեշտակ երևեցար ի յերկրի  
Եւ վարս առնելիւր Աստուծոյ հաճոյական,  
Յիշեսջի՛ր զմեզ անդադար, երանելի՛ սուրբ վարդապետ,  
Որ ընդ հրեշտակս օրհնես զԱստուած յաւիտեան:

Ստացող եղեր պատուիրանաց Սուրբ Հոգւոյն,  
Եւ ապրեցար ի հաղբից հրապուրողին,  
Կատարեցեր զառաքինութիւն,  
Եւ փոխեցար ի հանգիստն յաւիտենից:

Արդ, եկա՛յք ամենեքեան միաբան  
Աոցուք օրինակ ճգնութեան զերանելին,  
Ջի նմանեսցուք վարուց նորա,  
Եւ փոխեսցուք ի կեանսն յաւիտենից:

## Ողորմեա

Որ զշնորհս աստուածային առ ի վերուստ իշխալ յերկնից՝  
Պարգնեցեր հիւսիսականացս,  
Յայտնեալ տեսլեամբ ի ձեռն սուրբ վարդապետին,  
Աղաչանօք սորա ողորմեա՛ մեզ, Աստուած:

Որ զանմարմին պարունակող բանի  
Ջգրաւորական զիմաստս Հոգւոյն  
Շնորհեցեր որդւոց Քորզոմայ՝ յայտնեալ տեսլեամբ,  
Ի ձեռն սուրբ վարդապետին,  
Աղաչանօք սորա ողորմեա՛ մեզ, Աստուած:

Որ զգիտութիւն քո զերկնային  
Եւ զհոգւոր քո զիմաստութիւն  
Առատապէս ծաւալեցեր յԵկեղեցիս Հայաստանեայց,  
Ի ձեռն սրբոց թարգմանչաց,  
Աղաչանօք սորա ողորմեա՛ մեզ, Աստուած:

## Տէր յերկնից

Անճառելի շնորհօք լցեալ  
Ի յիշատակի սուրբ վարդապետին  
Խնդրեմք ի քէն, Տէ՛ր,  
Կեցո՛ զանձինքս մեր:

Եւ զճգնութիւն սրբոյ վարդապետին  
Ընկալցուք ի սիրտս մեր հաւատով,  
Բարեխօսութեամբ սորա,  
Տէ՛ր, կեցո՛ զանձինքս մեր:

Դասաւորեալ ընդ անմարմնական բազմութիւնսն,  
Եւ ի Սրբոյ Հոգւոյն է պսակեալ,  
Ի ձեռն սորին բարեխօսութեան,  
Տէ՛ր, կեցո՛ զանձինքս մեր:

## Մանկունք

Նմանեալ Մովսէսի, տէ՛ր վարդապետ,  
Բերելով զգիր օրինաց  
Ի Հայաստան աշխարհ,  
Որով լուսաւորեցան ազգ որդւոց Քորզոմայ:

Քանզի նա արժանաւորեցաւ  
Կալ ի Սինէական փառաբանութեան,  
Սւ ընկալեալ պատգամըս կենդանիս՝  
Տալը Իսրայէլեան բանակին,  
Որով լուսաւորեցան ազգ որդւոց Յակովբայ:

Արդ աղաչեմք զքոյին հեղութիւնդ, տէ՛ր վարդապետ,  
Բարեխօսեա՛ առ Հայր ի յերկինս,  
Վասն քո տօնողացս,  
Քանզի քե լուսաւորեցան մանկունք Սուրբ Եկեղեցւոյ:

(Դժվարիմաց տեղերի բացատրութիւնը տե՛ս Ավետիքյան, «Բացատրութիւն Շարականաց», էջ 548—552):

Շատ ավելի կարճ և գեղեցիկ է՝

### Շարական Սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի

Որ յարմատոց հարցն սրբոց մեզ դաւազան բղխեցեր,  
Ըզիսահակ սուրբ հայրապետ, հովուել ըզհօտ քո, Քրիստոս,

Որ զխաւարն լանգիտութեան Հայաստանեայցըս լուծեր,  
Զիմաստութեան ծագեալ զլոյս սովաւ որդւոց թորգոմայ,

Որ զհանգերծեալ խորհուրդ քո, տէ՛ր, տեսլեամք սրբոյն ծանուցեր,  
Յիշատակի սորա ընկա՛լ զտօնողացս աղաչանս:

### 3

Մեսրոպի վրա խոսող մատենագիրները երկու տարբեր անուններ են տալիս իրեն, այն է՝ Մեսրոպ և Մաշտոց (կամ երկուսի զանազան ձևերն էլ ի նկատի առնելով՝ Մեսրոբ, Մեսրոբը, Մեսրովպ, Մասրովպ, և Մաշթոց, Մաշդոց, Մածդոց): Այս երկու անունների գործածութիւնը շատ զարմանալի է, Կորյունն ընդամենը ութ անգամ հիշում է նրան և միշտ էլ կոչում է Մաշթոց. այսպես էջ 6, 9 (երկիցս), 14, 21, 25, 26, 27. Կորյունի մեջ Մեսրոպ անունը գրտնում ենք միայն մի անգամ այն է՝ գրքի խորագրում. «Պատմութիւն վարդուց և մահուան սրբոյ առն երանելոյ Մեսրովպայ վարդապետի մերոյ թարգմանչի»։ Բայց անշուշտ այս վերտառութիւնը ուրիշից է դրված և նշանակութիւն չունի: Կորյունի բնագրում պիտի լիներ պարզապես «Վարդ Մաշթոցի», ինչպես գրել է Ֆետիլյանը՝ Կորյունի հրատարակութեան խորագրում (Երուսաղեմ, 1930): Փարպեցին,

որ Կորյունի հետևողն է, նույնպես նրան ճանաչում է Մաշտոց անու-  
նով, այսպես՝ էջ 33, 35 (երկիցս), 36, 37, 39 (երկիցս), 41 (երկի-  
ցս), 42, 43 (երկիցս), 44, 46, 205, իսկ Մաշտոց գրչությամբ՝ էջ  
105—106. ուրեմն ընդամենը 17 անգամ: Փարպեցու մեջ Մեսրոպ  
ձևը կա 4 անգամ այն է՝ էջ 39, 40 (երկիցս) և 41. բայց սրանք  
գտնվելով հորենացուց նոր արտազրված մասի մեջ, կեղծ են և մենք  
հիշեցիք միայն ամբողջության համար: հորենացին գործ է ասում  
միշտ Մեսրոպ ձևը, որ ունի 39 անգամ. այսպես գլուխ ԽԷ՝ 3 ան-  
գամ, ԽԹ՝ 2, ՄԲ՝ 3, ՄԳ՝ 4, ՄԴ՝ 2, ՄԷ՝ 9, ՄԸ՝ 2, Կ՝ 5, ԿԱ՝ 4, ԿԵ՝ 1,  
ԿԶ՝ 1 և ԿԷ՝ 3 անգամ: Մի տեղ միայն (գիրք Բ, զԷ. Ժ) ունի Մաշ-  
տոց. «Եկլեսիաստէ գիրք Եսեբի Կեսարացու, զորս նա թարգմա-  
նել էրանելի վարդապետն Մաշտոց ի հայ լեզու»:

Մաշտոց ձևը գտնում ենք նաև ուրիշ հնագույն հիշատակա-  
գրությանց մեջ. ինչպես՝ 1. Հովհաննես Իմաստասեր Օձնեցու մոտ.  
«Ե. կամ զորս ի մէնջից աստի Հոգին Սուրբ զարթոյց՝ լինել զկնի  
առաջնոյն լուսատրիչք, զերկոսին զնոսա ասեմ սուրբս՝ զՄահակ  
և զՄաշտոց, և զամենեկն զընտրեալսն զարբանեակս նոցուն և  
զգործակիցս, զԵզնակ և զայլսն» («Եմառ ընդդէմ Երևութականաց»,  
«Մատենագրութիւնք Յովհաննու Օձնեցու», Վենետիկ, 1833, էջ 66).  
— 2. Եզնիկ Կողբացու թղթի մեջ՝ ուղղված իր ուսուցչին՝ «Եզնիկայ  
առ Մաշտոց» («Կնիք հաւատոյ», էջ 130, տե՛ս և Սարգսյան, «Ազա-  
թանգեղոս և իր բազմադարյան գաղտնիքը», էջ 353).— 3. Պրոկղի  
և Ակակի թղթակցութեանց մեջ՝ Սահակի և Մեսրոպի հետ, որ տե-  
սանք վերը (ըստ «Գիրք թղթոց», էջ 1, 9 և այլն).— 4. «Յովհան  
Իմաստասիրի Հայոց Կաթուղիկոսի սակս ժողովոց, որ եղևն ի Հայք»  
(«Յովսէփ աշակերտ Մաշտոցի և Սրբոյն Սահակայ»), «Գիրք թղ-  
թոց» (էջ 220), թեև սրանից 4 տող վերև ասում է «երանելին Մես-  
րոպ».— 5. «Աբրահամու Հայոց Կաթուղիկոսի առ Կիրիոն Վրաց  
Կաթուղիկոս՝ թուղթ երրորդ» («Եմառ երանելին Սուրբ Գրիգոր և  
ապա Մաշտոց», «Գիրք թղթոց», էջ 180): նույնը կրկնվում է Ուխ-  
տանեսի պատմության մեջ (էջ 84.— 7): Հունաց Փոտ պատրիար-  
քի Հիշատակարանում՝ Mastoubios (ուղղել Mastouzios ձևով. տե՛ս  
այս մասին Ադոնց, «Էջանդես ամսօրյա», 1925, էջ 195):

Այս բոլորից երևում է, թե հին և բնիկ անունն է Մաշտոց կամ  
Մաշթոց, որ հետո հորենացու մոտ դառնում է Մեսրոպ: հորենա-  
ցուց հետո եկող մատենագիրների մեջ երկու ձևերն էլ անխտիր գոր-  
ծածովում են, բայց միշտ առավելութունը տրվում է Մեսրոպ ձևին,  
այնպես որ այժմ մեր ժողովրդի մեջ Մաշտոց անունը բնավ գոյու-  
թյուն չունի, բայց սովորական է Մեսրոպ: Այս էլ է նշան, թե հինն  
է Մաշտոց:



Մեսրոպ անվան հետնության դեմ խոսել է Ն. Հովհաննես Թո-  
րոսյանը («Բազմավեպ», 1897, էջ 306), իբր փաստ բերելով երկու  
հին համարված գրվածքներ. առաջին՝ Եզնիկ Կողբացուն ընծայ-  
ված «Նշանագիր կարգաց բանիցն Եզնկայ» գրվածքի հիշատակա-  
րանը, ուր Մեսրոպ անունն է տրվում սուրբին. «Եւ կարգք գործոցն  
Գրիգորի նորոգեալ արամբ միով երանելիաւ տարօնացույ՝ որում  
անուն Մեսրովբ ճանաչէր»: Երկրորդ՝ Շահապիվանի ժողովի (գու-  
մարված 447 թվականին, Հովսեփ կաթողիկոսի նախագահությամբ)  
կանոնների նախերգանքը, ուր նույնպես Մեսրովբ ձևն է գործած-  
ված. «Հոգելից և հոգեծիր ճշմարտասէր վարդապետին Մեսրոպայ,  
որ լուսաւորեաց զերկիրն Հայոց վարդապետութեամբ իւրով» (հրտ.  
Ղլտճյան, էջ 97): Այս երկու հատվածների դեմ մենք ա՛յս միայն  
կարող ենք հիշեցնել, թե առաջինը է դարից է և զուր է վերագրել  
Եզնիկ Կողբացուն, երկրորդի հարազատությունը դեռ ճշգրտված չէ,  
և անփստահելի մի հատվածի համար փստահելի գրվածներն էլ կաս-  
կածի ենթարկել խոհեմություն չէ: Ընդհակառակը, պետք է, որ վե-  
րի հիման վրա, այդ աշխատությունը համարվի հետին գործ, և եթե  
մինչև իսկ հաստատվի նրա հարազատությունը, գոնե հետնաբար  
սրբագրված:

Շատերը երկու անունների մեջ զանազանություն դնելու համար  
ենթադրել են, թե սրբի իսկական անունն է Մեսրոպ, իսկ Մաշթոց  
միայն մականուն է: Այսպես Մեսրոպ երեց («Պատմութիւն Սրբոյն  
Ներսիսի», էջ 83) գրում է. «Ընդ նմա և աշակերտն իւր Մեսրովբ,  
որ անուանեցան Մաշդոց». նույնպես էջ 110. «Եւ ունկն դէր նմա  
Մեսրովբ աշակերտն իւր, որ անուանեցան Մաշդոց»: (Մեսրոպ ե-  
րեցի համար բնական էր մտածել այսպես, քանի որ իր անունն էլ  
Մեսրոպ էր): Ահա սրա համար է, որ նորերը երկու անունների հա-  
րադրությամբ սկսեցին ասել Մեսրոպ-Մաշտոց: Կա էլ, որ ընդհա-  
կառակը Մաշտոց ձևը համարում է անուն, իսկ Մեսրոպ մականուն:  
Այսպես է Օրբելյանը (գլուխ ԺԴ). «Ցուցից և զկրկին լուսաւորու-  
թիւն այսր աշխարհի ի ձեռն սուրբ և յոգնեբանեալն առն Մաշտոցի՝  
Մեսրոպ կոչեցելոյ»: Գարագաշյանը («Քննական պատմություն»,  
Դ, էջ 22), կարծում է, որ Մեսրոպ լինի աշխարհական անուն, իսկ  
Մաշթոց իբր եկեղեցական տիտղոս: Ս. վարդապետ Պարոնյանը  
(«Երկրագունդ», 1886, էջ 486—487) Մեսրովբ համարելով ասո-  
րերեն բառ, կարծում է, թե այս տիտղոսը տրված պիտի լինի Մաշ-  
տոցին՝ Ասորիք արած ճամփորդության ժամանակ, Եղեսիայի Բա-  
բելաս եպիսկոպոսից, երբ Մեսրոպ դառնալով Սամուսատից, հա-  
ջողել էր գտնել հայերեն նշանագրերը և ներկայացրել Բաբելա-  
սին: Օրմանյանն էլ կարծում է, թե աշխարհական անունն է Մաշ-

թոց, որ ձեռնադրության ժամանակ զարձրին Մեսրոբ (այն է՝ Տէր Սերովբէ) («Ազգապատում», Ա, էջ 268), իսկ Նահապետյանը («Բազմավեպ», 1913, էջ 147) ընդունելով Մաշտոցը հին անուն, Հունաստանում Ատտիկոս պատրիարքի կողմից տրված է համարում Մեսրոպ անունը՝ եկլեզիաստիկոս ձեռնադրված ժամանակ:

Սակայն բոլոր այս մեկնությունները շունեն բնավ պատմական հիմք և մնում են միշտ երկբայելի: Փարագաշյանի մեկնությունն էլ հիմնված է անստույգ ատուգարանություն վրա, որ պիտի տեսնենք քիչ հետո:

#### 4

Ինչ էն նշանակում արդյոք ստուգարանորեն Մեսրոպ և Մաշտոց բառերը: Սրանց համար հնուց ի վեր առաջարկված են զանազան ստուգարանություններ, որոնք ավելորդ շենք համարում հիշել այստեղ.

ա. «Պատմութիւն վասն Սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրովբայ վարդապետին» («Սոփերբ», Բ, Վենետիկ, 1853, էջ 41), Մեսրովբ բառը հանում է սերովբե բառից, մի ակնարկությունք, որ դժվար չէ հասկանալ. «Իսկ ի նորումս մեզ միայն շնորհնցաւ զիր յԱստուծոյ ի ձեռն Սրբոյն Սահակայ, որ խնդութիւն կոչի և մեծին Մեսրովբայ սրովբէատեսն անուան»:— Սահակ կամ Իսահակ < երբայերեն Isxaq կամ Isxāq, որ հանվում է sxq «ծիծաղել, կատակել» արմատից (Gesenius, Hebr. Handwört, Leipzig, 1921, էջ 312), իսկ Մեսրոբ համարում է իբր մար (որ է ասորերեն «տէր») + սերովբե:

Այս մեկնությունը ընդունում է նաև ս. վարդապետ Պարոնյանը (տե՛ս մի քիչ վերը), որ ըստ այսմ Մեսրովբ ձևը համարում է հարազատ, իսկ Մեսրոպ՝ նրա ժողովրդական աղավաղությունը: Նույնպես Հ. Բ. Սարգիսյանը («Ազաթանգեղոս և իր բաղմադարյան գաղտնիքը», էջ 404), որ կարծում է, թե Մար-Սրովբ «Տէր Սերովբէ» մի պատվանուն է, որ ասորիները տվին Մաշտոցին, ինչպես հույները տվին եկկլեսիաստիկոս տիտղոսը: Նույնը ընդունում և պաշտպանում է դարձյալ Յնտզլյանը («Հանդես ամսօրյա», 1926, էջ 270):

բ. Կարապետ եպիսկոպոս Սասնացին «Ներբողեան յաղագս վարուց և մահուան ս. վարդապետին Մեսրովբայ» (Վաղարշապատ, 1897, էջ 66) Մեսրոբ մեկնում է «տէր սուրբ և սեփական», այն է՝ ասորերեն մար «տէր» + հայերեն սուրբ բառերով. հայտնի չէ, թե ո՞րտեղից է հանում «սեփական»-ը:

գ. Վարդան պատմիչը մեկնում է «կանաչացեալ, յարազուարճ

և բերկրեալ»։ «Մեսրոպայ, որ է կանաչացեալ, այսինքն յարագուարճ և բերկրեալ, հօր մերում տեղի և յիշատակ ընդ առաւել սուրբսրն, և մեզ աղօթիւք նորա ողորմութիւն և գիտութիւն յԱստուծոյ ի համար աշակերտաց նորա և հոգևոր որդոց»։ Այստեղ հրատարակիչը ճշտով գուշակել է հեղինակի ստուգաբանութիւնը, որ է արաբերեն **ور** **مسمو** masūr «ուրախ» («ի սեմական լեզւաց ստուգաբանելով, մեսուր բերկրեալ լսի յարաբացին»)։

դ. Պատմելի Գալուստ Թիրյաքյանը, ինչպես լսել եմ, Մեսրոպ համարում է հայերեն սուրբ բառի արաբական ism-i maf'ūl կազմըված անցյալ դերբայը, որով բառը նշանակում է «սրբացյալ»։

ե. Ա. Մ. Գարագաշյանը («Քննական պատմութիւն», Գ, էջ 193 և Գ, էջ 21) Մեսրոպ մեկնում է «պարսիկ բառնն միւշրիֆ, որ կնշանակե դպիր կամ քարտուղար», իսկ Մաշթոց «հույն բառնն μαζός, որ կնշանակե բարձրութիւն»։ Այս ստուգաբանութիւնը կրկնում է Ծ. Թոփչյանը («Մեսրոպ Մաշտոց» տետրակում, էջ 7)։

զ. Միաբանը (Գալուստ Տեր-Մկրտչյան) Մաշտոց բառը հանում էր մաշտել «խել, քայքայել, թափել», մաշտիլ «մազերը թափիլ» բայերից, իբր մաշտոց «մազերը քերելու, պոկելու գործիք, մազխիլ», հետո դարձած հատուկ անուն (լսել եմ անձամբ իրանից 1900 թվականին)։ Նույնը նաև Խալաթյանը («Армянск. Арша-КНДЫ», էջ 316), բայց ենթադրելով, թե մաշտել բայը մի ուրիշ նըշանակութիւն էլ կարող էր ունեցած լինել։

է. Ս. վարդապետ Պարոնյանը («Երկրագունդ», 1885, էջ 490) Մաշտոց բառը համարում է ոչ թե բուն անուն Մեսրոպի, այլ ընդհակառակը՝ անուն Միսարանի, որից անցել է հետո հեղինակին։ Ըստ Պարոնյանի մաշտոց «զենդերեն մազդ բառն է, որ է մերս իմաստ, իմաստուն և կամ մեզդ, որ կնշանակե երգ, զոհ, և որուն չժողն է պաշտ, պաշտօն, կամ եբրայերեն մաշժուր, որ կնշանակե «աղօթագիրք»։

ը. Ավգերյանը («Լիակատար վարք սրբոց», Ե, էջ 28) մեկնում է հետևյալ ձևով. «Եւ էր առաջին և սովորական անուն սուրբ վարդապետիս Մաշտոց կամ Մաշթոց. իսկ Մեսրոպն անուն եղև յորջորջուն յաւելիալ իբրև մականուն, թերևս զկնի վարդապետութեանն, որպէս թէ մեծ բարուն ստուգաբանելի, կամ Մշու բարբի»։

թ. Ալիշանը («Շնորհալի և պարագայ իւր», Վենետիկ, 1873, էջ 451) հանում է մաշտ արմատից, որ «սրբազան նշանակութիւն մը պիտի ունենա, թերևս համանիշ մշտիկ բառին, որ նշանակե օրհնյալ ջրոց ցանիչ գործին կամ ճյուղը»։

ժ. Ֆնտզյանը նախ («Անահիտ», 1905, էջ 71) ծիծաղում է մաշտոց «ճաղատ» ստուգաբանութեան վրա. այս մարդու զանա-

զան հատկութիւններէ մէջ միայն ճաղատ լինելը աչքի բնկավ-  
հարց է տալիս նա, և կամ այս մարդը ճաղա՞տ է ծնվել, որ հենց  
ակզբից Մաշտոց են դրել անունը: Հետո («Հանդես ամսօրյա», 1926,  
էջ 268) Մաշտոց կապում է իրանեայէն Mazdak անվան հետ. Մաշ-  
տոցի արմատն է մաշտ=Mazd, ինչպէս yard=յաշտ. -ոց վեր-  
ջավորութիւնը գտնում ենք Բարակ—Բարոց, Տիրիկ—Տիրոց և Ա-  
փիկ—Ափոց անուններէ մէջ:

ժա. նույն է նաև Ադոնցը («Հանդես ամսօրյա», 1925, էջ 196),  
բայց Ադոնցն իրավամբ մերժում է յաշտ=yazd բառերի համեմա-  
տութիւնը mazd=մաժդ ձևերի հետ («Հանդես ամսօրյա», 1927,  
էջ 274): Մի քիչ հետո էլ մերժում է հենց mazd=մաժա ձևերի հա-  
մեմատութիւնը և Մաշտոց բառը միացնում է Μάστος անվան  
հետ, որ ըստ Հերոդոտի (VII, 79) Քսերքսեսի զորականներից մէկի  
անունն էր:

ժբ. Ադոնցը («Հանդես ամսօրյա», 1927, էջ 278), Մեսուր  
ստուգարանում է իրաներէն Mitra > Միհր, մեհ+srāva բառերից,  
որով Մեսուր < Mitra—srāva նշանակում է «Միհրին գովող կամ  
Միհրից գովված». հմմտ. գինդերէն durasiōb «վատախոս» ձևը:

Այս բոլորը կամայական մեկնութիւններ են և գիտութիւն հա-  
մար այնքան արհամարհելի, որ շարժե նույնիսկ նրանց հերքամար  
զբաղվել:

Սակայն եթե անհնար է իմանալ այս բառերի ստուգարանու-  
թիւնը, կարելի է գտնե որոշել, թե այս բոլոր գրչութիւնաց մէջ, որ  
վերը հիշեցինք, ո՞րն է ուղիղ:

Ադոնցը («Հանդես ամսօրյա», 1925, 1926 և 1927, էջ 275),  
հին ձևը համարում է Մաժոց, ինչպէս ունի Պրոկղի թուղթը, որից  
առաջացավ հետո Մաշտոց, իսկ («Հանդես ամսօրյա», 1927, էջ  
277) Մեսուր ամէլի հին է համարում քան Մեսուրայ, հիմնվելով  
«Կնիք հաւատոյ»-ի վրա, որ Պրոկղի թղթի մէջ ունի Մեսուր ձևը:  
Մարկվարտն էլ գրում է միշտ Մաշքոց: Բայց կարելի չէ բնավ հիմ-  
նրվել Պրոկղի թղթի վրա, ասելով, թե նա հին է, որովհետև Կոր-  
յունն էլ այնքան հին է, որքան Պրոկղի թուղթը: Բոլորն էլ հասած  
են մեզ հետին արտագրութիւններով, որոնք բնավ արժեք չունեն  
հնչական տեսակետով:

Դալով Մեսուր՞այ թե Մեսուր ձևին, իմ կարծիքն այն է, որ նախ-  
նական և հարազատ ձևն է Մեսուրայ. ապա դարձել է Մեսուր, նմա-  
նութիւն մի խումբ — ար հանգող անձնանունների, որոնք են Քերոբ,  
Սերոբ, Հակոբ, Չեւոբ, Յօբ. սրանք գրվում են նաև Քերովր, Սե-  
րովր, Հակովր, Յովր, ուստի Մեսուրայն էլ երբեմն դառնում է Մես-  
ուրովր:

Որքան ցանկալի էր ունենալ նկարներն այն վեհ անձերի, որոնք մեր դպրութեան պատճառն եղան. արդոք հնութիւնը խնայած է մեզ, մեր երկրի անհայտ մի խորշում ծածկելով այդ սուրբ անձերի մի քանդակը: Ի՞նչ պիտի տան արդոք Արտաշատի, հին Վաղարշապատի, Դվինի, Տարոնի և այլ հին-հին վայրերի ապագա մանրակրկիտ պեղումները. լիակատար հուսախաբութիւն, թե բավարար հայտնութիւնը մեր հին կյանքի, որ խուլ ավերակների խորը քնում է: Սպասելով, որ շուտ ծագեր այն երջանիկ օրերի արևը, մենք խոսենք այստեղ համառոտիվ այն նկարների մասին, որոնք այժմ հրապարակի վրա դրված են Սահակի և Մեսրոպի անունով:

Սահակից հայտնի է ինձ միայն երեք նկար. առաջինը հրատարակված է Ն. Ն. Թորոսյանի «Ընտիր Հայկազունք» աշխատութեան մեջ (Վենետիկ, 1891, էջ 148): Նկարը ներկայացնում է Սահակին՝ զգեստավորյալ հայրապետական զգեստով և նստած գահի վրա. գլուխը սաղավարտ, ունի շուրջառ և խաչազարդ փորուրար, հետևը դրված է գավազանը. ձախ ձեռքում բռնել է մի գիրք և մի գրիչ, իսկ աջ կողմը նստած է մանուկ մի հրեշտակ՝ ձեռքին բռնած թանաքաման, վերևից ծագում է լույս և լույսի մեջ կախված է Աստվածաշունչը: Նկարը ստորագրված է Oggioni ing., որ փորագրող իտալացու անունն է:

Երկրորդ նկարը գտնվում է էջմիածնի թանգարանում. նկարիչ Պետրոս Սրապյանը, 1895 թվականին, ներկայացնում է Սահակին, որ գրասեղանի առաջ, մի ոտքը ծնկաշոք, գրում է «Պարգևատուն ամենեցուն» շարականը. սեղանի տակ թափված են զանազան գրքեր. բարձրում կախված է խաչելութեան պատկերը: Ամբողջութիւնը աննշան տպավորութիւն է թողնում:

Երրորդ նկարը շատ ավելի տարածված է, մանավանդ որ առանձին թերթի վրա մեծ դիրքով տպված և վաճառման հանված է: Այս նկարը իբրև սրբազան առարկա, օծված դրված է էջմիածնի Տաճարի Ավագ Խորանի աջակողմը: Թե ո՞վ է պատրաստել այս նկարի նախատիպը, հայտնի չէ ինձ, բայց պետք է որ բավական հին լինի: Փափագողները կարող են տեսնել «Լույս» օրացույցի 1904 տարվա մեջ կամ Ն. Ծաղարբեգյանցի «Հայոց պատմութեան» մեջ (տպ. Շուշի, 1895, էջ 53—54): Նկարը ներկայացնում է Սահակին գլխաբաց, կրոնավորական հասարակ կապայով, ծնկի վրա բռնում է մի գիրք, որ կարծես կարդում է. ձախ կողմում խառնիխուռն թափված են թղթեր, գրիչ, գավազան և այլն: Պետք է ասել, որ այս

վերջին երկու նկարները շատ ավելի անհաջող են քան առաջինը. երեքի մեջ էլ բոլորովին պակասում է այն վեհ և ազդեցիկ կերպարանքը, որով նրեակայում ենք Սահակին: Մանավանդ վերջինը հասարակ սովորական մի ծերուկից տարբերութուն չունի:

Մեսրոպից ինձ հայտնի է վեց նկար, որոնք բնագաներապես ավելի հաջող են քան նախորդները: Առաջինը գտնվում է զարմյալ Ն. Ն. Քորոսյանի «Ընտիր Հայկազունք»-ի մեջ (էջ 164), նույն իտալացի Oggioni ing. անուն անձի փորագրութիւններ: Սերունի Մեսրոպ նստած է գլխաբաց, առջև կա թևավոր մանուկ մի հրեշտակ, որ տախտակի վրա գրում է Ա, Բ, Գ և այլն. Մեսրոպի կրծքի վրա շրջանակաձև լույս է ցոլում. ոտների մոտ թափված են գրքեր, թանաքաման, վարդապետական սաղավարտ ու գալազան:

Երկրորդը գտնվում է ԺԲ դարում գրված այն հռչակավոր մագաղաթյա Ավետարանի կազմի վրա, որ Գևորգ Գ կաթողիկոսը նվիրեց ռուսաց Ալեքսանդր Բ կայսեր, իր թագավորութիւն 25-ամյա հոբելյանի առթիվ: Ավետարանը թեև հին, բայց կազմը նոր պատրաստել տրված էր, գեղեցիկ զարդանկարներով. շորս անկյուններում կան Թադևոսի, Բարթողիմեոսի, Լուսավորչի և Մեսրոպի նրկարները. մեջտեղում նկարված է Դաստառակը՝ Քրիստոսի պատկերով: Մեսրոպը գտնվում է ամենավերջին տեղը, այն է՝ աջ կողմը, տակի անկյունում (ժամանակի կարգով ճիշտ է իր տեղը): Գլուխը դրված է վեղար, երկու ձեռքերն էլ բռնավորված մի-մի գրքով: Ամբողջ կազմի պատկերը հրատարակեց «Փարոս Հայաստանի» թերթը (Բ տարի, 1880, Մոսկվա, էջ 89):

Երրորդ նկարը, որ Մեսրոպի հայտնի նկարների մեջ ամենից տգեղն է, գտնվում է Գևորգ Գ կաթողիկոսի հաստատութիւն հրովարտակի մեջ, տրված ռուսաց Ալեքսանդր Բ կայսրից: Մեսրոպի նկարը գտնվում է հրովարտակի աջակողմը, վեղարով ու վարդապետական գալազանով. մի ձեռքով բռնած է Ավետարան, իսկ մյուս ձեռքով մի տախտակ, որի վրա նկարված է ամբողջ այբուբենը: Վերևը՝ աջակողմից լույս է ցոլում, որից արտափայլում են Մեսրոպի կրծքի վրա Ա, Ե, է, Ը, Ի, Ո, Օ ձայնավորները: Այս նկարը 1866 թվից է:

Չորրորդ նկարը, որ գտնվում է էջմիածնի թանգարանում և 1896 թվականին նկարված է Պետրոս Սրապյան նկարչի ձեռքով, ներկայացնում է Մեսրոպին՝ ծնկաչոր և բազկատարած աղոթելիս. շորս կողմում ամպեր են կուտակված. լույսը ցոլում է վերևից և նրա միջից ցայտում են Ա, Ե, է, Ը, Ի, Ո ձայնավորները: Դիմացի սեղանի վրա երկու գիրք կա դրված և ուղրված մի մագաղաթ: Անշուր նկար է:

Հինգերորդ նկարը ամենից ավելի տարածվածն է և Սահակի  
երրորդ նկարի իբրև ընկեր, նրա նման, առանձին թղթի վրա, մեծ  
դիրքով տպված և հանված է վաճառքի: Նկարը շատ ավելի հաջող  
է քան մյուս բոլորը: Մեսրոպը կրում է սևահեր գոտզ մազեր և սև  
կարճ միրուս. գլուխը բաց, վիզը մերկ, հագած վարդապետական  
պարզ վերարկու, ձախ ձեռքը պարզած կրծքի վրա, աչքերը հառած  
դեպի երկինք, կարծես այնտեղից ներշնչվելով, աջ ձեռքով գրում  
է ծնկին դրած թղթի վրա հայերեն գրերը: Վայելուչ է Մեսրոպի  
դիրքն ու կերպարանքը. աչքերի երկնասլաց հայացքը, վզի և ձեռ-  
քերի վրա ցցված ջղերը բավական ցույց են տալիս այն նվիրական  
անձի սրբութունը, վեհութունը և գործունեության եռանդը: Այս  
նկարը կա Ե. Քոփչյանի «Մեսրոպ Մաշտոց» տետրակի սկիզբը,  
«Լույս» օրացույցի 1904 տարվա մեջ, ինչպես և Հ. Ծաղարբեգյան-  
ցի «Հայոց պատմության» մեջ (Շուշի, 1895, էջ 53—54): Վերջա-  
պես օծված գտնվում է էջմիածնի Տաճարում, ավագ խորանի ձախ  
կողմը, որի հակառակ կողմն էլ գտնվում է Սահակի երրորդ նկարը:

Բայց այս բոլորից շատ ավելի գեղեցիկ ու շատ ավելի հուզիչ  
է Մեսրոպի այն նկարը, որ նկարել է նկարիչ Սագինյանը. սրա իս-  
կականը գտնվում է Օշականի ս. Մեսրոպ եկեղեցու մեջ, խորանի  
ձախ կողմը, իսկ Սմբատյանի լուսանկարչությանը հրատարակված  
է Արամ Մելյանի «Հայոց մեծ վարդապետ Սուրբ Մեսրոպը» աշ-  
խատության սկիզբը (Քիֆլիս, 1883): Նկարի մեջ, աջ կողմում,  
կուտակված են սև-սև ամպեր, ամպերից այն կողմ լույս է ցուում.  
աստվածային Աջը դուրս է կարկառվել ամպերի միջից և հանգչում  
է այն տախտակի վրա, որ լույսի մեջ կախված է և որի վրա նույն  
Աջը գրել է ամբողջ այբուբենը: Հրաշքի այս երևույթի առջև, Մես-  
րոպը ծունր է իջել և զարհուրած նայում է նույն տեսիլքին: Մեսրո-  
պի գլուխը բաց է. սպիտակ մազերը և ալեհեր միրուսը քամին դե-  
պի հետ է ցրվում. հագել է վարդապետական շուրջառ և վերարկուի  
կրծքի վրա ճառագայթում են Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Օ (վերջինը սխալ-  
մամբ դրված Ի-ի տեղ)․ մի մեծ գիրք և վարդապետական գավա-  
զանը ընկել են գետին. ամբողջը հուզյալ մի վայրկյանի գորեղ ար-  
տահայտությունն է:

## 6

Վերոհիշյալ ինը նկարները զուտ արդյունք են երևակայության  
և ձևակերպված են վերջին ժամանակներում. բայց արդյոք հեն՞րն  
ինչպես էին երևակայել նույն սրբազան անձերին և արդյոք նրանց  
տված նկարը ճշմարտության ավելի մոտիկ չէ՞ր: Այս բանը պար-

զելու համար մտածեցի դիմել զանազան պատկերազարդ հին ձե-  
ռագրերի, ինչպես Շարական և «Յայամաուրք», որոնց մեջ հուսա-  
լի էր գտնել նաև Մեսրոպի և Սահակի նկարները: Որոնք որ քիչ թիւ  
շատ զբաղված են այլևայլ Շարականների և «Յայամաուրք»-ների  
նկարների համեմատությամբ, դիտեն, թէ ինչպիսի՞ մեծ կապակ-  
ցություն կա այս նկարների մեջ: Նրանք գրեթէ մեծամյ մասամբ  
իրարից են արտանկարված, այնպես որ կարելի է մտածել, թէ մի  
նոր Շարականի կամ «Յայամաուրք»-ի մեջ եղած նկարը հնի շա-  
րունակությունն ու կրկնությունն է: Այս մտածումով մեր որոնած  
նկարներն էլ պիտի լինեն հնագույն ժամանակի մնացորդ. ուստի  
իրականին շատ ավելի մոտ, կամ նույնիսկ իրականը, որ կարելի  
պիտի լիներ գտնել, եթէ նկարի վրա բանասիրական աշխատանք-  
ներ կատարվեին:

Էջմիածնի ձեռագրատան մեջ Մեսրոպի նկարն ունեն Շարա-  
կաններից Կարինյան ցուցակի № № 1573, 1575, 1579, 1583, 1587  
և 1617 ձեռագրերը, «Ս. Քարգմանչաց» շարականի լուսանցքի վրա.  
բայց այս բոլորն էլ շատ աննշան գծագրություն ունենալով, ար-  
ժանի չեն մանրամասն հիշատակության: Այսպես է նաև Կարինյան  
№ 1495 «Յայամաուրք»-ի մեջ (էջ 63) խաղմղված Մեսրոպը: Բայց  
կարելի է հիշել Կարինյան № № 1488, 1492, 1498, 1501 և Գևորգ-  
յան № 571 «Յայամաուրք»-ների մեջ նկարված Սահակի և Մեսրո-  
պի նկարները, որոնք ավելի հաջող երևույթ ունեն: Այս նկարները  
գտնվում են սեպտեմբեր 9, 17 (երկիցս), նոյեմբեր 25 և փետրվար  
19 օրերում:

Սեպտեմբերի 9-ին գտնվում է Սահակի նկարը. № № 1492 և  
1488 ներկայացնում են նույն ձևով. Սահակը լուսապսակված կանգ-  
նած է, սպիտակ մազերով, սպիտակ միրուսով, կարմիր շուրջա-  
ռով, որի տակից հագել է դեղին գույնով մի զգեստ, խաչերով մի  
ուրար ունի վրան, ձեռքը բռնած է ուղիղ կոթով գավազան: № 1498  
ևս նույնն է, միայն առանց գավազանի: № 1501 շատ տարբեր ձե-  
վով է. Սահակն այստեղ երիտասարդ է. սև միրուսով և երկար մա-  
զերով. դիմին ունի կապույտ սաղավարտ, հագած է կանաչ զգեստ,  
վրան բալի գույնով շուրջառ, ձեռքը բռնած կորագլուխ գավազան  
և Ավետարան:

Սեպտեմբերի 17-ին նկարված են Սահակը և Մեսրոպը միա-  
սին. № № 1492 և 1488 ձեռագրերում երկուսը կանգնած են կողք-  
կողքի և թև-թևի, լուսապսակված, շուրջառով և ուրարով. մին ավե-  
լի ծեր է (Սահակ) և մյուսը ավելի երիտասարդ (Մեսրոպ), № 1498  
ձեռագրում Մեսրոպը մենակ է, լուսապսակված, սեահեր, սեամո-  
րուս և զգեստավորված:



Նույն օրը № № 1492 և 1488 ձեռագրերը ներկայացնում են նաև Մեսրոպի տեսիլքը: Մեսրոպն ալեհեր, լուսապսակված ծերունի, հագած կարմիր հասարակ շապիկ և կապույտ վարտիք, ծունր է իջել մի սարի գագաթին. վերևում, ամպերի մեջ նստել է Աստված, նույնպես կարմիր շապիկով. նրանից ստացել է Մեսրոպ այբուբենի տախտակը, որ ձեռքերով բարձրացրել է:

Նույնմբերի 25-ին նկարվում է դարձյալ Մեսրոպը մենակ. № № 1492 և 1488 ձեռագրերում մի ծերունի է լուսապսակված, հասարակ զգեստներով, ձեռքին մի գիրք, որի վրա կարդացվում են «Գիտացիք որ ի յառաջ» բառերը: № 1498 ձեռագրում զգեստավորված է Մեսրոպը և ձեռքին ունի գավազան:

Փետրվարի 19-ին Մեսրոպը նկարված է նույնպես մենակ. № № 1492 և 1488 ձեռագրերի մեջ երիտասարդ, լուսապսակված, վեղարով և գավազանով. ձեռքից կախված է մի թուղթ, ուր կարդում ենք «Ճի ի Հօրէ և եկի»: № 571 ձեռագիրը ունի այս՝ լուսապսակված, շուրջառով, ուրարով և ձեռքին մի գիրք բռնած:

Քավրիզում կա մի նոր ձեռագիր (Յաղագն աստուածային բացարձակ կատարելութեանց», 1826 թվականից, սեփականություն Տիգրան Մելիք-Ձոհրաբյանցի), որի սկիզբը գրված է Մեսրոպի տեսիլքի մեծադիր նկարը: Այս նկարը բուրբուրյին նույն նյութն ունի, ինչ որ Մեսրոպի վեցերորդ նկարը. բայց նրանից շատ ավելի անարվեստ ու անճաշակ ձևով է նկարված:

## Գ Լ ՈՒ Ե Ժ

### ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 1

Վերը, տասնմեկերորդ գլխում, խոսելով Ս դարի գրական շարժման վրա, տեղ-տեղ ցույց տվինք այն գրական մեծ գործակցությունը, որ Մեսրոպը ցույց տվեց ս, Գրքի և ուրիշ եկեղեցական գրքերի թարգմանության մեջ: Բայց այս տեղեկությունները ավելի ընդհանուր բնույթ ունենալով, ներկա գլխով ուզում ենք խոսել Մեսրոպի աշխատությունների վրա մասնավորապես, քննելով յուրաքանչյուրը առանձին, հիշատակել, թե ի՞նչ գործեր վերագրվում են իրեն և թե սրանցից որոնք են ստույգ:

Ինչպես արդեն գիտենք, Մեսրոպի առաջին աշխատությունն է Առակաց գրքի թարգմանությունը, որ միանգամայն հայ գրակա-

նության մեջ գրված առաջին երկասիրութիւնն է և որ Մեսրոպը կատարեց իր երկու հասուն աշակերտներէ՝ Լովհան Եկեղեցացու և Լովսենի Պաղնացու ընկերակցութեամբ:

Առակաց գիրքը, որ Սողոմոն իմաստունի շորս երկասիրութիւններից գլխավորն է, միջակ մեծութեամբ մի տետրակ է, որ պարունակում է մտաւժգորապէս 40 ութածալ երես: Աշխատութիւնը բաժանված է երեք մասի, որոնք ընդամենը ունեն 31 գլուխ, 1750 համարով: Պարունակում է քաղամաթիվ խրատներ, ուղղված ամեն դասի մարդկանց, նրանց սրտում առաքինութեան սերմերը ցանկելու և շարութեան որոմը արմատախիլ անելու նպատակով: Գրվածքն ունի այնպիսի հեշտ ու դյուրասահ ոճ, որով ամեն ընթերցողի համար պարզ ու հասկանալի է դառնում: Մեսրոպն իր թարգմանութեան մեջ ջանացել է նյութին և հեղինակի նպատակին համապատասխան լեզու գործածել: Նա այնպիսի մի լեզու ունի, որ ամեն զարդարանքից ու պճնութիւնից հեռու, հանդարտ հոսող առվակի նրման, հեզիկ ու հեշտասահ ընթանում է: Ավելի փափուկ քան Ծաւյու և Երեմիայի մարգարեութեանց լեզուն, ավելի նուրբ և վայելուչ քան Մենդոց և Ավետարանի թարգմանութիւնը, այս երկուսի միջև՝ բռնում է միջին ճանապարհ:

Մանոթացնելու համար ընթերցողին Մեսրոպի սույն հարազատ լեզվին, բերենք մի կարճ օրինակ գրքի հենց սկզբից.

«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զդարձուածս բանից: Ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ և ուղղել զիրատւնս: Զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս և զհանճար: Որոց իբրև լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի, իսկ որ հանճարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստասցի: Ի միտ առցէ զառակս և զբանս խորինս, ըզճառս իմաստնոց և զառակս նոցա: Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն. հանճար բարի ամենեցուն որ առնեն զնա. պաշտօն բարի առ Աստուած՝ սկիզբն զգօնութեան. զիմաստութիւն և զխրատ ամպարիշտք անգոսնեն: Լո՛ւր, որդեակ, խրատու հօր քոյ, և մի՛ մերժեր զօրէնս մօր քոյ, զի պսակ շնորհաց ընկալցի գլուխ քո և մանեակ ոսկի ի պարանոցի քում»:

Առակաց գրքի թարգմանութիւնից հետո Մեսրոպին է ընծայվում նաև ամբողջ ս. Գրքի թարգմանութիւնը (Հին և Նոր Կտակարանները), որ իբր թև կատարել է նա Սամուսատ եղած ժամանակ,

իր Հովսեփի և Հովհանն աշակերտներէ հետ: Այսպիսի տեղեկութիւններ տալիս է նախ Խորենացին (Գ, ԺԳ). ահա իր բառերը. «հանդերձ Հոսիանոսի և կերպածեալ զգիրն Մեսրոպայ... Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց, բովանդակ զքսան և երկու յայտնիսն և զնոր Կտակս յեղով ի հայ բան, նա և աշակերտք նորա Յոհանն Եկեղեցացին և Յովսէփ Պաղնացի»: Թեև Կորյունն այսպիսի բան չգիտե, բայց Փոքր Կորյունը, հետեւելով Խորենացուն, նույնն է ավանդում, միայն փոխանակ նոր Կտակարանի՝ Հինը հիշելով. «Եւ իսկոյն ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռակաց իմաստնոյն Սողոմոնի, բովանդակեալ զքսան և երկուս յայտնիսն, զՀին Կտակարանսն յեղով ի հայ բան» (էջ 11):

Այս տեղեկութիւնը, որ հակասում է ս. Գրքի թարգմանութիւն բոլոր հանգամանքներին, պետք է համարել, թե բոլորովին սխալ է: Ապա թե ոչ պետք պիտի լինի ընդունել, թե ս. Գիրքը հայերեն թարգմանված է երեք անգամ. առաջինը Մեսրոպի ձեռքով (Սամուսատի՝ այս թարգմանութիւնը), երկրորդը Սահակի ձեռքով, Մեսրոպի Աղվանք քարոզութիւն գնացած ժամանակ (Խորենացի, Գ, ԺԳ. «Եւ գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յասորոյն՝ յոչ լինելոյ յունի») և երրորդ թարգմանիչների վերադարձին՝ Եզնիկի ընկերակցութեամբ (Խորենացի, Գ, կա): Բայց թե այսպիսի մի ենթադրութիւն հակառակ է նույնիսկ Խորենացուն, հայտնի է իր վկայութիւնից, որ վերջին թարգմանութիւն առթիւ խոսելով ասում է. «Դարձյալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն» (Գ, կա): Եթե մի՛ անգամ էր թարգմանված առաջ, ուրեմն Սամուսատի ենթադրեալ թարգմանութիւնը գոյութիւն չունի: Եվ ինչպե՞ս կարող էր Մեսրոպ այնպիսի երկարատև մի աշխատութիւն ձեռնարկել և կատարել այնքան կարճ ժամանակում, որ մնաց Սամուսատում, երբ գիտեր, թե ձայաստանի մեջ ակնդետ իր վերադարձին էին սպասում թագավորը, Սահակը և ամբողջ ուսումնազուրկ, բայց ուսումնատենչ ժողովուրդը: Պարզ է, որ միայն Առակաց գրքի թարգմանութիւնը տեղիք է տվել Խորենացուն՝ ամբողջ ս. Գիրքը միասին թարգմանված կարծելու: Ինչ թվում է, թե Խորենացու այս թիւրիմացութիւնը հոգեբանական է. Կորյունն ասել էր. «Եւ եղեալ սկիզբն յԱռակացն Սողոմոնի», որ Խորենացին էլ կրկնում է ուրիշ բառերով՝ «խորհրդաբար սկսանելով յԱռակաց». երբ մեկը մի բան սկսում է, պիտի վերջացնի. ահա թե ինչու Խորենացին ամբողջ ս. Գիրքը միասին թարգմանված է կարծել:

Մախասայանը (Թարգմանութիւն Խորենացու պատմութիւն, ժանոթ. 315), կարծում է, թե Խորենացու պատմութիւն այս տողը՝

արժանեղանկելով գրասան և երկու յայտնիսն և զնոր Կտակս յնդու Ի հայ բանս, լուսանցագրութիւնն է, որ հետո մտել է բնագրի մեջ:

Ամետարանի առժամանակյա Քարգամանութիւն մասին (Մետրոպի ձեռքով) խոսել ենք արդեն, իսկ իր անորոշ գործակցութիւն մասին ս. Գրքի լիակատար Քարգամանութիւն, ինչպէս և Ս դարի մյուս գրական արտադրութիւն մեջ, տե՛ս տասներորդ և տասնմեկերորդ գլուխները:

3

Սահակի և Մեսրոպի աշխատակցութիւն արդյունք են համարում Հայ Եկեղեցու ծիսական հինգ կարևոր գրքերը, որոնք են Փամագիրք, Պատարագամատուց, Շարակնոց և Մաշտոց: (Այսպէս, օրինակ՝ Չամչյան, «Պատմութիւն Հայոց», Ա, 510):

Այս բոլորի մեջ ամենագլխավորն է Մաշտոցը կամ Միսարանը, որ Հայաստանյայց Եկեղեցու ծիսակատարութիւն համար ամենամեծ նշանակութիւնն ունի:

Այս գրքի հեղինակի մասին երկու տարբեր ավանդութիւններ կան. առաջինը, որ վննետիկյան դպրոցի և առհասարակ բոլոր հին բանասերների կարծիքն է, ենթադրում է, թէ Մաշտոց գրքի հեղինակը Մեսրոպն է: Իսկ երկրորդը, որ ավելի նոր ու քննադատ բանասերների կարծիքն է, այս աշխատութիւնը ընծայում է Ք դարի մատենադիր Մաշտոց կաթողիկոսին: Առաջին կարծիքը թեև շատ ավելի տարածված, սակայն չի հիմնվում մի հին պատմական վկայութիւն վրա. ո՛չ Կորյուն, ո՛չ Փարպեցի, ո՛չ Խորենացի և ո՛չ էլ սրանց մոտ կամ հետո ապրած մի հեղինակ այս մասին չի տալիս որևէ տեղեկութիւն, և հայտնի չէ ինձ, թէ նոր հեղինակները ի՞նչ վկայութիւն վրա հիմնվելով պնդում են այս կարծիքի վրա:

Արդարև, Չամչյանը («Պատմութիւն Հայոց», Ա, էջ 769) և Զարրհանալյանը («Պատմութիւն հայ դպրութեան», Բ, 492), այս կարծիքը ապացուցանելու համար վկայութիւն են կոչում Ենորհալու «Առ Միջազնետացիս» գրած թուղթը: Բայց թէ այս թուղթը հիշատակառանկ է ապացուցանում, կտեսնենք քիչ հետո:

Երկրորդ կարծիքը հաստատող հին պատմական վկայութիւններ շատ կան: Այսպէս՝ նախ Կիրակոս Գանձակեցին, որ (էջ 45), խոսելով Մաշտոց կաթողիկոսի վրա, ի միջի այլոց ասում է. «Սա կարգեաց զգիրսն որ ըստ իւր անուանն Մաշտոց կոչի, ժողովեալ զամենայն կարգեալ աղօթս և զընթերցուածս ի միասին յարմարեալ յաւելուածով յիւրմէ, որ ունի յինքեան զամենայն կարգս հաւատոյ քրիստոնէութեանս»:

Երկրորդ վկայութիւնը տալիս է «Յայնմատուրք»-ը՝ Սահմի Գ=հոկտեմբեր 13, «Վարք և յիշատակ սուրբ հայրապետին մերոյ Մաշտոց վարդապետին»: Պատմում է, թե նույն անձը «... լեալ 60 ամաց՝ եղև կաթողիկոս. և եկաց տարի մի յաթոռն հայրապետական և վախճանեցաւ ի գեղաքաղաքն Գառնի: Եւ եղաւ պատուով մօտ ի հովանոց արքային Տրդատայ, ի բերդն Գառնույ Յեզ (=897) թուին: Այս վարդապետս Մաշտոց ընդ բարի վարուց առաքինութեանն իւրոյ, արար և բազում ուղղութիւնս կարգաց և կրօնից Եկեղեցւոյ: Եւ ժողովեաց զկարգեալսն յառաջին սրբոցն, և զթեղին ինքն ելից յաստուածատուր շնորհաց իւրոց, և եզ ի միում տփի: Զկարգն Մկրտութեան և զՊսակին, զՀաղորդութեան և զԹաղմանն, զՀոգիհանգիստն և զԵնտրոհանայն, զՍերմօրհնէն և զԶեղշ, զկալ և զհրնձան, զհորս և զկարաս, զԵրօրհնէն և զտնալուսայն, զհիմնարկէքն և զեկեղեցի օրհնէքն, զաւղանին և զպղծեալ տաճարին, զձեռնադրութիւնն և զքահանայաթաղն, և զայլն ամենայն, որովք վարին մերս կարգավորութիւն: Վասն որոյ և անուն գրոցն Մաշտոց կոչեցաւ, զի նորին աշխատասէր կամօքն ի մի վայր ժողովեցաւ:»

Երրորդ վկայութիւնը տալիս է Ներսես Շնորհալու թուղթն առ Միշագետացիս (տե՛ս Շնորհալու «Թուղթ ընդհանրական», տպ. էջմիածին, 1865, էջ 333—400): Այս թղթում միշագետացի ասորիների արած զանազան առարկութիւններին պատասխանելուց հետո, Շնորհալին անցնում է խոսել Մաշտոց գրքի մասին, այսպես. «լուսաք դարձեալ՝ զի ոմանք ի մուրք քահանայից զծածկեալ զարշահոտ պղծութիւն անիծելոյն Սմբատայ Թոնդրակեցւոյ վերստին շարժեն ի կործանումն լսողացն ասելով, եթե եկեղեցի ո՛չ շինեալն է ի մարդկանէ, այլ մեք միայն. և Մաշտոցն գիրք և որ ի նմա կարգեալքն են խաչ օրհնել և եկեղեցի և այլք ոչ են ընդունելի (էջ 373)... Իսկ այն՝ զի զցուցակն ընդունելի, որպէս թէ ոչ ի նախնի հարցն, այլ ի վերջում ժամանակի ի Մաշտոցէ ումմանէ ասացեալ և եղեալ է, սուտ են և ո՛չ ճշմարիտ: Քանզի ամենայն կարգեալքն ի նմա ի յառաջին հարցն հաստատեալք էին. է որ ի մերոց լուսաւորչացն, և է՛ որ յայլոց ազգաց հայրապետաց, որպէս և են իսկ դրոշմեալ իւրաքանչիւրոցն անուանք ի սկիզբն ցուցակին: Իսկ երանելին Մաշտոց զբաժանեալ կանոնսն ի միմեանց ի մի գիրս հավաքեաց, վասն որոյ և նոյն գիրք յանուն նորա ասացեալ լինին: Բայց թէ և նմին իսկ Սրբոյն Մաշտոցի էին ասացեալ ամենայնքն, զի՞նչ պատճառաւ են անընդունելի. կամ ցուցցեն զվնասն որ ի նմա, և կամ յայտնի առնեն զանձինս, թէ հակառակ են Քրիստոսի և օրինաց նորա... (էջ 380):»

Շնորհալու այս վկայութիւնը փարատում է ամեն կասկած և

հաստատ կերպով ցույց է տալիս. թե Մաշտոց գրքի մեջ գտնված կանոնները թեև առանձին կազմված են զանազան հայրապետներից, բայց նրանց կարգավորությունը և մի գրքի մեջ ամփոփումը եղել է Մաշտոց կաթողիկոսի ձեռքով զի վերջում ժամանակին: Զարբհանալյանը սխալ հասկանալով Շնորհալու այս ցույցովին պարզ խոսքերը (էջ 492), ասում է, թե «Սուրբն ներսես Շնորհալի, որ առ Միջագետացիս գրած թղթույն մեջ հայտնապես կգրուցե, թե որչափ անտեղի է այս կարծիքը (Միսաբանը Մաշտոցին և ո՛չ Ս. Մեսրոպին ընծայելը)»: Զարբհանալյանը սխալվում է անշուշտ Շնորհալու թի Մաշտոցի ումեմնէ ասացեալ և եղեալ է, սուտ են և ոչ ճշմարիտ» բառերից: Բայց դժբախտաբար Շնորհալին այս բառերով Մաշտոցի հեղինակ լինելն է միայն մերժում և ո՛չ բնավ նրա կարգավորությունը, որ հետո ավելի ընդարձակ բացատրում է:

Մեսրոպին կողմնակից կարելի էր համարել Մաշտոց կաթողիկոսի կենսագրությունը, որ գրել է իր աշակերտը՝ Ստեփանոս վարդապետ Սևանեցի (տե՛ս Զարբհանալյան, «Պատմութիւն հայ գրպութեան», Բ, էջ 514): Այս կենսագրությունը գտնվում է էջմիածնի ձեռագրերից մի քանիսի մեջ. ինչպես՝ Կարինյան N 957 (էջ 614—617), Գևորգյան N 100 (էջ 582—583), Գևորգյան N 97 և այլն, տպված է նաև Գ. Տեր-Պողոսյանի «Էկոն Շանթի շէին աստուածներ»-ը և Ստեփանոս վանականի հիշատակարանը աշխատության մեջ (Շուշի, 1913): Բայց այս կենսագրության մեջ ակնարկություն անգամ չկա այն մասին, թե Մաշտոց կաթողիկոսն է եղել Մաշտոց գրքի կարգավորիչը: Այս պարագան անշուշտ շատ զարմանալի է. բայց զարմանքը կվերանա, երբ նկատենք, թե կենսագրությունը գրված է այն ժամանակ, երբ Մաշտոց դեռ 60 տարեկանից պակաս էր, ինչպես հիշվում է նույն կենսագրության մեջ, և հետևաբար դեռ կաթողիկոս էլ չէր ընտրված. մինչդեռ մենք գիտենք, թե Մաշտոց գրքի հորինումը եղած է նույն հայրապետի կաթողիկոսության ժամանակ:

Այժմ անցնենք քննել մոտիկից բուն Մաշտոց գիրքը, որով նոր փաստեր պիտի ունենանք շոշափելի կերպով մերժելու հին ձևի ենթադրությունները:

Արդի գործածության մեջ Մաշտոցը երկու տեսակ էր՝ Մեծ կամ Մայր Մաշտոց և Փոքր Մաշտոց, որ իր սովորական դործածության պատճառով հասարակաբար կոչվում է պարզապես Մաշտոց:

Մեծ կամ Մայր Մաշտոցը պարունակում է հետևյալ 45 գլուխները, որոնք կոչվում են կանոն.

1. Կարգ մկրտութեան (բուն մկրտութիւն, ութօրէք և քառասնօրեայր).

2. Կանոն նորոգ սափրելոյ գճերս.
3. Կանոն նշան տալոյ և օրհնելոյ.
4. Կանոն կուսի պսակին և Կանոն պսակ վերացուցանելոյ.
5. Կանոն երկրորդ պսակի.
6. Կանոն հաղորդ տալոյ հիւանդաց.
7. Կանոն գիշերժամու աղօթից (ծանր հիվանդների վրա կարողացվելիք աղոթքներն են. համեմատությամբ նախորդի՝ շատ ավելի ընդարձակ).
8. Կանոն խաչալուսայ առնելոյ.
9. Հոգեհանգիստ մեռելոց.
10. Կանոն աղ օրհնելոյ.
11. Կանոն մատաղ օրհնելոյ.
12. Կանոն հաւ օրհնելոյ.
13. Կանոն ջրհոր օրհնելոյ.
14. Կանոն զսերմանիս օրհնելոյ (արտ, հունձ, կալ, հնձան).
15. Կանոն խաչ օրհնելոյ.
16. Կանոն նկարեալ եկեղեցի և պատկեր օրհնելոյ և օծելոյ.
17. Կանոն սկիհ և մաղղմայ օրհնելոյ.
18. Կանոն եկեղեցւոյ զգնստ օրհնելոյ.
19. Կանոն նոր գիրք օրհնելոյ.
20. Կանոն նորավարտ աշակերտ օրհնելոյ.
21. Կանոն դժուարածին յղի կնոջ.
22. Կանոն փարատելոյ զփոս նորածին մանկանց.
23. Կանոն թացեղէն պղծեալ նիւթ օրհնելոյ.
24. Կանոն խունկ օրհնելոյ.
25. Կանոն վասն բարձման երաշտի.
26. Կանոն վասն այսահարաց և լուսնոտից.
27. Կանոն թաղման ննջեցելոց (այգուց, եօթնաւուր).
28. Կանոն տղայաթաղի (այգուց, եօթնաւուր).
29. Շարականք Հանգստեան.
30. Աւետարանք բժշկութեան.
31. Աղօթք բժշկութեան.
32. Հիմնարկէք եկեղեցւոյ (հիմնարկութիւն, նաւակատիք և օծումն).
33. Կանոն եկեղեցւոյ աւազան օրհնելոյ.
34. Կանոն զպղծեալ տաճարն սրբելոյ.
35. Կանոն եկեղեցւոյ նոր դուռ օծելոյ.
36. Կանոն ժամահար օրհնելոյ.
37. Կանոն ապաշխարութեան մեղուցելոց.
38. Կանոն օրհնութեան և ձեռնադրութեան եօթն աստիճանա-

ւորաց էկեղեցւայ (1. սազմութեան, անբաժնի, զոն-  
պանք, 2. ընթերցողք, 3. երգմենեցուցիչք, 4. ջահընկալք,  
5. կիսասարկաւազունք, 6. աւագ սարկաւազունք, 7. քա-  
հանայք և արեղայք)։

39. Կանոն մասնաւոր իշխանութեան 4 աստիճան զաւազանի։
40. Կանոն ծայրագոյն իշխանութեան 10 աստիճան զաւազանի։
41. Կանոն ձեռնադրութեան եպիսկոպոսաց։
42. Քահանայաթաղ։
43. Կանոն օրհնութեան ս. Միտոսի։
44. Կանոն ձեռնադրութեան կաթողիկոսաց։
45. Կանոն օծման թագաւորաց։

Մայր Մաշտոցի զանազան տպագրութիւնները կարող են հիշ-  
յալ 45 գլուխներից մի երկուսը հապաված լինել։ այսպես օրինակ՝  
(41) Կանոն ձեռնադրութեան եպիսկոպոսաց, (43) Կանոն օրհնու-  
թեան ս. Միտոսի, (44) Կանոն ձեռնադրութեան կաթողիկոսաց,  
և վերջապես (45) Կանոն օծման թագաւորաց։ Այս կանոնները կա-  
րող են կազմել նաև առանձին հատոր՝ «Փիրք կամ Մաշտոց ձեռ-  
նադրութեան» անունով։ Բայց լիակատար Մայր Մաշտոցը պետք  
է որ բոլոր կանոններն էլ պարունակի։

Փոքր Մաշտոցում գտնվում են վերի 45 գլուխներից միայն այն  
կանոնները, որոնք ամենօրյա գործածութիւն մեջ պետք են. ինչ-  
պես՝ Մկրտութիւն, Նշանադրութիւն, Պսակի, Քաղման և ուրիշ  
կարգեր։ Առհասարակ 1—31 կանոնները կարող են մուտք գործել  
Փոքր Մաշտոցի մեջ, իսկ Փոքր Մաշտոցը ամբողջովին պարփակ-  
վում է Մայր Մաշտոցում։

Թեև Մաշտոցի կազմակերպութիւնը ավանդաբար Մեսրոպին  
կամ Մաշտոց կաթողիկոսին է ընծայվում, սակայն կանոնների մեջ  
կան մի քանիսը, որոնք առանձին հեղինակի անուն ունեն և հետե-  
վաբար շնն կարող այս երկուսից լինել։ Այսպես են (31) Աղօթք  
բժշկութեան, որ Փրիգոր Նարեկացու հեղինակութիւնն է՝ Նարեկից  
հանված, (32) Հիմնարկէք եկեղեցւոյ, որ կազմել է նախ Հովհան  
Մանդակունի, իսկ հետո էջմիածնի միաբան Մինաս արքեպիսկո-  
պոսը նոր փոխադրութիւններով ձևավորել է (հմտ. «Մայր Մաշ-  
տոց», տպ. Պոլիս, 1807, էջ 155), (39) «Կանոն մասնաւոր իշխա-  
նութեան 4 աստիճան զաւազանի» Փրիգոր Տաթևացու աշխատու-  
թիւնն է։ Մնացյալները թեև Մաշտոցում առանձին հեղինակի ա-  
նուն չեն կրում, բայց նրանց մեծ մասը «Օրհնութիւնարեք» ցուցա-  
կում ընծայված է զանազան հեղինակների. այսպես՝ (1) Կարգ  
մկրտութեան և (4) Կարգ պսակադրութեան ընծայվում են Հովհան  
Մանդակունուն, (8) Կանոն խաշալուայ առնելոյ՝ կազմել է ս. Բար-



սեղը իր հայրապետութեան հինգերորդ տարում, Կապադովկիայի Կեսարիա քաղաքում և Խոսրով թարգմանիչը բերել է Երուսաղեմից, (9) Հոգեհանգստի կարգը կազմել է ս. Եփրեմ ասորին, Նիկոմիդիոս քաղաքում, իր հայրապետութեան երկրորդ տարում, որ Ղազար Փարպեցին բերել է Հայաստան, (10) Կանոն աղ օրհներոյ՝ կազմել է Հուստոս եպիսկոպոսը, (14) Կանոն զսերմանիս օրհներոյ՝ կազմել է Գրիգոր Աստվածաբանը, որ իբր թե Մովսես խորենացին բերել է Հայաստան, (15) «Կանոն խաչ օրհներոյ» Մանդակունուն է, (16) «Կանոն նկարեալ եկեղեցւոյ» Գրիգոր Լուսավորչին է ընծայվում, (17) «Կանոն սկիհ և մաղզմայ օրհներոյ» և (18) «Եկեղեցւոյ զգեստ օրհներոյ» Հովհան Մանդակունուց են, (27) «Կանոն թաղման նշեցեցւոց» կազմեց ս. Սահակ՝ Վաղարշապատում, (32) Հիմնարկէք եկեղեցւոյ, (33) Կանոն եկեղեցւոյ աւազան օրհներոյ, (34) «Կանոն զպղծեալ տաճարն սրբելոյ» Հովհան Մանդակունուց են, (35) «Կանոն եկեղեցւոյ նոր դուռ օծելոյ» Լուսավորչից է, (36) «Կանոն ժամահար օրհներոյ» Հովհան Մանդակունուց է, (37) «Կանոն ապաշխարութեան մեղուցելոց» կազմել է Կյուրեղ Երուսաղեմացին՝ իր հայրապետութեան 21-րդ տարին, Երուսաղեմում, որ Կորյուն և Ընծակ թարգմանիչները Հայաստան բերին, (38) Ծօթն աստիճանաւորաց ձեռնադրութեան կանոնի մեջ ընթերցողների և կիսասարկավազների կարգը կազմել է Լուսավորչը, իսկ քահանա օրհներու կարգը կազմել է Սահակը, իր հայրապետութեան 21-րդ տարին, (42) Քահանայաթաղը նույնպես ս. Եփրեմից է, որ Ղազար Փարպեցին բերավ Հայաստան, իսկ հետո Սահակն ավելացրեց յոթ Ավետարանները:

Այս ավանդութեանց մեծ մասը անշուշտ անվավեր է. այսպես օրինակ՝ (14) Խորենացու Սերմնօրհնէքը, (16), (35) և (38) Լուսավորչին ընծայված մասերը և վերջապես (42) Քահանայաթաղը, որ Փարպեցին է բերել, իսկ հետո Սահակն ավելացրել է 7 Ավետարանները, մինչդեռ գիտենք, որ Փարպեցու դարձած ժամանակը Սահակը վախճանած էր արդեն: Մյուսների մեջ էլ դեռ անվավեր բաներ շատ կան. բայց համենայն դեպս, եթե նշանակված հեղինակներինը չեն, Մեսրոպինը բնավ չեն կարող լինել: Հետին պիտի լինեն նաև (44) Կանոն ձեռնադրութեան կաթուղիկոսաց և (45) Կանոն օծման թագաւորաց, քանի որ Մեսրոպի օրով արդեն թագավորութունը շնչվելով, կարիք չպիտի զգացվեր թագաւորօրհնէք կազմելու կամ Սահակը տակավին կենդանի լինելով՝ Մեսրոպը չպիտի համարձակեր Կաթուղիկոսօրհնէք պատրաստելու, (40) «Կանոն ժայրագոյն իշխանութեան» նույնպես շատ հետին պետք է լինի, որովհետև ժայրագոյն իշխանութեան կոչումն արդեն հետին է. այս

կանոնը պետք է համարել իբրև շարունակութուն (39) Մասնաւոր իշխանութեան կանոնին, և հետևաբար ձեւով Քրիզոստոմոսի Տաթևացուց ավելի հետո: Նմանապես (7), (11), (12), (13), (19), (20), (23), (24) շատ հասարակ բաներ լինելով, ըստ ինքյան կրում են հետևութեան դրոշմը և չեն կարող Մեսրոպի գործը լինել: Անվայել է դրանք Մեսրոպին վերագրել: Մնացյալներից (3) պետք է կցել (4) Կոյսի պատկին, որովհետև անկարելի է ենթադրել պատկադրութուն առանց նշանադրութեան, (29) Եարականք Հանգստեան շունենալով բնավ ոսկեղենիկ չեզու, չեն կարող լինել ո՞չ Մեսրոպից և ո՞չ էլ դասական շրջանի որևէ հեղինակից, (30) «Անտարանք բժշկութեան» Ավետարանից հանված զուխներ են և չենրկայացնելով ո՞չ մի նորութուն, ըստ ինքյան իրավունք շունեն առանձին կանոն կազմելու: Վերջապես թվում է, թե (43) «Կանոն օրհնութեան Ս. Միսոնի» Մեսրոպի ձեռնհասութունից բարձր էր, ուստի պետք է որ ավելի հետո նստող հայրապետներից մեկի աշխատութունը լինի: Նույն պատճառաբանութեամբ կարող ենք մերժել նաև (41) Եպիսկոպոսական ձեռնադրութեան կանոնը:

Եթե բոլոր այս նշանակված կանոնները դուրս հանենք, կմնան միայն 5, 6, 7, 21, 22, 25, 26 և 28 կանոնները, որոնք կարող ենք հակառակ պարագային Մեսրոպինը ենթադրել:

Բայց կարելի՞ էր միթե այսչափ փոքր աշխատութեան համար ամբողջ Մաշտոցի կազմութունը Մեսրոպին ընծայել: Իհարկե ոչ: Այն անձը, որ Մաշտոցի հեղինակ կամ խմբագիր տիտղոսն է կրում, եթե նրա մեծագույն մասի հեղինակը չէ, պետք է որ գոնե հավաքած, դասավորած և վերջին ձևից անցկացրած լինի այն կանոնները, որոնք իրանից առաջ գոյութուն ունեին, իբրև աշխատութուն զանազան հեղինակների: Այսպիսի մի անձնավորութուն բավական ուշ ժամանակ ապրած պիտի լինի, այսինքն՝ այնպիսի մի ժամանակ, երբ Սահակ, Հովհան Մանղակունի, Ղազար Փարպեցի, Կորյուն, Խորենացի և այլն, որոնք Մաշտոցի զանազան կանոնների հեղինակ են համարվում, շատոնց արդեն վախճանած էին: Սրանից հետևում է, թե Մեսրոպը չի կարող Մաշտոցի խմբագիրը լինել, բայց Մաշտոց կաթողիկոսը, որ հիշատակված բոլոր հեղինակներից հետո է, ամենայն իրավամբ կարող է խմբագրի պայմանները լրացնել: Եթե նախկին և Տաթևացին էլ ավելի հետո են քան Մաշտոց կաթողիկոսը, իրենց դրածներն էլ հետին հավելվածներ են Մաշտոցի մեջ, որոնք մնացյալի ամբողջութունը բնավ չեն խանգարում:

Մեսրոպի հեղինակ լինելու դեմ իբրև վերջին ապացույց կարելի է հիշել մանավանդ Մաշտոցի լեզուն: Մաշտոցի բոլոր կանոն-

ներն էլ պարունակում են վեց տեսակ ընթերցվածքներ, այն է՝ 1. Սաղմոսներ, 2. Շարականներ, 3. Քարոզ, 4. Աղոթք, 5. Ավետարան, 6. Ընթերցվածք (առհասարակ մարգարեություններից և Առաքելական թղթերից)։ Այս վեց մասերը զանազան շարքով և փոխ առ փոխ հաջորդում են իրար։ Սրանցից երեքը (Սաղմոսներ, Ավետարաններ և Ընթերցվածք) բոլորը քաղված են ս. Գրքից, ուստի բուն Մաշտոցից մնում են աղոթքները, քարոզներն ու շարականները, որոնք բոլորն էլ, առանց բացատուության, ունեն հետդասական լեզու։ Նրանց համար, որ գիտեն խտրել ոսկեդարյան հայերենը հետոսկեդարյան հայերենից, այս հանգամանքը բավական է հաստատելու համար, թե Մաշտոցը չի կարող երբեք Մեսրոպի գործը լինել։

4

Ծիսարանից հետո գալիս է Շարականը, որից «Ապաշխարութեան» կոչված շարականները ավանդությամբ Մեսրոպին են ընծայվում։ Այս շարականները սկսվում են Մեծ Պահոց առաջին օրից և գնում են մինչև Կանոն վեցերորդ կիրակէին, առանց հաշվելու Ղազարու հարության և Ավագ շաբթու շարականները, որոնք մեծագույն մասամբ տրվում են Սահակին։ Մեսրոպին ընծայված այս մասը բռնում է 1861 թվականին էջմիածնում տպված Շարականի 117—224 էջերը, այն է՝ 107 երես, իսկ հետը հաշվելով նաև Սահակին ընծայված մասը, այն է՝ մինչև Զատիկ, ընդամենը 167 երես (էջ 117—279)։

Ամենահին վկայությունները, որ կարող ենք գտնել մեր մատենագրության մեջ ի հաստատություն հիշյալ ավանդության, են նախ բուն իսկ Շարականների հորինման «Օրհնութիւնաբեր» կոչված ցուցակները և երկրորդ՝ Կարապետ Սասնեցին։ Սրանցից առաջինները հետևյալ լակոնական տեղեկություններն են տալիս մեզ. «Զապաշխարութեան հարցներն և զտէրյերկնցերն Մեսրոպ վարդապետըն ասաց» (ձեռագիր էջմիածնի՝ Կարինյան № 1588, էջ 221բ, Շարական ԺԳ դարից)։— «Նախ մեծն Մեսրոպ զկարգն ապաշխարութեան և սուրբն Մահակ զԱւագ շաբթուն» (Կարինյան № 1468, Գր. Տաթևացոյ Մեկնութիւն եկեղ. աղօթից, էջ 37բ և Կարինյան № 851, Աստուածաշունչ, էջ 300ա)։— «Զապաշխարութեան կարգն և զՂազարուն և զԱւագ շաբթուն Մեսրոպ վարդապետն» (Կարինյան № 622, Ժողովածու, էջ 299բ)։— «Զապաշխարութեանն և զՂազարուն, զԱւագ շաբթուն Մեսրոպ վարդապետն է ոգեալ» (Գևորգյան № 704, Քարոզգիրք Յովհաննու Երզնկացոյ, էջ 31ա)։— Վիեննայի Մխի-

Քարյանց № 209 ձեռագիր Եարականում (գրված եւաշատուտ ձեռ-  
քով 1312 թվականին), էջ 23ր, ասվում է «Կանոնն Ապաշխարու-  
թեան, լուսանցքում՝ Մեսրոպ վարդապետի ասացեալս (տե՛ս Տաշ-  
յան, Տուցակ, էջ 523ր)։— Սրանց հակառակ Սարգիս երեց՝ գրիչ  
Եարականի՝ Ապաշխարության կարգից Մեսրոպին է ընծայում մի-  
այն Լարցերը և Տնր յերկնիցները. իսկ Ողորմէքը Քենիկ վարդա-  
պետին՝ ժՐ դարից (տե՛ս Սահակ վարդապետ Ամատունի, «Պարա-  
կանոն շարականներ», էջ 81)։ Այսպէս էլ Ավետիքյանը («Քացատ-  
րութիւն Եարականաց», Վենետիկ, 1814, էջ 156), ասում է, թե  
«Զկարգ շարականաց Ապաշխարութեան ըստ ութ ձայնից ասեն ար-  
արեալ Ս. Մեսրոպայ... օրինակ ինչ՝ Շնորհալույն ներսէսի ըն-  
ծայլ զերիս ձայնս»։

Կարապետ Սասնեցին, որ նույնպէս ժՐ—ժԳ դարի հեղինակ է,  
Ապաշխարության շարականների հորինման համար մի քիչ ավելի  
մանրամասն է՝ համեմատությամբ առաջինների նա պատմում է,  
թե այս շարականները գրեց Մեսրոպ՝ Ասորիքից վերադարձին, Բա-  
լուսի քարայրում ճգնած ժամանակ, Մեծ պահոց յոթը շարաթներում։  
«Կրէին նորոգէր զպահսն և զաղօթսն, ընթանալով զառ ի վեր ընդ  
ափունս նփրատայ, յայրէ յայր անցանելով մինչև ի զղեակն Պա-  
լուսնեաց և անդ զկայ առնոյր ի փորրագոյն այրի յաւուրս քառաս-  
նորդացն. և զկթն եւթնեակսն անսուաղ անցուցանէր զառ և զգի-  
շեր, երգելով զերգս երից մանկանցն, և շարարան եղանակ ասաշ-  
խարութեան՝ ըստ թուոյ աւուրց պահոցն, զոր ընկալեալ երգէ եկե-  
ղեցի սուրբ» (Սասնեցի, էջ 43)։

Տեսնում ենք, որ վերի տեղեկությունները իրար հետ համա-  
ձայն չեն. ոմանք Մեսրոպին են վերագրում Մեծ պահոց ամբողջ 7  
շարաթվա շարականները, ուրեմն նաև Ղազարու հարության և Ա-  
վագ շարաթվա շարականները. այսպէս է նաև Սասնեցին («զկթն  
եւթնեակսն»)։ Բայց ուրիշներ վերջինները տալիս են Սահակին, Մես-  
րոպին պահելով միայն 6 շարաթվա շարականները։ Ուրիշ հեղի-  
նակներ էլ նույնիսկ 6 շարաթվա շարականներից շատերը վերա-  
գրում են տարբեր հեղինակների։ Դժբախտաբար չունենք Եարակա-  
նի քննական պատմությունը, այն զանազան կարծիքները, նրանց  
հեղինակները և ունեցած արժանիքը ցույց տալու համար։ Էջմիած-  
նի միաբան հայտնի շարականագէտ Սահակ վարդապետ Ամատու-  
նին, որը ըստ կարելիւոյն հավաքել էր շարականների մասին գտնը-  
ված բոլոր ավանդական տեղեկությունները, տվել էր ինձ հետևյալ  
ցուցակը, ուր տեսնվում է, թե ամբողջ Մեծ պահոց ընթացքում երգ-  
ված շարականներից ո՛րը ո՛ր հեղինակին է ընծայված.

\*1. Շարականք առաջին շաբաթու— Որ հայիս քաղցրութեամբ.  
— Մեսրոպ.

2. Շարական Ս. Թէոդորոսի— Որ ընտրեցեր ի սկզբանէ.— ?

3. Կանոն Բ կիրակէին Աղուհացից— Որ զօրէնս սրբութեան  
պահոց.— Շնորհալի.

\*4. Կանոն Բ կիրակէին Աղուհացից— Զանուն քո Քրիստոս,  
օրհնեմք.— Մեսրոպ.

5. Շարական Ս. Կիրղի Երուսաղէմացոյ— Մանկունք նոր Սիո-  
նի.— ?

6. Կանոն Գ կիրակէին— Օրհնեմք զքեզ, անսկիզբն Հայր.—  
Շնորհալի.

\*7. Կանոն Գ կիրակէին— Օրհնեալ, Տէ՛ր Աստուած հարցն մե-  
րոց.— Մեսրոպ.

\*8. Կանոն Գ կիրակէին— Հարցն մերոց օրհնեալ ես, Տէ՛ր.—  
Մեսրոպ.

9. Կանոն Դ կիրակէին— Որ արարեր զօրութեամբ.— Շնոր-  
հալի.

\*10. Կանոն Դ կիրակէին— Փառաւորեալ անուն քո յաւի-  
տեան.— Մեսրոպ.

\*11. Կանոն Դ կիրակէին— Սուրբ Աստուած, Հայր անսկիզբն.—  
Մեսրոպ.

12. Կանոն սրբոց քառասնից մանկանց— Այսօր ընդ անմարմ-  
նոցն.— Անանիա Շիրակացի և Ներսես Շնորհալի փոխ առ փոխ.

13. Կանոն Ե կիրակէին— Որ պատուիրան շրջարտութեան.—  
Շնորհալի.

\*14. Կանոն Ե կիրակէին— Հարցն մերոց Աստուած, որ ապ-  
րեցուցեր.— Մեսրոպ.

15. Կանոն Ս. Գրիգոր Լուսաւորչի— Այսօր զուարճացեալ ցըն-  
ծայ.— Յովհ. Երզնկացի.

16. Կանոն Ս. Գրիգոր Լուսաւորչի— Լերինք ամենայն, այսօր  
ցնծացէր.— Յովհ. Երզնկացի.

17. Կանոն Ս. Գրիգոր Լուսաւորչի— Որ ի Հօրէ առաքեալ արե-  
զակն.— ?

18. Կանոն Զ կիրակէին— Որ զխորհուրդ քո զայստեանդ.—  
Շնորհալի.

\*19. Կանոն Զ կիրակէին— Աստուած հարցն մերոց, ողորմեա.  
— Մեսրոպ.

\*20. Կանոն Զ կիրակէին— Օրհնեալ Տէ՛ր Աստուած հարցն մե-  
րոց.— Մեսրոպ.

21. Կանոն յարութեան Ղազարու— Այսօր գոյով ի Քնթանիա.—  
Ս. Սահակ.
22. Կանոն Սաղկազարդի կիրակէին— Որ վերօրհնիս յաթո-  
ւորս.— Ս. Սահակ և Ն. Շնորհալի.
23. Կանոն Սաղկազարդի կիրակէին— Քազաւոր գոյով քո  
յաշխարհ.— Ս. Սահակ.
24. Կանոն Աւագ երկուշաբաթին— Անեղն ի Ըօրէ ծննալ որ-  
դի.— Ս. Սահակ և Ն. Շնորհալի.
25. Կանոն Աւագ երեքշաբաթին— Իմաստուն կուսանքն պատ-  
րաստեալ.— Ս. Սահակ.
26. Կանոն Աւագ չորեքշաբաթին— Որ յաթոս փառաց քազ-  
մեալ.— Ս. Սահակ.
27. Կանոն Աւագ հինգշաբաթին— Վերածգողն երկնից մշտըն-  
ջենաւոր.— Ս. Սահակ.
28. Կանոն Աւագ ուրբաթուն— Այսօր ի կատարումն աստուա-  
ծային.— Շնորհալի.
29. Կանոն Աւագ ուրբաթուն— Արծաթսիրութեամբն մոլեալ.—  
Ս. Սահակ.
30. Կանոն Աւագ ուրբաթուն— Այսօր անճառ.— Շնորհալի.
31. Կանոն Աւագ ուրբաթուն— Նորոգող տիեզերաց.— Շնոր-  
հալի.
32. Կանոն Աւագ շաբաթուն— Պարգևատուն ամենեցուն.— Ս.  
Սահակ և Ն. Շնորհալի.
33. Կանոն Աւագ շաբաթուն— Յարեալ Քրիստոս ի մեռելոց.—  
Անանիա Եիրակացի:
- Որեմն ըստ այս ցուցակի, ավանդութիւնը Մեսրոպին է վե-  
րագրում ինք շարական, այն է 1, 4, 7, 8, 10, 11, 14, 19 և 20 թվե-  
րը (ամեն մի շաբաթվա համար մի կամ երկու): Եթե քննենք այս  
շարականները լեզվական տեսակետով, հետզասական շրջանի լեզ-  
վի նշաններ շատ կգտնենք: Ահա մի հասարակ ցանկ այդպիսի բա-  
ռերի.

անիմանալի 119.

աստուածաբանելով 124, 187.

անբաժանելի 125, 145, 147,  
219.

ամենաբաւական 146.

անքննելի 148.

անտանելի 155.

անյաղթելի 167.

ամենակարող 172.

անհասանելի 193, 229.

անեղ 194, 220.

անկիզանող 194.

անսասանելի 196.

աններելի 213.

ամենամեղ 223.

գոյով 147, 170, 189.

ամենասուրբ 167, 219.

անբաւելի 167.

գոհարանել 132, 135.

երեքսրբենի 191.

երկնային 158.

երրեակ 190.

էակ 155.

էակից 170, 175, 215.

զ'ի վերայ բրորէիցն 215.

կենցաղ 132, 171.

համագոյից 119.

հրաշացուցանել 119.

հրափորձութեամբ 124.

համաձայնեալ 125, 155.

համարնակից 215.

հրեշտակային 187.

հրաշալի 154, 169, 193.

պարագրել 155.

սպասաւորել 192.

վերածագող 191.

վերառաքել 178.

վերերգել 157.

վերագոչել 155.

փառարանիլ 118.

փառարանել 122, 124, 165,

191, 218, 219.

փառարանություն 191.

փառակից 170, 171, 175, 218.

փառատրութիւն 148.

փոխարկել 154, 155.

օրհնարան 121, 135, 154, 155,

190, 193:

Շատ բանուկ է հատկապէս բարեկիր բառը, որ գրեթէ ամեն երեսում պատահում է և այն էլ մեկ-երկու անգամ:

Թե այդ բաղմաթիվ շարականները, որոնք համախմբված են Մեծ պահքի օրերի թվով կանոնների մեջ, իսկապես մեր առաջին թարգմանիչն է հորինել, դրա մասին հավաստի ոչինչ չգիտենք. «Շարականների հեղինակների գրական գործերին քաջածանոթ գրիչները Ապաշխարութեան շարականները միաձայն ընծայում են Մեսրոպ թարգմանիչին... Իսկ չգիտեմ ի՞նչ պատմական աղբյուրների կամ ցուցումների վրա հիմնվելով, մեր Ժէ շարականի գրիչ Սարգիս երեցը Ապաշխարութեան կարգից թարգմանիչն է ընծայում միայն «Հարց»-երը և «Տէր երկնից»-ները, իսկ «Ողորմէք»-ը՝ Բենիկ վարդապետին, որ ապրեց ՓԲ դարում. «ՉԱպաշխարութեան հարցներն և զՏէր յերկնիցներն Մեսրապ վարդապետն ասաց. զՈղորմէք ապաշխ[արութեան] Բենիկ վարդապետն ասաց». թղ. 223բ (Սահակ վարդապետ Ամատունի, «Ճին և նոր պարականոն շարականներ», էջ 91):

Վերևում գրածից պարզ երևում է, որ հետագա դարերի ավանդությունները Ապաշխարութեան կարգի շարականների հեղինակի մասին տատանվում են: Նույնիսկ եթե այդ կարգի շարականները միաձայն Մեսրոպին վերագրված լինեին, մենք չէինք կարող ընդունել ավանդութեան պատմական ճշմարտությունը, որովհետև Ծ դարի առաջին երեսնամյակում կարելի չէ դնել հետագա դարերի

այն սովորութիւնը, որով ամբողջ կանոններ էին գրում, կանոնի բոլոր սարքով: Կանոնն առաջ է եկել է դարի վերջերում. ուստի մի թյուրիմացութիւն է միայն ասել, թէ «շարականները գրելու կանոններին ծանօթ մի անձն՝ որպիսին Մեսրոպըն էր, չէր կարող գրել Հարցերը, Տէր յեղեկիցները և թողնել Ողորմէկը». այսինքն կանոնի մի մասը գրողը անպատճառ և մյուսը պիտի գրեր: Մեսրոպի ժամանակ հենց այդ պահանջը չկար, ինչպես չկար նաև այն պահանջը, որ Ապաշխարութիւն կանոնները լինեին Մեծ պահարի օրհրի թվով: Ուստի եթէ Մեսրոպը հեղինակ է Ապաշխարութիւն շարականների, նա առանձին երգեր միայն հորինած պիտի լինի և ոչ թէ մի ամբողջական կանոն, և ավելի պակաս՝ մեծ թվով կանոններ: Կնշանակի մի պատմական հիմք ունեն այն գրիչները, որոնք Ապաշխարութիւն բոլոր կարող միայն Մեսրոպին շին վերագրում:

Ապաշխարութիւն շարականներից դուրս կա նաև Քառասուն մանկանց շարականը, որ գրիչներից մեկը (անունը անհայտ) ընծայում է Մեսրոպին, ասելով. «Կանոնն Սրբոց Քառասնից. ասացնալ Մեսրոպայ Տարօնեցոյն. Այսօր ընդ անմարմնոցն դասս պարենա: Այս տեղեկութիւնը տալիս է մեզ շարականագետ Սահակ վարդապետ Ամատունին, իր «Էին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ» աշխատութիւն մեջ (Վաղարշապատ, 1911, էջ 56): Բայց միևնույն ժամանակ հեղինակը, գտնելով, որ այդ շարականների մեջ կան Ծ դարին ոչ հատուկ անսովոր բարդ բառեր (ինչպես՝ յուսապսակ, քրիստոսակիր, օտոնապատ, եղկացուցանել, վերանարդել, նախագուշակ, համահավաքել, դիմամարդել, բոցաճաճանչ, վերակարդալ, վերերգել, ճառագայթարձակ, հոտապետ և այլն), հրաժարվում է Մեսրոպին հեղինակ ճանաչելուց, և նույն շարականը համարում է Անանիա Եիրակացու կամ Ստեփանոս Սեբաստացու գործը: Իսկ Ավետիքյանը («Բացատրութիւն շարականաց», էջ 181), ըստ Կիրակոսի համարում է Ենորհալու գործը, բայց կասկածում է և զգում Միսիանոսի ազդեցութիւնը:

Մեսրոպին վերագրված շարականների հարցը փակելու համար, մեջ ենք բերում այստեղ Մ. Արեղյանի («Արարատ», 1912, էջ 722, 724) պատմական ուսումնասիրութիւնից մի քանի հատվածներ. «Է և Ծ դարերում դեռ չկային շարականներ. կային միայն փոքրիկ հոգևոր երգեր: Ութերորդ դարում հունաց մեջ կազմվեց կանոնը, այսինքն յուրաքանչյուր տոնի համար հնարվեց ինք երգերի մի շնոր՝ հավաքելով կամ հններից և կամ նորերն ստեղծելով: Այս 9 երգերի շարքը կոչվեց շարական: Այսպես ուրեմն, շարականը ինքնին չի կարող ութերորդ դարից առաջ գոյութիւն ունենալ: Օրինակ՝ Սահակ Պարթևին են վերագրում Ավագ շարաթի կանոնները, իսկ Մես-



րոպին՝ Ապաշխարութեան կարգը: Բայց այդ կանոններից ոչ մեկը չի կարող ամբողջապես մի մարդու ասածը լինել: Նրանց երգերի մեջ մեծ տարբերություն կա թե՛ ձևի և թե՛ բանաստեղծական ըմբռնման տեսակետից: Բայց որ գլխավորն է՝ հունաց մեջ անգամ կանոնները պատկանում են եկեղեցական բանաստեղծության զարգացման ավելի ուշ շրջանի: Նշանակում է, թե այդ կանոնների բաղմաթիվ շարականները հետզհետե են հորինված և հետագայում, երբ կազմվել են կանոնները, վերագրվել են մի անձի՝ ս. Սահակին կամ ս. Մեսրոպին: Ե դարում, երբ եկեղեցու պաշտամունքի լեզուն հայանում էր և ս. Գրքի սաղմոսներն ու օրհնութիւնները հայերեն էին թարգմանվում, անհավանական չէ, որ մի քանի հոգևոր երգեր էլ թարգմանվեին և կամ նրանց նմանողութեամբ նորերը շինվեին: Բայց թե այդ երգերը կա՞ն և մանավանդ թե որո՞նք են, դեռ կարելի չէ իմանալ... Մեր հոգևոր երգի սկիզբը հինգերորդ դարում դնելով հանդերձ՝ անհավանական է կարծել, թե այդ դարում մեծ օրհներգութիւններ գրված լինեն, հունաց մեջ անգամ այդպիսի երգերը ծաղկում են առանձնապես վեցերորդ և յոթերորդ դարերում» (էջ 724):

Մենք որոնեցինք, թե ո՞ր էջերում ավելի հազվադեպ են հետաքսական ձևերը, և հետևաբար ո՞ր կարելի է ենթադրել նախավոր հարազատագույն լեզու: Այսպես, գտանք, օրինակ՝ էջ 132—139, 144—153, 156—158, 164—166, 216—217, 221—222: Համեմատաբար լավ լեզվի աճա երկու հատված.

Ալիք յանցանաց զիս ալեկոծեն,  
 Եւ մեղք իմ բազում զիս յանդիմանեն.  
 Արդ զի՞նչ արարից մեղուցեալ անձամբս,  
 Որ չեմ ապրելոց յանագին հրոյն:  
 Մեղայ քեզ, Քրիստոս, Որդի Աստուծոյ,  
 Շնորհեա զթողութիւն բազում յանցանաց իմաց» (էջ 213):

Մեղուցեալ անձամբ կարդամ առ քեզ, Հա՛յր երկնաւոր,  
 Սգնեա՛ ինձ ի նեղութեանս, որ մեղօփս եմ մեռեալ, օգնեա՛ ինձ:  
 Վիրաւորեցայ նս յաներևոյք թշնամւոյն, քծիշկ հիւանդաց,  
 Բժշկեա՛ զիմ զնիւանդութիւնս, որ մեղօփս եմ մեռեալ:

Մոլորեցայ նս արեւն գոշաւար կորուսեալ, խնդրոզ գերելոց,  
 Խնդրեա՛ զիս գմոլորեալս, որ մեղօփս եմ մեռեալ (էջ 220):

Իրաց արդի վիճակում շարականները չեն կարող Մեսրոպինը համարվել:

Հինգերորդ աշխատութիւնը, որ Մեսրոպին է ընծայվում, է ս. Ներսեսի պատմութիւնը, որի ամբողջական խորագիրն է «Ճազազ զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի և Պատմութիւն սրբոյն Ներսեսի Հայոց հայրապետի»: Այս աշխատութիւնը հրատարակված է վերջին անգամ Վենետիկ, 1883, «Սոփերթ»-ի 2 հատորով, ուր բռնում է 9—124 փոքրագիր երեսները: Գրքի վերջում կա ընդարձակ հիշատակարան, ուր որոշակի հայտնված են գրքի հորինման պարագաները: Հրատարակիչները այս հիշատակարանը հանելով բուն գրքի մարմնից, դրել են էջ 138—139 ծանոթութիւն մեջ, և այն էլ հապավմամբ: Ահա վասիկ այդ հիշատակարանը, ինչպես տպված կա այնտեղ. «Ե ՆԺԶ (=967) թուականիս Հայոց և ի վերադիտողութեանն Տեառն Վահանայ Հայոց կաթողիկոսի, և յամս Աշոտոյ Բագրատունոյ Հայոց թագաւորի ի տանէն Շիրակայ, ծա Մեսրոպայ Լուսատ քահանայ ի Վայոց ձորոյ ի գեղջէ Հողոցմանց, ուստի Յովսէփ էր երանելի նահատակն յաւուրս Սրբոյն Վարդանայ... մեծ ցանկութեամբ ծաղկաբաղ արարի զգիրքս զայս ի Հայոց մնացորդաց յԵրևելից գրոց. զյաղթութիւն և զվատթարութիւն թագաւորացն Հայոց և Վրաց, և զառաքինութիւն և զսրահելիս հայրապետաց տոհմից սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և զտեսիլ և զկրտակ սրբոյն Ներսիսի, և զքաջութիւն և զյաղթութիւն արիական ազգին Մամիկոնէից: ... Եւ արդ զայս հանեալ յԵրևելից գրոց ի Հայոց մնացորդացն պատմութեանց, և ետու որդիացելոյ իմոյ սուրբ աւագանին ծննդեամբն, Վահանայ Մամիկոնենոյ, ի գիւղն որ կոչի Վարժի»:

Ավելի պարզ ու բացահայտ բան քան այս հիշատակարանը՝ շգիտեմ թե ի՞նչ կարող է լինել. հեղինակը ասում է, թե ինքը Մեսրոպ երեցն է Հողոցմանց գլուղից, որ ժ դարում ծաղկաբաղ է արել Աբրահամ խոստովանողի Մնացորդաց պատմութիւնը: Այս բացարձակ հայտարարութիւն դեմ, հրատարակիչները (էջ 137) ծանոթութիւն մեջ ասում են, թե ս. Ներսեսի վարքի նախկին հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է, կամ նրա աշակերտներից մեկը և թե Մեսրոպ գրել էր ս. Ներսեսի վերջին աղոթքն ու գուշակութիւնները. «Կամ սա (Ս. Մեսրոպ) ինքնին գրեաց նախ զվարս մեծի քահանայապետին, և կամ պատմեաց մանրամասն, և մի ոմն յաշակերտաց նորա ելեղ ի գիր, բայց հաւանագոյն է թէ ինքնին գլխոին բանս սրբոյն նշանակեալ էր գրով, զաղթման ասեմ և զգուշակութիւնսն, որք ապա փոխեցան ի գիր»: Նույն գաղափարը հայտնած էր տարիներ առաջ նաև Հ. Մ. Ավգերյանը («Լիակատար վարք սրբոց», Ե, 1813,

էջ 282): Բայց այսպիսի մի ենթադրութիւն անելու համար վենետիկցիք շունեն ուրիշ ապացույց, եթե ոչ Մեսրոպի անվան հիշատակութիւնը ս. Ներսեսի պատմութեան մեջ (էջ 83 և 110): Զարբհանալայնը, որ առհասարակ շատ դժուարհամար հեղինակ է, իր «Հայոց դպրութեան պատմութեան» մեջ մասամբ ընդունում է այս ենթադրութիւնը, առանց որևիցե քննութեան ենթարկելու: Բայց Մեսրոպի անվան հիշատակութիւնը, եթե որևէ զոքութիւն ունենար, ճիշտ հակառակը պիտի ապացուցաներ: Մենք վերը (զուրիս առաջին) տեսանք, թե Մեսրոպի քարտուղարութիւնը Ներսեսի մոտ՝ կեղծիք է, միայն հետնաբար ձեռքացած, ուստի կեղծիք է նաև Ներսեսի մահվան ժամանակ ներկա լինելով՝ վերջին աղոթքները գրի առնելը: Բուզանդը, որ առհասարակ ամեն բան մանրամասն պատմում է, ս. Ներսեսի վերջին թոպեներին ներկա է դնում (Ն, իր) Փալատոս եպիսկոպոսին, Տրդատ գլխավոր պաշտոնեից, Մուշեղ սպարապետին, Հայր մարդպետին, եկեղեցականներ ու նախարարներ, առանց հիշելու Մեսրոպի անունը, որ անկարելի է թե չհիշեր, եթե իրոք ներկա լիներ: Չմոռանանք նաև այն պարագան, որ եթե Մեսրոպ որևէ մասնակցութիւն ունեցած լիներ հիշյալ աշխատութեան մեջ, անպատճառ պիտի հիշվեր Մեսրոպ երեցի հիշատակաբանում: Վերջապես այսպիսի մի երևելի բան Կորյունը կամ Մեսրոպի կենսագիրներից մեկը անշուշտ գոնե ակնարկութեամբ հիշելու էր:

Թե ս. Ներսեսի պատմութիւնը չի կարող Մեսրոպի աշխատութիւնը լինել՝ կա այս մասին մի ուրիշ զվարճալի ապացույց էլ:

Ինչպես Թորոսյանը («Բազմավեպ», 1932, էջ 263) ցույց է տվել (թեև բոլորովին ուրիշ նպատակով), ս. Ներսեսի պատմութեան մեջ, ինչպես որ կան զանազան հատվածներ Բուզանդից փոխ առած, կա նույնպես մի հատված, որ փոխ է առնված Կորյունի գրքից: Այս հատվածը հետևյալն է.

Կորյուն, էջ 14—15

Պատմութիւն Ներսեսի, էջ 83

Ամենայն կրթութեամբ հոգեւորացն զանձն տուեալ... Եւ բազում անգամ զհրեշտակական հանգիստ գիշերոյն և զհարկ քնոյ՝ յոտնաւոր տքնութեան՝ ի թօթափել ական վճարէր. և զայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս:

Ամենայն կրթութեամբ հոգեւոր իրաց զանձն տուեալ, բազում և անհեշտական իրաց և անհանգիստ գիշերային, զհարկ քնոյ յոտնաւոր տքնութեամբ ի թօթափել ական վճարէր, ոչ սակաւ ժամանակս, այլ յոլովս:

Կորյունն իր գիրքը գրել է ամենաշուտը 443 թվականին. Մես-  
րոպը մեռել է 439 թվականի սկիզբը. ինչպե՞ս կուզեք, որ Մես-  
րոպն իր մահվանից ճինգ տարի հետո գրված մի գրքից բանագո-  
ղություններ աներ:

6

Վեցերորդ աշխատությունը, որ Մեսրոպին է ընծայվում, այլև-  
այլ թղթերի մի հավաքածու է. այս մասին ըստ բավականին տե-  
ղեկություն են տալիս մեզ Կորյունը (էջ 21) և Փոքր Կորյունը (էջ  
19): Ահավասիկ հիշյալ հատվածները. «Ապա յետ դարձեալ՝ այն-  
պիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երա-  
նելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, գիրապատումս, շնորհա-  
գիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ և հիւթոյ զրոց մարգարէա-  
կանաց կարգել և յօրինել, լի ամենայն ճաշակօք աւետարանական  
հաւատոյն ճշմարտութեան: Յորս բազում նմանութիւնս և օրինակս  
ի յանցաւորացս աստի, առաւելագոյն վասն յարութենական յուսոյն  
առ ի հանդերձեալսն՝ յերիւրեալ կազմեալ, զի հնշարեկալք և դիւ-  
րահասոյցք խիմարագունիցն, և մարմնական իրօք զբաղելոցն լի-  
նիցին, առ ի սթափել և զարթուցանել և հաստահիմն առ ի խոս-  
տացեալ աւետիսն քաջալերել» (Կորյուն, էջ 21): Գրեթե նույն բա-  
ռերով է նաև Փոքր Կորյունը, որ ավելորդ ենք համարում մեջ բե-  
րել. հիշենք միայն այն փոքրիկ հավելվածը, որ Մեսրոպի այս եր-  
կասիրության համար նշանակություն ունի. այն է. «... ի զօրութենէ  
և ի հիւթոյ զրոց մարգարէականաց և առաքելականաց կարգեալ և  
յօրինեալ...» (էջ 19):

Այս խոսքերից բավական պարզ երևում է Մեսրոպի երկասի-  
րության բնույթը: Այդ աշխատությունը խրատական ճառերի մի հա-  
վաքածու էր, որոնց նյութը առնված էր մարգարեություններից և  
առաքելական թղթերից: Մեսրոպը սրանց մեջ նպատակ ուներ հատ-  
կապես խոսելու ժողովրդի տղետ խալի հետ, ուստի և գործ է ածել  
այնպիսի պարզ և դյուրըմբռնելի լեզու, որ ամենցին հասկանալի  
լինի: Անշուշտ շատ փափագելի էր մեզ իմանալ, թե արդյոք հա-  
սե՞լ է մեզ Մեսրոպի հիշյալ աշխատությունը և եթե այո, դասա-  
կան շրջանի բազմաթիվ ճանական գրվածքներից ո՞րն է այն Կոր-  
յունի խոսքերից այնպես է երևում, թե Մեսրոպի հիշյալ աշխատու-  
թյունը ինքնագիր գրություն էր և ո՞չ թե թարգմանություն: Միակ  
քիչ թե շատ ինքնագիր ճառական գրվածքը, որ դասական շրջանից  
հասել է մեզ, ճառընտիրների մի մասն է, որ լեզվական տեսակե-  
տով էլ պատկանում է Ա դպրոցին: Ուստի եթե ենթադրենք, թե

Մեսրոպի գրվածքը կորած չէ, այդտեղ պետք է որոնել: Բայց կարելի է նաև մտածել, թե Մեսրոպի գրվածքը թարգմանական էր, որովհետև մեր հեղինակների մեջ քարգմանել և հորինել բառերի նշանակութունը հավատարիմ կերպով պահված չէ միշտ: Այս պարագային երկբայութունը շատ կզորանա, որովհետև դասական շրջանից հասած թարգմանական ճառական գրվածքները շատ բազմաթիվ են: այսպես Ա դասից կան Ոսկեբերանի և Զգոնի ճառերը, իսկ Գ դասից Բարսեղի «Վեցօրէ»-ից, Եվագրի և Կյուրղի «Կոչումն ընծայութեան» ճառերը:

7

2. Բարսեղ վարդապետ Սարգիսյանն իր «Ազաթանգեղոս և յուր բազմադարչյան գաղտնիքը» աշխատության մեջ (Վենետիկ, 1890, էջ 359—408), մանրամասն խոսելով Մեսրոպի այս վերջին աշխատության վրա, ուզում է ցույց տալ, թե սույն «խրատական ճառերու հավաքածոն» ուրիշ բան չէ, եթե ոչ Ազաթանգեղոսի երկրորդ գիրքը, որ կրում է «Վարդապետութիւն Ս. Գրիգորի առն Աստուծոյ» վերնագիրը (տպ. Թիֆլիս): Այս աշխատութիւնը բոլոր հին քննիչների և մատենագիրների կողմից համարված էր իբրև հարազատ գործ ս. Գրիգոր Լուսավորչի, որ Դ դարում նախ բանիվ բերանոքարողել և հետո հունարեն տառերով ու հայերեն լեզվով գրելով ավանդել էր հայ ժողովրդին:

Ավելի նոր քննիչները, որոնք հունարեն տառերով հայալեզու գրականության գոյութիւնը բացարձակ կերպով մերժեցին, մերժեցին ընդունել նաև, թե հիշյալ վարդապետութիւնը կարող է լինել Գրիգորի: Պետք էր, որ այս աշխատութիւնն էլ, Դ դարի գործ կարծված բոլոր հեղինակութեանց հետ, արդյունք լիներ Ե դարի առաջին թարգմանիչների կամ ավելի հետո ծաղկող հեղինակների (ինչպես Բուղանդ, Զենոբ, Հաճախապատում և այլն):

2. Բ. Սարգիսյանը (էջ 365—395), մանրակրկիտ փաստաբանութեամբ մի ավելորդ անգամ էլ ապացուցում է, թե ս. Գրիգոր Լուսավորչի հիշյալ Վարդապետութիւնը հարազատ չէ և չի կարող Դ դարում գրված լինել: Իր ապացույցները գլխավորաբար երկու կետի վրա են հիմնվում. ա) հիշյալ Վարդապետության մեջ կան ինչ-ինչ դավանաբանական տեսութիւններ, որոնք Լուսավորչի ժամանակ ընդունված չէին դեռ Եղեղեցու մեջ. բ) Վարդապետութիւնը պարունակում է բազմաթիվ փոխառութիւններ ս. Բարսեղի, ս. Եփրեմի, Ոսկեբերանի, ս. Գրիգոր Նազիանզացու և ուրիշ եկեղեցական հայրերի գրվածքներից, մինչև իսկ Եղիկից. ուստի և պետք է, որ լինի Ե դարի աշխատութիւն:

Այս բանը ապացուցանելուց հետո, Սարգիսյանն անցնում է քննել, թե ո՞վ կարող է հեղինակ լինել այս Վարդապետության, իր քննությունները երևան են հանում Մեսրոպին. և ահա իր մեջ բերած փաստերից նրանք, որ կարող են լավագույնները համարվել:

ա. Մեսրոպը գրերի գյուտից թե՛ առաջ և թե՛ հետո, Հայաստանի մի քանի խուժադուժ զավառներում երկար տքնություններ քարոզեց քրիստոնեությունը. այնտեղ որ մոռացված էր այս կրոնը, պետք եղավ կրկնել լուսավորչի առաքելական պաշտոնը. սրա համար էլ արժանացավ «Երկրորդ լուսավորիչ» տիտղոսին. և ինչ որ քարոզվում է Վարդապետության մեջ, շատ պատշաճ կերպով կարելի է տալ Մեսրոպին:

բ. Վարդապետության մեջ զրված վկայությունները ս. Գրքից համաձայն չեն արգի Յոթանասնից թարգմանության. ուստի կարող են քաղված լինել առաջին ասորական թարգմանությունից. այս պարագան համաձայն է գալիս այն կետին, թե Մեսրոպն իր քարոզություններն արեց ս. Գրքի երկրորդ թարգմանությունից առաջ:

գ. Կորյունը, հիշելով թե Մեսրոպը գրեց «Ճառս յաճախագոյնս», սրանցից մասնավորապես շեշտում է մեռելոց հարության ճառը. Վարդապետության մեջ էլ մեռելոց հարության ճառը մասնավոր տեղ է զբաղում իր ընդարձակությամբ, բազմապիսի բանաստեղծական փոփոխություններով և այլն:

դ. Շահապիվանի ժողովի կանոնների նախերգանքում Մեսրոպի համար ասվում է «Տոգելից և հոգեծիր ճշմարտաւէր վարդապետին Մեսրոպայ, որ լուսաւորեաց զերկիրն Հայոց վարդապետութեամբ իւրով» (հրտ. Ղլտճյան, էջ 57): Կորյունն էլ իր աշխատության սկիզբը ասում է. «և վասն նորին լուսաւոր վարդապետութեան». շղատառ տպված բառերը կարող են նույն Վարդապետությունը ակնարկել:

ե. Պրոկղ և Ակակ հայրապետներին զրված պատասխանը, որ Մեսրոպի աշխատությունն է, Վարդապետության ինչ-ինչ մասերի համառոտությունը լինելով, բանավոր է ենթադրել, թե Մեսրոպ իր աշխատությունը ինքն իսկ համառոտել է:

զ. Եզնիկ երեցը, որ ըստ Հ. Սարգիսյանի Եզնիկ Կողբացին է, իր համառոտ գրության մեջ Մեսրոպի համար խոսելով, ասում է. «Եւ կարգք զործոցն Գրիգորի նորոգեալ արամբ միով կրանելուա Տարօնացույ, որում անուն Մեսրովք ճանաչէր»: Գրիգորի նորոգեալ գործը կարող է Մեսրոպի վարդապետությունը լինել:

Այս պատճառաբանությունները դժբախտաբար բոլորովին անգոր են ապացուցանելու համար հեղինակի առաջադրությունը. հակառակ իրեն կա այնպիսի հզոր մի փաստ, որի առաջ բուր վերի

առարկությունները ոչինչ են. և այս փաստը Վարդապետության լեզուն է: Առակաց գիրքը, որից մի փոքր հատված բերինք մենք, իբր նմուշ, բավական է ցույց տալու, թե Մեսրոպի լեզուն պատկանում է Ն դարի առաջին դպրոցին. մինչդեռ Վարդապետության լեզուն, իբր ճոխ, պերճ ու շռայլ լեզու, պատկանելով շորրորդ դպրոցին, չի կարող գրվածքը Մեսրոպինը համարվել (Նորայր, «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք»):

Հաջորդ հատվածը, որ քաղում ենք Վարդապետության սկզբից, ընթերցողը կարող է համեմատել Առակաց գրքի հետ, իսկույն տեսնելու համար երկուսի միջև եղած հսկայական զանազանությունը:

«Տէր Աստուած, որ նա միայն ինքնութեամբ, և յառաջ քան զնա չիք ոք այլ, արարիչ ամենայնի որ երևի և որ ոչն երևի, բայց Որդին Միածին որ ի Հօրէ ծնեալ, և Հոգի նորուն որ ի նորին յէութենէ. որով եղև աշխարհս ի սկզբանց անդ, արարեալ միասնական Երրորդութեանն միով զօրութեամբ կամացն ամենագօրաց, միախորհ, միակամ, միաբուն ինքնութեամբ. և ամենայն ի նմանէ եղեալ՝ երկինք և երկիր: Արարեալ զերկինս խորանարդ հաստալարկ, և զերկիր թանձրատակ աղխեալ սեղմեալ. և զերկինս կախեալ զոչընչէ, և յերկիրս ի վերայ ոչնչի կացուցեալ, և ի նմին զանդունդս համատարածս խաւարագգածս աներևոյթս անկազմս անարարս և անյարդարս, անպատրաստս ստուերամածս: ... Անացեալ ի Հօրէ առ խորհրդակատարսն համագործս՝ լինել լոյս, և անդէն եղեալ լոյսն համասփիւռ խաւարակուլ օրաբեր: Եվ յետ այսորիկ հաստաութիւն ջրամած սառնեղէն ծովահերձ ջրաբաժին. որով երեւեալ ցամաքն ամենածին ծաղկաբուխ տնկաբեր: Եւ յետ այսորիկ ասացեալ միասնական Երրորդութեան՝ լինել լուսաւորացդ առ ի ջրեղէն խորանանման հաստաւորութեան երկնին ճառագայթածիզք, աշխարհագունդք, նշանացոյցք և զեռնոց և ջրածին կայտառաց» (Ազաթ., տպ. Թիֆլիս, 1883, էջ 153—154):

Ձարմանալի է, որ Սարգիսյանի ենթադրությունը առանց այլևայլի ընդունում է նաև Ակինյանը («Հանդես ամսօրյա», 1935, էջ 544):

Մառը («Մկրտություն Հայոց, Վրաց, Աբխազաց և Ալանաց», Վաղարշապատ, 1911, էջ 97) կարծում է, թե ամբողջ Ազաթանգեղոսը Մեսրոպի գործն է: Մի այսպիսի միտք հայտնել է նաև Ադոնցը («Հանդես ամսօրյա», 1928, էջ 91): Մառը ենթադրում է մի քանի տեսակ Ազաթանգեղոս. ա) Ուղղափառ հունասեր խմբագրություն (Պ դար). բ) Քաղկեդոնական խմբագրություն (Է—Ը դար), որից թարգմանված է հունարենը և սրանից էլ արաբերենը. գ) Ազգային հայկական խմբագրություն (Ը դար), որից թարգմանված է

արդի հունարեն օրինակը: Առաջինը Մառը վերագրում է Մեսրոպին, հիմնվելով Եզնիկ երեցի ծանոթ վկայության վրա՝ «Կարգք գործոց Գրիգորի նորոգեալ արամբ միով երանելիա Տարօնացոյ որում անուն Մեսրովպ ճանաչէր»: Բայց Եզնիկ երեցը «կարգք» ասելով ո՛չ թե Գրիգորի գրվածքն է հասկանում, այլ քարոզչական գործունեությունը, որ իրոք էլ նորոգեց Մեսրոպը, արժանանալով «Երկրորդ Լուսավորիչ» անվան: Համենայն դեպս կարելի չէ Ազաթանգեղոսը տանել է և Ը դար, որովհետև լեզուն Ծ դարի է, և այն էլ շորորոգ դասից:

8

Մինչդեռ Հ. Բ. Սարգիսյանը ս. Գրիգորի վարդապետությունն է համարում Մեսրոպի ճառերի հավաքածուն, հայապետ Ֆեթթեբը («Հայագիտական աշխատություններ», էջ 69—78) ուզում է ազատացնել, թե Կորյունի հիշած սույն հավաքածուն «Յաճախապատում»-ն է<sup>1</sup>: Այս գիրքն էլ երկար ժամանակ անտեղի կերպով համարված էր ս. Գրիգոր Լուսավորչի հեղինակությունը:

Այս մասին տեղիք տվողը նույնիսկ Ազաթանգեղոսն է, որ Գրիգոր Լուսավորչի համար ասում է. «Ապա յետ այսպիսի գործոց սկրսեալ երանելոյն Գրիգորի ճառս յաճախագոյնս, դժուարապատումս, առակս խորիմացս, դիրալուրս, յարմարեալ ի դօրութենէն և ի հիւթոյ գրոց մարգարեականաց, լի ամենայն ճաշակօք կարգեալս և յարմարեալս...» և այլն: Այս խոսքից հետևեցրել են իսկույն, որ Հաճախապատումը Լուսավորչինն է: Այսպես, նարեկացիին կոչումներ է անում իր «Երգ երգոց»-ի մեկնության մեջ («Գրիգորի Նարեկացոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 335 և 342) Հաճախապատումի ԺԹ և Ի ճառերից (տե՛ս Հացունի, «Բազմավեպ», 1930, էջ 401):

Գրիգոր Մագիստրոսն իր «ՄԵԾ են գործք» աշխատության մեջ (էջ 12) Լուսավորչի համար ասում է. «Զգիրսն իր հաւատոյ Յաճախաբանն որ անուանին»: Եվ դեռ այսպես էլ կարծվում է մեր անքննադատ շրջաններում: Ֆեթթեբը նախ ապացուցում է, թե այս բանը անկարելի է, որովհետև՝ ա) ս. Հոգու բնության նկատմամբ հրամանակարգ վարդապետության ձևն այնպես է, որ հաղիվ կարող ենք ենթադրել Լուսավորչի բերնից դուրս եկած: Բ) Հեղինակի լեզուն, ինչպես իր բովանդակ ասությանց կերպը ցույց է տալիս, 381-ի

<sup>1</sup> «Յաճախապատում»-ը թարգմանված է գերմաներեն և հրատարակված «Regensburg»-ում, բնությունը Ֆեթթեբի և Հերշի, որոնք այս գիրքը Մեսրոպի աշխատությունն են համարում:



կոստանդնուպոլսի ժողովի վարդապետական որոշման ժանթու-  
թյուն է ենթադրում: գ) Ս. Գրքից բերված վկայությունները այն-  
պես համաձայն են մեր այժմյան թարգմանության, որ գրության  
ժամանակը չի կարող Ն դարից առաջ լինել:

Սրանից հետո Տեթթերն անցնում է ապացուցանել, թե Հաճա-  
խապատումը գրված պիտի լինի Ն դարում և թե սրանից ավելի ուշ  
չի կարող լինել: Իր ապացույցներն են, նախ՝ հեղինակի այն ձեռ-  
տումը, որով նա ուզում է զրադաշտականության հետ մաքառել:  
բ) Քաղկեդոնական վեճերին բոլորովին անմասն է մնում, որով  
ցույց է տալիս, թե 451 թվականից առաջ է գրված. գ) Արշակուն-  
յաց հարստության հիշատակությունը այնպիսի ձևով է, որ ենթա-  
դրում է այս հարստության անկումը Արտաշես Գ-ի օրով: Այսպի-  
սով Հաճախապատումը գրված պիտի լինի ս. Գրքի երկրորդ թարգ-  
մանության և Քաղկեդոնի ժողովի միջև եղած ժամանակամիջոցում:  
Եթայց ճիշտ այս ատեն կապրեր ու կգործեր Ս. Մեսրոպ, որուն  
նկատմամբ կպատմե յուր կենսագիրը Կորյուն, թե շքազում թուղթս  
խրատականս և զգացուցիչս ընդ ամենայն դաւաոս առաքէր: Զին-  
քը պետք ենք ուստի հեղինակ ճանշնալ այս ճառերուն:

Այսպես է փաստաբանում Տեթթերը:

Բարի ցանկությունից ավելի բան չկա այստեղ՝ Հաճախապա-  
տումը Մեսրոպին տալու համար:

Տեթթերի քննությունը, եթե իբր ստույգ ընդունենք, որոշում է  
միայն այն ժամանակը, երբ գրված պիտի լինի Հաճախապատումը:  
Բայց թե այս գրվածքը չի կարող Մեսրոպինը, ո՛չ էլ առաջին թարգ-  
մանիչներից որևէ մեկինը լինել, բավական ցույց է տալիս Հաճա-  
խապատումի լեզուն, որ այնպես հստակ կերպով զանազանվում է  
առաջին թարգմանիչների լեզվից: Հաճախապատումը հայտնի հու-  
նաբան լեզվով չէ, ուստի իրոք չի կարող Ն դարում կամ ավելի  
հետո գրված լինել, բայց այնպես նման է երկրորդ թարգմանիչ-  
ների լեզվին, մասնավորապես Ղազարի և նրա ընկերների լեզվին,  
որ պետք է հաստատ կերպով ընդունել, թե նրանցից մեկի աշխա-  
տությունն է:

Երկար կլիներ մանրամասն ցույց տալ այն ներքին հատկու-  
թյունների չզոյությունը, որով օժտված պիտի լիներ դասական շրջ-  
անի ամեն գրվածք: Բայց ավելորդ չենք համարում նաև արտա-  
քին հատկություններից բառական մասը նշանակել: Հաճախապա-  
տումի մեջ հարյուրներով կարելի է հաշվել հետդասական շրջանի  
բառեր: Ահավասիկ նրանցից մի ցուցակ (էջերը նշանակված են  
էջմիածնի 1894 թվականի տպագրության համաձայն).

- ա. անհայելի 11, 13.  
 անգործությունից 13, 69.  
 ամենասուրբ 14.  
 անասանելի 18, 22, 33, 37, 92,  
 126.  
 աղբիւրաբար 20.  
 աներկբայ 22.  
 ապերախտիս 23.  
 ամենառատ 24, 30.  
 անմեղկելի 24, 45.  
 աւոտտի 32.  
 անգոյ 49.  
 աներկելի 50, 106.  
 առանձնաւորութիւն 55.  
 անճառելի 55, 78, 82, 94, 107,  
 141.  
 անյիշաշար 56.  
 անհատ 82.  
 անճառապէս 82.  
 անմեկնելի 89, 107, 113.  
 անըմբռնելի 97.  
 անուշահոտանայ 100.  
 անյիշելի 101.  
 անպատմելի 113.  
 անասելի 113.  
 անլսելի 113.  
 անանցանելի 115.  
 անզբօս 122.  
 անդրդուելի 126.  
 աննախաբար 135.  
 առիթ 140.  
 բիւրակերպարանեալ 8.  
 բարեզործող 29.  
 բարեխոնարհութիւն 41.  
 բացայայտել 47, 97, 149.  
 բնաւորեցան 48.  
 բարեխոնութիւն 51.  
 բաւականացի 68.  
 բաղձալի 108.  
 բարեխոնորհութիւն 124.  
 գոյացուցանել 27.  
 գոյացութիւն 29, 58.  
 գուրով 39.  
 գործարան 145.  
 երևութանայ 48.  
 երկաքանչիւրոց 50, 70.  
 երկբայիլ 117.  
 երկբայագեն 144.  
 զամենայնս 39.  
 զանազանութիւն 40.  
 զարտուղի 101.  
 զանազան 111.  
 ընդունակ 44.  
 ընդունարան 141.  
 ժառանգորդ 42.  
 իւրաքանչիւրոց 41, 44, 46, 111.  
 խորհրդածութեամբ 17.  
 խոհականութիւն 83.  
 կենցաղավարեալք 13.  
 կենազործել 15, 58, 63.  
 կցորդակից 18.  
 կերողութիւն 100.  
 հրահանգել 19.  
 հակամիտիլ 52, 80, 106.  
 համանգամայն 118.  
 համահամ 131.  
 ճակատամարտիլ 130.  
 մեղերք 97.  
 մտառութիւն 48.  
 յառաջագալիլ 57, 100, 139, 141,  
 143.  
 ի յաւիտեանցն 43.  
 նորածնելոց 17.  
 ննրզործութիւն 29.  
 ներզործել 33.  
 ի նոյնս 39.  
 նախկին 57.  
 նախախնամական 90.  
 նախաշաղիղ 119.  
 շրջապատել 126.

ունայնաբանութիւն 22.  
 որդախոհանալ 102, 104.  
 պարհակիլ 56.  
 պիտոյանալ 69.  
 պիտոյացեալ 70.  
 սաղարթ 126.  
 սրբապէս 190.  
 վերաբերեալ 34.  
 վերաբերիլ 94, 95, 144.

վերագրել 131.  
 վերաստեղծու 143, 226.  
 վերափոխել 37.  
 փարթամութիւն 29.  
 փառաբանիչ 91.  
 փառաբանութիւն 191.  
 փառակից 144.  
 փրկաւէտ 209.  
 քաջայայտ 31.

բ. Բազմաթիւ են նույնպէս սեռականի հակադիր գործածութեան օրինակները, որոնք թեև անսովոր չեն դասական շրջանում, բայց շափազանցութունը ներելի չէ. ինչպես՝ «զգեցցի զանմահութեան կենդանի լուսովն, զգեցեալ զկենարարի զարեգականն արդարութեանն զլոյսն, որ լին է երանութեամբ, նորա փառօք կարող է...» և այլն (էջ 8):

գ. Հիշելու համար նաև բանասիրական պատճառաբանութիւն, կարող ենք նկատել, որ Հաճախապատումի մեջ կան բազմաթիւ բանազոդութիւններ Եզնիկի գրքից. ահավասիկ սրանցից մի քանիսը.

«Յանախապատում»  
էջ 1—2

Եզնիկ  
էջ 8

Լի կատարեալն, որ զամենայն  
 լնու, և ինքն ոչ թերանայ և ոչ  
 նորոգի, զի ոչ հնանայ և ոչ լնու,  
 զի ոչ պակասի: Զի ինքն նոյն է  
 ի լիութեան իւրոմ և յամբաւու-  
 թեան. և շիք ուստեք եկամուտ  
 կամ յաւելուած, յայն յանբաւ և  
 յանսահման, և յանհաս և ի կա-  
 տարեալ բարերարութիւնն:

Եւ ինքն կայ լի և յանսպառ կեն-  
 դանութեան... և ինքն ոչ թերա-  
 նայ քի զօրացուցիչ զօրութենէն.

էջ 6

և ոչ բնութիւն հիւթաբեր ի պէ-  
 տըս նորա և ոչ նիւթ ինչ՝ յորմէ  
 առնիցէ զոր առնելոց իցէ:

էջ 24

Իսկ եթէ էր երբեք հիւղն ան-  
 զաթդ և անարդ և անկերպա-  
 րան...

էջ 3

Եւ ոչ արար զարարածս ան-  
 կազմն և անարգս, այլ ետ անձ-  
 նիշխան և ազատ կամս... որ կո-  
 շեցան զնոսա յոչնչէն ի յինչսն և  
 ի շգոյէն ի գոյն:

էջ 7

զի ածն ի շգոյէ ի գոյ զշգոյսն,  
 և եցոյց յոչնչէ յինչ զշէսն:

Ձոր յունչէ և ի շգոյէ գոյացոյց-  
զհոգնորս և զմարմնատորս, զշքն-  
շատորս և զանշունչս: ... Եւ զոր  
արար կենդանիս և անմահս, մը-  
տատորս և բանատորս, որ են գունդք  
հրեշտակաց և երկնատր զօրք, որ  
կարգեալ են ի պատիւ և ի պաշ-  
տօն և յանդադար փառաբանու-  
թիւն ամենազօր տէրութեան:

## էջ 29

Որ առ դարման և առ բժշկութիւն  
կազմեցան, կարգեցան ըստ ներ-  
գործութեանն Աստուծոյ... է ինչ  
և ի սողունս իրաց ինչ ի պէտս, որ-  
պէս յօձիցն ասէ զթիրակէն:

## էջ 31

Զի ջուրն ի պէտս կենդանեաց ա-  
րարան, յԱստուծոյ, որ արբուցա-  
նեն զերկիր և դարձեալ ապակա-  
նին նեխելով և նուազելով: Եւ հուր  
առ ի պէտս մեր արարաւ, որ դաշ-  
մանօք վառի և սպասատրէ մեղ  
և ի պակասել կերակրոյն, շիջանի  
և ապականի... Երկիրք լուսաւո-  
րօք և երկիր կենդանեօք և բու-  
սովք և տնկովք և ամենայն ձե-  
ռակերտօք արուեստից, որ ստեղ-  
ծանեն պատկերս յարարածոց Աս-  
տուծոյ աստուածս, սուտ են և ա-

Զի ամեն ի շգոյէ ի գոյ զշգոյան,  
և եցոյց յունչէ յինչ զշէտն... (էջ  
9) զբանատորս և զանբանատորս,  
զմտատորս և զանմտատորս, ըզ-  
խօսունս և զանխօսունս, զա-  
սունս և զանասունս... (էջ 13)  
զբանատրսն աներևոյթս... զհը-  
րեշտակաց ասեմ և զհոգոց  
մարդկան... (էջ 14) և զսպա-  
սատրութիւն՝ յոր կարգեցան,  
անդադար մատուցանեն... փա-  
ռատրեմք զկարգիւն նոցա և ըզ-  
յօրինիչ...

## էջ 63

Նաև նովին իսկ, որ շարքն կադ-  
ծիցին անմտաց, երբք երբք  
օգտակարք լինին և զերծուցիչք  
ի մահուանէ: Զի՞նչ շար քան  
զօձ կայցէ, և ի նմանէ թիրիա-  
կէ...

## էջ 16

Կամ զջուրս՝ զոր հանապազն  
ըմպեմք, և զանուշութիւն նոցա  
ի ծանտահոտութիւն ի փորի մե-  
րում դարձուցանեմք... (էջ 15)  
Եւ կամ զհուր, որում և զքեզ  
իսկ երկրորդ արարիչ կազմեաց  
յօրինիչն, զի յորժամ կամիցիս՝  
վառիցես և յորժամ կամիցիս՝  
խափուցանիցես... (էջ 10) Եւ  
այսպէս շորեքին բնութիւնքն,  
ուստի աշխարհս կազմեալ և  
կայ, առանձինն՝ ապականիչք  
են միմեանց, և խառնեալ ընդ  
ընկերին՝ օգտակարք և շահա-  
ւորք: Եւ զի այս այսպէս է՝ ա-

պականին, որպէս իմաստնոց է  
բաշայայտ:

Էջ 31

Արարածք են Աստուծոյ և լուսա-  
ւորք արեգակն և լուսին և աստեղք  
ամենայն, իւրեանց փոփոխմամբն  
ցուցանեն զիւրեանց սպասաւո-  
րութիւնն ըստ սահմանելոյն այլ  
ևս արարածոց:

Էջ 31

Որպէս ձմեռն ոչ միայն զովացու-  
ցանէ, այլ և սպանանէ. և ամառն  
ոչ միայն ջեռուցանէ, այլ և խոր-  
շակահար առնէ. և հուր ոչ միայն  
ջեռուցանէ և զպէտսն լնու, այլ  
այրէ և ապականէ. և ջուր ոչ մի-  
այն արբուցանէ զերկիր, այլ և ո-  
ղողէ և վնաս առնէ: Այսպէս և  
ամենայն դարմանքն...

Էջ 33

Զի եթէ ոչ էր ահ Տեառն ի վերայ  
մեր, ամենեքեան զմեզ սատա-  
կէին:

Էջ 34

Զի և գազանք ոչ եթէ բնութեամբ  
եղեն շարք, որպէս ընդելութեամբ  
բըն ցուցանեն օձք առ թովիշսն.  
և առիծ և ինձ և արարածք հնա-  
զանդին մարդկան, որպէս եղեն  
(իմա՛ եզն) և շուն և այլ ամե-

մենեցուն յայտնի է որ կամին  
ուսանիլ:

Էջ 11

զշարժունսն... արբանեակսն...  
զնայունսն... քանզի և նոքին  
իսկ իւրաքանչիւր փոփոխմամբք  
յայտ առնեն, եթէ է ոմն՝ որ  
փոփոխէ զնոսա.

Էջ 10

Արեգակն թէ բարի է առանց օ-  
դոյ խառնուածոյ այրիչ և ցա-  
մաքեցուցիչ է. նոյնպէս և լու-  
սին խոնաւական բնութիւն, ա-  
ռանց խառնուածոյ ջերմութեան  
արեգական, վնասակար և ա-  
պականիչ է: Եւ օդ, առանց ցօ-  
ղոյ խոնաւութեան և ջերմու-  
թեան վնասակար և ապականիչ  
է. և ջուրք զհող երկրի ողողա-  
նեն և ապականեն... և այսպէս  
չորեքին բնութիւնքն...

Էջ 16

Զի թէ ոչ սաստ արարչին նա-  
հանջէր զնոսա, մի մի ի նոցա-  
նէն բաւական էր զամենեսին  
սատակել:

Էջ 68—69

Այնչափ ինչ շար ի գազանացն  
բնութեամբ ոչ գոյր... զքարքս  
իգակերպս կալեալ թովչութեամբ  
յընտելութիւն մարդկան ածեն...  
և միւսն զառիւծու կորիւն սը-  
նուցեալ՝ ածէ ի համբոյր և ի  
քծինս, մինչև պատեալ զսնու-  
ցանելեաւն. և եթէ այլ ոք ի նա  
հուպ գայցէ, շմոռացեալ զբարս

337

նայն՝ որք ընդ լծով անկանին և շողորթրթեն, և առ անընդեյտն գազանանան, և մահ գործեն անծաւօթիցն և վէրս:

էջ 37

Որ յունշէ ի լինելութիւն էած և ի շգոյէ ի գոյ:

էջ 228

Եւ սատանայ ի սկզբանն ոչ թըշնամի արարաւ, այլ յանձնիշխան կամացն եղև հակառակ բարւոյ. զի ըստ երբայկեցոց բառիցն հակառակ թարգմանի:

գազանութեանն՝ ի վերայ յարձակի. և նորա սաստեայ գազանին իբր շան, ցուցանէ յանսաստ գազանութեանն:

էջ 7

Զի ամեն ի շգոյէ ի գոյ զշգոյան և եցոյց յունշէ լինշ զշէսն:

էջ 52

Զի սատանայ մեք ոչ յկատուծոյ սատանայ եղև զհետեմք, այլ զսատան անուն՝ վասն խտտորելոյն էառ իւր անուն. քանզի սատանայ յերբայկեցոց և յասորոց լեզուէ խտտորեայ թարգմանի:

Պետք է ասել, թե հիշյալ մի քանի հատվածները դեռ չեն կարող ցույց տալ այն հզոր ազդեցությունը, որ Եզնիկը գործել է Հաճախապատումի վրա. հարկավոր է կարդալ նույն հատվածներից առաջ և հետո եղած մասերը, զգալու համար, որ Հաճախապատումը ծայրեծայր Եզնիկ է բուրում: Այս զգայությունը այնքան մեծ է, որ Նորայրը («Կորիւն վարդապետ և թարգմանութիւնք նորին», էջ 54, ծան.) այն կարծիքն է հայտնում մինչև անգամ, թե Հաճախապատումը նախապես եղել է դասական շրջանի գործ, բայց հետին մի խմբադրի ձեռքով այնքան է խանգարվել, որ դարձել է հետդասական շրջանի աշխատություն:

Որովհետև Եզնիկն այժիպ առաջ է քան Հաճախապատումը (և այս բանը հաստատվում է լեզվով), ուստի պետք է որ Հաճախապատումը լինի բանաբաղը և ոչ Եզնիկը, եվ հիմն Հաճախապատումը բանաբաղ է, ի՞նչպես կարող է Մեսրոպի աշխատությունը լինել այն, երբ այս դեպքում պետք կլինի ենթադրել, թե Մեսրոպն իր աշակերտի զբվածքից բանագողութիւններ է արել:

Ֆեթթերի հետ կարծեկից դուրս եկավ վերջին անգամ Տրնտգըլյանը, որ նախ «Անահիտ»-ի (1905, էջ 242) և հետո Կորյունի իր քննական հրատարակության մեջ (Երուսաղեմ, 1930, էջ 51 և 86—88) նույնպես Հաճախապատումը համարում է Մեսրոպի գործը: Ազաթանգեղոսի այն հատվածը, որի վրա հիմնվելով Հաճախապատումը վերագրում են Գրիգոր Լուսավորչին, գտնվում է նաև

Կորյունի մոտ, որ մենք էլ մեջ բերինք: Յնտգլյանը ցույց է տալիս մանրամասն, որ բանաքաղը Ազաթանգեղոսն է և ոչ Կորյունը. հետևաբար այն հատվածը բնապես Կորյունինն է և վերաբերում է Մեսրոպին. ուրիշ խոսքով «յաճախագոյն» ճառերը Մեսրոպինն են: Բայց սրանով ոչինչ չապացուցվեց. ցույց տրվեց միայն, որ թե՛ Գրիգոր Լուսավորիչը և թե՛ Մեսրոպը ճառեր են գրել, և այն էլ «յաճախ»: Ուրեմն ով որ «յաճախ» ճառեր գրած լինի, «Յաճախապատում»-ը նրա՞ն կլինի:

Մենք խոսեցինք արդեն Հաճախապատումի լեզվի մասին և ցույց տվինք, որ նա Ծ դարից չէ և չի կարող Ծ դարի որևէ հեղինակինը լինել: Նույնը կրկնում ենք այստեղ: Մենք ցույց տվինք այն բազմաթիվ բանաքաղությունները, որ Հաճախապատումը արել է նզնիկից և անհարմար գտանք, որ Մեսրոպն իր աշակերտից այդպիսի լայն չափերով օգտված լինի: Նույնը կրկնում ենք այստեղ: Հաճախապատումը Մեսրոպինը չէ և չի կարող լինել: Մեզ հետ կարծեկից է նաև Հ. Վ. Հացունին, որ («Բազմավեպ», 1930, էջ 401—406) մի առանձին հոդվածի մեջ քննում է Հաճախապատումը և տարբեր պատճառաբանություններով մերժում է վերագրել թե՛ Լուսավորչին և թե՛ Մեսրոպին, այլ Ծ դարի երկրորդ թարգմանիչներին:

9

Վերոհիշյալ ճառական գրվածքներից դուրս հաշվել պետք է նաև այն բազմաթիվ նամակները, որ Մեսրոպ իր կյանքի վերջին օրերին ուղարկեց Հայաստանի զանազան դավառները: Այս նամակների էլ բնույթը խրատական էր. «Եւ մինչդեռ այնպէս մերձատրացն առ իւրև զհոգևոր եռանդն ածէր, և բազում թուղթս խրատագիրս և զգացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր, անդէն ի նմին ամի՝ յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ...» (Կորյուն, էջ 26): Դժբախտաբար բոլոր այս թղթերը, իբրև հովվական ժամանակավոր նշանակություն ունեցող, կորուստի անդունդն են մատնված, որովհետև օրինակներով տարածվելու կամ պահվելու համար չէին:

10

Բայց ժամանակը ավելի խնայող է եղած այն թղթակցության համար, որ տեղի ունեցավ Պրոկղի, Ակակի, Սահակի և Մեսրոպի միջև, և որոնց ծանոթացանք վերը ընդարձակ մեջբերումներով:

Այժմ անցնենք քննել վերոհիշյալ հինգ թղթերի վավերակա-  
նությունը: Առաջին երեք թղթերը իրոք Ծ դարի մի գրչի թարգմա-  
նությունն են և վերջին երկու թղթերն էլ Սահակի կամ մանավանդ  
Մեսրոպի գրություններն են:

Որպեսզի այս թղթերը Սահակինը կամ Մեսրոպինը և կամ գո-  
նե ժամանակակից մեկինը լինեն, հարկ է որ լեզուն, որով գրված  
են նրանք, դասական շրջանի գրոշմը կրե: Դժվար չէ դասական շրջ-  
անի մի գրվածք հետդասական շրջանի գրությունից զանազանել՝  
լեզվից դատելով: Առանց ի նկատի առնելու գրվածքի ոճը, մի քա-  
նի բառ կամ բարդություն և ածանցման ձև, որ հակառակ են դա-  
սական շրջանի ոգուն, իսկույն մատնում են գրվածքի հետնություն-  
ը: Ծվ ընդհակառակը: Այս տեսակետով եթե քննենք այս թղթերը  
(մանավանդ առաջին շորսը), պիտի տեսնենք ազատ այնպիսի թե-  
րություններից. բոլորն էլ կրում են պարզ և ընտիր հայերենի գը-  
րոշմը, հեռու դատարկ ավելարանությունից, և զարդարված այն-  
պիսի քնքուշիկ բառերով, որոնք իսկույն Եզնիկը, Ոսկերերանը  
կամ Սերերիանոսն են հիշեցնում: Բառեր և դարձվածներ, որոնք  
հատուկ են դասական շրջանին, գտնում ենք մեր ամեն քայլին.  
«Եղեալ վասն մեր մարդ առանց շրջելոյ և անկանելոյ և խախտելոյ  
չիրոյ աստուածային(!) ինքնութենէն ... ի մէջ անբաժին Երրոր-  
դութեանն բաժին արկանեն... զնորակերտ զնորածայնս զայս ա-  
սին զնոր ընդունայն հայհոյութիւնսն... անցանեն զանցանեն ըստ  
նոցա հայհոյութիւնսն... Մշակք նենգատորք կերպարանեալ կեր-  
պարանօք պաշտօնէից Քրիստոսի... Զոր օրինակ անց՛ անցանի-  
ցեն ընդ քաղցրաբեր բոյսս արտոցն... և զտալ տառապոյն (?)  
հասկալից բուսոցն ի շերմախառն յանբարեխառն օդոցն իբրովք  
քաղցրութեամբն յառողջութեան բժշկութիւն դարձուցանելով... մա-  
նաւանդ զվնասակար նորարան նորածայն զհերեսիութիւնս, զոր  
այլանգակաշատ ամբարշտութիւն տակաւին զբարս դատնութեան  
սերմանցն ցանէ ի վերայ սրբութեան սերմանեաց նրովնախառն  
ուսումն, որք ի հանճարավնաս սատանայախառն սովորեալ են...  
և նկրտին ըմբռնել զանհաս զառանց ըմբռնելոյն (հետոսկեդարյան  
հայերենով պիտի ասեին զանհասանելիւն և զանբմբռնելիւն)... հա-  
սանել անհաս շափուցն ժպրհեն... ի մէջ միջնաժողով ժողովրդոց  
զխաշն կանգնեաց (բարդության երկու կեսերը առանձին կրկնված,  
ոսկեդարյան ձև)... որ զանեղծ և զանարատ հաւատն յապակաւու-  
րիւն դարձուցանել ջանան... և սրբոյ զանճառ զանհին Երրորդու-  
թեանն քննութիւն՝ ջանան ընդ խնդիր արկանել... ընդունել պա-  
տիժս պատումասի... և զգալթակղութիւն դայն ի միջոյ ի բաց կո-  
րուսանել...» և այլն և այլն:



Ճշմարիտ է, թե այս գրութիւնաց մեջ կան ինչ-ինչ անհարթութիւններ, բայց սրանք էլ հայանի է, որ գրիչների անհամարձայն արդիւնքն են: Արդարեւ, Սոփերքի մեջ հրատարակված թղթերից առաջինը (Սահակի պատասխանը Պրոկղին) շատ ավելի լի է այսպիսի անհարթութիւններով, քան նույնի հրատարակութիւնը «Գիրք թղթոց»-ի մեջ: Ուրեմն վերջինը ավելի հարազատ օրինակից է քան առաջինը: Լավագոյն մի օրինակ կարող է մնացյալ անկանոնութիւններն էլ հարգարել:

Ապացուցանելուց հետո, թե հիշյալ գրութիւնները դասական շրջանից են, այլևս ավելորդ կլինի կասկածել նրանց վավերականութիւնն վրա: Դասական շրջանը այնպես կարճ է, որ Սահակի ու Մեսրոպի մահից քիչ հետո վերջանում է, և այս կարճ ժամանակում ո՛ւմ էր պետք Սահակի և Մեսրոպի անունով թուղթ կեղծել:

Զարմանալի է սակայն հինգերորդ թուղթը (Սահակի պատասխանը Ակակին): Այս թուղթը, ինչպես տեսանք, ուրիշ բան չէ, եթե ոչ շորթորդի անփոփոխ արտագրութիւնը, տեղ-տեղ կրճատված: Սահակի նման բազմաբեղուն մի անձ, հետն էլ ունենալով մի Մեսրոպ կամ մի Եզնիկ, եթե պետք զգաց Ակակին պատասխան գրելու, չէ՞ր կարող մի նոր բան գրել. ի՞նչ կարիք կար նախորդը համառոտելու և նոր հասցեով ուղարկելու: Բացի սրանից, Ակակին ուղղված այս պատասխանը, իր այնչափ համառոտութիւնը մեջ անգամ, ընծայում է հետին հայերենի շատ հետքեր: Օրինակ՝

ա. Առաջինը գրում է «ի հանճարավնաս սատաւայախառն սովորեալ են», ուր շղատառը դասական շրջանի մի սիրուն բարդութիւն է. երկրորդը քանդելով այս բարդը, դարձնում է «որ ի հանճարավնաս սատաւայէ խառնման ուսեալ սովորեալ են». այսպիսով դուրս է գալիս, որ սատանան է հանճարավնաս, մինչդեռ Սահակի միտքը այլ է: Նաև առաջինի մեջ սովորեալ բազում հասկացվում է «վարժված», մինչդեռ երկրորդը սովորիլ առնելով «ուսանիլ» մտքով, պետք է զգացել սատանան էլ բացառականի վերածելու:

բ. Առաջինը գրում է. «Արդ, որովհետև մուլարն առաջին և գըլխատրն ի շարիս զիւր ժանգ աղտեղութեանն կարկառեալ սերմանել ժպրհեցաւ»: Այս շատ հասկանալի խոսքը խանգարվում, դառնում է «Արդ որովհետև մուլարն՝ առաջին գլխաւորօքն շափ զիւր ժանգ աղտեղութիւնն սերմանել ժպրհեցաւ», որից ոչինչ չի հասկացվում:

գ. Առաջինը գրում է. «նկրտին ըմբռնել զանեաս զառանց ըմբըռնելոյն», որի մեջ շղատառ բառերը հարազատ դասական են,

երկրորդի մեջ եղծվելով դառնում է «եկրտին ըմբռնել զանբարոսնելին»:

դ. Առաջինը գրում է «ի բազում կիզմանն զայրութենէ զզգայութիւնսն կորուսեալ է» (այսինքն՝ այրվածքի սաստկութիւնից զգայութիւնը կորցրել է). երկրորդում դառնում է «ի սաստիկ կիզմանէ ընկղմին միտքն ի մմբիրն խնլագարուրեան» (վերջին բառը դասական չէ):

ե. Առաջինը գրում է. «Զի ոչ ինչ է այդ գիտութիւն (տպված է այլ տգիտութիւն), այլ խաւար խորհրդեան». իսկ երկրորդը դարձնում է «քանզի ոչ գոյ այլ գիտութիւն խաւարայեղց» (չդատաւոր դասական չէ):

զ. Առաջինը գրում է. «Ընդ միտս իրեանց խորհել աներկիւղութեամբ և անամօթութեամբ, զամօթ իրեանց լրբութեամբ յայտնապէս պատմեն». երկրորդը հետին բառերով՝ «աներկիւղաբար անամօթաբար զլրբութիւնս իրեանց յայտնապէս պատմեն»:

է. Առաջինը մի անգամ դորձածում է «պատիժ պատուհասի սեռականով ավելադրութիւնը. «և մեծամեծ պատիժ պատուհասի առնել ո՛չ դանդաղիմք». երկրորդ անգամ նույնը կրկնութեամբ՝ «մեծապէս (մեծամեծ?) պատժի և պատուհասի մեծապէս վրէժ խնդրեսցեն». իսկ երկրորդը ջնջելով այս բոլոր զարդերը, ասում է պարզապէս. «Ընդ մեծ պատժովք արկանել ոչ դանդաղիմք... մեծապէս պատուհասի զվրէժն խնդրիցեն»:

Այս բոլոր խանգարմունքը ինչի՞ համար է:

## 11

Վերը ասացինք, որ Զամչյանը Պատարագամատույցն էլ վերագրում է Սահակի և Մեսրոպի գործակցության: Ուրիշները Պատարագամատույցը տալիս են Լուսավորչին. այսպէս հենց Զարրհանայանը («Շայկական հին դպրութեան պատմութիւն», Գ տպ., էջ 280), որ սակայն նույն Պատարագամատույցի վերջում տրված աղոթքը համարում է «Մեսրոբայ վարդապետի»:

Հիշենք վերջին անգամ Եվսերիոսի Եկեղեցական պատմութեան թարգմանութիւնը, որ թէև Մեսրոպի աշխատութեան արդյունքը չէ, բայց խորենացու պատմութեան համաձայն՝ կատարված է Մեսրոպի անմիջական հրամանով, ասորերեն լեզվից. «Եւ վկայ քեզ ի մօտոյ երաշխատրեսցէ Եկեխիաստէ գիրք Եւսերի Կեսարացոյ, զորս ետ թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ի հայ լեզու» (Խորենացի, Բ, Ժ):

## ՍԱՀԱԿԻ ԵՎ ՄԵՍՐՈՊԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

## 1

Այս գլխով ուզում ենք կազմել, որքան կարելի է, ստույգ ժամանակագրական մի ցուցակ, որի մեջ պարզվեին Սահակի և Մեսրոպի ծնունդից սկսած մինչև նրանց մահը տեղի ունեցած բոլոր դեպքերի թվականները: Սրա համար բավական դժվար աշխատանքի պետք կա, որովհետև մեր պատմության մեջ ամենից ավելի խառնակ և անստույգ մասը ժամանակագրությունն է, մանավանդ հայ թվականի հաստատությունից առաջ:

Այստեղ հավաքում ենք նախ այն բոլոր տեղեկությունները, որ մեր մատենագիրները տալիս են հիշյալ շրջանի ժամանակագրության մասին:

Կորյունի տված թվական տեղեկությունները հետևյալներն են.

1. Դանիելյան նշանագրերի Հայաստան գալը տեղի ունեցավ Վոամշապուհի հիւնգեբորդ տարին. «Թսկ Հաբելին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլդ, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրոյն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց, ի հիւնգեբորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր»:

2. Դանիելյան գրերի փորձերը տեղեկին երկու տարի. «Ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել... և իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր և նովին նշանագրովք տանէր» (Կորյուն, էջ 9):

3. Երբ Դանիելյան գրերը անհաջող գտնվեցան, Մեսրոպը ճանապարհ ընկավ դեպի Միջագետք, Վոամշապուհի հիւնգեբորդ տարին. «Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի, և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր զնայր ի հիւնգեբորդ ամի Վոամշապուհոյ արքային Հայոց» (Կորյուն, էջ 9):

4. Մեսրոպը հայերեն գրերը գտնելով, հաջողությամբ դարձավ Հայաստան «ի վեցեբորդ ամի Վոամշապուհոյ արքային Հայոց Մեծաց» (Կորյուն, էջ 11):

5. Մեսրոպի Հունաստան գնացած ժամանակ կայսր էր Թեոդոս Բ, իսկ պատրիարքն էր Ատտիկոս. «Զիրս առաջի եղեալ գրով՝ ցուցանէր կայսերն... յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն և հայրապետին սրբոյ կաթողիկոսին աշխարհամուտ դրանն, որոս Ատտիկոս կոչէին»:

6. Հունահայաստանից վերադարձին Վոսմշապուհը վախճանած լինելով, նստած էր Արտաշես թագավորը. «Եւ ինքն բազում աշակերտօք զայր անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց, և հասնալ ի նոր քաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ նպիսեղոսոսին Սահակայ և թագաւորին Հայոց, որոմ անուն Արտաշէս կոչէին»:

7. Աշակերտներէ վերադարձը, ս. Գրքի ընտիր մի օրինակի գյուտը և հայերեն երկրորդ թարգմանութիւնը ևղան Եփեսոսի ժողովից հետո. «Որոց յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն... և Նիկիական և Եփեսոսական կանոնօք զային երեւելով աշխարհին Հայոց»:

8. Սահակը վախճանվեց «յառաջնումն ամի Յազկերտի որդւոյ Վոսմայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին... ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս և զօր ծննդեան երանելոյն յիշէին, յերկրորդ ժամու աւուրն»:

9. Մեսրոպը վախճանվեց «անդէն ի նոյն ամի, յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ... յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեանն, յերեքտասաներորդում ամսեանն Մեհեկանի»:

10. Մեսրոպի տաճարն Օշականում շինվեց «յետ երից ամաց անցելոց»:

11. Մեսրոպի կատարյալ ժամանակագրութիւնը հետևյալն է. «Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն ամբ 45, և ի դպրութենէն Հայոց մինչև ցվախճան սրբոյն՝ ամբ 35, որք համարին այսպէս: Թագաւորեալ Դիսմոնայ (Վոսմ-Կրման) Պարսից արքայի ամս 6 և Յազկերտի ամս 21. և յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վոսմայ, վախճանեցաւ երանելին: Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի շորրորդում ամէն Կրմանայ արքայի, մինչև յառաջին ամն երկրորդ Յազկերտի որդւոյ Վոսմայ, և դպրութեանն Հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն» (Կորյուն, էջ 26):

Բ. Փարպեցին պատմում է թե՛

1. Մեսրոպի դիմվորութիւնը խոսրով թագավորի ժամանակ էր. «Զինուորեալ ի դուռն Հայոց արքային խոսրովայ»:

2. Իր պալատական պաշտոնը տեւց տարիներ. «և սպասաւորեալ անդ ամս կարգաւորապէս առանց նպիրանաց»:

3. Իր ճգնական կյանքը տեւց «մինչև յամս հինգերորդ՝ արքային Հայոց Վոսմշապուհոյ՝ եղբօր խոսրովու» (գլուխ Ժ):

4. Վոսմշապուհը ս. Գրքի թարգմանութիւնից հետո ապրից «ամս բազումս (վենետիկյան տպագիրները՝ «ամս քսան և մի»), որ 1904 թվականի հրատարակութեան էջ 18 ծանոթութեան համաձայն,

հետին սրբագրութիւն է, քերած և ավելացրած), և հասեալ ի յերկար ծերութիւն՝ վախճանեցաւ յանկողնի իւրում խաղաղական հանգրստիւ յաշխարհիս Հայոց» (գլուխ ԺԱ):

5. Սրանից հետո մեռավ Շապուհ Գ-ը, որին հաջորդեց որդին Վրամ Կրմանը. սա Հայոց թագավոր դրավ Խոսրովին, որ նստավ միայն ութ ամիս և մեռավ: Վրամին հաջորդեց Հազկերտ, որ Հայոց թագավոր նշանակեց իր որդի Շապուհին. բայց շուտով մեռավ Հազկերտը, և Քի նմին ատուր և զորդի նորին զՇապուհ, զոր ի տեղի Արշակունւոյն թագաւորեցոյց ի վերայ աշխարհիս՝ անդրէն ի դրանն մարդկանէ դատով յարջունիքն սատակեցին»: Պարսից զահը նրստավ Վրամ, որ Հայոց թագավոր նշանակեց Արտաշես Գ-ին (գլուխ ԺԲ):

6. Յայնմհետէ բարձաւ թագաւորութիւնն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ ամի Արտաշեսի» (գլուխ ԺԳ):

7. Սահակը վախճանվեց «կեցեալ ամս բազումս և հասեալ ի յերկար ծերութիւն... ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի որդոյ Վրամայ թագաւորին Պարսից, յամսեանն Նաւասարդի, որ օր 30 էր ամսոյն, յերկրորդ ժամու ատուրին որ և զօր ծննդեան սրբոյն ի ստոյգ գիտողաց և ի պատմութենէ երանելոյ առն Կորեան՝ հաստատեալ գիտացաք լինել նոյն օր և ծննդյան սրբոյն, ի նմին ամսեանն» (գլուխ ԺԸ):

8. Ըն յետ վեց ամսոյ կատարման նորին տարւոյ հանգստեան սրբոյն Սահակայ՝ վախճանեցաւ երանելին Մաշտոց... յերեքտասաներորդի ատուր ամսոյն Մհհեկանի» (գլուխ ԺԹ):

Գ. Խորենացու պատմութեան համաձայն՝

1. Սահակը նստավ Ասպուրակեսից հետո, Հայոց Խոսրով թագավորի, Պարսից Շապուհ թագաւորի և Հունաց Արկադեոս կայսեր ժամանակ: Սահակը դեռ նոր էր ընտրված, երբ Մեսրոպը եկավ նշանագրերի խնդրով (գլուխ ԽԹ):

2. Խոսրով Գ հինգ տարի թագավորելուց հետո՝ զահագորկ եղավ Շապուհի հրամանով և նրա փոխարեն զահակալեց Վրամշապուհը (գլուխ Ծ):

3. Շապուհը 70 տարի իշխելուց հետո մեռավ. իրեն հաջորդեցին՝ որդին Արտաշիւր, որ նստավ 4 տարի և հետո Վրամ Կրման՝ 10 տարի (գլուխ ԾԱ):

4. Արկադեոս կայսրը հիվանդացավ, Վրամի հրամանով Վրամշապուհը գնաց Միջագետք և վերադարձին բերել տվեց Դանիելյան գրերը, որոնք փորձեցին «զամս սակաւս» (գլուխ ԾԲ):

5. Արկադեոս կայսրը մեռնելով, նրա տեղ նստավ Թեոդոս Փոքրը, որ բարեկամ մնաց Վրամշապուհի և Հազկերտի հետ. նույն

ժամանակները Մեսրոպը բերավ իր հնարած գրերը Հայաստան (գլուխ Մ<sup>Գ</sup>):

6. Վոսմշապուհը թագավորեց 21 տարի և վախճանվեց. Հազկերտը նստեցրեց հոսրով Գ-ին, որ տիրեց 1 տարի, սրան հաջորդեց Շապուհը (գլուխ Մ<sup>Ե</sup>):

7. Հազկերտը 11 տարի թագավորեց ու մեռավ. Շապուհը նստավ միայն 4 տարի և փախավ Պարսկաստան, ուր և սպանվեց. Հայաստանը 3 տարի անիրշխան մնաց. Հազկերտի տեղ նստավ Վրոսամ Բ (գլուխ Մ<sup>Զ</sup>):

8. Սահակը անցավ Հունահայաստան՝ Թեոդոս կայսեր և Ատտիկոս պատրիարքի ժամանակ (գլուխ Մ<sup>Է</sup>):

9. Վոսմը Հայոց զահը բարձրացրեց Արտաշես Գ-ին, որ թագավորեց 6 տարի (գլուխ Մ<sup>Ը</sup>):

10. Թարգմանիչները ուղարկվեցին Պոլիս, «որոց ընդունելութիւն ամենեցուն մեծապէս արար Մաքսիմիանոս եպիսկոպոս Բիզանդացոց» (գլուխ Կ):

11. Եփեսոսի ժողովից հետո թարգմանիչները վերադարձան. Սահակը և Մեսրոպը ձեռնարկեցին ս. Գրքի երկրորդ թարգմանության (գլուխ ԿԱ):

12. Վոսմը ջնջեց Հայոց թագավորությունը. Սահակի տեղ նրստեցրեց Սուրմակին, որ «ոչ աւելի տեւալ քան զմի ամ». սրան հաջորդեց Բրքիշոյ՝ 3 տարի (գլուխ ԿԲ):

13. Սրան հաջորդեց Շմվելը՝ հինգ տարի (գլուխ ԿԳ):

14. Վոսմ Բ նստավ 21 տարի. իրեն հաջորդեց Հազկերտ որդին. վախճանվեց Սահակը «կեցեալ եպիսկոպոսապետութեամբ ամս յիսուն և մի, սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ հոսրովայ Հայոց արքայի, մինչև ցսկիդրն ամին երկրորդի Յազկերտի եղևոյ Պարսից թագաւորի, յևս ամսոյն նաւասարդի, յաւուր իւրոյ ծննեղանն... Եւ զկնի վեց ամսոց անցելոց, յերեքտասանն Մեհեկանի, և երանելին Մեսրոպ փոխեցաւ յաշխարհէ» (գլուխ ԿԴ):

Գ. Ըստ Մովսես Կաղանկատվացու «Յորում ժամանակի Թէոդոս Փոքր Յունաց էր կայսր և Վոսմշապուհ Հայոց թագաւոր և Յազկերտ Պարսից արքայ և Արսվաղէն Աղուանից թագաւոր, եկեալ երանելին Մեսրոպ յԱղուանս...: Եւ յերկրորդն Յազկերտի արքայի յառաջին ամի փոխի սուրն Սահակ յևս նաւասարդի ամսոյ. և յետ վեց ամսոց անցելոց փոխի և երանելի վարդապետն Մեսրոպ» (Բ գիրք, գլուխ Գ):

Ե. Փոքր Կորյունը, հետեւելով Մեծ Կորյունին և հորենացուն, տալիս է հետևյալ տեղեկությունները. «Ընդ այն ժամանակս թագաւորեաց Թէոդոս Փոքր: Եւ եկեալ երանելոյն Մեսրովբայ Հայոց

վարդապետի, և բերեալ զնշանագիրս մերոյ լեզուի... Յետ այնորիկ դէպ լինէր փոխիլ յաշխարհէս երանելոյն Սրբոյն Սահակայ... յառաջնում ամի երկրորդ Յազկերտի որդոյ Վոսմայ թագաւորին Պարսից... անդէն ի նմին ամի յետ վախճանի երանելոյն Սրբոյն Սահակայ ի վեցերորդ ամսեանն ի տասն և յեթ Մեհեկանի՝ հասանէր վախճան սրբոյ վարդապետին Հայոց (Մեսրոպայ)»:

2. Անանուն «Պատմութիւն» (հրատ. «Սոփերք», հատ. Բ) տալիս է երկու տեղեկութիւն.

1. «Եւ հարիւր տասն ամ էր ի Սրբոյն Գրիգորէ յորժամ գտաւ գիր ազգիս մերոյ» (էջ 14):

2. Վախճանեցաւ Սահակ, ի նաւասարդի յերեսունն, յաւուր հինգշաբաթոջ, որ և ծնունդ սրբոյն ի նմին աւուր ասեն եղեալ» (էջ 35):

է. Սահակի թղթակցութեանց մեջ ո՛չ մի թվական հիշատակութիւն չկա. միայն Պրոկղի առ Սահակ թղթի վերջում գրված է «գրեալ յամի Տեառն 435» («Գիրք թղթոց», էջ 8): Բայց ինչպես հրատարակիչները ասում են, այս ծանոթութիւնը «գիրքին գրութեան հետ կապ չունի, այլ ետքնն նոտր գրով գրված ծանոթութիւն մ'է... օտար ձեռքէ ավելցված» (անդ, էջ ԺԱ):

Ը. Հովհաննես Կաթողիկոս ըստ ամենայնի հետևող է Խորենացուն, ո՛չ մի նորութիւն և ո՛չ մի թվական տվյալ չունի:

Թ. Ստեփանոս Ասողիկը տալիս է մեզ հետևյալ թվականները.

1. «Յաջորդէ ի տեղի նորա Վոսմշապուհ եղբայր նորա, որ թագաւորեաց ամս ԺԾ»:

2. «Եւ գտաք հանդիպեալ յերկրորդ ամին Արտաշրի արքային Պարսից՝ զհինգերորդ ամն Վոսմշապուհոյ արքայի Հայոց, յորում Մաշտոցն երանելի... դանիէլեան նշանագրօք դպրութիւն ըստ հայրամս յօրինէր»:

3. «Յետ որոյ դարձեալ ևս ի վեցերորդունն Նորին Վոսմշապուհոյ, որ է ամ առաջին Վոսմ—Կրման արքայի՝ վերստին աստուածատուր նշանագրօք զնոցնս յեղանակեալ յօրինէր. որովք և դրպրութիւնք և Գիրք Աստուածաշունչք ուղղեալ թարգմանին, որպես պատմեն Կորիւն և Ղազար»:

4. «Վոսմշապուհ բարոք վախճանեալ, յորոյ տեղին թագաւորեցուցեալ Կրման արքայի զԽոսրով եղբայր Նորին զմերժեալն, որ եկաց ի կրկնումն ամ մի»:

5. Հայոց Շապուհ թագավորի մահից հետո ամնայր աշխարհս Հայոց առանց թագաւորի ի հարուստ ամս. զոր խնդրեալ գտաք լեալ ժամանակ անիշխանութեան ամս ԺԱ»:

6. «Յովսէփ և Եզնիկ, արբանեակք Սահակայ, զայսու ժամա-

նակաւ (յանիշխանութեան) առաջեալք յԱսորիս, ուստի և ի Յոյնս՝ ի գրատրութիւնս գրոց վարդապետականեաց:

7. «Յետ որոյ թագաւորէ Արտաշէս, որ և Արտաշէր, հրամանաւ Վոսմայ արքային Պարսից՝ ամս Զս: Սրանից հետո հիշում է Մեսրոպի մեծ գործունեութիւնը, ս. Գրքի երկրորդ թարգմանութիւնը և Լոհիսիմեանց վանքի նորոգութիւնը:

8. Սահակին հաշորդեց «Աբղիշոյ ոմն ասորի յակոբիկ շարագործ, որ ոչ տեևաց տարի մի: Եւ յետ նորա զՇմուկլ ոմն ի նմին ցեղէ՝ վատթար քան զնա, որ և նա յետ երկու ամի վախճանեցաւ: Եւ յետ նորա Սուրմակ... ամս էս:

9. Սահակ շկալաւ զԱթոռ Հայրապետութեան ամս Սս:

10. Սահակի մահից հետո՝ «յետ սակաւ ատուրց անցելոց մեծ վարդապետն Հայոց Մեսրոպ վախճանեցաւ» (զլուխ Ա):

11. «Թէնդոս Փոքր՝ որդի Արկադու, ամս եԲ. սա արար ժողով յԵփեսոս» (զլուխ Զ):

Ժ. Ներսես Ենորճալին իր Վիպասանութեան մեջ (տող 897—945) Մեսրոպի հայտնութիւնը, ճգնական կյանքը, գրի գյուտը, թարգմանիչների երթը, Վրաց և Աղվանից քարոզութիւնը մինչև Մեսրոպի մահը ղնում է Արշակ Գ և Վաղարշակ Բ թագավորների ժամանակ. այսպես՝

Յայսմ վայրի եղև յայտնեալ  
Այն որ Մեսրոպըն կոչեցեալ,  
Որ տեսական ուսմամբ վարժեալ,  
Գործնականաւ գերազանցեալ,  
Ճգնողական վարս ընկալեալ,  
Եւ յանապատրս հետեալ,

• Զաստուածագիծ տառս ընկալեալ

Մանկունս ուշեղրս ժողովեալ,  
Նոր դըպրութեամբ այնու վարժեալ,

Բայց Մեսրոպայ շըրջապալեալ,  
Զամենեսեան լուսաւորեալ,  
Վրաց ու Աղուանից գիր ստեղծեալ,

Եւ սրանչիւեօք վախճան առեալ.



Բայց ի սոցին աւուրս լեալ,  
Խոսրով անուն արքայ նըստեալ,  
Զոր և Պարսից ըզնա կալեալ,  
ԸզՎոամշապուհ փոխան եղեալ.

Սրանից հետո պատմվում է Արտաշեսի թագավորելը, Սահակի մահը, Վարդանանք և այլն:

ԺԱ. Սամվել Անեցու ժամանակագրությունը որոշում է հետևյալ թվականները.

ՆԺԾ (415). ս. Սահակ ամս ԾԱ:

ՆԺԹ (419). Վոամշապուհ ամս ԻԱ:

ՆԻԱ (421). Պարսից Արտաշիր ամս Գ: Սկիզբն դպրութեանս Հայոց, Մաշտոց որ է Մեսրոպ երանելի և Մեծն Իսահակ զԴանիէլի նշանագիրսն յօրինէին ընկերօք հանդերձ: Եւ հետ միոյ ամի դարձեալ աստուածատուր նշանագրօք՝ զնոյն յեղանակեալ, որով և դպրութիւնք և գիրք աստուածայինք ուղղեալ թարգմանէին:

ՆԿԷ (467). Յետ մահուան Ս. Սահակայ, Յովսէփ աշակերտ նորին՝ յաջորդէ զԱթոռ եպիսկոպոսութեան ամս Բ. հրամանաւ Մեսրոպայ՝ որ և նա կատարեցաւ ի նոյն ամի:

ՆԿԸ (468). Յովսէփ ամս Բ.

ԺԲ. Մխիթար Անեցու տված տեղեկություններն են՝

1. «Արշակ և Վաղարշակ՝ Ե. Խոսրով Ե. Վոամշապուհ ԻԱ. Խոսրով դարձեալ՝ Ա. Շապուհ Գ. անիշխան ամս ԺԱ. Արտաշէս Զ. անիշխան ամս ԺԳ. սա վերջին թագաւոր Արշակունեաց» (էջ 9):

2. «Կարգ կաթողիկոսաց... Ասպուրակէս, եղբայր սոցա (Շահակի և Զաւէնի) Ե. Սուրբն Սահակ ԾԱ» (էջ 10):

3. «Շապուհ (Բ)... ձգտեցաւ 73 ամ. ի սորա ՀԱ ամին նստի թագաւոր Հայոց Վոամշապուհ. և Սուրբն Սահակ՝ հայրապետ, որդի մեծին Ներսէսի» (էջ 33):

ԺԳ. Վարդան պատմիչը տալիս է հետևյալ տեղեկությունները.

1. «Խոսրով ոմն Արշակունի, որ զկնի երից ամաց մերժի ի տիրութենէն ի քսութենէ գործակալաց աշխարհիս. այն որ նստոյց յաթոռ պատրիարքութեան զՍուրբն Սահակ, որդի մեծին Ներսեսի, որ պաշտեաց զՍուրբ Աթոռն ամս յիսուն»:

2. «Իսկ թագաւորն Պարսից կացոյց ի տեղին Խոսրովու զՎրոամշապուհ եղբայր նորին, ամս հնգետասան»:

3. «Ի հինգերորդ ամի նորա և յառաջին ամին Արտաշիր որդո Շապուհ՝ սուրբն Մեսրոպ յօրինէ զդպրութիւն հայերէն»:

4. «Խոսրով ոչ ավելի կացեալ քան զտարի մի՝ վախճանի: Եւ ի մեռանելն Յազկերտի, նստի յաթոռն Վոամ երկրորդն, որ և բա-

զում շարին խորհէր ամել ի վերայ շայտց: Զոր իմացեալ սուրբն Սահակ, զնաց առ Յուսոբ, և առաքէ զՍուրբն Մեսրոպ և զՎարդան թոն իւր առ Թէոդոս որդի Արկաղնայ:»

5. «Յեա այսորիկ առաքէ զՎարդան առ Վոամ խնդրել զհաշտութիւն, և թագաւորեցուցանել զԱրտաշէր, որդի Վոամշապուոյ, զոր և արարն իսկ, իսկ Մովսէս ասէ թէ զկնի խորտովու թագաւորեցոյց Յազկերտ զՇապուո՛ զորդին իւր, ամս երեք, որ և ի համբաւ մահու հօրն զնացեալ, մեռաւ ի զօրացն. և ասեն, մնաց երկիրս անխշխան և շփոթ ամս մետասան. և ասպ թագաւորեաց Արտաշէր:»

6. «Եւ ընկնցեալ զՍուրբն Սահակ, կարգնն ի տեղի նորա զՍուրմակ շարախօսակից իւրեանց, որ ոչ յամեալ տարի մի՛ հալածի. և ղնեն զԲրքիշու ասորի, ամ մի. և ասպ զՇմուէլ ի նոյն ցեղէ:»

7. «Ոմանք զկնի Բրքիշոյ և Շմուէլի ասեն առեալ Սուրմակայ զԱթոն ամս եօթն: Այլ սրբոյն Սահակայ... կատարի առ Քրիստոս և ամփոփի յԱշտիշատ, զկնի սատակմանն Վոամայ և տիրելոյն Յազկերտի որդւոյ նորա: Զկնի ասպ վեցից ամաց կատարի սուրբն Մեսրոպ:»

8. «Եսկ նախարարացն ի մի վայր ժողովեալ, կացուցանեն տեղապահ թագաւորութեան զՍուրբն Վարդան: Զայնու ժամանակօք դարձան ի թարգմանութենէ Ղևոնդ, Կորին և Արձան, որ զիպեցան ի ժողովն Սիփեսոսի, զոր արար Թէոդոս ի մետասաներորդ ամի թագաւորութեանն իւրում:»

9. «Սահակ վախճանեցաւ յամսեանն նաասարդի յերեսուն... և սուրբն Մեսրոպ... յերբտասան Մեհեկի ամսոյ:»

ԺԴ. Կիրակոս Գանձակեցի պատմիչի տեղեկություններն են՝

1. Խորով Գ. նստաւ 5 տարի. նրան հաջորդեց Վոամշապուո՛ 21 տարի, կրկին Խորով՝ 1 տարի, Արտաշիր 6 տարի, առանց հիշելու Շապուհին:

2. Սահակ կաթողիկոսությունից ընկնելուց և Արտաշիր գահընկեցությունից հետո ասրեց 16 տարի, ընդամենը հայրապետ եղավ 51 տարի (տն՛ս էջ 19):

3. (Սահակ իր մահվան ժամանակ) «տուեալ զԱթոն ցՍուրբն Մեսրոպ, յոր և նա ի նոյն ամի ելից զկենցաղս՝ յիշատակ բարի թողեալ ասպագայից, ի սկզբան առաջին Յազկերտին Պարսից արքային, որդւոյն Վոամայ երկրորդի (էջ 19—20):

4. Սահակի հաջորդներն են՝ Սուրմակ 1 տարի, Բրքիշու 3 տարի, Շմվել 5 տարի:

ԺԵ. Ըստ Մխիթար Այրիվանեցու՝ «Ամբ Տեառն 423, սկիզբն

դպրութեանց հայ գրոցս ի ձեռն Սրբոյն Սահակայ և Մեսրոպայ,  
որք վաթսուն աշակերտօք աշխատեալք թարգմանեցին զամենայն  
Հին և Նոր Կտակարանս: Կատարեցան աշակերտքն Մաշտոցի յԱստ-  
ղաբլուրն» (էջ 47):

ԺԶ. «Յայսմատուրք»-նեբը տալիս են ոչ թե թվականներ, այլ  
ամսաթիվեր. այսպես՝ «նաւասարդ 30 և սեպտեմբեր 9, յիշատակ  
վարուց և մահուան սուրբ հայրապետին մերոյ Իսահակայ Պարթե-  
ւին». «Հոռի Ը և սեպտեմբեր Ժէ, յիշատակ սրբոց թարգմանչացն  
Սահակայ և Մեսրոպայ և աշակերտաց նոցա». «Եւ եղև գիւտ զը-  
րոյն ի Տրէ ի Ժէ և նոյեմբերի ի Ին». «Մեհեկի ԺԳ և փետրուար  
ԺԹ վախճան ս. Մեսրոբայ»:

ԺԷ. «Կայսերաց պատմութիւն» (ըստ Զարբհանալյան, Ա, էջ  
40). «Արկաղեայ և Ունորեայ տասներորդ ամի եղև զկիզբն հայերէն  
գրոց... ի սորա ատուրս էր սուրբ Սահակ հայրապետն յորոյ ատուրս  
գտաւ 29 գիրն հայերեն լեզուի ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորոյ,  
զոր ետ բերել Վոսմշապուհ թագաւորն»:

ԺԸ. Մագիստրոս («Քերականութիւն», էջ 231). «Քանզի ի  
վախճանեւն մերոց թագաւորացն և ի սպառիւն ազգին Արշակու-  
նեացն գտաւ գիրս Արամեանն»:

ԺԹ. «Վարք Անտոնի միայնակեցի» հիշատակարանում տրվում  
է հետևյալ տեղեկությունը. «Թարգմանեցաւ գիրս այս ի սուրբ քա-  
ղաքին յԵրուսաղէմ. յամի Ն-որդի Մ-երորդի (450) գալստեան Տեառն  
մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամին յորում հանգեաւ քաջընթաց երա-  
նելին Մաշտոց»: (Այս հիշատակարանը գտնվում է ՊՄԲ (=1403)  
թվականին գրված մի «Ոսկեփորիկ»-ում, որ հրատարակել է Հ. Գ.  
Զարբհանալյան, Մատենադարան, էջ 286 և որ ստուգել է Նորայր,  
«Կորյուն վարդապետ», էջ 28):

Ի. «Ժամանակագրութիւն Աւետիքայ (Զեռագիր Կարինյան Մ<sup>o</sup>  
1741, գրված ՌՄԼէ—1788 թվականին) տալիս է հետևյալ թվա-  
կանները.— Սահակց նստաւ 416—466 թվականներին (այն է 51  
տարի).— Վոսմշապուհը թագավորեց 418—428 (այն է 21տարի).  
— 420 թվականին «ի հինգ ամին Սրբոյն Սահակայ սկիզբն դրպ-  
րութեանս Հայոց»:

Ինչպես ընթերցողը կարող է նկատել, բոլոր վերոհիշյալ ժա-  
մանակագրական տեղեկությունների մեջ՝ համեմատության իբր  
հիմք են բերված Պարսից և Հունաց թագավորների տարիները.  
տեղ-տեղ մաս ունեն նաև Կոստանդնուպոլսի հուլյն պատրիարքնե-

բը: Ոստի մենք էլ կարևոր ենք համարում ամենից առաջ զննչ  
այստեղ և այն շրջանին գահակալող պարսիկ Սասանյան թագավոր-  
ների, բյուզանդական կայսրների և Պուսի հայն պատրիարքների  
ժամանակագրական ցուցակը՝ ճշտված թվականներով:

Շապուհ Բ, 310—379.

Արտաշէր Բ, 379—383 կամ 384.

Շապուհ Գ, 384—388 կամ 389.

Վասմ Գ Կրման, 389—399.

Հազկէրտ Ա, 399—420.

Վասմ Ե, 420—438 կամ 439.

Հազկէրտ Բ, 438/9—457.

Եվգրոսիոս, 360—369.

Տիմոթէոս, 369—379.

Եվագր, 369—370.

Գրիգոր, 379—381.

Մաքսիմոս, 381.

Վաղենտինոս, 364—375.

Վաղես, 364—378.

Թեոդոս Ա Մեծ, 379—395.

Արկադիոս, 395—408.

Թեոդոս Բ, 408—450.

Մարկիանոս, 450—457.

Նեկետարիոս, 381—397.

Հովհաննես Ոսկեբերան, 398—  
404.

Արսակիոս, 404—405.

Ատտիկոս, 405—425.

Միսինեիոս, 426—427.

Նեստոր, 423—431.

Մաքսիմիանոս, 431—434.

Պրոկղ, 434—447.

Փլարիանոս, 447—449.

Անատոլիոս, 449—458:

Հիշյալ ցուցակում գտնված բոլոր թվականները, ինչպես ասա-  
ցինք, գիտական ժամանակագրությամբ ճշտված և ստուգված են,  
մանավանդ Հունաց բյուզանդական կայսրների և Պուսի պատրի-  
արքների թվականները: Գլխավոր աղբյուրներն են Հունաց համար՝  
Գեղեցիի «Համառոտություն Բյուզանդական կայսրների պատմու-  
թյան» (գերմաներենից թարգմ. Մ. Վ. Տեր Մովսիսյան, Վաղար-  
շապատ, 1901), իսկ Սասանյանների համար՝ Nöldeke, Geschichte  
der Perser und Araber zur Zeit der Sasaniden, aus der arabi-  
schen Chronik des Tabari», Layden, 1879): Այս աշխատության  
մեջ (էջ 435), դրված է Սասանյան թագավորների կարգը, իրենց  
ստույգ թվականներով: Սրանից արտատպել է Մալխասյանը, հրա-  
տարակություն «Աստղիկ»-ի (Պետերբուրգ, 1885, էջ 358): Ավելի  
ուշ, հետևաբար, ավելի ճշտված և ստուգված ձևով, նյուդեբերն հրա-  
տարակից Սասանյան պատմության ամփոփումը՝ «Aufsätze zur  
Persischen Geschichte», որ տպվեց նաև «Encyclopädia Britan-  
nica»-ում (1887): Նույնի հայերեն թարգմանությունը հրատարա-  
կեց Ն. Քարամյան, «Պատմություն Սասանյան տերության» (Վա-  
ղարշապատ, 1896): Նյուդեբերն առաջին աշխատության և այս երկ-  
րորդի մեջ կան թվականների տարբերություններ. բայց ըստ որում

երկրորդը ավելի ուշ կազմված և ավելի ստույգ է, մենք էլ մեր թագավորական ցուցակը վերջրինք այս երկրորդինք:

Այս ցուցակի մեջ էլ անորոշ են մնում Պարսից Սասանյան թագավորներից մի քանիսի թվականները, որոնք մեկ տարվա տարբերություն են ցույց տալիս: Շապուհ Գ-ի մահվան թվականն է 388 կամ 389: Սակայն այս կասկածելի թվականներից մի քանիսը մեր ժամանակագրության համար կարևոր չեն: Ամենից ավելի կարևորն է Հազկերտ Բ-ի գահակալության թվականը, որի վրա է հիմնվում մեր ամբողջ հաշորդ ժամանակագրությունը: Դժբախտաբար այս թվականը մի տարով խախուտ է և մենք էլ նրա ստուգությամբ պիտի դբադվենք քիչ հետո:

### 3

Վերևում հիշատակված բոլոր հեղինակների մեջ այն անձը, որ տալիս է ժամանակագրության կողմից ամենից ավելի բազմակողմանի և ամենից ավելի հարուստ, միևնույն ժամանակ՝ իբրև ժամանակակից վստահելի տեղեկությունները, Կորյունն է: Նա, մանավանդ իր վերջին հատվածում, մանրամասն ճշտում է Մեսրոպի գործունեության բոլոր գլխավոր թվականները:

Այս հատվածից տեսնում ենք, որ Մեսրոպը վախճանվել է Հազկերտ Բ-ի թագավորության առաջին տարին. իր կրոնավորական կոչման օրից («համար հաւատոց») մինչև իր վախճանը ապրել է 45 տարի. գրերի գյուտը տեղի է ունեցել կրոնավոր ձեռնադրվելուց 10 տարի հետո, քանի որ գրերի գյուտից մինչև Մեսրոպի մահը տրվում է 35 տարի. Մեսրոպի կրոնավորական 45 տարիներից 6 տարին ընկնում է Վոամ Կրմանին, 21 Հազկերտ Ա-ին; հետևաբար մնացյալ 18 տարին էլ մնում է Վոամ Ծ-ին, որ իրոք նստել է 10 տարի (428—438), այնպես որ  $6+21+18=45$ . կրոնավորական կոչում է ստացել Վոամ Կրմանի շորրորդ տարին:

Այս թվականները ամենաճիշտ կերպով համապատասխանում են իրար և վերի ժամանակագրական ցուցակի մեջ գրված թվականներին: Այսպես, ըստ ժամանակագրության, Վոամ Կրման նստավ 389—399 թվականներին, ուտի թագավորեց 10 տարի: Մեսրոպը կրոնավոր էր դարձել սրա շորրորդ տարին, այն է 393 թվականին, և նրա մահվան ժամանակ արդեն 6 տարվա կրոնավոր էր. իրոք էլ այս երկու թվերի գումարը ( $4+6$ ) տալիս է ճշտիվ Վոամ Կրմանի 10 տարին:

Եթե Մեսրոպը կրոնավոր դառնալուց հետո ապրել է 45 տարի, նշանակում է, թե իր մահը պատահել է 438 թվականին. բայց

այս թվականը պետք է որ համապատասխանի Հազկերտ Բ-ի առաջին տարվան: Ժամանակագրական ցուցակում Հազկերտ Բ-ի համար տրված է 438 կամ 439. Քննենք. թե սրանցից ո՞րը պետք է ճիշտ լինի:

Ասացինք, թե Սասանյան թագավորների ստույգ թվականները տալիս է Նյուլդեքեն: Պարսիկները թագավորի գահակալության թվականները հաշվելու համար մի անհարմար ձև ունեին: Նրանք գահակալության առաջին տարին հաշվում էին ո՛չ թե գահ բարձրացած օրից, այլ նույն տարվա նավասարդից: Այնպես որ տարվա վերջին ամսում գահակալած թագավորն էլ տարնալիս (այսինքն ընդամենը մի ամիս հետո) համարվում էր մի տարի գահակալած (այս մասին տե՛ս հատկապես Nöldeke, «Geschichte», էջ 404 և Գալուստ Տեր-Մկրտչյանի հոդվածը, «Արարատ», 1912, էջ 500—501): Այսպիսով հաճախ կարող էր մինչև մի տարի սխալ առաջնալ թագավորների գահակալության թվականների մեջ: Դրա համար է, որ վերի ցանկի մեջ էլ չորս անգամ ունենք մի տարի տարբերություններ թվականներ:

Հազկերտ Բ-ի գահակալության տարին տրված է 438 կամ 439. օրն ու ամիսը անհայտ են: Տեսնենք, թե ի՞նչ միջոց ունենք մեր պատմության տվյալներով այս երկու թվականներից մին կամ մյուսը հաստատելու:

Ըստ Իսահակ Հարությունյանի («Հայոց գիրք», էջ 349), Հազկերտի թագավորության թվականը կարող ենք ստուգել նախ Ծղիշի միջոցով: Այս մատենագրի պատմության մեջ Հազկերտ Բ «ի սկզբբան երկոտասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ գունդ գումարէր անհամար բազմութեամբ, յարձակեալ հասանէր յերկիրն Թիտաշական»։ այնուհետև սկսվում են հայոց կրած նեղությունները. հայերը թուղթ են գրում Թեոդոս կայսեր, որ ուզում է օգնել հայերին, բայց «ի նմին ժամանակի անդէն վաղվազակի հասանէր վախճան կատարածի կենաց նորա և կարի շար խափանումն լինէր գործոյն օգնականութեան»: Թեոդոս Բ մեռավ 450 թվականի հունիսի 28-ին (Նյուլդեքեն, «Geschichte», էջ 423), և եթե այս թիվը Հազկերտի 12-րդ տարին է, ուստի Հազկերտ գահակալել է 438 թվականին և ոչ թե 439-ին:

Երկրորդ, ըստ նույն հեղինակի (էջ 350), ստուգման միջոց է նաև Ղաղար Փարպեցու վկայությունը: Սա խոսելով Վարդանանց պատերազմի մասին, այս դեպքը դնում է Հազկերտի 13-րդ տարին. «Արդ իաղացուցեալ զամենեսեան զնոսա առաջի իւր յերկիրն Պարսից նենգաւորն Վասակ, յերեքտասաներորդում ամի Հազկերտի արքային Պարսից (Փարպեցի, Բ, խբ): Որովհետև Վարդանանց պա-

տերազմը տեղի ունեցավ 451 թվականին, ուստի սրանից 13 տարի հետ երթալով, գտնում ենք Հազկերտի գահակալության թվականը 438 և ոչ թե 439:

Երրորդ, մեր կողմից ավելացնում ենք Կորյունի վկայությունը վերի հատվածում. Կորյունն ասում է, թե Մեսրոպը Վոամ Կրմանի շորրորդ տարին կրոնավոր դառնալով՝ 45 տարի հետո՝ վախճանվեց Հազկերտի առաջին տարում: Վոամ Կրմանն նստել է 389 թվականին. իր շորրորդ տարին է 393 թվականը. այս թվի վրա ավելացնելով 45 տարին, կստանանք 438, որ պիտի լինի Հազկերտ Բ-ի գահակալության թվականը և ո՛չ 439, որովհետև վերջին դեպքում Մեսրոպ 46 տարի հոգևոր պաշտոն վարած պիտի լիներ: Իսկ եթե հարկ լիներ Հազկերտի գահակալությունը դնել 439-ին և սրանից 45 տարի հետ երթալով, Մեսրոպի կրոնավորությունը 394 թվականին համարել, այն ժամանակ այս թվականը կհակասեր Կորյունի հաշիվներին, որովհետև 394 թվականը ո՛չ Վոամ Կրմանի շորրորդ տարին է և ոչ էլ այս թվականից հետո կարող է մնալ 6 տարի, մինչև Վոամ Կրմանի մահը:

Չորրորդ, իմ կողմից ավելացնում եմ դարձյալ Ասողիկի տրված տեղեկությունը, թեև այս վերջինը ժամանակակից չլինելով, մեծ արժեք չունի. «Ստուգեալ մեր զամս թագաւորացն գտաք հանդիպեալ ի ժն ամն Յազկերտի և յերրորդն (յԳն) Մարկիանոսի անիծելոյն» (էջ 79): Ուրեմն Հազկերտի 15-րդ և Մարկիանոսի 3-րդ տարին համապատասխանում են իրար: Մարկիանոսը նստավ 450 թվականին, իր երրորդ տարին է 453, որից հանելով 15 տարի, ունենում ենք Հազկերտի թագավորության թվականը 438 և ո՛չ թե 439: (Դժբխտաբար այստեղ էլ՝ Վարդան պատմիչը, որ հիշատակում է Ասողիկի վերոհիշյալ վկայությունը, մի տարի սխալ է դրնում. «Ասողիկն ասէ, թէ ստուգեցաք զվեշտասաներորդն Յազկերտի՝ երրորդ ամ Մարկիանոսի» (էջ 54): Բայց սա չի խանգարում մեր գործը, որովհետև Մարկիանոսը նստած լինելով 450-ին, իր երրորդ տարին լինելով 453, այս թվից եթե 16 էլ հանենք, կունենանք Հազկերտի գահակալության համար 437 և ոչ թե 439:

Վերոհիշյալ ապացույցներից առաջին երկուսը, որ դրինք Իսահակ Հարությունյանից վերցնելով, գիտե նաև Նյուդեբեքեն («Geschichte», էջ 423): Նա հիշում է նաև մի ուրիշ ապացույց, որ հանում է Ասողիկից և որ հետևյալն է.

Փարպեցին (տպ. 1904, էջ 101) խոսելով Ղևոնդյանց նահատակության մասին, ասում է. «Նւ այսպէս ի վեշտասաներորդում ամի թագաւորութեան Յազկերտի, որ օր քսան և եօթն էր ամսոյն հրոտից, պսակեցան սուրբքն վեցեքեան»: Այս դեպքը պատմելով

Ասողիկը էջ 79-ում (Բ, գլ. Բ) ասում է, «Եւ յետ պատերազմին Վարդանայ՝ զկնի երկուց ամաց սուրբ Ղևոնդեանց Տովսեփաւ հայրապետաւ կատարեցան յամենանն հրոտից, որ օր ԻԶ էր ամսոյն, ետն յուլիսի՝ յատր կիրակէիս: Գյուլորիքն իր ժամանակազրութիւն մեջ (էջ 203—204) քննելով այս տվյալները, գտնում է, որ

453 հուլիսի կամ Հրոտիցի 26 = կիրակի.

454       »       »       »       25 = կիրակի.

Մենք յուզեցիք օգտագործել այս հաշիվը, իբր շատ անվտանգանի, որովհետև 1) Փարպեցու Վենետիկյան տպագրութիւնները ունեն 25 Հրոտից. 1904 թվականի հրատարակութիւն մեջ նշվում է, որ բնագիրն ունի ԻԾ, լուսանցքում ուղղած էր ԻԷ, իրենք ընդունել են «քսան և հօթն». հարց է, թե բնագիրն է ուղիղ թե՞ լուսանցագրութիւնը. 2) Փարպեցին օրվա պատկերը չի նշանակում. 3) Ասողիկը դնում է Հրոտից ԻԶ, օրն էլ կիրակի. 4) Ի՞նչ գրավական ունենք Ասողիկի (500 տարի ուշ եկող մի հեղինակի) տված կիրակիին:

Ցավալի է, որ Նյուդեքեն օգտագործել է միայն Եղիշեն, Փարպեցին և Սեբեոսը (Եվրոպական թարգմանութիւններից) և չի տեսել վերջին համահավաք տեղեկութիւնը: Այնուամենայնիվ Նյուդեքեն տրամադիր է ընդունելու Հազկերտ Բ-ի գահակալութիւն թվականը 4 օգոստոս 438—29 հուլիս 457 (էջ 426): Մենք էլ ընդունում ենք 438 թվականը, որ և համապատասխանում է Կորյունի հաշիվներին:

Բայց Մեարոպի մահվան ժամանակի հետ պետք է որ համաձայն դան նաև Սահակի և Մեարոպի մահվան ամիսները: Վերևում հիշատակված բոլոր պատմագիրների համաձայնութիւնը Սահակը վախճանվել է Հազկերտ Բ-ի առաջին տարին, նավասարդի 30-ին, իսկ Մեարոպը՝ նրանից 6 ամիս հետո՝ Մեհականի 13-ին: Անշարժ տոմարի հաշվով նավասարդի 30-ը համապատասխանում է սեպտեմբերի 9-ին: Բայց որովհետև Ն դարում չկար անշարժ տոմարի հաշիվը, ուստի անմտութիւն է Սահակի մահը դնել սեպտեմբերի 9-ին, ինչպես անում են «Յայսմատուրք»-ը և արդի պատմիչների մի մասը: Ըստ շարժական տոմարի 436, 437, 438 և 439 քառամյակին նավասարդի 1-ը համապատասխանում էր օգոստոսի 9-ին, ուստի նավասարդի 30-ը կլինի սեպտեմբերի 7-ին. հետևաբար Սահակի մահը տեղի ունեցավ ճիշտ 438 թվականի սեպտեմբերի 7-ին:

Սրանից 6 ամիս հետո, այն է 439 թվականի Մեհականի 13-ին մեռել է Մեարոպ: Մեհականի 13-ը անշարժ տոմարով համապատասխանում է փետրվարի 19-ին, ինչպես դնում են «Յայսմա-



տւրք»-ը և նոր պատմիչներ: Բայց այս ամսաթիւը չի կարող ճիշտ լինել: Պետք է առնել շարժական տոմարը, որի համաձայն 436—439 քառամյակին Մեհհեկանի 13-ը ընկնում է փետրվարի 17-ին: Հետևաբար և Մեսրոպի մահը տեղի ունեցավ 439 թվականի փետրվարի 17-ին, ուրբաթ օրը:

Այստեղ դիտելու երկու կետ կա. 1) Սեպտեմբերի 7-ից մինչև փետրվարի 17 ո՛չ թե 6 ամիս է, այլ 5 ամիս 10 օր: Կորյունը և ուրիշները դնում են 6 ամիս՝ կլոր թվով: 2) Կորյունը Մեսրոպի մահը դրել էր Հազկերտ Բ-ի առաջին տարին, որ մենք հանեցինք 438 թվականից. այժմ ավելի մանրամասն հաշվով մենք գտնում ենք 439 թվականը, բայց դա ոչ մի հակասութուն չի ներկայացնում, որովհետև Կորյունն ասում է, թե Մեսրոպի մահը տեղի ունեցավ Հազկերտի առաջին տարում և այդ առաջին տարին սկսվում է 438-ից և գնում է մինչև 439-ի կեսերը:

Գրերի գյուտը տեղի ունեցավ Մեսրոպի կրոնավորական կոչում ստանալուց 10 տարի հետո, մահվանից 35 տարի առաջ: Մահվան թվականի ամսաթիվով հանդերձ ճշտված լինելով՝ հետ դանք 35 տարի, կստանանք 404 թվականը: Այս թվականը կրոնավորական կոչումից 10 տարի հետո պիտի լինի. և իրոք, 393-ի վրա ավելացնելով 10, կստանանք 403. Կորյունը չի հաշվել մնացորդ մի-երկու ամիսը, որով կունենանք 404, գրերի գյուտի ճիշտ թվականը:

Սրանք են ահա մեզ համար ամենակարևոր և ստուգված թվականները.

394—Մեսրոպի ձեռնադրութունը.

404—գրերի գյուտը.

438 սեպտեմբերի 7—Սահակի մահը.

439 փետրվարի 17—Մեսրոպի մահը:

#### 4

Մեսրոպի ժամանակագրութունը ճշտիվ վերականգնելու ժամանակ պետք է նկատի ունենալ, որ թե՛ Կորյունի և թե՛ մյուս պատմագիրների մեջ կան մի քանի թվական անճշտութուններ, որոնք առաջացած են ձեռագրական վրիպակներից և խանգարիչ են հանդիսանում գործին:

Այս վրիպակները պատճառ են եղել ոմանց համար տարբեր եզրակացութուններ հանելու, տարբեր թվականներ դնելու, սրանով էլ դրդել են ուրիշներին նորանոր քննութուններով հաճախ ժայրահեղութունների դիմելու: Ուստի անհրաժեշտ ենք համարում այստեղ քննարկել նախ այդ անճշտութունները և երկրորդ՝ քննադատների խժրժանքները:

1. Առաջին քվադան անճշտութիւնը Կորյունի պատմութեան մէջ հետեւյալն է.

Կորյունը (տպ. Վենետիկ, 1894, էջ 17) պատմում է, թէ Գանիեւլյան եշանագրերը Վոամշապուհի հինգերորդ տարին Լաւաստան բերվեցին. «ի հինգերորդի ամի քաղաւորութեան նորա ի նա հասուցանէր»: Մեսրոպը այդ տառերը փորձեց երկու տարի. «իբրև ամա երկու կարգեալ զվարդապետութիւն իւր և նովին եշանագրովք տանէր»: Այնուհետև Մեսրոպը տեսնում է, որ թերի են այդ տառերը և մեկնում է Միջագետք՝ նոր խուզարկութիւններ կատարելու համար, դարձյալ Վոամշապուհի հինգերորդ տարին, «սաղայր զնայր ի հինգերորդ ամի Վոամշապուհոյ արքային Լաւոյց» (էջ 18): Եղեսիայում և Սամուսատում մի ժամանակ աշխատելուց հետո, հայերեն տառերը գտած դառնում է Լաւաստան, «ի վեցերորդ ամի Վոամշապուհոյ արքայի Լաւոյց Մեծացոյ»:

Ամեն մի ընթերցողի համար էլ հայտնի է, որ երկու հինգերորդ-ներից մեկը սխալ է: Բանասերները զանազան քացատրութիւններ են տվել սխալը ուղղելու համար: Չամշյանը (Ա, էջ 763), մտածում է, թէ Կորյունի հիշած առաջին հինգերորդ տարին վերաբերում է ո՛չ թէ Գանիեւլյան գրերի գլուտին, այլ, ըստ Փարպեցու, Մեսրոպի քարոզութեան սկզբնավորութեան: Կորյունի վերջաբանից հայտնի է, որ Մեսրոպի քարոզութեան սկսելուց մինչև գրերի գլուտը անցավ տասը տարի. ուստի եթէ Մեսրոպի քարոզութեան սկզբնավորութիւնը տեղի ունեցավ ըստ Չամշյանի Վոամշապուհի հինգերորդ տարին, գրերի գլուտն էլ տեղի ունեցած պիտի լինի նրա 15-րդ տարին: Այս մտածութեամբ Չամշյանը Կորյունի առաջին հինգերորդը բար անփոփոխ պահելով, երկրորդ անգամ հիշված 6 թիւը դարձնում է 16 և նրա հաջորդ 9 տարին էլ դարձնում է 19, համարելով, թէ գրիչների անճշտութեամբ 6 տառը հետո ընկել է:

Բայց այս բոլորը անշուշտ սխալ է. նախ՝ որովհետև Կորյունը հայտնապես ասում է, թէ այս հինգերորդ տարին Գանիեւլյան տառերը բերելու տարին է և կարիք չկա դարձնելու Մեսրոպի քարոզութեան սկզբնավորութեան: Երկրորդ՝ սրանով անտես է առնվում Կորյունի տված երկու տարին՝ Գանիեւլյան տառերի փորձարկութեան համար:

Իսահակ Լարութիւնյանն էլ («Լաւոյց դիրք», էջ 337—338) մտածում է, որ եթէ Մեսրոպը, ըստ Փարպեցու, Վոամշապուհի հինգերորդ տարին եկավ Սահակի մոտ, չի կարող այս տարին նրա քարոզութեան առաջին տարին համարվել (ինչպես անում է Չամշյան), որովհետև նույնիսկ Կորյունի վկայութեամբ Մեսրոպը Սա-

հակի մոտ գալուց առաջ՝ երկար ժամանակ քարոզած էր Գողթան գավառում. հետևաբար զուր են Չամչյանի ժՆ, ժԶ, սրբագրությունները:

Ոմանք էլ Կորյունի առաջին հինգերորդ-ը պահում են անփոփոխ, և որովհետև Դանիելյան նշանագրերի փորձարկությունը երկու տարի տևեց, երկրորդ հինգերորդ-ը դարձնում են եօթներորդ, ասելով, թե Ե (5) և է (7) տառերը շատ հեշտ էր շփոթել: Այսպես է վարվում, օրինակ, Հ. Հ. Քորոսյանը («Բաղմավեպ», 1922, էջ 101): Բայց այս դեպքում հաջորդ վեցերորդ բառն էլ հարկ պիտի լիներ փոխել ութերորդ:

Ուրիշներ այսքան փոփոխություն շատ համարելով, Դանիելյան գրերի փորձի համար Կորյունի նշանակած ամս երկուս բացատրությունը դարձնում են ամիսս երկուս, որով բոլոր մյուս թվերը մնում են անփոփոխ: Այսպես է վարվում, օրինակ, Իսահակ Հարությունյանը (անդ, էջ 17): Սրանով եթե Դանիելյան գրերը ուղարկվեցան Վառձապուհի հինգերորդ տարին, փորձն եղավ նույն տարին, Մեսրոպ ճամբորդության դուրս եկավ դարձյալ նույն հինգերորդ տարին և վերադարձավ վեցերորդ տարին: Այս սրբագրությունը հարմար կլիներ նաև այն նկատումով, որ գրերը փորձելու համար տրված երկամյա շափազանց երկար միջոցը կարճացած և երկամսյա պատշաճալոր ժամանակի վերածված կլիներ: Սակայն այս սրբագրությունը անհարմար է այն տեսակետով, որ Կորյունից հետո Դանիելյան գրերի փորձի վրա խոսող մյուս հեղինակներն էլ տարի գիտեն և ոչ ամիսներ: Այսպես, Խորենացին այս փորձը համարում է «զամս սակաւս», Սամվել Անցին «զԴանիէլի նշանագիրսն յօրինէին... յետ միոյ ամի դարձեալ աստուածատուր նշանագրօք» և այլն:

Ավելի մճռական է Մարկվարտը («Պատմություն հայ նշանագրերու», Վիեննա, 1913, էջ 27), որ Կորյունի սույն հատվածից «Ե իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր» բառերը ամբողջովին հետին լուսանցագրություն է համարում և ջնջում է, որով դարձյալ երկու հինգերորդ-ները կմնան, ենթադրելով, որ փորձարկության միջոցը շատ կարճ էր, և Մեսրոպը հենց Դանիելյան գրերը ստացած տարին էլ մեկնեց Ասորիք: Գրեթե նույն ձևով է վարվում Ակիլյանը, որ («Հանդես ամսօրյա», 1935, 457) ամբողջ հատվածը փոխադրում է ուրիշ տեղ և մի մասն էլ ջնջում է, իսկ (անդ, էջ 512) երկու տարին բոլորովին դուրս գցելով, ասում է, որ Սահակը և Մեսրոպն առաջին հայացքով իսկ համոզվեցին, թե այդ նշանագրերը հարմար չեն և խիբր անպետք մեկտեղ նետեցին»:

Գալուստ Տեր-Մկրտչյանը (սևուրացի, 1912, էջ 508 և 511) նկատում է սխալը, առաջին հինգերորդ-ը համարում է ուղիղ, երկրորդը անորոշաբար գրում է «Տի...երորդ», իսկ վեցերորդ-ը դարձնում է ԺԶ փոխանակ Զ (16-րդ տարին, փոխանակ 6-րդի)։ Մրանով երկու տարվա հաշիվը մնում է առանց բացատրության։

Տնտեսական Կորյունի քննական հրատարակության մեջ (Երուսաղեմ, 1930, էջ 18), սխալ է համարում երկրորդ հինգերորդ-ը, որովհետև, ասում է. «Դանիելյան նշանագիրներուն յանկարծագրիս հասնիլը ավելի տպավորիլ ըլլալով՝ ժամանակը ավելի ճշտիվ պահված ըլլալու է»։ Կարծես թե սխալը Կորյունը կատարած լինե՞ր և ոչ թե հետին գրիչները։ Այնուամենայնիվ, էջ 21-ում վեցերորդ բառը անփոփոխ պահվում է։

Վերջապես Օրմանյանը (սևուրացի, Պոլիս, 1912, Ա, էջ 277) մատնանշում է սխալը, բայց ո՛չ մի փոփոխություն չի առաջարկում, ասելով, թե «թվականներու հարմարությանց համար ավելի երկարելը ձանձրալի կրնա դառնալ»։

Ամենից ճիշտ սրբագրությունը առաջարկեց Մալխասյանը։ Այս սրբագրությամբ Կորյունի հիշած թվականների մեջ առաջին հինգերորդ բառը պետք է դարձնել երրորդ, որով ամեն ինչ ուղղվում է և բոլոր անպատեհությունները հեշտությամբ վերանում են, անփոփոխ պահելով Կորյունի վեցերորդ-ը, երկու ամ-ը և երկրորդ հինգերորդ-ը։ Մալխասյանից շատ հետո, բայց անկասխաբար նույնը մտածեցի նաև ես և գրեցի այս մասին Արմֆանի տեղեկագրում (1941, № 1, էջ 170)։ Սխալը բացատրել եմ հետևյալ ձևով։ Կորյունի ձեռագրում գրված է եղել Երդ (համառոտագրված և առաջին տառի վրա պատյի նշան դրած), որ բնականաբար պիտի կարդացվեր «երրորդ»։ Մի խեղճ գրիչ, վրան պատիվ դրած Ե-ը թվանշան համարելով, կարդացել է հինգերորդ։ Մնացյալը պահել է ճիշտ նախկին ձևով, առանց անդրադառնալու, թե 5+2 չի տա 5։

Ուրեմն եզրակացնում եմ, որ Դանիելյան գրերը Հայաստան ուղարկվեցին Վոսաճապուհի երրորդ տարին, փորձը եղավ երկու տարի, Մեսրոպը Միջագետք գնաց Վոսաճապուհի հինգերորդ տարին, մի տարի մնաց Եղեսիա և Սամուստ, վերադարձավ Հայաստան Վոսաճապուհի վեցերորդ տարին։

2. Երկրորդ թվական անճշտությունը պատկանում է Փարպեցուն և Խորենացուն։ Սահակի մահվան թվականը որոշելու համար, Փարպեցին ասում է «ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի որդույ Վոսմալ»։ Ճիշտ նույն ձևով ունի նաև Խորենացին, որ ասում է «սկիզբն ամին երկրորդի Յազկերտի եղելույ Պարսից թա-

գաւորի»։ Այս երկուսից պարզ երևում է, որ Սահակը վախճանվել է Հազկերտի (Բ-ի) երկրորդ տարվա սկիզբը։ Այս հաշիվը հակառակ է գալիս Կորյունին, որ Սահակի մահը դնում է Հազկերտի (Բ-ի) երկրորդ տարին։

Բայց այս հաշիվը ո՛չ միայն հակառակ է Կորյունին, որ նույնը կրկնում է երեք անգամ և հանգամանորեն, ո՛չ միայն հակառակ է Փոքր Կորյունին, Կաղանկայտվացուն և Գանձակեցուն, որոնք հայտնապես հիշում են Հազկերտ Բ-ի «առաջին տարին», այլև հակառակ է նույնիսկ իրեն՝ Խորենացուն, որ մի քիչ վերև, ավելի մանրամասն խոսելով ժամանակակից դեպքերի մասին, ասում է. «Ձ21 ամ թագաւորեալ Պարսից Վռամ՝ մեռանի, թողլով զպէրու-թիւնն որդւոն իւրոմ Յազկերտի։ Որոյ մոռացեալ զհաշտութիւնն. իսկ և իսկ ընդ թագաւորելն դիմէ ի վերայ զօրացն Յունաց... Յայնժամ մեծին Սահակայ հասեալ հիւանդութիւն մահու»։

Եթե Հազկերտ իսկ և իսկ թագաւորած միջոցին դիմել է Հունաց վրա՝ և նույն միջոցին էլ վախճանվել է Սահակը, ուրեմն դա Հազկերտի առաջին տարին է և ոչ երկրորդը։

Հաշիվը հակառակ է դարձյալ Մեսրոպի մահվան թվականին, քանի որ Մեսրոպը՝ բոլոր պատմագիրների համաձայն վկայությամբ մեռել է Սահակից 6 ամիս հետո, որ համապատասխանում է ըստ Կորյունի՝ դարձյալ Հազկերտի առաջին տարվան։

Այս բոլոր թյուրիմացությունները կլիբրանան, եթե Փարպեցու և Խորենացու հիշյալ հատվածները մի քա տառի հավելումով սրբագրենք հետևյալ ձևով.

«Ի սկզբան Ա ամին երկրորդի Յազկերտի...»

«Սկիզբն Ա ամին երկրորդի Յազկերտի...»

այսինքն երկու հաջորդական ա-երից մին ընկել է, ինչ որ շատ սովորական երևույթ է գրչագրերի մեջ։ Սրանով երկրորդի բառը անցնում է Հազկերտին և ամեն ինչ կարգի է ընկնում։

Այս նկատողությունը արել է Նորայրը («Կորին վարդապետ», էջ 388), որին համամիտ է նաև Օրմանյանը («Աղագայտ-տում», Ա. էջ 321)։ Բայց Օրմանյանը սխալվում է մի կետում. նա (էջ 319) Վռամի մահը և Հազկերտ Բ-ի գահակալությունը դրնում է 438 թվականին և ընդունելով հանդերձ, որ Սահակը մեռավ Հազկերտ Բ-ի առաջին տարին, Սահակի մահը դնում է (էջ 321) 436-ին, Մեսրոպի մահն էլ 437-ին։ Թյուրիմացությունը ակնհերև է, ուստի և տպագրական սխալ, փոխանակ 438 և 439։

3. Երրորդ թվական անճշտությունը դարձյալ Կորյունին է պատկանում։ Իր համահասված տեղեկության առաջին մասում, Կորյունը մանրամասն հաշվարկելով Մեսրոպի կյանքը, գտնում է

որ նրա մասը եղել է 439 թվականին, իսկ դպրութիւն սկիզբը՝ 35 տարի առաջ, այն է՝ 404: Իսկ նույն տեղեկութիւն վերջին մասում ասում է, թէ դպրութիւն սկիզբը Հազկերտի ութերորդ տարումն է: Հազկերտ Ա նստավ 399 թվականին, ուստի նրա ութերորդ տարին լինում է 406, երկու տարի տարբեր նախորդից: Այս երկուսից մեկը սխալ է: Բայց որովհետեւ առաջին մասում հաշիվը շատ մանրամասն է և ճիշտ համաձայն Մասանյան պատմութիւն, ուստի կարելի չէ սխալ համարել: Սխալը երկրորդն է:

Մարկվարտը և Նորայրը ուղղում են այս ութերորդը. Մարկվարտ («Պատմութիւն հայ նշանագրերու», էջ 57) դարձնում է 6 (հինգերորդ), որով գրերի գյուտի թվականը լինում է 402<sup>2</sup>/<sub>3</sub>, իսկ Նորայրը ութերորդը դարձնում է վեցերորդ, որով գրերի գյուտը դառնում է ճիշտ 404:

Օրմանյանը («Ազգապատմ», Ա, էջ 277) մի ուրիշ բացատրութիւն է տալիս. ընդունում է Կորյունի առաջին թվականը (404)՝ իբրև Դանիելյան գրի գյուտի թվական, իսկ երկրորդը՝ 406 (անփոփոխ պահելով Կորյունի «յութերորդ ամէ Յազկերտի») համարում է Մեսրոպյան գրերի գյուտի թվականը: Չենք ընդունում այս բացատրութիւնը, որովհետեւ՝ 1) ըստ մեզ Մեսրոպյան գրերը գտնվեցան 404-ին, Դանիելյան գրերը 401-ին, 2) կարելի չէ Կորյունի համահավաք տեղեկութիւն առաջին կեսը մի հաշիվով դնել, երկրորդ կեսը ուրիշ հաշիվով:

Տնտգլյանը Կորյունի հրատարակութիւն մեջ (էջ 76) ուրիշ հաշիվ է անում Հազկերտ ութերորդ-ը անփոփոխ պահելու համար նա ենթադրում է, թէ Կորյունը սխալ է իմանում Վասմկրմանի թագավորած տարիների թիվը (6 փոխանակ 10) և Հազկերտ Ա-ին գահ է բարձրացնում 396 թվականին (փոխանակ 399), որով Հազկերտի ութերորդ տարին (396+8=404) լինում է ճիշտ դպրութիւն սկիզբը: Սրան ասում են ունքը շինելու տեղ աչքը հանել, փոխանակ ութերորդը վեցերորդ շինելու (մի՞ սխալ միայն) ենթադրում է երկու սխալ: Բայց սրանով շատ բան է խանդավում, այն ժամանակ Հազկերտ Ա-ի թագավորութիւն 21 տարին էլ պետք է փոխել և դարձնել (396—421)՝ 25 տարի: Մենք հետոցուց կտանք, որ Կորյունի բոլոր թվերն էլ ճիշտ են, միայն Հազկերտի ութերորդ-ը պետք է դարձնել վեցերորդ:

4. Կարևոր է ճշտել, թէ երբ Կորյունը ասում է գրի գյուտի սկիզբը («Դպրութիւն Հայոց»), ո՞ր գիրն է հասկանում, Դանիելյան, թէ Մեսրոպյան: Այս կետը կարևոր է նրա համար, որ իմանանք, թէ այն 404 թվականը, որ վերևում նշանակեցինք իբրև գրերի գյուտի թվականը, իրապես ո՞ր գրի համար է:

Կորյունի խոսքերից և նրա համահավաք տեղեկութունից ոչինչ չի հասկացվում: Նա պարզապես ասում է «ի դպրութենէն Հայոց մինչև ցվախճան սրբոյն՝ ամբ 35... և դպրութեանն Հայոց յութեորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն»:

Այս հարցով առանձնապես դբադվել է Գալուստ Տեր-Մկրտչյանը («Արարատ», 1912, էջ 505): Նա ասում է. «Գրի գլուտի պատմութիւնը տեական գործողութիւն է: Ի՞նչ մոմենտն էին համարում նախնիք, հատկապես հինգերորդ դարում, այդ գործողութիւն սկիզբը, որից և հաշվում էին այդ գլուտի տարիները»: Ապա, աջ ու ձախ որոնումներ անելուց հետո, գրի գլուտի սկիզբը համարում է Դանիելյան գրերի Վաղարշապատ բերվելը «405 թ. փետր. 25» (տե՛ս էջ 512): Սրա համար տալիս է երկու ապացույց, այն է Կորյունի և Փարպեցու վկայութիւնները: Կորյունի համար ասում է ասկզբնակետը, որից հաշվում է Կորյունը հայ դպրութիւն տարիները՝ Դանիելյան տառերի Վաղարշապատ բերվելու և Վոսմշապուհի թագավորութիւն հինգերորդ տարիներն են, այն է, ինչպես տեսանք, 405-ը» («Արարատ», էջ 505—506): Իսկ Փարպեցու համար մեջ է բերում այն փաստը, որ նա հայերեն գիր ասելով հասկանում է միայն Դանիելյան գիրը և ամենևին չէ էլ հիշում ո՛չ Մեսրոպի Ասորիք գնալը, ո՛չ այնտեղ տառեր հնարելը և այլն: Ըստ Փարպեցու, Դանիելյան նշանագրերն են սկիզբ և վերջ ամեն բանի:

Բայց ինչպես քիչ առաջ տեսանք, Կորյունի ասածների մեջ ոչ մի ակնարկ չկա այն մասին, թե դպրութիւն սկիզբը ո՛ր տեղից պետք է հաշվել: Նա միայն ասում է, թե դպրութիւն սկզբից մինչև Մեսրոպի մահը 35 տարի է: Գալով Փարպեցուն, շատ երկար ենք խոսել նրա մասին: Հիշենք այստեղ Մարկվարտի որակումը. «Ղազար արժանի է սաստիկ կշտամբանաց այս փորձին համար, զոր պետք ենք իբրև պատմական անպատկառ խարդախութիւն մը մատնանիշ ընել»:

Գիտենք, որ Դանիելյան գրերը բերվեցին Վոսմշապուհի երկրորդ տարին, իսկ Մեսրոպը հնարեց հայերեն գրերը Վոսմշապուհի վեցերորդ տարին: Եթե մենք ճիշտ կերպով իմանայինք Վոսմշապուհի գահակալութիւն թվականը, անմիջապես կարող էինք հետևեցնել նաև, թե՛ Դանիելյան գրերի, թե՛ Մեսրոպյան գրերի և թե՛ հայ դպրութիւն սկզբնավորութիւն ճիշտ թվականները: Բայց բանն այն է, որ Վոսմշապուհի թվականն է անստույգ և հանվում է միայն գրերի գլուտի հաշվից: Այնպես որ եթե Կորյունը դպրութիւն սկիզբը համարում է Դանիելյան գիրը, ուրեմն Վոսմշապուհի գահակալութիւնը եղել է 402 թվականին: Այս թը-

վականը ձեռք ենք բերում այսպես. Մեսրոպի Ճահճան թվական  
ենք (439) հանում ենք 35 տարի (դպրության սկիզբը), ստանում  
ենք 404, որ է Վոսմշապուհի երրորդ տարին, որից հետո գնալով  
2 տարի, ստանում ենք 402՝ Վոսմշապուհի զահակալության ըս-  
կիզբը կամ առաջին տարին: Իսկ եթե Կորյունը դպրության սկիզ-  
բը համարում է Մեսրոպյան գիրը, ուրեմն Վոսմշապուհի զահա-  
կալությունը եղել է 399 թվականին, 404-ը համարելով նրա վե-  
ցերորդ տարին:

Այս երկուսից մեկն ու մեկը ճշտել և ստուգել առ այժմ ան-  
կարելի է:

Բայց ես կարծում եմ, որ Կորյունը գրերի գյուտը և դպրու-  
թյան սկիզբը ասելով հասկանում է Մեսրոպյան գիրը (և ոչ Գա-  
նիելյանը): Գանիելյան գիրը փուշ դուրս եկավ, և երկու տարվա  
փորձից հետո դեն գցեցին. և այնտ այնորիկ դարձնել կրկին ան-  
գամ ի նույն հոգս դառնային, և նմին հյս խնդրէին ժամանակս  
ինչ» (Կորյուն): Ի՞նչ բանի համար են Մեսրոպի և իր աշխատա-  
կիցների թզաղօթս և զարեութիւնս և զպաղատանս արտասուայից,  
ղխատամբերութիւնս, զհոգս զաշխարհահեծս: Ի՞նչ բանի համար է  
կրկնում մարգարեի խոսքը, թե ճորժամ հեծծեցես, յայնժամ  
կեցցես: Ավելացնենք սրա վրա, «և այնպէս բազում աշխատու-  
թեանց համբերել վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտա-  
նելոյ: Որում պարզէէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ,  
հայրական շափուն ծնանել ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ ա-  
ջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին» (Կորյուն):

Զեմ խոսում այն հիացական համեմատության վրա, որ անում  
է Կորյունը Մեսրոպին տառերը ձեռքին նմանեցնելով աստուածա-  
տես Մովսեսին, որ տասնաբանյա պատվիրանով իջնում է Սինա  
սարից. «ընդ մեծին Մովսէսի, ընդ աստուածախօսին, սքանչելա-  
գործին նմանեցուցեալ հաւասարեացս: Ինչի՞ համար են այն օրեր  
տևող տոներն ու հանդեսները, որով նախարարներն ու ամբոխը  
ցնծում, ուրախանում են: Վերջապես ինչի՞ համար է այն հրճվալի  
նկարագիրը, որ տալիս է Կորյունը, թե այնքան ժամանակի երա-  
նելի և ցանկալի աշխարհս Հայոց, անպայման սքանչելի լինէր...  
Անդ էր այնուհետև սրտալիր ուրախութիւն և ակնվայել տեսիլ  
հայելոյն...», և այսպես երկու էջ ներքող ու զովասանք:

Այս բոլորը Մեսրոպյան գրերի համար է և ո՛չ թե Գա-  
նիելյան:

Ասում են մինչև անգամ, թե Թարգմանչաց տոնը, որ ամեն  
տարի տոնում է Հայ Եկեղեցին, Ռա՛հ գետի հանդիպման հիշա-  
տակն է:



Այսպիսով մենք կարծում ենք, որ հայ դպրութեան սկիզբը 404 թվականն է, Մեսրոպյան գրերի գյուտը Վուամշապուհի վեցերորդ տարում (Վուամշապուհը գահակալել է 399 թվականին), հետևաբար Դանիելյան գրերը Հայաստան են եկել 401 թվականին, այն է Վուամշապուհի երրորդ տարին:

5. Հայերեն տառերի գյուտի թվականը համարվել է սովորաբար 404 թվականը: Այս հարցի վերաբերմամբ մի ցնցող հոդված հրատարակեց Գալուստ Տեր-Մկրտչյանը «Արարատ» ամսագրում (1912, էջ 499—514), որով հերքում է այդ թվականը և դնում է ութից մինչև տասներկու տարի ավելի ուշ, 412—416 թվականին: Նա հիմնվում է ասորոց եպիսկոպոս Ռաբուլասի վրա: Այս նշանալի մարդը գահակալեց 412 թվականին: Եթե Մեսրոպ Եղեսիս գնալով ընդունվեց Ռաբուլաս եպիսկոպոսից, այդ ընդունելությունը կամ հանդիպումը շեղ կարող 412 թվականից առաջ լինել, բայց այդ կարող էր լինել նաև 412-ից հետո («Արարատ», էջ 509): «Այդ թվականից առաջ, մեր ունեցած տեղեկությունների հիման վրա, անհնար է դնել Մեսրոպյան տառերի գյուտը: Թերևս այդ գյուտը ասորական հետեյալ տարումն է (412 սեպտեմբեր—413 սեպտեմբեր). բայց հավանորեն ոչ դրանից ավելի ուշ» («Արարատ», էջ 513): Չորս տարի էլ հաշվում է Սամուսատ գնալու, Հուսիանոսին պնակիտը պատրաստել տալու և Առակաց գիրքը թարգմանելու համար և վերջապես 416-ին վերադարձնում է Հայաստան:

Այսպիսով, ըստ Գալուստ Տեր-Մկրտչյանի, բուն Մեսրոպյան գրերի գյուտի թվականն է 412—416 քառամյակը («Արարատ», էջ 513): Այս 416 թվականին է, որ Մեսրոպը վերադարձաւ Հայաստան:

Հակառակ եմ Գ. Տեր-Մկրտչյանի ենթադրության, ես պահում եմ 404 թվականը հետևյալ պատճառաբանություններով:

Գալուստ Տեր-Մկրտչյանի հոդվածին նման մի հոդված էլ ունի Ն. Ն. Թորոսյանը («Բազմավեպ», 1922, էջ 99—104), որի վերնագիրն է «Կորյան հիշած Բաբելյաս եպիսկոպոսը (Եղեսիո Բաբելյաս կամ Բաբուլաս հայրապետը)»: Այստեղ հոդվածագիրը մի տարի էլ առաջ քշելով հայոց գրերի գյուտի թվականը, դարձնում է 413. «Ս. Մեսրոպայ Եղեսիս երթալու պարագան՝ մեր նշանագրերու գյուտին համար, և Բաբուլասի եպիսկոպոսանալուն թվականը, երկուքն ալ պատմականորեն ճշտված և հաստատված, վերջնականապես և անվիճելիորեն կհասցնեն մեր այբուբենի գյուտին թվականը մինչև 413 տարին» («Բազմավեպ», 1922, էջ 100ա): Իսկ եթե լսենք Peeters-ին («Revue des Etudes arméni-

ennes» IX, էջ 209) «Ռաբուլայսը Եղեւսիայի գահի վրա բարձրացած չէր 412 թվից առաջ և շատ հավանաբար 414 թվի վերջումն էլ գնա բարձրացած չէր» (այս մասին խոսել է «Recherches de science religieuse», հատ. 18, 1928, էջ 178—203): Այս հաշվով զրեբի գյուտի թվականը պետք պիտի լինի բշեյ ուրեմն գեպի 415 թիվը:

Հակառակ իր զգայացունց բնույթին, Գալուստ Տեր-Մկրտչյանի հողվածք անուշադիր մնաց մեր բանասերների կողմից: Երբանից առաջ Իսահակ Հարութչյունյանը («Հայոց գիրք», էջ 188) Սեն-Մարտինի միջոցով ծանոթանալով Ռաբուլայսի թվականին, ամենայն հանգստությամբ ասում է. «Այս անձնավորությունը չի կարող ետրեմացու հիշած Բաբելոսը լինել, որովհետև զրի գյուտը տեղի ունեցավ 412 թվից ութ տարի առաջ—404 թ.»: Գ. Տեր-Մկրտչյանից շատ ավելի առաջ էր նաև Մարկվարտը, որ իր «Պատմություն հայկական եջանագրերու» աշխատության մեջ («Հանդես ամսօրյա»-ի մեջ տպված 1912 թվականին, բայց Փանանյան մրցանակին արժանացած 1905 թվականին) ասում է. «Բաբելուս անուն եպիսկոպոս մը սակայն այս ժամանակաշրջանին մեջ ծանոթ չէ: Բաբելուսը պետք է ընթեռնույ Ռաբիլուս, որ սակայն 411/12-ին եպիսկոպոս եղավ և մեռավ 8 ար 746=8 օգոստոս 435: Իսկ 398 նոյեմբեր 23-են մինչև 409 օգոստոս 1 Ուոհայի աթոռը կգրավեր Պեկիդա: Ուրեմն հոս անտարակույս ժամանակագրական վրիպակ մը գոյություն ունի, որ սակայն պատմական իրողություններով շատ դուրսով կմեկնվի» (էջ 58): Ռաբուլայսի մասին խոսում է դարձյալ Նահապետյանը («Բազմավեպ», 1913, էջ 136). նա գիտե, որ Բաբուլայսը Եղեւսիայի եպիսկոպոս է եղել 412—435 թվերին, բայց «կարող է հանգիստ չուր տարեթիվն պահել ամուր»: Իսկ ժամանակագրական անտեղություն համար տալիս է հետևյալ շատ գեղեցիկ բացատրությունը. «Եթե Կորյունը չի հիշատակեր դայս (—Եղեւսիայի ժամանակակից Պեկիդա եպիսկոպոսին), պետք է բնական մոռացություն տալ այն մեր թարգմանիչներուն Եղևկա և ընկերաց, որոնք գեղեցիկ հյուրասիրություն ընդունելով Բաբելուս եպիսկոպոսին, որ թարմ տրպավորության տակ խոսելով իրենց վարդապետի Մեսրոպի ժամանցը Եղեւսիո մեջ, կարծել տված էր որ 404-ին Բաբիլասն արդեն եպիսկոպոս էր եղած Եղեւսիո»:

Գրեթե նույն պատճառարանությամբ խոսում է նույն նյութի մասին Գ. Յնաղլյանը (առանց սակայն հիշելու, Գ. Տեր-Մկրտչյանի հողվածք, որին թերևս ծանոթ չէր, ինչպես նաև Նահապետյանի հողվածք), իր հրատարակած Կորյունի մեջ (էջ 83): Ահա իր

բաւերը. «443—444-ին իր մատենիկը գրող Կորյուն հավաստիորեն չէր գիտեր Եղեւսիո եպիսկոպոսներուն ժամանակագրութիւնը, բայց իր գրութեան ժամանակին ամենեն մոտ և երկար ատեն Եղեւսիո եպիսկոպոսութիւն ըրած այս բարձր և նշանավոր եկեղեցականը համարեր է եպիսկոպոս եղած ըլլալ 404-ին ևս, երբ Մաշթոց զնաց հԱստրիս՝ ներկայանալ Եղեւսիո եպիսկոպոսին... Ինչ որ ալ լինի, անկարելի է հայ այբուբենքի գլուտը Բաբելասի եպիսկոպոսութեան ստույգ թվականին հետ միաբանելու համար՝ դնել այնքան ուշ որքան է 412»:

Բաբելասի մասին խոսում է նաև Ակիւնյանը («Հանդես ամսօրյա», 1935, էջ 514), որ Կորյունի այս բառը պարզապէս գրչագրի սխալ է համարում և ուղղում է Պակիդա, որ նույն ժամանակ Եղեւսիո եպիսկոպոսն էր: Թեև Ակիւնյանը չի հիշում, բայց նրանից 3 տարի առաջ նույնպիսի ուղղում առաջարկել էր Թորոսյանը («Բաղմավեպ», 1932, էջ 260), բայց փոխանակ գրելու Պակիդա, արևմտյան տառադարձութեամբ գրում է Բաբիդաս: Եթե Կորյունը ուղենար հիշատակել Ռաբուլասին, ասում է Ակիւնյան, նախ՝ ասորական անունը հունական վերջավորութեամբ չպիտի տար, երկրորդ՝ չպիտի տառադարձեր Բաբուլաս, այլ Հոաբուլա, ինչպես ունի Rufinus = Հուսիփնոս, աղափառված Հուսիփնոս:

Ճիշտ չէ, որ ասորի Ռաբբուլա պիտի տար հայերեն Հոաբուլա. նախաձայն ռ տալիս է հայերեն հո՝ միայն հունարեն բառերի մեջ. ինչպես Հուսիփնոս. իսկ պարսկերեն և ասորերեն նախաձայն ր մնում է հայերեն ռ, ինչպես՝ ասորերեն rahbōnā > ռաբունա «գորավական» և Rēšūinā > Ռաշայնա (հատուկ անուն): Մյուս կողմից ասել, թե Պակիդա կարող էր գրչի սխալով դառնալ Բաբիդաս՝ զուր երևակայութիւն է:

Արդ. Կորյունի մեջ Բաբիլասի անունը հետին հավելված է: Կորյունը, շնայած որ մի քանի անգամ առիթ է ունենում հիշելու այդ եպիսկոպոսին, բայց միայն մի՛ անգամ տալիս է նրա անունը. «Ընդդեմ լինելու սուրբ եպիսկոպոսացն, [որոց առաջնոյն Բաբելաս անուն և երկրորդին Ակակիոս], հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքին պատահեալ» (Կորյուն): Մյուս դեպքերում տեսեք ի՛նչ ձևերով է հիշում. «Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց... և հրաժարեալ ի նոցան հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց: Որ յորոց նախընկալն եղև, առաջի արկեալ նոցա զնշանագիրսն աստուածատուր. վասն որոյ բազում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային»: Այս բոլոր խուսա-

փուկ մենքը հետաքրքիր են, մանավանդ երբորդը. սեա որ որոնցից որ առաջին անգամ ընդունվեց. նրանց ներկայացրեց գրեթէ: Մենք արգեն ցույց ենք տվել, որ Կոբյունի մեջ հետին հավելված է Մելիտոնիեի Անկախու հպիսկոպոսի անվանումը: Այս խուսափուկ և տարօրինակ հիշատակութուններն էլ ցույց են տալիս, որ Կոբյունը նույն հպիսկոպոսների անունը չգիտեր: Եվ նախ առաջին հիշատակության մեջ էլ անկյունավոր փակագծի մեջ առնված մասը հաննինք, նախադասությունը ամենևին չպիտի կաղար:

Իր ասածը հաստատելու համար Գ. Տեր-Մկրտչյանը մի ուրիշ հնարագետ միջոցի էլ է դիմում: Կոբյունը Գանիելյան նշանագրերը բերված է համարում Վասմշապուհի հինգերորդ տարին, փորձարկության համար տալիս է երկու տարի, հետո Մեսրոպ մեկնում է Միջագետք Վասմշապուհի դարձյալ հինգերորդ տարում և վերադառնում է Վասմշապուհի վեցերորդ տարում: Գ. Տեր-Մկրտչյանն ասում է, որ այս վեցերորդ բնթերցվածը շատ հին է և դժվար է փոփոխել կամ շեշել: Այնուամենայնիվ ինքը փոխում է և վեցերորդը դարձնում է ԺԶ (16): Սրա համար էլ հիշում է մի ճառընտիր, ուր այս վեցերորդ բառից առաջ բաց տեղ է թողնված, պակասը լրացնելու համար: (Քննարատ, էջ 511): Ընթարկենք, թե Կոբյունի բնագրում բոլոր թվերը թվանշանով էին գրված և ոչ թե բառերով, որովհետև հակառակ պարագային կարելի չպիտի լիներ այնպես հիշտությամբ վեցերորդը վեցասաներորդ դարձնել, ինչպես անում է Զ—ԺԶ: Բայց ի՞նչ է անում Մեսրոպ Միջագետքում ամբողջ ինը տարի: Գ. Տեր-Մկրտչյանը Գանիելյան գրերի Հայաստան բերվելը զնում է 405 թվականին, Վասմշապուհի հինգերորդ տարին: Երկու տարի փորձ է կատարվում, դառնում է 407՝ Վասմշապուհի յոթերորդ տարին, երբ Մեսրոպը մեկնում է Միջագետք: Վերադառնում է Վասմշապուհի ԺԶ=16-րդ տարին, այն է 416 թվականին: 407-ից մինչև 416 ունենք 9 տարի, որից չորսը (412—416) զնում է Եղեսիայի և Սամուսատի աշխատանքների համար. իսկ մնացյալ 5 տարի՞ն:

Ահա թե ինչպիսի՞ լարիերինթոսի մեջ է գցում Ռարուլասի 412-ը. ահա թե ինչպի՞ս է սկործանվում և այդ հիմքի վրա մեծ խնամքով կառուցված շենքը:

Վերը հիշված մեր հոդվածում (Արմֆանի «Տեղեկագիր», 1941) ցույց տվեցինք, որ Կոբյունի Եղ-ը պետք է կարգալ ո՛չ թե հինգերորդ, այլ ինչպես գրված է՝ երրորդ. երկու տարվա փորձից հետո կունենանք հինգերորդ, ինչպես որ գրված է: Մեսրոպը մեկնում է Վասմշապուհի հինգերորդ տարում և վերադառնում է վեցերորդ տարում: Ուրեմն Միջագետքում մնում է մեկ տարի. և այսպես

բուրդովին բավական է մի գրադարան այցելելու, մի այրուբեն հնարելու, մի պնակիտ պատրաստելու և Առակաց գրքի նման մի փոքրիկ գիրք (ունի ընդամենը 60 էջ ութածալ) շորս հոգով (Մեսրոպ, Հովհան, Հովսեփ, Հուսիանոս) հայերենի թարգմանելու և գրա առնելու համար:

Գ. Տեր-Մկրտչյանի հետ մեր հարցը փակելուց հետո անցնենք Ադոնցին, որ «Հանդես ամսօրյա»-ում (1925 մայիս—նոյեմբեր), մի ընդարձակ ուսումնասիրություն ունի Մեսրոպի այս շրջանի փորձունեության մասին: Չենք խոսում Թորոսյանի մասին, որովհետև («Բազմավեպ», 1932, էջ 250—260) հրատարած իր նախկին կարծիքից (Բաբուլասից և 413-ից), գրերի գյուտը դնում է 407 թվականին:

Իր ուսումնասիրության մեջ (հատկապես տե՛ս «Հանդես ամսօրյա», էջ 435—436), Ադոնցը, որ տեղյակ չէ ո՛չ Գ. Տեր-Մկրտչյանի հոդվածին և ո՛չ էլ Թորոսյանի, ոչ միայն մեջ է քաշում Ռաբուլին (412—435), այլև Ակակին, որ Ամրդի եպիսկոպոս էր 419—420 (այսպե՛ս) թվականից սկսած: Նա եզրակացնում է, որ Մեսրոպի հանդիպումը նրանց հետ չէր կարող լինել ո՛չ ավելի առաջ 420-ից և ո՛չ ավելի ուշ 435-ից: Ուրեմն այս միջոցին պիտի ընկներ գրերի գյուտը, հետևաբար Կորյունի տված թվականը սխալ է:

Երևույթը Ադոնցը որակում է «ժամանակակառն անհեթեթություն» անունով:

Ավելի հետո, ուսումնասիրության վերջին մասում (էջ 535), Ադոնցը, ընդունելով հանդերձ, որ 406 թվականից առաջ արդեն տառերը գտնված էին, երկրորդ անգամ ճամբորդել է տալիս Մեսրոպին Միջագետք՝ 420—425 թվականներին, այս անգամ զուտ կրոնական նպատակներով՝ նեստորական դավանանքի գործով:

Չարմանալին այն է, որ Ադոնցը խաբեբա է համարում Կորյունին կամ ծածկամիտ և Մեսրոպի այս ճամբորդությունը, որին ըստ Ադոնցի Կորյունն էլ մասնակից ու գործակից էր, թաքցրած է համարում: Ինչո՞ւ պիտի թաքցնեն Կորյունն այդպիսի մի բան, որի նպատակը Եփեսոսի ժողովի գաղափարների պաշտպանությունը և ուղղափառ հավատի շատագու՛յությունն էր:

Բայց Ադոնցը գրերի գյուտի իբրև «որոշ և դրական տարեթիվ» դնում է 382—392 տասնամյակը (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1925, էջ 531): Իր պատճառաբանությունը հետևյալն է.

Հունաց Փոտ պատրիարքը (ծնված 320 թ.) թողել է մի հիշատակություն, թե Թեոդորոս Մոպսուեստացին իր քահանայության ժամանակ գրել է երեք ճառ պարսից կրոնի դեմ և պաշտ-

պանել է քրիստոնեական հավատը: Այդ ճառերը ուղղված են եղել  
Հայաստանի քրիստոնեական Մասսուրիոսին:

Քեղոզորոս Մուպուսեասացու կյանքը և գործունեությունը շատ  
հայտնի է մեզ: Նա ծնվել է Անտիոքում 350 թվականին. քահանա  
է ձեռնադրվել 383 թվականին, իսկ 392 թվականին Կիլիկիայի  
Մամեստիա քաղաքի եպիսկոպոս է նշանակվել. իր քահանայու-  
թյունը (Անտիոքում) ընկնում է 383—392 տասնամյակին: Եպիս-  
կոպոսական պաշտոնը վարել է 36 տարի և մեռել է 428 թվակա-  
նին՝ 78 տարեկան հասակում: Իր գրական ու քարոզչական նշա-  
նավոր գործունեությունը չի հետաքրքրում մեզ: Այս Քեղոզորի  
աշակերտն էր Ռուփին քահանան, որ 399 թվականին Հռոմ գնաց  
և եղավ հիմնադիր Պելագիական կողմից վարդապետության:

Աղոնցը այսպես է դատում. 1) «Մեզ թվում է, որ այս Ռու-  
փինը ուրիշ անձ չէ, եթե ոչ այն գրիչ Հուսիանոսը, որը հիշվում  
է գրերի գյուտի պատմության մեջ» (առաջին ենթադրություն.  
«Հանդես ամսօրյա», 1925, էջ 441): 2) «Եթե Քեղոզորի աշակեր-  
տը իրրև սուկ գրիչ մասնակցում է գյուտին, հարկավ, նրա ուսու-  
ցիչն ավելի շոշափելի նպաստ պիտի բերած լիներ նույն խնդրին»  
(երկրորդ ենթադրություն): 3) Մեսրոպ, «որ իր երազների համար  
շրջել էր Մելիտին, Ամիդ, Եղեսիա, Սամուսատ, այցելել էր և  
Ակակին, Ռարուփին, մյուս Ակակին, Մելիտինի եպիսկոպոսին, այլև  
Սամուսատի եպիսկոպոսին, մի խոսքով Հայաստանի սահմանակից  
նշանավոր հոգևոր գործիչներին, նա չէր կարող զանց առնել այն  
շրջանի ամենից հեղինակավոր և գիտնական եկեղեցական հոր՝  
Քեղոզորոս Մամուսեասացուն» (երրորդ ենթադրություն): 4) «Անակ-  
նունելի չէ րնավ, որ Քեղոզորի ծանոթ հայազն եպիսկոպոս Մա-  
սուրիոսը լինի Մաշտոցը» (չարրորդ ենթադրություն):

Այս բոլորից հանկարծ եզրակացնում է, թե Մեսրոպը հայե-  
րեն տառերը հնարեց 383—392 թվականներին:

Գեղեցիկ թոխը...

Ընդունենք շորրորդ ենթադրությունը իրր ստույգ և հավա-  
տանք, թե Մասուրիոսը մեր Մաշտոցն է: Ի՞նչ իրավունք ու-  
նենք Մամեստիայի եպիսկոպոսի աշակերտ Ռուփին քահանային  
նույնացնելու Սամուսատի գրիչ Հուսիանոսի հետ, երբ այլուստ  
գիտենք, որ Հուսիանոսը հետո եղավ Սամուսատի եպիսկոպոս  
(440 թ.): Սրանով ընկնում է առաջին ենթադրությունը, և իրրև  
նրա հետևանք նաև երկրորդ ենթադրությունը, որ արդեն ո՛չ մի  
րնական կապ չունի նրա հետ: Մեսրոպը գնաց Ամիդ, որովհետև  
ճանապարհի վրա էր, գնաց Եղեսիա՝ գրադարանը պրպտելու հա-  
մար, գնաց Սամուսատ՝ գեղազրի համար, իսկ ի՞նչ գործ ունի

Ասորիքի Անտիոք քաղաքում: Սրա հարակցութեամբ՝ Մեսրոպը ծանոթացել էր Ամիրի, Եղեւսիյի և Սամուատի եպիսկոպոսների հետ, իբրև ճանապարհի վրա եղած պաշտոնական անձանց. իսկ ինչ գործ ունեւր Անտիոքի Թեոդորոս քահանայի հետ (որ հետո Մամեստիայի եպիսկոպոս եղավ), թեկուզ նա շատ գիտնական մարդ լինեւր: Եվ հետո, Մեսրոպը գնաց Անտիոք՝ Թեոդորոսի մոտ, թե՞ Թեոդորոսը եկավ Մեսրոպի մոտ (Եղեւսի կամ Սամուատ): Այս բոլորը հարցեր են, որոնց պատասխան է պետք: Փոտի գրածը այն է ասում, թե Թեոդորոսը մի գիրք է գրել մոզական կրոնի դեմ և ուղղել Մաշտոցին: Այս է ամբողջ եղածը: Կարելի է միթե սրանից հետևեցնել, թե ուրեմն Մեսրոպը գրեւր հնարել է Թեոդորոսի օգնութեամբ և հենց նրա քահանայութեան 333—392 թվականներին, երբ գրած պիտի լինի մոզական կրոնի դեմ այն երեք ճառերը:

Այսպիսի եզրակացութիւն հակառակ է բանական դատողութեան: Ուրախ ենք, որ Ալիէյանը ևս («Ճանդես ամսօրյա», 1935, էջ 515) տեսել է Ադոնցի այս անտեղի վարմունքը և պահանջում է, որ «չափավոր լինի իր անհեթեթ եզրակացութեանց մեջ»: Ամենից զվարճալին այն է, որ Ադոնցը, հայտնի չէ գիտութեամբ թե անգիտութեամբ, եղծում է Ակակի եպիսկոպոսութեան թվականը և 400-ի փոխարեն դնում է 419—420, որպեսզի Մեսրոպին բերե Միջագետք այս թվականին...

6. Մեսրոպի և Սահակի մահվան թվականների մասին առարկում է Գ. Տեր-Մկրտչյանը («Արարատ», 1912, էջ 500): Խոսելով Նորայրի քննութեան մասին («Ստոյգ թուականք մահուան Սրբոյն Սահակայ և Սրբոյն Մաշտոցի», տե՛ս «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», էջ 386—390), գտնում է, որ սխալ է հիմնվել Հազկերտ Բ-ի գահակալութեան այն թվականի վրա, որ տալիս է Նյուրեքեն (438): Ըստ շգիտեմ հարգելի հայկաբանը կարողում է գերմաներեն թե ոչ, ապա թե ոչ խորհուրդ կտայի դիմել իսկական Նյուրեքեիին: Այսպես է ասում հոգևածագիրը հպարտ ձևով, իբր թե ինքը շատ գիտենար գերմաներեն և կամ թե Նորայրը անկարող լինեւր Շվեդիայում մի գերմանագետ գտնել: Ապա ցույց է տալիս, որ ըստ Նյուրեքեի ցուցակի պարսից թագավորները գահակալում են խումբ-խումբ. վերից վար. առանց ընդհատման սեպտեմբերի 26-ին, 22-ին, 14-ին, 13-ին, 9-ին, 5-ին, ապա օգոստոսի 19, 18, 16, 14, 8, 4, և այլն, և այլն: «Այդ ինչպիսի խելոք քննադատներին նեղութիւն չպատճառող թագավորներ են», բացականչում է հոգևածագիրը: Ապա ավելացնում. «Փոքր-ինչ ավելի ծանոթութիւն պարսկական իրականութեան՝ պիտի համոզեւր հարգելի

Նորայրին, որ այս կանոնադոր թվերի շարքը չէ կարող գահակալու-  
թյան օրեր ցույց տալ, այլ դրանք բուրբուրով են ման մեր շարժա-  
կան տոմարին՝ նավասարդի օրերն են: Այնուհետև բացատրելով,  
որ պարսիկները թագավորի գահակալութիւնը հաշվում էին ոչ թէ  
գահ նստած օրից, այլ նավասարդից, նորից բացականում է. սև-  
բեմն և հիմնովին պիտի հերքված համարել նորայրի հավաստա-  
ծք... կործանվում է և այդ հիմքի վրա մեծ խնամքով կառուցված  
շենքը: Ահիստ ս....

Այս կործանումից հետո ի՞նչ թվական է տալիս. «Հազկերտ  
առաջինի (ուզում է ասել «Երկրորդի»)»... գահակալութիւն... տա-  
րին... կարող է պատահած լինել և 438-ին և 439-ին:

Բայց մենք վերը ցույց տվեցինք, որ 438-ն է ճիշտ:

Ստուգելու համար Սահակի և Մեսրոպի մահվան թվականը,  
հոգիածաղիքը օգնութիւն է կանչում «Պատմութիւն վասն Սրբոյն  
Սահակայ», որ հետին շրջանի մի գործ է, գրված ետրոնացուց հե-  
տո և 850 թվից առաջ: Այստեղ Սահակի մահվան օրը նշանակված  
է «հինգշաբթի»: Տոմարական հաշիվներով կարելի է ստուգել, որ  
նավասարդի 30-ը (=7 սեպտեմբերի) հինգշաբթի է ընկնում 439  
թվականին, ուրեմն այս թվականին էլ վախճանվել է Սահակը և  
հետևաբար Մեսրոպ էլ 440 թվականի փետրվարի 17-ին (տե՛ս  
Dulaurier, «Recherches sur la chronologie arménienne», Pa-  
ris, 1859, էջ 135—136, ծան. 40): Սահակի մահը չի կարող լինել  
438-ին, որովհետև 438-ի սեպտեմբերի 7 ընկնում է շրեքշաբթի:

Հաշիվը և դատողութիւնը շատ ճիշտ է. բայց ի՞նչ վատ-  
հուսից Սահակից ու Մեսրոպից մի-երկու դար ուշ եկող հեղինա-  
կի տված այսքան մանր տեղեկութիւն վրա, երբ այդուստ գիտենք  
և հաստատում ենք, որ Սահակի մահը 438-ին է: Այս նյութով  
գրադվել է նաև Օրմանյանը («Ազգայատում», Ա, էջ 321) և ահա  
թե ի՞նչ է ասում. «Թեպետ Սահակի հետին ժամանակաց ներո-  
ղարան մը յատուր նինգշաբարաշ կրսե, սակայն ժամանակակից-  
ներեն ո՛չ մեկը յոթնյակի օր չի հիշեր, և մեր եզրակացութիւնը  
կարդարանա (ինքը ղնում է շրեքշաբթի) տոմարական կանոննե-  
րու հիմամբ կազմված հաշիվով»:

Սահակի ներողարանը անշուշտ նավասարդի 30-ը կամ սեպ-  
տեմբերի 7-ը իր իմացած որեւէ ժամանակի համեմատ է հաշվել  
և թերևս այն տարով՝ երբ գրել է իր ներքողը: Սեպտեմբերի 7-ը  
հինգշաբթի է դալիս ամեն մի դարում 18 անգամ. օրինակ, հենց  
Ն դարում այդ օրը հինգշաբթի է լինում 400, 405, 411, 416, 422,  
428, 433, 439, 444, 450, 456, 461, 467, 472, 478, 484, 489 և 495  
թվականներին:



7. Այժմ ուղում եմ քննել Կորյունի համահավաք տեղեկությունը, որ վերևում ի նկատի ունեցանք մի քանի անգամ և որի մեջ ոմանք մի քանի ուղղումներ են մտցնում՝ անարդար կերպով: Մեջ եմ բերում հատվածք մաս առ մաս, ամեն մեկին կցելով իմ բացատրությունը:

ա) Եւ արդ լինի համար ամաց հաատոց երանելոյն ամբ քառասուն և ճինգ:

«Համար հաատոց» ասելով Կորյունը հասկանում է Մեսրոպի կրոնավորական կյանքի հաշիվը. Մեսրոպի մահը դեկտվ 439 թվականին, սրանից 46 տարի հանած՝ կլինի 394. ուրեմն նրա ձեռնադրության տարին է 394: Նորայրը («Կորիւն վարդապետ և թարգմանութիւն նորին») և Ակինյանը («Հանդես ամսօրյա», 1935, էջ 543) այս 45-ը դարձնում են 47. բնականաբար ի՞նչ կարող էր հեշտությամբ դառնալ ին: Երկուսն էլ ամենեկին շին պատճառաբանում, թե ինչո՞ւ 47 և ոչ 45. բայց պատճառը անշուշտ ներքևի դ և ե կետերն են, որ սխալ են հասկացել և որ կարելի է հեշտությամբ հարդարել: Օրմանյանը («Ազգապատում», Ա, էջ 267) և Ֆետպյանն էլ (էջ 76) դնում են Մեսրոպի ձեռնադրությունը 394: Ինքնին հասկանալի է, որ Մեսրոպի արքունական ծառայությունն էլ վերջացած պիտի լինի սույն 394 թվականին:

բ) Եւ ի դպրութենեն Հայոց մինչև ցվախնան արքայն՝ ամբ երեսուն և ճինգ:

Եթե Մեսրոպի մահը եղավ 439 թվականին և Հայոց դպրությունից (գրերի գյուտը) մինչև այդ 35 տարի է անցել, ուրեմն գրերի գյուտը եղել է 439—35=404 թվականին: Այս է Մեսրոպյան գրերի գյուտի թվականը (ինչպես վերը երկարորեն բացատրեցինք): Այս թիվը համապատասխանում է Վոսմշապուհի թագավորության 6-րդ տարուն, ուրեմն և Վոսմշապուհը նստել է 399 թվականին: Վոսմշապուհի երրորդ տարին Դանիելյան գրերը բերվել են Հայաստան, ուրեմն 401 թվականին: Ըստ այնմ Մեսրոպի կրոնավորական կոչումից մինչև գրերի գյուտը (394—404) անցել է 10 տարի: (Ակինյան, «Հանդես ամսօրյա», 1935, էջ 543, Կորյունի 35-ը դարձնում է 32, առանց պատճառաբանության):

գ) Ուր համարին այոպես: Թագաւոճեալ Դիւմոնայ Պաւսից արքայի ամս վեց և Յազկերտի ամս քառ և մի:

Այստեղ Դիմսոն ասելով պիտի հասկանանք Վոսմ Կրման, իսկ Հազկերտն է Հազկերտ Ա: Վոսմ Կրման գահակալից 389—399 թվականներին, ուրեմն 10 տարի. Հազկերտ Ա 399—420 թվականներին, ուրեմն 21 տարի: Կորյունը ճիշտ է գրում Հազկերտի համար ամս քառ և մի, բայց Վոսմ Կրմանի համար «ամս վեց»:

Նորայրը սխալ համարելով անս վեց-ը, ուղղում է անս տասն, իսկ Տեսզլյանը կարծում է, թե Կորյունը սխալ գիտն այս երկու թագավորների թվականը՝ համարելով Վոամին գահակալած 389—90-ից մինչև 396 և Հազկերտն էլ Նրան հաջորդած 396-ին, մինչև զեռ 399-ին է գահակալած:

Սխալվում են Նորայրը և Տեսզլյանը, ուղիղ է Կորյունը, և ահա թե ինչո՞ւ:

Եթե Կորյունը ըստ Տեսզլյանի կարծած լիներ, թե Հազկերտը գահակալել է 396 թվականին, այսինքն 3 տարի ավելի շուտ, այն ժամանակ չէր տա Հազկերտին 21 տարի (որ է 399—420), ալ 24 տարի: Ուրեմն սխալ է նաև ասել, թե Կորյունը Վոամին թագավորած է կարծում 389—396՝ վեց տարի:

Հարց է, թե Կորյուն շարք համարին այսպէս ասելով, ի՞նչն է հաշվում. հայոց դպրութիւնն տարիները, թե՞ Մեսրոպի «համար հաւատոց»-ը: Տված թվերը հետևյալներն են. Դիւմոն 6 և Հազկերտ 21. երկուսը միասին 27. բայց այս 27 ո՞չ դպրութիւն 35 տարիներն են և ոչ հավատոց 45 տարիները: Բոլոր թագավորները հիշված են, միայն չի հիշվում բնավ Վոամ Ե, որ նստել է 420—438 թվականներին, այն է 18 տարի: Եթե այս 18 ավելացնենք վերի 27-ի վրա, կունենանք 45: Սրանից հայտնի է լինում, որ Կորյունը հաշվում է Մեսրոպի կրոնավորական տարիները, ինչպես պիտի անն երկրորդ անգամ քիչ հետո (տե՛ս Ե), ակսելով Վոամ Կրմանի շորրորդ տարուց: Վոամը նստել է 10 տարի և եթե Մեսրոպ նրա շորրորդ տարին է ձեռնադրվել, ուրեմն Վոամից մնում է զեռ 6 տարի: Ուրիշ խոսքով, երբ Վոամը մեռավ, Մեսրոպ 6 տարի էր որ ձեռնադրված էր: Ահա այս է Կորյունի վեցը, որ բոլորովին ճիշտ է և երբեք չպետք է խախտել: Պետք է միայն Կորյունի հիշյալ տողերի վրա ավելացնել «և Վոամայ ամս ութնասան»: Զարմանալի կերպով սխալ է հաշվում Ակինյանը («Հանդես ամսօրյա», 1935, էջ 543) և Վոամ Ե-ին տալով 421 հունվարից մինչև 438 օգոստոս, դնում է 19 տարի (փոխանակ 18-ի և այն էլ ո՞չ լրիվ) և ըստ այսմ Կորյունի մեջ ավելացնում է «և Վոամայ ամս ԺԹ»: Սրա համար է, որ սխալ է հաշվում նաև Մեսրոպի «համար հաւատոց»-ը և 45-ը դարձնում է 47, հաշվելով նաև Հազկերտ Բ-ի առաջին տարին:

դ) Եւ յառաջնումն ամի Երկրորդ Յազկերտի որդայ Վոամայ, վախճանեցաւ Երանելին:

Վերը երկար խոսեցինք և ցույց տվինք, որ Հազկերտ Բ գահակալել է 438 թվականին. իր առաջին տարին է 438—439. Մեսրոպի մահն էլ այս թվականին էր և Կորյունի ավելի մանրամասն

մի հաշվից երևում է, որ նա մեռել է 439 թվականի փետրվարի 17-ին:

Ե) Եւ արդ անու համար ամաց սրբաց հապատոց ի շորորդում ամէն Կրմանայ արգայի մինչև ցառաշին ամն երկրորդ Յազկերտի որդայ Վռամայ:

Կորյունը մի անգամ արդեն հաշվել էր Մեսրոպի կրոնավորական տարիները (համար հաւատոց. տե՛ս Գ) և գումարն էլ դրել էր 45 (տե՛ս ա): Այստեղ ցույց է տալիս, թե 45 տարին ե՛րբ սկսեց և ե՛րբ վերջացավ: Մենք գիտենք, որ այդ տարիներն են 394—439: Այս 439 թիվը Հազկերտ Բ-ի առաջին տարին է, այո՛, բայց 394-ը Կրմանի շորորդ տարի՞ն է: Կրման գահ է նստել 389 թվականին. Կորյունը հաշվել է այսպես.

389—390 առաջին տարի,

390—391 երկրորդ տարի,

391—392 երրորդ տարի,

392—393 չորրորդ տարի:

Կրմանի գահակալութան չորրորդ տարին լրացել և միայն 1—2 ամիս էր անցել անշուշտ, երբ Մոսրոպը կրոնավոր ձեռնադրովեց: Այս 1—2 ամիսը Կորյունը ի նկատի շառնելով, կտր հաշվով ասում է շորորդը: Կորյունը սիրում է կտր հաշվել. օրինակ՝ Սահակը մեռել էր Նավասարդի 30-ին, Մեհեկանի 13-ին, միջոցը անում է 5 ամիս 10 օր, բայց Կորյունը դնում է կտր թվով 6 ամիս (տե՛ս վերը), ավելի հաշվելով 20 օր: Այստեղ էլ նույնն է:

Բայց այսպես չի մտածել Նորայրը, այլ վերցրել է 392—393 թվականը (առաջին տարի Մեսրոպի կրոնավորութան), ավելացրել Կրմանի մնացյալ 6 տարին, Հազկերտ Ա-ի 21 տարին, Վռամի 18 տարին և Հազկերտ Բ-ի մի տարին, որով ստացել է (1+6+21+18+1) 47 տարի և սրա համար էլ մի կողմից Կորյունի 45-ը փոխում է 47-ի (տե՛ս կետ ա) և մյուս կողմից Դիսմոնայ 6-ը դարձնում է 10 (տե՛ս կետ Գ): Եթե Կորյունը 392—393 թիվը հաշված լիներ, չէր ասի «Թագաւորեալ Դիսմոնայ ամս վեց», այլ «եօթն»:

Տենտալյանն էլ ուրիշ ձևով է առարկում Նորայրի դեմ. նա Կրմանի թվականն է եղծում և դնում 390 (փոխանակ 389-ի). վրան ավելացնում է 4 և ստանում է 394. բայց սա ճիշտ չէ, որովհետև նույնիսկ եթե եղծելով դնենք 390, չորրորդ տարին կըլինի 393:

զ) Եւ դպրութեանն Հայոց յօրհրդոյ ամէ Յազկերտի առ-  
եալ սկիզբն:

Այս կէտի վրա խոսել ենք վերը, ընդունելով Նորայրի սքը-  
բազրութիւնը՝ վեցերորդ փոխանակ ուրհրդոյ-ի:

Տնտգլյանն այստեղ էլ դուրս է գալիս Նորայրի դեմ և Կո-  
րյունի ուրհրդոյ-ը պահում է անփոփոխ, վերագրելով Կորյունին  
մի ուրիշ սխալ՝ իբր թէ Կորյունը Հազկերտ Ա-ի զահակալութեան  
թվականը 396 է կարծում. այն ժամանակ իրոք նրա ութերորդ  
տարին կլինի 404, որ է թվական դպրութեան հայոց: Մենք վերը  
ցույց տվինք, թէ սխալ է Տնտգլյանի այս կարծիքը և Կորյունի  
այս մի թվականը իրոք պետք է Նորայրի հետ սքրբազրել վեցերորդ:

Տ. Այս բոլոր քննութիւններէց հետո և հիմնվելով նախորդ  
թվականների վրա, կարելի է որոշել մի քանի ուրիշ թվական-  
ներ էլ:

Երբ եղավ թարգմանիչների երթը Պոլիս:

Այս հարցին պատասխանելու համար երկու կողմն ունենք.  
առաջին և վստահելի կողմն է Եզնիկի այն նամակը, որ նա գը-  
րում է Պոլսից իր ուսուցիչ Մեսրոպին, ուր հայտնում է նաև, թէ  
տեղի է ունեցել Եփեսոսի ժողովը և այնտեղ եղովի են Նեստո-  
րին: Եփեսոսի ժողովը տեղի ունեցավ 431 թվականի հունիսի  
22-ին: Ուստի նամակը գրված է այդ թվականից մի քիչ հետո:

Երկրորդ կողմնն է Խորենացու այն տեղեկութիւնը, որ տա-  
լիս է թարգմանիչների մասին (Խորենացի, Գ, 4) վերջը ավելաց-  
նում. «Իրոք ընդունելութիւն ամենեցան մեծապես արար Մաքսի-  
միանոս եպիսկոպոսն Բիզանդացոց»:

Մաքսիմիանոսը պատրիարքական գահն է բարձրացել Նես-  
տորի անկումից քիչ հետո, 431 թվականի հոկտեմբերին, և եթէ  
նա է, որ մեծ ընդունելութիւն է ցույց տվել մեր թարգմանիչնե-  
րին, ուրեմն թարգմանիչները գնացել են Պոլիս 431-ին կամ մի քիչ  
ավելի ուշ: (Մաքսիմիանոս նստել է 431—434 թթ.):

Ճիշտ այսպես է մտածում նաև Նորայրը («Կորիւն վարդա-  
պետ և թարգմանութիւնք նորին», էջ 384—385) և թարգմանիչ-  
ների երթը դնում է զույգ-զույգ 431 կամ 432 թվականներին:

Բայց այս երկու կողմնների մեջ մի փոքր հակասութիւն  
կա: Եզնիկի թղթից այնպես է երևում, որ նա 431 թվականի կի-  
սից հետո չի գնացել Պոլիս, այլ անշուշտ մի քիչ էլ առաջ, այն-  
պես որ Մաքսիմիանոս պատրիարքը չէր, որ ընդունելութիւն պիտի  
ցույց տար նրան, այլ Նեստորը: Բայց Խորենացին, եթէ իրոք տեղ-  
յակ էր թարգմանիչների երթի ճիշտ ժամանակին, չէր կարող տալ  
Նեստորի անունը. հետևաբար զրել է Մաքսիմիանոսի անունը:

Այժմ տեսնենք թարգմանիչների վերադարձը:

Նորայրը նույն տեղում գտնում է, որ թարգմանիչները վերադարձան 434—435 թվականին, որովհետև իրենց հետ բերել էին Նիկիայի և Եփեսոսի կանոնները, ս. Գրքի ընտիր մի օրինակ և Պրոկղի նամակը: Պրոկղը պատրիարք է նստել Մաքսիմիանոսից անմիջապես հետո 434 թվականին և մեռել է 447 թվականին: Իր թուղթը գրել է 435 թվականին, ուստի կարելի չէ դնել թարգմանիչների վերադարձը 434 թվականին, այլ միայն 435-ին:

Բայց ինչպե՞ս կարելի է ընդունել, որ Սահակն ու Մեսրոպը Եփեսոսի կանոնները ստանալու համար ամբողջ շոքա տարի (431—435) սպասեին: Մանավանդ որ կար ս. Գրքի մի ընտիր օրինակ Հայաստան բերելու հարցը, որի մասին կխոսենք հաջորդ հատվածում: Այս բոլորը ի նկատի ունենալով թարգմանիչների առաջին խմբի վերադարձը պետք է դնել 431 թվականին:

Բայց թարգմանիչները զնացել էին Պոլիս նաև ուսանելու և թարգմանություններ անելու, ուստի եթե դրա համար էլ գոնե երկու տարի ժամանակ տանք, թարգմանիչների երթը դեպի Պոլիս պետք է դնել 429 թվականին: Այս թվականին Եղևիկն արդեն Պոլսումն էր:

Բայց Եղևիկն իր ընկեր Հովսեփի հետ նախապես Եղեսիա էր ուղարկվել ասորերենից հայերեն թարգմանություններ կատարելու համար: Այս պատվերը կատարելուց հետո, նրանք իրենց թարգմանությունները ուղարկեցին Սահակին ու Մեսրոպին և առանց Հայաստան գալու՝ Պոլիս զնացին նույն գործով: Ուրեմն եթե մենք դրա համար էլ երկու տարի տանք, Եղևիկի և Հովսեփի երթը դեպի Եղեսիա պիտի դնենք 427 թվականին:

Կորյունը (էջ 33) ասում է, թե Եղևիկի և Հովսեփի մեկնելուց հետո (ապա հետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ) ինքն էլ, Ղևոնդի հետ ուղարկվեց Պոլիս: Երկուսը զնացին և միացան իրենց հին ընկեր Եղևիկին, որի հետ աշխատակցելուց հետո, Նիկիայի և Եփեսոսի կանոնները և ս. Գրքի ընտիր օրինակը վերցրած, վերադարձան Հայաստան, ինչպես ասացինք:

Ամփոփելով այս բոլորը, եզրակացնում ենք.

427 թվականին Եղևիկ և Հովսեփ զնում են Եղեսիա.

429 թվականին Եղևիկ և Հովսեփ Եղեսիայից զնում են Պոլիս.

429 թվականին Կորյուն և Ղևոնդ Հայաստանից զնում են

Պոլիս.

431 թվականին թարգմանիչները դառնում են Հայաստան:

Թարգմանիչների երթի մասին խոսում է նաև Peeters («Revue des études arméniennes», 9, 213) և շատ սխալ բաներ է ա-

սում: նախ՝ թարգմանիչների երթը ղեկավարում է 431-ից հետո. իբր  
թե այս ժամանակ է, որ Հովսեփ և Ծղնիկ ղեկացին Ծղեհիս, հե-  
տո էլ Պոլիս: Բայց ինչպե՞ս կարելի է 431-ից հետո ուղարկել Ծ-  
ղեհիս, հետո էլ Պոլիս, երբ Ծղնիկ արդեն 431-ին Պոլիս է և այն-  
տեղից նամակ է գրում իր ուսուցիչ Մեսրոպին:

Երկրորդ՝ ծաղրով և անհավատությամբ է վերաբերվում Կո-  
րյունի այն խոսքին, թե Հովսեփ և Ծղնիկ ուղարկվեցին Ծղեհիս՝  
ասորական հայրերի զբոսբը թարգմանելու հայերենի: Ծղեհիսյում,  
պարսկական դպրոցի այդ կենտրոնում ասորերեն զի՞րք... բացա-  
կանչում է Պիտերսը...: Իբր թե, եթե Ծղեհիսյում պարսկական  
դպրոց կար, ասորականն էլ չէր կարող լինել: Հապա ո՞րն էր աս-  
որական կենտրոնը, ինչո՞ւ համար էր հռչակավոր եպիսկոպոս  
Տարույասը, ի՞նչ էր անում նա այդտեղ. ինչո՞ւ համար էր Մես-  
րոպը ղեկացել այնտեղ 404 թվականին և իր աշակերտներին էլ  
սյասորի դպրութիւնն կարգէր» (Կորյուն, էջ 18):

Բայց այս բոլորը անում է Պիտերսը հակառակ պատմության,  
որպեսզի թարգմանիչների երթը կապի նեստորական շարժման  
հետ, որ շատ ավելի ուշ եղած բան է: Այս մասին արդեն խոսել  
ենք վերը:

### 9. Ե՛րբ եղավ ս. Գրքի վերաքննությունը:

Գիտենք որ թարգմանիչների վրա պարտք էր դրված ս. Գրք-  
քի մի ընտիր օրինակ բերել Պոլիսից. թարգմանիչները այդ պար-  
տավորությունը կատարեցին 431 թվականի վերջերում Հայաստան  
վերադառնալու ժամանակ: Սահակ վերջրեց այդ ընտիր օրինակը և  
նրա հետ համեմատելով նախորդ թարգմանությունը, կարևոր ուղ-  
ղումները կատարեց: Եթե այս համեմատության կամ վերաքննու-  
թյան համար տանք մի տարի, ուրեմն ս. Գրքի երկրորդ թարգ-  
մանությունը վերջացած կլինի 432 թվականին: Կորյունն ասում է,  
թե այդ վերաքննությունը Սահակը կատարեց «հանդերձ Ծղեհիսում»,  
ուրեմն և հաստատվում է, թե 431 թվականին վերադարձող թարգ-  
մանիչների մեջ էր նաև Ծղնիկը:

Նորայրը կարծում էր, թե թարգմանիչները ս. Գրքի օրինա-  
կի հետ բերել էին նաև Պրոկղի նամակը: Այս հիման վրա պետք  
էր ենթադրել, որ թարգմանիչները դարձան Հայաստան 435 թվա-  
կանին: Մենք այդ բանը անտեղի գտնելով, թարգմանիչների դար-  
ձը դրինք 431 թվականին:

Այժմ ավելացնում ենք, որ եթե թարգմանիչների դարձը  
ղնեինք 435 թվականին և մի տարի էլ տալինք ս. Գրքի վերա-  
քննության աշխատանքին, այն ժամանակ երկրորդ թարգմանու-  
թյունը վերջացած պիտի լիներ 436 թվականին: Շատ ուշ է այդ,

արտիճետև Սահակի մահվան միայն երկու տարի է մնում, և եթե իրոք Սահակն ապրել է 90 տարի («Ազգագրատուն», Ա, էջ 321), 435 թվականին եղած պիտի լիներ 87 տարեկան ծերունի, ուստի և անկարող նման աշխատանք կատարելու:

Ուրեմն իրոք որ Պրոկղի նամակը շպետք է կապել թարգմանիչների վերադարձի հետ. արդեն Կորուներ (էջ 33) չի կապում նրանց հետ, այլ թարգմանիչների վերադարձը, ս. Գրքի երկրորդ թարգմանությունը և ուրիշ զանազան բաներ պատմելուց հետո, նոր միայն (էջ 40) սկսում է խոսել Սահակի և Մեսրոպի ժանոթ թըղթակցության մասին, որից անմիջապես հետո պատմում է նրանց մահը:

10. Ե՛րբ եղավ վրաց գրի գյուտը:

Շատ էի փափագում, որ վրաց գրերի գյուտի համար էլ կարելի լիներ ինձ գտնել մի այնպիսի հաստատուն թվական, ինչպես Դանիելյան գրերի, Մեսրոպյան գրերի, թարգմանիչների երթի ու դարձի, ս. Գրքի վերաքննության և Սահակի ու Մեսրոպի մահվան համար: Բայց այստեղ պետք է խոստովանել, որ կովանները քիչ են և թույլ ու տարածությունը երկար: Այնուամենայնիվ փորձենք մոտենալ ճշմարտության:

Վրաց գրերի գյուտը ավելի հետո է Մեսրոպյան գրերի գյուտից (404) և բավական առաջ թարգմանիչների երթից (427). ուրեմն գտնվում է 405—426 քսանամյակում: Պետք է աշխատենք կարճել այս միջոցը:

Գրերի գյուտից հետո Մեսրոպը զնաց Փայտակարան քարոզության (405), և եթե մեկ տարի դնենք այս քարոզության համար, 406 թվականին վերադարձավ Վաղարշապատ: Այս թվականին արդեն Սահակը գրեթե կատարել, վերջացրել էր ս. Գրքի առաջին թարգմանությունը: Այս ժամանակ բաց արին Վաղարշապատի վարդապետարանը (406 թ.), որից հետո Մեսրոպը զնաց Գողթն քարոզության (407 թ.), այնտեղից զնաց Սյունիք (408), ուր հնարելով վրաց գրերը, անցավ Վրաստան (409 թ.):

Բայց Մեսրոպը Վրաստան զնաց երկու անգամ, առաջինը իր երրորդ քարոզչական գործունեության ժամանակ (409 թ.) և երկրորդը՝ իր հինգերորդ քարոզչական գործունեության ժամանակ:

Երկուսի միջև գտնվում է հունահայոց քարոզությունը և Պոլիս ուղևորութունը: Ո՛րչափ օգտակար պիտի լիներ մեզ, եթե որևէ բյուզանդական ժամանակագրության մեջ Մեսրոպի այցելությունը նշանակված լիներ:

Այն ժամանակ Հունաց կայսրն էր Թեոդոս և պատրիարքը Ատտիկոս. դժբախտաբար սրանք շատ երկար են գահակալել. Թեո-

դա նստել է 403—450 թվականներին, իսկ Ատաթիկո՝ 403—425 թվականներին: Մեսրոպ Ենրկայացել է այս երկուսին, ուրեմն, 403—425 թվականներին պիտի լինե՞ր այս տեսակցությունը:

Մեսրոպի երթն ու դարձը Պոլիս ցամաքի ճանապարհով, ինչպես և Հունահայաստանի քարոզչական գործունեությունը Երկու նահանգի մեջ (Քարձը Հայք և Գորրորդ Հայք) անշուշտ երկու տարի խլիջին Մեսրոպից: Երբ Մեսրոպ վերադարձավ Վաղարշապատ, Արտաշես Գ նոր էր գահակալել: Փարպեցու և Խորենացու վկայությունը, Արտաշես նստել է 6 տարի և որովհետև մեր Արշակունի թագավորության կործանումը դրվում է 428 թվականին, ուրեմն Արտաշես գահակալել է 422 թվականին: Ընդհատ է այս թվականը: Նկատենք, որ Արտաշեսի նախորդն է Շապուհ (Հազկերտի որդին), որ հորը հետ սպանվել է 420 թվականին: Խորենացին դնում է 3 տարի անիշխան, որ ըստ այսմ պետք է հաշվել 420, 421, 422:

Այսպիսով ուրեմն Հունահայաստանից վերադարձած պիտի լինի 422 թվականին, իսկ Հունահայաստան ճանապարհ ընկած պիտի լինի 420 թվականին:

Տնտղյանն էլ (էջ 41) զբաղվում է համառոտիվ Մեսրոպի Պոլիս երթալու թվականի հարցով. նա էլ մեզ հետ վերադարձը դնում է 422 կամ 423-ին, բայց Հայաստանից մեկնելը դնում է 416—417-ին, որովհետև երթի համար տալիս է 4—5 տարի: Իմ կարծիքով 4—5 տարին շատ է: Նկատենք նաև, որ Տնտղյանը Մեսրոպի Աղվանք երթալն էլ մինչև 422 է դնում սխալմամբ, մինչդեռ դա Պոլսից վերադառնալուց հետո է:

Մեսրոպի դեպի Պոլիս ճամփորդելու մասին խոսում է նաև Պիտերսը («Revue des études arméniennes», 9, 212) և այս ճամփորդությունը դնում է 422 և 426 թվականների միջև: Նա պատճառաբանում է հետևյալ ձևով:— Ատաթիկոսը մեռել է ամենաուշը 426 թվականին, ուստի Մեսրոպը չի կարող այն թվականից հետո գնացած լինել Պոլիս. 421 և 422 թվականներին պատերազմ էր սկսված Վուսմի և Թևոդոս կալսեր միջև և հենց Աղմինքն ու Տիգրիսի հովիտն էին դարձել պատերազմի ասպարեղը: Նույնիսկ եթե ճանապարհները ապահով լինեին, հայ եպիսկոպոսի համար հարմար ժամանակ չէր Պոլիս երթալով կալսեր. ներկայանալու իսկ 421 թվականից առաջ էլ Մեսրոպը զբաղված էր Գողթն, Սյունիք, Վրաստան և Աղվանք ճամփորդությամբ: Մնում է, ուրեմն, ընդունել 422 և սրան անմիջապես հաջորդ տարիները, քանի որ 422 թվականին հաշտություն կնքված լինելով, ճամփորդությունը ազատ էր հայտարարված:



Ճիշտ չի դատում Պիտերսը, քանի որ Կորյունը հայտնի կերպով ասում է, որ Մեսրոպը վերադարձին ներկայացավ Արտաշես Գ-ին, մինչդեռ մեկնելու ժամանակ նրան հշածեշտ չի տալիս, ուրեմն Մեսրոպը մեկնել է 422-ից առաջ, երբ դեռ Արտաշեսը չէր նստած: Եվ ճիշտ Պիտերսի ասածի համաձայն, եթե 421 և 422 թվականներին պատերազմ էր, ուստի Մեսրոպ մեկնել է 421-ից էլ առաջ, այն է 420 թվականին, ինչպես ասացինք: Զուր է կարծում նա, թե այդ թվականից առաջ Մեսրոպը զբաղված էր ներքին ճամփորդութեամբ՝ Գողթն, Սյունիք, Վրաստան և Աղվանքը՝ նախ՝ Աղվանք դեռ չէր գնացել (պիտի գնար Հունաստանից դարձին), իսկ մյուսների համար՝ սկսած 405-ից մինչև 420 թվականը, ամբողջ 15 տարի ունեւր Մեսրոպ ազատորեն ման դալու համար այդ երկրները: Վերադարձի համար էլ շատ հարմար է գալիս 422 թվականը, երբ, ըստ Պիտերսի, ճամփորդությունը ազատ էր հայտարարված:

Ըստ այսմ բոլորովին ճշտվում է մեր նշանակած 420—421 թիվը:

Վաղարշապատ վերադառնալու նախօրյակին էր, որ Մեսրոպը պատահեց աղվան Բենիամինին և հնարեց աղվաներեն գիրը (422):

Վաղարշապատ հասնելուց «մի քանի օր հետո» Մեսրոպը գնաց Աղվանք, հետո Բաղասական, Գարդման, որից հետո՝ երկրորդ անգամ Վրաստան:

Եթե Աղվանից քարոզության համար տանք մի տարի (423 թ.), հաջորդ տարին պետք է ղնել Վրաստան, ուր նոր էր թագավոր նստել Արշիլը (424):

#### 11. Ե՞րբ ծնվեց Մեսրոպը:

Որեւէ պատմիչ չի հիշատակում, թե քանի՞ տարեկան մեռավ Մեսրոպը կամ քանի՞ տարեկան էր, երբ ընդունեց կրոնավորական սքեմը: Գիտենք միայն, որ շատ ծեր էր, երբ մեռավ: Բայց ծերը կարող է լինել թե՛ 70, թե՛ 80 և թե՛ 90 տարեկան. Օրմանյան («Ազգապատում», Ա, էջ 323) մեռած ժամանակ ղնում է «85 տարեկան եղած, եթե ոչ ավելի», ուստի ծնունդն էլ ղնում է ամերձավորաբար 353-ին, 5 տարեկան պզտիկ Սահակի, որուն ծնունդը դրրինք 348-ին» (էջ 266): Գիտենք, որ 394-ին Մեսրոպը թողնում է արքունի ծառայությունը և կրոնավոր է դառնում: Այս ժամանակ Մեսրոպը 40 տարեկան էր: Եթե 10 տարի ղնենք արքունի ծառայությունը, դուրս կգա, որ արքունի ծառայության է մտել 384 թվականին, երբ 30 տարեկան էր: Կորյունը ասում է, թե Մեսրոպն արքունի ծառայության մտավ Առավանի հաղարպե-

տութիւն ժամանակ, բայց թագաւորի անունը չի տալիս: Այս բո-  
լորը ըստ Օրմանյանի: Մարկվարտը («Պատմութիւն Հայ նշանա-  
գրեբուն», էջ 58) արքունի ծառայութիւնը դնում է սգրեթէն 389-ին  
և Առաքանի հազարապետութիւնն էլ սկսված է համարում  
389-ին: Մարկվարտը Մաշտոցի կրօնական կոչումը դնում է 391—  
392 թվականին (ինչ որ ճիշտ չէ), որով ընդամենը 3 տարի է  
հաշվում պետական ծառայութիւնը՝ Օրմանյանի գրած 10-ի փո-  
խարեն: Եթէ Օրմանյանի 10-ը շատ է, Մարկվարտի 3-ն էլ քիչ  
է: Ուստի եթէ բավականանաք 5-ով, Մեսրոպը արքունի ծառա-  
յութիւն մտած կլինի 389-ին: Եվ եթէ համարենք, որ այդ միջո-  
ցին 25 տարեկան էր, ուրեմն ծնունդը կլինի 364-ին, որով 75 տա-  
րեկան հասակում մեռած կլինի:

Էմիլը Մեսրոպի ծնունդը դնում է 361 թվականին, որ մեր  
ընդունած թվականից 3 տարով միայն տարբեր է: Իսկ Ն. Ն. Թո-  
րոսյանը («Ընտիր Հայկազունք», էջ 166), 352—353 թվականին,  
որի հետ նույն է գալիս Օրմանյանը:

12. Այս բոլոր թվականները քաղում ենք Կորյունից: Տես-  
նենք այժմ, թե ի՞նչ տեղեկութիւն են տալիս մյուս պատմիչնե-  
րը և թե ի՞նչ արժեք ունեն նրանք:

Փարպեցին պատմում է, թե պարսից Շապուհ թագաւորը Հա-  
յաստանի թագաւոր է նշանակում Խոսրով Գ-ին: Հայերը մի ժա-  
մանակ հետո ամբաստանում են Շապուհի առաջ Խոսրովին, նա  
էլ գահընկեց է անում Խոսրովին և նրա տեղ գահ է բարձրացնում  
նրա Վոամշապուհ եղբորը: Սրա օրով տեղի է ունենում գրեթէ  
գլուտը, որից հետո Վոամշապուհը ապրում է «ամս քաղումս» և  
ապա մեռնում է «հասնալ ի յերկար ծերութիւն» (էջ 18): Սրա-  
նից հետո մեռնում է Փարսից թագաւոր Շապուհը և նստում է որ-  
դին Վոամ Կրման:

Վոամ Կրմանը Հայոց թագաւոր է նշանակում երկրորդ ան-  
գամ Խոսրով Գ-ին, որ գահակալում է միայն 8 ամիս և մեռնում է:  
Վոամ Կրմանն էլ մեռնում է և նրան հաջորդում է Հաղկերտ Ա,  
որ իր որդի Շապուհին հայոց թագաւոր է նշանակում, բայց Հաղ-  
կերտ «չև ևս յերկարեալ ի թագաւորութեանն՝ մեռանէր» (էջ 19):  
Նույն օրը սպանում են և Շապուհին: Սրանից հետո գահակա-  
լում է Վոամը, որ հայոց գահն է բարձրացնում Արտաշես Գ-ին:

Թե որքան սխալ են այս տեղեկութիւնները և որքան սար-  
սափելի է Փարպեցու տգիտութիւնը իրենից մի դար առաջ գա-  
հակալած պարսիկ թագաւորների ժամանակագրութիւն մասին՝  
անկարելի է նկարագրել: Այդ կարելի է տեսնել, երբ համեմա-  
տենք այս բոլորը պարսից թագաւորների ցանկի հետ:

Մասանյան թագավորների շարքում ունենք երկու Շապուհ, այն է Շապուհ Բ, որ գահակալից 310—379 և Շապուհ Գ, որ գահ նստավ միայն շորս տարի (384—388): Փարպեցին շի' ասում, թե որ Շապուհն է, որ թագավորեցրել և հետո գահընկեց է արել խոսրով Գ-ին և նրա տեղ դրել է Վռամշապուհին, որի մահից հետո ինքն էլ մեռել է: Եվ որովհետև սրա մահից հետո հաջորդել է իր որդին Վռամ Կրման, ուրեմն խոսքը Շապուհ Գ-ի մասին է: Բայց Շապուհ Գ ընդամենը նստել է շորս տարի և շորս տարվա մեջ ի՛նչպես կարելի է տեղավորել խոսրով Գ-ին (որին առնվազն տալիս են 3 տարի) և հետո Վռամշապուհի «ամս բազումս»: Պետք է ուրեմն հետևեցնել, թե Շապուհ Բ և Շապուհ Գ իրար են խառնվել ու միացել: Խոսրով Գ և Վռամշապուհ ըստ խորհնացու գահ են բարձրացել Շապուհ Բ-ի ժամանակ. իսկ Վռամ Կրմանի հայրը Շապուհ Գ-ն է: Այս երկուսը միեկնույնն է Փարպեցու համար: Երկուսի միջև գտնվում է Արտաշես Բ-ը, որ ամբողջապես ջնջվել է և կույ գնացել Փարպեցու մոտ: Բացի սրանից, Շապուհ Բ նստել է 69 տարի, Արտաշի Բ 5 տարի և Շապուհ Գ 4 տարի: Այս բոլորը գումարվելով տրվել է Շապուհին, որ ըստ այսմ գահակալել է 77 տարի: Ի՛նչ տուլանգ թագավոր...: Իրոք որ Շապուհ մորն արգանդից սկսեց թագավորել, բայց ապրեց միայն 69 տարի:

Վռամ-Կրման նստել է 389—399 թվականներին, ուրեմն գահակալել է 10 տարի, երբ սրա թագավոր նշանակած խոսրով Գ-ը ապրեց միայն 8 ամիս, հապա մնացած 9 տարին ո՛վ էր հայոց թագավոր: Հաղկերտ Ա թագավորել է 399—420 թվականներին, այն է ամբողջ 21 տարի և այս 21 տարին Փարպեցու մոտ դառնում է «չև ևս յերկարեալ ի թագաւորութեանն»:

Եթե ուրեմն մենք կարևորութուն տալինք Փարպեցուն, պիտի ասեինք, թե Վռամշապուհը մեռավ 388 թվականից առաջ, որովհետև այդ թվականին է մեռնում Շապուհ Գ-ը և հաջորդում է Վռամ Կրման՝ 389 թվականին: Եվ որովհետև գրերի գյուտն էլ եղել է Վռամշապուհի մահվանից առաջ, ուրեմն պիտի ընդունենք, թե գրերի գյուտը տեղի է ունեցել 380-ական թվականներին:

Դժբախտաբար այսպես է վարվել Մանանդյան իր վերջին ուսերինն աշխատության մեջ: Հավատարիվ անվստահելի Փարպեցու սուտ տեղեկութուններին (էջ 26—27), պարսից Շապուհ Գ թագավորի ժամանակ է դնում խոսրով Գ-ի գահակալութունը, անկումը և Վռամշապուհի գահ բարձրանալը (386 կամ 388 թվականին): Եվ որովհետև գրերի գյուտն էլ եղել է Վռամշապուհի 6-րդ տարին, ուրեմն գրերի գյուտի թվականը ընդունում է 391 կամ 393:

Փարպեցու վկայութիւնը հետեւյալն է. «Ժպէ իբրև մերժեալ լինէր խոսքով ի Թագաւորութենէն՝ խեղդէին Հայք ընդ Շապուհ՝ ալ թագաւոր իրեանց. և եւ հաւանեալ Թագաւորեցուցանէր եւս զՎոսմշապուհ՝ զեղբայր նորին խոսքովուս (Փարպեցի, էջ 13): Բայց շարունակենք Փարպեցին. սնկաց յետ այնորիկ Թագաւորն Վոսմշապուհ՝ անս բազումս և հասեալ ի յերկար ծնութիւն՝ վախճանեցաւ... յետ այնորիկ մեռաւ և Շապուհ՝ արքայն Պարսից և Թագաւորեաց Վոսմ որդի նորա, որ էր Կրման արքայ, յորմէ խեղդեցին իրեանց Հայք թագաւոր գնույն միսանգամ զխոսքով զեղբայր Վոսմշապուհոյ, զոր յառաջնոյն բանասարկութիւնսք ետուն մերժել զնա Հայք՝ Շապուհոյ արքային Պարսիցն (Փարպեցի, էջ 18):

Շապուհ Գ թագավորել է 4 տարի (384—388) և Վոսմ Կցրման նստել է 389 թվականին: Այս 4 կամ 5 տարվա շրջանի մեջ ինչպե՞ս կարելի է տեղավորել խոսքով Գ-ի նրեց տարին և Վոսմշապուհի բազմաթիվ տարիները: Պարզ չէ՞, որ բոլորովին սխալ է Փարպեցին և նրա ասածները վրա հիմնվելն էլ՝ անխոհեմութիւն:

Այս բոլորը տեսնելուց հետո, ավելորդ է ասել, թե բնավ կարևորութիւն պետք չէ տալ Փարպեցու այն տեղեկութիւն, որ ասում է, թե Մեսրոպը ճգնաւորական կյանք վարեց մինչև Վոսմշապուհի հինգերորդ տարին: Այս սհինգերորդը-ը Կորյունի տված թվականն է, երբ Մեսրոպը գնում է Միջագետք: Ինչքա՞ն լավ է հասկացել Փարպեցին Կորյունի պատմածը. և որպեսզի թյուրիմացութիւն չլինի, այդ հինգերորդ տարին հիշելուց անմիջապես հետո ավելացնում է. «Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեալ՝ ի պատմութենէ գրոց անն ցանկալի Կորեան... կարդացեալ տեղեկացի» (Փարպեցի, էջ 13):

Շատ վատ է արել Չամչյանը («Պատմութիւն Հայոց», Ա, էջ 763), որ ո՛չ միայն արժեք է տվել Փարպեցու այս նինգերագին, այլև եղծելով Փարպեցու ասածը, այս նինգերագը համարում է ոչ թե Մեսրոպի դուրս դալը անսպառից, ինչպես հայտնարար ասում է Փարպեցին, այլ Մեսրոպի կրոնավորութիւն սկիզբը, որից 10 տարի հետո էլ գրեթէ գյուտը: Եվ այս պատճառով է, որ Կորյունի Ե և Զ տարիները դարձնում է ԺԵ և ԺԶ:

Փարպեցուց անհամեմատ ավելի բարձր է խորհնացին, որ ըստ կարելւոյն ծանոթ է պարսից և հունաց թագավորների ժամանակագրութիւն: Ըշտիվ գիտե հունաց կայսրների շարքը՝ Թեոդոս Մեծ, Արկադ և Թեոդոս Փոքր: Պարսից թագավորների շարքը դնում է այսպես՝

Շապուհ Բ 70 տարի.

Հազկերտ Ա 11 տարի

Արտաշիր Բ 4

Վառս Բ 21 »

Վառս Կրման 10 »

Հազկերտ Բ— »

Այս շարքը և տրված տարիները ճիշտ են. միայն փախցրած է Շապուհ Գ՝ 4 տարի. տրված տարիներից սխալ են Հազկերտ Ա 11 տարի, որ պիտի լինի 21 տարի և Վառս Ե (որ սխալմամբ կոչում է Վառս Բ) 21 տարի, որ պիտի լինի 18 տարի: Սխալ է նաև պարսից և հունաց թագավորների ժամանակագրութունը. այսպես՝ Շապուհ Բ-ի դեմ դնում է Արկադ, որ ճիշտ չէ. իսկ Վրառս Կրմանի դեմ Արկադ և Հազկերտ Ա-ի՝ Թեոդոս Փոքր, ինչպես նաև Արկադի ժամանակ Հովհաննես Ոսկեբերան՝ ճիշտ են:

Հայոց թագավորների շարքը դնում է հետևյալ ձևով.

Խոսրով Գ 5 տարի = Շապուհ

Վառսշապուհ 21 » = Շապուհ, Արտաշիր, Վառս Կրման, Հազկերտ

Խոսրով Գ 1 » = Հազկերտ

Շապուհ 4 » = »

անիշխան 3 » = Վառս Բ

Արտաշես Գ 6 » = Վառս Բ

Այս համապատասխանութունները և տարիների հաշիվը ճիշտ են. այսպես՝ ներքևից վերև գնալով, Վառս Բ-ի համար ունենք Աշտաշես Գ-ի 6 տարին և անիշխանության 3 տարին, միասին 9 տարի, որ հանելով 428-ից (Արտաշեսի անկման թվականը) ստանում ենք 419, որ համարյա նույն է Վառսի գահակալության թվականի հետ (ճիշտը՝ 420).— Հազկերտ Ա-ի համար ունենք Շապուհից 4 տարի, Խոսրով Գ-ից 1 տարի, որոնց վրա ավելացնելով Վառսշապուհից 6 տարի, կունենանք Հազկերտի գահակալության 11 տարիները, ինչպես գիտե խորենացին.— Վառսշապուհին մնաց (21—6) 15 տարի, որ ճիշտ Վառս Կրմանի 10, Արտաշիրի 4 և Շապուհի վերջին մի տարվա գումարն է:

Վերևում ցույց տվինք պարսից թագավորների ժամանակագրության սխալները, ուր 11 տարի պակասում է: Չգիտենք միայն, թե հայոց թագավորների ժամանակագրութունն է ճիշտ և նրան զոհաբերված է պարսից ժամանակագրութունը, թե՞ պարսից ժամանակագրութունը սխալ լինելով, հայոցն էլ սխալ է:

Ինչ էլ որ լինի, ցանկը չի կարելի օգտագործել իբրև ճշմարիտ ուղեցույց, հակառակ դեպքում մենք բազմաթիվ սխալների

մէջ կրնկենենք: Օրինակ՝ Խորենացու համաձայն Վոսմշապուհի գահակալության տարին պիտի զենենք Շապուհի վերջընթեր տարին, որ է 378. բայց գահաճախ տարբեր է Կորյունից, որից մենք դուրս բերինք 399 (Մարկվարտը զնում է 398/9, Օրմանյանը՝ 389 թ.):

Հետաքրքրական է քննել Խորենացու վերջին թվական տեղեկությունները Սահակի մահվան առթիվ: Այս տեղեկությունները Սահակը, որ վախճանվել էր 438 թվականին, աթոռակալել էր 51 տարի, սկսած Խոսրովի երրորդ տարուց: Ըստ այսմ՝

Սահակ նստել է 438—51 =	387.
Խոսրով նստել է 5 տարի	385—390.
Վոսմշապուհ 21 տարի	390—411.
Խոսրով կրկին՝ 1 տարի	411—412.
Շապուհ 4 տարի	412—416.
անիշխանություն 3 տարի	416—419.
Արտաշես Գ 6 տարի	419—425

Այս բոլորը ըստ Խորենացու վերջին տեղեկության, որի մէջ սխալ է Արշակունյաց անկման թվականը՝ 425 փոխանակ 428, սխալ է՝ Շապուհի մահվան թվականը՝ 416 փոխանակ 420, սխալ է Վոսմշապուհի գահակալության թվականը՝ 390 փոխանակ 399: Բայց այս վերջինը հակասում է նույնիսկ իրեն՝ Խորենացուն, որ (Գ, ծ) Վոսմշապուհի գահակալությունը դրել էր Արտաշրի ձեռքով՝ Շապուհ Բ-ի վերջընթեր տարում, այն է 378:

Խորենացուց կարող ենք քաղել Սահակի հաջորդ երեք հակաթոռ կաթողիկոսների թվականը, որ է.

Սուրմակ 1 տարի 428—429.

Բրքիշո սսորի 3 տարի 429—432.

Շմվել ասորի 5 տարի 432—437:

Տարօրինակ բաներ է ասում Ասողիկը: Ըստ այս պատմիչի՝ Խոսրովի եղբայր և հաջորդ Վոսմշապուհը նստել է 25 տարի. իր գահակալության 5-րդ տարին համապատասխանում է Արտաշրի երկրորդ տարվան, երբ բերվեցին Գանիելյան զորքը: Արտաշիրը նստավ 379 թվականին, իր երկրորդ տարին է 380, հետևաբար Վոսմշապուհ նստել է 376 թվականին և 380 թվականին է Գանիելյան զորքը: Հաջորդ տեղեկության մէջ էլ ասում է, թե Վոսմշապուհի 6-րդ տարին համապատասխանում է Վոսմ Կրմանի առաջին տարվան, երբ հնարվեցին Մեսրոպյան զորքը: Վոսմ Կրմանի առաջին տարին է 389, ուրեմն այս թվականին է հնարվել Մեսրոպյան զորքը:

Բայց այս տարին Վոսմշապուհի 6-րդ տարին է, ուստի Վոսմշապուհը նստել է 384-ին: Որչա՞փ զարմանալի մարդ է այս Վոսմշապուհը, որ մեկ գահակալում է 376 թվականին, մեկ 384 թվականին, որի գահակալության 5-րդ տարին համապատասխանում է Արտաշրի երկրորդ տարվան (380), իսկ 6-րդ տարին համապատասխանում է Վոսմ Կրմանի առաջին տարվան (389): Ասողիկն անխիշխանության շրջանը դնում է 11 տարի, փոխանակ խորհնացու 3-ի:

Մնացյալ տեղեկությունները ճիշտ են կամ գոնե խանդարիչ հանգամանք չունեն:

Իհարկե Ասողիկն այնքան անմիտ չէր, որ այսպիսի հիմարություններ դուրս տար. պետք է ուրեմն կարծել, որ ձեռագիրը չափազանց խանդավաժ է և հետևաբար անօգտագործելի:

Ենորհալին իր վիպասանության մեջ Մեսրոպի ամբողջ գործունեությունը դնում է խոսրով 9-ի օրով, նախքան Վոսմշապուհ: Բայց «վիպասանութիւն»-ը Ենորհալու աշակերտական գործն է:

Սամվել Անեցին պարսից Արտաշիր թագավորի գահակալությունը դնում է ՆԻԱ (421) թվականին, նույն թվականին և Դանիելյան գրերի գյուտը, 422-ին էլ Մեսրոպյան գրերի գյուտը, իսկ 467-ին Սահակի և Մեսրոպի մահը: Սահակի և Մեսրոպի մահը շատ լավ հայտնի է մեզ (438), ուստի 29 տարի՝ սխալ է Անեցին: Արտաշիր Բ նստել է 379 թվականին, ուստի 42 տարի՝ սխալ է Անեցին:

Էլ ի՞նչ վստահություն մնաց գրերի գյուտի թվականի վրա:

Երևի Անեցին քրիստոնեական թվականը ուրիշ կետից էր հաշվում:

Վարդան պատմիչն էլ գրերի գյուտը դնում է Վոսմշապուհի հինգերորդ տարին (համարյա՞ ճիշտ է), որ համապատասխանում է Արտաշրի առաջին տարվա (379), սոսկալի սխալ՝ Սա էլ Ասողիկից է քաղված:

Մխիթար Այրիվանեցի գրերի գյուտը դնում է 423-ին. հետևել է Սամվել Անեցուն, միայն մի տարի ավելացնելով:

«Վայսերաց պատմություն»-ը գրերի գյուտը դնում է Արկադիոսի 10-րդ տարին՝ Վոսմշապուհի ժամանակ: Արկադիոս նստավ 395 թվականին, 10-րդ տարին անում է 404. զարմանալի կերպով ճի՞շտ:

Այս բոլորից դուրս պիտի հիշենք նաև Սեբեոսի ժամանակագրությունը հայոց, պարսից և հունաց թագավորների մասին (տե՛ս Սեբեոս, Երևան, 1939, էջ 19—20):

Պարսից թագավորներից հիշենք՝

Շապուհ Բ	70 տարի	Հազկերտ Ա	21 տարի
Արտաշիր	4 »	Վռամ Ե	22 »
Վռամ Կրման	11 »	Հազկերտ Բ	19 »

Հունաց կայսերներից հիշենք՝      Հայոց թագավորներից էլ հիշենք՝

Արկաղիոս	19 տարի	Խոսրով	3 տարի
Ոնորիոս	22 »	Վռամշապուհ Տ	»
Թեոդոս Բ	22 »	Վերջ Արշակունյաց:	

Այս ցուցակից տեսնում ենք, որ Սասանյան թագավորների ժամանակագրությունը ընդհանրապես ճիշտ է. պակասում է Շապուհ Գ՝ 4 տարի և սխալ է Վռամ Ե-ին տրված 22 տարին (փոխանակ 18-ի): Սխալ են նաև հունաց կայսրների տարեթվերը. Արկաղիոսին տրված է 19 տարի, մինչդեռ պիտի լինի 13 տարի, Ոնորիոսին տրված է 22 տարի, մինչդեռ պիտի լինի 28 տարի. իսկ Թեոդոս Բ-ին տրված է 22 տարի, մինչդեռ պիտի լինի 42 տարի: Այսպիսով հունաց կայսրների բոլոր տարեթվերը սխալ են: Հայոց թագավորներից ոչ Խոսրովն է հիշված երկրորդ անգամ, ոչ Շապուհը և ոչ Արտաշես Գ:

Շատ ավելի վատ են պարսից և հունաց թագավորների ժամանակագրության հաշիվները: Այսպես, ըստ Սեբեոսի, Շապուհի 70-րդ տարին (որ է 379 թ.) հունաց գահն է բարձրացել Արկաղիոս. մինչդեռ Արկաղիոս նստել է 395 թվականին. ուրեմն 16 տարվա սխալ կա:

Շապուհի որդի Արտաշիրը գահակալել է ըստ Սեբեոսի՝ Արկաղիոսի 5-րդ տարում: Արկաղիոսի 5-րդ տարին է 400 թ., իսկ Արտաշիրը նստել է 379 թվականին. ուրեմն 21 տարվա սխալ կա:

Հազկերտ Ա և Ոնորիոս ըստ Սեբեոսի գահ են բարձրանում միևնույն տարում. մինչդեռ սրանց միջև 4 տարի տարբերություն կա:

Այսպես և՛ բոլորը:

Ժամանակակից հայ թագավորներից Խոսրով Գ գահ է բարձրացել ըստ Սեբեոսի՝ Վռամ Կրմանի երկրորդ տարում (=391) և Արկաղիոսի 11-րդ տարում (=416): Վռամշապուհ գահ է բարձրացել Վռամ Կրմանի 6-րդ տարին (=395) և Արկաղիոսի 14-րդ տարին (=409): Հայոց Արշակունի թագավորությունը վերջացել է Հազկերտ Ա-ի երկրորդ տարում (=401) և Ոնորիոսի երկրորդ տարում (=397):



Ինչպես տեսնում ենք, այս բոլոր թվականներն էլ սխալ և անհարիր են և նրանց վրա հենվել բոլորովին սխալ է:

Միայն Կորյունն է, որի տված թվականները համապատասխանում են ճշտիվ Սասանյան թագավորների ստույգ թվականներին:

13. Վերջացնենք մեր քննությունները Մեսրոպի ժամանակագրության մասին: Իբրև ամփոփում այս բոլորի, տալիս ենք մի ժամանակագրական տախտակ, որ պարունակում է նրա կյանքի բոլոր դեպքերը, ծնունդից մինչև մահը (364?—439): Այս բոլոր թվականները մեր անձնական խուզարկության արդյունքն են ներկայացնում, հիմնված միակ ժամանակակից և վավերական պատմիչ Կորյունի վրա: Կան քննիչներ, որոնք տարբեր եզրակացության են հասել և տարբեր թվականներ են դնում: Դրանցից մի քանի կարևորների վրա արդեն խոսեցինք և տվեցինք մեր հերքումը: Բայց կարիք չկա, որ ամեն մեկի վրա երկար ծանրանայինք: Ուստի մնացյալների համար տալիս ենք մի ընդհանուր համեմատական տախտակ, ուր մեջ ենք բերում Չամչյանի, Գաթեր-ճյանի, Գարագաշյանի, Ալիշանի և Օրմանյանի տված թվականները: Ֆետոյանի տված թվականները չհիշեցինք, որովհետև ընդհանրապես մեր հանած թվականների հետ համաձայն դուրս եկան, չնչին տարբերությամբ: Պատճառն այն է, որ երկուսն էլ մեզ առաջնորդ ենք բռնել միշտ Կորյունին: Մյուսները, եթե տարբեր թվականների են հասել, մեծավ մասամբ նրանից է, որ կարևորություն են տվել Փարպեցու, Խորենացու կամ ավելի ուշ եկող պատմիչների ասածին, մոռանալով աղբյուրների աղբյուր Կորյունին, և կամ Հազկերտ Բ-ի մահվան տարեթիվը դնելով 439 (փոխանակ 438-ի): Օրինակի համար Չամչյանը (Ա, էջ 764) Մեսրոպի մահը դնելով «առաջին լրացեալ ամ թագաւորութեան երկրորդ Յազկերտի, իսկ թագաւորել այսր Յազկերտի եղև ի վախճան 439 ամի», այնու ամենայնիվ մահը համարում է 441 թ.: Եթե Հազկերտ գահակալեց 439-ի վերջը, ուրեմն նրա առաջին տարին է 439—440 և Մեսրոպի մահն էլ պիտի լինի 440 թվականին (ինչու՞ է դնում 441): Այս 441-ից հանելով 35, ստանում է գրերի գյուտի թվականը՝ 406. մինչդեռ հենց իր հաշվով պիտի վերցնենք 440 և սրանից էլ 45 տարի հաշվելով՝ գրերի գյուտը պիտի դնենք 405. իսկ Հազկերտի գահակալությունը դնելով մի տարի շուտ (այն է 438), գրերի գյուտն էլ պիտի լինեն ճիշտ 404, ինչպես դրինք մենք էլ: Սրա նման էլ էմին, ինչպես և Ֆեթթեր հայագետը Մեսրոպի մահը դնում են 441 թվականին (տե՛ս վերջինիս «Հայկական աշխատասիրությունք», Վիեննա, 1895, էջ 67). որովհետև կարծում է, թե Սահակը մեռավ Հազկերտ Բ-ի երկրորդ

տարին, այսինքն 440-ին: Իբրև հիմք է քնդունելու ուրեմն Խորենացու թերի տեղեկությունը, որ հերքված է: Ակինյանը (աշանդես ամսօրյա, 1935, էջ 512) Մեսրոպյան գրերի գյուտը ղնում է 407—408 թվականին, Վոսմշապուհի 6-րդ տարում. բայց այս թվականը նույնիսկ իր ասածին հակառակ է. որովհետև ձքի Վոսմշապուհ նստել է ըստ Ակինյանի 400 թվականին (տե՛ս աշանդես ամսօրյա, 1935, էջ 465), ուրեմն առաջին տարին լինում է 400—401, երկրորդը՝ 401—402, երրորդը՝ 402—403, չորրորդը՝ 403—404, հինգերորդը՝ 404—405 և վեցերորդը՝ 405—406. Ինչո՞ւ գրել 407—408: Անհասկանալի է մնում ինձ, թե ինչո՞ւ Մարկվարտը (էջ 58) գրի գյուտի թվականը ղնում է 402—403:

	Չամյան	Գաթրեյան	Գաթրեյան Գաթրեյան	Օրբանյան	Ալիշան	Ակինյան
Մեսրոպի ծնունդը	360	361	361?	353	354	361?
Սահակ գահակալում է	390	388	388	387	389	386
Վոսմշապուհ հաջորդում է Խոսրով Գ-ին	392	391	391	389	390	400
Մեսրոպ կրոնավոր է դառնում	390		395	394	396	391
Վաղարշապատի ժողովը	402			403	403	
Գանիեյան գրեր	403		396?	404	404	
Մեսրոպյան գրերի գյուտը	406	406	405	406	403	407
Վոսմշապուհի մահը	413	414	414	414	412	409
Խոսրով Գ (երկրորդ անգամ)	414		415	415		
Շապուհ թագավոր հայոց փախչում է	419		420	419		
Արտաշես Գ գահակալում է	422	422		422	422	421
Վերջ Արշակունի հարստության	428	428		428	428	428
Սահակի մահը	440	440	440	438	439	438
Մեսրոպի մահը	441	441	440	439	440	439

364? Սնունդ Մեսրոպ Մաշտոցի.

389? Մտնում է պետական ծառայության. գահակալում է Վոսմ Կրման.

390

391 Նեկտարիոս նստեց պատրիարք.

392

393

394 Մեսրոպ Թողնում է արքունիքը և կրոնավար է դառնում.

395 Մեռավ Թեոդոս Ա և գահակալեց Արկադիոս.

396

397 Մեռավ Նեկտարիոս.

398 Ոսկեբերան նստում է պատրիարք. քարոզություն Գողթնի. մեռնում է Վռամ Կրման, գահակալում է Հագկերտ Ա.

399 Գահակալում է Վռամշապուհ (Ա տարի).

400 Մեսրոպ գումարում է Վաղարշապատի ժողովը գրեթե գյուտի համար.

401 Դանիելյան գրերը բերվում են Հայաստան (Գ տարի Վրամշապուհի).

402 Փորձում են Դանիելյան գրերը.

403 Մեսրոպ զնում է Միջագետք (Ծ տարի Վռամշապուհի).

404 Մեսրոպ հնարում է հայերեն տառերը (Ձ տարի Վռամշապուհի). Ոսկեբերան գահընկեց. նստում է Արսակիոս պատրիարք.

405 Լուսավորություն Փայտակարանի. մեռնում է Արսակիոս. հաջորդում է Ատտիկոս.

406 Ս. Գրքի թարգմանությունը վերջացավ. բացվեց Վարդապետարանը.

407. Լուսավորություն Գողթան.

408. Լուսավորություն Սյունիքի. հնարում է վրաց գրերը. մեռավ Արկադիոս և գահակալեց Թեոդոս Բ.

409 Լուսավորություն վրաց.

410

411

412

413

414

415

416

417

418

419

Լուսավորություն Տուրուբերանի,  
Աղձնիքի, Մոկաց, Կորճալքի, Վասպուրականի և  
Պարսկահայքի.

420 Հագկերտ Ա սպանվեց. Շապուհ փախավ և սպանվեց. գահակալեց Վռամ Ծ. Մեսրոպ զնաց Հոռնահայաստան և Պռլիս.

421 Անիշխանություն.

- 422 Փահակալում է Արտաշես Գ. Մեսրոպ հնարում է աղ-  
վաներեն գրերը. վերադառնում է Մեսրոպ Լուսահայրից.
- 423 Լուսավորություն Աղվանից, Բաղասականի և Փարզմանի.
- 424 Լուսավորություն Վրաստանի և Գուգարաց.
- 425 Մեռնում է Ատտիկոս պատրիարք.
- 426 Սիսիննիոս նստում է պատրիարք.
- 427 Եզնիկ և Լովսեփ գնում են Եդեսիա. Սիսիննիոս մեռ-  
նում է.
- 428 Արտաշես Գ գահընկեց է լինում. պաշտոնանկ է լինում  
Սահակ, նստում է Սուրմակ հակաթոռ Սահակի, նեստոր  
նստում է պատրիարք.
- 429 Եզնիկ, Լովսեփ, Ղևոնդ և Կարյուն գնում են Պոլիս. հա-  
կաթառ է նստում Բրքիշո ասորի.
- 430
- 431 Եփեսոսի ժողովք. նեստոր կարգալույծ. նստում է Մաք-  
սիմիանոս. Թարգմանիչները վերադառնում են Հայաս-  
տան.
- 432 Ս. Գրքի երկրորդ թարգմանությունը. հակաթոռ է նըս-  
տում Շմվել ասորի.
- 433
- 434 Մեռնում է Մաքսիմիանոս և նստում է Պրոկղ պատ-  
րիարք.
- 435 Թղթակցություն Սահակի, Մեսրոպի, Պրոկղի, Ակակի.
- 436
- 437 մեռնում է Շմվել ասորին.
- 438 Մեռավ Վոամ Ե և գահակալեց Հազկերտ Բ. Մահ Սա-  
հակի.
- 439 Մահ Մեսրոպ Մաշտոցի:

## ԵՐՐՈՐԳ ՄԱՍ

### Հ Ա Յ Ո Ց Գ Ր Ե Ր Ը

Գ Լ ՈՒ Ե Ա

#### ՀԱԹՅԱՆ ԳՐԵՐԸ

Հայոց գրերի վրա խոսելու ժամանակ ամենից առաջ պետք է հիշատակել հաթյան հարցը, որ 90-ական թվերին մեծ աղմուկ հանեց գիտական աշխարհում՝ կապվելով հայերի հետ մասնի տեսությամբ:


Նախ տեսնենք, թե ովքե՞ր են հաթերը.— Եգիպտական մեհենադրոշմ, ասորեստանյան և խալդյան բևեռագիր արձանագրությանց մեջ հիշատակված է Ht, Hâte, Hatti, Hâti անունով մի երկիր, որ երբայցիք կոչում են Hittim (Աստվածաշնչի հայ թարգմանության մեջ գրված է Քեսացիք): Այս երկիրը բռնում է գլխավորապես այժմյան Կիլիկիան: Հաթյանների մասին հիշյալ արձանագրությանց մեջ կան ինչ-ինչ պատմական տեղեկություններ, որոնցից երևում է, թե հաթյան ժողովուրդը գոյություն ունեւ Քրիստոսից դեռ 1500 տարի առաջ և պատմական շրջանում պատերազմներ էր մղում շրջակա ազգերի՝ Եգիպտացոց, Ասորեստացոց, Ասորոց և խալդյանց հետ: Այս ազգը թողել է նաև հատուկ նշանագրերով մի խումբ արձանագրություններ, որոնց մեջ պատմում է իր թագավորների քաջագործություններն ու աշխարհաշինությունները: Մինչև մասնի ժամանակը գտնված էր 60 հաթյան արձանագրություն, բայց ոչ մի տեղ չէր ավանդված հաթյան գրերի բանալին: Գիտունները զանազան ժամանակներ զբաղվելով այս արձանագրություններով, ջանացին լուծոմ տալ նույն անժանոթ լեզվին: Ամենից հաջողը այս փորձերի մեջ՝ կատարեց գերմանացի մասնագիտականը, որ այն արդյունքին հասավ, թե հաթյանները ուրիշ բան չեն, եթե ոչ Հայոց ազգի նախնիքը, և հաթերեն արձանագրությունները ուրիշ բան չեն ներկայացնում, եթե ոչ հայերեն լեզվի ամենահին վիճակը՝ ամենահին հայկազան նշանագրերով: Ըստ մասնի Հաթերը կամ հին Հայերը մնալով Կիլիկիայի մեջ երկար ժամանակ, ն. Ք. շուրջ 2



դարում գաղթեցին Կիլիկիայից դեպի Խաղթինների երկիրը և նվաճելով այն՝ դարձրին իրենց հայրենիքը, որ և կոչեցին Հայաստան:






















Ավելորդ ենք համարում խոսել մանրամասն այս խնդիրների մասին, քանի որ մեր ծրագրած սահմանից դուրս է: Բայց կարծում ենք, թե պետք է հարկազուր շահով խոսել հաջյան նշանագրերի մասին, քանի որ նրանք համարված են հայկական հնագույն այբուբենը:

Հաջյան նշանագրերից մենք օրով ծանոթ էին 92 հաս՝ այլ և այլ նշանաձևերով, որոնք խնամքով ի մի է ամփոփել մենք իր աշխատության մեջ՝ Hittiter and Armenier, Strassburg, 1898, տախտակ I—X: մենք այդ նշանագրերը բաժանում է իրեր կարգի. ա. Գաղափարանշաններ, բ. Չայնանշաններ և գ. Չայնանիշներ:

Գաղափարանշանները, որոնք մի ամբողջ բառ, հատուկ կամ հասարակ մի անուն են արտահայտում, թվով 57 են ըստ մենքի հավաքման, որոնցից ներկայացնում ենք մի քանիսը:

1.  Աստուած Ինչ.

2.   Syennesis Աստուած.

3.                       

Ձայնանշանները ներկայացնում են մի տառ կամ մի վանկ՝ բաղկացած մի ձայնավորից և մի բաղաձայնից, և կամ երկու բաղաձայններից՝ միացած միջին ձայնավորով: Ենսենի ցանկը ունի այսպիսի 28 նշան, որոնցից մի քանիսը դնում ենք այստեղ:

17. ① Gargum կամ Markas  
 18. ☞ msi = medzi? "Մեծ"  
 19. ☞ psi = wadji "հզոր"  
 20. ☞ imia = emio? հզոր, մեծ  
 21. ☞ x + m = ?

22. ↑ ↓ á, այն է a, u.  
 23. ॥ ॥ í, այն է i, e.  
 24. ☞ (Spiritus lenis).  
 25. ( r.  
 26. ☞ ☞ k, ka, ak.  
 27. ☞ t.  
 28. ॥ ॥ in?  
 29. ☞ n, ni.  
 30. ☞ s.  
 31. ① m.  
 32. ☞ p (w).  
 33. ॥ ॥ ri, rk  
 34. ☞ t'ar.  
 35. ☞ st.  
 36. ☞ ar.  
 37. ॥ ॥ t'í?  
 38. ☞ mí.  
 39. ☞ p (á).

Ձայնանիշանները ընթերցանությունը հեշտացնող տառաձևեր են, որոնք տառական կամ ձայնական նշանակութուն չունեն, այլ ցույց են տալիս, թե որտեղ է սկսում կամ ուր է վերջանում բառը, թե բառը դրված է ուղղական հոլովով, թե հաջորդ նշանը ծառայում է իբրև գաղափարանշան և այլն: Ձայնանիշանները՝ որոնց թիվը ? է ըստ ենսենի, հետևյալներն են.

40. \ բառի սկիզբը կամ վերջը.  
 41. | ( " " " "

42. | ( արձանագրութեան սկիզբը գրուած է մի անգամ.

43. | ( բառանշատ.

44. ( ) Նշան ուղղականի

45. ) & ( գաղափարագրի նշան կամ բառանշան:

Շատ հետաքրքրական է քննել, թե ինչ ծագում ունենին այս նշանագիրները, որ հայկական մտքի առաջին և հնագույն արգասիքն են համարվում: Ենսենի քննութեամբ (նշվ. աշխ., էջ 74—76) հայկական արձանագրութեանց ամենահինը ն. ք. մտտ 1000 թվից է: Բայց նույնիսկ այս ժամանակի արձանագրութեանց մեջ գործածված նշանագրերը արդեն այնպես զարգացած ձևեր ունին, որ ակնհայտնի երևում է, թե հնագույն պատկերագրի շարունակութունն են: Այս մտածութեամբ պետք է կարծել, որ հայկական նշանագրութունը հնարված է գոնե ն. ք. 1100—1200 թվերին: Այս ժամանակ ասորեստանյան ազդեցութունը մեծ չէր և չէր տարածված հայկականների վրա, ուստի շինք կարող կարծել, թե հայկական նշանագրութունը նրանցից է ձևացել: Բայց նույն ժամանակները ծաղկած էր եգիպտական քաղաքակրթութունը. այնպես որ, եթե հայերը ուղենային իրենց գրութեան համար նախատիպար վերցնել, անշուշտ պիտի դիմեին եգիպտական գրութեան: Իրոք էլ կան շոշափելի ապացույցներ, որոնք ցույց են տալիս, թե հայկական գրերը եգիպտականից են կաղմված. այսպես՝ Զենճիրիլում կա մի փորագրութուն, որի վրա նկարված է մի գրող՝ եգիպտական գրիչը ձեռքին: Հայկական նշանագիրներից մի խումբ մեծ նմանութուն ունի եգիպտական նշանագրերի հետ. հատկապես հիշենք կրկնաձայր թագը, որ նշանակում է «թագավոր» և որ նման է եգիպտական կրկնաձայր թագին: Այս թագը կրում էին Եգիպտոսի ինքնակալները՝ իբրև Վերին և Ստորին Եգիպտոսի տիրողներ, որոնք միացրել էին երկու իշխանութեանց թագերը:

Ենսենի տեսութունը իր ժամանակ բավական հաջողութուն ունեցավ: Տարիներ հետո հարցը բոլորովին այլ կերպարանք ստացավ:

1906 թվին Նուգո Վինբլեր գերմանացին պեղումներ կատարեց հիթիթների Հաթթուշառ մայրաքաղաքի ավերակներում (այժմ Բողազքոյ, Անգորայից 145 կիլոմետր դեպի արևելք) և երևան հանեց 13,000 կտոր արձանագրութուն: Պրագայի համալսարանի չեխ պրոֆ. Հրոզնին լուծեց հիթիթերեն լեզվի գաղտնիքը, որ և ընդունված է այժմ բոլոր գիտնականների կողմից: Հիմնվեց մի նոր գիտութուն, որ կոչվում է հիթիթարանութուն<sup>1</sup>:

<sup>1</sup> Հիթիթերեն, հիթիթերեն անվանումների փոխարեն այժմ գործածվում են խեթեր, խեթերեն անվանումները, իսկ գիտութունը՝ խեթագիտութուն — հմբ.:



Հստ այս գիտութեան պետք է զանազանել իրարից բուն հի-  
թիթները, որոնք Փոքր Ասիայի բնիկներն են Հնդեվրոպացի եկ-  
վոր հիթիթներ (սրանց կարելի է կոչել Կամիսներ): Բուն հիթիթները  
պատկանում են Ասիանական ճյուղին և անհիշատակ ժամանակնե-  
րից բնակվում էին Փոքր Ասիայում: Կամիսները հնդեվրոպական  
ժողովուրդ են, որոնք ն. Ք. երրորդ հազարամյակի վերջում արշա-  
վեցին Փոքր Ասիա և նվաճելով տեղացիներին, իրենց իշխանու-  
թյունը տարածեցին մինչև Կիլիկիա, Ասորիք և Միջագետք:

Հիթիթական արձանագրութունները ներկայացնում են տեղա-  
կան 6 տարբեր լեզուներ, որոնք են կամիսերեն, հաթերեն, մանդա-  
յերեն, խուրիերեն, պալայերեն և լուվերեն: Սրանք զբված են մե-  
ծագույն մասամբ ասորեստանյան բևեռագիր արձանագրությամբ և  
հեշտությամբ կարդացվում են. փոքր մասը գրված է մեհենագիր  
տառերով: Այս է, որ մնասնը կարդաց և համարեց հայերեն: Հրոզ-  
նին լուծեց նաև բևեռագիր արձանագրութունները, բայց հետո ձեռ-  
նարկեց նաև լուծելու մեհենագիր արձանագրութունները: Հրոզնին  
հաստատեց, որ այս լեզուն էլ հնդեվրոպական է, թեև կրել է ուժեղ  
ազդեցություն ասիանական լեզուներից: մնասնի տեսությունից ոչ մի  
բան չմնաց, բացի այն, որ այդ լեզուն հնդեվրոպական էր: Հայերի  
հետ ենթադրյալ նույնութունն էլ բոլորովին անհիմն դուրս եկավ:

Այս բոլորը հիշեցինք ամբողջության համար. ավելի ընդարձակ  
տե՞՞ս իմ Հայոց լեզվի պատմ. Ա մաս, էջ 134—149:

## Գ Լ Ո Ւ Խ Բ

### ԽԱՆԴՅԱՆ ԲԵՎԵՌՊԵՐՆԵՐ

Այս երկրորդ գլխով ուզում ենք խոսել խաղչյան բևեռագրու-  
թյան վրա, որ թեև հայկական գրության մեջ երևալու բացարձակ  
իրավունք չունի, բայց իբրև Հայաստանի մեջ դարերով ապրող մի  
ժողովրդի գիրը, արժանի է մեր մասնավոր ուշադրության:

Ամենահին անձը, որ այս բևեռագրերի վրա ուշադրութուն է  
դարձրել, Խորենացին է: Սա՝ նկարագրելով Վանի բերդը և նրա վրա  
գտնված բազմաթիվ բևեռագիր արձանագրութունները, պատմում  
է, թե այս բոլորը Ասորեստանցոց Շամիրամ թագուհու ձեռակերտն  
է, ուստի և գրված ասորեստանյան լեզվով: Ահավասիկ իր բառերը.  
«Իսկ զամենայն երեսս քարին իբր գրչաւ զմոմ հարթեալ, բազում  
գիրս ի նմա գրեաց, որոց հայեցուածն միայն զամենայն ոք ի զար-  
մանս ածէ: Եւ ոչ միայն այս, այլ եւ բազում տեղիս յաշխարհին Հա-

յոց արձանս հաստատեալ, նովին գրով լիշատակ ինչ հրամայէ գր-  
րել. և բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատերս (նոր. Ա.  
ժգ.):

Նոր ժամանակներէց առաջին անգամ Սեն-Մարտենը ուշա-  
գրութիւն դարձրեց խորհնացու այս տեղեկութեան վրա: Գիտուն-  
ներէ հորդորանքով հրանսիական կառավարութեան կողմից Հա-  
յաստան ուղարկվեց Շուլց անունով քարոզիչն, որ 1828 թվին Վա-  
գալով, նույն քաղաքում և նրա շրջակայքում գտավ 39 խալդէան  
բեկազիր արձանագրութիւններ: Շուլցը պատրաստեց այս արձա-  
նագրութեանց ընդօրինակութիւնը, բայց ինքը շուտով սպանվելով  
բարբարոս քուրդ բեզերից, իր աշխատութիւնները կորուստի մատ-  
նելեցան: Տրանսիական դեսպանի և հյուպատոսի ստիպմամբ  
միայն՝ բավական ժամանակ հետո՝ կարելի եղավ ձեռք բերել այս  
ընդօրինակութիւնները, որոնք վերջապէս 1840 թվին Journal  
Asiatique թերթում (N 52) հրատարակվեցան:

Այս արձանագրութեանց ընթերցանութեամբ և լեզվով հետաքր-  
քրովելով գիտնականները, զանազան մեկնաբանութիւններ տվին:  
Հինքս անգլիացին համարեց արիական ծագումից և հայերեն (1848).  
Նորթմանը, որ ութ նոր խալդէան արձանագրութիւններ էլ գտավ,  
կարդաց և թարգմանեց ասորեստանյան բեկազիրի օգնութեամբ և  
հայերեն լեզվով (1872): Սակայն այս մեկնաբանութիւնները, իբրև  
սխալ և անարժեք, մերժվեցան գիտնականների կողմից: Ուղղագույն  
մեկնութիւնը, որ այժմ ընդունված է գիտութեան մեջ, տվավ Սեյս  
անգլիացին, որ նույնպէս ասորեստանյան բեկազիրի օգնութեամբ  
կարդալով նրանք, առանց հայերենի օգնութեան ղիմելու, միայն  
արձանագրութեանց համեմատական ուսումնասիրութեամբ թարգմա-  
նեց, կազմեց համառոտ բառարան և այլն:

Այսպէս ստեղծվեց Հայաստանի բեկազրութեանց գիտութիւնը.  
կատարվեցան նորանոր հետազոտութիւններ՝ նոր արձանագրու-  
թիւններ երևան հանելու համար: Այս հետազոտութեանց մեջ մեծ  
մաս ունին Մեսրոպ եպոս. Սմբատյան և մանաթանդ Քելք և Լեման  
գերմանացիները, որոնց շնորհիվ այժմ երևան են հանված մոտ 200  
արձանագրութիւն:

Արձանագրութեանց վերծանութեամբ երևան եկավ նաև Հայաս-  
տանի հնագույն վիճակի պատմութիւնը. իմացվեց, որ մեր երկ-  
րում՝ այս հնագույն ժամանակներում՝ ապրում էր իւրիւր կամ  
իւրիւր անունով ոչ հնդեվրոպական մի ժողովուրդ, ցեղակից  
թերևս Կովկասյան զանազան ազգերին: Խալդէան տիրապետութիւնը  
տեևց մինչև 9 դար: Այն շրջանը, որ այս արձանագրութիւններն են  
ընդգրկում, սկսվում է ն. Ք. թ դարից և գալիս է մինչև 9 դար, պա-

տունակելով խալդայան 15 թագավորների պատմությունը. այն է՝ Արամե, Լուտիպրիս, Շարիտուր Ա, Իսպուլինիս, Մենուաս Ա, Արգիստիս Ա, Շարիտուր Բ, Ռուսա Ա, Արգիստիս Բ, Ռուսա Բ, Երեմինա, Ռուսա Գ, Շարիտուր Գ, Իրկուաս և Մենուաս Բ: Այս թագավորներն են, որ իշխելով լայնածավալ իսաղթիաստանի վրա, համառորեն կրուվում էին Ասորեստանյան թագավորների հետ, իրենց անկախությունը պաշտպանելու համար: Մենուասից հետո արձանագրությունները լռում են, որովհետև շուտով հայերը ջնջում են խալդայան թագավորությունը:

Խալդայան բեռագրական գրությունը ասորեստանյան բեռագրությունների հարազատ նմանությունն է: Երկու ամենահին արձանագրությունները, որ պատկանում են Սարգուրի կամ Շարիտուր Ա-ին (Թ գարի սկզբից), գրված են ասորեստանյան լեզվով և ճիշտ ասորեստանյան բեռագրական նշաններով: Սրանից կարող ենք հետևել, թե խալդայան թագավորների մեջ Շարիտուրն է, որ ծանոթանալով Ասորեստանյան բեռագրության արվեստին, առաջին անգամ գաղափար հղացավ պատմական դեպքերը արձանագրելու. ուստի Ասորեստանից բերել տվեց ասորեստանցի բեռագրողներ և նրանց քանդակել տվեց այս երկու արձանագրությունները: Բեռագրողները գործածեցին իրենց մայրենի լեզուն:

Սակայն շուտով բեռագրության արհեստը սովորեցին նաև տեղացի վարպետները, այնպես որ այնուհետև խաղթիական լեզուն դարձավ խալդայան բեռագրությանց սովորական լեզուն և այս լեզվով են գրված մնացյալ բոլոր արձանագրությունները՝ առանց բացառության:

Պետք է նկատել սակայն, որ Ասորեստանյան բեռագրության ոճը իսաղթիայի մեջ կուրորեն փոխ շառնվեց, այլ տրվեց նրան մի այնպիսի փոփոխություն, ավելի ճիշտ՝ մի այնպիսի կատարելագործություն, որ նույն շախմատացի դժվար գրությունը դարձավ շատ ավելի հեշտ և շատ ավելի գործնական:

Ասորեստանյան բեռագրության այբուբենը պարունակում է 329 նշան. սրանք բաժանվում են երկու տեսակի. ա. գաղափարաճշտաներ և բ. վանկաճշտաներ: Գաղափարանշանները ամբողջ մի բառ են արտահայտում. օրինակ՝  $\text{𐎶𐎵}$  նշանակում է «բաղաք»,  $\text{𐎶𐎠$  նշանակում է «թագավոր»,  $\text{𐎶𐎠𐎶}$  արտահայտում է «երկիր»,  $\text{𐎶𐎠𐎶𐎠}$  ցույց է տալիս «ջուր, գետ կամ ծով» և այլն: Ընթերցողը տեսնելով այս նշանները, կարդում էր իր լեզվով, ըմբռնելով նրա տված նշանակությունը, ճիշտ այնպես՝ ինչպես այժմ զանազան ազգեր և ժողովուրդներ տեսնելով 1, 2, 3, 0, =, + ևն գաղափարանշանները, կարդում են իրենց հատուկ լեզվով և ըմբռնում նրանց պարու-

նակած իմաստը, թեև այս նշանների մեջ հնչական կամ տառական տարբ չկա ամենևին:

Վանկանշանները այնպիսի նշաններ են, որոնց արժեքը ենթակայացնում է միայն մի վանկ, ինչպես  $\text{𐎱}$  կարդացվում է a,  $\text{𐎲}$  կարդացվում է na,  $\text{𐎳}$  կարդացվում է ku. այնպես որ այս

երեքի հարակցությունը՝  $\text{𐎱 𐎲 𐎳}$  կարդացվում է anaku, որ առանձին բառ է և նշանակում է սես: Վանկանշանները կարող են ներկայացնել մի պարզ ձայնավոր (ինչպես  $\text{𐎱}$  a), մի բաղաձայն է մի ձայնավոր (ինչպես  $\text{𐎲}$  la,  $\text{𐎳}$  an) և կամ բաղաձայնով սկսվող ու բաղաձայնով վերջացող միջին ձայնավորով մի վանկ (ինչպես  $\text{𐎴}$  tul,  $\text{𐎵}$  kar,  $\text{𐎶}$  kam):

Շատ անգամ գաղափարանշանները գրվում են վանկանշաններով գրված բառից անմիջապես առաջ. այսպես օրինակ՝ երբ մի գետի կամ քաղաքի և կամ երկրի անուն պիտի գրվի, նախ գրվում է գետի, քաղաքի, երկրի գաղափարանշանը, որից հետո գալիս է նույնի հատուկ անունը: Այսպես օրինակ.

$\text{𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$   $\text{𐎴 𐎱 𐎲 𐎳}$   $\text{𐎵 𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$   $\text{𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$   $\text{𐎴 𐎱 𐎲 𐎳}$  (երկիր) U-ra-ar-tu բառի մեջ՝ առաջին նշանը երկրի գաղափարանշանն է, իսկ հաջորդ չորս նշանները՝ Urartu (Հայաստան) բառի չորս վանկերը:

Թե գաղափարանշանները, և թե վանկանշանները ձևանում են ուղղահայաց հորիզոնական և շեղակի գրված կարճ կամ երկար սեպերով ու սեպի գլուխներով, և մի տեսակ անկյունաձև նշանով. այս բոլոր տեսակները գտնվում են հետևյալ նշանագրերի մեջ.

$\text{𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$  ban,  $\text{𐎵 𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$  bir,  $\text{𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$  ba,  $\text{𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$  mu,  $\text{𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$  nu և այլն:

Վանկերի խիստ մեծ թիվը պատճառ է դարձել կազմելու երբեմն այնպիսի նշաններ, որոնք մինչև 17 գծիկների խճողում են ներկայացնում. ինչպես՝

$\text{𐎵 𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$  tlr,  $\text{𐎵 𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$  bir,  $\text{𐎵 𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$  u,

$\text{𐎵 𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$  glg,  $\text{𐎵 𐎶 𐎴 𐎱 𐎲 𐎳}$  sax.

Վանկանշանները միշտ միևնույն ձայնը կամ արժեքը չունին. կան նշաններ, որ ըստ պարագային կարող են մինչև տասնմեկ տեսակ կարգացվել. օրինակի համար  $\text{𐎶}$  կարդացվում է kur, mat, šat, lat, not, kin,  $\text{𐎵}$  կարդացվում է u, ut, tu, tam, bir, par, pir, lax, lix, xiš, xis:



Ֆաղափարանշաններն էլ միշտ միևնույն նշանակութունը չունին, այլ բազմիմաստ են և տեղի համեմատ այս կամ այն նշանակությամբ են գործածվում: Օրինակ՝  $\approx$  նշանակում է «երկիր, լեռ, նվաճել, արևը ծագել»,  $\approx$  «բերան, ատամ, բառ, հրաման»,  $\approx$  նշանակում է «մեջ, Ասորեստան, Աշուր աստվածը, տալ, վճարել, որդի»:

Նմանապես գաղափարանշաններն ու վանկանշանները միշտ իբրև գաղափարանշան ու վանկանշան չեն ծառայում, այլ սովորաբար նաև երկու պաշտոնով են, այսինքն թե վանկանշան և թե գաղափարանշան: Այս պարագային գաղափարանշանները փոխանակ մի ամբողջ բառ ներկայացնելու, կարգացվում են միայն իբրև մի վանկ. փոխադարձաբար վանկանշաններն էլ առնվում են իբրև ամբողջ բառ. մոտավորապես ինչպես 3 նշանը, բացի երեքի գաղափարանշանը լինելուց, ուսեբենի մեջ ծառայում է իբրև զ տառ, կամ ինչպես 0, որ թե զրոյի նշանն է և թե 0 ձայնի, գրեթե բոլոր եվրոպական լեզուների, նաև հայերենի մեջ: Այսպես, օրինակ՝  $\approx$  իբր վանկանշան արժե bid, բայց իբրև գաղափարանշան՝ նշանակում է «տուն»։  $\langle$  իբրև վանկանշան կարգացվում է lim, բայց իբրև գաղափարանշան՝ նշանակում է «աչք, դեմք, ճակատ, տեսնել» և այլն: Նույն  $\approx$  նշանը, որ իբր վանկանշան կարող է տասնմեկ տեսակ կարգացվել, իբրև գաղափարանշան էլ կարող է նշանակել «օր, փոթորիկ, արեգակ, սպիտակ»:


Նշանագրերի կազմիչ տարրերի շահագանց միօրինակութունը (սեպ, սեպագլուխ և անկյուն), սրանից ծագած ծայրահեղ խճողումը, վանկանշանների բազմատեսակ ընթերցումները, գաղափարանշանների և վանկանշանների շփոթությունը, և վերջապես երեք հարյուրից ավելի նշանների այս խառնակ կուտակումը, այնպիսի դժվար դրություն են ստեղծել ասորեստանյան գրության մեջ, որ նույնիսկ այսօր գիտնականի ամբողջ կյանքը և ամենօրյա վարժությունները բավական չեն կատարելապես ընտելանալու այս գրությանը:

Խաղիները տեսան այս խառնակությունը և նրա մեջ այնպիսի մի փոփոխություն մտցրին, որ դժվարությունը 95 % հապավվեց և դարձավ բավական տանելի վանկագրական այբուբեն: Նրանք նախ ջնջեցին գաղափարանշանների մի ստվար թիվ. երկրորդ՝ ջնջեցին բոլոր այն նշանները, որոնք կարող էին մերթ իբր գաղափարանշան և մերթ իբր վանկանշան ծառայել, տալով նրանց միայն մեկ պաշտոն. երրորդ՝ իսպառ հապավեցին վանկանշաններին զանազան արժեքներ տալը՝ պահելով միայն նրանց առաջին և իսկական ընթեր-


ցումը. շորթորդ՝ բաղաձայնով սկսվող և բաղաձայնով վերջացող (եռաձայն) վանկերը, որոնք շատ մեծ թիվ էին կազմում ասորեստանյան բևեռագրության մեջ, գրեթե բոլորը ջնջելով, պահպանվեցին միայն նրանցից մեկը երկու հատը (ինչպես xal, giš, sar): Այսպիսով հիշյալ երեք հարյուրից ավելի նշանների կեսից ավելին ջնջելով պահվեց միայն 120 հատ, գրեթե բոլորը ըստ կարելիության կարճ ձևով, և պարունակելով միայն մեկ ձայնավոր, կամ մեկ ձայնավոր ու մեկ բաղաձայն (a, ba, ab):

Խալդյան բևեռագրության մեջ մտած է նաև մի ուրիշ փոփոխություն, որ ոչ թե զիտմամբ, այլ տեղական քարերի հատկության պատճառով նդած են համարում: Այս փոփոխությունը բևեռագրական գրության հետ գործ շունի և կայանում է նշանները քարի վրա փորագրելու ձևի մեջ: Ասորեստանյան բևեռագրերի մեջ մի խումբը տառեր կան, որոնք մեջ երկու սեպեր իրար կարելով անցնում են. այսպես օրինակ՝ ասորեստանյան  ni ձևի մեջ՝ երկրորդ հորիզոնական սեպը ճեղքում անցնում է երկու ուղղահայաց սեպերը: Խալդյան բևեռագրության մեջ այս խառնակումները բնահատվելով՝ մեկ սեպը երկու կողմից իբրև երկու անշատ սեպ է քանդակված, այսպես  համեմատել նաև՝

Ասորեստ.




Խալդեան.




Ամբողջության համար հիշենք նաև մի քանի նշանների ձևական թեթև փոփոխությունները, որոնք բուն խալդյան լինելուց ավելի, ասորեստանյան զանազան գրություններից ժամանակակից որևէ մի ձև են ներկայացնում: Հմմտ..

Ասորեստ.



Խալդեան.



Ըստ այսմ խաղչյան բևեռագրական գրութիւնը պարունակում է հետևյալ նշանները.

— Վանկերնեհեր :

	Կ a	Ի i	Ս u
		Ե e	Ն u
B	Բ ba	Բ bi	Բ bu
	Բ ab	Բ ib	Բ bar
D	Ծ da	Ծ di	Ծ du
G	Գ ga	Գ gi	Գ gu
			Գ giš
K	Կ ka	Կ ki	Կ ku
L	Լ la	Լ li	Լ lu
	Լ al	Լ el	Լ ul
M	Մ ma	—	Մ mu
	—	Մ me	Մ man
N	Ն na	Ն ni	Ն nu
P	Ք pa	Ք pi	Ք pu
	Ք ap	Ք ip	—
Q	Չ qa	Չ qi	Չ qu
R	Ր ra	Ր ri	Ր ru
	Ր ar	Ր ir	Ր ur
S	Տ sa	Տ si	Տ su
			Տ sar

(Գծիկներու թուին համեմտ դասաւորում):

Վարդ	→ Վատած
Աշխարհ, երկիր	→ ՎՃՊ Թուշան
Նշան յոգնակիի	→ → յոգնակիի նշան
Թագաւոր	→ Ն կին
Չիպտո, ծառ	→ → Պ քաղաք
→ ՄՄ տէր	→ ՎՆՆՆ եղ
→ ՎՊ քոչոր, ամենայն	→ ՎՊՊՊ մեծ
→ → երկիր	→ ՄՄՄՄ մեծաբոյ
→ Վ Ardini Ատուած, Օր.	→ ՄՄՄՄ տուն, տաճար



š sa  
š aš

š i  
š iš  
š is

š u  
š uš  
š o

s —

s i

s u

t ta  
t at

t i  
t e

t u  
t ar

t ta

—

t u

x xa

x i

x u

x al

z za  
z quw  
z zi  
z zu

z ia, ya

z 'a





11. <T	40. <<<<
12. <TT	50. <<<<<
13. <TTT	60. T
14. <TTT	70. T<
15. <TTTT	80. T<<< 5-5 <<<<<
16. <TTTT	90. T<<<<
17. <TTTT	100. T—
18. <TTTT	120. T—<<
19. <TTTT	200. TT T—
20. <<	1000. <<T—
21. <<T	2000. TT <<T—
30. <<<<	

Գ Լ Ո Ւ Ե Գ

ԱՅՄԱԳՐԵՐ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐԵՐ

Սովետական Հայաստանի զանազան վայրերում, քարածայոկների վրա կամ այրերի մեջ քանդակված են մի տեսակ նշանադրեր, որոնք կոչվում են այծագիր (ժողովրդական ձևով՝ իծագիր): Սրանք ներկայացնում են երկար և հետև կոացած եղջյուրներով այծի նկարներ՝ զանազան դիրքերով: Այսպիսի քանդակներ շատ են տարածված Արարածի լանջերի ժայռերի վրա և այրերի մեջ: Նշանավոր են հատկապես, Մաստարա գյուղի մոտ Ավոյի գաղաչի այծագրերը և ապա՝ Սևանի լճի ափերի լեռնոտ մասերում եղածները: [«Իծագրեր» կամ գիտական անվանումով ժայռապատկերներ հայտնաբերվել են նաև Սյունիքում, որից զնում ենք մի նմուշ<sup>1</sup>]:

<sup>1</sup> Գիտական ուսումնասիրության և հնագիտական բարձր մակարդակով հրատարակվել են՝ ա) Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Ե., 1970, որից առնում ենք նշումը (№ 114), բ) Հ. Ա. Մարտիրոսյան և Հ. Ռ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Ե., 1971:



114. Пиктограмм Ухтасар Оughtasar.

Արդյոք այս նշանները տառե՞ր են, թե խաղ: Քանի որ ըստ էության արանք բոլորն էլ միևնույն բաներն են, ուստի պետք չէ կարծել, թե տառեր կամ բառեր են: Մեծագույն հավանականությամբ դրանք իբր նշան դրել են որոշ տոհմեր, որոնց մեջ ոչխարն ու այծը տնտեսության գլխավոր ճյուղն են կազմել (անդ, էջ 43):

Այծագրերից բոլորովին տարբեր է պատկերագիրը (ժողովուրդը կոչում է թուրքերեն բառով յազըլի—աչը չ «գրված քար»):

Այս անունով հասկանում ենք այն բազմատեսակ անձանոթ նշանները, որոնք փորագրված են քարերի ու ժայռերի վրա՝ Սովետական Հայաստանի մի քանի կողմերում: Սրանցից շատ մեծ քանակությամբ հայտնաբերված են առայժմ լեռնային շրջաններում, Բասարգեշարի լեռնային մասերում և Արագածի փեշերում: Այդ նշանագրերը շատ զանազան են. «Երբեմն ուղղակի կանոնավոր տողերի ձևով իրար տակ քանդակված, երբեմն իրար կողքի զանազան ոլոր-մոլոր դժիկներով, երբեմն իրար խաչաձևող և մի տեսակ իրար մեջ գործված քառակուսիների ձևով» X (անդ, էջ 43): Հանելով դարձյալ նույն աշխատությունից (էջ 45), դնում ենք այստեղ մի նմուշ, որ գտնվում է Հոկտեմբերյանի շրջանում, հին Արմավիր քաղաքի բլրի ժայռերի վրա: Սա արդեն դաշտային շրջան է: Նախորդներից տարբերվում է նրանով, որ որևէ կենդանու նշան չունի: Նշանների տարբերությունը ենթադրել է տալիս, որ սա գիր է, անշուշտ պատկերագիր, որոշ բովանդակությամբ, որ առայժմ մեզ բոլորովին անհայտ է:

Արդյոք այս գրերը (այծագիրն ու պատկերագիրը) ո՞ր ազգին էին պատկանում. հայո՞ց թե հայերից առաջ Հայաստանում բնակվող որևէ ժողովրդի (խալդիներ, միտանիներ և այլն): Եթե նրանք հայկական են, պետք է ենթադրել, թե գրված են մ. թ. ա. 6-րդ դարից հետո, երբ դեռ հայերը կանոնավոր գիր և գրականություն չունեին, իսկ եթե Հայաստանի նախաբնիկներին են պատկանում, անշուշտ շատ ավելի հին կարող են լինել այդ թվականից:

Գ Լ Ո Ւ Ն Գ

## ՆՇԱՆԱԳՐԵՐ

Մեր ուսումնասիրելիք հաջորդ գրությունը հայտնի է մեր բանասիրության մեջ նշանագիր իմաստնոց կամ պարզպակս նշանագիր անունով: Սա մի տեսակ պատկերագիր գրություն է, որ բևեռագիրներից հետո գործածված է համարվում Հայաստանի մեջ՝

մինչև Մեարդպի նախաձոր շրջանը: Այս կարծիքն առաջին անգամ հայտնել է Մկրտիչ էմինը, իր *Об армянском алфавите* աշխատության մեջ, որ հրատարակված է իբրև շորրորդ հավելված խորհնացու պատմության ուսուցիչին թարգմանության (1858): Գրքովածքիս երկրորդ տպագրությունը ինչ-ինչ փոփոխություններով տե՛ս *Исследования и статьи Н. О. Эмина* (*Մոսկվա*, 1896, էջ 204—230):

էմինի նույն աշխատությունը թարգմանված է նաև ֆրանսերեն լեզվի (*Prud' homme-ի ձևով*) և տպագրված է 1865 թվին, *Revue d'Orient* թերթի մեջ. իսկ հայերեն թարգմանությունը հրատարակեց Ս. Ստեփանն Հայկական այրուքեն վերնագրով, Հայկական աշխարհի թերթի մեջ, 1870 փետր. (էջ 42—46), որ կարծեմ կիսատ է մնացած:

էմինը իր այս տեսության իբրև պացուց մեջ է բերում այն հանգամանքը, որ զանազան հին ձևագրերում և նույնիսկ մինչև այժմ էլ այս տեսակ պատկերագիր մի գրություն գործածական է: Հիշյալ աշխատության մեջ էմինը դնում է 84 նշանագիր, քաղելով Լազարյան ձեմարանի № 141 ձևագրից, և այս սակավաթիվ պատկերագրերից հետևցնում է, թե հնապես կար շատ ավելի սովոր մի թիվ, այնքան որ բավական էր մի գաղափար քիչ թե շատ կանոնավոր կերպով արտահայտելու համար: Մի այս տեսակ գրություն իբր թե ընդհանուր գործածական էր մեր մեջ կուպաշտական շրջանում և այն նշանագրերը հնարված էին հենց հայոց մեջ, առանց օտար ազդեցության, քանի որ մեր շրջակա ազգերի մեջ պատկերագիր գրություն չկար այն ժամանակ:

էմինը և որոնք որ էմինի այս ենթադրության կողմնակից են, իբր փաստ մեջ են բերում նաև երկու պատմական վկայություն, որ իբր թե այս կարծիքն են պացուցանում: Հիշյալ վկայություններից առաջինը տալիս է Ագաթանգեղոսը, ուր խոսելով Լուսավորչի շարժարանքների առթիվ արած աղոթքների վրա, ասում է. «Եւ մինչդեռ կայր նա կախեալ այնպէս՝ խոսեցաւ զայս ամենայն. և գրեցին ատենակալ դպիրքն նշանագրացն...: Եւ այլ ևս բազում քան զայս խոսեցաւ՝ մինչդեռ կայր կախեալ գլխիվայր, և գրեցին և մատուցին զայն առաջի թագաւորին (Ագաթ., 1909, հմ. 99)»: Հոփսիսմեծի առթիվ խոսելով՝ պատմում է թե «ոմանք ի մեծամեծ սպասաւորացն արքունի անդէն ընթացան պատմել թագաւորին զամենայն բանս նոցա. քանզի դիպեցան անդ նշանագիրք, որ գրեցին զամենայն բանս և ընթերցան առաջի թագաւորին» (Ագաթ., 176):

Երկրորդ վկայությունն ունի Բուզանդը, որ խոսելով Ներսեսի արած հանդիմանությանց մասին վաղեմ կայսեր դեմ, ասում է. «Եւ

զրէին զայս սեմիարք նոտարացի արքային, որք կայինն առաջի-  
թագաորին» (Բուզ., Գ. Ե):

Էմիւնը Ազաթանգեղոսի հիշյալ բառերով հասկանում է զուտ  
նշանագիր, այն մատածումով, թէ Ազաթանգեղոսի նկարագրած վերո-  
հիշյալ պարագաներում անհրաժեշտ էր արագ գրելու կարևորու-  
թյունը և մանավանդ վերջին պարագային անկարելի էր սովորա-  
կան տառերով գրել. ուստի պետք է ենթադրել, թէ դպիրները զրածը  
սովորական տառերով չէր, այլ որոշ տեսակի նշանագրերով: Այս-  
պէս է ընդունում նաև Լանդլուա (Collection II, էջ 4) և հիշյալ վը-  
կայութեան վրա հիմնվելով՝ ենթադրում է, թէ հայերն էլ ունեցել են  
մի տեսակ սղագրութիւն, որ նման էր հռոմէայեցոց մեջ զործա-  
ծական տյուրանյան սղագրութեան և հավանաբար սրանից էր փոխ-  
առնված: Նույնը ընդունում է նաև Զարրհանայան (Պատմ. Հայ-  
Դպր. Ա.Յ էջ 17—18):

Բայց այսպիսի մի վկայութիւնից եզրակացութիւն հանելը  
շատ անապահով է: Եթէ մինչև իսկ վավերական լինեին այս վկայու-  
թիւնները, ամենևին տեղիք չկար կարծելու, թէ Ազաթանգեղոսը  
նշանագիր բառը կամ Փաղստոսի սեմիարք նոտարացի ձևը մեր  
նշանագրերն են ակնարկում: Մ. Միանասարյանց (Կանոնավոր և  
վայելուչ գրութեան պատմութիւնն ու տեսութիւնը, էջ 86—87) հա-  
մառտով, իսկ Իս. Հարութիւնյան (Հայոց Գիրք, էջ 105—109 և էջ  
244 կն) որ առանձին կարևորութիւն է տալիս էմիւնի այս ենթադ-  
րութեան, երկարորեն հակաճառում է նրա դեմ և նրա այս կարծիքը  
ջրելով՝ ուզում է ապացուցանել, թէ Ազաթանգեղոսի վկայութիւնը  
պարզ գրեր է ակնարկում և ո՛չ երբեք սղագրութիւն: Իրը ապա-  
ցույց մեջ է բերում հետևյալ կետերը.

ա) Պետք չկար անպատճառ, որ դպիրները բառ առ բառ գրեին  
Ազաթանգեղոսի ակնարկած դեպքերը. կարելի էր կարևոր կետերը  
նշանակել թագավորին ծանուցանելու համար. իսկ սրա համար հա-  
սարակ գրերը բավական էին:

բ) Ազաթանգեղոսի առաջարկում ասվում է. «Արդ՝ հրաման  
հասեալ առ իս ոմն Ազաթանգեղոս, որ ի քաղաքէ ի մեծն Հռովմայ,  
և վարժեալ հայրենի արուեստիւ, հոռմայերէն և հունարէն ուսեալ  
դպրութիւն, և ոչ կարի ինչ անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշա-  
նագրաց» (Ազաթ. 12): Վերջին բառով հեղինակը ուզում է ցույց  
տալ, թէ բացի հունարեն և լատիներեն լեզուներից՝ դիտեր նաև  
հայերեն գրերը, որ առանձին պարծանքով հիշում է. եթէ այստեղ  
նշանագիր բառը «գիր» իմաստն ունի, նույն իմաստով պետք է առ-  
նել նաև վերևում:

գ) Բոլոր պատմագիրները, որոնք նշանագիր բառը զործածել

են, գիր կամ տառ իմաստով են միայն գործածել. այսպես օրինակ՝  
Եւ յարուցեալ յաղօթիցն, եստեղծ զնշանագիրս մեր (Խոր. Գ. ծգ).  
Զվաղնշուց գտեալ նշանագիր տառից (Խոր. Գ. ծբ). Յաղագս Դա-  
նիէլեան նշանագրութեանն (Խոր. Գ. ծբ). Առ որում նշանագիրքն  
հայերէն կային (Փարպ. 39). Եւ գիրս նշանագրաց Հայաստան ազ-  
գին հասանել (Կոր. 8). Վասն որոյ եղ ի մտի (Մեսրոպ) հնարել  
գտանել նշանագիրս Հայոց լեզուիս (Կոր.) և այլն:

Սրանցից հետեւում է, թե Ագաթանգեղոսի հիշյալ վկայութիւնը  
սղագրութեան համար ասված չէ: Ըստ մեզ այստեղ հատկապես  
բառերի ձևական նույնութիւն կա, առանց նշանակութեան նույ-  
նութեան: Ագաթանգեղոսի նշանագիրը արտահայտում է պարզա-  
պես գիր կամ տառ գաղափարը և կապ շունչի մեր նշանագիրների  
հետ, որ համեմատաբար նոր գաղափար է: Իսկ Բուզանդի սեմիարք  
ևնտարացի ձևը նույն է անշուշտ հունական στυλῆα ἐν μικροῖς  
բացատրութեան հետ, որով հասկացվում էր մի տեսակ սղագրու-  
թիւն, և ակնարկում է հունական և հետևաբար հունարեն լեզվով  
սղագրողներին, քանի որ ներսեսը հունաց պալատումն էր խոսում:  
Այսպիսի սղագիր նոտարներ (sténographe) կային հռովմայեցոց  
մեջ՝ սկսեալ Քրիստոսի Ա դարից: Եթե Հայերս ունենայինք այսպի-  
սի սղագրական կամ պատկերագրական գրութիւն, դժվար թե նրա-  
նից որևէ հետք մնացած լիներ որևէ քանդակի, արձանագրութեան  
կամ դրամի վրա, բայց պահվեր համեմատաբար շատ հետին ձե-  
ռագրերում:

Էմիլիի ժամանակից շատ հետո, երբ Ենսենը հրատարակեց իր  
քննութիւնները հայկական պատկերագիր այբուբենի մասին և քարո-  
զեց, թե հայերը նախահայերն են, ոմանք, ինչպես հ. Գ. Գալեմ-  
բյարյան, (Հանդ. ամս. 1898, 183) և հ. Իս. Սրապյան (Հանդ. ամս.  
1902, 202) ենթադրեցին, թե հայերեն նշանագրերն էլ կարող են  
հայկական նշանագրերի շարունակութիւնը լինել: Սրապյանը կար-  
ծում է նաև, թե նույն նշանագրերը կարող են կապ ունենալ Դա-  
նիելյան գրերի հետ: Բայց թե՛ այս և թե՛ նախորդ անհիմն ենթադ-  
րութիւնը լիովին հերքելու համար պետք է նախ մեջ բերել նշանա-  
գրերի ամբողջական ցուցակը, հարկավոր բացատրութիւններով  
միասին:

Հայկական նշանագրերի աղբյուրները այն մասնը մունր ցու-  
ցակներն են, որ գտնվում են զանազան հայերեն ձեռագրերի, մաս-  
նավորապես բառարանների և ժողովածոների մեջ՝ այս ու այնտեղ  
ցրված: Այս ձեռագրերից հանելով՝ այլևայլ ժամանակ հրատարա-  
կութեան են տրված մի քանի հարյուր նշանագրեր: Առաջին և հնա-  
գույն հրատարակութիւնը, որ ինձ ծանոթ է, Մխիթար աբբայի ՔՔԵ-



բականութիւն գրաբառի լեզուի հայկազան սեռի» աշխատութիւնն է (Վենետիկ 1730, F տպ. 1770) ուր էջ 481 կա 46 նշանագրերի մի ցուցակ: Երկրորդը էմիլի վերոհիշյալ աշխատութիւնն է, ուր մեջ են բերված 84 նշանագրեր: Այս նշանագրերը հանված են Լազարյան Ճեմարանի № 141 ձեռագրից, էջ 60—63 և 134 (գրված 1620 թվին): Ձեռագիրն ունի ընդամենը 332 նշանագիր, որոնցից 11 հատը առանց բացատրութիւն է. և որովհետև սրանց մեծ մասը հասարակ համատարագրութիւն է, էմիլը չոկէլ ընտրել է միայն նրանք, որ իսկապես պատկերագիր են: Նույն ձեռագրում էջ 60—63 գտնված նշանագրերի ամբողջական ցուցակը հրատարակեց Իս. Հարութիւնյան, Հայոց գիրը, էջ 108 գրված տախտակով (ընդամենը 305 նշանագիր), որոնց բացատրութիւնը գրված է էջ 110—112: Երրորդ հավաքածուն հրատարակեց Abbé P. Martin, Des signes hiéroglyphiques dans les manuscrits arméniens: Congrès intern. des Orientalistes, 1873, էջ 456, որ պարունակում է իր 257 նշանագիր: Այս աշխատութիւնը դժբախտաբար չեմ տեսած: Չորրորդ հավաքածուն կազմեց Գ. Վ. Սրվանձայան, Թորոս Աղբար աշխատութիւնն առաջին հատորում (տպ. 1879, էջ 337—340), հանելով Տիգրանակերտի դանազան ձեռագրերից. այս նշանագրերի թիվը 120 հատ է: Հինգերորդ հրատարակութիւնը պատրաստեց Տեր-դատ Վ. Պալյան. այս հավաքածուն, որ բոլոր վերոհիշյալների մեջ ամենից ավելի լիակատարն է, առանձին մի տետրակ է «նշանագիրը Հայոց» խորագրով, տպ. Վիեննա 1898, ութ վիմատիպ տախտակներով, ուր նշանագրերը դասավորված են այբուբենական կարգով: Պարունակում է 511 նշանագիր: Իբր վեցերորդ կարող ենք հիշել 25 նշանագրերի մի փոքրիկ հավաքածու, որ հրատարակեց Անտոնյան միաբաններից Հ. Իսահակ Վ. Սրապյան, Հանդ. Ամս. 1902, էջ 201—202, հանելով Անտոնյան միաբանութիւն Թրթաթէօյի թանգարանի № 112 գրչագրից (Յովհաննու Դամասկացոյ աստուածաբանական և իմաստասիրական գրութիւնները): Յոթներորդ շատ ավելի ճոխ մի հավաքածու հրատարակեց Ֆրետերիկ Մուրատ՝ Հանդ. Ամս. 1903, էջ 5—9, 144—146, 333—335: Այս հավաքածուն հանված է Բեռլինի արքունի մատենադարանի № 805 ձեռագրից (էջ 271—274) և պարունակում է ընդամենը 505 նշանագիր:

էջմիածնի (այժմ Երևանի) ձեռագրատան մեջ գտնվում է ութ ձեռագիր, որոնց մեջ կան նշանագրերի դանազան հավաքածուներ: Այս ձեռագրերը հետևյալներն են.

1. Կարինյան № 612, էջ 146ր—148ա.
2. » № 662, էջ 126ա—129ա.
3. » № 1700, էջ 124ր—126ա.

4. » № 2297, էջ 271.  
 5. Գեորգյան № 91, էջ 1—4.  
 6. » № 265, էջ 210—212.  
 7. » № 300, էջ 558—559.  
 8. » № 557, էջ 122ա—125ա.

Այս 8 ձեռագրերից երկուսի մեջ (№ 612 և № 91) գտնված նշանագրերը լուսանկարով նմանահանված և հրատարակված են Շոդակաթի մեջ՝ ամբողջ էջերով: Սա նշանագրերի ութերորդ հրատարակութունն է:

Թավրիզի Առաջնորդարանի № 14 ձեռագիրը (էջ 374ա—բ) ունի մի քանի նշանագիր:

Իններորդ հրատարակութունը կատարեց Սեբաստիայի «Նըշտորակ» խմբրատիպ թերթում, թղթակից բարեկամս՝ բանասեր Կարպետ Գաբրիկյանը: Այդ նշանագրերը հանել էր Սեբաստիայում գտնված երկու հայ ձեռագրերից: Առաջին ձեռագիրը պարունակում է 289 նշանագիր, երկրորդը՝ 100, ընդամենը 389 նշանագիր: Երկու ձեռագրերն էլ անշուշտ օրինակված են մի քանի հին ձեռագրերից, որովհետև ալբերհական կարգը կանոնավոր չէ նրանց մեջ և միևնույն բառը երևում է նշանագրերի ցուցակի մեջ մի քանի անգամ: «Նշտորակ» խմբրատիպ թերթի մեջ ցուցակի տպագրութունը շատ անհաշտ էր հղած, ուստի Գաբրիկյանը նորից խնամքով արտագրելով բոլորը՝ ուղարկեց ինձ<sup>1</sup>: Նոր ձեռագրերը դժբախտաբար տգետ գրչի գործ են. հայերեն բառերի մեջ շատ ուղղագրական սխալներ կան. օրինակ՝ գրված է հայեյեխել՝ փոխանակ հայոհոյեյլ. մի քանի բառեր կան, որոնց ինչ լինելը չի հասկացվում, այսպես՝ գրված է զըվարկ, զուրկ, որոնց նշանագրերը զվարակ-ի նշանագրին նման լինելով, կարծում եմ, թե պետք է կարդալ «զուարակ»: Ա գրի շարքում կա առաղծ գրությամբ մի բառ, որի նշանագիրը (ծ, տակը՝ յ) նման է թե անեղծ նշանագրին. չգիտեմ, թե ինչպես պիտի կարդալ. հավանական է անեղծ, որովհետև ա գրի շարքում է գտնվում: Կ-ով բառերի շարքում կա ընջ ձևը, որ անշուշտ սխալ ընթերցում է, առա-

<sup>1</sup> Այս նշանագրերի քննութունը և նրանց տախտակը հրատարակված են «Շաշտոց գրերը» գրքի մեջ որպես հավելված: Իր կենդանության օրոք հեղինակը ձեռագրով գրել է այս հատվածը («Իններորդ» մինչև՝ «ուղարկեց ինձ») և մեքենագիր օրինակի 20-րդ էջում նշել, թե որտեղ պետք է մուծել: Ելնելով դրանից, «Հավելվածի» քննական մասը մուծեցինք այստեղ այնպես, ինչպես որ հեղինակը նշել էր կարմիր մատիտով քաշած գծերով, իսկ ցուցակը թողել ենք անփոփոխ և զետեղել ենք զլիսավոր տախտակից հետո:— Խմբ.:

շին հարմարագույն քննարկումն է լանջ, ենթադրելով, որ ա-ն գրվել է միասին, բայց նշանագրերի մյուս ցուցակները այսպիսի քան շգիտեն: Բոլորովին անստույգ բառեր են ազմին (նշանագիրը նման է առյուծ-ին), ապին, հանրեր:

Եթե հասարակ հայերեն բառերը այսպիսի սխալներ ունեն, որքան ավելին կունենային նշանագրերը. այսպես՝ Զօրաբարել բառի դեմ գրված նշանագիրը մյուս ցուցակների զօրաուր բառի նշանագիրն է. Կարին զոզիակոսի դեմ գրված է կշիւ զոզիակոսի նշանը, յիշատակ բառի դեմ՝ յափշտակէ:

Այնուամենայնիվ, քննելով հիշյալ ցուցակը և համեմատելով իմ նշանագրերի հետ, տեսա, որ կան շատ հետաքրքրական նորություններ, մի խումբ բառեր բոլորովին նոր են և քննածս 14 ժողովածոների մեջ գոյություն չունեն, ուրիշներ թեև կան այդ ժողովածոներում, բայց այստեղ ներկայանում են բոլորովին նոր նշանով և կամ այնպիսի նշանագիր ունեն, որ մեր ուսումնասիրության և նշանագրերի զարգացման պատմության համար հետաքրքրական է:

ա) Ինչ-ինչ նշանագրեր, որոնք նախորդ ցուցակներում դեռ պարզ տառական վիճակ ունեն, այստեղ ստացել են բուն նշանագրի զարգացած ձև. օրինակ՝ Բարելուն, որ նախորդների մեջ ներկայանում է պարզապես մր տառերով, Տ. վրդ. Պալյանի ցուցակի մեջ Քւն ձևով, այստեղ արդեն դարձել է բարդ փակագիր: Քեղեցիկ՝ ուրիշ տեղ պարզ գ տառն է՝ տակից միացած յ-ով, այստեղ մի քանի ոլորքներով զարգացել է: Քլոբգ՝ որ նույն տեղը գլխատառ Ք է, այստեղ բարձրացել է կլորակի վրա: Մետապր այնտեղ ներկայանում է եսք համառոտագրությունը, այստեղ մի հաջող փակագրություն է դարձել՝ կազմված մսք տառերից: Այսպես նաև՝ երեմիա (մ), եղիցի, քագաուր (ա), կոյս (ս):

բ) Կան մի խումբ նշանագրեր, որոնք ներկայացնում են գեղեցիկ միջին ձևեր և հաջող կերպով ծառայում են բացատրելու նշանագրերի կազմությունը: Այսպես՝ եկեղեցի բառի դեմ մենք ունենք ամենից առաջ եկի համառոտագրությունը, որ իմ կարծիքով ծագում է տվել հաջորդ 10 նշանագրերին, որոնք եկեղեցու շենքի նյութական պատկերն են թվում ներկայացնել: Նոր նշանագիրը ավելի հաստատում է մեր ենթադրությունը, ունենալով կրճատ եկ համառոտագրությունը (ի կրճատված), որ բռնում է մեր նշանագրերի մեջ ներքին երկրորդ տեղը: Նույնպիսի միջին ձևեր են առաջ՛, նաբուզողոնսուր: Սանդուխ բառի դեմ ունենք երկու կարճ նշանագիր, մեկը քառակուսի՝ մեջը գծիկով, մյուսը կլոր՝ մեջը ա. վերջինը հատկապես ս գրից էր, բայց անմեկնելի էր մնում առաջինը. նոր ցու-

ցակը տալիս է երկու նշանագիր (քառակուսի՝ մեջը ս), որով նախորդ երկու նշանագրերը միանում են, և կասկածը ջնջվում է:

գ) Մի քանի տեղ նոր ցուցակը ունի ավելի հին նշանաձևեր, որով մի քանի անճիշտ կամ անժանոթ կետեր ուղղվում և ստուգվում են: Վիշապ (№ 413), որ մեր նախորդ ցուցակի մեջ անորոշ ձև ուներ, այստեղ եղջերավոր գլուխ է, որով նշանագիրը պատկերագիր է դառնում: Սաքգիս ներկայանում էր պ համառոտագրությամբ, որ ենթադրել էի իբրև տառական շփոթություն՝ ձևացրած սր-ից. նոր նշանագիրը լիովին հաստատում է սա<sup>1</sup>:

դ) Հիշենք վերջապես, որ մի քանի բառեր, որոնք նախորդ ցուցակներին մեջ կանոնավոր փակագրություններ են կազմում, այստեղ բոլորովին այլանդակվել և անհասկանալի են դարձել. այսպես են՝ սարկավազ (Մ), մարտիրոս (հգ), որդի (բ):

Սրանցից դուրս՝ էջմիածնի ձեռագրատան մեջ կա բավական ընդարձակ մի աշխատություն՝ «Մեկնութիւն նախնի նշանագրաց Հայրոց» (Կարինյան հին № 1435, նոր № 1472), որի անունը մեր նյութին համար շատ կարևոր մի աշխատություն է ենթադրում: Բայց այս աշխատությունը, ինչպես գրքի սկիզբը դրված ընդարձակ առաջաբանի մեջ բացատրվում է, ուրիշ բան չէ, եթե ոչ հետին հայ մի հեղինակի հնարած բավական ճարտարամիտ սղագրական մեկ գրությունը, որ հիմնվում է գլխավորապես հայերեն ձայնավորները ձայնանիշներով նշանակելու վրա: Այսպես, օրինակի համար՝ մի բաղաձայնի վրա դրված մի կետը՝ նույն բաղաձայնին տալիս է նախավոր ա ձայնը. ինչպես՝ Ե=աե, յ=ալ, այ=ապ: Վերադիր շեշտը տալիս է նախավոր ի ձայնը, ինչպես՝ Ե'=իե: Վերադիր երկշեշտը տալիս է նախավոր ե ձայնը, ինչպես՝ Ե''=եե: Վերադիր պարուկը նախավոր եա. ինչպես՝ Ե° = եաե: Վերադիր փուշը՝ նախավոր այ. ինչպես՝ չ = ալ: Տառի տակ դրված կետը, շեշտը և երկշեշտը նույն վանկերի սկիզբը ավելացնում են վերջին բաղաձայնը. ինչպես Ե=Եաե, Ե'=Եիե, Ե''=Եեե: Կետը, շեշտը, երկշեշտը կրկնվելով կամ իրար հետ միանալով ձևացնում են համապատասխան վանկեր նույն բաղաձայնի վրա. ինչպես՝ Ե=Եաե, չթ=չարարար, ըր=բարբար, ըր'=բերեր, ըր''=բերեր, ւնր=տարեր ևն, ևն: Սղագրական այս գրությունից հետո, որով մի քանի բավական մեծ հատվածներ սղագրված են իբրև փորձ, հետևում են բազմաթիվ ցուցակներ՝ այբուբենական կարգով դասավորված հարյուրավոր հա-

<sup>1</sup> Մյուս ուղղումները կամ հավելումները մուծել ենք նշանագրերի առաջացման քննությանը նվիրված հատվածի մեջ կամ համապատասխանորեն փոխել ենք տալուտակում բառերի առջև գրված նշանները.— Խմբ.:

մատոտագրութիւնների, որոնց զլիւսավոր զանազանութիւնը՝ պատիվների ձևի և դիրքի մեջ է կայանում. ինչպես  $\bar{m}$  = ամենակալ,  $\bar{w}$  = արժանավոր,  $\bar{u}$  = ապավին,  $\bar{u}$  = ամբարիշտ ևն, ևն: Այս բոլորը նույն անձանոթի հեղինակի գլուտը լինելով, թողնում ենք ավելի մանրամասն հիշել, իբր բուն հայկական նշանագրերի շրջանակից դուրս:

Մնացյալ բուն նշանագրերը, որոնք հրատարակված են վերոհիշյալ ինը հավաքածուների մեջ՝ կամ գտնվում են դեռ անտիպ էջմիածնի և Թավրիզի սույն ինը ձեռագրերի մեջ, քննելով, ստուգելով, իրար հետ համեմատելով և նորից ամբողջը այբուբենական կարգի վերածելով, հրատարակում ենք այստեղ հետևյալ տախտակներով (տե՛ս Ա և Բ տախտակները՝ զրքի վերջում):

Ա ցուցակի մեջ նշանագրերի ընդհանուր թիվն է (չուրաքանչյուր շարքը միայն մեկ նշանագիր հաշվելով) 454, որոնք համապատասխանում են 367 բառի կամ գաղափարի: Այս թիվը, եթե ուրիշ պակասավոր ցուցակների մեջ երբեմն 500-ը անցնում է, պատճառը ուրիշ բան չէ, եթե ոչ այն, որ բոլոր ձեռագիր և տպագիր ցուցակներում էլ իբրև նշանագիր մուտք են գործել նաև բազմաթիվ այնպիսի տառաձևեր, որոնք այլ բան չեն, եթե ոչ հայերեն բառերի պարզ կամ փակագիր համառոտագրութիւնները: Այս հասարակ պաշտոնական համառոտագրութիւնները, որոնց թիվը 300-ի շտի է, մենք ընտրանք դուրս ենք վտարել մեր ցուցակից: Բայց որովհետև սրանց համառոտագրական օրենքները պետք պիտի գան մեզ նշանագրերի կազմութիւնի բացատրութիւնի ժամանակ, ուստի հարկավոր է համառոտիվ խոսել նրանց մասին:

ա) նշանագիր համառոտագրութիւնից ամենապարզ տեսակը բառի առաջին տառն է միայն. ինչպես բ = Բարթուղիմեոս, գ = գօրաւոր, վ = Վարդան, ք = քան, մ = մայր:

բ) Երկրորդ տեսակը, թեև դարձյալ համառոտագրելի բառի նախատառն է, բայց այս նախատառը այնպիսի աննշան ձևափոխութիւն է կրած, որ մի քանի նույնատառ բառեր իրենց համառոտագրութիւնի մեջ չեն շփոթվում իրար հետ: Ահա մի քանի օրինակ.

Գ = Գէորգ	Ժ = ժամանակ
Գ = Գրիգոր	ժ = ժողովուրդ
Գ = գեղեցիկ	ժ = մայր
գ = գուսան	ժ = միտք

<sup>1</sup> Մխիթար Արքայի «Քերականութիւն զբարառի լեզուի հայկազան սեռի» (Վենետիկ 1730, Բ. տպ. 1770) հրատարակված ենք գտնում 46 նշանագրերի մի ցուցակ, որը և հնագույն հրատարակութիւնն է բոլոր ցուցակների մեջ:

դ) Սովորութիւնն է մի բառի սկզբնատառի վրա ավելացնել օ նշանը, որ կարող է կցված լինել կամ անջատ մնալ. *ինչպես*.

օբ = Բենիամին

դօ = դահեկան

բօ = բանալի

դ) Պատվի սովորական օրենքով՝ համառոտութիւնը կարող է նաև կազմվել բառի առաջին և վերջին տառերի հարադրութեամբ. *ինչպես՝* դլ = Դանիել, գլ = գովել, գո = գավառ ևլն:

ե) Բայց այս պարագային փոխանակ վերջատառի՝ կարելի է նաև դնել բառի միջին կարևոր տառերից մեկը կամ ավելին. *ինչպես՝* թգ = թագավոր, գոպ = գավառապետ: Շատ անգամ նույնը զարդերով. *ինչպես*.

ճօօպ = ճարտարապետ

եՊլ = Եղեկիել

Փն = մինչև

վկ = վասն այսորիկ

զ) Պատահում է շատ անգամ, որ ընտրված տառերի շարքը փոխվի. *ինչպես*.

զգ = գեղեցիկ

չբ = Բենիամին

է) Փակագրութիւնը շատ սովորական երևույթ է վերոհիշյալ բոլոր պարագաների մեջ. *ինչպես*.

Դն = գրել

ՅԻ = Յորդանան

ը) Համառոտագրութեան սովորական օրենքների տարօրինակ հակադրութեամբ շատ անգամ բառի միջից ընտրված մի տառ կամ տառեր, կամ նույնիսկ միայն վերջատառը, ծառայում են իբր համառոտագրութիւն. *ինչպես*. զղ = աղաղակ, ո = Անտոն, ր կամ շ = աշակերտ, դօ = Անդրե, ր կամ դր = Աղեքսանդր, գ կամ ի = Եգիպտոս, մ = Երեմիա, Եսբ = Մեսրոբ, ւղ = շաւիղ, մմ = ումեմն, ք՞ = փոքր, ըրլ = արարիչ, ծ՞ = Աստուածածին:

Նույնը զարդերով կամ փակագրութեամբ. *ինչպես՝*

մ = թագավոր

ն = ուրախ

ֆ = պարգև

ը = եղիցի

Դ = որդի

Թէ = կաթուղիկէ

թ) Այս պարագային հետին արտասանութեան սխալները երբեմն պատճառ են դառնում մի քիչ տարօրինակ համառոտագրութեանց. *ինչպես՝* դս = կաթողիկոս, ւս = կոյս (իբր կոյս), բ = Փիլիպպոս (մեկնված է Բիլիպպոս, տե՛ս Տ. վրդ. Պալլանի ցուցակը, էջ 10)., զինկ = զմիանկամն:

ժ) Հայերեն տառերի ձևական նմանութիւններն էլ երբեմն պատճառ են եղած այսպիսի տարօրինակ համառոտագրութիւններ

ձևացնելու. ինչպէս՝ զբը, որ և ո՛չ մի տառով չի հարմարվում ան-  
 դարբ բառին, որից համառոտոված է. բայց զբը վարիաները՝ որ նույն  
 բառի երկու վերջաժամերը երևան է հանում, ցույց է տալիս թե՛  
 ինչպէս որ բը կարողացել են շփոթվել և դառնալ բը. նույնպէս զ  
 պետք է որ առաջ եկած լինի զ ձևից: Ձանազան ձեռագրերի մեջ  
 ունինք մը = Բարեկոն համառոտագրութիւնը, որ ըստ ինքսան  
 անմեկնելի է. բայց Տ. վրդ. Պալլասի ցուցադրում սրա տեղ գտնում  
 ենք քն, որով հասկացվում է թե մը հետին տառական շփոթութեան  
 արդյունք է:

Այս կարգի համառոտագրութիւններից մի քանիսը, որոնց որ  
 ծագման ու կազմութեան պատմութիւնը կարող ենք երևան հանել,  
 նշանակել ենք վերը՝ ցուցադրում: Այսպէս օրինակ՝ ամբարիշտ, որի  
 դեմ դրված ձևերից երկրորդ շարքի առաջին ձևը ներկայացնում է  
 իբր փակագիր շտ, որից՝ հետո առաջացել է հունարեն Տ գրին նման  
 մի ձև և հետո սրանից էլ նմանութեամբ Բ տառաձևը, թեև այս վեր-  
 ջինը ամենեւին կայ չունի ամբարիշտ բառի հետ: նույնպէս է  
 յառաջ բառի նշանագիրը մ, որ յ և ջ տառերի փակագրութիւնն  
 է (պարունակելով ջ տառի գլուխը և յ տառի ստորոտը) և բնավ կայ  
 չունի մ տառի հետ:

Այս կարգին են վերաբերում նաև մի շարք ուրիշ համառոտա-  
 գրութիւններ, որոնք առաջին ակնարկով տարօրինակ են թվում. ինչ-  
 պէս. պ = Սարգիս, ի՞ = խնամ, լք = Ամբակում, ծր = Մեսրոբ,  
 զբ = Եղիազար. բայց սրանք էլ շատ գոհացուցիչ կերպով լուծվում  
 են, երբ ենթադրենք, թե տառական շփոթութեամբ ձևացած համա-  
 ռոտագրութիւններ են. այսպէս՝ վերինների նախաձևերը պետք է  
 լինեն՝ պ = սր, ի՞ = խ, լք = մք, ծր = մք, զբ = զք:

ծա) Առայժմ բոլորովին անմեկնելի են մնում մի քանի բոլոր-  
 ուղին կամայական համառոտագրութիւններ. սրանք են՝ ւր =  
 = բամբասել, է կամ ը = Աբիսողում, զ = Մխիթար, ւր = Համ-  
 բարձում, գ = աշխարհ, ծ = ապարանք: Սրանց մեկնութիւնը  
 գտնելու համար միջին ձևերի կարիք կա:

5. Այժմ անցնենք քննելու ցուցակի և նրա մեջ նշանակված  
 բուն նշանագրերի կազմութեան եղանակը:

Ցուցակը, ինչպէս տեսնվում է, բաղկացած է երեք սյունակից.  
 առաջին սյունակում նշանակված են համառոտագրելի բառերը,  
 որոնց դեմ երրորդ սյունակի մեջ դրված են համառոտագրութիւն-  
 ները: Սրանց թիվը դանազան է. քիչ բառ կա, որ միայն մեկ նշա-  
 նագրով համառոտագրված լինի. սովորաբար բոլորն էլ ունեն 2, 3  
 և ավելի նշանագրեր: Անձն և կեկղեցի բառերն ունեն մինչև 11 ձևի  
 նշանագիր: Ինչի՞ց է այս բազմազանութիւնը:

Ինչպես հայտնի է բանասերներին, երբեք չէ եղած մի բնագիր, որ իր բոլոր արտագրությանց մեջ անփոփոխ մնացած լինի: Որևէ գրիչ կամ արտագրող՝ ինչքան էլ բարեխիղճ լինի, բնականաբար ընդունակ է անելու մի քանի գրչագրական սխալներ, որոնք հաջորդ արտագրիչների ձեռքով հետզհետե ավելի պիտի շատանան: Եթե այսպես է պարզ գրերով գրված գրության համար, ինչքան ավելի պիտի լինի նշանագրերի համար, որոնք ո՛չ միայն նկարիչ ձեռքի ճարտարությունն են պահանջում, ո՛չ միայն մի գծիկի ամենանուրբ տարբերությամբ բոլորովին այլ ոճ ու ընթացք ստանալու վտանգին են ենթակա, այլև այս այլափոխությունների անվերականգնելի և անիմանալի լինելու հատկությունն ունեն: Արդարև, պարզ գրչագրի համար անկարելի բան չէ, որ երկրորդ մի արտագրող առաջինի սխալը նկատի և ուղիղը որոնի, գտնի և ուղղի: Բայց նշանագրերի համար այսպես չէ: Փոքրիկ մի տարբերություն, որ առաջին արտագրիչի ձեռքով առաջացավ, գրեթե անկարելի է, որ նկատելի դառնա երկրորդին և ուղղության ճանապարհ բացվի: Ամեն մի ձևափոխություն մշտական է և հարաձուռ:

Սրանց վրա ավելանում են նաև դիտավորյալ սրբագրությունները: Նշանագիրը՝ իբրև համառոտագրություն կամ սղագրություն, ըստ կարելիության կարճ և արագ գրության ձև պետք է ունենա. այս ձգտումը ունեցել են բնականաբար արտագրողները և աշխատել են ըստ կարելիության ավելի համառոտել, ավելի կարճացնել: Այսպիսով բարդ ձևերը՝ հետզհետե ավելի են պարզվել և իրենց նախավոր վիճակից հեռանալով՝ հասարակ և անճանաչելի ձևի են վերածվել: Այս պատճառով է դարձյալ, որ շատ նշանագրեր մաշվելով՝ կրճատվելով՝ հասել են նույն վախճանին և այսօր իրարից որևէ դանազանություն չեն ներկայացնում: Այսպես, օրինակ՝ ծ նշանակում է «աղբյուր, դրախտ, երկիր, ընդհանուր, հանդերձ, տրտունջ», ծ նշանակում է «աղանդ, անզգամ, երկինք, հեռավոր», մ նշանակում է «անողորմ, խորան, ծառա, Ստեփանոս», լ նշանակում է «առավոտ, խորան, աշխարհ, սերովբե», ժ նշանակում է «հավասար, ունք, վերակացու», ի նշանակում է «աղքատ, Բյուզանդիոն», ռ նշանակում է «կատարած, փարավոն, փոխ», յ նշանակում է «Բյուզանդիոն, որպես, պատարագ, իբրև, երկինք, լուսաբեր», զ նշանակում է «Ահարոն, Մովսես, Պետրոս, խոստովան», փ նշանակում է «առաքյալ, մարգարե», ք նշանակում է «լուսաբեր, Արուսյակ, անարգ, պատարագ» ևն ևն: Ինչպիսի՜ ճիշտ նմանություն ասորեստանյան կամ չինական գաղափարանշանների հետ:



Վերահիշյալ պայմաններն ի նկատի ունենալով՝ տարօրինակ շարժիտի թվա անշուշտ, եթե ասենք, որ գրեթե շկա մի ձեռագիր, որ օրինի մի ձեռագրի նշանագրերի հետ ձևական ճիշտ նմանություն ունենա: Նախկին հրատարակիչները միայն մեկ ձեռագիր ի նկատի ունեցած լինելով, իրենց ցուցակների մեջ հրատարակած բառերն էլ միայն մեկ նշանաձև ունեն: Իսկ մեր նշանագրերը քաղված լինելով 14 հավաքածուներից (ձեռագիր կամ տպագիր), բնական է, որ շատ բազմազան լինեին: Այս զանազան ձևափոխությունները դասավորելու համար հարկ էր դիմել մասնավոր մի սկզբունքի: Սրա համար կար երկու միջոց.

ա) նշանագրերը կարելի էր դասավորել համաձայն ձեռագրերի, նշանակելով ամեն մի բառի դեմ՝ թե ի՞նչ ձևեր է ստացել նա N 1—14 ձեռագրերի մեջ:

բ) կարելի էր նույն զանազան ձևերը դասավորել ըստ զարգացման, այսինքն՝ մեկնելով ամենից բարդ և սկզբնական ձևից՝ հաջորդաբար անցնել ավելի պարզված-մաշված ձևերին, համաձայն այն պայմանների, որ քիչ վերև բացատրեցինք:

Մեզ համար լավագույն թվաց այս երկրորդ միջոցը, որին և հետևել ենք:

Եթե նշանագրերը քննենք առանձին անջատաբար, առանց համեմատության եզրեր ունենալու, դժվար է նրանց նախնական ձևը, հետևաբար կազմության և զարգացման պատմությունը դուշակել: Բայց երբ աչքի առաջ ունենանք միևնույն նշանագրի զանազան ավելի կամ պակաս բարդ ձևերը, նրանց համեմատական ուսումնասիրությանը կարելի է երևան հանել, թե ի՞նչ նախատիպ ուներ նա, որից հետո՞հետև փոփոխվելով առաջ է եկել նորագույն զարգացյալ ձևը: Ահա այս զարգացման ժամանակագրական բնթացքով շարել ենք մենք էլ նշանաձևերը մեր ցուցակի երրորդ սյունակում:

Կան բառեր, որոնց նշանաձևերը իրար հետ բնավ կապ չունեն, կամ գոնե մեր այժմյան միջոցներով չենք կարող նրանց մեջ որևէ կապ գտնել: Պարզ է, որ սրանք տարրեր-տարրեր նշանագրեր են. ուստի մենք էլ ցուցակի մեջ նշանակել ենք տարրեր տողերով և իրարից անջատ: Ավելի շատ են այնպիսիները, որոնք թեև կազմում են մի քանի նման նշանաձևերի խմբեր, բայց այդ խմբերի մեջ բնավ կապ չկա: Օրինակի համար դրախտ բառը ունի 12 նշանաձև, որոնք կարելի է դասավորել երեք խմբի տակ. առաջին խումբն ունի 3 նշանաձև, երկրորդը՝ 4 և երրորդը՝ 5, որոնք թեև իրար մեջ նման են, բայց ո՛չ նաև խմբից խումբ. հետևաբար և երեք տարրեր նշանագրեր են մեզ համար:

Նշանագրերի կազմութեան և զարգացման քննութիւնը երևան է հանում երկու տարբեր ուղղութիւններ:

1. Նշանագրերը կազմված են նախնական պարզ կամ փակագիր տառախմբից, որ նույն բառի համառոտագրութիւնն է ներկայացնում. սա հետզհետե ալլափոխվելով և զանազան միջին ձևերից անցնելով՝ վերջապես ձևացրել է մի անորոշ նկար, որի շրջագիծը ո՛չ ներկայացնում է այն առարկայի պատկերը, որ նշանակում է, և ո՛չ էլ այն համառոտագրութիւնը, որի հետքերը կրում էր առաջ: Հարկ ենք համարում ասել, որ միջին ձևերից և ո՛չ մեկը ենթադրութեամբ կամ երևակայութեամբ չէ հնարված, այլ ցուցակում գտնված բոլոր ձևերն էլ՝ առանց բացառութեան, արտանկարված են բնագրերից: Ցուցակի երկրորդ սլունակում դրել ենք բոլոր այս ձևերի ծագումը, այսինքն՝ այն տառերը, որոնցից կազմված էր բառի առաջին և նախնական համառոտագրութիւնը: Իսկ (փկ) ձևով նշանակում ենք այն նշանագրերը, որոնց նախաձևը կազմված է բարդ փակագրից, ուր կարելի է նշմարել մայր բառի տառերից մի քանիսը:

2. Նշանագրերը ուղղակի նշանակված առարկայի պատկերն են. բայց այս պատկերը հետզհետե ալլափոխվելով, ձևացրել է դարձյալ անորոշ մի շրջագիծ, որ պատկեր լինելուց շատ հետո է, ինչ որ տառի խառնակ ձևափոխութիւնը լինելու երևույթն ունի: Առաջին տիպարին իբրև գեղեցիկ օրինակ են ծառայում՝

ա) Անդաստան. սրա առաջին ձևը ներկայացնում է փակագիր Ան, որ անդաստան բառի համառոտագրութիւնն է. երկրորդ և երրորդ ձևերը նույնի մի քիչ անփույթ կերպարանքն ունեն, բայց չորրորդը ավելի բազուկի կամ ծխամորճի նկարն է, քան թե տառ: Առաջին ձևը նպաստում է լուծելու նաև երկրորդ շարքի երկու նշանները, որոնք սրանց հետ կապ չունեն և նույնպես ներկայացնում են անհամառոտագրութիւնը. այս պատկերների աջ մասը նոտրագիր ա տառն է, իսկ ձախ կողմը գտնված կլորակը և տառի գլուխն է:

բ) Արիւծ. առաջին անջատ և երկրորդ փակագիր ձևերը ներկայացնում են ւծ համառոտագրութիւնը, որ երկու անգամ փոխվելով՝ վերածվել է հինգերորդ ձևին, որ ավելի զարդանկար է:

գ) Եկեղեցի. առաջին ձևը ներկայացնում է նոտրագիր եկլի, որ շուտով այնպիսի զարգացում է կրել, որ դարձել է եկեղեցու իսկական պատկերը՝ գմբեթով ու խաչով կամ սրածայր կաթողիկեով:

դ) Ցեծա. առաջին ձևը ներկայացնում է ւծ՝ արդի ձեռագրին նման գրութեամբ. հաջորդների մեջ նախատիպը կորչելով, վերջապես ձևացել է պտուղների սիրուն մի փնջիկ՝ կոթով միասին:

ե) Հանճար. առաջինը շատ հասարակ համառոտագրութիւնն է. երկրորդի մեջ և տառը դարձել է փակագիծ. երրորդը՝ ամբողջապէս փակագրված է, և շորրորդի մեջ վերջապէս ձևացել է բազմոցի քառակուսի բարձ՝ շորս փնջերով, որոնց օղակները և և բ տառերի փաթույթներովն են կազմված:

զ) Փառասուր. առաջին նշանը փ սկզբնատառի ձևափոխութիւնն է, ինչպէս են նաև փառասուր. փառս բառերի առաջին ձևերը. բայց այս փ ձևը շուտով ավելի փոխվելով՝ դարձել է շղթա կամ համբիշ:

է) Մարգարէ. գ ձևից դարձել է աունկ կամ մուրճ:

ը) Մեծաւոր. համառոտված է նոտրագիր և փակագիր մե ձևվից, որ հետո դարձել է ճարմանդ (կոճակի մայր):

թ) Պատարագ. պ նախատառը իր կլորակ պատիվով դարձել է վերջապէս միոտանի սեղան, որ պատարագի ներկայացրած զազափարին էլ համաձայն է:

Երկրորդ տիպարի ամենից բնորոշ օրինակներն են.

ա) Ազու. առաջին ձևը լեզվի նյութական նկարն է, որ շորրորդ աստիճանում հասել է գրեթէ ւ տառաձևին:

բ) Արեգակն. առաջին ձևը ներկայացնում է նորածագ արևը՝ իր ամբողջ սկավառակով և արձակած ճառագայթներով, որոնք հետըզհետե կրճատվում են. վերջապէս հասնում է հորիզոնական ձևով դրված գլխատառ Տ-ի:

գ) Անտարան. նկարված է նախ մի գիրք՝ բացված ձևով, որ հետզհետե սղվելով՝ դարձել է մի քառակուսի, հետո նամակի ծրար. այնուհետև՝ դամ հանելու արցան և վերջապէս միջից կիսված մի շրջանակ՝ նման օ տառաձևին:

դ) Դուռն. նկարված է նախ երկաթյա դուռն մի փեղկը՝ վերին և ներքին ծխնիներով. բայց ամենից հետո դարձել է պարույկ նշանի նման մի բան:

ե) Յօնք (ունք). առաջինը կամարավոր մի ունք է. երկրորդի մեջ ունքը պոստված է. երրորդին դարձել է ա:

զ) Նշխար. նախ դրված է նշխարքի պատկերը՝ վրան խաչի նշանով. հաջորդում մնացել է միայն խաչը, որի ուղղահայաց մասը երկարելով և ուրովելով՝ դարձել է հետո նոտրագիր գ:

Պետք է նկատել, սակայն, որ՝ ա) Մի քանի նշանագրերի նախաձևերը ավանդված չեն. այնպես որ սրանց զարգացման պատմութիւնը երևան հանելու համար հարկավոր է միայն գուշակութիւններ անել: Օրինակ՝ այսպէս բառի դեմ գրված է պատուհանի ձևով մի նշանագիր, որ կազմված պետք է լինի ա, ս, պ և ս տառե-

րից՝ փակագրութեամբ: Գրած բառի նշանագիրն է մի տեսակ գըլ-խարկ, որ հետո դարձել է գարեջրի բաժակ, այստեղից էլ գուլպա և վերջապես կոր եզերքով մի քառանկյուն: Սակայն պետք է, որ իր նախաձևի մեջ պարունակի ք և ծ տառերի փակագրութիւնը: Սկիզբն բառը նշանակված է մի շակերտով և պարուկով, որոնք ներկայացուցիչ են ւ և և տառերի: Սահակ բառի նշանագիրը, որ կաթուղիկեի կամ սրտի ձևն ունի, ծագած է ւ և և տառերից: Կառա-րած կազմված է ր և ծ ձևերից, թեև այժմ միայն մի պարույկ է ձե-վացնում: Ստեփանոս և Փայլակն զլխավորապես կազմված է X ձևով մի նշանից, որ փ գրի հետ շատ նման չէ, բայց երկուսի հա-մեմատութիւնը, ինչպես և վրան ագուցված և, ս, լ տառերը ցույց են տալիս, թե փ գրի կերպարանափոխութիւնն է: Արծաթասէր բա-ռի նշանագիրը թվում է, թե ծ, ք, ր, ւ և այլն տառերով կազմված փակագրութիւն է:

բ) Մի խումբ նշանագրեր այնպիսի ձևեր են ստացել, որ կա-րող են թե՛ տառաձևից և թե՛ պատկերից առաջացած կարծվել: Օրինակ՝ ճառագայթ նշանագիրը ներկայացնում է թե՛ զարդարուն և և թե ճառագայթարձակ մի արև: Գաբիկյանի ուղարկած ցուցա-կում այդ բառի դեմ ունենք նգ, որ հաստատում է, թե բառիս արե-գակնանման նշանագիրը ուրիշ բան չէ, բայց եթե և գրի մի ձևա-կերպութիւնը: Յաջող կարելի է նկատել թե՛ իբր խարխիս, որ նշան է ապահովութեան և թե իբր փակագրութիւն յը կամ յղ տառերի: Օձ նման է թե՛ օձի և թե օ և ծ տառերին: Մեզ համար առանց տարա-կույսի է, թե բոլոր այս և այսպիսի նշանագրերը բուն տառաձևից են ծագում, իսկ պատկերական նմանողութիւնը հետին գործ է:

գ) Մի քանի բառեր իրենց նշանագիրը փոխ են առել հոմանիշ մի ձևից. օրինակ՝ տանար-ինը ծագել է եկեղեցի բառից, հարուստ ծագել է փարթամ բառից. որպէս բառի նշանագրերը ծագած պետք է լինեն զոր օրինակ և իբրև բառերից: Նույնպիսի փոխառութիւն կա աշխարհ և երկիր, և թերևս աղանդ և հեռձուած հոմանիշների միջև:

Ավելի հետաքրքիր է դժոխք, որի նշանագիրը՝ գն համառո-տագրութիւնն է, հետո խանդարվելով դարձած ձ: Արդ, այս գն ուրիշ բան չէ, եթե ոչ դժոխքի հոմանիշ գեհնե բառի կանոնավոր համա-ռոտագրութիւնը:

դ) Մերձավոր նշանակութեամբ բառերն էլ մերձավոր նշանա-գրեր են ունենում, որոնք իրարից են շինված. սրա գեղեցիկ օրինակ են զարուն, ամառն, աշուն և ձմեռն բառերը, որոնց նշանագրերը իրար հետ սերտ նմանութիւն են դրսևորում: Սրանց մայրն է ամառն, որի նշանագիրը փակագրութիւն է՝ կազմված ա, մ, ո, և տառերից. մյուս երեքը կազմված են սրանից՝ փոքրիկ ձևափոխու-

Քյամբ: նույնպիսի նմանությունն կա նաև երկինք և երկիր, Առու-  
յակ և Լուսաբեր ձևերի մեջ, որոնք իրարից են կազմված: Շատ հե-  
տադրերի են Պողոս և Պետրոս բառերը. երկուսն էլ երեքական նշա-  
նագիր ունեն՝ իրարից շինված. Պողոս՝ ստացել է պ տառից կազմ-  
ված մի նշանագիր՝ գարդերով, երկրորդ՝ լատինական B տառը, որ  
նույն անվան սկզբնատառն է և երրորդ՝ անորոշ մի նշանագիր, որ  
Վ ձևն ունի: Պետրոսի նշանագրերն են նախ՝ պ սկզբնատառը հա-  
սարակ պատիվով, երկրորդ՝ լատինական B տառի շրջված ձևը և  
երրորդ՝ նույն անորոշ Վ նշանի նույնպես շրջված Վ ձևը:

ե) Փակագրությունը երբեմն հասնում է այնպիսի կատարելու-  
թյան, որ պարզագույն մի ձևի մեջ ամփոփում է բառի բոլոր գրերը.  
սրա շատ գեղեցիկ օրինակն է № 402ա, որի մեջ սպասաւոր բառի  
բոլոր ութ գրերն էլ ներկա են. № 371 պարունակում է ջուր բառի  
չորս գրերը. № 283ա պարունակում է Մարտիրոս բառի գրեթե բո-  
լոր գրերը. № 340 պարունակում է ողի բառի գրեթե բոլոր գրերը:  
նույնպես պետք է լինի նաև արֆայութիւն (№ 106), որ անկյունավոր  
մի խաչի մեջ պարփակում է բառի տառերի մեծագույն մասը:

զ) Հետադրերի է իմանալ, թե նշանագրերի կազմության մեջ  
օտարադգի տառեր էլ մասնակցություն ունեցե՞լ են: Իս. Հարու-  
թյունյանը (Հայոց գիրը, էջ 109) սրան հաստատական պատաս-  
խան է տալիս և իբրև օրինակ հիշում է ճշմարիտ (№ 275բ), մարդ  
(№ 280գ), Պողոս (№ 369գ), սարկաւազ (№ 387ա) նշանագրերը:  
Բայց սրանց մեջ մենք օտար բառ չենք տեսնում: Թերևս հեղինակը  
ուզում է նմանություն գտնել արարերեն Շ, հունարեն λ և լատինե-  
րեն T տառերի հետ. բայց ի՞նչ ձևով կարելի պիտի լինի այս տա-  
ռերը կապել վերի բառերի հետ: Հայտնի է, որ այս օրինակները  
բոլորովին անօգուտ են:

Մեր կողմից կարող էինք ավելացնել մի քանի ուրիշ օրինակ-  
ներ, որոնք նմանության ավելի հաջող հանգամանքներ են ներկա-  
յացնում. ինչպես՝ սաաանայ բառի շորրորդ նշանագիրը H, իբրև  
լատինական H տառը, որի հետ նույն է գալիս նույն բառի հինգե-  
րորդ նշանագիրը, իբրև հայերեն Հ = H: Միջևուրդ բառի երրորդ  
նշանագիրը ճիշտ արարերեն Յ տառախումբն է (իբր ܝܘܟܝܘܿ և vakil):  
Բայց ի՞նչ կապ կա սատանայի և H = Հ տառերի մեջ կամ միջնոր-  
դի և վեբիլի մեջ: Եվ ո՞չ մի: նշանակում է, սրանք էլ անօգուտ օր-  
նակներ են:

Հնդհակառակը, սակայն, շատ ապահով ենք գտնում Պողոս և  
Պետրոս բառերը, որոնք՝ ինչպես մի քիչ վերև նկատեցինք, կազմ-  
ված են լատինական B տառից, որ նույն անունների նախատառն է՝

արևմտյան արտասանութիւնք: Սրանից պակաս ապահով չենք համարում սեղան բառը՝ որի առաջին նշանագիրը ներկայացնում է հունարեն *Τ*՝ իբրև նախատար *τράπεζα* «սեղան» բառի, որ հայոց մեջ շատ ծանոթ բառ էր և մինչև իսկ այսօր էլ գործածական է մի քանի բարբառներում:


է) Օտարներից փոխառյալ նշանագրերի մի ամբողջ շարք կա սակայն, որ նախորդների հետ նմանութիւն չունի բնավ. սրանք աստղաբաշխական բառեր են, այսինքն՝ կենդանակերպների և մուրահների անունները, որոնց նշանագրերը ընդհանուր գիտութիւն մեջ ընդունված ձևեր են. սրանք են՝ Ջրհոս, Ձուկն, Խոյ, Յուլ, Երկավոր, Խեցգետին, Առյուծ, Կույս, Կշիռ, Կարիճ, Աղեղնավոր, Այծեղջյուր, Փայլածու, Լուսաբեր, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երևակ: Չենք հաշվում Արեգակն ու Լուսինը: Սրանցից ձևացած են մեր մեջ՝ Արուսյակ (= Լուսաբեր ձևից), Երկինք (շրջված Երկիր բառից) և Աշխարհ (որ նույն Երկիր բառն է): Այս բառերը ցուցակում նշանակել ենք — նշանով, դեմն էլ դնելով ստույգ եվրոպական ձևերը:

Այս բոլոր պայմաններն ու օրինքները ի նկատի ունենալով, Ա և Բ ցուցակներում գտնված 509 նշանագրերը, որոնք համապատասխանում են 402 բառերի կամ գաղափարների, կարող ենք բաժանել շորս տեսակի.

ա. Ձանազան տառաձևերից և պարզ կամ փակագիր համառոտագրութիւններից առաջացած նշանագրեր: Այս բաժնին է պատկանում նշանագրերի մեծագույն մասը, թիվով 332 հատ, որոնք ցուցակի մեջ առանձին նշանով նշանակած չենք:

բ. Բուն պատկերագիր նշանագրութիւններ, որոնց նախատիպը տակավին որոշակի պահում է ներկայացված առադկայի իսկական պատկերը. սրանց թիվը 32 հատ է, որոնք ցուցակում նշանակված են + նշանով:

Այս պատկերագրերն են. աթոռ, ականջ, անթառամ ծաղիկ, աշտարակ, աստիճան, աստղ, արեգակն, ավետարան, բուրաստան (ներկայացնում է տնկված երեք ծաղիկ), գավազան, գինի (ներկայացնում է գինու տիկ), դուռն (ներկայացնում է դռան փեղկը՝ վերին և ներքին ծխնիններով՝ արևելյան ձևով. հայտնի է, որ հին արևելյան ձևով՝ ծխնինները դռան կողքից ազուցված չեն լինում, այլ վերի և վարի ծայրերը), եղջյուր, երիկամն, զմելի (բացված գրահատի պատկերն է), թագավոր (ներկայացնում է հնաձև մի թագ), լեզու, լուսին, լրումն լուսնի, խաչ, կշիռք (կշիռքի մեկ նժարն է՝ թելով կապված), ճակատ (ճակատի վերին եզրագիծն է և մեկ ունք՝ փոխանակ երկուսի. հնագույնի մեջ կարող էր գտնվել երկու ունք, ինչպես որ լրումն լուսնի մեջ էլ երկու աչքը վերածված է մեկի),

մատանի, յոնք, նշխար, պատու (էրեք կլորիկ պատու՝ սալորի, իրեն-  
ձորի նման և այլն), սեղան, սիրտ, վերին Յրուսաղէմ (մի խաշանիչ  
տրված միայն), Վիշապ համաստեղութիւն (բերանարաց վիշապի  
անհաղող պատկերն է), տե՛ս (ցուցամատը պարզած և մյուս մատանե-  
րը ծալած մի ձեռք, իբր ) , տաճար:

Պատկերագրերի հարցը առհասարակ շատ փափուկ և զգուշալի  
է: Կան նշանագրեր, որոնք մեզ պատկեր են թվում այժմ, կարող են  
իրոք պատկեր չլինել: Այսպես, օրինակ՝ եկեղցի բառի նշանագիրը  
այնպես պարզ և որոշ է, որ ամեն մարդ էլ պիտի ընդունի իր եկե-  
ղեցու նկար՝ խաշով և կաթողիկենով: Այսպես ընդունել էի նա էլ, քա-  
նի դեռ ծանոթ չէի Տրդատ վրդ. Պալլանի ցուցակին: Երբ ձեռք բերի  
նույն աշխատութիւնը, տեսա եկի համառոտագրութիւնը՝ այնպես  
հարմար ձևով, որ այլևս տարակույս չմնաց ինձ համար, թե տա-  
ճարի պատկերը նույն համառոտագրութիւնից է ձևավորված հետ-  
նաբար:

Այսպես սխալվել է նաև էմիլը, որ իր հրատարակած բոլոր 84  
նշանագրերն էլ պատկերագիր է կարծում, ոմանց մասին առանձին  
բացատրութիւններ էլ տալով: Օրինակ՝ աղբիւր (e) նշանագրի մեջ  
կլորակը համարում է ջրի ակունքը, իսկ կլորակի կողքի գծիկը՝ նույն  
ակունքից բխած ջրի ընթացքը: Անդաստան նշանագրի համար կար-  
ծում է, որ հին Հայոց արորի հետ նմանութիւն ունի: Երածիշտ  
նշանագրի մեջ գտնված զիգզագը համարում է հին Հայոց երածըշ-  
տական խազերից մեկը են: Սակայն այս բոլորը աչքի պատրանք է,  
զլխավորապես առաջացած նախատիպ ձևերի բացակայութիւնից:  
Եթէ ընթերցողը համեմատի այս նշանագրերի նախատիպերը մեր  
ցուցակի մեջ, պիտի տեսնի, որ բոլորն էլ գրերի համառոտագրու-  
թիւն են. աղբիւր = ար, անդաստան = ան, երածիշտ = տ:

Մեր նշանակած պատկերագրերի մեջ էլ կարող են գտնվել այն-  
պիսիները, որ իրոք հետին ձևակերպութիւն լինեն: Օրինակի հա-  
մար՝ կասկածելի են թվում հատկապես անտարան, աստիճան, սե-  
ղան: Ավետարանը կարող է պարունակել աւ տառերը. աստիճան՝  
ա, ս, տ տառերը. սեղան թվում է, թե կազմված է ս տառից, որ հե-  
տո միջակետ է դարձել, ճիշտ ինչպես որ սանդուխ բառի մեջ փոր-  
րիկ կլորակի է վերածվել: Սակայն մեր այս կասկածները հաստա-  
տելու միջոց չունենալով, ստիպված ենք ընդունել իբրև պատկերա-  
գիր:

դ. Օտարներից փոխառյալ նշանագրեր, որոնք ընդամենը 21  
հատ են և ցուցակի մեջ — նշանով նշանակված, աստղաբաշխա-  
կան բառերն են:

դ. նշանագրեր, որոնց ծագումը հայտնի չէ. սրանք կարող են

լինել այլափոխված փակագրություններ, բայց կարող են լինել նաև պատկերագիր կամ գաղափարանշան, և ըստ այսմ պատկանել առաջին կամ երկրորդ տեսակին: Սրանց թիվը 124 է և ցուցակի մեջ նշանակված են \* նշանով:

Նշանագրերի կազմությունը և այլ հանգամանքներ այս ձևով պարզելուց հետո, կարող ենք քննել այն հարցը, թե նշանագրերը կարող են լինել նախամեսրոպյան մեհենագրոշմ կամ գաղափարագիր նշաններ (էմին), հաթյան նշանագրերի մնացորդ (Չ. Գ. Գ. և Սրապյան) և կամ վերջապես Դանիելյան գրերը (Սրապյան):

Նշանագրերը չեն կարող լինել մեհենագրոշմ գրության նշաններ, որովհետև՝

Նախ, ինչպես տեսանք, նրանց ամենամեծ մասը, 298 նշան, կազմված է հայերեն տառերի վրայից, ուստի և պատկանում է հետմեսրոպյան շրջանին. մինչև իսկ ոմանք շատ ավելի հետին են, որովհետև կրում են օ տառը, որ մեսրոպյան այբուբենի մեջ գոյություն չունենր (այս մասին ավելի ընդարձակ տե՛ս հաջորդ թվահամարը):

Երկրորդ. միայն 31 նշան կա, որ կարող ենք հաստատ կերպով գաղափարանշան կամ պատկերագիր համարել (չհաշվելով աստղաբաշխական նշանները, որոնք հայ մտքի ծնունդ չեն): Սրանցից էլ դեռ չորսը հետին է, որովհետև քրիստոնեական ժամանակի բացատրություն են. այսպես՝ ավետարան, խաչ, նշխար, վերին Երուսաղեմ: Ուրեմն ընդամենը՝ 27 պատկերագիր:

Երրորդ. եթե մինչև իսկ բոլոր 104 անժանոթ նշանագրերը գաղափարանշան համարենք, հանելով սրանցից 17 հետին կամ հետքրիստոնեական բառերը (Աբրահամ, աղանդ, Անակ, Անտիոք, Բիզանդիոն, Եփրեմ, կոպաչաշտ, հաղորդ, հեթանոս, Հերմոն, Յակոբ, Պողոս, Սամուէլ, սատանայ (3 նշան), Սողոմոն), կունենանք 87 նշանագիր, որ նախորդ 27 պատկերագրերի հետ կազմում է 114 նշանագիր, համապատասխանելով միմիայն 98 բառերի կամ գաղափարների: Այս 98 բառերը բավական չեն ամենատարրական իմաստն անգամ մեհենագրոշմ գրությամբ արձանագրելու: Այս նպատակին հասնելու համար պետք է ամենաքիչը հարյուրավոր նշաններ, չասելու համար հազարավոր, ինչպես են եգիպտական մեհենագրերը:

Գալով հաթյան նշանագրերին, կարելի էր ասել, թե սրանք ավելի կապ ունեն մեր նշանագրերի հետ. գոնե արտաքին երևույթը այդպես է ցույց տալիս. նախ՝ թվի կողմից հակառակություն չկա, որովհետև հաթյան նշանները ըստ Ծնսենի ընդամենը 92 հատ լինելով, կարող են շատ ճիշտ հարմարվել (ենթադրյալ) մեր 98 բա-



սերի կամ 114 գաղափարանշանների թվին: Երկրորդ՝ շատ նշան-  
 ներ ձևով նույն են մեր նշանագրերի հետ. այսպես, օրինակ՝ հաթ-  
 յան Ռ 1 նշանագիրը ⑤ «Աստուած» նման է մեր Ավետարան ①  
 կամ սանդուխք (N 381բ) և կամ սեղան (N 389) ձևին. նույնպես Ռ 2  
 Syennesis Աստուած 111 = գրախա (N 143գ). Ռ 4 sr = dsario  
 «թագավոր» 𐎎𐎌 = թագավոր (N 174). Ռ 5 dsario? «թագավոր»  
 𐎎 = ունք, 𐎎. Ռ 7 til «տեր» 1111 = գրախա (N 143գ). Ռ 10 Δ  
 dsarayi «ծառա» = Δ լեռան. Ռ 11 𐎎𐎌 zapa «ծառանգ» = Սա-  
 հակ (N 374ա). Ռ 14, 𐎎𐎌 hati = փարթամ (N 438բ). Ռ 16 𐎎𐎌,  
 կարկեմիշ = ճշմարիտ (N 275գ). Ռ 26 𐎎 k, ka, ak = մարգա-  
 րե (N 279գ). Ռ 29 𐎎 n, ni = տե՛ս (N 422). Ռ 27 𐎎 ւ՛ =  
 = եղբայր (N 147բ). Ռ 31 ① m = ① Ավետարան. Ռ 32 𐎎 ր՛,  
 w = ր՛ փոխ. Ռ 38 𐎎𐎌 mi = ր՛ սկիզբն. Ռ 40 \ քառասկիզբ  
 կամ քառավերջ = | ծառա. Ռ 41 | քառասկիզբ = 11 նսալի.  
 Ռ 43 J քառանշատ = յղեկ. Ռ 44 𐎎 նշան ուղղականի = փար-  
 թամ (N 438բ): Ավելացնենք նաև ուրիշ հաջող համեմատություն-  
 ներ. ինչպես Իշորա աստվածուհին և անդունդ (N 47բ), arwa  
 «թագավոր, իշխան» և հափշտակել (N 308բ), bhurain? «տիրող,  
 բռնավոր» և շուշան (N 332), աստիճանատր և առաջնորդ (N 78ե),  
 մարտիկ և պտուղ (N 366 ա) կամ ցնծա (N 427 դ), s՛ւ՛ և հեթանոս  
 (N 248 բ), քառավերջ և տնանկ (N 423 ա) և այլն: (Այս վերջին օ-  
 րինակների հաթյան ձևերը տե՛ս Ենսենի ցուցակում):

Բայց ի՞նչ արժեք կարող են ունենալ այս համեմատություն-  
 ները, երբ նշանակության կողմից կապակցություն չկա բնավ: Եվ  
 արդարև ի՞նչ կապ ունին իրար հետ ծառա և լեռ, քագավար և ուն՛,  
 ծառանգ և Սահակ, կարկեմիշ և ճշմարիտ կլն կլն: Իմաստի կող-  
 մից քիչ թե շատ հարմարվող միակ ձևերն են՝ Ռ 1 աստված և ավե-  
 տարան, Ռ 4 dsario և քագավոր (երկուսն էլ հոմանիշ), arwa «քա-  
 գավոր, իշխան» և հափշտակել, աստիճանավոր և առաջնորդ, Ռ 14  
 hati «հարյան, հայ» և փարթամ: Բայց դժբախտարար սրանցից էլ  
 երեքը (առաջնորդ, հափշտակել, փարթամ) մեքսոպյան տառերի  
 վրա ձևացած համառոտագրություններ են և ո՛չ գաղափարանշան.  
 մեկն էլ (ավետարան)՝ հետքիստոնեական բառ: Թագավոր ձևն է  
 միայն, որ ամեն կողմից կարող էր հարմարվել, բայց միակ այս  
 բառի վրա հիմնվելով ենթադրություններ անել բանական չէ:

Այս բոլորը ըստ Ենսենի վերծանման: Բայց ավելացնում ենք,  
 որ Հրոզնիի նոր մեկնությունը՝ հաթյան գաղափարանշանները պարզ

տառեր են և հաթերը կապ շունեն հայերի հետ: Ենսենի բոլոր ենթադրութիւնները ջուրն ընկան և հետևաբար վերի բոլոր համեմատութիւններն էլ խաբուսիկ բաներ են:

Ավելորդ ենք համարում վերջապես խոսել Դանիելյան գրերի մասին, որովհետև ամենևին տարակույս չկա, որ այս գրերը ձայնական դրութիւնով (տառեր) են եղել, մինչդեռ մեր նշանագրերը ամբողջական բառեր լինելով, բնավ չեն կարող հարմարվել նրանց հետ:

Եզրակացութիւնն այն է, որ վերոհիշյալ ցուցակի մեջ գտնված բոլոր նշանագրերը, պատկերագիր թե համառոտագրութիւն, հետմետրոպիան շրջանում հայերեն տառերի վրա ձևված կամ առարկայի պատկերից առնված նշաններ են, և բնավ կապ չունեն մեհենագրոշմաների և հաթիան կամ դանիելյան նշանագրերի հետ:

Ե՞րբ կարող է լինել, գոնե մոտավորապես, հայ նշանագրերի հնարման ժամանակը:

Այս բանը որոշելու համար երկու գլխավոր հիմնակետ ունենք. ա) ձեռագրերի ժամանակը, բ) նշանագրերի տառական կազմութիւնն եղանակը:

Նշանագրերի ցուցակ պարունակող ձեռագրերից հնագույնը՝ Բեռլինի արքունի մատենադարանի № 805 ժողովածուն է (Ֆրեդերիք Մուրատի հրատարակածը), որ գրված է 1564 թվին: Սրանից հետո գալիս են կազարյան Ճեմարանի № 141 ձեռագիրը (էմինի և Հարութիւնյանի հրատարակածը) գրված 1620—21 թվին. Թավրիզի առաջնորդարանի № 14 ձեռագիրը՝ 1678 թվին. Տրդատ վրդ. Պալլայանի տեսած ձեռագրերը ԺՆ դարի վերջերից (հատկապես Թալաս գյուղինը 1695 թվից), և վերջապես Անտոնյան միաբանութիւն Օրթաքեռի թանգարանի № 112 ձեռագիրը (Սրապյանի հրատարակածը) 1707 թվից: Դժբախտաբար մյուս հրատարակութիւնն քննարկի, ինչպես և էջմիածնի ձեռագրերի թվականը անձանոթ է:

Սրանցից հետևում է, թե նշանագրերի գյուտը 1564 թվից առաջ է. այս թվին գրված ձեռագիրը արդեն այնպիսի զարգացած ձևեր ունի, որ նույն թվականը պետք է անպատճառ դեռ ավելի առաջ տանել: Անտոնյան թանգարանի ձեռագիրը օրինակված է 1339 թվին գրված օրինակից. և եթե վստահելի է Սրապյանի տված տեղեկութիւնը, նշանագրեր այս հնագույն ձեռագրումն էլ նույնպես կային: Եվ որովհետև այստեղ գտնված նշանագրերի թիվը 25 է միայն, որից 10 հատը ընդհանուր անտղաբաշխական նշանագրեր են, այստեղից կարող ենք հետևել, թե նշանագրերի առաջին գործածութիւնը ԺՎ դարից մտած պետք է լինի, առաջին անգամ սակավ քանակութիւնով, որից հետո՝ քիչ քիչ շատացած և ընդհանրացած:

Այս եզրակացութիւնն համաձայն է գալիս նաև նշանագրերի տա-  
ռական կազմութիւնն եղանակը: Ունենք մի խումբ նշանագրեր, որոնք  
միմիայն նոտրագրից կարող են առաջացած լինել: այսպես են  
օրինակ՝ Անդաստան, Եկեղեցի, առանկ քան, անդունդ, քարոզ են:  
Անդաստան համառոտված է Ա գլխատառ նոտրագրից, առանց որի  
նշանագրի ձախակողմյան թիւը շատ ավելի կարճ, միանգամայն  
տակը առանց ուրորի պիտի լիներ: Եկեղեցի բառը էթն նոտրագրի  
ն տառից ձևացած չլիներ, ձախակողմյան պատը ամեննին երևան  
չպիտի գար, որով և Եկեղեցու ձևը երևան չպիտի գար: Անդունդ  
նույնպես նոտրագրից է, որովհետև գ գրի տակն ուրորը միայն  
կարող էր ձևացնել զարդանկարի տակի օղակը: Վերջապես, Եթե  
առանկ քան նոտրագիր Բ-ից չլիներ, բրիչի ձևը երբեք չպիտի ա-  
ռաջանար: Թողնենք հիշել նվազ պայծառ օրինակները:

Նշանագրերից ոմանք կազմված են օ տառից, որ մետաղային  
տառերի շարքի մեջ գոյութիւն չունենք. այսպես են՝ օգնական, օրն-  
նել, գո օրինակ, օձ և որպէս բռները:

Վերջապես կան նշանագրեր, որ հետին արտասանութիւնն վրա  
են ձևված. ինչպես՝ կարողիկոս (№ 213գ. դ տառով), կենդանի  
(№ 218 ա, տ տառով), Փրիլիպոս (№ 439) (և մեկնված Ռիլիպոս),  
փոխ (№ 441) (երկուսն էլ ք տառով) և վերջապես Պօղոս Ե և Պեա-  
րոս Ե առաջլայնների անունները, որոնք, ինչպես մի քիչ վերև ցույց  
տվինք, կազմված են լատինական Ե տառով՝ համաձայն սլ գրի՝ հե-  
տին Ե արտասանութիւնն:

Այս երեքն էլ (նոտրագրի գործածութիւնը, օ գրի փոխառու-  
թիւնը և արտասանութիւնն փոփոխութիւնը) ժՊ դարից հետո են:  
Ըստ Տաշյանի (Ակնարկ մը հայ հնագրութեան վրա, էջ 73) նոտ-  
րագիրը գործածվել սկսվեց ժՊ—ժԳ դարից. սրանով երկրորդ ան-  
գամ ապացուցվում է մեր եզրակացութիւնը, թե նշանագրերի հնա-  
րումը ժԳ դարից է: Գարեգին վրդ. Հովսեփյանը (Շոգակաթ, էջ  
214) տեղեկութիւններ է տալիս էջմիածնի № 612 և № 91 ձևագրե-  
րի թվականի մասին: Երկուսն էլ պարունակում են նշանագրեր, բայց  
երկուսն էլ անթվական են: Ըստ Գարեգինի՝ առաջինի թվականը  
պիտի լինի ժՊ դարի վերջը և ժԳ դարի սկիզբը, իսկ երկրորդի թը-  
վականը՝ թերևս ժԸ դար: Վերջինը շատ ուշ լինելով՝ արժեք չունի,  
բայց առաջինը շատ մեծ նշանակութիւն ունի: Եվ էթն ճիշտ է Գա-  
րեգինի տված թվականը, այն ժամանակ պետք կլինի նշանագրերի  
թվականը մի քիչ էլ առաջ տանել, ըստ որում նույն ձևագրի մեջ  
գտնված նշանագրերը բավական մաշված ձևեր են և ենթադրում են  
ավելի հին սկզբնավորութիւն:

## ԴԱՆԻՅԱՆ ԳՐԵՐ

Հինգերորդ այբուբենը, որ պատմական վկայությամբ գործածել են Հայերը նախորդ այբուբենների խափանումից հետո, Դանիելյան այբուբենն է: Այս գրերի գլուտի պատմությունը արդեն տեսանք Մեսրոպի կենսագրության մեջ. այստեղ ուղում ենք զբաղվել միայն այն հարցերի քննությամբ, որոնք վերաբերում են նույն տառերի ներքին կազմության:

Նախ և առաջ քննենք այն հարցը, թե Ե դարից առաջ Հայերը գիր ունեցե՞լ են, կա՞ պատմական վկայություն սրա համար, Հայերը գիրտե՞ին այդ բանը և հիշյալ պատմական վկայություններն ի՞նչ արժեք ունեն:

Մեր բանասերների մեծ մասը առհասարակ ընդունում է, թե Հայերը Ե դարից առաջ, խալդյան բեևոագրերից շատ հետո, ունեցել են առանձին տառական այբուբեն: «Մեսրոպյան այբուբենից դեռևս շատ առաջ,— ասում է Հարությունյանը,— հայերն արդեն ունեցել են սեփական այբուբեն, որ գործածության մեջ է եղել («Հայոց գիրը», էջ 253): Այս բանի հակառակը ուղղակի անկարելի է գտնում Գարագաշյանը (Քննական Պատմութ. Գ. 39). «Նայելով հանգամանաց հայերէն լեզուին յառաջ քան զՄեսրոպ՝ անհնար էր լեզուին առանց դպրութեան հասնել յայն աստիճան զարգացման՝ յորում կը գտնենք զնա ի հատակոտորս երգոց վիպասանաց, որոց կատարեալ նմանութիւն է թարգմանչաց լեզուն»: «Անըմբռնելի կը թուի մեզ դնել մեր հին լեզուն ամենեւին առանց իրիք գրի և դպրութեան յառաջ քան զՄեսրոպեանն» (Անդ, էջ 45): Ավելի առաջ երթալով, մինչև իսկ ենթադրում է, թե Մեսրոպից առաջ կար նաև հայերեն բառարան, ուր թարգմանիչները հավաքում էին իրենց նորակերտ բառերը և թողնում էին հաջորդ սերունդին: — Արվեստական լեզվի գաղափարով սնված մարդու համար ի՞նչ ավելի բնական՝ քան բառարանը:

Գրեթե նույնպիսի ձևով է փաստաբանում նաև Պալասանյանը (Փորձ, Բ տարի, գիրք III, էջ 29—30). «Անհնարին է ենթադրել, թե գրի գործածությունը Ասիայում մտնելուց հետո, հայերը փորձած չլինին իրանց սեպհական տառերն ունենալ»:

Այս բանը ապացուցանելու համար կան մինչև իսկ մի քանի գրական ապացույցներ և վկայություններ:

Առաջին վկայությունը, որ սրա համար մեջ է բերվում, Փիլոստրատոս պատմաբանի մի հատվածն է, որ հիշում է նախ Ինճիճյան (Հնախոսութ. Հայաստ. Գ. 76). նույնը Պալասանյան, Հարություն-

յան, Տաղաժարյան և այլն: Այս պատմաբանը, որ Կարակալլա կայսեր ժամանակակից լինելով, ապրում էր մերձավորապես 175—249 թվերին, իր Դիանա Ապոլոնի կենսագրության մեջ՝ խոսելով Տավրոս լեռան մասին, հետևյալ պատմությունն է անում. «Ենչ որ մեր Տավրոսի մասին ասում են (որին երկար ժամանակ ոչ ոք չէր հավատում), թե նա Հայաստանի սահմաններն էլ անցնում է, հաստատում են այն հովազները, որ ինչպես գիտեմ, բռնվում են համեմաշատ Պամփիլիայում: Այս կենդանիները սիրելով անուշ բուրմունքը՝ դուրս են գալիս Հայաստանից և դիմում են դեպի այն կողմերը, որտեղից քամին բերում է այդ անուշ հոտը: Պատմում են նույնպես, որ մի անգամ Պամփիլիայում բռնվել է մի հովազ, որի օսկի մանյակի վրա գրված էր հայերեն գերով «Արշակ թագաւոր աստուծոյն Նիւսնայ», այսինքն Նիւսիայի աստուծուն նվեր Արշակ թագաւորից: Այս Արշակը այն ժամանակ հայոց թագավոր էր և իր բռնած հովազը՝ նրա մեծության պատճառով նվիրել էր Դիոնիսոսին: Դիոնիսոս հնդկական Նիւսայի պատճառով՝ հնդկացիներից և արևելյան ժողովուրդներից կոչվում էր Նիւսոս: Այս կենդանին մի ժամանակ բոլորովին քնտանեցավ և թույլ էր տալիս ձեռքով շոշափել և փաղաքշել իրեն. սակայն երբ որ գարունն եկավ, երբ հովազներն անգամ հաղթահարվում են սիրուց, արուի պահանջ զգալով՝ փախավ լեռները՝ իր հետ տանելով նաև իր զարդը: Հետո գրավելով համեմունքի բուրմունքից՝ դարձյալ բռնվեց Ստորին Տավրոսի վրա» (Philostrati de vita Apollonis Dianei, գերմ. թրգմ. Fr. Junkobs, Stuttgart, 1829, II, էջ 229. մենք քաղել ենք Հարությունյանի Հայոց գրից, էջ 252):

Այս պատմությունը ցույց է տալիս, թե երկրորդ դարից առաջ կար հայերեն գիր:

Իրեւ երկրորդ փաստ են համարվում Ագաթանգեղոսի այն վրկայությունները, որ հիշեցինք վերևում և որոնցից հայտնի տեսնվում է, թե Տրդատի թագավորության ժամանակ գրելու արվեստը տարածված էր Հայաստանում:

Երրորդ փաստը տալիս են գրերի գյուտի վրա խոսող մեր երեք կարևոր աղբյուրները՝ Կորյուն, Փարպեցի և Խորենացի: Սրանք հույն, պարսիկ կամ ասորի լեզուների ուսմամբ հայոց կրած նեղությունները պատմելուց հետո, կամ Մեսրոպի հղացած դադափառի և Դանիելյան գրերի գյուտի վրա խոսելու առթիվ պատմում են, թե հայերը ունեցել են գրեր, որոնց գործածությամբ կարող էին բոլոր դժվարությունները վերացնել: Ահավասիկ այդ վկայությունները. «Մանաւանդ թէ գոն նշանադիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս... Առա-

ցեալ է ուրումն ցարքայ, թէ տեսի նշանագիրս հայերէն առ ումեմն  
եպիսկոպոսի ի գեօղ միում, ... Դանիէլի եպիսկոպոսի, առ որում  
նշանագիրքն հայերէն կային» (Փարպ. էջ 36—38): «Յայնժամ  
պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի  
ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս  
աղփարեատաց հայերէն լեզուի... Առեալ երանելի հոգարար-  
ձուացն զյանկարծագիտոն... Մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայ-  
լոց դարութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան» (Կոր. էջ 8—  
9): «Զվաղնչուց գտեալ նշանագիր տառից» (Խոր. Գ. ծբ):

Չորրորդ՝ ավելի պարզաբանյալ փաստը տալիս է Վարդան  
պատմիչը, որ պատմում է, թե հին ժամանակ հայերն ունեին 22  
տառերից բաղկացած մի այբուբեն, որ հետո թողեցին. «Եպարութիւն  
հայերէն քսան և երկու գիր առ Դանիէլի ասորոյ գտեալ ի հին ժա-  
մանակաց, որ վասն ոչ պարզելոյ զընդարձակութիւն լեզուիս՝ ան-  
հոգացեալ եղև յառաջնոցն»: Վարդանը սրա համար մի դրական ա-  
պացույց էլ է տալիս՝ հաստատելով թե Լեւոնի ժամանակ գտնվեց  
այդ հին գրերով մի դրամ. «Սև զի լեալ է հայերէն գիր հնոցն՝ վկա-  
յեցաւ ի ժամանակս Լեւոնի արքայի. զի գտաւ դրամ ի Կիլիկիա,  
հայերէն գրով դրոշմեալ զանուն կռապաշտ թագաւորացն հայկա-  
զանց» (Վարդ. էջ 50):

Հինգերորդ ապացույցը տալիս է Ինճիճյանը, որ իր Հնախոսու-  
թյան մեջ (Գ. էջ 75) պատմում է, թե 1788 թվականին, Պոլսի անգլի-  
ական դեսպան Այնզլին հին դրամների նշանավոր հավաքածուի մեջ  
տեսել է հարյուրավոր պարթև-արշակունի արծաթե դրամներ հայե-  
րեն գրերով: Այս դրամները հետևյալ ձևով է նկարագրում Ինճիճ-  
յանը: «Ի մի կողմն դրոշմեալ ունելով ատրուշան ի մէջ երկուց մո-  
գուց. իսկ ի միւս կողմն դէմք թագաւորի ըստ արեւելեան օրինակի  
սաղաւարտեալ, ունելով շուրջանակի հայկական տառս որոշ մնա-  
ցեալս, հ, տ, պ, կ, ց և այլն. զոմանս ուղղագիրս, իսկ զոմանս խո-  
տորնագիրս. բայց ոչ գտանելով ի նոսա տառ ինչ ձայնաւոր՝ շեղև  
ինձ մարթ անուն ինչ ընթեռնուլ»: Այս մասին Հնախոսությունից  
ավելի մանրամասն տեղեկություն գտնում ենք նույն հեղինակի Գու-  
րապատում գործի մեջ (տպ. Վենետիկ, 1827 թ. էջ 239—240 ծան.):  
Այնչլէ՛ Սուլթան Համիդ Ա-ի օրով՝ Պոլսի անգլիական դեսպանն էր.  
ուներ 100,000 հին դրամների հավաքածու, որ կազմել էր Փոքր  
Ասիայում: 1788 թվին Ինճիճյանը տեսել է այդ հավաքածուն և այն-  
տեղ գտել է 12 տիպ ուրբիսյան դրամներ. սրանց մեջ էին նաև «պար-  
թևաց կոչեցեալ» հարյուրավոր անծանոթ դրամներ, որոնց շուրջը  
տեսանք, ասում է, այնպիսի գրեր, որ հայերեն էին. ինչպես՝ կ,  
ց, հ, տ և այլն, «որը շիտակ չրած, որը պառկած, բայց ամէնն ալ

խիստ որոշ. միայն ձայնաւոր առեւելք չի կային մէջը: Ան ըստակները՝ որ ուրիշ տեղէր ալ կը գտնուվին, մեզի երևցան հին հայկական ըստակներ, ան հայկական գրերով՝ որ Մեսրոպեան գիրը չի գտնուված անկատար գրի մը կը բանեցնէին մերոնքս:

Այժմ քննենք այս ապացոյցների արժեքը մի առ մի:

ա) Փիլոսոփայտոս պատմաբանի խոսքը, ինչպես Հյուրըմանն է ասում, այնպես անորոշ է, որ առասպել լինելու ամեն երևույթ ընծայում է: Ո՞րն է այն Արշակ թագաւորը, որ Նիսեսայ աստուծուն ընծայել է հիշյալ հովազը: Արշակ՝ եթէ իրոք պատմութիւնը ճշմարիտ է, ավելի Պարթև թագաւորի անուն պետք է լինի և այն մակագրութիւնն էլ ավելի պահպանուած քան թէ հայերեն: Արեւմտյան մի հեղինակի համար շատ հեշտ էր շփոթել հայ և պարթև ազգերը, մանավանդ այն ժամանակ, երբ ապրում էր Փիլոսոփայտոսը:

բ) Ազաթանգեղոսի վկայութիւնը ավելի մեծ նշանակութիւն է ստացել Հարութիւնյանի մոտ, որ «Հայոց գիրք» աշխատութիւն մեջ (էջ 243—251) մանրամասն քննում է հարցը և վերջապես եզրակացնում է, թէ Ազաթանգեղոսի վկայութիւնը հաստատում է հին հայերեն գրերի գոյութիւնը: Ազաթանգեղոսի այս վկայութիւնը մեջ, ինչպես վերը տեսանք, էմին, կանգուա և Զարրհանայան ուղում էին նշանազիր բառով հասկանալ մի տեսակ հայկական պատկերագիր կամ սղագրութիւն: Հարութիւնյանը նշանազիր բառը առնում է բուն «գիր» իմաստով և ենթադրում է, թէ կար հայերեն տառական գրութիւն Տրդատի օրով: Մենք, եթէ վերը մերժեցինք էմինի ենթադրութիւնը, ավելի հակառակ կկանգնենք այստեղ Հարութիւնյանի ենթադրութիւն, պարզապես այն պատճառով, որ Ազաթանգեղոսի աշխատութիւնը իրրև Ն դարի աշխատութիւն՝ արժեք չունի բնավ այսպիսի մի կարևոր խնդրի լուծման մեջ, մանավանդ երբ խնդիրը վերաբերում է հին ժամանակի պատմութիւն կամ կյանքին:

Տաշյան (Հանդ. ամս. 1893, էջ 90) ցույց է տալիս, թէ Ազաթանգեղոսի այս խոսքերը չի կարելի արդեն առնել հայերենի համար, որովհետև Հոսիփսիմյան կույսերը հայ լէին և իրար հետ խոսում էին հոովմայեցոց լեզվով. հմմտ. «Արդ՝ զայս ամենայն խօսեցաւ սուրբն Գայիանէ ի բարբառ հոովմայեցոց... բայց գոյին անդ ոմանք ի սպասաւորացն արքունի, որ լսէին զայն ամենայն ի բարբառ հոովմայեցոց» (Ազաթ. § 189): Սրանից հետևում է, թէ զպիրները, եթէ երբեք մի բան գրեցին, հունարեն լեզվով գրեցին և մատուցին հունագետ արքային:

Շատ լավ է նկատում Ղ. Աղայանը (Մուրճ, 1892, էջ 1848), որ «եթէ Տրդատի զպիրները այնքան ճարտար էին հայագրութիւն մեջ,

որ մարդկանց խոսակցությունը իսկույն գրի էին առնում ծածկաբար, որ թագավորին ցույց տան, ինչո՞ւ այդ մարդիկը իրանց այդ հրաշալի շնորհքը չէին ցույց տալիս և Տրդատի հովանոցի վրա, մի երկու բան գրել տալով նրա սրբատաշ քարերի վրա: Հայտնի է, որ Տրդատի հովանոցի ավերակը դեռ կա, բայց քարերի վրայի արձանագրությունը հունարեն է միայն:

գ) Երրորդ փաստի վրա կխոսենք ստորև:

դ) Վարդանի տված տեղեկության արժեքը հին ժամանակի գրբերի մասին, կտեսնենք նույնպես քիչ հետո: Գալով Լևոնի ժամանակ գտնված հայկական դրամին, որ ավելի հիմնական նշանակություն պիտի ունենար, ա՛յս միայն կարող ենք ասել, թե Վարդանը անշուշտ սխալվել է պահլավական գրերով գրված արշակունի մի դրամ հայկական կարծելով՝ գրերի շափաղանց նմանության պատճառով: Այսպես է կարծում, օրինակ, Պետերմանը, որ Վարդանի հիշած դրամի հարցը սխալմունք է համարում: Նույնպես է նաև Սուբրյանը (Սկիզբն հայկական լեզուի և Դիոնիսիոսի Քրակացւոյ քերականութեան, Բաղմավեպ 1877, էջ 97—109): Լանգլուան կարծում է, թե այդ դրամը աքեմենյան թագավորների հպատակության տակ գտնված նախարարներից մեկինն էր և գրված՝ փյունիկյան տառերով: Ըստ Տաղավարյանի՝ իրավացի է Լանգլուայի ենթադրությունը, որովհետև իրոք էլ այդ դրամներից հասել է մեզ Տիրիբազի փյունիկական տառերով դրամը (այս իշխանը ապրում էր ն. Ք. շրրորդ դարում և իշխում էր Արևմտահայոց մեջ):

Ամենից ավելի բանավոր պատճառաբանությունը տալիս է Չամչյան (հտ. Ա. 760): Եթե այդ տառերը հայերեն էին, ասում է Չամչյանը, ինչպիսի՞ տառեր էին, որ Վարդանը կարողացավ կարդալ թագավորի անունը. եթե Մեսրոպյան գրերին նման էին, ուրեմն և Մեսրոպյան գրերն էին, իսկ եթե նրանցից տարբեր էին, հապա ինչպե՞ս կարողացավ Վարդանը կարդալ ու հասկանալ, թե հայոց կոռպաշտ թագավորներինն է: Սրանից հետևում է, թե Վարդանի ասածը մակաբերություն է միայն, իհարկե սխալ և ոչ երբեք հաստատուն փաստ:

Վարդանի տված այս տեղեկությունը հար և նման է՝

ե) Ինճիճյանի տված տեղեկության: Ինճիճյանի տեսած դրամների պատմությունը, որ Զարբհանալյանն ևս իբրև իրանը քշում է (Հայկ. հին Դպր. Պատմ. 1897, էջ 44), բոլորովին սխալ է, որովհետև հիշյալ դրամները զուտ արշակունյան պարթև կամ սասանյան դրամներ են՝ պահլավերեն վերտառությամբ և ամենևին կապ չունեն մեզ հետ: Ինճիճյանը սխալմամբ միայն կարծել է հայերեն, իսկ իր ակնարկած կ, ճ, պ, ա տառերն էլ պահլավերեն ժ, լ, կ, ր



զրե՞րն են, որոնք իրոք որ շատ նման են նույն հայերեն տառերին: Գրե՞րի այս մեծ նմանութիւնը պատճառ է դարձել հայերեն կարծելու, Տիշտ ինչպէս որ այսօր էլ վրացներեն խուցուրի կամ հիմովպական մի գրութիւն հայերեն է թվում շիմացողի համար և կամ ջա՛վայերեն մի գրվածք հայերեն շղագրի է նմանում: Եթէ ԻնՏիճյանի հիշածի նման հայկական մի դրամ գտնված լինէր և այն էլ այդքան նոր հա՛վաքածուի մէջ, այժմ այնպէս ծանոթ կլինէր դրամագետներին և բանասերներին, որ կասկածի բնավ տեղիք չէր մնա:

Այսպէս, ուրեմն, կարող ենք համարձակ կերպով առել, թե վերի փաստերից շոքը ամենեին նշանակութիւն չունեն և չեն կարող իբրև ապացոյց ծառայել հին հայ գրի գոյութեան համար: Մնում է մեզ հրրող վկայութեանց շարքը, որ ժամանակակից և լավատեղյակ հեղինակներից բաղված լինելով, ամեն կասկածից վեր է և չենք կարող այնպէս անփութ լինելու: Կորյունի, Փարպեցու և Խորենացու միաձայն վկայութիւնը հաստատուն կերպով ցոյց է տալիս, թե Ս դարի սկիզբը, Տիշտ այն ժամանակ, երբ Մեսրոպ հայերեն գրերի գյուտի վրա էր աշխատում, կար հայոց մեջ տարածված մի կարծիք, թե իրենք ունեցել են ժամանակին մի առանձին այբուբեն, որ մի ժամանակ գործածել են և հետո թողել:

Ո՞րն էր պատմագիրներին վկայած այս այբուբենը. արդո՞ք ա՞յն էր, որ Դանիելի մոտ էր գտնվում և նրա անունով դանիելյան կոչվեց, թե՞ նրանից տարբեր մի այբուբեն: Գարագաշյանի խոսքերը (Քնն. Պատմ. Դ 39) այնպէս անորոշ են, որ կարծես թե այս երկուսը տարբեր են. բայց բոլոր քննիչներն էլ առհասարակ ընդունում են, թե հայոց այդ հին այբուբենը Դանիելյան գիրն է: Հարութչունյանը (Հայոց Գիրք, էջ 240 և 255) հաստատում է, թե «Դանիելյան կոչված այբուբենը հայոց հին գործածական գիրն էր... այդ այբուբենի հետքը բոլորովին անհետանում է և Միջագետքում օտարի մոտ գտնվում»:

Մեր պատմագիրներին տված պարզ և սկներև վկայութիւնը կասկածի տեղիք չի տալիս այս մասին. հմմտ. հաջորդ խոսքերը. «Դանիէլի եպիսկոպոսի, առ որում նշանագիրքն հայերէն կային (Փարպ.). վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որ յանկարծ ուրեմն նշանագիրս ալփաբետաց հայերէն լեզուին (Կոր.). Քսան և երկու գիր առ Դանիէլի ասորոյ գտեալ ի հին ժամանակաց» (Վարդան) և այլն:

Աներկրայ է, ուրեմն, որ Հայոց այդ հին այբուբենը Դանիելյան գիրն է, որ հետո Հարելի և Վահրիճի ձևերով Հայաստան բերվեց, երկու տարի գործադրութեան գրվեց և հետո խափանվեց:

Այժմ քննենք, թե ո՞վ էր այս այբուբենի հեղինակը:

Դանիելյան անունը առաջին ակնարկով այնպես է ցույց տալիս, թե նույն գրերի հեղինակը Դանիել ասորի եպիսկոպոսն էր: Այս կարծիքը հաստատում է նաև խորհնացին, որ վկայում է, թե նույն գրերը հարմարեցված էին Դանիելից. «Մատուցեալ առ արքայն քահանայի ուրումն՝ Հաբէլ անուն կոչեցեալ, խոստանայր հայկականացս լեզուաց առնել նշանագիր, յարմարեալ ի Դանիէլէ եպիսկոպոսէ՝ յիւրմէ մերձատրէ» (Խոր. Գ. ծր): Երկրորդ վկայութիւնը տալիս է Ասողիկը. «Յորոյ աւուրս դպրութիւն Հայոց լեզուիս իթ գիր ի Դանիելէ փիլիսոփայէ Աստուց կարգեցաւ» (Ասող. Զ. էջ 139): Երրորդ վկայութիւնն ունի Կայսերաց պատմութիւնը. «Յորոյ աւուրս գտաւ քսան և ինն գիրն հայերէն լեզուի ի Դանիելէ փիլիսոփայէ ասորւոյ»:

Սակայն այս վկայութիւնները բոլորովին անարժեք են: Եթե Դանիելյան գրերը հայերեն հին նշանագրերն էին, հակառակից դատելով պետք է մտածել, թե նույն նշանագրերը Դանիել եպիսկոպոսի հնարածները չէին: Երկրորդ՝ ինչ պետք ունեւր Միջագետքի ասորի մի եպիսկոպոս հայ անգրագետ ազգի համար գրեր հնարելու: Երրորդ՝ ինչո՞ւ հայերն այնպես պինդ պիտի փարեին այդ նշանագրերին և երկու տարի պիտի գործածեին նրանք, եթե հին հայերեն նշանագրերը չլինեին, այլ Դանիելի հնարածը (Պարոնյան, Երկրագունտ, 1885, էջ 54 ևլն):

Այսպիսի մտածումներով են առաջնորդված անշուշտ նաև Չամչյան և Ավգերյան, որոնք տատամսում են և անորոշ թողնում հարցը, մեկ անգամ մեկ կարծիքի և մյուս անգամ մյուս կարծիքի կողմը հակվելով: Այսպես՝ Չամչյանը (Ա. 491) ասում է, թե գրերը Դանիելի հնարածն էին. «Ասորի եպիսկոպոս տեղւոյն՝ որ կոչիւր Դանիէլ՝ յարմարեալ և յօրինեալ է յիւրմէ տառս ինչ Հայոց. և աղաչեւր զնա, զի տացէ հրաման տանելոյ զայն և ի Հայս, և տարածելոյ անդ... զորս ստեղծեալ էր (Դանիէլ) ըստ նմանութեան յունական տառից և գրոց»: Իսկ էջ 760-ում հրաժարված այս կարծիքից, ասում է. «Այլ վասն Դանիէլեան նշանագրաց չունիմք ինչ հաստատուն աւանդել, յիւրմէ՞ արդեօք հնարեալ իցէ զայնս, թէ յայլոց առեալ»:

Այսպես անորոշ է նաև Ավգերյանը (Լիակ. Վարք Սրբոց, հտ. Ծ. էջ 288 և 290). «Ունի առ իւր (Դանիէլ) նշանագիրս իմն ալիփաբետաց հայերէն լեզուին, գտեալս ուստեք կամ յարմարեալս... կամ էին ալիփաբետք խառն ի յունէ և յասորւոյ՝ անբաւականք մերումս լեզուի, և կամ առ նախնեօք Հայոց երբեմն հնարեալք իբրև նշանագիծս, և խափանեալ որպէս մթինս և անյաշողակս»:

Բայց անշուշտ այսպիսի կասկածների տեղիք չկա, որովհետև նույնիսկ խորհնացին մի քիչ հետո իր դեմ վկայութիւն է տալիս

և պարզում խնդիրը, ասելով, թե այն զրեբը վաղեմի բաներ էին. «Քաչ հմտացեալ ի Գանիէլէ, կարգեալ ըստ ձևոյ օրինակի յունականին զվաղնչոց գտեալ նշանագիր տառից, եկեալ նստն ցմեծն Սահակ և Մեսրոպ» (Խոր. Գ. Ժբ):

Ամենից զորավոր ապացույցն է Կորյունի վկայութիւնը. «Ծայնժամ պատմէր նոցա արքայն, վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի Գանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս ազիրարեսաց հայերէն լեզուի» (Կոր. էջ 8): Մեք դժբախտութիւնսմբ այս հատվածը կաղում է և անպատճառ մի պակաս բառ կա. «որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս հայերէն լեզուի», ի՞նչ. բայք պակասում է: Վերը ցույց տվինք, թե այս պակաս բայք պիտի լինի գտեալ էր և սրա համար է, որ իսկույն հաջորդ տողի մեջ էլ կրկնվում է. «Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն զրելոյն (կարդա գտելոյն) ի Գանիէլէ...»: Մի բանի՞ տող հետո բառը նորից կրկնվում է ավելի պարզ. «Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիտն...» (էջ 9), ուր առաջին խոսքի յանկարծ և գտեալ բառերը միացած են:

Այս բոլորից հետևում է, թե Գանիելը հանկարծ մի տեղ գտել էր այս նշանագրերը և հետևաբար նրանք իր հնարածները չէին: Գանիելյան անունը սխալ բացատրութիւն է, որ ժամանակն ու հանգամանքները նմիրագործել են: Եվ նույնիսկ Խորենացին, որ առաջին անգամ տալիս է այս անունը, անշուշտ ո՞չ թե իբր հեղինակ է ուղում ներկայացնել նրան, այլ իբր այն զրերն ունեցող կամ պահող անձ: Այսպես են ընդունում զրեթե բոլոր մեր բանասերները:

Սակայն Պարոնյանը (Երկրագունտ, 1885, 99—101 և Հանդ. Ամս. 1896, 72—76) հայտնում է մի նոր կարծիք, որ այս երկուսի միջին տեղն է բռնում: Հեղինակը ասում է, թե Գանիելը գտել էր այդ հին նշանագրերով զրված մի գիրք, որի միջից ինքը առաջին անգամ հանեց այբուբենը և հունարենի շարքով դասավորեց՝ և ահա այս դասավորութիւնն համար այբուբենն էլ կոչվեց դանիելյան: — Չենք ուզում երկար խոսել այս մասին, որովհետև Մեսրոպի կենսագրութիւնն մեջ պետք եղած ապացույցները տվել ենք՝ հաստատելու համար, թե Գանիելի ձևորը գտնվածը ուրիշ բան չէր, եթե ոչ այբուբենական մի ցուցակ:

Խնդիրը բոլորովին ուրիշ ձևով է փաստարանում Ղ. Աղայանը (Մուրճ, 1892, էջ 1844): Աղայանը ընդունում է մեզ նման, թե Գանիելի ձևորը գտնվածը գիրք չէր, այլ պարզ այբուբենական մի տախտակ, բայց տարօրինակ է գտնում ա՛յն, որ մի զրականութիւն ամբողջապես ջնջվի, նրանից ամենևին ո՞չ մի հետք չմնա, և միմիայն գտնվի այբուբենական մի ցուցակ, այն էլ միայն մեկ հատ: Սրանից

հետևեցնում է, թե այդ գրերի հնարողը Դանիելն է: Դանիելը կամ ինքն իրանից, կամ մի հայի առաջարկությամբ ասորական գրերը ձևափոխելով՝ հատկացրել էր հայերին, ասելով՝ «եթե կամենում եք ձեր սեփական գրերն ունենալ, համեցեք տարեք» բոլորովին այնպես, ավելացնում է Ղ. Աղայանը, ինչպես Մեսրոպն արավ Վրացոց համար: Հայերը ընդունեցին այս գիրը և գրականութուն ստեղծեցին: Իսկ եթե հայ պատմագրերը «չեն ուզում ուղղակի խոստովանել, որ այդ գրերը ինքը Դանիելն էր շինել», այդ այն պատճառով է միայն, որ ասորիները այլևս ատելի էին դարձել հայերին, որոնք զզված էին Սուրմակի, Բրքիշոյի և Շմունիի վարմունքներից, և, ինչպես որ քաղաքականապես ուզում էին ազատվել պարսկական հպատակությունից, նույնպես էլ մտավորապես ուզում էին ազատվել ասորական ազդեցությունից՝ հույների օգնությամբ: «Այսպես ահա, բնական և քաղաքական հանգամանքները մտավորապես կշռելով, մենք գտնում ենք, որ Դանիելի գիր տալը հայերին՝ անժխտելի է»:

Մենք այս փաստարկումները շեք ընդունում, որովհետև եթե Դանիելյան գրերը Դանիելի ձեռքով, հայոց համար, հետևաբար իրեն ժամանակակից հայերենի վրա շինված էին, այլևս ինչո՞ւ պակասավոր և անհարմար պիտի լինեին, որ Մեսրոպ պետք զգար դեն գցելու կամ լրացնելու: Երկրորդ՝ ինչի՞ց գիտենք, թե Մեսրոպը որևէ գրադարանում չգտավ նույն գրերով գրված մի գիրք, որով համոզվեց, թե Դանիելյան գրերը հայերեն չէին: Եվ վերջապես՝ եթե հայերը այդպես ատում էին ասորիներին, ուրեմն նրանց հնարած գրերն էլ պիտի չընդունեին: Գուցե Ղ. Աղայանը ուզում է ասել, թե ատելությունը Մեսրոպից հետո ծագեց. բայց ընդհակառակը տեսնում ենք, որ Մեսրոպին ժամանակակից պատմիչը (Կորյուն) ավելի քիչ դեր է տալիս Դանիելին, իսկ Մեսրոպից հետո եկող պատմիչները ավելի պատիվ են տալիս նրան և մինչև իսկ հայերեն գրերի գյուտը ներան են վերագրում ամբողջապես (Փարպեցի) կամ մասամբ (Վարդան Լեն): Դանիելի գրերը համեմատել Մեսրոպի վրացերեն գրերի գյուտի հետ, շատ անհարմար է. Մեսրոպն ինքը անձամբ գնաց Վրաստան, գրերը հնարեց, քարոզեց, տարածել աշխատեց, մինչդեռ Դանիելը հեռվում նստած գիր է շինում և Հայաստան ուղարկում, այն էլ երբ իրանից Վոամշապուհը խնդրում է, հրովարտակով մարդ է ուղարկում և այլն: Եթե Դանիելն էր հնարողը, ապա ինչո՞ւ չեկավ Հայաստան, ինչո՞ւ իր ձեռքով չտարածեց գրերը: Նշանակում է, թե ինքը բոլորովին չեզոք դիրք ունի և անտարբեր պահապան է միայն:

Վերջապես Փառնակը (Անահիտ 1905, էջ 128) հիմնվելով Կորյունի բառերի վրա՝ «Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն

գրելոյն ի Դանիէլէ», հետեցնում է, թէ Դանիէլը նախապէս գրել էր Վաւաճարայուհին և առաջարկել էր իր կողմից հնարել հայերեն նոր այբուբեն՝ նյութական վարձատրութեան անկեղտութեամբ: Այս այբուբենը կրօնական պետքերի համար չպիտի լինէր, որովհետև այս պարագային հարկ կլինէր կաթողիկոսին դիմել, այլ արքունի դիվանի պետքերի համար, քանի որ Վաւաճարայուհը այս կողմից արդեն նեղութիւն էր քաշում: Այբուբենը հարմարեցրած էր զանազան լեզուներից առնելով:

Մեզ համար այս մեկնութիւնն էլ ուզիլ չէ, որովհետև ո՞չ միայն կորյունի հիշյալ հատվածի մեջ գրելոյն ուղղելի է գրելոյն (ինչպէս ապացուցել ենք Մեսրոպի կենսագրութեան մեջ), այլ որովհետև դարձյալ անհասկանալի է մնում այն հանգամանքը, թէ ի՞նչպէս կլինի, որ Դանիէլը հայերեն ժամանակակից լեզվի համար այբուբեն է կազմում և այդ այբուբենը ա՛յնպէս անկատար է լինում, որ, իբրև անհարմար, անհրաժեշտ է լինում դնել օգել:

Եթէ դանիելյան կոշիկը գրերը Դանիէլի հնարածը չէին, պետք է ստուգել, թէ ո՞ր ժամանակի գործ էին, և՞ որ հնարվեցին և մինչև ե՞րբ տևեց նրանց գործածութիւնը:

Ինճիճյանը նրանց գլուտը և գործածութիւնը ամենահին ժամանակներն է դնում անորոշ կերպով. «Ի սկզբան անդ ի հնումն գոյր առ մեզ գիր հայկական» (Հնախոսութ. Գ. 73). բայց մի քիչ հետո (էջ 76), Փիլոսոփատոսի վկայութիւնը հիշելուց և նրա հիշած հայերեն գրերը նույն դանիելյան գրերը համարելուց հետևում է, թէ այդ բնիկ հայ գրերի հնութիւնը հասնում է Ռ դարը և ավելի առաջ: Մի քիչ ավելի պարզ բացատրում է էմինը, որ նույն գրերը դնում է հայոց կոապաշտական շրջանին. «Մեսրոպյան գրերի գլուտից առաջ՝ հեթանոս Հայաստանի մեջ գոյութիւն ունեւ անհիշատակ ժամանակներից ի վեր գործածվող մի այբուբեն: Սա կազմում է անցման մի շրջան՝ նշանագրերի (իմաստնոց նշանագիր) և բուն Մեսրոպյան այբուբենի միջև և ծառայել է հեթանոս Հայոց մտքի արտահայտութեան համար, ասորական, պարսկական և հունական գրերի ներմտծութիւնից շատ առաջ: Այս գրերը մտնելով Հայաստանի հողի վրա՝ խափանեցին հին այբուբենը՝ հավանաբար զուտ քաղաքական պատճառներով: ... Իսկապէս՝ հնագույն հեթանոսական շրջանում հայերն ունեին իրենց սեփական այբուբենը (Издедованія и статьи Н. О. Эмина, Москва, 1896, էջ 210 և 212):

Ոմանք այս շրջանը ավելի առաջ են տանում և դնում են Վաղարշակից առաջ (արդոյր Փիլոսոփատոսի թվականը ն. Ք.՝ հասկանալով). այսպէս՝ Միանսարյանը (Կանոնավոր և վայելուչ գրութեան պատմ. էջ 99—100) դնում է ն. Ք. 200 թվին հնարված. նույնպէս

Պալասանյան (Փորձ, Բ տարի, գիրք III), Մ. Վ. Մուրատյանը (Եկեղ. պատմ. էջ 86, 87, 89) և այլն: Սարգիսյանը (Ագաթ. և իւր բազմ. գաղտնիքը, էջ 290) Գ կամ Դ դարերում հարմարված է կարծում:

Սակայն այս խնդրով ամենից ավելի մանրամասն զբաղվել է Հարությունյանը (Հայոց գիրք, էջ 152—3 և 253—260): Հեղինակի կարծիքով հին հայկական գրի ծագումը և գործածությունը ընկնում է նույնպես կռապաշտական շրջանին: Ամեն կրոն առանձին քաղաքակրթություն է և սերտորեն կապված է գրի որևէ տեսակի հետ: Ջնջվելով կրոնը, ջնջվում է նաև այդ քաղաքակրթությունը և գիրը: Ամեն նոր կրոն բերում է նոր գիր: Այսպես՝ Փյունիկից բերված մի նոր կրոն Հունաստանի մեջ տարածեց փյունիկյան գիրը. մահմեդականությունը ուր որ մտավ՝ տարածեց արաբական գիրը. քրիստոնեությունը Եգիպտոսում ջնջեց մեհենագիրը և նրա տեղ դրավ հունական այբուբենը: Լատինական գիրը ս. Գրքի հետ տարածվեց ամբողջ Արևմտյան Եվրոպայում: — Հին Հայոց գիրը կապված էր հին Հայոց կրոնի հետ: Դ դարում, երբ Լուսավորիչը ջնջեց հեթանոսությունը և նրա տեղ տարածեց քրիստոնեությունը Հայոց մեջ, կռապաշտական բազմաթիվ սովորությունց հետ ոչնչացրեց նաև այդ գիրը և նրա տեղ տարածեց հունարեն և ասորերեն տառերը: Լուսավորչի հետ Հայաստան բերված հույն և ասորի կրոնավորները արգելեցին հայ գրի գործածությունը և իրենց գործածած հույն և ասորի տառերը տարածեցին նաև մեր մեջ: Անցավ 100 տարի և հայերեն գիրը այնպես անհետացավ, որ Միջագետքի մի ասորու մոտ միայն կարելի եղավ գտնել: Սա շատ զարմանալի չէ, ասում է Հարությունյանը, որովհետև պատմությունը նման երևույթներ շատ ունի: Երբ Իսպանացիք նվաճեցին Մեքսիկան և սկսեցին տարածել քրիստոնեությունը, արգելեցին տեղական գիրը՝ համարելով այն իրենց նպատակին իբրև խոչընդոտ: Հարյուր տարի հետո, երբ ըսվրսեցին հետազոտել Մեքսիկան, երկու ծերունի հագիվ կարողացան գտնել, որ իրենց հին գիրը կարդալ գիտեին: Հարավային Ամերիկայի Փանոս կոչված ցեղը, որ այսօր վայրենի վիճակի մեջ է ապրում, մի քանի դար առաջ՝ ժողկյալ գրականություն ուներ: Վերջապես մեր դրացի քրդերը, որ այսօր գիր չունեն, համարվում են քաղղեացոց սերունդը, այն խոշոր աղբի, որի ձեռքին էր ամբողջ Գիտությունը:

Այս բոլորի ամփոփումն այն է ուրեմն, որ հին հայերեն (Դանիելյան) գիրը հնարված է երկրորդ դարից ավելի առաջ, և Լուսավորչի ժամանակ ոչնչացված է՝ Գ դարում:

Քանի՞ գրից էր բաղկացած Դանիելյան այբուբենը: Այս մասին ժամանակակից պատմիչները տեղեկություն չունեն. ասում են

միայն, թէ հայերէն լեզվով գրելու համար անբավական էին, այսինքն՝ շատ պակաս գրեր ունեին. «Իսկ իբրև ի վերայ հասնալ թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ամէլ դսիւղորայս և զկապս հայերէն լեզուոյն (Կոր. էջ 9)։ Տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրոց ստույգ հոլովել զհեղեմայ բարեց հայկականաց հաղներգարար (Խոր. Գ. ծք)։ Եւ յետ բազում աշխատութեանց և քննութեանց և ուսմանց՝ անշահ մնացեալ, զի ոչ բերէր զբառս և զբանս ալիքարեանցն ըստ հայերէն լեզուիս» (Փոքր. Կոր. էջ 10)։

Նույն պակասութիւնը շեշտում են նաև հետին պատմագիրները. սակայն սրանց մեջ մի քանիսը որոշ կերպով նշանակում են նույնիսկ գրերի քանակը։ Վարդան պատմիչը գնում է 22 գիր. «Քսան և երկու գիր առ Դանիէլի ասորոյ գտեալ ի հին ժամանակաց» (էջ 49)։ Ասողիկը գնում է 29 գիր. «Յորոյ ատուքս զպրութիւն Հայոց լեզուիս Ի՞՞ գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ Ասորոց կարգեցաւ» (գլ. 2, էջ 139)։ Դավիթ Անհաղթին ընծայված մի հանելուկի մեջ նույն թիվը 24 է. «Ձեռք ամենակալին ստեղծին զիս և բարձրեալն ի բարձանց ի բարձունս ընծայեաց զիս. Չափ հասակի իմոյ երկիցս երկոտասան, այժմ եմ երիցս երկոտասան»<sup>1</sup>։ Ուրիշ հետին մի գրվածքի մեջ, որ գրված է Խորենացու ազգեցությամբ, կարդում ենք. «Հայերէն եղաւ զպրութիւն ի քսան և ինն գրոյ ի Դանիէլ փիլիսոփայէ՝ զոր ետ գրել Ռամշապու Վախրճագն նախարարին ի ձեռն Հարէլի երիցու» (հանված էջմիածնի Կարինյան N 1723, էջ 275 և Գևորգյան N 263, էջ 255 երկու ձեռագիր Ոսկեփորիկներէց)։ Վարդանազիրը ասում է, թէ Դանիելյան գիրը 17 տառ էր։ Կայսերաց գրոց մեջ գրվում է 29. «Ե սորա յատուքն էր սուրբն Սահակ Հայրապետն, յորոյ ատուքն գտաւ քսան և ինն գիր հայերէն լեզուի ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորոյ»։ «Յաղագս սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դաւթի» անվավերականը, որ հրատարակել է Սրվանձոյանցը (Նոց—Նորոց), գնում է 29 գիր. «Յայսմ ժամանակիս եղև խնդիր պակասութեան գրոյն Հայոց զոր ունիէն, Ի՞՞ գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորոյ՝ աշակերտ սրբոյն Գրիգորի»։ Գանձարանի մեջ երկու տեղ գրված է 29. «Վոսմշապուհ՝ օգնեալ, Վահրճ գործակցեալ, Դանիէլ Շնորհեալ, Քսան և ինն գտեալ, նախնեացն արարեալ»։ և մի

<sup>1</sup> Այս հանելուկը առաջին անգամ հրատարակված է Բազմ. 1848, էջ 192, ուր մեզ հետաքրքրող բառերը ունին նաև տարրեր ընթերցված. «Եւ շափ ամաց խոց յառաջն էր երկու բժ. այժմ ամեցայ և զարգացայ և եմ զ ծղ (=39)»։ Հանելուկի վրա առանձին քննութիւն ունի Լ. Ղ. Մ. (Բազմ. 1848, էջ 247—250), ուր Դավթի ասածը հաստատելու համար մեջ է բերվում նաև ուրիշ մի անանուն վկայութիւն. «Քանի՞ գիր գտաւ Մեսրոպ որ ի յերբայեցոցն չկայր— Պատասխան. ծք գիր էր, ամէն յդ պիտի» (անդ, էջ 249)։

ուրիշ տեղ՝ «Քսան և ինն գիր էր գտած, այլ անօգուտ էր ընթերցողաց, զի և ոչ կապեր հեգ բառից անուանց»:

Այսպես, ուրեմն, պատմիչների տված տեղեկությունները զանազանվում են 17, 22, 24 և 29 թվերի միջև: 17-ի կողմն է միայն Վարդանագիրքը. 22 դնում է Վարդան պատմիչը, 24 դնում է Դավիթ Անհաղթը, իսկ 29 դնում են Ասողիկը, Ոսկեփորիկը, Կայսերաց գիրքը, Մովսեսի և Դավթի անվավերականը և Գանձարանը:

Այս զանազանության պատճառն իմանալու համար պետք է քննել թե՛

ի՞նչ լեզվից, այսինքն ի՞նչ այբուբենի համեմատությամբ ձևվացած էր հիշյալ այբուբենը: Այս կարևոր խնդրի վրա Կորյունը և Փարպեցին որևէ տեղեկություն չեն տալիս: Խորենացին նրանց ծագումը հունարենից է դնում. «Քաջ հմտացեալ ի Դանիէլէ, կարգեալ ըստ ձևոյ օրինակի յունականին զվաղնջուց գտեալ նշանագիր տառից» (Խոր. Գ. ծք): Նույն բանը պատմում է նաև Յայսմաւորը. «Եւ ուսուցեալ մանկունս զամս բ, և ոչ կարացին հանել ի հեգ, քանզի ի հոռոմ լեզուն միայն էր յարմարեալ ի հայոց բարբառս» (Տրէ ժէ = նոյեմբ. 25):

Հետին հեղինակները այս այբուբենի ծագումը ասորականից են համարում: Այս բանը բացորոշ կերպով պատմում է Վարդանագիրքը. «Եւ այս են ճշմարտապէս ստուգիւ գտեալ, զի Ասորիք ընդ մեր թագաւորօքն էին և նոցայն է քսան և երկու գիր. ի նոցանէ քանացան առնել մեր գիր: ...Ձառաջինն ի նոցանէ էր առեալ եօթն և տասն գիր, զի զհինգ գիրն թողեալ էր և շէր թարգմանեալ»: Ուզում է ասել, թե Դանիելյան գիրը հարմարեցրած էր ասորոց 22 գրերից, որոնցից դուրս էր ձգված 5 գիր:

Բազմավեպի հիշած անանուն հեղինակը դնում է երբայականից, որ նույնպես սեմական լեզու է:

Հունարեն այբուբենը 24 գրից և ասորականը 22 գրից բաղկացած լինելով, պատմիչներից նրանք, որ Դանիելյան այբուբենի ծագումը հունական են ընդունում, ընականաբար դնում են 24 գիր, իսկ նրանք, որ նրա ծագումը ասորական են կարծում, դնում են 22 գիր: Կամ հակառակից դատելով՝ 24 գիր ընդունողները հունական ծագման կողմն են, իսկ 22 գիր ընդունողները՝ ասորական ծագման: Ըստ այսմ՝ Խորենացին ընդունելով հունական ծագում, պետք է ենթադրել, թե ընդունել է 24 գիր՝ Դավիթը՝ ընդունելով 24 գիր՝ հունական ծագման կողմն է, իսկ Վարդանն ընդունելով 22 գիր՝ ասորական ծագման կողմն է:

Այս բացատրությամբ մեկնված են 17, 22 և 24 թվերը: Բայց ի՞նչ թիվ է 29:



Եթե ասորերեն և հունարեն գրերը դենք դեմ առ դեմ, կտեսնենք, որ ասորին ունի 5 տառ, որ պակասում է հունարենի մեջ և 7 տառ՝ որ հունարենի մեջ կա, բայց պակասում է ասորերենի մեջ:  
Ահա վաստիկ սրանց համեմատությունը.

ա	բ	գ	դ	ե	զ	է	թ	ի	կ	ղ	մ	ն	շ	ո	պ	ս	տ		
α	β	γ	δ	ε	ζ	η	θ	ι	κ	λ	μ	ν	ξ	ο	π	ρ	σ	τ	
!	⊃	∪	?	,			!	∪	⊃	∞	∩	∩					!	∞	∩
⊃	ϕ	ϕ																	
⊃	ϕ	χ	ψ	ω															
⊃	⊃																		

Հունարենն ավելի ունի ε, η, ο, π, υ, φ, ω, բայց պակասում են α, η, ο, ϕ, ∞, ρ, Δ, ⋄:

Նրկու այբուբենները միացնելով և պակասները իրարով լրացնելով, կստացվի՝

24 հույն + 5 ասորի կամ 22 ասորի + 7 հույն՝ հավասարապես 29:

Ահա այս է 29 թվի ծագումը:

Բայց կա նաև մի ուրիշ հաշիվ: Հունարեն այբուբենը, թեև ունի 24 գիր, բայց նրանցից երկուսը ψ և ω իրր առանձին տառ գոյություն չունեն մեր մեջ: Նույնպես ասորին, թեև ունի 22 տառ, բայց (այն) գիրը գոյություն չունի մեր մեջ: Սրանով հունարենը դառնում է 22 գիր, իսկ ասորերենը 21: Այս հաշիվը վեր ի վայր է շարժում ամեն ինչ: Նրանք, որ 24 թիվ են ընդունում ըստ հունականի, սխալվում են ψ և ω գրերի պատճառով. նրանք որ 22 են ընդունում, կարող են ոչ միայն ասորականի կողմը հղած լինել (ինչպես ենթադրեցինք վերևում), այլ և հունականի (համարելով թե ψ և ω տառերը հանել են հաշվից): Եթե ψ և ω պակաս հաշվելով գրել են 22, ուղիղ են, իսկ եթե ասորականի կողմը լինելով հանդերձ 22 են գրել, սխալվում են՝ գրի պատճառով: Նույնպես նրանք, որ երկու այբուբենները միացնելով՝ հանել են 29 թիվը, կրկնակի են սխալվում. որովհետև մի կողմից ψ և ω և մյուս կողմից՝ չգտնվելով հայ այբուբենի մեջ, 3 թիվ պակասում է և 29 թիվը իջնում է 26-ի: Վերջապես եթե նկատի ունենանք Բաղմավեպի անանուն հեղինակի ասածը, թե Մեսրոպ հայերեն գրերը կազմեց երբայերենի 24 գրերից, այն ժամանակ պիտի ասենք, թե մեր միամիտ հեղինակներին ասածը միայն սխալներից է բաղկանում:

Այսպիսի վերիվայր հեղաշրջումներ և ակնհայտնի սխալներ տեսնում ենք նաև ուրիշ տեղեր:

Խորենացին, պատմելով հանդերձ, թե Դանիելյան գրքը հունականից էին առնված, Մեսրոպին տալիս է ա, ե, է, ը, ի, ո, ւ ձայնավորների գյուտը, որով հետևում է, թե Դանիելյան գրքը ձայնավոր շունեին: Բայց այդ ի՞նչպիսի հունարեն է, որ ա, ե, է, ի, ո, ւ ձայնավորները շունի: Շատերը հաստատում են, թե Խորենացու մեջ ձայնավորների այս թվումը հետին հավելված է: (Այս մասին ավելի մանրամասն տե՛ս գլուխ է):

Մնում են սակայն մի խումբ ուրիշ պատմիչներ, որոնք հայտնի կերպով ցույց են տալիս, թե Դանիելյան այբուբենը ձայնավորներից զուրկ էր և Մեսրոպն ավելացրեց 7 ձայնավորները: Այսպես Գանձարանը՝

Քսան և ինն գիր էր գտած,  
Այլ անօգուտ էր ընթերցողաց,  
Ջի և ոչ կապէր հեզ բառից անուանց,  
Այլ անհոգի մարմնոյ նմանած...:  
Աջն Աստուծոյ անեղին փառաց  
Ըզ եւթն գիրն ի քարին գրեաց...  
Ա, ե, է կարգեալ ընդ ըին,  
Ծւ (ր), ո, եւ ՚ ի կարգին:

Երկրորդ՝ Ոսկեփորիկը (Ձեռ. էջմ. № 263 և 1723), որ գրում է.

«Ա, ե, է, ը, ի, ո, ւ. այս գրքու աւելացաւ ի Մեսրոպայ գեղեցիկ վարդապետէ... Ո՞ր վ հհան գիր Հայոց. յորժամ սուրբ Սահակ հայրապետ էր Հայոց և հայերէն եդաւ դպրութիւն ի քսան և ինն գրոյ ի Դանիէլ փիլիսոփայէ, զոր ետ գրել Ռամշապու, Վախրճացն նախարարին ի ձեռն Հաբէլի երիցու: Ջոր առնկալեալ Հայոց՝ ոչ օգտեցան զի պակասէին եւթն գիրն ի սմանէ, մինչև ի բազում ժամանակս: Իսկ զեւթն (գրոցն) պակասութիւն ելից Մեսրոպ երանելին ի Տարօնոյ գաւառէ ի Հացեկաց գեղջէ որ քառասնօրեայ պահօք և աղօթիւք և ամսօրեայ ճանապարհաւ խնդրեաց յաստուծոյ և երևցաւ նմա ոչ ի քնոյ երազ և ոչ արթնոյ տեսիլ. թաթ ձեռին որ եցոյց գիրս եօթն, որ են այսոքիկ. ա, ե, է, ը, ի, ո, ւ. զի որպէս մարմին անոգի շարժում ոչ բերէ, սոյնպէս և առանց սոցա մակոյկ բանի ոչ ուղղէր Հռափանիս և հելլենացոյ գրչի ճարտար սամրացոյ»:

Երրորդ և չորրորդ՝ երկու ուրիշ անանուն հեղինակներ ունեն նույնպես 7 ձայնավոր. «Ծւ Մեսրոպ վարդապետ մեզի գիր հհան ա, ե, է, ը, ո, ի, ւ.» «Մեծ վարդապետն Մեսրոպ Տարօնացին... որ և գեօթն ձայնաւոր գիրս ընկալաւ յաստուծոյ» (Բազմ. 1848, էջ 248):

Ինչ էլ դենեք Դանիելյան այբուբենի ծագումը, անկարելի է, որ գոնե ա տառը շունենա, հետևաբար այս յոթ ձայնավորների թվումը սխալ է միշտ:

Ինչքան մանրամասնութիւնն է մեզ մտնում են մեր պատմիչները, այնքան այլանդակ սխալներ են գործում: Մրանց մեզ ամենից նշանավորն է Վարդանագիրքը: Ահա սրա պատմածը.

«Եւ ո՞ր են գրերն զոր պարզենաց Աստուած: Պատասխանի:

Այս են վեց գիր ձայնավոր և երեքտասան անձայն: Եւ ձայնաւորքն են այս, ա, ե, ո, ի, բ, յ. և անձայնքն են այս. ր, գ, ծ, ծ, ձ, շ, Վ, ց, շ, ն, յ, փ, ընդ ամէնն ինն և տասն: Եւ այս են ճշմարտապէս ստուգիւ գտեալ. զի Ասորիք ընդ մեր թագաւորօքն էին, և նոցայն է քսան և երկու գիր. ի նոցանէ ջանացան առնել մեր գիր: ... զառաջինն ի նոցանէ էր առեալ 17 գիր, զի զհինգ գիրն թողեալ էր և շէր թարգմանեալ. երբ ջանային թէ թարգմանեմք ըստ մեր լեզուիս, շգայր ի բան այն հինգ գիրն: Ապա յաղօթս ապաւինեալ՝ տեսանէր մարգարէական աշօք՝ թաթ ձեռին աշոյ, որ զրէր ի վերայ վիմի. և ամենայն հանգամանքն և որպիսութիւնն տպաւորեցաւ ի սիրտն վաղվաղակի ստեղծանէր ինն և տասն գիր: Եւ այն՝ որ եօթն ասեն, վասն նոցա պատուականութեան ասեն՝ որ ձայնաւորք են, և որպէս հոգի են այլոցն: Եւ ընդէ՞ր ասեն եօթն, զի վեց են ձայնաւորք: Պատասխանի. զի է գիրն կայր յԱսորոցն. և նա զայն էառ ի Գանիէլէ՛ վարդապետն Մեսրոպ. վասն այնորիկ զայն այլ նմա ասեն, բայց ի մարդոյ օգտեցաւ զէ գիրն, և զինն և տասն յԱստուծոյ: Եւ վասն եօթն գրոյն առանել պիտանութեան, զեօթն գիրն մէն ասեն և զովնն. և զերկոտասանն ոչ յիշեն, այլ հաստատ տես: (Պատճառաբանել է ուզում այն, թե ինչո՞ւ նախորդ պատմիչները խոսում են միայն 7 գրի պակասութեան մասին: Նրանք, ասում է, հատկապէս հիշում են 7 գիրը, որովհետեւ ձայնավոր են. իսկ մյուս 2-ը կարևոր չեն համարում հիշել: Բայց ի նկատի շունի պատմիչների այն բացորոշ խոսքը, թե Գանիելյան գրերը 29 հատ էին): Եւ ասեն թէ աղփայն այլոցդ (կարգա ասորոցդ) կայ. է՞ր շանուի: Ասեմք թէ՛ Ասորոցն ալ է, որ է ո. և այրն՝ այս է ա՛՝ շկայն: (Այսպէս է ըստ սրբագրութեան Հարությունյանի, Հայոց Գիրը, էջ 269: Բայց այս հեղինակի տված բացատրությունը, թե ալ = վա՛՛ սխալ է. տես ստորև):

Վարդանագրքի այս հատվածը մասամբ կամ ամբողջապես հրատարակել են՝

1. Բազմավեպ, 1850, էջ 128.
2. Լանգուա, Collect., II հտ., էջ 7—8 (թրգմ.).
3. JAS, 1867, էջ 199—200.
4. Ալիշան ? Մեսրոպեան դար Հայկական լեզուի. Բաղմ. 1875, էջ 7—16.
5. Երկրագունտ, 1885, էջ 106 ծան.
6. Բազմավեպ, 1887 թ., էջ 197.

7. Սարգիսյան, Բազմ. 1889, էջ 29 (հանված Վենետիկի № 729 ձեռագրից):

8. Հարությունյան, Հայոց գիրը, էջ 267:

Մերը հանված է Հարությունյանի (= JAS 1867) հրատարակութունից, որի հետ նույն է Վենետիկի № 729 ձեռագիրը: Մյուս հրատարակութանց մեջ կան տարբերություններ: Այսպես. Ալիշանի ? հիշած երկու ձեռագրերից մեկի մեջ շ գրի տեղ գտնում են շ, մյուսի մեջ բաղաձայնների շարքն է ք, գ, զ, ժ, լ, ծ, ձ, ն, շ, չ, վ, պ. այս վերջինը անշուշտ սխալ է, որովհետև թիվը լրիվ չէ:

Այս պատմութունից երևում է, որ Դանիելյան այբուբենն ունի է, դ, գ, ք, լ, խ, կ, ն, ղ, մ, ն, պ, ո, ս, ւ, ր, ֆ տառերը, որոնք առնչված էին ասորերենի 22 տառերից, դուրս ձգելով սրանից միայն 5 տառ: Մեսրոպն ավելացրեց ա, ե, ռ, ի, ը, ւ ձայնավորները և ք, գ, ժ, ծ, ձ, շ, չ, վ, ց, շ, ն, յ, փ բաղաձայնները: Բայց այդ ինչպիսի՞ ասորի այբուբեն է, որ երկու լ, երկու ր ունի, բայց չունի ք, գ, ժ, վ, շ, յ (կամ ի), փ բաղաձայնները: Հեղինակը անշուշտ է տառով հասկանում է a (ուրեմն ի՞նչ գործ ունի հ), իսկ պ տառով՝ օ (b)։ ուրեմն ինչպիսի՞ հետնութուն): Այսպիսի սոսկալի հետնության նշան է նաև ա գրի համար ասածը, որ մեր բանասերները լավ չեն նկատել: Ինչո՞ւ համար ա-ն ասորիներից չառան, հարցնում է հեղինակը և պատասխանն էլ տալիս է՝ թե ասորիները ա չունեն, նրբանց ա-ն աւ = օ է: Այո՞, հետին ժամանակներում ասորերեն ա տառը տեղ տեղ օ ձայնն առած էր և արեֆը եղած օլաֆ: Եվ ահա այս է հասկացնում հեղինակը:

Այս բոլորը ցույց է տալիս, թե մեր պատմիչների տված տեղեկություններն այս մասին՝ զուտ անձնական ենթադրություններ են, որոնցից զուրկ են բարեբախտաբար ժամանակակից պատմիչները: Այդ ենթադրությունները բոլորն էլ սխալ են, որովհետև որևէ պատմական կովան չունեն: Այսպիսի սխալների ճշմարիտ մի օրինակ է Վարդանի քերականության մեջ ասվածը՝ մյուս այբուբենների համար. «Ազիքը երեք վերստին ի շնորհացն Աստուծոյ գտան զգիրս՝ նախ քան զտասն մատեանն Մովսէսի. կատինք և Պաղեստինք և Արապիկք հաստատեցին գիրս թուով քսան և չորս, զոր թէպէտ և աւելի ունին և այլ ազինք՝ ի նոցանէ են, որոշմամբ շնշոյ ճեղեալ և աճեցուցեալ... Զոր ի մերոց թարգմանչացն՝ պատճառաւ թանձր լեզուիս վեցիցս վեց մերոց տառիցս երեսուն և վեց շարեալ գիրս» (Բազմ. 1848, էջ 248):

Միակ պատմական կովանը այս բոլորի մեջ Դանիել եպիսկոպոսի ասորի լինելն է, կամ խորենացու հունական ծագում տալը:

Նոր քննիչները, որոնք պատմիչների հիշյալ ենթադրություննե-

բը իբրև լուրջ են ընդունել, ըստ այսմ զանազան կարծիքներ են հայտնում և վերականգնում Գանիեյյան այրուրները: Չամչյանը (Ա. 760) և Ավգերյանը (Վիակատար. վարք սրբոց Ե. 290) անորոշաբար համարում են հարմարեցրած հունարենից կամ թեքու ելանագիրք (իմաստնոց), ինչ որ անկարելի բան է:

Ինճիճյանը (Շնախ. Գ. 73—77), հիմնվելով Խորենացու, Ասողկի և Վարդանի պատմածների վրա, Գանիեյյան գիրը համարում է թվով 22, որից պակասում են 7 ձայնավոր և 7 զուտ հայ գրեր (այս գրերը չի հիշում, բայց հասկացնում է թե պետք է ընտրել կ, գ, ֆ, խ-ս, ձ-ց, զ, ծ-ր, և այլն տառերի մեջ):

Հ. Ղ. Մ. (Բազմ. 1848, էջ 248—9) պատմական վկայությանց մեջ ամենից հինը համարելով Գալիթ Անհաղթը, գտնում է ասահականակելիս, որով ընդունում է, թե Գանիեյյան գիրն էր 24, իսկ Մեսրոպ ավելացրեց 12 գիր. այս գրերը չեն կարող լինել ձայնավորները, որովհետև հայերենը իբրև հնդեվրոպական լեզու՝ չէր կարող ձայնավոր չունենալ. ուստի այդ պակաս 12 գրերը իրար լծորդ բաղաձայններն էին: Իսկ ձայնավորներն հիշող հեղինակները վարված են միայն մակարերաբար:

Էմիլը (անդ, էջ 215—218) ընդունում է ըստ Վարդանի 22 գիր, այն է՝ ր, գ, դ, զ, ծ, լ, խ, ծ, կ, ճ, ճ, մ, յ, ճ, շ, շ, պ, ո, ս, վ, ա, ց: Ուրեմն պակասում են 7 ձայնավորները և 7 բնիկ հայ գիր. այս վերջիններն են ր, ձ, դ, շ, ր, փ, ֆ: Այս գրերը հանում է մեր լծորդ գրերը հետևյալ ձևով դասավորելով և նրանցից վերջինները՝ հետո ձևացած (զարգացած) և զուտ հայ համարելով.

ր,	պ,	փ	խ,	դ	
գ,	կ,	ֆ	շ,	ճ,	շ
դ,	ա,	ր	ո,	ր	
ձ,	ծ,	ց			

Նկատենք, որ էմիլը շատ անհետևողաբար է վարված. իր ընտրած ձայների մեջ փ, ֆ, ր գտնվում են հույն և ասորի այրուրեններում, սակայն ց, ինչպես նաև շ, ճ, շ պակասում են. խ և դ երբեք իրար լծորդ չեն. այնպես որ, եթե պետք էր սրանցից 7 հայկական գիր ընտրել, պետք էր առնել ց, ձ, դ (լ), շ, ճ, շ, ր:

Ըստ Պատկանյանի (Recherches sur la formation de la langue arm., JAS, 1870, էջ 148—151): Գանիեյյան գրերը արամեական կամ իրանական ծագում ունեն և թվով 26 են: ա, ր, գ, դ, ե, զ, ծ, ի, խ, ծ, կ, ճ, դ, ճ, մ, յ, ճ, շ, ո, պ, ս, ա, ր, ց, յ, ֆ: Պակասում էին ը, է, լ, վ, ո, փ, ր, շ, ձ, գ: Տարօրինակ է այս էլ, որովհետև փ, ր կան ասորերենի և հունարենի մեջ, վ ունի ասորին, է ունի հույնը,

ընդհակառակը ժ, ն, ց չկան նրանց մեջ: Բացի սրանից, 26 թիվը որևէ պատմիչի հետ համաձայն չէ:

Լանգուան (Collection, II, էջ 7) հետևում է Վարդանազարի խեղկատակ պատմության և Դանիելյան գրեթե համարում է ասորական և թվով 17. է, դ, գ, ք, լ, խ, կ, ն, ղ, մ, ն, պ, ո, ս, տ, ր, ֆ: Պակասում էին ա, ե, ի, ը, ո, Վ, ք, ժ, ծ, ձ, ղ, ջ, ց, շ, վ, ն, յ, փ:

Լագարդը (Gelehrte Anzeig, Göttingen, 1883, էջ 281) հին գիրը համարում է 22, որոնք են ա, ք, գ, դ, ե, զ, է, ք, ի, կ, լ, մ, ն, պ, ո, ս, տ, ր, Վ, ֆ. մնացածը հետո ավելացրած է:

Շուրբանը (Uder Ansprache und Umschreibung des Altarmenischen, ZDMG, 1876, էջ 63) ընդունում է Վարդանի թիվը (22) և համարում է հունարենի 22 տառերը (չհաշվելով փ և ա). հետևվարար Դանիելյան գիրը հունարենի վրա ձևված էր և ուներ հետևյալ գրերը. ա, ք, գ, դ, ե, զ, է, ք, ի, կ, ղ, մ, ն, շ, ո, պ, ո, ս, տ, Վ, փ, ֆ: — Պակասում էր ըստ Վարդանի 14 գիր, որոնք են ը, ժ, լ, խ, ծ, ն, ձ, ն, յ, շ, ջ, վ, ր, ց:

Ղ. Աղայանը (Մուրճ, 1890, էջ 1587—8) Դանիելյան գրերը համարում է 22 և ասորա-պարսկական ծագումից. պակաս գրերը ամենևին նեղութուն չէին տալիս, որովհետև այն ժամանակ մարդիկ բոլոր գրվածքները բերանացի գիտեին և հետևաբար հեշտությամբ կարողում էին: Մեսրոպը ավելացրեց 7 գիր, որոնք են ը, ո, ծ, ձ, ն, ո, ց: Հետին ժամանակներում ավելացան նաև վ, է, ի, յ գրերը: — Եթե նեղութուն չէին տալիս, ուրեմն ինչ պետք կար նոր գիր հնարելու: Հաշվի մեջ մոռացել է հիշել երեք գիր, որով հայ գրերի թիվը եղել է միայն 33:

Հարությունյանը (Հայոց Գիրը, գլ. ԺԴ, ԺԴ, հատկապես էջ 281) ընդունում է Վարդանի 22 թիվը և ենթադրում է, որ Դանիելյան այբուբենն ուներ ա, ք, գ, դ, ե, զ, է, ք, լ, խ, կ, մ, յ, ն, շ, ո, պ, ս, վ, ա, ր, ց, ֆ տառերը. պակասում էին ը, է, ի, Վ ձայնավորները և ժ, ծ, ն, ձ, ղ, ն, շ, ջ, ո, փ հային հատուկ բաղաձայնները: Սրանց համար ասում է, թե «Փաստերն յառաջ կը բերենք յաշորդ յօդուածի մէջ» (անշուշտ գլուխ է ուզում ասել). բայց ո՛չ մի տեղ սրա համար փաստ չկա. երևի մոռացել է: Հեղինակը ծաղրով է վերաբերվում «լեզվագիտության և վաղ թե ուշ առաջացած հնչյունների տեսութայանց» հետ, որոնք «բացի խնդիրն ավելի խճճելուց՝ ոչինչ չեն պարզում». ուստի դիմելով «պալեոգրաֆիայի»՝ հասնում է այս եզրակացություն: Բայց ի՞նչ է այս «պալեոգրաֆիան»: Փյունիկյան գրերի տարածման պատմությունը, և հետո բազմաթիվ ձրի խոսքեր: Թե հայերը փյունիկեցիներից և արամայեցիներից ընդունել են իրենց հին կրոնը (ապա-

ցուց՝ քում և քանաք բաները, որոնք ասորական են), թե հայերը մեծ վաճառականություն ունենին փյունիկեցոց հետ, թե Մըծրին, Եգեպտոս և այլն փյունիկական գաղթականություններ էին կելնելն: Արդ՝ «եթե այս հաղորդակցությունը զոյությունն ապացուցվեցավ, այնուհետև հասկանալի է, որ հայ ազգն—եթե դա մի փոքր ընդունակ և զեպ հառաջադիմություն ձգտող մի ազգ էր, որ վկայում էն թե հին և թե նոր ժամանակների օտար ազգությունաց պատկանող անձինք—չէր կարող չենթարկվել այդ ժողովրդների քաղաքակրթության: Արդ, քաղաքակրթության արդյունքներից մեկն էր և գիրն, ուստի... անկարելի էր, որ հայերը կամ ուղղակի դոցա գիրը չառնեին, կամ թե նոցա հետևողությամբ և նմանությամբ սեպհական գիր չկադմակերպեին» (էջ 327): Այս բոլորը մենք համարում ենք նյութին չվերաբերող խոսքեր: Միակ բանը, որ փաստի տեղ պիտի բռնեք, հայ գրերի համեմատությունն է փյունիկյան, պալմիրական, ներայական և պահլավ գրերի հետ. բայց այս համեմատության փոխարեն տալիս է միայն այս հինգ այբուբենների հասարակ ցուցակը և առանց ամենևին նրանց համեմատության մասին մի բառիակ դնելու, հետևցնում է, թե «հայերեն հին տառերը պատկանում են սեմիտական մեծ ընտանիքին և ունին իրեանց բոլոր ազգակիցների հետ մի որևէ նմանություն, թե ձևի, թե հնչման և թե շարահյուսութեան կողմից» (էջ 305) և թե «մեր այբուբենի տառերը ծագում են անմիջապես սեմիտական տառերից և ոչ հունաց այբուբենից. սեմիտական ձևերի մեջ հայոց տառերն առավել նմանվում են փյունիկյան տառերի ձևերին» (էջ 309): Հետո էլ մի քանի խոսքով քննում է, թե «ի՞նչ՞ մեր այբուբենը տարբեր կերպիվ է շարահյուսված կամ դասավորված քան սեմիտականը» և «եթե նույն իսկ հայոց տառերի ձևերն ուղղակի նշտորեն շիամապատասխանեին սեմիտական ձևերին» և այլն (էջ 310—311):

Երբեք սրանից ավելի անտրամաբան գրվածք տեսած չեմ:

Հարությունյանի գրքի վրա ընդարձակ քննադատական ունի Ղ. Աղայանը (Մուրճ 1892, էջ 1841—51) ժողովրդական ու սուր լեզվով գրված, որից մի քանի հատված էլ հիշեցինք վերևում: Իր գաղափարներին մեծագույն մասամբ համաձայն ենք: Փյունիկեցոց հետ հարաբերության և հետևաբար նրանցից զիր առնելու առթիվ, ահա թե ի՛նչ է ասում Աղայանը իր զվարթ լեզվով. «Եթե մի անգիր ազգ հարաբերություն ունենալով զիր ունեցող ազգի հետ, վեր առնեք նրա գիրը, էլ աշխարհիս երեսին ոչ մի անգիր ազգ չէր լինիլ»:

Միսլերը (WZKM, 1888, էջ 245—8, —1890, էջ 284—8 և 1894, էջ 150—160) ընդունելով նախ Ասողկի և հետո Վարդանի աված թվերը, կորակացնում է, թե հայոց հին այբուբենը սեմական

է, և ա՛յն էլ հատկապես պալմիրական գիրն է, 22 տառից բաղկացած, որի վրա Մեսրոպը ավելացրեց նախ 7 բաղաձայն և հետո 7 ձայնավոր: Միւլլերն իր կարծիքը վերջին անգամ ձևափոխելով՝ ասում է, թե Դանիելյան այբուբենը նախապես ունեւր 20 գիր, որ կազմված էին սեմականից. այս գրերն էին ք, գ, դ, ե, վ, զ, ի, ք, յ, կ, ղ, մ, ն, շ, պ, ծ, ֆ, ր, ս, տ. սրանցից յ գիրը հավասարապես գործածվում էր ա, ի, է ձայնավորների տեղ. օրինակ՝ գրում էին յսկզբնյ յր յսաւ զբկն ւ զբկո ւ բկր յր յնւյք և յնպարսաւ ւ խւր յ վր յնդնոց և կարդում էին ի սկզբանէ արար աստուած զերկին և զերկիր և երկիր էր անբերայք և անպատրաստ և խաւար ի վերայ անդրնոց: Կար նաև ւ գիրը, որ գործածվում էր իբրև եւ, ու, բայց այբուբենի մեջ չէին հաշվում: Մեսրոպ ավելացրեց 9 գիր էլ, որոնք են ն, շ, ջ, ծ, ց, ձ, փ, յ, ո, որով գրերի թիվը ըստ Ասողիկի եղավ 29 (միշտ չհաշվելով ւ գիրը), հետո էլ ավելացրեց 7 ձայնավորները (մասնավոր նամակ՝ Տաղավարյանին գրված, 1893, հոկտ. 28 թվով. տե՛ս Մազումն հայ տառից):

Սարգիսյանը (Ագաթ. և իր բազմ. գաղտնիքը, էջ 290) կարծում է, թե Դանիելյան այբուբենը Եղիսիայի դպրոցի գործն էր և Գ կամ Դ դարում հարմարեցրած էր մի ասորու միջոցով և ասորական կամ դպտիական այբուբենի հարմարությամբ:

Գարագաշյանը (Քննակ. Պատմ. Դ. 38) հիմնվելով Խորենացու 7 ձայնավորների վրա, ասում է, թե Դանիելյան այբուբենն էր «անշունչ և անկենդան այբուբեն մը բաղաձայններէ կազմեալ, ոչ անծանօթ սակաւ գրագիտաց, նոցին իսկ Սահակայ և Մեսրոպայ և նոցայոցն, որու տուաւ Մեսրոպ շունչ և կենդանութիւն՝ մուծանելով Յունաց ձայնաւորներն»:

Տաղավարյանը (Մազումն հայ տառից, էջ 7—12 և այլն) գրեթէ ըստ ամենայնի համաձայն է Հարությունյանի կարծիքներին և փաստարկներին: Այստեղ էլ մեջ են բերվում կրոնական ազդեցություն, վաճառականական հարաբերություններ, մաքս, քուրմ և այլ բառերի փոխառությունը և այլն: Տաղավարյանը կարծում է, թե հայերը սեպագրերի գործածությունից հետո ընդունեցին փյունիկյան գրերը և կազմեցին նրանով երկրորդ գրականությունը (առաջինը լինելով սեպագիր գրականությունը): Թեև այս բանը ապացուցանելու համար որևէ հիշատակություն չկա, ասում է, բայց տրամաբանությունը ստիպում է մեզ ընդունել: Եթե բոլորովին անգրագետ ազգեր, ինչպես հույները, ընդունեցին փյունիկյան գիրը, ուրեմն ինչքան ավելի հայերը, որ արդեն սեպագիր գրականություն ունեին, պիտի ընդունեին և յուրացնեին նույն գրերը: Այս փյունիկյան գրականությունը տեեց մինչև Լուսավորիչ: Լուսավորիչը եկավ և փյուն-



Երկրան տառերով գրված բոլոր հայերեն գրքերը վառեց, մոխիր  
դարձրեց: Ըին Գանիելյան-փյունիկյան գրքերը 22 էին. ա, բ, գ, դ, է,  
վ, զ, ն, ք, ի, իս, լ, մ, ն, շ, ու, պ, շ, ֆ, ր, ս, տ. մեացյալ գրքերը  
որոշվում էին կետեքով և Եշանեքով, որոնք Մեսրոպի ձեռքը չհա-  
սան: Մեսրոպը՝ տեսնելով որ կարելի չէ այս պակասավոր տառե-  
քով բան գրել, կետեքով ու պայմանական Եշանեքով պահպանեց  
լրացրեց. այս պայմանական Եշանեքն են թերևս մեր այժմվա Ե-  
րաժշտական խազերը (էջ 16), բայց տեսնելով, որ այստեղ շատ  
դժվար է, հնարեց 14 նոր գիր:

Փառնակը (Անահիտ 1905, էջ 129) հիմք է առնում Կորյունի  
այլուր զպրուֆեանց թաղեալք և յարուցեալք դիպեցանս խոսքը:  
Այս խոսքը առհասարակ հասկացված է մեր մեջ այն իմաստով, թե  
այդ գրքերը ուրիշ անգամ էլ փորձված և իբր անհարմար լքված էին.  
բայց Փառնակը թարգմանում է, թե այդ գրքերը մոռացված մի այ-  
բուրենից հանված՝ երևան էին բերված: Այս այբուրենը չէր կարող  
լինել ո՛չ հույն, ո՛չ ասորի և ո՛չ էլ սասանյան պահլավ, որոնց հա-  
յերը արդեն ծանոթ էին և իսկույն կճանաչեին. մնում է ենթադրել  
հին (արշակունյան) պահլավերենը, որի գործածությունը դադարել էր  
272 թվականից հետո: Այս այբուրենը շատ նման էր քաղղեականին  
և սրա համար էր թերևս, որ գտնվեց Գանիելի մոտ: Գանիելն այս  
արշակունի պահլավ գրքերից հանեց իր այբուրենը և ուղարկեց Մես-  
րոպին:

Այս բոլորը անապացույց ենթադրություններ են՝ հիմնված պատ-  
միչների ափելի անապացույց ենթադրությանց վրա: Միակ իրական  
և հաստատուն կետը որ կա, ա՛յն է, թե Գանիելյան այբուրենը չու-  
նեք հայերեն լեզվին հատուկ ձայները և այս իսկ պատճառով մի  
կողմ գրվեց Մեսրոպի ձեռքով:

Այս վերջին իրողությունը մի իմաստուն մտածություն է՝ տալիս  
Ստ. Մալխասյանին, որ իր վիճաբան Մատենագրութեան պատմու-  
թեան մեջ (էջ 50) պատճառարանում է այսպես.

«Եթե Գանիելյան գրքերը պակասավոր և հայերեն լեզվին ան-  
հարմար էին, նշանակում է, թե հայերեն լեզվի տառերը չէին»:

Հարությունյանը (էջ 313) կարծում է, թե Գանիելյան գրքերը ներ-  
կայացնում էին հայոց շատ հին լեզուն և նրա մեջ չգտնված տառերը  
այն ժամանակի հայերենի մեջ էլ չկային, որովհետև «ժամանակի  
ընթացքում հայոց լեզուն ևս կատարելագործվել էր և հին դիրը չէր  
համապատասխանում լեզվի բոլոր հնչյուններին»: Արդարև շատ  
փխրուն փաստարանություն: Հարությունյանի կարծիքը լիովին մեր-  
ժեյու համար բավական է հիշել, որ հեղինակը այս կատարելագործ-  
ված լեզվի հատուկ ձայներն էր համարում ր, է, ի, լ, ժ, ծ, հ, ձ, դ,

ն, շ, ջ, ու, փ ձայնները, որոնց մուտքը անշուշտ դնելու է Ռ դարից հետո, որովհետև իր կարծիքով Ռ դարում դադարեց Դանիելյան գրի գործածութիւնը. եթէ այս «կատարելագործեալ» գրերը Ռ դարից առաջ մտած լինեին, Դանիելյան գիրն էլ Ռ դարից առաջ պիտի խափանվեր: Նշանակում է, թէ Ռ—Ս դարում, այն է միայն 100 տարվա մեջ ստեղծվեցին այս 14 «հնչյուններ»:

Բայց մենք կարող ենք ապահովեցնել հարգելի հեղինակին, թէ այս «կատարելագործյալ հնչյունները» Ռ դարից շատ առաջ էլ կային:

Հիւբշմանը, Sprachwissenschaftliche Abhandlungen թերթի մեջ (հատ. Ա, էջ 129—172) մի պատվական հոդված ունի հայերենի ձայնական օրենքների ժամանակագրութիւն մասին: Հեղինակը իբր կովան բռնելով պարսկերենից, ասորերենից, հունարենից և արաբերենից փոխառյալ բառերը, քննութեան է առնում նրանց մեջ տեղի ունեցած ձայնական փոփոխութիւնները (ի, ու ձայնավորների սղումը և է, եա, ոյ ձայների ամփոփումը): Հունարեն և արաբերեն բառերը այս փոփոխութիւններից ազատ են բոլորովին, ասորերեն բառերը մասամբ ազատ և մասամբ ենթակա են, իսկ հին պարթևական փոխառութիւնները ամբողջապես ենթակա են: Որովհետև հույն և արաբ բառերը քրիստոնեական շրջանից հետո են մտած, իսկ պարթևական բառերը ավելի հին են, ուստի եզրակացնում է հեղինակը, թէ այն բառերը, որոնց մեջ այս փոփոխութիւնները տեղի ունեցած են, պատկանում են պարթևական շրջանին, այսինքն 300 թվից առաջ են, իսկ այն բառերը, որոնց մեջ նույն փոփոխութիւնները տեղի ունեցած չեն, պատկանում են Սասանյան և քրիստոնեական շրջանին, այն է, մոտավորապես 300 թվից հետո: Հեղինակը տալիս է նաև մի քանի ընդարձակ ցանկեր այն բառերի, որոնք այս հին պարթևական շրջանին փոխառեալ են:

Արդ՝ սրանց մեջ կան ա՛յնպիսի բառեր, որոնք պարունակում են մեր խնդրին առարկա եղող ձայնները. այսպես՝

ժ. — նժդեհ < հարս. \*niždahyu, դրուժան < պհլ. drōžan, դրժգոյն < զնդ. \*dižgaona.

ծ. — Մժքին < ասոր. ܡܙܟܝܢ Nšīwīn.

հ. — հնար < պհլ. hunar, հնդիկ < պհլ. hindūk.

ճ. — վնարել < պհլ. vičārtan, վնիռ < պհլ. vičir, կնեիթ < պհլ. kunčit, պատմութեան < պհլ. patmočan.

ջ. — ասպնջակաճ < պհլ. \*aspinjākan.

ի. — բժիշկ < պհլ. bišīšk, վնիռ < պհլ. vičir.

Եթէ հայերենի այս ձայնները ճիշտ նույն հնչումով գտնվում են

նաև ստար փոխառու ձևերի մեջ և փոխառությունը կատարված է 300 թվից առաջ, նշանակում է, թե նույն թվերին նույն ձայները կային նաև հայերենի մեջ:

Ը ձայնի հին գոյություն համար օրինակ են բուրբ այն բառերը, որոնց մեջ իրանյան ի և ու ձայները ընկած են. հրք սրանք ընկան, նրանց տեղ տվար ք ձայնը եկավ: Հիշենք հատկապես **Տրդատ** < ԿՂԻ. **Tirdāt**, որի էրեք հաջորդական բաղաձայնները անկարելի է, որ միաշունչ արտասանվեին:

Հիւրշմանի սկզբունքով առաջնորդվելով՝ կարող ենք վկայություն առնել նաև ա՛յն բառերը, որոնք վրացերենը փոխ է առել հայերենից: Այս փոխառությունները շատ բազմաթիվ են, բայց մեծավ մասամբ 300 թվականից հետո են առնված, որովհետև ներկայացնում են ճիշտ հայերենի ձևերը առանց ի, ու ձայնավորների աղման և է, եա, ոյ ձայնավորների՝ ամփոփման: Սակայն կան մի քանի սակավաթիվ բառեր էլ, որոնք ի, ու ձայները պահում են և հետևաբար 300 թվից առաջ են փոխ առնված: Այս բառերի ցուցակը տվել եմ Արարատի մեջ, 1898, էջ 313բ: Ավելորդ եմ համարում օրինակներ դնել նաև սրանցից, որովհետև վերինների վրա նոր բան չպիտի ավելացնեն: Հիշում եմ միայն վրաց պիլեննի < պիլենն բառը, որ ավացուցանում է հայերեն ձ ձայնի գոյությունը 300 թվից առաջ:

է ձայնի համար հիշում ենք վրէպ = պրս. **virēb**, որի մեջ i ձայնի սղումը՝ բառը տանում է 300 թվից առաջ: Սակայն այս ձայնի հին գոյության համար ունինք ա՛յնպիսի օրինակներ, որ պահլավական ձևերն էլ գերազանցում են հնության կողմից: Այսպես է աշխւտ = զնդ. \*xšaeta, պհլ. **šēt**, որի մեջ թեև օ (է) կա, բայց x ձայնը ընկած է. ուրեմն մեր ձևը նրանից ավելի հին է և բանում է դանդիկ և պահլավ ձևերի մեջտեղը. յաււտ = արշակունյան պհլ. **yāvetan**, որի սասանյան ձևն է **yāvēd**, պարսկ. սասանյան պհլ. **pālēz**, արշակունյան ձևը պիտի լիներ \***pardēz**, ինչպես ցույց է տալիս երրայնրեն **pardēz**, Արաաշէս, հին արշակունի անուն, որի նոր սասանյան ձևն է **Ardašīr** (Արտաշիր). Սասանյան բառի մեջ d ցույց է տալիս բառի հեանությունը. հայերենի մեջ ա (t) խոր հնություն նշան է. Պլուտարքոս և Դիոն Կասսիոս հիշում են **Ἀρτάξω** (η = է և η՛ ը թե ε = ե) հայ թագավորին ն. Ք. 30 թվին (Հիւրշ. **Arm. gram.** էջ 29):

Այսպես, ուրեմն, ապացուցված է, թե հայերենի բ, է, ի, ժ, ծ, հ, ձ, ց, զ ձայները արդեն Բ—Գ դարերում գոյություն ունեին: Հարությունյանի ցուցակը ամբողջական լինելու համար պետք էր ապացուցանել նաև յ, զ, շ, ու, փ ձայների գոյությունը. սրանց համար շուններ առայժմ այնպիսի հաստատուն և շոշափելի օրինակներ, որ

ամեն կասկածից դուրս լինեին: Սակայն այսքանն էլ բավական է կարծեմ ոչնչացնելու համար իր սխալ կարծիքը:

Այս բոլորից հետևում է, թե այդ Դանիելյան գիրը, որ 22 տառերից էր բաղկանում, ո՛չ միայն հարմար չէր Ս դարի հայերենին, այլև չէր կարող հարմարվել նախորդ դարերին, և հետևաբար երբեք էլ հայերեն գիր եղած չէր: Հարուստնյանի փաստաբանությունը իր դեմ է դուրս գալիս և իրան է ջնջում:

Երկրորդ. Ի՛նչպես կարող է լինել, որ մի ազգ կամ մի լեզու այբուբեն ունենա, մի ժամանակ գործածի և այդ գրականությունն այնպես ջնջվի, որ նրանից մի գիրք, մի տետրակ կամ աննշան մի արձանագրություն անգամ չմնա: Հին պարսկերեն բևեռագրությունն էլ ջնջվեց. պահլավական գրականությունը իրենք պարսիկները իրենց ձեռքով ջնջեցին ոչնչացրին. բայց ի՛նչքան էլ որ ջնջեցին, նորից այդ գրականության մնացորդները կան ու հավիտյան կմնան: Եթե դարերի խոշոր մի անջրպետ ունենանք ի նկատի, այդպիսի մի գիրք (ինչպես հանճարեղ կերպով նկատում է Սարգիսյան, Ագաթ. և իւր բաղմ. գաղտ. էջ 290) երևան պիտի գար գոնե Ս դարում և այդ առթիվ Կորյունը և կամ ուրիշ ժամանակակից մեկը մի բան հիշելու էր:

Վերջապես՝ ի՛նչպես կարող է լինել, որ այս հայկական համարված այբուբենը ամեն տեղ անհետ կորչում է, Հայաստանի մեջ, ուր գործածված պիտի լիներ, իսպառ անհրեւութանում է և մնում է միայն Միջագետքի մի ասորու մոտ:

Այս պատճառաբանություններից հետևում է պարզապես, թե Դանիելյան գրերը հայերեն չէին և հայերից երբեք գործածված էլ չէին, այլ կորած հին սեմական մի ազգի այբուբենը, որ Մեսրոպը հետո միայն հասկանալով՝ երեսի վրա թողեց: Եվ այս բանը ցույց է տալիս Կորյունի համառոտ, բայց զորեղ վկայությունը. «Մանաւանդ զի և նշանազիրքն իսկ յայլոց դարութեանց թողեալք և յարուցեալք դիպեցան»: Միևնույն բանն է նաև Խորենացու ասածը. «Մուրացածոյն այնուիկ գծագրութեամբ», այսինքն օտարից մուրացված և երբեք հայ ազգի սեփականություն չեղած<sup>1</sup>: Դանիել ասորի եպիսկոպոսը հանկարծ մի տեղ գտնելով հիշյալ այբուբենը և կարծելով, թե հայ լեզվի այբուբենն է, հայտնեց Վռամշապուհին, որով և պատճառ եղավ սուտ լուրի տարածվելուն հայոց մեջ:

Հայերը նախքան Մեսրոպը գրավոր գրականություն չեն ունե-

<sup>1</sup> Մուրացածոյ բառի այս նշանակությունը գտնում ենք նաև Փարպեցու մոտ. «Մանաւանդ թէ գոն նշանազիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ և ոչ մուրացածոյ բարբառով շահել զգրիս»:

ցած. Եղև է միայն բանավոր գրականություն, որի հատակտորներն են վիպասանական երգերը. այսպիսի գրականություն ունի նաև ամեն անգրագետ ազգ: Մեարոպից առաջ հայերեն գրականություն ենթադրելը, որ իբր թե շնչեց Լուսավորիչը՝ այրելով բոլոր հայերեն գրքերը, անմիա հեջիաթ է միայն:

Առանձին բաժնով պետք է խոսել Մարկվարտի կարծիքի մասին՝ Գանիելյան գրքի վերաբերմամբ: Այս գիտնականը ընդունում է, որ Հայաստանում Մեարոպից առաջ գործածական էր հունարենից և ասորերենից տարբեր մի գիր: Այս մասին իր հիմնական ապացույցն է Փարպեցու այս խոսքը. «Կարգև զվաղնչուցն գրեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր» (էջ 16): Մարկվարտը ինքն էլ նկատում է, որ Կորյունը այսպիսի տեղեկություն չունի. ուստի որոնում է, թե Կորյունի ս<sup>ր</sup> խոսքն է, որ տեղիք տված պիտի լինի Փարպեցու այս ենթադրության և գտնում է հետևյալը. «Մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան»: Ահա Կորյունի այս մութ խոսքն է, որ աղբյուր է ծառայել Փարպեցուն և Փարպեցու վրայով էլ Մարկվարտին՝ ենթադրելու թե Մեարոպից առաջ Հայաստանում գործ է ածվել մի առանձին այբուբեն (Պատմ. հայ. նշանագր. էջ 35): Այս այբուբենը հնարել էր մի ասորի, հավանաբար Գանիել եպիսկոպոսը և ահա թե ի՞նչ հանգամանքներում:

Հայաստանի հարավային նահանգներից մեկն էր Աղձնիքը, որ կազմում էր առանձին բզեշխություն: Աղձնիքը կից էր Տարոնին և իր մեջ էր առնում նաև Սասունը: Բնակչության սովոր մասը հայ էր, որ ապրում էր ասորիների հետ միասին: Թեմի եպիսկոպոսը ասորի էր: Հենց նույն թվերին՝ պատմության մեջ ծանոթ է Աբղնի (Աղձնիքի) Գանիել եպիսկոպոսը, որ 410 թվին Իսաճակ կաթողիկոսի և 424 թվին Գատիշոյի ժողովին ներկա էր: Ահա Աղձնյաց այս Գանիել ասորի եպիսկոպոսն էր (կամ իր նախորդներից մեկը), որ իր հայ հոտի մեջ քարոզելու համար ստիպված էր հայերեն գործածելու: Այս առթիվ հնարեց հայերենի համար առանձին այբուբեն, «այս այբուբենով երկար ժամանակ հայերեն գրեց և հետևաբար այս լեզվով թարգմանություններ էլ կատարեց» (տե՛ս Մարկ. էջ 43—46 և հատկապես էջ 43): Եվ որովհետև այս այբուբենի հեղինակը ասորի էր, ուստի նրա կազմության մեջ ասորերենն էլ դեր խաղացած պիտի լինի (էջ 46): Այբուբենը բաղկացած էր զեպի ձախ երկարող բաղաձայն տառերից. ձայնավորները շատ անկատար կերպով էին որոշվում: Այբուբենը նույն չէր արամեական և պահլավական այբուբենների հետ, այլ քաղված էր արամեական, հին ասորական, սասանյան և պարթևական այբուբեններից: Հեղինակը այս խառ-

նուրդը կազմել էր մի կողմից իրար նմանող տառերի շփոթությունից խուսափելու և մյուս կողմից՝ ասորերենի պակասները լրացնելու համար (Մարկ. էջ 55):

Մարկվարտը այնպես լավ ձևակերպել է իր ենթադրությունները, որ առաջին ակնարկով շատ համոզիչ է երևում: Բայց երբ խորացնենք մեր քննությունները և իջնենք մանրամասնությունաց մեջ, համոզիչ կետերը կջնջվին և ենթադրությունը կտապալվի:

Ընդունենք մի բոլակ, որ Դանիել ասորին (կամ իր մի նախորդը) հնարել էր հայերեն տառերը՝ Աղծնիքում քրիստոնեական քարոզության համար: Ինչո՞ւ այդ այբուբենը չպիտի տարածվեր նաև մնացյալ Հայաստանում. մի՞թե Աղծնիքը Հայաստան չէր և կամ չինական պարիսպներով անջատված էր Հայաստանից.

Ինչպե՞ս եղավ, որ բուն Հայաստանի ժողովուրդը հունարեն և ասորերեն լեզուներով գոնե հարյուր տարի կարողացավ առաջ տանել իր եկեղեցական արարողությունները և քրիստոնեական պաշտամունքը, իսկ Աղծնիքը, որի հայությունը ասորիների հետ բնականից ու նրանց լեզվին էլ վարժված էր, այսուհանդերձ չկարողացավ ապրել ասորերենով և անհրաժեշտ կարիք զգացվեց հայերեն գրավոր թարգմանություններ անելու:

Ինչպե՞ս եղավ, որ այդքան երկար ժամանակ Դանիելյան այբուբենը բավարարեց Աղծնիքի հայ ժողովուրդին, իսկ երբ Հայաստան եկավ, երկու տարի հետո փթուկ դուրս եկավ:

Դանիելյան այբուբենը կատարյալ էր թե անկատար: Մարկվարտը խուսափողական ձև է ստանում և անվճռականորեն ասում է, թե «կարելի չէ իմանալ հայերեն այբուբենի մեջ Դանիելի, Մեսրոպի և Հռուփանոսի առանձին դերերը»: Այնուամենայնիվ հայերեն գրերի ծագման մասին խոսելիս՝ ասում է, թե թավերից ֆ, փ, ք, կրկնակներից ղ, ռ, ձայնավորներից ե, ի, յ Մեսրոպինն են (էջ 55). և որովհետև ըստ իրեն է, ը տառերն էլ կազմված են ե-ից (էջ 48) և Վ կրկնված է յ-ից (էջ 31), ուստի Մեսրոպի հնարած տառերի թիվն է 11, որոնք պակասում էին, ըստ այսմ, Դանիելյան այբուբենի մեջ: Մնացյալ տառերի համար ահա թե ի՞նչ ծագում է ենթադրում Մարկվարտը (ասողանիշ նշանակվածները Մեսրոպի հնարած 11 տառերն են). — աւ. նշանակում է ասորերեն, էսթ. = էսթրանգելա, եղես. = եղեսական:

ա	պհլ. կամ էսթ?	զ	պհլ.
բ	աս. կամ պհլ.	*է	ե-ից
գ	պհլ.	*ը	ե-ից
դ	պհլ. կամ եղես.	*թ	հուն. կամ էսթ.
*ե	հուն.	ժ	?

*ի	հուն.	ա	էաթ. կամ պհլ.
լ	աւ.	չ	պհլ.
խ	պհլ.	պ	պհլ. կամ եղեւ.
ծ	էաթ.	չ	?
կ	աւ.	*ա	բ-ից
հ	պհլ.	ս	պհլ.
ճ	պհլ.	*վ	ւ-ից
*ղ	լ-ից	տ	պհլ.
ճ	?	ր	պհլ. կամ աւ.
մ	եղեւ.	ը	էաթ.
յ	պհլ.	*ւ	հուն.
ն	պհլ.	*փ	հուն.
շ	արամ. եղեւ. (կամ պհլ.)	*բ	հուն.

Ըստ այս ցուցակի՝ Պանիելյան այբուբենից 10 տառ (հետև առնելով նաև ա, որ ավելի պահպանված է համարում քան էսթրանգելյան), ուրեմն 11 տառ պահպանված ծագում ունեն. 5 տառ ասորական դանադան ձևերից, 6 տառ անորոշ են (կամ ասորական կամ պահպանված) և 3 տառ (ծ, ն, ջ) անհայտ: Ինչ էլ որ լինի սակայն, այս երեքը չէին կարող ասորական լինել, որովհետև ասորերեն լեզվի մեջ այդպիսի ձայներ չկան: Բայց նրանք գտնվում են պահպանված, ուստի նրանք էլ պահպանված պիտի լինեն: Այս հարվով Պանիելյան այբուբենը պարունակում էր ուրեմն՝

14 տառ պահպանված,

5 տառ ասորական,

6 տառ երկզիմի.

Երկզիմիները բաժանելով երկուսի վրա, կլինի 17 պահպանված և 8 ասորական:

Բայց այդ ինչպիսի՞ ասորի բրիստոնյա քարոզիչ է Պանիելը, որ իր կազմած արամեական այբուբենի տառերի կեսից ավելին պահպանվածներից է առնում: Եվ ինչպիսի՞ հայերեն այբուբեն է դա, որ 11 տառ պակաս ունի (և դեռ ծ, ձ, շ, ջ, ն, զ, ժ տառերի գոյությունն էլ խնդրական է համարում՝ էջ 55). ուրեմն ինչպե՞ս կարելի եղավ այդ այբուբենով հայերեն թարգմանել ու գրել երկար ժամանակ:

Ուրիշ հարցումներ.— Ինչո՞ւ Պանիելյան այբուբենը չպիտի ունենար վ, ր, փ, ք տառերը և պիտի սպասեր, որ Մեսրոպը գա և հնարի գրանք: Թե՞ ասորերենը և թե՞ մանավանդ պահպանվածները ունեն վ տառը. ինչո՞ւ Պանիելը մեկից փոխ շտապ այդ տառը: Թե՞ ասորերենը և թե՞ պահպանվածները ունեն փ (=ֆ) տառը, ինչո՞ւ փոխ շտապ Պանիելը: Ասորերենը շատ լավ դանազանում է ա և ր, կ և ք

ձայները և նրանց համար առանձին տառեր ունի (օրինակ՝ հայերենի մեջ ասորական տալիթայ բառը ներկայացնում է թե՛ տ և թե՛ ք, իսկ եթե այս բառը հունարենի միջոցով է, կարելի է հիշել ավայ և քոնոքոն ղուտ ասորական բառերը, մեկը տ-ով, մյուսը ք-ով)։  
ինչո՞ւ Դանիելը փոխ շառավ սրանք։

Տեսնում ենք, որ այս բոլորը անհարիր բաներ են։

Դեռ մենք այս եզրակացութուններին հասանք, որովհետև հետևեցինք Մարկվարտին՝ հայերեն տառերի ծագման բացատրության մեջ։ Հայերեն շատ տառեր, որ ակնհայտ կերպով հունական ծագում ունեն, Մարկվարտը խեղաթյուրում և ասորականից է դնում։ Օրինակի համար Բ, որ հունարեն Β տառաձևից է, դնում է ասորի 𐤁 ք տառից։ Այսպես և ուրիշներ։ Գրքիս է գլխում պիտի տեսնենք, թե հայերենի մեջ միայն մի տառ կա (ծ), որ հաստատ ասորական ծագում ունի և երեք տառ (խ, կ, ձ), որ տատանվում են ասորերենի և ուրիշ լեզուների միջև։

Ահա թե ինչ դրուստան հասավ ասորի Դանիելի կազմած արամեական այբուբենը։

Վերջապես Մարկվարտի դեմ կարող ենք դնել իր մի ուրիշ վճռական խոսքը, որ մեջ է բերում նույն գրքում (էջ 7)։ «Հայաստանի մեջ երկրին հատուկ լեզվով տող մ'իսկ գրված չէր, վասն զի նոր ժամանակվան աղփաբաններն և ոչ մին բավական էր հայերենի բազմաթիվ ու դժվարին հնչումները ներկայացնելը։ Եթե Հայաստանում կարելի չէր որևէ ձևով հայերեն գրել, Աղձնիքում կարելի՞ էր։

Այս բոլորից հետո մենք կարող ենք ուրեմն նորից կրկնել մեր նախորդ եզրակացութունը, թե Դանիելյան գրերը հայերեն չէին և հայոց մեջ երբեք գործածված չէին, այլ կորած հին սեմական մի ազգի այբուբենը։

Մարկվարտին գրեթե նման ձևով է բացատրում Նահապետյանը (Բազմ. 1913, էջ 126 ևն) Դանիելի և Դանիելյան գրերի հարցը։ Նա հորիզոնը փոխադրում է Տարոնի Հացեաց դրախտ մենարանը, ուր Դ դարում Լուսավորչի ձեռքով թորեպիսկոպոս էր նշանակված իր աշակերտ Դանիել ասորի եպիսկոպոսը, որ հետո հայոց կաթողիկոս ընտրվեց և սպանվեց Տիրան թագավորի հրամանով (347)։ Նրա աշակերտներն էին Եպիփան, Շաղիտա, Գինթ ևն։ Հացեաց դրախտի միաբանութունը իր առաջելութունը տարածում էր Մոսիթի, Աղձնիքի և հայկական Միջագետքի վրա, ուր ազգաբնակչութունը հայ և ասորի խառն էր։ Այստեղ ահա կազմված էր առանձին հայկական այբուբեն՝ «պահլալէ, զենդէ, փինիկեան և այլն գրերէ, փոքր ի շատէ յունական կամ հռովմէական գրութեան նմանութեամբ ձևակերպ-



ված»։ Ահա այս շրջանի եպիսկոպոս էր Գանիկի ասորին էլ Մեսրոպի ժամանակ և իր ունեցած այրուբենն էլ այդ այրուբենն էր։ Գանիկի-յան այրուբենը բաղկացած էր 22 գրից, որոնք են՝

ա, բ, գ, դ, ե, է, ը, թ, ի, լ, խ, կ, դ, մ, ն, ո, սլ, ո, ս, վ, ա, բ։

Այս այրուբենը աշից ձախ էր գրվում և ուներ պակաս տառեր, որոնք «փոխանակված էին վերագիր նշաններով»։

Այս գրերի վրա Մեսրոպը ավելացրել է «գնես կամ պահլա գրե-րըն».

գ, ժ, ծ, ե, ձ, ճ, յ, շ, շ, չ, ց.

և լատիներենից էլ առել է՝ ւ, փ, ք տառերը։

Բոլորին տվել է լատինական գրության ձևը։

## Գ Լ Ո Ւ Ե Ձ

### ՊԱՐՍԻԿ, ՀՈՒՅՆ ԵՎ ԱՍՈՐԻ ԳՐԵՐԸ

Նախորդ գլխում մենք հասանք այն եզրակացություն, որ հայերը նախքան Մեսրոպը (իբր թե Գանիկիյան գրերով) գրավոր գրականու-թյուն չեն ունեցած. եղել է միայն բանավոր գրականություն, որ բաղկացած էր ժողովրդական երգերից, զրույցներից և ա-ռասպելներից, որոնք երգվում և պատմվում էին միշտ բերանացի, ա-ռանց բնավ գրի առնվելու (վիպասանական շրջան)։ Այս շրջանը տևեց մինչև Ե դարի սկիզբը, երբ Մեսրոպ հնարելով հայերեն գրե-րը, ստեղծեց հայոց գրավոր գրականությունը։

Հին բանասերներից շատերը, ինչպես և նորերից ոմանք, են-թադրում են, թե այս շրջանում հայերը գուրկ չէին գրավոր գրականու-թյունից, այլ ընդունելով պարսիկ<sup>1</sup>, հույն և ասորի տառերը՝ ստեղծել էին հայալեզու, բայց պարսկատառ, հունատառ և ասորատառ գրա-կանություն, ճիշտ այնպես՝ ինչպես արդի եվրոպական լեզուները գործ են ածում լատինական տառերը, բայց գրում են իրենց խոսած լեզվով, կամ ինչպես մահմեդական յուրաքանչյուր ազգ գործ է ա-ծում արաբական տառերը, բայց գրում է իր մայրենի լեզվով։

Այս ենթադրությունն ապացուցանելու համար հիշյալ բանա-սերները մեջ են բերում հետևյալ երեք պատճառարանությունները.

<sup>1</sup> Պարսկական տառեր ասելով հասկացվում են պահլավական կամ գնեզական գրերը, որոնք իրարից անշան տարբերություն միայն ունեն նոր պարսիկների գործածած տառերը սրանց հետ բնավ կապ չունեն, արաբերեն են և փոխ են առնված շատ հետին ժամանակներում։

Ա. Մերոպայան շրջանի առաջին գրվածքները, որոնք գրերի գյուտից անմիջապես հետո գրվեցին, ինչպես Ս. գիրքը, Կորյուն, Եզնիկ և այլն, ունեն այնպիսի գեղեցիկ, ճոխ ու կանոնավոր լեզու, որ երկար մատենագրական մշակութուն են ենթադրում. առանց այս մշակութւյան այնպիսի սքանչելի լեզու արտադրել անկարելի է. և որովհետև անկարելի է մատենագրութուն առանց գրի, ուստի պետք է ենթադրել, թե հայերը այն երկար շրջանումն էլ գրեր ունեցել են:

Բ. Մեր մատենագրութւյան մեջ կան մի քանի գրվածքներ, ինչպես Յաճախապատում, Ագաթանգեղոս, Բուզանդ, Զենոբ Գլակ, որոնք գրված են Գ դարում. եթե սրանք գրված լինեին նախ հունարեն կամ ասորերեն և հետո թարգմանված լինեին հայերենի, պետք էր որ բնագրերից մի հետք մնացած լիներ. բայց որովհետև կարելի չէ ապացուցանել այդպիսի բնագիրների գոյութունը, ուստի պետք է ընդունել, թե այս աշխատութւյունները գրվեցան հունարեն կամ ասորերեն տառերով և հայերեն լեզվով. և միայն հայերեն գրերի գյուտից հետո վերածվեցան հայերեն տառերի:

Գ. Մեր մատենագիրները մի քանի տեղ հայտնապես վերկայում են, թե հայերը գրերի գյուտից առաջ գործ էին ածում հունարեն, ասորերեն և պարսկերեն գրերը: Այսպես Փարպեցի, գլ. Ժ (էջ 43) խոսելով Մերոպի ժամանակ արքունի դիվանադպրութւյան մասին, ասում է. «Վասն զի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորացն Հայոց՝ արքունի դպիրքն, զվճուցն և զհրովարտակացն»: Խորենացին (Ա. գ.) խոսելով հին հայոց անուսումնասիրութւյան մասին, գրում է. «Այլ ասիցէ ոք արդեւ վասն ոչ լինելոյ գիր և դպրութիւն ի ժամանակին կամ վասն պէսպէս պատերազմացն, որ կուռ զմիմեանց զկնի անհետ ի վերայ գային: Այլ ոչ արդարև այսոքիկ կարծեցեալ լինի, քանզի գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և գիր պարսից և յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատեանք. մանաւանդ որ ի սեփական ազատութեան պայազատութիւն»: Նույնպես՝ Մերութանի այրած գրքերի առթիվ խոսելով՝ հիշեցնում է, թե «Զի յայնժամ գիր դպրութեան Հայոց չև ևս էր լեալ, և յունականան վարէին եկեղեցւոյ կարգք» (Խոր. Գ. լգ): Վերջապես Մերոպի հրաժարումից հետո՝ արքունի քարտուղարի պակասութւյան առթիվ գրում է. «Ոչ փոքր ինչ կրէ (Վռամշապուհ) աշխատութիւն յաղագս քարտուղարի, զի մինչև գնաց Մերոպ յարքունական դրանէն՝ ոչ զոք ի ճարտարաց գտանէր անդ ի դպրաց, քանզի պարսկականան վարէին գրով» (Խոր. Գ. ծբ):

Ներսես Շնորհալի՝ Բարձրացուցէքի Մեկնութեան առաջաբա-

նում՝ օգտվելով հորենացուց, ասում է. «Եւ այսպէս կարգեցան (յա-  
ջորդք Ս. Լուսատորչի) մինչև ի սուրբն Սահակ և Մեսրոպ, զանձինս  
տունեալ օրինակ բարեաց: Եւ վասն զի ոչ էր գիր հայերէն լեզուի,  
այլ յոյն և ասորի գրով վարէին և ուր ոչն լինէին սուրբն Սահակ և  
Մեսրոպ, որ թարգմանէին և մեկնէին զգիրս սուրբս. յոյով ուրեք  
պակասութիւն լինէր ճշմարտութեան ասանդիցն առ աշակերտեալսն  
ենս: Իսկ նույն հեղինակի խոսքերը Ալեքս կայսեր մատուցած Հա-  
ւատոյ զանանութեան մեջ (տե՛ս Կիրակոս պատմիչ), պետք է  
հասկանալ զուս հունարեն բնագիրների համար. «Եւ օրհնութիւն  
խաչի ոչ ի մէջն էղեալ է, այլ յառաջին հարցն ձերոց (Տունաց), զոր  
նախնիքն մեր թարգմանեալ ետուն մեզ, որպէս այժմ գտանենք  
յարևելս յունարէն գրով ի հին գիրս, ոչ առանկ և ոչ նուազ քան  
զմերս, զի գրեալ էր լուսնալ զնորոզ խաչն»):

Ավելի հետին ժամանակներէց ունենք Կիրակոս պատմիչը.  
«Քանզի ցայն վայր ոչ ունէին գիր Հայք, այլ յոյն և ասորի գրով  
վարէին և նշանագրաւ» (էջ 15): Վարդան պատմիչ՝ էջ 49 «յոյն և  
ասորի և պարսիկ գրով շատացեալք»:

Գանձարանը երկու տեղ հիշատակում է նույն բանը. նախ Կա-  
նոն Սահակայ և Մեսրոպայ.

Արդ ի մերոյ սուրբ Լուսատորչէն,  
Արթուն անուն սրբոյ Քրիզորէն,  
Օրինադրեալ դարձաք ի շարէն,  
Ի կոոց զոհից և ի բանսարկուէն,  
Այլ նա վարժեալ գրովն յունարէն,  
Ձի շունէաք գիր ի հայ բառէն,  
Մինչ Իսահակ մեծն ի պարթևէնս:

(Հանել եմ Քավրիզի Ա. N 43 ձեռագրից, էջ 318ր—321ր, որի հետ հա-  
մեմտել եմ էջմիածնի Կարինյան N 466, էջ 182 կն):

Երկրորդն է Գանձ սրբոց թարգմանչացն.

Բարդէոս եկեալ,  
Չոր գրով յղեալ,  
Թումայ առաքեալ,  
Մեր հարբն որ ընտրեալ,  
Յասորոց վարժեալ,  
Յոյն գրով վարեալ:

(Հանել եմ Քավրիզի նույն ձեռագրից, էջ 150ր—154ա):

Այս կարծիքը առաջին անգամ հայտնել է Չամչյանը, որ թեև  
իր Պատմութեան մեջ առանձին տեսութեամբ չի պարզում իր գա-  
462

դափարը, բայց էջ 494-ում և 509-ում տված տեղեկություններով պարզապես հայտնի է դարձնում իր միտքը: Հայոց գրավոր գրականության առաջին գործունեության ժամանակ Սահակի համար ասում է. «Եւ որչափ ինչ գիրս եգիտ գրեալ յունաց կամ ասորոց տառի, յորս բանքն էին հայերէն, ետ գրել զայնս հայոց գրով» (էջ 494): Հովսեփ և Եղիշի ուղարկվեցան Երեսիա, «զի թէ կայցեն անդ մատենան ինչ հայոց՝ գրեալ ասորոց գրով՝ գրեսցեն զայնս հայերէն, նաև զգիրս հարց ասորոց թարգմանեսցեն ի հայս» (էջ 509):

Չամչյանի կարծեկից են Ինճիճյանը, էմինը, Ալիշանը և վենետիկեցիներին՝ շատերը, ավելի նորերին Ջարբհանալյան (Պատմ. հայ. դպր.<sup>3</sup> (էջ 16—17), ֆր. Միլլեր (Zur Geschichte der arm. Schrift, WZKM 1890, թրգմ. Հանդ. Ամս. 1891, էջ 69բ), Հարությունյան, Վեբեր, և այս բանը ուսուցվում է մինչև անգամ դասագրքերում և այլուր. ինչպես՝ Մուրատյան (Եկեղ. Պատմ. էջ 87), Պալասանյան (Փորձ, Բ տարի, Գ. էջ 29), Խ. եպ. Ստեփանէ (Խոր. աշխ. թրգմ. ծանոթ. 12) ևն:

Սրանց հետ պետք է դնել նաև Հ. Մ. Ավգերյանին, որի խոսքերը սակայն մի քիչ անորոշ են. հմմտ. հետևյալ հատվածը. «Քաջավարժ գտաւ (Սահակ) յամենայն դպրութիւնս յունաց և ասորոց և պարսից, թող զներհուն հմտութիւն ի բնիկ բարբառ հայկաբան ասանց գրոյ, զի ոչ գոյր հայերէնագիր դպրութիւն մինչև ցաւորս նորա, վասն որոյ վարէին օտար գրով» (Լիակ. վարք. սրբ. Բ. 132. հմմտ. նաև Բ. 141, Ե. 281, 287):

Ինճիճյանը ընդունում է, թե հայերը նախապես գործ էին ածում Դանիելյան գրերը. այս գրերը ձայնավորից զտրվ լինելով՝ հայերը ստիպվեցան թողնել և փոխ առին դրացի երեք ազգերի գրերը, բայց մանավանդ հունարեն և ասորերեն. «Ի պակասիլ ձայնաւոր տառիցն՝ չէ մարթ կապել կամ հեգել զվանկս... Եւ վասն այնորիկ նախնիք մեր բոլորովին ի բաց թողեալ զայն գիր՝ երից դրացի ազգաց գրովքն վարէին (Հնախօս. Գ, էջ 74). բայց առաւել երևի գործածութիւն յունական տառից, ևս առաւել ասորոցն» (անդ. էջ 70):

էմինը (ИЗСЛЪД. 1896, էջ 207, 211 և 221, թարգմ. Հայկ. աշխարհ 1870, էջ 45) Դանիելյան գրերից հետո դնում է պարսկական կամ զենդ, հետո ասորական և վերջապես հունական գրերի գործածությունը: Այս գրերը՝ զուտ քաղաքական պատճառներով մտնելով Հայաստան, խափանեցին Դանիելյան գրերի գործածությունը: «Գիտնականները այս խնդիրը բավական լուսաբանած են արդեն», ասում է հեղինակը և ավելորդ է գտնում նրա վրա միանգամ էլ վերադառնալ:

Հարությունյանն (Հայոց գիրը, էջ 153, 157) ընդունում է, թե

հայերն ունենին բնիկ հին գիր, որ սամուր կապերով շղթայված էր կռապաշտութիւն հետ», հույն և ասորի կրօնավորները գալով Հայաստան, հալածեցին այն և «ենթամուծեցին հունական և ասորական գիրը»։ այնուհետեւ հայ ազգը «մտաացութիւն տալով յուր սեպհական հին գիրը՝ մուրացեղանութիւն ստորում և գործ էր զնում հունաց, պարսից և ասորոց տառերը»։ Բայց օտար քարոզիչները սրանով էլ չբավականացան և հայ լեզուն էլ ջնջելով՝ սկսեցին գործածել հունարեն և ասորերեն լեզուները։ Հայերը տեսնելով, որ այսպիսով իրենց ազգութիւնը կորուսման ճամբի մեջ է, մտածեցին հրեարել հայերեն գիր և ազգը փրկել։

Ամենից մեղմն է S. Weber (Die katholische Kirche in Armenien, 1903, էջ 395), որ կարծում է, թէ Մեսրոպից առաջ հայերը ասորյա գործառնութիւնաց մեջ գործ էին ածում հունարեն գրերը (հայ լեզվով գրվածքներում), բայց ամբողջական մի գրականութիւն գոյութիւնը մերժում է։

Քննիչներից ոմանք մինչև իսկ տարօրինակ հայանութիւններ են անում այս մասին. օրինակ՝ Ինճիճյանը պատմում է, թէ մինչև այժմ էլ գոյութիւն ունեն ասորի տառերով հայերեն գրքեր. «Մինչև ցայժմ լսեմք ուրեք ուրեք գտանիլ հայկական մատենից գրեալ ասորի տառիւք. յորոց զմին ինքնին տեսեալ վկայեաց մեզ Սիմոն Ասեմանին, որ մի էր ի վարժապետացն ի Պետաւիտն» (Հնայն. Գ. էջ 71)։

Սակայն բոլոր այն պատճառաբանութիւնները, որով ուզում են ապացուցանել հայերեն լեզվով ու պարսկատառ, հունատառ և ասորատառ մի գրականութիւն գոյութիւնը, անհիմն ու սխալ են։ Նրանցից ո՛ր մեկը կարող չէ դիմանալ նոր քննական գիտութիւն առաջ և ո՛չ մի նոր բանասեր, որ ծանոթ է քննական պատմութիւն և լեզվաբանութիւն, չի կարող ընդունել այսպիսի սխալ մի ենթադրութիւն։

Չամշյանի կարծիքին հակառակորդ եղան Վիեննացիք, որոնց կողմնակից են նոր բանասերները. այսպես Գարագաշյան (Քնն. պատմ. Գ. էջ 32—33), Լ. Յ. Տաշյան (Հանդ. ամս. 1893, էջ 90—91), Լ. Ք. Սարգիսյան (Ազաթ. և իւր բազմ. գաղտ. էջ 288—297), Հիւրշման (Arm. Gram. էջ 12), Գ. Տեր-Մկրտչյան (Արարատ, 1896, էջ 31), Լ. Գ. Մենեիշյան (Հանդ. ամս. 1896, էջ 213—214), Ստ. Մալխասյան (Ռասընթաց Հայոց մատ. պատմ. էջ 44), Մարկվարտ (Հանդ. ամս. 1911, 535—536) և այլն։

Սրանց մեջ բերած փաստերը և մեր պատճառաբանութիւնները միացնելով իրար հետ, անցնում ենք քննելու հնրի առարկութիւնները և յուրաբանչլուրին պատասխանել մի առ մի։

ա) Լեզուն գործարանավոր մի մարմին է, որի կյանքը կախված է խոսողներից. գրիչը՝ այսինքն գրական մշակութունը, այնքան մեծ ազդեցություն չունի նրա վրա, որչափ կենդանի շրթունքը. ժողովրդի հազարավոր տարիների աշխատանքը այնպես է կոկում, կերպարանափոխում այն, որ գիտունը շատ անգամ զարմացած է մնում: Աֆրիկայի և Ամերիկայի վայրենիների մեջ անգամ գտնվեցան այնպիսի լեզուներ, որոնց կանոնավորությունն ու ճոխությունը կարող էր մրցել մշակված լեզուների հետ, թեև նրանք ամենևին գրական մշակություն տեսած չէին: Բարեշրջության և բնական զարգացման այս օրինքի արդյունքն է նաև մեր Ծ դարի լեզուն: Ամենևին պետք չկա նրա կազմության մեջ հին գրական մշակություն ենթադրել, նրա կանոնավոր քերականությունն ու ճոխ բառարանը հայ ազգի հազարավոր տարիների կյանքի ծնունդն է: Իսկ ոճի այն մաքրությունն ու վայելչությունը, որով փայլում են Ծ դարի գրվածքներից ոմանք, արդյունք են իրենց հեղինակների ազնիվ ճաշակի և Հունաստանի մեջ ստացած կրթության: Լեզուն միշտ մարդուն է, ոճը՝ հեղինակին: Արդարև կրեց հայերենը դրական մշակություն, բայց այս ձախորդ գրական մշակությունը հունաբան կամ լատինաբան արվեստակյալ լեզուն միայն տվեց:

բ) Դ դարում հայերեն լեզվով մատենագրություն ենթադրելը հին վենետիկյանների քաղցր երազն էր. բոլոր այն աշխատությունները՝ որոնք նույն դարի ծնունդն էին համարվում, նորագույն քրեանադատության վճռով իջան Ծ, Զ և Է դարերը: Յաճախապատումը՝ որ Գրիգոր Լուսավորչի աշխատանքն էր համարվում, Ծ դարում էլ չի կարող գրված լինել: Ազաթանգեղոս և Բուզանդ գրված պետք է լինեն Ծ դարի առաջին կեսին, ինչպես ցույց է տալիս իրենց դասական լեզուն: Զենոբ Գլակը Գաթրճյանի և Խալաթյանի վճռով Է դարի կարկատանք է: Ղերուբնայի բնագիրը գրված է ասորերեն լեզվով և Ծ դարի առաջին կեսին թարգմանիչների ձեռքով հայերենի վերածված: Վերջապես Ծ դարից առաջ հայալեզու գրականություն չկա և չի կարող լինել: «Հայաստանի մեջ երկրին հատուկ լեզուաւ տող մ'իսկ գրուած չէր, վասն զի նոյն ժամանակուան աղփաբետներէն և ոչ մին բաւական էր հայերէնի բազմաթիւ ու դժուարին հնչումները ներկայացընել», ասում է Մարկվարտ խիստ բառերով՝ իր «Պատմ. հայ. նշանագրերու» աշխատության մեջ (Վիեննա, 1913), էջ 7:

Ըթե հայերը Դ դարում գրականություն ունեցած լինեին, ամենից առաջ պարտավոր էին Ս. Գիրքը, գոնե միայն Ավետարանը թարգմանել և ո՛չ թե ղանազան պատմական գործեր հեղինակել: Վրաց, Աղվանից, Գոթաց և Սլավների մատենագրությունն էլ այս

ձևով է սկսել: Եղ չկա մի հեղինակ, որ կարծեմ, թե Ավետարանն էլ հունատառ կամ ասորատառ և հայալեզու էր, քանի որ պատմագիրների վկայությունն այս մասին շատ պարզ է. «Փանգոյ ոչ գոյին դեռ ևս հայերէն լսողութեամբ սուրբ կտակարանք եկեղեցւոյ» (Փարպ. ծ.): Եւույնիակ Չամչյանը, որ այս կարծիքի հեղինակն է, բնդունում է, թե Մեսրոպը «հանապազ բնթերցեալ յականջս ժողովրդոց զաստուածաշունչ: գիրս գրեալս յայլ լեզու՝ մեկնէր նոցա զայն հայերէն» (Ա. էջ 489):

Եթե հայերը հին հայ գրականություն ունեին, ինչո՞ւ համար էին ուրեմն խորենացու այն դասն գանգատները, թե հին հայերը «տղեա, անտումնասներ ու վայրենի» մարդիկ էին, որ ոչ միայն իրենց հատուկ գիրը չունեին, այլ և չէին ուզում «գաղթել հույն ու պարսիկ գրականությունից: Մանավանդ այն խորենացու, որի վկայությունց վրա իբր թե հիմնվելով եզրակացնում են ոմանք քննիչներ, թե հին հայ գիր ու գրականություն կար: Եթե հին հայ գրի ու գրականության ջնջման իբր պատճառ բերվում է քրիստոնեությունը, բնդհակառակը մենք տեսնում ենք, որ Մեսրոպի ժամանակ դեռ հեթանոսությունը կենդանի է Հայաստանի զանազան գավառներում, և եթե հին հայ գիր ու գրականություն կար, սրանց մեջ գոնե պահված պիտի լինեիր, մանավանդ որ միայն 100 տարի էր անցել լուսավորչից հետո, և այն ժամանակ Մեսրոպը պետք չպիտի ունենար Միջագետքի և Ասորիքի մեջ փնտրելու հին հայկական գիրը (Մալխասյան, Տարազ 1893, 1—5):

գ) Մեծագույն փաստը՝ որ գիտնականներին պիտի կասեցնեիր, երրորդն է. ի՞նչպես կարելի էր առարկել այն պարագային, երբ Փարպեցին, խորենացին և այլն հայտնի վկայություն են տալիս, թե հայերը գրում էին հույն, պարսիկ և ասորի գրով:

Քննադատությունը չի մերժում խորենացու, մանավանդ Փարպեցու վկայությունը, բայց նկատել է տալիս, թե զիբ բառը այստեղ հին իմաստով պետք է հասկանալ «գրականություն» և ո՛չ թե «տառ, նշանագիր»: Փարպեցին կամ խորենացին ուզում են ասել, թե հայերը Մեսրոպից առաջ հայկական գիր և գրականություն չունեին. բայց պետք եղած պարագային գործ էին ածում հիշյալ երեք ազգերի գրականությունը. գրում էին հունարեն տառերով և հունարեն լեզվով, կամ պարսկերեն տառերով և պարսկերեն լեզվով, և կամ վերջապես ասորերեն տառերով և ասորերեն լեզվով: Այս վիճակը համապատասխանում է եվրոպական ազգերի հին շրջանին, երբ սրբանք մայրենի լեզվով գրականություն չունենալով՝ գործ էին ածում լատիներեն լեզուն:

Հետին ժամանակներում, երբ զիբ բառը պահեց միայն «տառ,

նշանագրի» իմաստը, ինչպես հիմա, Փարպեցու և Խորենացու վկայությունը, որ լեզվի մասին էր, նշանագրի համար առնվեց: Այսպես կարող է հասկացած լինել, օրինակ, Շնորհալին՝ իր վկայության մեջ, թերևս նաև Վարդան պատմիչը. բայց մանավանդ Կիրակոս Գանձակեցին, որ իր «գրով և նշանագրաւ» բառերով հայտնապես ցույց է տալիս, թե ինքը նոր իմաստով էր միայն հասկանում:

Եթե հայերը կարողանային գործածել հունարեն, պարսկերեն և ասորերեն գրերը հայերենի համար, նշանակում է թե ունեին երեք տեսակ այբուբեն. հետևաբար պետք չկար Մեսրոպին կրել այնպիսի մեծամեծ նեղություններ՝ հայ ժողովուրդին գրեր տալու համար: Եվ ի զուր է ենթադրել Հարությունյանի նման (Հայոց գիրը, էջ 258), թե Մեսրոպի հայերեն գրեր հնարելու բուն պատճառը նույն իսկ մեր երեք տեսակ այբուբեն ունենալն էր, որոնցից ո՛չ մին կարելի եղավ ճանաչել իբրև ազգային սեփականություն. և իբր թե՞ եթե այս երեք գրերից մե՛կը միայն գործածական լիներ, գրի գյուտը երբեք չէր կարող տեղի ունենալ և ոչ էլ կարող էր առաջ գալ Մեսրոպի այն մեծ հեղափոխությունը: Ի զուր է այս ենթադրությունը, որովհետև բուն իսկ իր մեջ է հակասում, քանի որ պատմագիրների վկայության համեմատ՝ վերջին ժամանակներում հունարենը վտարվելով՝ մնացել էին միայն ասորի և պարսիկ գրերը. և որովհետև եկեղեցու մեջ միայն ասորի գիրն էր գործածական, ուստի պետք էր ենթադրել, թե հայերը վերջապես պահել էին մի միակ այբուբեն:

Բայց նույն իսկ եթե ընդունենք, որ հիշյալ երեք այբուբեններն էլ գործածական էին, նորից անտեղություն ամենևին չենք նշմարում: Այսօրվա օրս Ալբանացիք էլ ճիշտ նույն վիճակումն են. ունեն երեք տեսակ այբուբեն՝ լատինական (Գեգա), հունական (Քոսկա) և արաբական. բայց այս երեքությունը ամենևին պատճառ չէ, որ նրանք բոլորն էլ վտարվեն ժողովրդից և ալբանական առանձին այբուբեն հնարելու կառիք զգացվի: Այսպիսի կարիք ամենևին չպիտի զգացվի, քանի որ ալբանացիք այլալեզու գրականություն չունեն մեր նախամեսրոպյան շրջանի նման, այլ՝ գրում են իրենց բնիկ ալբանական լեզվով ու բարբառով:

Չամչյանի այն կարծիքը, թե Սահակը և թարգմանիչները առաջին անգամ աշխատեցին օտար տառերով գրված հայալեզու գրքերը հայատառի վերածել, պատմական հիմք չունի: Արդարև Ասողիկը տալիս է այս տեսակ մի տեղեկություն. «Յովսէփ և Եղնիկ, արքանեակք Սահակայ, զայսու ժամանակաւ առաքեալք յԱսորիս, ուստի և ի Յոնս՝ ի գրաւորութիւնս գրոց վարդապետականաց» (էջ 75): Այստեղ՝ եթե ուղենք, գրավորություն բառը կարող ենք Չամչյանի ենթադրած ձևով հասկանալ: Բայց հետին մի պատմագրի վկայու-



Յլունը, նույն իսկ եթէ ավելի բացահայտ կենդանի ասված էլ լինէր, կարելի չէր իբրև ստուգութիւն ընդունել, քանի որ հնազույն պատմագիրները այդպիսի բան չունեն: Կորյունը գրում է. «Զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս, հայերէն գրեալս դարձուցէն» (էջ 20): Այստեղ «հայերէն գրեալս» դարձվածը պետք չէ կասկածի տեղիք տա, իբր թէ Կորյունը ասել ուզեր «միայն հայերեն գրեալով գրված», որովհետև եթէ գրեւոր միայն ասորի լինեին, իսկ լեզուն հայերեն, կարելի չէր ասել «յասորական բարբառոյն»:

Ավելի բացորոշ են Փոքր Կորյունը և Խորենացին. «Զի յասորի բարբառոյն զսուրբ գիրս նոր թարգմանեացնն ի հայ լեզու և գրով աւանդեացնն իւրեանց աշխարհին» (Փ. Կոր. էջ 16): Այստեղ ոչ միայն «յասորի բարբառոյն» բառերը ասորերեն լեզուն են մատնանշում, այլ և «նոր թարգմանեացնն ի հայ լեզու» բառերն էլ կարծես դիտմամբ են գրված, հայտնապես ցույց տալու համար, թէ այն գրքերը հայերեն չէին, հայերենի թարգմանված չէին, և նոր պետք էր թարգմանել հայերենի: — «Զի որ միանգամ գտցի անդ գիրք ասացեալ նոցին սրբոց հարցն առաջնոց, թարգմանեալ ի մեր լեզուս՝ բերցին փութով, զի յետ այնր ի Բիւզանդիոն առաքեսցին ի նոյն գործ» (Խոր. Գ. Կ.): Կարելի չէ կարծել, որ ասորի սուրբ հայրերը իրենց գործերը հայալեզու և միայն ասորատառ գրած լինեին. և, եթէ նայն գործի համար Բիւզանդիոն էլ պիտի երթային, նաև հույն հայրերը հունատառ և հայալեզու գործեր թողած լինեին: Վերջապես եթէ իրոք հայալեզու և ասորատառ կամ հունատառ գրութիւններ կային, ի՞նչ գործ ունեին նրանք Եղեսիայում և Պոլսում: Զէ՞ որ այդպիսի գրքերը Հայաստանի մեջ միայն պիտի գտնվեին, և եթէ Հայաստանի մեջ կար, այլ ևս ի՞նչ պետք կար այդքան հեռուները գրելու՝ հայատառի վերածելու համար նրանք:

Եթէ հայերը օտար տառերով հայալեզու գրականութիւն ունենային, այլ ևս ինչո՞ւ ուրեմն շախտի կարողանային հասկանալ եկեղեցական գրքերը, երբ նրանք եկեղեցու բնմիջ հնչում էին. գրի ձևը ի՞նչ նշանակութիւն ունի հնչման մեջ. նեղութիւն կրողը շատ շատ ընթերցողը պիտի լիներ և ոչ լսողը: Եվ այլ ևս ի՞նչ բանի պետք էին թարգմանիչները, առանց որոնց ժողովուրդը ամենեկին բան չէր հասկանում: «Ասորի մեծաջան և անօգուտ ուսմամբքն աշխատեալք յոխորտ, յորոց բազմութիւնք ժողովրդոց ունայնք և թափուրք հրաժարեալք գնային յեկեղեցույն, և ուսուցիչքն հանելով յուզոց և հառաչելով՝ զղջանային զսնտոսի ջանն իւրեանց, յորում ոչ գոր յուսումնասէր ժողովելոցն տեսանէին օգտեալս ի վարդապետութենէ՝ հոգեվոր իւրատուցն» (Փարս. Ժա): «Քանզի ինքն էր (Մեսրոպ) ընթեր-

ցող և թարգմանիչ, և եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր, զանխուլ ի ժողովրդոցն լինէր՝ յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ» (Խոր. Գ. Խէ)։ Այս խոսքից պարզ է, որ գրքերի ընթերցման համար կային երկու տարբեր պաշտոնյաներ՝ ընթերցող և թարգմանիչ. առաջինը հուլյն կամ ասորի տառերը ճանաչելով (և անշուշտ լավ ձայն ունենալով) պարզապես կարդում էր գիրքը, բայց լեզուն չէր հասկանում. նրան հաջորդում էր երկրորդը, որ հուլյն կամ ասորերեն լեզուն էլ իմանալով, սկսում էր թարգմանել կամ գրվածքի միտքը բացատրել։

Եթե օտարատառ և հայալեզու գրականություն ունեին հայերը, այն ի՞նչ ավելորդ ոգևորություն է, որ ամբողջ Հայաստանը պատում է հայալեզու գրականություն ստեղծվելու առթիվ, որի համար Կորյունն ու Փարպեցին հիացած-հափշտակված՝ բառ չեն գտնում պատմելու, և նկարագրում են մեզ՝ իբրև մի հրաշալիք, որի նմանը երբեք չէր տեսնված։

Վերջապես իբրև հզոր փաստ, պետք է հիշել պատմագիրներին այն վկայությունները, որոնցով հայտնի ցույց է տրվում, թե խընդիրը ո՞չ թե հուլյն, պարսիկ և ասորի տառերով գրելու վրա է, այլ բուն իսկ այդ լեզուներով գրելու և կարդալու։ Այսպես, օրինակ՝ Փարպ. Ա. «Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, և լինէր պաշտօնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորուոյ... մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է՝ ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով (բարբառով՝ այսինքն լեզվով և ո՞չ թե տառերով), շահիլ զոգիս արանց և կանանց առհասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն»։ Խոր. Գ. լզ. «Եւ զորս միանգամ գիրս գտանէր (Մերուժան)՝ այրէր, և հրաման տայր մի՛ ուսանել զդպրութիւն յունարէն, այլ պարսիկ. և մի՛ ոք իշխեսցէ յոյն խոսել կամ թարգմանել... զի յայնժամ գիր դպրութեան հայոց չև ևս էր լեալ, և յունականան վարէին եկեղեցւոյ կարգք»։ Նոյն, Գ. ծղ. «Չտային պարսիկ վերակացուքն յոյն ուսանել դպրութիւն ումեք յիրեանց մասինն, այլ միայն ասորի»։

Ավելի հնից և ավելի զորեղ բառերով վկայություն ունի Բուզ. Գ. ժգ. «Ի վաղնջուց, յորմէ հետէ առին նոքա զանուն քրիստոնէութեանն, լոկ միայն իբրև զկրօնս իմն մարդկութեան յանձինս իրեանց և ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրև զմոլորութիւն իմն մարդկութեան ի հարկէ։ Ո՞չ եթէ որպէս պարտն էր գիտութեամբ յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս

գիտէին հելլէն կամ ասորի դպրութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ: (Ասում է հելլեն և ասորի դպրութիւն, այսինքն զբրականութիւն և ո՛չ թե տառեր): Իսկ որք արտաքոյ բան զգիտութիւն արունաստին էին այլ խառնազանճ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն և կամ շինականութեանն, էթէ զցայգ և զցերեկ նատնալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոցն իբրև զյորդահեղեղ ինչ անձրեաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ որ ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի և ոչ զոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ զոր լսէինն, և ոչ կարէին ինչ ունել ի մտի»:

Հույն և ասորի լեզուները սովորելու համար հայերը ո՛չ միայն գնում էին Հունաստան և Ասորիք, այլ և Հայաստանում իսկ ունեին զուտ ասորի և հույն լեզվով դպրոցներ: Այսպիսի դպրոցներ հաստատեցին Լուսավորիչը և Մեծն Ներսես, ինչպես պատմում են Ազգաբանագիտութեան և Բուզանդը. «Եւ ի տեղեաց տեղեաց սահմանացն Հայոց՝ տայր հրաման թաղաւորն Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց և ի գաւառաց բազմութիւն մատաղ մանկւոյն ամել յարունստ դպրութեան, և կարգել ի վերայ հաւատարիմ վարդապետս... և զնոսա յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւն կարգեալ, և զոմանս ի հելլէն» (Ազգաթ. ճի 840): «Կարգէր և ի տեղիս տեղիս դպրոցս յունարէն և ասորերէն յամենայն գաւառս Հայոց» (Բուզ. Գ. 4): Առաջինների մասին ակնարկում է նաև Վարդան՝ Ներբող Լուսաւորչի. «Դպրոցս յօրինէր, մանկունս հաւաքէր, վարդապետս յոյն և ասորի գրոյ և լեզուի գիտակս կացուցանէր»: Այսպիսի մի դպրոցի մեջ սովորեց նաև Մեսրոպը. «Ի մանկութեան տիսն վայելեալ հելլենական դպրութեամբն» (ո՛չ թե գրով) (Կորյուն, էջ 13—14):

Չուտ հունարեն և ասորերեն գրականութեան հիշատակարաններից ոմանք հիշված են հայտնի կերպով մեր մատենագրութեան մեջ և ոմանք էլ մինչև այսօր մեր ձեռքը հասած: Մարգիսյանը (Ազգաթ. և իւր բազմ. դաղտնիքը, էջ 295—297) տալիս է այն հիշատակարանների ցուցակը՝ հետևյալ ձևով.

1. Տիգրանի, Արտավազդի, Զարեհ Լուսակալի և Նրատոյ թագուհու դրամները՝ հունարեն վերտառութեամբ. սրանց վրա կարող ենք ակնկալել (ըստ Ասպետ v. Petrowicz, Arsaciden-Münzen, Wien 1904, առաջարան, էջ 183—188 և տախտակ 24—25) վաղարշակ Ա-ի, Արշակ Ա-ի և Արտաշէս Ա-ի դրամները, որոնք մեր ձեռքն են հասել:

2. Արտավազդ Ա-ի գրած հունարեն ողբերգութիւնները՝ ըստ վկայութեան Պլուտարքոսի:

3. Հանիի մեհենական պատմութիւնները և Վաղարշապատի արքունական վճիռները (հունարեն):

4. Մեծն Խոսրովի կանգնեցրած հաղթական կոթողը, «հելլենացի գրով» Խազրաց և Բասւլաց դեմ հաղթական արշավանքի առթիվ (Խոր. Բ. կե):

5. Տրդատի հունարեն արձանագրութիւնը Գառնիի ամրոցի և արքունի ապարանքի վրա (Խոր. Բ. դա):

6. Տարոնի մեջ Արձանի պատերազմում ընկած հայ քաջերի և ջուրճիքի տապանագիրը «ասորի և հելլենացի գրով» (Զենոբ, էջ 31):

7. Տարոնում Ս. Կարապետի և Ս. Աթանազիների գերեզմանի վրա գրված ասորի արձանագրութիւնը, որով արգելվում էր կանանց մուտքը (Զենոբ, էջ 33):

8. Սեբեոսի այն պատմութիւնը, որ իբր թէ Ագաթանգեղոսը արձանագրել էր Տրդատի հրամանով՝ հունարեն լեզվով:

9. Էջմիածնի տաճարի հյուսիսային պատի արտաքին կողմի էրկին արձանագրութիւնները՝ հունարեն լեզվով (Ալիշան, Այրարատ, էջ 213, պատկեր 82 և 83), որոնք մինչև այժմ մնում են: Ավելացնենք նաև՝

10. Բագրևանդի Ս. Հովհաննես եկեղեցու արտաքին պատերի վրայի երեք ասորերեն արձանագրութիւնները, որ նույնպես մինչև այժմ մնում են (Ալիշան, Այրարատ, էջ 530—531, պատկեր 200, 201, 202):

11. Մուֆարդիւնում կեմանի գտած հունարեն արձանագրութիւնը՝ որ վերագրվում է Պապ թագավորին (տե՛ս իր Armenien einst und jetzt, I. 1910, և Հանդ. Ամս. 1911, էջ 542):

12. Սևանի շրջակայքում 1906 և 1932 թվերին գտնված երկու արձանագրութիւն՝ միևնույն բովանդակությամբ, որոնք պահվում են այժմ Երևանի Պետական թանգարանում: Գրված են հին արամեական տառերով և ասորերեն լեզվով և պատկանում են Հայկական թագավորության առաջին հիմնադիր Արտաշեսին (ն. Ք. 189 թ.), ինչպես իմանում ենք Լենինգրադի Պետական էրմիտաժի պրոֆեսոր՝ Ա. Բորիսովի վերծանութիւնից (տե՛ս իր հոդվածը Սովետ. Հայաստան. 1941, փետրվար 16):

Այս հիշատակարաններից նրանք, որ մեր ձեռքը հասել են, մենք կասկած փարատում են. իսկ մյուսները, եթե կեղծիք էլ լինեն, խնդիրը ամենեւին չեն կարող փոխել, այլ հաստատ կերպով ցույց են տալիս, թե հին հայոց գործածածը ո՛չ թե հույն, ասորի և նախնիկ այբուբենն էր, այլ լեզուն:

Այժմ անցնենք Ինճիճյանի այն վկայութեան, որով հաստատում

է, թէ այսօր էլ կան ասորատառ հայալեզու գրքեր, որոնցից մեկը հատկապէս տեսել է հոշակավոր ասորագետ Ասսեմանի մոտ (Հնախ. Գ. էջ 71):— Սրանք ուրիշ բան չեն կարող լինել, եթէ ոչ շատ հետին ժամանակներում գրված ձեռագրեր՝ Միջագետքի հայոց ձեռքով, որոնք սաստիկ ազդված էին ասորիներէց:

Մեր ասածը հաստատում են երկու այս կարգի հիշատակարաններ (ասորատառ հայալեզու), որոնք այսօր բանասիրութեան կատարելապէս ծանոթ են: Առաջինն է ասորերենից հայերեն մի բառագիրք, որ թարգմանութիւնն է Բար-Բահուլիի (արարական հորջորջումով Արու-Հասան-Իսա-իրն-ալ-Բահուլ) ասորերենից արարերեն բառագրքի: Այս աշխատութեան վրա մի ընդարձակ ուսումնասիրութիւն հրատարակեց D. S. Margoliouth. The Syro-Armenian Dialect (IRAS 1898, էջ 839 և շար. տե՛ս Ն. Յ. Տաշյանի մատենախոսականը, Հանդ. ամս. 1899, էջ 22—23): Սրանից երևում է, որ աշխատութիւնը շատ հետին ժամանակի գործ է, գրված 1657—1660 թվին, եփրեմ գրչի ձեռքով և Միջագետքի հայ բարբառով, որ, ինչպէս ա որոշիչ հողի գործածութիւնից երևում է (օր. կրակա, լոսա, մէջա՝ փոխանակ կրակը, լոյսը, մեջը), Տիգրանակերտի բարբառին շատ մոտիկ էր:

Երկրորդն է երեք տողանի մի արձանագրութիւն, իրր թէ Ս դարից, որ գտնված է Մերդինի (Մամպոյ) Ս. Գեվորգ եկեղեցու վրա և հրատարակված է Հանդ. ամս. 1906, էջ 65—67, Տաշյանի քննութեամբ հանդերձ: Արձանագրութիւնն է.

Շինեցաւ տուն տեառ  
յանուն սուրբ Կեորկիոս Զօրաւարի  
յամի տեառն 450

Տաշյանը, քննելով նույն արձանագրութիւնը և նկատելով նրա մեջ նորագույն արևմտյան տառադարձութեան հետքեր (ինչպէս՝ ա դիրը երեք անգամ տառադարձված ասորերենն ? ձ գրով, յ երկու անգամ տառադարձված ասորերենն ա ի գրով, և վերջապէս լ երկու անգամ տառադարձված ասորերենն ը ր, ի տառով), հետեցնում է, թէ հիշյալ արձանագրութիւնը շատ հետին ժամանակի կեղծիք է, հավանաբար 1707—1716 թվերից:

Ինճիճյանի ավանդածի նման մի բան էլ հիշվում է ավելի նորերից (տե՛ս Զեյթունի անցյալէն և ներկայէն, Մասն Ա. Վիեննա, 1900, էջ 15): Այստեղ հիշվում է մագաղաթյա մի ձեռագիր ավետարան «հունական գրով ու հին հայերենով գրած», որ սեփականութիւնն էր Զեյթունի Ս. Լուսավորիչ եկեղեցու քահանաներից Տ. Ենովք Դավիթ-Երեցյանի: Սկզբից թեև այսպէս պարզապէս Ավե-

տարան է ասվում, բայց հետո պարզվում է, թե ձեռագիրը «Մանկութեան անտարան կը կոչուէր», որ գրված էր «Քրիստոսի 250 թուականին»: Հեղինակը ձեռագրի հետևից հանում է մի ծանոթութուն, ուր պատմվում է Զեյթունցիների քրիստոնեություն ընդունելու մասին Քրիստոսի 75 թվին: Մանկության անտարանները առհասարակ անվավերական բաներ են և հետին ժամանակի գործ. ուստի 250 թիվը կեղծիք եմ համարում: Հայտնի չէ թե Զեյթունցիների քրիստոնեություն ընդունելու սուտ պատմությունն է՞լ հունարեն գրերով գրված էր. եթե այո՞, այն ժամանակ կեղծիքը բոլորովին հաստատվում է: Ցավալի է, որ «այս անգին հնութիւնը Գող Վասլի հռչակատար անտարանին և ուրիշ կարևոր ձեռագրերնեքու հետ այրեցաւ 1884-ի մեծ հրդեհին»: Սրանով անկարող ենք դժբախտաբար դրականապես հաստատելու, որ հիշյալ ավետարանն էլ, եթե իրոք հունարեն գրերով հայերեն էր, հետին ժամանակի գործ էր:

Սրա նման ունենք և մի ասորատառ հայերեն ավետարան.— Արմէնիա թերթի 23-րդ համարում (1914 թ.) Տաճատ ստորագրությամբ մի հողված է եղել, ուր հիշվում է, թե Տիգրանակերտում կա ասորատառ հայերեն մի ավետարան. միանգամայն կասկած է հայտնվում նույն ավետարանի մնացած լինելու մասին: Թերթի թղթակիցը (№ 30) պատասխանում է Տիգրանակերտից, որ նույն Ավետարանը դեռ անկորուստ մնում է: Նույնը արտատպված ենք գտնում Բազմավեպում (1914, էջ 95): Արդյոք այդ Ավետարանը մինչև այժմ կա՞, թե նա էլ վառվեց համաշխարհային հրդեհին:

Այս բոլորի եզրակացությունն այն է, թե մինչև Մեսրոպը ենթադրել հայալեզու գրականություն հույն, պարսիկ կամ ասորի տառերով՝ անհիմն է, և թե այս շրջանում հայերն ունեին ո՞չ թե հայերեն, այլ հունարեն, պարսկերեն և ասորերեն լեզուներով գրականություն:

Գ Լ Ո Ւ Ե Է

## ՄԵՍՐՈՊՅԱՆ ԳՐԵՐԸ

Նախորդ բոլոր այբուբենների խափանումից հետո, վերջին գրությունը, որ հայ ժողովուրդը գործածել սկսեց Ծ դարից և անխափան պահում է մինչև հիմա, Մեսրոպյան (կամ ընդհանուր անունով՝ Հայկական) գիրն է: Այս գրերի գյուտի հանգամանքների, տեղի ու ժամանակի քննությունը տեսանք արդեն Մեսրոպի կենսագրության մեջ: Այս գլխում մնում է մեզ ուսումնասիրել բոլոր այն

հանգամանքները, որ վերաբերում են Մեսրոպյան գրերի ներքին կազմութիւնը:

Նյութի ամբողջական ուսումնասիրութիւնը պարունակում է ութ գլխավոր խնդիր. արանք են՝

Ա. Գրերի թիվը.

Բ. Մեսրոպյան այբուբենի հորինվածութիւնը.

Գ. Գրութիւնն ուղղութիւնը.

Դ. Գրերի ձևը և նրանց ծագումը.

Ե. Գրերի դասավորութիւնը կամ կարգը.

Զ. Գրերի անունը.

Է. Գրերի հնչումը կամ արժեքը.

Ը. Գրերի տեսակները և զարգացումը:

Ուրեմն ներկա գլուխն էլ պիտի պարունակի ութ մաս՝ նյութի ութ մասերին համապատասխան:

#### Ա. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԳՐԵՐԻ ԹԻՎԸ

Թեև այսօրվա մեր գործածած հայերեն այբուբենը պարունակում է 38 գիր<sup>1</sup>, բայց, ինչպես ամենքին հայտնի է, նրանցից երկուսը՝ օ և ֆ վերջին դարերում միայն ավելացել են հին այբուբենի վրա՝ հունարենի և լատիներենի ազդեցությամբ: Բուն Մեսրոպյան այբուբենը ունի 36 գիր (ա-ից մինչև ֆ):

Բայց տեսնենք, թե իրո՞ք Մեսրոպի հնարած այբուբենը 36 գիր ուներ. արդյոք այս թվի վրա հավելումներ կամ հապավումներ տեղի ունեցած չե՞ն հետագա դարերում:

Մեսրոպյան գրերի թվի վրա՝ մեր հին պատմագիրների (հատկապես Կորյունի, Փառպեցու և Խորենացու) մեջ ամենևին տեղեկութիւն չենք գտնում: Ավելի հետին մատենագիրների մեջ հետևյալ տեղեկութիւնները կան.

ա) Շնորհալու Վիպասանութիւն հետևյալ տողերը.

Չաստուածագիծ տառս ընկալիալ,

Նրիւր տասամբբ վեցիւր յանդիալ,

Արեղական ելիւր շափեալ:

(Վիպաս. էջ 533):

Հատվածի երկրորդ տողը շատ պարզ է. ներկայացնում է 36 թիվը ( $3 \times 10 + 6 = 36$ ). Իսկ երրորդ տողը՝ մութ է մնում: Չամչյանը (Ա. 755) համարում է իրրև ակնարկութիւն տարվա 360 օրերի («ըստ 36 տասանց ատուրց տարույն»):

բ) Ասողիկը (գլ. 2. էջ 139) գրում է. «Գպրութիւն Հայոց լեզուիս

<sup>1</sup> Հեղինակը այբուբենի տառ չի համարում և-ը, որ սկզբունքորեն ճիշտ է, թեև այժմ նա մուծվել է այբուբենի մեջ:—Խմբ.:

իբ գիր ի Դանիելէ փիլիսոփայէ կարգեցաւ, իսկ զեօթն գրոցն պակասութիւն Մեսրոպը երանելի Տարօնէցի խնդրուածովը յԱստուծոյ առնու» (29 + 7 = 36):

դ) Վարդան (էջ 49). «Սուրբն Մեսրոպ յօրինէ դպրութիւն հայերեն՝ քսան և երկու գիր առ Դանիելի ասորոյ գտեալ...» որի վրա ավելացնում է թե «տայ նմա Աստուած զխնդրելին՝ շորքտասան գիրս» (22 + 14 = 36):

դ) Կայսերաց Պատմ. «Գտաւ դպրութիւն հայերէն լեզուին իբ գրով ի Դանիելէ փիլիսոփայէ... իսկ զեօթն գրոյն պակասութիւն Մեսրոպ երանելի Տարօնացի... հայցեալ յԱստուծոյ և ցուցեալ նմա ի տեսլեան» (29 + 7 = 36):

ե) Գանձարանի մեջ. «Քսան և ինն գիր էր շինած... Աջն Աստուծոյ անեղին փառաց՝ եօթն գիր այլ ի վիմին դրոշմած» (Ձեռ. Թաւրիզի, № 43, էջ 318բ—321բ, Վար. զեօթն գիրն ի քարին գրեաց՝ Ձեռ. Կարին. № 466, էջ 182):— Ուրեմն 29 + 7 = 36:

զ) Նույն Գանձարանի մեջ՝ ավելի հետո. «Սորայ հոգի ջահեցաւ նոցին, վեցեակ վեցից համարեալ գրին» (6 × 6 = 36):

է) Դարձեալ Գանձարան, ուրիշ մի տաղի մեջ. «Դանիէլ շնորհեալ, քսան և ինն գտեալ... Աստուած գթացեալ... եօթն գիր յայտնեալ» (Ձեռ. Թաւրիզի, № 43, էջ 150բ—154ա):— Այստեղ էլ 29 + 7 = 36: — Իսկ Կարին № 466, էջ 57—61 քաան և ինն բառի տեղ ունի քաան և ճիճք, որ հայտնապես սխալ է:

ը) Կարապետ Սասնեցի (էջ 41). «Որոյ անյապաղ առեալ ընդ իւր զիմաստունն Դանիէլ և ժամանէ առ կոշողն իւր՝ թարգմանելով զվաղուց արարեալ նշանն զրկրկին տա՛սն և զերկու տասն»: — Այստեղ վերջին բառը պետք է ուղղել տառսն, որովհետև 2 × 10 + 2 × 10 արդեն անսովոր և տգեղ դարձված է. այս սրբագրութեամբ կունենանք 2 × 10 + 2 = 22. որի վրա ավելացնելով էջ 43 հիշված 14 տառերը (գրէր մատնագիծ ի սալս սրտի իւրոյ շորքտասան տառ), կունենանք 36 տառ:

թ) Ոսկեփորիկ (Ձեռ. Գեորգեան, № 263, էջ 255 և Կարինյան № 1723, էջ 275) գրում է. «Հայերէն եղաւ դպրութիւն ի քսան և ինն գրոյ... իսկ զեօթն (գրոց) պակասութիւն ելից Մեսրոպ» (29 + 7 = 36):

ժ) Դավիթ Անհաղթին ընծայված հանելուկի մեջ (տե՛ս վերը՝ էջ 442): «Ձափ հասակի իմոյ երկիցս երկոտասան, այժմ եմ երիցս երկոտասան». (այսինքն թե առաջ գրերը 2 × 12 = 24 հատ էին, հետո եղան 3 × 12 = 36 հատ):

ժա) Յաղագս սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դաւթի անվաւերականում (Սրուանձտ. Հնոց-Նորոց)՝ «ունէին իբ գիր ի



Դանիէլէ փիլիսոսփայէ... հրեշտակ տեսնել է յերկիր... տայց նոցա զգիրս եօթնս (29 + 7 = 36):

Ժբ) Վարդանազրբի մեշ կարգում ենք (տե՛ս վերը էջ 88). «Զառաջինն ի նոցանէ (յԱսորոց) էր առեալ 17 գիր... ապա յազոթս ապաւինեալ... և վաղվաղակի ստեղծանէր ինն և տասն գիր» (17 + 19 = 36):

Ինչպես տեսնվում է, այս բոլոր հիշատակութիւնները միաձայն ընդունում են 36 Մեսրոպյան գիր: Սրանցից հնագույնը Ասողիկինն է Ժ դարից: Ավելի հին տեղեկութիւն չկա: Անստույգ է Դավիթ Անհաղթին ընծայված հանելուկի թվականը, թէև ուզում են մինչև Ե դար հանել (այսպէս Ն. Ղ. Մ., Բազմ. 1848, էջ 248—49): Անժամոթ է նույնպէս Կայսերաց գրոց թարգմանութիւն ժամանակը, որ ոմանք Անանիա Շիրակացուն են տալիս (Է դար), և ոմանք Ուխտանեսին (Ժ դար): Հմմտ. Զարբ. Հայկ. հին Դպր.<sup>3</sup> էջ 465 և Ալիշանի Հայապատումը՝ Ա. 71բ:

Բայց այս խնդրում մեզ օգնութիւն են հասնում անուղղակի միջոցներ:

Է դարում ունենք երկու քերթող՝ Կոմիտաս կաթողիկոս և Դավթակ երգիչ, որոնցից առաջինը գրել է Հոփսիմյանց շարականը և երկրորդը՝ Աղվանից Զուանշիր իշխանի մահվան վրա մի ողբ: Այս երկու գրութիւններն էլ տուն տուն այրուբենական կարգով են և պարունակում են բոլոր 36 տառերը (ա-ից մինչև ջ):

Անցնենք այժմ արձանագրութիւններին:

Հայերեն ամենահին արձանագրութիւնը համարվում է Տեկորի եկեղեցու արևմտյան դռան բարավորի արձանագրութիւնը, որ հրատարակեց նախ Սարգսյան (Տեղագր. էջ 206) և հետո Ալիշանը (Շիրակ, էջ 132): Ալիշանն այս արձանագրութիւնը դնում է Ե դարից, ինչպէս ընդունել են նաև բանասերներից շատերը: (Յուսիկ եպս., Արարատ 1892, էջ 879 համարում է Է դարի սկզբից): Սրա չափ հին են կարծվում նաև այն մի քանի մոզայիկ արձանագրութիւնները, որոնք գտնվեցին Երուսաղեմում՝ Զիթենյաց լեռան մոտ, Ռուսաց վանքի շինութիւն ժամանակ և որոնք հրատարակեց Երուսաղեմի Սիոն թերթը, սրանից էլ «Արարատ»-ը (1871, էջ 251 և 1872, էջ 494, Պատմ. կամ Ուղեցոյց Ս. Տեղեաց էջ 167), նաև Տաշեան (Ակնարկ մը հայ հնագր. էջ 137): Այս արձանագրութիւնց մեշ տարեթիվ չկա, բայց մեկի մեջ կա «հոռի ԺԸ» ամսաթիվը. սրանից հետեցնում են, թէ հայ թվականի հաստատութիւնից ավելի առաջ է արձանագրութիւնը:

Որոշ թվականով ամենահին արձանագրութիւններն են համարվում՝

1. Հառիճի ս. Յարութին մատուռի մոտ թաղված Երեմիա երա-  
ծիշտի տապանաքարը՝ ԺԷ = 568 թվից (Ալիշան, Շիրակ, էջ 163):

2. Սեբաստիայի մոտ Սոխկերի քարայրի արձանագրությունը՝  
ԽԷ = 598 թվից (հրատ. Սարգս. Տեղագր. էջ 65. արձանագրության  
նմանահան արտագրությունը ինձ հաղորդեց թղթակից բարեկամս՝  
Սեբաստացի Կ. Գարիկյան):

3. Խաչմասի գերեզմանատան մեջ գտնված մի տապանաքար՝  
ԻԲ = 573 թվից (Մ. Վ. Բարխուդ. Աղուանից երկիր, էջ 134):

4. Շամախիի Գոքշայ գավառի Ղալակեա գյուղի գերեզմանա-  
տան մեջ գտնված մի տապանաքար՝ ԼԴ = 585 թվից (անդ, էջ 209):

Բայց սրանք բոլորն էլ կասկածելի են, գրեթե բոլորի էլ հար-  
յուրավոր թվանշանները կտրած կամ հապավված են: Ստույգ է  
մնում հատկապես Տեկորի արձանագրությունը: Արդ՝ այդ արձա-  
նագրության մեջ գործածված ենք գտնում հայերեն գրերի ամենա-  
մեծ մասը (պատահաբար միայն գործածված չեն այնտեղ՝ է, ր, ծ,  
ծ, և, շ, ջ, փ, ք տառերը):

Նոր քննիչներից ո՛չ մեկը կասկած չի հայտնել Մեսրոպյան գր-  
րերի թվի մասին. բոլորն էլ ընդունում են, որ մեր գրերը Մեսրոպի  
օրով 36 հատ էին: Այսպես՝ Չամչյան, Ավգերյան, Ինճիճյան, Ալի-  
շան, էմին, Պատկանյան, Լանգլուա, Լագարդ, Հիբշման, Սարգս-  
յան, Հարությունյան, Միլլեր, Գարագաշյան, Տաղավարյան, Տաշ-  
յան, Մենեվիշյան ևն ևն: Սրանց վկայությունները ավելորդ եմ հա-  
մարում մի առ մի հիշատակել, որովհետև վերևում՝ Դանիելյան գր-  
րերի առթիվ (գլուխ Ե. 8) արդեն հիշել եմ:

Միմիայն Ղ. Աղայանն է, որ այս կարծիքից շեղվում է:

Իր մի քանի գրվածքների մեջ Ղ. Աղայանը այն կարծիքն է  
հայտնում, թե Մեսրոպի հնարած այբուբենի մեջ չկային է, վ, ի, յ  
գրերը, այլ այս շորսն էլ հետին ժամանակներում հնարված տառեր  
են: Հմմտ. հատկապես «Սուրբ լեզու» (Մուրճ 1890, էջ 1581—1591  
և 1713—1721, մանավանդ՝ 1587—1589), Մեր գրերի թիվն ինչո՞ւ  
էր 36 (Մուրճ, 1891, էջ 1575—1579), Մեր ուսուցիչներին ընկերա-  
կան երևէք (Թիֆլիս, 1892): Վերջին գրքույկի մեջ ամփոփել է այս  
առթիվ զանազան տեղեր հրատարակած հողվածքների էությունը:

Ղ. Աղայանի իբր ապացույց մեջ բերած խոսքերը այնպիսի  
բաներ են, որ մարդ կզարմանա, թե իրոք սրանք բանասեր մարդո՞-  
գրվածքներ են:

Ղ. Աղայանը նախ մի ընդհանուր տեսություն է անում Մեսրոպ-  
յան գրերի վրա, բայց այնքան մթին ու անհասկանալի, որ երկար  
աշխատության պետք կա իր միտքը ըմբռնելու համար: Իր միտքը

կարող ենք պարզել հետևյալ ձևով.— Մեր հայ գրերը բաժանվում են երեք տեսակի.

1. Բուն հայ գրեր, այսինքն այն գրերը, որ չեն գտնվում պարսիկ, ասորի կամ հույն այբուբենի մեջ, և հետևաբար չեն կարող նրանցից փոխ առնված լինել: Այս գրերն են՝ ր, ո, ծ, ձ, և, ո, ց:

2. Այն գրերը, որ գտնվում են թե՛ հայ, թե՛ ասորի և թե՛ պարսիկ այբուբենի մեջ: (Այս գրերի ցուցակը չի տալիս Ազալյանը):

3. Այս երկու շարքի գրերը հանելով մեր այբուբենից՝ մնում են է, վ, ի, յ հունական գրերը:

Մեսրոպը «հունական տառերից ո՛չ մեկ հաս չի վերցրել», որովհետև էթն հունական այբուբենից օգտված լինելը, անկարելի է, որ նրանց երկու օ-երից (օ և ω) մեկն ու մեկը շտաներ: Մեսրոպը ալ երկբարբառին տվել էր 4—5 պաշտոն, այն է ալ, ո, ու, օ, ով ձայները, հունական օ կամ ω գիրը փոխ առնելով՝ Տիշտ այս անպատեհությունից պիտի ազատվեր Մեսրոպը: Բայց նա չուզեց օգտվել հունարենից: Այս պատճառով էլ է, վ, ի, յ գրերը՝ որ հունական են, չեն կարող Մեսրոպի գործը լինել:

Մեսրոպի ժամանակ է գրի տեղ գրվում էր և. ինչպես՝ բերեմ, բերես, և սրանց բնական հետևությունք անշուշտ նաև բերե. հին ձեռագրերում արդեն գտնում ենք է գրի տեղ և: Մեսրոպից շատ հետո՝ Ունիթոռները հնարեցին այս է գիրը, որ սակայն չկարողանալով ամբողջովին վտարել հին և, հաստատվեց միայն բառերի ծայրում և երբեմն էլ մեջերքում:

Վ և ի գրերը հնչական տարբերություն չունեն և չունենին. մեկը հաստ, մյուսը նուրբ կամ մեկը բաղաձայն և մյուսը ձայնավոր չէ եղած: Մեսրոպի ժամանակ ուա, ուե, ուէ, ուի, ուու, ուօ ձայնախմբերը կարդացվում էին ուվա\*, ուվե, ուվէ, ուվի, ուվու, ուվօ: Օրինակի համար՝ նուէր բառը կարդացվում էր նուէր (nuver), հետո ըստ օրինի ու ձայնը սղվելով ր, բառը դարձավ նրուէր, ինչպես զորվում է տողադարձի ժամանակ: Ու գրությունը իբրև վ՝ հնարված է նույնպես ունիթոռների ձեռքով:

Մեսրոպի ժամանակ մեր այսօրվա ով գրության տեղ գործածվում էր ալ. ինչպես՝ բաւանդակ, երամախն են. ով չկար Մեսրոպը Սյունյաց երկրում և սյունեցոց համար գրելով Ավետարանն ու Մաշտոցը, բնական է որ սյունեցոց բարբառով էլ գրեց. արդ՝ Սյունյաց բարբառում մինչև այսօր ով չկա, այլ միշտ ալ է հնչվում. (օրինակ՝ Ըստո՛ւձաւ = Աստուծով, ա՛ղաւ = աղով են). ուստի Մեսրոպն էլ գործածել է ալ և ոչ բնավ ով:

Այս բոլորից հետևում է, որ վ տառն էլ եկամուտ է. Մեսրոպի այբուբենի մեջ չկար այսպիսի տառ: Երբ Թրակացու Քերականու-

թյունը թարգմանեցին հունարենից, հունարենի հետևողությամբ ավելացրին նաև Վ տառը, որ միայն կարողացավ մտնել բառերի սկիզբը: Պիտի գա մի օր, երբ մենք բառի սկզբից էլ պիտի ջնջենք այդ գիրը և մեր այբուբենից բոլորովին դուրս պիտի վտարենք:

Ի և յ գրերի համար ապացույց բնավ չի բերում Ղ. Աղայանը. «Մեր գրերի թիվն ինչո՞ւ էր 36» հողվածի մեջ ընդհանրապես ասում է, որ այս է, ի, յ, վ գրերը Մեսրոպից շատ հետո ավելացրին մեր այբուբենի վրա՝ թվագրության հաշիվը ճիշտ բերելու համար. (ուրեմն ա—ծ = 1—10, ծ—ն = 10—100, ն—ո = 100—1000, ո—բ = 1000—9000): Առանց այդ շորս գրերի հավելումին՝ 5000-ի վրա պիտի կանգնեինք:

Ահա սրանք են Ղ. Աղայանի տեսությունն ու մեջ բերած փաստերը:

Բանասիրության համար ավելորդ էր վիճել այսպիսի մի գրության դեմ, որ ծայրից ծայր սխալներով լի է: Բայց որովհետև մեր աշխատության մեջ մենք ուզեցինք ամբողջական լինել և հայ այբուբենի մասին հարուցված ամեն խնդիր շոշափել, ուստի ստիպված ենք խոսելու նաև այս մասին:

Ամենից առաջ նկատենք հաշվի անտեղի սխալը, որ նախորդ գլխումն էլ հիշեցինք: Աղայանը դնելով Դանիելյան գիրը 22 ասորապարսիկ տառերից բաղկացած, ավելացնում է սրա վրա 7 մեսրոպյան գրեր (ը, ո, ծ, ձ, ն, ռ, ց) և հետո էլ 4 ունիթոռական գրեր (է, ի, յ, վ): Բայց սրանով գումարը լինում է 33. ո՞ւր են հասա մնացյալ երեք գրերը:

ը, ո, ծ, ձ, ն, ռ, ց գրերի համար ասում է թե բնիկ հայ են և չեն գտնվում ասորի, պարսիկ և հույն այբուբենների մեջ: Բայց սխալ է. ծ տառը կա ասորերենի մեջ (հմմտ. ծնծղայ, Մծբին, ծոմ, Մեծ-րայիմ, նածրացի և այլն բառերը, որոնք ասորերենից են փոխառյալ). ն կա պարսկերենի և պահլավերենի մեջ (հմմտ. նրագ, նեմիշ, նեհմակ, նակառ, նոկան և այլն բառերը). ռ կա հունարենի մեջ (ռ). մեծ տգիտություն կլինի, եթե ասենք, թե հայերեն ռ գիրը Մեսրոպի ժամանակ հնչվելով վօ՝ համապատասխան չէր հունական օ գրին:

Չեմ հասկանում, թե ի՞նչ մտածելով է, վ, ի, յ գրերը միայն հունական է կարծում: Ի գիրը կա թե՛ ասորերենի մեջ և թե պահլավերենի մեջ, յ գիրը հունարենի մեջ բնավ չկա և միայն զննդի «պահլավերենի» յ գիրը կարող է սրան համապատասխանել. (հմմտ. յալտեան, Յակեբա, յագել): Եթե կա մի գիր, որի համար հատկապե՛ս պետք է ասել, թե հունական չէ բնավ, այդ էլ վ գիրն է (և վ ձայնը), որ հունարենում բոլորովին պակասում է. պարսիկը, պահ-

լավը, գեղը, ինչպես նաև ասորին ունին վ: Երևի Ղ. Աղայանը հու- նարեն ք գիրը նոր հնչումով կարդում է V !!!

Ղ. Աղայանը գաղափար շունի մեր գրերի հին հնչման մասին, ալ երկրորդ ասոր  $\sigma^2$  ալ էր կարդացվում,  $\sigma^2$  u,  $\sigma^2$  ու,  $\sigma^2$  o և  $\sigma^2$  ով. ալ միայն և միայն ՁԱ, մի հնչում՝ որ կա այսօր գերմաներենի, անգլիերենի, արաբերենի և քղերենի մեջ: Այսօրվա հայր այսպիսի հնչում չգիտե և ինքը շունենալով՝ կարծում է, թե հին հայն էլ շու- ներ: Հայր այսօր ալ երկրորդ աս  $\sigma$  է կարդում և կարծում է, որ Ե դարումն էլ այսպես էին կարդում: Ո՛չ: Հին հայերը չէին կարող հըն- շել  $\sigma$ , ինչպես որ մենք էլ այսօր չենք կարող հնչել ՁԱ (արա վրա մի քիչ ավելի ընդարձակ տե՛ս ստորև):

Հնագույն ձևագրերի մեջ, ասում է Աղայանը, գործածվում է Ե և  $\sigma^2$  թե է: Բայց սա շատ սահմանափակ մի բան է. Ե-ի գործա- ծույթունը մեր արդի Ե-ի տեղ՝ գտնում ենք միայն րե, երե, րեպեա, երբեք բառերի և անկատարների մեջ. ինչպես՝ եաք, եիք, եին, հար- ցանիք, զիտեաք, տեսանեաք և այլն (տե՛ս Յուշարձան, էջ 68, Կրկնագիր Ազաթանգեղոսի գրութեան առթիվ, և Meillet, Esquisse d' une gram. comparée de l'arm. classique, էջ 6): Սրանցից դուրս է գիրը կա ամեն տեղ և ամեն հին ձևագրի մեջ. օրինակ՝ Կրկնագիր Ազաթանգեղոսի մեջ, Յուշարձան՝ էջ 73ր ի մէջ, 75ա տագնապիցէ, իցէ, 77բ զարգաբէ, լուսաուրէ, էջ 79ա անդէն, 81բ արխայէն, ի ձեռնարկութեան ևն ևն: Է գիրը մի քանի տեղ արդեն լեզվաբանական պահանջ է և ներկայացնում է հին Ե + յ երկրոր- րդաբար. այսպես՝ բայերի երրորդ դեմքի վրա. րերեմ, րերես, րերե-յ = = րերէ (տե՛ս Meillet, նույն տեղում):

Վ և ւ միայն ա՛յսօր հնչական տարբերություն շունին. հին ժա- մանակ շատ տարբեր էին. Վ\*ուներ մեր այսօրվա հնչումը, իսկ ւ հնչվում էր Վ. մի հնչում, որ մենք այսօր չենք կարող արտաբերել և որ գտնվում է անգլիերենում, արաբերենում, քղերենում և մի քա- նի հետավոր հայ բարբառներում, այն է՝ Սուշարձան, Մարաղա, Հազդո:

Ամենից ավելի տարօրինակ է այն կարծիքը, թե է, ի, յ, վ դը- րերը Թրակացու ժամանակ կամ Ունիթոսական շրջանում ավելաց- ված են: Մի քիչ վերև տեսանք արդեն մի խումբ հին արձանագրու- թյուններ, որոնց մեջ կան գործածված այս գրերը: Տեկոթի արձա- նագրության մեջ՝ որ Ե դարից է, կան ի, յ, վ տառերը. միայն է չկա: Եթե ուղենանք, կարող ենք նրա վրա ուրիշներ էլ ավելացնել: Օրի- նակի համար՝ Նախիջևան գավառի Ալաման գյուղի եկեղեցու շրջա- պատ արձանագրութունը՝ ՁԵ = 636 թվից (հրատ. Սարգսյան, Տե- դագր. 194, Ալիշան, Շիրակ, էջ 125), ունի 1 Վ, 13 ի: Հսիսիսիսի տաճարի արևմտյան դռան կամարի վրա՝ Կոմիտաս կաթողիկոսի

արձանագրութիւնը՝ Է դարից (հրատ. Շահխաթ. Ա. 264, Ալիշան, Այրարատ 238, Աբ. արք. Մխիթ. Արարատ 1875, էջ 18, լավագույնը Գ. վրդ. Յովսէփյան, Արարատ 1898, էջ 442) ունի 1 վ, 10 ի, 5 յ, (վկայիցս բառի մեջ երեք գրերն էլ կան). միայն է չկա: Նույն կաթողիկոսի արձանագրութիւնը տաճարի ներսում՝ ավագ սեղանի հետևում, արևելյան պատի պատուհանի ճակատը ազուցված քարի վրա (հրատ. Գ. վ. Հովսէփեան, Արարատ 1898, էջ 441) ունի 7 ի, 3 յ: Է գիրը այստեղ էլ չկա: Բայց թե՛ այստեղ և թե՛ վերինների մեջ գործածված շինելը բոլորովին պատահական է, որովհետև բացառական հոլով գոյական կամ բայի եղակի երրորդ դեմք գործածված չէ: Իսկ Է ձայնի հայերենի մեջ Քրիստոսից առաջ էլ գոյութիւնն ապացուցները տե՛ս գլուխ Ե.:

Եթե է, ի, յ տառերը չգտնվեին հին հայերեն այբուբենի մեջ 7, 20, 300 թվանշանները կընջվեին և հին հայոց թվագրական հաշիվը բոլորովին կխանգարվեր: Ամենահին արձանագրութիւնների թվականները բոլորն էլ սխալ դուրս կգային:

Այսպես, ուրեմն, Ղ. Աղայանի փաստերը ամբողջապես սխալ են և ամենևին ո՛չ մի բանի զորութիւն չունին: Հեղինակը մի հետին միտք միայն ունի. այն է՝ իբր թե բարեփոխել հայերեն ուղղագրութիւնը և նրա միջից երեք տեսակ Վ գրութիւնն ձևերից (ա, ու, վ) երկուսը ջնջելով՝ պահել մեկ հնչյունին մեկ գիր: Նպատակը բարի էր (որովհետև գիտական, այսինքն հնչական ուղղագրութիւնը բոլոր ազգերի մեջ և բոլոր լեզուների համար էլ ցանկալի է), բայց միջոցը սխալ, իսկ արդունքը՝ բաբելոնական խառնակութիւն, որի մեջ ընկավ այն ժամանակ արևելյան հայերենի ուղղագրութիւնը Աղայանի պատճառով: Ղ. Աղայանը ո՛չ միայն չկարողացավ հասնել իր նպատակին, որովհետև չկարողացավ վտարել բառասկզբի վ գիրը, չկարողացավ մեկ հնչյունին մեկ գիր սկզբունքը հաստատել, այլև ընդհակառակը՝ ավելի խանգարեց հայերեն ուղղագրութիւնը, որովհետև վ, ու, յ գրերի հեշտ և հաստատուն կանոնները խառնակվեցին ու մոռացվեցան, և մեկ գրին երկու հնչում տալու անախորժ գրութիւնը ավելի հաստատվեց: Միայն արդի բարեփոխյալ ուղղագրութիւնն մեջ է, որ վ գիրը հաղթանակեց և երեք տեսակ գրութիւնը վերացվեց:

Հաստատելուց հետո, թե Մեսրոպյան այբուբենն ունի 36 գիր, պետք է քննել, թե այս գրերը բոլորն էլ Մեսրոպի հնարածնե՞րն են, և եթե ոչ՝ որո՞նք են Մեսրոպի հնարածները:

Այս խնդրի մեջ թե՛ հին մատենագիրները և թե նոր քննիչները երկու մեծ խմբի են բաժանվում:

Առաջին խումբը ընդունում է, որ Մեսրոպյան գրերը անկախ

են Գանիելյան գրեթէ, թէ Գանիելյան գրեթէ հայերեն չեն և թէ Մեսրոպը իր նշանագրերը հնարելու ժամանակ՝ Գանիելյան գրեթէ չէ օգտված. հայերեն այբուբենը ամբողջապես Մեսրոպի հնարածն է:

Երկրորդ խումբը ընդունում է, որ Գանիելյան գիրը հայերեն էր, որ Մեսրոպը ձեռք բերելուց հետո՝ պետք չունեիր դեն գցելու. նա պակասները միայն լրացրել և կազմել է հայերեն այբուբենը:

Առաջին խմբի գլուխը կանգնած է գլուխի ամենից հավաստի պատմիչը՝ Կորյուն. «Որում և պարզվէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ հայրական շափուն ծնանել ծնունդ՝ նորոգ և սրանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդէն վաղմաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինէր սիզոբայիւք և կապօք և ձայնատուր նշանօք» (էջ 10): Վերջին երեք բառերը (նշանակեալ, անուանեալ և կարգեալ) այնպիսի թանկագին բառեր են, որ իրենց համառոտութեան մեջ ամեն գաղտնիք բացատրում են: Մեսրոպն արեց այբուբենի վրա ինչ որ պետք էր. տիեց նրանց ձևերը (նշանակեալ), դրեց նրանց անունները (անուանեալ), որոշեց նրանց կարգը (կարգեալ), ավելացրեց ձայնավորները: Կորյունը մասնավոր տառերի գլուխի վրա չի խոսում, այլ ընդհանրապես ասում է «նշանագիրս հայերէն լեզուին». սրանով պետք է հասկանալ, որ Մեսրոպի հնարած գրեթէ մեր այբուբենի բոլոր գրերն էին: Այս բանը ավելի է շեշտում ձայնավորների ատանձին հիշատակութիւնը, որից երևում է, որ բաղաձայններն էլ Մեսրոպինն էին: Վերջապես նորոգ բառը, որ պատկանում է ծնած գրերին (և ո՛չ թէ աջին), ցույց է տալիս, թէ այն գրերը Մեսրոպի ձեռքով նոր հնարված էին և ո՛չ թէ հին Գանիելյան գրերն էին:

Կորյունից հետո գալիս է Խիբենացին, որ գրերի գլուխը նույնպես ամբողջովին տալիս է Մեսրոպին. «Երևութացեալ հոգւոյն աշաքթաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի... և յարուցեալ յաղօթիցն եստեղծ զնշանագիրս մէր՝ հանդերձ Հոսիանոսիս կերպաձևեալ զգիրն Մեսրոպայ առ ձեռն պատրաստ, փոխադրելով զհայերէն արձագանքս ըստ անսայթարութեան սիւղարայից հելլենացոց» (Խոր. Գ. Ժգ): — (Այստեղ Խորենացու մեջ հետո ավելացրած 7 ձայնավորների մասին տես մի քիչ ցած):

Գրեթէ նույն բառերն ունի Փոքր Կորյունը (էջ 10), ինչպես նաև Կիրակոս Գանձակեցին (էջ 15). «Երևեալ Մեսրոպայ թաթ ձեռին Հոգոյն, գրելով ի վերայ վիմի, և ծանուցաւ ամենայն համանգամայնս. և յարուցեալ ստեղծ զգիրսն»:

Շնորհալին էլ՝ մի համառոտ ակնարկի մեջ՝ այսպես է մտածում.

Ըստ Մովսեսի արժանացեալ,  
Զաստուածագիծ տառս ընկալեալ,  
Երիւք տասամբք վեցիւք յանգեալ:

Նոր քննիչներէց այս կարծիքը պաշտպանում են Զամչյան, Ավգերյան, Իգ. Փափազյան և Մենեիշյան:

Ավգերյանը գրում է. «Ընկալաւ (Մեսրոպ) տեսլեամբ զկատարեալ նշանագիրս բաւականս վասն ճոխ և բազմահնչիւն լեզուիս Հայոց» (Լիակ. վրք. սրբ. Ե. 292—3), Սրա հետևողութեամբ է Իգ. Վ. Փափազեանցը (Պատմ. եկեղ. էջ 227). «Երևութացան նմա ձեք տառիցն և հնչմանց, սերտ տպաւորութեամբ ի սիրտ և ի խորհուրդս մտացն՝ բովանդակեալ ունելով զամենայն տառս բազմահնչիւն լեզուիս»: Բայց այս մասին ընդարձակ և մանրամասն խոսում է Զամչյանը (Ա. 493 և 755—761):

Զամչյանն իբր փաստ առաջ է բերում նախ՝ պատմագիրների վկայութիւնը, երկրորդ՝ այն հանգամանքը, որ երբ Մեսրոպ գրեցրը ձեռքում դարձավ Հայաստան, թագավոր և կաթողիկոս հանդիսավոր կերպով ընդառաջ ելան և նրա բերած գրեցրը իբր աստվածատուր շնորհք ընդունեցին. երրորդ՝ Մեսրոպը որ Վրաց և Աղվանից այբուբենը ամբողջապէս հնարեց, չպիտի՞ կարողանար իր ազգի գրեցրը ամբողջապէս հնարել:

Մենեիշյանը՝ Տաղավարյանի գրքի ընդարձակ քննադատականի մեջ (Հանդ. ամս. 1896, էջ 213—7) Դանիել ասորու գործը լոկ իբր փորձ է համարում և մեր ամբողջ այբուբենի գյուտը տալիս է Մեսրոպին:

Ահա սրանք են առաջին կարծիքի պաշտպանները:

Գալով երկրորդ կարծիքին, սրան են պատկանում հին պատմիչների և նոր քննիչների մեծագույն մասը:

Հին պատմիչների մեջ այս կարծիքի առաջին պաշտպանն է Փարպեցին, որ Մեսրոպյան գիրը ուղղակի Դանիելյան գիրն է դրնում. «Իսկ արքային Հայոց սուրբ կաթողիկոսան Սահակաւ և երանելեաւն Մաշտոցիւ ընկալեալ զնշանագիրսն (Դանիելի) ի Հաբել՝ ուրախ լինէին: Եւ այսպէս դիպեալ գիտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշտոց, յերկրելով զնա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրեկոյս և հեգենային ուղղաձայնութեան, տալով նմա օգնականս և այլ արս բանիբունս և մտացիս ի քահանայիցն Հայոց, որք էին սակաւ մի և նոքա, որպէս երանելին Մաշտոց, մերձաւորեալք ի յունարէն հեգենայսն... (Մաշտոց) զոր զարթոյց աստուածայինն շնորհ ի ցանկութիւնս այս՝ կարգել զվաղնչուցն գրեալ



շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք էր հոգացնալ արկանել ի կիրս (Փարս. 1904, էջ 15—16):

Փարպեցոց հետո գալիս է Խորենացին (Գ. ծգ), որ թեև իսկապես առաջին խմբին է պատկանում, բայց նրա ձեռագրերից մեկի մեջ ավելացված է 7 ձայնավորների հիշատակությունը. «Ճրեութացեալ հոգոյն աշաց թաթ ձեռին առոյ՝ գրելով ի վերայ վիմի ա, ե, է, ր, ի, ո, ւ»: Սրանով իմացվում է, որ Մեսրոպը Գանիելյան գիրը անփոփոխ պահելով՝ իր կողմից ավելացրեց միայն 7 ձայնավորները:

Խորենացոց հետո եկող գրեթե բոլոր պատմիչների առաջ բացվում է ազատ ասպարեզ՝ համանման կարծիքների համար, թեև ո՛չ ամենքն էլ միևնույն ձևով: Սրանք բոլորն էլ պատմում են, թե Մեսրոպը Գանիելյան գիրը անփոփոխ պահեց և նրա պահպանները միայն լրացնելով՝ կազմեց իր այբուբենը: Բայց այս պահպանների թվի համար մեծապես զանազանվում են իրարից: Նրանք որ Գանիելյան գրերը 22 են դնում, ընդունում են հետևաբար, որ Մեսրոպը հնարել է մնացյալ 14 գրերը: Նրանք որ դնում են 29 գիր, Մեսրոպին տալիս են 7 գիր. այսպես և 24 գիր ընդունելը տալիս են 12 գիր, իսկ 17 գիր ընդունող Վարդանագիրքը՝ 19 գիր:

Պատմիչների մեծագույն մասը 7 գիր ավելացնելու կողմն է ալսպես են՝ Ասողիկ, Ոսկեփորիկ, Կայսերաց գիրք, Մովսեսի և Դավթի անվավերականը և Գանձարանը: «Մաշտոցն երանելի... դանիելեան նշանագրոք զղպրութիւն ըստ հայրուս յօրինէր ընկերոք ոմամբք, տուելովք նմա ի Սահակայ: Յետ որոյ դարձեալ ևս ի վեցերորդումն նորին Վոսմ-Շապհոյ... վերստին աստուածատուր նշանագրոք զնոյնս լեզանակեալ յօրինէր (Ասող. էջ 74): Դպրութիւն Հայոց լեզուիս իթ գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորոյ կարգեցաւ. իսկ զծօրն գրոցն պակասութիւն Մեսրոպը երանելի տարօնցի խնդրուածովք յԱստուծոյ առնու» (Ասող. էջ 139): Ա, ե, է, ր, ի, ո, ւ. այս գրերս յաւելաւ ի Մեսրոպայ զեղեցիկ վարդապետէ... ևլն (Ոսկեփ. Ձեռ. էջմ. N N 263 և 1723. ամբողջ հատվածը տե՛ս վերը՝ էջ 445): «Յորոյ ատուք գտաւ դպրութիւն հայերէն լեզուին, իթ գրով ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորոյ կարգեցաւ... իսկ զծօրն գրոյն պակասութիւն Մեսրոպ երանելի տարօնացի... հայցեալ յԱստուծոյ և ցուցեալ նմա ի տեսլեան» (Կայսերաց պտմ.): «Յայսմ ժամանակիս եղև խնդիր պակասութեան գրոյն հայոց, զոր ունէին, իր գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորոյ՝ աշակերտ սրբոյն Գրիգորի. իսկ սուրբն Սահակ և Մեսրոք բազում աշխատութեամբ պէտս արարին... յետոյ երևեցաւ ի տեսլեան հրեշտակ տեառն... էջ չերկիր առ նոսա և որպէս ի տունջեան խօսէր ընդ նոսա, և յաման ինչ խեցեղէն՝ մա-

տամբ նկարնալ տայր նոցա զգիրս եօթն» (Մովսեսի և Դավիթի ան-  
վավերականը, Հնոց-Նորոց, էջ 41—46):

Վերջապես Գանձարանի մեջ կարդում ենք հետևյալ տողերը.

Քսան և ինն գիր էր շինած,  
Այլ անգուտ էր ընթերցողաց,  
Զի ոչ կապէր հեգ բանից անուանց.  
Այլ անհոգի մարմնոց նմանած...  
Աշն Աստուծոյ անեղին փառաց՝  
Եօթն գիր այլ ի վիմին դրոշմած:  
(Վար. զեօթն գիրն ի քարին գրեաց):...

Տպաւորեալ ի սիրտս նորին  
Այն որ գրեցաւ աջովն անեղին,  
Այր, եչ և է կարգեալ ընդ եթին,  
Ոյ և իւն՝ որ եօթն կոչին.  
(Վար. ի և ու իւնն ի կարգին):

Զոր առեալ Մեսրոպ սքանչելին,  
Խառնեաց ի յայլ գիրսն որ նախ էին:  
(Վար. զոր և առեալ մեծի Մեսրապին,  
խառնեալ ի յայլ գրերն առաջին):

Սոքայ հոգի ջահեցաւ նոցին,  
Վեցեակ վեցից համարեալ գրին:

(Զեռ. Քար. № 43, էլ 318բ—321բ, Վար. էջմ. Կարինեան № 466, էջ 182):

Հայ գիր յօրինեալ,  
Վրամշապուհ օգնեալ,  
Վախրիճ գործակցեալ,  
Դանիէլ շնորհեալ,  
Քսան և ինն գտեալ:  
(Վար. քսան և հինգ)

Նախնեացն արարեալ...  
Աստուած գթացեալ,  
Հրեշտակ Տեառն իշեալ,  
Մատամբ փորագրեալ...  
Եօթն գիր յայտնեալ.  
Այն հոգի ջահեալ,  
Զայլ գիրսն յարուցեալ,

Սեղորայք հեզեալ,  
Բանն յար մեացեալ,  
Ի գիրս միացեալ,  
Չիմաստս պատմեալ:

(Չեռ. Քաղթ. № 43, էջ 150բ—154ա, Var. էջմ. Նաթիկ. № 466, էջ 57--  
61):

Յոթ գիր ընդունողների մեջ հիշվում է նաև մի հին հեղինակ՝ Անանիա Ծիրակացի (տե՛ս Բազմ. 1848, էջ 248): Բայց այս բանը ուրիշ տեղ կրկնված չեմ գտնում և կարծում եմ, որ այս անունով ակնարկվում է Կայսերաց պատմությունը, որ հիշեցինք վերևում:

Դանիելյան այբուբենը 22 գրից բաղկացած ընդունելով՝ Մեարոսյին 14 գիր են տալիս միայն Կարապետ Սասնեցին և Վարդան պատմիչը, երկուսն իրար գրեթե ժամանակակից, կամ Սասնեցին մի քիչ ավելի հին. «Առեալ ընդ իւր զիմաստունն Դանիէլ և ժամանէ առ կոռզն իւր, թարգմանելով զվաղուց արարեալ նշանսն՝ զկրկին տասն և զերկու տասն (տպված է տասն. այս սրբագրությունն մասին տե՛ս վերը՝ էջ 475), որք ոչ բաւականնային բայից մերոց... (հետ ավելացնում է) տեսանէր... զՏէրն հրեշտակաց՝ մարգարէական աշօք՝ որ գրէր մատանագիծ ի սալս սրտի իւրոյ շորեքտասան տառ» (Սասն. էջ 41, 43): «Սուրբն Մեսրոպ յօրինէ զպրութիւն հայերէն, քսան և երկու գիր առ Դանիէլի ասորոյ գրեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս, անհօգացեալ եղև յառաջնոցն... և ոչ Մեսրոպ կարէր նորօք փոխել զաստուածաշունչ մատենանս ի հայ բարբառ: Վասն որոյ աղօթից տուեալ զանձն գործակցութեամբ սրբոյն Սահակայ, տայ նմա Աստուած զխնդրելին, շորեքտասան գիրս, աջով իւրով զրոշմեալ առաջի նորս» (Վարդան, էջ 49): «Լեալ է հայերէն գիր հնոցն... զորոյ զթերութիւնն ելից նորս մեր եզրաս, աստուածախառն շնորհօք լցեալ, նորոգիչ նորոյս Իսրայելի և կարգաւորիչ» (անդ, էջ 50):

Դավիթ Անհաղթին ընծայված հանելուկի մեջ և Մագիստրոսի մոտ, Մեսրոպին տրվում է 12 գիր, իսկ Վարդանագրբի մեջ՝ 19 գիր (տե՛ս վերը՝ 442, 446):

Հավելյալ գրերի թվի մասին անտարբեր է Սամուել Անեցին (էջ 68). «ԶԴանիէլի նշանագիրսն յօրինէին ընկերօք հանդերձ: Եւ յետ միոյ ամի դարձեալ աստուածատուր նշանագրօք զնոյն յեղանակեալ, որով և զպրութիւն և զիրք աստուածայինք ուղղեալ թարգմանէին»:

Գրեթե սրա նման մի բան է գրում Յայսմատուրբը. «Եւ առեալ (տեսիլքիցք հետո) ևստեղծ զնշանագիրսն մերոյ լեզուիս՝ հանդերձ Ռուփինոսի իմաստասիրաւն: Եւ նախ յեցցին զհոռմ գիրն ի հայերէն այբուբենսն և ապա զթերին լցին աստուածատուր շնորհօքն»:

Վերջապես հիշենք եթովպական մի առասպել, որ այլանդակ ձևով՝ հայերեն գրերի գյուտն է պատմում: Այս առասպելը, որ կրում է «Պատմութիւն Տերտար հայ թագաւորին» վերնագիրը, առաջին անգամ գտավ Joh. Bachmann՝ Բեռլինի թագավորական մատենադարանի եթովպերեն մի ձեռագրի մեջ և հրատարակեց՝ գերմաներեն թարգմանութեամբ հանդերձ՝ Die Philosophie des Neopytagoreers Secundus (Berlin 1888) աշխատութեան իբր հավելված (տե՛ս գրքի ետևը, էջ 12, Geschichte des armenischen Königs Tertäd) և երկրորդ անգամ իր Aethiopische Lesestücke (Leipzig 1893) աշխատութեան մեջ: Այս առասպելի համառոտութունը տալիս է Տաղավարյանը (Մագումն հայ տառից, էջ 37), որի ամփոփումը դնում եմ այստեղ:

«Հայերը հին ժամանակ գիր չունենալով՝ գործածում էին հոռմայեցոց եկեղեցական գրքերը. նրանց քահանաները գալիս էին Հոռմից: Հետո հայերը գտնվելով հոռմայեցիներից, կտրեցին իրենց հարաբերութունը, որոշեցին իրենցից ընտրել քահանաները և սեփական գիր հնարել: Թաղեոս անունով առաքինի և արդար մի քահանա, 3 շաբաթ աղոթեց աստծուն և աստված շնորհեց նրան 12 գիր, որ բավական չէին գիրք գրելու համար: Թաղեոս այս գրերը փորագրեց մի եկեղեցու քարի վրա ու մեռավ: Մարտիրոս եպիսկոպոսը՝ հայ տառերը գտնելու համար քուրճ հագավ, մոխրի վրա նըստավ, 3 օր ծոմ պահեց, 42 անգամ լալախառն աղոթեց: Վերջապես աստված լսեց նրա ձայնը և ուղարկեց հրեշտակը, որ Մարտիրոսին սովորեցրեց 10 գիր էլ և ասաց. «Գնա՛ ալվիացրո՛ւ Թաղեոս քահանայի 12 գրերի վրա, որով կունենաս 22 գիր. սրանով կամբողջանա ալբուբենը»: Այսպես գտնվեցան հայերեն գրերը, որոնցով թարգմանեցին հին ու նոր կտակարանները»:

Քննարկվող խնդրի առթիվ նոր ֆենիչները բաժանվում են 10 կարգի.

1. Ինձիճյան, էմին, Լագարդ, Հիւբշման, Գարդհաուզեն, Սարգրսյան, Հարությունյան և Տաղավարյան ընդունում են, որ Մեսրոպ իրանից հնարեց և Դանիելյան ալբուբենի վրա ավելացրեց 14 գիր:

2. Զ. Ղ. Մ. (Բագմ. 1848, էջ 248—9) 12 բաղաձայն:

3. Պատկանյան՝ 10 գիր (2 ձայնավոր և 8 բաղաձայն):

4. Լանգրուա՝ 29 գիր (6 ձայնավոր և 23 բաղաձայն):

5. Գարագաշյան (Քնն. պատմ. Դ. 38) 7 ձայնավոր:

6. Ղ. Աղայան (Մուրճ, 1890, էջ 1587—8)՝ 7 գիր (2 ձայնավոր և 5 բաղաձայն): Իսկ 2 ձայնավոր և 2 բաղաձայն էլ շատ հետո:

7. Միլլեր՝ 14 գիր (7 ձայնավոր և 7 բաղաձայն) կամ 16 գիր

(7 ձայնավոր և 9 բաղաձայն). (տե՛ս Տաղավարյան, Մագրումն հայ տառից, էջ 19):

8. Ս. վ. Պարոնյան (Հանդ. ամս. 1896, էջ 74բ և 75) ավելացրած գրերի թիվը չի որոշում: Այսպես նաև Փանեակ (Անահիտ, 1905, էջ 130):

9. Մալխասյան՝ իր Դասընթաց հայ մատենագր. (Թիֆլիս, 1899) աշխատության մեջ երկդիմի գիրք է բունում. նախ (էջ 50) հաստատում է, որ Դանիելյան գրերը հայերեն չէին և հետևաբար Մեսրոպը մեկ կողմ է թողնել, իսկ հետո (էջ 52) գտնում է, որ Մեսրոպը 15 գիր միայն հնարել է (1 ձայնավոր և 14 բաղաձայն), այն է՝ հունարենի մեջ գտնված գրերը, որոնց մեջ նաև շ:

10. Մարկվարան ընդունում է, որ Մեսրոպը բարեփոխել է Դանիելյան գիրը, թե նրա գրությունը փոխելով և թե նոր գրեր ավելացնելով, բայց այս հավելումները որոշել անկարելի է գտնում: Իր կարծիքով Դանիելյան գիրը սեմական այբուբենն էր. ձայնավոր քիչ ունենր և դրերը ասորերենի պես ձախ էին դարձած և իրար էին կրցվում: Մեսրոպը գրերը աչ դարձրեց, ավելացրեց և լրացրեց ձայնավորների թիվը, մտցրեց գրերը անջատ գրելու գրությունը, բայց իր ավելացրած տառերի թիվը որոշ չէ: Անշուշտ իր հնարածներն են ղ, ո, վ, փ, ք, բ, ի, ս: Սրանց վրա մոտացել են ավելացնել նաև է, ը գրերը, որոնց համար ասում է թե ե գրից կազմված են: — Այս ենթադրությանց դեմ մեր պատասխանը տե՛ս վերը:

Վերոհիշյալ 10 կարծիքները մանրամասն չենք թվում, որովհետև նախորդ գլխում Դանիելյան գրերի առթիվ հիշել ենք:

Կարծիքների այս քառսի մեջ ո՞րն է ուղիղն ու հավանականը: Այս գտնելու համար պետք է մի առ մի քննել վերևում հիշատակվածները:

Ամենից առաջ արժեքից զուրկ է Փարպեցու պատմությունը: Այս պատմությամբ Դանիելյան գիրն է հենց նույն Մեսրոպյան գիրը. և դեռ այս գրի էլ կարգադրությունը ո՛չ թե Մեսրոպինն է, այլ Սահակի և նրա տված մի քանի աշակերտներինը: Եթե այսպես է, այսինքն թե մեր այսօրվա 36 գրերը Դանիելյան այբուբենն են, ո՞ւր են ուրեմն Մեսրոպի երկամյա փորձերը, Միջագետք և Եդեսիա իր ճամփորդությունը, տեսիլքով կամ իր սեփական աշխատությամբ պակաս գրերը գտնելը, Առակաց գրքի թարգմանությունը, ուրախ վերադարձը, թագավորի, կաթողիկոսի և ժողովրդի ուրախ ընդունելությունը և այլն, զեպերը, որոնք այնքան մանրամասն պատմված են Կորյունի մեջ: Այս խնդիրն արդեն ավելի ընդարձակ քննել ենք Մեսրոպի կենսագրության մեջ (Գլուխ Դ), ուստի ավելորդ ենք գրտնում այստեղ մեջ բերել մեր փաստերը: Միայն հիշում ենք հետևյալ

հանգամանքը: Փարպեցիին՝ գրի գյուտը պատմած ժամանակ, ասում է, որ իր աղբյուրը Կորյունն է, իր տված տեղեկությունները բոլորը նրանից է քաղում: Եվ որովհետև Կորյունի մեջ չկա այսպիսի տեղեկություն, հետևում է թե Փարպեցիին սխալված կամ, ավելի բանավոր է ասել, խնդիրը կարճ է կապած: Այս համառոտախոսության պատճառով է, որ Վրաց ու Աղվանից այբուբենի գյուտն էլ չի հիշում: Հետևաբար և նրա կարծիքի վրա հիմնվել անտեղի է և սխալ: Խորենացու մեջ գտնված 7 ձայնավորների թվումը հետին հավելված է: Այս խնդրի վրա խոսել են արդեն Լանգուա (Collect. II, 162), Խալաթյան (Փարպ. և գործք նորին, էջ 117), Խ. Ստեփանես (Թրգմ. Խոր. 1889, ծան. 697), Հարությունյան (Հայոց գիրը, էջ 265, 371) ևն: Սրանք ցույց են տալիս, որ հիշյալ ձայնավորների հավելվածը կա Վենետիկի վեց ձեռագրերից միայն մեկի մեջ, այն էլ լուսանցքի վրա: Մյուս ձեռագիրները չունին այդպիսի բան: Իսկ Ալիշանի Հայապատումը (մասն Բ, էջ 145բ) գրում է. «Ոմանք ի վեց օրինակաց մեր ունեցած ձեռագրաց»: Չկա Լամբրոնացու ընտիր օրինակի մեջ. չկա Հակոբ Կարինյանի բաղդատած օրինակի մեջ, ինչպես նաև Փոքր Կորյունի (էջ 10) և Գանձակեցու մեջ (էջ 15), որոնք Խորենացու տեսիլքը թեև բառացի օրինակում են, բայց չունեն 7 ձայնավորների հիշատակությունը: Վենետիկի հրատարակիչները զուր տեղը բնագրում մտցրել են այդ հետին հավելվածը, որոնց հետևել են մյուսներն էլ անգիտությունը: Եվ այսպիսով մտել է նաև դանազան թարգմանությանց և արտատպությանց մեջ: Ուրախ ենք, որ Արեղյանի հրատարակությունը բնագրից դուրս է գցել այդ հետին հավելվածը և հիշում է միայն ժանոթություն մեջ:

Միայն Հ. Բ. Սարգիսյանն է (Բաղմ. 1897 ապրիլ, հավել. էջ 3), որ պաշտպան է ներկայանում այս յոթը ձայնավորներին: Իր ապացույցն այն է, որ «Մովսէս քերթողհոր քերականական գրուածոց մեջ կհանդիպինք եօթն ձայնաւորաց թուարկութեան՝ զոյգ ընդ բաղաձայնից. ասկէց իսկ կարելի է թե անցած ըլլան պատմագրութեան մէջ. բայց ես կարծեմ թե Մովսէս՝ պէտք է, որ նույն իսկ իր պատմութեան մեջ անորոշ կերպով Մեսրոպբայ ձեռքով յավելեալ տառերու յիշատակութիւն մ'ըրած ըլլար, զոր անոր ընծայուած հնագոյն քերականք, այսպէս և յետոյ Վարդան և Ասողիկ՝ իբրև պաշտպան մեր այբբենարանի ասորական ծագման՝ չգտնելով այդ ձայնաւորաց գոյութիւնը ասորի հին այբբենարանին մէջ, մտածեցին Մեսրոպբայ գիտին ընծայել զայն»:

Այս ապացույցը, ինչպես տեսնվում է, բավական անզոր է: Նախ՝ Մովսէս քերթողի անունով հասած քերականությունը հետին գործ է և անվանապես միայն ընծայված է Պատմագրին: Երկրորդ՝

ենթադրելով իսկ, որ երկուան էլ մեկ հեղինակի գործ լինեն, ի՞նչ կապ մեկի կամ մյուսի մեջ: Մովան քերթողի Քերականությունը տպագրությունք մեջ ընդմեջ չլինելով և Սարգիսյանի գրվածքի մեջ էլ նույն հատվածը մեջ բերված չլինելով, պարզ շփոթանք թե ի՞նչ է ասում Քերականը: Բայց որչափ իմացվում է Սարգիսյանի բառերից, երևում է, որ Քերականության մեջ տառերի պարզ քվարկություն միայն կա. չէ՞ հիշված թե ձայնավոր գրերը Մեսրոպն ավելացրեց հին այբուբենի վրա: Ամեն քերականության մեջ էլ իհարկե պիտի հիշվին լեզվի գրերը, թե՛ ձայնավորները և թե քաղաձայնները, բայց սրանից եզրակացնել, թե ուրեմն հորենացու Պատմության մեջ էլ հիշված էր, որ Մեսրոպը 7 ձայնավորներն ավելացրեց հին գրի վրա, առնվազն դարմանալի ենք գտնում:

Այսպես, ուրեմն, հորենացու մեջ ձայնավորների թվումը հետին և երկրորդական գրչի հավելված է, որ վերացավ նոր հրատարակությունից, ինչպես վերացավ Փարպեցու միջից տեսիլքի ամբողջ հատվածը:

Մեսրոպին մասնակի գյուտ վերագրելու գաղափարը առաջին անգամ ծագում է հայոց մեջ՝ Փ դարում (Ասողկի մոտ): Սրանից հին համարված հիշատակությունները անստույգ են. այսպես Անանիա Շիրակացին (Բազմ. 1848, էջ 248), որին վերագրված Պատմությունը, ինչպես ասացինք, պիտի լինի Կայսերաց պատմությունը: Ալիշանը (Հայապատում Ա 71բ) այս պատմության համար ասում է, թե խորագրում գրված է «ՅԱնդրէասէ և ի Մովսիսէ քերթողահօրէ» քաղուած է և հասնում է մինչև 685 թիվը: հորենացու հիշատակությունը շատ կասկածելի է դարձնում գործը:

Սկզբում Մեսրոպի ավելացրած տառերի թիվը 7 է համարվում, բայց առանց որոշելու, թե ինչ տառեր են: Երկու երեք դար հետո՝ թիվը բարձրանում է 14-ի (ինչպես ունեն Սասնեցին և Վարդանը), սրանք էլ դեռ չեն որոշում տառերի էությունը: Քիչ հետո գալիս են Գանձարանն ու Ոսկեփորիկը, որոնք խարվելով 7 թվի գաղափարաց զուգորդությամբ ենթադրում են, թե Մեսրոպի հնարած գրերը ձայնավորներն են: Վերջապես գալիս է Վարդանագիրքը, որ խայտառակ մի պատմություն է հերյուրում, ինչպես տեսանք վերը:

Խնդիրն այսպես ամփոփելուց հետո, հարցնում ենք. իրավացի՞ է արդյոք մի կողմ գցել հնագույն և գրի գյուտին ժամանակակից պատմիչներին և 600 կամ 800 տարի հետո եկող անձերի պատմածին կարևորություն տալ, ինչպես անում են վերև հիշված նոր քրնիչները, այն էլ կամայարար մեկին կամ մյուսին հետևելով: Եթե խնդիրը ներքին պահանջներ ունենար, այն ժամանակ հնարավոր էր թերևս լսել հետին պատմիչներին. բայց այսպիսի պահանջ չկա: Եթե

Մեսրոպը հասկացավ, որ խաբեության կամ սխալմունքի զոհ է գնացել, թե Դանիելյան գրերը հայերեն չեն, այլ ևս ինչո՞ւ պիտի պահեր այդ ձեռքը: Կորյունը իր գրքի սկզբում գրում է. «Ձաքանագեան ազգին և Հայաստան աշխարհին զաստուածապարգև գորոյն...»: Եթե մեր գրերը Դանիելի ուղարկածներն են և մի քանի հատը միայն Մեսրոպն է գտել, էլ ի՞նչ «ասքանաղյան ազգ», «Հայաստան աշխարհ» կամ «աստուածապարգև գիր»։ Թող սաեր զդասորական ազգին և Միջագետաց աշխարհին զԴանիէլապարգև գորոյն...» և այն ժամանակ ճիշտ կլիներ: Ով որ աչք ունի համեմատելու հայերեն, ինչպես նաև հին վրացերեն գրերը, պարզ կտեսնի, որ սրանք մեկ ոճ, նկարչական մեկ գրութիւն ունեն, հետևաբար և մեկ ձեռքի շնորհք, միևնույն մարդու ձեռակերտն են: Երկու գրութիւն, երկու տարր, մեկը Դանիելյան և մյուսը Մեսրոպյան՝ չկա այնտեղ: Հավելվածների մասին խոսող պատմիչները մի իրողութիւն չէ, որ պատմում են, այլ իրենց բանասիրական մտածողության արդյունքը: Կորյունի և Խորենացու մոտ կարգալուծ, թե Դանիելը ասորի էր կամ թե այբուբենը հունականի հետևողությամբ կազմված էր, սրանից սկսում են եզրակացութիւններ հանել: Հետևցնում են, թե Դանիելյան գրերի թիվը պետք է լիներ ըստ ասորականի 22 կամ ըստ հունականի 24 և կամ երկուսի խառնուրդով 29 (տե՛ս վերը, էջ 442—444): Բայց այս բոլորը անհիմն է:

Պարոնյանը (Երկրագունտ, 1885, էջ 101—103), որ Դանիելյան գրերի անփոփոխ շարունակության կողմնակից է (իր հետ նաև Զարբհանալյան, Հին դպր. պատմ.<sup>3</sup>, էջ 48), բացի Փարպեցու վկայութիւնից՝ բերում է նաև հետևյալ երկու պատճառաբանութիւնները. 1. Հնութիւնը հարգի բան է. մարդիկ ամեն ժամանակ աշխատել են պահել հնութիւնը. այս զգացմունքով Մեսրոպն էլ պիտի պահեր Դանիելյան գրերը: 2. Եթե հայերը այնպես պինդ փարեցան Դանիելյան գրերին, երկու տարի գործադրեցին և շատեր վարժելեցին նրանց, ուրեմն Մեսրոպ անկարող էր անտես անել նրան:

Մեսրոպը հայերեն գիր էր փնտրում և ոչ թե հնութիւն: Պարոնյանը այս պատճառաբանութիւնը տալիս է այն պատճառով, որ կարծում է, թե Դանիելյան գիրը հայերեն է և թե այդ գրերով գրված հայ գրականութիւն կար: Այսպես է նաև Տաղավարյանը. «Մեսրոպը կամեցավ հավատարիմ մնալ հնության, պահել այդ գրերը նույնությամբ, զի ազգային էին և նվիրական...: Եվ ինչու թողոյր այդ ազգային նվիրական գրերն և բոլորովին նորեր գտնելու աշխատեր» (էջ 25—26): Բայց մենք գիտենք, որ Դանիելյան գիրը հայերեն չէ. Մեսրոպն այդ գրով գրված բան հազիվ թե գտած լիներ, կամ եթե գտել էր՝ անմիջապես տեսել ու հասկացել էր, որ



օտար այրուրենի հետ գործ ունի, և այս հանգամանքը միայն բա-  
վական էր, որ իսկույն նեթ դեն գցեր:

Երկու տարվա փորձ ասածը երկու դար չի նշանակում: Նայե-  
լով այն ժամանակի հանգամանքներին, այսօրան կարճ ժամանակի  
մեջ՝ Պանիելյան այրուրենը շատ ոչինչ տարածություն ունեցած պի-  
տի լիներ: Մեսրոպյն իր գրերը 35 տարի տարածեց անխոնջ ջանքե-  
րով: Իր գործը շարունակեցին իր հաջորդներն անդադար և այնուա-  
մենայնիվ մեկ-երկու դար հետո գտնում ենք, որ Տարոնի մեջ դեռ  
Մեսրոպյան գիր չկա և ասորի գրականությունն է իշխում...:

Մեր կարծիքն այն է, որ Մեսրոպը Պանիելյան գիրը բուրբուրվին  
դեն գցելուց հետո՝ իր այրուրենը ամբողջապես ինքը հնարեց:

Այս կետը շոշափող շատ հետաքրքրական մի հարց է առաջադ-  
րում Արեղյանը (Սովետ. գրականութ. 1941, № 2, էջ 46ա).  
— Մեսրոպը եթե հետևել է հունական այրուրենին, ինչո՞ւ նույնու-  
թյամբ փոխ չի առել այն՝ ավելացնելով հայերենի համար նորաձև  
տառեր, — և կամ եթե հետևել է ասորերենին, ինչո՞ւ նույնությամբ  
փոխ չի առել ասորական այրուրենը՝ ավելացնելով այնտեղ պակաս  
տառերը: Այս պարզ հարցումը, սակայն, կարող է բերել մի ուրիշ  
հետևություն. — ուրեմն Մեսրոպը չի հետևել ո՞չ հունական և ո՞չ  
էլ ասորական այրուրենին, այլ վերցրել է ուղղակի Պանիելյան այ-  
րուրենը և ավելացրել պակաս տառերը:

Ամեն մի ազգ, որ գրականության նոր է անցնում և մի ուրիշ  
ազգից տառեր է փոխ առնում, վերցնում է այդ ազգի ամբողջ այ-  
րուրենը՝ ավելացնելով նրա վրա պակաս տառերը: Այսպես պարսի-  
կները փոխ առին արաբներից նրանց այրուրենը՝ ամբողջապես  
և անփոփոխ, պահելով նույն իսկ իրենց լեզվի համար անսովոր ու  
անգործածական հնչյուններ նշանակող տառերը և ավելացնելով  
պարսկերենի այն հնչյունները, որոնք չկային արաբական այրուրե-  
նում: Այս վերջին այրուրենը (պարսկացած արաբերեն) փոխ առին  
թուրքերը՝ դարձյալ անփոփոխ, պահելով ավելորդ ձայները և ավե-  
լացնելով պակասները: Վերջապես հիշենք բուրբուր հվրոպական ազ-  
գերը, որոնք վերցրին լատինական այրուրենը անփոփոխ, իսկ  
իրենց ավելի հնչյունների համար ստեղծեցին ոչ թե նոր տառեր,  
այլ նոր բաղադրություններ, ինչպես՝ գերմ. sch, ch և այլն:

Արդ՝ ինչո՞ւ Մեսրոպը չվարվեց նույն ձևով:

Բարեբախտաբար Արեղյանը նրանցից չէ, որ ընդունում են  
Պանիելյան այրուրենը և տալիս է իր վճռական պատասխանը: —  
Հայաստանը այն ժամանակ բաժանված էր երկու մասի. Արևելյան  
Հայաստան՝ պարսից գերիշխանության տակ, ուր գործածական էին  
պարսկերենն ու ասորերենը, և Արևմտյան Հայաստան՝ հունաց հը-

պատակութեան տակ, ուր գործածական էր միայն հունարենը: Եթե Մեսրոպը փոխ առնէր հունական այբուբենը, դա կարգիւ վեր ու շէր անցնի Արևելյան Հայաստանում, իսկ եթե փոխ առնէր ասորական այբուբենը, դա էլ կարգիւ վեր ու շէր անցնի Արևմտյան Հայաստանում: Մեսրոպը կազմեց բոլորովին նոր (զուտ հայկական մի այբուբեն), որպեսզի արգելադրեց հանգամանքները վերանային և հայերեն դպրութեանը կարելի լինէր մտցնել երկու Հայաստանումն էլ:

Այս բացատրութեանը շատ սրամիտ է, երբ ցույց է տալիս Մեսրոպի քաղաքագիտութեանը: Բայց ես ենթադրում եմ մի ուրիշ պատճառ ևս, որի մասին խոսել եմ վերը. դա է առանձին ազգերի առանձին լեզու և առանձին այբուբեն ունենալու սկզբունքը, որ կար Մեսրոպի հոգեբանութեան մեջ: Ապա թե ոչ Վրաց և Աղվանից այբուբենը հնարելու ժամանակ պատճառ չպիտի ունենար Մեսրոպն առանձին այբուբեն ստեղծելու և պիտի տար ուղղակի հայերեն այբուբենը՝ կարևոր փոփոխութեաններով:

#### Բ. ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՀՈՐԻՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Երբ աշխարհիս վրա գտնված զանազան այբուբենները համեմատենք իրար հետ, նրանց հորինվածութեան մեջ երկու կարևոր կետ կգտնենք, որով այդ այբուբենները զանազանվում են իրարից:

Այս կետերից առաջինը տառաձևերը ամեն դիրքի մեջ էլ նույն կերպով գրելու կամ չգրելու հարցն է: Այբուբեններից ոմանք անշատապակա են, այսինքն՝ շարադրութեան մեջ տառերը անշատ անշատ իրար մոտ շարվում են, առանց նրանք որևէ փոփոխութեան ենթարկելու: Մյուսները կցողակա են, այսինքն՝ շարադրութեան մեջ տառերը իրար են կցվում և այս պարագայում իրենց զանազան մասերից հապավումներ են կրում. այնպես որ տառը միայն առանձին մնացած պարագային է ներկայանում իր ամբողջական ձևով: Օրինակ՝ արաբերեն ( տառը՝ որ առանձին մնացած ժամանակ Ս ձևն ունի, երբ հաջորդ մի տառի կցվի՝ կդառնա Ս ), երբ իրեն մի ուրիշ գիր կցվի՝ կդառնա Ս, երբ երկու տառերի մեջտեղ գտնվի՝ կդառնա Ս, վերջապես ( ա գրի հետ միացած՝ դառնում է Ա: Ավելի բարդ ձևափոխութեաններ էլ կան. ինչպես՝ արաբերեն Ի տառը, որ առանձին լինում է օ, աչ կողմից կցված ձ, ձախ կողմից կցված ձ, երկու տառի միջև ց կամ խ:

Անշատական այբուբենների կարգին են պատկանում հայերենը, վրացերենը, փյունիկերենը, հունարենը, ռուսերենը, լատիներենը և արանից ածանցված բոլոր հիբրոպական այբուբենները: Կցողական

այբուբեններն կարգին են պատկանում ասորերենը, պահլավերենը, արաբերենը և մոնղոլական այբուբենները (մանչու, մոնղոլ, կալմուկ, բուրխասի և այլն):

Երկու դրուժյուններն մեջտնդն են բռնում եթովպական և հրեղկական այբուբենները: Եթովպերենի մեջ ձայնավորները կրճատ ձևով կցվում են բաղաձայնների վրա: Հնդկերենի մեջ անջատ է զըրվում միայն այն բաղաձայնը, որ ձայնավորից անմիջապես առաջ է գտնվում: Իսկ եթե նույն վանկի մեջ այս բաղաձայնից առաջ ուրիշ բաղաձայններ էլ կան, կրճատվում են և իրենց կրճատ ձևերով վրայն վրա կցվում են վերջին բաղաձայնի վրա: Բացի սրանից՝ հնդկերենում ամբողջ բառը կամ ավելի հաճախ մի քանի բառեր միասին՝ վերևի կողմից մի ընդհանուր գծով միանում են, այնպես որ հնդկերեն գրուժյունը միշտ ներկայացնում է հորիզոնաձև զըրված մի ձող, որի վրայից կախված են տառերը:

Պետք չէ կարծել, թե ամեն սեմական այբուբեն կցողական է. ընդհակառակը հնագույն սեմական այբուբենները անջատական էին, ինչպես՝ փյունիկերենը և եբրայեցիերենը: Կցողականուժյունը հետո մտավ սեմականների մեջ: Այս դրուժյան հետևեցին ասորիները, պահլավները, արաբները և սրանց հետևողուժյամբ՝ պարսիկներն ու թուրքերը, աֆղաններն ու բելուջիները: Նույնիսկ զենդական այբուբենը, որ պահլավականից է ձևացած, անջատական դրուժյան է հետևում:

Այն ժամանակ, երբ Մեսրոպը հայերեն գրերը հնարելու հետամուտ էր, շայաստանում գործածական էին թե՛ անջատական և թե՛ կցողական այբուբեններ. այսպես՝ հունարենը անջատական էր, ասորերենն ու պահլավերենը կցողական էին: Եթե այս վերջին երկու այբուբենները միասին առնենք, կարող ենք ասել, թե կցողական դրուժյունը ավելի տարածված էր հայոց մեջ, քան անջատականը: Բայց իմաստուն Մեսրոպը չեսել է կցողականի անպատահուժյունները և անջատականի առավելուժյունները, և հակառակ ավելի տարածված ասորական ու պահլավիկ այբուբենների դրուժյան՝ ընդունել է հունական դրուժյունը: Այսպիսով մենք էլ, ինչպես և մեզ հետ մեր դրացի վրացիները՝ այսօր անջատական այբուբենների լավագույն շարքի մեջ մեր տեղն ունենք:

Երկրորդ կետը, որով աշխարհիս դանազան այբուբենները դանազանվում են իրարից՝ իրենց հորինվածության մեջ, ձայնավորների գործածության հարցն է: Հայերեն, վրացերեն, հունարեն, ուսերեն, լատիներեն և սրանից ածանցված բոլոր այբուբենները ձայնավորները նշանակում են, իսկ սեմական այբուբենները չեն գրում

ձայնավորները: Սրանք սովորաբար բառի բաղաձայններն են միայն նշանակում և ընթերցողին են թողնում գուշակել ձայնավորները: Այսպես, օրինակ՝ երբայցերեն փասեխ բառը գրվում է 𐌒𐌔𐌆, այն է՝ փախ: Ընթերցողին է մնում գուշակել ա և ե ձայնավորները: Արաբերեն ܐܡܡܘ Մուսամմեդ բառը տառացի կարդացվում է մմմդ, իսկ ու, ա, է ձայնավորները, ինչպես նաև երկրորդ մ բաղաձայնը՝ կարդացողը պիտի գուշակի: Որոշ պարագաներ կան միայն, երբ ձայնավորն էլ նշանակվում է. այն է՝ երբ ձայնավորը երկար է կամ բառի սկզբում և կամ վերջումն է գտնվում. սրանք էլ շատ անկատար կերպով: Օրինակ՝ ասորերեն ܐܘܪܘܐ Էմբու բառի մեջ, իսկապես գրված ենք գտնում ամրա. ուրեմն առաջին ձայնավորը պետք է հասկանալ է, վերջինը՝ ու: Ավելի հետին ժամանակի գործ է ձայնանիշների գործածությունը: Սեմականները իրենք էլ տեսան, որ այս դրուժյամբ՝ բառերը, մանավանդ օտար անունները, շատ դժվար էր կարդալ, ուստի մտածեցին հնարել ձայնավորների համար մի քանի նշաններ, որոնք բաղաձայնների վերևը կամ ներքևը դրվելով՝ ցույց են տալիս, թե այն բաղաձայնից հետո ի՞նչ ձայնավոր պետք է կարդալ:

Պահլավերեն այբուբենն էլ՝ իբրև սեմականի հարազատ դավակ՝ ժառանգել էր այս գրությունը: Բայց այս լեզվի մեջ գրությունը այնպիսի խայտառակ վիճակի էր հասած, որ ընթերցումը կատարյալ շարձարանք էր: Պահլավերենում ո՛չ միայն շէին գրվում ձայնավորները, ո՛չ միայն տառերը իրար կցվելով ձևահան էին լինում, այլ և գրերը մաշվելով-մաշվելով այնպիսի վիճակի էին հասել, որ շատ տառեր իրար նման էին. օրինակ՝ գ և դ միևնույն ձևն ունեին. վ, ն, լ, բ, ու միևնույն ձևն ունեին. նույնպես նաև հ, խ, ա: Այս խառնակությունը այն աստիճանին հասավ, որ պարսիկները իրենք էլ ձանձրացան և հնարեցին նոր անջատական այբուբեն, ուր ձայնավորները գրելու դրուժյունը ընդունվեց և ամեն մեկ տառ մեկ հնչյուն ստացավ: Այս էր զենդական այբուբենը:

Մեսրոպը, որ ամեն օր աչքի առաջ տեսնում էր անձայնավոր այբուբենների պատճառած դժվարությունները, ընթերցանության այն բազմաթիվ սխալները, որ հայ նորուսները անում էին ասորերեն կամ պահլավերեն գրելու կամ կարդալու ժամանակ, իմաստուն գտնվեց այստեղ էլ հետևելու հունական այբուբենական դրուժյան՝ թե՛ հայերենի և թե՛ վրացերենի համար, որով և տվավ մեզ այս կողմից էլ կատարյալ այբուբեն: Ա՛յս է ցույց տալիս նաև Կորյունի կարճ, բայց զորեղ վկայությունը. «յօրինէր սիղոբայիւք և կապօք և ձայնատուր նշանօք»:

Սրա նման էլ Փարպեցին ասում է «կարգադրութեան գրենոյս և

հնգնային ուղղաձայնութեան... գաթութային գաղափար ըստ  
անսայրափութեան յունիէն (Փարպ. Եոր. տպ. 15—16): Այս մասին  
ալմելի ընդարձակ տե՛ս ստորև:

#### Գ. ՄԵՐՈՂՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Գրութեան ուղղութիւն ասելով հասկանում ենք այն հանգա-  
մանքը, թե արդո՞ք գրե՞րը իրար հաջորդած ժամանակ՝ նրանց ըն-  
թացքը աջից դեպի ձախ է ուղղվում, թե՞ ձախից դեպի աջ:

Այբուբեններից ոմանք հետևում են աջակողմյան ուղղութեան,  
այսինքն գրե՞րը շարվում են ձախից դեպի աջ, ինչպես է հայերենը,  
ուրիշներ հետևում են ձախակողմյան ուղղութեան, այսինքն՝ գրե՞րը  
շարվում են աջից դեպի ձախ, ինչպես է պարսկերենը:

Սրանցից գուրս կա նաև վերևից ներքև գրելու ուղղութիւնը,  
ինչպես են շինարենը, ճապոներենը, մոնղոներենը: Այս լեզուների  
մեջ՝ գրողը սկսելով թղթի վերևի աջ անկյունից՝ գրե՞րը տակե տակ  
շարում է, հետո անցնում է ձախ կողքի տողին և այլն. այսպես ի-  
րար կողքի ուղղահայաց դիրքով շարվում են տողերը՝ ընթանալով  
աջից դեպի ձախ: Ընթերցողը կարողալու ժամանակ թուղթը պատկեց-  
նում է դեպի ձախ, այնպես որ ուղղահայաց տողերը դառնում են  
հորիզոնական, և աջքով աջից ձախ դիմելով և տող առ տող ներքևից  
վերև բարձրանալով կարդում է գրութիւնը: — Գրութիւնը վերջա-  
նում է այնտեղ՝ որտեղ սկսվում է մերը:

Ամբողջութեան համար հիշենք նաև գրութեան այն տարօրինակ  
ձևը, որ գործ է ածում Հյուսիսային Աֆրիկայում ապրող բերբերա-  
կան մի ժողովուրդ. — սկսում են թղթի ճիշտ կենտրոնից և դեպի  
ձախ թեքվելով կազմում են խիստ զանազան շրջանակներ իրարից հավա-  
սար հեռավորութեամբ, հետզհետե հեռանալով կենտրոնից:

Աշխարհիս ամենահին գրութիւնները հետևում են աջակողմ-  
յան ուղղութեան. այսպես են ասորեստանյան, բաբելական, հին  
պարսկական, ինչպես նաև խալդյան բեռազրե՞րը: Այբուբենի տա-  
ռական գրութիւնը հնարող փյունիկեցիք ընդունեցին ձախակողմ-  
յան գրութիւնը, որոնց հետևեցին նաև մյուս բոլոր փոխառու ազ-  
գե՞րը: Այսպես՝ եբրայեցիք, ասորիները, պարսիկները, արաբները և  
այլն: Հույներն էլ նախապես ընդունել էին ձախակողմյան գրութիւ-  
նը. սրանց մեջ հետո առաջացավ bustrophêdon կոչված գրութիւ-  
նը, ուր գրութիւնը մեկ տող զնում էր աջից ձախ, հաջորդը՝ ձախից  
աջ և այսպես շարունակաբար: Ն. Ք. 5-րդ դարում այս գրութեան տեղ  
ընդունվեց աջակողմյան ուղղութիւնը, որին հետևեցին նաև յատին-  
ները և սրանից ածանցվող բոլոր այբուբենները:

Այն ժամանակ, երբ Մեսրոպը իր ազգի համար մի այլուբեն հնարելու հետամուտ էր, հայերը երեք լեզու էին գործածում. ասորերեն, պահլավերեն և հունարեն: Սրանցից առաջին երկուսը աջից ձախ էին գրվում, միայն հունարենը ձախից աջ էր: Ենթադրելով, թե երկու լեզվի գործածությունը միասին՝ ավելի շատ պիտի լիներ քան միայն հունարենինը, հավատալով նույնպես պատմիչների խոսքին, որոնք ցույց են տալիս, թե ասորերենը շատ ավելի տարածված էր Հայաստանում քան հունարենը, կարող ենք հետևեցնել, որ հայերը ավելի վարժված էին աջից ձախ գրություն, քան թե ձախից աջին: Սակայն Մեսրոպը շահտեց այս ձևին, թողեց ավելի տարածված գրությունը և հունարեն գրության ոճը ընդունեց:

Պատմիչները հայերեն գրության ուղղության վրա ոչինչ չեն ասում, ո՛չ էլ նոր քննիչներից որևէ մեկը այս մասին հարց է հարուցել: Բայց դարավոր գործածությունը ցույց է տալիս, որ ուրիշ տեսակ չի եղել:

Չուր կասկած է միայն այն, որ Հարությունյանը (Հայոց գիրը, էջ 310) հայտնում է, որ իբր թե «մեր նախնիքը պահած լինեին սեմիթական գրի ուղիղ ձևերն և գրելու ուղղությունը մինչև սուրբ Մեսրոպ», և սպասում է, որ նախաքրիստոնեական մի արձանագրություն գտնվելով՝ դրականապես ցույց տար, թե հին հայերը աջից ձախ էին գրում: Մենք որ նախամեսրոպյան գրականության գոյության մասին ամենևին հավատ չունենք, բնական է, որ չենք կարող ընդունել նաև այսպիսի անհիմն մի ենթադրություն:

Գրության ուղղության իբրև բնական հետևություն՝ կա նաև գրերի ուղղությունը:

Երբ առենք օրինակի համար երկու հայերեն տառ՝ Ա և Յ, և սրանց դիրքն ու գրության ձևը համեմատենք իրար հետ, կտեսնենք որ Ա տառը իր երեսը դարձրել է դեպի աջ, իսկ Յ՝ դեպի ձախ. Ա գրելու ժամանակ՝ գրիչը ձախից դեպի աջ ենք շարժում, իսկ Յ գրելու ժամանակ՝ աջից դեպի ձախ: Սա կոչվում է գրերի աջակողմյան կամ ձախակողմյան ուղղություն:

Փյունիկերեն այբուբենը, որ աշխարհիս հնագույն տառական այբուբենն է, առհասարակ հետևում է ձախակողմյան ուղղության. այսպես, օրինակ՝ Գ ք, Կ ք, Կ ք, Կ ք, Կ ք, Կ ք, Կ ք և այլն և այլն դարձած են դեպի ձախ: Հույները փյունիկեցիներից փոխ առնելով այբուբենը՝ գրերին տվին աջակողմյան ուղղություն. այսպես՝ վերահիշյալ գրերը հունարենի մեջ դարձան Β, Γ, Ε, Κ, Ρ ևն: Սրանից ժառանգեցին նաև լատիներենն ու ռուսները: Եվ այսօր հունարենի ու լատիներենի մեջ չկա ո՛չ մի տառ, որ ձախակողմյան ուղղություն ունենա:

Մյուս այբուբեններից ասորականը, երբայականն ու պահլավականը հետևում են փյունիկերենին և բոլորն էլ ունեն ձախակողմյան ուղղութիւն:

Հայերեն այբուբենը ներկայացնում է երեք ձև.

ա) Աջակողմյան ուղղութիւնով գրեր. Ա, Բ, Ծ, Է, Ը, Ք, Ի, Լ, Խ, Կ, Զ, Մ, Ն, Ծ, Թ, Բ, Ի, Ք (18 տառ).

բ) Միջին դիրքով գրեր. Ս, Ճ, Ո, Ջ, Ս, Տ, Փ (8 տառ).

գ) Ձախակողմյան ուղղութիւնով գրեր. Գ, Գ, Ձ, Ճ, Ձ, Ղ, Տ, Ձ, Պ, Վ (10 տառ):

Ինչպէս տեսնում ենք, մեր գրերի ճիշտ կեսը նույնպէս աջակողմյան է, որոնց վրա եթէ ավելացնենք նաև միջին դիրք ունեցող 8 տառերը, կտեսնենք, որ միայն շատ փոքր մի մասը (10 գիր) մընում է ձախակողմյան ուղղութիւնով: Սարգիսյանը, որ առաջին անգամ երևան է հանել մեր ձախակողմյան գրերի հարցը, կարծում է, թէ Մեսրոպը՝ հայ այբուբենի կազմութիւնն ժամանակ՝ փյունիկ կամ ուրիշ սեմական մի այբուբեն է ի նկատի ունեցել (Բազմ. 1897, ապր. հավել. էջ 5):

Սակայն, ինչպէս քիչ հետո ինքն էլ է ասում, այս բանը կարեւորութիւնից դուրկ մի հարց է: Հունարենը և լատիներենը, որոնց գլխազիր այբուբենում ձախակողմյան ո՛չ մի տառ չկա, ընդհակառակը նոտր գրութիւն մեջ ունեն բազմաթիւ ձախակողմյան տառեր. ինչպէս, հունարեն ծ, դ, ծ, լ, լատիներեն ց, յ, զ, ց, շ: Ռուսերեն այբուբենում, որ հունականից է ընդօրինակված, գտնում ենք Յ, Ո, Մ, Վ, Յ, Ձ, Գ գրերը: Ընդհակառակը՝ սեմական այբուբեններում կան աջակողմյան ուղղութիւնն հետևող տառեր. ինչպէս՝ զենդերեն՝ Ա, Է, Ե, Ե, Ե, Ե, Ե, Ե և մինչև անգամ փյունիկերեն՝ Կ ա, Բ ծ, Լ Ի ա, Գ ք:

Այս բոլորից հետևում է, որ այբուբենի աջակողմյան կամ ձախակողմյան ուղղութիւնը՝ ընդհանրապէս պետք է հասկանալ, և թէ ձախակողմյան ուղղութիւնն հետևող այբուբենների մեջ էլ կան աջակողմյան տառեր: Մեսրոպը այս մասին կա՛մ առանձին մտադրութիւն չէ ունեցել, և կա՛մ եթէ ունեցել է, առավելութիւնը աջակողմյան ուղղութիւնն է տվել: Յուրաքանչյուր գրի մանրամասնութիւնը կտեսնենք հետո՝ գրերի ձևական համեմատութիւնն մեջ:

Ինչ որ ասացինք հայերենի համար՝ նույնը պետք է հասկանալ նաև վրացերենի համար: Այստեղ էլ ունենք՝

ա) Աջակողմյան գրեր. Լ ա, Ն գ, Բ ճ, Թ թ, Ղ ի, Կ կ,  
Ի ն, Օ, ո, Ս ս, Ե ս, Բ տ, Ի չ, Ը ց, Բ ծ, Ը ճ, Լ լ, Ը ճ,  
բ) Ձախակողմյան գրեր. Վ բ, Ո գ, Ղ ե, Ի վ, Ե լ, Ծ ճ,  
Տ ճ, Վ յ, Ը լ, Վ լ, Վ ղ, Կ շ, Ժ ճ, Ծ թ, Ը լ, Ը ճ

գ) Միջին դիրքով գրեր. Ծ դ, Փ փ, Վ ք, Ո ղ, Ը լ:

Մեծամասնությունը աջակողմյան ուղղութիւնում է:

Լսել եմ, թե Շամախում մի եկեղեցու ավերակները փորելու ժամանակ գտնվել է հայերեն մի արձանագրություն, որի գրությունը աջից ձախ էր և գրերը հակառակ կողմն էին դարձած: (Այս դիրքի ճիշտ պատկերը ունենալու համար կարելի է մի թղթի վրայի գրությունը թղթի հետևի կողմից դիտել կամ հայելու մեջ ցույց տալով կարդալ):

Միայն Սևանում մի խաչքարի վրա կա շրջված մի արձանագրություն, որ հիշեցնում է վերևինը: Այս արձանագրությունը 1826 թվին օրինակել է Ալիավաղ գերմանացին, որից առնելով Ալիշանը (Սիսական, էջ 79) հրատարակում է նմանատպութիւնում:

Ընթերցողը անշուշտ այլալեզու գրություն է կարծում: Բայց Ալիշանը սրամիտ կերպով լուծել է հանելուկը և տառերը գլխավայր շրջելով վերածում է՝

### ԳԵՐԶԿՊՏՔ ՅԱՂ

որ և կարդում է (առաջին երեք տառերից հետո)՝

ՁկարաՊեՏ Քաշանայ ՅԱՂօթս աղաչեմ՝

(Ըստ իս պետք է կարդալ յիշեցեմ, որովհետև Կարապետ հայցական է: Առաջին երեք գրերն էլ թերևս ցույց են տալիս թվականը, որից պարզ է միայն վերջին Բ = 2 թվանշանը):

Սակայն թե՛ այս և թե՛ նախորդը ծածկագրութիւնաց ոճին պատկանող գրություններ են և շատ մասնավոր դիպվածներ: Արձանագրողը այսպես է արել նրա համար, որ հետին խաղախողներ գրվածքից մի բան չհասկանալով՝ անունը կամ հիշատակը չընջեն:

Նման մի բան գտնում ենք նաև Սկևռայ վանքի «Հանգիստ նըշխարաց սրբոց» կոչված մասնատուփի վրայի արձանագրութիւն մեջ (տե՛ս Ալիշանի Սիսականը, էջ 107—112), ուր Հեթում թագավորի պատկերի մոտ, իբրև նրա բերնից բխած՝ կարդում ենք հետևյալ տողերը. ԲԱՐԵՆԱԻՍԵԱՅ ՄԱՅՐ ԱՅ ԱՆՃԱՌ ՄՆԵԼՈՅ Ի ՔԵՆ ՈՐԴՈ



ՎԱՍԸ ԿԱՄԱՅ ԻՐԻ ԶԱՇՏԵԼՈՒ: ԸՆԴ ՄԱՌԱՅՍ ԻՐՐՈՏ ԶԵՔՄՈՒ: Սրա մեջ «բարեխաւսե» բառի թե՛ գրութիւնը և թե՛ գրերը ձախակողմյան ուղղութիւն են հետեւում, այսինքն աչից ձախ են գրված և տառերն էլ շքեղած՝ դեպի ձախ են դարձած: Այս բանը գրողի կամ փորագրիչի մասնավոր բնահանուրի արդիւնքն է և գործ շունի բնդհանուր գործածութիւն հետ:

#### Գ. ԳՐԵՐԻ ԶԵՎԸ ԵՎ ԵՐԱՆՑ ԵՎԳՈՒԹՅԸ

Գրերի ուսումնասիրութիւն մեջ ամենազխաւոր խնդիրը գրերի ձևն է: Ինչպե՞ս հնարեց Մեսրոպը հայերեն 36 գրերի պատկերը. իրանի՞ց հնարեց բոլորը, թե՛ ուրիշ այբուբենների օրինակով կազմեց նրանք, և հատկապէս ո՞ր գիրը ո՞ր այբուբենից:

Մեր պատմիչների մոտ այս առթիվ վստահելի տեղեկութիւն չենք գտնում: Կան մի քանի ակնարկութիւններ, բայց զրանք կամ անստույգ են և կամ ուրիշ բան են ակնարկում: Ահա ինչ որ գրտնում եմ պատմիչների մոտ այս մասին:

«Երանելին Մաշտոց հանդիպեցուցանէր դհայերէն աթուօթայան ըստ կարգման սիւովբայիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ զաթուօթայիցն զազափար, ըստ անսայթարութեան լունին:... Կարգեալ այնուհետև, Փրկչին առաջնորդութեամբ, զգիր գրենոյն հայերէնի և հելլենացին ուղղեալ յօրինուածս...» (Փարպ. 16): «Ենտեղձ զնշանագիրս մեր հանդերձ Լոփանոսիս, կերպաձևեալ զգիրն Մեսրոպայ առձեռնպատրաստ փոխադրելով զհայերէն աթուօթայան ըստ անսայթարութեան սիւղարայից հելլենացոց» (Խոր. Գ. ծգ): Սրա հետ նույն է Փոքր Կորյունը (էջ 11). «Փոխադրելով ըստ հայերէն ըստ անսայթարութեան սիւղարայից հելլենացոց»: — «Եւ առեալ եստեղձ զնշանագիրսն մերոյ լեզուիս՝ հանդերձ Ռուփինոսի իմաստասիրան: Եւ նախ յղեցին զԼոսձ գիրն ի հայերէն այբուբենսն և ապա զթերին լցին աստուածատուր շնորհօքն» (Յայմ. տրէ 17 = Նոյ. 25):

Խորենացու և Փոքր Կորյունի ասածը ա՛յն է, թե հայերեն գրերը հունարենի սձով էին ո՛չ թե ձևի կողմից, այլ ընթերցանութիւն: Ասորերենի և պահլավերենի մեջ, ինչպէս գիտենք, ձայնավորներ չգործածվելով՝ ուղիղ (անսայթար) ընթերցանութիւն կարելի չէ. բայց հունարենի մեջ այսպէս չէ, որովհետև ձայնավորներ գործածելու սովորութիւնը կա: Մեսրոպը մեր այբուբենի մեջ ընդունեց հունական դրութիւնը, ձայնավորները նշանակեց, որով ընթերցանութիւնը եղաւ ուղիղ (անսայթար):

Փարպեցու գրածը ավելի մոլթ է. այստեղ ակնարկութիւն կա գրերի շարքի մասին (ըստ կարգման սիլովբայիցն Յունաց) և ձայնավորները գրելու գրութեան մասին (ըստ անսայթաքութեան Յունին). բայց թե արդո՞ք արութայիցն գաղափար և հելլենացիէ ուղղեալ յօրինուածս հատկապէս գրերի նյութական ձևն են ակնարկում՝ հայտնի չէ:

Այստեղ կարևոր է հիշել Մարկվարտի մի նոր մեկնութիւնը (էջ 33), որով Փարպեցու անսայթաքութիւն բառը հասկանում է գրերի անջատական դրութիւնը: Մա մի նոր իմաստ է, որ անծանոթ է թե՛ հին պատմիչներին և թե մեր նոր հայկաբաններին: Սրանք բոլորն էլ անսայթաքութիւն բառով հասկանում են «ուղիղ ընթերցանութիւն», ակնարկելով ձայնավորները գրելու դրութիւնը: Սրա համար է, որ հին պատմիչներից ոմանք հատկապէս հիշում են յոթ ձայնավորների հավելումը, որով մեռյալ տառերը շունչ առան: Արդեն բառի կազմութիւնն էլ ուրիշ բան չի կարող ցույց տալ: Առանց սայթաքելու, առանց սահելու, առանց սխալվելու ասելով՝ ուղիղ ընթերցանութիւն կարելի է հասկանալ: Այս բանը հաստատում են նաև բառի գործածութեան հանգամանքները: Խոր. Գ. ծգ գրում է. «Փոխադրելով զհայերէն աթութայսն ըստ անսայթաքութեան սիւղաբայից հելլենացուց»: Սիւղաբայ՝ հունարեն syllabê «վանկ» բառն է և չի նշանակում «տառ». հմմտ. նաև Կոր. էջ 10. «Եւ անդ վաղվադակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինէր սիւղոբայիւք և կապօք», ուր կապ բառի հարադրութիւնը ցույց է տալիս թե սիւղոբայ ունի «վանկ» նշանակութիւնը: Արդ՝ երբ ասվում է «վանկերի անսայթաքութիւն», բնական է թե հասկացվում է «ուղիղ ընթերցանութիւն». անջատական դրութիւն նշանակելու համար՝ պետք է ասվեր գոնե «գրերի անսայթաքութիւն»: Փարպեցին՝ որ գործ է ածում անսայթաքութիւն բառը, մի քիչ հետո միտքը բացատրում է մի ուրիշ բառով, որով ամեն ինչ պարզվում է: «Սահակայ դիւրահնար, ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրենոցս և հեգենային ուղղաձայնութեան» գրեթե թարգմանութիւնն է ըրտ կարգման սիլովբայիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ զաթութայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունին» հատվածի: Ուղղաձայնութիւն բառը այլևս տարակույս չի թողնում, որ խնդիրը գրերի հնչման և ո՛չ թե ձևի մասին է:

(Փակագծի մեջ ավելացնենք, որ Մարկվարտն իր տված այս նշանակութեան վրա միայն հիմնվելով՝ եզրակացնում է, թե Դանիելյան գիրը կցողական գրութեան էր հետևում, որ Մեսրոպը վերածել է անջատականի):

Մարկիզարտն իր տված իմաստը հաստատելու համար օգնական է առնում նաև Փարպեցու մի ուրիշ խոսքը. «Մեք որ կամքս առաջի բո, հանդերձ երանելիան Մաշթոցի, զոր զարթոյց աստուածայինն շնորհ ի ցանկութիւնս այս՝ կարգել զվարդնուցն գրեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր»: Շարագիր բառը Մարկիզարտը հասկանում է «իրար կցված գիր»: Բայց այս բանը բոլորովին անհարմար է և մինչև անգամ Մարկիզարտի ուզածի հակառակն է ապացուցում: Փարպեցին ասում է, թէ «Հին շարագիր տառերը ամենևին մեկը գործածած չէր. և միայն Մեսրոպը գործածեց»: Նշանակում է թէ Մեսրոպյան գիրը նույն է հին շարագիր տառից» հետ. և որովհետև Մեսրոպյան գիրը կցողական չէ, ուստի հին շարագիր տառերն» էլ կցողական չեն: Բացի սրանից շարել և կցել նույն բանը չեն. շարագիր տառից կարող է նշանակել միայն «գրերի շարք, իրար մոտ շարված գրեր, շարագրութիւն» և ո՛չ թէ «կցված գրեր»: Վերջապես տառից սեռականը չի թողնում որ շարագիր բառը իր ածական առնենք: Իսկ եթէ իրը գոյական առնենք, ինչպես որ է իրոք, այն ժամանակ չենք կարող տալ նրան «կցված գիր» նշանակութիւնը, քանի որ զիր բառը արդեն մոտին կա. ճիշտ ինչպես որ չենք կարող ասել զերկարագիրս տառից, զրոլորագիրս տառից, զնտարագիրս տառից և այլն: Ըստ իս, շարագիր բառն ևս պարզապես նշանակում է «տառ», ինչպես մեկնում է նաև Նոր Հայկազյան բառարանը, որով կունենանք սեռականով ավելագրութիւն սովորական ձևերից մեկը: Այս պատճառով կարծում եմ, որ բառը պետք է ուղղել նշանագիր: Փարպեցու այս կտորը փոխ է առել նաև Խոր. Գ. ծք, ինչպես նկատում են Նոր Հայկազյան բառարանը և Մարկիզարտը: Արդ՝ թեև Վենետիկի հրատարակութիւն բնագրում այստեղ գրված է շարագիր, բայց 6 ձևագրերից միայն երեքը ունեն շարագիր, իսկ երեքը նշանագիր, ինչ որ ապացուցանում է մեր կարծիքը: Մարկիզարտի ենթադրած իմաստը տալու համար՝ պետք էր գտնել ասել զշարագիր տառն:

Զգտնելով ոչինչ մեր մատենագիրների մոտ հայերեն գրերի ձևի ծագման մասին, ստիպված ենք ուրեմն մեր դատողութիւններով լուծել հարցը:

Թեև աշխարհում 1500 լեզու կա, բայց այս բոլորը իրենց սեփական այբուրենը չունեն: Նախ լեզուների մեծ մասը անգիր է, երկրորդ՝ շատերը զործ են ածում մի ուրիշ աղգի կամ լեզվի այբուրենը: Ամենատարածված այբուրենն է լատինականը, որ զործ են ածում Եվրոպայի գրեթէ բոլոր աղգերը (բացի արեւելյան Սլավներից և Հույներից), ինչպես նաև Ամերիկացիք: Երկրորդն է արաբական այբուրենը, որ զործածում են բոլոր մահմեդական ժողովուրդները:

Ծրրորդն է հնդկական այբուբենը, որ տարածված է հարավային Ասիայի զանազան ժողովուրդների մեջ: Այնպես որ աշխարհիս հին և նոր բոլոր այբուբենների թիվը պատվում է հարյուրի շուրջը:

Շատ ազգեր, ինչպես ասացինք, սեփական այբուբեն չունեն և գործ են ածում ուրիշ մի լեզվի այբուբենը անփոփոխ: Ուրիշներ գործ են ածում օտար մի այբուբեն, ավելացնելով նրա վրա մի քանի նոր տառեր. այսպես պարսիկները, տաճիկները, աֆղանները և այլն, որոնք գործ են ածում արաբական այբուբենը՝ մի քանի տառի հավելումով: Ծրրորդ տեսակին են պատկանում այն այբուբենները, որոնք թեև մի ուրիշից են կազմված, բայց այնքան են փոփոխված, որ ստացել են սեփական անկախ այբուբենի երևույթ. այսպես են սլավականը և դպտիականը, որոնք կազմված են հունականից և նույնիսկ հունականը, որ ծագել է փյունիկական այբուբենից:

Թեև այժմյան արևմտյան աշխարհում տիրապետում է միևնույն այբուբենը (լատինական) գործածելու սկզբունքը, բայց այդպես չէր հին արևելյան աշխարհը: Այստեղ տիրապետում էր այն գաղափարը, թե ո՛չ միայն ամեն մի ազգ, այլ նույնիսկ ամեն մի կրոն կամ դավանութուն, պիտի ունենար իր սեփական անկախ այբուբենը: Այսպես Սոգդիացիք ունեին երեք տարբեր այբուբեն՝ համաձայն իրենց դավանանքի. նեստորական, մանիքեական և բուդդայական: Ասորիները՝ նեստորական և յաղուբի գործ են ածում մի քիչ տարբեր այբուբեններ: Այսօր էլ Մարոնիները, թողած ասորական ու արաբական այբուբենը, գործ են ածում քարշունի այբուբենը: «Պետք չէ խստիվ դատապարտել այս երևույթը, ասում է Պետերսը (Revue des ét. arm. y, 228): «Շատ ժամանակ չկա, որ տեսանք թե ի՛նչպես ոչ հետամնաց մի ժողովուրդի մեջ, շատ բարձրաստիճան մարդիկ համառոտցին պահել առողջապահական տեսակետից աչքերին վնասակար մի գրութուն և շուգեցին թողնել թեկուզ ամբողջ ազգը կանոց կրելու պարտադրելու գծով»:

Ազգային լեզու, ազգային այբուբեն.— այս էր հին սկզբունքը:

Այս սկզբունքի հետևանքով էր, որ Մեսրոպը դեն գցեց Դանիելյան այբուբենը և երեք հարևան ու եղբայր ազգեր (հայ, վրացի և աղվան) առանձին առանձին այբուբենի տեր եղան: Հենց այս երեք այբուբենների համեմատութունը, որոնք թեև կազմված են նույն ոճով, բայց տարբեր ձևերով, բավական է հայտնաբերելու Մեսրոպի սկզբունքը: Նա շուգեց հետևել ո՛չ մի այբուբենի և հնարեց առանձին տառաձևեր, աշխատելով նույնիսկ հեռանալ բնատուր ձևերից, որպեսզի թաքցնի նույն տառերի ծագումը կամ աղբյուրը: Թերևս այստեղ կար նաև որոշ քաղաքագիտութուն. այն է՝ խորթ չըրևալ

պարսիկ, հուն և ասորի ազգերին, և՛՛ն սրանցից մեկնումեկի այ-  
բուրենին հետեած լինեմք:

Հայ գրերի մեր ծագման մասին արդի քննիչները իրարից շատ  
տարակարծիք են:

Ահա մասիկ արտահայտված կարծիքների ցուցակը՝ հեղինակ-  
ների ժամանակագրական կարգով: Սրանցից ոմանք ասված են  
Պանիելյան գրերի համար. բայց որովհետև նրանց հեղինակները  
Մեսրոպյան և Պանիելյան գրերը միևնույն բանն են համարում, ուս-  
տի միասին ենք առել: Տեղեկություններից մի քանիսը քաղել եմ  
Հարությունյանի Հայոց գրից, ուր հիշված են նաև մի քանի ուրիշ  
հեղինակների կարծիքները. բայց սրանք այնքան աննշան բաներ  
են, որ մինչև անգամ ավելորդ է հիշատակել:

ա) Schröder, Thesaurus ling. arm. I (էջ 33), դնում է հունա-  
րենից:

բ) Չամչյանն ընդունելով, որ մեր բոլոր գրերը Մեսրոպի հնա-  
րածն են, առանց բացատրության ընդունում է նաև, որ Մեսրոպը  
այդ գրերի հորինման մեջ մի ուրիշ այբուրենից չի ազդվել:

գ) S. Wahl, Allgemeine Geschichte der morgenländischen  
Sprachen und Literatur (էջ 613), մասամբ հունականից և մա-  
սամբ էլ պարսից ու ասորց այբուրենից:

դ) Gatterer, Abriss der Diplomatik (էջ 46), դնում է հունարե-  
նից:

ե) Fr. Kopp, Bilder und Schriften der Vorzeit (1819, II, էջ  
361—367), ծիծաղելի է գտնում հայկական այբուրենը հունականից  
հանել և դնում է պահլավերենից, մի քանի տառ էլ զպտիական ու  
եթովպական այբուրենից:

զ) Ռումմել, Allgemeine Enzykl. der Wiss. und Künste von  
Ersch und Gruber (Հայպիգ 1820, հտ. V, էջ 360), դնում է հունա-  
կանից:

է) Saint-Martin, Hist. du Bas-Empire (V, էջ 322, 323, ծան.  
1), Պանիելյան գրերը հունականին նման է գտնում, իսկ Մեսրոպի  
ավելացրած նոր գրերը զենդ ու պահլավ գրերին նման է գտնում:

ը) Klaproth, Aperçu de l'origine des diverses écritures de  
l'ancien monde (Paris 1832, (արտատպված Courtin-ի Encyclope-  
die moderne-ից), էջ 69) հայ գիրը համարում է Պանիելյանից, ճո-  
խացած նոր հավելումներով, հատկապես և և մ՝ դպտիերենից:

ր) Ինճիճյան, Հնախո. (Գ. 77 ծան.), չի ընդունում, որ Մեսրո-  
պը հունարեն գրերի ձևը օրինակած լինի, որովհետև այս պարս-  
գային տեսիլքի կարիք չէր մնա, ասում է, իսկ էջ 74՝ ձայնավոր-  
ները համարում է հունարենից:

ժ) E. Boré, JAs. Paris 1836 (էջ 214, ծան. 1), ղենդ և ասորի  
այբուբենից:

ժա) Վինդիշման, Die Grundlage der Arm. (էջ 5—16, 24),  
ղնում է հունարենից և ասորերենից:

ժբ) Büttner, Vergleichungstafeln der Schriftarten verschie-  
dener Völker, (I. էջ 8 և II, էջ 25—26), հին պարսկերենից:

ժգ) Լեպսիուս, Standard Alphabet (էջ 133), հունարենից:

ժդ) Ստ. Նազարյան, Հիւսիսափայլ (1860, էջ 248), քաղղեա-  
փան, ասորի, հույն, հին պարսկական կամ ղենդի ծագումից:

ժե) էմին (ИЗСЛ. И СТАТЬИ, Մոսկուա 1896, էջ 222) մերժում  
է որևէ նմանութիւն հայ և ղանդիկ գրերի միջև, որովհետև՝ նախ՝  
տառաձևերի նմանութիւն չկա, երկրորդ՝ ղանդկերեն գրերի թիվը  
մերից տարբեր է, երրորդ՝ ղանդկերենը շատ ավելի հարուստ է ձայ-  
նավորների կողմից, քան հայերենը: Հունարեն այբուբենի համար էլ  
«գրեթէ նույն բանն է» ասում է էմին և սրանով ծագումն անորոշ է  
թողնում:

ժզ) Պատկանյան (Recherches sur la form. de la langue arm.  
148, 149, 151) համարում է մի անգամ արամեականից, մի անգամ  
էլ իրանական ծագումից:

ժէ) Müller, Über den Ursprung der arm. Schrift (SWAW  
48, 438), ղնում է արամեական ա՛յն այբուբենից, որից ձևացել է  
նաև պահլավական այբուբենը: Գրեթէ նույն բաներն է կրկնում նաև  
WZKM (1888, էջ 245—248, թրգմ. Հանդ. ամս. 1889, 86—87), ուր  
ավելացնում է թե յոթ ձայնավորները հունականից են: Մի երրորդ  
հոդվածի մեջ (WZKM 1890, էջ 284—288, թրգմ. Հանդ. ամս.  
1891, 68—70) հայերենի 22 Դանիելյան տառերը ծագած է համա-  
րում ասորական մի այբուբենից, հատկապես պարմիրական գրից,  
որի վրա Մեսրոպը ավելացրեց 7 բաղաձայն (որի՞ց) և 7 ձայնա-  
վոր՝ որ ամբողջապես փոխ առավ ղենդական այբուբենից (WZKM  
1894, 150—160, թրգմ. Հանդ. ամս. 1894, էջ 244—246 և Մուրճ  
1894, էջ 1089—1092):

ժը) Lagard, Gesammelte Abhd. (1866, յոջ. էջ Թ—Ժ), հայե-  
րեն այբուբենի հիմքը համարում է հունականից, միայն 4 կամ 6  
տառ ղպտիականից: Նույն հեղինակը (Gelehrte Anzeigen, Göttin-  
gen 1883, էջ 281) մի քիչ ավելի պարզելով իր միտքը՝ 19 տառ ղնում  
է հին այբուբենից, 3 տառ հունարենից, 4 տառ (Ն, Վ, Ձ, Բ) ղպտի-  
րենից, 2 տառ (յ, ծ) արամեականից, իսկ 7 գիր՝ անհայտ: Մոռա-  
ցել է հաշվել ջ գիրը:

ժր) Լանզլուա, Collect. (II, էջ 7), ղնում է ասորականից:

ի) Dulaurier (JAs. 1870, էջ 149, ծան. 1), արամեականից:

իա) Լընորման, Essai sur la propagation de l'Alphabet phénicien (I. էջ 192) հայերեն այբուբենը ծագած է համարում զենդականից:

իբ) Ցաուլման, Illustrierte Geschichte der Schrift (էջ 499—500) թե՛ հայոց և թե՛ վրաց այբուբենը համարում է այն ժամանակ գործածված հմայական հին նշաններին:

իգ) Հիւրշման, Über Aussprache und Umschreibung des Altarm (ZDMG. 1876, 64) հունականից է համարում:

իդ) Gardthausen (ZDMG 1876, 74—80), շարունակելով Հիւրշմանի գործը, մի առ մի համեմատում է հայերեն գրերը հունականի հետ և հաստատում է, որ մեր գրերը հունական ծագում ունին:

իե) Քեյլըր՝ իր նշանավոր գործի մեջ (The Alphabet, London 1883, հտ. II, էջ 268) հայերեն այբուբենը զնում է իրանական-սեմական այբուբենից ածանցված:

իզ) Սարգիսյանը (Բագմ. 1889, էջ 34—35) ցույց է տալիս, որ հայերեն այբուբենը կազմված է պարսիկ, հույն և ասորի այբուբենների խառնուրդով (22 տառ հունարենից, 12 տառ պարսկերենից և զանդկերենից, 2 տառ ասորերենից): Մեսրոպը մեր գրերը ձևավորած ժամանակ փյունիկ և զանդիկ գրերը «իրև նախատիպ օրինակ» ունեցել է իր առաջ:

իէ) Ղ. Աղայանը (Մուրճ, 1890, էջ 1587) Դանիելյան գիրը համարում է ասորապարսկական ծագումից, իսկ հավելյալ յոթը գրերը Մեսրոպից հնարված: Հայերեն այբուբենը հունական ծագում չունի:

իը) Հարությունյանը (Հայոց գիրը, էջ 309—314) գտնում է, որ հայերեն այբուբենից 22 տառ ծագած է փյունիկյան այբուբենից (էջ 309) կա՛մ ուղղակի և կա՛մ արամայեցոց միջնորդությամբ (էջ 312), որի վրա Մեսրոպն ավելացրել է 2 տառ հունարենից առնելով և 12 տառ իրենից հնարելով՝ փյունիկյան տառերի ոճով: էջ 309 ասում է, թե հայերեն տառերը 60 տեսակ հունարեն այբուբենների հետ համեմատել է և ո՛չ մի նմանություն չի գտել:

իբ) Տաշյանը (Հանդ. ամս. 1893, էջ 91բ) ընդունում է, որ հայերեն տառերը կազմված են հունարենի վրա, որին ապացույց են գրերի նմանությունը, շարքը, թվական արժեքը, ու գրելու ձևը, յ = = յ տառի կնճոտ գործածությունը: Պատվական մի հոգով է, որի մեջ հայտնված կարծիքներին գրեթե լիովին համաձայն եմ:

1) Մալխասյանը Հարությունյանի գրքի քննադատականում (Տարազ, 1893, № 1—5) այն կարծիքն է հայտնում, որ Մեսրոպը մեր գրերը Ասորիքի մեջ հնարելով՝ ազդվել է ասորականից. բայց

հետո Հռուսիանոսը դարձրել է հունականի (տե՛ս անդ, էջ 42բ և 72բ)։ Այսօրվա մեր այբուբենը նման է հունականին։ Միծաղելի է զըտնում Հարությունյանի համեմատությունները սեմականների հետ։ Սրանից մի քիչ տարբեր է Դասընթաց հայ. մատ. պատմ. (Թիֆլիս 1899, վիճատիպ), ուր նախ դրվում է ասորական ազդեցությամբ (էջ 49), իսկ հետո հունական, ասորական և զենդական ծագումից (էջ 52)։

լա) Տաղավարյանը (Մագոման հայ տառից, էջ 24 և 32—33) Հարությունյանի նման՝ մեր գրերը ծագած է համարում փյունիկերենից. միայն 7 տառ զանդիկ—պարսկականից, մեկը ասորերենից, մեկը հունարենից, իսկ հինգը ածանցված նույն փյունիկյան տառերի ուճով։

լբ) Գարագաշյանը (Քնն. Պատմ. Գ. 39) 7 ձայնալորները դընում է հունարենից, իսկ բաղաձայնները սեմականից, որոնք առաջ թերևս աջից ձախ էին գրվում։ Հետո էլ ասում է, թե Մեսրոպյան գրերը շինված են հունարենի ոճով, մեջը խառնելով նաև Դանիելյան (սեմական) գրերը, որոնցից հատկապես հիշում է ր և խ։

լգ) Ս. Վ. Պարոնյանը (Հանդ. ամս. 1896, էջ 74բ, 75բ) ծագումը համարում է արևելյան (այն է սեմական կամ պահլավական), իսկ հավելյալ տառերը նույնիսկ Մեսրոպից, որովհետև յայնժամ դրացի ազգը շունէին հայկականին յատկացեալ հնշմանց համապատասխանող տառեր որ տային Հայոցն)։

լդ) Մենկիշյանը (Հանդ. ամս. 1896, էջ 213—217) 25 տառ դնում է հունարենից, իսկ մնացյալ 11-ը պարսկերենից, ասորերենից կամ Մեսրոպի մտաց ճարտարությամբ հնարված։

լե) Պասաձյանը (Բազմ. 1898, էջ 534) հայերեն այբուբենը հանում է հին պարսկական բևեռագիրներից։ Առանձին մի ցուցակում համեմատում է հետևյալ գրերը, սեպերը ուղիղ գծերի վերածելով և անշատ սեպերը իրար միացնելով։ Այսպես՝

$\overline{\text{Y}}\overline{\text{Y}} = \text{Ա}, \quad \underline{\text{Y}} = \text{Բ}, \quad \langle \text{Y} = \text{Գ}, \quad \overline{\text{Y}} = \text{Դ}, \quad \text{Y} \langle = \text{Ե}, \quad \overline{\text{Y}} = \text{Զ}, \quad \underline{\text{Y}} = \text{Ը},$   
 $\langle \langle \text{Y} = \text{Խ}, \quad \text{Y} \underline{\text{Y}} = \text{Ճ}, \quad \langle \underline{\text{Y}} = \text{Հ}, \quad \overline{\text{Y}} \text{ } = \text{Տ}, \quad \text{ } \text{Y} \text{Y} = \text{Ս}, \quad \text{Y} \langle \text{ } = \text{Յ},$   
 $\text{ } \underline{\text{Y}} = \text{Ն}, \quad \overline{\overline{\text{Y}}} = \text{Շ}, \quad \overline{\overline{\text{Y}}} = \text{Պ}, \quad \overline{\overline{\text{Y}}} = \text{Ս}, \quad \text{ } \text{Y} \overline{\overline{\text{Y}}} = \text{Վ}, \quad \text{Y} \overline{\overline{\text{Y}}} = \text{Տ},$

լզ) Վեբերը (Die katholische Kirche in Armenien, 1903, էջ 395 ևն) կարծում է, որ Մեսրոպը հունականից օգտվելով և հունական այբուբենի տառերին նմանեցնելով՝ կատարելագործել և լրացրել է Դանիելյան այբուբենը։



15) Փառեակը (Անահիտ, 1905, էջ 129—130) Դանիելյան գիրքը դնում է հին (արշակունյան) պահլավերենից (բայց իբր բերած օրինակներից շատը սասանյան պահլավերենից է), որի վրա Մեսրոպը ավելացրեց մի քանի տառ հունարենից առնելով, մի քանի տառ էլ իրանից հնարելով: Պահլավական ծագման իբրև ապացույց է համարում Փարպեցու ցրատ ուղղաձայնության, քստ անսայթարության լուսինն բառերը, որով կարծում է, թե Փարպեցին ակնարկում է պահլավերեն գրերի բազմատեսակ ընթերցումը. ինչպես ( = ր, վ, Տ = պ, Ֆ = ն):

16) Մարկվարտը (Պատմ. Հայ. նշ. էջ 46—53) զանազան համեմատություններով ցույց է տալիս, որ Մեսրոպյան 36 տառերից 15-ը պահլավ են, 7-ը՝ հույն, 6-ը ասորական այբուբեններից (ասորի, էսթրանգելա, արամեական), 5-ը՝ Մեսրոպի հնարածը, 3-ն էլ անծանոթ: Ըստ Մարկվարտի Մեսրոպը ընդհանրապես հետևել է Դանիելյան այբուբենին. հունարենից չի օգտվել. եթե հունարենից տառեր փոխ առած լինեք, առաջին իսկ ակնարկով պիտի երևար (անդ, էջ 43):

Ահա սրանք են նոր քննիչների կարծիքները, որոնք եթե միասին ամփոփենք, կտեսնենք, որ հայ գրերի ծագումը՝ ամբողջապես կամ մասամբ՝ դրվում է անկախ կամ հին հմայական նշաններից և կամ հին պարսիկ բևեռագիրներից, հին (քաղղեական) կամ նոր (սասանյան) պահլավերենից, զանդկերենից, նոր պարսկերենից, փյունիկերենից, պալմիրականից, արամեերենից, էսթրանգելա գրից, ասորերենից, դպտիերենից, եթովպերենից կամ հունարենից:

Անմիջապես ասենք, որ այբուբենների հիշյալ ճոխ շարքի մեջ կան մի քանիսը, որոնք իսպառ զործ շունեն մեզ հետ և չեն կարող իբրև աղբյուր ծառայած լինել Մեսրոպյան գրերին:

Սրանց մեջ առաջին տեղը բռնում է հին պարսկական բևեռագրությունը, որից Պասմաճյանը հանել է ուղում մեր հայերեն գրերը: Պարսկական բևեռագրերը, ինչպես հայտնի է, զործածական էին Աբեմենյան տերության ժամանակ: Քրիստոսից երեք դար առաջ (330 թվին) Դարեհ Գ.-ի մահով՝ Աբեմենյան տերությունը վերացավ և Պարսկաստանը ընկավ Մակեդոնական իշխանության տակ: Նրա հետ վերջացավ նաև բևեռագրերի զործածությունը: Եվ այն ժամանակ, երբ Մեսրոպը հայերեն գրերն էր հնարում, սեպագրերը, ինչպես նկատում է Մյուլլերը (Բազմ. 1898, էջ 534—535), արդեն 800 տարուց ի վեր զործածությունից ընկած և մոռացված էին: Ապահովապես այն դարում չկար մեկը, որ նրանց արժեքը իմանար: Ի՞նչպես կարող էր ուրեմն Մեսրոպն այս գրերը իրեն օրինակ առնել: Հայերեն և բևեռագիր այբուբենի մեջ եղած մի քանի գրերի

նմանութունը (ինչպես են ա, պ և այլն) բոլորովին պատահական է, իսկ մնացյալը բունի: Ինչպես անձնական տեղեկությամբ գիտեմ, Պասմաճյանն էլ արդեն վաղուց իր այս կարծիքից բոլորովին հրաժարված էր:

Երկրորդ տեղը բունում է նոր պարսկերենը, որի հետ համեմատում են Սարգիսյանը և Տաղավարյանը մի քանի հայերեն տառեր: Պարսկերեն կոշումը խաբել է նրանց և կարծել է տվել, որ այս գիրը պարսկական մտքի արդյունք է և հին: Բայց իրոք նոր պարսկերեն կոշումը սխալ բացատրություն է և այդ անունով կոչված գիրը ամենևին կապ չունի Պարսկաստանի հետ: Նա պարզապես արաբական այբուբենն է և այնչափ միայն պարսիկ է, որչափ որ է թուրք, աֆղան, հինդուստանի, մալայցի, ուզբեկ, թաթար, թուրքմեն, կուսուխ, մուլթանի, սինդհի, քաշմիրի, սլահիլի կամ բերբեր: Այս բոլոր ազգերն ու լեզուները փոխ են առել միևնույն արաբական այբուբենը՝ նրա վրա երբեմն աննշան հավելումներ անելով: Այսպես պարսիկները ավելացրել են پ, ڤ, چ, ڄ, څ, گ գրերը, որոնք գոյություն չունեն արաբերենի մեջ: Արաբական գիրը իր ձևավորումն ստացավ Մուհամմեդի ժամանակ և նրանից առաջ Արաբիայից դուրս չէր եկած: Ե դարում միայն, երբ մահմեդական արաբները դուրս ելան Արաբիայից և իրենց աշխարհակալության հետ տարածել սկսեցին իրենց կրոնն ու դպրությունը, այս գրերն էլ այն ժամանակ սկսեցին կամաց կամաց մուտք գործել նվաճված և մահմեդականացած ազգերի մեջ: Այս ժամանակ է, որ պարսիկներն էլ թողեցին իրենց զրադաշտական կրոնը, ոչնչացրին իրենց հին գրքերը, մոռացության տվին պահլավական և ղենդական գրերը, և իսլամության հետ ընդունեցին արաբերեն տառերը:

Այսպիսով, ուրեմն, Ե դարում նոր պարսկերեն տառեր չկային դեռ և, հետևաբար Մեսրոպը չէր կարող նրանցից օգտված լինել:

Փյունիկ, պալմիրական և արամեական գրերը գործածված են մինչև Քրիստոսի երկրորդ դարը, որից հետո նրանք տեղի տվին ասորական և հունական այբուբեններին: Եվ այն ժամանակ, երբ Մեսրոպը հնարում էր հայերեն գրերը, փյունիկյան, պալմիրական և արամեական գրերը արդեն 250 տարուց ի վեր գործածությունից դուրս եկած և մոռացության էին մատնված: Կարո՞ղ էր և կամ պետք ունե՞ր Մեսրոպը այս անհետացած այբուբենները երևան հանելու և նրանցից օգտվելու հայերեն տառերի համար, մինչդեռ իր ձեռքի տակ պատրաստ ուներ մի խումբ այբուբեններ, որոնք իր հայրենակիցներին էլ մասամբ կամ ամբողջովին ծանոթ էին:

Մեր կարծիքով ոչ:

Երկու և կես դարը մեր ժամանակ էլ մեծ շրջան է. բայց Բ դա-

բում, երբ գրքերը այնքան սակավաթիվ էին, գրելու արվեստը շահազանց քիչ տարածված, ուսումնականների թիվը անհամեմատ կերպով սահմանափակ, ինչքան խոշոր պետք է լիներ այդ շրջանը, որ մոտացութեան արված շիններ ամեն բան: Այն հեղինակները, որոնք հայերեն գրերին տալիս են փյունիկյան, արամական կամ պալմիրական ծագում, հավատում են Գանիեյան գրերի գոյութեան, որով շահազանց մոտենում են կամ նույնիսկ ժամանակակից են դառնում այն գրերին: Բայց որովհետև մեզ համար Գանիեյան հայ գիր ու գրականություն գոյություն չունի, ուստի հայ գրերն էլ չեն կարող փյունիկյան, պալմիրական կամ արամական ծագում ունենալ:

Ամենից բնական ու տրամաբանական բանը, որ կարելի է ենթադրել և որ աշխարհիս բոլոր այբուբենների ծագման տիեզերական պատմութեանից է հետևում, այն է, թե Մեսրոպը օգտվել է իր ժամանակակից և շրջակա ազգերի այբուբեններից. սրանք են Արևելքից պարսիկները, Հարավից ասորիները և Արևմուտքից հույները: Հյուսիսը անգրագետ էր դեռ:

Պարսիկները բևեռագրական գրութեանը կորցնելուց հետո՝ արամեական գրի օրինակով ձևակերպեցին մի նոր այբուբեն, որ հասել է մեզ միմիայն երկու հնագույն արձանագրութեանց մեջ և ծանոթ է գիտական աշխարհին քաղղեական պահլավերեն, հին կամ արձանագրութեանց պահլավերեն անուններով: Այս գրութեանը շուտով փոխվելով, տեղը անցավ երկրորդ այբուբենը, որ կոչվում է նոր կամ Սասանյան պահլավերեն և նախորդից մեծ տարբերություն չունի: Գործածված է դրամների, ամանեղենների և վերջապես մի խումբ ձեռագրերի մեջ: Սասանյան պահլավերեն գրութեանը ունենալով շատ պակասութեաններ (գրերի շահազանց միօրինակություն, մի խումբ գրերի համար միևնույն նշանը, ձայնավորներ չգործածվելը, կցողական գրություն), ընթերցումը շատ դժվար էր: Ս. Գրքերը, որ պարտավոր էին երկյուղած հավատարմութեամբ կարդալ, այլևս ենթակա էին դարձել այլ և այլ խեղաթյուրումների: Այս պատճառով պարսիկները հնարեցին երրորդ տեսակ այբուբենը, որ կազմված էր երկրորդից և պարունակում էր ամեն ձայնի համար առանձին նշան, երկար ու կարճ ձայնավորներ, միանգամայն հետևում էր անջատական գրութեան: Այս այբուբենն է, որ կոչվում է զենդական կամ ավեստական այբուբեն: Այս այբուբենը ուրեմն հին չէ: Spiegel (Gramm. d. altēranischen Sprachen, էջ 11) համարում է, թե հրեանարված է է դարում: Մյուլլերը (WZKM 1891, էջ 253) ուզում է ապացուցել, թե հորինված է Գ—Դ դարում, որովհետև հունական գրերի հետ նմանութեաններ է ենթադրում, որ Ալեքսանդրի աշխար-

հակալուծյամբ պարսիկներին ժանոթացած է կարծում: Բայց իր տեսությունը ընդունված չէ գիտնականների կողմից և առհասարակ զանդկեբեն այբուբենը նոր գիր է համարվում, առանց սակայն ճիշտ ժամանակը որոշելու (Salemann, Grundriss der iranischen Philologie, I B., I Abt., III, էջ 353):

Իրանական այբուբենների շարքում կարող ենք հիշել նաև մանիքեական և սոգդիական այբուբենները, որոնք նույնպես արամեական ծագում ունեն և գտնվեցին Թուրքանի գիտական արշավանքի ժամանակ:

Այս երկու այբուբենների հրատարակությունը և նրանց քննությունը կատարեց Մարկվարտը (WZKM 12, էջ 158—159 և այլն):

Ասորիները ունեն երկու տեսակ գրություն: Առաջինը, որ ասորիների երկաթագիրը կարող է համարվել, կոչվում է էսթրանգելա. երկրորդը, որ կարող է նրանց բոլորգիրը համարվել, կոչվում է պարզապես սիրիական, ասորական կամ ավելի լավ՝ Հակոբեիկյան: Առաջ ընդհանրապես կարծում էին, որ ասորիների հին գրությունը էսթրանգելան է, որի գործածությունը սկսել է Բ դարից և մինչև այժմ տևում է. իսկ Հակոբեիկյան գրությունը սկսում է 550 թվականից և այսօրվա սովորական գրությունն է: Բայց նոր քննությունները ցույց տվին, որ այս կարծիքը սխալ է. երկու գրությունները ժամանակակից էին. էսթրանգելան գործածվում էր իբր պաշտոնական գիր՝ մեծածախս գրքերի և եկեղեցական մատյանների մեջ, իսկ հակոբեիկյանն առանձին գործածության համար էր: Առաջինը հետզհետե տեղի տվեց երկրորդին և հակոբեիկյան գրությունը դարձավ հետո գերիշխող: (Այս մասին տե՛ս Տաշյան, «Ակնարկ մը հայ հնագրութեան վրա», էջ 89): Մեսրոպն իր առաջ ունեեր, ուրեմն, թե՛ էսթրանգելա, և թե՛ Հակոբեիկյան գրությունները:

Հունարեն այբուբենը ամենքին հայտնի է: Նա ծագում է փյունիկյան այբուբենից, որի մեջ հույները մտցրին մի քանի կարևոր փոփոխություններ: Նախ՝ փյունիկեցոց շորս կիսաձայնները դարձրին ձայնավորի, որոնց վրա ավելացրին հինգերորդ նորահնար մի ձայնավոր՝ Վ: Երկրորդ՝ շնչեցին փյունիկյան Վ և Ծ տառերը, որովհետև սրանց համապատասխան ձայները չկային հունարեն լեզվի մեջ:

Երրորդ՝ ավելացրին Փ և Կ գրերը, որոնք չկային փյունիկյան այբուբենի մեջ: Չորրորդ՝ փոխեցին գրերի ուղղությունը և ձախից դեպի աջ դարձրին: Հինգերորդ՝ զանազանելու համար շին և յոդ գրերը, որոնք փյունիկերենի մեջ նմանաձև տառեր էին, փոխեցին յոդ գրի ձևը և վերածեցին ուղղահայաց մի գծիկի:

Ահա սրանք են այն այբուբենները, որոնք Մեսրոպի ձեռքի տակ

կային և որոնցից կարող էր օգտվել Մեսրոպը: Փննիչների հիշած այբուբենների մեջ կան նաև դպարի և եթովպական այբուբենները, որոնցից ձևացած են համարվում հայերեն մի քանի տառեր: Այս գրերն են դ, կ, չ, ձ, ճ, մ, ն, վ, ց: Առաջին ութը ըստ ումանց համարվում են դպարիերենից փոխառյալ, վերջինը՝ ց եթովպերենից: Մի քիչ հետո կտեսնենք, որ այս համեմատությունները հաջող չեն և հետևյալը դպարի և եթովպացիներ գործ չունեն մեզ հետ: Այսպես է մտածում նաև Մարկվարտը, որ (ՀԱ, 1912, էջ 662) հայտնում է, թե Մեսրոպի ժամանակ Եգիպտոսի և պարսկական Միջագետքի միջև հարաբերություն չկար: Նույնն է ասում նաև Գարդհատիզներ, որ գտնում է, թե Ե դարի սկզբում հայերը ոչ մի կապ չունեին Եգիպտոսի կամ Ալեքսանդրիայի դպրոցի հետ: Եթե ամենափոքր մի բան եղած լիներ, հետագա պատմիչները չափազանցրած ձևերով պիտի պատմեին այն: Արդ՝ ոչ միայն Կորյունը ոչինչ չի ասում այդ մասին, այլև հաջորդ պատմիչները՝ Փարպեցուց սկսած մինչև Ասողիկ ոչինչ չգիտեն: Մեջտեղում մնում է միայն Խորենացու առասպելը դեպի Եգիպտոս և Ալեքսանդրիա ճամփորդության:

Մնում է հերքել նաև հայերեն գրերի անկախ կամ հին հմայական նշաններից հորինված լինելու գաղափարը. բայց սա ինքնին պիտի հերքվի արդեն, երբ հաջորդ համեմատություններից տեսնվի, թե հայերեն գրերը ինչ աղբյուրից են հորինված:

Վերոհիշյալ այբուբեններից ոչ մեկը չէր կարող Մեսրոպի փափազը ամբողջապես լրացնել, այսինքն՝ տալ հայերեն լեզվի հնչյունները պատկերացնող բոլոր տառերը միանգամայն: Այս պատճառով առաջին իսկ վայրկյանին Մեսրոպը պարտավորված էր դիմելու մի քանի այբուբենների, նրանցից ընտրությամբ քաղելու համար իրեն պետք նկատ նշանները, մեկի նպակասը մյուսով լրացնելու և բնավ չգտածները իրենից հնարելու: Սրանից բնականորեն հետևում է, որ հայերեն գրերի ծագումը չի կարող լինել մի միակ աղբյուրից և պետք է դանազան աղբյուրներ ենթադրել: Այս աղբյուրները որոշելու համար ուրիշ ապահով միջոց չկա, եթե ոչ հայերենի յուրաքանչյուր տառը համեմատել շրջակա ազգերի այբուբենների համապատասխան տառերի հետ և նրանց ձևական նմանությունից հանել ստույգ եղրակացությունը: Ուրիշ ամեն միջոց (պատմական հարաբերություններ, դրական ազդեցություն, փոխառյալ բառեր, կրոնական միություն, քաղաքական գերիշխանություն և այլն) երկրորդական նշանակություն ունեն վճռելու համար այս հարցը: Այս միջոցները շատ անգամ խաբուսիկ են. օրինակի համար՝ Միլլերը (Բագմ., 1894, 155—160) ապացուցելու համար, թե հայերը հունարենից գրեր չեն առել, մեջ է բերում այն թղթակցությունը, որ տեղի

ունեցաւ Սահակի ժամանակ հունաց և հայոց միջև, և որով հույները դատապարտում էին հայերին, թե ինչու նրանք դիմեցին «ասորոց ոմանց» և հույների գիտութեանը շնորհակցին: Բայց այս թղթակցութեանը հորինացու սարքածն է, իրականութեան մեջ գոյութեան չունի և առաւելին ակնարկում է Դանիել ասորիին դիմելը և Մեսրոպի Միջագետք ու Եղեսիա ճամփորդութեանը:

Քննիչներից շատերը դիմում են հիշյալ երկրորդական ապացուցներին. քերն են միայն, որ դիմում են առաջին միջոցին, հայերենի յուրաքանչյուր տառը համեմատելով օտար այբուբենների այս կամ այն տառի հետ և նրա կրած ձևափոխութեանները նշանակելով:

Վերջիններին են պատկանում՝

ա) Kopp, Bilder und Schriften (1819). ունի 18 հայ գրերի համեմատական տախտակը, որ արտատպում է Հարությունյանը (Հայոց գիրը, էջ 288):

բ) Müller (SWAW 48, 436—38) տալիս է հայ և վրացի գրերի մեծ մասի համեմատութեանը. այս հոդվածին կցված առանձին տախտակը հայ և վրացի գրերի հասարակ ցուցակն է, առանց որևէ համեմատութեան: Ձայնավորների համեմատութեան ունի՝ WZKM (1894, 155—160, թրգմ. Հանդ. ամս. 1894, էջ 244—46): Իսկ նույն հեղինակի Über den Ursprung der gruzinischen Schrift (SWAW 137, էջ 1—12) հոդվածի մեջ գտնում ենք վրացերեն գրերի ծագման պատմութեանը, համեմատական տախտակով:

գ) Gardthausen (ZDMG 1876, 74—80), հաջող դադափարն է ունեցել՝ փոխանակ հայ գրերը արդի հունարեն տառերի հետ համեմատելու, ընտրել հին ձևագրերի միջից հունարեն տառերի հին ձևերը և մի առ մի համեմատել է մեր գրերի հետ:

դ) Սարգիսյան (Բազմ. 1889, էջ 34 և 35) երկու տախտակի մեջ տալիս է հայերեն գրերի հնագույն ձևերը և համեմատում է նրանք հունարենի հնագույն ձևերի, դանդակերենի և նոր պարսկերենի հետ:

ե) Հարությունյանը (Հայոց գիրը, էջ 308) վիմատիպ մի ցուցակի մեջ շարում է հայերենի դեմ՝ փյունիկ, արամեական, պալմիրական, եբրայական, բաբելական և պարսկերեն գրերը մասամբ, բայց նրանց համեմատական քննութեանը չի տալիս:

զ) Մալխասյանը (Տարազ 1893, էջ 72) ունի մի քանի գրերի համեմատութեանը, բայց առանց սկզբնաձևերը հիշելու:

է) Տաղավարյանը (Մագումն հայ տառից, էջ 24) ունի համադրական պարզ մի տախտակ հայ, փյունիկ և հույն գրերի:

ը) Մենկիշյանը (Հանդ. ամս. 1896, էջ 215) իբր հիմք ընդու-

ենչով Քարդնաուզնի տված հին հունական ձևերը՝ առանձին մի տախտակում դնում է նրանց հաշորդական ձևափոխությունները՝ մինչև հայերեն երկաթագրին հասնելը: Հայերեն գրերի մասին մինչև այժմ եղած բոլոր համեմատական ուսումնասիրությունաց մեջ ամենից կատարյալն ու միակ լավագույնն է:

թ) Փառնակը (Անահիտ 1905, էջ 129—130) անցողակի հիշում է մի քանի գրերի առանձին առանձին ծագումը, առանց սակայն օտար ձևերը համեմատության առնելու (տպագրություն դժվարության պատճառով):

ժ) Մարկվարտը (Պատմ. հայ. նշ.) տալիս է 33 հայերեն գրերի համեմատությունը իրենց համապատասխան հույն, ասորի և պահլավ ձևերի հետ:

Մենք էլ պիտի դիմենք տառերի ձևական համեմատության ստույգ միջոցին:

Համեմատությունը կատարյալ և ամբողջական դարձնելու համար կարևոր ենք համարում նախ դնել ընդհանուր համադրական մի տախտակ, որի մեջ յուրաքանչյուր հայերեն տառի դեմ գրված են օտար այբուբենների հնչմամբ համապատասխան տառերը: Համեմատված այբուբեններն են՝ հայերենից հետո կարգով՝ վրացերեն (խուցուրի և մխեդրուի), հունարեն (ձեռագրերից քաղված հին հունական ձևերը և հետո արդի ձևերը՝ գլխագիր և բոլորգիր), զրապտիերեն, փյունիկերեն, արամեական, պալմիրական, բարելական, սամարական, եթովպական, մանիքեական, սոգդիական, էսթրանգելո, ասորական (հակորիկյան), հին սասանյան (երկու արձանագրությունց մեջ գործածված ձևերը), պահլավական, ղենդական և արարական գրերը:

Այս ցուցակի հետ տալիս ենք նաև Մենևիշյանի հորինած տախտակը, ուր գտնում ենք 25 հայ գրերի համեմատությունը հունարենի հետ և նրանց միջին կամ անցման ձևերը:

Հաջորդ էջերի մեջ Մենևիշյանի այս տախտակը պիտի հիշենք Փ. Յուց. (Փոքր Յուցակ) համառոտագրությամբ, իսկ մեր կազմած մեծ ցուցակը՝ պարզապես Յուցակ բառով:

Այս երկու ցուցակները ունենալով մեր աչքի առաջ, կարող ենք անցնել յուրաքանչյուր տառի մանրամասն քննության:

Բայց նախքան այդ՝ կարևոր է անել մի քանի ընդհանուր նկատողություններ:

ա) Վերը տեսանք, որ Մեսրոպը հենց դիտմամբ կամ սկզբունքով նպատակ էր դրած հեռանալ բնատիպ տառերի կատարյալ նմանությունից: Իսկ եթև նույնիսկ ուզենար ստրկորեն հետևել բնատիպ







Ձ. Գ. Կ. Ա. Ա.	Յ. Է. Յ. Ծ. Ծ.
Յ. Յ. Բ. Բ. Բ.	Օ. Օ. Ո. Ո.
Ժ. Գ. Գ. Գ. Գ.	Ո. Ո. Պ. Պ.
Ժ. Դ. Դ. Դ. Դ.	Ջ. Զ. Զ.
Բ. Է. Է. Է. Է.	Ո. Բ. Բ. Բ. Բ.
Ը. Զ. Զ. Զ. Զ.	Շ. Ս. Ս. Ս.
Կ. Կ. Է. Է. Է.	Վ. Վ. Կ.
Զ. Թ. Թ. Թ. Թ.	Թ. Տ. Տ. Տ.
Ի. Ի. Ի.	Ը. Ը. Ը.
Ա. Կ. Կ. Կ. Կ.	Վ. Վ. Ի. Ի.
Չ. Ն. Ն. Ն. Ն.	Փ. Փ. Փ.
Ա. Մ. Մ. Ա. Վ.	Ճ. Բ. Բ.
Ն. Ա. Ա. Ն.	

տառերին, կարող էր արդյոք, հարց է տալիս Պիտերսը (Revue des ét. arm. 228):

Ամեն ազգ գրելու արվեստի մեջ մի առանձին ոճ ունի, որ միայն իրեն է հատուկ: Նույնիսկ այսօր եվրոպացի ազգերը թեև միևնույն լատին այբուբենն են գործածում, բայց գրության մեջ հաճախ իրարից տարբերվում են: Խոսքը բնականաբար ձևազրի մասին է և ոչ տպագրի, որ իր ավանդական միջոցինակ ձևերով պարտադիր է բոլորին: Այս ազգային հատկանիշն է, որ միևնույն լատինական այբուբենից ստեղծել է գոթական գրությունը, որ տարածված է գերմանական աշխարհում: Համեմատենք օրինակի համար՝ մեր արդի ձևագրով ա տառը ուսերին ա-ի հետ, ա տառը լատին ա-ի կամ ո տառը ոուս. ո և լտ. ո տառի հետ: Սրանք ընդհանրապես միևնույն ձևն ունեն, բայց ոճով տարբերվում են: Ռուսականի և լատինականի հատկանիշն է ուղղահայաց գծերը պահել երկար և տառասյունները իրարից հեռու, իսկ հայերենի հատկանիշն է ուղղահայաց գծերը կարճ բռնել և տառասյունները իրար մոտեցնել: Այսպիսով հայերեն տառերը դառնում են տափակ, առանց իրանի, մինչդեռ ոուս և լատին տառերը առողջ իրան ունեն:

Հայերը շորրորդ և հինգերորդ դարերում գործ էին ածում երեք

այրուբեն. Բայց անշուշտ ազգային մի հատկանիշ ունենին և այն էրէք այրուբենները իրենց այդ ազգային հատկանիշի համեմատ ձևափոխում էին: Այժմ Մեսրոպը, որ հորինում էր առանձին հայկական այրուբեն, անկախ բոլորից, հակառակ նույնիսկ իր կամքին, չէր կարող այդ ազգային հատկանիշից հեռանալ: Սա եղավ մի երկրորդ պատճառ, որ նորակերտ տառերը շագհենին բնատիպ տառերի ձևերը:

բ) Տառերը ապրում են. միևնույն տառաձևը ժամանակի ընթացքում այնքան է փոփոխվում, որ հաճախ անկարելի է ճանաչել և նորի մեջ հնի պատկերը տեսնել: Համեմատենք օրինակի համար Ա և ա. որքա՞ն տարբեր են իրարից: Բայց տարբերությունը անհավատալի շափերի է հասնում Ի և ի, Չ, ձ և շ, Տ և տ ձևերի միջև: Ժամանակն է այս բոլորի հեղինակը: Այն օրից, երբ հնարեց Մեսրոպը հայերեն տառերը, մինչև այսօր, անցել է 1500 տարի: Որքա՞ն փոփոխվեցին մեր տառաձևերը այս 15 դարերի ընթացքում: Ուստի սկզբբունքային սխալ կլինի, եթե մեկը համեմատության համար վերցնի տառերի արդի ձևը: Պետք է առնենք հայերեն տառերի ամենահին ձևերը, որքան որ կարող ենք: Միևնույն ժամանակ պետք է հիշել, որ մեզ իբր բնատիպ ծառայող տառերն էլ ժամանակի ընթացքում ձևափոխվել են. որքան տարբեր են իրարից Ե, Յ և Ե, որոնք սակայն միևնույն բաներն են: Ուստի այստեղ էլ պետք է առնենք բնատիպ տառերի ժամանակակից ձևերը (Ն դար), որ տալիս է մեզ հնագրությունը:

գ) Ամեն մի այրուբենի մեջ տառաձևերը երկու հակառակ ուղղությամբ են գնում. կան տառեր, որ ոչ մի նմանություն չունեն իրար հետ, կան էլ՝ որ շափազանց նման են: Օրինակ, հ. Ճ և ա Բացարձակապես տարբեր են իրարից, իսկ Բ և Բ, գ և դ, ո և ո, զ և զ, ա և ա շափազանց նման են իրար: Որքան մեծ է այրուբենի տառերի թիվը, այնքան շատ կարող են պատահել այդպիսի նմանություններ:

Բայց նույնիսկ եթե այս մանր նմանությունները մի կողմ թողնենք, այնուամենայնիվ տառերը կազմվում են մի քանի բնորոշ գծերից: Օրինակի համար, լատինական այրուբենի մեջ շարունակ տեսնում ենք մի ուղղահայաց սյուն՝ կարճ կամ երկար, որից ձևվանում են յ, ի, լ, է. նույն սյունի վրա ավելացնելով մի կլորակ և աջ ու ձախ կամ վերև ու ներքև շուռ տալով՝ ստանում ենք Ե, Ե, Բ, Գ: Այս բոլորը ցույց է տալիս, որ տառերի-տարբերությունը հաճախ շատ շնչին մի բանից է կախված: Բայց հենց այդ շնչին կետումն է տառի էությունը. այսպես օրինակ՝ գ և դ տառերի մեջ՝ մի աննշան մազազիծ:

Ուրեմն տառերի համեմատութեան մեջ անհրաժեշտ է գտնել նըրանց էական կողմը և կարևորութիւն շտալ երկրորդական մասերին:

դ) Հարց է, թե կարո՞ղ էր արդո՞ք որևէ յայտարարութեան հորինող այսինչ ձայնը ներկայացնելու համար վերցնել մի ուրիշ յայտարարութից մի այնպիսի տառ, որ չներկայացնէր նույն ձայնը: Կոպիտ ձևով արտահայտվելու համար, ասենք թե հայերեն Ե ձայնը ներկայացնելու համար կարելի՞ էր վերցնել ռուսերեն ա տառը: Պետերսը (Rev. des ét. arm. 9, 234—5) համամիտ է այս գաղափարին և տալիս է դանազան օրինակներ: Հիշենք հատկապէս ռուսերեն Д, З, П, Т տառերը, որոնք ձեռագրի մեջ ստացել են լատինական ց, ս, ո, մ տառերի ձևը, թեև սրանք հնչյունով տարբեր են: Հայերենի մեջ էլ հիշենք Ե և Բ, ռոնեֆ շեղագրում (Ե և Բ) ստացել են լատինական S և F տառերի ձևը: Մենք չենք ընդունում այս տեսակ բան: Այլանիշ տառերի ձևական նմանութիւնը (ինչպէս վերի ռուսերեն և հայերեն օրինակների մեջ) պատահական զուգահեռութեան արդյունք է և այն էլ շատ ուշ ձևացած: Նույնիսկ այն դեպքում, երբ յայտարարութեան հորինողները ստիպված են լինում բոլորովին նոր մի տառ ստեղծել, դարձյալ հետևում են բնատիպին և նրան մերձավոր մի ձայնի տառաձևի նմանութեամբ կազմում նորաստեղծ տառը: Այսպէս, պարսիկները ներկայացնելու համար Ծ ձայնը, որ չկար արաբական յայտարարութեան, առան արաբերենի յ ձայնը (ح) և նրա օրինակով շինեցին ] ح: Նույնպէս սլաւները ներկայացնելու համար ք ձայնը, որ չկար բյուզանդական հունարենում, առան В վ տառը և նրա զըլուխը բանալով՝ հորինեցին Б տառը: Այսպէս նաև Մետրոպը, ներկայացնելու համար Ը ձայնը՝ օգտագործեց է տառը և այլն:

Այս օրինակները ցույց են տալիս, որ պետք չէ այլանիշ տառերը համեմատել նմանաձև տառերի հետ և նրանց միջև ծագման նույնութիւն ենթադրել:

Այս ընդհանուր սկզբունքները ի նկատի առնելով և վերի երկու ցուցակները ունենալով մեր աչքի առաջ, կարող ենք այժմ անցնել յուրաքանչյուր տառի մանրամասն քննութեան:

## Ա.

Գարդհառուները և Մենեհիշյանն այս գիրը հանում են հունարեն Ա-ից (տե՛ս Փ. Յուց. № 1 նշանը, որ արդի Ա-ից այն տարբերութիւնն ունի, որ կտրակի ծայրերը թեք գծից դուրս ելած չեն): Կոպը և Փառնակը հին պահլավական և ձևից, Տաղավարյանը և Հարությունյանը՝ փյունիկ 𐤀 գրից. Մուլլերը նախ՝ սասանյան և զանդիկ 𐭀 գրից, հետո՝ զանդիկ 𐭀 գրից. Սարգիսյանը՝ հունարեն

Ա-ից, բայց, առում է, Մեսրոպը աչքի առաջ ունեցնել է նաև գանգիկ  
Խ գիրը: Մարկիզարտը մերժում է հունարեն Ա և դնում է գլխիվայր  
շքշված էսթրանգելը Ա -ից կամ ավելի լավ՝ պահլավերեն ԱԱ-ից:

Միայն է գանգիկ Խ գրի համեմատությունը, ինչքան էլ որ հայերեն ա-ի հետ նմանությունը կատարյալ չի, որովհետև նախ գանգիկ Խ ներկայացնում է երկար ա՛, երկրորդ որ հայերեն բոլորգիր կամ նոտրագիր ձևը շատ ավելի հետին ժամանակի բան է: Անընդունելի էմ գտնում նաև էսթրանգելը գիրը, որից հայերեն Ա հանելու համար ո՛չ միայն տառը պետք է գլխիվայր շքշել ( շ ), այլև հետո էլ դեպի աչ դարձնել: Ի՞նչ պետք ունեի Մեսրոպը այսպիսի հեղաշրջությանց ենթարկելու խեղճ տառը:

Մեր գրին նման են մնում ուրեմն փյունիկ-արամեական Վ ձևը, հունարենն ու պահլավականը:

Հունարենի համար պետք չէ աննել արդի Ա ձևը, այլ այն հնագույն ձևերը, որ երևում են մեր ցուցակում: Փարոհատուղենը վերցնում է ցուցակի առաջին ձևը, որ մի օղակ է՝ կողքից թեք գծիկով փակված, բայց հիշում է նաև մի տեսակ Ա, որ հին գրությանց մեջ շատ անգամ պատահում է, և որի մեջ կլորակի տեղ մի սուր անկյուն կա (տե՛ս Փ. Ցուց. N 2 և 3): Այս պարագային հույն տառը գրեթե նույնանում է փյունիկյան ձևի հետ: Մեծ ցուցակի երկրորդ և երրորդ ձևերը ավելի մոտիկ են հայերենին: Հույն և հայ գրերի նմանությունը երևան հանելու համար պետք է նկատել, որ հունարեն տառերը հայերենում ենթարկված են բնորոշ մի ձևափոխության. գրերի կլոր դարձվածքները գրեթե միշտ բացված են: Այս օրենքը անմիջապես աչքի է զարնում, երբ համեմատենք օրինակի համար՝ փ = հուն. Փ, Բ = հուն. Բ, Ո = հուն. Օ գրերը: Այս ձևափոխության ծագումն անշուշտ այն է, որ գրչի շարժումները սկզբից մի քիչ թույլ են եղած, կլոր դարձվածքները անփույթ կերպով են կատարված, որով կլորակների գիծը գրի բունին միշտ չէ կպած, այլ անջատ ու բերանաբաց մի թև է ձևացրած: Այս նկատումով ո՛չ միայն ցուցակի երկրորդ և երրորդ ձևերը, որոնք նույն են հայերենի հետ, այլև նույնիսկ առաջին ձևը կարող է տալ հայերեն Ա, կլորակը ըստ օրինի բանալով և թեք գիծը փոխանակ ամբողջությամբ դնելու, մի քիչ ցածրից դնելով: (Մեր նոր ոճի գրությանց մեջ՝ դեկադանս Ա գիրը համարյա այս ձևն ունի):

Մեր տառին շատ մոտիկ են նաև փյունիկ-արամեական Վ ձևը, որ պետք է մերժել ժամանակի հետալորության պատճառով, և պահլավական յ, որ ուրիշ բան չէ, և թև ոչ դեպի ձախ դարձած Ա:

Ուրեմն մեր Ա-ի ծագումը տատանվում է հունարեն Ա-ի և պահլավերեն ԱԱ-ի միջև:

Վրացերենն ձևը մեկնելն ավելի դժվար է, որովհետև ծանոթ ձևերից ո՛չ մեկին նման չէ: Մյուսները շրջելով տառը մի կողքի վրա (Յ Վ) գտնում է, որ նման է սասանյան և դանդիկ ավելին, իսկ հետո նմանեցնում է արամեական չ գրին: Ըստ իս, անտարակույս է, որ վրացերեն տառը ծագում է հունարենն Ա-ից և իր ձևով գտնվում է հայերենի և հունարենի միջև: Հայերեն Ա ձևը դուրս բերելու համար երեք շարժում ենք անում. առաջին շարժումով գծում ենք ձախակողմյան սյունը, երկրորդ շարժումով այս սյունը շարունակում ենք և գծում աջակողմյան սյունը. երրորդ շարժումով գծում ենք պոչը: Եթե այս երեք շարժումների կարգը փոխենք և առաջին շարժումից հետո անցնենք երրորդ շարժումին, կձևանա վրացի գրի հիմնական մասը և, որ լրացնելու համար կմնա երրորդ շարժումով գծել աջակողմյան սյունը: Այս սյունը անշատ մնալու պատճառով կարողացել է ավելի վերև բարձրանալ, մի քիչ հեռվից սկսվել, և վերջապես կարճանալով՝ Լ-ի վրա մի թև ձևացնել: Այս բոլորը զարմանալի չպիտի երևա մեզ, որովհետև ճիշտ միևնույն բանը պատահել է նաև հայերեն գրության մեջ. նոտրագիրը գլխատառ Ա-ը, որ մեր այժմյան ձեռագրերի մեջ գործածական է, կազմված է նույն հիմնական Լ-ից, որի ծոցի մեջ դրված է մի շեշտածև նշան (') և մի ուղրվող թև (—):

## Բ

Հարությունյանը և Տաղավարյանը հանում են փյունիկյան  $\Delta$  կամ շրջված  $\Delta$  ձևից: Մյուսները հիշում է հունարենն Β, բայց ավելի լավ է գտնում պալմիրականը, որից շրջված է կարծում: Մարկվարտը հանում է էսթրանգելո  $\Rightarrow$  գրից, իսկ Գարդհաուզենը Մենեվիշյանը, Սարգիսյանը, Մալխասյանը և Փառնակը հանում են հունարեն Β-ից: Ըստ իս ո՛չ փյունիկյանը, ո՛չ պալմիրականը և ո՛չ էլ արամեական, բաբելական, ասորական ու պարսկական ձևերը կարող են բացատրել մեր գրի ծագումը: Մարկվարտը մեր ձևին հասնելու համար  $\Rightarrow$  ձևը նախ աջ է դարձնում ( $\Leftarrow$ ), երկրորդ՝ սրածախ կողմից մի սյուն է ավելացնում (F) և երրորդ՝ երկու թևերի ծայրը կտուցի նման ներքև է ծռում՝ համաձայնեցնելու համար  $\alpha$  յոյն նախագաղափար Β-ին»:

Զգիտեմ թե ի՞նչ պետք կա այսքան փոփոխություն մտցնելու մեկ տառի վրա և վերջը դարձյալ հունական Β գրի օգնությանը դիմելու, որ ինքնին կարող է ամենագեղեցիկ կերպով տալ մեր Բ գիրը: Մարկվարտը մերժում է Β գրից մեր Բ տառը հանելը, ասելով, որ եթե մեր գիրը հունարեն Β-ից լիներ, գրեթե R ձևը պիտի ունե-

նար: Բայց այսպէս չէ: Հայերն գիրը հունարենի հետ նույն գիրքն ունի, աչ ու ձախ շրջելու կարիք չկա: հույն գրի աշակողմյան երկու կուտը դարձվածքները՝ հայերն գեղագրութեան սովորական օրենքով (ինչպէս մի քիչ վերն բացատրեցինք) բացված և ձևացրած են մեր Բ գրի երկու թևերը: Այսօր էլ շատերն արդեն այնպէս են գրում մեր գիրատառ Բ գիրը, որ գրեթէ հունական կամ եվրոպական Ե գիրն է դառնում:

Վրացերեն **Վ** շատ է նման արամեականին՝ իր ձախ դարձած դիրքով ու կիսաբաց բերանով. բայց պոչը աչ է դարձած, մինչդեռ արամեականում դեպի ձախ է դարձած: Մյուսները վրացի տառը միացնում է մեկ պալմիրականին, մեկ էլ արամեականին: Ինձ համար այս գրի ծագումը մութ է մնում:

## Գ

Մյուսները հանում է արամեական և պալմիրական ձևերից, Հարությունյանը և Տաղավարյանը՝ փյունիկյան ձևից. Մարկվարտը գտնում է, որ Գ տառը նման է սասանյան **Գ**-ին, բայց որովհետև այս տառը Կ ձայնն ունի, ուստի չի ընդունում և առանց մեկնութեան է թողնում:

Փյունիկերենն ու արամեերենը, որոնք նույն ձևն ունեն, զուրկ լինելով մեր գրի թևից, բնականաբար համեմատութեանց հետո են մնում: Պալմիրականը բնավ նման չէ հայերենին: Ետտ տարրեր են նաև ասորի, էսթրանգելո, պահլավական և մանիքիական ձևերը: Սոգդիական, եթովպական ու սամարական ձևերը թեև շատ նման են, բայց չունեն Գ-ի թևը, որ մեր գրի հիմնական գիծն է կազմում և Գ-ից դանազանող մասն է. հետևաբար և հաշվի չեն գա: Զանգիկ և կարող էր բավական մոտենալ, եթե շրջված չլիներ: Իրրև համեմատութեան նյութ մնում է հունարենը: Սարգիսյանը հանում է հունարեն **Γ** ձևից, որի հետ կցելու համար գիրը աչից ձախ է դարձնում: Բայց աչից ձախ դարձնելը արդեն հայերեն գեղագրութեան ողուն հակառակ է, որովհետև՝ ինչպէս գիտենք, հայերեն այբուրենը աշակողմյան ուղղութեան է հետևում. հետևաբար կարող էր առ առավելին ձախից աչ դարձնել և ո՛չ թե հակառակը: Այս տեսակետով հունարեն **Γ** ևս նշանակութեանց զուրկ է:

Պետք է աննկ հին հունարեն ձևը, որ տեսնվում է մեծ ցուցակում: Գարդհատուկներ և Մենկիշյանը մեր գիրը համեմատում են այս ձևի հետ: Մեր և հույն գրի մեջ երկու տարբերություն կա. նախ՝ հույն գրի զուրկ բաց է, մինչդեռ մերի մեջ, ընդհակառակը, փակ է, և երկրորդ՝ տակին մի կեռ կա, որ մերի մեջ չի գտնվում: Գարդ-

հատուկներ հունարենն հին ձեռագրերում գտել է զուտ խաշաձև մի գիւմ (+), որ տակի կեռից զուրկ լինելով՝ տարբերութուններից մեկը ջնջվում է: Բայց գլխի կողմից միացած մի ձև շէ գտնված: Կարող է լինել, որ այս միացումը հետո հայերենի մեջ ձևացած լինի, ինչ որ շատ դժուրությամբ կարող էր տեղի ունենալ: Արդարև, եթե առնենք զուտ խաշաձև մի գիւմ (+), բնականորեն կարող ենք ենթադրել, որ այս խաշաձև կազմող երկու գծերը գրության ժամանակ երկրաչափական ճշտութուն պահած չլինին, այլ գրության հեշտության համար իրենց ծայրը փոքրիկ մի կեռ ստացած լինեն: ¶ Ընկույթով, որոնք հետո միանալով կազմել են 4 թվանշանի նման մի ձև և սրանից էլ Գ: Արդեն ներկա ձեռագրի մեջ էլ (արևմտահայոց մոտ) կա նման մի գիւմ, որ բաղկացած է ւ ձևով մի գծից, որի մեջտեղից վերևից ներքև անցնում է Կ նշանի նման մի գիւմ:

Վրացերեն Կ նույն է հայերենի հետ, միայն թե այստեղ թևի փոխարեն գրի ստորոտը սանդղաձև է շինված: Մյուսները այս գիրն էլ հանում է արամեական և պալմիրական ձևերից, ինչ որ իմ կարծիքով անընդունելի է:

Դ

Այս տառը բավական մեծ դժվարութուն է հարուցում: Մյուսները հանում է արամեական կրկնակ նշաններից, Հարությունյանը և Տաղավարյանը՝ փյունիկյան Գ գրից, որոնց հետ շատ հարմար են գալիս նաև բաբելականը, պալմիրականը և սամարականը: Բայց այս համեմատության ժամանակ նկատի պետք է առնել նաև Գ տառը: Ինչպես գիտենք, հայերեն Գ և Դ իրար շատ նման են և տարբերվում են միայն բերանի բաց կամ փակ լինելով: Այսպես է նաև սասանյան գրության մեջ: Հին սասանյան այբուբենում Գ և Դ առանձին ձևեր ունեին. բայց ժամանակ անցնելով այդ գրերը իրենց հին ձևը կորցրին և այնքան մոտեցան իրար, որ պահլավերենում արդեն միևնույն փոքրիկ շ ձևին հասան: Ընթերցանության համար շփոթ էր այս, ուստի զանգիկ այբուբենի մեջ այդ ձևը հատկացրին Դ-ին, իսկ Գ-ին համար հնարեցին բոլորովին տարբեր մի նշան: Այսօր պահլավերեն ձեռագրերի և եվրոպական հրատարակությանց մեջ՝ երկու ձայները տարբերելու համար Գ-ի վրա դնում են երկկետ, իսկ Դ-ի վրա պարույկ կամ երեք կետ: Նույնպիսի նմանութուն կա նաև փյունիկերենում, ուր Գ = գ և Դ = դ: Թեև այս նմանութունը շատ նպաստավոր հանգամանք է ներկայացնում, բայց կա մի կետ, որով նմանութունը շատ է հեռանում: Փյունիկերենում Գ տառն է, որ բաց բերան ունի, իսկ Դ՝ փակ. մինչդեռ հայերենի մեջ ճիշտ հակառակը: Այնպես որ,



էթէ հայ և փյունիկյան ձեռքի միշտ ցնդակցութիւն լինէր. 7 պիտի տար Գ, իսկ Գ պիտի տար Գ:

Փյունիկներենի մանրանկարներն են էսթրանգելո, ասորի, պահլավ և արարական ձեռքը, որոնք զլիւից կամ թեից զուրկ լինելով՝ շին հարմարվում մեր գրին: Ասորին ր գրից զանազանվելու համար տակին ստացել է մի կետ. նույն ձևը մի քիչ ավելի զարգացրել է զանգիկը, որ իր տակի պոչով մեղանից հեռու է մնում: Մարկվարտը մեր գիրը ուզում է հանել այս պահլավական ք կամ հին եղեսական (ասորական) ք ձևից: Այս ձևը մեր Գ-ին հասցնելու համար գիրը նախ ողիղ դիրքով է կանգնեցնում, երկրորդ՝ ձախ կողմից մի կտուց է ավելացնում, երրորդ՝ աջ կողմից մի թև է կպցնում: Գրի ուղիղ դիրքը և ձախակողմյան կտուցը կարող ենք ընդունել, բայց աջակողմյան թևի հավելումը մեզ համար անըմբռնելի է: Գրերը իրենց ձևափոխութիւն մեջ ենթակա են եղած միշտ հաջորդական զարգացման. ամեն զարգացում իր սկզբնապատճառն ունի. օրինակի համար՝ երբ ասում ենք, որ հույն գրերի բերանը բացված է հայերենում, դա գրչի թուլութիւնն րնական արդյունքն է, զարգացման հաջորդական մի աստիճան: Երբ տեսնում ենք, որ մի տառի պոչը կտրված է, դա ավելի համոտտ գրելու կամ ժամանակի ընթացքում մաշվելու սկզբունքից է: Երբ տեսնում ենք, որ մի գծի ծայրին մի ավելորդ պոչ է ավելացել (օրինակ՝ զենդական չ գրի պոչը), սա էլ կարող ենք մեկնել աճման կամ զարգարուն գրելու հասարակ սկզբունքով (ինչպես է տաճկերենը կամ տաճկահայոց արդի ձեռագիրը): Բայդ երբ ուզում են բոլորովին անկախ մի մաս ավելացնել մի գրի վրա, առանց որևիցէ պատճառի, դա մնում է անըմբռնելի: Վերի պարագային Գ գրի համար ենթադրված թևը բոլորովին անտեղի է. եթէ Գ ծագած լիներ պահլավական ձևից, պարզապես Պ ձևը պիտի ունենար: Չենք էլ կարող ասել, որ ուրիշ տառի հետ շփոթվելու համար է ստացել այդ թևը, որովհետև առանց թևի էլ ո՛չ մեկ տառի հետ չի կարող շփոթվել:

Կոպպը հայերեն Գ գիրը հանում է զպաիերեն գրից, որ անշուշտ շատ նման է և կարող էինք ընդունել իրեւ մեր գրի մայրը, եթէ զպաիերենը ուրիշ որևէ պարագայի մեջ հայերեն գրերին որևէ նպաստ մատուցած լիներ:

Եթովպական և հին պահլավական, մանավանդ մանիքեական և սոգդիական գրերը համեմատութիւնից հեռու են մնում ձևի պատճառով:

Մնում է ուրեմն հունարենը, որի հետ համեմատում են Գարդհաուզենը, Մենևիշյանը և Սարգիսյանը:

Հունարեն Պ գիրը թևեւ այսօր հասարակ մի եռանկյուն է, բայց

նախապես եռանկյունու գագաթի վրա՝ աջ ու ձախ թևեր ունեւր: Այս հին ձևից է ծագել ղպտիական D d գիրը, որ գագաթի վրայի ձախ թևը անաղարտ պահում է, նույնպես է նաև ղպտի Ճ յ, որ ձևացած է հունարեն Δ գրից և նրա գագաթի վրայի երկու թևերն էլ պահում է: Գարգհաուզենը, որ մեր հայերեն Դ գիրը այս հույն ձևից է հանում, իբրև միջնորդ կամ ապացույց է բերում ղպտիի հետ նաև վրացերեն գիրը: Մեսրոպն անշուշտ աչքի առաջ է ունեցել երկու թևերով հունարեն Դ, որի բավական հավատարիմ պատկերն է վրացերեն Ծ: Սրա տակի կտրակը հույն դեկտայի եռանկյունն է ներկայացնում, իսկ կարճ բնի վրա աջ ու ձախ նստած թևերը ներկայացնում են հին դեկտայի գագաթի երկու թևերը: Հայերեն Դ-ի մեջ՝ տակի փակ եռանկյունը բացվելով՝ նախապես թույլ կիսաբոլորակ է շինված, որ հետզհետե կրճատվելով՝ մնացել է միայն Դ-ի ուղիղ սյունը: Ընդհակառակը, գագաթի կարճ թևերը զարգացած և ձևացրած են մեր մեջ Դ-ի դուխը և թևը: Փակ եռանկյունու բացման երևույթը տեղի է ունեցել նաև հունաց մեջ: Հմմտ. ցուցակի երկրորդ և երրորդ ձևը՝ որից զարգացել է նորագույն ծ ձևը:

Սարգիսյանը մեր Դ գիրը հանում է ցուցակի երրորդ և չորրորդ ձևերից, որոնք սակայն չի կարելի հայերեն Դ-ին նման համարել: Միևնույն ժամանակ ասում է, թե Մեսրոպը աչքի առաջ ունեւր զանդիկ ՚ ծ գիրը (իբրև ձև հիշում է մի ձև, որով անշուշտ այս գիրն է հասկանում):

Մյուսները վրացի Ծ հանում է փյունիկ  $\Delta$  կամ արամեական  $\Delta$  Կ գրից, գլխավայր շրջելով, ինչ որ այնուամենայնիվ նմանութունից հետո է մնում:

## Ե

Հարությունյանը հանում է փյունիկյան  $\Delta$  գրից. բայց այս գիրը հայերեն Ե դառնալու համար շատ բանի է կարոտում: Նախ պետք է երեսը դեպի աջ դարձնել, հետո սյունը տակից կտրել, և վերջապես վերևի առաջին թևը հանել: Այսքան փոփոխութուն ծանր է երևացել նույնիսկ Տաղավարյանին, որ թեև առհասարակ հայերեն գրերի փյունիկյան ծագման կողմնակից է, սակայն այս պարագային Ե համարում է հայերեն է գրից ձևափոխված: Կա նաև այն հանգամանքը, որ փյունիկյան  $\Delta$  գիրը, ինչպես և նրա ցեղակից բոլոր սեմական, ասորական և իրանյան ձևերը, Կ ձայնն ունի և հունաց մեջ միայն դարձել է ե: Սեմական լեզուները ղուրկ են ե ձայնավորից և միայն զենդական այբուբենն է, որ ստեղծել է այս ձայնավորի համար մի քանի նշաններ.  $\Delta$  (Ե) և  $\Delta$ ՝ որ համարվում է

բ Ծ, և սրանց համապատասխան երկարները՝ **Պ Ե Կ Ծ**: Այս կետը նկատի ունենալով՝ համեմատութեան ամեն պայման շեղում է հիշյալներէ հետ:

Մյուսները, որ սկզբից սեմական **Դ** հ գրի կողմնակից էր, սրան իբր պայացուց բերելով վրացերեն **Կ** և գրի նմանութիւնը, վերջին անգամ դիմում է զենդերենին և մեր գիրը հանում է զնդ. և ձևից, որ ճիշտ նույն է հունարեն **ε-ի** հետ: Բայց այս մեկնութիւնը անշուշտ ուղիղ չէ, որովհետև, ի նկատի չունենալով հանդերձ այն կետը, որ զնդ. է համարվում է օ ք. գրի մեջքը փոս է և չի կարող տալ հայերեն օ, այլ առ առավելն՝ շրջված **Յ-ի** նման մի ձև:

Սակայն ի՛նչքան հավատարիմ նմանութիւն կա հունարեն ձևի հետ, որի հետ համեմատում են մեր օ-ն բանասերների մեծ մասը՝ Գարդհատուզները, Մենեիշյանը, Սարգիսյանը, Մալխասայանը և Մարկվարտը:

Հունարեն գիրը փյունիկերենի շրջված ձևն է, ծուռ կամ ուղիղ գրված **Է**, որ մեր գրի դիրքն ունի: Սրա տակից հետո կրճատված է զնպի ցած երկարած սյունը, ինչպես հայերենի մեջ էլ, որով ձևացել է **Ե** ձևը: Բայց ինչպես ցուցակում տեսնվում է, զանազան հին ձեռագրերում գործածված է նաև սրանից մի քիչ տարբեր մի ձև, որ ստորին թևը կիսաբոլոր վերև է դարձած՝ ճիշտ մեր գրի նման, իսկ վերին թևը շեշտի նման մի բան է դարձել: Երբեմն նաև այս շեշտն էլ է պակասում, ինչպես ցույց են տալիս ցուցակի երրորդ, չորրորդ և հինգերորդ ձևերը, որոնք մեր օ-ից տարբերութիւն չունեն:

Սարգիսյանը թեև ուղիղ համեմատութիւնը դնում է, բայց ասում է նաև, որ Մեսրոպը զնդ. **Մ** գիրը աչքի առաջ ունի հայերեն «համապատասխան» գիրը կազմած ժամանակ: Բայց թե ո՞րն է այս համապատասխան գիրը՝ չի ասում: Ինձ թվում է, թե օ է ուզում հասկանալ: Այս կետը ավելորդ էր:

Շատ հետաքրքիր է վրացերեն **Կ** և: Սա՛ ինչպես տեսնվում է, հունարեն գրի հետ բնավ նմանութիւն չունի և ավելի արդարացի պիտի լիներ համեմատել արամեական ու պարսիական ձևի հետ, ինչպես անում է Մյուսները: Սակայն, ինչպես Գարդհատուզենն է ասում, վրացի ձևը ծագում է հին **Ա** գրից, որ հունարեն **Ε-ի** երկրորդական ձևն էր և հատկապես զործածական էր լատինական գրութեան մեջ: Վրացերենում, ինչպես սպասելի էր, երկու ցուպերը գլխի կողմից միացել են՝ միակտուր մի տառ ունենալու համար: Բացի սրանից, առաջին ցպիկը երկրորդից մի քիչ կարճացել է, ինչպես հայերեն **Պ՝** համեմատած հունարեն **Π-ի** հետ:

Հարությունյանը համեմատում է փյունիկյան Գ, Տաղավար-  
յանը I կամ Z գրերի հետ: Առաջինը գլխով նման է, բայց կողքից  
ավելորդ մի թև ունի. բացի սրանից, տակի պոչը պակասում է:  
Մյուս փյունիկյան ձևերը, ինչպես նաև պալմիրականը, սամարա-  
կանը, եթովպացին, մանիքեականը, սոգդիականը, էսթրանգելոն, ա-  
սորին, զենդն ու սասանյան ձևերը բոլորովին տարբեր են: Կարող  
էինք սամարական Z ձևի դիրքը փոխել, վրայի կոտոշը կտրել, որով  
կձևանար ճիշտ մեր Զ գիրը: Բայց մենք այսպիսի հեղաշրջությանց  
հակառակ ենք: Չենք կարող ընդունել նաև Կոպպի կարծիքը, որ մեր  
Զ գիրը պահլավական Ծ գրից է հանում, և զարմանում ենք Մարկ-  
վարտի վրա, որ դիմում է պահլավական Ղ կամ սասանյան ՏՏ  
ձևերին:

Ենթադրենք, թե սրանց վերևի մասի կորությունը զարգանալով  
տված լինի հայերեն Զ-ի գլուխը. բայց ո՞ւր է պոչը: Ենթադրենք  
նույնպես, որ հիշյալ գրերի ծայրի ոլորքը ավելի աճած և կանոնա-  
վոր մի պոչ դարձած լինի. բայց այն ժամանակ այս պոչը ձախ կող-  
մում միայն պիտի գտնվեր և պիտի ունենայինք Կ ձևը: Ինչի՞ց ա-  
ռաջացավ պոչի աջակողմյան մասը:

Լագարդը այս գրի ծագումը անորոշ է թողնում: Մեր կարծիքով  
իրավունք ունեն Գարդհաուզենը, Մենեիշյանը, Սարգիսյանը և  
Մալխասյանը, երբ հայերեն գիրը համեմատում են հունարեն Z-ի  
հետ: Այս տառը փյունիկականի զարգացած ձևն է, որի առաջին  
աստիճանն է արամեականը, որ կարող էինք նույնպես հայերենի  
հետ համեմատել, եթե սրա գլուխը մի քիչ ավելի զարգացած լիներ,  
ինչպես հունարենում:

Հունարեն գիրը զանազան ձևեր ունի, որոնցից հինգը դրել ենք  
ցուցակի մեջ: Սրանց վրա ավելացնենք նաև նորագույն է և ղըպ-  
տիերեն ձևը: Սրանցից տեսնվում է, որ ձգտում կա այս գրի գլուխը  
զարգացնելու և նախկին ուղիղ գիծը՝ ձախակողմ հակված մի բո-  
լորակի վերածելու: Համեմատել ղպտիական ձևը, նույնպես և արդի  
եվրոպական ձևագրի Z ձևը: Բոլորակը կատարելության է հասել  
հունական երկրորդ ձևի մեջ, որից առնված է ռուսական Յ: Սրանից  
է ձևացել նաև հայերեն Զ-ի գլուխը:

Գլուխ գրի տակի պոչին, այս էլ տեսակ տեսակ է. առաջին  
ձևի մեջ պոչը թեքվում է աջ ու ձախ՝ երկու կողմ. երկրորդի մեջ  
միայն դեպի ձախ է ոլորվում, իսկ մյուսներին մեջ դեպի աջ: Նոր այ-  
բուբեններից ղպտին աջակողմյան է, ողւար ձախակողմյան, իսկ  
մերը աջ ու ձախ է միանգամայն: Այսպես է նաև եվրոպական ար-

զի ձևագրում, որ Z-ի տակի գիծը աչ ու ձախ ծածանվում է աչե-  
ձևւ Հայերեն բոլորգրի ու նոտագրի մեջ պոչի աջակողմյան ուղ-  
ղությունը վերականգնված է:

Մարկվարտը, որ Չ գրի հունարեն Z-ից ծագելուն հակառակ է,  
հարց է առիւս, թե ի՞նչ պատճառով բոլորակը աջակողմում գրված  
չէ: — Ճիշտ այն պատճառով, ինչ պատճառով որ եզել է հունական  
նի նրկորոգ, շորորոգ և հիեզերորոգ ձևերի, դպտիի, ուստի և լատինի  
մէջ: Երբ գրում ենք հունարեն նոտագիր Զ ձևը, վերի աջակողմ-  
յան ոլորքը արագ գրութեան մեջ կարող է հետզհետե պակասել և  
վերջապես ոչնչի վերածվել, իսկ ընդհակառակը, ձախակողմյան ո-  
լորքը շատ ավելի վերեւից սկսվել ու հետզհետե մեծանալ: Կարող է  
նաև ճիշտ հակառակը կատարվել: Երկուսն էլ գրի զարգացման բը-  
նական ընթացքն են ներկայացնում: Հայերենի մեջ՝ տեղի է ունեցել  
առաջինը և տարօրինակ ոչինչ չի ներկայացնում բնավ:

Վրացերեն Պ, որ մեր այսօրվա շղագիր զ-ի ձևն ունի ճիշտ,  
մերի հետ նույն ծագումն ունի: Մյուսները հանում է արամեական և  
փյունիկյան Շ ձևից, որ դժբախտարար շատ հին է: Վրացերենում  
գրի գլուխը մերի պես ձախակողմյան է և իր կիսարաց դիրքով նը-  
ման է հունարենի հիեզերորոգ ձևին: Հունարենի սովորական ձևերին  
համաձայն է նաև գրի պոչը, որ միայն դեպի աջ է երկարում:

## Է

Հարությունյանը (էջ 314) այս գիրը հանում է հայերեն Է գրից,  
մեջտեղը մի թև անցկացնելով: Բայց շեմ հասկանում, թե ի՞նչ կապ  
կա Է-ի և Է-ի միջև: Եթե գրերի համեմատութեան մեջ միայն ձևի  
նմանութիւնը ի նկատի պիտի ունենանք, առանց հնչման համազո-  
րութիւնը ի նկատի առնելու, այն ժամանակ այլևս ի՞նչ պետք են  
հնազրութիւն, զանազան այրուքնների քննութիւն, համեմատու-  
թիւն, տառերի հաշորդական ձևափոխութիւններ և այլն: Կարող  
էինք այն ժամանակ մեր բոլոր 36 գրերն էլ հանել օրինակի համար  
միակ մեր Է գրից, կվերջանար-կերթար: Գրերի ածանցման օրենքն  
է կամ հնչման նույնութիւն և կամ գոնե մերձավորութիւն. վեր-  
ջին պարագան էլ ա՛յն ժամանակ միայն, երբ մայր այրուքնում  
պակասում է պահանջված տառը: Սրա վրա ավելի ընդարձակ տե՛ս  
Ը տառի մեջ:

Տաղավարյանը է գիրը հանում է փյունիկ Մ գրից, որ սա-  
կայն համապատասխանում է մեր Ե-ին և է դառնալու համար կա-  
րոտ է ենթարկվելու գրեթե նույնքան անդամահատութեան, որչափ  
Ե դառնալու համար:

Շատ գեղեցիկ է Կոպպի և Մյուլլերի համեմատությունը: Սը-  
րանց մոտ մեր գիրը համեմատվում է զանդիկ չ գրի հետ, ճիշտ  
ինչպես որ Ե հանվում է զանդիկ Է գրից: Զանդիկ Է և չ ճիշտ  
ա՛յն համեմատությունն ունեն իրար հետ, ինչ որ հայերեն Ե և է:  
Երկուսի մեջ էլ վերջինը մի պոչով է միայն տարբերվում առաջինից:  
Սակայն դժբախտաբար, ինչպես գիտենք, զանդիկ ձայնավորների  
գրությունը հետին ժամանակի նորամուծություն է: Է և չ ո՛չ թե  
e, օ ձայներն ունեն, այլ e, օ. e ձայնի համար գործածվում է զան-  
դիկ չ՝ ձևը, որի երկարն է չ՝ e. հայերեն Ե չի ծագում զանդիկ  
Է-ից, այլ հունարեն e-ից, ինչպես տեսանք: Այսպիսով հայերեն  
է և զանդիկ չ՝ գրերի շատ գեղեցիկ նմանությունը դառնում է պա-  
տահական:

Մյուս այբուբենները զուրկ են համապատասխան ձայնավորից.  
մնում է միայն հունարենը:

Գարգհաուզենը, Մենելիշյանը և Սարգիսյանը մեր գիրը հա-  
մեմատում են հունարեն H ղ գրի հետ, որ հնչմամբ, գրերի շարքով  
և տառադարձության մեջ հայերեն է-ի համապատասխանն է: Թեև  
հունարեն H մերից ձևով շատ տարբեր է, բայց նրա հին ձևերը (տե՛ս  
ցուցակի երկրորդ և երրորդ ձևերը) հեշտությամբ տալիս են հայե-  
րեն է գիրը, միջին թևի հավելմամբ:

Մարկվարտը է գիրը մեր Ե-ից ձևացած է դնում և հակառակ է  
հունական ծագման, առարկելով թե H գիրը Ի-ի մոտիկ հնչում ու-  
նե՛ր: Բայց ապահովապես սխալվում է Մարկվարտը, որովհետև Ե  
դարի հայերը հունարեն H գիրը տառադարձնում են միշտ է կամ Ե  
և այբուբենի մեջ էլ ճիշտ է-ի դեմ են դրել:

Մյուլլերը վրացի Ծ գիրը հանում է արամեական H (հ) գը-  
րից, բայց հունարեն H-ի երկրորդ ձևը ավելի մոտ է. վրացի գրի  
վրայի կետը բռնում է մեր գրի թևի տեղը և միևնույն ծագումն ունի:

## Ը

Մյուս ազգերը չունեն այս գիրը. հարուստ վրացերենի մեջ ան-  
գամ պակասում է. երբայցիք ունեն այս հնչումը, բայց ձայնանի-  
շով են նշանակում: Այնպես որ Մեսրոպի համար հայերենի այս  
հնչման դեմ համազոր չկար:

Լագարդը այս գրի ծագումը անորոշ է թողնում: Հարությունյանը  
(էջ 314) հանում է հայերեն Լ-ից, որի համար պետք է կրկնել այն,  
ինչ որ վերը ասացինք է գրի առթիվ: Տաղավարյանը հանում է հա-  
յերեն Ղ գրից, այս էլ փյունիկ 𐤒 գրից: Մյուլլերը հանում է զան-  
դիկ 𐤒 գրից, որ ունի ոնգային ա (ան) հնչումը և հետևաբար

նույնպես հետո կմնա մեզանից: Սարգիսյանը հանում է ստորի ի գրից (անունը իմ թերևս հարմար գտնելով ըր անունին): բայց այս էլ ձևով ամենևին նման չէ:

Գրի ծագումը գտնելու համար պետք է նախ քննել, թե ի՞նչպես են վարվել այբուբենի հնարող ուրիշ ազգերը, երբ իրենց լեզվի մեջ ունեցել են այնպիսի հնչյուններ, որոնց համազորը պակասում էր իրրև նախատիպ անվամբ այբուբենում:

Օրինակը ցույց է տալիս, որ այս պարագային՝ այբուբենի հնարողները իրենց տիպար այբուբենի միջից ընտրել են սովորաբար այն գիրը, որ ամենից ավելի մոտիկ հնչում ունի իրենց ունեցած հնչման, և այն գրի վրա մի փոքրիկ ձևափոխություն մտցնելով, շինել են նոր տառ: Այսպես, օրինակի համար, պարսիկները փոխ առնելով արաբական այբուբենը, չգտան այնտեղ իրենց լեզվի ք, ճ, չ և ց հնչյունները, ուստի առան սրանց մերձավոր հնչյունն ունեցող տառերը՝ ٻ, ب, ج, ځ, ز, ڪ և փոքրիկ փոփոխությամբ շինեցին ٻ ք, ج Ե, ځ Զ, ڪ Գ: Թուրքերը, երբ փոխ առան պարսկական (=արաբական) այբուբենը, չգտան այնտեղ իրենց լեզվի ڦ (կոկորդական և) հնչյունը, ուստի առան սրա մոտավոր հնչյունն ունեցող ڍ ց գիրը և վրան երեք կետ ավելացնելով՝ շինեցին ڍ և սաղր քեաֆ): Այսպիսի նորակերտություններ են նաև մալայերենի ڠ ng, ڦ ny, ڦ ք, հինդուստանի ٽ 1, եվրոպական լեզուների մեջ՝ լեհերեն, սլովակերեն և այլն 1, Ե, Ֆ, Զ, իսլանդերեն Ծ գոթերեն Բ, իսպաներեն և և այլն կն:

Այս օրենքը կոչում են այլանմանության օրենք:

Այլանմանության բնական և ընդհանուր օրենքին հետևել է նաև Մեսրոպը ամեն անգամ, երբ հայ հնչյունն արտահայտող մի գիր չի գտել իր ծանոթ այբուբենների մեջ:

Ը գրին ամենամոտիկ հնչյունն էր անշուշտ է, ուստի սրա միջին թևը մի թիշ վեր բարձրացնելով՝ շինել է Ը տառը: Գրեթե նման ձևով են վարվել նաև նոր լեզվաբանները, որոնք գիտական այբուբենի մեջ ք ձայնը նշանակելու համար ընտրել են նույն Ե գիրը և շրջելով կամ տակը մի կետ դնելով՝ շինել են Ծ կամ Զ:

Մենք ուրախ ենք, որ Մեսրոպը մեր գրերի մեջ կետեր չի դորձածել, ինչ որ առանձին առավելություն է տալիս մեր այբուբենին: Քիչ այբուբեն կա, որ այս առավելությունն ունենա. ամենքն էլ գունե փոքր շափով դարդարված են կետերով. օրինակ՝ ստորին ունի Զ, Զ, լատինը ı, ȷ, ռուսը ı, ѱ, հունարենը՝ կետերի և շեշտերի ահագին մի բազմություն, իսկ սեմական լեզուները իրենց ձայնանիշներով, մանավանդ արաբերենը և սրանից առաջացած այբու-

բենները՝ ամեն մեկ գրի վրա մեկից մինչև շորս կետերով ու ձայնանիշերով՝ ուղղակի անտանելի են:

Վրացերենը, ինչպես գիտենք, ը գիրը շունի, վերջին ժամանակները հնարվել է Շ ձևը՝ այս ձայնի համար:

Ք

Ք գրի ծագումը որոնելուց առաջ պետք է որոշել, թե որոնք են իր համապատասխանները օտար այբուբենների մեջ: Հունարենում սրա համապատասխանն է  $\Theta$ , որի մասին տարակույս չկա: Հունարենն այբուբենը, ինչպես գիտենք, ծագում է փյունիկյանից, ուր այս գրի մայրն է  $\Theta$  teth գիրը: Մյուս սեմական այբուբենների մեջ փյունիկյան  $\Theta$  գրի համապատասխաններն են եբրայերեն  $\Theta$ , ասորերեն  $\Theta$ , սամարերեն  $\Theta$ , եթովպերեն  $\Theta$  և այլն: Հունարենում կա նաև T գիրը, որի փյունիկյան մայրն է + կամ X tau. սրա ցեղակիցներն են եբրայական  $\Theta$ , եթովպական +, սամարական V, ասորական j և այլն: Արդ՝ հայերենի մեջ թեև հունարեն  $\Theta$  տառադարձված է Ք և հունարեն T = հայերեն ա, բայց սեմական  $\Theta$  տալիս է հայերեն ա, իսկ սեմական  $\Theta$  = հայերեն ք (տե՛ս Հյուբշման, Arm. gramm. էջ 286): Հակասությունն ակներև է. հուն.  $\Theta$  = հայերեն ք, հունարեն  $\Theta$  = սեմական  $\Theta$ , բայց սեմական  $\Theta$  = հայերեն ա:

Արդ՝ երբ Մեսրոպը հնարում էր հայերեն տառերը, ի՞նչ բան ի նկատի պիտի առներ. գրերի հնչողությունը, թե՛ նրանց հին ծագումը: Տարակույս չկա, որ միայն հնչման հետ գործ ունենա, որովհետև հնագրագետ շէր՝ տառերի հին վիճակը որոնելու և իր գրերը նրանց վրա կաղապարելու համար: Այս տեսակետից առաջնորդվելով՝ մենք էլ մեր ցուցակում Ք գրի դեմ դրինք հունարեն և ղպտիերեն  $\Theta$ , իսկ փյունիկ և այլ սեմական այբուբենների՝  $\Theta$  tau գիրը. իսկ S գրի դեմ հունարեն T, իսկ փյունիկ և այլ սեմական այբուբենների՝  $\Theta$  thet գիրը:

Այս համապատասխանությունները որոշելուց հետո, տեսնենք, թե ի՞նչպես են վարվում մեր քննիչները Ք գրի հետ:

Հարությունյանը այս գիրը հանում է փյունիկյան  $\Theta$  գրից, Տաղավարյանը՝ փյունիկյան  $\Theta$  գրից, Մյուսերը՝ պալմիրական  $\Theta$  գրից. սրանք բոլորն էլ սեմական thet գրի ներկայացուցիչներն են, որ ինչպես տեսանք, համապատասխանում են միայն մեր ա-ին և հետևաբար այստեղ գործ չունեն: Ավելացնենք նաև, որ ձևով էլ նրան չեն մեր գրին: Փյունիկյան  $\Theta$  և պալմիրական  $\Theta$  մեր գրին



վերածովելու համար պետք է նախ աչ դառնան և հետո գլխիվայր շրջվեն: Փյունիկ  $\oplus$  հեովից միայն հիշեցնում է մեր գիրը և նրան հասնելու համար զանազան ձևափոխությունաց պետք ունի: Զանգիկ և գիրն էլ գործ շունի մեզ հետ, որովհետև սրա հնչումը հունարենն արդի  $\Theta$  գրի նման  $\rho$ -ի և  $\phi$ -ի մեջ տատանվում էր: Նա համապատասխանում էր արդի անգլիական լի հնչման thak բառի մեջ: Բացի սրանից, զանգիկ և ձևը տարբեր չէ պալմիրականից: Մյուս այբուբենների համապատասխան ձևերը, փյունիկ  $\dagger$  կամ  $\times$  (տե՛ս ցուցակում), նույնպես տարբեր են մեր գրից: Կուպը դնում է հին պարսկերեն (իմա՛ զանգիկ և պահլավերեն)  $\Omega$  գրից, որ ավելի մեր ա գրին է համապատասխանում, թեև երբեմն էլ տառադարձված է իբրև  $\rho$ :

Փյունիկյան  $\oplus$  գրի դարգացած ձևը ներկայացնում է հունարեն  $\Theta$ : Փյունիկ գիրը գրչի անջատ շարժումներով միայն կատող էր ձևանալ. ջանք է գործ դրվել մեկ շարժումով գրելու. այսպես է ձևացել հին հունական տառը, որ շրջված  $\Theta$  գրի նման մի բան է և նոր հունական  $\theta$ , որոնց տարբերությունն այն է, որ առաջինը վերևից է սկսվում, երկրորդը ներքևից: Հին հունականին բոլորովին նման է հայերեն  $\Phi$ , որի մեջ ձախակողմյան սյունը հայ գեղագրության ոճի համաձայն նրկարած և մինչև տողի վրա է իջած:

Գարդհաուզներ, Մենևիշյանը, Սարգիսյանը, Մալխասյանը և Փառնակը մեր գիրը դնում են հունարենից: Սարգիսյանը ուզում է, որ Մեսրոպը աչքի առաջ ունեցած լինի նաև զանգիկ  $\Theta$  գիրը. բայց այս, ինչպես ասացինք, թե՛ ձևով և թե՛ իր թվատ հնչումով հարմար չէ մերին: Մարիվարտն էլ հունարեն  $\Theta$  գրից է դնում մեր տառը, բայց ավելի լավ է համարում դնել հին էսթրանգելու  $\sigma$  ձևից, որ սակայն հունարենի շափ նման չէ հայերեն ձևին: Վրացերեն ( $\text{ⴁ}$ ) գիրը Մյուլլերը հանում է փյունիկյան  $\oplus$  ձևից, բայց ըստ մեզ հայերենի հետ նույն ծագումն ունի, ինչ որ ավելի պարզ կերևա, երբ համեմատենք հունական  $\Theta$  ձևը: Հույն տառի միջի անջատ գծիկը վրացերենում դարձել է մի թև՝ միակտուր տառ ունենալու համար:

### ժ

Մեր շրջակա ազգերի մեջ միայն պարսիկներն են, որ ունեն այս հնչումը, այն է զանգիկ  $\text{ⴁ}$ , պհլ.  $\text{ⴁ}$ : Հայերենը շատ նման է վերջինին և ակներև կերպով նրանից է շինված: Վրացերեն  $\text{ⴁ}$  ժ գրի մեջ, հիմնական ձևը նույն է. սյունը մնում է անփոփոխ. միայն ձախակողմյան ոլորտը փոխանակ սյունից ճեղքել անցնելու՝ կրկնակ ոլորտով վերև է բարձրանում:

Հարությունյանը այս գրի հետ համեմատում է փյունիկ Ռ Ի գիրը, իսկ էջ 314՝ հայերեն Զ կամ Շ գրից է հանում: Սարգիսյանը պրս. Յ կամ զնդ. 𐭪 𐭩 (չ) գրից (անշուշտ տառադարձությունից խաբվելով, որովհետև ինքն էլ արդեն յ է տառադարձում): Տաղավարյանը պրս. Յ կամ բակտրիական Փ (?) գրից: Բայց թե՛ փյունիկ Ի և թե՛ բակտրիական Փ (?) շունեին հայ տառի հնչումը, հետեւաբար նրա հետ շեն կարող համեմատվել: Գալով ձախորդ պրս. Յ գրին, սա արաբերեն շ Z գրի վրայից շինված մի տառ է և մոտավորապես՝ Թ դարի գործ: Լագարդը այս տառի ծագումը անորոշ է թողնում: Նմանապես Մարկվարտը անծանոթ է համարում այս գրի մեկնությունը, և դարմանում եմ, որ պհլ. 𐭪 ձևը շտեսնելու է տվել: Կոպպը դնում է զնդ. e կամ 𐭪 y գրի նման մի ձևից, որ հին պարսկերեն է կոչում և որի ինչ լինելը չգիտեմ: Մյուսները վրացի ձևը դնում է փյունիկ Վ (ծ) գրից շրջված, որովհետև այբուբենի շարքի մեջ այս երկու գրերը իրար դեմ ընկած է գտնում:

Ի

Հարությունյանը այս գիրը հանում է հայերեն Ի-ից (տե՛ս վերը Է-ի մասին ասվածները): Տաղավարյանը հանում է փյունիկ Z Ի գրից, որ շատ նմանութուն չունի մեր գրի հետ: Նմանութուն չենք գտնում նաև պալմիրական, սամարական և հին սասանյան գրերի հետ: Հին սասանյան գիրը պալմիրականի մի թեթև ձևափոխությունն է. այս գիրը մի քիչ ավելի մանրանալով էսթրանգելոյի մեջ դարձել է, ասորերենի մեջ 𐭪, իսկ նոր պահլավերենի մեջ յ: Բայց ինչպես հայտնի է, պահլավերենը ձայնավորներ չունի, ուստի այս տառը գործ է ածում միայն իբրև երկար Ի: Զանդիկ գրության մեջ, ուր ձայնավորների կատարյալ առատություն կա, պահլավական այս յ տառը հատկացված է կարճ Ի-ին, իսկ երկար Ի-ի համար՝ փշիկի հավելմամբ շինված է 𐭪 մանր տառը (ինչպես որ կարճ 𐭪 ա-ից շինված է երկար 𐭪 ա, կարճ 𐭪 ու-ից շինված է երկար 𐭪 ու, կարճ 𐭪 օ-ից երկար 𐭪 օ և այլն): Մյուսները, որ նախապես թե՛ մեր գիրը և թե՛ վրացին սեմական 𐭪 (?) գրից շրջված էր համարում, վերջին անգամ հայերեն Ի գիրը այս զանդիկ երկար Ի-ից է հանում, որ ոչ հնչումով է նույն և ոչ ձևով: Ի՞նչ պատճառով Մեսրոպը պիտի առներ երկար Ի-ն, քանի որ կարճ Ի կար: Ձևի կողմից հարմարութուն ստեղծելու համար Մյուսները զանդիկ 𐭪 գիրը ձախ կողմն է դարձնում, հետո ուղիղ է կանգնեցնում, բայց սրանով դեռ Ի չի ձևանում:

Շատ գեղեցիկ են մեկնում Գարդհաուզենը, Մենևիշյանը, Սար-

գիտյանը, Մալխասյանը, Փաննակը և Մարկվարտը, որ մեր է գիրը համեմատում են հունական գրի հետ: Այս հասարակ ձողիկը մի քիչ ավելի պարզորոշ ձև առնելու համար՝ կողքից ստացել է մի թև: Այս բանը գեղեցիկ կերպով ցույց է տալիս նաև վրացերենը, որի մեջ նույն թևը ավելացել է ձողիկի գլխին: Սարգիսյանը կարծում է, որ հայ գիրը հունարենի 1 ձևից է առաջացած, ուր ծայրի գծիկների տեղ դրված է մեր ի-ի թևը. հիշում է նաև 2 ձևով մի գրություն, որի միջին թևը շատ ավելի մոտ է մեր գրի թևին: Բայց ավելորդ էմ գտնում Սարգիսյանի այն ենթադրությունը, թե Մեսրոպը այս գիրը հորինած ժամանակ զանգիկ 5 գիրն էլ աչքի առաջ ունենր:

Մյուսները, որ նախապես վրացի գիրը վերի սեմական ձևից էր դնում, վերջին անգամ հանում է արարական — ձևից: Սա շատ լավ կարող էր մեկնել ոչ թե վրացին, այլ ավելի հայերեն ձևը, եթե ժամանակի այնքան մեծ մի անջրպես շարունակը ներկուսի միջև:

1

Այս հնչումը հատուկ է միայն հայերենին. մյուս ազգերի 1 ձայնի դեմ գտնում ենք հայերեն ղ, թև՝ այբուբենի շարքում և թև՝ բառերի տառադարձության մեջ: Հարությունյանը և Տաղավարյանը այս գիրը հանում են փյունիկյան 1 գրից, որի հետ նույն են բարեկական, արամեական, սամարական, հին եբրայական և հին սասանյան ձևերը: էսթրանգելո, ասորի, սոգդիական և արարական ձևերը միայն ձախ են դարձած, իսկ պ՛Ն. և կրել է մի փոքր ձևափոխություն, որ հիշեցնում է եբրայական 2 1 տառը: Զանգիկը այս գիրը շունի: Եթովպացին վերածել է զուտ եռանկյունու, որին նման է գալիս հունարենի արդի Λ ձևը: Հին հունարենը տարբերվում է սրանից աջակողմյան սրունքի ծայրին ավելացրած թևով, իսկ ձախակողմյան սրունքը երբեմն երկար է, երբեմն կարճ: Տարբեր դարձացում է կրել պլավիրականը, որ հիշեցնում է մեր Կ գիրը և նման է մեր Լ-ին: Մյուսները մեր գիրը հանում է սեմականից. Մարկվարտը էսթրանգելո 3 -ից շրջված է կարծում. Սարգիսյանը դնում է հին հունական 4 ձևը և սրանից է համարում մերը: Փաննակը հանում է նոր պատմական ձևից, որ գրեթե ուղիղ մի դժիկ է և Ե-ից զանազանվելու համար հետո աջակողմում ստացել է մի փոքրիկ կլորակ, որով մեր գրից շատ հեռու է մնում:

Հարց է, թե իրավունք ունենք հայ գիրը վերինների հետ համեմատելու. ձևի կողմից հակառակելու բան չկա, բայց հնչման տարբերությունը կարող ենք արդյոք նկատի չառնել: Սրա պատասխանը դժվարանում էմ տալ, որովհետև և գիրը մեծ հեշտությամբ

կարող է նաև Ղ-ից առաջանալ՝ այլանմանության օրենքով (համտ. Ը գրի մասին ասվածները)։ Ղ լինելով ավելի թանձր և, իսկ և ավելի նուրբ, կարող էր Մեսրոպը առաջինի փշիկը հապավել և շինել և տառը։

Այս կարծիքն ունի նաև Մենևիշյանը։  
Վրացերենը չունի և։

և

Լազարդը այս գրի ծագումը անորոշ է թողնում։ Հարությունյանը համեմատում է փյունիկ 𐤀 և բարելական 𐤀 ձևերի հետ, որոնք շատ հեռու են մերիցից։ Տաղավարյանը հանում է փյունիկ 𐤀 ք գրից, որ ձևով ավելի հեռու է և հնչմամբ տարբեր։ Ձևով հեռու են նաև արամեական, մանիքեական, սոգդիական, ղպտի և հին սասանյան գրերը. հույնը չգիտե այս հնչումը. մի քիչ նմանություն ունեն պալմիրական, սամարական և եթովպական այբուբենները, բայց նմանությունը գրեթե կատարյալ է նոր սասանյան, զանդիկ, էսթրանգելու և ասորական ձևերի մեջ։ Սրանցից մեր Խ-ին հասնելու համար պակասում է միայն ձողիկը, բայց այս ձողիկն էլ արդեն դտնվում է զանդիկ ձևի մեջ։

Մեր քննիչներից ոմանք արդեն դիմել են այս ուղղության։ Կոպպը համեմատում է հին պրս. 𐬨 (Y) գրի հետ, որով երևի ուզում էր հասկանալ պհլ. 𐬨 X կամ զնդ. 𐬨 XV։ Մյուսները նախապես (SWAW, 1864) սասանյան S կամ 𐬨 և զնդ. 𐬨 X ձևերի հետ էր համեմատում, բայց հետո՝ առանձին մի հողվածի մեջ (WZKM, 1894, 272—287, թրգմ. Հանդ. ամս. 1894, էջ 295) համեմատում է զնդ. 𐬨 կամ 𐬨 XV գրի հետ։ Մարգիսյանը արաբական 𐤀 և-ի հետ հիշում է նաև զնդ. 𐬨 XV գիրը։ Մարկվարտն էլ 𐬨 XV ձևից է հանում։ Փառնակը հիշում է պարզապես պահլավը։ Մեր կարծիքով պետք չկա դիմելու 𐬨 XV ձևին, որովհետև սա կրկին հնչյունների գումարն է և հետևաբար համապատասխան չէ մերին։ Իրանյան և ասորական այբուբենների պարզ և ձևը բավական է մեր գիրը մեկնելու համար։ Հայերենի ձախակողմյան ձողիկը դժվարություն չի հանում, որովհետև կարող է հետո զարգացած լինել հայ գեղագրության օրենքով. երկրորդ՝ պահլավերեն 𐬨 և Խ գրերը նույն ձևն ունենալով՝ պետք կար վերջապես այսպիսի զանազանություն հնարելու. երրորդ՝ ինչպես ասացինք, զանդիկն արդեն ունի ձախակողմյան սյունը։ և գրի զարգացումը կարելի է համեմատել ձիշտ Թ գրի հետ։

Վրացի Ծ նման է հայերեն մեկ թևով խ-ի, բայց թև ինչից է զարգացած տակի թևը՝ չգիտեմ:

Մ

Հարուսթյունյանը հանում է հայերեն Զ կամ Ծ գրից. Սարգիսյանը պրս. (իմա արար.) չ Զ և գնդ. Ս գրից, Տաղավարյանը՝ արար. չ Զ գրից: Սրանք թե՛ ձևով և թե՛ հնչումով տարբեր են հայկականից: Այս հնչումը գտնում ենք միայն սեմական լեզուներում: Սրանցից փյունիկ, արամեական, պալմիրական, սամարական, մանիքեական և սոգդիական ձևերը շնավ նմանութուն չունեն մեր գրի հետ: Ընդհակառակը, շատ նման են եթովպական, էսթրանգելո և ասորի ձևերը, որոնք հայերեն տառագարձության մեջ էլ համապատասխանում են մեր ծ գրին. օր. ծեղեկիա = ասոր. šedaqyā, Բարգածան = Bardaišān, Բարձումայ = Baršaumā, Ծրավութ = Swāḍḍ, Ծուր = Sūr, Ծոփք = Sopniā, Մեծրայիմ = Mešrim, Մժրին = Nsiwin, բուժին = būšīnā, ծնծղայ = šessəlā, Ժոթոր = šabrā, Ժոմ = šaumā, ժրար = šarārā, մծղնեայ = məšaləyānē, նածրացի = našraya (այս բառերի մասին տե՛ս Հյուբե. Arm. Gram., էջ 290—312): Եթովպական ձևը տեղի հեռավորության պատճառով դուրս մնալով համեմատությունից, մնում են ասորերենն ու էսթրանգելոն, որոնք էպան տարբերություն չունեն իրարից: Սրանցից են դնում նաև Լազարոզը և Մարկվարտը: Այս գրերը հայերենին անցնելու ժամանակ՝ տակի կիսատ կլորակը ամբողջացած և աջակողմյան շրջագծից դուրս է երկարած, այնպես որ ձևացրել է մի երկրորդ թև, գրեթե բոլորգրի ծ-ի նման: Հետո այս ձևը երկաթագրի գեղագրության օրենքներով ձևավորվել և առաջ է բերել Մ: Այս ձևափոխությունը համապատասխան է ճիշտ Ժ գրի ձևափոխության, ուր նույնպես պահպանվել են գրի տակի կիսատ կլորակը ամբողջացած և աջակողմյան շրջագծից դուրս է երկարած թևի պես:

Վրացերեն ձևը գծվար է մեկնել: Փյունիկերեն, արամերեն և պալմիրական ձևերին բավական նման է, բայց պլուխը փակ է և ավելորդ մի թև ունի: Ավելի հաջող կլիներ եթովպականի համեմատությունը, բայց շնմ կարծում, որ այս գրերը իբրև օրինակ ծառայած չինեն վրացերենին: Ուստի նորից պիտի դիմենք ասորականին: Իմ կարծիքով հաջորդական փոփոխությանց շարքը կարելի է դնել հետևյալ ձևով: Ասորականի տակի կիսատ կլորակը, ինչպես հայերենում, նույնպես և այստեղ աշխատել են ամբողջացնել. բայց մինչդեռ հայերենում աջակողմյան շրջագծի միջից ձևգրել անցել է,

այստեղ, ընդհակառակը, ուղղակի վերև է բարձրացել, որով առաջացել է գրեթե B-ի նման մի ձև, որ հետո դարձել է Յ: Նկատենք, որ այստեղ էլ ձևափոխության նմանությունն կա ժ գրի հետ, ուր նույնպես պահլավական Չ գրի տակի կիսատ կլորակը՝ փոխանակ հայերենի պես շրջագիծը ճեղքել-անցնելու, ուղիղ դեպի վերև է բարձրացել:

Կ

Այս գրի ծագումը որոնելուց առաջ՝ պետք է որոշել նրա համապատասխան գրերը օտար այբուբեններում:

Հունարենի մեջ այս կարգի երկու գիր ունենք՝ K և X, որոնցից առաջինը տառադարձված է միշտ կ, երկրորդը՝ ք: Իրանյաններն ունեն մեկ գիր (ϣ), որ տառադարձված է մեծ մասամբ կ և երբեմն միայն ք (շատը հետին): Սեմականները ունեն նույնպես երկու գիր, մեկը kaf (երբ. Կ, ասոր. ܟ, արաբ. ڪ) և մյուսը qof (երբ. ܩ, ասոր. ܩ, արաբ. ڦ). kaf-ը հայերեն տառադարձված է ք, qof-ը՝ կ. հմտ.

Բրքիշոյ = ասոր. Brīḏišō, Դիդաթ = Deḏlaθ, Կամիշոփ = Qāmīšō, Կատինայ = Qatīnā, աքսոր = aksoria, կաթսայ = qadsā, կատու = qatū, կարկուրեայ = qarqūrā, կաքաւ = qaqqawā, կեղև = qelāfā, կուզ = qūzā, կտաւ = qettau, մաքս = maksā, մտրակ = maṭraqā, շուկայ = šūqā, սակուր = seqūrā, փրկեմ = pəraq, քահանայ = kah-nā, քաղդիայ = kaldāyā, քանքար = kakkərā, քարոզ = kārōzā, քնար = kennārā, քուշնայ = kušnā, քուսիթայ = kōsīθā, քուրայ = kūrā, քում = kumrā, քրորէ = krōwā, քրքում = kurkəmə, քոշ = kewšā (տե՛ս Հյուբշ. Arm. Gramm., էջ 186—320),

Հնդունելով, որ հունարեն K ծագել է փյունիկյան kaf-ից, իսկ X ծագում է փյունիկյան qof-ից, գտնում ենք նույնպիսի հակառակություն, ինչ որ գտել էինք Ռ և S գրերի մեջ. հունարեն K = հայ. կ, հուն. K = սեմական Կ, բայց սեմ. Կ = հայ. ք, իսկ հուն. X = հայ. ք, հուն. X = սեմ. Կ, բայց սեմ. Կ = հայ. կ:

Ինչպես Ռ և S գրերի առթիվ ասել ենք, Մեսրոպը պետք շունք հետևելու գրերի սկզբնական ծագման պատմության, այլ միայն ներանց հնչումին. հետևաբար մենք էլ մեր համեմատությանց մեջ պետք է, որ ի նկատի ունենանք միայն ձայնական համապատասխանությունները, ինչպես արել ենք ցուցակում:

Կոպպը մեր գիրը հանում է դպտի Կ (քէյ) գրից. Մյուլլերը նախ սեմական Մ ձևից էր հանում, հետո պալմիրական Մ գրից է հանում (WZKM, 1890, 284—88, թրգմ. Հանդ. ամս. 1891, էջ 70). Հա-

բությունյանը դնում է փյունիկյան **Վ** և արամեական **Վ** ձևից: Բայց այս բոլորը մեր **Վ** գրին է համապատասխանում և ոչ թե կ-ին: Մեմական զօ՛ւ գրի գանազան ձևերը բուրբոմի են հետո են մեղանից, Մեմական զօ՛ւ գրի գանազան ձևերը բուրբոմի են հետո են մեղանից, ինչպես նաև զենչ ու պահլավ **Յ** ձևը: Տաղավարյանը դնում է հայերեն **Գ** գրից ձևափոխված, ինչ որ անհարմար էմ համարում: Գարդհատազենը, Մենեհրյանը և Սարգիսյանը հանում են հուն. **Κ** գրի նոտրագիր **ϰ** ձևից: Մարկվարտը այս վերջինի հետ հիշում է նաև ասորի **ܟ** գրի և վերջածնը (350/400 թ. Յ. Ք.), չափազանց նրման է նույնպես հին սասանյան **չ** գիրը. այնպես որ մենք վարունում ենք այս երեքից մեկն ու մեկը որոշել:

Վրացերեն **ვ** հայերենից գրեթե տարբերություն չունի և միևնույն վճռին է ենթարկվում. ուստի սխալ էմ գտնում Մյուլլերի մեկնությունը, որով վրացի գիրը արամեական **Յ** ձևից է հանում:

## Հ

Հարությունյանը հանում է հայերեն **Զ** գրից, Տաղավարյանը՝ փյունիկ. **𐤆** գրից, որ սակայն իս հնչումն ունի և, հետևաբար, սխալ է համեմատել մեր գրի հետ: Միևնույն սխալը գործում է նաև Մյուլլերը (WZKM, 11, 390), որ մեր գիրը հանում է սեմական **𐤆** գրից, որ իբր թե նախ գրված է ծուռ դիրքով **𐤆**, հետո տակից կրճատվել դարձել է **𐤆** և վերջապես՝ **𐤆**: Կոպպը և Լագարդը դպտիերեն **𐤆** (հօրի) գրից են հանում, բայց այս էլ ձևով տարբեր է: Անտոզի է Սարգիսյանի հիշած արաբական **ح** և գիրը: Միծաղելի է Հիւնքեարպեյեկնայանի մեկնությունը, որ հանում է Հայկ համաստեղության գլխավոր աստղերի դիրքից, իբր **ح** (տե՛ս Տաղավարյան, էջ 23): Մեր դրացի աղբերի այբուբենների մեջ սեմական ձևերը շատ են տարբերվում մեր գրից. իրանյաններն են միայն, որ բավական նրման են մեզ: Արդեն Փառնակը գրել է պահլավից, առանց սակայն հիշելու, թե հատկապես որ ձևից: Մարկվարտը հանում է սասանյան **𐬵** ձևից, բայց ըստ իս լավագույն է դնել պահլավական **𐬵** ձևից, որ նույնի տարբերակն է և ավելի լավ է հարմարվում հայերեն **Հ**-ին: Բացի սրանից վրացի **ვ** և գիրն էլ վերջինով միայն կարելի է մեկնել և ոչ նախորդով: Վրացի գրի ձևափոխում թերևս գլուխը ներկայացնում է մեր հիշած պահլավ **𐬵** ձևի դեպի դուրս կորացած գլուխը. նախորդի մեջ այս գլուխը ներսումն է և չի կորոզ տալ վրացու դուրս երկարած գլուխը:

Հարությունյանը հանում է Զ կամ Շ գրից. Սարգիսյանը և Տաղավարյանը՝ արաբական Է գրից, Լազարդը՝ ղպտիական Ծ (սիմա) գրից, որ հունարենի Ս ա գիրն է, Մարկվարտը՝ հայերեն Զ գրից: Բայց սրանք բոլորն էլ անհարմար են՝ հնչման տարբերության պատճառով: Զ հնչյունը գտնում ենք միայն հարեշերեն Զ և արաբերեն ձ գրերի մեջ (վերջինը այսօր տաճկերենում հնչվում է պարզապես զ), բայց այս երկու այբուբենները Մեսրոպի ձեռքի տակ չկային: Մեզ դրացի ուրիշ որևէ այբուբենում չգտնելով այս գիրը՝ բնական է, որ Մեսրոպը իրանից է հնարել: Ձևով ու ձայնով Զ շատ նման է մեր Ս գրին. ուստի կարծում եմ, որ նրանից է շինված, այլանմանության օրենքով: Ս գիրը բաղկացած է մի օղակից, որի գլխին ագուցված է մի երկթև. Զ-ի մեջ օղակը անփոփոխ է մնում, միայն երկթևը տակն է դրված: Մեր մեկնությունը ավելի կհարմարվի, եթե դիմենք ուղղակի Ս գրի մորը՝ ասորական Յ ձևին: Սրա գույսը խոշորացած և ուղիղ դիրքով է դրված (հմմտ. Ք), իսկ տակի կիսատ կլորակը ամբողջացած ժամանակ՝ փոխանակ աջակողմյան շրջագծի վերի կողմից դուրս երկարելու, ներքևի կողմից է դարձած:

Վրացերենի մեջ էլ գրեթե նույն բանն է եղած և վրացերեն Ժ ձ գիրը հայերեն Զ-ից նրանով է միայն տարբերվում, որ գույսը կլորձատված է:

Կոպպը այս գիրը հանում է հին պրս. (իմա՝ զնդ.) Զ (չ) գրից, Սարգիսյանը՝ արաբ. ځ ځ (շատ կոկորդական ղ ձայնը) կամ զնդ. ځ գրից, որին հետևում է նաև Տաղավարյանը (էջ 32), դնելով արաբերեն ځ -ից: Բայց երեքն էլ շարաշար սխալվում են, որովհետև՝ ինչպես հայտնի է, Մեսրոպի ժամանակ մեր ղ գիրը ամենևին այսօրվա հնչումը չուներ, այլ մի տեսակ հաստ ղ էր և համապատասխանում էր մյուս այբուբենների ղ գրին: Մյուսները նախ թե՛ հայը և թե՛ վրացին հանում էր սեմական լ ձևից, բայց հետո հայերեն ղ գրից, ինչպես անում է նաև Հարությունյանը: Փառնակը դնում է պահլավից (բայց ո՞ր ձևից):

Բայց թե՛ այս համեմատությունները և թե՛ սրանցից դուրս մընացած մյուս բոլոր օտար ձևերը հարմար չեն, որովհետև կամ պարզ եռանկյուն են ներկայացնում կամ ձախ են դարձած և կամ, եթե աջ են դարձած, զուրկ են մեր գրի ձախակողմյան թևից: Սրանք կարող



են առ առավելն ծառայած լինելի իրրն նախատիպ մեր և գրին, բայց ոչ նաև Ղ-ին: Ավելորդ էմ գտնում նաև Մարկվարտի մեկնությունը, որ կարծում է, թե Ղ կազմված է Լ-ի կրկնությամբ իբր Դ Ղ ունի մի լավագույն մեկնություն. Գարդհաուզենը, Լագարդը և Մենեիշ-յանը համեմատում են հունարեն Λ գրի հետ. թեև այս ձևը չի կարող տալ հայերեն Ղ, բայց Գարդհաուզենը հին հունարեն ձևագրերի մեջ տեղ տեղ գործածված է գտնում նրա մեկ ուրիշ տարբերակը (հմտ. Waitenbach, Anleitung sur gr. Paläogr., էջ 13), որ մեր Ղ-ից տարբերություն չունի (տե՛ս մեձ և փոքր Տուցակները):

Վրացերեն **Կ** բուլրովին նույն է հայ ձևի հետ և պետք չունի բացատրության:

## Ճ

Սարգիսյանը և Տաղավարյանը հանում են արարական Շ գրից, որ ոչ մի նմանություն չունի մեր գրի հետ: Նախ՝ կա հնչման տարբերությունը (Շ հին տառադարձությամբ դառնում է ջ և արևմտյան նոր հնչմամբ միայն և է). երկրորդ՝ ձևի տարբերությունը (գիրը պետք է գլխիվայր դարձնել, թեև շրջել և պակաս մեկ թևը ավելացնել). երրորդ՝ ժամանակի և տեղի մեծ հեռավորությունը: Կոպպը, Կլապրոթը և Լագարդը հանում են դպտիական Ճ (Janja) գրից, որոնց համամիտ է նաև Մալխասյանը: Հարությունյանը (էջ 313—14) մեկ անգամ իրավունք է տալիս Կոպպին և երկրորդ անգամ՝ հունարեն Χ ք տառից է հանում. բայց դպտի Ճ ունի ջ հնչումը և համապատասխանում է մեր Ղ-ին, և ոչ թե Ճ-ին: Մարկվարտն էլ չի ընդունում այդ, որովհետև Ն դարում հայոց և դպտիների միջև հարաբերություն չկար: Սակայն Մարկվարտը իր կողմից որևէ մեկնություն չի տալիս այս գրին:

Մեր շրջակա ազգերից միայն իրանյաններն ունեն և Ը գիրը, ուստի Մեսրոպը սրանց միայն դիմած պիտի լիներ: Ինչպես Տուցակից երևում է, իրանյան այբուբենների մեջ՝ Ը ունի երեք ձև, որոնք իրարից շատ են տարբերվում. բայց այնուամենայնիվ միևնույն գրի տարբերակներն են: Առաջին ակնարկով սրանց և հայ Ճ-ի մեջ նմանություն չենք տեսնում. բայց եթե օղնության ասունք վրացի ձևը, կարող ենք նմանության գծեր գտնել: Առաջին իրանյան ձևը բաղկացած է երկու մասից, թեև մասից, որի գլուխը ապուցված է մի կեռ դիժ: Կեռ դիժը վրացականում ուղղված է, իսկ թևը մասը մի աննշան փոփոխություն է ստացել, որ հետին դարդացման արդյունք է: Հայերենի համար պետք է մեկնել **Յ** ձևից, որի մեջ եթե ընդունենք, որ վերևի կորությունը հետզհետե կրճատվել

է, իսկ ներքևի կիսատ կլորակը ամբողջանալով՝ ձախակողմյան շրջագծից դուրս է ելել, այն ժամանակ կունենանք Ճ գիրը: Զարգացման նույն երևույթը ներկայացնում են նաև Ժ և Մ գրերը, մասնավանդ վերջինը, որի մալը՝ ասորի 3 իրանյան 6-ի աջ շրջված ձևն ունի գրեթե: Տակի կիսատ կլորակի ամբողջացումն ու շրջագծից դուրս երկարելը ընդհանուր է բոլորին: Եթե ասորի } ձևը տվել է հայերեն Մ, նույն զարգացմամբ իրանյան ձևն էլ կկարողանար տալ Ճ, որ Մ գրից ձևով իրապես տարբեր չէ:

Մյուսները մեր գիրը հանում է սասանյան Ը ձևից, որ ինձ անծանոթ է: Բայց եթե սա ուղիղ է, ուրեմն մենք ունենք միևնույն գրի համար չորս իրարից տարբեր ձև, և այն ժամանակ դժվար չէ ենթադրել, որ սրանց հետ գտնվեին նաև ուրիշ միջին ձևեր, որոնք ավելի նման լինեին հայերեն Ճ-ին:

## Մ

Հարությունյանը և Տաղավարյանը հանում են փյունիկյան Ա գրից, որ ամենին նմանութուն չունի մեր գրի հետ: Տաղավարյանը հիշում է նաև փյունիկ. Շ ձևը, որ ինձ անծանոթ է և նմանության հետք էլ չունի: Սխալվում է նաև Մյուսները, երբ համեմատում է սեմական Ծ ձևի և սասանյան ու զանդիկ գրերի հետ: Փառնակը հանում է պահլավից, բայց չգիտեմ, թե ինչ նմանութուն կարելի է նշմարել սրա հետ: Էսթրանգելո, ասորի և մյուս սեմական ձևերն էլ նմանութուն չունեն: Մարկվարտը դնում է հնագույն եդեսական (ասորական) ս տ ձևից, որ իբր թե աջ է դարձված և հետո գլխավայր շրջված է՝ չշփոթելու համար Ո-ի հետ: Բայց չէ որ այն ժամանակ էլ Ս-ի հետ կշփոթվեր: Տրված բացատրությամբ հասնում ենք Ա ձևին և ոչ թե Մ-ի: Մարկվարտը այսքանի վրա պետք է ավելացնեի նաև, թե Ա-ի հետ էլ չշփոթելու համար՝ ծայրի թևը վերևի կողմը դրվեց: Բայց այսչափ ձևափոխություն շատ է մեկ գրի վրա:

Իրավունք ունեն Գարդհաուզներ, Մենեկիշյանը, Սարգիսյանը և Մալխասյանը, որոնք մեր գիրը համեմատում են հունարենի հետ: Սարգիսյանը դնում է հունականի և ձևից, բայց սա շատ հարմար չէ մեր գրին: Պետք է առնել Գարդհաուզների և Մենեկիշյանի առաջարկած 11 ձևը, որ գործ էր ածվում քրիստոնեական թվականից առաջ և հետո, ինչպես գտնում ենք սինյական նշանավոր Ավետարանի ձեռագրում: հունարենի այս ձևից ծագել է ղպտիական ա մ: Այս պատճառով ավելորդ է Կոպպի և Կլապրոթի առաջարկությունը, որոնք մեր գիրը հանում են ղպտիական այս ձևից: Հայերենի մեջ հույն գրի աջակողմյան մասնի փշիկները ջնջված են և սրանց տեղ

ազնւացրած է գիտի վրայի կորուստներ, տարբերելու համար Ս-ից, առանց որի նրա հետ բուրրովին նույն պիտի լիննր: Մարկվարար, ընդունելով եղենական ծագում, բնականաբար հակառակ պիտի լիննր հունարենին, որից շատ տարբեր է գտնում մեր գիրը, բայց իր հիշած հունարենը **Μ** ան ունի, որ իրոք տարբեր է. ինչո՞ւ չի գտնում Գարդհատուղենի ձևը:

Վրացերեն **Ճ** գիրը Մյուլլերը գտնում է պահլավական **Ճ**-ից. բայց մենք սրա հետ նմանութուն չենք տեսնում և հին սասանյան ձևից ծագած ենք կարծում: Զարմանալի է որ նոր վրացական **Յ** ձևը այնքան նման է պահլավ ու զանդիկ **Ե**-ին. բայց սա զուտ պատահմունք է:

### 3

Հարությունյանը մոռացել է նշանակել այս գրի ծագումը. Լագարդը գտնում է արամեական (ասորական) **W** գրից. Սարգիսյանը պարսկական (իմա՞ արաբական) **Y** կամ զանդիկ **V** (?) գրից. բայց հետո սրանից հրաժարված՝ հունական **Ϝ** գրի և նշանի միացումն է համարում (Բազմ. 1897, ապր. հավել. էջ 6): Տաղավարյանն էլ հետևելով Սարգիսյանին՝ հանում է արաբական **Y** գրից: Հյուսիսարաբիկները (տե՛ս Տաղավ. էջ 23) **Z** գրի շրջած **Y** ձևից է համարում: Գարդհատուղենը չի նշանակել այս գրի ծագումը՝ իբր ոչ հունական:

Մեր հարևան ազգերի այբուբենում առանձին տառով չի նշանակված այս ձայնը, որ սակայն թե՛ ասորերենի և թե՛ մանավանդ պահլավերենի մեջ սովորական էր և որ մեր նախնիք տառադարձել են միշտ **չ** գրով. օրինակ՝ ասորերեն Yaunan = Յոսնան, Yoxan-nān = Յուսնան, ihudāyā = հրեայ, yaxmurā = յամուր և այլն. պահլավերեն՝ yastan = յազել, yāsmīn = յամիկ, yāvētān = յաիտեան, ayātkār = յետկար, Yazdkeret = Յազկերտ և այլն և այլն: Ասորերենում այս ձայնը նշանակվում է պարզապես **o** ի գրով. նույնպես և պահլավերենում՝ ի գրով, որ հաջորդ տառի հետ միացած ժամանակ դառնում է **o** ձևով կիսաշրջանակ: Զանդիկ գրություն մեջ ի և յ ձայները զանազանելու համար՝ առաջինի տեղ գործ են ածում մեկ ի (‘), երկրորդի տեղ երկու ի (‘‘), որ իբր առանձին տառ է բմբռնվում և կամ նորահար **o** ձևը, որ անշուշտ կազմված է պահլավերենի կցյալ **o** գրից:

Մեսրոպը շրջակա ազգերի այբուբենների մեջ առանձին մի ձև չգտնելով այս ձայնի համար՝ փոխ է առել պահլավական **‘** ի գիրը: Բայց որովհետև սա շատ փոքրիկ մի նշանախեց էր, ուստի հարկ է

համարել կամ խոշորացնել և կամ երկու անգամ իրար վրա դնել: Այս վերջինը բավական մոտենում է դանդիկ “ Կ գրության, ուր երկու ի-երը կողք կողքի են դրված, փոխանակ իրար վրա դրվելու: Այսպես է մեկնում նաև Մարկվարտը:

Ն

Հարությունյանը հանում է փյունիկյան Պ գրից, այսպես է նաև Տաղավարյանը: Բայց փյունիկյան ձևը շունի մեր գրի աջակողմյան դեպի վերև դարձած մասը: Նույնը պետք է ասել նաև Կոպպի մասին, որ հանում է եթովպական Է և գրից: Մյուս այբուբեններից արամեականը, պարսիականը, բաբելականը և սամարականը փյունիկյանի ընկերներն են և նմանութուն չունեն մեր գրի հետ: Ավելի հեռու են էսթրանգելո, ասորի և նոր պահլավիկ ձևերը. վերջինը հասել է պարզապես մի ուղիղ գծի: Չափազանց տարբեր են մանիքեական և սոգդիական յ ձևերը:

Համեմատության համար մնում են հունարեն, հին սասանյան և զանդիկ ձևերը:

Գարդհաուզներ, Մենեիշյանը և Մալխասյանը համեմատում են հունարեն Ն ձևի հետ: Գարդհաուզներ նմանութունը այնքան պայծառ է գտնում, որ ավելորդ է կարծում բացատրութուն տալ: Մեքքայից ալղչափ պայծառ նմանութուն չենք տեսնում և նմանազույն մի ձևի հասնելու համար պետք ենք տեսնում դիմելու նախաձևին: Ն-ի նախաձևն ստանալու համար՝ միջին շեղագիծը պետք է բոլորովին ցած իջեցնել, այն ժամանակ կձևանա Ա-ի նման մի տառ: Ինչպես փյունիկերեն ԷՄՎ և Մ և իրար նման բաներ էին և երկրորդը առաջինից մի պակաս ատամով էր միայն տարբերվում, նույնպես հունարենի մեջ էլ նախապես յՅՎ և յՂ և նման բաներ էին, և երկրորդը առաջինից տարբերվում էր աջակողմյան և ձախակողմյան ստորին փշիկների բացակայությամբ: Սարգիսյանի հիշած հունարեն ձևերի մեջ Վ և Բ նաև չեն տարբերվում. երկուսն էլ յ ձևն ունեն: Մեսրոպը այս երկու գրերը, ինչպես նաև հայերեն Ս, իրարից տարբերելու համար կարող էր Ն-ի վրա ավելացնել ձախակողմյան կտուցը, ինչպես որ Մ-ի վրա ավելացրել էր աջակողմյան կտուցը:

Հայերենին շափազանց նման է հին սասանյան Է, որից կազմված են զանդիկ շորս և-երից գոնե երկուսը, այն է ձախ շրջված Յ Ո՛ և փոքրիկ հավելվածով Ս՛Ո՛: Սարգիսյանը արդեն հունարենի հետ նաև վերջին զանդիկ ձևն էլ է հիշում: Փառնակը պահլավ (իմա՛ զանդիկ) Յ-ից շրջված է համարում, իսկ Մարկվարտը՝ սասանյան Է ձևից (հունարեն Ն-ի հետ քիչ նմանութուն է տեսնում):

ես չեմ կարող վերջնական վճիռ տալ և սասանվում եմ հու-  
նարեն և սասանյան ձեռքի միջև:

Վրացերեն **Ի** և հայերեն **Ն-ից** մեծ տարբերություն չունի. բայց  
իր աչ դարձած կառուցով կարծես ցույց է տալիս, որ ինչպես իր,  
ևույնպես և հայ գրի համար ավելի լավ է ընդունել սասանյանը:

Շ

Մյուսները այս գիրը հանում է սեմական **7** (իմա՝ պալմիրական  
շ) գրից, որից դնում է նաև վրացերեն **՝** ! (ուզում է ասել **Կ** շ):  
Մարգիսյանը հանում է արաբերեն **ع** կամ զանդիկ **و** **س** ձևից, որի  
ինչ լինելը չհասկացա: Հարուստյանը՝ փյունիկ **W** **ω** կամ սա-  
սանյան **շ** **ز** **س** ձևից: Տաղավարյանը փյունիկ **و** գրից, որ մեր ծ գրի  
արժեքն ունենալով՝ ոչ ձևով է հարմարվում, և ոչ ձայնով: Սասան-  
յան ձևի նմանությունը խաբուսիկ է, որովհետև նախ տառը պետք  
է կիսել և առնել միայն կեսը, այն էլ համապատասխանում է մեր  
բուրգիր շ-ին, որ հետին ժամանակի գործ է: Ավելորդ է խոսել ա-  
րաբերեն **ع**-ի մասին: Մյուս սեմական ձևերը, ինչպես նաև դպտին,  
իրենց եռաճյուղ մատներով շատ հեռու են մեր գրից:

Մնում են հունարենը, զանդիկն ու պահլավը: Գարդհատուզներ,  
Մենհիշյանը և Մալխասյանը մեր գրի հետ համեմատում են հու-  
նարեն **Ξ** Կս ձևը, որին համաձայն էր նաև Հյուբշմանը, ինչպես  
հայտնել է ինձ իր դասախոսություններից մեկի միջոցին: Հունարե-  
նում, ինչպես հայտնի է, շ ձայնը չկա. և եթե Մեսրոպը փափակեր  
մեր շ-ին համազոր փնտրել հունական այբուբենի մեջ, պիտի ընտ-  
րեր կամ **Ϝ** և կամ **Ξ** Կս: Առաջինը իր բնիկ պաշտոնն ունենալով,  
իսկ երկրորդը իբր ավելորդ տառ մնալով այս վերջինը կարող էր  
ավելի լավ համարվել՝ մանավանդ որ հույներն էլ իրենց 'Αρταξίος =  
= Արտաշիր, 'Αρταξίος = Արտաշես, 'Αρταξάτα = Արտաշատ և  
այն տառադարձություններով կարծես ցույց էին տալիս, թե **Ξ** տա-  
ռը կարող է փոխանակել մեր շ ձայնը: Այս պատճառով է անշուշտ,  
որ Մեսրոպը հայերեն գրերի շարքի մեջ շ գիրը դետեղել է ճիշտ  
այնտեղ, ուր դրված է հունարեն **Ξ** (Վ Ե-ի և Ծ Ո-ի մեջտեղ):

**Ξ** տառը շատ բազմաշարձար ձև ունի. հնապես ուներ **Ⲭ** ձևը,  
որ հետո ուղղահայացը կորցնելով՝ եղավ **Ξ**, բայց նաև երևի անջատ  
գծերը իրար հետ միանալով եղավ վերջապես **Ξ**, որի հնագույն ձևը  
տե՛ս Յուդեակում: Սա մեր **Շ**-ից մեծ տարբերություն չունի:

Վերոհիշյալ գիտունների հետ մենք էլ պիտի ընդունենք այս  
շատ հարմարավոր մեկնությունը, եթե սակայն ավելի հարմարը  
չգտնվեր: Այս է պահլավերենի **و** գիրը, որ թե՛ ձայնով (մինչդեռ **Ξ**

ուներ Բս հնչումը) և թե՛ ձևով նույն է հայերեն Ե-ի հետ: Հունարենն է՛ ձևը հայերեն Ե-ին հասնելու համար՝ վերի երկու ոլորքներից մեկը պիտի պակասեր, իսկ պահլավերենը՝ ձևի մեջ՝ ձախակողմյան փշիկը պետք է թևի պես երկարել գրի գլխի վրա:

Մեր կարծիքը հաստատում է նաև վրացերեն Գ, որ ավելի հեշտությամբ կարող է նույն պահլավ ձևից ծագել, քան թե հունարենն է-ից:

Մարկվարտը մեր Ե գիրը համեմատում է հին եղեսական Վե Ատրպատականի մեջ հնարված բնիկ պահլավիկ Ե գրի հետ, որ հետնագույն Արշակունի դրամների և մի քանի հնագույն սասանյան արձանագրությունների մեջ նշմարվում է:

Մենք՝ մեր և հիշյալ գրերի մեջ նմանություն չենք տեսնում:

## Ո

Հարությունյանը և Տաղավարյանը հանում են փյունիկյան Օ ('այն) գրից, որ սեմականներին հատուկ կոկորդային հնչում է (արաբերեն ʿ) և ամենևին կապ չունի մեզ հետ: Մյուսները հանում է զանդիկ ʽ գրից, բայց թե սա ինչքան տարբեր է մերից, պետք չկա բացատրելու: Մարկվարտը դնում է էսթրանգելի " կամ Հաջիապատի (պահլավ) ۱۹ գրից, որ իբր թե ձևափոխվել է հունարեն Օ գրի կաղապարով: Բայց եթե հունարեն Օ գրին է ծագած իբրև կաղապար, էլ ի՞նչ պետք կա հիշելու էսթրանգելոն և պահլավը:

Մեր գրի մայրն է հունարեն Օ, ինչպես ընդունում են Գարդհաուզենը, Մենևիշյանը և Մալխասյանը: Մյուս այբուբենները արդեն զուրկ են համապատասխան ձայնավորից: Հունարեն տառը ձևով ու ձայնով նույն է մեր Ո-ի հետ: Միակ տարբերությունն այն է, որ Ո-ի տակը բաց է, մինչդեռ հունարենում շորս կողմից փակ կլորակ է: Գարդհաուզենը ասում է, թե հունարենի մեջ էլ կա կիսաբաց բերանով Օ, միայն թե այս բացվածքը վերևից է: Նրա կարծիքով, այդ ձևով դարձված Օ-ն հայերենի մեջ պիտի տար Ս, բայց որպեսզի այս ձևը շփոթվի մեր Ս-ի հետ, բացվածքը տակի կողմից է եղած: Այս բացատրությունը ուղիղ չէ: Մեսրոպը իր առաջ բերանաբաց Օ ունեցած չէ, ինչպես ցույց է տալիս սրա ճիշտ օրինակությունը եղող վրացերեն Օ, այլ այդ բացվածքը առաջ է եկել հետո՝ հայերենի մեջ և հայկական գեղագրության այն ոճից, որի վրա ավելի ընդարձակ խոսեցինք վերը՝ Ա գրի առթիվ (համտ. P = P, Փ = = փ, B = B):

Ո գրի բացվածքի տարբերությունը կասեցրել է նաև Սարգիսյանին, որ, կարծելով նաև, թե հայերեն ու երկար ձայնավոր է, մինչ-

դեռ հունարենն Օ կարճ է, հայերենն ս գիրը հանում է հունարենն նր-  
կար Ո-ից և կամ ասորի՝ Դ-ից (որ բառ Վարդանագրքի խնդկա-  
տակ պատմության՝ մեք ս գիրն է):

Չ

Փարզահուզներ չի խոսում այս գրի վրա, որովհետև հունա-  
կան այբուբենում չկա: Լագարդը անորոշ է թողնում: Մարգիսյանը  
հանում է արաբերեն Շ Շ գրից, Տաղավարյանը՝ փյունիկյան Պ  
ձևերից, որոնք ս հնչյունն ունենալով՝ չեն հարմարվում մեր գրին:  
Հարությունյանը հայերեն Ջ կամ Շ գրից ձևացած է կարծում: Մեր  
չրջակա ազգերի այբուբենների մեջ միայն իրանյանն ունի Շ ձայնը,  
բայց սա էլ հայերենում տառադարձված է միշտ Ծ (մեկ անգամ  
կա պահլավերեն ʾwāš = հայերեն աաշ. Հյուրշման, Arm. Gramm.,  
էջ 112):

Այսպես ուրեմն Չ գիրը մնալով առանց համապատասխանու-  
թյան, պետք է որ շինված լինի այլանմանության օրենքով՝ մերձա-  
վորագույն մի հնչումից: Չ-ի ամենից մոտիկ հնչումներն են ծ և Ջ,  
որոնց իրանյան ձևերը տե՛ս Տուցակում: Մարկվարտը հանում է  
արշակունի դրամների Շ գրից, որ պահլավական ՚ Կ կամ զանդիկ  
գիրն է և բառ մեզ տվել է հայերեն ծ: Այս մեկնությունը կարող է  
ուղիղ լինել, բայց ավելի նման է հայերեն Ջ, որի զենդական ձևն է  
Շ: Վերջին պարագային պիտի ասենք, որ Ջ-ի ծուռամուռ գլուխը  
կանոնավորված և տակի պոչն էլ ուղղված է:

Վրացերենն Խ չ նման է հասկապես զանդիկ յս-ին:

Մեր բոլորգիր շ-ից ածանցված է ռուսերեն Վ, ինչպես ասում  
են ռուս գիտնականները: Ռուս ձևի մեջ հապավված է մեր շ-ի պոչը,  
ինչպես եղել է նաև ց-ի հետ: Այսպիսով ռուսերեն Վ ստացել է զանդ-  
կերենի շրջված ձևը՝ բոլորովին պատահաբար:

Պ

Հայերենն ունի երեք շրթնային պայթուցիկ բաղաձայն (բ, պ, փ). սրանցից առաջինը բոլոր մեր դրացի լեզուների մեջ էլ գտնվում  
է. երկրորդ և երրորդ ձայների դեմ հունարենում գտնում ենք չ և  
ֆ, որոնցից առաջինը կանոնավոր կերպով և միշտ տառադարձված է  
պ, երկրորդը միշտ փ: Իրանյան լեզուներն ունեն ր և ֆ ձայները, ո-  
րոնց առաջինը տալիս է հայերեն պ և երկրորդը՝ փ. (Տարյուրավոր-  
ների դեմ ունենք տասնի չափ բառ, ուր պրս. ր = հայ. փ): Այս  
ր և ֆ ձայների համար պահլավերենն ունի մեկ գիր միայն ( ʾw ), որ

երբեմն ք է կարգացվում, երբեմն Ի: Այս շփոթութեան առաջը առնելու համար զանդկերենի մեջ Ս հատկացվեց ք ձայնին, իսկ Ի-ի համար՝ ալլանմանութեան օրենքով հնարվեց Յ ձևը: Սեմականներն էլ ունեն Ծ = ասորի Շ գիրը, որ կարգացվում է երբեմն ք և երբեմն Ի: Հայերենում ասորական փոխառութեան 16 դեպք կա, ուր պատահում է նույն տառը. սրանցից վեցի մեջ ասորին ունի Ի, հայերենը՝ Փ (Սփրգմ, Մոփք, շեփոք, շուփայ, սոփեր, փիլիսոփայ), յոթի մեջ ասորին ք, հայերենը Փ (շամփուր, շափիւղայ, շուշփայ, սափրեմ, փեգենայ, փղշտացի, փրկեմ). երկուսի մեջ ասորին ք, հայերենը պ (զոպայ, պողոտայ). մեկ տեղ էլ ասորին՝ Ի, հայերենը պ (կուպր): Սրանից հետևում է, որ սեմական այս գրի դեմ հայերը սովորաբար դնում են փ. ուրիշ խոսքով՝ սեմականների հնչումը ավելի փ էր լրսվում, քան թե պ: Սրա համար է, որ նույնիսկ իրանյան ք ձայնի դեմ ասորերեն գտնում ենք Ի, օրինակ՝ պհլ. sapat = ասոր. saftā «կողով», հպրս. apadāna = ասոր. āfaḏnā «ապարանք» և այլն: Արաբերենը, ինչպես հայտնի է, արդեն իսպառ զուրկ է ք ձայնից և ունի միայն Ի:

Այս բոլորից հետևում է, որ հայերեն պ և փ գրերի ուղիղ և հաստատուն համապատասխանները պետք է փնտրել միայն հունարեն այբուբենի մեջ և ոչ այլուր:

Տեսնենք այժմ, թե ինչպես են վարվել մեր քննիչները:

Հարությունյանը և Տաղավարյանը հանում են փյունիկ Պ գրից, Մյուլլերը (WZKM, 1890, 284—88, թրգմ. Հանդ. Ամս. 1891, էջ 70) պալմիրական ձևից, որ, ինչպես ասում է, վատ գրված Յ-ի նրման է: Բայց ոչ մեկը և ոչ մյուսը նման չեն հայերեն Պ-ին: Հարությունյանն ունի նաև փյունիկ Ք ձևը: Այս ձևը բավական հիշեցնում է հայերեն Պ գիրը. ուստի փափագելով ստուգել նրա գոյությունը, դիմեցի ընկերոջս՝ Կ. Բասմաջյանին: Նա իր նամակի մեջ (1893 հունվ. 7 ն. տ.) հայտնում է, որ այսպիսի մի ձև չի կարողացել գրտնել փյունիկերենում: Հայերենից տարբեր են նաև մյուս սեմական ձևերը, ինչպես ասորի Ս և պահլավ Ս, որոնք մեր տեսութեամբ արդեն չէին կարող ծառայած լինել իբրև օրինակ հայ այբուբենին: Մարկվարտը ասում է, թե այս գրի ծագումը իրեն անհայտ է. բայց միևնույն ժամանակ սասանյան Վ կամ եղեսական (ասորական) Շ, գրի կրկնություն է կարծում:

Ուղիղ մեկնությունը տալիս են Գարդհաուզենը, Մենևիշյանը, Մալխասյանը, Սարգիսյանը և Փառնակը, որոնք Պ գիրը դնում են հունարեն Ս-ից:

Այս գիրը հունարենի մեջ երկու ձև է ունեցել. միաճյուղ (Γ) և երկյուղ (Π). առաջինի շարունակությունն է լատինական P, որ



սակայն շուտով շնչովի է հունարենում: Տեղական է դարձել հրկճյուղ  
II, որ անցել է նաև ուսանողներին: Հայերեն գիրն էլ հունական հրկ-  
ճյուղ II-ից է:

Երկճյուղ II-ն էլ մի քանի ան է ունեցել, որոնցից երեքը ան՝ ս  
մեր ցուցակում: Սարգիսյանը մեր գիրը հանում է ցուցակի վերջին  
ձևից, ենթադրելով, որ սրա գագաթի վրա երկարող հորիզոնական  
գծի աջ ծայրը մի քիչ ավելի ցածր է կախված, որով ձևացել է մեր  
Պ-ի երրորդ երկար սյունը: Բայց այդ ժամանակ պետք է ընդունել  
նաև, որ հունարեն գրի առաջին և երկրորդ սյուններն էլ կարճացել  
են մեր մեջ, և հորիզոնական գծի ձախ ծայրը շնչովի է: Այս շափը  
մի քիչ երկար է: Լավագույն մեկնությունը ակնարկում է Գարդ-  
հատուզները, որ մատնանիշ է անում Ցուցակի երկրորդ ձևը: Սրա սկիզ-  
բը գտնված փոքրիկ ուրբը հայերենում մի քիչ ցածրից անովելով  
ավելի է երկարել, որով առաջ են եկել մեր գրի երեք ճյուղերը, ինչ-  
պես է նաև հունարեն բոլորգիր գրություն մեջ: Չախակողմյան թևի  
երկարացման համար կարելի է համեմատել նաև Ք և հ:

Վրացերեն Ս պ թվում է, թե ծագել է պահլավական Ս-ից, ինչ-  
պես դնում է նաև Մյուլլերը. հմմտ. վրաց. էյ = պհ. ւ) չ:

## Ձ

Լագարդը մոռացել է դնել այս գրի ծագումը: Հարությունյանը  
հանում է հայերեն Ձ գրից: Սարգիսյանը զանդիկ Ղ Վ գրից, որ թևն  
ձևով նման է մեր գրին, բայց ձայնով տարբեր լինելով՝ այստեղ  
գործ չունի: Տաղավարյանը հանում է պարսկերեն چ գրից, որ Թ—Ժ  
դարում ձևացած է արաբերեն چ չ գրից՝ ալլամանություն օրենքով,  
և համապատասխանում է մեր ն գրին: Գարդհատուզներ (որին հետև-  
վելով նաև Մենկիշյանը) համեմատում է հունարեն Չ Գ գրի հետ.  
բայց այս գիրը Մեսրոպի ժամանակ արդեն վաղուց շնչված էր և  
մերից շատ տարբեր հնչում ունենալով՝ բնավ չի կարող համեմա-  
տության անվել: Մյուլլերը նախապես դնում էր սեմական Վ Վ (1)  
ձևից. սա իբր թև ուղիղ դիրքով տվել է վրացերեն Մ Շ (1), իսկ գլխի-  
վայր դառնալով՝ եղել է հայերեն Ձ: Բայց հետո սրանից հրաժարած՝  
դնում է զանդիկ چ յ գրից (WZKM, 8, 285, թրգմ. Հանդ. ամս.  
1894, 295): Փառնակը դնում է պահլավից, բայց պարզ չէ, թե ինչ  
է հասկանում պահլավ ասելով: Պահլավերենում չ ձայնի համար  
հատուկ նշան չկա. սրա տեղ գործ են ածվում ւ) չ, ڤ, ڭ, ڭ, ڭ և սրա  
կցյալ ڭ ձևը:

Մեր շրջակա ազգերի այբուբենների մեջ երկու տեղ միայն կա-

րող ենք գտնել հայերենին համապատասխան մի տառ. առաջինն է  
 եթովպական Ա) ձևը, որ տեղի հեռավորութեան պատճառով մի կողմ  
 է մնում. երկրորդն է զանդիկ ۛ j, որի հետ Մյուլլերը համեմա-  
 տում է հայերեն գիրը: Այս տառը թե ձևով և թե ձայնով նույնն է  
 հայերենի հետ: Հայերենի մեջ գրի գլուխը մի քիչ փակված է, իսկ  
 պոչը գրված է երկաթագրի հայկական այն ոճով՝ որ գտնում ենք  
 նաև Զ, Զ, Զ, Ս գրերի մեջ: Բոլորգրում այս ձևը փոխված է և պոչը  
 դարձած է միայն աջ. հմմտ. Գ, Ն, Չ, Չ:

Վրացերեն Զ չ նույն ծագումն ունի. իր ծովում ձևը համա-  
 պատասխանում է մեր Զ-ի ծուռ ու մուռ գլխին:

Ռ

Այս գրի ծագումը քննելու ժամանակ ի նկատի պետք է առնել  
 նաև Ր գիրը: Օտար ազգերը մեր այս երկու գրերի դեմ մեկ Է միայն  
 ունեն: Այբուբենի շարքում թեև այս Է-ի դեմ հայերեն համապա-  
 տասխանում է Ռ, բայց տառադարձութեան մեջ մեծագույն մասամբ  
 դրված է Ր: Գրերի ձևից դատելով՝ օտար այբուբենների Է գիրը  
 կապված է մեր Ր-ի հետ և ոչ թե Ռ-ի, ինչպես որ քիչ հետո կտես-  
 նենք: Հայերեն Ր ծագում է հունարեն Ր գրից: Գարդհատուզներ,  
 Լագարդը և Մենեկիշյանը թեև Ռ հանում են հունարեն Ր-ից, բայց  
 սա հայտնի կերպով սխալ է: Գարդհատուզներ իր ասածը ապացու-  
 ցելու համար՝ հիշում է գոթական Ղ Ղ ձևը, որ նաև Մենեկիշյանը  
 դնում է իր ցանկի մեջ. սրա հետ կարելի էր նաև հիշել լատինական  
 R, որ շատ նման է մեր Ռ-ին. բայց թե՛ մեկը և թե՛ մյուսը նշանա-  
 կություն չունեն. մեզ համար, որովհետև չեն կարող իբր օրինակ ծա-  
 ռայած լինել Մեսրոպին. պետք էր հին հունարենի մեջ գտնել այդ-  
 պիսի երկճուղ մի ձև: Այս տեսակետով շատ հետաքրքրական է Սար-  
 գիսյանի ցանկի մեջ հիշված հունարեն Օ (τ) ձևը, որին սակայն ու-  
 րիշ տեղ չեմ հանդիպել: Այս ձևի պակասությունն այն է, որ ձայնա-  
 կողմը ավելորդ մի թև ունի, որ հայերենի մեջ չկա. իսկ աջակողմյան  
 թևը ներքևից է առնված, մինչդեռ հայերենինը մեջտեղից է: Նույն-  
 իսկ Սարգիսյանը, որ իր ցուցակում հիշում է այս հույն ձևը, իր  
 բացատրությանց ժամանակ Ռ գիրը դնում է հունարեն Ր կամ ա-  
 սորի ց; տառից՝ մեկ կողքի վրա պառկեցնելով այն: Հարությունյա-  
 նը հանում է Ռ գրից (!):

Մեր դրացի ազգերի այբուբենների մեջ միայն մի գիր կա, որ  
 ըստ կարելիության մոտ է հայ գրին. այս է հին սասանյան արձա-  
 նագրությանց Ղ ձևը: Սա, ինչպես ցուցակից երևում է, երկու արժեք  
 ունի՝ Է և Վ. հմմտ. նաև պահլավական ۛ, որ է Է և Վ: Այսպիսի մի

անորոշ գրի դիմել և իբր կաղապար գործածել այն՝ անշուշտ շար-  
տի ուղեր Մեարոպը, ձթն հանգամանքները մի քիչ տարբեր լինեին:

Հայերեն այբուբենի համար պետք էր հնարել R, R և V գրերը:  
Քանի որ ոչ մի այբուբենի մեջ էլ չկար կրկին R, ուստի Մեարոպը  
մտածեց մեկ Ե առնել հունարենից, մյուսը առնել ուրիշ մի այբու-  
բենից, այն է՝ ասորուց կամ իրանյանից: Ասորի ; կամ էսթրանգե-  
լո Ե մի փոքր նշանախեց էր, որ կենտով միայն զանազանվում էր ?  
կամ Ե՝ ղ գրից. ուստի ավելի լավ համարեց Մեարոպը՝ իրանյան  
Ղ ձևը: Բայց V գրի համար էլ պետք էր դիմել այս երկու այբուբեն-  
ներից մեկին, որովհետև հունարենում V գիրն էլ էր պակասում:  
Ասորի օ և էսթրանգելո օ (V) գրերը նույնպես փոքրիկ տառեր էին  
և հայերենի մեջ ձևով պիտի շփոթվեին Ո գրի հետ. ուստի նորից  
պետք էր դիմել իրանյաններին: Բայց, իրանյանների մեջ էլ, ինչպես  
գիտենք, Ե և Վ միևնույն տառածան ունեին: Այլևս ուրիշ ելք չէր  
մնում Մեարոպին, եթե ոչ այս երկու գրերի մեջ մտցնել փոքրիկ ձև-  
վափոխություն և այսպիսով հնարել հայերեն Ռ և Վ գրերը:

Ռ գիրը ձևացնելու համար Մեարոպը սասանյան գրի ձախ սյու-  
նը երկարեց միևնչեցած (գեղազրական մի ձև՝ որ նշմարում ենք նաև  
Թ, Խ և Պ գրերի մեջ), իսկ պուշր բարձրացրեց վերև: Վ ստանալու  
համար՝ պուշր տեղը պահեց, բայց ձախ սյունը մեջտեղը բերավ:  
Այսպես Ղ = Ռ — Վ:

Բուրբ այս մեր ասածները անդրադառնում են նաև վրացերենի  
մեջ, ուր ունենք Ջ ու Կ Վ՝ Վ գրերը: Այս երկուսը միևնույն հիմնա-  
կան կաղապարն ունեն, և ծագում են նույնպես սասանյան Ղ ձևից.  
Երկուսի մեջ էլ միջին երկար սյունը և աջակողմյան թևը ճիշտ միև-  
նույնն են. միայն ձախակողմյան թևը մեկի մեջ վերևն է, մյուսի մեջ՝  
ներքևը:

Տաղավարյանը և Մարկվարտը մեր գիրը մեկնում են այլանը-  
մանություն օրենքով, իբրև Ե գրի կրկնությունը ձևացած (Բր): Սա  
կարող էր հավանական լինել, որովհետև նախ՝ ձևի կողմից հակա-  
ռակություն չկա, երկրորդը՝ Ռ գիրը իրոք շատ անգամ զրված է կըր-  
կին Ռ-ի փոխարեն: Բայց մեր կարծիքով սասանյան ձևը ավելի  
պատշաճ է, որին իբր ասացույց ծառայում է վրացականը:

## Ս

Հարությունյանը հանում է փյունիկ Մ և արամեական Պ (ս)  
ձևերից, որոնք բնավ նման չեն մերին: Տաղավարյանը դնում է  
փյունիկ Մ գրից, որ շ հնչումն ունենալով՝ հարմար չէ այստեղ: Տար-

բեր են նաև ասորին և մյուս սեմական ձևերը: Համեմատության համար մնում են իրանյան և հույն ձևերը:

Մարկվարտը մեր գիրը հանում է հին սասանյան արձանագրություններից 7 ու ձևից, որ իբր թե Մեսրոպը գլխավար է շրջել Ո գրից զանազանելու համար: Մեր գրին շատ ավելի նման է առաջին սասանյան, պահլավական և զանդիկ ռ ձևը, որի հետ համեմատել են արդեն Կոպպը, Մյուլլերը և Փառնակը:

Գարդհաուզենը, Մենկիշյանը և Սարգիսյանը մեր գիրը հանում են հունարեն Տ-ից: Թեև այս ձևը մեր գրից շատ տարբեր է, բայց հնագույն ձևերը շատ ավելի նման են, ինչպես տեսնվում է Ցուցակում: Սարգիսյանը հիշում է երկու ձև. առաջինն է Ը ձևը, որ մեկ կողքի վրա պառկեցնելով ստանում է հայերեն Ս: Սա անհարմար եմ կարծում: Ավելի լավ է Սարգիսյանի երկրորդ ձևը, որ մեր Ցուցակի էլ երկրորդ ձևն է և հայերեն III-ի նման մի բան է: Սրա երկու ծայրի ուղրքները կրճատելով՝ ձևանում է հայերեն Ս:

Գարդհաուզենը և Մենկիշյանը հանում են հունարեն Ը ձևից, որ պարզ կիսալուսին է և որից ձևացած են նաև լատինական Ը և ուսական Ը գրերը: Հայերենում, ասում է Գարդհաուզենը, գրին համաչափ ձև տալու համար՝ ավելացրած է երկրորդ գիծը և այսպիսով առաջ է եկել Ս: Վրացերեն Ե-ի մեջ այս հավելվածական ճյուղը միայն կիսով չափ է բարձրացել:

Բացի Գարդհաուզենի և Սարգիսյանի հիշած ձևերից, հայերենին հարմար է գալիս նաև հունարենի երրորդ ձևը (Ξ), որ ուրիշ բան չէ, եթե ոչ ծուռ դիրքով դրված Ս:

Այսպիսով մեր գիրը տատանվում է երկու մեկնությունց միջև (իրանյան Ք կամ հունական Տ) և վճռի է սպասում: Այս վճիռը տալու համար նպաստավոր լինի թերևս վրացի Ե գիրը, որ իր ձևով ավելի մոտիկ լինելով հունարեն Ը-ին, քան թե սասանյան Ք-ին, կարող է ապացուցանել հունական ծագումը:

Մյուլլերը վրացի Ե գիրը հանում էր նախ արամեական Է ձևից (որ թե ձևով և թե հնչումով [2] տարբեր է), իսկ հետո՝ սասանյան Ք ձևից:

## Վ

Հարությունյանը և Տաղավարյանը հանում են փյունիկյան ՎՎ (Վ) գրից: Լագարդը ղպտիական Վ (Ֆէի) գրից, որ թեև ձևով բավական նման է, բայց ձայնով տարբեր է, և համապատասխանում է մեր Փ-ին: Կոպպը հին պարսկական Վ գրից է հանում, որ սակայն գոյություն չունի. իսկ եթե զանդիկ Վ գիրը ուզում է հասկանալ, սրա

Մասին ան՝ս մի քիչ ցածրում: Մարգիսյանը՝ պարսիկ 3 և զանգիկ  
 Կ գրից, բայց հետո սրանցից հրաժարված՝ դնում է իբր միացում  
 հունական օտ երկբարբառի երկու գրերի (Քաղմ. 1897, ապր. հա-  
 վել. էջ 5բ): Գարգհառագենը չի հիշում այս գրի ծագումը: Մենեհրչյա-  
 նը հանում է հին հունական այբուբենի Վ ձևից: Հին հունարենի մեջ  
 հար F (Վ) գիրը, որ ծագած էր փյունիկյան վավ տառից, և բռնում  
 էր այբուբենի գրերի մեջ վեցերորդ տեղը: Այս գրից ձևացել է յա-  
 տինական F (Ֆ): Ժամանակ անցնելով՝ հունարենի այբուբենից այս  
 ձայնը շնչվեց, հետևաբար և գիրն էլ այբուբենից վերացավ: Միայն  
 թվահամարի կարգը յիսնագարելու համար պահեցին այս գիրը զը-  
 խակարգությանց մեջ S ձևով և ճ-րդ նշանակությամբ: Պ դարում  
 արդեն F վաղուց շնչված էր, հետևաբար Մեսրոպը այս գիրը բնավ  
 աչքի առաչ ունեցած չէ: — Մարկվարտը մեր գիրը հայերեն Ի գրից  
 կրկնված է կարծում: — Մեր գրից շատ տարբեր են ասորական օ,  
 պահլավ յ, ինչպես և մյուսները. այնպես որ չեն կարող իբրև աղբ-  
 յուր ծառայած լինել:

Անցնենք զանդկերենին: Զանդկերենն ունի երեք տեսակ V ( Կ  
 » Վ ). սրանցից առաջինը գործ է ածվում միայն բառակզրում,  
 երկրորդը կազմված է ու գրի կրկնությամբ և գործ է ածվում բա-  
 ռամիշում, երրորդը նախորդներից տարբեր հնչում ունի, որ արդի  
 տառադարձությամբ նշանակվում է W: Հայերենի մեջ էլ ճիշտ նույն-  
 պես է: Բառակզրում ունենք վ, բառի մեջ ու և ձայնավորից հետո  
 ւ: Զանդիկ Կ հայերեն Վ-ի համապատասխանն է և ձևով էլ բավա-  
 կան նման է: Մենք պիտի ընդունեինք այս գիրը, եթե չլիներ հին  
 սասանյան Ղ ձևը, որ շափազանց նման է մեր գրին և աննշան փո-  
 փոխության պետք ունի՝ հայերեն Վ դառնալու համար:

Թե ինչ ձևով կատարված է այս փոփոխությունը, արդեն բա-  
 ցատրել ենք Ռ գրի առթիվ և այստեղ կրկնելու պետք չկա:

Մյուսները վրացերեն Վ (V) հանում է արամեական Ղ (V) գր-  
 րից. աշակողմյան թեր դրված է, ասում է, Ղ և գրից զանազանելու  
 համար:

## S

Վերը՝ Բ գրի մասին խոսելու ժամանակ ցույց տվինք, թե որոնք  
 են մեր S գրին համապատասխանող օտար գրերը: Տեսնենք այժմ,  
 թե ինչ համեմատություններ են եղել բնիկների կողմից:

Մյուսները դնում է սեմական Մ Ղ ձևից, Հարությունյանը՝ փյու-  
 նիկյան Մ ձևից, իսկ Տաղավարյանը՝ փյունիկյան + ձևից: Այս  
 բոլորը մեր Բ գրին են համապատասխանում և այստեղ գործ չու-

նեն, թող որ ձևով էլ արդեն նմանութիւն չունեն մեր **Տ** գրի հետ: Տաղավարյանը հիշում է նաև փյունիկյան **Շ** գիրը, որ գտել է **Ֆ. Բերգերի** նշանավոր գործի մեջ (էջ 126): Այս ձևը շատ նման է հայերենին. ուստի փափագելով ստուգել նրա գոյութիւնը, դիմեցի ընկերոջս՝ **Կ. Բասմաջյանին**: Նա գրեց ինձ, թէ հիշյալ տեղը այդպիսի տառ գոյութիւն չունի: Կոպպը հին պարսկական (ուզում է ասել զանդիկ.) **Շ** գրից է հանում, որ արդի հունարենի **Θ** գրի թվատ հնչումն ունի և հարմար չէ մեր **Տ**-ին: Գարդհաուզներ և Մենելիշյանը հանում են հունարեն **Τ** գրից, որից իբր թէ նախ ձևացել է **Դ**, հետո, համալսութիւնը պահելու համար՝ վերին աջակողմյան թևը դրվել է նաև վարը՝ ձախակողմը: Բայց այս մեկնութիւնը, ինչպես տեսնվում է, բավական քաղթընկ է: Ավելի հարմար էր Սարգիսյանի հիշած հունարեն ձևը, ինչպես տեսնվում է մեր Յուցակում, բայց սրա էլ թևերը հայերենի հակադիր շարքն ունեն: Այսպես են նաև պալմիրական և ասորական ձևերը: Սոգդիական ձևը բավական նման է, եթէ երկու անջատ մասերից բաղկացած շիւներ, և, մյուս կողմից, եթէ ուրիշ որևէ հայերեն գիր այս այբուբենից ծագած լիներ:

Մեր գրի լավագույն նմանութիւնը գտնում ենք հին սասանյան ձևերի մեջ: Սրանք երեք տարբերակներ են ներկայացնում մեզ, ինչպես տեսնվում է մեր Յուցակից: **Տ** գիրը հատկապես նման է վերջին ձևին, որ հայերենում ավելի գեղեցկացած ու կանոնավորված է: Սասանյան ձևի նորագույն վիճակը ներկայացնում են պահլավ և զանդիկ **س**, որ ըստ Սարգիսյանի իբր օրինակ է ծառայել Մեսրոպին: Այս ենթագրութիւնն անտեղի է: Մարկվարտն էլ մեզ պես է մեկնել, բայց իր մեջ բերած սասանյան գիրը յ ձևն ունի: Հիշում է նաև ասորական **ܣ** գիրը, որ ոչ միայն ձևով նման չէ հայերեն **Տ**-ին, այլև հնչմամբ համապատասխանում է մեր **Թ** գրին: Արդեն Մարկվարտն էլ մի քիչ վերև այս գիրը համարել էր մեր **Թ**-ի մայրը, հետևաբար **Տ**-ի մոտ հիշելը ավելորդ էր:

Վրացերեն **Ⴀ** ծագում է նմանապես սասանյանից. սրա համար թերևս իբր օրինակ ծառայած լինի Յուցակի աղաքին ձևը, որի տակ մի ուղիղ գիծ է ավելացրած. այս գիծը մեր **Տ**-ի ձախակողմ թեքվող պոչին է համապատասխանում:

Մյուսները վրացերեն գիրը համեմատում էր արամեական **ܣ** (t) ձևի հետ:

Լազարդը այս գրի ծագումը անորոշ է թողնում: Կոպպը՝ հին պարսկական, իսկ Փառնակը՝ պահլավական Ղ գրից են հանում, բայց այսպիսի տառ դոյություն չունի: Քերես ուզում են ասել պահլավ և զանգիկ } Դ գիրը, որ գրեթե մի ուղիղ գիծ է՝ ձախակողմ դարձած և թևաղուրկ: Հարությունյանը հանում է փյունիկյան Ղ ձևից, Տաղավարյանը՝ փյունիկյան  $\Delta \triangleright \Gamma$  ձևերից: Փարզճառուզենը չի հիշում այս գիրը: Ուղիղ մեկնությունը տալիս է Մենեիշյանը, որ համեմատում է հունական Բ գրի հետ: Այս գրի փակ բերանը հայերենում բացված է՝ մեր գեղագրության օրենքներին համաձայն. հմմտ.  $B = \beta$ ,  $\Phi = \phi$ ,  $O = \Omega$ : Մենեիշյանը իր ցուցակում հիշում է նաև հունական Բ-ի բերանարաց մի ձև: Սարգիսյանն էլ հունարենի կողմնակից է. բայց սրա հետ դնում է նաև պարսկերեն (իմա արաբերեն)  $\text{ب}$ , որից շրջված է կարծում մեր գիրը: Մարկվարտը հունական Բ-ին հակառակ է, չգիտեմ ինչու, և հայ գիրը հանում է պահլավական  $\text{𐭡}$  կամ հին ասորական  $\text{𐬡}$  ձևից, որ սակայն ձևափոխված է դնում հունարեն Բ գրի օրինակով: Եթե հունարեն Բ գիրը իբր օրինակ պիտի ծառայեր, էլ ի՞նչ պետք կար պահլավիկ կամ ասորուն դիմելու:

Մեր գրի հունարեն Բ-ից ծագելու հանգամանքները տե՛ս նաև Ռ գրի մեջ:

Լազարդը անորոշ է թողնում այս տառի ծագումը: Կոպպը հանում է եթովպական Տ գրից, Հարությունյանը՝ փյունիկ.  $\text{𐤄}$ , արամեական  $\text{𐤄}$ , պալմիրական  $\text{𐤄}$  և եթովպական Տ գրերից, որոնք նոր հնշմամբ միայն մեր ց-ին են հանգել, իսկ Մեսրոպյան դարում համապատասխանում էին մեր Մ գրին (տե՛ս այս գիրը): Այս պատճառով համեմատությունը անհաջող է թե՛ ձևի և թե՛ հնչումի կողմից: Սարգիսյանը և Տաղավարյանը հանում են ասորի  $\text{𐬡}$  գրից, որի համար նույն հնչական դժվարությունը կա: Այսպես է նաև Մարկվարտը:

Ըստ իս Մեսրոպը այս գիրը կազմել է այլանմանություն օրենքով՝ մեր Մ գրից: Այս գրի հիմնական մասն էր տակի կլորակը, որ երկու անգամ իրար վրա է դրել, ինչպես արել էր Ց գրի համար: Վրացերենը կազմված է դարձյալ նույն կլորակից, բայց միայն մեկ անգամ գրված (ինչպես  $\text{Ս}$  չ գրի մեջ) և կողքից թև է ստացած: Ըստ ռուս հեղինակների, հայերեն բոլորգիր ց-ից ձևացել է ռուսերեն  $\text{У}$  գիրը, որի մեջ մեր գրի տակի պոչը կրճատված է (հմմտ.  $\text{Q} = \text{U}$ ):

Հարությունյանը հանում է հայերեն և գրից: Տաղավարյանը (էջ 33) դնում է հայերեն Վ գրից, ասելով թե և «թե հնչմամբ և թե ձևով առաջնոյն կէսն է»: Մյուլլերը, Լագարդը, Գարդհաուզենը, Մենկիշյանը, Մալխասյանը և Մարկվարտը հաջող կերպով հանում են հունական Կ գրից, որ հայ տառադարձությամբ միշտ և է: Երկուսի կատարյալ նմանությունը տեսնելու համար՝ պետք է աչքի առաջ ունենալ հին հունական Կ ձևը, որ մերից ոչ մի բանով չի տարբերվում: Սարգիսյանն էլ դնում է հունարեն Կ, բայց այնպիսի մի ձևից, որ բնավ նման չէ հայերենին՝ իր ձախ դարձած և հակադիր դիրքով: Այս ձևը սակայն տալիս է ճիշտ վրացերեն Վ ւ:

Ու հնչման համար Մեսրոպը հետևել է ուղղակի հունարենին, սրա համեմատ գրերով ու = յն. օս, վրաց. Չվ: Ավելի հետո վրացիք իմաստուն են գտնվել այս երկու տառերը միախառնելով ստեղծել Պ գիրը, որի զուգահեռը մեր մեջ դժբախտաբար չի ստեղծվել:

Մյուլլերը, որ նախապես Ի գրի համար հունական ծագում էր ընդունում, 1893-ին (նամակ Տաղավարյանին, Մագումն հայ տառից, էջ 19), հարում է փյունիկյան ծագման. իբր թե Ի կազմված է փյունիկ. Օ (կողորդական 'այն հնչումը) գրից և նախապես ունեցել է եւ, ու հնչումները: Մի տարի հետո, սրանից էլ հրաժարված, անցնում է զանդկերենին և ենթադրում է, որ, ինչպես բոլոր հայ ձայնավորները, նույնպես և Ի զանդկական այբուբենից է առնված և շինված է զանդիկ Գ ա՛ (երկար) ձայնավորից: Նրանից առաջ այս կարծիքն ունեցել էր նաև Սարգիսյանը, որ ասում է, թե Մեսրոպը հայ գիրը հունարենի Կ-ից հնարած ժամանակ՝ աչքի առաջ է ունեցել նաև զանդիկ հիշյալ տառը:

## Փ

Բոլոր քննիչներն էլ հանում են հունական Փ գրից. միայն Տաղավարյանն է, որ նույն գիրը դնում է հունարեն փ փա գրից. սակայն երևի սա տպագրական սխալ է: Հունարեն Փ հայերենի անցած ժամանակ՝ նախապես տվել է Փ ձևը, առանց փոփոխության. բայց հետո հայ գեղագրության սովորական օրենքով՝ երկու կողմի կլոր թևերի բերանը բացվել է, մեկը վերևի կողմից, մյուսը ներքևի կողմից, որով առաջացել է փ ձևը: Վրացերենում ( Ɔ ) այս բացումը տեղի չէ ունեցել, ինչպես նաև Q = O = Ո: Միայն թե վրացերենի մեջ գրի նեցուկը վերևից կրճատված է, մինչդեռ հայերենում ամբողջական է:



Հույն գրի արտասանութիւնը (իրք Ֆ) բնավ դժվարութիւն չի հարուցանում, որովհետեւ Մեարագի ժամանակ հայերը (Ինչպէս այժմ Պարսազգիք և մեղրեցիք) անընդունակ լինելով Ֆ ձայնը արտասանել, օտար ազգերի Ֆ ձայնը փ չին լսում: Սրա համար է, որ բոլոր օտարազգի ֆ-երը տառադարձված են փ գրով:

Իրանյան լեզուներն էլ ունեն ֆ, որ զենդի այբուբենում յ ձևն ունի, իսկ պահլավական գրութիւն մեջ առանձին ձև չունենալով՝ գործածվում է Շ ալ: Այս երկուսը, ինչպէս նաև բոլոր մյուս այբուբենների համապատասխան գրերը, մեր ձևից հետո են մտնում:

Ք

Կ գրի վրա խոսելու ժամանակ ցույց տվինք արդեն, թե որոնք են մեր Ք գրի համապատասխան օտար բառերը: Ըստ այսմ սխալվում են Հարությունյանը, Տաղավարյանը և Մյուլլերը, երբ առաջինները այս գիրը հանում են փյունիկ-արամեական **Ծ** գրից, իսկ վերջինը՝ սեմական **Ք** գրից: Այս գրերը համապատասխանում են մեր Կ-ին և գործ չունեն այստեղ: Մյուս բոլոր բնիչները (Լագարդ, Մենևիշյան, Սարգիսյան, Փաննակ, Մարկվարտ) Ք գիրը դնում են հունական X ձևից: Մինչև անգամ Մյուլլերը նախապես այս կարծիքն ունի (1864), որ հետո փոխելով՝ դրավ սեմական **Ք**-ից, սակայն ընդունելով հանդերձ, որ կրել է հունական X ձևի ազդեցութիւնը:

Հունարեն գրի նախնական ձևը արդեն տեսնվում է մեր Տուցակի մեջ. այս գիրը մի քիչ ավելի ուղիղ կանգնեցնելով՝ ունենում ենք հայ ձևը: Սարգիսյանը դնում է Տուցակի երրորդ ձևից: Ամեն պարագայի մեջ շատ ուղիղ է Մարկվարտի այն նկատողութիւնը, որով դիտել է տալիս, թե հունարենի ծուռ գծերը հայերենի մեջ ուղիղ դիրքով են դրված. հմմտ. հուն.  $\chi$  — կամ  $\psi$ : Այսպես է եղել նաև Ք:

Ք-ի այս շատ պարզ մեկնութիւն մոտ ավելորդ եմ գտնում Գարդհաուզենի այն մեկնութիւնը, որով Ք-ի ծագումը տառախաղ է կարծում և դնում է հունարեն **ϕ** ձևից, որ Քրիստոսի բազմաթիվ համառոտագրութիւններից մեկն է հունարենում: Մեր բարեպաշտ հայերը թույլ չէին տա իրենց այսպիսի սրբազան անունների հետ խաղեր անել:

Վրացերեն **ქ** բռնում է հունարենի և հայերենի մեջտեղը. պակասում են միայն զլխի կորութիւնը, որ հունարենումն էլ արդեն մի փոքր բան լինելով՝ հետո ջնջվեց:

Ամփոփելով մինչև այժմ ասվածները, տեսնում ենք, որ հայերեն 36 գրերի ծագումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

Ա = հուն. Α կամ իրան. <i>Ⲁ</i> .	Ղ = հուն. Λ.
Բ = հուն. Β.	Ճ = սաս. <i>Ⲡ</i> .
Գ = հուն. Γ.	Մ = հուն. Μ.
Դ = հուն. Δ.	Յ = պհլ. <i>Ⲩ</i> .
Ե = հուն. Ε.	Ն = հուն. Ν կամ սաս. <i>Ⲛ</i> .
Զ = հուն. Ζ.	Շ = պհլ. <i>Ⲩ</i> .
Է = հուն. Η.	Ո = հուն. Ο.
Ը = հայ. է.	Չ = հայ. Չ կամ սաս.
Թ = հուն. Θ.	(ⲑ).
Ժ = պհլ. <i>ⲓ</i> .	Պ = հուն. Π.
Ի = հուն. Ι.	Ջ = զնդ. <i>ⲓ</i> .
Լ = հայ. Լ կամ	Ռ = սաս. <i>Ⲓ</i> .
սաս. <i>Ⲓ</i> .	Ս = հուն. Σ կամ
Խ = պհլ. <i>Ⲕ</i> կամ	իրան. <i>Ⲕ</i> .
ասոր. <i>Ⲕ</i> .	Վ = սաս. <i>Ⲓ</i> .
Մ = ասոր. <i>ⲓ</i> .	Տ = սաս. <i>ⲓ</i> .
Կ = հուն. Κ կամ ասոր.	Ր = հուն. Ρ.
ԼԿ կամ սաս. <i>Ⲓ</i> .	Ց = հայ. Ս.
Հ = պհլ. <i>Ⲕ</i> .	Ի = հուն. Υ.
Ձ = հայ. Ս կամ	Փ = հուն. Φ.
ասոր. ձ.	Ք = հուն. Χ.

Ըստ այսմ, հայերեն գրերը մեծագույն մասամբ ծագում են հունարենից, մի քանիսը իրանյանից, մի փոքր բան (ծ, խ, կ, ձ) ասորականից, մի քանի հատ էլ հայերենի մեջ են ձևացել այլանդամանության օրենքով (ը, դ, ձ, շ, ց):

Ե. ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԿԱՐԳԸ

Թեև Կորյունի և Փարպեցու վկայութեամբ գիտենք, թե հայերեն գրերի շարքը Մեսրոպի գործն է (Եւ անդ վաղվադակի նշանակեալ անուանեալ եւ կարգեալ, յօրինէր սիղոբայիւք եւ կապօք. Կոր. էջ 10. Երանելին Մաշթոց հանդիպեցուցանէր զհայերէն աթութայան ըստ կարգման սիլովբայիցն Յունաց. Փարպ.), բայց պետք է ստուգել, թե արդյոք Մեսրոպի դրած շարքը անփոփոխ մնաց, և թե մեր այսօրվա գրերի դասավորութիւնը նո՞ւյնն է, ինչ որ Ե դարում:

Այս բանը ստուգելու համար երկու անուղղակի վկայություն ունենք: Առաջինը Կոմիտաս կաթողիկոսի Անձինք նուիրեալք շարականն է, երկրորդը՝ Գաթակ քերթողի ողբը՝ Աղուանից Զուանչիք իշխանի մահուան վրա: Երկուսն էլ գրված են այրուբենական կարգով և ներկայացնում են ճիշտ այն կարգը, որ ունի մեր այրուբենն այսօր: Հիշյալ գրությունները գրված լինելով է դարում, ցույց են տալիս, որ մեր այրուբենի այժմյան շարքը նույն էր նաև է դարում:

Ավելի հին շրջանի մասին վկայություն կարող էինք գտնել ուղղակի և դարի մատենագրության մեջ հիշված թվականների և գուրուներին թվահամարի միջոցով: Բայց ի՞նչ ապահովություն ունենք, որ հնապես այդ թվականները ամբողջ բառերով գրված չէին և հետո միայն վերածվեցին տառականի:

Ս կամ Չ դարերում գրված և տառական թվականներ պարունակող արձանագրությանց գյուտը կարող է լուծել այս խնդիրը:

Բայց մի անգամ որ վստահորեն գիտենք, թե մեր այժմյան տառական շարքը նույնն է է դարի շարքի հետ, այսինքն՝ գիտենք, թե ամբողջ 13 դարերի տևողության մեջ այդ շարքը փոփոխություն չի կրել, այլևս ի՞նչ տեղիք կա կասկածելու, որ երկու դարի ընթացքում (Ս դարից մինչև է դարը) այդպիսի փոփոխություն տեղի է ունեցել:

Ինչպես տառերի ձևի համար Մեսրոպը օգտվել է շրջակա ազգերի այրուբենից, նույնպես կարող էր լինել նաև նրանց դասավորության կամ շարքի համար: Ուստի տեսնենք նախապես, թե ինչ շարք ունեն այդ այրուբենները:

Բոլոր սեմական հին այրուբենները (փյունիկերենը, եբրայեցերենը, ասորերենը) հետևյալ կարգն ունեն.

ա, բ, գ, դ, ե, վ, գ, ի, տ, ի, ֆ, դ, մ, ն, ս, (այն), պ, (փ), ծ, կ, ո, շ, ք:

Հունական այրուբենի դասավորությունն է.

ա, բ, գ, դ, ե, գ, է, ք, ի, կ, դ, մ, ն, ֆս(=շ), ո, պ, ո, ս, տ, յ, փ, ֆ, փս, ով:

Հին իրանյան այրուբենների դասավորությունը հայտնի չէ: Նոր գիտունները իրանյան այրուբենները շարելու ժամանակ՝ հետևում են հնդկական այրուբենի դասավորության, որ զուտ ձայնախոսական է. նախ գալիս են ձայնավորները, հետո երկրարբանները, այնուհետև բաղաձայնները, որոնք շարված են հնչող գործարանների շարքի համեմատ. այսպես՝ նախ շրթնայինները (բ, բ՛, պ, փ), հետո ատամնականները, լեզվայինները, քմականները, կոկորդականները, նայերը և այլն: Սակայն իրանյան այս դասավորությունից խարվելու չէ, որովհետև բոլորովին նոր բան է և հատուկ է միայն եվրոպացի գիտուններին: Հին իրանյան այրուբենի շարքը պետք է

վարժել, որ նույնն էր սեմական այբուբենի հետ, քանի որ նրանցից է ծագել և իր տառաձևերով էլ նման է: Այն մի քանի գրերը, որ ավելացած էին իրանյան այբուբենի վրա (ժ, ի, ճ, ջ, ո), կարող էին մյուս տառերի մեջերքում դասավորված լինել:

Մի պարզ համեմատություն սեմական, հույն և հայ այբուբենների, ցույց է տալիս, թե հայ տառերը շունեն բնավ սեմականի կարգը, որ թեև սկզբից համաձայն է մերին (չորս տառ), բայց շուտով շեղվում է հ, վ, խ, ա տառերով և ավելի հեռուն՝ ս տառից հետո՝ բոլորովին խանգարվում է: Հունարենը սակայն քայլ առ քայլ համաձայն է մեր այբուբենին, որ հեռանում է նրանից միմիայն իր գերադանց ճոխության պատճառով: Հավելվածական տառերն անցնելուց հետո՝ դասավորության նույնությունը շարունակվում է մինչև Բ. սրան հաջորդող հունարենն փս և ով գրերը չկան հայերենում:

Ահա հայերեն և հունարեն այբուբենները դեմ-դեմի՝ իրենց բնական շարքով.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	
A	B	Γ	Δ	E	Z	H	.	Θ	
Ժ	Ի	Լ	Խ	Մ	Կ	Հ	Ձ	Ղ	
.	I	.	.	.	K	.	.	Λ	
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ	
.	M	.	N	.	ΞO	.	Π	.	
Ռ	Ս	Վ	Տ	Ր	Յ	Ի	Փ	Ք	
P	Σ	.	T	.	.	Υ	Φ	X	Ψ Ω

Հունարեն այբուբենը ընդամենը 3 տառ ունի, որոնցից բարեբախտաբար զուրկ ենք մենք (Ξ քս, Ψ փս, Ω ով): Իսկ մենք ընդամենը 15 տառ ունենք, որից զուրկ է հունարենը. այդ տառերն են այբուբենական կարգով՝

Ը, Ժ, Լ, Խ, Մ, Հ, Ձ, Ճ, Յ, Շ, Չ, Ջ, Ղ, Վ, Ր, Յ:

Այս գրերը տեղավորելու համար երկու միջոցի կարող էր դիմել Ս. Մեսրոպը. այն է՝ ավելացնել դրանք Ք գրից հետո՝ իրրև առանձին խումբ, և կամ ներմուծել մյուս տառերի շարքի մեջ: Առաջին միջոցն է ներկայացնում վրացերենը, իսկ երկրորդը՝ հայերենը:

Այս ներմուծելի գրերն էլ կարելի էր երեք ձևով դասավորել. առաջին՝ գրերը շարելով առանց մասնավոր դիտման կամ նպատակի, երկրորդ՝ հետևելով իրանական այբուբենին, ուր գտնվում էր արդեն մեր տառերի մի մասը (ինչպես Ժ, Յ, Շ, Ճ, Ձ, Վ), երրորդ՝ ձայնախոսորեն նման հնչյուն ունեցող տառերը դնել իրար մոտ, ինչպես ունենք վրացերեն այբուբենի մեջ: Այստեղ իրար մոտ են դրված ղ, ղ՝ — ց, ձ, ծ — խ, խ՝ — հ, հ՝ տառերը:

Այս ուղղութիւնով որոնենք նաև մեր հազնլիվածական տառերը:  
Ը տառը ո՛չ մի այբուբենի մեջ չկա. դա հայերենին հասունկ  
հնչում է. Մնարոպը հնարել է այդ տառը և որովհետև հնչմամբ նը-  
ման է է ձայնին, ուստի ձևով էլ ամանցել է նրանից. է և Ը գանա-  
զանվում են իրարից միմիայն նրանով, որ առաջինի մեջ թևը մեջ-  
տեղում է, երկրորդի մեջ թևը վերից է:

Ուրեմն Ը տառը գրված է է տառի մոտ՝ կա՛մ ձայնի նմանու-  
թյան պատճառով և կա՛մ ձևի նմանութիւն պատճառով:

Այս երկու պատճառներից առաջինը ըստ իս արժեք շունի մեզ  
համար և պետք է շեղոքացնել. որովհետև եթէ ձայնի կամ հնչման  
նմանութիւնը որևէ դեր խաղացած լինէր, ինչո՞ւ ապա ծ, ձ, ց,  
ինչպես և ւ, շ, չ կամ իւ, ւ, յ և լ, դ իրարից այդքան հեռացած պիտի  
գտնվեին:

Մնում է ընդունել, թէ Ը տառը գրված է է տառի մոտ՝ միայն  
ձևի նմանութիւն պատճառով:

Այժմ գանք Ծ տառին:

Այս տառը կազմված է պահլավական շ=ⵉ տառի նմանու-  
թյամբ և բռնում է մեր այբուբենի մեջ հունական Ξ տառի տեղը:  
Ինչո՞ւ. Որովհետև տառադարձութիւն մեջ հույները հաճախ հայե-  
րեն շ-ի դեմ գրել են Ξ (տե՛ս էջ 542): Ուրեմն այստեղ էլ ձայ-  
նի նմանութիւն հարց կա: Բայց քիչ առաջ ձայնի նմանութիւն կա-  
պը մերժում էինք: Զի՞ կարող արդո՞ք այստեղ էլ լինել ձևի նմա-  
նութիւն հարց:

Ըստ իս ձևի նմանութիւնն էլ այստեղ դեր ունի:

Ն տառը կազմված է մի երկճուղ խողովակից, որի աջ թևի վե-  
րի մասը կտրված է և ձախ թևի գլխին էլ մի կտրուց է ավելացած: Ծ  
տառն էլ նույն ձևն ունի, միայն թև երկճուղ խողովակը այստեղ  
ավելի կտրակ ձև ունի, իսկ կտուցը մի քիչ տարրեր դիրք է ստա-  
ցած:

Ուրեմն այստեղ էլ տառն ստացել է իր տեղը մասամբ ձայնի  
նմանութիւն, բայց ավելի շատ ձևի նմանութիւն պատճառով:

Անցնենք այժմ մյուս տառերի տեղավորման:

Ի տառից հետո գալիս է Լ. այս վերջինը եթէ հնչման նմանու-  
թյան հետևեր, պիտի գրվեր Ղ տառի կողքին, որից և ձևացած է:  
Բայց նա գրվել է Ի տառից հետո, որովհետև նույն է ձևով. — Ի  
կազմված է մի ուղղահայաց սյունից, որի աջ կողքին ավելացել է  
մի թև. Լ տառի մեջ ուղղահայաց սյունը նույն է, միայն թևը իջնում  
է ցած:

Խ տառը եթէ հետևեր հնչման, պիտի գտնվեր շ տառի կողքին,  
բայց ոչ. նա գտնվում է Ի—Լ տառերի կողքին, որովհետև ձևով նը-

ման է սրանց: Ի և Լ կազմված են մի մի ուղղահայաց սյունից, որոնց կողքին ավելացել է մի մի թև, մեկի մեջ գրված մեջտեղում, մյուսի մեջ՝ ստորոտում: Իսկ Խ տառի մեջ սյունը նույն է, միայն թե մեջտեղի թևը կտրանալով վերև է բարձրացած Ի—ն:

Ժ տառը եթե հետևեր հնչման, պիտի գտնվեր Զ, Շ կամ Ս տառի մոտ: Բայց ո՛չ. նա գտնվում է Թ տառի մոտ, որովհետև ձևով նույն է սրա հետ: Հանեցեք Թ տառի ձախակողմյան սյունը և կստանաք Ժ (հին արձանագրության մեջ շատ սովորական է Ժ տառի համար այս Ժ ձևը):

Վ տառը հին արձանագրությանց մեջ ունի Վ ձևը, որի մեջ երկու սյուները կանգնած են հավասար բարձրությամբ: Այս ձևով նա միևնույն է ինչ որ Ս, միայն տակից ունի մի պոչ: Այս նմանության պատճառով ահա գրված է Ս-ի ճիշտ կողքին:

Զարմանալի է Բ տառը. նա ձևացած է հունարեն Բ տառի նրմանութայամբ. բայց շի գրված հունարեն Բ-ի դեմ, այլ հայերեն Տ-ից հետո: Ինչո՞ւ: Որովհետև հայերեն Տ հին ժամանակ ուներ մ ձևը (գրեթե Մ), որով ճիշտ նման էր Բ տառին. ուստի այս երկուսը դրված են կողք-կողքի:

15 հավելվածական տառերի կեսը (7 տառ) այսպիսով իր որոշ տեղը ստացավ հատկապես ձևի նմանության պատճառով: Մյուս 8 տառերի մասին առայժմ ոչինչ չեմ կարող ասել: Նրանք էլ թերևս հետևած լինեն պահլավերենի տառական շարքին:

**Մանրություն.**— Այբուբենը ըստ տառերի նմանության շարելու լավագույն օրինակը ցույց է տալիս արաբական այբուբենը: Արաբական այբուբենը իբրև սեմական՝ ուներ նախապես բոլորովին այլ շարք: Շատ ուշ նման տառերը իրար մոտ բերելով, հին շարքը բոլորովին փոխեցին: Այնպես որ այսօր արաբական այբուբենը կազմված է հետևյալ ձևով.

- |                       |                |
|-----------------------|----------------|
| 1.   ուղղահայաց տառը. | 6. س, ش 2.     |
| 2. ب, پ, ت, ث, م.     | 7. ض, ص, ق.    |
| 3. ج, د, ح, ه, خ, ی.  | 8. ط, م, ظ, ق. |
| 4. د, ه, ذ, ق.        | 9. ع, غ, ق.    |
| 5. ر, ل, ز, ق.        | 10. ف, ق, ک:   |

Մնացյալ տառերը նմանություններ չեն ներկայացնում:

Երբ պարսիկները և թուրքերը ընդունեցին արաբական այբուբենը և իրենց լեզվի պահանջի համաձայն նոր տառեր ավելացրին, այդ տառերը ներմուծեցին դարձյալ ձևի նմանության համաձայն: Այսպես Բ փ գրին 2-րդ շարքում, Գ չ գրին 3-րդ շարքում, Դ ժ գրին 5-րդ շարքում և Զ օ գրին 5-րդ տառի մոտ:

Վրացերենի այբուբենի շարքը հետևյալ ձևով է (տե՛ս Մատթ  
Հազերեն քերականության սկիզբը գրված տախտակը):

ա, բ, գ, դ, ե, վ, զ, է, թ, ի, կ, ղ (—լ), մ, ն, յ, ա, պ, ժ, ռ, ս,  
տ, լ, փ, ջ, ղ, ճ, շ, ջ, ծ, ծ, ժ, խ, խ', շ, հ, հ':

Համեմատելով սեմական և հունական այբուբենների շարքի  
հետ, տեսնում ենք, որ վրացի տառերն էլ մերոնց նման հետևում են  
հունական այբուբենի շարքին: Վրացերենն ունի 16 գիր, որոնք պա-  
կասում են հունական այբուբենից. հայերեն այբուբենի ոճին հա-  
կասակ՝ այս հավելվածական գրերից 13-ը գետեղված են այբուբե-  
նի վերջում, միայն երեք տառ (վ, յ, ժ)՝ հայերեն այբուբենի ոճով  
ներմուծված են նախորդ գրերի շարքում:

Այս ներմուծումը սակայն անխորհուրդ և պատահական չէ:  
Ինչպես գիտենք, շատ հին հունական այբուբենն ուներ F և Q գրե-  
րը, որոնցից առաջինը գտնվում էր Ե գրից հետո, իսկ երկրորդը՝ պ  
գրից հետո: Բացի սրանից՝ հույն այբուբենում կա Ξ տառը, որ ինչ-  
պես հայերենի, նույնպես և վրացերենի մեջ չկա: Բոլոր այս երեք  
գրերի տեղ գրված է մեկ մեկ վրացական տառ. F-ի տեղ գրված է  
վ, որ սեմական այբուբենումն էլ նույն տեղն էր բռնում. Ξ-ի տեղ  
գրված է յ, իսկ Q-ի տեղ գրված է ժ: Այս ներմուծումը թերևս նրա  
համար է, որ վրացական գրերի թվական արժեքը հունականի հետ  
նույն լինի, ինչպես նկատում է Գարդհատուզենը, մինչդեռ հայերենի  
մեջ տարբեր է:

Մյուս հավելվածական տառերի շարքում, ուր չկա հայերենի  
հետ համապատասխանություն, երևի ի նկատի առնված է ձայնա-  
խոսական շարքը, որով իրար մոտ են գրված դ, ղ՝ — ց, ձ, ծ — խ,  
խ՝ — հ, հ':

## Ձ. ՄԵՐՈՊՅԱՆ ԳՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Մեսրոպյան գրերի անվան մասին մեր ունեցած վկայություն-  
ները մինչև Ե դար են հասնում: Այս դարից ունենք շորս գրի անուն.  
Համարեաց թէ գրիցէ զկենն միայն եւ զոս եւ զսէ առանց ձայնա-  
տրացն. Կիրոզ. աղ. մեկն. արրծ. Քրիստոսին եւ Աստուծոյ ասելով,  
զնոյն (կամ զնուն) վերագիր եղ. Ոսկ. եփես, ժը: Ավելի բազմաթիվ  
են հաջորդ դարերից վկայություններ. Որպէս զայր առ Բէ, եւ զգայ  
և զրոյ առ փիւր, և զկէնն առ եշ, և զշայ առ սէ, Խոր. Ա. ք. Զփիւրն  
ի պէ փոխեցին եւ զկէնն ի Բէ. Շիր. տպ. Պատկ. էջ 18: Ես նմ այր  
և ես նմ Բէ. Յայտ. ա. 8. Խոսր. անձ. Կոշիւր Արրամ, յետոյ Արրամ,  
տառի այրին կրկնեցելոյ. Փիւ. իմ և լին. գ. 43. Յուցանէ շորս գիրս՝

բոյ, եջ, ո, դա. Սոկր. դ. 19. Վեց անկեամբ յանկաւորեալ քառիւք ձայնաւորօք՝ ոյիւ, ճիւնիւ, ալբիւ, եշիւ. իսկ երկու բաղաձայնիւք՝ բոյիւ, ճոյիւ, եւ յօղաւորեալ է ճոյիւ եւ բաղկացեալ բոյիւ, բաղասութեամբ, եշիւ, ալբիւ և վարատամամբ ոյիւ, ճիւնիւ. Մազ. 1910, էջ 33: Ամենայն տառից առաջին և հայր ալբն է. Նդիշ. ծն. առ վրդ.: Թրակացու Քերականութեան մեջ կան գրեթե բոլոր մեր գրերի անունները. համեմատել հետևյալ օրինակները. «Գիր է երեսուն և վեց՝ յայբէ մինչև ցքէ... Եւ են միջակքն բենն ի մէջ մենի պէի և փիւրի, վասն զի քան զմենն և զպէն խաժ է, և քան զփիւրն բարակ: Եւ գիմն ի մէջ կենի, քէի և խէի... եւ դայն ի մէջ տիւնի և թոյի... ձայն միջակ է սէի, զայի և ցոյի. դատն՝ լիւնի և նուի, և ճէն՝ ծայի և ջէի, և ժէն՝ շայի և շայի: ...բաղկանայ՝ զայն ի սէէ և դայէ և խէն յերկուց քմակից քէից և շայն յերկուց սէից և ոայն յերկուց ըէից» (Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, էջ 4—8):

ԺՅ դարում ներսես Շնորհալին հայերեն այբուբենի վրա գրել է երեք ոտանավոր, որոնց մեջ մի առ մի նշում է մեր բոլոր գրերը անուն անուն: (Տե՛ս Ն. Շնորհալույ Բանք շափաւ, Վենետ. ՌՄԶԹ, էջ 313—349): Այս անունները բոլորովին նույն լինելով արդի անունների հետ, ավելորդ եմ համարում մի առ մի հիշել այստեղ: (Տարբեր են միայն ին և փն):

Վերոհիշյալ վկայութունների մեջ հիշված են մեր այբուբենի բոլոր գրերի անունները: Մի թեթև համեմատութուն ցույց է տալիս, որ այս անունները բոլորովին նույն են ներկայի հետ: Փոքրիկ տարբերութուններ են ներկայացնում միայն ը, ի, և տառերը: Ը գիրը այսօր կոչվում է ըթ, հին սերունդը կոչում էր եթ. վերի օրինակների մեջ գտնում ենք ըթ և ըեթ ձևերը: Ի տառը այսօր ինի անունն ունի, հների մոտ գործածվում է ին, ինչպես ունի նաև Շնորհալին: Ն տառը այսօր կոչվում է ճու, վերի օրինակներում ունի ճոյ ձևը: Մյուսները անփոփոխ են մնում և անտարակուսելի է, որ Մեսրոպի հնարած անուններն են:

Քննելու համար, թե ինչ ծագում ունեն մեր 36 գրերի անունները, պետք է նախ տեսնել մեր շրջակա ազգերի այբուբենի անունները:



	հայ.	գրառ.	անմակ.	հուն.	երոզվ.	գուտի.	արաբ.
Ա	աբբ	ան	ալէֆ ալամֆ	ալֆա	ալֆ	ալֆա	ալէֆ
Բ	բեն	բան	բենթ	բետա	բեն	—	բէ
Գ	գեմ	գան	գեմէլ	գամմա	գէմէլ	գամմա	(ջիմ)
Դ	դաւ	դան	դալէթ	դելտա	դենտ	դալդա դուս, դէլ	դալ
Ե	եչ	են	—	էփսիլոն	—	էլ	—
Զ	զա	զեն	զալիեն	զետա	զալ	զիզա	զէ
Է	է	—	—	էտա	—	—	—
Ը	ըթ	—	—	—	—	—	—
Թ	թոյ	թան	թաւ	թէտա	թաւէ	թիզա	թե
Ժ	ժե	ժան	—	—	—	—	—
Ի	ինի	ին	ինգ	ինտա	ինամն	ինադա	ին
Լ	լիւն	—	—	—	—	—	—
Խ	խէ	խան	խէթ	—	խառա	խի խէի	խա, խը
Մ	մա	միլ	մադէ մադէք	—	մադէ	—	մադ
Կ	կեն	կան	կոֆ	կապպա	կաֆա	կաբբա	կաֆ
Հ	հո	հակ հն	հէ	—	հոյ	հիզա, հորի	հե
Ձ	ձա	ձիլ	—	—	ձապպա	—	ձալ
Ղ	ղատ	լաս	լամէզ	լամբդա	լավէ	լաւդա	լամ
Ճ	ճէ	ճար	—	—	—	—	—
Մ	մեն	ման	մէմ	միւ	մոյ	մի	միմ
Յ	յի	հիկ	—	—	—	—	—
Ն	նու	նար	նուն	նիւ	նախա	նի	նուն
Շ	շա	շին	շին	—	շաուա	շէլ	շին
Ո	ո	օն	—	օ	—	օ	—

<sup>1</sup> Հափաստաբանու գործածական կ'ն դա, դայ, բո, բոյ գրութիւնները:

	հայ.	վրաց.	սեմական.	հուհ.	եթովպ.	ղպտի.	արաբ.
Չ	չա	չին	—	—	—	—	—
Պ	պէ	պար	—	պի	պալա, պա	պի	—
Ջ	ջէ	ջան	—	—	—	ջանջա	ջիմ
Ռ	ռա	ռե	ռեչ	ռօ	ռէսս	ռօ	ռէ
Ս	սէ	սան	սամէք, սէմքատ	սիզմա	սատ	սիզմա սիմա, սօ	սին
Վ	վեւ	վին	վաւ	—	վաւ	վիզա	վաւ
Տ	տիւն	տար	տէթ	տաւ	տայտ	—	տը
Ր	րէ	—	—	—	—	—	—
Յ	ցո	ցան	—	—	—	—	—
Ի	հիւն	ւե	—	իւփսիլոն	—	—	—
Փ	փիւր	փար	փէ	ֆի	էֆ	փի, ֆէի	փէ
Ք	քէ	քան	քաֆ	խի	քաֆ	—	քէֆ
	—	զան	—	—	—	—	—
	—	զ'ար	—	—	—	—	զ'այն
	—	խ'ար	—	—	—	—	—
	—	հ'ոն	—	—	—	—	—

Դժբախտաբար ծանոթ շին մեզ իրանյան գրերի անունները, բայց ինչպես որ այս գրերի ծագումը սեմական է, նույնպես պիտի լինեն նաև նրանց անվանակոչութունը:

Ընդհանուր օրենք է, որ երբ մի ազգ մի ուրիշ ազգի գրերն է փոխ առնում, նրանց անվանակոչութունն էլ հետն է ընդունում՝ հնչական փոքրիկ փոփոխութուններով: Այսպես արին հույները, երբ փյունիկյան այբուբենը փոխ առին. հմմտ. ալեֆ և ալֆա, բէթ և բէտա, գիմել և գամմա, դալէթ և դելտա, լամբդ և լամբդա, սամէֆ և սիգմա և այլն: Այսպես արին արաբները, երբ իրենց դրացի սեմականների այբուբենը փոխ առին. հմմտ. ալեֆ և ալիֆ, բէթ և բէ, գիմալ և ջիմ, լամէդ և լամ, ծազէֆ և ծազ և այլն և այլն: Այսպես են արել նաև հաբեշները, ղպտիները, թուրքերը, պարսիկները: Այսպես արած պիտի լինեն նաև հին իրանյանները, երբ արամեական այբուբենը փոխ առին, հարմարեցնելով իրենց լեզվի հնչական օրենքներին:

Այս ընդհանուր օրենքից հետագած շի կարող լինել նաև հայերենը:

Հայերեն գրերի անունները բաժանվում են հետևյալ հինգ խումբերին.

1. դա, զա, ժա, ձա, շա, շա, ոա.
2. է, ժէ, խէ, ճէ, պէ, ջէ, աէ, բէ, քէ.
3. ո, թո, հո, ցո.
4. բէն, կէն, մէն.
5. լին, տին, հին.

Ման. Աղայան (Մուրճ, 1890, էջ 1589) հիւն անունը մեկնում է պին < վին, այսինքն վե-ն վեւ (ն հոդով). բայց լին, աին ձևերը ցույց են տալիս, որ այսպիսի մի մեկնություն անտեղի է:

Առանձին են մնում այր, գիւ, եր, դաւ, նու (նոյ), վե, եշ, ինի (ին), յի և փիւ:

Վրացերեն գրերը բաժանվում են յոթ խմբի.

1. հե, բե, ւե.

2. ան, բան, գան, թան, կան, ման, ժան, սան, քան, դան, ցան, խան, շան.

3. են, զեն.

4. վին, ին, շին, շին.

5. դոն, ոն.

6. նար, պար, տար, փար, դ'ար, ճար, խ'ար.

7. ձիլ, ծիլ.

Առանձին են մնում լաս, հաե, հիե, հոե:

Ինչպես երևում է, կատարյալ նույնություն հայ և օտարադղի գրերի անվանակոչության մեջ գրեթե չկա: Այս կողմից ամենից հաջողակները հետևյալներն են.

1. Այր. — նման է հնչում թե՛ հունական ալֆային և թե՛ սեմական ալեֆին (հայ տառադարձությամբ ալփա, ալեփ). մեր բառն անշուշտ անցել է ալփ և այփ ձևերից (հմմտ. եթովպ. ալֆ), իսկ փ փոխված է բ-ի՝ հաջորդ բե՛ն գրի անունից ազդվելով:

2. Գիւ. — սրա հետ գրեթե նույն են հունական զամվա և մանվանդ սեմական զիմել (արար. զիւ կամ ջիւ). հայերենը կարող է գալ միայն սեմականից՝ ի ձայնավորի պատճառով, որի դեմ հույնը ունի ա:

3. է. — թեև համապատասխանում է հունարեն էտա (η) գրերին, սակայն անունով նույն է հունական է-փսիլոնի հետ (հմմտ. իւ-փսիլոն):

4. Ըք կամ եք. — ինչպես ձևով և կարգով հարմարեցրած է

հայերեն է-ին, նույնպես էլ անունով շինված է է գրին համապատասխան հունական էտա-ից:

5. Ղառ. — կարող է գալ թե՛ սեմական լամբդից և թե՛ հունական լամբդաից:

6. Մեհ. — շի կարող ծագել հունական միւ (μου) ձևից. ավելի մոտիկ է սեմական մեմ, որի վերջատառը միայն փոխված է:

7. Նու. — եթե նկատի շունեհանք հնագույն եռյ ձևը, կարող է շինված լինել հունական նիւ (νυ) կամ սեմական նուե-ից՝ ջնջելով վերջատառը:

8. Ո (գրված նաև ոյ. հին ժամանակ կարդացվում էր օ). — սեմական այբուբենում չկա. հույներն ունեին երկու տեսակ օ (օ միկրօն՝ փոքր օ և օ մեգա՝ մեծ օ). մեր բառը ուղղակի սրանից է փոխառնված:

9. Պէ. — նույն է սեմական փե-ի հետ, որ երբեմն տառադարձված է նաև պ. հունարենն ունի պի:

10. Վեւ կամ վեվ. — պակասում է հունական այբուբենում. գալիս է սեմական վաւ-ից:

Վրացերեն գրերի անվանակոչության մեջ նմանութունն ավելի քիչ է. այստեղ վա միայն շ տառը, որ թե՛ վրացերենի և թե՛ սեմականի մեջ կոչվում է շին: Կարող ենք հիշել նաև զեհ, որ մոտ է սեմական զայիև անվան: Ընդհակառակը հայերեն անունների հետ կա բավական մեծ նմանություն. համտ.

Վրաց.	հայ.
բան	բեն
գան	գիմ
ին	ին, ինի
կան	կեն
ման	մեն
ռե	ռա, ըէ
ուն	հիւս
փար	փիւր
հոե	հո
հիե	յի.

(Այս համեմատությունը վրա տե՛ս նաև Müller, SWAW, 137, էջ 6):

Ի նկատի ունենալով այս բոլորը, տեսնում ենք, որ գրերի անվանակոչության մեջ դեր են խաղացել թե՛ սեմական և թե՛ հունական անունները: Մեսրոպը օգտվելով թե՛ մեկից և թե՛ մյուսից, ընտ-

րնչով նրանց միջից իրեն ավելի հարմար երևացածները, փոքրիկ փոփոխություն մտցնելով նրանց մեջ՝ կազմել է իր հորինած գրերի անունները: Այս անվանակոչության մեջ Մեսրոպը աշխատել է հատկապես կարճ, միավանկ, դյուրահնչյուն անուններ ստեղծել. այս պատճառով կրճատել և համառոտել է հույն ու սեմական գրերի ծանր անունները: Ինչպես տեսնվում է վերի ցուցակից, հունարեն գրերը առհասարակ երկվանկ անուններ ունեն (ալֆա, բետա, գամմա, դելտա, լամբդա և այլն). շատ տարբեր շեն նաև սեմական անունները (հմտ. ալեֆ, զիմել, դալեթ, լամեդ, ծադեֆ, սամեֆ). Մեսրոպը այս բոլորը փոխել է. գամմա, զիմել դարձրել է զիմ. — լամբդա, լամեդ դարձրել է դաա և այլն:

Հույն և ասորի այբուբեններից դուրս կա նաև իրանյան այբուբենի ազդեցությունը, բայց այս այբուբենի անվանակոչությունը անծանոթ է մեզ. ուստի անկարելի է որոշել ազդեցության շափր: Շատ կարելի է, որ այն փոփոխությունները, որ մենք վերագրեցինք Մեսրոպին՝ հայերեն գրերի անվանակոչության մեջ, գտնվեին նույնիսկ իրանյան այբուբենում, որից ուղղակի օգտված պիտի լինեն Մեսրոպը:

#### Է. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԳՐԵՐԻ ՀՆՁՈՒՄԸ ԿԱՄ ԱՐԺԵՐԸ

Աշխարհիս մեջ չկա լեզու, որի ձայնական դրուսյունը մշտապես անփոփոխ մնացած լինի: Եթե այսպես եզամ լիներ, այն ժամանակ ձևացած չպիտի լինեին աշխարհիս հաղարավոր լեզուները և միայն մայր լեզուն պիտի թագավորեր: Մեռյալ՝ այսինքն այլևս չխոսվող լեզուներն են միայն, որ մնում են գրքերում այնպես, ինչպես էին: Կենդանի, խոսակցական լեզուն շարունակ պիտի փոփոխվի, այս է լեզվի կյանքը:

Այբուբենները հնարված են այն ժամանակ, երբ լեզուն հասած էր որոշ ձայնական ձևափոխության: Նոր հնարվող այբուբենի առաջին և վերջին պայմանն է լինել խոսվող լեզվի հայելին՝ այն է՝ ըստ կարելիության լրիվ պարունակել այն բոլոր ձայները, որոնք գտնվում են նույն լեզվի մեջ, գրելու համար այն, ինչ որ խոսվում է:

Ժամանակ անցնելով լեզուն փոխվում է. ձայները շրջվում են ուրիշ ձայնի. օրինակի համար ա՛ դառնում է ե, է, ä, a և այլն. Ե ձայնը կամաց կամաց դառնում է վ. ց ձայնը դառնում է ծ և այլն. և այս բանը տեղի է ունենում առանց խոսողի գիտության ու կամքին, որովհետև բնության գործն է, և մարդը կարող չէ նրա ընթացքը կասեցնել:

Բայց այբուբենը, որ մի ժամանակ հնարված էր, բնականաբար մնում է այնպես, ինչպես կար: Տառերն էլ իրենց ձևերը փոխելու չէին: Մարդը, որ շարունակում է իր այբուբենը գործածել, իր տառերին տալիս է աստիճանաբար այն փոփոխվող հնչունը, որին հասել է իր լեզուն: Օրինակի համար՝ ենթադրենք թե Ծ հնչունը հազար տարվա մեջ դառնում է Վ. այս բանը անշուշտ մեկ անգամից չպիտի լինի. այսինքն՝ հազար տարի շարունակ մնա Ծ և անմիջապես որ հազարը լրացավ՝ մարդիկ սկսեն արտասանել Վ, այլ անցած պիտի լինի հնչման զանազան անցողական շրջաններից, որոնցից յուրաքանչյուրը մյուսից անդգալի տարբերություն միայն ունի: Հազար տարվա մեջ որոշենք հինգ կետ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է հինգ հնչական աստիճան. ամեն մեկ կետ 200 տարի հետո է իր նախորդից: Ամեն մեկ կետի վրա եղող անձը, որ չի կարող ծանոթ լինել երկու հարյուր տարի առաջ գոյություն ունեցած հնչման, պիտի կարծի, թե իր ներկա հնչումը իսկականն է և թե Ծ տառը 200 տարի առաջ էլ հնչված է եղել այնպես, ինչպես ինքը հիմա հնչում է: Եվ երբ հասնի հինգերորդ աստիճանը, ուր հնչումը դարձել է Վ, խոսողը նորից նույն Ծ գրի հնչումը և պիտի կարծի և անհավատալի պիտի գտնի, երբ ասեն իրեն, թե իր հնչումը փոխված է:

Այսպես եղավ հունարենի մեջ: Հույները իրենց թ գիրը դեռ Ծ դարձում հնչում էին Ծ, իսկ այսօր արդեն վաղուց դարձրել են ւ: Հույները իրենք չեն ընդունում, որ թ տառը ժամանակին հնչվել է Ծ, բայց գիտովթյունը այս բանը վճռական կերպով հաստատել է:

Ինչ որ ասացինք լեզուների համար առհասարակ՝ նույնը պետք է հասկանալ նաև հայերենի համար: Այն օրը, երբ հնարվեց Մեսրոպյան այբուբենը, նա բնականաբար ներկայացնում էր ժամանակակից լեզուն կամ որոշ մի բարբառ: Բայց այն օրից մինչև այսօր անցել է 1500 տարի, և այսքան երկար ժամանակի մեջ անկարելի էր, որ լեզուն և հնչումը անփոփոխ մնային: Եթե նկատի առնենք այսօրվա հայերեն լեզուն, կտեսնենք, որ տեղից-տեղ տարբեր է. պատահում է, որ միևնույն տառը, որ Մեսրոպի ժամանակ մի որոշ հնչման էր համապատասխանում, այսօր մինչև շորս տարբեր հնչում ունի. օրինակ ք տառը հնչվում է ք (թիֆլիս), քն (Կարին), ք (Վան, Ղարաբաղ) կամ ք (Ռոտոսթո, Մալաթիա, Օրդու, Տիգրանակերտ): Մեր գործը պիտի լինի ուրեմն քննել, թե ի՞նչ հնչում ունենին մեր այբուբենի 36 գրերը Մեսրոպի ժամանակ:

Մանրամասն խոսել այս խնդրի մասին՝ ներելի էր թերևս սրանից 50 տարի առաջ, երբ հայ գրողները, սրանց հետ միացած նաև եվրոպացի գիտուններ, երկու խոշոր բանակի բաժանված՝ վիճում

էին իրար հետ՝ արևելյան և արևմտյան կողմած տառադարձութիան առթիվ: Այն ժամանակներէջ ի վեր խնդիրը այնպէս է պարզված, որ այլևս կասկածի և տարակուսի տեղիք չկա:

Հայերեն այբուբենի Ե դարի կամ ընդհանրապէս խոսելով՝ հին հնչումը որոշելու համար շորս միջոց կա՝. սրանք են՝

1. Հայերեն այբուբենի դասավորութիւնը.
2. Գիտնեահոս Քրակացու քերականութիւնը.
3. Օտար լեզուներէջ տառադարձված բառերը հայերենում:
4. Հայերենից տառադարձված բառերը օտար լեզուներում:

### 1. ՀԱՅԵՐԵՆ ԱՏԲՈՒԲԵՆԻ ԳԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերը տեսանք, որ հայերեն այբուբենը հույն այբուբենի տառերի շարքն ունի. գրեթէ նույն է նաև վրացերենը. հավելվածական գրերն են միայն, որ երկու այբուբենների մեջ էլ կարգը անցողակի կերպով ընդմիջում են, բայց առանց ամբողջութիւնը խանգարելու: Ահա երեք այբուբենների համեմատութիւնը ճիշտ իրենց շարքով:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Ձ	Է	Ը	Ք	Ժ	Ի	Լ	Խ	Մ	Կ	Հ
α	β	γ	δ	ε	ζ	η	θ			ι					κ
Է	Վ	Պ	Օ	Ի	Ն	Է		(Ի		Ն					Կ
Ձ	Ղ	Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ	Ռ	Ս	Վ	Տ	Ր
	λ		μ		ν	ξ			π		ρ	σ		τ	
ԻԵ		Ժ		Է		Օ,		Ն		Ժ	Ե				Ք
Յ	Ի	Փ	Բ												
	υ	φ	χ	ψ	ω										
Վ	Փ	Փ													

Եթէ Մեսրոպը այս երեքը իրրև իրար համապատասխան կգրեր է ընդունել, ուրեմն հնչումով իրար համապատասխան են: Հունարեն և վրացերեն գրերի հնչումը արդեն ծանոթ և իրար համապատասխան լինելով՝ նրանց դեմը գտնված հայերեն տառերն էլ պետք է, որ ունենան համապատասխան հնչումները. ուստի և՛ Բ = Բ, Գ = Գ և այլն:

<sup>1</sup> Օղակել եմ գլխավորապէս Հյուրշմանի Über Aussprache und Umschreibung des Altarmenischen հոդվածից (ZDMG, 1876, էջ 52—73).

Դիոնեսիոս Թրակացու քերականությունը պատրաստված է հունարենի համար. անծանոթ մի հայ թարգմանիչ այս քերականությունը թարգմանելով՝ իբր թե վերածել է հայերեն քերականության, բայց ստրկորեն հետևել է հունարեն լեզվի սկզբունքներին<sup>1</sup>:

Թրակացին հայերեն գրերը բաժանում է հետևյալ ձևով. Չայնավորներ՝ ութ հատ. ա, ե, է, ը, ի, ո, լ, ով. սրանցից է և ով երկար են, ե, ո, լ կարճ են, իսկ ա, ը, ի կարող են թե կարճ լինել և թե երկար:

Ծրկբարբառներ՝ որոնք են. աւ, եւ, ու, աի, ռի, էւ, ըւ, իւ:

Բաղաձայններ՝ որոնց ստորաբաժանումներն են.

լերկ կամ նուրբ — պ, կ, տ, գ, ն, ծ, շ, մ, ս, ր:

Թավ, թանձր կամ ստվար — փ, ֆ, խ, ք, լ, ց, շ, շ, ո:

Միջակ — բ, գ, դ, ձ, դ, ն, ժ:

Կամ ուրիշ ձևով դասավորված՝

Անձայն — բ, գ, դ, պ, կ, տ, ք, փ, ֆ:

Կիսաձայն — գ, ց, ն, ծ, շ, մ, ս, ր:

Կրկնակ — դ, լ, խ, շ, շ, շ, ո, ց:

Նայ — դ, մ, ն, ր:

Այս բաժանումները մեզ համար թանկագին կուլաններ են իմանալու համար հին հայոց հնչյունները: Հայերենի մեջ կարճ ու երկար ձայնավոր չկա. այս բոլորը հունարենին է հատուկ, ուստի երբ հեղինակը ասում է, թե է և ով երկար են, պետք է հասկանալ, թե այս գրերը հավասարազոր է դնում հունարեն դ և ω ձայնավորներին, որոնք հունարենում երկար են: Երբ ասում է, թե ե, ո, լ կարճ են, հասկացվում է, թե սրանք հավասարազոր է դնում ε, ο, υ ձայններին. իսկ ա, ի կմնան իբր հունարեն α, ι: Այսպիսի համապատասխանություններ գտնում ենք նաև երկբարբառների և բաղաձայնների մեջ. լերկ կամ նուրբ ասելով հասկանում ենք հունական ψιλα կոչված բաղաձայնները, որոնք են κ, π, τ, այսպես էլ թավ (δασα) են հունարեն θ, φ, χ, միջակ (μεσα) են β, γ, δ, նայ (σγρα) են λ, μ, ν, ρ:

Երբ Թրակացու թարգմանիչը այս գրերը դնում է հունարեն գրերի դեմ իբր համապատասխան, նշանակում է, թե հնչմամբ նույն են նրանց հետ:

<sup>1</sup> Այս քերականությունը տպված է նախ Mémoires de la Société royale des antiquaires de France, հտ. VI, 1824, երկրորդ լավագույն հրատարակությունների Ն. Ադոնց, Պետրոգրադ, 1915, որից և օգտվել եմ:



Ե զարում մեզ հետ հարաբերություն ունեցող գլխավոր ազգերն են եղել Հյուսիսից վրացիները, արևելքից պարսիկները, հարավից ասորիները և արևմուտքից հույները: Այս շորս ազգերից հաղարավոր բառեր և անուններ Ե դարի տառադարձությամբ ծանոթ են մեզ, ոմանք իբրև փոխառեալ բառեր, ոմանք էլ պարզապես իբրև օտար անուններ: Պարսկերեն, ասորերեն և հունարեն բառերի և անունների գրեթե ամբողջությունը կարող ենք գտնել Հյուրըմանի Armenische Grammatik աշխատության մեջ: Վրացերենից փոխառյալ բառերի և տառադարձված անունների մասին դեռ առանձին աշխատություն չկա:

Ամեն լեզվի մեջ էլ երկու տեսակ տառադարձություն կա. հընչական և պատմական: Օրինակի համար՝ երբ Berlin քաղաքի անունը Պուլի հայերը այսօր գրում են Պեռլին, հետևում են հնչական տառադարձության, ուր յուրաքանչյուր տառ համապատասխանում է օտարազգի բառի տառերի հնչման, իսկ երբ զբաբարազեռ մի բանասեր ուզենա գրել Բերլին կամ Բերդլին, այն ժամանակ հետևում է պատմական տառադարձության. այստեղ այլևս տառերի ժամանակակից հնչման համապատասխանություն չկա, այլ իր օրինակ առնվում են հին ժամանակի հնչումները:

Անհակառակելի ճշմարտություն է, որ ամեն լեզու ձեռք գրի առնված ժամանակ հետևում է հնչական գրություն, այն պարզ պատճառով, որ հին գրականություն չունի՝ պատմական տառադարձության հետևելու համար: Սրանից հետևում է, որ Մեսրոպյան դարի տառադարձություններն էլ հնչական են, այսինքն՝ ներկայացնում են այն հնչյունները, որոնք գտնվում են տառադարձված բառերի բնիկ ձևի մեջ:

4. ԼԱՅՆԲՆՆՑ ՏԱՌԱԿԱՐՉՎԱԾ ԲԱՌԹԸ ՕՏԱՐ ԼԵՂՈՒՆԴՐԻ ԿՑԸ

Օտար ազգերը քիչ անգամ միայն առիթ են ունեցել հայերեն բառեր տառադարձելու. սրանց մեջ հնագույններն են նախ՝ այն մի խումբ աշխարհագրական անունները, որ հույն և հռոմայցի մատենագիրները հիշում են. երկրորդ՝ այն բառերը, որ վրացերենը փոխ է առել մեղանից հին ժամանակներում. և երրորդ՝ այն բառերը, որ հայերենից մի օտար լեզվի թարգմանված գործերի մեջ թարգմանիչները մտցրել են: Առաջինները գտնում ենք հավաքված Հյուրըմանի Die Altarmenischen Ortsnamen (Strassburg, 1904) աշխատության մեջ և Montzka հեղինակի Die Landschaften Gross-

armeniens bei griechischen und römischen Schriftstellern գործի մեջ (Wien 1906, որից թրգմ. «Հանդ. ամս.», 212. 1907, 9—14, 212, 301—303, 1911, 31—37): Այս անունները գլխավորապես այն պակասութիւնն ունեն, որ նախ բերնի բերան, հետո էլ ձեռագրից ձեռագիր անցնելով՝ բավական բան զոհել են գրիչների անուշադրութեան պատճառով, սրա համար համեմատութեան ժամանակ պետք է առանձին ուշադրութիւն դարձնել և զանազան ընթերցվածների միջից աշխատել ընտրել լավագույնը:

Վրացերեն փոխառութիւնները հավաքված են իմ մի հոդվածում՝ «Չայնաբանութիւն հայերենից փոխառեալ վրացերեն բառերի» (Արարատ, 1898, էջ 309—316, 365—371): Սրանք էլ սակայն կարող են լինել զանազան ժամանակներից, սկսած Ծ կամ ավելի հին դարերից մինչև նոր ժամանակները: Վրացերեն ստուգաբանական բառարանի բացակայութեան պատճառով շատ դժվար է այս բառերի ժամանակը որոշել. ուստի սրանք էլ պետք է գործածել բավական զգուշութեամբ և օրինակ առնել միայն այն բառերը, որոնք հին լինելու երևույթն ունեն:

Հայերենից թարգմանված գործեր շատ քիչ են հին մատենագրութեանց մեջ: Այս կողմից ամենից հարուստը պիտի լինի վրացերենը. սակայն իմ միջոցները չեն ներում քննել այս թարգմանութիւնները, որոնցից շատը դեռ մնում է ձեռագրերի մեջ: Հայերենից հունարենի թարգմանված կարևոր մի գործ կա, որ է Ազաթանգեղոսի պատմութիւնը: Գոտշմիդը այս թարգմանութիւնը դնում է 555—622 կամ մանավանդ 591 թվին, ուստի Ծ դարից ոչ շատ հետո: Թարգմանիչը, որ հայերենին բավական ծանոթ մի հույն է, շատ տեղ առիթ է ունեցել հայերեն հատուկ անունները հունարեն տառադարձելու. երբեմն էլ հայերեն դժվարիմաց բառեր չկարողանալով թարգմանել՝ ուղղակի հունարեն տառերով գրել է: Սրանք բնական է գրված են ճիշտ հայ գրերի հնչման համեմատ, ուստի կարող են շատ օգտակար լինել մեր նպատակի համար<sup>1</sup>:

Օգտվելով ուրեմն այս չորս տարբեր միջոցներով՝ քննենք այբուբենի հին հնչումը<sup>2</sup>:

Առնենք նախ ձայնավորները.

Ներկա հայերենի մեջ ա, ի, ը գրեթե ամեն տեղ նույն հնչումն

<sup>1</sup> Հունարեն Ազաթանգեղոսի լավագույն հրատարակութիւնն ունի Լազարոյ հայագետը. սրանից օգտվելով քաղվածքներ են անում Տաշյանը (Ազաթ. առ Գէորգայ, Վիեննա, 1891) և Հ. Բ. Սարգիսյանը (Ազաթ. եւ իր բազմադարեան գաղտնիքը, Վենետիկ, 1890): Մի հավաքած բառերը քաղված են սրանցից:

<sup>2</sup> Կարելի է օգտվել նաև Կարբիերի հրատարակած Un ansien glosaire latin-arménien (Paris 1886) տետրակից:

ունեն. Ա և ի գրերը՝ այբուբենի շարքում համապատասխանում են հուն. α և ι, վրաց. յ և օ տառերին. նույնպես գտնում ենք նաև Քրակացու մոտ և տառադարձութանց մեջ. օրինակ, օտար լեզուներէջ հայերեն՝ Ատրպատական = պէլ. āturpātakan, Արգար = ասոր. abgar, աղամանդ = հուն. ἀδάμας, Միհր = զեդ. Miθra, Գաղիշ = ասոր. gadišā, իրիս = հուն. ἶρις, հայերենից օտար լեզուներին անցած՝ հին աշխարհագիրների մոտ, Արարատ = Ararat, Կարին — Καργινίτις, Caranitis, Գարանազի = Daranalis, Հանձիթ = Ἄντιττηνί, ասոր. Hanzil. Ծիրակ — Σαρακηνί, Վրացերենի մեջ՝ ազարակ = ազարակի, արձան = արձանի, աւագակ = ավագակի, խիստ = խիստի, շիրիմ = շիրիմի, հունարեն Ագաթանգեղոսի մոտ՝ վաղարշապատ = Οὐαλαρσαπάτ, Փայտակարան = Φατακαρηνίς, Մասիս = Μασίς, Սահմի = Σαομί, յԱնի = Ιανί: Արեմն այսօրվա մեր ա և ի հնչումները հնից տարբեր բան չեն ներկայացնում:

Ը երկու տեսակ է այսօր. գրված ր և չգրված ր. ինչպես՝ րնկեր, կրակ: Նախ և առաջ խնդիր է, թե հին հայերն էլ ճանաչո՞ւմ էին այս երկրորդ ր ձայնը, այսինքն՝ բաղաձայնների խմբերը արտասանելու ժամանակ իրարից բաժանո՞ւմ էին ր ձայնավորով (ինչպես անում ենք մենք այսօր և ինչպես է թուրքերենի մեջ), թե միաշունչ հնչում էին տալիս (ինչպես է եվրոպական լեզուների մեջ): Այս բանը իմանալու համար որևէ ուղղակի վկայություն չկա: Հայագետ Մեյյեն մտածել է հետևյալ հնարագետ միջոցը:

Գիտենք, որ բայերի խոնարհման ժամանակ կատարյալի և այսպանիի ձևերը՝ եթե միավանկ են, ստանում են և հավելվածը, իսկ եթե բաղձավանկ են, այդ հավելվածից զուրկ են մնում. օրինակ՝ եհար, ետու, ետուր, եկաց, եղից, բայց սիրեաց, բերի, ածի և այլն: Արդ՝ այն բայերը, որոնց սկիզբը գտնում ենք կրկին բաղաձայն, նույն ժամանակների մեջ և չեն ստանում. այսպես՝ գրեաց, խցի, լցեր և այլն: Նշանակում է, թե սրանք միավանկ բառեր չեն և հին հայերն էլ կարդում էին գրեաց, խրցի, լրցեր և այլն, ճիշտ ինչպես հիմա:

Ը գրի դեմ այբուբենների շարքում համապատասխան տառ չկա. Քրակացին դնում է թե՛ կարճ և թե՛ երկար ձայնավորների շարքում. բայց սրանով բան չի հասկացվում: Օտար տառադարձութանց մեջ միայն ասորին պիտի առնենք նկատի, որովհետև այս լեզվի մեջ միայն կա ր ձայնը: Բայց ասորերենի ր ձևը հայերենի մեջ տալիս է ամեն ձայնավոր. ինչպես, օրինակ՝ kurkəmə = քրքում, kakkəṛā = քաքար, Kəṛōwā = քերովրե, šewīlā = շավիղ, məγalleθā = մագաղաք և այլն: Ը դարձած գտնում ենք pəraq = փրկել, məšalləyānē = մղկեայք, šerārā = ծար բասերի մեջ:

Ավելի հետաքրքրական է տեսնել, թե ինչ է լինում ը ձայնը հայերենից տառադարձված օտար բառերի մեջ: Վրացերենում ը ձայնը կամ ջնշվում է և կամ դառնում է ի, ու. ինչպես՝ գձուծի = գձուծ, խրամի = խրամ, րոարտակի = հրովարտակ, Եիանգի = Եանանգ, պիլենձի = պիլենձ, մուշակի = մշակ, հուրիա = հրեայ (բայց սրբանց վրա մեր տեսությունը տե՛ս Արարատ, 1898, էջ 313): Աշխարհագրական անունների մեջ ը ձայնի դեմ գտնում ենք ի, ա, ու ձայնավորները. Կթառիճ = Kitharizon, Աղձնիք = 'Αρχανγηγή, Arzane, Տմարիք = Ταμωρίτης? Կպառ = Νιφάτης, Մնձուր = Μουζουρω, Արծկե = 'Αρτζακέ (է դար): Նույն բանն է նաև հունարեն Ագաթանգեղոսում. հմմտ. Արծուանաց = 'Αρσουρωνών, Մախերտան = Μαχουρ(α)ών, Կպառ = Ναπάτ, Մախրաց = Μασαχουτών, Ատրպատական = 'Ατραπατακάν: Այս բոլորը սակայն միայն մի բան են ցույց տալիս, այն՝ թե բաղաձայնների խմբի մեջ հայերը ներմուծում էին մի ձայնավոր, որի երանգը օտար լեզուները չէին կարող նշանակել: Ը գրի արժեքը հաստատելու համար ուրիշ միջոց չկա ուրեմն, եթե ոչ նոր բարբառների միահամուռ վկայությունը:

Ե ձայնը ներկայացնելու համար Մեսրոպյան այբուբենը ունի երկու գիր՝ ե և է: Սրանցից առաջինը (ե) երեք տեսակ հնչում ունի այսօր. բառի սկիզբը գրական լեզվի և մի քանի բարբառների մեջ հնչվում է ye. ուրիշ բարբառներում հնչվում է պարզապես e, որով է տառին հավասարազոր է դառնում (ինչ. օր. Պուլի բարբառով՝ էս = ես, էրագ = երագ, էրգան = երկայն, էրանի = երանի): Բառի մեջ գրական լեզուն և բարբառների մեծամասնությունը հնչում են e, որով նույնպես է գրին հավասար է դառնում: Ուրիշ բարբառներ (Կարին, Մուշ, Վան, Սեբաստիա և այլն) այս պարագային հնչում են ie երկբարբառային հնչումով: Է տառը ամեն տեղ էլ հնչվում է e, որով շատ տեղ ե և է դառնում են նույնաձայն գրեր: Բարբառներից ոմանք միայն զանազանում են բառի սկզբում b = ye, է = e, բառի մեջ b = ie, է = e:

Կարելի բան չէ, որ Ե դարում ե և է գրերը նույն ձայնն ունենային. երբ Մեսրոպը պետք է տեսել հնարելու երկու գիր, նշանակում է, թե լեզվի մեջ էլ գտել է երկու տարբեր հնչյուն: Այբուբենի համեմատությունից մեջ գտնում ենք b = e, է = η, որով սրանց տարբեր բաներ լինելը շեղումով է: Այսպես ենք գտնում նաև հունարենից հայերեն տառադարձությանց մեջ. օրինակ՝ արιαχή = կիրակի, օղη = հիւլի, օλληγ = հելլեն, μάχελλον = մակեդոն: Հին հունարենի մեջ (նաև Մեսրոպի ժամանակ) e հնչվում էր կարճ e, իսկ η՝ երկար ē (նոր լեզվի մեջ այս η ձայնը դարձել է ի): Թրակացու թարգմանությունն էլ, որ կուրորեն հետևում է հունարենին, մեր է

Ժայնք զնում է երկար, իսկ Ե՝ կարճ: Բայց սա սխալ է: Հնագույն հայերենը կարող է ունեցած լինել կարճ ու երկար ձայնավորներ. հատկապես Ե կարճ էր, որովհետև համապատասխանում է հնդեվրոպական կարճ e-ին, իսկ է երկար էր, որովհետև ծագում է հնդեվրոպական ei, oy երկարբառաներից (ուտի և է < Ե + j): Բայց ավելի հետո ձայնավորների երկարությունն ու կարճությունը վերացան և ապահովագրվեց արդեն Ծ դարում ըստ Հյուրշմանի՝ նրանց մեջ տևողական տարբերություն չկար: Ծթե՛ Ե ձայնը կարճ ու երկար ձևեր ունենար հայերենի մեջ, նույնպիսի կարճ ու երկար ձևեր պիտի ունենային նաև մյուս ձայնավորները (ինչպես է հունարենի մեջ). երկրորդ որ հունարենից հայերեն տառադարձությանց մեջ η ամեն անգամ է չէ, այլ շատ անգամ գտնում ենք նաև Ե, երբ որ հայերենի օրենքը այդպես է պահանջում. ինչ. քերիակէ = մηραια, Եկեղեցի = εκκλησια, քերայ = αθηνα քեմ = βημα և այլն: նույնպես նաև հայերենից տառադարձված բառերի մեջ երկու ձևն էլ իստև գտնում ենք: Օր.՝ աշխարհագրական անունների մեջ, ինչպես՝ Գերշան = Δερζην, Եկեղյաց = Έκκλησιανη կամ Աκκλησιανη, Անգեղ = Ιγγληνη, Արեն = Αρση, Շակաշեն = Σακασην, հունարեն Ագաթանգեղոսի մեջ՝ Հեր = Χερς, ապեմ = αποτα, սպասկապետուրին = (Σ) πασκαπετων, Եկեղեցաց = Έκκλησιανη, Երէզ = Έρζ, Բասեն = Βασων, Աշխեն = Ασχηνη: Վրացերենը մեր երկու գրերի դեմ էլ միշտ հանում է Ե, օր.՝ սենյակ = սենակի, աղբու = աղբուի, պատնէշ = պատնէշի, խնէշ = խննէշի և այլն:

Այս բոլորից հետևում է, թե հայ և օտար տառադարձությունները բավական շեն խնդիրը լուծելու համար. օտար լեզուների ձայնական դրույթունը չէ կարողացած ներկայացնել մեր այս երկու գրերի հնչական նուրբ տարբերությունը: Այս պատճառով պետք է դիմել ենթադրությունների:

Գիտենք արդեն, որ Ե և է շեն կարող ունենալ տևողական տարբերություն. մյուս կողմից շենք կարող ընդունել նաև, որ Ե գիրը ye կամ ie ձայնն ունեցած լինի, որովհետև այսպիսի որոշ տարբերություն անշուշտ պիտի նկատվեր երկարբառաներով հարուստ հունարեն գրույթյան մեջ: Մնում է, ուրեմն, ընդունել, թե մեր այս երկու գրերի տարբերությունը Ծ դարում կայանում էր լոկ բերանի բացվածքի մեջ. Ե կարտասանվեր ավելի բաց, է կարտասանվեր ավելի գոց: Մանոթ լեզվաբանական երևույթ է, որ երկար Ե ձայնը ժամա-

1 Այստեղ և հաջորդ էջերում Մելի և Հյուրշմանի անունով գրված տեղեկությունները սովորաբար անտիպ են. բազում են այն աշակերտական նոթերից, որ կազմել են նրանց գասախոսությանց ժամանակ, որոնց ոմկնորհի են:

նակ անցնելով հետզհետե կփակվի և անցնելով  $e'$  ձևից՝ կտա  $i$ :  
Հմմտ. հուն.  $\eta$ , որ  $\psi$  դարձավ երկար  $\bar{e}$  էր, այժմ պարզ  $i$  ձայնն ունի-  
նույնպես անգլերեն  $ee (= \bar{e})$ , որ այժմ հնչվում է  $i$ :

Ե իբր բաց, իսկ է իբր փակ ընդունում է նաև Հյուբըմանը և  
ասում է, թե թեև իր ընդունած տառադարձության մեջ է գրում է  $\bar{e}$ ,  
բայց այս բանը պետք չէ տառացի մտքով առնել, այլ լոկ տառա-  
դարձական տարբերության համար է և ավելի ստուգարանական ար-  
ժեք ունի. նա չի ներկայացնում  $\psi$  դարի արտասանությունը: Այս  
մեկնության համաձայն է գալիս նաև այն հանգամանքը, որ է ձայ-  
նը ածանցման ժամանակ դառնում է  $i$ , մինչդեռ  $\psi$  նախորդիս է մը-  
նում: Փակ է ձայնը արդարև շատ ավելի մոտ է  $i$  հնչման, քան թե  
բաց է ձայնը:

Գրեթե նույն երեուլթը ներկայացնում է նաև ֆրանսերենը, ուր  
ունենք  $\bar{e}$  և  $\acute{e}$ .  $\bar{e}$  ներկայացնում է մեր հին  $\psi$  ձայնը, իսկ  $\acute{e}$  = է. ֆը-  
րանսերեն բառերի ծայրին շինք գտնում  $\bar{e}$ , այլ միայն  $\acute{e}$ , նույնպես  
նաև հայերենի մեջ բառերի ծայրին գրեթե չկա  $\psi$  և և բացառապես  
գտնվում է է:

Մնում է քննել նաև, թե  $\psi$  գիրը բառի սկզբում հին ժամանակ ye  
հնչումն ունե՞ր: Այսպիսի բան չի կարող գոյություն ունեցած լինել,  
հետևյալ պատճառներով. նախ՝ օտար տառադարձությանց մեջ չկա  
այսպիսի բան, այլ միշտ գտնվում է  $e$ , օրինակ՝ հին աշխարհագր-  
րական անուններից՝ Եկեղյաց = 'Εκελισγηγή, հունարեն Ագաթանգե-  
ղոսի մեջ՝ Երասխ = 'Ερασάχ, Երեզ = 'Ερηζ, վրացերենում՝ erdo =  
= երդ, Epevani = Երևան: Երկրորդ՝ երբ հայերեն  $e$  տառով սկսվող  
մի օտար բառ հայերենի են դարձնում, գրում են  $\psi$  և ոչ է. ինչպես՝  
Ենով = 'Ενώχ, Եղիշայ = ասոր. Elisa, Երան = պհլ. Erān (Իրան):  
Միայն երկու բառ ունենք Երեմիա = հուն. 'Ιερομίας և Երուաղեմ =  
= հուն. 'Ιερουσαλημ, որոնք հունարենի համեմատությանը ye  
հնչումն են ցույց տալիս զարմանալի կերպով: Սրանց մեջ պետք է  
տեսնել սեմական ազդեցություն: Երրորդ՝ հայերենի մեջ  $e$ -ով սկըս-  
վող բառերի վրա իբր հավելվածական ձայնավոր ավելանում է  $\psi$ ,  
ճիշտ ինչպես երբեմն էլ  $\psi$  կամ նոր լեզվի մեջ ը, ու, օրինակ՝ Երա-  
սան = առասան, Երանգ, Երամ, Երակ, բարբառներով՝ ընեհան,  
ըզգակ, ըռահաթ, ուռուս և այլն. եթե  $\psi$ -ն պարզ ձայնավոր չլիներ,  
այս պարագային չէր գործածվի: Չորրորդ՝ անտեղի է կարծել, որ  
Մեսրոպը հայերեն գրերը հորինած ժամանակ երկու տարբեր ձայ-  
ներից բաղկացած ye խումբը մեկ տառով նշանակեր, ճիշտ ինչպես  
որ անտեղի կլիներ կարծել, թե, օրինակ,  $\psi$  տառը բառի սկզբում  
կարդացվում էր յա: Բառասկզբի  $e$  ձայնի հետագայում ye դառ-  
նալը լեզվաբանական մի պարզ երևույթ է, որին հանդիպում ենք

նաև ուսանքենի մեջ, ուր օ հնչվում է ye. օրինակ՝ ուսու. есан = yesli.  
 Ծ գրի հետ ճշտիվ համեմատելի է ո: Նոր լեզվի մեջ այս էլ նրո՞ք  
 պիտավոր մե է ստացել. բառի սկզբում հնչվում է գրական լեզվի մեջ  
 vo, uo, o, բառի մեջ գրական լեզվով միշտ օ, բարբառների մեջ uo  
 կամ օ: Մրանցից դուրս գտնում ենք նաև ü, ö հնչյունները, որոնք  
 սակավաթիվ բարբառների միայն հատուկ են:

Տեսնենք, թե սրանցից որն էր ո-ին հատուկ հին հնչումը:

Այբուբենների համեմատության մեջ մեր ո գրին համապա-  
 տասխանում են հունարեն և վրացերեն օ: Քրակացու թարգմանիչը  
 ո համարում է կարճ, իսկ ով երկար ձայնավոր. բայց մենք գիտենք,  
 որ ամենից առաջ ով ձայնավոր տառ չէ, այլ ձայնախումբ. ուստի  
 այստեղ գործ չունի: Այստեղ էլ ստրկորեն հետևել է հունարենի  
 ձայնական դրուսյան, ուր օ կարճ է և ω երկար. բայց սրանով հայտնի  
 կերպով ցույց է տալիս, որ հայերեն ո-ի համապատասխանն է հուն.  
 օ: Տառադարձությանց մեջ օտար լեզուների օ-ի դեմ միշտ գտնում  
 ենք ո. ինչ. պ՛հ. \*rōdik = պրս. rōiz = ոռճիկ, ասոր. tōhmā wōh =  
 = բոճ և բոճ, հուն. ἑπιτοκος = եպիսկոպոս, պրս. Gōdārz = Գա-  
 տարգ:

Պատահում է երբեմն, որ իրանյան av, u, va ձայների դեմ էլ  
 գտնում ենք ո, ինչպես օրինակ՝ խորասան = պ՛հ. Xvarāsan, պրս.  
 Xurāsān, խուրով = պրս. Xusrav, ախոռ = պ՛հ. āxvar, պրս. āxur,  
 հմմտ. նաև դարով, խորտիկ, նոխազ և այլն: Բայց այս բանը չպետք  
 է շփոթի մեզ, որովհետև հայերեն բառերը ծագել են իրանյան այն-  
 պիսի մի բարբառից, որ հիշյալ պարագաներում օ ունի: Այս բա-  
 նը հաստատում են, օրինակի համար, վերոհիշյալ խուրով, ախոռ  
 բառերի դեմ հուն. Χοσρόης՝ ասոր. Xosrau, բրդ. axor ձևերը:

Մեկ երկու տեղ էլ ո-ի դեմ ունենք իրանյան a, ինչ. դոխ, քո-  
 նիր, մոգ. բայց սրանք էլ նույնպիսի պատճառի պետք է վերագրել:  
 Այս կարգից են նաև ասորերենից փոխառյալ պողոտայ = pūlāā և  
 սափր = sefrā:

Հայերենից տառադարձված բառերի մեջ մեր ո-ի դեմ գտնում  
 ենք օ աշխարհագրական անունների մեջ՝ Տմորիփ = Τάμοριτζς,  
 Մոխս = Moxoene, Մափս = Σοφηνή, Sophene, Խորձևանփ = Χορ-  
 ζαζηνή, հունարեն Ազաթանգեղոսի մեջ՝ Նոր-Շիրակաև = Νορσι-  
 ρέων, Քորզով = Θορζού, Քորդաև = Θορδάν (անստույգ է Աշոցայ =  
 άσοζηνών, որ թերևս ուղղելի է άσοζηνών). վրացերենում՝ ամբոխի =  
 ամբոխ, խոցա = խոց, խոփի = խոփ, կոշտի = կոշտ և այլն:

Այս բոլորից հետևում է, թե ո գրի մետրոպուսի դարի հնչումն էր  
 օ, ճիշտ մեր այսօրվա օ տառի հնչումը: Չէր կարող հնչվել uo, ü, ö,  
 որովհետև այս պարագային տառադարձված ձևերից դոնև մեկն ու

մեկը պիտի մատնեք այն. հոնարենը կարող էր նշանակել առաջին երկուսը իր ՕՍՕ, յ ձևերով, երրորդի համար կարող էր գործածել ԵՕ ձևը, կամ պարզապես Ե, նույնպես նաև վրացին: Ընդհակառակը, հայերը հունարենի օ ձայնի դեմ դրել են իւ. ինչ. ճիպատոս ≡ ὄπατος, կիրակէ = χωριακῆ ἡ αἰῆν, ինչ որ ցույց է տալիս, թե ո գիրը շուներ օ հնչումը:

Մնում է մեզ քննել բառակազմի ո գրի հնչումը: Այստեղ էլ պետք է, որ ո-ն հնչված լինի միայն իբր օ (և ոչ բնավ ՎՕ). այս բանը ապացուցում են նախ օտար լեզուներից հայերենին անցած բառերը. ինչ. ոստիկան = պհլ. ostikān, որոզոբու = հուն. ὀρθόδοξος, որոզոս = հուն. ὀβολός, շատ լավ օրինակ է Ռմիգզ, որի հին իրանյան ձևն էր Ahuramazda, սրանից Auhrmazd և երկբարբառի ձուլմամբ՝ Ohrmaz (հուն. Ὀρμιάσθας). Երկրորդ՝ հայերենից վրացերենին անցած բառերը. ինչպես ospi = ոսպ, ostinagi = ոստիկան, oboli = որբ, orme = որմն: Դժբախտաբար հին աշխարհագրական անունների, ինչպես և հունարեն Ագաթանգեղոսի տառադարձյալ բառերի մեջ չկա սկզբնատառ ո: Բայց այսքանն էլ բավական է հաստատելու համար, թե բառի սկիզբն էլ ո արտասանվում էր օ: Եվ շատ անբնական կլինեք, որ Մեսրոպը միևնույն գրին մի տեղ մի արժեք տար, մի ուրիշ տեղ՝ ուրիշ արժեք:

ՎՕ հնչումը հայերը մեկ անգամ միայն առիթ են ունեցել տառադարձելու և այն էլ գրել են վո (այն է թորթաս = վոռէ, վոռէաս. Արիստ. աշխ). եթե բառասկզբի ո գիրը ՎՕ հնչումն ունենար, ճիշտ տեղն էր գրելու ոռեաս:

Կան ոմանք, որ բարդ և ածանցավոր բառերի մեջ էլ, այնտեղ, ուր երկրորդ բառը սկսվում է ո տառով, հնչում են ՎՕ և ոչ՝ օ. այսպես, օրինակ՝ անողորմ = անսօղորմ, առողջութիւն = առսօղջություն և այլն: Ըիշտ ինչպես որ ո և ե գրերով սկսվող բառերն էլ խոնարհման ժամանակ առանց սղման հնչում են կը ողբայ, կը որոնէ, կը երգէ, կը եփէ և այլն, իբր թե. սրանք բաղաձայնով սկսվող բառեր լինեին: Սա տարօրինակ նորմոժություն է, որ գտնում ենք կովկասահայ գրագետների մեջ, և ոչ միայն չէր կարող գոյություն ունենալ հին լեզվի մեջ, այլև նորերիս համար էլ շատ խորթ է հնչում:

օ ձայնի հետին ոՕ, օ, օ ն ձայնափոխությունները սովորական լեզվաբանական երևութիւններ են. այսպես, օրինակի համար, իտալերենի մեջ լատինական օ դարձել է ոՕ, հմմտ. լատ. bovum = իտալ. buono «լավ». լատ. cor = իտալ. cuore «սիրտ». լատ. ovum = իտալ. uovo «ձու». ուսերենում էլ այսպես է, ինչպես նկատվում է Նոր-Նախիջևանի հայոց և ուսաց արտասանության մեջ: Օ ձայնը դարձած օ շատ սովորական է ֆրանսիերենի, մանավանդ գերմաներենի



մեշ. հմմտ. գերմ. Koch, Köche, Köchin, Schloss, Schlösser & այլն. լատ. cor > ֆրանս. coeur սիրտ, լատ. populus > ֆրանս. peuple ստորագրուող. Օ դարձած ու ցույց են տալիս լատ. morum > մութ սթուֆ, պրս. goit «սասց» > Ատրպատականի արտասանությունը՝ ցուի & այլն: Բանասկզբի ՎՕ ձևացած է ուժ երկրաբարառային հնչման թանձրացմամբ:

Ու ձայնավորը առանձին տառով ներկայացված շիհնելով՝ այբուբենի մեջ չի մտել: Մեքսոպը այս ձևն է ատկղծել հետևելով հունարենին, որ ս ձայնը ներկայացվում է ու և և տառերի միությունը՝ օս: Նույնպես է նաև վրացերենում, որ ունենք **Օ-յ** = ու, ինչպես որ հին պլավոնեերենի մեջ էլ կա օյ = ու: Բայց վրացիք իմաստուն են գտնվել հնարելու հետո միատառ **Պ** ու գրությունը, որ մտցրել են իրենց այբուբենի մեջ: Այսպես են արել նաև հույները, հնարելով փակագիր **Ց** ձևը, որ բազկացած է իրար վրա դրված **Օ** և **Վ** գրերից: Բայց սա իբրև առանձին տառ այբուբենի մեջ չի անցել: Ընդ ձև են հնարել նաև ռուսները (**У**): Հայերը դժբախտաբար չեն մտածել այս միակ ձայնի համար միատառ նոր ձև հնարել: Հայերենի մեջ թեև շատ փակագիր հնարված են, հնարված է միևնույն իսկ և տառաձևը, որ իբրև առանձին տառ այբուբենարանների մեջ մտել է, բայց ու ձայնի համար այդպես չի եղել: Սրա գլխավոր պատճառը Ռ գիրն է: Ու գրության միատառ փակագիրը շատ անգամ գործածված է արձանագրությունների մեջ, բայց որովհետև սա նույն էր Ռ գրի հետ և կարող էր շփոթության տեղիք տալ, ուստի հաջողություն չի ունեցել և խափանվել է:

Թրակացու քերականության թարգմանության մեջ ու գրվում է իբրև երկրաբարառ, համապատասխան հունարեն օս ձևին: Իրոք որ հունարեն օս առաջ երկրաբարառ էր, որովհետև արտասանվում էր օս, հետո սղվելով դարձավ **Ս**, ինչպես էր **Ս** դարի արտասանությամբ: Սակայն քերականները, շարունակելով հին անվանակոչությունը, դարձյալ անվանում էին երկրաբարառ: Թրակացին հետևել է այս սովորության, հայ թարգմանիչն էլ հետևել է հեղինակին:

Ու ձևը այսօր թե՛ գրական լեզվի և թե՛ բարբառների մեջ հրնչվում է ու. սակավաթիվ բարբառների միայն, և այն էլ ոչ միշտ, դարձնում են ու, օ: **Ս** դարի արտասանությունը առաջինը միայն կարող է լինել (**Ս**). այսպես են ցույց տալիս նախ այս ձայնի երկտառ ձևը համեմատ հունարենի, երկրորդ՝ Թրակացու թարգմանության վկայությունը, երրորդ՝ օտար լեզուներից կազմված հայերեն տառադարձությունները. ինչպես Սուրեն = պրս. Suren > հուս. Σουρήνας = լատ. Surena, Շապուհ = պհլ. Šapuhr, գուր = պհլ. պրս. zur, Գուռակ = պրս. kurra, կուպր = ասոր. kufrā, ասորենի = հուն. βαβ-

βουσί, սկուտեղ = σκουτέλλιον և այլն: Զորրորդ՝ հայերենից կազմված օտար տառադարձություններ. հունարեն Ագաթանգեղոսի մեջ՝ Արծրունյաց = Ἀρσουρουσῶν, Ուտէացոց = Ουτιῶν, Խոսրովի-դուխտ = Κουσαρωδοῦχτα, վրացերենի մեջ՝ խախուտ = խախուտի, բուրդ = բուրդի, պտուղ = պտուղի, ուռն = ուրն (մուրճ), առու = բու և այլն:

Այս ընդհանուր համապատասխանությունց մեջ կան նաև մի քանի շեղումներ: Իրանյանից փոխառյալ մի խումբ բառերի մեջ հայերեն ու-ի դեմ գտնում ենք օ, ինչ. անուշակ = պհլ. anōšak, մուճակ = պհլ. močak (այսպես նաև Անուշավան, Յիղարուզիտ, Սեբուխտ, անուշադր, բուժել, պատմունան, սպումել և տուժել): Ուրիշ պարագաներում իրանյան օ դառնում է հայերեն ո. հմմտ. Գոտարզ = Gōdarz, Կապկոհ = kāfkoḥ. Ի՞նչ պատճառ կա ուրեմն, որ վերի տասը բառերի մեջ դառնա ու: Դիտել պետք է, թե հայերենի մեջ նախաշեղտ ու ծագում է ոչ ձևից. հետևաբար վերի բառերի բնիկ ձևն է անոշակ, մոճակ, բոյժել և այլն, ինչպես ցույց են տալիս անոշը, բոյժ բառերն էլ: Նշանակում է, թե իրանյան օ տվել է հայերեն ոչ թե ո և ու, այլ ո և ոյ, որոնք իրարից այնքան հեռու չեն: Մենք հայերենի այս զանազանությունից այն ենք հետևեցնում, թե իրանյաններն ունեին երկու մոտավոր հնչում և հայերը իրենց հարուստ այբուբենով կարողացել են այս երկուսը ճշտիվ նշանակել, ինչ որ կարելի չէ եղած պահլավական շատ անկատար այբուբենով: Բացի սրանից, այն շեղումները, որ նկատում ենք մեղ ծանոթ պաշտոնական պահլավերենում, անշուշտ գոյություն չունեին հյուսիսային-արևմտյան պահլավ բարբառի մեջ, որից փոխ են առել հայերը և որի հետքերը դուրս եկան Թուրքանի գիտական արշավանքի ժամանակ: Այս ձևով մեկնել պետք է նաև մանուշակ, պատունաս և վարունգ բառերը, որոնցից առաջին երկուսի մեջ ու-ի դեմ գտնում ենք պհլ. օփ, իսկ երկրորդի մեջ՝ ա: Այս մասին տե՛ս Մեյե հայագետի հոդվածը (MSL, 17, 242—250):

Ասորերենից փոխառյալ բառերի մեջ էլ գտնում ենք նույնպիսի անկանոնություններ. այսպես ու-ի դեմ օ ունեն՝ Մրաուք, Յուխնան, Ուճայ, Շուշան, ագուգայ, արբունայ, քուսիթայ: Ավելի անկանոն են Բարձումայ = Barsaumā, խարագուլ = xargəlā, շուխայ = šəyāfā, սուսեր = safsēr բառերը: Մրանց համար էլ պետք է կարծել, որ ծագած են ասորական բարբառային ձևերից, ինչպես որ մի քանի հատի համար արդեն կարող ենք հայտնի կերպով էլ ցույց տալ. ինչպես՝ Ուճայ = wuḥr. Orhāi, հետին ձևով՝ Urhōi Շուշան = ասոր. šōšan, բայց հունարեն տառադարձությամբ՝ Σουσαννα:

Հունարենից փոխառյալ բառերի մեջ ունենք 13 ձև, որոնք

Եռյնպեմ անկանոն են. այս բառերն են ակումիտ = ակումիտոս,  
 բարբուտ = քարեղջյուր, կոլիբրայ = անկոն, մառուն = քարեղջյուր,  
 նազուն = անտոն, յունվար = անտոն, պեւնուտ = անտոն,  
 պիտու = անտոն, պոսիտուէն = անտոն, սեկունդիկուտ = ան-  
 տոն, սայունգ = անտոն, տարի = տարի և փուլու = փուլու:

Այս բառերից մի քանիսը Հյուսիսային արաբական է հունարենից  
 փոխառյալ նշանակելով. այսպէս՝ բարբուտ և նազուն ծագում են  
 ոչ թէ հունարենից, այլ արաբերեն barbut և natrūn ձևերից, որոնց  
 ու ձայնը համապատասխան է մերին: Մյուս բառերից ոմանք փառ-  
 տառադարձութիւններ են կամ ձեռագրական փոխներ. օրինակ՝  
 յունվար ուղիղ ձևը հետո դարձել է յունվար՝ ա և ու տառաձևերի  
 նմանութիւն պատճառով. փուլու բառը պետք է կարգաւ պսուլու.  
 կոլիբրայ ունի նաև կանոնավոր կոլիբրայ ձևը. մյուսները կամ փոքր-  
 ասիական բարբառային ձևից են առնված և կամ հայոց բերնում  
 ձևափոխված. հմմտ. Բարդղիմես, կարդղիկ և կարդղիկու բա-  
 ռերը, որոնք հետո դարձել են Բարդղիմէս, կարդղիկ, կարդղի-  
 կու: Արդեն հիշյալ բառերից ինն հատը շատ հետին ժամանակի  
 ձևեր լինելով Ե դարի արտասանութիւն համար նշանակութիւն չու-  
 նեն:

Առանձին ուշադրութիւն արժանի է մեր աշխարհագրական ա-  
 նունների տառադարձութիւնը՝ հին հուն և հռոմեացի հեղինակնե-  
 րի մոտ: Սրանց մեջ ու պարունակող բառերը դժբախտաբար շատ  
 չեն. ունենք միայն Կորդուս = Καρδοϋϋοι, Մեծուր = Μεγασϋρϋοι,  
 Ուտի = Ὀϋτιϋη, Օտեն և Փուգարֆ = Πωγαργϋϋ. սակայն սրանցից  
 առաջինը ստույգ չէ, թէ իրոք Կորդուսն է համապատասխանում.  
 երկրորդը ու ժամանակի բառ է և հայերենի ու ձայնին լավ է հա-  
 մապատասխանում: Վերջին երկուսը հայերենի ու ձայնի գեմ հա-  
 նում են Ծ. սա ոչ թէ անկանոնութիւն է, այլ ներկայացնում է հա-  
 յերենի հնագույն հնչումը: Հայտնի է, որ հայերենի ձայնական օ-  
 րենքների համաձայն՝ Ուտի, Փուգարֆ ձևերը ծագում են հնագույն  
 Ուտի, Փուգարֆ ձևերից (հմմտ. մանավանդ Ὀϋτιϋα գրութիւնը):  
 Այսպէս ուրեմն Ե դարի արտասանութիւն մեջ ու գրութիւնն ու հն-  
 չումը ապահով և հաստատ է:

Երկրարբանների խնդիրը շատ ավելի դժվար է, քան ձայնա-  
 վորներինը, որովհետև նախ՝ այբուբենի մեջ իրրև առանձին տառեր  
 մտած չլինելով՝ հուն և վրացի այբուբենի համեմատութիւնը վե-  
 րանում է: Երկրորդ՝ Քրակացու քերականութիւնը, որ 8 երկրար-  
 բառ միայն հիշում է, ուղղակի հունարենի վրա ձևված լինելով՝  
 վստահելի չէ. այսպէս՝ հայերեն չեն փ, ու, է, ք երկրարբառները.  
 ու երկրարբառ չէ և համեմատութիւնը համար մնում են միայն

աւ, եւ, իւ: Երրորդ՝ տառադարձված բառերը այնպես առատ չեն, ինչպես ձայնավորների և բնղաձայնների համար և եղածներն էլ՝ խնդիր է, թե որչափ հարազատ պատկեր են ներկայացնում:

Մեր արդի գրական լեզուն, ինչպես և բարբառների ամենամեծ մասը, երկբարբառ չունի: Երկբարբառ չունի նաև թուրքերենը, որի ազդեցութունը այնքան մեծ է մեր լեզվի վրա: Հետևաբար երկբարբառի գիտակցութունը պակասում է մեզ: Դժվար է մեզ համար ըմբռնել, թե ինչու օրինակ եւ, աւ, իւ և այլն երկբարբառ են, որովհետև մենք այս ձևերը վարժված ենք կարդալ միշտ yev, av, iv և այլն, որոնք մեկ ձայնավորից և մեկ կամ երկու բաղաձայնից բաղկացած վանկեր են: Երկբարբառի գաղափարը ըմբռնելու համար մենք պետք է դիմենք ուրիշ լեզուների համեմատության, ընդհանուր ձայնախոսության և լեզվաբանական օրենքներին: Սրանցից երևում է, որ երկբարբառները միութունն են երկու տարբեր ձայնավորների, որոնցից մեկը հնչվում է ամբողջ, իսկ մյուսը կիսատ, խուսափուկ հնչումով, որով և կոչվում է կիսաձայն: Այսպես օրինակ՝ իտալերեն buono և գերմաներեն auch բառերի մեջ uo և au երկբարբառ են, որովհետև կազմված են երկու ձայնավորից, որոնցից մեկը (o, a) հնչվում է ամբողջ, իսկ մյուսը՝ (u) կիսատ:

Վերևում ասացինք, թե մեր ներկա բարբառները զուրկ են երկբարբառներից. սրանց մեջ բախտավոր բացառութուն են կազմում մի քանիսը Շատ տեղ (օրինակ՝ Կարին, Մուշ, Վան, Սեբաստիա և այլն) կան իէ և ուօ երկբարբառները, որոնք գործածվում են ե և ո ձայների փոխարեն: Մեր բառը հնչվում է միէր, փուր հնչվում է փուուր: Երկբարբառների կողմից հարուստ են գլխավորապես Սիրիայի և Ավստրիայի բարբառները: Անիտիոքի Քերսապ գյուղի գավառականում գտնում ենք uō, iu, ōu, eī, uōī, ūo երկբարբառները. Սիրիայի Արամո գյուղում՝ āī, aē, au, eī, ie, ua, Սուլավայում (այժմ Ռումինիա)՝ au, iu, ou, ie, eu, iə, Ղարաբաղի Գիշ գյուղում ua (այսպես՝ շուան, թըթուաշ), Ոզմիի ենթաբարբառում՝ eī, ou, ōu և այլն:

Այս երկբարբառներից շատերը նոր են կազմված և չկան հին հայերենում:

Հին հայերենի երկբարբառները բաժանվում են երեք խմբի.

1. այ, ոյ.

2. աւ, եւ, իւ.

3. եա, եի, էա, էի, էո, էու, իա, իե, իէ, իո, իու, ուա, ուե, ուէ, ուփ, ուո, ուու:

Առաջին խմբի երկբարբառների կազմիչ երկրորդ տարրն է յ-որոշենք նախ այս գրի ձայնը:

Մեր գրական լեզվի մեջ հին ուղղագրությամբ 3 տասը բառ տեղի երեք տարբեր հնչում ունեն. բառասկզբում հնչվում էր և, բառամիջում եվրոպական y (գերմ. j), բառավերջում անձայն էր: Անմրտություն կլինի կարծել, թե Մնարուպը ինքը այսպես արած, այսինքն՝ միևնույն տառի երեք տարբեր հնչում սոված լինի Քանի որ և գիրը կար, ի՞նչ պետք կար նորից մի 3 էլ հնարելու. ուրիշ խոսքով, եթե բառասկզբի 3 գիրը հնչվում էր և, ի՞նչ պետք կար և գրով չգրելու: Նշանակում է, թե 3 և և տարբեր ձայներ էին, ինչպես որ տարբեր են նաև ներկա բարբառներից շատերի մեջ, որոնց մեջ 3 դարձել է կամ կիսաշունչ հազագ և կամ բոլորովին ջնջվել է, իսկ և պահված է և կամ դարձել է խ (օրինակ՝ Յակար > յակար, ակար, հաց > հաց, խաց): Ուրիշ լեզուների տառադարձությունից երևում է, որ բառասկզբի 3 գրի հնչյունն էր եվրոպական y, օրինակ՝ յագել < պ՛չլ. yazēm, յամուր < ասոր. yaxmūrā, յաշ < պ՛չլ. yašt, յասպիս < հուն. ἰασπις. հմմտ. նաև հայերենից տառադարձված ձևերից հունարեն Ագաթանգեղոսի մեջ՝ յԱնի > Iavi, յառակ > > վրաց. իառակի (տե՛ս Արարատ, 1898, 368բ): Ընդհակառակն՝ և ձայնի դեմ գտնում ենք և, ինչպես հազար < պ՛չլ. hazār, համակ < < պ՛չլ. hamāk, ևեգնայ < ասոր. hegyānā, ևերևս < հուն. ἐρραῖς, կամ ավելի թանձրացած ձևով՝ հաշիվ < ասոր. xəšīw, հաղր < ասոր. xawlā, Հեռ (գավառը) > հուն. Χερῶν:

Մեկնելով այն սկզբունքից, որ միևնույն գիրը միշտ միևնույն ձայնը պիտի ունենար այբուբենի դոնն նոր հնարման ժամանակ, կարող ենք ընդունել, թե բառամիջի 3 ևս նույն իբր 3 ձայնն ուներ. սրան համաձայն են գալիս արդի միահամուռ ընդունված հնչումը և ձայնախոսական օրենքները:

Ընդհանուր ձայնախոսությունը հաստատում է, որ բաղաձայն y (գերմ. j), միանալով նախորդ մի ձայնավորի հետ, կարող է ստանալ կիսատ (ոչ բոլորովին ամբողջական) հնչում և սրանով կարգավորվում է երկրաբարանների մի շարք: Այս կիսատ հնչումը, որ ավելի մոտ է ի ձայնավորին, նշանակվում է i կամ ī ձևով, դանազանելու համար y հնչյունից, որ բաղաձայն է: Այս կիսատ ī հնչյունը մնում է հաջորդական բաղաձայնի մոտ, իսկ ձայնավորից առաջ կամ բառապիերջում նորից ստանում է բաղաձայնային հնչումը: Այսպես՝ գերմաներեն ein բառի մեջ i երկրաբարառային է, իսկ գերմաներեն Ei, Eier (ձու, ձուեր), անգլերեն boy (տղա), ռուսերեն бой (կոխի) բառերի մեջ i բաղաձայն է, այսինքն՝ հնչվում է դոտ y: Այս երևույթը սակայն ընդհանուր չէ, և բառավերջի երկրաբարառ կարող է մնալ նաև երկրաբարառ. այսպես՝ իտալերեն poi, giammai բառերի մեջ վերջաձայն i-ն իրոք կիսաձայն է և ոչ թե y:

Դժբախտաբար հայերեն այբուբենը այս կրկին ձայնարանական երևույթների համար առանձին նշաններ չունի. կան միայն այ, ոյ գրչությունները և ոչ բնավ աի, ոի կամ նմանօրինակ ձևեր. բայց սրանից կարող ենք հետևենել, թե յ միշտ բաղաձայն էր Այսպես կարծելու տեղիք կարող էր տալ նաև Թրակացու քերականությունը, ուր այ, ոյ իբր երկբարբառ հիշված չեն և հունարենն ալ, օլ երկբարբառներին իբր համապատասխան ձև դրված են աի, ոի: Խընդիրը փոխվում է, երբ նկատի առնենք այն մի քանի բառերը, որոնց համազորը գտնում ենք նաև պարսկերենում և վրացերենում. այսպես են այ երկբարբառի համար պայման և պայքար, որոնց իրանյան ձևերն են պրս. paymān, paykar, վրացերեն փոխառությամբ պանմանի, պանբոբա: Իրանյանները ցույց են տալիս, որ սրանց մեջ յ բաղաձայն է, ընդհակառակը վրացին ցույց է տալիս ձայնավոր: Նշանակում է, թե երկբարբառների հնչման երանգը զանազան է յուրաքանչյուր լեզվի մեջ և հետևաբար նրանց տառադարձյալ ձևվերը՝ զգուշությամբ միայն ընդունելի:

Եվրոպացի հայագետները առհասարակ այնպես են ընդունում, որ այ երկբարբառ է բաղաձայնից առաջ և բաղաձայնավոր վանկ է ձայնավորի մոտ: Սրա համար է, որ ներկա բարբառներում առաջին պարագային այ դառնում է ա, է, երկրորդ պարագային անփոփոխ է մնում. ինչպես հայր > հար, հէր, բայց՝ հայելի > հայլի, հայլի > հայնալ, վայելել > վայլել: Եթե Թրակացին այ իբր երկբարբառ չի հիշում և դնում է միայն ինքնահնար աի ձևը, սա, եթե հունարենի ստրկական հետևողութուն չէ, կարող է մեկնվել նրանով. որ այ երկու արժեք ունենալով՝ մշտապես չէր երկբարբառ:

Միջավանկի այ ձևից ավելի դժվար է վերջավանկի այ ձևի մեկնությունը: Ամեն օտար բառ, որ վերջանում է a ձայնով՝ հայերենում դառնում է այ. ինչպես՝ արեղայ < ասոր. awīlā, սատանայ < ասոր. sātānā: Արդի հայերենում այս այ-ը հնչվում է պարզապես ա. բայց սրանից չի հետևում, որ հին հայերենում էլ այդպես էր: Եթե վերջավանկի այ հնչված լիներ ա, ի՞նչ պետք կար մի ավելորդ յ էլ դնելու. հայերենն ունի վերջաձայն ա գրչությունը (ինչպես նա, նորա, իմա և այլն) և այս պարագային էլ կարող էր նույն ձևը գործածել, մանավանդ որ բառերի մայր ձևն էլ այնպես էր պահանջում: Իսկ եթե այդպես չէ, ապա ուրեմն յ ձայնը այստեղ էլ հնչված է: Ճշմարիտ է, թե վրացերեն փոխառությանց մեջ այս պարագային առհասարակ գտնում ենք ա (օրինակ հրեայ = հուրիա, շուկայ = շուկա և այլն), բայց այս էլ պետք է վերագրել վրացերեն լեզվի ձայնաբանության, ուր վերջահանգ բաղաձայն և մանավանդ յ գոյութուն չունի: Վրացերենին ճիշտ հակառակ գտնում ենք պահլավ.

և ասորի ձևեր, որոնք ցույց են տալիս, որ բառավերջի այ հնչվում էր. հմմտ. Ուոհայ = ասոր. Օրհնի, (վարս)վիբայ = պհլ. -vīrai, պեշոպայ = պհլ. pēšupai:

Հյուբրեմանը կարծում է, որ հայերի մեջ վերջաձայն այ հնչվում էր ա, որովհետև տարօրինակ է գտնում, որ հայը ասորիներից ք չըսեր և ինքը ցյ գրեր. բայց այսպիսի երևույթ ոչ միայն զարմանալի չէ, այլև մինչև այսօր էլ կենդանի է մեր մեջ: Պոլսում քուրքերը հնչում են քավուփ, քարակ, հայերը՝ խավուփ, խարախ: Եթե միևնույն քաղաքում կողք կողքի ապրող ժողովուրդներ կարող են տարբեր հնչյուններ գործածել, որչա՞փ ավելի՞ երկրից երկիր, Ասորիքից Հայաստան:

Վերջաձայն ա-ի հնչումը պարզելու համար թանկագին օրինակ է հունարեն Ազաթանգեղոսի մեջ Ἀζαῖς ձևը, որ Օտայ անվան տառադարձությունն է և հայտնի կերպով ցույց է տալիս, որ բառավերջի յ-ն հնչական արժեք ունի:

Իբր այսպիսի ապացույց ծառայում է նաև սեռականի կազմությունը. այ վերջացող բառերը սեռականի մեջ լինում են այի, իսկ ա վերջացողները՝ այ, որի մեջ յ համապատասխանելով ի ձայնին, նրան մերձավոր հնչում պիտի ունենար և չէր կարող անձայն լինել:

Մնում է միայն ստուգել, թե այս հնչումը երկրաբառայի՞ն էր, ինչպես իտալերեն mai, giammai բառերի մեջ, թե բաղաձայն, ինչպես ռուս. край, թուրք. saray բառերի մեջ: Այս բանը ստուգելու միջոց չունենք: Եվրոպացի հայագետները ընդունում են իբր բաղաձայն: Սրան թերևս իբրև ապացույց ծառայի այն կրկնակ ձայնափոխությունը, որին ենթարկված է վերջավանկի այ՝ կովկասյան բարբառներում. այսպես՝ տղայ, փեսայ = տղա, փեսա, բայց՝ տղայն, փեսայն = տղեն, փեսեն. վերի ասածների համաձայն ընդունելով, որ որոշյալ ձևերի մեջ իբր բաղաձայնի մոտ այ երկրաբառ է, առանց հողի ձևն էլ պիտի դառնա բաղաձայնավոր, քանի որ մյուսից տարբեր ձայնափոխության է ենթարկվել:

Այ երկրաբառի հետ համեմատելի է ոչ: Սա նոր բարբառների մեջ դարձել է ու, որից էլ իւ, էօ. գրական լեզվի մեջ ձայնավորից առաջ հնչվում է օյ (օրինակ՝ հոյակապ), բաղաձայնից առաջ՝ ույ (օրինակ՝ գույժ): Այս տարբերությունը ցույց է տալիս երկու բան. նախ՝ որ ույ, ինչպես և այ, երկու տարբեր ձև ունի հին հայերենում. մեկն իբր երկրաբառ, մյուսը իբրև բաղաձայնավոր վանկ, երկրորդ՝ որ օյ և ույ հնչումներից մեկը կամ մյուսը գոյություն չունեն նախապես:

Մենք կարծում ենք, որ ույ հնչումը գոյություն չունի հին ժամանակ և ոչ երկրաբառի հնչումն էր ձայնավորից առաջ՝ օյ, բա-

դաձայնից առաջ երկրաբառային օ՛ւ. սրան իբր լավագույն հաստատութիւն գտնում ենք վրացերեն տառադարձութիւններէից՝ կապաեաի <կապոյա, խոիբի <խոյբ, մասամբ կարող ենք հիշել նաև՝ ամբարի <համբոյբ, գոգի <գոյգ, նիգոգի <ընկոյգ, որոնք իրենց ու ձայնով ցույց են տալիս, որ համեմայն դեպս ոչ երկրաբառի մեջ ու ձայնը չկար: Ու հնչումը գտնում ենք վրացերեն պատրուփի <պատրոյգ, սամուրի <սամոյբ, դուաի <կոյս, գունի <գոյն, նիւնշի <նմոյշ բառերի մեջ, որոնք կամ պարսկերենից են և կամ հայոց հետին հնչման համեմատ: Հույն և լատին տառադարձութիւններից ունենք Χοθαῖται (խոյթ), Capotes (կապոյա լեռք), որոնց մեջ նույնպես գտնում ենք օ և ոչ ու: Գալով իրանյաններին՝ այստեղ էլ ունենք օի կամ օ. առաջինին են պատկանում roi <արոյբ, baoid > բոյբ և ալլն, որոնց մեջ օի և ոչ ճշտիվ համապատասխան են իրար. իսկ երկրորդին են պատկանում takōk > քակոյկ օշ > ոյժ, anōs > անոյշ, bōz > բոյժ և նմաններ, որոնց օ ձայնի վրա արդեն խոսել ենք վերը՝ ու ձայնի մասին խոսելու ժամանակ:

Այ երկրաբառի նման՝ բառավերջի ոչ ևս մնում է անորոշ, թեև եվրոպացի հայագետները ընդունում են օյ: Տառադարձութիւնց մեջ ունենք գիւրոյ > հուն. ζοσάροσ, բայց սա անշուշտ արժեք չունի, որովհետև հունարեն վերջաձայն օս ոչ թե հայերեն ոչ երկրաբառի տառադարձութիւնն է, այլ հունարեն սեռականի մասնիկը: Արժեք չունեն նույնպես վրացերեն saro <հայ. սարոյ «շոճի», որովհետև վրացերենի մեջ յ ձայնը չգտնվելով՝ ջնջված է: Ավելի օգտակար են ատրերեն Awāišō > Աբգիշոյ, պհլ. Vndoi > վնդոյ, բայց սրանք էլ խնդիրը չեն լուծում վճռականապես: Տարակուշս չկա, որ այ և ոչ իրար համադիր ձևեր են և ինչպես որ բառավերջի այ ընդունված է իբր բաղաձայնավոր, նույնպես պիտի լինի նաև ոյ:

Երկրորդ կարգի երկրաբառներն են աւ, իւ, որոնք կազմված են ՚ գրով: Քննեք նախ այս գրի հնչումը:

Ի գիրը այսօր մեզ համար համազոր է վ-ին: Ամենքին հայտնի են այն վեճերը, որ երկար ժամանակ վարեցին Կովկասի հայերը այս գրերի ուղղագրութեան շուրջը: Խնդիրը ցորչափ վերաբերում է արդի լեզվի ուղղագրական բարեփոխութեան, չի պատկանում մեր նյութին. բայց այս պայքարի առաջնորդ Ղ. Աղայանը խնդրի մեջ խառնում էր նաև հին Հայոց հնչական դրութիւնը և դնելով սխալ հիմունքներ, նրանցով ուզում էր ապացուցել իր տեսութիւնը: Իր կարծիքով հին հայերը չունեին վ, է գրերը, ինքը համարձակվել է մինչև անգամ այն տարօրինակ գաղափարը հայտնելու, թե «Հնումը գրելը գրողի կամքիցն էր կախված, իսկ կարդալը կարդացողի» (Մուրճ, 1890, էջ 158). Իբր թե երբ գրում էին տաւն, աղատ էին կարդալու



տօճ, տօն, տուն, տավն: Այսպիսի բան, իհարկե, Ղ. Աղայանի ենթադրությունները միայն գոյություն ունի. իսկ բոլոր եվրոպացի հայագետները համոզված են, որ Մեսրոպը աշխատել է կազմել ըստ կարելիության ճիշտ հնչական այբուբեն, որի նբրություն ու մանրակրթկիտ ճշտության ապացույց են մեր եա, եայ, իա, իայ, լա, լայ և այլն մերձավոր հնչյունների զանազանությունը: Սրանց վրա մի քիչ հետո Ղ. Աղայանի կարծիքների հերքումը տեսանք արդեն նախորդ գլխում. այստեղ պետք է միայն խոսել և և վ գրերի տարբերության վրա:

Ահա թե ինչ է գրում ինձ հայագետ Մեյնե իր նամակի մեջ այս խնդրի առթիվ. «Գալով վ և Վ գրերին, ևս համոզված եմ, որ սրանք իրարից տարբեր ձայներ էին, առանց որի այբուբենի հնդկնակը նրանք զանազանաձ շարժի լինելու: Հակամատ էմ կարծելու, որ վ նշանակում էր իսկական բաղաձայն, թերևս արդեն շրթնատամնային վ ձայնը. բայց այս վերջին կետի վրա ապահով չեմ, համենայն դեպս անշուշտ սպիրանտ էր, կրկնաշրթնային կամ շրթնատամնային, իսկ Վ ավելի բաղաձայն ու էր» (1913, դեկտեմ. 23):

Ի գրի դուր բաղաձայն շիհեղուն, այսինքն վ հնչյունը շունենալուն զորավոր ապացույց է թրակացու վկայությունը, որ իր դասավորության մեջ Վ գիրը դնում է ձայնավորների և այն էլ կարճ ձայնավորների շարքը, մինչդեռ վ գրի մասին հիշատակություն չկա: Սրանից երևում է, որ Վ ճիշտ համապատասխան է հուն. Վ ձայնին: Արդեն ավելի հետին հունարան գրիչները այս տառը գործ են ածում իրեն իւ, ինչպես կրակե, հուպառու, փոխանակ կրակե, հիպառու:

Ղ. Աղայանի և իր բոլոր համամիտների մեծագույն սխալն այն է, որ իրենց հիմք են առնում արդի արտասանությունը և կարծում են, որ արտասանությունն ասվածը այնպիսի քարայրալ բան է, որ դարերի ընթացքում պարտավոր է անփոփոխ մնալ: Մինչդեռ չկա ավելի հեղհեղուկ և նուրբ բան, քան մարդկային հնչյունը. բայց նույնիսկ եթե նկատի առնենք մեր արդի հնչյունը, կդտնենք մի խումբ բարբառներ, որոնց մեջ և և վ ձայների զանազանությունը կա: Այսպես Հազդո, Մուշավա և Մարաղա ունեն առանձին առանձին և և վ ձայները. և անգլերեն W կամ հայերեն ու հնչման մոտիկ մի ձայն է, և գտնվում է թե՛ բառի սկիզբը, թե՛ մեջը և թե՛ վերջը. այսպես՝ Հազդո րբէն «գլրան» (կարդա՛ ուրէն), րբ «որ» (կարդա՛ ուրբ), Մուշավայի մեջ հաւ, ցաւ (կարդա՛ հաւու, ցաւու), Մարաղայի բարբառով սովորաբար կրավորականի վերջավորության մեջ, ինչպես՝ պատրուէլ, վաբբուէլ, կուսուրէլ և այլն և մի քանի տեղ ու,

օւ, ա ձայններից հետո, ինչպես խաւրիծ, քաւրէլ, ուաճք (վանք), շուաճ, շուաք, մուալ:

Ման.— Մարաղայի շատ զարմանալի բարբառի վրա մանրամասն մի քննութիւն պատրաստեցի 1920 թվի ամառը նույնիսկ տեղի վրա. սույն աշխատութիւնը տպված է 1926 թ., Երևանում (ապակետիպ):

Բացի անգլերենից՝ ւ ձայնը գտնում ենք հատկապես քրդերենում. օրինակ Յովհ. ժԹ 16 (ըստ բողոքականների թրգմ. տպ. Պոլիս 1872). Ուէ շաղէ դուի լը դէսթէ ուան դա քօ լը խաչէ ուրդ (յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա, զի ի խաչ ելանիցէ). այստեղ գրտնրված երեք ու գրչութիւնները ներկայացնում են w=ւ ձայնը (we, dwi, wan):

Նույն ւ ձայնը կար նաև հին Հայոց մեջ, որով և կազմված են աւ, եւ, իւ երկբարբառները. հետևաբար պետք է հնչել սրանք իբր աու, եու, իու:

Ինչպես այ, ոյ, նույնպես և այս տիպի երկբարբառները ըստ ընդհանուր ձայնաբանութիւն կարող են ստանալ երկու ձև. բաղաձայնից առաջ երկբարբառ են, իսկ ձայնավորից առաջ և բառավերջը ստանում են թավ հնչյուն, ւ մասը դարձնելով վ: Այսպես, լատիներեն augum «ոսկի», բայց avis «թռչուն»: Սակայն ինչպես այ, ոյ տիպի երկբարբառների մեջ, նույնպես և այստեղ օրենքը ընդհանուր չէ և ունենք երկբարբառային ձևեր նաև ձայնավորից առաջ և բառավերջում. ինչպես՝ անգլերեն now (նաու) «այժմ, արդ», how (հաու) «ինչպես», however (հաուէվը) «թէև», nowhere (նաուէր) «ոչ ուրեք», nowise (նուաւը) «ամենվիին», գերմաներեն՝ Bau («շինվածք»), Frau (կին) և այլն:

Հյուբշմանը կարծում է, որ հայերենի մեջ էլ աւ, եւ, իւ հնչված են բաղաձայնից առաջ երկբարբառ, իսկ ձայնավորից առաջ և բառավերջում ճշտիվ ավ, եվ, իվ, այս պատճառով էլ իր տառադարձութիւնն մեջ գրում է hav, havat, t'et'ev և այլն: Մեյնն այս ենթադրութիւնը վերջնական չի համարում և զգուշութիւն համար տառադարձնում է hav, havat, t'et'ev և այլն: Հունարեն, պարսկերեն և վրացերեն տառադարձութիւնները վճռական պատասխան չեն տալիս այս մասին. հունարենը շունենալով թավ v ձայնը՝ ամեն պարագայի մեջ էլ դնում է երկբարբառ. այսպես՝ Սյունիք > Σουνί, Σουνία, Σαυνία, Տարաւն (Տարօն) > Τάρραυα (այսպես է Պրոկոպիոսի մոտ, իսկ հետնաբար Ταρών, ինչպես ունի Կոստանդին Միրանածինը), լատ. Tauranitium (իմա՝ Taraunitium), Բագաւան > Βαγαυάν, Ջարաւանդ > Σαροϋανδών, Աւտա (Օտա) > Αύταϊας, գիւրդ > Γουάρου, Բագրաւանդ > Βαγαυάνδηγη (Պողոսեոս).

մինչև իսկ վ ձայնի դեմ գտնում ենք օօ, ինչպես՝ Վազարչ > Օնա-  
 կերչ. Վազարչապատ > Օնկարժոռնոտ. և խեղճ ու կրակ մեկ տակ՝  
 Վահեվահեան > Օնաչիտ: Պարսկերենն ու վրացերենը ունեն  
 քնդահեառակը միայն բաղաձայն v և այսպես էլ տառադարձում են.  
 օրինակ՝ վրացերեն համբավի < համբաւ, տալավարի < տաղաւար,  
 բավրի < բարբ, ավարի < ավար, մելեվանդի < մեհեւանդ, արծիվի <  
 < արծիւ և այլն: Նույնպես նավասարդ < իրան. navasārd, Արտա-  
 վազդ < զնդ. ašavazda- և այլն:

Մենք կարծում ենք, որ աւ, եւ, իւ ամեն դեպքում էլ հնչվել են  
 au, eu, iu (ա՛ու, է՛ու, ի՛ու) և ոչ բնավ av, ev, iv, նույնիսկ քառե-  
 րի վերջում. ապա թե ոչ ի՛նչ պատճառ ունենք Մեսրոպը շքրելու հա-  
 շիվ, այլ՝ հաշիւ: Եթե ատարկվի, թե նա հետևել է հունարենին, այ-  
 սինքն կուրացել է հույն ուղղագրության ոճով, այն ժամանակ ինչո՞ւ  
 բառակցքումն էլ հունարենի համեմատ չի գրել v, այլ՝ վ: Որչափ  
 որ մեր շրջակա լեզուների տառադարձություններն անկարող են խըն-  
 դիրը պարզելու, այնուամենայնիվ ունենք վրացերեն երկու պատ-  
 վական օրինակ, որոնց մեջ վերջաձայն աւ տառադարձված է աօ  
 (խաօ < խաւ, գիւաօ < գրաւ)<sup>1</sup> և հայտնի կերպով ցույց են տալիս,  
 որ վերջաձայն աւ հնչվում էր աու: Սրանց կարող ենք ավելացնել նաև  
 ալիզի < աղիա, որի մեջ ի ձայնավորը համենայն դեպս չի կարող  
 դրված լինել իվ ձայնախմբի դեմ և պահանջում է երկբարբառային  
 իւ (ալիու): Հիշենք վերջապես հունարեն v ձայնի մեսրոպյան տա-  
 ռադարձությունը իւ ձևով. օրինակ՝ Κυριακός > կիրակոս, λαθό-  
 ροιθός > լաթիրիթրոս, ζέφορος > զեփիւս և այլն: Հույն v դիրը Ծ  
 դարում հնչվում էր արդի ֆրանսերենն u = գերմ. ü գրի պես: Հայե-  
 րը այս հնչյունը շունենալով, մտավորապես նույն ձայնը պատկե-  
 րացնելու համար կարող էին գրել իու, ու, անսլագն ի. իսկ եթե գր-  
 բել են իւ, ուրեմն սա ունի մերձավոր մի հնչյուն, այն է երկբարբ-  
 բառային իու և ոչ բնավ իվ:

Մասնավոր ուշադրության արժանի են աւ, իւ յանդող քառերի  
 հոգնակին, ի, ի-ա հոլովման եղակի և հոգնակի գործիականները:  
 Օրինակ՝ բանիւք բառը այսօր երկու տարբեր հնչում ունի. ոմանք  
 կարդում են բանիվք, ուրիշներ՝ բանիւք: Սրանցից ո՞րն է ուղիղը:  
 Գիտենք, որ քաղաք բառի հոգնակի գործիական քաղաքաւ ձևը  
 դառնում է քաղաքօք, որից երևում է, որ աւ երկբարբառ էր: Սրա  
 համեմատ էլ պետք է, որ քնդունենք բանիւք (երկբարբառ) և ոչ

<sup>1</sup> Տայանի հրատարակած «Ուսումն դասական հայերեն լեզուի» հոյակապ աշ-  
 խատության մեջ (էջ 439) մեծ անուշադրությամբ այս աօ(աւ) ձայնափոխության  
 տեղ դրված է աու:

բանիվ: Հյուբշմանը, ընդհակառակը, կարծում է, որ ֆաղաֆոֆ, բանիուֆ սխալ ձևեր են: Ե դարում հայերը կարդում էին ֆաղաֆալֆ, բանիվֆ, որ ք-ի հավելումով կազմվում էին եզակի ֆաղաֆալ, բանիվ ձևերից, ճիշտ ինչպես գեռով ձևից հոգնակի գեռովֆ, կամ եզակի կաֆա, հոգնակի կաֆաֆ, եզ. հաշի, հոգ. հաշիֆ, առանց որևէ փոփոխության: Հյուբշմանը ընդունելով նախապես կաֆալ, հաշիվ, բանիվ, ֆաղաֆալ իբր հարազատ հնչում, բնական է, որ հոգնակիի մեջ էլ պիտի պահանջեր կաֆալֆ, հաշիվֆ, բանիվֆ, ֆաղաֆալֆ, թեև սրանք համաձայն չէին իր նախապես ընդունած այն օրենքին, որ աւ, իւ, եւ բաղաձայնից առաջ երկբարբառ են: Ամբողջ հակասությունը կվերանա, եթե ընդունենք, որ աւ, իւ, եւ ամեն պարագայի մեջ էլ երկբարբառ էին և բնավ չէին կարող ստանալ ավ, իվ, եվ թանձր հնչումները:

Իբր վերջին նկատողություն ավելացնենք այն, որ արդի գրականում եւ, իւ մի ուրիշ ձայնափոխություն էլ են կրել, այն է, որ թեև բառի մեջ և բառի ծայրին հնչվում են էվ, իվ, բայց բառի ըսկրզբում դարձել են եւ=yev, իւ=yu, yü (հմմտ. իւր=yur, իւղ=yüղ): Սրանց մեջ y բոլորովին եկամուտ է և բնավ գոյություն չունի հին արտասանության մեջ. հմմտ. Եւղաղ<հուն. Εὐλάλιος, եւրակիկոն < εὐράκιλος, և վերք՝ սկզբնատառ ե գրի մասին ասվածները:

Ծրոքող կարգի երկբարբառները կազմված են յուրաքանչյուրը մի զույգ ձայնավորից: Սրանց վրա երկար շարտի լինի մեր խոսքը, որովհետև նախկին բացատրությունները արդեն շատ բան են պարզում նաև այս երկբարբառների մասին: Սրանց մեջ առաջին նկատելի խումբն է եա, էա, իա եռյակը: Արդի լեզվի մեջ եա հնչվում է ya, այսինքն իբրև մեկ բաղաձայնից և մեկ ձայնավորից բաղկացած ձայնախումբ, ինչ որ երկբարբառ չի նշանակում: Սրանով հանդերձ եա ունի մեր մեջ զանազան հնչյուններ. այսպես՝ աղատության հնչվում է արևմտահայոց մեջ azadut'-yan, արևելահայոց մեջ՝ azatu-t'ian, տեառն երկուսի մեջ էլ հավասարապես՝ (t)jâron, բայց սեալ լինում է seav, իսկ լեառն տատանվում է լէառն և լիառն հնչումների մեջ: Ըստ այսմ եա երկբարբառի արդի հնչյուններն են ya, ia, éa: Առաջինը ընդունելի չէ հին լեզվի համար, որովհետև, նախ՝ այս պարագային հարկ կլինի գրել յա, ինչպես ունենք Յակոբ, յամայր <yaxmürā). երկրորդ՝ եա երկբարբառ է, նրա համար, որ լեզվի ապագա զարգացման մեջ տվել է պարզ ձայնավոր. օրինակ՝ ազատութեան դարձել է ազատութէն, լեառն <լեռ, սեալ <սեւ, սեվ, ինչ որ կարելի չպիտի լինի, եթե ե բաղաձայն y լինի. երրորդ՝ վրացերենը մասամբ ցույց է տալիս, որ երկբարբառ էր ըս-

վում. հմմտ. մատիանն < մատեան, վարիա < վառեակ, մանհակի < մանեակ, հուրիա < հրեայ: Այսպէս են նաև հունարեն և լատիներեն տառադարձութիւնները, ինչպէս՝ *հործիանք* > *Χορζιανηνη*, Chor-zianene, *Հաշտեանք* > *Ἄσθιανηνη*: Մնում են *ia* և *ea*, բայց ընդունելի չէ նաև *ia*, թեև նույնը գտնում ենք հունարեն, լատիներեն և վրացերեն տառադարձության մէջ, քանի որ ունենք իա երկբարբառը (լատիներենի ձայնարանութիւն մէջ *ea* հետո գառնում է *ia*). Եթէ սրանք համահնչյուն ձայներ լինեին, պիտի կարողանային հին ձեռագրերի մէջ ազատորեն իրար փոխանակել: Ինչպէս մենք տեսնում ենք, որ ամենեւին շփոթութիւն չկա նրանց մէջ և եւ, իա իրար չեն փոխանակում, ընդհակառակը՝ նույնիսկ այնպիսի տեղ, ուր սպասելի էր իա, հայերենը ազատ կերպով հանում է եւ. այսպէս՝ ուղղական Եսայի, սեռ. Եսայեայ (և ոչ թե՛ Եսայիայ): Սրանից հայտնապէս երևում է, որ եւ և իա տարբեր բաներ էին և հայ լեզուն գիտեր որոշ կերպով զանազանել դրանք իրարից: Իրանյան *iya* հայերենի մէջ դառնում է եւ և ոչ իա, ինչպէս՝ *պհլ*, *siyāv* > *հայ*. սեւա և այլն: Հին հայերեն լիեալ, որ նախափոք ձևն է, հետո տալիս է լեալ, բայց ոչ լիալ: Եթէ կա փոխանակութիւն, այն էլ երբեմն եւ և էա գրութիւն մէջ է. ինչպէս հրեայ կամ հրէայ, որ ցույց է տալիս, թե սրանք մերձավոր հնչյուններ էին, թեև ոչ բոլորովին նույն:

Ըստ այսմ վերջնականապէս կարող ենք որոշել եւ = éa (բայ է-ով), էա = éa (փակ է-ով), իա = ia, իսկ յա = ya: Կրկին ձայնավորների միջև պետք չէ մտցնել զորավոր *y* ձայնը, ինչպէս անում ենք հիմա (*eya*, *iya* և այլն): Հին հայերենը հակառակ էր այս ներմուծման և ուր որ կար՝ հապավում էր. հմմտ. պրս. *niyāz* > *նիազ*. կիսաձայն *y* կարող ենք գտնել ա և ո ձայնավորներից հետո միայն. բայց ոչ մի օրինակ չունենք իյ, էյ, էյ, ոյ ձևերով:

Նույն խմբերի համեմատ կարող ենք դնել եի = èi (բայ է-ով), էի = éi (փակ է-ով), եո = éo, եու = éu, իե = iè, իէ = iè, իո = io, իու = iu:

Մնում է տեսնել ու ձայնավորով կազմված երկբարբառները (ուա, ուէ և այլն), որոնք մեծ շփոթութիւն պատճառ են դարձել արդի լեզվի մէջ: Հայերենում ու խմբի համար ունենք երեք տեսակ գրչութիւն (չհաշվելով վո ձևը). այսպէս օրինակի համար՝ զիեւտուր, զիեուտուր, զիևուտուր: Արդյոք այս երեքը միևնույն բանն են էին: Եթէ նկատի առնենք վերը տրված բացատրութիւնները, հատկապէս եւ, էա, իա խմբերի ներութիւնը, պիտի կարողանանք նախապէս պատասխանել թե ո՞չ: Եթէ հայերը հոգի բառի սեռականը գրում են հոգույ, բայց ոչ նաև հոգուոյ, նշանակում է, թե այս երկուսի մէջ հնչական տարբերութիւն կա: Իրոք և և ու չէին կարող

նույն լինել, ինչպես որ նույն շէին եւ (èw) և էու (èu) կամ եու (èu), էա<sup>1</sup>. ու ամբողջ մի հնչում էր, ւ նրա կեսը. ուստի վերի բառերը իրենց մաքուր ձևի մեջ արտասանվում էին zinawor, zinuor, zinwor: Երբ հոգի բառը լինում է սեռական հոգույ, նշանակում է թե ւ և ի ձայնների մեջ մերձավորութուն կա, ուստի չի կարող լինել v, այլ ավելի նուրբ մի ձայն: Լեզվաբանական մի շատ սովորական օրինքով այս նուրբ v ձայնը, ինչպես և u, հետզհետե ավելի թանձրացան և հասան վերջապես v բաղաձայնին, ինչպես գտնում ենք արդի լեզվում (zinvor, hogvo): Ծիշտ նույն երևույթն ունի վրացերենը, ուր գտնում ենք հին լեզվով տջօլօ (թուալի) «աչք», նոր լեզվով՝ տջօլօ (թվալի):

Հյուբշմանը կարծում է, թե ք դարում ուա, ուի, ուոյ երկբարբառները հնչվում էին uva?, vi, vo. առաջինը հաստատելու համար մի կողմից համեմատության է առնում իրանյան ձևերը (ինչ. պատուար < ղնդ. \*paitivāra, սանս. prativāra, դժուար < պրս. dušvār, Ապրուեզ < պրս. Parvēz, դրաւաւ < հպրս. \*duruvatāt, Գրաւաւ < հպրս. Drvāspā, սանս. dhruvācva, Զուաեղէր < պրս. Juvānsēr), մյուս կողմից արդի բարբառների հնչումը (չուան > չուական, Պոլիս, Լեհաստան): Մենք կարծում ենք, սակայն, որ uv հնչումը հայ շրբթունքների համար իսպառ անծանոթ էր. այս բանը շատ լավ հաստատում է ու հոլովման գործիականը. այսպես խրաւա, սեռ. տր. խրաւաու, գործիական նույնպես խրաւաու՝ փոխանակ լինելու խրաւաուվ, և հոգնակին խրաւաու՝ փոխանակ խրաւաուվք, ինչպես սպասելի էր:

Ուի, ուոյ ձևերի համար Հյուբշմանը իբր պապացույց է բերում իւ վերջացող բառերի հոլովումը. օրինակ՝ հովիւ—հովուի, քիւ—քուոյ. և ընդունելով որ ուղղականի մեջ իւ հնչվում է iv, սեռականում ի ձայնի անկումով ուզում է գտնել ճշտիվ v: Բայց մենք տեսանք վերևում որ իւ չի կարող լինել iv, այլ iw, հետևաբար նաև սեռականում ընդունելի չէ vi, vo: Դնելով ուղղական քիւու, հովիւու, սեռ. քուոյ, հովուի հնչումները, կունենանք իրար համապատասխան և շատ կանոնավոր ձևեր:

Ամբողջության համար պետք է հիշել նաև ով ձևը, որ ոմանք

<sup>1</sup> Լեզվի հետազա զարգացման շրջանում էա դարձել է evo կամ iyo, այսպես՝ հիբրոպական Leon անունը դարձել է Լեոն (հմմտ. նաև Ղևոնդ). հենրից տառադարձված Գեարգ ձևը հնչվում է աջժմ Gevork', որի համեմատ էլ Արևմտյան Հայոց մեջ ոմանք գրում են Գեարգ. նույնպես՝ Մաաբէաւ, Քաղէաւ արևելահայոց մեջ հնչվում են Մաթեւոս, Քաթեւոս, մինչդեռ արևմտահայոց մեջ լինում են Մաթիյոս, Քաթիյոս, ինձ պատահել է մինչև իսկ լսել Անտիոկ, մինչդեռ սովորական արտասանությունն է Անտիյոկ:

սխալմամբ երկբարբառ են համարում. հին հայերը այս մէջ դեռ  
են հունարեն բառերի օձայնի դեմ բաղաձայնից առաջ, տարբեր-  
լու համար օ զրից, որ տառադարձում են ո, Քրակացին նույնիսկ  
դեռում է ձայնավորների շարքում, իբր հունարեն օ: Բայց ն դարում  
հունարենի մէջ օ և օ արդեն տարբերութիւն չունենին և եթէ մէջ  
թարգմանիչները մտցրել են այսպիսի տարբերութիւն, այդ պէտք է  
վերագրել իրենց այն ոգուն, որով ուզում էին Ս. Գրքի ամեն մի  
բառը մանրակրկիտ ճշտութիւնով վերածել հայերենի: Ապահովա-  
պէս ով տառադարձութիւնը ուսումնականներին միայն հատուկ էր.  
ժողովուրդը գործածում էր պարզապէս ո. սրա համար ունենը Յով-  
հան և Յոհան, Յակովբ և Յակոբ և այլն գրութիւնները, որոնցից  
երկրորդները տվել են հետո բուն ժողովրդական լեզվի մէջ Ոհան,  
Մուսէս և այլն:

Հայերի մէջ նաև աւ և ով փոխանակում են իրար. այսպէս ու-  
նենք՝ յաւանակ—յովանակ, յաւագ—յովագ (վրացերեն՝ ավագա),  
բաւանդակ—բովանդակ ձևերը: Երևույթը ընդհանուր ձայնարանա-  
կան է. օրինակ՝ պարսկերեն پان «նոր»—արդի հնչմամբ پون կամ  
նույնիսկ پو. թուրքերեն av, avjə «որս, որսորդ», Ատրպատականի  
բարբառով ov, ovci, Ղարաբաղի հայոց բարբառով ծավ<ծով,  
կավ<կով, աղավ<աղով և այլն: Չայնափոխութիւնը ըստ այսմ  
կարող է առաջացած լինել թե՛ անկախաբար հայոց մէջ և թե՛ նա-  
խապէս իրանյանների մոտ կազմված և հետո ուղղակի անցած հա-  
յերենին: Բայց որովհետև բացի իրանյաններից ուրիշ հայ բառերի  
մէջ չենք տեսնում (չկան), օրինակ՝ հովիւ—հալիւ կամ հաւատ—հա-  
վատ ձայնափոխութիւնները, ուստի կարող ենք եզրակացնել, թե  
այդ ձայնափոխութիւնը իրանյան է: Մեզ ծանոթ իրանյան ձևերն  
ունեն av, ինչպէս՝ fravartak, xusrav, dusrav, Javan, \*yavaz>  
>yöz, բայց այս բոլորը ունեցած պիտի լինեն -ov- ձայնափո-  
խութիւնով ձևեր, որոնցից էլ կազմվել են հայերեն հրավարտակ, խոս-  
րով, դարով, յովանակ, յովագ և այլն: Մեր ասածը հաստատապէս  
ցույց է տալիս հունական χασρόγος տառադարձութիւնը, որ ունի  
նույնպէս օ և ոչ՝ a:

Ընդհանուր ձայնարանութիւն օրենքներով երկբարբառը առհա-  
սարակ մի վանկ է. այսպէս օրինակ՝ ֆրանսերեն fier (հպարտ),  
hier (երեք) թեև երկու ձայնավորից բաղկացած, բայց իբրև երկ-  
բարբառ միավանկ են. և այս բանը հայտնի է նաև նրանից, որ բա-  
նավերջին ֆրանսերեն ր հնչական է, միևնույն բաղաձայնակ լինե-  
լու դեպքում շարտի հնչվեր (հմտ. entier, métier): նույնպէս էր  
նաև հայերենում, ինչպէս համոզվում ենք, եթէ Մեյիի հնարիմաց  
միջոցը գործադրենք նաև այստեղ. — Կեամ բայը կատարյալում

տալիս է կեցի, կեցե, կեաց կամ եկեաց՝ ե համարվածով. սրանից երևում է, որ կեաց միավանկ է և հետևաբար ետ երկբարբառն էլ միավանկ է: Ուրիշ երկբարբառների համար հարմարավոր օրինակներ չկան, բայց այս միակ օրինակը ինքնին բավական է խնդրի լուծման համար:

Առանձնապես նկատողութայն արժանի են ու ձայնավորով կազմված երկբարբառները. սրանք վանկատուության մեջ հաշվում էին առանձին առանձին, այսպես՝ ուա երկու վանկ էր. հմմտ. լուայ, լուար, լուա կամ տուայ, տուար, տուա և այլն, բոլորն էլ առանց ե համարվածի: Երկվանկ լինելու էին նաև ուփ, ուն, ուէ, ուու, որոնց համար դժբախտաբար նման օրինակներ չունենք: Այս կետը վերջին անգամ ապացուցում է մեր ասածը, թե ուա և ա տարբեր բաներ էին, առաջինի մեջ ու իբրև ամբողջ ձայնավոր և ոչ բնավ V, իսկ երկրորդի մեջ՝ ՚ իբրև կիսաձայն:

Բացի վերոհիշյալ երկբարբառներից՝ հայերենը գիտե նաև բազմաթիվ եռաբարբառներ, այն է, երկու ձայնավորից և մեկ կիսաձայնից բաղկացած ձայնախմբեր. այսպես են եայ, էայ, տայ, ուայ, իաւ, էիւ, ուաւ, որոնց հնչումը նախորդներին համապատասխան լինում է èay, éay, woy, uoy, èaw, èiw, uaw:

Բազաձայնների հին հնչումը որոշելու համար մեր օգտագործած շորս միջոցները բավարար են: Արդեն կասկածից դուրս է գ, ծ, խ, մ, և, շ, ս, վ գրերի հնչումը, որոնց համար ապացույցներ բերելու պետք չկա. յ և ղ գրերի վրա արդեն խոսեցինք. և գիրը ունեւ արդի հնչումը, որ համեմատելով վրաց և-ի հետ, բավական տկար էր, սրա համար է, որ վրացերեն տառադարձությանց մեջ մեր և գիրը երբեմն մնում է. և երբեմն ջնջվում. ինչպես՝ համբոյր > ամբորի, համբաւ > համբավի, ամբավի, հասակ > հասակի կամ ասակի, հոււ > հոււի, ոււի և այլն: Այսօր մեր և ձայնը գերմանական նախաձայն և-ից ավելի տկար հնչում ունի, մինչդեռ խ ավելի ուժեղ է քան գերմանական ch, հունական չ և ռուսական չ:

Ու և ր հնչյունների տարբերությունը մինչև այժմ էլ գրեթե ամեն տեղ պահված է. օտարախոս հայերն են միայն, որ այս կողմից նեղվում են: Գրեթե այսպես են նաև թիֆլիսեցի հայերը, որոնք դժվարանում են զանազանել այս երկուսը, որովհետև վրացերենում երկու ր չկա: Մեր մեջ և ավելի խիստ է, իսկ ր՝ բարակ. ուրիշ խոսքով ր արտաբերվում է լեզվի ծայրով, իսկ և արտասանելու համար լեզուն ավելի ընդարձակորեն կաշում է քիմքին և ավելի շատ է թրթրում: Ու ներկայացնում է հունական և եվրոպական ր հնչումը, իսկ ր ներկայացնում է թուրքերի և պարսիկների ր հնչումը: Տարբերությունը հայտնի տեսնելու համար բավական է լսել հույնի կամ եվ-



բողացու խոսած թուրքերենը (ալիոնիմ, վեռնոնիմ) և թուրքի խոսած ֆրանսերենը (ժը փրան լա հարդենս): Անգլերեն Ի մեր Ե-ից ալեկի նուրբ է:

Ինչ որ են ու և Ե իրար համեմատություններ, նույնն էին նաև դ և Լ: Բոլոր տառադարձություններից մեջ էլ դ համապատասխանում է օտար ազգերի և ձայնին. նույնիսկ մեր գրացի վրացիք, որ ունեն դ ձայնը, մեր այս տառը լսում են Լ. ինչպես՝ աղբու > ալբուսի, նեղ > նեկի, ծաղկոց > ծալկառի: Եվ որովհետև այսօր մեր դ գիրը հրեղում է իբրև արարերեն , արանից երևում է, որ դ-ի նախավոր հրեղումն էր հետքմական Լ, ուրիշ խոսքով և արտասանելու համար լեզվի ծայրը միայն դիպչում էր քիմքի առջևի կողմը, իսկ դ արտասանելու համար լեզվի կռակը ամբողջապես տարածվում էր քիմքի ետևի կողմը: Մեր այսօրվա և արտասանությունը հին և ձայնի հետ նույն է. իսկ հին դ արտասանությունը կենդանի ենք գտնում ռուսական թավ և ձայնի կամ հունական լ. հնչման մեջ: Այսպիսի մի հրեղում կոկորդական Է-ի վերածվելու համար բավական էր, որ լեզվի հենակետը մի քիչ ալեկի հետև՝ դեպի կոկորդը տարվեր, ինչպես եղել է հայերենում, որով և առաջացել է մեր այսօրվա դ ձայնը:

Թե երբ է կատարված այս փոխանցումը ճշտիվ կղծվարանամ ասել. բայց անշուշտ Ք դարում արդեն կատարված վերջացած է, որովհետև այս ժամանակից ունենք Բուդայ արյունարրու ոստիկանի անունը գրված դ տառով և ոչ խ կամ կ: Բուդա թուրքական անուն էր, որ գործածվում էր արարների մոտ նույն ժամանակ. հմմտ. Boghā-el-Soghayr՝ արարների Մուսավաբի խալիֆայի թիկնապահապետը, որ սպանեց նրան 861 թվին (տե՛ս Vaujany, Histoire de l'Egypte, էջ 202):

Խորենացի, Բ. ձա հիշված են Չինաց թագավորի երկու մեծ նախարարներ՝ Բղոթիս և Մամզուն: Մալխասյանը իր Խորենացու թարգմանությունից մեջ (Երևան, 1941 թ.) առաջինը համարում է չին կայսրների տիտղոս Բողդիխան, որ մոնղոլերեն նշանակում է ամեծ կամ սուրբ թագավոր: (Հմմտ. հատկապես Բղդախայ, Բղդոխայի տարրերակները): Եթե Խորենացին Ս դարի հեղինակ է, չէր կարող Բղոթիս ձևն ունենալ, ուստի այս ձևը հետին աղավաղություն է և կամ նորամուտ:

Միայն Ը դարից մնացած արձանագրությունց մեջ օտարազգի բառերի և անունների համեմատությունը կարող է որոշել դ ձայնի առաջացման ալեկի ճիշտ ժամանակը:

Այստեղ անկարևոր չէ հիշել, որ Մեյն հայագետի նկատողություն համեմատ և ուր բացի իրենց հնչումից գործածություն մեջ էլ զանազանվում էին. դ գործ էր անվում ամեն պարագայի մեջ, իսկ

լ միայն ձայնավորից առաջ և ոչ երբեք բաղաձայնից առաջ: Նույն երևույթը նկատում եմ ես էլ ք և ո ձայների համար. հմմտ. տոխփ և տարփանք բառերը, որոնք անշուշտ նույնն են, բայց ձայնավորից առաջ ցույց են տալիս ո, իսկ բաղաձայնից առաջ ք:

Մնում է այժմ քննել պայթուցիկ բաղաձայնների խումբը, որ դասավորվում է հետևյալ ձևով.

բ	գ	դ	ձ	ջ
պ	կ	տ	ծ	ճ
փ	ք	թ	ց	չ

Ման.— Թրակացու հայ թարգմանիչը շփոթելով ջ գրել է ց և շ ձայնների մոտ իբր թավ, իսկ և դրել է ք, գ, դ, ձ գրերի մոտ իբր միջակ. այս սխալները առաջացել են միայն հեղինակի ձայնաբանական գիտելիքներից և արժեք չունեն:

Սրանց վերջին շարքն է միայն, որ այսօր ամեն տեղ էլ ունի միևնույն հնչումը (այն է խուլ շնչեղ): Երկրորդ շարքը արևմտյան կոչված բարբառներում հնչվում է իբր թրթռուն Ծ, ց, ձ և այլն: Պուսում թեև թրթռուն, բայց բավական մոտ են խուլերին (գերմանական թրթռուն բաղաձայնների նման), արևելյան բարբառներում մաքուր խուլ, որի աստիճանն էլ սակայն միօրինակ չէ. Տփիսիսում նույն խուլերը ընկերացած են նաև կոկորդի կծկումով՝ համեմատ վրացական խուլերի:

Գալով առաջին շարքին՝ սա ունի շորս տարբեր հնչում, այսինքն՝ ներկայացնում է մարդկային ձայնի բոլոր աստիճանները. թրթռուն (իբր Ծ, ձ, ց), շնչեղ թրթռուն (sonore aspirée, իբր bh, dh, gh և այլն), պարզ խուլ (իբր ք, տ, կ) և թավ կամ շնչեղ խուլ sourde aspirée (իբր փ, ք, ց, չ): Հայության ամենասովոր մասը այս գրերը հնչում է շնչեղ թրթռուն ձևով, այսպես են Ախալցխայից ու Ախալքալաքից սկսած մինչև Մուշ, Կարին, Խարբերդ, Երզնկա, Շապին-Կարահիսար, Համշեն, Ակն, Արարկիր, Սեբաստիա, Զելթուն, Սուշավա, Նոր-Նախիջևանի գյուղերը, Նոր-Զուղա, բուն Երևանը, և հատկապես Օշական, Աշտարակ և այլն գյուղերը, որոնք Արարատյան ժողովրդի հնագույն և բնիկ տարրն են կազմում. մեկ խոսքով այս հնչումը ունի ամբողջ հայության կենտրոնական մասը Կուր գետից սկսած մինչև Ալիս: Պարզ թրթռուն հնչումն ունի նախ Արաքսից այն կողմ մինչև Ագուլիս, Տփիսիս, հետո Եվդոկիայից սկսած մինչև Պոլիս և վերջապես Ղրիմ ու Նոր-Նախիջևան: Հայության ամբողջ արևելյան մասը՝ Աստրախանից սկսած մինչև Կուրի եզերքը և

կուրի եզերքից Ղարաբաղի և Պարսկահայքի վրայով մինչև Վասպուրականի կողմը հեշուժ են պարզ խուլ: Արանցից զուրս են մընում Տիգրանակերտ, Մալաթիա, Օրդու, Թոզոսթո և քերևս Փոքր Ասիայի նախկին սերունդը, որոնք հեշուժ են շնչող խուլ: այսպես է նաև Պուրի գրական լեզուն<sup>1</sup>:

Ակներև է, որ փ, ֆ, ք, ց, շ շարքը Ծ գարունն էլ ուներ արդի հեշուժը, քանի որ թե՛ տառերի շարքում, թե՛ տառադարձությանց և թե՛ Քրակացու դասավորության մեջ համապատասխանում է հունական ֆ, ք, ց, օ, վրացերեն փ, ֆ, ք, ց, շ ձայներին. հմմտ. բլատրոն < հուն. θίατρον, փիդակէ < հուն. ֆուλακէ, փառական եմակաց > հուն. ֆարաκίνη Σερμάκον (Ագաթանգեղոս), Քարդան > հուն. Թορδόν, Քարբայ (լեռ) > Χορκαρδών, շամիշ > վրաց. շամիշի, շիր > վրաց. շիրի, ցախ > ցախի, ֆաղսֆ > վրաց. ֆալսֆի և այլն: Պարսկերենի հետ համեմատության ժամանակ ք, կ, տ, ծ տառերի դեմ երբեմն գտնում ենք պ, կ, տ, և և երբեմն փ, ֆ, ք, շ. այսպես՝

թագ tāγ	տաշտ tašt
թակոյի takōk	տապ tāb
թանդ tang	տոճմ tukm
կախարդ kakxarəda	քարշիլ kaš-
կամք kām	քէն kēn
կում kūza	քէշ kēs
պահապան pāspān	փիդ pīl
պատասխան pāsux	փադան padām
պատկեր patkar	փաշաման pašēmān
ճրագ čirčγ	շաման čaman
ճանկ čang	շամշի čamšak
ճարպ čarp	շուխայ čūxā

Տառադարձության այս տարբերությունը մեզ շպետք է շփոթեցնի. հնչական փոփոխությունը տեղի է ունեցել ոչ թե հայոց, այլ իրանյանների մեջ: Հին իրանյանները այս բաղաձայնները արտասանում էին ալիլի մեղմ, նորերը հետզհետե թավացրին, մինչև հասցրին այսօրվա աստիճանին, որ բոլորովին թավ է: Հայերն էլ հետևելով այս ընթացքին, հնագույն շրջանում տառադարձում էին պ, կ, տ, և, ալիլի հետո՝ փ, ֆ, ք, շ: Սրա համար գեղեցիկ օրինակ է

<sup>1</sup> Մեր տառերի արդի հնչման վրա ալիլի ընդարձակ և ձայնախոսական լուսանկարներով տես մեր Les explosives de l'ancien arménien étudiées dans les dialectes modernes, Paris 1899.

դանդիկ. parštipana (պրս. puštibān) բառը, որ Արշակունյաց շեր-  
շանում տվել է հայոց մեջ պաշտպան, Սասանյան շրջանում՝ փոշ-  
տիպան: Նույնպես է պարսկերենն čamša, čašma, որ հին տառա-  
դարձությունքով տվել է նեմիշ, հետո՝ շաշմակ (արտաքնոց): Այսօր  
Կովկասի և Պարսկաստանի հայերը, որոնք մեր բաղաձայնների հա-  
րադատ հնչումը ըստ կարելիության պահել են, նույն պարսկերեն հնչ-  
յունները տառադարձում են փ, ֆ, ք, շ. օրինակ՝ նույն čirāy բառը,  
որ ժամանակին տվել էր նրագ, այժմ գրվում է շրաղ. ان تور բառը,  
որ առաջ Տուրան (Տաներան) էր, այժմ գրվում է Թուրան. նույնիսկ  
մայրաքաղաքի անունը գրվում է Թեհրան, թեև ط տառով է, որ ըստ  
արաբերենի տալիս է ա:

Պարզ խոսքերի խումբը (պ, կ, ա, ծ, ճ) թե՛ տառերի շարքում,  
թե՛ տառադարձությանց և թե՛ Թրակացու դասավորության մեջ  
համապատասխանում է հունարեն π, κ, τ, վրացերեն պ, կ, ա, ծ, ճ  
գրերին: Այսպես՝ պատրիարք < πατριάρχης, Սպեռ > Σάπειρος,  
ասպետ > άσπετ, սպասկապետություն > Σπασοκαπετέων, Կապա >  
> Ναπάτ, Փայտակառան > Φατακαράνης, Եկեղիփ > Ἀκλιεστηγή,  
լուծ > վրաց. լուծի, մածուն > մածոնի, ճշմարիտ > ճշմարիտի և  
այլն: Ըստ այսմ կովկասյան հայ բարբառների արդի հնչումը (որի  
հետ նույն է նաև Վանի, Թավրիզի, Մարաղայի հնչումը) համա-  
պատասխան է Ե դարի հնչման, որի համեմատ կովկասյան տառա-  
դարձությունքով այսօր էլ ուսերեն Перекоп դանում է Պերեկոպ:

Բայց երբ մեկը ուշադրություն դարձնում է կովկասյան պ, կ,  
ա հնչյունները ֆրանսերեն, ռուսերեն կամ հունարեն ρ, κ, τ ձայնե-  
րի հետ, որչափ որ ձայնագիտորեն նույն, բայց պիտի գտնի նը-  
րանց մեջ նուրբ տարբերություն, ուժի կողմից հայոց հնչումը ավե-  
լի թույլ է, եվրոպացոցը ավելի խիստ: Ի նկատի առնելով նաև այն  
հանգամանքը, որ արևմտահայոց մեջ պ, կ, ա, ծ, ճ դարձել են  
հետզհետե թրթռուն, ուզում եմ ենթադրել, որ Ե դարի հայոց ար-  
տասանության մեջ պ, կ, ա, ծ, ճ մի քիչ ավելի ուժեղ էին, քան այս-  
օր, այսինքն՝ համապատասխանում էին ճիշտ հունարեն π, κ, τ և  
արդի ռուսաց Π, Κ, Τ ձայներին: Այս ուժը հետզհետե պակասեց  
Կովկասի հայոց մեջ շատ քիչ շափով, բայց շատ ավելի մեծ շափով  
արևմտահայոց մեջ, ուր և վերածվեց թրթռունի: Այսպես կարելի է  
բացատրել և հաշտեցնել ձայնաբանական այս նշանավոր տարբե-  
րությունը հայության երկու հատվածների միջև:

Վերևում ասացինք թե պ, կ, ա համապատասխանում են եվրո-  
պական ρ, κ, τ գրերի հնչումներին, բայց սա բոլոր եվրոպական  
լեզուների համար չէ: Գերմանացիք և անգլիացիք այս գրերը աջն-  
պես ուժեղ են հնչում, մանավանդ բառասկզբում, որ բնավ տար-

բերութիւն շունի մեր ֆ, ք ձայններէց: Այնպէս որ, եթէ ուզենք այս լեզուների ճիշտ հնչումները պատկերացնել, սխալ կլինի գրել Տիւբինգեն (Tübingen), Պոզդամ (Potsdam), Կարլ (Karl), տաուն (town) և այլն, պետք է գրել Թիւփինգեն, Փոզդամ, Քարլ, քաուն:

Անցնելով թրթռուն բաղաձայնների խմբին, սրանք թե՛ տառերի շարքի, թե՛ տառադարձութիւնաց և թե՛ Թրակացու դասավորութիւն մէջ գտնում ենք իբր համապատասխան հունարեն β, γ, δ, վրացերեն Ե, ց, ձ, ձ, պարսկերեն Ե, ց, ձ, յ ձայններին: Այսպէս օրինակ՝ բրաբիոն <βραβειον, Բասեն> Βραβειον, Գրիգոր <Γρηγοριος, գրգթ<ասոր. gezzəθā, դանդան<պ՛հլ. dandan, Դարանաղի <Δαραναλιτων, Daranalis, Չամասպ<պրս. Jāmasp, արձան> վրաց. արձանի, պղինձ>պիլինձի և այլն, նույնիսկ՝ Ե ձայնից հետո (որ արդի հայերենում թրթռունները խուլ են դարձել), ինչպէս՝ Վարդան > Vardanes, լուրջ <վրաց. լուրջի և այլն: Այս համեմատութիւնները ցույց են տալիս, որ մեր Բ, Գ, Դ, ձ, չ գրերը ոչ խուլ էին և ոչ թավ, այսինքն՝ շունեին ք, փ, կ, կհ և այլն հրեշտիւնները, ինչպէս գտնում ենք այսօր տեղ-տեղ, այլ համապատասխան էին Ե, ց, ձ և այլն հնչումներին: Բայց սրանով խնդիրը չի սպառվում և մնում է ստուգել, թե թրթռումը պա՞րզ էր (Ե, ց, ձ), թե՞ ընկերացած նաև փոքր շնչի (bh, dh, gh): Ոչ մի միջոց չունենք ստուգելու համար այս նուրբ զանազանութիւնը: Գիտենք, որ հնդեվրոպական նախալեզվի bh, gh, dh... ձայները Ե դարի հայերենում դարձել են Բ, Գ, Դ, ձ, չ. բայց հնդեվրոպական նախածամանակից մինչև Ե դար ահագին դարեր կան (մոտ 3000 տարի) և այս դարի ձայնափոխութիւնը չի կարող ընավ ապացուցանել, թե հայերը Ե դարումն էլ Բ, Գ, Դ, ձ, չ ձայները հնչում էին իբր bh, gh, dh... ճիշտ ինչպէս որ շենք կարող ասել, թե որովհետև հնդեվրոպական նախալեզվյան Ե, ց, ձ... Ե դարի հայերենում դարձել են պ, կ, ա..., ուստի և Ե դարի հայոց պ, կ, ա... տառերը հնչվում էին Ե, ց, ձ և այլն: «Տուն» նշանակող բառը նախալեզվում \*dōmn ևն ունենալով, անշուշտ ամենահին շրջանի հայոց մէջ հնչված է \*don, հետո \*dun, բայց Ե դարում արդեն դարձել էր tun, ապա թե ոչ պարսկերեն dandan բառը հայերը դանդան չէին գրի, այլ՝ տանտան:

Կարող ենք միայն իբրև հաստատ ընդունել, թե արդի մի քանի բարբառների թավ հնչումը անշուշտ առաջացել է նախավոր շրջանի թրթռուներից. bh (բ) շատ հնչտութիւնաբ կարող է դառնալ փ (փ) և արդեն անվարժ ականջը այսպէս է լսում: Բայց այս կետը կարող է մեզ առաջնորդել մտածելու նաև, որ թրթռուն շնչավորներն էլ առաջացել են պարզ թրթռուններից, այսինքն թե bh ծագել է նախավոր Ե-ից և Պոլսի ուսմիկ լեզվի կամ Երևանի արդի Բ հնչումը նաև

Ս դարի հնչումն է: Սրանով կունենանք հայ ձայնաբանության բարեշրջման ընդհանուր օրենքը՝ Ս դարից մինչև այսօր, այն է, որ մեր պայթուցիկները ձայնի կողմից հետզհետե տկարացել են, իսկ շնչի կողմից հետզհետե զորացել:

Պայթուցիկ բաղաձայնների ձայնաշրջության այս ընթացքը, որ նկատեցինք հայերենում հին ժամանակներից մինչև այսօր, գտնում ենք նաև ուրիշ լեզուներում: Այսպես՝ հունարենում հնդեվրոպական bh, gh, dh շնչեղ թրթուռները դարձել են ֆ, չ, փ: Ավելի զարմանալի է շինարենը, ուր նախկին պարզ թրթուռները է—Ո դարում դարձել են շնչեղ թրթուռ, իսկ արդի հնչման մեջ դարձել են խուլ կամ թավ. բ=բ>բ'=bh>պ=բ կամ փ=ph (հմմտ. Maspero, Le dialecte de Tchang-Ngan sous les Thang, 1920):

Իբրև վերջին նկատողություն հիշենք, որ մեր այս բոլոր եզրակացությունները վերաբերում են Մեսրոպյան հայերենին, այսինքն՝ այն պաշտոնական լեզվին, որ Ս դարում գրականության բարձրացավ: Կարող էին Ս դարում լինել զանազան բարբառներ և, հետևաբար, նրանից ավելի կամ պակաս չափով տարբեր արտասանություններ. բայց այդ բոլորը մեզ անձանոթ է մնում: Հայերենի տարբեր արտասանության հետքեր, թրթուռների փոխարեն շքնչեղ խուլ՝ ճիշտ այսօրվա Պոլսի գրականի պես, երևան են հանված մեր մի աշխատության մեջ (Հայերեն նոր բառեր հին մատենագրությունում մեջ, Վենետիկ, 1913, էջ 158):

## Գ Լ Ո Ւ Խ Ը

### ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

Ս դարից մինչև այսօր՝ 1500 տարվա ընթացքում, հայերեն գրերը չէին կարող մնալ միևնույն վիճակում. նրանք անցան զանազան ձևափոխություններից, որոնց ուսումնասիրության աղբյուրներն են մեր հին ձեռագրերն ու արձանագրությունները:

Աշխարհիս վրա սփռված բովանդակ հայ ձեռագրերի ընդհանուր թիվն է մոտ 30.000, որոնցից ամենհինն է Մոսկվայի կազարյան ձեմարանի Ավետարանը՝ 312—887 թվից, որ լուսատիպ հրատարակված է (այժմ գտնվում է Երևանի Ձեռագրատան մեջ): Չենք հիշում Երուսաղեմի հնագույն Ավետարանը, Անտոնյան հարց թարգմանչագիր Ավետարանը և կրկնագրի զանազան մնացորդներ, որոնք սույն թվականից շատ հին են համարվում, բայց ըստ որում հաստատուն թվական չունեն, այն չափ վստահելի չեն, մանավանդ այսպիսի ծանրակշիռ եզրակացությանց համար:

Զեռագրերի ամենախոշոր մասը դեռ ցուցակագրված չէ. այսպես են էջմիածնի 10.000, Վենետիկի 2.000, Երուսաղեմի 2.700, Պոլսի 1.000, Նոր-Ջուղայի 250 ձեռագրերը: Ցուցակագրված ձեռագրերի մեջ առաջին տեղը բռնում է Վիեննայի Մխիթարյաններիցը, որ պարունակում է 573 ձեռագիր (տե՛ս Տաշյան, Ցուցակ, Վիեննա, 1895): Հրատարակվեց նաև Վենետիկի Մխիթարյանց Ցուցակի առաջին մասը, որ դեռ շարունակելի է: Վերջապես հիշենք Լալայանի կազմած Ցուցակը Վասպուրականի ձեռագրերի և զանազան մանր ցուցակներ՝ Կարնո, Քալբրիզի, Նոր-Բայազետի, Քեհերանի, Տփխիսի, Կեսարիայի, Ագուլիսի, Հոռվմի, Մյունխենի և այլն:

Զեռագրերից ավելի վատ վիճակի մեջ են արձանագրությունները, որոնցից հազարավորները սփռված են Հայաստանի և գաղթավայրերի զանազան անկյուններում: Հաշվելով մինչև 11—1551 թվականը գրված արձանագրությունները, տեսնում ենք, թե հրատարակված են միայն 2000-ի շահ, բայց սրանք էլ սովորաբար հասարակ արտագրությամբ, շատ անգամ սխալներով լի և առանց լուսանկարի կամ նմանահանություն:

Մի քանի տարի առաջ ձեռնարկեցի կազմելու Հայարձանք (Corpus inscriptionum), որ Լազարյան ձեմարանի Քանանյան կրտակի կողմից մրցանակի էր դրված: Սրա համար նախ հավաքեցի բոլոր տպագրյալ արձանագրությունները (թվով 2000), հետո սկսեցի անձամբ տեղի վրա ստուգել հիշյալ արձանագրությունները և էթն կային՝ նորերը հավաքել: Ստուգեցի և հավաքեցի Նոր-Նախիչեվանի արձանագրությունները, հետո եկա Բաքու, որի մոտ թրքական մի գյուղի մեջ իբր թե գտնվում էր հայերեն ամենահին արձանագրությունը: Այս և սրա հետ ուրիշ մի քանի արձանագրություններ էլ օրինակելուց հետո՝ անցա Քիֆլիս, ուր հայոց բոլոր եկեղեցիներում գտնված զանազան արձանագրությունները օրինակեցի: Այնուհետև մտադիր էի անցնել Հաղրատ, Սանահին, Լոռի, Անի և այլն և այսպես բոլոր կարևոր տեղերի արձանագրություններն ըստուգել և հավաքել: Տփխիսում տեսա ազգագրագետ Երվանդ Լալայանին, որին ցույց տալով 2000 արձանագրությանց խոշոր հավաքածուս, նպատակս հայտնեցի: Լալայանը հայտնեց, թե ինքն էլ նույն նպատակն ունի և արդեն տարիներն ի վեր աշխատում է դրա վրա, և ցույց տվեց ինձ 250 արձանագրություն, որ ինքը անձամբ նկարել էր հեռատիպ գործիքով (téléotypie): Մի հին աշխատավորի հետ, այն էլ այսպիսի սքանչելի գործիքով դիմված, շամարձակվելով մրցման դուրս գալ, ես հետ կասեցա նպատակիցս և Տփխիսից հետ դարձա: Դժբախտաբար Լալայանը շարունակեց իր մտադրությունը, ոչ էլ մրցանակին մասնակցեց: Այսպիսով իմ աշխա-

տությունն էլ կիսկատար մնաց: Մի ժամանակ հետո Կ. Կոստան-  
յանը՝ Լազարյան Ճեմարանի տեսուչը, հրատարակեց իր Վիմական  
տարեգիրքը, որ է հայ արձանագրությանց հավաքածոն, բայց շատ  
ավելի համեստ և հասարակ ձևի տակ և ոչ ամբողջական: 1937 թ.  
Ծրեանի Պատմության և գրականության ինստիտուտը ձեռնարկեց  
տպելու իմ Հայարձանը, բայց նույնպես կիսատ մնաց:

Այն երկու աղբյուրներն էլ, որ հիշեցինք, ձեռագիրներ և արձա-  
նագրություններ, անբավարար են ոչ թե միայն նրա համար, որ դեռ  
կատարյալ կերպով ուսումնասիրված կամ նույնիսկ հրատարակու-  
թյամբ ծանոթացված չեն, այլ նաև նրա համար, որ ինքնին բավա-  
կան չեն գրերի զարգացման պատմությունը ի հայտ բերելու հա-  
մար: Արդարև, ինչպես Տաշյանը նկատում է, թե՛ ձեռագրերը և թե՛  
արձանագրությունները պաշտոնական գրություններ են, երկար տա-  
րիներ զործածության համար հատկացված բաներ և իբր այն՝  
կատարված առանձին խնամքով, հոգատարությամբ և մանրամասն  
ավանդապահությամբ: Մեզ պակասում են այն առանձնական, ան-  
հատական և հասարակ կյանքի վերաբերյալ թղթերն ու գրություն-  
ները, ինչպես՝ մուրհակ, առտնին հաշիվ, նամակ, հուշատետր և  
այլն, որոնք, օրը օրին և անփութորեն գրված, պիտի կրենին տառերի  
հաջորդական ձևափոխությանց իրական պատկերը և այսպիսով պի-  
տի տային մեզ գրի զարգացման ճշգրիտ պատմությունը: (Տե՛ս  
Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Վիեննա 1898, էջ 57,  
91 և այլն):

Ծանոթ. Այս գործը, հակառակ իր համեստ անվան, միակն է իր  
տեսակում և տալիս է մեզ ամեն ինչ, որ կարելի էր ասել հայ հնա-  
գրության մասին՝ այն ժամանակ: Տաշյանն իր այս գործով եղավ  
հիմնադիրը հայ հնագրության գիտության (paleographia): Գրքիս  
առաջին հրատարակությունը ձոնել եմ իր անվան: Տաշյանի գործին  
իրը լրացուցիչ մաս կարելի է համարել Գարեգին Վրթ. Հովսեփյա-  
նի Քարտեզ հայ հնագրության (հրտր. Շողակաթ ժողովածուի մեջ,  
Վաղարշապատ, 1913), որ պարունակում է հայ արձանագրությանց  
և ձեռագրերի 143 հատ գեղեցիկ լուսատիպ նմուշներ, առանց սա-  
կայն ուսումնասիրության: Այսպիսի նմուշներ ունենք նաև Տաշ-  
յանի Ցուցակում և Ալիշանի Տեղագրութեանց մեջ (Շիրակ, Այրա-  
րատ, Սիսուան և Սիսական):

Գրերի ամենահին ձևը, որը ավանդված է մեզ, կոչվում է գլխա-  
գիր կամ բուն Մեսրոպյան երկաթագիր<sup>1</sup>: Սա մեր արդի տպագրու-

<sup>1</sup> Տառերի տեսակների անունները գործածված են զանազան իմաստով. ձևի  
անունը շատերը շփոթել են տառի մեծության հետ. այսպես օրինակ՝ շատերը միջին  
մեսրոպյան անունը գործածել են սովորական երկաթագրի այն տեսակի համար, որ



թյան մեջ գործածվող տառերն է, որի հիմնական հատկանիշն է տարաայունների վերի և ներքևի միացումը կոր կամ կամարաձև զրծիկներով: Այստեղ դնում ենք այդ կարգի տառերի նմուշներ հրձք ձևով. առաջինն է հին ձևագրերի ճշգրիտ նմանութլամբ պատրաստված նորաձույլ նրկաթագիր այբուբենը, որ առաջին անգամ պատրաստվել է Վիեննայի Մխիթարյան Միաբանութլամբ կողմից Գեր. Լ. Ա. Այտրեյան արքահոր հոգաժութլամբ. երկրորդը՝ այն որ հիմա էլ գործածական է տպագրութլամբ մեջ, և երրորդը՝ այն ձևը, որի տառայունները մի փոքր իրարից անջատ են մնում:

# Ա Բ Գ Դ Ե Զ Է

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Ն Զ Ղ Ժ Մ Յ  
 Ե Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Ն Զ Ղ Ժ Մ

Գլխագիր երկաթագիրը մեզ ծանոթ է Զ և է դարերից. այս զրրով է Երուսաղեմի Զիթենյաց լեռան մոզայիկ արձանագրութլունը, որ նմանահանութլամբ տպված է «Շողակաթում» (N 1): Բայց այս արձանագրութլամբ թվականը բոլորովին անծանոթ է: Ավելի լավ է Տեկոբի տաճարի արձանագրութլունը, որ զրված է Յոհան կաթողիկոսի օրով և ըստ այսմ էլ համարվում է Ն դարի վերջերից, համեմանյն դեպս ոչ ուշ, քան է դարը (Շողակաթ, N 2): Թվականի կողմից ավելի հաստատունն է Ս. Լնիփսիմեի արձանագրութլունը՝ 618 թվից (Շողակաթ, N 3): Ավելի հետո գալիս է Անիի Միջնաբերդի եկեղեցու արձանագրութլունը՝ 622 թվականից (Շողակաթ, N 4), Քալիկեի խաչաձև մատուռի արձանագրութլունը՝ 630-ական թվերից (Շողակաթ, N 5), Մրենի տաճարի արձանագրութլունը՝ 637—640 թվերից (Շողակաթ, N 7—8), Արուճի ս. Գրիգոր եկեղեցու արձանագրութլունը 668 թվից (Շողակաթ, N 9) և այլն: Ավելի ուշ սկսում են ձևագրերը, որոնց հնագույնը Լաղարյան ձևմարանի տվետարանն է 887 թվից, որի մասին վերը հիշեցի:

Գլխագիր երկաթագիր այբուբենի մեջ ձևի կողմից նկատողութլամբ արժանի են հետևյալ տառերը:

խոշոր չէ և փոքրի ու մեծի միջին տեղն է բռնում (մեծութլամբ և ոչ թե ձևով): Այսպես եմ զորժածել ևս էլ Սանասարյան վարժարանի Զուգարաց Ցուցակի մեր Լ. Տաշլանն է, որ առաջին անգամ նշան է գանազան անունների նշանակութլունները (Ակնարկ, էջ 24 ևն): Մեկը էլ հետևում ենք նրան:

Մեր այժմվա գեղազրուությամբ այս տառը բաղկանում է երկու համաասարաչափ սյուններից, մեկը ձախ, մյուսը աջ գետեղոված, տակից մի պոչով միացած, որ ծովում է դեպի ցած կամ առ առավելն գրեթե հորիզոնական դիրք է ընդունում: Հնագույն ձևի մեջ, սակայն, այսպես չէ, այլ աջակողմյան սյունի վերևի ծայրից սկսվում է ավելի բարակ մի գիծ, որ մահիկի ձևով ուղղվելով իջնում է մինչև սյունի ծայրը, և երբ հասնում է գրի տակի կամարի մոտ, սյունը ճեղքելով դուրս է ելնում և դեպի վերև բարձրանում՝ մոտավորապես լատինական C տառի նման: Ա տառի այս ձևը հայտնի կերպով գտնում ենք Ձիթենյաց լեռան արձանագրության մեջ (Շողակաթ, № 1), 19 անգամ նույնը՝ Տեկորի արձանագրության մեջ (Շող. № 2, հմմտ. հատկապես վանաց բառը, ուր նույն մահիկը լատինական ձևագիր 1 տառի ձևն է ստացել), Մրենի արձանագրության մեջ (Շող., № 6), մինչև իսկ շատ ավելի ուշ՝ Անիի Ապուղամբենց ս. Գրիգոր եկեղեցու արձանագրության մեջ (Թ դար, Շող., № 17): Այնուհետև մահիկի ծայրը փոխանակ վերև բարձրանալու, սկսում է դեպի ցած թեքվել և սրանով ձևացնում է վերջապես արդի պոչը: Տառերի ծայրը այսպես դեպի ցած ծոկը, որ մեկ բառով կարող ենք կոչել վայրահակուքուն, հայերեն երկաթագրի գեղագրության հատկանիշներից մեկն է. այսպես են գրեթե մեր բոլոր տառերը, ինչպես Ա, Բ, Գ, Դ, Է, Ը և այլն, մինչև վերջ, հակառակ հույն և լատին տառերի, որոնց մեջ հորիզոնական համաչափությունն է գերիշխում. հմմտ. օրինակ՝ հայերեն Զ և հուն. լատ. Ζ և այլն: Հոնիսիմեի արձանագրության մեջ (Շող., № 3) այդ պոչը արդեն մի պարզ շեղ գիծ է, բավական երկար, բայց մահիկը կա (հմմտ. հատկապես երկրորդ տողի վերջը) և դեռ երկար ժամանակ պիտի շարունակի իր գոյությունը:

Այլուր Ա տառի ծագման վրա խոսելու ժամանակ, ասացինք, թե տատանվում է հունարեն α-ի և պահլավերեն α-ի միջև: Ա տառի այսպիսի մահիկավոր ձևը և վերև դարձած պոչը լինելով նրա հնագույն ձևը՝ միջոց է տալիս մեզ ավելի որոշելու խնդիրը: Պահլավերենի հին ձևի մեջ տառի պոչը ուղիղ է, մինչդեռ հունարենում դեպի վերև է բարձրանում հայերենի պես (հմմտ. Մեծ Ցուցակում, հուն. α-ի երկրորդ և երրորդ ձևերը): Սրանից հետևեցնում ենք, թե հայերեն Ա ծագում է միայն հունարենից և պահլավերենի հետ գործ չունի:

Ընդունելով, որ հայերեն առաջին տառը՝ Ա ծագում է հունարենից, երևան ենք հանում միաժամանակ Մեսրոպի ձգտումը, որ է՝

Այս գիրը արդի գեղագրությամբ ձևանում է մի կլորակից՝ որ հաստատված է դեպի ձախ թեքված մի կորության ձախ ծայրը և որի տակ ձախ և աջ ծոված մի պոչ կա: Հնագույն արձանագրությանց մեջ բավական տարբեր է նախ՝ կլորակը ուղղակի հաստատված է պոչի վրա՝ առանց այն կորության, որ կլորակը և պոչը իրար է միացնում, և երկրորդ՝ պոչը երկու կողմ ծոճոված չէ, այլ պարզապես ձախից դեպի աջ թեքված ուղիղ մի գիծ է. ուրիշ խոսքով՝ հրենագույն 2 տառը բաղկանում է պարզապես մի խոշոր կլորակից կամ ձվածևից՝ տակը ուղիղ գծով: Այս ձևով գտնում ենք 2 տառը Զիթենյաց լեռան արձանագրության մեջ (Շող., № 1)՝ չորս անգամ, Մաստարայի 640 թվի արձանագրության մեջ (Շող., № 7—8)՝ չորս անգամ: Այստեղ մեղ համար կարևոր է պոչի գիրքը: Արդարև այլուր՝ այս գրի ծագման մասին խոսած ժամանակ, ասացինք, թե պոչի աջ ու ձախ ծոճովը վերջից առաջացած երևույթ է և տեղից տեղ տարբերվում է: Հունարենում տառի ամենահին ձևը պարզապես I տառի նման է, բոլորովին ուղիղ պոչով (տե՛ս Մեծ Տուցակը): Այսպես է նաև Տուցակի երրորդ ձևը: Ուրեմն հայերեն Զ-ի այս ձևը պոչի կողմից բոլորովին համապատասխան է հին հունական ձևերին և ջնջում է ամեն տարակույս, որ կարելի է հարուցել այս մասին:

Նկատելի է սակայն, որ այդ պոչը, ինչքան էլ ուղիղ գիծ լինի, այնուամենայնիվ ծայրերից մի քիչ ավելի հաստ է, քան մեջտեղում: Նույնիսկ աջ ծայրը այնչափ հաստ է, որ մեջտեղն էլ մի ծակ կա (հմմտ. հատկապես Զիթենյաց արձանագրության վերջին տողը): Ահա այս հաստությունը և ծակն է, որ հետզհետե գարգանալով՝ վայրահակության օրենքով առաջ են բերել պոչի աջ ու ձախ կորությունները, որոնք արդեն երևում են Հոփսիսիմեի արձանագրության շրթրորդ տողի սկիզբը և Անիի 622 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 4). բայց նույնիսկ 1003 թվականին տակավին իր հին հարազատ ձևը պահում է (տե՛ս Կեչառույքի արձ. Շող. № 18, տող 4-րդ):

Ասացինք, թե Զ-ի վերի կլորակը պոչին միացնող կապը հնագույն ձևի մեջ պակասում է: Մա անշուշտ փորագրության դժվարության կամ գեղագրական որոշ սկզբունքի պատճառով է: Եթե հայերեն Զ ծագում է հունական Ζ-ից և հունարեն այս տառը իր բոլոր տեսակների մեջ էլ այս միացուցիչ կապն ունի, ուստի պետք է որ հայերենն էլ նույն կապը ունեցած լինի: Եվ անշուշտ այսպես էր

բուն Մեսրոպյան շրջանում: Նույնիսկ Ձիթենյաց արձանագրության մեջ էլ, եթե շորս Ձ-երից առաջին երկուսը զուգի են նույն կապից և կլորակը պոչից անջատ է մնում նրանց մեջ, երրորդի մեջ՝ կլորակը արդեն կաած է պոչին, իսկ շորրորդի մեջ կա նույնիսկ մի փոքրիկ ուղղահայաց ցպիկ, որ կլորակը միացնում է պոչին: Կապը ավելի պարզ է Տեկորի արձանագրության առաջին տողի մեջ, ուր Ձ տառը Ձ տառի ձևն է ստացել և շատ ավելի բնորոշ՝ Կեչառուցքի 1003 թվի արձանագրության մեջ (Շողակաթ № 18), ուր այս Ձ ձևն ունի (տե՛ս նախավերջին տողի ծայրը):

## Է

Այս գիրը արդի ձևի մեջ բաղկացած է ուղղահայաց մի սյունից, որի մեջտեղից և վարի ծայրից մեկնում են մի մի հորիզոնական թև, վար կախված պոչով: Հնագույն գեղագրության մեջ այս երկու թեւիներն էլ պարզ հորիզոնական գծիկներ են, ճիշտ այս ձևով Է: Այսպես ենք գտնում Ձիթենյաց արձանագրության մեջ մեկ անգամ: Ավելի հետո տակի պոչի ծայրը սկսում է հաստանալ (այսպես է Հոփսիսիմեի, Թալինի 640 թվի (Շողակաթ, № 5) և Արուճի 668 թվի (Շողակաթ, № 9) արձանագրության մեջ, և վերջապես ստանում է վար կախված ձև: Մաստարայի 640 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 8) երկու ձևերն էլ կան:

Պոչի այսպիսի թեքումը, ինչպես ասացինք, վայրահակության օրենքի արդյունքն է: Հնագույն արձանագրությանց բոլոր տառերը ուղիղ պոչեր ունեն. այսպես Ձիթենյաց արձանագրության մեջ՝ Բ, Ե, Թ, Լ, Ղ, Ս, Վ, Տեկորի արձանագրության մեջ՝ Բ, Գ, Դ, Ե, Թ, Լ, Ղ, Ս, Հոփսիսիմեի արձանագրության մեջ՝ Բ, Ե, Թ, Դ, Թալինի արձանագրության մեջ՝ (Շողակաթ, № 5) Բ, Դ, Ե, Թ, Ղ, Ս և այլն:

Այս կետը ի նկատի ունենալով, պետք է ասենք, թե արդի տրպագրական գլխատառերից Բ, Գ, Դ, Ե, Զ, Ը, Թ, Լ, Ղ և այլն ձևերը, որոնք եզրապակեան են կոչվում, շատ ավելի հնաձև են, քան թե Բ, Գ, Դ, Ե, Զ, Ը, Թ, Լ, Ղ և այլն, որոնք ավելի գործածական են այժմ:

## Ը

Այս տառը հայերենի մեջ հաճախ է պատահում, բայց քիչ անգամ է գրվում, այս պատճառով էլ հնագույն արձանագրությանց մեջ չենք գտնում: Առաջին անգամ երևան է գալիս Մաստարայի երկրորդ արձանագրության մեջ (640 թվականից), հետո Արուճի ս. Գրիգոր եկեղեցու արձանագրության մեջ (668 թ.), ավելի ուշ նույն

տեղի 367 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 12) և բուրբն էլ  
Հիշատակ էր արդի Ը ձևն ունեն, վայրահանկ պոշով: Տարօրինակ է  
միայն Արտավազդ Կամսարականի տապանի արձանագրությունը  
(Շողակաթ, № 10) և դարից, ուր երկրորդ տողի մեջ Ը տառն ունի Ը  
ձևը: Այլուր նման բան չի պատահում. և որովհետև ըստ հրատարակ-  
չի (տե՛ս Շողակաթ, էջ 175) արձանագրության օրինակությունը  
շատ անբավարար է, ուստի սխալը սրանից առաջացած եմ կարծում,  
կամ առառավելն՝ փորագրության թերությունն արդյունք:



Հնագույն ձևի մեջ այս տառի ձախակողմյան սյունը արդի ձևի  
շահի երկար չէ, այլ աջակողմյան ուրբթին հավասար, նույնիսկ նը-  
րանից էլ փոքր ինչ կարճ է: նույնպես աջակողմյան ուրբթից դուրս  
երկարած թևը հորիզոնական դիրքով է կանգնած, ճշտիվ այս ձև-  
վով՝ Թ: Այսպես է օրինակ Զիթենյաց լեռան արձանագրության մեջ  
երկու անգամ, Տեկորի արձանագրության մեջ երեք անգամ և այլն:  
Այս ձևը ճշտիվ համապատասխանում է Թ գրի ծագման, որովհետև  
հունարենի մեջ էլ նույն սյունը շատ կարճ և թևը ուղիղ դուրս երկա-  
րած է (տե՛ս Ցուցակի երկրորդ ձևը), որով գրեթե շրջված գրի ձևն  
ունի: Ավելի հետո սկսվում է հայերենի մեջ սյունը երկարել (ինչ-  
պես ունենք արդեն Ղոխիսիմեի արձանագրության մեջ՝ երրորդ տող)  
և վայրահանկության օրենքով էլ հորիզոնական թևը դեպի ցած ուրբ-  
վել, ինչպես ունենք արդեն Մաստարայի երկրորդ արձանագրու-  
թյան մեջ՝ 640 թվից (տե՛ս Շողակաթ, № 8, տող 7).— Քալինի 783  
և 901 թվերի արձանագրությանց մեջ (Շողակաթ, № 11, 13) այս  
թևը փոխանակ ներքև ծովելու՝ վերև է բարձրացել:



Հին արձանագրությանց մեջ Ժ արդի սովորական ձևն ունի, ինչ-  
պես է Մաստարայի 640 թվի (Շողակաթ, № 7), Արուճի 668 թվի  
(Շողակաթ, № 9), Արտավազդ Կամսարականի տապանի (Շողակաթ,  
№ 10) արձանագրությանց մեջ: Բայց ավելի հետո վերինից ձևանում  
է ձախակողմյան մի թև, ինչպես է Տեկորի № 15, (964 թվի), Ապու-  
ղամբենց № 17 (Փ դար), Խժկոնից № 20 (1033 թվից, տող 13), Կե-  
շառույթի № 21, (1051 թվից) և այլ արձանագրությանց մեջ՝ Մ  
ձևով: Այս ձևը սակայն հաջողություն չի գտել և վերջապես դադար-  
ել է:

Սովորաբար ևս ձևն ունի. Արուճի 668 թվի արձանագրության մեջ ստացել է մի փոքրիկ տարբերութիւն. փորագրիչը նախ փորել է Ի ձևը, որի ծայրին ավելացրել է կիսաշրջանակը, բայց այնպես, որ հորիզոնական գիծը հասել է ճշտիվ նրա կեսին: Պատահում է նաև, որ տառի թևը մի քիչ ցածր լինի, այնպես որ ծայրով հենվի տողին, այսպես՝ Ծ:



Արդի գեղագրությամբ այս տառը ունի ծ կամ Մ ձևը. հնագույնի մեջ գլխի կորութիւնը շատ ավելի հասարակ է և ունի ճիշտ Ծ ձևը, ուրիշ խոսքով՝ հասարակ բոլորգիր Մ-ի խոշորն է: Այսպես ենք գտնում Ձիթենյաց արձանագրության, Թալինի 630 թվի արձանագրության (Շողակաթ, № 5), Մաստարայի 640 թվի (Շողակաթ, № 7) և Արտավազդ Կամսարականի տապանի արձանագրության (Շողակաթ, № 10) մեջ: Մ տառի այս ձևը ճշտիվ համապատասխան է իր ծագման: Արդարև վերը, այս գրի ծագման վրա խոսած ժամանակ, ասացինք, թե գալիս է ասորական օ ձևից և թե մեր գրի գլխի զարդը հետո առաջացած մի երևույթ է՝ հայկական գեղագրության օրենքներով: Ասորին այդ զարդից զուրկ լինելով՝ հնապես պետք է, որ հայերենն էլ այնպես լիներ, ինչպես որ իրոք գտնում ենք հնագույն արձանագրությանց մեջ:

Հայերեն Մ գրի զարգացման ձևերը զանազան են. այսպես՝

1. Թևերը բարձր, իրար հավասար և մյուս գրերի կամ տողի սահմանից վեր բարձրացած մի ձև՝ եթովպական շրջված Կ-ի նրման կամ մանիքեական այբուբենի Գ տառի նման (տե՛ս Մեծ Յուցակը): Այս ձևը երեք անգամ գտնում ենք Խժկոնից 1033 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 20):

2. Բոլորգիր Մ գրին նման մի ձև, միայն սրանից մի քիչ ավելի ուղղահայաց դիրքով և գրի վերի ծայրը գտնված կարթը բոլորովին հորիզոնական ձևով: Այսպիսի Մ գտնում ենք Տեկորի 964 թվի խաչքարի արձանագրության մեջ (Շողակաթ, № 21) և Կեչառույքի 1051 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 21), երկու անգամ:

3. Նույնի մի քիչ ավելի զարգացած ձևը, այն է՝ կարթը բոլորովին ծաված Ր տառի գլխի նման, կարծես թե իրար կպած Ժ և Բ տառերը լինեին: Այսպիսի Մ գտնում ենք նույն արձանագրության 3-րդ և 6-րդ տողերի մեջ:

4. Վրացերեն Ծ (բոլորգիր ց) գրին նման մի ձև, բայց տակի

կլորակը շատ ավելի զարգացած ու ամբողջացած, իբր արարերեն 5-  
այս ձևը գործածված ենք գտնում Ապուղամբենց ս. Գրիգոր ճկեղե-  
ցու արձանագրության մեջ (Ժ դար, Շողակաթ, N 17, տող 4-րդ):  
Սակայն նույն արձանագրության առաջին տողում կա նույնի մի քիչ  
տարբեր ձևը, այն է՝ գլխի առաջին կարթը կտարած՝ գրեթե անով:

5. Վերջապես Ծ ևնով, որ գործածված է Քալինի 901 թվի ար-  
ձանագրության մեջ (Շողակաթ, N 13):

Այս բոլոր ձևերը ընդարձակ գործածություն չեն գտել և իս-  
փանվել են:

## Կ

Մեր արդի գեղագրության համաձայն՝ այս տառը բաղկացած է երկու հավասար սյուներից, որոնք մեջտեղից միացած են մի փոքր կորությանը: Հին ժամանակ, սակայն, առաջին սյունը շատ երկար էր մյուսից և հասնում էր մինչև տողագիծը, ուր գտնվում էր նաև կորությունը, այսպես՝ Կ: Այս վիճակում Կ տառը նմանում էր առանց թևի և վատ գրված Ե-ի կամ մի կողմը կտարած Ս-ի: Այս ևնով է Կ տառը Զիթենյաց լեռան, Տեկորի, Քալինի, Մրենի, Մաստարայի և Արուճի արձանագրությանց մեջ (Շողակաթ, N N 1, 2, 5, 6, 7, 9) և այլն:

Այս գրի ծագման վրա խոսած ժամանակ՝ չենք կարողացել վճռական որոշում տալ և տատանվում էինք հույն, ասորի և սասանյան ձևերի միջև, որոնք հավասարապես նման են մեր գրին: Եթե, սակայն, նկատի ունենանք մեր գրի հնագույն ձևը, պիտի տեսնենք, որ բոլորովին համապատասխան է հունական K-ի նախնական ձևին (տե՛ս Մեծ Ցուցակը), որով և պիտի կարողանանք ասել, թե հայերեն Կ ծագում է միայն հունարենից:

## Ն

Այս գիրը երկու տեսակ է հին արձանագրությանց մեջ. ամենահինը, այսինքն՝ Զիթենյաց լեռան արձանագրությունը, ունի ճշտիվ մեր արդի բոլորգրի ձևը (5). այսպես է նաև Մաստարայի երկրորդ արձանագրության մեջ (Շողակաթ, N 8): Տեկորի արձանագրության մեջ էլ կա այս ձևը (տե՛ս տող 2, յոնանու բառը), բայց այստեղ ավելի և՛ ձևն ունի, միայն թե սուր անկյան վերի կողը վարի կողից ավելի երկար է, իսկ տակի պոչն էլ՝ փոխանակ ուղղահայաց դիրքով կանգնելու, ընդհակառակը դեպի աջ ծոված է: նույն տառի մեկ ուրիշ ձևն էլ ունենք Արտավազդ Կամսարականի տապա-

նի արձանագրութեան մեջ, ուր սուր անկյան վերի կողը գրեթե ուղ-  
ղահայաց դիրք է ստացել և ըստ այսմ էլ՝ տակի պողը արդի բոլոր-  
գրին նման դեպի աջ է թեքված՝ գրեթե այս ձևով՝ Լ: Այս բոլորի  
մեջ և տառը նրանով միայն տարբերվում է արդի գլխատառից, որ  
գլխի կարթից զրկված է:

Ը տառի երկրորդ տեսակը, որ գտնում ենք հին արձանագրու-  
թեանց մեջ, ճիշտ վերի ձևով է, միայն գլխի վրա ավելացած է կար-  
թը: Երկու տեսակները միաժամանակ գտնում ենք Տեկորի, Թալինի  
և Արտավազդ Կամսարականի տապանի արձանագրութեան մեջ և  
այլուր:

## 2

Հակառակ իր դժվարին գծագրութեան՝ ամեն տեղ էլ նույն ձևով  
է, որ արդի ձևից չի տարբերվում. միայն թե բերանը շատ ավելի  
բաց էր և ամբողջը մի քիչ ավելի աջ թեքված, իսկ տակի պողը ձա-  
խից աջ դառնալուց հետո, այլևս ծայրը նորից վերև չի բարձրա-  
նում, ինչպես է արդի գծագրութեամբ. հմմտ. Շողակաթ, № № 2, 5,  
7, 8 (երեք անգամ), 9, 18, 20 և այլն: Մյուս արձանագրութեանց մեջ  
չի գտնվում:

## Ճ

Այս տառը քիչ է պատահում արձանագրութեանց մեջ. այսպես՝  
առաջին անգամ գտնում ենք Հռիփսիմեի արձանագրութեան 4-րդ  
տողում՝ մեկ անգամ, Արուճի արձանագրութեան մեջ (№ 12)՝ հինգ  
անգամ, նաև Խժկոնից 1033 թվի արձանագրութեան մեջ (№ 20)՝  
երեք անգամ, Կեչառուչքի 1051 թվի արձանագրութեան մեջ (№ 21)՝  
մեկ անգամ և այլն: Արդի գեղագրութեամբ ձևով վաղված է երկու  
թրածև գծերից, որոնք իրար են ագուցված, բայց ձախ գիծը դեպի  
աջ անցնելուց հետո՝ վերև է բարձրանում: Հռիփսիմեի արձանագր-  
ութեան մեջ այս տառը մի քիչ ավելի պարզ ձևով է. այստեղ երկու  
գծերը թրածև չեն, այլ բոլորովին ուղիղ, որոնք ճիշտ լատինական X  
տառի նման իրար են ագուցված, բոլորովին հորիզոնական խարսխի  
վրա նստած. ձախից աջ եկող գիծն էլ դեպի վեր չի բարձրանում:  
Արուճի արձանագրութեան հինգ ձևերն էլ նման են արդի ձևին. գը-  
ծերը թրածև են, աջից ձախ գնացող գիծը մյուսից կարճ է, բայց  
խարսխից հորիզոնական և ձախից աջ եկող գիծը՝ փոխանակ վերև  
բարձրանալու, ընդհակառակը վար ծռած, եթովպական Ճ գրի պես:  
Երկուսի միջին ձևը կա Խժկոնից և Կեչառուչքի արձանագրութեան



մեջ: Մրանց մեջ աչից ձախ երգարած գիծը ուղիղ, իսկ ձախից աչ երկարած գիծը թրածն է. ծայրերն էլ վար կախված, նման զպտիական Ռ (janja) գրին:

Ճ գիրը բուրբուռի տարօրինակ ձև ունի նժճունից 1214 թվի արձանագրության մեջ (№ 23, մեկ անգամ), որ բուրբուռի նման է բուրբուռի ծ գրին, միայն կլորակը խոշոր է և աչ թևը ձախից ավելի երկար ու դեպի վեր բարձրացած, գրեթե գլխիվայր շրջված Օ տառի պես կամ եթովպական շրջված Տ:

Այս ձևով Ճ ուրիշ տեղ չի պատահում:

### Յ

Այս տառը կազմված է երկու թևերի բուրբուռակներից, ձախ ծայրը մի կետով: Սույն այս ձևը գտնում ենք նաև Զիթենյաց լեռան արձանագրության մեջ (տող 3-րդ), Հոխիսիմեհի արձանագրության մեջ (5 անգամ) և այլն: Բայց գծագրության մեջ անշուշտ կետի հավելումը որոշ դժվարություն էր հարուցում, ուստի գրիչները մտածել են կամ միջին գիծը մի քիչ ավելի երկարել, որով կետը միասին գծված կհամարվեր և կամ կետը բուրբուռի շնչելով՝ պահել միայն երկու բուրբուռակները: Առաջին ձևը գտնում ենք Տեկորի արձանագրության մեջ մի քանի անգամ, իսկ երկրորդ ձևը՝ նույնիսկ Զիթենյաց արձանագրության մեջ (երկու անգամ):

### Զ

Ակետով հնագույն արձանագրություններից՝ այս տառը գրտնում ենք երկու ձևով. նախ՝ արգի ձևով, որի հատկանիշն է գլխի կետ կտուցը, և երկրորդ՝ առանց կետ կտուցի պարզ հորիզոնական գծով, այսպես Շ: Զիթենյաց արձանագրության մեջ մեկ անգամ առանց կետ կտուցի է (առաջին տող) և հինգ անգամ կետ կտուցով: Տեկորի (№ 2) և Քալինի (№ 5) արձանագրության մեջ միայն ՚Շ, ձևվով է: Տեկորի արձանագրության մեջ կա նաև Ն ձևը մեկ անգամ (տե՛ս առաջին տողը, վաճաց բառը), որ սակայն այլուր չի պատահում: Այնուհետև Ն ձևը սովորական է դառնում. Հոխիսիմեհի արձանագրության մեջ Ն ձևով է (3 անգամ), Մրենի (№ 6) արձանագրության մեջ դեռ երկու ձևերն էլ խառն են. Մաստարալի (№ 7) արձանագրության մեջ ունենք 9 անգամ կետ կտուցով և այլն:

Ն տառի այս հին ձևը անշուշտ կարևոր է պարզելու համար իր ծագումը, որ շատ որոշ չէ:

Ամենից ավելի բաղմազան երևույթներ ստացել է այս տառը՝ հետևյալ ձևով.

1. Շ, որ գտնում ենք Ձիթենյաց արձանագրության մեջ մեկ անգամ (այսինքն՝ լատին G տառի պես՝ գլուխը բուժ մի նշան ագուցված): Տեկորի արձանագրության մեջ երկու անգամ, Հոբիսիմեի արձանագրության մեջ մեկ անգամ (բայց քարը վնասված լինելով՝ պարզ չէ), Թալինի արձանագրության մեջ 4 անգամ (այստեղ էլ 2 րատ պարզ չէ): Բուժ նշանը ավելի երկար է Մաստարայի երկրորդ արձանագրության մեջ (երկու անգամ) և 2 րատ ավելի երկար՝ Խծկոնից (№ 20) արձանագրության մեջ:

2. Նույնը՝ միայն պոչը մի քիչ ներքև հակված՝ Մրենի արձանագրության մեջ (№ 6, տող 3-րդ) և Կեշառույքի արձանագրության մեջ (№ 21), գրեթե հունարեն Շ տառի ձևով:

3. Նույնը՝ գլուխը բուժի տեղ կեռ անցկացրած, գրեթե այս շ ձևով: Մրենի արձանագրության մեջ՝ տող 3-րդ:

4. Գլուխը ուղիղ՝ ճիշտ ինչպես արաբերեն Շ, Մաստարայի առաջին արձանագրության մեջ (տող 3-րդ), Արտավազդ Կամսարականի տապանագրի մեջ, գրեթե նույնպես և Արուճի արձանագրության մեջ (№ 12):

5. Գլուխը ավելի ձևավոր և պոչը կետով վերջացած, շ ձևով (տե՛ս Արուճի արձանագրության մեջ՝ № 9, երկու անգամ):

6. Բուժ նշանը մեծ և անջատ դրված, տառի տակը կեռ պոչով՝ իբր Շ՝. այս ձևը գտնում ենք երկու անգամ Կեշառույքի № 18 արձանագրության մեջ:

7. Ճիշտ բոլորգիր Ղ ձևով, ինչպես գտնում ենք Թալինի Ուխտատուր վանականի արձանագրության մեջ (№ 11, տող 5-րդ):

8. Դ ձևով, առանց գլխի, պոչը կեռ և ամբողջը հակառակ դիրքով՝ դեպի ձախ դարձած, գտնում ենք մեկ անգամ 901 թվի արձանագրության մեջ (№ 13):

9. Վատ դրված Պ տառի ձևով, միայն կեռ կտուցը ավելի տկար և փոքր ավելի կլորած, գրեթե այսպես՝ Շ: Մեկ անգամ գտնում ենք գործածված Հավուց Թառի 1081 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 22):

10. Առանձին ձև ունի էջմիածնի արժաթե պահարանի արձանագրության մեջ՝ 1300 թվականից (Շողակաթ, № 28), մի քանի անգամ գրեթե այսպես Շ կամ Շ:

Այս բոլորի մեջ հիմնական և ավելի գործածական ձևը մնում է առաջինը, որի մասն արաբերականներն են № 2—6, իսկ մյուսները՝ բացառիկ ձևեր:

Այս տառը քիչ է պատահում: Առաջին անգամ գտնում ենք Հռիփսիմեի արձանագրության երկրորդ տողի մեջ, բայց կտրամ լինելով՝ շատ պարզ չէ: Այնուամենայնիվ թվում է, թե սովորական **Չ** ձևն ունի: Երկրորդ անգամ գտնում ենք Արտավազդ Կամսարականի տապանի արձանագրության մեջ՝ բոլորովին մանզաղի ձևով, այսպես՝ **Չ**, նույնն է նաև Արուսի **№ 12** արձանագրության մեջ: Սովորական ձևն ունի Կելառույքի **№ 18** և **21**, Խժկոնից **№ 20** արձանագրությանց մեջ և այլն:

### Ջ

Մեր տառերի մեջ ամենից բարդ ձևն ունի և շատ էլ քիչ է պատահում: Առաջին անգամ գտնում ենք Արուսի ս. Գրիգոր Եկեղեցու արձանագրության մեջ՝ 867 թվից (Շողակաթ, **№ 12**), երկու անգամ: Առաջինը պահում է միայն տառի գլուխը՝ արդի ձևով, միայն բոլորովին դեպի աջ թեքված (**Չ**), իսկ երկրորդը բավական անշնորհք ձևով, երկու կորուսյունները իրարից հեռու մնացած և կողքից պոչով՝ որ շատ պարզ չի տեսնվում: Ավելի պարզ է Խժկոնից արձանագրության մեջ (Շողակաթ, **№ 20**), մեկ անգամ գրեթե այս **Չ** ձևով, միայն ամբողջը դեպի աջ դարձած: Նույնը, բայց պոչը փոխանակ ներքև ծնելու, սիրուն ոլորքով վերև բարձրացած, այս ձևով՝ **Չ**: Այսպես ենք գտնում Կելառույքի արձանագրության մեջ (Շողակաթ, **№ 21**) երեք անգամ: Նույն արձանագրության մեջ երկու անգամ էլ ունենք բոլորովին ուղիղ պոչով, որ դեպի աջ և դեպի ձախ է երկարում, ճիշտ ինչպես **Չ** (**դ**) տառի պոչը: Վերջապես էջմիածնի արծաթե պահարանի արձանագրության մեջ (1300 թվից, Շողակաթ, **№ 28**) այսպիսի զարդարուն ձևով՝ **Չ**:

### Պ

Իր հնագույն շրջանում այս տառն ունի Ա ձևը. այսպես է Չիթինյաց լեռան արձանագրության մեջ երկու անգամ (տող մեկ և 5), Մրենի 637 թվի արձանագրության մեջ (**№ 6**), տող 1 և այլն: Այս ձևով գրված **Պ** անպատահելի շուրջը շփոթվելու **Պ** տառի հետ, որովհետև նույն ժամանակ **Պ** տառը իր երկու սյունների միջև մի մահիկ էլ ուներ և միանգամայն պոչը դեպի վեր դարձած էր: Ավելի հետո սկսեցին **Պ** տառի առաջին սյունը կարճացնել և մի քիչ վերեվից կպցնել երկրորդին, որով առաջացավ մեր արդի **Պ** ձևը: Մրա

սկզբնավորութիւնը տեսնում ենք արդեն Ձիթենյաց լեռան արծա-  
նագրութեան 4-րդ տողի մեջ, ուր թեև դեռ սյունները հավասար են,  
բայց պոչը արդեն մի քիչ ցածրից է առնված: Վ գրի այս ձևափո-  
խութիւնը անշուշտ կապ ունի Յ գրի ձևափոխութեան հետ. քանի  
սրա մահիկը կրճատվեց և պոչը ցած կախվեց, բնականաբար այն-  
քան էլ երկու գրերի նմանութիւնը ավելացավ. ուստի շփոթութիւ-  
նից խուսափելու համար՝ Վ գրի ձևն էլ փոխվեց: Արդի աստիճանին  
հասած ենք գտնում Հռիփսիմեի արձանագրութեան 4-րդ տողում և  
Թալինի 901 թվի արձանագրութեան մեջ (Շողակաթ, № 13, տող 1):

## §

Արդի ոճով այս տառը ոլորուն ձև ունի. հնագույն ժամանակնե-  
րում ունեւր Մ ձևը, որ շատ նման է մեր արդի Մ տառին, բայց հնա-  
պես շփոթութեան երկյուղ չկար, որովհետև մենք տառի առաջին  
սյունը երկար էր, իսկ Խրեմբը՝ կարճ, միևնույն ժամանակ մեքի թէլը  
հորիզոնական էր, իսկ Խրեմբը՝ վայրահակ: Այսպես ենք գտնում  
§ տառը Ձիթենյաց լեռան արձանագրութեան մեջ (տող 7), Տեկորի  
արձանագրութեան մեջ (տող 1, 2), Հռիփսիմեի արձանագրութեան  
մեջ (տող 1, 4) և այլն:

Խնդիր է, թե երկու տեսակ §-երից որն է իսկապես ավելի հին,  
ուղղագիր՞ ծը, թե՞ ոլորունը: Եթե ուղղագիրն է, հապա ինչպե՞ս է, որ  
ավելի ուշ գտնում ենք ոլորուն §, բայց էլ ավելի ուշ էլ՝ բոլորգիր  
ա, որ ուղղագծի շարունակութիւնն է: Իսկ եթե ոլորունն է հնա-  
գույնը, ինչո՞ւ հնագույն արձանագրութեանց մեջ գտնում են ուղղա-  
գիր ձևը: Նկատի ունենանք նաև տառի ծագումը, որ, ինչպես վերը  
տեսանք, սասանյան § ձևից լինելով, ավելի ուղղագծին է հարմար,  
քան ոլորունին:

Ըստ իս տառի հնագույն և նախնական ձևն էր ոչ ոլորուն և ոչ  
ուղղագիր, այլ թեք, այսինքն՝ վերի մասը դեպի ձախ և վարի մասը  
դեպի աջ հակված դիրք ունեւր: Այսպիսի թեք ձևով գտնում ենք Թա-  
լինի 630 թվի արձանագրութեան մեջ (Շողակաթ, № 5, տող 1 և 4),  
Արտավազդ Կամսարականի տապանի վրա (Շողակաթ, № 10) և մի  
խումբ հին ձեռագրերի մեջ. ինչպես՝ էջմիածնի № 311 ձեռագրի մեջ  
(1066 թվից, նմանահանութիւնը տե՛ս Շողակաթ, № 54), Տաշյանի  
Ցուցակում՝ էջ 1048, տախտակ Ա., № 1, ուր երկու գլխատառ S կա,  
երկուսն էլ թեք, և այլն: Թեքութիւնը անորոշ ձև է. ուստի ավելի  
հետո տառը ստացել է երկու որոշ ուղղութիւն, կամ ոլորուն, որով  
առաջացավ § ձևը, և կամ բոլորովին ուղիղ, որով առաջացավ Մ ձևը:

Այս տառը 3 գրին շատ նման է. հնագույն վիճակում գրեթե 3  
 ձևն ունենք, որով երկուսի տարբերությունը այն էր, որ յ տառի գլու-  
 խը մեծ էր, իսկ ց-ինը փոքր ու կարճ. միևնույն ժամանակ մեջտեղի  
 գիծը յ-ի մեջ ծայրին մի կնտ ունենք կամ առառավելն ուղիղ մնում  
 էր, իսկ ց-ի մեջ նույն գիծը դեպի վերև էր կորանում: Այսպես է Ձի-  
 թենյաց լեռան արձանագրության մեջ: Տեկորի արձանագրության  
 երկրորդ տողում Հայոց բառի մեջ երկու տառերն էլ կան. բայց այս-  
 տեղ ց-ի գլուխը այնքան փոքրացած է, որ մանր և բոլորովին փակ  
 մի կլորակ է ձևացնում, իսկ յ-ի գլուխը մեծ և բոլորովին լայն բաց-  
 ված է: Կա նաև ց տառի ավելի պարզ մի ձև, որի մեջ տառի գլու-  
 խը պարզ մի կլորակ է՝ առանձին ու անջատ կանգնած, իսկ նրա  
 տակն էլ երկրորդ կլորակն է՝ իր վերև դարձակ թևով, իբր Յ: Այս  
 ձևն ունի Հոհփսիմեի արձանագրությունը 4 անգամ, նույնպես և Ա-  
 բրուճի արձանագրությունը (№ 9, վերջին տող): Հմմտ. նաև Քալինի  
 արձանագրությունը՝ 783 թվից (№ 11, վերջին տող), ուր դարձել է  
 Ծ: Ծատ ուշ՝ Կիլիկյանց ժամանակ գտնում ենք տառիս տարօրինակ  
 մի ձևը, որ է **F**. այսպես ունենք Հեթում Ա թագավորի գրամի ար-  
 ձանագրության մեջ (տե՛ս Սիսուան, էջ 232): Ուրիշ տեղ այդպիսի ձև  
 գոյություն չունի:

### Թ

Հնագույն վիճակում այս տառը ՝ ձևն ունի, այսինքն ուղղա-  
 հայաց մի սլունի մեջտեղից դեպի աջ երկարած հորիզոնական մի  
 գծիկ. այսպես է օրինակ՝ Ձիթենյաց, Տեկորի, Անիի միջնաբերդի  
 (Շողակաթ, № 4), Քալինի (Շողակաթ, № 5), Մրենի (№ 6) արձա-  
 նագրության մեջ և այլն: Տառիս այս ձևը ավելի լավ էր, քան արդի  
 ձևը, որովհետև բնավ չէր կարող շփոթվել **Թ** տառի հետ, որի թևը  
 ցած է կախված: Իսկ **Թ** տառի ցած կախված թևը, ինչպես գտնում  
 ենք արդի գեղագրության մեջ, առաջացել է ավելի հետո՝ վայրա-  
 հակության օրենքով: Տառիս նախնական ձևը շատ համապատաս-  
 խան է իր ծագմանը: Արդարև վերը տեսանք, որ **Թ** առաջանում է  
 հունական **ϑ** ձևից, որ **Υ** գրի հնագույն ձևն է. հունարենի մեջ թևը  
 ցած կախված չէ, ուստի և ավելի համաձայն է հայերենի ուղղագրի  
 թևին:

Հնագույնը արդի ձևից այն տարբերութիւնն ունի, որ միջին գիծը ուղիղ է, այսպես՝ **Ք**: Այս ձևով գտնում ենք առաջին անգամ Հռիփսիմեի արձանագրութեան մեջ (1 անգամ), հետո Մաստարայի երկու արձանագրութեանց մեջ (**№ 7** և **№ 8**)՝ մի քանի անգամ: Միջագծի երկու կողմ թեքունները շատ ավելի հետո առաջացել են վայրահակութեան օրենքով, այսպես՝ **Բ**:

Տառիս համար արձանագրութեանց մեջ գտնում ենք մի քանի բացառիկ ձևեր էլ, որոնք սակայն ընդհանուր գործածութիւն չեն ստացել. այսպես՝

1. **Ք**, այսինքն դեպի աջ դարձած **Ք** ձևը, որ գտնում ենք մեկ անգամ գործածված Կեչառույքի 1051 թվի արձանագրութեան մեջ (**№ 21**, տող 6, երէ ու):

2. **Բ** ձևով, այսինքն՝ տառի զլխի կտրակը ետ քաշած և դարձրած **Ն** գրի կտուցի նման. այսպես ենք գտնում մեկ անգամ էջմիածնի բճրի արձանագրութեան մեջ (1232 թվից. նմանահանութիւնը տե՛ս Շողակաթ, **№ 27**):

3. **Ք**, այսինքն՝ զլուխը փոխանակ դեպի աջ դարձնելու՝ դեպի ձախ դարձած: Այս ձևով գտնում ենք մեկ անգամ նույն տեղում:

4. **Բ**, այսինքն՝ առանց զլխի և վայրահակ թեքում. մեկ անգամ գտնում ենք դարձյալ նույն տեղում:

Այս շորս ձևերն էլ, ինչպես ասացինք, բացառիկ բաներ են և փորագրողի սխալման կամ տգիտութեան արդյունք. առաջինը պարզապես սխալմունք է, որովհետև նույն արձանագրութեան մեջ կան մի քանի ուրիշ **Ք**-եր, միշտ կանոնավոր ձևով. միայն այն մեկն է, որ ունի աջ դարձած **Ք**-ի կերպարանքը: Գալով մյուս երեքին, սրբանք իրոք տգիտութեան արդյունք են. փորագրիչը ամբողջ արձանագրութեան մեջ երեք անգամ պետք է ունեցել **Ք** փորագրելու և երեքն էլ տարբեր ձևերով է փորագրել:

\* \* \*

Գլխագիր երկաթագրի բնորոշ հատկանիշն է, ինչպես ասացինք, կորած և կամարը. սա գծագրական տեսակետով պահանջում էր ձեռքի առանձին ճարտարութիւն, հետևաբար ավելի դժվար էր: Թե՛ դլորութեան և թե՛ ավելի արագ գրելու համար՝ մարդիկ ինքնաբերաբար շատ անգամ կորութիւնները ավելի անփուլթ էին գրծում, որով գրեթե ուղիղ մի գիծ էր ձևանում: Սրանով քիչ-քիչ ա-

առաջացավ հայերեն գրերի երկրորդ տեսակը, որ կոչվում է միջին-մեսրոպյան երկաթագիր:

Միջին-մեսրոպյան երկաթագիր այբուբենը հետևյալն է.

Ա Բ Գ Դ Ե Չ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ  
Կ Ն Ղ Ճ Մ Յ Ն Ը Ո Չ Պ Հ  
Ռ Ս Վ Մ Դ Յ Ի Ժ Ը Օ Ֆ

Այս տեսակ գրութայան ամենահին հիշատակարանն էմ կարծում Ջիվանշիրի Մեծշեն գյուղի մագաղաթյա ավետարանը, որ գրված է 909 թվին: Գարեգին վրթ. այս գրությունը համարում է «բոլորածն երկաթագիր» (Շողակաթ, էջ 188), բայց ուշադիր աչքը պիտի տեսնե, որ գրությունը շատ խառն է: Արդարև կան բազմաթիվ գլխագիր երկաթագիր տառեր, բայց կան նաև միջին-մեսրոպյան տառեր: Այսպես՝ հայտնապես միջին-մեսրոպյան են՝ առաջին տողի 13 տառերի մեջ Տ (երկիցս), Ո (երկիցս), Ի, Բ, Ի, երկրորդ տողի 14 տառերի մեջ՝ Բ (երկիցս), Բ (երկիցս), Ո, Վ (մի մի անգամ): Կան տառեր, որ մերթ բուն երկաթագիր են, մերթ՝ միջին-մեսրոպյան. այսպես՝ Բ տառը երկրորդ տողի մեջ միջին-մեսրոպյան է, մինչդեռ չորրորդ տողի մեջ հայտնապես բուն երկաթագիր է և այլն: Կան տառեր էլ, որ այնպիսի մի վիճակ ունեն, որ չի կարելի ասել, թե որ տեսակին են պատկանում. այսպես՝ առաջին տողում Ծ տառը տակից կամարով է, բայց թևը միջին-մեսրոպյան է: Ա-երը առհասարակ միջին-մեսրոպյան են և այլն:

Այս ձևագրից հետո գալիս են ավելի նորերը. այսպես՝ էջ-միածնի № 2684 ձևագիրը, 973 թվից (Շողակաթ, № 37), որ լիովին միջին-մեսրոպյան է, Ախալցխայի Մղրութ գյուղի ավետարանը՝ 974 թվից (Շողակաթ, № 38), որի հիշատակարանն է միայն միջին-մեսրոպյան երկաթագիր, մինչդեռ ամբողջ գիրքը բուն մեսրոպյան գլխագրով է (տե՛ս Շողակաթ, № 39), Ալեքսանդրոպոլի (այժմ Լենինական) «Ամենափրկիչ» կոչված ավետարանը՝ 988 թվից (Շողակաթ, № 40), որ թեև բուն երկաթագիր է, բայց տեղ-տեղ

<sup>1</sup> Այս ավետարանի հիշատակարանն է միայն ծանոթ. խաչիկ վրթ. Գաղանդ կտրել հասել է նույն հիշատակարանը, և նմանահետմիջուն էլ հրատարակված է Շողակաթում (№ 35): Խաչիկ վարդապետի ցավալի սովորությունն էր կտրել հասել մագաղաթյա հիշատակարանները այն ձևագրերի միջից, որոնք ամբողջապես յուրացնել չէր կարող: Այսպիսով թե՛ ձևագրերն էին գրվում իրենց արժանիքից, և թե հանված հիշատակարանները:

ունի միջին-մեսրոպյան տառեր (ինչպես՝ 11-րդ տող, ք, ո, լ տառերը), էջմիածնի փղոսկրե ավետարանը՝ 989 թվից, որ թեև բուն երկաթագիր է (Շողակաթ, № 41), բայց Նահաբիտի և Կարպիանոսի թղթերը միջին երկաթագրով են (Շողակաթ, № 42), էջմիածնի № 323 ավետարանը՝ 1044 թվից, որի մեջ բնագիրը բուն երկաթագիր է, իսկ հիշատակարանը՝ միջին-մեսրոպյան երկաթագիր (Շողակաթ, № 49), էջմիածնի № 988 Ճառընտիրը՝ 1045 թվից, որ թեև բուն երկաթագիր է, բայց հիշատակարանը՝ միջին երկաթագիր (Շողակաթ, № 50), էջմիածնի № 3784 ավետարանը՝ 1057 թվից, որ թեև ամբողջապես միջին երկաթագիր է, բայց ունի նաև մի քանի հատ բուն երկաթագիր տառեր (տե՛ս Շողակաթ, № 53, սյունակ առաջին, տող 7-րդ, և և տառերը): Չենք հիշում ավելի նոր ձեռագրերը:

Փոքրի կեսից հետո սկսվում է խառնակ մի վիճակ. գրության զանազան տեսակներ իրար դիմաց են դուրս գալիս. մի կողմից բուն երկաթագիրն ու միջին-մեսրոպյան երկաթագիրը իրար մըրցակից են կանգնում, մյուս կողմից թղթի խնայողության կամ դյուրատար գրքեր ունենալու պահանջը ստիպում է հետզհետե փոքրացնել խոշոր տառերը, վերջապես երբորդ կողմից արագագրության կամ գրերի զարգացման բնական պահանջը մղում է գրիչներին՝ ձեռփոխելու տառերը և ավելի դյուրագիծ ու մաշված ձևեր հնարելու: Ահա այս երեք կարգի ձգտումների խառնուրդից առաջ են գալիս տեսակ տեսակ այբուբեններ, որոնք կարող ենք դասավորել հետևյալ ձևով.

ա) Փոքր երկաթագիր կամ փոքր-մեսրոպյան երկաթագիր. — սա միջին-մեսրոպյան գրերի ավելի փոքրացածն է, որի հնագույն օրինակը ավանդված է մեզ 989 թվին գրված փղոսկրյա ավետարանում: Սա բուն երկաթագրով է, բայց տողերի վերջավորությանց մեջ գրիչը խուսափելով տողադարձից՝ շատ անգամ տառերը ավելի մանրագիր է գրել բուն երկաթագիր տառերի կողքին կամ վերևը (նմանահանութունը տե՛ս Շողակաթ, № 41): Նույն ձևագրի վերջում կա մի ավետարանացույց, որ ամբողջապես փոքր երկաթագրով է, և որի նմանահանութունը տե՛ս Շողակաթ, № 44:

բ) Անցման գիր, որ, ինչպես անունը ցույց է տալիս, միջին աստիճանն է փոքր երկաթագրի և բոլորգրի, և ըստ այսմ ներկայացնում է զանազան ձևեր. սրա մեջ երբեմն փոքր երկաթագիրն է, որ տիրապետող է հանդիսանում, երբեմն՝ բոլորգիրը. սակայն քանի ուշ, այնքան ի նպաստ երկրորդի: Անցման գրի մեջ է, որ առաջին անգամ երևան է գալիս եռաձյուղ ա ձևը: Ահա անցման գրերով այբուբենի երկու օրինակ:



Է Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ  
Կ Տ Զ Դ Ճ Խ Յ Զ Ո Չ Պ Ղ Ռ Ս Վ  
Տ Բ Յ Փ Ք

ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Տ  
Ճ Դ Յ Ն Է Ո Չ Պ Ղ Ռ Ս Վ Տ Բ Գ Դ Փ Ք

Այս գրի հնագույն օրինակն ունենք 971 թվին գրված մի ժողովածուի մեջ (Ձեռ. էջմիածնի, N 2679, Կմանահանությունը տե՛ս Շոշակաթ, N 36): Սրանից հետո գալիս են Գիզակ գազառի Տոր գյուղի ճաշոցի մի կտորը՝ 1040 թվականից (Շոշակաթ, N 48), էջմիածնի N 1214՝ Մեկնութիւն Եսայիայ ձեռագիրը՝ 1118 թվականից (Շոշակաթ, N 60), էջմիածնի N 1890՝ Եղիշէի ձեռագիրը՝ 1174 թվականից (Շոշակաթ, N 62) և այլն:

գ) ԲՅՈՂԳԻՐ, որ անցման այն խառնակ շրջանի վերջին հանգրվանն ու նզրակացությունն է: Սրա հնագույն օրինակն ունենք 999 թվից՝ Կոպովիտում գրված Պողոսի թղթերի Մեկնության հիշատակարանում (Կմանահանությունը տե՛ս Այրարատ, էջ 498 և Տաշյան, Ակնարկ, էջ 68): Սրանից հետո գալիս են էջմիածնի N 229 ավետարանը՝ 1033 թվից, որ նրկրորդ հնագույն բոլորգիր ձեռագիրն է (ըստ Տաշյան, Ակնարկ, էջ 83), էջմիածնի N 1330 Մեկնություն Գործոց Առաքելոց՝ 1076 թվից, էջմիածնի N 338 ավետարան՝ 1111 թվից, Ս. ներսեսի կամբրոնացու հիշատակարանը՝ 1175 թվից (Կմանահանությունը տե՛ս Սիսուան, էջ 87) և այլն: Այնուհետև արագությամբ զարգանում է այս գիրը և ստանում է վայելուչ ու կանոնավոր ձև, որ և այսօր էլ մեր տպագրության սովորական գիրն է: Ունի զանազան աստիճաններ, ամենից խոշորից սկսած մինչև շափազանց մանրը, որոնք սակայն տառաձևերի կողմից բնավ տարբերություն չեն ներկայացնում, և հետևաբար ավելորդ ենք համարում օրինակներ դնել նրանցից:

Ինչպես որ փոքր նրկաթագիրը միջինի բնական հետևությունն է, նույնպես և բոլորգիրը փոքր նրկաթագրի բնական հետևությունն է: Երբ զրեքը գրվին բավական փոքր և սյունների կապակցությունները դառնան ուղիղ գծեր, բնականաբար կստացվի բոլորգիր: Օրինակ՝ Ո—Ո—Ո—Ո կամ Պ—Պ—Պ—Պ—Պ—Պ—Պ—Պ և այլն: Այն տառերը, որոնք իրենց զարգացման ընթացքում տարբեր ձևեր են ստացել, պիտի ուսումնասիրենք ավելի հետո: Բայց բոլորգիրն էլ երբ արագ գրվի, հայերեն գրության ձախից աջ ուղղության պատճառով տառերն էլ կակսեն իրենց ուղղահայաց գիրքը կորցնել և ավելի աջ հակվել:

Միևնույն ժամանակ, տառերի փոքրութեան պատճառով, դժվար է այլևս տառասյունների կապերը ճշտիվ հորիզոնական դիրքով գծել և ուղիղ անկյուններով սյուններին կցել: Վերջապես արագ գրելու և ժամանակի խնայողութեան պահանջը ստիպում է տառասյունները անջատ-անջատ և նրանց կապերն էլ առանձին չգծել, այլ աշխատել ամբողջ տառը միասին մեկ շարժումով հանել: Այս պայմանների միացումից առաջ են գալիս նոտրագիրն ու շղագիրը<sup>1</sup>, որոնք ըստ իս ուրիշ բան չեն, եթե ոչ միևնույն բոլորգրի նոր երանգները<sup>2</sup>, գրչածաղրի հաստութիւնից կամ բարակութիւնից առաջացած և մասամբ՝ էլ, ինչպես կարծում եմ, գրիչը դեպի աջ դարձրած թե ուղիղ կերպով թղթի վրա հաստատած լինելուց:

Ահավասիկ այս այբուբենների շարքը.

բոլորգիր՝

ա բ գ դ ե չ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ

նոտրագիր՝

ա բ գ դ ե չ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ

շղագիր՝

ա բ գ դ ե չ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ

Շղագրի հնագույն օրինակն ունենք 1099 թվից: Այս թվին գրված միջին-մետրոպոլիս երկաթագիր մի ավետարանի (Ձեռ. էջ-միածնի, № 288) հիշատակարանը գրված է մի տեսակ բոլորգրով, որ մոտենում է շղագրին: Այս մասին տե՛ս Շողակաթ, էջ 194. զըժ-բախտաբար Գարեգին վրդ. նմանահանութիւն լի դրել այս կարևոր հիշատակարանից: Ավելի հետո՝ 1159 թվից, ունենք շղագրի մի պատառիկ (Ձեռ. էջմիածնի, № 2684, նմանահանութիւնը տե՛ս Շողակաթ, № 63), 1193 թվականից «խսկական շեղագիր» գրութիւն՝ ըստ հիշատակութեան Գարեգին վարդապետի (Շողակաթ, էջ 195), 1201 թվից մանր մի հիշատակարան բոլորգրով խառն շղագիր (Ձեռ. էջ-

<sup>1</sup> Բուն բառն է շղագիր, այսինքն՝ շլուղով, բարակ ծայրով գրված, ավելի հետո՝ սխալ ստուգարանութեամբ դարձրել են շեղագիր, իբր թե գրերի շեղ դիրքի պատճառով այսպես կոչված լինի:

<sup>2</sup> Տաշյան (Ակնարկ, էջ 75), հակառակ ընդհանուր կարծիքի, նույնպես ընդունում էր, որ շղագիրը նոտրից չէ, այլ բոլորգրից: Նույնիսկ էջ 193 հիշում է Օշինի 1314 թվի պարզակազիրը, որ շղագիր լինելով հանդերձ, ցույց է տալիս, թոր բոլորգրէն ծագած է արագ ու դյուրաձև գրելու հիգ ընելին զարգացած:

Միածնի, N 3793, նմանահանությունը տե՛ս Շողակաթ, N 70), 1211 թվից բանվարժ շեղագրով՝ մի հիշատակություն (Ձեռ. էջմիածնի, N 2877, նմանահանությունը տե՛ս Շողակաթ, N 71), 1241 թվականից Մմբատ Գունդատարլի մեկ հիշատակարանը (նմանահանությունը տե՛ս Սիսուան, էջ 71—72), 1244 թվից Եուլն անձի մեկ ուրիշ հիշատակարանը (նմանահանությունը տե՛ս Շողակաթ, N 80) և այլն:

Սրանցից ավելի հին է երևում էջմիածնի N 2877 ավետարանի մեկ հիշատակարանը նոր շղագրի նման, Ժ—ԺԱ դարից, ըստ Գարեգին վարդապետի (Շողակաթ, էջ 191), որի նմանահանությունն ունի Շողակաթ, N 46: Այս թվականը ստույգ է երևում, բայց մենք վերապահությամբ ենք հիշում. ըստ որում շենք ուզում հիմնվել այն ձեռագրերի վրա, որոնց թվականը կամ տարեթիվը մնուպես ստույգ չէ: Բայց կարող ենք տեսնել, որ Կոզովտի 999 թվի ձեռագրում, որ ընդհանրապես բոլորգիր է, շատ անգամ տառերը շղագրի երևույթ ունեն: Նույնպես 1034 թվին գրված մի ավետարանի հիշատակարանը, որ ընդհանրապես բոլորգիր է, շատ տեղ շղագրի կերպարանք ունի (նմանահանությունը տե՛ս Ակնարկ, էջ 189): Հիշենք դարձյալ Սարգիս Սանահնեցու բոլորգիր հիշատակարանը 1041 թվից (նմանահանությունը տե՛ս Շիրակ, էջ 50 և Ակնարկ, էջ 72), որի մեջ խառն գտնում ենք նաև զուտ շղագրի տառեր: Վերջապես 1057 թվականից պարզ հասարակ մի լուսանցագրություն «շեղագիր» տառերով՝ ըստ Գարեգին վարդապետի, էջմիածնի N 3784 ավետարանում (տե՛ս Շողակաթ, էջ 193, բայց առանց նմանահանության):

Նոտրագրի մասին, որ նվազ կարևոր և ավելի քիչ ուսումնասիրված է, շենք կարող ավելի հաստատ խոսել: Առհասարակ համարվում է ծագած ԺԳ—ԺԿ դարերում: Ամենահին հիշատակարանն էմ կարծում 1291 թվին գրված Կաթուղիկեայց Մեկնութեան մի հիշատակարան (նմանահանությունը տե՛ս Սիսական, էջ 131), որ թեև բոլորգիր է, բայց ունի բազմաթիվ նոտր ձևեր: Այսպես է նաև 1298 թվին գրված Պիտոլից գրքի հիշատակարանը (նմանահանությունը տե՛ս Սիսական, էջ 133), որ թեև բոլորգիր է, բայց ունի բազմաթիվ նոտր ձևեր: Սրանից հետո գալիս են էջմիածնի N 902 ճառընտիրը՝ 1313 թվից, էջմիածնի N 3793 ձեռագրի հիշատակարանը՝ 1346 թվից (Շողակաթ, N 134), էջմիածնի N 1086, Մեկնութիւն Հինգ գրոցն Մովսէսի՝ 1420 թվից, Ազուլեայց Պատմութիւն Ս. Թէոդորոսի՝ 1436 թվից (նմանահանությունը տե՛ս Սիսական, էջ 326) և վերջապես ավելի նորերից Չեյթունում գրված Գիրք Չեռնաղրութեան՝ 1596 թվից (նմանահանությունը տե՛ս Սիսուան, էջ 185), որ բոլո-

րովին նոտր է, բայց ունի ինչ-ինչ տառեր, որոնք դեռ բուրգրի նը-  
մանութիւն ունեն, ինչպես ք դ մ հ փոխանակ լինելու ք գ մ հ:

Շղագրի վերջին ձևափոխութիւններն են արդի ձևագիրն ու  
արամյան գրերը: Առաջինը ծանոթ է ամենքիս իր առօրյա գործա-  
ծութեամբ և տեղից տեղ ու շատ անգամ անձից անձ առանձին նըր-  
բութիւններ է ընծայում, համաձայն գեղարվեստական ճաշակի,  
վայելչագրութեան դրութեան և գրչի արագութեան: Իսկ Արամյան է  
կոչվում այն մի տեսակ տպագրական շղագիրը, որ 1860-ական թը-  
վերին հորինեց նշանավոր տպարանատեր Ճանիկ Արամյանը՝ եվ-  
րոպական տառերի հետևողութեամբ և տեղ տեղ էլ նրա ձևերն օրի-  
նակելով:

Ահա այս այբուբենը.

ա բ գ դ ե զ է ը ք ժ ի լ խ ծ կ ճ ձ ղ

Այս բուրից դուրս են զարդագրերի զանազան տեսակները,  
որոնք հնագրութիւնից ավելի գեղարվեստի պատմութեանն են  
պատկանում: Սրանք իրենց ներկայացրած պատկերի համեմատ՝  
կրում են զանազան անուններ. ինչպես՝ թռչնագիր կամ ձագագիր,  
գազանագիր կամ կենդանագիր, ձկնագիր, մարդագիր, ծաղկագիր,  
փառագիր: Հնագույն արձանագրութիւններն ու ձևագրերը զուրկ  
են այս կարգի գրերից: Ավելի ուշ ծաղկում է այդ արվեստը: Մինչև  
այժմ հրատարակված նմուշներից հիշենք մի քանի հնագույնները.

1. Երուսաղեմի № 2555 ավետարանի առաջին էջի կետերով  
պճնված զարդագրերը, Ը—Թ դարից?, նմանահանութիւնը՝ Շողա-  
կաթ, № 33:

2. Գրիգոր Տուտէորդու ձևագրի զարդագրերը, 1154 թվից.  
նմանահանութիւնը տե՛ս Այբարատ, էջ 167:

3. Էջմիածնի № 2589 ավետարանի ծաղկագրերը, 1200 թվից  
նմանահանված Շողակաթում, № 69:

4. Իգնատիոս գրչի գեղեցիկ նկարազարդ ավետարանի զար-  
դագրերը, 1214 թվից. նմանահանութիւնը տե՛ս Այբարատ, էջ 356:

5. Պայաս գրված Մաշտոցի մեծ ձագագրերը, 1216 թվից, նը-  
մանահանութիւնը տե՛ս Սիսուան, էջ 415:

6. Անիի ս. Գրիգոր եկեղեցու ճակատի ծաղկագիր արձանա-  
գրութիւնը, ԺԳ դարից. նմանահանութիւնը տե՛ս Շողակաթ, № 24:

7. Երուսաղեմի № 2563/2568 ավետարանի գեղեցիկ թռչնագր-  
երը, 1272 թվականից, նմանահանութիւնը տե՛ս Շողակաթ, № 91:

8. Էջմիածնի № 979 թագավորական Ճաշոցի ձկնագրերը,  
1288 թվից. նմանահանութիւնը տե՛ս Շողակաթ, № 102:

9. Ամադուի Բուրթելաշեն եկեղեցու նըբահյուս ծաղկագիր ար-

ձանագրութիւնը՝ ժԻ դարձց. Եմանահանութիւնը տե՛ս Շողակաթ,  
N 24:

Նոր և նորագույն ժամանակներս կազմվեցին բազմատեսակ  
զարդագրեր, որոնց թիվը անվերջ է, և նորանոր տիպի գրեր՝ հվ-  
րոպական արվեստի հետևողությամբ, որոնցից հիշատակության  
արժանի են գոթական գրերը, դեկադանս և ֆուտուրիստական գրե-  
րը: Առաջինը զուտ գոթական արվեստն է հայերենի հարմարեցրած  
և կայանում է ուղիղ և կոր գծերը բեկյալ գծերով դուրս բերելու մեջ.  
Ինչպես՝

ա բ գ դ ե զ է ը թ փ ի յ խ ծ փ

Երկրորդը կայանում է տառերի ուղղահայաց և հորիզոնական  
համադիր սյունները գրեթե կիսակլորակ ձևերի վերածելու մեջ, որոնք  
աչքի համար նորօրինակ հրատույր են ընծայում. ինչպես՝

Յ Գ Թ Ե Բ Գ Ի Կ Լ Ը Զ Ա Ս ՈՅ Ի Լ Պ Ի

Վերջապես երրորդը արվեստի մի նոր ըմբռնողութիւն է՝ այ-  
լանդակության վերածված, որ և հազիվ սկսած՝ դադարեց:

Ամբողջության համար պետք է հիշել փակագիրը, որ մի տե-  
սակ սղագրութիւն է և կայանում է իրար հաջորդող երկու տառերի  
նման գծերը իրար միացնելով՝ մեկի վերածելու մեջ: Օրինակ՝ Ա և Բ  
տառերը միացնելու համար կարող ենք Ա-ի աջակողմյան սյունի  
վրա ավելացնել երկու թև ևս, մեկը սյունի վերի ծայրում, մեկն էլ  
մեջտեղում. և այսպես կազմված եռաթև Ա-ն կլինի Ա—Բ գրերի  
փակագիրը: Փակագիրը գործածված է հատկապես արձանագրու-  
թյանց մեջ՝ տեղի և աշխատանքի խնայողության համար: Հնագույն  
օրինակը գտնում ենք Հոփսիմեի արձանագրության մեջ՝ 618 թը-  
վականից, ուր ունենք փակագիր ՄԻ, ՍԻ, ՄԷ վանկերը: Ավելի նոր  
ժամանակներում փակագրութիւնը այնքան մեծ ծավալ է ստանում,  
որ շատ անգամ ընթերցանությանն է խանգարում: Զեռագրերի մեջ  
սովորաբար շատ քիչ է պատահում. ամենասովորական ձևն է փա-  
կագիր «և», որ մինչև այժմ էլ կա և շարունակում է իր գոյութիւնը՝  
իբրև առանձին տառ, նույնիսկ տպագրական արվեստի մեջ: Վիեն-  
նայի Միթարյանները եղան, որ փակագրության այս վերջին մը-  
նացորդն էլ ջնջելով՝ սկսեցին գործածել անջատ ևս գրութիւնը, որ  
դժբախտաբար ամենուրեք ընդունելութիւն գտած չէ դեռ:

Մնում է մեզ որոշել գրի չուրաքանչյուր տեսակի ծագման ժա-  
մանակը: Սրա համար վերևում գրինք մեր ունեցած աղբյուրների

հնագույն թվականները. այսպես՝ գլխագիր երկաթագիրը 2 դարից սկսած, միջին-մեսրոպյան երկաթագիրը՝ 909 թվականից սկսած, փոքր երկաթագիրը 989 թվականից, անցման գիրը 971 թվականից, բոլորգիրը 999 թվականից, շղագիրը գրեթե նույն թվականից, նոտրագիրը 1291 թվականից: Սակայն փոքր-ինչ դատողություն բավական է ցույց տալու, թե այս թվականները սխալ են: Ամենից առաջ մեզ հասած բոլոր ձեռագրերը դեռ քննված, ունումնասիրված, մասնավանդ նմանահանությամբ ծանոթացված չեն: Երկրորդ, ինչպես Տաշյանը (Ակնարկ, էջ 55 և այլն) մանրամասն պարզում է, և մենք էլ հոգևածիս սկիզբը ակնարկեցինք, նույնիսկ եթե մեզ հասած բոլոր ձեռագրերը ծանոթացված ու քննված էլ լինեին, դարձյալ բավական չէին խնդիրը վերջնականապես որոշելու: Արդարև նրանք ուրիշ բան չեն, եթե ոչ պաշտոնական գրություններ, տեղական գործածության նպատակով, հետևաբար և՛ ըստ կարելիության խնամքով և լավագույն ջանքով գրված գրքեր: Անշուշտ հեղինակների սևագր-բությունը, առանին հաշիվները և այլն ավելի անփույթ և հասարակ ձևով գրված լինելով, նրանք միայն կարող էին գրերի զանազան տեսակների ծագման հնագույն թվականները որոշել: Մի պարզ ակնարկ բավական է այս բանը ապացուցելու համար: Վերջում տեսանք զանազան ձեռագրեր, որոնք գրված են գլխագիր կամ միջին-մեսրոպյան երկաթագրով, իսկ նրանց մեջ պատահած լուսանցագրությունները կամ հիշատակարանները ավելի հասարակ գրով (փոքր երկաթագիր, անցման գիր, բոլորգիր կամ շղագիր): Արդ՝ ահա այս կարգի հասարակ առօրյա գրվածքներն են, որ պակասում են մեզ և անշուշտ պիտի պակասեն իսպառ: Վերջապես՝ նույնիսկ իրերի բնական ընթացքը ցույց է տալիս, որ այդ թվականները սխալ են: Եթե անցման գիրը փոքր երկաթագրի և շղագրի բոլորգրի ավելի մաշված վիճակներն են, չեն կարող նրանցից ավելի հին կամ նույնիսկ ժամանակակից լինել: Մինչդեռ վերևի թվականների համեմատ անցման գիրը փոքր երկաթագրից 18 տարի ավելի հին է, իսկ շղագիրը բոլորգրին ժամանակակից:

Այս բոլորից այն է միայն հետևում, որ հիշյալ թվականները իրականից միշտ նոր են և պետք է դրանք դեռ ավելի ետ տանել, հատկապես փոքր երկաթագիրը 971 թվականից առաջ և բոլորգիրը 999 թվականից դեռ ավելի առաջ:

Խնդիր է, թե երկաթագրի երկու տեսակներից ո՞րն է ավելի հինը: Ընդհանրապես ընդունված է, թե բուն երկաթագիրը հնագույնն է, որ և Մեսրոպի հնարած հայերեն գիրն է: Այսպես են ցույց տալիս նաև վերը մեր հիշած թվականները, ինչքան էլ որ նրանք ուշ մնացած թվականներ լինեն: Բայց Տաշյանն իր Ակնարկի մեջ կաս-

կած է հայտնում սրա մասին. «Ավելի ենթադրություն մըն է տակա-  
վին, ասում է էջ 63-ում, այն կարծիքը՝ թե հայոց բուն հին տառերը  
կամ՝ ըսենք Մեսրոպայ հնարածը միայն զլիազիր երկաթագիրն ըլ-  
լայ: Տաշյանը իբր օրինակ է դնում ասորիններին, որոնք ունեն եր-  
կու տեսակ գիր, էսթրանգելո և յակորիկ. առաջինը համապատաս-  
խանում է մեր միջին-մեսրոպյան երկաթագրին, երկրորդը՝ մեր  
բոլորգրին: Առաջ կարծվում էր, թե այս երկու գրերը տարբեր ժա-  
մանակի ծնունդ էին և թե վերջինը ավելի հետո հնարված էր, քան  
առաջինը: Թայց այժմ հաստատված է, որ երկու տեսակ գրերն էլ  
միաժամանակ հավասարապես գործածական էին Ե դարում,  
միայն առաջինը՝ պաշտոնական գրությունց մեջ, երկրորդը՝ առանին  
հարաբերությանց մեջ: Տաշյանը ենթադրում է, որ Մեսրոպն էլ աս-  
տորինների օրինակով կազմել է երկու տեսակ գիր. նույնիսկ սրա-  
մադիր է բուն Մեսրոպի հնարած գիրը միջին-մեսրոպյանը համար-  
ել (Ակնարկ, էջ 90, 125) և սպասում էր, որ մի օր բախտի անիվը  
մեր ձեռքը հասցնի անցման բոլորգիր մի գրություն Ե—Ձ դարերից  
և նոտրագրի նման մի գրություն՝ սրանից մի քիչ ավելի ուշ ժամա-  
նակով (էջ 92): Առաջինին իբրև ապացույց է դնում Քալինի Ուխ-  
տատուր վանականի արձանագրությունը՝ 783 թվից, միջին-մեսրոպ-  
յան երկաթագրով, ըստ նմանահանության Քեսզնեթի (Ակնարկ, էջ  
60, 126), և բազմաթիվ կրկնագրեր, որոնք գտնված են արզնն հին  
ձեռագրերում և հետևաբար ենթադրվում է, որ ավելի հին լինեն, և  
նույնիսկ՝ Ե դարից: Այս բոլորը միջին-մեսրոպյան երկաթագրով են:  
Այսպես, Վիեննայի Մխիթարյան մատենադարանի կրկնագիր Ագա-  
թանգեղոսը, որ ըստ Տաշյանի Ք դարից շատ ավելի հին է (էջ 108),  
հատկապես Շուխարդ գերմանացու գտած հայերեն կրկնագիր թեր-  
թերը՝ վրացերեն մի ձեռագրում, որ Ը—Ք դարից համարվելով, հայ  
կրկնագիրն է, բնականաբար ենթադրելի է Ե դարից (էջ 62, 114):  
Երկրորդ ենթադրության իբրև ապացույց է բերում Եգիպտոսի մեջ  
գտնված պապիրուսի մի կտոր, որ պարունակում է հունարենի վար-  
ժություններ՝ հայերեն տառերով: Այս պապիրուսի գրության թվա-  
կանը հայտնի չէ, բայց ըստ որում հունարեն է գրված, հետևաբար  
պետք է ենթադրել, որ արարների արշավանքից առաջ է, երբ հունա-  
րենը տիրող լեզու էր Եգիպտոսում (էջ 97). ուստի՝ գոնև է դարի  
առաջին կեսից է: Արդ՝ այս պապիրուսը գրված է անցման գրով և  
կրում է բոլորգրի, շղագրի և մինչև իսկ նոտրագրի հետքեր:

Ահա սրանք են Տաշյանի ենթադրությունները և այս առթիվ մեջ-  
բերած ապացույցները:

Այն ժամանակ, երբ Տաշյանը գրում էր իր Ակնարկը, դժբախ-  
տաբար շկային դեռ հնագրական այնպիսի ավյալներ, որոնցով կա-

րելի լինե՞ր սրանից տարբեր ենթադրութիւն անել: Հրատարակված չէ՞ր նույնիսկ Տեկորի արձանագրութիւնը (այժմ արդեն քանդված և փուլ եկած) և ուրիշ կարևոր արձանագրութիւններ, որի համար ցավ է հայտնում Տաշյանը (էջ 125): Բայց այն ժամանակից մինչև այժմ խնդիրը բավական փոխվեց՝ հրատարակութեամբ Շողակաթի, ուր Գարեգին վարդապետը ոչ միայն Տեկորի, այլև տասնյակներով ուրիշ կարևոր արձանագրութիւններ լուսանկարչական նմանահանութեամբ լույս ընծայեց: Հիմնվելով սրանց և ուրիշ փաստերի վրա, կարող ենք այժմ ասել, թե երկու տեսակ երկաթագրերից հնագույնը բուն Մեսրոպայանն էր և թե Մեսրոպի հնարած գրերը իրոք այս երկաթագրերն էին, որոնցից հետո առաջացավ միջին երկաթագիրը: Սրա համար ահավասիկ մեր պատճառաբանութիւնները.

ա) Բոլոր արձանագրութիւնները՝ սկսած հնագույնից, որ Ե դարի վերջերից կամ Զ դարից են համարվում, մինչև Ժ դար, առանց բացառութեան գլխագիր երկաթագիր են: Այն նմանահանութիւնները, որոնք կատարված էին եվրոպացիների ձեռքով ու պարզ օրինակութեամբ և ոչ թե լուսանկարով, և որոնք անվատահելի էր գրանում Տաշյանը (էջ 145), իրոք որ սխալ դուրս եկան. համտ. հատկապես Քալինի Ուխտատուր վանականի 783 թվի արձանագրութեան նմանահանութիւնը՝ տպված Այրարատ, էջ 139, ապա և՛ Շողակաթ, № 11: Այս բոլոր կեղծ նմանահանութիւնները միջին-մեսրոպայան երկաթագիր էին, իսկ իրականում գլխագիր են:

բ) Արձանագրութեան մեջ փորագրիչի համար անշուշտ շատ ավելի հեշտ էր ուղիղ գծեր քանդակել, քան թե կլորակներ ու կամարներ. արդ՝ եթե այս արձանագրութիւնները կլորակներով են և ոչ թե ուղիղ գծերով, ուրեմն անշուշտ այն ժամանակվա սովորական գիրը բուն երկաթագիրն է:

գ) Գլխագիր է հայերեն առաջին ձեռագիրը, որ է Մոսկվայի Լազարյան ձեռարանի ավետարանը: Եթե ուրիշ հին ձեռագրեր միջին-մեսրոպայան են կոչվում, անվան սխալ է և հետևաբար կարոտ ստուգութեան:

դ) Ձանազան հին ձեռագրերի մեջ բնագրերը գլխագիր երկաթագիր է, իսկ հիշատակարանը, նախաբանը և լուսանցագրութիւնները միջին-մեսրոպայան երկաթագիր են. սրանցից մի քանիսը թվեցինք վերը՝ միջին-մեսրոպայան երկաթագրի հնագույն օրինակները հիշատակելու ժամանակ: Արդ՝ գիտենք, որ հին գրերը՝ իբրև ավելի պատվավոր՝ գործածված են լինում բնագրերի մեջ, իսկ նորագույն գրերը՝ իբրև ավելի ընթացիկ բան՝ գործածվում են նվազ կարևոր տեղեր, ինչպես հիշատակարանները և այլն:

ե) Ավելի ուշ գրված միջին-մեսրոպայան երկաթագիր ձեռա-



գրեցում՝ հատվածներին ակիզքը իբրև գլխատառ գրված տառերը բուն երկաթագիր են և ոչ միջին-մետրոպյան: Արդ՝ գիտենք, որ հին գրքերը նորագույնների համար իբրև գլխագիր են գործածվում (տե՛ս Ակնարկ, էջ 44): և ի՞նչ այդպես է, ուրեմն բուն երկաթագիրն է հինը և ոչ միջին-մետրոպյանը:

զ) Կրկնագրերի խնդիրը մի քիչ կասկածելի էմ գտնում: Պետք չէ ենթադրել, թե որևէ կրկնագիր իր վրայի գրությունից անպատճառ շատ ավելի հին է: Կարող է նրանից մի քիչ միայն հին կամ մինչև իսկ ժամանակակից լինել: Եթե Կրկնորոնք գանգատվում էր, որ ուրիշները իր գրածները չնշում և վրան ուրիշ բան են գրում (Ակնարկ, էջ 111), նշանակում է, թե չնշողը չնշածին ժամանակակից էր: Մի ձևագիր անգործածելի դառնալու համար պետք չէ, որ անպատճառ ժամանակով շատ հին լինի. գանազան պատահարներ կարող են անգործածելի վիճակի հասցնել, ինչպես հրդեհը, ջրի մեջ ընկնել, մկնակերությունը և այլն: Այսօր իսկ փորձով կարող ենք տեսնել, որ մի հին ձևագիր ավելի լավ պահված լինի, քան ավելի նորը: Օրինակի համար՝ Վիեննայի Մխիթարյանց Մատենադարանի № 7 Ցայամաուրքը, որ 1439 թվին գրված է, հանգամանքով է «լաւ, գրութիւնն անեղծ ու մաքուր» (Տաշյան, Յուցակ, էջ 24), մինչդեռ № 10 Ցայամաուրքը, որ ժՊ դարից է, «հանգամանք գէշ, ամբողջին սկիզբն ու վերջը քայքայած ու թղթերուն եղերները մաշած, կրտրուած և նաև պատուտած» (անդ՝ էջ 55): Բացի սրանից, մեկը կարող էր իր առաջ ունեցած ձևագիրը, իբր հում նյութ ծախելու քստիպված լինել և մի գնորդ չնշելով վրայի գրությունը՝ նորը գրել: Վերջապես ձևագրի բովանդակությունն էլ կարող էր մեկի համար կարևորությունից զուրկ լինել և չնշելով այն՝ ուրիշ ավելի կարևոր համարված մի բան գրել: Այսպես կարող է լինել հատկապես Շուխարդի վրացերեն ձևագրի կրկնագիրը: Վրացին հավանաբար ոչինչ չէր հասկացել իր ձևոքն անցած հայերեն գրությունից, որ և չնշելով՝ գրեց վրացերենը: Կարող է այսպես լինել նաև Վիեննայի կրկնագիր Ազաթանգեղոսը: Պատմական գրվածքները այն ժամանակի աշխարհայացքով նվազ սիրված բաներ էին, քան կրոնական գրությունները, և այս կարող է պատճառ դարձած լինել չնշելու Ազաթանգեղոսը և նրա տեղ գրելու Անդրեի Մեկնութիւն Յայտնութեանն Ռովհաննու: Չենք ուզում ասել, թե այս բոլորը անպատճառ այսպես է, բայց հավանականությունից զուրկ չէ. հետևաբար և ոչ բոլորովին վստահելի:

է) Կա և իրերի տրամաբանական ընթացքը: Բոլորն էլ ընդունում են, որ բոլորգիրը միջին-մետրոպյան գրից միայն կարող է առաջացած լինել և պատկանում է գրության միևնույն ոճին: Արդ՝ եթե

մեր գրերի զարգացման ընթացքն է միջին-մեսրոպյան և հետո բուրգիր, այսինքն՝ ուղղագծից ուղղագիծ, ապա ո՞ւր պիտի դրվի գրվխագիրը: Բուրգրից հետո չէ, որովհետև պատմականորեն գիտենք, որ նրանից ավելի հին է: Չենք կարող դնել երկուսի միջև, որովհետև զարգացման ընթացքին է հակասում. ուղղագիծ, հետո կամարաձև, հետո դարձյալ ուղղագիծ: Մնում է միայն մի տեղ և այդ տեղն է նախքան միջինը:

ը) Վերջապես տառերի ծագման պատմությունն էլ պահանջում է, որ բուն երկաթագիրը լինի Մեսրոպի հնարածը: Վերը, Ա գրի ծագման վրա խոսած ժամանակ տեսանք հայ տառերի բերանաբացության օրենքը. — այն տառերը, որոնք հունարենում կլոր փակվածքներ ունեն, հայերենում սովորաբար բացվում են. այսպես  $A > > Ա$ ,  $B > > Բ$ ,  $\Theta > > Թ$ ,  $O > > Ո$ ,  $P > > Ք$ , այսպես նաև սասանյան  $\text{𐭠} > > Զ$ . Տ: Արդ՝ եթե միջին-մեսրոպյան ուղղագիծ ձևերը լինեին մեսրոպյան գրերը, բերանաբացության օրենքը երևան չպիտի գար և հիշյալ տառերը այդ ձևերը չպիտի ունենային, այլ Ա ձևի տեղ պիտի ունենայինք  $\Omega$ , Բ ձևի տեղ  $\Xi$ , Ո ձևի տեղ  $\square$ , Ք ձևի տեղ  $\rho$ , Տ ձևի տեղ  $\rho$ . Իսկ եթե այսպես չէ, և տառերի բերանը բացված է, այդ ցույց է տալիս, որ նախապես տառագծերը կլորակ կամ կամարաձև էին և գրչի թույլ կամ անփուլթ շարժումից առաջացավ կամարաձև գծերի ոչ ամբողջական փակում, որ հետո հասավ բերանաբացության:

Այս բոլոր քննությունների նպատակն էր ցույց տալ, թե Մեսրոպի հնարած գիրը բուն երկաթագիրն է, որից հետո առաջացել է միջին-մեսրոպյան երկաթագիրը: Բայց այս բավական չէ որոշելու միջին-մեսրոպյան երկաթագրի, ինչպես և մյուս տեսակի գրերի ծագման թվականը, և Տաշյանի ենթադրությունները կարող են ընդհանրապես ուղիղ լինել: Ի հաստատություն սրանց՝ կարող ենք դնել հետևյալ փաստերը. — Տեկրի 964 թվի խաչքարի վրա (Շողակաթ, № 15) կան մի քանի բուրգիր տառեր. հատկապես Ե, և տառերը զուտ բուրգիր են. կա նաև յ ձև, որ այս թվականի համար մեծ նորություն է. Թալինի Ուխտատուր վանականի 783 թվի արձանագրությունը (Շողակաթ, № 11) թեև ընդհանրապես բուն երկաթագիր, բայց ունի մի քանի հատ միջին երկաթագիր և բուրգիր տառեր: Այսպես՝ արձանագրության նույնիսկ առաջին տառը՝ Մ, զուտ միջին է: Հաջորդ տողերի մեջ կա առնվազն հինգ առաջին բուրգիր Ի. հինգերորդ տողի վերջը՝ Խ բուրգիր է. յոթներորդ տողում կ բուրգիր է: Այս օրինակները ցույց են տալիս, որ արդեն 783 թվին ոչ միայն միջինը, այլև բուրգիրն էլ կար: Դեռ ավելին կա: Անիի Միջնաբերդի եկեղեցու 622 թվի արձանագրությունը, որ բուն երկաթա-

գիր է, երկրորդ տողում ունի **Ը** տառը ճիշտ այս ձևով (7). և չոր-  
րորդ տողում կ տառը այս ձևով (4). առաջինը շղատառ և տառի և  
երկրորդը գրեթե 4 թվանշանի երևույթն ունի: Բայց երկուսն էլ ոչ  
միայն բուրգգիր, այլև մինչև իսկ շղագիր կարող են համարվել:  
Սրանով հասնում ենք այնպիսի մի թվականի, որ Տաշյանի ցուցա-  
դրած պապիրուսի թվականից ավելի հին է և նոր փաստով վավե-  
րացնում է այն: Բայց նկատելի է, որ եթե 622 թվականին արդեն  
գտանք բուրգգրի հետքեր, նշանակում է, թե միջին երկաթագիրը,  
որ բուրգգրի մայրն է, ծագումով էլ ավելի հին պիտի լինի: Այս-  
պիսով մտանում ենք արդեն Զ դարին, որ Տաշյանի էլ փնտրած թը-  
վականն է:

Մի վերջին կետ էլ կարևոր է: Գրերի զանազան տեսակները ի-  
բար են կապվում անցման մի շրջանով. այսպես՝ միջինից դեպի  
բուրգգիրը կա անցման երկաթագիրը և հետո անցման բուրգգիրը.  
բուրգգրի և շղագրի միջև կա հին շղագիրը. և նոտրագրի ու շղագրի  
միջև կա նոտրագիր շղագրածև (Տաշյան, Ցուցակ էջ 1046), իսկ բուն  
երկաթագրի և միջին երկաթագրի միջև որևէ բան չկա: Կարելի է  
ենթադրել, թե այստեղ էլ անցման մի շրջան եղած լինի, որի հատ-  
կանիշը հետևյալն է. տառասյունների միացման անկյունները լինում  
էին կամարածև, բայց կամարը երկու կողմից բարձրանալուց հետո  
սկսվում էր ուղիղ գիծը: Այս ձևի երկաթագիրը կարող ենք կոչել  
անցման միջին: Անցման միջինի օրինակներ ունենք Ուխտատուր  
վանականի արձանագրության մեջ (783 թվից, Շողակաթ, № 11).  
հմմտ. հատկապես Ա և Ս տառերը: Նույնպես Բ և Ն տառերը՝ Տե-  
կերի 964 թվի արձանագրության ճակատը (Շողակաթ, № 15): Արդի  
տպագրության մեջ անցման միջինի ձևով ունենք մի տեսակ այրու-  
բեն, որից ահա մի օրինակ.

## Վ Գ Ո Ր Ե Թ

Վերը, գրերի ձևը և նրանց ծագումը որոշելու ժամանակ, տե-  
սանք ինչ-ինչ ձևական տարբերություններ հույն, սասանյան և ա-  
սորի նախատիպերի և նրանցից ծագած հայերեն տառերի միջև:  
Խնդիր է, թե այս փոքրիկ տարբերությունները նախատիպից հա-  
յերեն ձևերին անցնելու համար՝ ժամանակի ընթացքում են ձևացել,  
թե արդեն սկզբից կային: Ուրիշ խոսքով՝ համապատասխան գրերի  
մեջ ձևի ալլադանությունը Մեսրոպը իր ձեռքով մտցրեց, թե հե-  
տո, կամաց, կամաց անդադարաբար առաջ եկավ Ծ դարի սկզբից  
մինչև Զ դար, այսինքն այն ժամանակը, որից հայերեն տառերը մեզ  
ծանոթ են:

Սրան իբրև պատասխան մենք մատնանիշ ենք անում ուրիշ ազգերի օրինակը: Ի՞նչ արին հույները, երբ փոխ առին փյունիկյան այբուբենը: Ի՞նչ արին լատիները և սլավները, երբ փոխ առին հունական այբուբենը: Մտցրի՞ն նրանց մեջ կամավոր փոփոխություններ, թե՞ փոփոխությունները ավելի հետո ինքնաբերաբար առաջացան: Հնագրությունը, այբուբենների պատմությունը և առողջ դատողությունը վերջինիս կողմն են միայն: Սրան իբրև ապացույց են ծառայում նաև հայերեն այբուբենի երկու հիմնական օրենքները, որ նկատեցինք վերևում, այն է բերանաբացության և վայրահակության օրենքները: Այս օրենքները ցույց են տալիս փոփոխությանց կանոնավոր նույնություն և սրանով միևնույն ժամանակ մատնանիշ են անում, որ փոփոխությունները ոչ թե Մեսրոպի քմահաճության, այլ բարեշրջության, ժամանակի և հայ գրիչների ոգու արդյունքն են:



Գրերի տեսակները ընդհանրապես որոշելուց հետո՝ անցնենք խոսելու այն ձևափոխությանց վրա, որ մեր տառերը ստացել են երկաթագրից հետո մինչև այսօր, իրենց զարգացման ընթացքում: Վերևում տեսանք հայ տառերի բերանաբացության և վայրահակության օրենքները: Վերջինս բոլորգրի մեջ ուրիշ ձև է ստանում. միջին թևերը և ստորին պոչերը ուղիղ դիրք են ընդունում, իսկ վերևի թևերը մնում են վայրահակ. համտ.  $\beta > \rho$ ,  $\gamma > \alpha$ ,  $\tau > \alpha$ ,  $\lambda > \alpha$ ,  $\psi > \alpha$ ,  $\sigma > \alpha$ ,  $\phi > \rho$  և այլն: Նոտրագրի, ինչպես և շղագրի մեջ այս բանը ավելի է զարգանում: Այն տառերը, որոնք վերևից դեպի աջ երկարած թև կամ ցածրից դեպի աջ կամ դեպի ձախ երկարած պոչ ունեն, առարկա են դառնում զանազան ուղրապտույտ խաղերի: Այսպես են ձ (վերի թևը), յ, ց (դեպի ձախ երկարած պոչը), լ, ղ, գ, շ, չ, ջ, վ տառերը (դեպի աջ երկարած պոչը) և բոլորգիր և տառի այն տեսակը, որ տակից պոչ ունի (տե՛ս ստորև): Իսկ այն տառերը, որոնց թևը ձախ կողմից կամ մեջտեղից է, ազատ են այս խաղերից. այսպես են բ, գ, դ, ե, է, թ, ժ, ի, ծ, և տառերը. ա տառը բոլորգրի մեջ պոչից զրկված լինելով՝ ո, ո, ս տառերի նման ազատ է նույնպիսի խաղերից: Բայց նույնիսկ այնպիսի տառեր, որոնք պոչ չունեն, բոլորգրի մեջ հեշտության համար տակից մի փոքրիկ կեռ են ստանում, ինչպես՝ բ, կ, թ, խ, դ և այլն: Այս երևույթը ԺՊ դարից է սկսվում. այսպես՝ 1190 թվին գրված մի հիշատակարանում (Շողակաթ, № 65), թեև տառերը շատ հաստ, բայց այդ կեռերը չկան: Նույնպես և 1201 թվին գրված մի

հիշատակարանի մեջ (Շողակաթ, № 70) հազիվ թե սկսվում է. իսկ 1244, 1262, 1266 թվերին գրված գրությանց մեջ (Շողակաթ, № 80, 83, 84) հայտնի կերպով կա և դեռ ավելի է զարգանում նոտրագիր գրության մեջ:

Սովորականից ավելի խազմզոցների օրինակ է Սմբատ սպարապետի հիշատակարանը մի ավետարանի մեջ՝ 1244 թվից (Շողակաթ, № 80) և մանավանդ էջմիածնի № 2848 ձեռագիր ավետարանի հիշատակարանը (Շողակաթ, № 108), հմմտ. հատկապես նորորդ տողը՝ զ տառի տարօրինակ պոչը, վեցերորդ տողը՝ մ տառի գրկախառնությունը շորս տառ հետո գտնված և-ի հետ, և ութերորդ տողի մեջ գտնված մ տառի թևը: Այս տառը առհասարակ ամենից ավելի ենթակա է խազմզոցների. երբ պատահի էջի առաջին կամ վերջին տողի վրա, գրիչը նրա թևը կրճնի և այնքան կոշորի ու կոլորի, որ նրբեմն էջի շորս լուսանցքներն էլ կպատի՝ մի տեսակ մանկամիտ հաճույքով:

Սրանք արտասովոր բաներ են հայ գրության մեջ և ինչպես կարծում եմ, մի տեսակ հետևողություն պարսկական շիրաստա գրության, ուր այնքան սիրելի է տառերի թևերն ու պոչերը երկարելով զանազան խաղեր ու զարդեր հորինելը:

Արդի ձեռագրում տառերի պոչերը ըստ անձնական ճաշակի տարբերվում են և մինչև ութ ձև են ստանում.

1. Պարզ հորիզոնական մի գիծ, ինչպես ուրորգիր 1, 2, 3 և այլն ձևերի մեջ: Սրա մի քիչ ավելի ազատ ու երկար ձգված ձևը արդեն 999 թվից է (տե՛ս Կոզովտի հիշատակարանում):

2. Նույնպիսի հորիզոնական մի գիծ՝ վար կախված ծայրով, օրինակ՝ ինչպես գլխատառ Լ, Ը, Վ տառերի պոչը:

3. Նույնը դարձյալ, միայն վար կախված պոչը դեպի ձախ ուղղվելով վերև դարձած և նույն հորիզոնական գծից վեր բարձրացած՝ զնալ միանալու համար հաջորդ տառին. գրեթե այս ձևով Շ և Տ տառերի պոչը:

4. Վերև ծոված մի կորություն, գրեթե այն, որ գտնում ենք նոտրագիր ք, կ, ք տառերի տակ, միայն է՛լ ավելի դարգացած:

5. Փոխանակ հորիզոնականի, պոչին ալեծածան ձև տրված, ինչպես Չ, Շ տառերի տակ:

6. Նույն ալեծածան ձևով, բայց ձախից մի կլորակ էլ ստանալով, ինչպես Չ տառը:

7. Պոչը դեպի ներս ուղրած՝ ճիշտ ինչպես Շ, Շ:

8. Նույնը, միայն թև պոչը ներս ուղրելուց հետո՝ տառի ձախակողմյան սյունից դուրս երկարած:

Կարելի է սրանցից դուրս դեռ ավելի քմահաճ ձևերի էլ պատահել, ինչպես 7-րդ ձևի պես պոչը ներս ուղրելուց հետո՝ նորից այն-

տեղ մի երկրորդ ոլորք շինել, կամ 8-րդ ձևի պես պոչը սլունից դուրս երկարելուց հետո՝ նորից երկրորդ մի ոլորք շինել և վերջապես պոչը գծելու համար դեպի ձախ ոլորվելուց հետո՝ մի սուր անկյուն ձևացնելով հանկարծ դեպի աջ ոլորել, ինչպես **Չ** ձևի մեջ:

Գրերի զարգացման պատմության համար շատ կարևոր է բարձրության օրենքը: Գրեմք, որ երկաթագրի մեջ բոլոր տառերը հավասար մեծությանմբ են. բացառություն են կազմում միայն **Վ** և **Ք** տառերը, որոնցից առաջինը տողից ավելի վեր ու ավելի վար է երկարում, իսկ երկրորդը տողից ավելի ցած է իջնում: Սկսյալ անցման շրջանից՝ տառերը սկսում են իրենց հավասարությունը կորցնել և ոմանք տողից վեր, ոմանք էլ տողից ցած են երկարում: Անհավասարությունը զարգանում է բոլորգրի մեջ և իր կատարելության է հասնում նոտրագրի և շղագրի մեջ: Տողը բաժանվում է երեք մասի. վերին, միջին և ստորին: Տառերից ոմանք գրվում են միայն միջին մասում, այսպես են՝ ա, ո, ո, ս, լ, օ, տ (միջնական տառեր), ոմանք վերին և միջին մասում, ինչպես ե, է, ժ, ծ, հ, ձ, ճ, մ, ն, և (վերնական տառեր). ոմանք միջին և ստորին մասում, ինչպես՝ բ, ք, դ, զ, ւ, ղ, յ, շ, Ն, պ, ջ, ը, ց, ք (ստորնական տառեր), ոմանք էլ՝ ամբողջ երեք մասերում, ինչպես՝ թ, ի, խ, կ, վ, փ, ֆ (ամբողջական տառեր). — բայց ամենքի համար էլ միջին մասը անխուսափելի է և այնպիսի մի տառաձև, որ միայն տողի վերին կամ ստորին մասում կանգնեի (ինչպես երբայցեբրեն՝ կամ արաբերեն <sup>9</sup>), չկա հայերենում:

Թե ինչ պայմանների տակ է առաջ եկել բարձրության օրենքը, կարելի է բացատրել հետևյալ պարագաներով.

1. Այն տառերը, որոնք իրենց ստորին մասի վրա մի պոչ կամ մի ոլորք ունեն, դառնում են ստորնական տառեր, ինչպես՝ Զ, Ը, Լ, Ղ, Յ, Շ, Զ, Յ. այսպես է նաև Զ, որ իր գլխի պատճառով բոլորգրի մեջ տողից նաև վերև է կանգնում, բայց արդի շղագրի մեջ լիովին ստորնական է:

2. Այն տառերը, որոնք իրենց միջին մասի վրա թև ունեն, դառնում են ամբողջական տառեր. ինչպես՝ Խ, է, Ի, Վ, Թ, Փ, Յ. — այս կարգին է պատկանում նաև Կ տառը. — Ժ տառը թևե միջին թև ունի, բայց յ-ից տարբերվելու համար դարձել է վերնական:

3. Այն տառերը, որոնք իրենց վերի մասի վրա թև ունեն, դառնում են վերնական. ինչպես՝ Ն, Մ, Մ, Ծ, Զ (վերջինս հին բոլորգրում իր պոչի պատճառով ստանում է նաև ստորնական ձև). — Զ տառը իր գլխի պատճառով բոլորգրի մեջ դարձել է վերնական, իսկ հետո տակին մի պոչ զարգանալով՝ նոտրի ու շղագրի մեջ դարձել է նաև ստորնական, որով դարձել է ամբողջական:

4. Այն տառերը, որոնք պոչից կամ թևից զուրկ լինելով ներկայացնում են հավասար սյուններ, դառնում են միջնական, ինչպես՝ Ռ, Ս, Օ, — Այստեղ են պատկանում նաև Ա, Բ, Ի տառերը. առաջին երկուսը թևն պոչ ունեն, բայց ըստ որում հիմնական մասերը երկու հավասար սյուններն են, դարձել են միջնական: Ա տառը բոլորգրի մեջ պոչից զրկված լինելով՝ մի պատճառ ազնիլ ունի միջնական դառնալու: Վերջապես Ի տարբերվելու համար Ի-ից՝ զրկած է այս կարգի մեջ:

5. Մի ամբողջ և վերևում կես սյունից բաղկացած տառերը դարձել են ստորնական. ինչպես՝ Բ, Պ. — այս կարգին են պատկանում նաև Բ, Պ, Գ, Դ, Ք տառերը, որոնք սակայն բացի մեկ և կես սյունից, նաև միջին մասի վրա թև ունեն. այս պատճառով էլ ստացել են երկու ձև. բոլորգրում Բ, Պ, Ք ստորնական են, իսկ շղագրում ամբողջական. միայն Գ տառի թևը նոտրի և շղագրի մեջ վերև բարձրանալով՝ այլևս ամբողջական չի դարձել:

6. Տ տառը ամբողջ սյունի վրա վերևից և ներքևից ունենալով կես-կես սյուն, հավասարակշռությունը վերածված է միջնականի:

Արդի ձևագրի համար շատ կարևոր է նաև գրերի միացման օրենքը: Հին ժամանակ տառերի դանաղան մասերը անշուշտ անջատ անջատ էին գծում. օրինակ՝ ա գրելու համար կամ գծում էին երեք ուղղահայաց սյունները և հետո տակից հորիզոնական գծով միացնում, և կամ իրար մոտ գծում էին երկու և և հետո՝ ուղղահայաց մի սյուն, իբր տառի երրորդ աստիճան: Այս ձևը հարմար էր բոլորգրին, ինչպես նաև նոտրին: Արագ գրելու պահանջը ստիպում էր սակայն յուրաքանչյուր տառը որքան կարելի է մեկ շարժումով դուրս բերել: Արդեն շղագրի գրությունը այս կերպով առաջացավ: Բայց դեռ շղագրի մեջ էլ բոլոր տառերը մեկ շարժումով չէին գծվում: Օրինակի համար, Սմբատ Գունդստարլի հիշատակարանում (Շողակաթ, № 80, 1284 թվից) ա, մ, յ, դ, ո, ս տառերը անշուշտ մեկ գրով են, բայց բ երեք գրով է: Արդի ձևում ոչ միայն առանձին տառերը, այլև նույնիսկ ամբողջ բառը մեկ գրով դուրս բերելու պահանջ է ծագում և այդ պահանջը մեծ մասամբ բավարարվում է մտղագծերով: Տառից տառ կապակցությունը շատ պարզ է, ուստի առանձին քննություն պետք չկա: Բայց միևնույն տառի առանձին մասերի կապակցությունը մի քիչ ավելի բարդ է և ստանում է մինչև յոթ ձև.

1. Հին բոլորգրի կամ նոտրի ձևով՝ տառի առանձին մասերը գծվում են անջատ-անջատ և յուրաքանչյուրը կպչում է տառի առաջին մեծ սյունին. օրինակ՝ Բ հանվում է երեք շարժումով, Ի, Ե հանվում են երկու շարժումով:

2. Այս պարագայում կարող են նույն առանձին մասերը բոլորովին շփշուկ մեծ սյունին և նրանից մի քիչ հեռու անջատ մնալ:

3. Մեծ սյունը վերևից ներքև գծելուց հետո՝ գրիչը ճիշտ նույնի վրայից նորից վերև է բարձրանում և անցնում է գծելու տառի առանձին մասերը. այս պարագայում տառերը առհասարակ մեկ շարժումով են դուրս բերվում, ինչպես՝ ի, ր, վ. բայց երկու թև ունեցող տառերը երկու շարժումով են դուրս բերվում: Գրության այս ձևը տարբեր է առաջին ձևից, բայց արդյունքը բոլորովին նույնն է:

4. Մեծ սյունը վերևից ներքև գծելուց հետո՝ գրիչը փոխանակ նորից նույն գծով բարձրանալու, աջ կողքից զուգահեռաբար բարակ գծով վերև է բարձրանում և գծում է տառի մյուս մասերը: Արդի գրության ամենասովորական ձևը այս է:

5. Այս պարագային կողքի զուգահեռական գիծը կարող է ծուռ բարձրանալ և վաղը լայն ու վերը նեղ մի տոպրակ ձևացնելով՝ վերջապես հասնել ու կպչել մեծ սյունին ճիշտ այնպես, ինչպես ֆրանսերեն ձեռագիրը և այնտեղ կազմել տառի մյուս մասերը սովորական ձևով:

6. Բայց կարելի է նաև փոխանակ սովորական ձևով կազմելու անջատ մասը, սյունին հասնելուց հետո, նորից հետ դառնալ և փոքրիկ մի ոլորք կազմել սյունի վրա:

7. Վերջապես, զուգահեռական գիծը, փոխանակ աջից գծելու՝ կարելի է ձախից, այն է գրի ետևից գծել և հետո սյունը ճեղքելով աջ անցնել և այնտեղ գծել տառի մյուս մասերը, մտատվորապես ֆրանսերեն ձեռագիրը ի տառի ձևով:

Այս յոթ ձևերը բոլորն էլ ամեն տառի հատուկ շին, այլ նրանց միայն, որ իրենց աջ կողմից թև կամ անջատ մաս ունեն. այսպես են՝ բ, գ, դ, ե, թ, ի, խ, ա, ր, փ. իսկ վ տառը՝ վերի կողմից. մյուսները իրենց ձևի պատճառով մասամբ կամ բոլորովին ազատ են:

Այս ընդհանուր օրենքներից հետո անցնենք խոսելու յուրաքանչյուր տառի ձևափոխությունց վրա:

ա, ա, ա.

Երկաթագրի մեջ, ինչպես գիտենք, այս տառը բաղկանում էր երկու հավասար սյուններից՝ մեջտեղի մահիկով, որ աջ սյունի ծայրից դուրս և դեպի վեր էր բարձրանում: Այսքան բարդ մի ձև չէր կարող երկար դիմանալ և արագագրության համար պետք է որ կրճատվեր և ավելի պարզվեր: Նախ՝ դուրսագրության համար, մահիկի ստորին ծայրը փոխանակ դեպի վերև բարձրանալու՝ անփութ կերպով սկսեցին նետել, որով ձևացավ մի պոչ և այդ պոչն էլ վայրա-



հակության օրենքով սկսեց զեպի ցած կախձիւ: Պոչից հետո անցան մահիկին: Մահիկը մի քանի ձևով կարելի էր պարզել: Եսխ՝ կարելի էր մահիկը միևնույն ցած՝ սյունի ծայրը շիջեցնել, այլ պահել միայն սյունի գլխին: այսպիսով առաջացավ մահիկի տեղ ձախ ծոված փոքրիկ մի կարթ, որ հաստատված էր աջ սյունի վերի ծայրը և նրա հետ միախառնվելով՝ գրեթե մի խոշոր ապաթարցի ձև ստացավ: Միևնույն ժամանակ պոչը փոխանակ առանձին գծվելու, դյուրության համար միացավ ձախ սյունին: Այսպիսով առաջացավ մի տեսակ երկճյուղ Ա, պոչով և աջ սյունի ծայրի կետով, ինչպես զտեսում ենք գործածված էջմիածնի փղոսկրյա ավետարանում, 989 թվից համար. Շողակաթ, N 44 նմանահանված պատասիկը, ուր Ա տառը գտնում ենք միշտ այս ձևով (23 անգամ): Այս տեսակ Ա դարձավ հետո գլխատառ՝ բոլորգիր գրության մեջ և իբր այն՝ գրվում էր ավելի մեծ և պոչը ավելի երկար ու արեծածան. համար. Շողակաթ, N 103, նմանահանության մեջ 1288 թվից: Այնուհետև այն մնացորդ կեռն էլ կրճատվելով՝ մահիկը անհետ ջնջվեց և առաջացավ պարզ երկճյուղ մի տառ, ինչպես գտնում ենք Ա երկաթագիր ձևի մեջ: Սրա ավելի պարզ ձևը՝ գրեթե իբր շղատառ ա, տե՛ս 1190 թրվականի մի հիշատակարանում (Շողակաթ, N 65):

Մահիկի պարզման երկրորդ ձևն էր՝ ձախ սյունը գծելուց հետո անցնել աջ սյունին և սրան կիսակլորակ ձև տալով՝ շարունակել զեպի վար և երկու սյունների մեջտեղից ցած իջնել իբր պոչ: Այսպիսի ձևով Ա տե՛ս Շողակաթ, N 95, նմանահանության մեջ՝ 1278 թրվից: Սրա ավելի պարզ ձևը գտնում ենք Շողակաթ, N 96՝ 1267 թրվից, ուր Ա գրեթե ֆրանսերեն ձևագիր ԼԵ ձևն ունի:

Մահիկի պարզման երրորդ ձևն էր աջակողմյան սյունից բոլորովին անջատել այն և փոխանակ կլորակ ձև տալու, որ անշուշտ ավելի ղժվար էր, իբրև առանձին կարճ և ուղիղ մի սյուն ղնել երկու երկար սյունների միջև: Այսպիսի եռաճյուղ և պոչով Ա-ի օրինակներ տե՛ս 1413 թվականով մի հիշատակարանի մեջ (նմանահանությունը Այրարատ, էջ 163) և Պիշպեթի զերազմանատան մեկ տապանագրի վրա՝ 1323 թվից (նմանահանությունը տե՛ս Ակնարկ, էջ 152): Այս պարագայում Ա-ի երրորդ աջակողմյան սյունը կարող է ծայրից ծուռ լինել, բայց կարող է նաև բոլորովին ուղիղ լինել: Երկու ձևերն էլ միաժամանակ կան Պիշպեթի տապանագրի վրա, բայց բոլորն էլ ունեն իրենց պոչը և միջին սյունն էլ կարճ է:

Այնուհետև պոչը կրճատվում է, միջին սյունը սկսում է երկարել և համաչափության օրենքով հասնել մյուս երկուսի բարձրության. բայց այնուամենայնիվ դեռ աջակողմյան երրորդ սյունի ծայրը աջ կամ ձախ դարձած ուղիղ մի գծիկ կա: Այս տեսակի Ա գտնում ենք

Ներսես Լամբրոնացու ավետարանի մեջ՝ 1193 թվից (նմանահանությունը տե՛ս Սիսուան, էջ 84)։ Վերջապես աջակողմյան սյունի ծայրի գծիկն էլ է կտրվում և ձևանում է անպոչ եռատամ ա, որի ավելի հին ձևն է պոչավոր եռատամ ա։ Վերջինիս օրինակն ունենք արդեն 964 թվից, Տեկորի խաչքարի վրա (նմանահանությունը տե՛ս Շողակաթ, № 15), իսկ անպոչ եռատամ ա-ի հնագույն օրինակն ունենք 971 թվից (տե՛ս Շողակաթ, № 36)։ Այս ձևն է, որ դարձավ բոլորգրի սովորական ձևը և սրանից էլ անցավ նոտրին և շղագրին։

Ավելի հետո՝ համառոտության համար՝ այս տառը կրճատվելով դարձավ միասյուն կամ միաճյուղ. հմմտ. Գրիգոր Յաղմանեցու հիշատակարանում՝ 1314 թվից (Սիսական, էջ 137)։ Այս ձևը շատ գործածական դարձավ հետին բոլորգիր գրությանց մեջ և անցավ նաև մեր տպագրական արվեստին. բայց հետո խափանվեց և այժմ իսպառ վերացված է։

Արդի ձևագրում ա մնում է իր եռաճյուղ ձևով. միայն ոմանք մի տեսակ գեղեցկություն տալով նրան՝ առաջին ատամը մյուս երկուսից ավելի երկար են շինում, ոմանք այդ նույն ատամի սկիզբը մի կեռ էլ են ավելացնում, ոմանք յուրաքանչյուր ատամը կլորակով են ձևացնում (որով տառը ֆրանսերեն երեք հաջորդական ձևագիր e-ի ձևն է ստանում, իբր eee), և վերջապես ոմանք էլ շատ արագ գրության մեջ երեք ատամի տեղ հորիզոնական մի գծիկ են միայն դնում։

Եվ այսպես, հունարեն α, որ մեր Ա ձևի մայրն է, հասել է ուղղահայաց կամ հորիզոնական պարզ մի գծիկի։

### Բ, Բ, Բ

Երկաթագրից հետո այս տառը դարձավ ստորնական։ Բայց որովհետև մեկ կարճ սյունի վրա տառի թե գլուխը և թե թևը տեղավորելու տեղ չկար, ուստի կամաց-կամաց սյունը երկարեց և վերջապես Բ դարձավ ամբողջական։ Երկու ձևերի մրցումը սկսվում է Ժ դարից. Կոզովտի 999 թվի հիշատակարանում (Այրարատ, էջ 498) 13 Բ-երից գոնե երեքը ամբողջական են. Սմբատ Գունդստաբլի ստորագրության մեջ (1244 թվից տե՛ս Շողակաթ, № 80) Բ ամբողջական է. Կոստանդնի դաշնագրում (1271 թվից, նմանահանությունը տե՛ս Սիսուան, էջ 210) հնգից երկուսը ամբողջական են։ Բայց այնուամենայնիվ բոլորգրի մեջ տիրող ձևն է մնում ստորնականը, ինչպես ընդունված է նաև արդի տպագրության մեջ, իսկ ամբողջականը ավելի սովորական է դառնում նոտրի և շղագրի մեջ, թեև այստեղ էլ դեռ մրցումը շարունակվում է։ Այսպես. 1323 թվից շը-

շագիր մի պայմանագրում (Շողակաթ, № 126) ութ ր կա, բուրն էլ ստորնական: 1596 թվին Ջելթունում գրված Ջեռնադրության գրքում (Սիսուան, էջ 185) կա 4 ր, որոնք տողից մասամբ միայն վերն են բարձրանում:

Արդի ձևագրում տառս լիովին ամբողջական է և միացման օրենքներին համեմատ կարող է զանազան ձևեր ստանալ: Այստեղ խնդիր է ծագում նաև տառի գլխի մասին, որ կարող է մնալ անջատ կամ կազմել փաթաթված մի գլուխ կամ հորիզոնական մի գիծ և կամ վեր բարձրացած մի թև, սակայն կարող է նաև միանալ միջին թևի հետ և սրա համար երկու ձև կա: Նախ կարող ենք գլուխը շինել ր գլխի նման կլոր ձևով և իսկույն տակից կցել միջին թևը համտ. շղագիր ր: Այս պարագային երբեմն հիմնական սյունը կարող է ստորնական գրի մեծությամբ լինել, իսկ գլուխը բարձր ու մեծ, միջին թևն էլ դեպի ցած կախված, որով ր տառը վատ գրված 13 թվանշանի մոտիկ մի ձև է ստանում (մեկ և երեք մաղազով միացած): Երկրորդ՝ կարող ենք գլխի փոխարեն տառի երկու դուգահեռական սյունների միջև մի ոլորք շինել (միացման 6-րդ ձևով) և սյունից դուրս ելած գծիկը տառի թևը համարել: Այս պարագային ր ստանում է հունարեն Θ գրի նման մի ձև և նման ձևով կազմրված ր տառից միայն բարձրությամբ է տարբերվում:

#### Գ, Գ, Գ

Երկաթագրի մեջ այս գրի թևը գլխի դուրս երկարած մասն է կազմում և նրա հետ մի գծի վրա է գտնվում: Երկաթագրից հետո, Ժ դարում ուղում են թևը բաժանել գլխից և նրանից ավելի ցած իջեցնել. այսպես՝ Տեկորի 964 թվի խաչքարի արձանագրության մեջ (Շողակաթ, № 15) գտնում ենք մի տեսակ Գ, որ բաղկացած է կլոր գլխից, գրեթե չ տառի գլխի պես, որ կանգնած է ուղղահայաց մի սյունի վրա, որի տակն էլ նստրագիր Գ-ի նման մի կեռ կա: Թևը գտնվում է կլոր գլխից մի քիչ ցած: Ավելի հետո թևը ավելի ցած է իջնում: Այսպես՝ Կոզովտի 999 թվի ձևագրում (Այրարատ, էջ 498) գրիչը Գ տառը գրում է հետևյալ ձևով. նախ գծում է տառի քաակուսի գլուխը, հետո աջակողմյան սյունը ցածր է երկարում և արդի շղագրի չ և ց տառերի նման դեպի ձախ թևերով՝ հանկարծ դեպի աջ մի թև է նետում: Այսպիսով տառը գրեթե արդի շղագիր Գ-ի ձևն է ստանում, միայն փակ գլխով: Նևոված թևը կարող է կարճ մնալ, կարող է նաև մի քիչ երկար դուրս գալ, բայց համենայն դեպս տառի տակից է և ոչ թև կողքից: Այս պարագային՝ տառը Գ գրից տարբերելու համար՝ գլխից ցած գտնված սյունը շատ կարճ են ա-

նում: Վերջապես թևը բուրբուրովին ցած է իջնում և ճշտիվ բուրբուր գ ձևն է ստանում, ինչպես ունենք Սմբատ Գունդատարի ստորագրության մեջ (1241 թվից, Սիսուան, էջ 71), միայն արեթաթան ձևով և սյունն էլ մի քիչ ձախ թեքված և ոչ ուղիղ: Նույնպես է նաև Կոստանդինի դաշնագրում (Սիսուան, էջ 210), 1271 թվից:

Գ տառի այս ձևի գրությունը սակայն հաջողություն չի գրանում և շուտով խափանվում է, անշուշտ, որովհետև հեշտությամբ պիտի շփոթվեր գ տառի հետ:

Այնուհետև գրությունը նոր ուղղություն է բռնում. նախ տառի կարճ սյունը մեծ սյունին միացնող վերին կապը շնջվում է և տառը դառնում է այսպես՝ ւ: Գրիչները այս ձևը դուրս էին բերում անշուշտ երկու շարժումով. նախ գծում էին և տառի նման մի ձև և հետո մեջտեղից մեծ սյունն էին իջեցնում: Այս ձևով գտնում ենք այս տառը Սարգիս Սևանեցու ձեռագրում՝ 1041 թվից (Շիրակ, էջ 50), ուր գ տառը արդի շղագիր և տառից տարբերություն չունի, իսկ այն ժամանակ երկուսը նրանով միայն զանազանում էին իրարից, որ գիմի գլուխը բաց էր ինչպես ս, իսկ դառի գլուխը փակ էր ինչպես ս:

Բայց այս ձևով գ գրելու ժամանակ, բնական էր, որ գրիչը մի կողմից կարճացներ և ձևի ուղղահայաց մասը, իսկ մյուս կողմից միջին երկար սյունի սկիզբը վար նայող մի կետ էլ ձևացներ: Այսպես ենք գտնում տառը Տուսէորդու ձեռագրում՝ 1154 թվից (Այրարատ, էջ 167), Լամբրոնացու ձեռագրում՝ 1195 թվից (Սիսուան, էջ 88), Հեթում պատմիչի բժշկարանում՝ 1294 թվից (Սիսուան, էջ 337): Այնուհետև միջին սյունը ավելի վերևից են առնում և կետն էլ բնորոշակվում է. համտ. 1306 թվով հիշատակարանում՝ Շողակաթ, № 120:

Այս ժամանակ տառը երկու ձև է ստանում. կամ կեռը կցվում է ձախակողմյան կարճ սյունին, որով առաջանում է նոր գ, և կամ գրիչները ամբողջ տառը մեկ շարժումով հանել ուզելով՝ և մասը գծելուց հետո՝ գրչի ծայրը չբարձրացրած՝ դեպի ձախ են դառնում և նույն հորիզոնական գծի վրայից կամ ավելի հաճախ տակից մի ոլորդ դնելով՝ ձախակողմյան սյունի ներսի կողքից վերև են բարձրանում, և տառի գլուխը ձևացնելով՝ հորիզոնական գծի մեջտեղից ցած են իջնում: Այս ձևով գտնում ենք տառը Հեթում թագավորի ստորագրության մեջ՝ 1252 թվից (Սիսուան, էջ 402):

Արդի ձեռագրում տառս շատ տեսակներ ունի. արևմտահայոց մեջ տարածված ձևն է Հեթում թագավորի ստորագրության ձևը, այն տարբերությամբ, որ Հեթումինը ստորնական է, իսկ արդի ձևը ամբողջական, ինչպես եղել է նաև նորրը, որովհետև տառի կարճ սյունը, գլուխը և տակի ոլորդը բոլորը միասին մի կարճ տեղում ամ-

փոփոխել դժգոյար է: Այս պարագային կարելի է նաև մեծ սյունը հո-  
րիզոնական գծի ոչ թե մեջտեղից, այլ բոլորովին ծայրից կամ  
նույնիսկ նրանից մի քիչ հեռվից իջեցնել, որով և մասը ամբողջա-  
պես կմնա մեծ սյունի ձախակողմը: Մեր մանկութիւն ժամանակ  
այս տեսակի մի ուրիշ ձևն էլ կար, որ հիմա խափանված է. նախ  
գծում էին և մասը, հետո նրա մեջտեղից՝ վերևից ցածր իջեցնում  
էին տանկական Դ թվանշանի նման մի գիծ (ուղղագիր), որով տա-  
նը երկու շարժումով էր դուրս գալիս: Կարելի էր նույնը նաև մեկ  
շարժումով հանել, այն է նախորդի նման և մասի ծայրը տակից  
անվամբ ուղործով հանել վերև և միացնել զլիսին:

Կոճկասահայոց մեջ տարածված է կլոր գլխով, այն է շղատառ  
գ ձևը, որ կարող է զանազան տարբերակներ ունենալ: Նախ՝ կող-  
քի թևը միութիւն օրենքների համաձայն կարող է մինչև 7 ձև ստա-  
նալ. երկրորդ՝ կլոր գլուխը կարող է ձախից զարդի համար մի նոր  
ուրրք ստանալ, կամ իր մեջ երկու անգամ փաթաթվել, ամբողջովին  
փակ կամ կիսափակ լինել, մեծ սյունին բոլորովին կայած կամ դե-  
պի ձախ հեռացած մնալ և այլն: Անփույթ գրութիւն մեջ կարող է  
մինչև անգամ ձեռագիր ծ տառի ձևին հասնել, միայն տողից ցածր  
գրված:

#### գ. դ. ղ.

Այս տառի զարգացման ընթացքը նույնն է Պ տառի հետ. այս-  
տեղ էլ նախ ուղում են թևը բաժանել զլիսից և նրանից ավելի ցած  
իջեցնել: Կոզովտի ձեռագրում արդեն բոլորովին ցած է իջած և սյու-  
նի երկար կամ կարճ բռնվելու համեմատ՝ նմանում է բոլորգիր դ  
կամ ո տառերին: Այսպես՝ 25-րդ տողում գտնված գ տառը ամենե-  
վին տարբերութիւն չունի 26-րդ տողի ո-ից: Նույնպես է նաև Կոս-  
տանդնի 1271 թվի դաշնագրում (Սիսուան, էջ 210), ուր ունենք վեց  
անգամ դ և ճշտիվ ինչպես գ ունի ալիծածան պոչ, նույնպես և դ ու-  
նի այդ ձևով պոչ: Այստեղ տառն ստացել է արդի ձեռագրի դ կամ  
շ տառի ձևը, բայց երկույդ շկար շփոթելու նրանց հետ, որովհետև  
այն ժամանակ դ-ի պոչը կեռ էր և ոչ ալիծածան, իսկ շ ամբողջա-  
կան տառ էր, մինչդեռ դ ստորնական էր:

Պ տառի այս ձևն էլ հաջողութիւն չի գտնում և շուտով խա-  
փանվում է գ-ի նման, անշուշտ այն պատճառով, որ հեշտութեամբ  
պիտի շփոթվեր վերոհիշյալ տառերի հետ:

Տառի գլուխն էլ, որ նախապես վերևից փակ և ներքևից բաց ձև  
ուներ, սկսվում է հետզհետև կերպարանափոխվել: Սմբատ Սպա-  
րապետի հիշատակութիւն մեջ (1241 թվից, Սիսուան, էջ 72) այդ

գլուխը գրեթե ∞ ձևն ունի. այստեղ ամբողջ տառը նման է նոտրագիր և գրին, միայն ստորնական է և գլխի կողմից ունի նույն ∞ նըշանը: Կոստանդինի դաշնագրում ստանում է Մ ձևը և ավելի հաճախ՝ շ գրի նման կլորակ մի գլուխ:

Նոտրագրում տառի թևը ընդհակառակը վերև է բարձրանում և հավասարվում է գլխի հետ, որով առաջանում է դ: Այս ձևը անցնում է նաև արդի ձևագրին, որի համար էլ տառը մնում է ստորնական: Սակայն այստեղ հակառակ բոլորգրին, տառի գլուխը բացվում և ստանում է ավ ձևը, փոխանակ և, ինչպես էր բոլորգրի մեջ: Ոմանք սրա առաջին ճյուղը դարդի համար օղակի են վերածում. տառը կարող է միացման բոլոր ձևերն ստանալ. արագ գրության մեջ նույնիսկ բոլորգրի ծ գրի ձևն է ստանում, միայն ավելի երկար թեւով և ստորնական:

ե, ե, է

Ծ դարից ձգտում է սկսում տառի տակի կորուսյունը կրճատելու. այսպես՝ Տեկորի 964 թվի խաչքարում (Շողակաթ, № 15) թեև կա կանոնավոր և բոլորգիր ձևը, բայց կա նաև նոտրագիր և գրի նման մի ձև: Կոզովտի 999 թվի ձեռագրում դարձել է Է, նույնիսկ ստորին գիծը տակից մի կետ էլ ունի, որով է տառից բնավ չի տարբերվում նույն ձևագրում: Այսպես և հետո՝ ուրիշ շատ բոլորգիր ձեռագրերում: Երբերույքի 1028 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 19) գտնում ենք, թե՛ Է, թե՛ նոտրանման և ձևը. բայց բոլորի էլ թևը դեպի վերև է շեղված և ոչ թե ուղիղ: Վերջինիս մեջ և ունի նաև տարօրինակ մի ձև. տառի մարմինը ստացել է և ձևը, որի վրա ավելանում է նաև նույն թեք թևը: Այլուր այսպիսի և շեմ տեսած, և որովհետև Երբերույքի նույն արձանագրության մեջ էլ միակն է և տարբեր մյուսներից, ուստի կարելի է փորագրության սխալ համարել:

Նոտրագրում հաղթանակում է կրճատ ձևով և, որ և դարձել է ամբողջական տառ՝ միջին թևի պատճառով, թեև բոլորագրում վերնական էր: Արդի ձևագրում ամբողջը մեկ շարժումով հանելու համար տակի կետը մազագծով միացած է թևին և միացման բոլոր ձևերին էլ ենթարկվում է: Այս ձևը սովորական է արևմտահայոց մեջ. Կովկասում ընդհանրապես գրում են բոլորգիր և ձևով:

զ, զ, զ

Միջին երկաթագրում տառս Ջ ձևն ունի, որի հետ նույնն են նաև փոքր երկաթագիրը և անցման ձևը: Բոլորագրին անցնելու համար տառը ավելի պարզվելով՝ ըստ օրինի պուշ բոլորովին ուղիղ

գծի է վերածվում, իսկ կլորակը պոչին միացնող կապը մի քիչ ավելի ներս է քաշվում, որ նշանակում է, թե նույնպես ուղիղ դիրք է սկսում ստանալ: Այս ժամանակ տառը գրեթե 2 թվանշանի ձևն ունի, ինչպես գտնում ենք Երեբունյքի 1028 թվի արձանագրություն մեջ (Շողակաթ, № 19), Ստեփանոս Թրքելյանի հիշատակարանում՝ 1290 թվից (Սիսակահան, էջ 95) և այլն: Սրա զլխավոր դժվարությունը տառի գլուխը գեղեցիկ կլոր ձևով հանելու մեջ էր. ուստի ոմանք երկուսի են վերածում այն և նախ գծում են ձախկողմյան կեսը և հետո՝ նրանից մի քիչ անջատ՝ աջկողմյան կեսը, որ մինչև ցած է իջնում. երբորդ շարժումով գծում են երկար ւ ձևը, որ տառի պոչն է կազմում: Այս ձևով ունենք տառս էջմիածնի № 1214 ձևագրում՝ 1118 թվից (Շողակաթ, № 60): Բացառիկ ձևով է Տեկորի 964 թվի խաչքարի վրա (Շողակաթ, № 15). այստեղ տառի գլուխը չ ձևն ունի, որի ծայրից կախված է և ձևը: Ավելի հետո՝ կլոր գլուխը վերածվում է քառակուսիի, ինչպես պահանջում էր բոլորգրի ոճը: էջմիածնի № 2374 ավետարանի մեջ (989 թվի, Շողակաթ, № 24) այս բանը դեռ կիսով միայն կատարված է, իսկ Կոզովտի ձևագրում (999 թվից, Ալբարատ, էջ 498) ամբողջապես քառակուսի գրուխը պոչին միացնող մասը դեռ բավական թեք է, որ ավելի հետո բոլորովին պիտի ուղղվի և պիտի դառնա զ:

Բոլորագիր զ ձևը կազմվելուց հետո, դուրսության համար տառի զլխի վերին գիծը սկսում է ջնջվել, որով ստացվում է զ ձևը: Այսպես ենք գտնում Հեթում պատմիչի բժշկարանում՝ 1294 թվից (Սիսուան, էջ 337), էջմիածնի № 206 ձևագրում՝ 1318 թվից (Շողակաթ, № 124), Խաչիկ վարդապետի պատահելում՝ 1334 թվից (Շողակաթ, № 132) և այլն: Այս է, որ տալիս է շղագիր ձևը:

Արդի ձևագիրը տարբերություն չունի շղագրից և ներկայացնում է զանազան տարբերակներ՝ համաձայն պոչի այն ձևափոխությունից, որ նկարագրեցինք վերը: Այս տառը առհասարակ շատ է շփոթվում շ տառի հետ, որից ունեցած տարբերությունն այն է, որ զ տառի գլուխը կազմված է երկու ճյուղից, իսկ շ ունի միայն ձախակողմյան մի ճյուղ:

Շանոթ. — Որչափ լավ կլինենք, եթե սովորություն դարձնեինք ձևագրի մեջ զ և շ տառերը իրարից ավելի լավ տարբերելու համար՝ առաջինի պոչը կլոր շինել, երկրորդինը ցած կախել: Տողերիս գրողը մանկությունից սովորություն է արած զ և շ տառերը այսպես գրելու:

Ինչպես երկաթագրի, նույնպես և բոլորգրի մեջ տառս երկու ձև ունի՝ ուղիղ պոչով և վայրահակ: Առաջինին իբր օրինակ թող լինի Կոգովտի 999 թվի № ձեռագիրը, ուր ե և է շեն զանազանվում իրարից (երկուսն էլ ունենալով է ձևը): Այսպես և շատ ուրիշ բոլորգիր ձեռագրերում: Բայց հենց նմանության պատճառով այս ձևը այնուհետև խափանվում է և տիրող է դառնում վայրահակ ձևը, որ անցնում է նաև նոտրին, շղագրին և արդի ձեռագրին: Այստեղ տառը պոչի պատճառով մի քանի ձևեր կարող է ստանալ, հատկապես՝ երկրորդ, երրորդ, հինգերորդ և վեցերորդ ձևերը: Նույնպես թևը կարող է տառի մարմնին կպած և կամ նրանից անջատ մնալ:

## Ը, Ը, Ը

Ծրկաթագրից մինչև շղագիր՝ տառս առանձին ձևափոխություն չի ներկայացնում: Արդի ձեռագրում պոչի օրենքի համաձայն կարող է բոլոր ձևերն էլ ստանալ. սրանց մեջ ամենից պարզն է 4-րդ ձևը, որ գտնում ենք արդեն 1271 թվին՝ Կոստանդնի դաշնագրում (Սիսուան, էջ 210): Հետաքրքրական է երրորդ ձևը, ուր մեկ շարժումով ամբողջ տառը պոչով ու թևով դուրս է բերվում և որ նման է գոթական ձեռագիր Շ տառին:

## Ֆ, Բ, Թ

Այստեղ էլ երկաթագրից մինչև շղագիր տարբերություն չկա: Կոգովտի 999 թվի ձեռագրում ֆ տառը 13 անգամ գրված է առանց ոլորքի, պարզ թևով և երկու սյուները հավասար, այնպես որ տառը շղագիր Ռ տառի ձևն է առած, միայն թևը մի քիչ ներս խրված: Ծրերուլքի արձանագրության մեջ (1028 թվից, Շողակաթ, № 19) տառի թևը փոխանակ աջ կողմից դուրս երկարելուն՝ գազաթից վերև է բարձրանում և դեպի աջ է թեքվում: Այնուհետև սկսվում է տառի բարձրությունը փոխվել: Սարգիս Սևանեցու ձեռագրում (1041 թրվից, Շիրակ, էջ 50) բոլորովին ստորնական է՝ բայց Տուտեորդու ձեռագրում (1154 թվից անցման երկաթագիր, Այրարատ, էջ 167) հինգ անգամ գործածված է տառս, որից շորս անգամ՝ մյուս տառերի հետ հավասար դիրքով, միայն մեկ անգամ տողից մի քիչ ցած է երկարում: Լևոն թագավորի ստորագրության մեջ (1200 թվից, Սիսուան, 388) տառը արդեն ամբողջական է, ինչպես և էջմիածնի № 3793 ձեռագրի հիշատակարանում՝ 1201 թվից (Շողակաթ, № 70)



և № 2877 ձեռագրի հիշատակարանում՝ 1211 թվից (Շողակաթ, № 71):

Հնթում թագավորի դրամի վրա առած է տարօրինակ մի ձև, այն է լատինեերեն P, շրջանակի աջ կողմը փոքրիկ մի գիծ կցված (տե՛ս Սիսուան, էջ 232):

Արդի ձեռագրի մեջ միացման օրենքի համաձայն ստանում է զանազան ձևեր:

### ժ, ծ, ծ

Երկաթագրի մեջ տառս երկու ձև ուներ՝ պարզ և գլուխը հորիզոնական գծով: Այս երկու ձևերն էլ շարունակվում են բուրգրի մեջ: Փղոսկրյա Ավետարանում՝ 989 թվից (Շողակաթ, № 44) գրտանում ենք երկրորդ ձևով և թևն էլ գրեթե վայրահակ. Սարգիս Սևանեցու ձեռագրում (1041 թվից, Շիրակ, էջ 50) նույն հորիզոնական գծի վրա մի կոթ էլ է ավելանում և տառի գլուխը դառնում է Վ. բացի սրանից տառը ամբողջապես տողից ցած է գրվում: Այս ձևի տակ տառը ճիշտ ծ տառի նման է և տարբերվում է նրանով, որ ծ զուրկ է գլխից, այսինքն՝ արդի վիճակի ճիշտ հակառակը: Ավելի հետո նույն հորիզոնական գիծը կիսակլոր ձև է ստանում, իբր Ժ. այս ձևով գտնում ենք տառս Կոստանդնի 1271 թվի դաշնագրում (Սիսուան, էջ 210): Կիսակլորը դառնում է սուրանկյուն, ինչպես միշտ գտնում ենք Գալլեձորի Պիտոլից գրքում՝ 1278 թվից (Սիսական, էջ 133): Այստեղ երկու ձևերը միանում և այլևս կոթով ծ չի տեսնվում:

Արդի ձեռագրումն էլ ծ նույն ձևով է, սակայն կարելի է նաև թևը փոխանակ սյունից դուրս դեպի աջ երկարելու, տառի ծոցի մեջ փաթաթել:

### ի, ի, ի

Երկաթագրից մինչև այժմ մնում է նույն ոճով. Կոզովտի 999 թվի ձեռագրում շատ անգամ տողից ցած եղած մասը կրճատվելով՝ տառս ստացել է ի ձևը, բայց սա անշուշտ միայն արագագրության հետևանք է, որովհետև նույն տեղում գտնում ենք նաև սովորական ի ձևով: Արդի ձեռագրում տառս միջին թևի պատճառով դարձել է ամբողջական և միացման օրենքի համեմատ ստանում է բուրբ ձևովերը:

### լ, լ, լ

Երկաթագրից մինչև այժմ նույն ոճով է. պոչի պատճառով դարձել է ստորնական: Կոզովտի 999 թվի ձեռագրում (Այրարատ, էջ

498) ուղղահայաց սյունը հաճախ կոր ձև ունի, գրեթե յ տառի պես, իսկ պոչը աչտեղ բուրոսվին ուղիղ է, Կոստանդնի 1271 թվի դաշնագրում (Սիսուան, էջ 210) կլորած է, իսկ արդի ձեռագրում ստանում է պոչի բուրոս ձևերը:

### խ, խ, խ

Երկաթագրից մինչև այժմ պահում է նույն ձևը. կարճ կոթով ձևը հաջողութուն չի գտել. արդի ձեռագրում ստանում է միացման բուրոս ձևերը:

### ծ, ծ, ծ

Տառիս բուրոս երկրորդական ձևերը խափանված են և միայն հնագույնը, այն է՝ Ձիթենյաց արձանագրության ձևն է, որ անցած է բուրոսգրին և շարունակվում է մինչև այժմ: Արդի ձեռագրում ունի զանազան տարբերակներ, որոնք տարբերվում են իրարից գլխավորապես գլխի պատճառով, այսպես՝ մերթ ձախից ստանում է պարզ, շեղ մազագիծ, ինչպես Փրանսերեն ձեռագիր ծ, մերթ նույն շեղ մազագիծի վերևի ծայրին՝ գլխի անմիջապես աջ կողմը մի կլորակ է ձևանում, մերթ ձախից հորիզոնական մի գծիկ է ավելանում (ինչպես Մ), որի ձախ ծայրն էլ վերևից մի ոլոր է շինվում. բացի սըրանից՝ տառի մեջքը կարող է ուղիղ դիրք ստանալ կամ նաև ձախ թեքված ծուռ ու մուռ դիրք ստանալ. վերջապես պոչը կարող է ալևալ ձևերով լինել, մինչև իսկ ստանալ վերը նկարագրված 11-րդ ձևը:

### կ, կ, կ

Գիտենք, որ երկաթագրի հին ձևով տառիս երկու սյուններից մեկը մեծ, մյուսը փոքր էր, որ հետո հավասարվեց: Բուրոսգրի շրջանում՝ միջին կապը երբեմն թեք է, ինչպես Անիի 622 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 4), ուր փյունիկյան Վ գրի միջին կապի ձևով է. երբեմն բուրոսվին ուղիղ է, ինչպես Տեկորի 964 թվի խաչքարի արձանագրության մեջ (Շողակաթ, № 15), Երեբունյի 1028 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 19), Սարգիս Սևանեցու 1041 թվի ձեռագրում (Շիրակ, էջ 50), երբեմն էլ ալեծածան, ինչպես Կեշառույքի 1335 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 26): Բացի սըրանից՝ Սևանեցու ձեռագրում աջակողմյան սյունը բուրոսվին շեղ, այսինքն դեպի ձախ թեքված է, մինչդեռ մյուսների մեջ ուղղահայաց է:

Արդի ձեռագրում տառս կարող է վերի կողմից ֆրանսերեն ձեռագիր 1 գրին նման գլուխ տառնալ, նույնպես վարի կողմից տառնալ մազակից կամ պոչ, որով զանազան ձևեր առնել, մինչև անգամ յ տառի նման և նրանից ավելի մեծ պոչ ձևացնել և կամ պոչի 11-րդ ձևը տառնալ: Արագ գրության մեջ մինչև անգամ կարող է դառնալ գրեթե ուղիղ մի գիծ, որ հազիվ մեղտեղից կորացած է:

## Տ, Ե, Բ

Գիտենք, որ հնապես երկաթագրում զանազան ձևեր կային այս տառի համար, որոնք երկու գլխավոր տիպի են վերածվում. մեկը՝ կարթով (Շ), մյուսը՝ առանց կարթի (Տ): Այս երկու ձևերն էլ շարունակվում են բոլորգրում: Առաջինի ձևը բաղկացած է հինգ մասից, այն է՝ վերի ծայրը մի փշիկ, հետո կարթը, աջից ձախ մի գիծ, ձախից աջ մի գիծ և վերջապես տառի ոտքը, որ դարձյալ փշիկի ձևն ունի: Հաջորդ շրջաններում այս մասերից մինչև երկուսը կրճատվում է. այսպես՝ Սմբատ Գունդատարի շղագիր հիշատակարանում (1241 թվից, Սիսուան, էջ 72) վերի փշիկը ջնջված է, կարթը դարձած է բոլորովին հորիզոնական, իսկ ոտքը երկար և ուղղահայաց մի գիծ է դարձած: Ստեփանոս Օրբելյանի հիշատակարանում (1290 թվից, Սիսական, էջ 94) բոլոր հինգ մասերն էլ մնում են, միայն թե շորթորդ (այն է՝ ձախից աջ եկող գիծը), դարձել է հորիզոնական, իսկ տակի ոտքը՝ մեծ ու լայն ստորակետի ձևով կլորացած: Էջմիածնի № 379 ավետարանում (ԹՊ դարի, անցման բոլորգիր, Շողակաթ, № 115) ավելի հետաքրքրական ձև է ստացած. նախ փշիկը ջնջված և կարթը խոշոր միջակետ է դարձած, հետո աջից ձախ զնացող գիծը դարձել է հորիզոնական կամ գրեթե կիսակլոր, իսկ ոտքը բոլորովին ուղղահայաց. միևնույն ժամանակ՝ տառը, հակառակ սովորականին, տողից վերև է և ոտքը աստի սյունների հետ համադիր: Վերջապես Հեթում Ա թագավորի դրամի արձանագրության մեջ (Սիսուան, էջ 232) փշիկն ու ոտքը իսպառ ջնջվելով և գրծերի թեքումները մեղմանալով՝ տառը ստացել է լատինական Z տառի ձևը:

Այնուհետև տառի այս տիպը վերանում է հասարակ դործածությունից և պահվում է միայն իրրե գլխատառ:

Առանց կարթի ձևը բաղկացած է չորս մասից. նախ՝ հաստ մի միջակետ, հետո՝ սրա ձախ կողմից դեպի վար իջնող մի գիծ, հետո՝ դեպի աջ ծալող մի գիծ, և վերջապես՝ ոտքը: Այս ձևով էլ մտնում է բոլորգրի մեջ: Բայց այստեղ սկսում է զանազան փոփոխություններ կրել. — մերթ միջակետը ջնջվում է և ոտքը դառնում է դեպի

ձախ ծովող մի գիծ. համտ. Ծրերուլքի 1028 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 19), ուր ձախ գիծն էլ հորիզոնական դառնալով՝ տառը ստացել է հունական կոտրած Σ տառի ձևը, իբր Ծ: Սարգիս Սևանեցու ձեռագրում (1041 թվից, Շիրակ, էջ 50) ունի Տ կամ 5, 5 ձևերը և տողից ցածր է գտնվում. — մերթ էլ ոտքը լայնանալով և կտրանալով՝ դեպի ձախ է ուղղվում, պոչի պատճառով դառնում է ստորնական և իր այս ձևի տակ գրեթե 5 թվանշանի ձևն է ընդունում, ինչպես Կոզովտի 999 թվի արձանագրության մեջ և էջմիածնի № 2520 ձեռագրում (1306 թվից, Շողակաթ, № 120). — վերջապես սրա էլ միջակետը ջնջվում է և բոլորովին նոր տառի երևույթն է ստանում, նման զանդիկ Տ կամ պահլավ. 3 և դպտի Խ (թէյ) տառերին և կամ գլուխը կոտրած 5 թվանշանին (իբր 5): Այս ձևերով գտնում ենք այս տառը էջմիածնի № 3795 ձեռագրի հիշատակարանում՝ 1190 թվից (Շողակաթ, № 65), Լամբրոնացու հիշատակարանում՝ 1197 թվից (Սիսուան, էջ 92), էջմիածնի № 2606 ձեռագրում՝ 1198 թվից (Շողակաթ, № 67), Լևոն Բ թագավորի ստորագրության մեջ՝ 1210 թվից (Սիսուան, էջ 438), Երուսաղեմի № 2660 ձեռագրում՝ 1262 թվից (Շողակաթ, № 83), Կեչառուլքի 1335 թվի տապանագրում (Շողակաթ, № 26) և այլն:

Տարօրինակն այն է, որ երկու ձևերն էլ միաժամանակ գտնվում են միևնույն ձեռագրի միևնույն էջի վրա. օրինակ՝ էջմիածնի № 2606 ձեռագրի (1198 թվից, Շողակաթ, № 67) մեկ էջի մեջ տառս կա 6 անգամ, որից երեքը առաջին, երեքը երկրորդ ձևով է. Երուսաղեմի № 2660 ձեռագրի (Շողակաթ, № 83) մեկ էջի մեջ կա ինն անգամ, որից յոթը՝ առաջին ձևով, երկուսը՝ երկրորդ ձևով: Այս երկրորդ ձևը սակայն հետզհետե գործածությունից դուրս է գալիս և վերջապես խափանվում է:

Արդի ձեռագրում այս տառը զանազան ձևեր ունի: Առաջին և սովորական ձևն է լատինական ձեռագիր ի տառին նման, որի թևը կարող է նաև մեծ սյունի ձախ կողմը միայն մնալ և աջ կողմը շանցնել, մոտավորապես լատինական տպագիր ի ձևին նման: — Երկրորդն է նոտրագիր և ձևի շարունակությունը, սակայն ձեռագրին հարմարվելու համար երկու թեք գծերը կտրիկ ձև են առած՝ լատինական G տառի նման: Սրա էլ տարբերակներն են Լ տառին նման մի ձև՝ տողից վեր գրված, կամ նույնը՝ գլուխը անջատ, և կամ պոչն ու գլուխը միացած՝ գոթական ձեռագիր և տառին նըման:

Ձեռագրի առաջին ձևի համեմատությամբ Արամյան ոճով այս գրի համար հնարված է ի ձևը՝ ճշտիվ նման լատինականին:

Գիտենք, որ երկաթագործում այս տառի բերանը շատ ավելի րաց էր, այսինքն՝ ուրբակի ձախ մասը տառի մարմնին կպած չէր. միևնույն ժամանակ պոչի ծայրը վերև շէր ուրբոված, ինչպես է օրինակ 2 ձևի մեջ: Այս ձևով գտնում ենք տառը նաև անցման շրջանում, ինչպես ցույց է տալիս հաշիկ վարդապետի պատասոկիը՝ 1040 թրվից (Շողակաթ, № 48), կամ ավելի ուշ՝ էջմիածնի № 379 ավետարանում (ԺՊ դար, Շողակաթ, № 115):

Արագ գրելու ժամանակ դժվարություն էին հանում տառի գրուիսը և պոչի ուրբը, ուստի և այս երկուսը սկսեցին հետզհետե փոփոխության ենթարկվել: Նախ գլուխը՝ փոխանակ վարից վեր և ձախից դեպի աջ երթալով կլորակ շինելու (ինչպես անում ենք շ, 2, 3 գրերը գրելու ժամանակ), սկսեց վերևից ներքև իջնելով մի կոթ ձևացնել և հետո ձախից աջ ուրբվել, ճիշտ նտարագիր ծ գրելու պես: Միևնույն ժամանակ պոչի ուրբը՝ փոխանակ տառին իբր շարունակություն մեկ շարժումով հանելու, անշատ է գրվում և մինչև երկու շարժումով է հանվում: Այսպես օրինակ՝ էջմիածնի № 1214 ձեռագրում (1110 թվից, Շողակաթ, № 60) տառը հետևյալ ձևով է գրում գրիչը. — նախ վերից վար գծում է մի կոթ (1), նրա վարի ծայրից կպցնում է 2) ձևով կլորակը, հետո նոր շարժումով՝ կլորակի ծայրը ավելացնում է օ ձևով մի ուրբը: Բայց երբեմն էլ այս ուրբը երկուսի է բաժանում. նախ դնում է մի թեք գիծ, ճիշտ ինչպես 2 գրի տակն է, որի ձախ ծայրը տակից ավելացնում է չ ձևով մի նշան: Սա ավելի անփույթ ձևով գրվելով՝ վերի կոթի և վարի նշանի տեղ մեկ մեկ միջակետ կարող է գրվել, որոնք տառից մի քիչ հեռու և առանձին են մնում, իբր : 2. այս ձևով է տառը էջմիածնի № 3795 ձեռագրում 1190 թվից (Շողակաթ, № 65):

Այնուհետև նույն գլուխը փոխվում է և ստանում է և տառի կրտուցի ձևը (+), որի տակ կցվում է սովորական դարդարուն 2 ձևը կամ ավելի պարզ՝ օ. առաջինը գտնում ենք էջմիածնի № 177 ձեռագրի մեջ (ԺՊ դար, Շողակաթ, № 118), երկրորդը գտնում ենք Սարգիս Սևանեցու ձեռագրում՝ 1041 թվից (Շիրակ, էջ 50):

Սակայն օ ձևը գծելու համար գրիչները մտածում են ուրբը փոխանակ ձախից դարձնելու՝ աջից դարձնել. սրանով առաջ է գալիս բուրբգրի ձ ձևը: Այնուհետև նույն աջակողմյան ուրբը ավելի անփույթ կերպով է դժվում, որով և տառը գրեթե և տառի ձևն է ըստանում. այսպես ենք գտնում Կոզովտի 999 թվի հիշատակարանում՝ 3 անգամ (մեկ անգամ էլ երբայական 2 գրի ձևով, որ սակայն թվում է, թե փորագրության սխալ է): Այս նմանութունից

խուսափելու համար՝ այժմ էլ գրիչները սկսում են ձ տառի թեք վար կախել, և տառի ոտքի նման. համար. Կոստանդինի 1271 թվի դաշնագիրը (Սիսուան, էջ 210), Գալլեձորի Պիտոլից գիրքը 1278 թվից (Սիսական, էջ 133), 1291 թվից մի հիշատակարան (Սիսական, էջ 131) և այլն: Սրանց մեջ հիշյալ ոտքի վերի ծայրը տառի մարմնին ուղղակի կպած է, շոտով մի քիչ հեռանալով՝ ճիշտ և տառի ոտքին նման է գրվում. համար. էջմիածնի 3793 ձեռագրի մեկ հիշատակարանում՝ 1201 թվից (Շողակաթ, № 70), նույն 1291 թվի հիշատակարանում (Սիսական, էջ 131), Կեչառույքի 1335 թվի հիշատակարանում (Շողակաթ, № 26): Սրանից անմիջապես առաջանում է նոտրագրի 3 ձևը:

Արդի ձեռագրում այս տառը երեք ձև ունի. նախ՝ նոտրագրի ձևը՝ վերի ծայրը մաղազձով կամ փոքրիկ ոլորակով, իսկ պուրջ զանազան խազերով՝ համաձայն պուշի ոլորման օրենքներին. — երկրորդ՝ ոլորուն գլխով, ճիշտ ինչպես գերմանական 3, որ գործածական է միայն Կովկասում. — երրորդ՝ վերից վար ուղիղ առանց բեկբեկումների, ինչպես եվրոպական ձեռագրի 3:

## դ, Ռ, Պ

Երկաթագրից մինչև այժմ պահում է նույն ոճը: Արդի ձեռագրում պուշի օրենքների համաձայն ստանում է բոլոր տարբերակները:

## Ճ, Ռ, Ճ

Երկաթագրի ոճը պահված է մինչև հիմա. հին գրությանց մեջ երկու թրածե գծերը կարող են անհավասար լինել, իսկ տակի խարխուր մերթ բոլորովին ուղիղ է և մերթ տառի փորի հետ կանոնավոր ձևածիր է ձևացնում, որի կլոր մասը վար և սուր մասը վեր է ուղղվում: Առաջինին իբր օրինակ ունենք Սարգիս Սևանեցու ձեռագրից՝ 1041 թվից (Շիրակ, էջ 50), իսկ երկրորդի համար՝ Կոստանդինի դաշնագիրը 1271 թվից՝ (Սիսուան, էջ 210), արարական օ գրի պես:

Արդի ձեռագրում զանազան ձևեր է ստանում այս տառը. 1. Լատին. ձեռագրի գլխատառ D ձևի պես, միայն ալիլի փոքր, որ և ամենից սովորականն է: 2. Նույնը՝ միայն թե վերևի ձախակողմյան մեծ ոլորքը միջին սյունից ներս, իսկ միջին սյունը ավելի ուղղահայաց և վերևի ծայրը առանց զարդի: 3. Ծիշտ այս երրորդ ձևի նման, միայն առանց տակի ձախակողմյան ոլորքի: 4. Այս երրորդ ձևի նման, միայն աջակողմյան մեծ ոլորքի ծայրը մի քիչ սյունից

գուրս երկարած: 5. Այս շորթորդ ձևի նման, միայն խարխախը առանց անհարթութիւնաց, բոլորովին կլոր, գրեթէ Կոստանդինի դաշնագրի ձևով: 6. Չորթորդ ձևի պես, միայն տառի խարխախը գրեթէ հունական Ծ տառի ձևով, իսկ վերի ոլորքը միջին սյունից դեպի ձախ երկարելուց հետո, տակից դառնալով, եորից դեպի աջ՝ տառից դուրս երկարելով, իբր մի թև, մոտավորապես ֆրանսերեն ձևագիր է տառի միջին թևի նման: 7. Գրեթէ ի տառի նման մի ձև աչ ծայրը միջակետով, միայն թև աշակողմյան կարճ սյունի մազագիծը նույն սյունի ձախից ոլորելով դուրս եկած, իբր Ծ ձևով: 8. նման մի ոլորք՝ նաև մեծ սյունի ձախ կողմից: 9—10. նման 7—8 ձևերին, միայն մեծ սյունի գլուխը փոխանակ աչ ծոած կորուսելու ձևացնելու, ձախից ալեծածան թևով, մոտավորապես Ժ ձևով:

### Մ, մ, մ

Երկաթագրի մեջ այս տառը բաղկացած էր երկու հալասար սյուններից, երկրորդի ծայրը հորիզոնական մի թևով: Այսպես ենք գտնում նաև դեպի բոլորգիր անցման շրջանում, օրինակ՝ Սրերույցի 1028 թվի արձանագրութիւն մեջ (Շողակաթ, № 19) Մ ձևով է: նույնը, բայց թևը մի քիչ ավելի թեք ձևով՝ Տուսերդու հիշատակարանում՝ 1154 թվից (Այրարատ, էջ 167): Կոզովտի 999 թվի հիշատակարանում գրիչը հետևյալ ձևով է գրում այս տառը, նախ՝ գծում է Ս ձևը, հետո՝ սրա աչ սյունի ծայրը, առանձին կպցնում է մի թև, որ զանազան ձևեր է ստանում, մերթ պարզ թևք մի գիծ է լինում, մերթ պարուկի նման (\*), մերթ մի թևք գիծ՝ ծայրը բութ նշանով (') և այլն: Այս բոլորի մեջ երկու սյունները հալասար են և թևը աչ սյունի ճիշտ ծայրին է կպած: Ավելի հետո սյունների ձևը փոխվում է. այսպես՝ 1291 թվից մի հիշատակարանում (Սիսական, էջ 131) ձախ սյունը կարճ է, աչը երկար և նույնիսկ երկու սյունները իրար կապող ստորին հորիզոնական գծից ավելի վար իջած, իսկ թևը ոչ թև աչ սյունի ծայրին է կպած, այլ բավական ներքև, գրեթէ այսպես Վ: Վերջապես ամբողջը մեկ գրչով հանելով և ծայրից ծայր երկու կորուսելու կաղմելով՝ առաջանում է նորի նման մ ձևը, ինչպես գտնում ենք արդևն Կոստանդինի 1271 թվի դաշնագրում (Սիսուան, էջ 210)՝ երկար թևով, և Կեչառույցի 1335 թվի արձանագրութիւն մեջ (Շողակաթ, № 26)՝ կարճ թևով:

Ն, ի, է, ր, փ և այլն տառերի մոտ այս տառի թևը կրճատվելով դառնում է մ, իսկ ն տառի հետ գրկախառնվելով՝ առաջանում է մ ձևը:

Արդի ձևագրում այս տառը նոտրագիր մ տառի ոճով է և ունի

զանազան տարբերակներ, որոնք միայն թեև ոլորքի կողմից են տարբերվում իրարից. այսպես կարելի է՝ 1, 2 տառերի պոչի նման երկար հորիզոնական մի գիծ քաշել, նոտը մ ձևի պես իր վրա կորացնել, նույն կորուսյունը կարելի է իր վրա լավ ոլորել, նույնիսկ կրկին անգամ, կամ ոլորքի ծայրը դեպի ձախ՝ սյունից դուրս երկարել, կարելի է նաև վրացական Յ ձևի կամ ֆրանսերեն ձևագիր Յ ձևի պես թևը ձախ ոլորել, և կամ հունարեն Յ տառի պես նույնը ձախ ոլորելուց հետո՝ նորից դեպի աջ բերել: Թավրիզում հաճախ պատահում է գրեթե Յ թվանշանի նման, միայն վերի ոլորքը վարի ոլորքից ալելի մեծ, կամ մի քիչ դեպի աջ ծռած և կամ երկուսի մեջտեղը, սուր ծայրի փոխարեն մի ոլորակ շինելով՝ իբր Յ: Վերջապես կարելի է այս բոլորից զանազան խառնուրդներ կազմել, որով միևնույն տառը տասից ալելի տարբերակներ կունենա:

### Յ, Յ, Յ

Ամենահին ժամանակներից արդեն երկաթագրում տառիս ձախակողմյան կետը ջնջվելով՝ մնացել էր միայն երկու կլորակ. այսպես ենք գտնում նաև Հեթում Ա թագավորի դրամի արձանագրության մեջ, ուր գրեթե Յ թվանշանի ձև ունի (Սիսուան, էջ 232): Կրկին բոլորակները իրար կապող միջին թևը գծագրության մեջ որոշ գծավարութուն էր ցույց տալիս, ուստի հեշտության համար գրիչները մտածել են նախ շինել մի մեծ կիսալուսին, հետո մեջտեղից մի գիծ քաշել՝ ուղիղ կամ ալեծածան: Ուղիղ ձևով կլինի Յ, ալեծածան ձևով Յ: Երկուսը միաժամանակ գտնում ենք Երեբունիքի 1028 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 19): Այնուհետև միջին գիծը հասկանալի է և մնում է միայն կիսալուսինը՝ շ ձևով, ինչպես գտնում ենք Տեկորի 964 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 15), բայց ամբողջը տողի վրա և ոչ թե տողից վար: Սրանց ալելի դարգացած ձևերն են՝ նախ Չ ձևը, որ գտնում ենք Խաչիկ վարդապետի պատահիկում 1040 թվից, անցման երկաթագրով (Շողակաթ, № 48), երկրորդ՝ Ս ձևը, որ գտնում ենք Կեշառուքի 1335 թվի տապանագրում (Շողակաթ, № 26), երկուսն էլ ամբողջապես տողի վրա: Սրանց ուղիղ շարունակութուններն են բոլորգիր յ և նոտը յ ձևերը, որոնց հնագույն օրինակը գտնում ենք Կոգովտի 999 թվի ձևագրում: Կա նաև սրա մի քիչ զարդարուն ձևը Ն ինչպես գտնում ենք Տուսեորդու հիշատակարանում (Այրարատ, էջ 167) և այլուր:

Արդի ձևագրում յ տառը ունի միևնույն ձևը և պոչի նետվածքով է միայն տարբերվում. մերթ պարզ յ ձևով, մերթ ալեծածան



իրքը և ձեռով, մեկ դեպի աջ երկարած և սյունից զուրս ելած, մերթ  
զարձած՝ իրքը 2 և մերթ էլ արարական 0 գրի ձեռով, բուրբն էլ ստոր-  
նական:

## Ե, Ե, Ը

Երկաթագրում երկու ձև ունեն ասյ տառը. հորիզոնական գլխով  
և կեն կտուցով: Առաջին ձևի շարունակությունն է բուրբգիր Ե ձևը,  
որ գտնում ենք գործածված 8 անգամ Երկրույթի 1028 թվի արձա-  
նագրության մեջ, մեկ անգամ էլ նույնը՝ թեք գլխով: Սրանց մեջ եր-  
կու սյունները հավասար են և կտուցը հորիզոնական մի գիծ է: Այլուր  
ասյ ձևը չկա, և ինչպես երկաթագրի, նույնպես և բուրբգրի մեջ խա-  
փանվում է, ասպարեզը թողնելով կեռակտուց ձևին: Սա բուրբգրում  
տալիս է Ե: Սրա տարբերակներն էլ մի քանի տեսակ են. նախ՝ կա  
երկու սյունները հավասար ձեռով, ինչպես է Տուտեորդու ձեռագրում՝  
1154 թվից (Այրարատ, էջ 167). ավելի հետո տարածվում է անհա-  
վասար սյուններով ձևը: Երկրորդ՝ ունենք զարգացած կտուցով ձևը.  
այսպես՝ Կոզովսի 999 թվի ձեռագրում գրիչը սովորական ձեռով Ե  
գրելուց հետո, կտուցի ծայրից նոր հորիզոնական մի գիծ էլ է եր-  
կարում 2, և տառերի ոտքի նման: Սա կարող է մասամբ նրա հա-  
մար լինել, որ նույն գրության մեջ ձ տառն էլ, ինչպես տեսանք,  
ճիշտ Ե տառի ձևն ունի, և հետևաբար կտուցի մեծությունը կարող  
է միջոց լինել՝ տարբերելու համար այդ երկու գրերը: Ավելի հետո  
կտուցի այս ձևն էլ խափանվում է:

Ն տառից երկու ուրիշ ձև էլ ունենք. նախ՝ ոլորուն ձեռով՝ իրքը Ը,  
որ գտնում ենք 3 անգամ Կելառույթի 1335 թվի արձանագրության  
մեջ (Շողակաթ, № 26), երկրորդ՝ Ը ձեռով, որ գտնում ենք մեկ ան-  
գամ Տեկորի 964-ի խաչքարի արձանագրության մեջ (Շողակաթ, №  
15): Բայց այս երկուսն էլ բացառիկ բաներ են և հաջողություն չեն  
գտնի:

Արամյան ոճով այս տառի համար հնարված է Ը ձևը, որի մեջ  
կտուցը փոխանակ դեպի ձախ ծովելու, դեպի աջ է ոլորված. սրա-  
նով տառը ճիշտ նմանվում է Ե ձևին, միայն այստեղ տակի մասը  
ո ձևն ունի, մինչ առաջինի մեջ ո ձևով է: Այս ձևը նրա համար է,  
որ կտուցը տառի մարմնից զուրս երկարելով՝ ուրիշ գրերի միու-  
թյանը չխանգարե տպագրական արվեստի մեջ (հատկապես ձ տա-  
ռի հետ):

Արդի ձեռագրում այս տառը սովորաբար բուրբգիր Ե ձևի հա-  
մեմատ է, բայց գլուխը կարող է նաև ավելի վարից և կամ ավելի  
կամ նվազ մեծ առնչվել. նույնպես և՛ տակի մասը փոխանակ ո ձև-  
վով լինելու՝ կարող է ալեձև լինել. կարելի է նաև Արամյան ձևի

պես դուրս բերել, այն ժամանակ տառը ֆրանսերեն ձեռագիր li ձևը կստանա: Վերջապես ձեռագրի մեջ շատ սովորական է e ձևը: Սա ուրիշ բան չէ, եթե ոչ ն տառի կտուցը, որ համառոտության համար է հնարված և նախապես միայն բառավերջումն էր գործածվում, իսկ հիմա ամեն տեղ էլ կարող է գործածվել և իր հեշտության պատճառով սպառնում է ն ձևը ամբողջապես վտարել գործածության յուրեք: Սովորական գրության մեջ ֆրանսերեն e գրի ձևն ունի, բայց կարող է պոչը ավելի երկարել, դեպի վար թեքվել և կամ շատ ավելի վեր բարձրանալ՝ գրեթե ֆրանսերեն ձեռագիր e գրի պես: Ն տառի այսպիսի մի ձև հնից ավանդված չէ և հավանաբար ժԸ դարումն է հնարված:

## 2. 2. 2

Ինչպես երկաթագրի, նույնպես և բոլորգրի մեջ զանազան ձևեր ունի, որոնք բոլորն էլ նախորդ երկաթագիր ձևերի շարունակությունն են: Այսպես՝

1. Երկաթագրի երկրորդ ձևին նման մի ձև, որ արդի բոլորգիր շ տառից այն տարբերությունն ունի, որ գլխի կորուսության տեղ կա բավական երկար բուխ նշան (˘) և պոչն էլ վայրահակ է: Այս ձևը գտնում ենք Տուտտորդու ձեռագրում 1154 թվից, անցման գրով (Այրարատ, էջ 167):

2. Ծիշտ նույնը, բայց առանց վայրահակության, պոչը ուղիղ պահելով: Այսպես ենք գտնում էջմիածնի № 2679 ձեռագրում՝ 971 թվից (Շողակաթ, № 36):

3. Հունարեն ի տառի նման մի ձև, պոչը վայրահակ, ինչպես առաջին ձևը, բայց գլուխը փոխանակ պարզ բուխ նշան ձևացնելու՝ ալեձև է, իբր Շ: Այսպես ենք գտնում տառը Սարգիս Գլաձորեցու օրինակած թուղթ Շնորհալու բոլորգիր ձեռագրում՝ 1317 թվից (Սիսական, էջ 136):

4. Ղպտի շ տառի նման մի ձև, միայն թե տակը բուխ ձևով վերջացած՝ ինչպես լատին. G և ամբողջը տողից վերև գրված. այս ձևը, որ երկաթագրի 5-րդ ձևի շարունակությունն է, գործածված է Կոզովտի 999 թվի ձեռագրում՝ 8 անգամ:

5. Շ. ձևով շ, որ երկաթագրի 7-րդ ձևի շարունակությունն է. թե գլուխը, թե մարմինը և թե պոչը ուղիղ գծերից են կազմված. գտնվում է Երեբունյքի 1028 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 19) 8 անգամ:

6. Շղագիր շ, ձևի նման շ, որ գործածված է Անիի 622 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 4). սա երկաթագիր է, բայց ձևով իսկապես բոլորգրին է պատկանում և մեր շ ձևի կորացած

գլխի հնազույն օրինակն է ներկայացնում, ավելի հին, քան վերի 4-րդ ձևը:

Վերոհիշյալ բոլոր ձևերը հետզհետե հնանում են գործածությունից և առաջանում է մի նոր ձև՝ կոր գլխով և հորիզոնական պուշով. այս է մեր արդի բոլորգիր շ ձևը: Բայց սա էլ սկզբից բավական տարբեր է. կոր գլուխը մեծ, անշնորհք և անհամաչափ է, իսկ ամբողջը սկզբում է տողի վերևից: Այսպես ենք գտնում տառը Տուտեորդու 1154 թվի ձեռագրում (Այրարատ, էջ 167)՝ վերը հիշված առաջին ձևի հետ միասին, և մանավանդ Կոստանդինի 1271 թվի դաշնագրում (Սիսուան, էջ 310): Տառի գլխի այս մեծությունը, ինչպես և ամբողջական լինելը այն պատճառով է, որ այն ժամանակ դ տառն էլ շ գրի ձևն ուներ և երկուսը իրարից տարբերվում էին միայն նրանով, որ մեկը ամբողջական էր, մյուսը ստորնական: Երբ դ տառի թևը վեր բարձրացավ, այլևս շփոթության երկյուղը վերացավ և շ տառն էլ մյուսների համաչափությունը պահելու համար դարձավ ստորնական, ինչպես գտնում ենք այժմ:

Արդի ձեռագրի մեջ տառը բոլորգրի ոճով է և պուշի օրենքների համեմատ ունի բոլոր տարբերակները:

Արամյան ոճի մեջ տառը ստացել է Շ ձևը, որ հնարված է միջին-մեսրոպյան Շ ձևից և դարձել է վերնական տառ՝ միայն այն նպատակով, որ եվրոպական վաչելչագրության հետևելով՝ մեր այբուբենից ստորնական տառերի թիվը մասամբ կրճատվի:

## ո, ո, ո

Երկաթագրից մինչև այժմ պահում է նույն ոճը, ինչպես և արդի ձեռագրում, ուր կան մի քանի տարբերակներ. երկու սյունների կապը կարելի է առնել վերևից, ինչպես օրենքը պահանջում է, կամ նաև թեք ձևով (ինչպես ռուսական Պ տառի մեջ). կարելի է նաև երկու սյունները օղակաձև կազմել, և այն ժամանակ տառը դրեթի ստանում է ֆրանսերեն գլխիվայր դարձած երկու ձեռագիր օձ տառի ձևը:

## ւ շ չ

Երկաթագրի մեջ այս տառն ուներ Ձ ձևը՝ ավելի կամ պակաս փակ բերանով, որ շատ նման լինելով Չ տառին, նմանօրինակ ձևավորություններ է կրել. Այստեղ էլ դժվարություն հանողը գլխավորապես տառի կտր գլուխն էր. ուստի Չ գրի նման այստեղ էլ նախապես ձևացավ վերևից ներքև իջնող հավելվածական մի կոթ: Այսպես ենք գտնում Տուտեորդու ձեռագրում՝ 1154 թվից, անցման

երկաթագրով (Այրարատ, էջ 167), ուր մոտավորապես Չ ձևն ունի, միայն կոթը աջից ձախ թեքված և ոչ թե ձախից աջ, պոչը մի քիչ ավելի դեպի աջ երկարած, նմանապես պոչը կլոր գլխին միացնող մասը մի քիչ ավելի երկար, և ամբողջը պոչից վար կախված: Ավելի հետո պոչի դեպի ձախ եղած մասը կրճատվում է և դեպի աջ երկարած մասը սովորականից ավելի երկարում է. այսպես՝ էջմիածնի № 379 ձևագրում (ԹԳ դար, Շողակաթ, № 115), ուր տառի գլուխը գրեթե 2 թվանշանի ձևն ունի. նույնպես և՛ 1181 թվից ավետարանի մի հիշատակարանում (Շիրակ, էջ 27), անցման երկաթագրով, ուր այդ երկար պոչը գեղեցիկ կերպով դեպի վեր դարձած մի ծայր էլ ունի, ինչպես Ձ տառի մեջ, նույնպես և այստեղ կարող է տառի գլուխը երկու մասի բաժանվել, և այն ժամանակ վերոհիշյալ կոթը միջակետի ձևն է ստանում: Այսպես է նույն 1181 թվի ավետարանում: Երկու ձևերի մեջ էլ պոչը գլխին միացնող կոթը շատ կարճ է և ամբողջ տառը տողից ցած է կախված:

Չ տառի անսովոր մի ձև էլ ունենք, որ գտնվում է Տեկորի 964 թվի խաչքարի արձանագրության մեջ (Շողակաթ, № 15). փորագրությունը շատ պարզ է. բայց երևում է, որ տառը Ր կամ Ը ձևով է: Երկու դեպքում էլ ուրիշ բան չի ներկայացնում, եթե ոչ Չ տառը՝ աջ դարձած դիրքով և տակի պոչը ուղիղ: Այս ձևը այլուստ ծանոթ է և, ինչպես երևում է, հաջողություն չի ունեցել:

Վերոհիշյալ բոլոր ձևերը երկաթագրի նկարագրից առանձին տարբերություն չունեն: Նախքան բոլորգրին անցնելը անշուշտ եղել է մի շրջան, երբ տառի կոթը բավական երկարած և պոչն էլ միայն դեպի աջ երկարող թևի էր վերածված, մոտավորապես արդի ձևագրի ձևի պես: Այսպիսի չ դեռ չեմ պատահել որևէ ձևագրում, բայց պետք է գտնված լինի Թ դարի սկզբում: Այս ձևի մեջ տառի գլխի կամարածե մասը հեշտությամբ կարող էր ուղղվել և առաջանալ բոլորգրի շ ձևը, ինչպես գտնում ենք արդեն 971 թվին՝ էջմիածնի № 2679 ձևագրում (Շողակաթ, № 36): Համեմատությունը ճիշտ նույնն է, ինչ որ Ձ—ձ, Ձ—չ: Չ տառի մի ուրիշ ձև էլ ենք պատահում, այն է՝ կոթից բոլորովին զուրկ, ճիշտ շ ձևով. այսպես ենք գտնում Կոզովտի 999 թվի ձևագրի մեջ երկու անգամ. բայց այստեղ երկյուղ չկար շփոթելու շ գրի հետ, որովհետև վերջինս ունի Շ ձևը: Սակայն Կոզովտի ձևագրից նույն տեղում երեք անգամ ունի նաև շ ձևով, միայն թե ամբողջապես վերնական, մինչդեռ առաջին ձևը ստորնական է: Բոլորգրի շ տառը տարածվելուց հետո՝ անշուշտ շ գրի հիշյալ ձևը խափանվել է: Արդի ձևագրում տառը բոլորգրի հետ նույն է և պոչի ձևափոխությամբ ստանում է բոլոր տարբերակները:

Երկաթագրի ոճը պահված է մինչև այժմ: Տարբերութունն այն է, որ նախ առաջին երկու սյուները, որոնք երկաթագրի մեջ անհավասար մեծությամբ են, այստեղ վերածված են մինևույն մեծության, ինչպես պահանջում էր բոլորգրի ոճը: Երկրորդ՝ երեք սյունների կամարավոր կապը, որ առնված է վերևից, այստեղ իջել է տակը, ճիշտ ինչպես և տառի մեջ: Արդեն միջին և փոքր երկաթագրի, ինչպես և անցման գրի մեջ սկիզբ էր առել պ տառի մի ձև, որ առաջին և երկրորդ սյունները միանգամայն վերից ու վարից էին կապված, իսկ երրորդ սյունը միայն վերից. այսպես՝ **Պ** > **Պ** > տվերջինս համար. էջմիածնի № 938 ձեռագրի մեջ՝ 1045 թվից (Շողակաթ, № 50), էջմիածնի № 1890 ձեռագրի մեջ՝ 1174 թվից (Շողակաթ, № 62) և այլն: Ավելի հետո առաջացավ նաև մի ուրիշ տեսակ, ուր առաջին և երկրորդ սյունները տակից միացած էին, իսկ երկրորդ և երրորդ սյունները վերևից. այսպես ենք գտնում Տաթևի № 9 ձեռագրի մեջ՝ 1267 թվից (Շողակաթ, № 85) և Սմբատ Գունդստարի շղագիր ստորագրության մեջ (Սիսուան, էջ 71): Այս ձևը սակայն հաջողութուն չի ունեցել և տարածված է միայն տակից կապված ձևը, ինչպես գտնում ենք արդեն 971 թվին, էջմիածնի 2679 ձեռագրում (Շողակաթ, № 36) և ավելի հետո՝ Կոզովտի 999 թվի ձեռագրի և Երեբունյի 1028 թվից արձանագրության մեջ (Շողակաթ, № 15): Բայց նրանից քիչ առաջ, ինչպես Տեկորի 964 թվի խաչքարի արձանագրության մեջ (Շողակաթ, № 15) առաջին սյունները թեև արդեն հավասարված, բայց կամարը տակավին ամբողջապես վերևից է:

Արդի ձեռագրում գլխատառի համար որոշված է կապը վերևից դնել, իսկ հասարակ տառերի համար ներքևից. ոմանք սակայն այս վերջինն էլ վերևից են դնում: Երեք սյունները սովորաբար հավասար են, ոմանք սակայն առաջինը ավելի երկար են դնում, ինչպես և տառի մեջ, ուրիշներ երեք սյուններն էլ օղակաձև են բռնում, իրր իրար հաջորդող երեք ֆրանսերեն ձեռագիր eee: Վերջապես տակի պոչը ոմանք ձգում են աղատ, ոմանք աջից թևով միացնում են հաջորդ տառին, ուրիշներն էլ այդ թևը ձախից են դնում՝ յ տառի նման ոլորելով:

Զ. Զ. Զ

Երկաթագրի նման՝ անցման շրջանումն էլ այս տառը ունի գանաղան ձևեր. 1. Գլխի երկու կորությունները իրարից հեռու, այսինքրն՝ վերևի կողմից բաց, իսկ տակից միացած, պոչն էլ արևմտամ,

հորիզոնական դիրքով, ձախ և աջ կողմից: Այսպես ենք գտնում էջ-  
միածնի № 1214 ձեռագրում՝ 1118 թվից (Շողակաթ, № 60. հմմտ.  
ճան էջմիածնի № 379 ձեռագիրը՝ ԺԳ դարից, Շողակաթ, № 115):

2. Գլուխը գրեթե քառակուսի ձևով՝ դրված տողի մեջտեղում,  
քառակուսիի ձախ կողմը վերևից մի փոքրիկ փշիկ, իսկ վարից՝ մի  
քիչ երկար կոթ, որի ծայրը հաստատված է իբր պոչ՝ մի թեք գիծ,  
փոքր ինչ ալեծածան, ձախ կողմը ավելի կարճ, աջ կողմը կրկնակի  
երկար: Այսպես ենք գտնում էջմիածնի № 1328 ձեռագրում՝ 1278  
թվից (Շողակաթ, № 95):

3. Գրեթե նույն ձևով, գլուխը ձվաձև, ձախակողմը՝ վերևից  
փշիկով, պոչը ավելի ուղիղ, միայն դեպի աջ երկարած. ձախը շկա:  
Այսպես ենք գտնում Տաթև-էջմիածին № 9 |4139 ձեռագրում՝ 1267  
թվից (Շողակաթ, № 86):

4. Ծիշտ այս վերջին ձևով, միայն առանց փշիկի, պոչը միայն  
աջ կողմ երկարած և ծայրը վերև բարձրացած. այսպես ունենք էջ-  
միածնի № 2679 ձեռագրում՝ 971 թվից (Շողակաթ, № 36):

5. Գլուխը արդի ձևին նման, պոչը միայն դեպի աջ և ալեծա-  
ծան. պոչի ձախ ծայրը տակից՝ մի հաստ միջակետ կպցրած, այս-  
պես ենք գտնում № 1181 թվով ավետարանի հիշատակարանում,  
անցման երկաթագրով (Շիրակ, էջ 27):

6. Բոլորովին արդի ձևով ջ, պոչը վայրահակ, կամ ուղիղ, ար-  
դեն 1198 թվից, էջմիածնի № 2606 ձեռագրում (Շողակաթ, № 67)  
կամ քիչ հետո՝ 1215 թվից, էջմիածնի № 947 ձեռագրում (Շողակաթ,  
№ 76): Նույնը իբր շղատառ՝ պոչը վեր ոլորած՝ Կոստանդնի 1271  
թվի դաշնագրում (Սիսուան, էջ 210):

Արդի ձեռագրում տառը պահում է բոլորգրի ձևը, միայն ամբող-  
ջապես ստորնական է, մինչդեռ բոլորգրի մեջ գլուխը տողից մի քիչ  
վերև է երկարում: Ձեռագրի մեջ գլուխը կարող է լինել զուտ կլոր,  
տառի մարմնի ձախակողմը բոլորովին կից կամ մի քիչ անջատ,  
գլուխը մարմնին միացնող մազագիծը կամ կողքից, կամ տակից,  
կամ միջից և կամ վրայից առնելով, պոչն էլ՝ ըստ օրինի բոլոր տար-  
բերակներով:

ա, ո, ռ

Երկաթագրի ոճը մնում է մինչև այժմ: Միակ տարբերությունը  
թևի վրա է, որ երկաթագրի մեջ երկրորդ սյունի մեջտեղից է սկզբ-  
վում և բոլորգրի մեջ էլ դեռ երկար շարունակում է այնպես մնալ:

Առաջին անգամ 999 թվին (տե՛ս Կոգովտի ձեռագիրը) գիծը իջ-  
նում է ներքև և տառը դառնում է ո: Այնուհետև երկու ձևերը հա-

վասարապետ շարունակում են իրենց գոյությունը: Ըստ Եղեղիա-  
թի՝ գոնե մինչև 1335 թիվը, բայց անշուշտ նաև ավելի ուշ, մինչև  
որ վերջապետ ու ձևը հաղթանակում է, ինչպես որ է մեր սպագրի,  
շղագրի և արդի ձեռագրի մեջ:

Արդի ձեռագրում մի քանի տարբերակներ ունի այս տառը. եր-  
կու սյունների կապը կարող է լինել վերևից (ինչպես ու տառի մեջ է),  
բայց ավելի հաճախ վարից (ինչպես ու տառի մեջ է): Բացի սրա-  
նից՝ ոմանք երկու սյունները գրում են ուղիղ կամ օղակավոր (իբր  
Ֆրանսերեն ձեռագիր կրկնակ օօ): Նոր-Ջուղայի հայոց մեջ այս  
տառն ունի անսովոր մի ձև, այն է՝ երկրորդ սյունը բավական եր-  
կար, որով տառը ստանում է դ տառի ձևը: Այս վերջինից զանա-  
զանվում է գլխավորապես նրանով, որ դ տառի թևը վերևից է առ-  
նըվում, իսկ ո գրինը՝ մեջտեղից:

### ս, ս, ս

Երկաթագրից մինչև այժմ մնում է նույն ոճով, նմանապես՝ ար-  
դի ձեռագրում: Միայն թե ոմանք առաջին սյունը երկրորդից եր-  
կար են գրում, ուրիշներն էլ յուրաքանչյուր սյունը օղակավոր են  
ձևացնում իբրև Ֆրանսերեն երկու ձեռագիր օօ:

### վ, վ, վ

Գիտենք, որ երկաթագրի մեջ շատ հին ժամանակից երկու տե-  
սակ վ կար. մեկը՝ հավասար սյուներով, երկրորդը՝ վ ձևի պես: Բո-  
լորգրի մեջ էլ մի ժամանակ շարունակվում է առաջին ձևը. այսպես՝  
տակավին 1181 թվին, անցման գրով ավետարանի մի հիշատա-  
կարանում (Շիրակ, էջ 27) վ տառը գտնում ենք վ ձևով: Այնուհետև  
այս ձևը խափանվում է՝ տեղի տալով վ ձևին, որի պոչը կարող է  
լինել վայրահակ կամ ուղիղ: Երկու տեսակներն էլ միաժամանակ  
գտնում ենք Տուտեորդու ձեռագրում՝ 1154 թվից (Այրարատ, էջ  
167):

Արդի ձեռագրում պոչի օրենքների համաձայն ստանում է բո-  
լոր տարբերակները: Տարբերակները շատ ավելի շատանում են նը-  
րանով, որ կարճ սյունը մեծ սյունին միացնելու ժամանակ՝ մազա-  
գիծը նույնպես ստանում է զանազան ձևեր՝ միացման օրենքների  
համաձայն:

Գիտենք, որ երկաթագրի մեջ տառս ունեւր երկու ձև՝ S և Տ. միջին-մեսրոպայան գրութայան մեջ պահւմեց երկրորդ ձևը, որ ուլիղ գծերով եղավ Մ: Սրա մեջ տառի երեք սյունները անհամաչափ էին, առաջինը և վերջինը լինելով կարճ, միջինը՝ երկար: Վայելագրութայան օրենքը պահանջում էր, որ երեք սյունները հավասարվեին, ինչպես եղավ, վերջապես, բոլորգրի մեջ. բայց մինչև այդ՝ նկատելի են տատանումներ: Այսպես՝ էջմիածնի № 988 ձեռագրում՝ 1045 թվից (Շողակաթ, № 50) միջին-մեսրոպայան 11 տող գրութայան մեջ կա 11 ա, որոնցից 10 պր ձևով, մեկը՝ առաջին սյունը երկար, վերջինը՝ կարճ: Տուտեորդու ձեռագրում՝ 1154 թվից (Այրարատ, էջ 167) կա 12 ա, որոնցից հինգը հավասար սյուններով, իսկ յոթը՝ առաջինը և երկրորդը հավասար, երրորդը՝ կարճ:

Երեք հավասար սյուներով ա գտնում ենք առաջին անգամ 999 թվին, Կոգովտի ձեռագրում: Այս վիճակին հասնելուց հետո՝ այժմ էլ տառը սկսում է ուրիշ ձևափոխութայանց ենթարկվել: Նախ՝ վերջին սյունը սկսում է կլորանալ և ցած կախվել. հետո՝ առաջին սյունի ծայրից և երրորդ սյունի վարի ծայրից մեկ մեկ փշիկ է ավելանում. այսպես՝ էջմիածնի № 948 ձեռագրում, 1196 թվից (Շողակաթ, № 66). հետո առաջին և երրորդ սյունները կլորակ ձև են ընդունում, իբր թե ունենալինք պառկած լ մեջտեղից ուղղահայաց մի գիծ անցած. այսպես է կամբրոնացու հիշատակութայան մեջ՝ 1197 թվից (Սխուան, էջ 92): Վերջապես միջին սյունը սկսում է երկարելով ցած կախվել. այսպես է արդեն 1201 թվին՝ էջմիածնի № 3793 ձեռագրում (Շողակաթ, № 70) և ավելի հետո՝ Գրիգոր Յաղմանեցու հիշատակարանում՝ 1314 թվից (Սխական, էջ 137):

Սրանից առաջացավ նոտրագիր ա ձևը:

S տառը տարօրինակ մի ձև ունի Սմբատ Գունդատարլի ստորագրութայան մեջ՝ 1241 թվից (Սխուան, էջ 71), ուր երկուսը է տառը և գրեթե V ձևն ունի. բայց ըստ որում նույն տեղում կա նաև կանոնավոր ա ձևը, ուստի սա բացառիկ բան պետք է համարել:

Արդի ձեռագրում տառը սովորաբար նոտրի ոճով է, բայց միջին սյունը ուղղված և նոտրից մի քիչ ավելի երկար է: Սա երրորդ սյունին միանում է միացման օրենքի զանազան ձևերով և ըստ այսմ կազմում է զանազան տարբերակներ. մագազիծը ձախից առնվելով՝ երբեմն ստորնական ծ գրի ձևն է ստանում: Ոմանք երրորդ սյունի ծայրը ներս են ոլորում և ա տառը այն ժամանակ դառնում է գրեթե ը (ը ստորնական ձևով). ուրիշներ նախ գծում են երկար ա ձևը, ծայրը վայրահակ, և հետո մեջտեղից իջեցնում են եր-



կար և ուղղահայաց այունը, կամ նաև նույն վայրահակ ժայռից մազազծով ետ դառնալով՝ իջեցնում են նույն այունը, որով տառը գրեթե փ գրի ձևն է բնորոշում: Վերջապես ոմանք գրում են բոլորգիր և ձևի համեմատ, այսինքն հավասար այուններով: Այս վերջին ձևը միայն կովկասում է գործածական և անշուշտ խոտելի է, որովհետև և գրից շատ տարբերություն չունի:

Արամյան ոճով տառը դարձել է Տ, որ ուրբուն գլխատառ Տ ձևի փոքրացածն է և կազմված է դիտմամբ՝ նմանեցնելու համար հայերեն գիրը լատին Տ տառին և տարբերելու համար և գրից, որ աղպագրության մեջ շատ նման է ա-ին: Այս նպատակով վենետիկացիք կազմել են մի նոր տեսակի ա, որի միջին այունը տարբերվում է առաջինից և վերջինից նրանով, որ ավելի բարակ է:

## Բ, Բ, Բ

Երկաթագրից մինչև այժմ պահում է նույն ոճը: Արդի ձևագրում միացման օրենքների համեմատ ստանում է բոլոր տարբերակները: Արամյան ոճով դարձել է Բ, որ բոլորգրի կարճ ձևն է և կազմված է դիտմամբ՝ նմանեցնելու համար հայերեն գիրը լատին Բ տառին՝ հայերեն ստորնական տառերի թիվը մեկով պակասեցնելու նպատակով:

## Գ, Գ, Գ

Ինչպես երկաթագիր Յ գրի երկու բոլորակները միանալով դարձան կիսալուսնաձև Յ կամ Օ, այսպես եղավ նաև Ց տառը, որ ամեն կերպով նման էր նրան: Միայն որովհետև վերջինիս գլուխը փակ էր, ուստի այստեղ էլ կազմվեց կլորակ գլխով մի ձև, իբր Գ, այսպես ենք գտնում Երեբունյքի 1028 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, № 19), երեք անգամ: Ավելի հետո անշուշտ միջին գիծը բնկավ, ճիշտ ինչպես Օ ձևի մեջ. սրա օրինակը դեռ չէ տեսնված որևէ տեղ, բայց գրեթե նույնն է Ց ձևը, որ գտնում ենք գործածված Տեկորի 964 թվի խաչքարի արձանագրության մեջ (Շողակաթ, № 15): Այս ձևն է, ահա, որ կանոնավորվելով եղավ ց, ինչպես գրտնում ենք առաջին անգամ Կոզովտի 999 թվի ձևագրում, միայն թև այստեղ տառի պուր բավական երկար է, գրիչը երբեմն էլ գրում է ց և ծայրը նորից և ձևով մի գիծ էլ է ավելացնում: Տուտեորդու ձևագրում՝ 1154 թվից (Ալբարատ, էջ 167) տառը գրեթե Գ ձևն ունի: Այս ց ձևը կազմվելուց հետո համառոտության համար երկու սյունների վերի կապը սկսում է ջնջվել և տառը դառնում է ց. այսպես

ենք գտնում մեկ անգամ արդեն 999 թվին՝ Կոզովտի նույն ձեռագր-  
րում, և իբրև սովորական ձև՝ Սարգիս Սևանեցու ձեռագրում՝ 1041  
թվից (Շիրակ, էջ 50), էջմիածնի № 1214 ձեռագրում՝ 1118 թվից (Շո-  
ղակաթ, № 60) և այլն: Սրանից է առաջանում շղագիր ձևը, որ ան-  
ցել է նաև արդի ձեռագրին, ընդունելով այստեղ, պոչի օրենքի հա-  
մաձայն, զանազան տարբերակներ, մինչև անգամ վերևից ձախ  
ոլորված մի ձև, որ ճիշտ նման է ասորական Ե տառին:

Լ, Լ, Լ

Առաջացած է հին երկաթագիր Լ ձևից. սրանից բոլորգրին անց-  
նելու համար նախապես սկսեցին սյունը կարճ գրել և որովհետև բա-  
վական նուրբ գործ էր կարճ սյունի ճիշտ մեջտեղը գտնելով՝ նրա-  
նից հորիզոնական մի գիծ քաշել, ուստի ինքնաբերաբար երբեմն  
սկսեցին գիծը վարից առնել: Այսպես առաջացավ և ձևը: Սրա հնա-  
գույն վկայությունն ունենք Կոզովտի 999 թվի ձեռագրում: Բայց  
այլուր, ավելի հետո էլ, դեռ երկար շարունակվում է Լ ձևը. այսպես՝  
Երեբունյքի 1028 թվի արձանագրության մեջ (որ հետաքրքրական  
բոլորգիր ձևերով է) տառը դեռ Լ ձևն ունի և ամբողջական է (Շո-  
ղակաթ, № 19). բայց նույնիսկ շատ կարճ Լ ձևը գտնում ենք մինչև  
1335 թվը (Շողակաթ, № 133): Այլուր երկու ձևերն էլ միասին  
գործածվում են. այսպես էջմիածնի № 2684 ձեռագրի բոլորգիր հի-  
շատակարանում, որ 1159 թվից է, կա երեք Լ, որոնցից երկուսը  
պարզապես Լ ձևով է, իսկ մեկը այնպես կարճ է տակից, որ կա-  
րող ենք ասել, թե արդեն Լ ձևն ունի: Ամբողջապես զոտ Լ ձևը գրու-  
նում ենք 1266 թվին՝ էջմիածնի № 823 ձեռագրում (Շողակաթ, № 84),  
որ հետո ընդհանուր է դառնում և անցնում է նոտրագրին, շղագրին  
և արդի ձեռագրին: Վերջինիս մեջ սովորաբար նոտրի ձևով է, բայց  
ոմանք կարող են պոչը ցած իջեցնել, իբր Լ, ուրիշներ՝ կիսակլո-  
րակ շինել, իբր Լ, և, վերջապես, ոմանք էլ կլորակ, գրեթե Ե ձևով:

Ֆ, Ֆ, ֆ

Երկաթագրից մինչև այժմ գրեթե նույն ոճով պահված է: Այս  
տառը միակն է, որ երկաթագրում չի հպատակվել տառերի բերա-  
նաբացութան օրենքին. այսպես մինչդեռ  $B > \beta$ ,  $\Theta > \theta$ ,  $P > p$ ,  $O >$   
 $> o$ , ընդհակառակը Փ գլխագիր, երկաթագիր Փ, միջին երկաթա-  
գիր ֆ, փոքր երկաթագիր՝ ֆ, անցման գիր՝ ֆ: Բոլորգրի մեջ է  
միայն, որ այս տառի երկու բերաններն էլ բացված են: Բացումը  
կատարված է նաև վերևից և տառն ստացել է ֆ ձևը. այսպես ենք

գտնում առաջին անգամ 999 թվին՝ Կոզովսի ձեռագրում կամ քիչ  
 հետո՝ 1118 թվին՝ էջմիածնի № 1214 ձեռագրում (Շողակաթ, № 60)  
 և 1190 թվին՝ էջմիածնի № 3795 ձեռագրում (Շողակաթ, № 65): Այ-  
 նուհետև զանազանությունների համար՝ բացման ձևը փոխվելով՝ ձախ  
 կողմը եղել է վերևից, աչ կողմը ներքևից. այս է մեր արդի բոլոր-  
 գիր փ մը, որի առաջին վկայությունը գտնում ենք 971 թվից՝ էջ-  
 միածնի № 2679 ձեռագրում (Շողակաթ, № 36): Մի ժամանակ եր-  
 կու ձևերը մրցման մեջ էին և հավասարապես գործածական: Այս-  
 պես 1118 թվից՝ էջմիածնի № 1214 ձեռագրում (Շողակաթ, № 60)  
 երկու փ կա, մեկը առաջին տեսակից, մյուսը երկրորդ տեսակից,  
 1196 թվից՝ էջմիածնի № 948 ձեռագրում (Շողակաթ, № 66) երեք փ  
 կա, երկուսը առաջին տեսակից, երրորդը երկրորդ տեսակից: Մըր-  
 ցումը շարունակվում է մինչև 1283 թիվը. վերջին անգամ պատա-  
 հում ենք այս թվին էջմիածնի № 1563 ձեռագրում (Շողակաթ, № 99),  
 որից հետո այլևս առաջին ձևը վերանում է և հաղթանակում է փ  
 ձևը:

Արդի ձեռագրում տառը բոլորգրի ոճով է, բայց ունի զանազան  
 տարբերակներ: Այսպես՝ ոմանք գրում են նախ Մ ձևը, որի մեջ-  
 տեղից՝ հետո վերից վար ուղիղ մի գիծ են իջեցնում: Ուրիշները եր-  
 կու թևերը կլորակներին են վերածում, որով տառը գրեթե օ/օ ձևն է  
 քնդունում: Առաջին թևը սյունազլխին և սյունը երկրորդ թևին միաց-  
 նող մազազգծերն էլ կարող են աչից կամ ձախից անվել, որով ըս-  
 տեղծվում են նոր զանազանություններ. սրանց մեջ ամենից նկա-  
 տելին է այն զարդարուն ձևը, որի մեջ տառի առաջին թևը եղած  
 է օ, միջին սյունը *ƒ*, վերջին թևը *Յ*, այնպես որ ամբողջը եղել է  
 գրեթե *ժ*:

թ, ք, բ

Երկաթագրից մինչև բոլորգիր նույն ոճը պահված է: Երբույթի  
 1028 թվի արձանագրության մեջ, որ բոլորգիր է, ունի տարօրինակ  
 ձև՝ իբր *թ*, որ ուրիշ տեղ չէ գործածված և կամ եթև գործածված  
 էլ է, շուտով խափանված է: Բոլորգիր ք ձևի մեջ համառոտության  
 համար հետո զլխի կլորակը կրճատվելով և թևի ձախակողմյան կո-  
 թը կրճատվելով՝ առաջացավ *ք* ձևը, որ նախապես բոլորգիր էր հա-  
 մարվում և հետո միայն հատկացվեց նոտրագրին: Այս ձևը գրու-  
 նում ենք առաջին անգամ 1435 թվին էջմիածնի № 1380 բոլորգիր  
 ձեռագրում (Շողակաթ, № 136), որ կա 11 հատ ք, որոնցից մեկը  
 միայն *ք* ձևով, մյուսները ք: Սրանից քիչ առաջ՝ 1323 թվին, էջ-  
 միածնի № 3793 ձեռագրում (Շողակաթ, № 126), մինչև անգամ նոտ-  
 660

բարգիւր լինելով հանդերձ, շինք գտնում  $\pm$  ձևը, այլ  $\text{f}$  (երեք անգամ). նույնպես 1346 թվին՝ էջմիածնի № 3793 նոտրագիր ձեռագրում (Շողակաթ, № 134) չկա  $\pm$ , այլ միշտ  $\text{f}$ . այսպես և 1348 թվի մի ձեռագրում (Շողակաթ, № 135):

Այսպիսով, մի կողմից՝ Երեւույցի տարօրինակ ձևը և մյուս կողմից՝ նոտրագիր  $\pm$  ձևը՝ գրեթե բոլորովին նման են դուրս եկել հին հունարենի  $\Phi$  և  $\text{X}$  ձևերին, բայց այս նմանութիւնը զուտ պատահական է:

Արդի ձեռագրում տառը նոտր  $\pm$  ձևից է ծագում, բայց այն տարբերութեամբ, որ մինչդեռ նոտրագրում միջնական է տառը, այստեղ դարձած է ամբողջական: Բացի սրանից, կարող է վերից կամ վարից և կամ թե՛ վերից ու թե՛ վարից մագակից ընդունել՝ աչ կողմից կամ ձախ կողմից, որով կարող է կազմել զանազան տարբերակներ, մինչև ստանում է Ֆրանսերեն ձեռագիր  $\text{f}$  ձևը: Այս պատճառով է, ահա, որ Արամյան ռճով տառիս համար հնարված է  $\text{f}$  ձևը, ճիշտ լատին  $\text{f}$  տառի նմանութեամբ:

o, o, o

Երկաթագրի ժամանակ այս տառը չկար: Այս հնչումը տալու համար հները գրում էին  $\alpha$ , որից տարբեր էր  $\alpha\text{u}$  (իրը  $\alpha\text{u}$ ): Ավելի հետո վերջինս փոխելով իր հնչումը՝ դարձավ  $\text{o}$ , որով երկու հնչումները նույնացան: Այս ձայնափոխութիւնը անշուշտ  $\phi$  դարից հին է, որին իբր պայացույց գտնում ենք փառաք գրչութիւնը (փոխանակ փառաք) Անիի Ապուղամբենց  $\text{u}$ . Գրիգոր եկեղեցու արձանագրութեան մեջ (Շողակաթ, № 17): Բայց պետք է կարծել, որ Հայաստանի շատ կողմերը, ինչպես այժմ էլ,  $\alpha$  ստացած էր ուօ երկբարբառային հնչումը, որով  $\alpha$  և  $\text{o}$  տարբեր ձայներ ունեին: Այս պատճառով է, ահա, որ հայերը  $\text{o}$  ձայնը գրելու համար չգրեցին  $\alpha$ , այլ ստիպված եղան դիմել օտար աղբյուրի և հունարենից առան  $\text{o}$  ձևը: Այս գրին առաջին անգամ պատահում ենք 1214 թվին. հմմտ. Տաշյան, Ցուցակ 105 ա գրված հիշատակարանում պաղատանօք բառը: Սրանից քիչ ժամանակ հետո 1294 թվին Հեթում պատմիչի բժշկարանում քանիցս կա  $\text{o}$ , թեև ոչ բոլորովին կլորակ, այլ կոթավոր ձևով, իբր  $\alpha$  (տե՛ս Սիսուան, էջ 338):

ф, ф, ф

Երկաթագրի ժամանակ այս տառը չկար, որովհետև հայերը այս ձայնը չէին կարող արտաբերել: Շատ հետո առաջանալով լեզվի մեջ մասամբ բուն հայերենի ձայնաբանական օրենքներով (օրինակ՝

ինչի) և մասամբ օտար ընդունելից փոխառությամբ, պետք եղա՞վ  
ունենալ արանձին տառ և այն ժամանակ փոխ առան հունարեն Գ  
ձևը, որ դարձա՞վ ֆ: Առաջին անգամ այս տառը գտնում էմ գոր-  
ծածոված այս ձևով՝ 1270 թվականին, Հեթումի դուստր Տիմի իշխա-  
նուհու անվան մեջ (Սիսուան, էջ 145): Սրանից մի տարի հետո է  
կոստանդնի դաշնագիրը (Սիսուան, էջ 210), ուր գլուխը մի քիչ էլ  
վարից անվելով տառն ստացել է գ տառի արդի ձևագրի ձևը:

Արդի ձևագրում գրեթե նոտրի ձևով է, բայց կարելի է նաև  
այունը կտր գլխից մի քիչ ավելի վերև երկարել և ծայրն էլ մի մա-  
զագիծ ավելացնել:

Կովկասում շատերը գրում են ձևագիր գլխատառ ֆ՝ ձևով, իսկ  
Ք տառից զանազանում են միայն նրանով, որ իբր Յ՝ գլուխը մա-  
զագծով է միացած միջին թևին, իսկ իբր Ը՝ միացում չկա և թևը ան-  
շատ է մնում:

Այս բուրդից հետո իբրև ընդհանուր գիտողություն պետք է  
ասել, որ ինչպես գրի տեսակների, նմանապես նրանցից յուրա-  
քանչյուրի զանազան ձևերի համար տրված թվականները ընդունե-  
լու ենք իբրև մոտավոր թվական և համարելու ենք միշտ ավելի ուշ:  
Այդ թվականները մենք քաղել ենք Ալիշանի տեղագրությանց և  
Շողակաթի նմանահանություններից, որոնք ինչքան էլ հարուստ լի-  
նեն, չէին կարող սակայն պարունակել բոլոր ձևագրերի նմուշնե-  
րը: Սրա համար մենք այդ թվականները իբրև առաջնորդ չենք  
բռնած՝ գրերի զարգացման ընթացքը պարզելու համար, այլ ձևերի  
համեմատությունը: Այս պատճառով շատ անգամ պատահեցինք  
այնպիսի ձևերի, որոնց թեև ավելի ուշ ենք հանդիպում ձևագրե-  
րում, բայց զարգացման օրենքների համեմատ ավելի հին են քան  
մի ուրիշ ձև, որ ըստ բախտի պահված է ավելի հին մի ձևագրում:  
Իբր օրինակ հիշենք ֆ տառի առաջին ձևը (վ), որի գործածության  
թվականն է 999 թվից մինչև 1183, և երկրորդ ձևը (փ), որ գործած-  
վում է 971-ից մինչև այսօր: Երևութապես սրանց մեջ ավելի հին է  
ֆ, բայց ըստ զարգացման պատմության՝ հնագույն ձևը առաջինն  
է, որ և, հետևաբար, պետք է դրվի նախքան 971 թվից:

Վերջացնելու համար հայերեն գրերի զարգացման ընդհանուր  
պատմությունը, հիշենք նաև այն նորագույն փոփոխությունները, որ  
ոմանք փորձեցին մտցնել նրանց մեջ: Ամենքին հայտնի է, որ բու-  
լոգրի մեջ կան մի քանի տառեր, որոնք չափազանց նման են ի-  
րար և փոքր գծիկներով միայն տարբերվում են իրարից. այսպես են  
ա—ա, գ—դ, զ—զ, ո—ո: Օտար բառերի ընթերցանության, մանա-  
վանդ տպագրական փորձերի ժամանակ շատ դժվար է զանազա-

նել այս տառերը, ուստի մտածեցին մի ելք գտնել: Մուրճ թերթի խմբագիր Ա. Արասխանյանը 1898—1899 թվին հնարեց նոր տառեր. Ղ դարձրեց Ղ, Ղ դարձրեց Ղ, իսկ Ե տառի մեջ միջին սյունը երկարելով դեպի վար՝ դարձրեց պ: Մուրճի այս նորմուծութունը շարունակվեց մի քանի տարի, բայց հետո՝ թերթի հետ խափանվեց: Նույն խնդրով դբաղվել է նաև Վենետիկի Մխիթարյան միաբանութունը, բայց փոխանակ Մուրճի խմբագրութան նման նորահնար և անհամաչափ ձևեր հնարելու, աշխատել է օգտվել արդեն գործածական դարձած հայ ձևերից և գ ձևի տեղ դրել է Ղ, գ ձևի տեղ Ղ, իսկ Ե տառի միջին գիծը ավելի բարակ է առել: Ո և Ա գրերը մընում են անփոփոխ: Այս շատ գեղեցիկ ձևափոխութունը դժբախտաբար ամենուրեք տարածված չէ:

Գ Լ Ո Ւ Ե Թ

## ՀԱՅԵՐԵՆ ԾԱԾԿԱԳՐԵՐ

Ծածկագիր ընդհանուր անունով հասկանում ենք այն տեսակ տեսակ խորհրդավոր գրութունները, որ հին գրիչները գործածում են երբեմն իրենց գրության մեջ, գաղտնի լինելու համար, երկու նպատակով: Նախ՝ ապահովելու համար իրենց հիշատակը ապագա կեղծարարներից, որոնք ջնջելով բուն գրչի անունը, իրենց անունն էին դնում՝ գիրքը, գրչի հիշատակը և նրա եղբորմիսքը յուրացնելու համար: Ըստ այսմ, այս կարգի ծածկագրերը շատ սակավաթիվ են. գտնվում են միայն հիշատակարանների մեջ և ուրիշ բան չեն պարունակում, եթե ոչ գրչի անունը՝ համառոտ հիշատակությամբ: Երկրորդ՝ որոշ շափով գաղտնի պահելու համար բժշկական կամ քիմիական այնպիսի տեղեկութուններ, որոնց շարաշար գործածութունը տգետների ձեռքով՝ կարող էր վնասակար լինել: Ըստ այսմ, այս կարգի ծածկագրութունների պատահում ենք բժշկարանների, քիմիական գրվածքների և վեցհազարյակի մեջ: Երկու պարագային էլ ծածկագրողը վստահութուն ունի դեպի այն գիտունը կամ ուսումնականը, որ կարող է հասկանալ ծածկագրի իմաստը և իբրև ուսումնական մարդ՝ բարեխիղճ կերպով կվերաբերվի հենրի հիշատակին և այն խորհրդավոր գաղտնիքներին:

Ծածկագրերը երկու տեսակ են. առաջինը՝ նրանք, որ ուղղակի հայերեն տառերն են՝ տարբեր արժեքով, այնպես որ ամեն մարդ կարող է կարդալ իբր հայերեն, բայց ամենևին իմաստ չի գտնի: Երկրորդ՝ նրանք, որ բոլորովին նոր այբուբեն են ներկայաց-

նում և անկարելի է կարդալ նրանք՝ առանց այդ տառերի արժեքը իմանալու: Կա և ծածկագրի երրորդ տեսակը, որ այս երկուսի միջին տեղն է բռնում:

Առաջին տեսակին են պատկանում բվագիրը, փոխարինագիրը, գումարագիրը, կետագիրը, եղբայրագիրը, Լուագիրը:

Միջին տեղը բռնում են սյունագիրը, կոտորակագիրը, շրջագիրը:

Այս անունները հնարված են տողերիս գրողից, բացի կետագիր և եղբայրագիր բառերից: Սյունագիրը այլուր կոչված է զավագանագիր, որ տարբեր իմաստ ունենալով, հարկ համարեցի այս անունով կոչել:

Երկրորդ տեսակին են պատկանում այլաձև այբուբենով ծածկագրերը:

Թվագիր եմ կոչում ծածկագրության այն տեսակը, որի մեջ տառերը նշանակվում են իրենց թվական արժեքի պարզ բաղմապատիկներով. այսպես  $n$  (600) նշանակվում է զն ( $6 \times 100$ ),  $\iota$  (7000) նշանակվում է էն ( $7 \times 1000$ ),  $\jmath$  (300) նշանակվում է զն ( $3 \times 100$ ) և այլն: Միավորները բնականաբար ծածկագրության այս ձևին շին հարմարվում:

Փոխարինագիր եմ կոչում ծածկագրի այն տեսակը, որ յուրաքանչյուր տառի փոխարեն դրվում է տարբեր թվական դասի համապատասխան տառը: Այբուբենը բաժանվում է շորս դասի, յուրաքանչյուրը 9 տառից բաղկացած. միավորներ (որոնց մեջ մտնում են ա, բ, գ, դ, ե, զ, ը, ր տառերը), տասնավորներ (այն է՝ ծ—ղ), հարյուրավորներ (այն է՝ ճ—ջ) և հազարավորներ (ա—է): Փոխարինագրի մեջ միավորի տեղ գրվում է հազարավոր, տասնավորի տեղ հարյուրավոր, հարյուրավորի տեղ տասնավոր և հազարավորի տեղ միավոր:

Այստեղ դնում եմ ամբողջ ծածկագիր այբուբենը՝ յուրաքանչյուր տառի տակ դնելով իր արժեքը շրջագիր:

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ի	լ	խ
ն	ս	վ	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
ծ	կ	հ	ձ	ղ	ճ	մ	յ	ն	շ	ո	չ
ղ	ն	չ	պ	ջ	ծ	ի	լ	խ	ծ	կ	ն
ջ	ո	ս	վ	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը
դ	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ		

Թածկագրի այսպիսի մի օրինակ ունենք Տաշյանի Ցուցակում, էջ 50 ա, որ հետևյալն է.

ց. ր. մ. ի. խ. կ. ի. ո. հ. ո. է. ի.  
ա. է. կ. հ. ր.

որ վերլուծելով՝ կարդում եմ.

ՉՍիմնում կրամատորս.

Գրիչը սխալված է երեք տեղ. պետք է հասկանալ. «զսիմէոն կրամատորս» և այս վերլուծումս ճիշտ է, որովհետև գիտենք ուրիշ հիշատակարաններից, որ նույն ձեռագրի գրիչն է Սիմէոն կրամատոր (տե՛ս անդ, էջ 49 ր):

Ինչպես տեսնվում է, ծածկագրի այս ձևի մեջ տառերի փոխառեակությունը դասից դաս՝ եղել է գիրկընդխառն: Բայց կարելի է ենթադրել, որ փոխանակությունը ուրիշ տեսակ էլ եղած լինի. այսպես՝ միավորի տեղ տասնավոր կամ հարյուրավոր, տասնավորի տեղ միավոր կամ հազարավոր, հարյուրավորի տեղ տասնավոր կամ միավոր և այլն: Բայց այս ձևերին հանդիպած չեմ, ուստի չեմ ուզում օրինակներ տալ նրանց մասին: Բայց ավելորդ չեմ համարում հիշել փոխարինագրի զարմանալի մի օրինակ, որ հրատարակված է Հանդ. ամս. 1921, էջ 41, այսպես.

«Ձեռամբ թերավարժ գրչի ի. ր. դ. ժ. ի. բ»:

Ահի՛նյանը այս ծածկագիրը իրավամբ կարդում է «Մինասի».  
բայց անկարելի էր կարդալ, եթե այլուստ նույն անունը ծանոթ չլիներ (հմմտ. անդ. էջ 29 և 40): Իրոք էլ թեև սրա մեջ գտնում ենք երեք անգամ միավորի տեղ տասնավոր և տասնավորի տեղ միավոր (ա-ժ, ի-բ), բայց հետո մեկ անգամ հարյուրավորի տեղ տասնավոր (մ-ի), հարյուրավորի տեղ միավոր (ն-դ), հազարավորի տեղ տասնավոր (ս-ի): Արդյոք գրիչը դիտմամբ է արել այսպիսի խառնակ փոխանակություններ, և այն ժամանակ ինչքա՛ն դժվար պիտի լիներ ընթերցումը:

Գումարագիր եմ կոչում ծածկագրի այն տեսակը, որ յուրաքանչյուր տառ իր թվական արժեքի համեմատ վերածվում է զանազան մասերի. այդ մասերը նշանակվում են իրենց համարժեք տառերով և ընթերցողը գումարելով նրանք՝ վերածում է ամբողջի: Այսպես՝ ենթադրենք, թե ուզում ենք գրել դ. այս տառի թվական արժեքն է 4, որ իր մասերին վերածելով կլինի 2+2 կամ 3+1 և կամ 1+3, ըստ այսմ էլ կարող ենք այս տառի համար իբրև ծածկագիր գրել րր կամ գա և կամ ագ, որոնք միևնույն արժեքն ունեն: Այս բացատրությունից երևում է, որ միևնույն տառը կարող է զանազան ձևերով գրվել և որքան մեծ լինի տառի թվական արժեքը,



այնքան էլ մեծ կլինի նրա ծածկագրի թիվը: Ա (1) տառը անբա-  
ժանական լինելով՝ բնականաբար կարելի չէ ծածկագրել գումարա-  
գրի մեջ. —բ (2) տառը կարելի է միայն ծածկագրել այս ձևով.  
—գ (3) տառը կլինի առա կամ ար և կամ բա. —դ տառը կարող է  
լինել առաա, աար, արա, ազ, գա, բաա: Ըվ այսպես՝ մյուսներն  
էլ: Որպեսզի ծածկագրված յուրաքանչյուր տառ շատ ընդարձակ տեղ  
չբռնի, միանգամայն և վերծանությունը ավելի դժվար լինի, ընդ-  
հանրապես ծածկագրողները կազմում են կարճ խմբեր և յուրա-  
քանչյուր տառի մասերը աշխատում են առնել միևնույն դասից.  
այսպես՝ միավորները միավորներից (արդեն այս դասը ուրիշ կեր-  
պով կարելի չէր), տասնավորները տասնավորներից, հարյուրավոր-  
ները հարյուրավորներից և հազարավորները հազարավորներից:  
Հաճախ օգնության են առնում նաև բազմապատկիչներ. երբ մի  
հարյուրավորներից կամ հազարավորից առաջ միավոր կա, այս  
միավորը անշուշտ բազմապատկիչ է: Վերջապես ծածկագրին խա-  
րուսիկ ձև տալու համար՝ երբեմն այս կամ այն տառը առանց ծած-  
կագրելու թողնում են իր բնական ձևով:

Գումարագրի ընդարձակ մի օրինակ ունենք Տաշյանի Տուցա-  
կում, էջ 997 բ, որ հետևյալն է.

Ձ. գա. ոսս. եեծ. ժեեծ. մմճճրճ. դճյ. լիիժժ. սս. ա. մճճ. ժեե.  
մմ. գճմճ. սսո. բբ. ժժ. գճ. ճճճ. ժժ. մճմ. գր. ա. եեժ. ոսո. վս. դա.  
ւ. ա. լի. գգ. խժժի. բբա. ձ. դճ. ժեե. լ. սոս. ա. առ. տր. ա. մճ. գճ.  
ոսվո. դե. ե. նն. որ վերլուծելով կարդում եմ՝

Ղէտիլ Պողտանին որդին յիշեա ի Տր եւ Էձ գճեձ յիւր արքա-  
յութենն:

Մրա մեջ առանց ծածկագրելու են սկզբից Ձ նախդիրը, մեջեր-  
քից երկու անգամ լ (բայց երրորդ անգամ գրել է ոսվո=1000+  
+2000+3000+1000=7000, որ է լ), իսկ վերջից եևե: Միանգա-  
մայն գրիչը սխալվել է գրելով ձ, փոխանակ գ, որով եղել է գճեձ,  
փոխանակ գճեգ:

Նման մի օրինակ ունենք Հանդ. ամս. 1921, էջ 29 և 40 հետևյալ  
ձևով.

Ձեռամբ յոգնամեղ գրչի ճճ ժժ ՄՄ 00 ՌՌ ժժ դպրի.

Ձեռամբ ճճ ժժ ՄՄ 00 ՌՌ ժժ թերավարժ գրչի.

Երկուսի մեջ էլ ծածկագրված տառերը գույգ են և հավասար  
արժեքով. միանգամայն ա տառի տեղ գրված է 00. ամբողջը կար-  
դացվում է Միևախի (ինչպես մեկնել է Ակինյան, անդ):

Կետագիր եմ կոչում ծածկագրության այն տեսակը, որ գոր-  
ծածական են միայն ա, ծ, ց, ո տառերը՝ իբրև հիմնական, իսկ  
մյուսները նշանակվում են սրանց վրա որոշ թվով կետեր ավելաց-

ներով: Որեւէ տառ ծածկագրելու համար նախ նշանակվում է իր դասի առաջին տառը և սրա վրա ավելացվում է մի կետ կամ կետեր՝ համեմատ այն կարգին, որ բռնում է այդ տառը իր դասում: Այսպես՝ բ ծածկագրելու համար դնում ենք ա՞, որովհետև պատկանում է միավորների դասին և նրա մեջ բռնում է երկրորդ տեղը.— ա ծածկագրելու համար դնում ենք ո՞, որովհետև պատկանում է հազարավորների դասին և նրա մեջ բռնում է շրջորդ տեղը:

Կետագրի մի օրինակ ունենք Գրիգոր եպս. Տուտեորդու ինքնաձեռագրում, որի նմանահանութունը տե՛ս Այրարատ, էջ 167: Գրիչը մասամբ առանց ծածկագրության, մասամբ կետագրով և մասամբ էլ թվագրով ու գումարագրով դնում է իր ստորագրութունը հետևյալ ձևով.

գրի Ա.... ճ..... ո..... վառդապե Ռ.... Ճ..... Ռ..... Ա.... ԺԺ...  
ՍՍ..... զն եռ սս այ. որ կարդացվում է՝

Գրիգոր վառդապետ որդի Տուտայ:

Շղագրերը կետագրությամբ չեն:

Եղբայրագիր<sup>1</sup> է կոչվում ծածկագրության այն ձևը, որի մեջ յուրաքանչյուր տառի տեղ դրվում է իր հաջորդը՝ այբուբենի շարքից. այսպես՝ ա-ի տեղ բ, բ-ի տեղ՝ գ և այլն. իսկ վերջին ք տառի տեղ դրվում է ա: Ահա եղբայրագրի օրինակներ. շվն (ոսկի), եբբբն (դանակ):

Եղբայրագիրը երկու տեսակ է՝ նախորդական և հաջորդական. ինչպես կարելի է վերցնել ծածկագրելի տառի հաջորդ տառը, նույնպես կարելի է վերցնել նրա նախորդ տառը: Առաջին դեպքում ծածկագիրը կարելի է կոչել հաջորդական, երկրորդ դեպքում՝ նախորդական: Մեր տված երկու օրինակները հաջորդական էին. մի օրինակ էլ տալիս ենք նախորդական ծածկագրի, որ հանում ենք Կ. Ղաֆադարյանի «Ալբիմիան» աշխատութունից, էջ 22:

դ ց ա խ = ե լ ա ծ

որ պետք է հասկանալ «և ած (Աստուած)»: Ինչպես տեսնում ենք, եղբայրագրի այս ձևի մեջ ա տառը մնում է ա, մինչդեռ հաջորդական եղբայրագրով դառնում է բ:

Եռագիր եմ կոչում ծածկագրի այն տեսակը, ուր յուրաքանչյուր տառ ներկայացվում է իր երեք տարբեր դասերի համապատասխան կարգի գրերով. օրինակ՝ ա (1) գրելու տեղ գրում ենք ծն (10, 100, 1000).— մ (200) գրելու տեղ գրում ենք բիս (2, 20, 2000): Այսպիսով յուրաքանչյուր տառի տեղ գրվում է եռագիր մի

<sup>1</sup> Եղբայրագիր անունը, ինչպես և եղբայրագրի մասին հղած օրինակները, հանում եմ Սրտանձտեանցի «Մանանայից», էջ 311:



Շրջագիր եմ կոչում ծածկագրի այն տեսակը, որ կազմվում է հայերեն տառերին շրջված դիրք տալով: Շրջագրի մի օրինակ գրտնըվել է Սեանում՝ մի խաչքարի վրա, որ Այսվալդ գերմանացու օրինակությամբ հրատարակել է Ալիշանը՝ Սիսական, էջ 79: Այս գրի ճիշտ օրինակը ունենալու համար կարելի է թափանցիկ թղթի վրա գրել երկաթագիր այբուբենը և թուղթը գլխիվայր շրջելուց հետո՝ ետևի կողմից (կամ որ նույն է՝ հայելու մեջ) դիտել տառերը: Այսպիսով, Պ տառը դառնում է Ժ, Բ տառը դառնում է Ծ, Ծ տառը դառնում է Բ և այլն (ամբողջ այբուբենը տե՛ս այլաձև այբուբենների տախտակում):

Շրջագիր արձանագրությանս վրա երկար խոսում է Գալուստ Տեր-Մկրտչյան, Շողակաթ, էջ 137—141: Սեանի մեջ որոնելով Այսվալդի խաչքարը, գտել և ստուգել է, որ վրան կա 9 տող երկաթագիր արձանագրություն, որ հետևյալն է.

«Սա է փրկիչ աշխարհի և յոյս հաւատացելոց/ իորք երկըրպա-գէք զկպտ քհյ աղլաթս յիշեցէք/ Զքր կազմող/ Պղէ»:

Սրա մեջ փակագծյալ մասը պարզ շրջագիր է, այսինքն՝ տառերը դարձած են աջից ձախ: Հողվածագիրը ցույց է տալիս, որ Այսվալդը օրինակել է միայն մեկ տողը, որ է վեցերորդը, մինչդեռ շրջագրով են նաև 5-րդ և 7-րդ տողերը: Բացի սրանից, Այսվալդը իր արձանագրած տողը գլխիվայր է շրջել, որով առաջացել է շրջագրի գրությունը: Մենք այլուր խոսել ենք աջից ձախ գրության վրա, իբրև ծածկագրի նման մի բան կամ քմահաճույք: Գ. Տեր-Մկրտչյանը կարծում է, որ սա հին Դանիելյան գրության շարունակությունն է, որ իբր թե ասորական ոճով աջից ձախ էր և ճշգրտվիւն անհավանական» է համարում, որ հիշյալ գրությունը «որևէ գրչախաղ» լինի. որովհետև, նախ՝ իր տեսած հազարավոր ձեռագրերում աջից ձախ գրելու այդպիսի ուրիշ փորձ չի տեսել, և երկրորդ՝ որ Կարպետ քահանայի հիշատակության ծածկագիր լինելը, տարօրինակ և ավելի տարօրինակ պիտի գտնենք նաև բոլոր ծածկագրերը, որոնք էլ ավելի դժվար վերածնելի են և որոնց մեջ միշտ մեկը իր անունը դնում և խնդրում է, որ հիշեն: Այս բոլորի բացատրությունն այն է, որ գրիչները ծածկագիրը հասկանալու շափ հմուտ մարդուն համարում են ուսումնական և իբր այն՝ վրան վստահություն ունեն. հրեաների անունն ու հիշատակը եղծողները միշտ տգետներն են, որոնց համար էլ գրված է ծածկագիրը:

Մենք մեր ցուցակում շրջագիրը գրինք Աշխովալդի ձևով. բայց ուզողը կարող է թուղթը գլխիվալբ շրջել և այն ժամանակ կունենա պարզ, աշից ձախ դարձած այբուբեն:

Ծածկագրի մի ավելի բարդ տեսակն է կազմում կրկնակ ծածկագիրը, որի գլուտը պատկանում է Կ. Ղաֆաղյանին (տե՛ս իր «Աղբիմիան Պատմական Հայաստանում» աշխատությունը, Երևան, 1940, էջ 22):

Որովհետև ծածկագրերի մի քանի տեսակներ շատ սովորական էին դարձել և այլևս գաղտնի չէր կարելի համարել, ուստի ոմանք հնարել են կրկնակ ծածկագիրը: Նախ գրվում է մի ծածկագրով, որ պետք է վերլուծել, բայց ստացվում է մի ուրիշ ծածկագիր, որ նույնպես պետք է վերլուծել՝ ստանալու համար բուն իմաստը:

Այն կրկնակ ծածկագիրը, որ գտնել է Կ. Ղաֆաղյանը, կարելի է կոչել սյունագիր-եղբայրագիր: Սրա մի օրինակը գտնվում է Աղթամարից բերված մի ձեռագիր ավիստարանում: Գրված է նախ

|||: ||: |||: |: |: |||:

որ վերլուծելով, կարդում ենք՝

մ ժ ն դ ա մ

այս էլ վերլուծում ենք նախորդական եղբայրագրով և ստանում՝

յ ի շ ե ա յ

Կա նաև մի ուրիշ կրկնակ ծածկագիր (տե՛ս նույն տեղը), որ կարելի է կոչել կնտագիր-եղբայրագիր: Ահա մի օրինակ էլ նույն ձեռագրից.

ա: : n: : ա . ժ:

Այս կնտագրի վերլուծումը տալիս է՝

դ ց ա խ

որ նախորդական եղբայրագրով վերլուծելով ստանում ենք

հ լ ա ծ

այսինքն «և ած(Աստուած)»:

Այլաձև այբուբեններից առաջինը կոչվում է աղավնագիր. հանված է Ծվղոկիա գտնված մի ձեռագրից, որ պատկանում էր Դավիթ Շիրինյանին: Այս անձը նույն գրերը օրինակելով մի թղթի վրա՝ ուղարկել է Սեբաստիա, իր եղբայր Տիգրան Շիրինյանին: Վերջինից ստանալով Կարապետ Գաբրիկյանը 1908-ին, ուղարկել էր

ինձ 1911 թվին: Թղթի վրա գրված է եղել այս մակագրութունը. «Հայոց Սենեքերիմ թագաւորին հին մատեաններէն օրինակված է»: Նույն թուղթը պարունակում էր նաև հայոց հին նշանագրերը և «Հայոց պատիւով բառերն», իսկ ծածկագրի համար գրված է այս վերնագիրը. «Այս է հայոց հին աղավնագիրն»: Սրանից ավելի տեղեկութուն չունենք:

Երկրորդ այլաձև այբուբենը հանված է Սեբաստիա գտնված մի ձեռագրից, որ պատկանում էր սեբաստացի Նազարեթ Ղորղոսյանին: Ձեռագիրը գրված է ՌՃԿԲ—1713 թվին և է հեղինակութուն կամ ծաղկաքաղ Կանաչիտան եւ անարժան ծառայ ձեր մեղապարտ Մարտիրոս սուտանուն Սեբաստացւոյ: Առաջին մասն է Բժշկարան, երկրորդ մասն է Պայթարնամա, ուր կա և պողպատ շինելու, թրի ու դանակի մուխ տալու և ոսկու և արծաթի բաժինը: Հառաջաբանում հիշված է, թե հայոց Հեթում թագավորը 18 հազար զորքով գնացել է թշնամու վրա և հետո Բաղդադի Նասր խալիֆայի մոտ, ուր գտել է Ստեփանոս անուն իմաստուն մեկին, և սրան թարգմանել տալով հիշյալ գրքերը՝ բերել է Հայաստան: Ձեռագրի վերջին մասը պակաս է: Թե՛ Բժշկարանում, և թե՛ Պայթարնամայում ինչինչ բառեր գրված էին մի տեսակ ծածկագրով, տգետների ձեռքով շարաշար գործածութունից խուսափելու նպատակով: Ահա մի օրինակ.

Եւ զինչ («մարմիններ») որ շոր լինի կակղցնել այս է (մի շարք թվերուց հետո)... թէ ΔVΞϞԾ շոր գայ, հալէ և զբաղնեցն մուրն ի վրայ ձգէ, կակղնայ:

Այս կարգի ծածկագրված բառերի ընդհանուր թիւն էր 24: Թըղթակից բարեկամս՝ Գաբրիլյան, 1905 թվին ձեռք բերելով հիշյալ ձեռագիրը, ամբողջապես ընդօրինակում է: Սեփականատերը այնուհետև մեկնում է Ամերիկա՝ հետը տանելով նաև բնագիրը: Գաբրիլյանն աշխատում է վերլուծել հիշյալ բառերը և մակաբերելով նախադասութանց իմաստից՝ մի քանի բառ մեկնում է. այնուհետև բացվում են մյուս բառերն էլ: Բայց ծածկագրված բառերի սահմանափակ թիվը բավական չէր ամբողջ այբուբենը երևան հանելու համար: Այնուհետև դիմում է վեցհազարյակի հմուտ անձերի, ինչպես նաև մի քանի վարպետ ոսկերիչների, հատկապես հրացանագործ Ոսկեհան և Գևորգ էկեհահյան անուն անձերին: Սրանք հայտնել են, թե հիշյալ գրերը կոչվում են աղավնագիր և մի քանի հատի ձևն էլ տվել են, որ ճիշտ համապատասխան է եղել Բժշկարանի այբուբենին: Վերջինը հայտնել է նաև, որ իր հայրն ու պապը գործ էին ածում հիշյալ գրերը իբրև ծածկագիր և թե իրենց մոտ մնում են դեռ այդ գրութուններից: Բայց որովհետև նրանք իրենց վարպետներին

երդում են տված եղել, ուստի ծածկագրի գաղտնիքը երևան չեն հանել:

Գարիկյանը հայտնում էր նաև, որ հակառակ իր ջանքերին, որ-բիշ որևէ Բժշկարանում կամ մի այլ ձեռագրում նմանօրինակ կամ այլ ձևի ծածկագիր չի տեսել: Միայն մի տեղ պատահել է պեոնիա բառին՝ գրված ծածկագրով, այսպես՝ «*տօրն*», որից երևում է, որ *պ, օ, ա* տառերը հայերենի հետ գրեթե նույն են. *ե-ն* կազմված է նույնպես հայերեն *ե-ից*, *ի* առնված է լատինից, *իսկ* վերջին տառը հայերեն *ն* ձևն է, պատկած դիրքով և կառուցը ձևափոխված:

Բժշկարանի ծածկագրի հետ բոլորովին նույնն է այն, որ գտել է Ն. Քարամյանցը 1886 թվին և հրատարակել է ZDMG թերթի մեջ, հտ. 40, էջ 318—319: Քարամյանի գտած ծածկագիրն է հետևյալ նախադասություներ.

Յիշեցէք զմեղապարտ յովասափ սարկաւաքն:

Սրա մեջ գտնում ենք երկու տառ, որ պակասում էին Բժշկարանում. այն է *պ* և *ց*, որ ավելացրել ենք մեր ցուցակի մեջ:

Բժշկարանի տառերից մի քիչ տարբեր են *կ, դ, մ, ա, ք* տառերը.— առաջինը *կ*՝ բժշկարանի մեջ ձեռագիր *զ* տառի ձևն ունի. այստեղ վերի կողմից մի քիչ երկար թև ստանալով՝ անշնորհք գրված *կ* տառի ձևն է առել.— երկրորդը *դ*՝ այստեղ ունի (*ձ*). ձևը, որ իսկապես նույնն է բժշկարանի ձևի հետ, միայն բաժանված է մասերի.— երրորդ *մ*՝ զուրկ է թևի ավելորդ խաղերից, որ ունի նույն տառը բժշկարանում.— չորրորդ *ա*՝ զուրկ է բժշկարանի ձևի սկզբից ու վերջից ավելացած փշիկներից.— վերջապես հինգերորդը *ք*՝ նոտրագրի ձևն ունի, մինչդեռ բժշկարանում վերից ու վարից փակ  $\times$  տառի ձևն ունի. բոլորովին տարբեր է *փ* տառը, որ և դրինք մեր ցուցակի մեջ՝ տակը աստղանիշով:

Երրորդ այլաձև այբուբենը գտավ, մեկնեց ու հրատարակեց Կ. Ղաֆաղարյանը՝ իր «Ալքիմիան Պատմական Հայաստանում» աշխատության մեջ (Երևան, 1940, էջ 18): Հեղինակը այս այբուբենը լայն շահերով գործածված է գտնում մեր Պետական Գրական թանգարանի Ալքիմիական ձեռագրում: Կոչում է շրջագիր, բայց ինչպես ինքն էլ նկատում է, տառերից մի քանիսը այնքան են փոխված, որ այլևս անճանաչելի են դարձել: Իսկապես տասը տառ գրեթե անփոփոխ հայերեն տառերն են, ոմանք երկաթագիր, ոմանք բոլորգիր, ոմանք նույնիսկ շղագիր (այսպես են՝ *ծ, ի, մ, ն, շ, չ, ջ, վ, ւ, ա*). 7 տառ կազմված են հայերեն տառերից որոշ ձևափոխությամբ (այսպես են՝ *դ, բ, հ, դ, ճ, ա, ց*). 7 տառ շրջագիր են դանդան դիրքերով (այսպես են՝ *բ, գ, լ, յ, պ, ս, ր*). 12 տառ էլ բոլորովին նոր ձև են ստացել (այսպես են՝ *ա, ե, գ, է, ք, խ, ծ, կ, ձ, ո, ռ, ք*):

Ծս հարմար համարեցի այս ծածկագիրը կոչել քիմիական ծածկագիր:

Չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ և ութերորդ սյունակի այբուբենները գտել է հ. Ժիրար ճիզվիթ քահանան, որ հմուտ արեւելագետ է և ունի ընդարձակ ուսումնասիրութիւններ Փոքր Ասիայի և Հայաստանի մասին, երկար ժամանակ մնացել է Կեսարիա, Եվրոկիա և Սեբաստիա: Սեբաստիայի Ս. Նշան վանքում գտնելով ձեռագիր մի Հայոց Պատմութիւն Սենեքերիմից սկսած՝ պատրաստել է մի ընդարձակ քննական հրատարակութիւն, հանդերձ ուսումնասիրութեամբ: Վերոհիշյալ այբուբեններն էլ գտել է զանազան ձեռագրերում: № 4—5 կոչում եմ Դավթյան, որովհետև ասվում է, թե այս երկու այբուբենները Դավիթ Անհաղթ փիլիսոփայի գործածածներն են: № 6-ը գործածվել է Ալեքսանդր Մեծի ժամանակներից սկսած մինչև Արշակունիները. ուստի և կոչում եմ նախաշակունյան: № 7-ը գործածել են վրացիները՝ նախքան քրիստոնեութիւնը ընդունելը. այս պատճառով էլ կոչում եմ նախավրացական: № 8-ը գործածվել է Մերոպյան գրերից առաջ, ուստի և կոչում եմ նախամերոպյան, այս գրերից շատերը նույնն են աղավնագրի հետ:

2. Ժիրար գտել է նաև նույն ծածկագրի թվանշանները, որոնք են՝

Υ	Γ	↑	Υ	Λ	կամ	Λ	φ	⊖	Ϛ
1	2	3	4	5		6	7	8	9

Սրանց տասնյակները, հարյուրյակներն ու հազարյակները կազմելու համար թվի վերևում դնում են 1, 2, 3 կետ:

Իններորդ սյունակը ներկայացնում է այն ծածկագիր այբուբենը, որ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը գործածել է իր համախոհների հետ թղթակցելու համար Դավիթ-Գանիելյան վեճերի ժամանակ, ԺՔ դարի սկզբում: Այս ծածկագրով գտնված են ամբողջական նամակներ և այլ գրութիւններ: Գաղտնիքը լուծեց Միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանը (տե՛ս իր հոդվածը Արարատի մեջ, 1888, էջ 35—49 «Ներսիսյան ծածկագիր» վերնագրով):

Տասնմեկերորդ ծածկագիրը գտավ Կ. Ղաֆաղարյանը՝ մեր Պետական Գրական թանգարանի մի ձեռագիր ժողովածուի մեջ, որ պարունակում է տաղեր, ալթիմիա, ժամանց ևն: Բանալին գտնվում էր նույն ձեռագրում, որից և հրատարակեց Ղաֆաղարյանը, իր «Ալթիմիան» աշխատութիւնի մեջ, էջ 19: Հեղինակը այս ծածկագիրը կոչում է «գավազանագիր ծածկագիր»: Գործածված է նաև Ե.



Լալայանի ձեռագրացուցակի մեջ, № 359 ձեռագրի հիշատակարանում:

Այս ծածկագիրը կենագրի և սյունագրի մի այլ տեսակն է և բռնում է սրանց և այլաձև այբուբենների միջին տեղը: Կազմված է ինն առանձին այլաձև տառերից, որոնք ներկայացնում են ա-բ տառերը. սրանց վրա ավելացնելով մի-մի կետ, ստացվում են ծ-դ տառերը. ավելացնելով երեք-երեք կետ, ստացվում են ճ-շ տառերը. ավելացնելով երեք-երեք կետ, ստացվում են ճ-ճ տառերը:

Տառանիշերից մի քանիսը հիշեցնում են բուն հայ տառերը. այսպես՝ երկրորդ տառանիշը թևազուրկ ր է, երրորդը զ տառն է, միայն զուտը եռանկյունաձև և դրված գագաթին, չորրորդը կրկնված թևազուրկ ղ է, վեցերորդը շրջված գլխատառ զ է՝ բարձրացած սյունի գագաթին, յոթերորդը, ըստ այսմ, կրկնված և մի քիչ ձևափոխված ե-է տառն է. մյուսները անծանոթ են:

Տասներկուերորդ ծածկագիրը գտավ նույնպես Կ. Ղաֆաղարյանը՝ Ե. Լալայանի հրատարակած Ցուցակի № 359 ձեռագրի ավետարանի հիշատակարանում (1611 թվից):

Ղաֆաղարյանը կետերի հաշիվը հիմք բռնելով, կարողացավ ոչ միայն սրամիտ կերպով վերլուծել գաղտնիքը, այլև նրա հիման վրա կազմեց ամբողջ ծածկագրի այբուբենը, որ և հրատարակեց իր «Ալիքիմիան պատմական Հայաստանում» աշխատության մեջ, էջ 23, որից քաղում ենք և մենք: Անծանոթ են մնում է, ր, ն, ձ, շ, պ, յ, փ, որոնք բոլորը միասին ներկայացնում են իրպես երկու տառաձև:

Մածկագրի գրությունը բոլորովին նույնն է նախորդ (11-րդ) ծածկագրի հետ, միայն այստեղ ինը հիմնական նշանները բոլորովին ուրիշ ձև ունեն:

Տարակույս չկա, որ ծածկագրերի այս բոլոր տեսակներն էլ զանազան գրիչների հնարագիտության արդյունք են և քիչ ծավալ ստացած: Սյունագրի վրա խոսում է Մյուլլերը (Müller, Nicht Mesropische Schriftzeichen Bei den Armeniern, WVKM, 10, 129—132), որ այս գրությունը նման է գտնում Կելտացոց Ogham կոչված գրության, ուր տառերը նույնպես կազմված էին մինչև 5 գծիկների զանազան ձևափոխությամբ: Ըստ իս, այս նմանությունը պատահական է. անշուշտ հայերը ծանոթություն անգամ ունեցած չէին նույն Օգամ նշանագրերի հետ: Այլաձև այբուբենների մեծազույն մասը կազմված է հայերեն այբուբենից՝ թեթև փոփոխությամբ, կրճատումով կամ հավելումով. մյուսներն էլ հույն կամ լատին այբուբենից հարմարեցրած են: Այսպես՝ աղավաղագրի մեջ ա լատինական ձեռագիր Ա ձևից է, ք կամ հայերեն Բ ձևից է կազմված՝ թևը

կրճատելով և կամ լատինական P տառն է ըստ նոր տառադարձության. q մեր ձեռագրի ձևն է, է նույնն է երկաթագրի հետ. այսպես և՛ կ, և, ձ, վ, յ, շ, բ, ջ, վ, ց, փ, ք, օ, ֆ միևնույն հայերեն տառերն են՝ շնչին ձևավորմամբ. Կ տառը պատկած դիրքով առնված երկաթագրին է, Ղ տառի պոչը կտրված է և նրա փոխարեն՝ վրան երկու կես ավելացրած: Մի քանիսը, ինչպես Գաբրիլյանը ևս նկատում է, դեպի ձախ կրկնությունն է տառի, այսպես են՝ ծ, խ, ի, ը տառերը: Մյուս այբուբեններն էլ նման բաներ են. Դավթյան այբուբենի մեջ Կ տառը, որ լատիններեն ձեռագրի teq ձևն ունի, իհարկե ուրիշ բան չէ, եթե ոչ մեր շղագիր Կ տառը՝ ուրրուն և զարգարուն ձևով: Ավելորդ ենք կարծում ամեն մեկի վրա խոսել մի առ մի:

Ո՞ր թվականին են ծագել ծածկագրերի զանազան տեսակները: Գումարագրի համար մեր բերած օրինակը Տաշյանի ցուցակից՝ 1618 թվից է. երկրորդ օրինակը (Ակինյանի) 1572 թվից. ավելի հին է փոխարինագրի օրինակը (Տաշյան, ցուցակ, էջ 50 ա), 1439 թվից: Վերջապես Գրիգոր վրդ. Տոտեորդու ծածկագիրը, որ միաժամանակ պարունակում է կետագիր, թվագիր և գումարագիր, Ո՞ր—1154 թվից է (տե՛ս Ալիշան, Այբարատ, 166 բ): Սյունագրի օրինակների հնագույնը 1293 թվից է (Թորոս աղբար, բ, 337), մյուսները ավելի նոր են, այն է՝ 1465 թվից (Թորոս աղբար, ա, 77), 1640 թվից (Բ. 191), ԺՉ դարից (Հանդ. ամս. 1892, 82): Մյուսները կարծում է, թե քանի որ ծածկագրերի մեջ օ և ֆ տառերը չկան, ուստի են «hinter das XII. Jahrhundert»: Սակայն Աղալնագիրը ունի այս երկու տառերը, եթե միայն ավելի հետո ավելացրած չեն: Ըստ Գաբրիլյանի՝ Սեբաստիայի մեջ ավանդաբար պատմվում է, թե Սենեգերիմ թագավորն ու հայ իշխանները իրենց մեջ ծածկագիր մի գրություն էին գործածում. և որովհետև մեր թվականներն էլ մինչև 1154 են տանում մեզ, ուստի կարող ենք ասել, թե այս ծածկագրերն էլ ժՄ դարում են հնարված: Սրան համապատասխան է այն հանգամանքը, որ ծածկագիր տառերից շատը նոտրագրի, նույնիսկ շղագրի վրայից է շինված. ինչպես աղալնագիր Ք, որ պարզապես նոտր Ք տառն է, Չ, որ մեր շղագիր Չ տառն է կըն: Դավթյան գրերի երկրորդ տեսակը հայտնապես Բուֆի գրերի նմանողություն է կըն:

Մնում է մեզ քննել այս ծածկագրերին տրված զանազան անունների ծագումը: Հները սովորություն ունենին որևէ բան ընթերցողի աչքին պատմական ընծայելու համար՝ վերագրել նշանավոր մի անձի կամ առհասարակ հնություն: Այսպես՝ Երազհանը Դանիել Մարգարեինն է, Յաճախապատումը՝ Լուսավորչինն է, Հեռին շարականներ՝ Սահակինն ու Մեսրոպինն են: Գրերի մեջ էլ հայոց նշանագրերը (տե՛ս գլուխ Դ) ընծայվում են Ադամ նահապետին,

ժածկագրերից երկու տեսակ՝ Գազիթ Անհաղթին, մյուսները՝ նախարշակունյան, նախամենարուսյան և նախավրացական շրջաններին: Այս բոլորը այն ժամանակի հոգեբանությունը ըմբռնելի գրական կեղծիքներ են: Կեղծիք չէ միայն աղավնագիր բառը (աղավնու գիր), որ ըստ իս բուն «ժածկագիր» նշանակությունն ունի, ճիշտ այնպես, ինչպես ունենք ժածկալեզվի համար ցնցղկի լեզու, ազնավի լեզու կամ կոկեռեն: Այս աղավնագիր բառը հետո շփոթվելով, գիտմամբ կամ պատահմամբ, դարձել է Աղվանից գիր, և այս անունով էլ հիշված են ժածկագրերը մեր ձեռագրերում տեղ տեղ:

Մածկագրերի շարքում կարելի էր դասել նաև հայ սղագրական նշանները, որոնց համար արդեն ունենք հրուսյուն, գլխավորն է հ. Աթանաս Տիրոսյանի հրատարակածը (Վենետիկ, 1888), «Սղագրություն հայկական» վերնագրով, Գարեխրեհրգրի գրություն համաձայն:

Հայերեն սղագրության նորագույն մի գրություն հնարեց Կովկասում նշանավոր մանկավարժ Անդրակ Մանդինյանը, բայց միջոց շունենալով հրատարակելու՝ ձեռագրերը թողեց իր որդի էլեքտորագետ Գևորգ Մանդինյանին: Վերջինս, որ Քավրիզ էր գտնւում, 1923 թվին հայտնեց ինձ, որ նույն ձեռագրերը հանձնել է Ստեփան Կանայանին՝ Հայաստանի Պետական Թանգարանում պահելու համար:

Սղագրերի մասին խոսելը մեր ծրագրից դուրս է:

Այստեղ դնում եմ ժածկագրերի համադրական տախտակը<sup>1</sup>, գրքիս առաջին տպագրության մեջ այդ տախտակը պատրաստել էր Պետրոգրադի Գեղարվեստական ակադեմիայի նախագահ պրոֆ. Ալեքսանդր Քամանյանը:

<sup>1</sup> Տաշյանի Ակնարկից (էջ 89 ծան.) տեղեկանում եմ, որ ժածկագրությանց վրա խոսել է նաև Բրոսե հայագետը և մի բանի տեսակ էլ հրատարակել է Բրոսե մինչև 19 տեսակ ժածկագիր է նախաշում. հմտ. իր հոդվածը՝ Variétés arméniennes, Mélanges Asiatiques, V, 65—67 (երեք տախտակով): Ամբողջության համար պետք է այս գրվածքն էլ ի նկատի ունենալ, բայց դժբախտաբար այդ գրվածքը չեմ տեսել:



ԱՂՎԱՆԻՑ ԳԻՐԸ՝

Մեսրոպի կենսագրության մեջ արդեն տեսանք, որ Մեսրոպը հորինել է նաև աղվանից գիրը՝

Թե՛ աղվանները գիր ունեին, վկայում է այդ մասին Մովսես Կաղանկատվացին, ինքն էլ աղվան, իր Աղվանից պատմության մեջ, գիրք Ա, գլ. Գ, հետևյալ ձևով. «Եւ ի սոցանե, որք գիտեն գրպրութիւն՝ երբայցցիք, լատինացիք, որոյ և Հոռոմք վարին, Սպանեացիք, Յոյնք, Մարք, Հայք, Աղուանք...»:

Վրացի նշանավոր գիտնական Շանիձեն՝ իր մի պատվական աշխատության մեջ (Новооткрытый алфавит Кавказских Албанцев и его значение для науки, Тбилиси, 1938), էջ 3՝ գտնում է, որ Կաղանկատվացու հիշյալ տեղեկությունը քաղված է Հիպպոլիտից, որի բառերը հետևյալ ձևով են. Οἱ δὲ ἐπιστάμενοι αὐτῶν γράμματα εἰσιν: Ἰβηραε, Λατινα, οἷς χρῶνται οἱ Ῥωμαῖοι, Σπάνιοι, Ἑλληγεσ, Μηδοι, Ἀρμένιοι...:

Նկատելի է, որ Հիպպոլիտի հատվածում գրագետ ազգերի շարքի մեջ առաջին տեղը տրված է վրացոց՝ նույն իսկ հույներից, հռոմայեցիներից և մարերից առաջ: Կաղանկատվացու հատվածում նրա տեղ դրված է երբայցցիք, որ պակասում է Հիպպոլիտում: Դժբախտաբար ձեռքի տակ չունիմ Հիպպոլիտը, որպեսզի ավելի ուշադրությամբ կարողանայի քննել, թե՛ որտե՞ղ է սխալը. Հիպպոլիտի՞ մոտ՝ որ մոռացել է հիշել երբայցոց, թե՞ Կաղանկատվացու մոտ՝ որ մոռացել է հիշել վրացոց և նրանց տեղ գրել է երբայցոց: Իմ կարծիքով՝ բնագրում երկուսն էլ գրված պիտի լինեին և հետո անունների նմանություն պատճառով խառնվել են իրար: Շանիձեն նկատում է սակայն, որ Հիպպոլիտի մոտ չկա Աղվանք, իսկ Կաղանկատվացին ավելացնում է: Այս արդարացի հավելումը ցույց է տալիս, թե՛ աղվանները գիր ունեին, որովհետև Կաղանկատվացին Հիպպոլիտից ավելի լավ գիտեր, թե՛ իրենք գիր ունեին՞, թե՛ ոչ: Միևնույն ժամանակ Կաղանկատվացին ասում է. «Յետ այսորիկ

<sup>1</sup> Այս գրույթը ներկայացնում է հեղինակի «Աղվանից գիրը» հոդվածը, տպագրված ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում» (1941, 3—4, էջ 3—11): Հեղինակը մտադիր էր այս հոդվածի նյութը ներմուծել «Մեսրոպյան գրերը» գլխի մեջ, յուրաքանչյուր տառի քննությամբ, ինչպես վարվել է վրաց գրերի հետ, կամ էլ առանձին գլուխ դարձնել: Քանի որ հեղինակը չի կատարել առաջինը, մենք հոդվածը նույնությամբ հմրկայացնում ենք որպես առանձին գլուխ: Մեր կողմից ավելացրել ենք առաջին նախադասությունը և կրճատել ենք հոդվածի առաջին պարբերությունը, որի բովանդակությունը շատ ավելի ընդարձակ ձևով գրված է Մեսրոպի կենսագրության մեջ, աղվանից գրերը հորինելուն նվիրված հատվածում:— Խմբ.:

գերեցաւ ի նազրաց աշխարհս Աղուանից, հրկէզ եղնն եկեղեցիք և կտակարանք: Եանիձնն գտնում է, որ նազրաց այս արշավանքը Ձ դարի առաջին կեսին է և այն սկտակարանքս ուրիշ բան չեն, եթէ ոչ աղվաներն լեզվով շին և նոր կտակարանները:

Աղվաներն գրի-գոյության վստահելի ապացոյցներին մեկն էլ հայոց Քարգեն կաթողիկոսի ժամանակ, այն է՝ Ձ դարի սկզբում գրված այն նամակն է, որ պահված է Գիրք Քղթոցի մէջ՝ էջ 48—51: Այստեղ գտնում ենք հետևյալ հատվածը. «Այսուիկ վարիմք հաստովք, զոր և գրեցաք իսկ ձեզ յառաջագոյն, Վրաց և Աղուանից միաբանութեամբ, իւրաքանչիւր աշխարհի գրով: Եւ այժմ զնոյն երկրորդեցաք»:

Աղվանից ազգը, լեզուն և գրականութիւնը շարունակում են իրենց գոյութիւնը ոչ միայն արաբների, այլև մոնղոլների արշավանքի ժամանակ: Այս մասին մի զարմանալի վկայութիւն ունենք Հեթում պատմիչի մոտ (տպ. Վենետիկ, 1842, էջ 14): Խոսելով հայոց մասին, հեղինակը ասում է թէ ռուսին նշանագիրս արամեանս և այլս եւ՝ որ ասին հալոյենն: Այս տարօրինակ բառը երկրորդ անգամ գտնում ենք էջ 24, ուր խոսելով արաբների մասին, ասում է թէ սկալան զմեծն Ասիա ողջոյն, բաց ի թագաւորութենէն Ափսազաց, որ ի Վիրս, և բաց ի գաւառէն անտի թագաւորութեան Հայոց, որ աամկօրէն կոչի Հալոյէն: Այս երկու նահանգք զդէմ կալան Սարակինոսաց եւ ոչ կամեցան բնաւ հպատակիլ նոցա եւ այնպէս զըտան ապաստան եւ պատսպարան ամենայն քրիստոնէից, զորս հալածէին Սարակինոսք: Այս բացատրութիւնից երևում է, որ Հալոյէնը Աղվանքը պետք է լինի. նկատի ունենանք նաև այն, որ, ըստ Հեթում պատմիչի՝ Հայաստանի սահմանը սկսվում է Պարրանդ (Միրալի) քաղաքից, որով Աղվանքը լինում է Հայաստանի մաս (գլուխ Թ). պատմիչը Աղվանք անունով առանձին երկիր չգիտե:

Ըստ այս տեղեկության, ուրեմն նույնիսկ 1305 թվին աղվաներն գրեքը գոյութիւն ունեին. բայց թէ ի՞նչ եղավ այնուհետև, տեղեկութիւն չունենք: Անշուշտ հայերենի աղղեցության տակ՝ այդ գիրն ու գրականութիւնը այնպես են ջնջվել, որ հետք անգամ չի մնացել: Եվ հաստատապես կարող ենք ասել, թէ մեր զանազան ձեռագրերի մեջ հիշված «աղուաներէն» գրերը աղավաղուած ըստի հետ շփոթելու արդիւնք է: Այսպիսին է, օրինակ, Քարամյանցի դատած գիրը՝ որ ձեռագրում կոչված է «Գիր Աղուանից». Քարամյանը հավատացել է ձեռագրի մեջ եղած այդ անվանումին և հրատարակել ծածկագրերը իբրև նորագոյուտ աղվաներն գիր: Այս կեղծիքի մասին տե՛ս նաև Յրեզերիկ Մուրատի հոդվածը՝ Հանդ. ամս. 1903 (էջ 334—335):

Թե աղալնագիր և աղվանից գիր իբրև մերձավոր բառեր կարող էին հեշտութեամբ շփոթվել իրար հետ, համար. Աղալնի հատուկ առանձնը, որ Մերաստիայում հնչվում է Աղվրն, նույնպես Աղուլանից գրչութունը՝ փոխանակ «Աղուանից» (Ցուցակ ձեռագրաց Թավրիզի, 44, էջ 369 բ):

Գիտունները շատ են հետաքրքրվել գտնելու համար որևէ հետք աղվանների լեզվից ու գրից. բայց իրենց բոլոր ջանքերը դուր են անցել և գտնվածներն էլ սուտ թն դուրս եկել: Այսպես՝ Մակար եպս. Բարխուդարյանց (Պատմ. Աղուանից, Վրչալտ. 1902, էջ 17) կարծում է, թե գտել է աղվանից գրերով մի կարճ արձանագրութուն Դերբենդի պարսպի արտաքին պատի վրա, որի նմանահանութունն էլ տալիս է Աղուանից երկիր և դրացիք, էջ 119: Նույնպես ֆրանսիացի հայագետ E. Boré, *Cor. I. II*, էջ 49 խոսում է աղվաններն մի հին ձեռագրի մասին, որ գտնվել է էջմիածնում և որի մասին զեկուցել է 1838-ին ֆրանսիական ահադեմիայում: Բայց այս էլ ուրիշ բան չէր, եթե ոչ հայերեն նոտր գիրը (տե՛ս Խորենացի, թարգմ. Խ. Ստեփաննի, Բ տպ., ծան. 750):

Շանիձեն ասում է, որ նման ենթադրական աղվաններն արձանագրութուններ գտել են Ս. եպս. Զալալյանց՝ Դմանիսում, Վարդիսուրանիում, Քիլվարում, մի քանի վրացի գիտնականներ՝ Վրաստանի զանազան կողմերում և մի արձանագրութուն էլ հին Գանձակում (այս բոլորի նմանահանութունը տե՛ս Շանիձեի վերոհիշյալ գրքում, էջ 54—61): Բայց սրանցից ոչ մեկը չկարողացավ մի որևէ գաղտնիք բաց անել:

Անմոռանալի փառքի ու պատվի արժանի եղավ վրացի երիտասարդ գիտնական Աբուլաձեն, որ 1937 թ. սեպտ. 28-ին էջմիածնի (այժմ Երևանի) Ձեռագրատան № 7117 ձեռագրում գտավ կորած աղվաններն գրերը: Գլուտի ավետիսը հայտնեց իր ուսուցիչ Շանիձեին, որ իսկույն մեկնեց Երևան (28—29 հոկտ. 1937 թ.), ի մոտո ուսումնասիրեց ձեռագիրը և իր ուսումնասիրութունը հրատարակեց վերոհիշյալ աշխատութեան մեջ, որից քաղում ենք մեկը էլ բոլոր կարևոր տեղեկութունները:

Ձեռագրի բուն օրինակը բերված է եղել Կաֆայից (Թեոդոսիա), Կիրակոս Վիրապեցու ձեռքով. Թովմա Մեծոփեցու աշակերտ Հովհան Արճիշեցին նույնից արտագրել է նոր օրինակը՝ սրբագրութեամբ իր ուսուցիչ և Մեծոփի առաջնորդ Թովմայի: Մեծոփեցին առաջնորդ եղավ 1411-ին և մեռավ 1448-ին, ուստի ձեռագիրն էլ օրինակված է 1411—48 թվերին: Շատ ավելի հին է մայր ձեռագիրը, ինչպես կտեսնենք քիչ հետո:

Ձեռագիրը շատ լուրջ լեզվաբանական բազմալեզվյան մի աշ-

խատություն է, որ պատիվ է բերում թե՛ հեղինակին և թե՛ արտագրողին: Այս բանը գիտակցում է նաև ինքը Քովման, որ հիշատակարանում ասում է. «Բայց դուք ընկալարուք զսա՛ իրրև զտախտակն Մովսիսի և զԱնետարանն Քրիստոսի և մի ոք պախարակեսցէ զսա, զի ի վաղուց ժամանակաց նախատինս կրէաք յազգաց քրիստոնէից. այսօր նա զսա Աստուած ի ձեռս մերս:

Ձեռագիրը բովանդակում է քերականական և բառարանական բաղմատեսակ տեղեկություններ, որոնց թվում նաև 7 լեզվի այբուբենն (հունարեն, ասորերեն, լատիներեն, վրացերեն, աղվաներեն, խաչիերեն և արաբերեն), և աղոթքի նմուշներ հունարեն, ասորերեն, վրացերեն, պարսկերեն, արաբերեն, քրդերեն և թուրքերեն լեզուներով, բոլորն էլ հայատառ: Տառածները 9-րդ, 10-րդ և 11-րդ դարերի գրություններից են: Խառնադարձությունը հին հայոց ձևով է. ՚ ձայնի փոխարեն հաճախ գրված է ղ և Ֆ-ի դեմ՝ փ, այս բոլորը ցույց է տալիս, որ մայր օրինակը ժ-ժԱ դարերից էր:

Այս հարուստ այբուբենի առաջ մեր առաջին հարցը այն է, թե արդյոք մի վարպետ խնդկատակի կամ խարեբայի հետ չէ՞ մեր գործը և ի՞նչ երաշխիք ունինք վստահելու համար նրա ճշտության: Բայց անշուշտ պետք չէ կասկածել՝ հետևյալ պատճառներով.

ա) Գիրքը բոլորովին լուրջ բովանդակություն ունի. զբաղվում է միայն գիտական հարցերով, քերականությամբ ու բառարանով, և ոչ թե ակտարական կամ հմայական ցնորարանությամբ, որպեսզի թույլ տալինք մեզ կասկածել այբուբենի ճշմարտության վրա:

բ) Աղվանից այբուբենը մենակ չէ. նա գտնվում է վեց ուրիշ այբուբենների հետ, որոնք ոչ մի կեղծիք չեն պարունակում. ինչո՞ւ աղվաներենի վրա կասկածել:

դ) Բացի այբուբեններից, կան նաև մի քանի լեզվով աղոթքներ, որոնք, ինչպես տառադարձությունը և հնչումը ցույց են տալիս, ավելի նոր ժամանակներից են. ունինք արդեն նրանց մեջ Ֆ ձայնը և ղ հնչված ց՛ի՛ փոխանակ է: (Փակագծի մեջ նկատենք, որ քրդերեն հատվածը քուրդ լեզվի ու զրականության ամենահին նմուշն է, գոնե 400 տարի ավելի հին, քան մեր նոր աղբյուրները: Ի. Աբուլաձեն իրավունք ունի հպարտանալու նաև իր այս գլուխով, որ և արժանի է առանձին ուսումնասիրության՝ մի քրդագետի կողմից): Արդ՝ այս գրվածքներն էլ բոլորովին ճիշտ են և որևէ կեղծիք չեն ներկայացնում: Եթե զրիչը խարեբայի մեկը լիներ՝ կարող էր աղվաներենից էլ մի սուտ բան սարքել:

դ) Իրավունք չկա կասկածելու նաև այն պատճառով, որ գիրքը գրել տվողը և սրբագրողը Քովմա Մեծոփեցին է, ժՅ դարի հա-



յոց ամենից մեծ մարդը, նշանավոր գրող և պատմիչ, հայրապետական աթոռի փոխադրութեան գլխավոր հեղինակ և էջմիածնի երկրորդ հիմնադիր:

Ե) Մեծփեցին ամպիսի մեծ արժեք է տալիս այս աշխատութեան, որ աստվածաշնորհ տասնաբանյա պատմիրաններին և Քրիստոսի ավետարանին հավասար է դնում: Արդե՞ն այս հանդգնութեանը շահագանց է. և կարելի՞ բան է, որ այսպիսի հանդգնութեանից հետո նա մեզ կեղծիք ու խաբեբայութիւն հրամցնե՞ր:

զ) Նրանք, որ կասկածում են նորագլուտ աղվան այբուբենի ստուգութեան վրա, առաջնորդված են անշուշտ իրերի արդի դրութեան ազդեցութեամբ: Արդե՞ն մի քանի հարյուր տարի է, որ աղվաներեն այբուբենը անհետ կորել է և նրանք շեն կարողանում հավատալ այդ անսպասելի մեծ գլուտին: Նրանք նման են այն մարդուն, որ երկար ժամանակ խավարում մնալուց հետո՝ չի կարողանում նայել լույսին: Բայց շմոռանանք, որ Մեծփեցին ապրում էր ԺԿ դարում. 1387 թվին՝ Լենկթիմուրի արշավանքի սարսափից փախալ ապաստանեց ս. Կարապետի վանքը. իր ժամանակ դեռ մոռացված չէր աղվաներեն այբուբենը, քանի որ Հեթում պատմիչը նրա գոյութիւնը հիշում է դեռ 1305 թվին:

է) Բայց նույնիսկ եթե ենթադրենք, որ Մեծփեցու ժամանակ ջնջված էր աղվաներենը, շմոռանանք, որ նա օրինակել է Կաֆայի ձեռագրից, որ ԺՄ դարից էր, երբ դեռ աղվաներեն լեզուն և գիրը գործածական էին:

ը) Նորագլուտ աղվաներեն այբուբենի տառերի թիվը 52 է. ոչ մի մարդ չէր կարող երևակայել այսպիսի ճոխ այբուբեն. և եթե Մեծփեցին մի կեղծիք արած լիներ, անշուշտ նա կկազմեր միայն և միմիայն 36 կամ 38 տառ, որպեսզի համաձայն լիներ հայերեն այբուբենին, ինչպես են այն բոլոր «աղվանից գրերը», որոնք զանազան մարդկանց կեղծիքներն են իբրև գաղտնագիր:

թ) Բացարձակապես անսովոր է նաև այբուբենի շարքը, որ ոչ մի լեզվի այբուբենի շարքին համապատասխան չէ, ինչպես կտեսնենք քիչ հետո: Եթե Մեծփեցին կեղծիք արած լիներ, որտեղի՞ց կամ ինչո՞ւ պետք է հնարեր այսպիսի նորատեսակ շարք:

ժ) Անսովոր են նաև տառերի անունները, որոնք ոչ մի լեզվի մեջ գոյութիւն չունեն:

Այս պատճառաբանութիւնները ստիպում են մեզ ջնջել մեր բոլոր կասկածները և ընդունել, որ ավանդված այբուբենը, որի գլուտը պարտական ենք վրացի գիտնական Իլիա Աբուլաձեին, բոլորովին ստույգ և վստահելի է, ինչպես մանրամասն ուսումնասիրութեամբ ապացուցել է նաև Շանիձեն:

Այստեղ գնում ենք աղվանից այբուբենը, տառերի անուններով  
և արժեքով:

1. Զ	ալթ	ա	19.	Ձ	ճառ	ճ	37.	Մ	խամ	խ
2. Ե	աղծթ	օ	20.	Ծ	զոխ	զ	38.	Տ	ձայ	ձ
3. Ը	գիւ՛	զ	21.	Շ	կար	կ	39.	Ծ	լատ	լ
4. Թ	զատ	զ	22.	Ռ	լիւ	լ	40.	Գ	պէն	պ
5. Ժ	էթ	է	23.	Ղ	հէւ	հ	41.	Ե	փնս	փ
6. Ի	զառլ	զ	24.	Փ	հայ	հ	42.	Ճ	կատ	կ
7. Լ	օն	օ	25.	Ն	ար	ա	43.	Շ	սնկ	ս
8. Բ	թիւ	թ	26.	Վ	ցոյ	ց	44.	Խ	վեր	վ
9. Գ	թաւ	թ	27.	Ձ	ճի	ճ	45.	Յ	արևո	ար
10. Կ	ճա	ճ	28.	Ը	լայ	լ	46.	Ց	սոյ	ս
11. Դ	յոյր	յ	29.	Զ	մազ	մ	47.	Ն	խոն	խ
12. Ե	թա	թ	30.	Զ	կառ	կ	48.	Մ	ծաւ	ծ
13. Կ	իրթ	ր	31.	Շ	նուց	ն	49.	Ե	ցայն	ց
14. Ե	շա	շ	32.	Մ	շայ	շ	50.	Ե	յայր	յ
15. Գ	լա՛ն	լ	33.	Ծ	շառ	շ	51.	Փ	փիւր	փ
16. Կ	ի՛նս	ի	34.	Գ	շայն	շ	52.	Փ	թիւ	թ
17. Գ	ի՛նս	ի	35.	Ռ	ռն	ռ				
18. Ի	զա՛ն	զ	36.	Ճ	տայ	տ				

Կա սակայն մի կետ, որ մի անորոշ բիծ է դնում աղվաններն այբուբենի վրա:

Հունարեն տառերը թվելու ժամանակ Δ, Ο, Χ, Ψ տառերը փոխանակ անվանելու դեպքում, ο (n), ρ (խ), ψ (փ), կոչում է ելաա, ու, բի (կարդա բի), փո: Ասորերեն տառերից շորաը (g, z, l, '), փոխանակ կոչելու gimal, zain, lamed, 'ayin, կոչում է դամլ, դե, լաոդ, էյ: Լատիններեն տառերից E պակասում է, իսկ H կոչում է խա (փոխանակ հա) և I իկա (փոխանակ ի). այս վերջինը (իկա) ձևացել է Ի անվան վրա ավելացնելով հաջորդ K կա տառի անունը, և այս սխալը շարունակվում է՝ ամեն մի տառ ստանալով իրեն հաջորդող տառի անունը: Վրացերենի մեջ պակասում է հրորդ տառը՝ Գ: Այսպիսի սխալներ, որոնք արտագրության արդյունք են, կան նաև մյուս այբուբեններում և հավանաբար կան նաև աղվանից այբուբենի մեջ: Բայց տառերի ձևը և շարքը պետք է ճիշտ լինին՝ ինչպես մյուսներն են ճիշտ:

Այս վերապահությունը քննենք ուրեմն այբուբենը.—

Աղվաններն այբուբենը բաղկացած է 52 տառից, որից 9 ձայնավոր և 43-ը բաղաձայն:

Ձ ա յ ն ա վ ո Ր ն ե Ր ն ե ն՝

Երկու տեսակ ա, երեք տեսակ ի, և մի մի տեսակ ե, է, օ, ու:

Բ ա ղ ա ձ ա յ ն ն ե Ր ն ե ն՝

Շ Ր Ք ն ա յ ի ն— ա, 2 փ

Ա տ ա մ ն ա կ ա ն— դ, 2 ա, ք

Կ ա տ կ ա յ ի ն— գ, 3 կ, ֆ

Ք մ ա կ ա ն— 2 շ, 3 ճ, 2 շ

Մ ե ջ ա կ ա ն— ձ, ծ., 2 ց

Շ շ ա կ ա ն— 3 գ, 2 ժ, 2 շ, 2 ս

Կ ի ս ա ձ ա յ ն— 2 յ, վ

Ն ա յ— 2 լ, —

Ռ ն գ ա կ ա ն— մ, ն

Կ ո կ ո Ր դ ա կ ա ն— 2 խ, 2 հ

Եթե այս հնչյունների ընդհանուր հորինվածությունը քննենք, կտեսնենք, որ մի մասը ճշտիվ համաչափ է իրար, մի մասը՝ ոչ: Այսպես՝ ունինք երկու տեսակ ա-ի դեմ՝ երեք տեսակ ի և մի մի տեսակ ե, է, օ, ու: Երկու տեսակ ա-ի դեմ սպասելի էր երկու տեսակ ի. ուստի ի-երից մեկը հավանաբար հնչվում էր իւ (ü): Եթե ունենալինք երկու տեսակ ու, մեկը ü պիտի համարեինք. բայց քանի որ միայն մի ու կա, ուստի հրորդ ի ձայնը համարում եմ ü, որ արդեն գործածված է Խիւ, փիւ տառանունների մեջ:

Շ Ր Ք ն ա յ ի ն ե Ր ի մ ե շ ք շ կ ա. կա մի ալ և 2 փ. համաչափություն-

նը շատ խախտու է. ուստի երկու փ-երից մեկը պետք է համարել  
ֆ, իսկ ք մյուս ավելորդ բաղաձայններից մեկի հետ շփոթված է: Քե  
ք ձայնը գոյություն ուներ լնգվի մեջ՝ ցույց են տալիս այրութենի  
մեջ էր և իրք տառերի անունները:

Ատամնականների մեջ մեկ ւ ավելորդ է:

Կատկայիներին ունինք մի գ, մի ք և երեք կ. այս երեքը շատ  
անհամաչափ է. ուստի պետք է կարծել, որ նրանցից երկուսը ներ-  
կայացնում են դ և դ՛ ձայնները:

Քմականները լավ են, միայն մի ք ավելորդ է:

Մեքականները նույնպես լավ են, բայց մի ց ավելորդ է:

Շշականների խումբը սքանչելի է. 2 ծ, 2 շ, 2 ս շատ համաչափ  
են. միայն 3 գ-ից մեկը ավելորդ է:

Կիսաձայնների մեջ 2 յ-ի դեմ սպասելի էր 2 վ, այն է՝ վ և յ  
(v, w):

Նայերից 2 լ-ի դեմ սպասելի էր 2 ո, այն է՝ ո և բ. արդեն տա-  
ռերի անունների մեջ սրանք գործածված են. հմմտ. զառլ, իրք, հառ,  
կար, առ, կառ, տիր, փիր: Անշուշտ սրանք շփոթված ու խառնված  
են ավելորդ տառերի հետ:

Ռնգականները և կոկորդականները շատ համաչափ են:

Պականներն ու ավելորդները ճշտիվ լրացնում են իրար:

Ըստ այսմ աղվաներեն տառերը հետևյալներն են (ըստ մեր  
ենթադրությունների).

Չայնավորներ՝ 2 ա, 2 ի, ե, է, օ, ու, իւ:

(Երկրորդ ա ներկայացնում էր հավանորեն օ հնչյունը, որ այս-  
օր էլ այնքան առատ է Ղարաբաղի բարբառում):

Բաղաձայններ՝

Շրթնային— ք, պ, փ, ֆ

Ատամնական— դ, տ, ք

Կատկային— գ, կ, ք

Քմական— 2 ջ, 2 ն, 2 շ

Մեքական— ձ, ծ, ց

Շշական— 2 գ, 2 ծ, 2 շ, 2 ս

Կիսաձայն— 2 յ, վ, յ

Նայ— 2 լ, բ, ո

Ռնգական— մ, ն

Կոկորդական— 2 խ, 2 հ, դ, դ՛

Տառերի արժեքի մասին որոշ վերապահություն ունենալու  
պատճառով շնք կարող բնականաբար խոսել տառաձևերի ծագման  
մասին և համեմատել ուրիշ այրութենների հետ: Այնուամենայնիվ  
կարելի է հիշել Չ. (ա), որ շատ նման է մեր նոտրադիր հնաձև զըր-

խատառ ա-ին. 6-րդ տառը (զառլ) նման է գլխիվայր դարձած և մի պոչը կտրած Ձ-ի:

9-րդ տառը քառ, նման է հուն. Թ-ի:

11-րդ տառը 7 (յուղ) նման է մեծացրած երբայական yod-ի:

13-րդ տառը Վ (իրբ) նման է շուռ տված Ի-ի:

16-րդ տառը (ինա) նույն իրբ տառն է՝ տակից ավելացրած մի պոչ՝ երկու կողմ թեքված:

18-րդ տառը (դան) հայերեն Դ տառն է՝ գլուխը կտրած:

23-րդ տառը (հետ) նույն է հյ. Հ տառի հետ՝ միայն տակին, ձախից մի թև ավելացրած:

28-րդ տառը (չայ) գլխիվայր շրջված Ձ է:

31-րդ տառը (նուց) մեր և տառն է, կտուցը մեծ և երկրորդ սյունը կ-ի նման դեպի ցած քաշած:

34-րդ տառը (չայն) նման է մեր սովորական ջ-ին, միայն պոչը կտրած:

35-րդ տառը ճիշտ մեր Ո ձևն ունի՝ վրան ավելացրած մի շեշտ՝ ւ-ի փոխարեն:

38-րդ տառը (ձայ) նման է մեր Ձ-ին՝ գլխիվայր շրջած և պոչը մի քիչ ձևափոխած:

39-րդ տառը (չատ) նման է մեր Ձ-ին, նույնպես շուռ տված և պոչը ձևափոխած:

46-րդ տառը 7 (սոյ) շատ նման է լատին S-ին:

50-րդ տառը (յայդ) նույն է 11-րդ տառի (յուղ) հետ, որի աջ կողքից մի կանթ կա ավելացրած:

51-րդ տառը (փիտ) թե՛ անունով, թե՛ ձևով և թե՛ տեղով նույն է մեր փ-ի հետ: Ուտի պետք է ընդունել, թե 41-րդ տառը (փես) հնչվում էր ֆ:

52-րդ տառը (ֆի) հետու չէ մեր ֆ-ից:

Բացի սրանցից նկատելի է, որ երկու և-երը (19 և 27) իրարից են կազմված:

Նույնպես երկու յ-երը (11 և 50) իրարից են կազմված (անու-նով էլ նույն են):

Երկու ի-երը (13 և 16) իրարից են կազմված:

Երկու ա-երը (36 և 45) գրեթե նույն ձևն ունին՝ երկրորդը առաջինի նուրբ մասը մեծացրած և կողքից մի թև ավելացրած:

Երբ տառաձևերը համեմատում ենք իրար հետ, տեսնում ենք, որ մի քանիսը շատ նման են: Օրինակ՝ № 6 և № 33 հավասարապես նման են բոլորագիր ծ-ի. բայց առաջինի գլուխը կարճ է, իսկ երկրորդինը՝ երկար: № 12 և № 49 հավասարապես նման են լատինական գլխատառ T-ին, բայց առաջինը գլխի ձախակողմում փշիկ

շունի, իսկ երկրորդը ունի: Ըստ այսմ, N N 25 և 47 թեև հավասարապես բուրրովին նման են գլխատառ Ն-ին, և N N 1 և 29 նույն են մեր Ձ-ի հետ, պետք է ենթադրել, թե ունեցել են մի փոքրիկ տարբերություն, որ գրչագրի ձեռքի տակ անհետացել է: Ըստ իս՝ N 1-ի մեջ Ձ-ի գլուխը ավելի կլոր և բունը ավելի երկար է, քան N 29-ում: Ենթադրելի է նաև, որ N 25 և N 47 տարբերվում էին կտուցի մեծությամբ:

Տառերի անուններից հետևյալները բուրրովին կամ մասամբ նման են հայերեն անուններին.— շա, ինա, խնն, ցոյ, շայ, ձայ, պէն (քէն), փիր: Իսկ ընդհանրապես տառանունները կազմում են հետևյալ խմբակները.

1. նա, ժա, շա.
2. լան, դան.
3. կար, առ, կառ.
4. ցոյ, սոյ.
5. նայ, շայ, շայ, տայ, ձայ.
6. են, պէն, խէն.
7. չայն, ցայն.
8. գատ, շատ, կատ.
9. տիր, փիր.

Առանձին է մնում մեծագույն մասը.— ալր, օղեր, զիմ, էր, գառլ, ժիլ, րաս, յուդ, իրբ, ինա, նառ, զոխ, լիտ, հէտ, նի, մակ, նուց, շաք, ուն, խամ, փէս, սէկ, վէզ, իոն, ծաւ, յայդ, քի:

Վրացականին նման անուններ են՝ են, ինա, խամ, ժիլ (ծիլ), նառ (նար), ուն (ոն), ցայն (ցան):

Ամենատարօրինակն է տառերի շարքը, որ ոչ մի այբուբենի հետ նմանություն չունի. հայերենի հետ նման են գալիս սկիզբը (ա), միջից էր, գառլ, են (=հյ. ե, գ, N 5, 6, 7, որ տեղով էլ նույն են), ժա, իրբ (=հյ. ժ, ի, N 12, 13), շատ, պէն (=հյ. շ, պ, N 39, 40), սէկ, վէզ, տիր (=հյ. ս, վ, տ, N 43, 44, 45) և վերջից՝ փիր, քի: Բացի սրանից րաս (ր) տառը բունում է իններորդ տեղը՝ ճիշտ հայերեն ր տառի պես:

Աղվաններն տառերի գյուտը ոչ միայն դիտական մեծ արժեք ունի, այլև գալիս է փարատելու այն կասկածները, որ ոմանք ունեին Կորյունի արժանահավատության մասին և հաստատելու, որ Կորյունը նշմաբտախառ պատմիչ է և նրա խոսքերը պետք է ընդունել ամենայն սրբությամբ:



# Ա. ՅՈՒՑԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՆՇԱՆԱԳՐԵՐԻ

1. Արբուս	հ	Բ 3 3 3	*53. Անիթու	հ	Ե Ե Ե Ե	-104. Արուսեակ (Ն. Լուսաբեր)	Կ	Կ
* 2. " "		Բ	54. Անի	հ	Ե Ե Ե Ե	105. Արսեան	Կ	Կ
* 3. Ազգ		Լ 0 0 0 Ը	55. " "	փ	Ե Ե Ե Ե Ե Ե	106. Արքայաթիւն	(փ)	Թ
4. Ազգական	=	Լ Ե Ե Ե	*56. Անճառ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	+107. Անտարտիկ	Թ	Թ Թ Թ Թ Թ Թ Թ Թ
5. Ազիզ	(փ)	Խ Ե Ե	*57. Անճու	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	108. Բազում	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
+ 6. Աթոռ		Խ Խ Խ Խ	58. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	109. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե
+ 7. Ականջ		Թ Թ Թ	59. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*110. " "	Կ	Ե Ե Ե Ե
8. Ակարոն	հ	Թ Ե Ե Ե	*60. Անպառ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	111. Բաճան	Կ	Ե Ե Ե Ե
9. " "	Կ	Խ Ե Ե	*61. Անվախ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	112. Բանական	Կ	Ե Ե Ե Ե
10. " "	Կ	Խ Ե Ե	*62. Անտիպ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*113. Բանասիրտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
11. Ալուստիկ	հ	Թ Ե Ե	*63. Անտիպ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	114. Բարեկամ	Կ	Ե Ե Ե Ե
*12. Ալ	հ	Թ Ե Ե	64. Աշակերտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	115. Բարեկարգ	(փ)	Ե Ե Ե Ե
*13. Ազանդ	հ	Ե Ե Ե Ե	65. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	116. Բարձր	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
14. Ազդեր	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*66. Աշխարհ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	117. Բազմակ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
-15. Ազնկանոր (ԳԳ.)	Կ	Ե (Կ Ե Ե Ե)	*67. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	118. Բերան	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
16. Ազգաց	Կ	Ե Ե Ե Ե	*68. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	119. Բերնի	Կ	Ե Ե Ե Ե
17. " "	Կ	Ե Ե Ե Ե	-69. " (Երկրի)	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*120. Բերանի	(փ)	Ե Ե Ե Ե
18. " "	Կ	Ե Ե Ե Ե	70. Այրու (Ամառ- ն)	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	121. Բարբառ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
19. Աման	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե	71. Այստեղ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	+122. Բարբառ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
20. Ամբարիշտ	Կ	Ե Ե Ե Ե	72. Այստեղ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*123. Բարբառ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
21. " "	Կ	Ե Ե Ե Ե	+73. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	124. Գարուն (Ամառն)	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
22. " "	Կ	Ե Ե Ե Ե	*74. Ազարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	+125. Գարուն	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
23. Ամբարտաւան	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*75. Ազարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	126. Գարուն	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
24. Ամենայն	=	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե	76. Առաջամ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	127. Գերեզման	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
25. Ամենեան	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	77. Առաջ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	128. " "	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
26. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	78. Առաջնորդ	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե	129. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
27. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	79. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	130. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
28. Ամենեան	=	Ե Ե Ե Ե Ե Ե	80. Առաջնորդ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	131. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
29. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*81. Առաջնորդ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	132. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
30. Ամենայն	=	Ե Ե Ե Ե Ե Ե	*82. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*134. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
-31. Այնպիսի (ԳԳ.)	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*83. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	135. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
32. Այնպիսի	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*84. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	136. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
33. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*85. Առաջնորդ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	137. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
34. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	86. Առաջ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	138. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
35. Այսպիսի	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	87. Առաջ (ԳԳ.)	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	139. Գիտ	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
36. Այսպիսի	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	88. Առաջ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	140. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
*37. Անակ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	89. Առաջ	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե	*141. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
*38. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	90. Անպարտ	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե	+142. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
*39. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*91. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*143. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
40. Անպարտ	=	Ե Ե Ե Ե Ե Ե	+92. Անտիպ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	144. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
41. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	93. " "	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե	145. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
42. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	+94. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	146. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
43. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	95. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	147. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
44. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	*96. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	148. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
45. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	97. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	149. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
46. " "	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	+98. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	+150. Գիտ	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
47. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	99. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	151. Գիտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
48. " "	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե	100. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	152. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
*49. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	101. Անպարտ	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե	-153. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
*50. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	102. Անպարտ	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե	+154. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
*51. Անպարտ	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե	103. Անպարտ	(փ)	Ե Ե Ե Ե Ե Ե			Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե
+52. " (Երկրի)	Կ	Ե Ե Ե Ե Ե Ե						Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե





318. Թուստիանոս B 30 20 50 00 4  
 319. Թոմար 9 3 00 00  
 +320. Թոմար (ԿԿ) 3 00 00  
 321. Թոմար (ԿԿ) 3 00 00  
 322. Թոմար 32 3 00 00 29  
 323. Թոմար 32 3 00 00  
 324. Թոմար 32 3 00 00  
 325. Թոմար 32 3 00 00  
 \*326. Թոմար 32 3 00 00  
 327. Թոմար 32 3 00 00  
 +328. Թոմար 32 3 00 00  
 329. Թոմար (ԿԿ) 32 3 00 00  
 330. Թոմար 32 3 00 00  
 331. Թոմար (ԿԿ) 32 3 00 00  
 \*332. Թոմար 32 3 00 00  
 \*333. Թոմար 32 3 00 00  
 \*334. Թոմար 32 3 00 00  
 335. Թոմար 32 3 00 00  
 336. Թոմար (ԿԿ) 32 3 00 00  
 337. Թոմար 32 3 00 00  
 338. Թոմար 32 3 00 00  
 \*339. Թոմար (ԿԿ) 32 3 00 00  
 340. Թոմար (ԿԿ) 32 3 00 00  
 \*341. Թոմար 32 3 00 00  
 342. Թոմար 32 3 00 00  
 343. Թոմար 32 3 00 00  
 344. Թոմար (ԿԿ) 32 3 00 00  
 \*345. Թոմար 32 3 00 00  
 346. Թոմար (ԿԿ) 32 3 00 00  
 347. Թոմար 32 3 00 00  
 348. Թոմար 32 3 00 00  
 349. Թոմար 32 3 00 00  
 350. Թոմար 32 3 00 00  
 \*351. Թոմար 32 3 00 00  
 \*352. Թոմար 32 3 00 00  
 353. Թոմար (ԿԿ) 32 3 00 00  
 \*354. Թոմար 32 3 00 00  
 355. Թոմար (ԿԿ) 32 3 00 00  
 356. Թոմար (ԿԿ) 32 3 00 00  
 357. Թոմար (ԿԿ) 32 3 00 00  
 \*358. Թոմար 32 3 00 00  
 \*359. Թոմար 32 3 00 00  
 360. Թոմար 32 3 00 00  
 361. Թոմար 32 3 00 00  
 362. Թոմար (ԿԿ) 32 3 00 00

\*363. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 364. Գրեգոր 32 3 00 00  
 365. Գրեգոր 32 3 00 00  
 \*366. Գրեգոր 32 3 00 00  
 367. Գրեգոր 32 3 00 00  
 368. Գրեգոր 32 3 00 00  
 +369. Գրեգոր 32 3 00 00  
 370. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 371. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 372. Գրեգոր 32 3 00 00  
 -373. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 374. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 \*375. Գրեգոր 32 3 00 00  
 \*376. Գրեգոր 32 3 00 00  
 377. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 378. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 \*379. Գրեգոր 32 3 00 00  
 380. Գրեգոր 32 3 00 00  
 381. Գրեգոր 32 3 00 00  
 382. Գրեգոր 32 3 00 00  
 383. Գրեգոր 32 3 00 00  
 \*384. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 \*385. Գրեգոր 32 3 00 00  
 \*386. Գրեգոր 32 3 00 00  
 387. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 388. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 +389. Գրեգոր 32 3 00 00  
 390. Գրեգոր 32 3 00 00  
 391. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 \*392. Գրեգոր 32 3 00 00  
 393. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 \*394. Գրեգոր 32 3 00 00  
 +395. Գրեգոր 32 3 00 00  
 396. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 397. Գրեգոր 32 3 00 00  
 \*398. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 399. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 \*400. Գրեգոր 32 3 00 00  
 401. Գրեգոր 32 3 00 00  
 402. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 403. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 404. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 405. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 406. Գրեգոր 32 3 00 00  
 407. Գրեգոր 32 3 00 00  
 \*408. Գրեգոր 32 3 00 00  
 409. Գրեգոր 32 3 00 00

410. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 \*411. Գրեգոր 32 3 00 00  
 +412. Գրեգոր 32 3 00 00  
 +413. Գրեգոր 32 3 00 00  
 +414. Գրեգոր 32 3 00 00  
 415. Գրեգոր 32 3 00 00  
 416. Գրեգոր 32 3 00 00  
 417. Գրեգոր 32 3 00 00  
 418. Գրեգոր 32 3 00 00  
 419. Գրեգոր 32 3 00 00  
 420. Գրեգոր 32 3 00 00  
 421. Գրեգոր 32 3 00 00  
 +422. Գրեգոր 32 3 00 00  
 423. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 \*424. Գրեգոր 32 3 00 00  
 425. Գրեգոր 32 3 00 00  
 426. Գրեգոր 32 3 00 00  
 427. Գրեգոր 32 3 00 00  
 428. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 429. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 -430. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 -431. Գրեգոր 32 3 00 00  
 432. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 433. Գրեգոր 32 3 00 00  
 434. Գրեգոր 32 3 00 00  
 435. Գրեգոր 32 3 00 00  
 436. Գրեգոր 32 3 00 00  
 437. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 438. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 439. Գրեգոր 32 3 00 00  
 440. Գրեգոր 32 3 00 00  
 441. Գրեգոր 32 3 00 00  
 442. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 \*443. Գրեգոր 32 3 00 00  
 444. Գրեգոր 32 3 00 00  
 445. Գրեգոր 32 3 00 00  
 \*446. Գրեգոր 32 3 00 00  
 447. Գրեգոր 32 3 00 00  
 448. Գրեգոր 32 3 00 00  
 449. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 450. Գրեգոր 32 3 00 00  
 451. Գրեգոր 32 3 00 00  
 452. Գրեգոր (ԿԿ) 32 3 00 00  
 453. Գրեգոր 32 3 00 00  
 454. Գրեգոր 32 3 00 00

ՀԱՅԵՐԵՆ ՆՇԱՆԱԳՐԵՐ

- \* 3. Ազգ
- \*455. Ազգանշ
- \*456. Ազգանշ
- \*457. Ազգան
- \*478. Ամբաստան
- \*459. Անպատ
- \*460. Անպատ
- \* 50. Անպատ
- \* 62. Անպատ
- \*461. Անպատ
- 71. Անպատ
- 76. Անպատ
- 78. Անպատ
- 77. Անպատ
- \* 82. Անպատ
- 85. Անպատ
- 90. Անպատ
- 93. Անպատ
- \*462. Անպատ
- \*463. Անպատ
- 105. Անպատ
- +107. Անպատ
- 464. Անպատ
- 104. Անպատ
- 118. Անպատ
- \*120. Անպատ
- 465. Անպատ
- 466. Անպատ
- 467. Անպատ
- 468. Անպատ
- +142. Անպատ
- \*145. Անպատ
- \*469. Անպատ
- 147. Անպատ
- 149. Անպատ
- 470. Անպատ
- +150. Անպատ
- 152. Անպատ
- 471. Անպատ
- 156. Անպատ
- 157. Անպատ
- 163. Անպատ
- 472. Անպատ
- 166. Անպատ
- 166. Անպատ
- 167. Անպատ
- 168. Անպատ
- 171. Անպատ
- 173. Անպատ
- 473. Անպատ
- 176. Անպատ
- 178. Անպատ


Handwritten Armenian text in the left margin, including numbers and symbols like (44), (45), (46), (47), (48), (49), (50), (51), (52), (53), (54), (55), (56), (57), (58), (59), (60), (61), (62), (63), (64), (65), (66), (67), (68), (69), (70), (71), (72), (73), (74), (75), (76), (77), (78), (79), (80), (81), (82), (83), (84), (85), (86), (87), (88), (89), (90), (91), (92), (93), (94), (95), (96), (97), (98), (99), (100).

- 474. Անպատ
- \*475. Անպատ
- 190. Անպատ
- \*476. Անպատ
- 207. Անպատ
- 208. Անպատ
- 209. Անպատ
- 211. Անպատ
- 477. Անպատ
- 474. Անպատ
- 479. Անպատ
- 213. Անպատ
- \*480. Անպատ
- 222. Անպատ
- 214. Անպատ
- 181. Անպատ
- \*182. Անպատ
- 231. Անպատ
- 233. Անպատ
- 483. Անպատ
- 235. Անպատ
- 210. Անպատ
- \*484. Անպատ
- 485. Անպատ
- 271. Անպատ
- \*186. Անպատ
- 270. Անպատ
- 267. Անպատ
- 187. Անպատ
- \*188. Անպատ
- 278. Անպատ
- 270. Անպատ
- 489. Անպատ
- 490. Անպատ
- 279. Անպատ
- 240. Անպատ
- 491. Անպատ
- \*492. Անպատ
- 287. Անպատ
- 493. Անպատ
- 289. Անպատ
- 290. Անպատ
- 292. Անպատ
- 295. Անպատ
- 300. Անպատ
- 301. Անպատ
- 304. Անպատ
- \*309. Անպատ
- 494. Անպատ
- 495. Անպատ
- 317. Անպատ

Handwritten Armenian text in the middle margin, including numbers and symbols like (44), (45), (46), (47), (48), (49), (50), (51), (52), (53), (54), (55), (56), (57), (58), (59), (60), (61), (62), (63), (64), (65), (66), (67), (68), (69), (70), (71), (72), (73), (74), (75), (76), (77), (78), (79), (80), (81), (82), (83), (84), (85), (86), (87), (88), (89), (90), (91), (92), (93), (94), (95), (96), (97), (98), (99), (100).

- 313. Անպատ
- 316. Անպատ
- 319. Անպատ
- 321. Անպատ
- 324. Անպատ
- 325. Անպատ
- 330. Անպատ
- 353. Անպատ
- 340. Անպատ
- 342. Անպատ
- 345. Անպատ
- \*346. Անպատ
- 348. Անպատ
- 357. Անպատ
- 361. Անպատ
- \*369. Անպատ
- \*497. Անպատ
- 498. Անպատ
- 499. Անպատ
- 500. Անպատ
- 374. Անպատ
- \*375. Անպատ
- 377. Անպատ
- 380-391. Անպատ
- 382. Անպատ
- 501. Անպատ
- 502. Անպատ
- 397. Անպատ
- 503. Անպատ
- 406. Անպատ
- 409. Անպատ
- 410. Անպատ
- +413. Անպատ
- 416. Անպատ
- \*418. Անպատ
- 419. Անպատ
- \*504. Անպատ
- \*505. Անպատ
- 506. Անպատ
- 507. Անպատ
- \*508. Անպատ
- 437. Անպատ
- 439. Անպատ
- 442. Անպատ
- 509. Անպատ
- 510. Անպատ
- 497. Անպատ

Handwritten Armenian text in the right margin, including numbers and symbols like (44), (45), (46), (47), (48), (49), (50), (51), (52), (53), (54), (55), (56), (57), (58), (59), (60), (61), (62), (63), (64), (65), (66), (67), (68), (69), (70), (71), (72), (73), (74), (75), (76), (77), (78), (79), (80), (81), (82), (83), (84), (85), (86), (87), (88), (89), (90), (91), (92), (93), (94), (95), (96), (97), (98), (99), (100).



ԲՈՎ ԱՆԴ ԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին մաս

ԱՂՐՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ Ա. Հին աղբյուրներ	5
Գլուխ Բ. Նոր աղբյուրներ	57

Երկրորդ մաս

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ Ա. Մաշտոցի աշխարհական կյանքը	67
Գլուխ Բ. Առաջին քարոզչական գործունեություն	82
Գլուխ Գ. Դանիելյան գրերը	96
Գլուխ Դ. Մեսրոպյան գրերի գլուխը	110
Գլուխ Ե. Մեսրոպի վերադարձը և երկրորդ քարոզչական գործունեությունը	158
Գլուխ Զ. Երրորդ քարոզչական գործունեություն	167
Գլուխ Է. Զորրորդ քարոզչական գործունեություն	190
Գլուխ Ը. Հինգերորդ քարոզչական գործունեություն	213
Գլուխ Թ. Մեսրոպի վերջին օրերը	223
Գլուխ ժ. Սուրբ գրքի թարգմանությունը	231
Գլուխ ժԱ. Ե դարի գրական շարժումը	262
Գլուխ ժԲ. Թեոգորոս Մոպսեստացու հերձվածը	271
Գլուխ ժԳ. Սահակի և Մեսրոպի վախճանը	278
Գլուխ ժԴ. Տոն, անուն և պատկեր ս. Մեսրոպի	292
Գլուխ ժԵ. Մեսրոպ Մաշտոցի երկասիրությունները	309
Գլուխ ժԶ. Սահակի և Մեսրոպի ժամանակագրությունը	343

Երրորդ մաս

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ

Գլուխ Ա. Հաթյան գրերը	393
Գլուխ Բ. Խալդյան բեհնագրեր	397
Գլուխ Գ. Այծագրեր և պատկերագրեր	406
Գլուխ Դ. Նշանագրեր	408
Գլուխ Ե. Դանիելյան գրեր	431
Գլուխ Զ. Պարսիկ, հույն և ասորի գրերը	459
Գլուխ Է. Մեսրոպյան գրերը	473
ա. Մեսրոպյան գրերի թիվը	474
բ. Մեսրոպյան այբուբենի հորինվածությունը	493
գ. Մեսրոպյան գրերի ուղղությունը	496
դ. Գրերի ձևը և նրանց ծագումը	500
ե. Մեսրոպյան գրերի դասալորությունը կամ կարգը	555
զ. Մեսրոպյան գրերի անունները	560
է. Մեսրոպյան գրերի հնչումը կամ արժեքը	566
Գլուխ Ը. Մեսրոպյան գրերի տեսակները և դարգացումը	599
Գլուխ Թ. Հայերեն ծածկագրեր	663
Գլուխ ժ. Աղվանից գիրը	677

ՀՐԱԳՅԱ ԱՃԱՌՅԱԼ

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ

Հրատարակչության է ներկայացրել

համալսարանի հայագիտական հետազոտության ներքին պարլամենտին լաբորատորիան

Հրատարակչության խմբագիր՝ Ա. Մ. Գաբրիելյան  
Նկարիչ՝ Ա. Վ. Գասպարյան  
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմաթյան  
Տեխնիկական խմբագիր՝ Յ. Գ. Տոնոյան  
Վերստուգող թրագիր՝ Ս. Վ. Ղազարյան

Յտար տառանիշերը պատրաստել է  
գրաշար-էջկապ Պ. Ն. Խալիանդյունը

ԻԲ 443

ՎՖ 08833: Պատվեր 1433: Տպարանակ 5000: Հանձնված է շարվածքի 3/ХІІ 1982 թ.:  
Ստորագրված է տպագրության 2/ІІ 1984 թ.: Թուղթ № 2, շափսը՝ 60×90<sup>1/16</sup>:  
Տառատեսակը՝ «Սովորական»: Տպագրության կղանակը՝ «Բարձր»: Հրատարակչու-  
կան 35,9 մամուլ: Տպագրական 43 մամուլ+4 ներդիր: Գինը՝ 3 ս. 10 կոպ.:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մոսկվայի փ. № 1:  
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արտվյան փ. № 52:  
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.

A  $\frac{ii}{70345}$